ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

Le PREMIER QUOTIDIEN ARMENIEN en EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction et Administration : 32, Rue de Trévise - PARIS-9e

Fondé en 1925 — Téléph. : PRO. 86 - 60
R. C. Seine 57 A 2731 — C. C. P. Paris 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա՝ Տար· 50 Ն· Ֆ· Վեցամսեայ՝ 27 Ն· Ֆ·
Արտասահման՝ Տար· 60 Ն· Ֆ· Հատը՝ 0·25 Ն· Ֆ·

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ
3
ՅՈՒՆՈՒԱՐ
MERCREDI
3 JANVIER
1962

38ՐԴ ՏԱՐԻ— ԹԻՒ 9294 — 38e ANNÉE — Fondateur : SCHAVARCH MISSAKIAN — ՆՈՐ ՇՐՋԱՆ, 18ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 5095

ՕՐՈՒԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐԸ

ՊԷՅՐՈՒԹ

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՐՈՒԱԾ ՄԸ ԿԸ ՁԱԽՈՂԻ

Շաբաթ վերջերը, կարգ մը տարրերու կողմէ «Սուրիական ժողովրդական կուսակցութեան» կը պատկանին պետական հարուած մը փորձեցին, որ ձախողեցաւ առանց մեծ աղմուկ մը պատճառելու։ Ասոնք, որոնք արեւմտասէր նկատուած են եւ կողմնակից «Մեծ Սուրիոյ» կառուցման (Լիբանան, Յորդանան, Իրաք եւ անշուշտ Սուրիա) ղեկավարութեամբ երկու սպաներու ղլուխ չկրցան հանել իրենց ծրագիրը։ Լիբանանեան բանակը որուն հրամանատարն է Նախագահին զարմիկը՝ Ատել Շեհապ, շատ դիւրութեամբ խեղդեց չարժումը որ հինգ մեռելներ պատճառած է։ Մօտ յիսուն հոգի սակայն ձերբակալուեցան։

Ինչպէս ամէն ինչ որ Մէջին Արեւելքի մէջ կը պատահի, կարելի չէ յստակ գաղափար մը ունենալ անցած – դարձածին մասին։ Նասր իր տեսակէտն ունի այս մասին և Գահիրէ մամուլի դործակալութիւնը անմիջապէս յայտարարեց թէ այս դէպքը կը զուգադիպի անգլիական ծովային ուժերու մէջերկրականեան չարժումներուն։ Եգիպտացիները կը չեշտեն նաեւ թէ Լիբանանի նախկին նախագահ՝ Քամիլ Շամունն իսկ մատ ունի այս խնդրին մէջ։ Ուրիշներ ճիշդ հակառակ կարծիքն ունին եւ կը խորհին թէ այս չարժումն ալ արդիւնքն է Արեւելքի անկայունութեան եւ տեսակ մը վրէժը Նասրի Դամասկոսի հարուածին պատասխանելու համար։

Լիբանանեան միակ թերթը որ յայտնած էր պետական հարուածը՝ Սատա Լուտան ղրաւուեցան եւ կ'ըսուի թէ 200 հոգի ձերբակալուեցան։

Քոմպայի յօդուածագիրը՝ Ժորժ Ան – տերսէն անդրադառնալով այս խնդրին, եթէ ոչ Նասրի, անոր կողմնակիցներուն կը վերագրէ այս հարուածին պատասխանատուութիւնը, հակառակ անոր որ այս հարուածին հեղինակները գործածեն Սուրիական ժողովրդական կուսակցութեան մականիշ տակ։ Այս տեսակէտին ի նպաստ, Անտերսէն կը զրէն թէ յաջողութեան պարագային Գահիրէի պիտի կրնային եւ ոչ՝ Դամասկոսի։ Մանաւանդ ծանօթ է որ Արզասաբեր Մահիկի կողմնակիցները (Մեծ Սուրիա) կանխահաս կը նկատեն պետական հարուած մը։ Այս առընչութեամբ նաեւ, Քոմպայի աչքառու տակիցը երկու նախանշաններ կը յիշէ։ Անցեալ գարնան կառավարական տագնապ մը ծագեցաւ Պէյրութի մէջ որ կրնար ծանրանալ Տիւրզի պարագլուխին (կամալ Ճումպլաթ) բռնած դիրքին պատճառաւ։ Ճումպլաթ բացէ ի բաց Նասրը կը պաշտպանէր, եւ կ'առաջարկէր աւելի սերտ դործակցութիւն մը Արաբ. Մ. Հանրապետութեան հետ։ Սուրիոյ արտաքսումէն ետք Արաբ. Մ. Հանրապետութեան, Լիբանանի նասրեան տարրերը քանիցս տրամադրած, եւ օգտագործած են Լիբանան. հոդամասը, որպէս դի Սուրիան «վերադարձնէն Արաբ. Մ. Հանրապետութեան ծոցը»։ Վերջ դնելու համար այս կացութեան Քուվպարիւի դահլիճը բողոքած էր Պէյրութի Արտաքին Նախարար՝ Թաքլայի։ Այս բողոքները ծնունդ առած էին կարգ մը միջադէպերու պատճառաւ։ Նախ Հոկտեմբեր 27էն եւ Նոյեմբեր 2 Նասրեան դինեալ տարրերը Լիբանանեան հոդամասէն Սուրիա անցած էին «կապ» ստեղծելու համար Սուրիոյ նոր դեկավարութեան ընդդիմադիր տարրերուն հետ։ Նոյեմբերի սկիզբը կարգ մը ուրիշ նասրականներ դէնք եւ զինամթերք տարած էին Սուրիա ամրապնդելու համար ընդդիմութիւնը։ Եւ վերջապէս Լիբանան հաստատուած էր ձայնասփիւռի կայան մը որ Նասրեան քարոզչութիւն կ'ընէր։

Այս անպաշտօն լուրերուն եւ կարգ մը տպաւորութիւններու կողքին կայ պաշտօնական հաշուեկշիռը։ Ձերբակալուած է Սուրիական ժողովրդական կուսակցութեան պետը (Սաատէհ)։ Ութ/ըը գործակալութեան համաձայն երկու ըմբոստ սպաները որոնք չարժումին ղլուխը դտնուած են՝ ենթասպայ Շավքի Ապուտեմայլա եւ հարիւրապետ՝ Ֆուատ Ալվան են։

Վերջին լուրերու համաձայն աւելի քան չորս հարիւր ձերբակալութիւններ տեղի ունեցած են եւ նախադահը՝ Ֆուատ Շեհապ լուծած է «Սուրիական ժողովրդական կուսակցութիւնը»։ Թրիփոլիի մէջ, կուսակցութեան պարագլուխ՝ Սաատեհի տունը կատարուած խուզարկութիւն մը մէջտեղ հանած է երկու հարիւր հրացան եւ մեծ քանակութեամբ զինամթերք եւ պայթուցիկ։ Այս կուսակցութիւնը հիմնուած է 1932ին, Լիբանանցիի մը կողմէ Սաատ, որ կը հիանար Հիթլերի վրայ եւ կուսակցութիւնը շատ նմանցուցած է նացիզմին։ Զինանշան ընտրած էր կեռ խաչ մը, աւելի կարճ ճիւղերով, իր հիմնական վարդապետութիւնը էր «Սուրիոյ աշխարհապրական եւ ցեղային միասնականութիւնը»։ Կուսակցութեան համար «իրական Սուրիան» իրրեւ մայրաքաղաք ունի Դամասկոս եւ կը պարունակէ նաեւ Իրաքը, Լիբանանը եւ Յորդանանը։ Այս ամբողջը կը կազմեն «բնական Սուրիան»։ Սատա ըմբոստութիւն մը փորձած է 1949ին եւ ձերբակալուած, մահուան դատապարտուած եւ փղդակահարուած է։ Կուսակցութիւնն ալ լուծուած եւ ապօրէն հռչակուած է։ 1952ին սակայն իր անդամները կը սպաննեն վարչապետ Ռիաա Սոհլ։ 1958ին Սուրիա – Եգիպտոս միութենէն ետք, այս կուսակցութիւնը գործելու կրկին արտօնութիւն ստացաւ։

ԼԻԶՊՈՆ

ՀՈՍ Ա.Լ. ՊԵՏԱԿԱՆ ՀԱՐՈՒԱԾ ՄԸ ԿԸ ՁԱԽՈՂԻ

Զինուորական պետական հարուած մը տեղի ունեցաւ առջի դիշեր Փորթուկալի մէջ, Ալկարվէյի զաւառական ջրջանը, Լիզպոնի հարաւը, բայց ըմբոստական չարժումը արագօրէն խեղդուեցաւ։ Պատերազմական վիճակ յայտարարուեցաւ երկրին մէջ։ Այսքան կ'ըսէ միայն հրատարակուած պաշտօնական զեկոյցը որ կը յայտնէ նաեւ թէ գործողութեանց ընթացքին սպաննուած է բանակի նախարարութեան կցորդը։ Ուրիշ չորս մեռելներ ալ կան եւ բաւական ձերբակալութիւններ կատարուած են։ Մայրաքաղաքին մէջ ամէն ինչ հանդարտ է։

Այս չարժումը սակայն ցոյց կուտայ թէ տագնապ մը կայ Փորթուկալի մէջ եւ Սալազարի դէմ գոյութիւն ունեցող ընդդիմութիւնը կը փորձէ ղլուխը բարձրացնել։ Առաջին անդամ ինքզինքը ցոյց տուած էր 1961 Յունուարին երբ նաւապետ Կալվան Սանթա Մարիա նաւը «ղրաւած» էր։

×

ԽՈՐՀ. ՄԻՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՎԱՐՁԱՏՐԷ... ԹՈՒՐՔԻԱ

Անգարայէն կը հաղորդեն թէ Խորհրդ. Միութիւնը առաջարկած է դրամական լայն օժանդակութիւն մը տալ Թուրքիոյ։ Թրքական դահլիճի փոխ – վարչապետը՝ Ալիֆ Այտոյեան պաշտօնապէս յայտարարած է թէ Խորհրդ. Միութիւնը առաջարկած է յիսուն միլիոն տոլար տալ Թուրքիոյ, փափաք յայտնած է նաեւ բամպակ, ծխախոտ եւ պտուղ ներածել։ Թուրքերը յայտարարած են թէ մօտէն «կ'ուսումնասիրեն» այս առաջարկը։

ԹՈՒՐՔԻԱ ԻՆՉՊԷՍ ՈՐ Է

ՁԻԻՆ – ՁՄԵՌ

Անգարայէն կը հեռագրեն թէ աննա – խընթաց ցուրտ մը կը տիրէ Անգարայի մէջ։ Մինչ 1953ին արձանագրուած ամէնէն սաստիկ ցուրտը նուազ 18 էր, այս ձմեռ նուազ 28ի իջաւ ջերմաստիճանը։ Սովալլուկ գայլեր մինչեւ ճեպելճի իջան ու յօշոտեցին երկու չուներ Արիւնի դրամատան առջեւ։ Առաջին անդամն է որ սովալլուկ գայլերու վոմմակները մինչեւ քաղաքին ներքին մասերը կը մտնեն։ Սառած փոխադրամիջոցները երկար ատեն չկրցաւ բանիլ, աշակերտներն ու պաշտօնեաները դժուարութիւն կրեցին դործի դլուխ երթալու։

« ԱՆՕԹԻ ՊԻՏԻ ՄՆԱՆՔ ... »

Թուրք անասնաբոյժներու սենեակին իմամբի չրջանի ընդհանուր քարտուղարը յայտարարեց թէ արեւելեան Անատոլուէն ծայր տուած է լայնածաւալ դաղթ մը, որու պատճառը երաչտն է։ 1929 – 34ին անասուններու արտածման մէջ Թուրքիա աշխարհի առաջին երկիրն էր, բայց այսօր ցանկին վերջաւորութեան գրգ կարդի վրայ իջնած է։ Արօտավայրերը որոնք 39 միլիոն քառ. մեթր էին 1950ին, 28 միլիոնի իջած են 1960ին։

— Արեւելքի մէջ, չարունակեց քարտուղարը, անասունը կերակրելը մէկ կողմ, թուրք հայրենակիցները իրենց փորը անդամ չեն կրնար կշտացնել։ Իժ – ուարաւ կը հայթայթուի միս, կաթ, հաւկիթ, ձուկ եւ նմանօրինակ սննդանիւթեր։ Եթէ միջոցներ ձեռք չառնուին, այս սննդանիւթերն ալ պիտի չդտնուին։

«Միլիյէթ» կը հաղորդէ թէ 15·000 հոդինոց կարաւան մը Արեւելքէն դէպի արեւմուտք դաղթի ճամբան բռնեց՝ սովէ պատճառով։

ՄԱՐԴ ԵՒ ԱՆԱՍՈՒՆ ՍՈՎԻ ՎՏԱՆԳԻՆ ԴԷՄ

Թուրքիոյ երկրագործական ճարտարապետներու Սենեակը հաւաքոյթ մը կազմակերպեց Քոնիայի երկրագործներուն մասնակցութեամբ։ Սենեակին նախագահը չեշտեց թէ Թուրքիոյ անտեսութեան հիմը կազմող երկրագործութիւնը չատ ողբալի վիճակի մը մէջ է, եւ եթէ այս կացութիւնը չարունակուի՝ 3–4 տարի ետք սովի վտանգը ծայր պիտի տայ երկրին մէջ։

Նախագահը յայտնեց թէ ազգային եկամուտին անհատ ղլուխ քանակութեան տեսակէտով Ղանայէն ալ ետ կը մնայ Թուրքիա, մինչդեռ Թուրք գիւղացին տարեկան 100 ժամ կ'աշխատի միայն։

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՆՈՐ ԶԻՆԱՍՏԱՆ գործակալութեան համաձայն, ներկայիս երեք միլիոն ուսուցիչներ եւ դասախօսներ կը դասաւանդեն համալսարաններու, լիսէներու, երկրորդական վարժարաններու եւ նախակրթարաններու մէջ։ Այս թիւը եռապատիկն է 1949ի թիւին։ Ըստ նոյն աղբիւրին, հա – րիւր միլիոն Չինացիներ կը յաճախեն կրթական հաստատութիւնները։

ԿՐԵՄԼԻՆի մէջ նոր տարուան առթիւ, ինչպէս ամէն տարի, մեծ ընդունելութիւն մը տեղի ունեցաւ որուն ներկայ եղած են երեք հազար հոդի։ Խրուչչեւ յաղթած է որ 1962ին պատերազմ չըլլայ։ Խօսած է ամերիկեան դեսպանին հետ, ապա մեկնած է ընտանեկան միջավայրի մէջ վերջացնելու համար տարին։

ԴԱՄԱՍԿՈՍԻՆ կը հաղորդեն թէ գնդ. Սարրաճի եւ նախկին վարչապետին միւս դեկավարներուն դատը պիտի սկսի Յունուարի ընթացքին։

ՍՈՎԸ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՋ

«Արեւելքի մէջ, ոչ միայն անասուններն, այլ եւ մարդիկ սովի վտանգին մատնուած են։ Անասուն չկարենալ կերակրելու, անոնցմէ անասուններն չկարենալ ծախելու եւ այս պատճառով իր փորն ալ չկարենալ կշտացնելու իրական – նութեան հետ դէմ առ դէմ կը դտնուի արեւելեան նահանգներու բնակչութիւնը։

Կարսի, Սիղոր, Սարըքամըչ, Ղաղըման եւ Արփաչայի արտերուն մէջ բերքը այս տարի անցեալ տարուան հետ բազդատմամբ կէս առ կէս նուազած է։ կայնութիւնը նոյնն է արդիւնաբերական այլ վայրերու մէջ։

Արեւելքի արդիւնաբերողին դնումի կարողութիւնը այսօր զերոյի մօտեցած է։ Նոյնիսկ կրնայ ըսուիլ թէ զերօ է։ Նոյնիսկ եթէ զինքը անօթութենէ փրկող անձնաւիւթը իր ոտքը երթայ, զայն դնելու կարողութիւնը չունի։ Կերի չդոյութենէն մահուան դատապարտուած իր անասունը անդամ չի կրնար ծախել։

Արեւմտեան նահանգներուն մէջ երբ բերքը քիչ կ'ըլլայ, դիւղացիին պարտքը կը յետաձգուի։ Ի հարկին նոր վարկեր կը բացուին եւ առիթ կը տրուի որ ան «մէջքը չտկէ»։ Իսկ արեւելեան նահանգներու դիւղացի՞ն։ Նոյն օգնութիւնը կարելի չէ՞ ընել անոնց։ կարելի չէ՞ վարկ բանալ Հողագործներուն եւ անասնաբոյծներուն։

Պէտք է անօթութենէ փրկել Արեւելքը։ Եւ փութով պէտք է առաջքը առնել տասնեակ հազարաւոր հոդիի Արեւելքէն Արեւմուտք դաղթին։

Այժմէն չորս – հինդ հազար հոդի Արեւելքէն Արեւմուտք դաղթած է արդէն։ Նոյնքան ալ կը պատրաստուի դաղթել։

Սա պէտք է հասկնալ թէ Արեւելքի բնակչութիւնը անդունդի մը սեմին վրայ կը դտնուի»։

ՍՈՎԷՆ ՁԱՏ ԱԻԱԶԱԿՆԵՐԸ

Սովի այս մղձաւանջէն զատ, Թուրքիոյ արեւելեան նահանգներուն մէջ երկրին տէրը դարձած են աւազակները, որոնց սարսափին տակ կ'ապրին Թուրք դիւղացիները։

Մասնաւորաբար Սղերդի լեռներուն վրայ, որոնք հարաւ – արեւելեան չրջանին ամէնէն կատաղի մաղարասպաններուն եւ յեղուզակներուն բոյնը դարձած են, անպակաս են սպանութիւնները եւ դողութիւնները։

Թուրք թերթերը կը զրեն թէ Սղերդի կառավարիչ եւ Փարիս զիւղերուն մէջեւ, Ապտիւլկանի Թէքին անունով հարուստ գիւղացի մը, երբ քաղաք կ'երթար իրեն գիւղակից Սալիհի հետ, չորս գինեալ յետզակներու ծուղակը ինկան եւ հրազէնով սպաննուեցան։ Սալիհ խոյս տուաւ դէպքին միջոցին։

Հաքքիարի Թաչպելեն գիւղին մէջ ալ երեք ազգական գիւղացիներ գինեալ յետզակներու կողմէ զանազան վայրերու մէջ ծուղակը ինկան եւ սպաննուեցան։

Թէեւ այս մասին պաշտօնական տեղեկութիւն չի տրուիր, բայց կը կարծուի թէ ասոնց սպանութեան պատճառը այն է որ անոնք ոստիկան զօրաց մատնութիւն ըրած են յեղուզակներուն մասին։

Թուրք կառավարութիւնը մեծ ուժեր կեդրոնացուցած է այս չրջաններուն մէջ՝ համախմբումներ կատարելով Տիյարպաքրէն, Մուչէն եւ Պիթլիսէն։

Աւազակները, սակայն, կը զործեն գինուորի եւ սպայի տարազով եւ սարսափ սփռած են ամէն կողմ։

Ոստիկան Զօրաց ընդհ. հրամանատարն ալ, մեծ դժուարութիւններով, հակառակ ձիւնի փոթորիկներուն եւ ճամբաները գոց ըլլալուն, ի վերջոյ յաջողած է հասնիլ Սղերդ, վարելու համար գինուորական զործողութիւնները աւազակներուն դէմ։

ԽՆԶԱՐԱՑԻ ԲԱՐՁՈՒՆՔԻՑ

ՈՒՈՇԻՆԿԹԸՆԻ ԻՐԱՒԱԳԷՏԸ

—o—

Մի քանի օր առաջ մեր պանդոկում անհեակ պրաւեց Արժանթինից եկած մի ռուս – հրեայ իր կնոջ եւ երկու աղջիկ – ների հետ: Շուտով ծանօթացանք եւ բա– րեկամացանք: Հրեայի հետ բարեկամա – նալը շատ հեշտ է, եթէ նա քո մէջ որեւէ շահ կամ հետաքրքրութիւն է տեսնում:

Ռուս – հրեայ այս անձը, որ իր ասե– լով, դիւանագիտական ասպարէզում էր գործում, ինձ յիշեցրեց մի ուրիշ ռուս– հրեայ, որ նոյնպէս դիւանագիտական ասպարէզում էր գործում: Իմ կեանքում պատահած իրաւ անհամակրելի մարդ – կանցից մէկը:

Իրաւաբան Վահան Գալէնտէրեանի հետ Հայկական Դատին ի խնդիր հետա– քրքրութիւնները էինք անում Ուոշինկթո– նում ձեւակերպելու համար մեր պա – հանջները խաղաղութեան ժողովից:

Արտաքին Նախարարութեան իրաւա – կան խորհրդականի կարգադիքը առե՞լ էք, — հարցրեց մի բարեկամ ծերակուտական եւ տուեց մեզ իր այցետոմսը մի քանի յանձնարարական խօսքերով:

Ռուզվելթի իշխանութեան օրով Ուո– շինկթընի արտ. գործոց Նախարարու – թեան իրաւական խորհրդականը մի ռուս հրեայ էր: Առաջնորդեցին մեզ նրա ա – ռանձնասենեակը:

Դրանից առաջ մենք տեսնուել էինք փոխ – նախարարի հետ, որ մեզ ընդու – նեց շատ սիրալիր ուշադրութեամբ ա – կանջ դրեց մեզ, հետաքրքրութիւն եւ համակրանք ցոյց տուեց դէպի մեր հար– ցը եւ մինչեւ դուռը մեզ ճամբու դնելով խոստացաւ անել իր լաւագոյնը մայ պէսքը:

Իրաւական — խորհրդականը մեզ ըն – դունեց, առանց տեղից չարժուելու, բազմած բարձր բազկաթոռի վրայ, լայ– նանիստ սեղանի առջեւ:

Առանց ձեռք պարզելու եւ առանց նըս– տել հրաւիրելու նա հարցրեց, ինչպէս հարցնում է վեհապետը իր հպատակին:

— Ինչո՞վ կարող եմ օգտակար լինել ձեզ:

Վահան Գալէնտէրեանը բաց թողեց իր լարուած լեզուն:

Մարդը լսեց մի պահ եւ դարձաւ ինձ.

— Խնդրեմ ի՞նչ էք ուզում ինձանից:

Ես արտօնութիւն խնդրեցի նստելու եւ ներկայացրի մեր հարցը:

— Սեւրի դաշնագիրը, որքան դիտեմ, հաստատուած չէ ստորագրողի կողմից, եւ իր միջազգային ուժը կորցրել է:

Ես չպատասխանեցի:

— Նախագահ Ուիլսընի իրաւաբանու – թիւնը անձնական գործ է եւ Քոնկրէսի վաւերացումը չունի, հետեւաբար եւ ի – րաւական ուժից զուրկ է:

Դուք Թուրքերի հետ դաշնագիրը ստո – րագրե՞լ էք, որով որոշուած են Հայաս– տանի սահմանները:

— Այո, բայց հարկադրանքի տակ:

— Ի՞նչ ասել է՝ «հարկադրանքի տակ»: Բոլոր դաշնագիրները ստորագրւում են հարկադրանքի տակ»:

Ի՞նչ կարող ես պատասխանել:

— Դուք Խորհրդային Ռուսաստանի հետ համաձայնութիւն ստորագրե՞լ էք, երբ Հայաստանը յանձնել էք Ռուսաստա– նին:

Ես բերանս բացի, որ պատասխանեմ, նա կարեց իմ խօսքը:

— Կ'աղաչեմ, մի ասէք, «հարկադրան– քի տակ»: Ես իրաւապէտ եմ եւ հասկա – նում եմ միայն օրէնքի լեզուն:

— Բայց պարոն իրաւապէտ, օրէնքից զատ կայ եւ բարոյականութիւն:

— Բարոյականութիւնը իմ սրտիցրե – մեռի մաս չի կազմում, կարեց նա իմ խօսքը:

— Առանց բարոյական հիմքի ի՞նչ ուժ ունի օրէնքը, վրդովուեցի ես:

— Պարոն իրաւական խորհրդական, մէջ մտաւ Գալէնտէրեանը, միայն բարո– յական իրաւունքով Իսրայէլի ժողովուր– դը երկու հազար տարի անազատ ապրե – լուց յետոյ, այսօր անկախութիւն է պա– հանջում:

— Այդ տարբեր հարց է, պատասխա – նեց, այդ էլ իմ սրտիցրե՞մեռի մաս չի կազմում:

— Ձեր եղրակացութի՞ւնը, ի՞նչ էք խորհուրդ տալիս մեզ, հարցրի ես:

— Ինչ խորհուրդ: Ձեր հարցը մարդա– սիրական հարց է — դիմեցէք մարդա – սէրներին: Միջազգային իրաւունքի տե – սակէտից, քաղաքականութեան սեղանի վրայ, այսօր Հայաստան եւ Հայկական Հարց գոյութիւն չունեն: Ժամանակ մի կորցնէք, պարոններ — ցտեսութիւն:

Դուրս եկանք: Գալէնտէրեանը չէմած էր: Բերանը չէր բացում, որ մի խօսք ա– սի:

Երբ վերադարձանք Դիւանագէտների Ակումբը, Գալէնտէրեանը առաջին իսկ ծանօթի կոճակը բռնեց եւ սկսեց պատմել Ամերիկեան արտաքին գործոց նախարա – րութեան ռուս – հրեայ իրաւական խոր– հրդականի մասին:

— Այսքան կոպիտ, այսքան չնական, այսքան լիրբ մարդ Հարլէմում էլ կարելի չէ գտնել ...

Զոր, անսիրտ մարդիկ ամէն տեղ էլ կարող են պատահել: Ինձ թւում է, ա– մերիկեան արտաքին գործոց իրաւական – խորհրդականը Ամերիկայի ռուզվելթեան ժամանակաշրջանի բոլշեւիկեան ոգու բնորոշ արտայայտութիւնն էր: Կար մի ժամանակ, որ բարեբախտաբար, երկար չտեւեց, երբ փոքր կամ ճնշուած ազգերի իրաւունքի, կամ ազգային հարցի մասին խօսելը ամօթ էր համարւում, մարդկու– թիւնը ոտք էր դրել տիեզերական պատ – մութեան չէմքից ներս, «կլոպալ» էր դի– ւանագիտութիւնը, «կլոպալ» էր, պատե– րազմը:

Գալէնտէրեանը ինձ հետ ճամբու դրեց, ինձ համար ուրիշ կապ չունէր, քան մի տաբիական յոդուածագրի մը: Մտքերնիս որ գրօսաշրջիկներու ուրիշ կարաւան մը մեզի բերէ նկարագրութիւն մը կիլիկեան աշխարհէն, Սիսէն եւ այլ պատմական հայաբաղաբներէն: Մինչ այդ՝ ահա կապադովկեան աշխարհի ա – տերակները:—

Գալէնիկ եւ հինաւուրց Անատոլուն ոս– տան մըն է անցեալի պատմական հա – րուստ բեկորներու:

Ցաւալի է որ շատ քիչերու տրուած է անոնց տրապոյրը վայելել: Ձիշդ է որ երկրըն գրօսաշրջիկներու կազմակերպու – թիւնները հասած չեն տակաւին այդ կե – դեցութիւնները արժեւորելու մակար – դակին:

Սակայն զարմանքով հաստատած եմ միշտ թէ բաւին իսկական առումով հան– պատաւէտութեան (տուիզմոր) վարժուած Եւրոպացին կը յօժարի այդ գեղեցիկ – թիւնները վայելելու համար զրկուելու մէկ քանի օր իր հանգիստէն, մինչ մենք, յարաբերաբար համեստ տեղացիներս, նուազ չափացած ըղձալով հանգերձ ար – դիական հանգստաւէտութեան պայման – ներու կողմէ, աւելի պահանջկոտ կը դառնանք եւ յաճախ կը հրաժարինք չարժելու մեր տեղէն: Անատոլուի պան– դոկներուն ճանճերը կամ մժեղները աւե– լի կծուախայթ նկատելով մեր տանը ճանճերէն, Պոլսոյ օդային կազի կամ թէրքոզի ջուրի խողովակներու զանազան թերիներուն հետեւանքով ամբողջեան դատապարտուող մեր «չօփ–պէն»ի եւ ջուրի ծորակներու առջեւ կը համակեր – պինք քանի մը օր առանց լողանքի մնա– լու, բայց անհաղորդելի կը համարինք Անատոլուի պանդոկները իրենց լողա – րանի պակասին պատճառով:

Կերակուրի հարցին գալով, կարելի է մէկ երկու օր ճերմակ պանիրով, թարմ հաւկիթով ու պտուղով անանիլ, եթէ ճաշարաններու ճաշերը անախորժ թուին մեր քիմքին, կամ ծանր՝ մեր ստամոք – սին:

Տարիներ առաջ, նկարագրած եմ արե– ւելեան Միջերկրականի գեղեցիկ եւ չա– հեկան նաւահանգիստները (Ալեքսան – րիէթ, եւայլն), եւ նկարներով ցոյց տը– ւած գափնեվարդերով եւ նարնջենիներով երիզուած ծովեզերեայ լայն ուղիներու երկայնքն ի վեր ցիր ու ցան՝ բիւզան – դական եւ հռովմէական շրջաններէ մնա – ցած սիւները, արձանները, քանդակա – գործութիւնները, Սելճուկներու եւ Հի – թիթներու շրջանէն մնացած հոյակապ ամրոցները եւ գղեակները, կղզեակի մը ժայռերուն վրայ կառուցուած Կոռիկոսի պալատը, Անթալիոյ թանգարանին մէջ պահուած հոյակապ խճաքարերու նկար – ները:

Ճանապարհորդական այդ նկարագրու – թիւնս ուղեցոյց ծառայեց չատերու եւ կը խորհիմ թէ այդ ճամբորդութիւնը կա – տարողները գոհ մնացին եւ ամբարեցին պատմական կարեւոր ծանօթութիւններ:

Այս անգամ պիտի խօսիմ Կապադով –

ԳԵՂԵՑԻԿ ԵՒ ՀԻՆԱՒՈՒՐՑ ԱՆԱՏՈԼՈՒՆ ԵՒ ԻՐ ԱՒԵՐԱԿՆԵՐԸ

—o—

ՄՄԲ.— Փոքր Ասիոյ այն հողամասը, զոր կը գրաւէ արդի Թուրքիան, կարելի է կոչել «ստորերկրեայ թանգարան» մը հին ֆաղաքակրթութեանց հրաշալիքնե – րու, լքեալ եւ անխնամ: Ամերիկացիներ – րը, վերջերս, սկսած են հետաքրքրութիւն հետքեայ արուեստի այս մնացորդացով: Զբօսաշրջիկներու շարժում մը ստեղծելու փորձեր ալ կը կատարուին դէպի այդ հնագոյն աւերակները: «Ժամադակ» թեր– թին աշխատակիցը, մասնակցելով զբօ – սաշրջիկներու կարաւանի մը, այցելեր է «կէօրէմէ»ի աւերակները, կեսարիոյ շր– ջան, որոնց ակնարկութիւնը կ'ընէ հե –

րոդոտ:

« Կլոպալ» իրաւական խորհրդականի համար, կլոպալ հարցերի մէջ ի՞նչ տեղ ունէր հայկական մի փոքր, աննշան խըն– դիրը: Շատ շատ մարդասէրների պա – րագայ:

Ամէն տեղ եւ բոլոր կազմակերպու – թիւնների մէջ երեւոյթը նոյնն է. օրէնքը երբ մերկանում է բարոյականութիւնից, երբ ձեւը բռնում է բովանդակութեան տեղը, կեանքը սկսում է ցամաքել կեն – սական աւիշից, օրէնքը դառնում է ան– րէն, կեանքը՝ անկեանք: Եւ ցամաքած, անկեանք կերային կազմի աւերակների վրայ յեղաշրջումով, ծնունդ է առնում նոր՝ կենդանի կեանք:

Այդպէս չեղա՞ւ քրիստոնէութեան պա– րագան: Փարիսեցիների դոսացած, ա – մայացած օրէնքը խաչ հանեց Քրիստո – սին եւ հետեւա՞նքը — փարիսեցիական օ– րէնքի եւ — ընկերային կարգի աւերակ– ների վրայ հաստատուեց քրիստոնէական նոր օրէնքը եւ ընկերային կարգը:

Այդպէս չեղա՞ւ միջին դարերում, յա – նուն օրէնքի չալածուեցան կամ խարոյկի վրայ այրուեցան ժամանակի մեծագոյն դէմքերը, եւ Ճան Հուսերը, Կոպեռնիկ – ների, Գալիլէյիների նահատակութեան յաջորդեցին վերածնութեան եւ նոր ժա– մանակների մարդկային կարգերը:

Այդպէս չէ՞ եւ այսօր: Երբ օրէնքը կորցնում է իր բարոյական եւ գաղափա– րական պատուանդանը, երբ օրէնքը դա– րերում է մարդուն ծառայել եւ մարդն է դառնում օրէնքը, երբ յանուն օրէնքի գործում են անմարդկային ապօրինու – թիւնները, անխուսափելի կերպով եւ ան– հրաժեշտօրէն, անօրինեալ օրէնքի դէմ ըմբոստանում է մարդկային խիղճը, խոր– տակելով ապօրինացած օրէնքը...

Բայց ո՞րտեղից որտեղ: Ի՞նչ կապ ու – նեն այս խորհրդածութիւնները Ուոշինկ– թընի ռուս – հրեայ – ամերիկացի իրա – ւական խորհրդականի հետ:

Ս. ՎՐԱՅԵԱՆ

ԱՄԲԱՍՏԱՆԵԱԼ ՍԹԱԼԻՆ, ՈՏՔԻ՛

—o—

Տոքթ. Պլեհնեւ մեկնեցաւ, բայց ժամ մը եւս վերադարձաւ Օրճոնիքիձէն տես– նելու: Այս վերջինը մեռած էր. բժիշկը որեւէ կասկած չունեցաւ. իր հիւանդը միաժամանակ թունաւորուած եւ խեղդա– մահ եղած էր: Նախ՝ թունաւորուած, անկասկած՝ հասարակ ներբսկումով մը. ապա՝ աւելի վստահ ըլլալու համար՝ խեղդուած:

Ցաջորդ դիչերը, բժիշկներ Պլեհնեւ, կաղաքով եւ Լեւին զեկոյցով մը կը հա – դորդէին Ճարտարարուեստի ժողովրդա – կան կոմիսարին մահը՝ սրտի տապնապի հետեւանքով:

Փառաւոր թաղում կազմակերպեցին Օրճոնիքիձէի համար. որպէս գլխաւոր սգակիր, Սթալին կը գտնուէր դագաղը ուսամարձ տանողներուն առաջին կար – գին:

Սակայն Սթալին չբաւականացաւ Օր – ճոնիքիձէի մահով. սովորութիւն ունէր մաքրելու նաեւ իր գոհերուն ընտանիքին անդամներն ու ոճրին հետ հետեւէն կամ մօտէն կապակցութիւն ունեցողները:

Ինչ կը վերաբերի Տոքթ. Պլեհնեւի, յայտնի է թէ 1938ի մեծ դատավարու – թեան ամբաստանեալներէն էր, որոնք իրը թէ փորձած էին Սթալինն ու քանի մը ուրիշներ սպաննել:

Պլեհնեւ դատապարտուեցաւ քսան տարուան տաժանակիր աշխատանքի:

ՖՐՈՒՆԶԷ՝ « ՎԻՐԱՒՈՒԹԱՒԱՆ ՄԱՀ »

Իր առած անձերը ոչնչացնելու համար՝ հրացանաղարկութեան, մահուան կայան– ներ ուղարկելէ, խեղդամահ ընելէ կամ թունաւորել տալէ տարբեր միջոցներ ալ ունէր Սթալին իր տրամադրութեան տակ: Աւելի արդիական միջոցներ ալ օգ– տագործել դիտէր. զոր օրինակ՝ վիրա – բուժական մահը: Այս միջոցին զոհերէն եղաւ Ֆրունզէ(*):

Սթալինի մանկութեան ընկերներէն մէկը եղած չէր, սակայն իր անգնահատելի օժանդակութիւնը բերած էր Թրոցքիի դէմ Սթալինի մղած պայքարին առեն. որպէս վարժարութիւն, տիրացած էր Թրոցքիի ժառանգութեան, այսինքն՝ նը– շանակուած էր Պատերազմական նախա – րար, ցամաքային եւ ծովային բանակնե– րու պետ եւ Պոլիտբիւրոյի անդամ: 1925ի Ապրիլին էնք:

1925ի Նոյեմբերին, Ֆրունզէ կը մեռ – նէր վիրաբուժական սեղանին վրայ:

Սթալին չուտով անդրադարձած էր, թէ Ֆրունզէ իր կարծածին չափ կակուղ չէ. ահռելի էր որ կարմիր բանակին պլուխը գտնուող անձը աւելի տլու, աւելի հաւատարիմ մէկը ըլլայ իր անձին: Ար– դէն նկատի ունէր իրեն պէտք եղած ան– ձը — Վորոշիլով: Բայց պաշտօնի դը– լուխ կը գտնուէր Ֆրունզէ: Սթալին դուր– ծի լծուեցաւ՝ այդ աթոռը թափուր ձգե– լու համար:

Ժողովրդական կոմիսար Ֆրունզէ, որ քառասունը հազիւ անցած էր, ստամոք – սի իպսէռէ կը տառապէր: կեանքը վը – տանգուած չէր, եւ քանի որ բժիշկները կ'ըսէին թէ իր տակաւ սիրտը չի կրնար դիմանալ թմրեցուցիչ ազդեցութեան, Ֆրունզէ բոլորովին հակառակ էր վիրա– բուժական որեւէ գործողութեան:

Սթալին որոշեց զանց առնել բժշկական խորհուրդները: Մասնաւոր խնամքով ընտրուած բժշկական յանձնախումբ մը հրաւիրեց եւ խնդրեց որ կարծիք յայտ – նէ: Բժիշկները այն եղրակացութեան յանգեցան, թէ գործողութիւնը պէտք էր կատարուէր: Բժիշկներու այս եզրակա – ցութեան աւելի կշիռ տալու համար, ըս– թալին զայն վաւերացնել տուաւ նաեւ Պոլիտբիւրոյին կողմէ:

Այս բոլորը տեղի կ'ունենային այնպէ– սի պահու մը, երբ Ֆրունզէ Մոսկուայէն բացակայ էր քննական պատոյտի մը հա – մար:

Վերադարձի ճամբուն վրայ, չոզեկառ– քին մէջ, ձեռքը տուին հետեւեալ զեկոյ– ցը, որուն պարունակութեան տեղեկա – ցաւ մեծ զարմանքով.

« Այսօր մայրաքաղաք կը հասնի Ընդ – հանուր Հրամանատարը՝ ընկերը Ֆրունզէ, որ առժամաբար կը ձգէ իր պաշտօնը՝ ստամոքսի գործողութեան մը ենթարկը – ւելու համար»:

Մոսկուա ոտք կոխելուն, Ֆրունզէ զար– մանք յայտնեց, բարկացաւ, բայց ոչ մէկ բան օգուտ ունեցաւ: Եթէ լաւ բոլշեւիկ էր, պէտք է գիտնար, որ իրական հա – մայնավարը միշտ կ'ենթարկուի կուսակ– ցութեան, որ միշտ իրաւացի է:

Ուրեմն համակերպեցաւ վիրաբուժա – կան գործողութեան ենթարկուելու, եւ, ըստ նախատեսուածին, քնարեր թմրե – ցուցիչները իր մահուան պատճառ եղան:

ԵՐՐՈՐԴ ՈՒՆԿՆԴՐՈՒԹԻՒՆ

1923ի Փետրուար ամիսն է:

Լենին կաթուածի բ. հարուած մը ըս– տացած է, սակայն զինք խնամող բժիշ – կը՝ Կէթիկ, յոյսը կորսնցուցած չէ. հի – անդը ուժեղ կազմ ունի. մտային կա – րողութիւնները տեղն են: Բժիշկը այս բոլորը յայտնած է Թրոցքիի: Արդարեւ, Լենին տարի մը եւս պիտի ապրի մինչեւ 1924 Յունուար 21:

(7 Շար.)

(*) Յետագային պիտի տեսնենք Սթա– լինի «արդիական» միջոցներէն մէկ ու – րիշը՝ ինֆեռնաշարժի արկածը:

կիսոյ հրաշալիքներուն, կէօրէմէկ «Քա – բաթած Հովիտ», «Գլխարկաւոր Բուր – ղերու» եւ «Փայտաբոյս» մօտ 375 ղեղ – ցիկ եկեղեցիներու եւ որմանկարներու մասին: Նիւթիս անցնելէ առաջ ըսեմ թէ Իւրկիւպի մէջ կառուցուած է արդիական չատ ղեղեցիկ պանդոկ մը՝ լոգարաններ – բով օժտուած, ուրկէ կէօրէմէկի ճամբուն վրայ վեց քիլմ. հեռու կը գտնուի Օրթա Հիսար, ուր կայ նախնական պանդոկ մը իր արեւելեան բաղնիքով եւ Օրթա Հիսա – րէն ալ մէկ քիլմ. հեռու կը գտնուի Կէօ – րէմէ, ուր պանդոկ չկայ :

Կարելի է Պոլսէն չողեկառքով երթալ նաեւ կեսարիա եւ յետոյ ինքնաշարժով, երկու հարիւր ոսկի, նոյն օրուան մէջ այցելել Կէօրէմէ եւ վերադառնալ :

Ես Անդարայէն գացի Կէօրէմէ, «Թիւրք Էքսփրէս»ի կողմէ Հանրապետութեան ոտնին առթիւ կազմակերպուած պատ – տով մը: Առաւօտեան ժամը եօթնին՝ «օ – թօքար»ով մը ճամբայ ելանք Անդարա – յէն: Ճամբորդները կը բաղկանային 33 երկտեղ Ամերիկացիներէ եւ երեք Հայե – րէ: Տանէին հասանք Քըրչհիր, 10·45ին չոմի Պէքթաչ եւ 13ին ալ Կիւլչհիր, ուր ճաշեցինք ղեղատեսիլ համակրելի ճաշա – բանի մը մէջ:

Կէսօրէ ետք 15·30ին հասանք Օրթա Հիսարի պանդոկը, ժամը 16ին այցելե – ցինք Իւրկիւպ (օթոքարով) եւ պիշերե – ցինք պանդոկին մէջ: Հետեւեալ առաւօ – տուն ժամը ութին ղարձեալ մեր «օթո – քար»ով մեկնեցանք Կէօրէմէ եւ մինչեւ Կէսօր կարողացանք այցելել ժայռաբոյս եկեղեցիները հազիւ երկվեցեակ մը: Ժա – մը 13ին ճամբայ ելանք Անդարայի ուղ – ղութեամբ եւ 19·30ին ալ վերադարձանք մեր մեկնակէտը, այսինքն «Թիւրք Էքսփ – րէս»ի Անդարայի կեդրոնատեղին :

Ինչպէս ըսի՝ 33 Ամերիկացիներէ եւ ե – րեք Հայերէ կը բաղկանար մեր խումբը, որով մեր ճամբորդութիւնը հմայուն ե – ցաւ «ֆանթէզի»ներով, ծիծաղաշարժ եւ նոյնիսկ վտանգաւոր միջադէպերով :

Հանր. Տօնի նախօրեակին, պիշերը, երբ կ'ընթրէինք Օրթա Հիսարի պանդոկի ճաշարանին մէջ, պիւղացիներէն խումբ մը այրեր, սրինգով եւ թմբուկով, ներս խուժեցին ճաշարանէն եւ սկսան իրենց տոհմիկ երգերը եւ պարերը: Աւանդական արշն էր միայն պակաս անոնց խումբէն, սակայն ղեղադիմ Ամերիկուհիները չու – տով լրացուցին այդ պակասը՝ պար բռ – նելով պիւղացիներուն ղէմ :

Փոխանակ Ուիսքիի՝ տեղւոյն կարմիր պինին բաւական եղած էր յառաջ բերելու համար ներքին այդ ոգեւորութիւնը : Ա – ւելորդ է ըսել թէ պարի մոլեգնութեան ընթացքին անոնց կարճ ու սեղմ քղանցք – ները վերածուեցան «չորթ»երու . . . :

Պտոյտի կազմակերպիչ Թիւրք Էքսփը – րէսի անօրէն Պ. Տինօ, որ կ'ընկերանար մեզի, ղղուշացուց զանոնք այդ մաեւմու – թիւնը տեղծելէ :

Տնօրէնը բացատրեց ինձի թէ, Անատո – լուի կրթօճախներու բարքերուն ան – ծանօթ օտար եւ միամիտ մանկամարդու – հիներ, յաճախ, իրենց անխորհուրդ ա – րարքներով, դժուարին կացութեան մը կը մատնէին պինքը, արուած ըլլալով որ անոնց պատիւին պաշտպանութիւնը ի վերջոյ իրեն կը վիճակէր :

Պատմեց ինծի հետեւեալ չատ ղեղեցիկ պրօ – սաչրջիկ մանկամարդուհիի մը պարա – գան, որ բովանդակ պիշերը պիւղացի եւ – րիտասարդներու հետ պրօսնեկ եաք՝ չէր կարողացած ազատիլ անոնց ձեռքէն եւ հետեւեալ առաւօտուն կէս – նուազուն վիճակի մէջ փոխադրուած էր իր տեղը :

Թիւրիմացութիւններու տեղի չտալու համար, պէտք է խոհոյն աւելցնեմ թէ տեղացի ժողովուրդը չատ կենցաղավար եւ պարկեչտ վերաբերում մը ցոյց կու տայ հանդէպ լուրջ պրօսաչրջիկներու :

Գալով խումբին ընկերացող երեք Հա – յերու, ես ալ մէջը ըլլալով, ջրախառն պինի խմեցինք ինչ որ չվրիպեցաւ մեր չուրջիններու ուշադրութենէն եւ «Փրէզ – պիթէրեն տրինք» (երիցական ըմպելի) յորջորջուեցաւ մեր ըմպելին :

Կէօրէմէի եկեղեցիները այցելելէ ա – ոաջ, պիս տպաւորող պատկերներէն մին եղաւ Օրթա Հիսարի պանդոկի մէջ պար – թօնքս :

Առաւօտեան ժամը վեցին, երբ ակնարկ մը նետեցի պատուհանէս դուրս, տեսայ հուրիներու նմանող խումբ խումբ կիներ, որոնք աւանակներու վրայ հեծած՝ դաշ – տերը աշխատելու կ'երթային :

Սաւաններով քօղարկուած էր անոնց դէմքը եւ առաւօտեան զեփիւռի ազդե – ցութեան տակ վէտվէտող այդ սաւաննե – րը աչալոյսի մանիչակորակ ցոլքերու տակ դիւթական պատկեր մը կը կազմէ – ին :

Ինչպէս Անատոլուի զիւղերէն չատերու մէջ, հոս ալ կիները կ'աշխատին եւ այ – րերը իրենց օրերը կ'անցընեն սրճարան – ներու մէջ թղթախաղով :

Կէօրէմէի հրաշալիքներու նկարագրու – թեան սկսելէ առաջ, կ'ուզեմ թուելմնպա – բա վերադարձին «օթոքար»ին մէջ պըտ – նուած «մեհմուտ»ի մը դուչակութիւնը :

Երբ մեր օթոքարը հանդարտօրէն կը սահէր կպրապատ լայն պողոտաներու վրայէն, ճամբորդներէն տիկին մը, իր եաեւի տիկնոջ դառնալով՝ պաղարիւնու – թեամբ ծանոյց մօտալուտ փոքր արկած մը: Ունկնդիրը կարեւորութիւն չընծա – յեց այդ դուչակութեան, սակայն լսած ըլլալով՝ արտադրով սպասեցի :

Ջարապուչակութենէն հազիւ կէս ժամ եաքը, մեր օթոքարը փոքր ընդհարում մը ունեցաւ դէմէն եկող օթոպուսի մը հետ եւ ապակի մը փշրուելով ճամբորդի մը աչքը վիրաւորեց :

« Մէմիում» տիկինը, դարձեալ կռնա – կը դարձնելով՝ հանդարտօրէն ծանոյց թէ այլեւս ոչ մէկ անախորժ միջադէպ պիտի պատահի մինչեւ Անդարա մեր վե – րադարձը :

ՎԱՐԴՈՒՀԻ ՃԼԼԱԼԵԱՆ

(Մնացեալը յաջորդով)

ՀԱՅԱՍՏԱՆ

ՆՈՐ ՕՐԷՆՔ՝ ՍԵՓԱԿԱՆ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

— Քաղաքացիները իրաւունք ունին մի – այն մէկ տան սեփականատէր ըլլալու : Սեփական բնակարանները 65 քառ. մեթ – րէն աւելի պէտք չէ ըլլան: Երեւանի մէջ սեփական շէնք կարելի է շինել համա – գործակցական հիմունքներով միայն : Տունը ծախելու պարագային նոր տուն շինելու իրաւունք չկայ մինչեւ 10 տարի:

Սեփական բնակարաններու շինութիւնը կարգ կանոնի դնելու եւ շինանիւթեր ու – նենալու օրինական միջոցները սահմանե – լու համար նոր կանոնադրութիւն մը մը – շակուեցաւ Հայաստանի Նախարարներու Խորհուրդին կողմէ :

« Սով. Հայաստան», իր Դեկտեմբեր 16ի թիւով, առաջին էջ, կէտ առ կէտ կը թուէ նոր օրինադիծին արտաղրութիւն – ները :

« Կանոնադրութիւնը քաղաքացիներուն իրաւունք կուտայ անձնական սեփակա – նութեան իրաւունքով երենց համար շի – նել մէկ կամ երկյարկանի բնակարան՝ մէկէն մինչեւ հինգ սենեակով, պայմա – նով, որ ընդհանուր տարածութիւնը 60 քառակուսի մեթրէն աւելի չըլլայ :

« Բնակելի տուներ կրնան համադոր – ծակցական (ֆօօփերաթիվ) հիմունքնե – րով շինել նաեւ քանի մը քաղաքացիներ միասնաբար, պայմանաւ, որ տասը հո – դիէն պակաս չըլլան :

« Քաղաքին ընդարձակումը սահմանա – փակելու համար Երեւանի քաղաքացինե – րը անհատական բնակարաններ կրնան շի – նել միայն համադործակցական հիմունք – ներով, բազմայարկ տուներ չինելով :

« Սեփական բնակելի տուներ շինողնե – րուն հարկ եղած հողամասը կը յատկաց – ուի քաղաքային, չրջանային եւ աւանա – յին Խորհուրդներուն միջոցաւ, ըստ չի – նող տանտիրոջ բնակութեան վայրին:

« Բնակելի տան շինութիւնը կրնայ ի – րագործուիլ միայն այդ նպատակին հա – մար յատկացուած հողամասին վրայ՝ բնակելի տան հատատուած նախագի – ծին, հողամասը օգտագործելու իրաւունք տուող պայմանագրին եւ շինութիւնը ըս – կըսելու հրամանին գոյութեան պարագա – յին :

« Ինքնաղլուխ շինութեան ձեռնարկող – ները պատասխանատուութեան կ'ենթար – կուին Հայաստանի Քրէական օրինագիր – քին 219րդ յօդուածին համաձայն, հա – կօրինական բնակելի տան բռնագրաւու – մով :

« Շինուած բնակելի տան յարկերը, սենեակներուն թիւը եւ բնակելի տարա – ծութիւնը պէտք է համապատասխանէ ո – րոշուած սահմաններու չափին, որ երբէք աւելի ըլլայ՝ կը դրաւուի աւելորդ բնա – կելի տարածութիւնը եւ կը յանձնուի տեղական խորհուրդներու բնակելի ֆոն – տին, տունի նկարագիրն ունեցողները տե – ղաւորելու համար :

« Անոնք, որոնք կը վտանգին սեփա – կան տուն չինել եւ կ'օգտագործեն պե – տութեան պատկանող կամ լքեալ վիճակի մէջ գտնուող բնակելի տարածութիւն մը, պարտաւոր են հողը յանձնել համապա – տասխան չրջանային խորհուրդի գործա – դիր կոմիտէին կամ պետատեսչութեան, նայած վայրին :

« Կրկին անգամ տուն չինել ուղղնե – րուն նոր հողամաս չի յատկացուիր ի – րենց առաջին տունը ծախած թուականէն մինչեւ տասը տարի :

« Շինանիւթերը ստանալու կանոնները խախտած անձերը պատասխանատուու – թեան պիտի ենթարկուին Քրէական օրի – նագիրքի 164րդ յօդուածին համաձայն»:

Վերջապէս Հայաստանի Նախարարնե – րու Խորհուրդը որոչեր է արդիլել ամա – րանոցներու չինութիւնը : « Հայաստանի մէջ ամենուրեք արդիլուած է քաղաքա – գիներուն հողամասեր յատկացնել սեփա – կան ամարանոցներ չինելու համար, ինչ – պէս նաեւ պետութեան, համագործակ – ցական ընկերութիւններու եւ ընկերային կազմակերպութիւններուն կողմէ քաղա – քացիներուն ամարանոց չինելու հա – մար չինանիւթեր ծախելը»:

ՆՈՐ ՀԱՆՔԵՐ

Հայ երկրաբանները գտած են չինանիւ – թի՝ տուֆի, երկաթաքարի (պազալթ), հրաբխախառամի եւ այլ նիւթերու կարգ մը նոր հանքեր :

Մեծ ուշադրութեան արժանի է Այրո – ւմի (Նոյեմբերեան չրջան) գաճի հան – քավայրը, որ կը բռնէ գրանէն մինչեւ 30 քառակուսի քիլոմեթր տարածութիւն : Գաճին պարունակութիւնը կը հասնի 80 տոկոսի :

Աչտարակի չրջանի Ազարակի վարդա – գոյն եւ սեւ տուֆի հանքավայրերուն հե – տազօտութիւնը ցոյց տուաւ, որ ասոնց պաշարները 17 միլիոն քառակուսի մեթ – րէն աւելի են :

ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Պուքրէշի «Նոր Կեանք»էն կ'իմանանք թէ հունդար հայագէտ Էմմանուէլ Շիուց՝ Հայաստանի Գիտութիւններու ակադե – միային ուղարկած է ուսումնասիրութիւն մը, որ կը պարունակէ նոր տուեալներ Գաբրիէլ Թոզլաթենցի մասին: Ազդու – թեամբ Հայ Գաբրիէլ Թոզլաթենց՝ Հուն – գարիոյ մէջ ճանչցուած է իբր ազգային հերոս: Ան փառքին հասած է 275 տարի առաջ, երբ՝ Եւրոպայի մէջ սկսած էին խախտիլ Օսմանեան պետութեան հիմերը եւ Հունգարացիք ազատագրական պայ – քար կը մղէին Թրքական տիրապետու – թեան դէմ հայազգի այս հերոսը կարե – ւոր դեր խաղաց Հունգարիոյ ազատա – գրական պայքարին մէջ :

ԹԻԱՊԱՐՏԸ

(ՎԷՊ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿԵԱՆՔԷ)

ԳՐՅՑ

ԱՐՄԷՆ ՇԻՏԱՆԵԱՆ

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Բայց այս վերջին հարցումը նորէն թանձր մոայլ մը իջեցուց թշուառ կնոջ դէմքին վրայ ու սոսկումով մը համակեց պինքը. չկրցաւ պատասխանել... այդ ա – նունը զարհուրելի անուն մըն էր :

— Ո՛հ, զուցէ մեռած է որ կ'ըսէք, *մայր իմ* կրկնեց Վազգէն :

— Օրեր ձայն տուաւ, զաւակս, մրմն – ջեց կինը դողդողալով :

— Շատո՞նց :

— Ո՛չ... մօտ օրերուս մէջ :

— Մօտ օրերո՞ւս մէջ... աւաղ, որչափ դժբախտ եմ եղեր որ չկրցայ տեսնել պինքը :

Կինը մեռելի մը գոյն առաւ ու փղձկե – ցաւ: Իր լեզուին վրայ անուն մը կար, որմէ կարծես թունալից չունչ մը կ'անց – նէր իր բովանդակ էութեան մէջ :

— Ասօսկ, *մայր իմ*... ըսէ ինծի մեր մականունը ... ըսէ ինծի թէ քոյր, եղ – բայր եւ ազգականներ ունի՞մ չեչտեց Վազգէն խանդաղատալի ձայնով մը :

— Քոյր եւ եղբայր չունիս բայց ազգա – կանները կան թոթովեց կինը:

— Ախտ լաւ, ինչ մականուն կը կրէք:

— Ո՛հ, մի հարցներ ատիկա ... զոլ – զըղաց կինը:

— Պատճա՞ռը :

— Որովհետեւ հայրդ անիծեալ ստուեր մը թողուց քու ազգատոհմիդ մականու – նին վրայ :

— Ի՞նչպէս ...

— Լեզուս չատաչ չերթար որ ըսեմ, զաւակս :

— Ցայտնէ, *մայր իմ* ...

— Քու մականունդ ...

— Երկաթապալչե՞նց ...

— Այո :

— Ուրիշ երկաթապալչենց մականունով ընտանիք մը կա՞յ այս քաղքին մէջ :

— Չեմ դիտեր ...

— Ի՞նչ է հօրս անունը:

— Առաքել էֆէնտի ...

— Առաքել էֆէնտի՞... ի՞նչ կը լսեմ, Աստուած իմ...

Ու Վազգէն երկու ձեռքը դէմքին վրայ ծածկելով, սկսաւ արտասուել :

— Վազգէն ... բացատրեց Վանակա – նը անոր ձեռքը բռնելով. մի լար, արդա – րութիւնը պատժած է քու հայրդ: Այսօր մայրդ զրկիդ մէջն է. անով պէտք է մը – խիթարուիս :

— Աստուած իմ... ո՛հ, ինչու այսպէս ըլլայ ... կը մրմնջէր Վազգէն՝ առանց կարենալու իր հոգւոյն զառնութիւնը բա – ցատրել :

ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆՆ ԻՐ ԴԵՐԻՆ ՄԷՋ..

Գիչերուան խաւարը պատած էր ամ – բողջ բնութիւնը խոր ու ազետալի լռու – թիւն մը կը տիրէր: Երբեմն հեռաւոր հորիզոնի մը եաեւէն վայրկ մը կը ճեղ – քուէր, ինչպէս հրաբուխէ մը ժայթքած անհուն բոցը :

Այդ պահուն, Վանայ արեւելակողմը գտնուող չղթայ լեռներու մէջ, երկու հո – գի կ'ապաստանէին, զրեթէ ամէնէն ա – պահով տեղը : Մին մեր ծանօթ Պատրի – կըն էր, իսկ միւսը Լալէզար :

— Ալ ազատ ենք, անանկ չէ, հարցուց Լալէզար հեւքոտ ու երկիւղէն սմքած ձայնով մը:

— Այո... ազատ ենք, Լալէզար պա – տասխանեց Պատրիկ գոհեկան այնպիսի խեղդուած չեչտով մը՝ որ կը ցնցէր իր բովանդակ էութիւնը: Հոստեղ կ'անցը – նենք գիչերը... վաղը պիտի կրնանք քա – ղաքը մտնել :

— Թող ատիկա... ի՞նչպէս եղաւ վէր – քըդ, ընդմիջեց մանկամարդ աղջիկը զբ – րեթէ անբացատրելի զորովանքով մը :

— Բան մը չկայ ... անոր ցաւն անգամ չեմ զգար, մրմնջեց Պատրիկ ճնշուած ճիպ մը ընելով ինքնիր վրայ :Արիւնը դադրած է..., չատ հանդիստ եմ :

— Ո՛հ, մի դուցէ պնդակը ...

Ու Լալէզար չկրցաւ խօսքը չարունակել ... կարծես թէ այդ քստմնելի հարցու – մը ժանդոտ երկաթի մը պէս իր սրտին մէջ մխուեցաւ :

— Չէ՞ որ «մի կասկածիր» ըսի. առար – կեց Պատրիկ մանկամարդ աղջկան ձեռ – քը բռնելով: Մի՞թէ Քիւրտին պնդակը դիւրին կերպով կրնայ ծակծկել մեր սիր – տը... : Աչխոյ եղիր... Պատրիկ մէկ եր – կու պնդակով չի մեռնիր: Գիտցիր որ չատ անգամներ կուրծքիս մէջ մտած են անոնք... : Կաթիլ մը արիւն... ուրիչ ո – չինչ :

Լալէզար խորին հառաչանք մը հանեց ու մթութեան մէջ իր քովը նստող երի – տասարդին երեսը նայիլ ուզեց: Ցետոյ ցաւագեակ ձայնով մը հարցուց .

— Ակսից մինչեւ քաղաքը չատ ճամ – բայ ունի՞նք:

— Չէ... երբ առտուան լոյսը չփեղ – քուած մեկնելու ըլլանք, կէս օրուան մօտ քաղաքը կը հասնինք, պատասխանեց Պատրիկ՝ որուն կոկորդը խղդող չոր հա – զը հետզհետէ կը սաստկանար :

(Շար.)

ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ ԱՌԹԻԻ « ՅԱՌԱՋ » ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

Պ. Յովհաննէս Վարդանեան մէկ տա – րեկան Յառաջ կը նուիրէ Պ. Վարդգէս Վարդանեանի :

×

Օր. Վարդուհի Նորոյեան, ինչպէս ա – մէն տարի մէկ տարեկան Յառաջ կը նը – ւիրէ Պ. Տիգրան Նորոյեանի :

×

Տէր եւ Տիկին Գամպէրեան մէկ տարե – կան Յառաջ կը նուիրեն իրենց հօր Պ.Կ. Յոզեանի (Մարսէյլ) :

« ՅԱՌԱՋ »Ի ԲԱՐԳԱՒԱՃՄԱՆ ՀԱՄԱՐ

Պօմոնի Հ. Ց. Դ. Զաւարեան կոմիտէն յիսուն Ն. Ֆ. կը նուիրէ Նոր տարուան առթիւ :

ՆՈՒԻԷՐՆԵՐ

Ֆ. Կ. Խաչի Շրջ. վարչութիւնը իր խո – րին չնորհակալութիւնները կը յայտնէ Տիկին Աստղիկ Աքնազարեանի որ ինչպէս ամէն տարի, այս տարի եւս իր սիրայօ – ժար մասնակցութիւնը բերաւ Մանուկնե – րու օրուան հանդէսին առթիւ չաքարե – ղէններ նուիրելով :

Նմանապէս իր խորին չնորհակալու – թիւնները կը յայտնէ Պ. Բարգէն Գավէ – ղի, որ երբեք չի մոռնար մեր Մանուկնե – րու Օրուան հանդէսը, նուիրելով կար – կանդակներու տեսակներ :

Շնորհակալութիւն նաեւ Տիկ. Մատլէն Իւլիւպէյեանի որ լաւագոյն կերպով կա – տարեց իր խօսնակի պարտականութիւնը զուարճացնելով մանուկները, ինչպէս նաեւ Պ. Ա. Գմբէթեանի որ սիրայօժար ստանձնած էր կաղանդ Պապայի դերը :

×

Կապ. Խաչի Շրջ. վարչութիւնը չնոր – հակալութեամբ ստացած է Պ. Զըլինկիր – եանէ յիսուն Ն. Ֆ. Օգափ. կայաւի ի նպաստ :

ՆՈՒԷՐ

Օրիորդ մը 40 Ն. Ֆ. կը նուիրէ Ֆ. Կ. Խաչի Անկէնի մասնաճիւղին Օգնութեան նպատակի մը յատկացուելու համար :

ԺԱՄԱԿԱՐԳՈՒԹԻՒՆ Ս. ԾՆՆԴԵԱՆ

ԼԻՈՆ ԵԿԵՂԵՑԻ

ՇԱԲԱԹ երեկոյ, Ճրագալոյց, սկզբնա – ւորութիւն ժամերգութեանց ժամը 4·30– ին :

ԿԻՐԱԿԻ, Ս. Ծնունդ·— Սկզբնաւորու – թիւն ժամերգութեանց առաւօտեան ժա – մը 7·30ին :

Պատարագ·— ժամը 10ին : Ջրօրհնէք , ժամը 11ուկէսին :

Սիրով կը հրաւիրուին Լիոնի եւ չոր – ջաններու բարեպաշտ Հայ ժողովուրդը ներկայ ըլլալու սոյն արարողութեանց :

Այս առթիւ կը խնդրուի մեր հաւա – տացեալ ժողովուրդէն, բերել իրենց իւ – ղաձին բաժինը վառ պահելու համար մեր Ս. եկեղեցին :

×

ԾՆՈՒՆԴԸ ՊՕՄՈՆԻ ՄԷՋ

6 Յունուար, Շաբաթ, Ճրագալոյց Ծը – նընդեան·— Երեկոյեան արարողութիւն եւ պատարագ ժամը 4ին եւ 5ին :

7 Յունուար, Կիրակի, Տօն Ծննդեան եւ Աստուածայայտնութեան, սկիզբ արա – րողութեան ժամը 8, Ս. պատարագ ժա – մը 10 : Հանդիսաւոր Ջրօրհնէք՝ ժամը 11·45 :

8 Յունուար, Երկուշաբթի , Յիշատակ Մեռելոց·— Սկիզբ ժամերգութեանց ժա – մը 8·30, հանդիսաւոր պատարագ եւ հո – գեհանդիստ ժամը 10 :

×

ՏԻՍԻՆ

ՇԱԲԱԹ երեկոյեան ժամը ճիշդ 5ին ժամերգութիւն, ապա ընթերցուածներ, և ՈՂԻՆՉ Է պիտոյ, եւ ապա հանդիսաւոր Ճրագալոյցի պատարագ, երկսեռ երգչա – խումբին կողմէ, մասնակցութեամբ տեղ – ւոյն դպրաց դասուն :

ԿԻՐԱԿԻ առաւօտուն ժամերգութիւն , ժամը 8·30ին, հանդիսաւոր պատարագ ժամը 10ին, Ծննդեան քարոզ 11ին եւ յետ պատարագի հանդիսաւոր Ջրօրհնէք : Դարձեալ երգչախումբին կողմէ դպրա – պետութեամբ Պ. Գրիգոր Մարտիրոսեա – նի : Պատարագիչ եւ քարոզ Վարագ քհնյ. Աւագեան :

ՅԱՒԱԿՅՈՒԹԻՒՆ

Վասպուրականի Հայր. Միութեան կեդր. վարչութիւնը կ'ողբայ վաղահաս մահը Վասպուրական արծուիկներէն ՎԱՐԴԱՆ ԱՒՏՈՑԵԱՆԻ (որդին Սիմոն Աւտոյեանի) քսան տարեկան, (մեռած Գերմանիա պինուորական ծառայութեան չրջանին) : Այս տխուր առթիւ յանուն Ֆրանսաբնակ բոլոր Վասպուրականցի – ներուն Միութիւնը իր ցաւակցութիւնն ե – ներուն Միութիւնը իր ցաւակցութիւնը կը յայտնէ տարաբախտ երիտասարդին ծնողքին եւ համայն Աւտոյեան ըն – տանիքներուն, Աւիկեան ընտանիքին եւ բոլոր պարագաներուն :

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հ. Բ. Ը. Միութեան Փարիզի Երիտ. Մշակութային ակումբը կը ծանուցանէ թէ իր խնդրանքին վրայ ճարտարապետ եղուարդ Իւթիւճեան, դասախօս Փարի – զի Գեղարուեստից Բարձր. Վարժարանին ճարտարապետական ճիւղին, յառաջիկայ Երեքշաբթիր 9 Յունուար , պիտի բանա – խօսէ Ռեմմանհիօֆի երաժշտանոցի սը – րահին մէջ, 126 Ավընիւ տը Նիւ Եորֆ , Փարիզ (16), մէթրօ Ալմա Մարսօ, երե – կոյեան ժամը 9ին : Նիւթ ունենալով՝

«Քրիստոնէութեան սրբավայրերը եւ Ս. Գերեզմանին վերակառուցումը Երու – սաղէմի մէջ» :

Այս բանախօսութեան ընթացքին Ե. Իւթիւճեան մոգական լապտերով պիտի ցուցադրէ, յատուկ պաշտօնով իր վեր – ջին ճամբորդութեան ընթացքին իր կող – մէ առնուած դունաւոր լուսանկարները :

Բոլոր աղգակիցները եւ ի մասնաւորի երիտասարդութիւնը սիրով կը հրաւիր – ուին ներկայ ըլլալու այս հետաքրքրական բանախօսութեան, ծանօթանալու համար այն բոլոր ճիգերուն, զորս մեր երկց սե – րունդները բրած են Սուրբ Տեղեաց պահ – պանութեան, ինչպէս նաեւ հայ ժողո – վուրդին բերած ծառայութեան, քրիստո – նէական կրօնքին տարածման համար :

JACQUES TORANIAN

Agent Immobilier
Assureur Conseil.

Ձեզի պիտի ընդունի ամէն օր
իր գրասենեակը

RIVE GAUCHE IMMOBILIER

42, *Bld. Arago — Tél.: POR.* 03–94

կամ ձեզի կ'այցելէ ժամադրութեամբ
ՓԱՎԻՃՈՆՆԵՐՈՒ, ՅԱՐԿԱԲԱԺԻՆ – ՆԵՐՈՒ, ՇԷՆՔԵՐՈՒ (fo–փրոփրիէ– թէ) ՀՈՂԵՐՈՒ, ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՅԱՐ– ԿԱԲԱԺԻՆՆԵՐՈՒ, ԽԱՆՈՒԹՆԵՐՈՒ, ԱՌՈՒԾԱԽԻ ձեր բոլոր խնդիրներուն համար

Expertise Gratuite

Ձեր տրամադրութեան տակ է նաեւ բոլոր ապահովագրութեանց համար

Auto
Incendie
Dégâts des eaux
Vie

— PRIX ETUDIES —

Tous risques assurés

Imprimerie Spéciale du journal « Haratch »
32, Rue de Trévise, PARIS (9e)

VICTOR GARDON

LE CHEVALIER
à
L'EMERAUDE

« Une très belle épopée qui a pour cadre l'Arménie légendaire »
(*Réalités*).

« Les mots sont brefs, justes, légers, mais portés par un souffle d'épopée ».
RENÉ MASSON (*Nouveau Candide*).

« Un livre plein d'entrain, de rebondissements qui émeuvent... il grouille de personnages chaleureux ».
ALAIN BOSQUET (*Combat*).

« Le héros de cette épopée est un parent de Lancelot et de Perceval ».
(*Feuille d'Avis de Neuchâtel*).

« Une fois de plus Victor Gardon affirme un talent sans défaut ».
(*Libre Belgique*).

STOCK

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

ԿՐԸՆՈՊԼԸ.— Կապ. Խաչի մասնաճիւ – ղը չնորհակալութեամբ ստացած է ընկե – րուհի Տիկին Վ. Օնպաչեանէ քսան Ն.Ֆ. ի նպաստ դպրոցի, փոխան ծաղկեպսակի ողբացեալ Պ. Թոռնիկ Թէրզեանի մահ – ուան առթիւ: Տէր եւ Տիկին Երամեսեան իրենց մօր մահուան քառասունքին առ – թիւ քսան: Տէր եւ Տիկին Կուտուբա – ճեան իրենց երրորդ զաւկին ծննդեան առթիւ 10, Պ. Մ. Սահակեան հինգ Ն.Ֆ. դպրոցին :

ՍՏԻՊՈՂԱԿԱՆ

Երիտասարդ Օրիորդ տաքթիլօ մը կ'ուզուի: Անձամբ դիմել Յառաջին որ կուտայ հարկ եղած տեղեկութիւնները :

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՆ ՕՐԸ

Կազմակերպուած Պուլ. Օտտոյի Ֆ. Կ. Խաչի մասնաճիւղի կողմէ :

Այս կիրակի կէսօրէ ետք ժամը 3ին , Պատ Էնթ-Էռնասիոնալ , Շրմէն տը Մատ – րակ – Վիլ :

Կը մասնակցին հայկ. դպրոցի աշա – կերտ – աշակերտուհիները :

Կը խօսի դպրոցի ուսուցիչ Պ. Յա – կոբ Արթինեան : Գեղարուեստական ճոխ բաժին : Երգ, արտասանութիւն, հայ – կական պարեր :

ՄՕՏ ՕՐԻՆ — ՄՕՏ ՕՐԻՆ

Զաւարեան ենթակոմիտէի հովանաւո – րութեամբ «Շանթ» թատերախումբը պի – տի ներկայացնէ մեծ պատրաստութեամբ Ադղ. Տրամը «ՎԱՐԴԱՆԱՆՔԸ», Պօմոնի սրահին մէջ:

Մանրամասնութիւններ մամուլով եւ առանձին յայտարարութեամբ :

Հ. Ց. Դ.

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՑ

Հ. Ց. Դ. Մարսէյլի Շրջ. Կոմիտէի հը – րաւիրած ընկերական ժողովներու .—

Հ. Ց. Դ. Մարսէյլի Շրջ. Կոմիտէն՝ ստիպողաբար ընկերական ընդհ. ժողովի կը հրաւիրէ հետեւեալ ենթակոմիտէնե – րու եւ խումբերու անդամ ընկեր – ընկե – րուհիները :

ՔՐԻՍՏԱՓՈՐ ենթակոմիտէ, 6 Յունո – ւար, Շաբաթ երեկոյ, ժամը 21ին :

ԶԱԻԱՐԵԱՆ ենթակոմիտէ, 6 Յունուար Շաբաթ երեկոյ , ժամը 21ին :

ՎՌԱՄԵԱՆ ենթակոմիտէ՝ 7 Յունուար կիրակի կէսօրէ ետք ժամը 15ին :

ԱԿՆՈՒՆԻ ենթակոմիտէ 13 Յունուար , Շաբաթ երեկոյ ժամը 21ին :

ՎԱՐՈՒԺԱՆ խումբ՝ 14 Յունուար , կի – րակի կէսօրէ ետք ժամը 15ին :

ՀԱՄԱԶԱՍՊ խումբ՝ 13 Յունուար , Շաբաթ երեկոյ, ժամը 21ին :

ԹԱԹՈՒԼ խումբ՝ 14 Յունուար, կէս – օրէ ետք ժամը 15ին :

ԸՆԿԵՐ ԿԱՐՕ խումբ՝ 14 Յունուար , կիրակի կէսօրէ ետք ժամը 15ին :

ՀԱՅԱՍՏԱՆ խումբ՝ 13 Յունուար , Շաբաթ, ժամը 21ին :

ՎԱՐԱՆԴԵԱՆ խումբ՝ 15 Յունուար , երկուշաբթի , ժամը 21ին :

ԳԷՈՐԳ ՉԱՎՈՒՇ խումբ՝ 20 Յունուար Շաբաթ , ժամը 21ին :

ՄՈՒՐԱՏ խումբ՝ 21 Յունուար, կիրա – կի կէսօրէ ետք, ժամը 15ին :

ՆԻԿՈԼ ԴՈՒՄՄԱՆ խումբ՝ 21 Յունուար, կիրակի կէսօրէ ետք , ժամը 15ին :

ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ խումբ՝ 20 Յուն – ուար, Շաբաթ, ժամը 21ին :

Սոյն ժողովները տեղի պիտի ունենան իրենց սովորական հաւաքատեղիները : Իսկ կարեւոր օրակարգ : Բոլոր ընկեր – ընկերուհիներու ներկայութիւնը պարտա – ւորիչ է : Վարչութիւնները նախապէս պէտք է բոլոր ընկերներուն տեղեկացնեն ժողովներու վայրի եւ թուականի մասին: Ներկայ պիտի ըլլան Շրջ. Կոմիտէի ներ – կայացուցիչները :

ԼՈՑՍ ՏԵՍԱԻ

ՅՈՒՇԱՄԱՏԵԱՆ ԿՈՒՏԻՆԱՀԱՅԵՐՈՒ

Պատկերազարդ, հեղինակ՝ Արշակ Ալ – պօյաճեան, Պէյրութ 1961, էջ 230 :

Գին՝ 4·50 տոլար

Լաթակազմ 5·50 տոլար

Սոյն հատորին լրացուցիչ մասը՝

Ա.— Կուտինահայ ժամանակագրու – թիւն· Հրատարակիչ՝ Համբարձում Զօրթ – եան (Ատանա) :

Բ. – Կաթողիկէ Հայերը Կուտինայի (Փիւթահիա). պատկերազարդ· աչխա – տասիրող՝ Հ. Իղնատիոս Աքեան, Վիէն – նա, 1960, էջք 164+109= 273 :

Գին՝ մէկ տոլար

Առանձինն՝ Բ. Կաթողիկէ Հայերը · էջ 109 : Գին՝ 0·50 տոլար

Դիմել՝
P. IGNACE AKIAN
Méchitharistengasse 4
VIENNE (Autriche)

ՖՐԱՆՍԱՀԱՅ ԿԱՊՈՅՏ ԽԱՉԻ ՓԱՐԻԶԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԻ

ՏԱՐԵԿԱՆ ՊԱՐԱՀԱՆԴԷՍԸ

HOTEL LUTETIA, 43 Bd. Raspail

Յունուար 6ին, Շաբաթ գիշեր, միւնէեւ առաւօտ

Գեղարուեստական ճոխ բաժին

Պ. Պէպէճեանի երգերուն մասնակցութեամբ , նաեւ ուրիչ անակնկալներ

Ճոխ պիւֆէ, պար եւ մեծ խանդավառութիւն

Այժմէն սեղանները ապահովել Օփեռա 37–62

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՕՆԵՐՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍԵՂԱՆ ՁԿԱՅ

ԱՌԱՆՑ

ՀԱՅԿԱԿԱՆ **ԱՆՈՒՇԵՂԷՆՆԵՐՈՒ**

ՈՐՈՆՑ ՄԻԱԿ ՎԱՐՊԵՏՆ Է՝

ՍՏԵՓԱՆ ՄԱՐԳԱՐԵԱՆ

32, Rue de Trévise, PARIS (9e) TAI. 65-44

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

Le PREMIER QUOTIDIEN ARMENIEN en EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction et Administration : 32, Rue de Trévise - PARIS-9e

Fondé en 1925
R. C. Seine 57 A 2731

Téléph. : PRO. 86 - 60
C. C. P. Paris 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա՝ Տար. 50 Ն. Ֆ. Վեցամսեայ՝ 27 Ն. Ֆ.
Արտասահման՝ Տար. 60 Ն. Ֆ. Հատը՝ 0·25 Ն. Ֆ.

ՀԻՆԳՇԱԲԹԻ
4
ՅՈՒՆՈՒԱՐ
JEUDI
4 JANVIER
1962

38ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 9295 38e ANNÉE Fondateur : SCHAVARCH MISSAKIAN ՆՈՐ ՇՐՋԱՆ, 18ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 5096

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼՔ

—o—

ՔԱՍԸՄ ԵՒ ՔԻՒՐՏԵՐԸ

Պաղտատէն կը հաղորդեն թէ քրտա – կան ըմբոստութիւնը վերսկսած է Իրաքի հիւսիսային շրջանը։ Ժասըմ յայտարա – րած է Ալ Թավրա թերթին որ Քիւրտերը նոր յարձակումներ կատարած են, որոնք կ'ըսէ աՒսըմ, կը զուգադիպին Բրիտա – նական նաւատորմին միջերկրականեան չարժումներուն։ Ան կ'ըսէ թէ «Հիւսիսի ըմբոստները (քիւրտ) կը գործակցին Հարաւի ախտարտակալներուն (Ժուվէյթ) հետ»։

Միւս կողմէ, մինչ կիսապաշտօնական աղբիւրներու համաձայն չորս հարիւր զոհեր կան (մեռեալ եւ վիրաւոր), Թուրքիոյ ներքին նախարարը կը յայտա – րարէ թէ 25 Թուրքեր սպաննուած են Քիւրտերու կողմէ, թրքական հողամասի վրայ եւ որոնք կը փորձէին Իրաքէն փա – խիլ։

Նոյն յայտարարութեան ընթացքին, Ժասըմ ըսաւ թէ վճռած է Քուվէյթը «ազատագրել»։

Կարգ մը չրջանակներու համաձայն Ժասըմ Քուվէյթի հարցը մէջտեղ դրած է ծածկելու համար քրտական ըմբոստու – թիւնը որ բաւական ծաւալած է եւ որուն հետեւանքով կը թուի թէ Պաղտատի կա – ռավարութեան իշխանութեան ձեռքը չէ այլեւս Իրաքի այն մասը որ սահմանակից է Թուրքիոյ։

Հարաւի եւ Հիւսիսի (Քուվէյթ եւ քիւրտ) հոդերէն զատ կայ նաեւ քարիւղի խնդիրը, որուն համար կառավարութիւ – նը նոր օրէնսդրութիւն մը կը պատրաս – տէ։ Լոնտոնի մէջ տուած մամուլի ասու – լիսի մը ընթացքին, քարիւղներու նա – խարարը՝ Մոհամմէտ Սալման հաղորդեց այս լուրը, չեշտելով թէ Իրաք պարտա – ւորութեան տակը կը դտնուի աւելցնելու այն եկամուտները զորս կը քաղէ քարիւ – ղի իր հարստութիւններէն, որպէսզի ա – ւելի լաւ կարենայ պայքարիլ երկրին թերաճութեան եւ տղիտութեան դէմ։ Ի – րաքի պահանջները այս ուղղութեամբ երկուք են.— Իրաք հարիւրէն քանով պէտք է մասնակցի բոլոր չահագործում – ներուն եւ աւելի մեծ թիւով Իրաքցիներ պէտք է աշխատին վարչական կազմին մէջ։ Եթէ ընկերութիւնները զոհացուցիչ պատասխաններ չտան այս պահանջնե – րուն, բանակցութիւնները չեն կրնար վերսկսիլ։ Նախարարին հարց տրուած է թէ Քուվէյթի ալ կը վերաբերին այս կարգադրութիւնները։ Իրաքցին յստակ պատասխանած է.— Քուվէյթ Իրաքի մաս կը կազմէ։

ԼԻԲԱՆԱՆ

Իշխանութիւնները կ'ուզեն հիմնովին մաքրել ինչ որ կը մնայ Սուրիական ժո – ղովրդական կուսակցութենէն զոր լուծե – ցին վերջին դէպքերու վարդրդայնին։

Ներկայիս աւելի քան հազար հոգի ձերբակալուած են եւ մեծ քանակու – թեամբ զէնք եւ զինամթերք գրաւուած։ Կառավարութիւնը որոշեց սեղմումներ – րու ենթարկել զաղթականներու եւ օտա – րականներու բնակութիւնը Լիբանանի մէջ նկատի առնելով որ պետական հար – ուածին մասնակցողներուն մէջ կան մաս – նաւորաբար Սուրիացիներ, Ծորդանացի – ներ եւ Պաղեստինացիներ։

Կառավարութիւնը որոշեց նաեւ հակա – կշռի տակ առնել բոլոր կուսակցութիւն – ներուն նիւթական աղբիւրները, բոլոր թերթերը եւ պատկերասփիւռը։

Այս առթիւ մէջտեղ գրուեցաւ նաեւ 30 տարուան հրովարտակ մը որ կը տիրէ

ՄԻՍԻՆ ՏԱԳՆԱՊԸ

—o—

Եզան մսէն խնդիրը երթալով կը ծան – րանայ։ Ծանօթ է որ Միսոֆ որոշած էր յատուկ գին պարտադրել եզան միսին համար եթէ մսավաճառները յամառին եւ ինքնաբերաբար չիջեցնեն գիները։ Ասոր վրայ մսավաճառները գործադուլի դիմե – ցին եւ սկսան եզան միս չգնել։ Բայց նախարարը որոշած էր տեղի չտալ եւ պլուխ բռնել մսավաճառներուն։ Ասոնց ընկերակցութեան նախագահը փորձած էր առջի օր համոզել իր անդամները որ վեր – սկսին գնումները, բայց Միւթիւալիթէի մէկ հանրաժողովի ընթացքին իրեն իրա –ւունք չտրուեցաւ եւ չկրցաւ խնդիրը «ա – նուշի կապել» ինչպէս կ'ուզէր։

Այս ձեւով ուրեմն գնումներու «գործա – դուլը» կը չարունակուի եւ Նախարարաց խորհուրդը վճռած էր «դրաւել» մսավա – ճառի խանութները եթէ կացութիւնը չբարելաւուի։ Այս պարագային մսա – գործները ստիպուած են բաց պահել ի – րենց խանութները եւ ասոր իբրեւ հետե – ւանք պիտի ստիպուին գնումներ ընել դէմ դնելու համար ընդհանուր ծախքե – րուն։

Այս կացութեան դիմաց կայ նաեւ ու – րիշ խնդիր մը այն է մսավաճառի կարգ մը խանութներու փլասթիճաժը։ Ոմանց կարծիքով այս պայմաններուն կ'են – թարկուին այն մսագործները որոնք չեն հետեւիր գնումներու գործադուլին եւ զոհ կ'երթան իրենց արհեստակիցներուն։ Միւս կողմէ, կան ուրիշներ որոնք հա – մոզուած են թէ գաղտնի բանակին զոր – ծունէութեան մաս կը կազմէ։

Հարցաքննիչ դատաւորը սակայն ձեր – բակալել տուաւ եօթը մսավաճառներ ո – րոնք գլուխը կը գտնուին յատուկ կոմի – տէի մը (Քոմիթէ տը վիժիլանս) եւ խիստ հսկողութիւն կը կատարեն որպէսզի ըս – տուգեն թէ բոլորը կը հետեւին գնումի գործադուլին։

Ամէն պարագայի մէջ, տագնապը չէ լուծուած։

ԻՐԱՔԱՆՑԻՒՐ ՔԱՂԱՔԱՑԻԻ ԻՆՔՆՈՒԹԵԱՆ Թուղթ ունենալ իր վրայ։

Խորհրդարանը արտակարգ նիստ հր – աւիրուած է կառավարութեան տեղեկա – կները լսելու համար կիրակի օրուան դէպ – քերուն մասին։

ԵԳԻՊՏՈՍԻ ՖՐԱՆՍԱՑԻՆԵՐԸ

Դժուարութիւնները սկսան Ֆրանսա – ցիներուն համար որոնք պիտի դաւուին ի մօտոյ։ Գահիրէի փաստաբանապետը՝ Մուսթաֆա էլ Պարատէյ ընդունեցաւ պաշտպանել դեսպանատան խորհրդատու Հանրի Մուճոնը որ ձերբակալուած դի – ւանապետներէն մէկն է։ Փարիզէն Գա – հիրէ հասած են երկու Ֆրանսացի փաս – տաբաններ որոնք սակայն շատ մտահոգ են տեսնելով թէ ստիպողաբար կը ճըշ – դուի եգիպտացի այն փաստաբաններուն դանկը որոնք պիտի պաշտպանեն Ֆրան – սացի «ամբաստանեալները»։ Մինչեւ եր – կու շաբաթ դատը պիտի սկսի եւ ցարդ պաշտպան փաստաբանները չեն կրցած ձեռք ձգել թղթածրարին պատճէնը։ Տա – կաւին կայ նաեւ թարգմաններու հարցը։

Միւս կողմէ եգիպտական կառավարու – թիւնը վերջ դրաւ այն հետապնդումնե – րուն զորս սկսած էր ճարտարարուեստի իտալացի խումբի մը դէմ, նկատի առ – նելով որ անոնք մեծ ճիգ թափած են զարգացնելու համար Եգիպտոսի մէջ զբօսաշրջիկներու այցելութիւնները եւ փորձած են նաեւ գործակցութեան սերտ կապեր պահել Արաբ. Մ. Հանրապետու – թեան եւ Իտալիոյ միջեւ։

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՊՈԼՍՈՑ մէջ հարիւր հազար բանուոր – ներ կը գրէ Իւմանիթէ (50·000 կ'ըսէ Փա – րի – Փրէս) գոյցեր կատարած են զոր – ծադուլի իրաւունք եւ հաւաքական պայ – մանաւորումներ պահանջելով։

ԹՈՒՐՔԻԱ. պատուէր, երկրաշարժական ապրանքներ պիտի տայ Չեխոսլովաքիոյ, որուն փոխարէն չեխ մեքենաներ պիտի ստանայ, ըստ առեւտրական համաձայ – նութեան մը։

ԸՆԿԵՐԱՑԻՆ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ եւ ըն – տանեկան նպաստներու գործատիրոջ բա – ժինը փոփոխութիւններ պիտի կրէ, ա – ռանց տարբերութիւն մը յառաջ բերելու։ Ընկերային Ապահովութեան սակը 13·5 առ հարիւրէն պիտի բարձրանայ 14·25ի, մինչ ընտանեկան նպաստներու սակը 14·25էն 13·50ի կ'իջնէ։ Ուրիշ յաւելում մը կը կատարուի սակայն։ Ընկերային տուրքերու սահման – սակարկինը (փլա – ֆոն) 700էն 800 Ն. Ֆ.ի կը բարձրանայ ինչ որ զղալի յաւելում մըն է գործատի – րոջ համար եւ բանուորին՝ իր բաժնին համար։

ՄՈՍԿՈՒԱՑԻՆ կը հաղորդեն թէ Գե – րագոյն Խորհուրդը Մարտ 18ի թուականը նշանակեց ընտրութեանց համար, բովան – դակ Խորհ. Միութեան մէջ։

ՅՈՒՆԱՍՏԱՆԻ Սոֆի իշխանուհին եւ Սպանիոյ գահաժառանգը պիտի ամուս – նանան Մայիս 14ին, Աթէնք։ Նախ կա – թողիկ պսակ պիտի ըլլան, ապա՝ ուղ – ղափառ։

ՀՈՆԿՈՒԻ «Ազգային» երեսփոխանը՝ Քալոնճի որ ինքզինքը թագաւոր հռչա – կած էր Ալպէր Ա. անունին տակ, ձեր – բակալուեցաւ։ Կ'ըսուի թէ ծեծել տուած է Հարաւային Քասայի իր քաղաքական ընդդիմադիրները։

ՓԱՐԻԶ խորհրդային դեսպանը հեր – քեց այն լուրը ըստ որուն պիտի փոխա – րինուի իր պաշտօնին պլուխը։ «Ներկա – յիս արձակուրդի մէջ եմ, ըսաւ, Մոս – կուա, չուտով Փարիզ կը վերադառնամ»։

ՄԱՐՍԻՆԷԶ ՊԱՒԼՈՍ Սպանիոյ Հանրա – պետութեան նախկին նախագահ սրտի տագնապի մը զոհ գնաց առջի գիշեր, Պրուսէլի հիւանդանոցը ուր փոխադրուած էր։ Փարիզ կ'ապրէր եւ 79 տարեկան էր։

ԱՄԵՐԻԿԱՅԻ Արտաքին նախարարը յայտարարեց ամերիկեան հեռատեսիլէն թէ աւելի նպաստաւոր է խօսիլը։

Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ բնակիչներուն թի – ւը էՀ՝ 185 միլիոն 235 հազար հոգի։

ԱԼԺ. ԱԶԱՏ. ՃԱԿԱՏԸ Կարմիր Խաչի միջոցաւ Ֆրանսացի երկու զերիները վե – րադարձուց առջի օր։ Ֆրանսական մա – մուլը կը յիշէ սակայն թէ անդին կը մնան 346 ուրիշ «զերիներ» որոնց մէջ 16 ըս – պաներ եւ 54 եպիսկոպոսներ։

ԼԻԶԲՈՆ սուգի եւ զարմանքի օրեր կ'ապրի ձախողած պետական հարուածէն ետք։ Մեծաչուք յուղարկաւորութիւն մը կատարուեցաւ նախարարութեան կցոր – դին համար որ զոհ գնաց ըմբոստական չարժումին։ Միւս կողմէ իշխանութիւն – ները ձերբակալած են Մանուէլ Սեռան որ նախկին զեկավարն էր Գաթոլիկէ և – րիտասարդական չարժումի մը։

ՄՈՍԿՈՒԱՑԻ մէջ հրատարակուած գիրք մը որ կենդանիներով կը զբաղի, յօդուած մը հրատարակած է բացատրելու համար թէ ի՞նչ ձեւով պէտք է պաշտպանել կենդանիները օդանաւային յարձակում – ներու դէմ։ Պաշտպանութեան դիմակներ ստեղծուած է կովերուն եւ խոզերուն հա – մար կազերու դէմ։

ՊՈԼՍՈՑ մէջ գործադուլի զանազան չարժումներ ծայր տուած են։ Հազար տոֆեռներ գործադուլ կ'ընեն անչար – ժութեան դատապարտելով 14 նաւ և 4556 թոն ապրանք։ Գործադուլին պատճառը օրապահիկն է որ հիմա Ն. Ֆ. է միայն։

ՊՈՆԷՆ կը հաղորդեն թէ 1961ին 207 – 026 արեւելեան Գերմանացիներ ապաս –

ԷՋՄԻԱԾԻՆ ԿԸ ՇՆՈՐՀԱՒՈՐԷ ՊՈԼՍՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԸ

—o—

Պոլսոյ Հայոց Պատրիարքին ընտրու – թիւնէն ետք, կը սպասուէր թուրք կառա – վարութեան պաշտօնապէրին որ հաստա – տէր պատրիարքին թրքահպատակութիւ – նը եւ ընտրութիւնը։ Պաշտօնական այս ձեւակերպութիւնները վերջացած ըլլա – լով՝ հեռագրով հաղորդուած է էջմիա – ծին։

Ամենայն Հայոց կաթողիկոսը, այս առթիւ, 27 Դեկտեմբեր թուակիր հեռա – գրով մը կը շնորհաւորէ Շնորհք եպիս – կոպոսի ընտրութիւնը, արքունեան պա – տիւ կը շնորհէ եւ բարեմաղթութիւններ կ'ընէ։ Պատրիարքարանը անմիջապէս կը ձեռնարկէ նորընտիր պատրիարք Շնորհք Արքեպ. Գալուստեանի պատրիարքական պատ բարձրանալու եւ պատրիարքական աստ ընդունելու հանդիսութեանը։ Այս հանդիսութեան հրաւիրուած են ազգային մարմիններ եւ դէմքեր, կառավարական ներկայացուցիչները (Պոլսոյ կուսակալը եւ Տիկինը), դիւանագիտական մարմինը, օտար կրօնապետները։

տանած են Արեւմտեան Գերմանիա, ո – րոնց մէջ 32·858 ամուրիներ 24 տարեկա – նէն վար։

ՄՈՍԿՈՒԱՑԻ ամերիկեան դեսպանը՝ Թոմսըն եւ խորհրդային արտաքին նա – խարարը՝ Կրոմիքօ խօսակցութիւններ ու – նեցած են առջի օր որոնք զոհացուցիչ կը նկատուին։

ԻՍՎԵՍՏԻԱՆ Խրուչչեւի պատասխան – ները կը հրատարակէ աւստրիացի դա – սախօսի մը հարցումներուն։ Խորհրդային վարչապետը, այս առթիւ յայտարարած է թէ համոզուած է որ համայնավարու – թիւնը ի վերջոյ պիտի յաղթէ։

ՌՈՒՄԱՔԻ մէջ, այս չաբթու ընթացքին «Ա.ՀԱ.Կ»ի անդամները ժողով մը գումա – րած են։

ՔՈՒՊԱ տօնած է յեղափոխութեան ե – րորդ տարեդարձը։ Այս առթիւ Ֆիտէլ Քասթրօ յայտարարած է թէ ով որ փոր – ձէ յարձակիլ Քուպայի վրայ պիտի ջար – դուի։ Քասթրօ դէմ արտայայտուած է «ամերիկեան աշխարհակալութեան» որ կը տիրպէ Քուպային եւ ուրիշ ժողո – վուրդներու որ դինուին։

ՔՈՆԿՈՒԻ մէջ կացութիւնը միշտ չփո – թէ։ Պուքավուի չրջանը, յեղափոխումի պետի մը ընտրութեան առթիւ 12 հոգի սպաննուած են եւ բազմաթիւ վիրաւոր – ներ կան։

ՍԹԵՐԼԻՆԻ գօտիին ոսկիի եւ դրամի պահեստը 1961 Դեկտեմբերին 85 միլիոն անգլիական ոսկի պակսած է։

ՕՒԱՆԻ մէջ 18 տարեկան երիտասարդ եւրոպացի մը խողխողուած է Մահմե – տականներու կողմէ երբ քաղաքին կեդ – րոնը հանրակառքի մը կը սպասէր։ Եւ – րոպացիները իբրեւ այս սարսափելի տե – սարանին, զոր զիտած են վրդովումով եւ անկարող միջամտելու, զայրացած են։ Ծանր միջադէպեր ալ պատահած են Պոնի մէջ, Եւրոպացիներու եւ Մահմետական – ներու միջեւ։

ԱԼԺԻՒ մէջ Գաղտնի Բանակի եւ Ա. զատ. Ճակատի զործունէութեան հետե – ւանքով եօթը մեռեալ եւ 19 վիրաւոր կայ։

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ Ռաբբունապետը զէմ արտայայտուեցաւ պետական այն որո – շումին ըստ որուն այս տարի, Իսրայէլի մէջ առաջին անգամ ըլլալով նոր տարին տօնուեցաւ։ Ծանօթ է որ Հրեաներուն համար նոր տարին Սեպտեմբերին է եւ Ռաբբունապետը կը դատապարտէ այս «հեթանոս սովորութիւնը» որ Իսրայէլի Հրեաներուն օտար երկիրներու եւ կրօնք – ներու սովորութիւնները կը պարտադրէ։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒԹԻՒՆԸ

—o—

Ա·

Լեռնային երկիր մը ըլլալով, Հայաստան իր համեմատաբար փոքր սահման – ներուն մէջ ունի բազմազան կլիմայ եւ այդ տեսակէտէն կը բաժնուի ուղղաձիգ գօտիներու՝ սկսեալ շոր կլիմանապատա – յին գօտիէն մինչեւ տեւական ձիւնի գօ – տի: Այս պատճառով ալ երկիրը հարուստ է կենդանիներու եւ բոյսերու տեսակնե – րով:

Մարդը ներդործելով բնութեան վրայ, առեղծած է պտուղներու, հացահատիկի եւ այլ մշակութիւններու զանազան տե – սակներ: Միեւնոյն ատեն սերունդներու աշխատանքով բազմաթիւ կենդանիներ ձեռք բերած են հասարակութեան համար օգտակար յատկանիշեր: Այս ձեւով, Հայաստանի մէջ կան կենդանիներու ցե – ղեր, որոնք առաւելաբար յարմարած են տեղական պայմաններուն:

Մինչեւ Հայաստանի խորհրդայնացու – մը կային ոչխարներու մէկ քանի ցեղեր, խոշոր եղջերաւոր անասուններու մէկ քանի ցեղախումբեր, խոզերու եւ ձիերու զանազան տեսակներ: Ոչխարաբուծու – թիւնը կարեւոր տեղ գրաւած է միշտ հայ գիւղացիի կեանքին մէջ, որով անոր տեսակներն ալ շատ եղած են: Ամէնէն շատ տարածուած էր մաղեխ ցեղը, որ մինչեւ վերջերս կը բուծուէր Հայաս – տանի 16 շրջաններուն մէջ: Թիւով երկ – րորդ տեղը կը գրաւէին բոզախ ցեղին ոչխարները, որոնք կը բուծուէին հիւսիս արեւելեան անտառային գօտիին մէջ: Հայաստանի հարաւային շրջաններուն՝ Զանգեզուրի մէջ, տարածուած է Ղարա – բաղ ցեղը: Կարգ մը շրջաններու մէջ կը բուծուէին Բալբաս ցեղին ոչխարները: Ոչխարներու ցեղերուն միջեւ՝ անոնց մարմնակազմին, անտեսական յատկու – թիւններուն տեսակէտէն մեծ տարբերու – թիւն կար: Այսպէս, օրինակ, Մաղեխ եւ Բալբաս ցեղին ոչխարները խոշոր էին, շատ կաթ կուտային, բայց դանդաղ – շարժ կենդանիներ էին: Ասոնց հակա – պատկերներն էին Ղարաբաղ եւ Բոզախ ցեղերը, որոնք պզտիկ, բայց արագա – շարժ էին: Ղարաբաղի միսը համով էր:

Ասոնցմէ զատ, Հայաստանի մէջ կային նաեւ ուրիշ փոքրաթիւ ցեղեր՝ Հոիկ, Դմխ եւայլն: Սակայն, Հայաստանի բո – լոր ոչխարներն ալ կոպտաբուրդ էին, այսինքն, քիչ բուրդ կուտային: Բուրդի այդ տեսակէն կարելի չէր պատրաստել բարակ թել եւ բարձրորակ գործուած ք – ներ: Այս պատճառով ալ, հայ ոչխարա – բոյծները աշխատեցան բարելաւել ոչ – խարներուն ցեղին տեսակը, որպէսզի ա – ւելի շատ եւ աւելի լաւ բուրդ տան:

Դարալագեազի մէջ կային իրարմէ բո – լորովին տարբեր մոխրագոյն եւ սեւ գոյնի այծերու ցեղախումբեր: Առաջ կաթ կուտային:

Մեծ եղջերաւոր անասունները կարելի չէր բաժնել առանձին ցեղերու, որովհե – տեւ ասոնք չէին ձեւակերպուած իրրեւ ցեղեր: Իրենց արժէքը եւ որակը կը տարբերէր շրջանէ շրջան: Կարգ մը վայ – րերու մէջ մեծ չափով տարածուած էին գոմէշները: Մատակի կաթէն պատրաս – տուած մածունի բրաձր արժէքը ծանօթ է բոլորին, սակայն գոմէշներուն հիմ – նական բուծման նպատակը ուժեղ լծկան ունենալն էր: Այս պատճառով ալ հայ գիւղացին ընդհանրապէս մեծ խնամք տարած չէ գոմէշներուն:

Հիւսիս – արեւելեան անտառային շրջ – ջաններուն մէջ կը բուծանէին տեղական, ուշ հասնող եւ ուռեւիքի նկատմամբ քիչ պահանջկոտ խոզեր, որոնք աչքի կը զար – նէին իրենց տոկունութեամբ:

Հայաստանի անասնաբուծութիւնը, ինչպէս բոլոր լեռնային երկիրներուն մէջ, երկրօրիական բնոյթ ունէր: Ձած մասերուն մէջ, ուր առաւելաբար կեդրո – նացած էին վարելահողերը եւ բնակչու – թիւնը խիտ էր, արօտատեղիներ գրեթէ չկան: Իսկ լեռները ծածկուած են ալպ – եան հարուստ բուսականութեամբ: Այս է պատճառը, որ տաքերը սկսելուն պէս գիւղացիներուն մէկ մասը անասունները կը փոխադրէր լեռնային արօտատեղինե – րը: Այս ձեւով կը փրկուէին նաեւ զա – նազան հիւանդութիւններէ:

Հայ գիւղացին միշտ կ'աշխատէր չատ – ցնել անասուններուն գլխաքանակը: Լեռ – նային արօտավայրերը եղլելու հնարաւո – րութիւն չունէին սակաւաշունչ ընտանիք – ները, որոնք, իրրեւ կանոն, իրենց անա – սունները պայմանով կուտային լեռ գա – ղտներուն ու կը ստանային անոնցմէ ո – րոշ քանակութեամբ կարագ կամ պանիր:

Անասնաբուծութեան երկրօրիականու – թիւնը պահուած է մինչեւ այսօր, բայց չնորհիւ արդի փոխադրութեան միջոցնե – րուն, աւելի լաւ կազմակերպուած է: Արդարեւ, հիմա կենդանիները արօտա – վայր կը փոխադրուին փոխադրակառքե – րով:

Ներկայիս անասնաբուծութիւնը կեդրո – նացած է խոշոր ագարակներու մէջ: Կոլ – տնտեսութիւնները առհասարակ ունին 3–4 անասնաբուծական ագարակներ՝ կաթնեղէնի, ոչխարաբուծութեան, թռչ – նաբուծութեան եւ երբեմն ալ խոզի եւ մեղուի ագարակներ: Քիչ քիչ զարգանա – լու վրայ է նաեւ ճագարաբուծութիւնը: Փորձեր կը կատարուին մեծ ագարակներ հաստատելու ուղղութեամբ, այսպէս, Շահումեանի շրջանին մէջ պիտի աւարտի խոզեր կերակրելու նոր կայանի մը շի – նութիւնը, ուր տարեկան պիտի կերակ – րուին 3600 գլուխ խոզ: Անոր մօտերը պիտի շինուի թռչնաբուծարան մը, որ պիտի ունենայ 40·000 հաւ, եւայլն:

Ագարակ մը կայ կուղբ բուծանելու եւ երկու ագարակներ ազուէս բուծանելու համար, ուր կը ստացուին սեւ արծաթա – գոյն արժէքաւոր մորթեր:

Հիմնական փոփոխութիւններ տեղի ու – նեցած են գիւղատնտեսական կենդանինե – րու տեսակներուն եւ սեռերուն միջեւ: Օրինակ, գլալի կերպով աւելցած է կո – վերուն գլխաքանակը, մինչ պակասած է եղներունը: Բաւական չատ աւելցած են խոզերը եւ ոչխարները: 1960 Յունուար մէկի տուեալներուն վրայ Հայաստանի ոչխարներուն եւ այծերուն թիւը կազմած է 2·003·300, իսկ խոզերունը՝ 115·700: Գլխաքանակին հետ անշուշտ աւելցած է նաեւ կենդանիներուն մթերատուութիւ – նը: Օրինակ, կովերը նախկինէն երկու անգամ աւելի կաթ կուտան:

Տարուէ տարի կ'աւելնայ միսին, կա – թին, բուրդին եւ այլ անասնաբուծական մթերքներուն արտադրութիւնը: 1959ին, հարիւր հեկտար գիւղատնտեսական տա – րածութեան վրայ միջին հաշուով արտա – դրուած է 3 թոն մսեղ, 23 թոն կաթ, 286 քիլոկրամ բուրդ, եւայլն: Խորհ·Մի – ութեան մէջ Հայաստան 1958ին 6րդ տե – ղը կը գրաւէր կաթի արտադրութեան մէջ, միսին եւ ճարպին մէջ՝ 8րդ տեղը, բուրդին մէջ առաջին տեղը: (Հաշիւները եղած են օգտագործուած հողերուն ամէն հարիւր հեկտարին համեմատութեամբ):

Անասնաբուծութեան զարգացումը մեծ չափով կախում ունի անասուններուն արուած կերէն, ջուրէն ու իրենց համար չինուած պատսպարաններէն: Կենդանի – ները տեղաւորուած են 11354 չէնքերու մէջ:

Ագարակներէն 300ը, որոնք ունին 35 հազար գլուխ կով, ապահովուած են գո – մերով եւ ջուրով, իսկ 264ը, կամ ագա – րակներու ընդհանուր թիւին 1/3ը՝ ջուրի ինքնաշխատ գուռերով:

Ոչխարի խուզը կը կատարուի ելեք – տրախուզիչ գործիքներով: Խոտերը հնձ – ձելու համար կան 650 ինքնաշարժ – մե – քենաներ, 630 ձիաքարշ խոտհնձիչներ եւ մօտ երկու հազար թրաքթէօրով կամ ձի – ով քաշուող փոցխեր:

1959ին կենդանիներու կերը հասաւ բաւական նախանձելի դիրքի մը՝ 489·400 թոն խոտ, 541·100 թոն սիլոս կամ կով գլուխ մօտ 5·300 թոն:

Անասուններուն կերերով ապահովելու գործին մէջ մեծ օգտակարութիւն ունին կարգ մը գործարաններ: Կերի գործա – րանը տարին կ'արտադրէ 40·000 թոն պանազան տեսակի կեր: Ձէթի եւ օճառի գործարանը քուսպ եւ կճեպ կը տրամա – դրէ, Երեւանի ջաղացքը՝ ցորենի թէփ, ցամք, կուտ եւ այլ մնացուկներ, Շաքա – րի գործարանը՝ մաթ, մղուկ եւայլն: Այսպէս ուրիշ գործարաններ ալ:

Մօտ ատենէն կենդանիներուն պիտի տրուի նաեւ միզանիւթ, որ գլալի կեր – պով պիտի լրացնէ սպիտակուցին պա – հանջը կերերուն մէջ: Պիտի արտադրուին նաեւ խմորասունկեր:

Ա. ԵՐԻՑԵԱՆ

(Մնացեալը յաջորդով)

ԳԵՂԵՑԻԿ ԵՒ ՀԻՆԱՒՈՒՐՑ ԱՆԱՏՈԼՈՒՆ ԵՒ ԻՐ ԱՒԵՐԱԿՆԵՐԸ

—o—

(Բ· եւ վերջին մաս)

Իւրկիւպի եւ Կէօրէմէի հետաքրքրա – կան տեսարանները իրենց «գլխարկաւոր բուրգերով» եւ «քարացած» տովիտներով էրճիաս (Արզէոս) հրաբխային լեռներէն բխող լաւաներու արդիւնք են:

Նախապատմական շրջաններուն մէջ էրճիաս լեռը հրաբուխ մըն էր, որուն լա – ւաները կը հոսէին շրջակայքի՝ Իւրկիւ – պի եւ Կէօրէմէի հովիտին վրայ:

Հրաբխային զանազան ժայթքումներու հետեւանքով հոսող լաւաներու զանգը – ւածները, խառ առ խառ իրարու վրայ կուտակուելով, կազմեցին բուրգեր: Ծա – կի խառները ճնշումի ենթարկուելով կարծրացան, մինչ ճնշման չենթարկը – ւած խառները կակուղ մնալով ձեւափոխ – ուեցան ափերեւի, հովի, օդի տարբեր բարեխառնութեանց ներգործութեամբ: Այդ մասերուն մէջ ամառը հեղձուցիչ եւ ձմեռը սաստիկ է:

«Գլխարկաւոր բուրգերը», սունկի ձե – ւով սիւներ եւ կոնաձեւ ժայռեր, ար – դիւնք են այդ ձեւափոխութիւններուն:

Այդ կազմութիւններէն ոմանք առան – ձին, իսկ ուրիշներ համամբուած կը պարզեն արտակարգ տեսարաններ, որոնք պարզապէս դիւթական են արշալոյսի կամ վերայլոյսի ցոլքերու երանգներուն ներքեւ:

Նախնական եւ միջնադարեան շրջաննե – րուն մէջ, այս հողամասը արշաւանքնե – րու ճամբէ հեռու մնալով՝ զերծ մնաց քանդումներէ:

Քրիստոսէ եառ 40–50 թուականներուն՝ Պօղոս առաքեալ, քրիստոնէութիւնը ծա – ւալելու փափաքով, Բառնաբասի եւ Ս· Մարկոսի ընկերակցութեամբ այցելեց Դերբէ եւ այնտեղ կառոյց քրիստոնէու – թեան առաջին եկեղեցին, ուրկէ էր որ քրիստոնէութիւնը ծաւալեցաւ մինչեւ Ա – նատոլու, Դ· դարու սկիզբը, եւ կեսա – րիա դարձաւ թեմական կեդրոն:

Հնաւուրց շրջաններու մէջ «կորամա» կոչուած այդ հողամասը զարձաւ վանա – կաններու եւ ճգնաւորներու ապաստա – րան:

Քրիստոնէական առաջին շրջաններուն մէջ անհրաժեշտութիւն մը նկատուած էր խոկալ նոր կրօնքի վրայ եւ թափան – ցել անոր սկզբունքներուն:

Սուրբերէն չատեր Կապադովկիա եր – թալով վախճանեցան այնտեղ, յաճախ իրրեւ նահատակ:

Ինչպէս ծանօթ է, Ուղղափառութեան եւ Արիոսեաններու միջեւ պայքարը չա – րունակուեցաւ չորրորդ դարու մէջ ալ եւ Ուղղափառները մեկնելու ստիպուեցան Արիոսեաններու իշխած երկիրներէն:

Կ'ըսուի թէ Կոստանդնուպոլսոյ մէջ ալ՝ երբ Ուղղափառները իշխանութեան դը – լուխ կը գտնուէին, խիստ միջոցներու

ԱՄԲԱՍՏԱՆԵԱԼ ՍԹԱԼԻՆ, ՈՏՔԻ՛

—o—

Թրոցքի, Զինովիէվ, Կամենեւ եւ Սթա – լին Պոլիտբիւրոյի ժողովն կը գումարեն: Օրակարգի նիւթերը սպառած են, բայց Սթալին նշան կ'ընէ միւսներուն, որ տա – կաւին չմեկնին· կը սպասէ որ քարտու – ղարը դուրս ելլէ:

— Ծանրակշիռ յայտարարութիւն մը ունիմ ձեզի ընելիք, կը սկսի Սթալին: Լենին զիս կանչել տուած էր եւ թոյն ու – ղեց ինձմէ· ձեռքին տակը թոյն ունենալ կ'ուզէ, որպէսզի տառապանքները անտա – նելի դառնալու պարագային վերջ տայ կեանքին:

— Ոչ մէկ կերպ կրնանք այս պահան – ջին զոհացում տալու մասին մտածել խակ, կը բացատրէ Թրոցքի: Տոքթ· կէ – թիէ յոյսը կորսնցուցած չէ, Լենին կրնայ ապաքինիլ:

— Այս բոլորը յայտնեցի իրեն, կը պա – տասխանէ Սթալին, բայց ցաւէն կը տա – ռապի· թոյն պիտի առնէ այն պարագա – յին, երբ համոզուած ըլլայ թէ իր վիճա – կը անյոյս է:

— Բացարձակապէս անկարելի է —կտ – րուկ կերպով կը հակառակի Թրոցքի: Կրնայ կամքի ժամանակաւոր տկարու – թեան մը պահուն անդառնալի քայլը առ – նել:

Զինովիէվ Թրոցքիի տեսակէտը կը պաշտպանէ: Կամենեւ լուռ կը մնայ· չատ տժգոյն է:

Սթալին կը յամառի, ակնարկը անորո – շութեան մէջ:

— «Ծեր»ը կը տառապի:

« Այս բառերը մեզի արտասանած պա – հուն, դէմքին արտայայտութիւնը ար – տասովոր էր, նոյնիսկ՝ անհասկնալի, ներկայացող պարագային ծանրակշիռ հանգամանքին հետ անկապակից: Մեզի փոխանցած խնդիրքը ողբերգական էր, բայց եւ այնպէս հիւանդագին ժպիտ մը կար իր շրթունքներուն վրայ», կը գրէ Թրոցքի:

Ցետագային Թրոցքի յաճախ հարց տուած է ինքն իրեն, թէ Լենին ինչո՞ւ Սթալինին դիմած էր: Սովետներուհսան – բապետութեան հիմնադիրին եւ իր յա – ջորդը ըլլալիք անձին միջեւ խզումը կա – տարեալ էր արդէն: 1923 Յունուար 4ին, Լենին հետեւեալ յաւելումը մացուցած էր իր «կտակին» մէջ·

« Սթալին չատ կոպիտ է· այս թերու – թիւնը, որ մեր ներքին յարաբերու – թեանց մէջ տանելի է, անտանելի կը դառնայ ընդհանուր քարտուղարի պաշ – տօնին մէջ: Ահա թէ ինչու, կ'առաջար – կեմ որ ընկերները մտածեն թէ ինչ ձեւով Սթալինը կրնան հանել այս պաշտօնէն եւ իր տեղը նշանակեն այնպիսի անձ մը, որ ամէն տեսակէտով տարբերի Սթալինէն՝ իր գերազանցութեամբ· այսինքն ըլլայ աւելի համբերատար, աւելի վստահելի, աւելի քաղաքավար, աւելի բարեացա – կամ՝ ընկերներուն հանդէպ, եւն·»:

Սթալինի մասին այս ձեւով խօսող մար – դը չէր կրնար իր սիրտը բանալ անոր: Այս հակասութիւնը բացատրելու համար, Թրոցքի հետեւեալ ենթադրութիւնը կ'ը – նէ· Լենին դիտէր թէ Սթալին թագուն ատելութիւն ունի իրեն հանդէպ, կ'ուզէ վայրկեան առաջ ազատիլ «ծեր»էն, որ իրեն մնացած ամբողջ կարողութիւնը պիտի գործածէ Սթալինը ընդհանուր քարտուղարութեան պաշտօնէն զուրս հա – նելու համար: Թոյնը Սթալինէն ուզելով, վստահ էր, թէ անկէ կրնայ ստանալ այն, ինչ որ իրական բարեկամ մը պիտի մեր – ժէր բացարձակ կերպով:

Թրոցքիի այս ենթադրութիւնը տրա – մաբանական է: Բայց կրնայ ըլլալ նաեւ, որ Սթալին Լենինի բերնին մէջ դրած ըլ – լայ բառեր, զորս այս վերջինը արտա – սանած չէր:

Առանց ինքզինքը վտանգելու, առանց ստանձնելու առաջարկութեան պատաս – խանատուութիւնը, կրնար պարզապէս չօշափած ըլլալ Քաղաքական Բիւրոյի իր ընկերներուն կարծիքը, հասկնալու հա – մար, թէ համամի՞տ էին Լենինի մահը արագացնելու:

Ինչ ալ ըլլայ իրողութիւնը, թոյնի գա – ղափարը, որ անգամ մը մուտք գործած էր Սթալինի մտքին ներս, այլեւս դուրս պիտի չելլէր այդտեղէն:

Վիպագրած պատմաբանները յաճախ խօսած են իտալական Վերածնունդի շըր – ջանի իշխաններուն մասին, որոնք, արե – ւելեան բռնատէրերու օրինակին հետեւե – լով, իրենց քաղաքական սպրանքներէն անբաժանելի միջոց մը դարձուցած էին թոյնը: Իրենց արքունիքին մէջ կը պա – հէին խորհրդաւոր ու ազդեցիկ անձնա – ւորութիւն մը, որ մեծ գաղտնապահու – թեամբ, իր աշխատանոցին մէջ կը պատ – րաստէր վճռական «պատճառաբանու – թիւնները»:

Սթալին եւս ունէր իր թունաւորիչը, որուն անունն էր Իակոտա:

Թրոցքիի, Կամենեւի եւ Զինովիէվի դէմ մղած պայքարին մէջ, Սթալին, Լե – նինի միակ յաջորդը մնալու համար, յենուեցաւ Թէ կուսակցութեան (որուն տէրն էր արդէն՝ ընդհանուր քարտուղա – րի պաշտօնին շնորհիւ) եւ Թէ քաղաքա – կան ոստիկանութեան՝ կէպէուի վրայ, որուն վրայ եւս վերին հսկողութիւն կը բանեցնէր՝ յանուն Պոլիտբիւրոյին:

Կէպէուի պետը Ֆելիքս Ձերժինսքին էր, որ ունէր երկու օգնականներ·— Մեժինսքի եւ Իակոտա:

Երեքն ալ Սթալինի հաւատարիմներէն էին, սակայն ասոնցմէ ամէնէն վարնոցն ու անզուրը Իակոտան էր անկասկած:

(8 Շար··

դիմեցին Արիոսեաններու դէմ, մինչեւ իսկ ոճիրներու: Երբ Կոստանդին կայսր ձեռնադրուեցաւ, Ծուլիանոս եւ Վալէս մոլեռանդ Արիոսեաններ էին եւ կոստանդնուպոլսոյ եկեղեցիները քառասուն տարի մնացին Արիոսեան քահանաներու իշխանութեան ներքեւ: Իւրկիւպի եւ կեսարիայի հոգեմասերը եօթներորդ եւ ութերորդ դարերու միջեւ քրիստոնէութեան դիմաւոր կեդրոնները դարձան: Այս հոգեմասերուն մէջ ապրողներ, բնութեան կողմէ կերտուած կոնաձեւ բուրգերու ներքին մասը փորելով, հիմնեցին եկեղեցիներ եւ ժամատակի ընթացքին վանականները իրենց բնակավայրն ալ տասատեղին այնտեղ:

Բուրգերէ ոմանց մէջ կը տեսնենք քարէ սեղաններ եւ սառաններ, որոնք իբրեւ ճաշարան կը ծառայէին վանականներուն, սեղաններու վրայ փորուած էին կերակուրներու մասնայատուկ պնակներ: Ճաշարանին կից կը տեսնենք վանքի եկեղեցին: Այս չէնքերուն դուռները շատ հատատուն են: Հաստ քարերով կառուցուած, որով պատահական պաշարումի մը կամ յարձակումի մը պարագային՝ վանականներ կրնային պահպանել իրենց քարաչէն ամրոցները:

Ըստ պատմագիրներու, Կապադովկիոյ երեք հարիւր հազար բնակիչներէն երեսունն հազարը վանականներէ եւ կրօնաւորներէ կը բաղկանար: Կէօրէմէի մէջ կը գտնուի «մայրապետներու աշտարակը», ինչ որ կ'ապացուցանէ կրօնաւորուհիներու ալ գոյութիւնը այնտեղ, այդ շրջաններուն:

Ցեղ պեղումներու երեւան հանուեցան դերեզմանները, որոնց մէջ գտնուեցան կիներու եւ նոյն իսկ մանուկներու ոսկորներ:

Կէօրէմէի մէջ կը գտնուին աւելի քան երեք հարիւր եօթանասուն բուրգաձեւ եկեղեցիներ: «Ժայրաբոյս» ալ կ'որակուին անոնք, որովհետեւ բնութեան յեղաշրջումներու բերմամբ կը գտնուին ժայռերու վրայ կամ միջեւ:

Այդ բուրգերէն մին կը պարզէ կնոջ մը կերպարանքը եւ ուղղափառ բարեպաշտութիւնը Ս. Կոյսը եւ Մանուկը կը տեսնէր այդ բուրգին վրայ:

Երկրաբանական այս հետաքրքրական կազմութիւնները աննման են աշխարհի մէջ:

Այսօր մեռեալ քաղաքներու տեսքը կը պարզեն իւրկիւղ եւ կէօրէմէ, որուն բնակիչներն իսկ անկենդան հուրիներ են կարծէք:

Կէօրէմէի ժայռաբոյս բոլոր եկեղեցիները հատարակաց յատկանիշ մը ունին: Զուրկ են արտաքին ճակատէ:

Արտաքին մասէն ոչ մէկ բան զատորոշել կուտայ եկեղեցիները եւ վանքերը միւս սովորական քարայրներէն: Ոմանց վրայ խաչ մը կը տեսնենք:

Գաւիթին մասը տեսանելի է միշտ, հոն կը տեսնենք դերեզմաններ, ուր թաղուած են համայնքին պետերը եւ բարձրաստիճան կրօնաւորները:

Բոլոր այս եկեղեցիները եւ մատուռները վաղնջական ղրոմ ունին եւ ըստ արտաքին աղեցութիւններու, տեղւոյն ծաւալին եւ չինողին հանճարին՝ կերտուած են այլազան ձեւերով:

Եկեղեցինէն ամէնէն ընդարձակն է «Օղակաւոր եկեղեցի»ն (Թոխալը Քիլիսէ), որ օժտուած է սիւնաւոր մատուռով մը:

«Խնձորենիի եկեղեցին» (Էլմալը) աւելի փոքր է եւ սիւնաւոր:

«Խաւարեալ եկեղեցին» (Քարանլըք Քիլիսէ) մութ է եւ լուսարձակով պէտք է մտնել ներս՝ որմանկարները տեսնելու համար: Այս երեք եկեղեցիները ամէնէն շահեկաններն են իրենց հիանալի որմանկարներով: Անատոլուի կեդրոնին մէջ զարմանքով կը դիտենք ժայռերու քառասի մը մէջեւ վառ գոյներով այս որմանկարները, որոնք պահած են ցարդ իրենց գոյները եւ նկարները, մինչ իրենց ներկայացուցած քաղաքակակրթութիւնը անհետացած է այլեւս այս հողմամասէն:

Կօրէմէի եկեղեցիներէն ոմանք կը մնան պատկերապաշտութեան շրջանէն: Երբ Ամովրիացի կայսեր արգիլեցին պատկերներու պաշտամունքը իբրեւ հեթանոսական աւելորդապաշտութիւն, Պոլսոյ եւ փոքրասիոյ Ասիոյ մէջ խմբաքարերու եւ Ս. Գիրքէ քաղուած պատկերներու իւղանկարները ջնջուելով՝ զարդական մոթիֆներու վերածուեցան: Կէօրէմէի եւ շրջակայքին մէջ այդ շրջանի մատուռներուն զարդերը ժայռերու վրայ գծուած են: Երկրաչափական գծագրութիւններէ կը բաղկանան անոնք առհասարակ եւ կարմիր ու կանանչ խաչերէ:

Պարզ է այս նկարներուն թէքնիքը եւ ոչ շատ զեղարուեստական: Անոնց հեղինակները, հաւանաբար վանականներ, զբաղուեստի սէրէ աւելի բարեպաշտութենէ ներշնչուած էին:

Այս որմանկարներէն հնագոյններըՍուրբիական – Պաղեստինեան դեղարուեստէ ներշնչուած են, ուրիշներ Բիւզանդական, ինչ որ կը բացատրէ Կոստանդնու – պոլսոյ կայսեր դէպի Արեւելք տարածումը:

«Օղակաւոր եկեղեցի»ի պատերուն վրայ կը տեսնենք Նոր Կտակարանի տեսարաններ, Ս. Կոյսի Աւետումէն մինչեւ Քրիստոսի Համբարձումը, Կապադովկիայի մեծ սուրբ Բարսեղի կեանքէն պատկերներ:

Խորանին վրայ կը տեսնենք մեծ Քրիստոս մը երկու հրեշտակներու միջեւ:

«Խնձորենիի եկեղեցւոյն» մէջ կը տեսնենք սուրբեր եւ մարտիրոսներ, «Քրիստոսի խաչելութիւն»ը, «Մկրտութիւնը», «Այլակերպութիւնը» եւն.:

«Խաւարեալ Եկեղեցին» լայն է եւ կը կրէ բիւզանդական աղեցութիւն: Այս եկեղեցւոյն որմանկարներուն մէկ մասը փճացած է:

Ասոնցմէ դուրս կայ նաեւ «Զարըքլը քիլիսէ», ուր եւս կը տեսնենք «Ցիսուսի Մկնունդը», «Մկրտութիւնը», «Այլակերպութիւնը» եւ «Ցուդայի Համբոյրը» ներկայացնող որմանկարներ:

«Դանիէլի Մատուռ»ն ալ զարդարուած է վարդնջական նկարներով:

Կէօրէմէի հովիտէն դուրս կը գտնուի «Հայելիաւոր եկեղեցի»ն (Այնալը Քիլիսէ), որուն բազմաթիւ սիւներէն մին կը մնայ միայն: Սուրբիական աղեցութիւն կը կրէն իր որմանկարները: «Սուրբերու եկեղեցին» (Քըլըճլար Քիլիսէ) ունի փոքր մատուռ մը:

«Սքօղեալ եկեղեցւոյն» (Սաքը Քիլիսէ) մեծ մասը լաւաներու տակ ծածկուած է եւ սակայն անվնաս մնացած մասին որմանկարները շատ գեղեցիկ են: Ինչպէս հատատեցինք 370է աւելի եկեղեցիներէն հաշիւ երկվեցեակ մը պարզուած է որմանկարներով: Իսլամկրօնքի ծնունդով, Սուրիոյ մէջ քրիստոնեաներու զանազան չփումները, Բիւզանդիոնի մէջ ծայրայեղութեան մղուող պատկերապաշտութիւնը իրենց աղեցութիւնը գործեցին եւ միջին Անատոլուի կրօնաւորներէն ոմանք հարկադրուեցան արգիլել եկեղեցիներու մէջ որմանկարները: Պատկերապաշտութիւնը տեւեց Քրիստոս – ից եառ 724 – 854: Ցետոյ եկեղեցիներու զարդերը վերածուեցան երկրաչափական պարզ գծագրութիւններու եւ խաչերու: Մարդկային դէմք ներկայացնող որեւէ նկարչութիւն բնաջնջուեցաւ եկեղեցիներու մէջ:

Կէօրէմէի մէջ ալ վերջ դրաւ պատկերապաշտութիւնը եւ սակայն բարեբախտաբար չջնջուեցան մնացած ները:

Բոլոր այս որմանկարներուն մէջ հատատեցինք Ժ.Ա. դարու Բիւզանդական զարդերու զեղեցկութիւնը կազմող յատկութիւնները:

Այս զարդերը ծիսական հանդամանք կը ներկայացնեն, Քրիստոսի կեանքը չեն պատմեր միայն, այլ եւ ցոյց կուտան քրիստոնէական մեծ ծոներու համապատասխանող խորհուրդները:

ՎԱՐԴՈՒՀԻ ՃԷԼԱԼԵԱՆ

ՀԱՑԱՍՏԱՆ

ԱԿԱԴ. Ե. ՀԱՍՐԱԹԵԱՆ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒԱԾ

Խորհրդահայ թերթերէն կ'իմանանք, թէ Ե. Միութեան Գիտութիւններու ա – կադեմիայի նախագահութիւնը որոշեր է ի. Պաւլովի այս տարուան ոսկէ մեդալը նուիրել մեծ քնաթոսին աշակերտ, Ե. Միութեան Գիտութիւններու ակադեմիայի թղթակից անդամ Ե. Հասրաթեանի՝ Պաւլովիան սկզբունքներու զարգացման ասպարէզին մէջ իր կատարած քանի մը գործերուն համար:

Ե. Հասրաթեանի բազմամեայ հետազոտութիւնները նուիրուած են երկու հիմնական խնդիրներու՝ պայմանական անդրադարձներու (ռըֆլեքս) միացումին եւ գործողութեան մեքենականութիւններուն եւ կեդրոնական ջղային դրութեան խախտած գործարաններու հատումի հարցերուն: Գիտնականը փորձերով հատատած է թէ Պ. Պաւլովի կարգ մը տեսակէտները, որոնք կը վերաբերին մեծ ղլուղեղի կեղեւի աշխատանքին, ճիշդ են նաեւ ուղեղին ստորադաս բաժիններուն համար: Ե. Հասրաթեան 158 աշխատութիւններու հեղինակ է:

ՍՏԱՑԱՆՔ

ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՑ, թիւ 5–9, Մայիս – Սեպտեմբեր 1961– Հայագիտական ուսումնասիրութ, Վիէննայի Մխիթարեան Միաբանութեան:

ՁԱՅՆԵՐ ԳԱԻԱՌԷՆ

ՄԵՐ ՀԱՆԴԻՍԸ

ՎԱԼԱՆՍ.— Շաբաթ, 23 Դեկտեմբեր – ին տեղի ունեցաւ Վալանսի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ հոդաբարձութեան կազմակերպած զպրոցական հանդէսը:

Ներկայ էին վերապատուելի Աբրահամեան, Հայր Պապեան եւ Տիկին Օ. Մելքասեան:

Բացման խօսքը ըրաւ Լեւոն Տէր Սարգիսեան, որ խանդավառուած Վալանսի թատրոնի մէջ լեցուած հայրենակիցներու ներկայութենէն, հրճուանքով իր ներքին հակակրութեան խօսքը ըրաւ: Շնորհակալութեան խօսքը ըրաւ նաեւ Նարեկ քհնյ. Վարդանեանի, որ ձգելով աշխարհական ասպարէզը՝ եկաւ մեր մէջ ծաղկեցնելու մեր մայրենիքի պարտէզը: Ու տարի մը անձնուէր աշխատանքէ մը ետք մեզի կը հրամցնէ իր պատրաստած կանաչազարդ տունկերը:

Ա. մասը եղան խմբերգներ, արտասանութիւններ, մենախօսութիւն, չորսէն տասը տարեկան մանուկներով, սքանչելի առողանութեամբ, մեծ հաճոյք պատճառելով ներկաներուն, որոնք տեղւոյն վրայ կը ծափահարէին:

Բ. մասը մեծ աշակերտներով զեղարուեստական վայելք մը եղաւ: Բոլոր դերերը յաջողութեամբ կատարեցին: «Սարերի Հովին մեռնիմ» խմբերգը, շատ յուզիչ եւ զեղեցիկ տպաւորութիւն մը թողուց: Փոքրիկն Մարի Ավճեան այս անգամ ալ յուզեց ժողովուրդը իր երգով եւ արտասանութեամբ, հակառակ իր փոքր տարիքին՝ մեր բեմերուն զարդը եղած է ան: Ցաջող կերպով արտասանեց նոյն – պէս Օր. Ժամպազդեան: Ապա եկաւ «Կապանդ Պապան» իր Սանդիկլոս հադուստով եւ բեռնաւորուած նուէրներով:

Նարեկ քհնյ. հանդէսը փակեց «Պահպանիչով» եւ ժողովուրդին Հայր Մերովը»:

Լ. Տ. Ս.

ԺԱՄԱԿԱՐԳՈՒԹԻՒՆ Ս. ԾՆՆԴԵԱՆ

ՓԱՐԻԶԻ Ս. ՅՈՎՀ. ՄԿՐՏԻՉ ԵԿԵՂԵՑԻ ՈՒՐԲԱԹ, ձրագալոյց Ս. Ծննդեան եւ Աստուածայայտնութեան *Տեառն Մերոյ Յիսուսի Քրիստոսի* : *Սկիզբ ժամերգութեան ժամը* 15·30ին, *Ս. պատարագ ժամը* 17ին :

ՇԱԲԱԹ, Տօն Ս. Ծննդեան եւ Աստուածայայտնութեան : *Սկիզբ ժամերգութեան ժամը* 8ին, *Ս. պատարագ* 10ին :

Կը պատարագէ եւ քարոզէ Գեր. Տ. ՍԵՐՈՎԲԷ ԵՊԻՍԿ. ՄԱՆՈՒԿԵԱՆ :

ԿԻՐԱԿԻ, Մեռելոց, *ի յիշատակ Մեռելոց Ս. պատարագ եւ հոգեհանգիստ ժամը* 10ին :

ՇԱԻԻԼԻ ԵԿԵՂԵՑԻ

Այս կիրակի առաւօտ Ս. Ծննդեան Տօնի առթիւ հանդիսաւոր Ս. պատարագ կը մատուցուի Շաւիլի եկեղեցւոյ մէջ : Ցաւարտ պատարագի Ջրօրհնէքի արարողութիւն :

ՄԱՐՍԷՅԼԻ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

6 *Յունուար, Շաբաթ, Առաւօտ ժամերգութիւն ժամը* 8·30ին, *երեկոյ, Ձրագալոյց եւ Ս. պատարագ ժամը* 4·45ին :

7 *Յունուար, Կիրակի, առաւօտ ժամերգութիւն ժամը* 8ին, *Ս. պատարագ, Ջրօրհնէք, Մեռելոց ժամը* 10ին :

ԼԻՈՆ ԵԿԵՂԵՑԻ

ՇԱԲԱԹ երեկոյ, Ձրագալոյց, սկզբնաւորութիւն ժամերգութեանց ժամը 4·30ին :

ԿԻՐԱԿԻ, Ս. Ծնունդ·— Սկզբնաւորութիւն ժամերգութեանց առաւօտեան ժամը 7·30ին :

Պատարագ·— ժամը 10ին : *Ջրօրհնէք, ժամը* 11ուկէսին :

Սիրով կը հրաւիրուին Լիոնի եւ շրջանակներու բարեպաշտ Հայ ժողովուրդը ներկայ ըլլալու սոյն արարողութեանց :

Այս առթիւ կը խնդրուի մեր հաւատացեալ ժողովուրդէն, բերել իրենց իւղաւինի բաժինը վառ պահելու համար մեր Ս. եկեղեցին :

ԾՆՈՒՆԴԸ ՊՕՄՈՆԻ ՄԷՋ

6 *Յունուար, Շաբաթ, Ձրագալոյց Ծննդեան·— Երեկոյեան արարողութիւն եւ պատարագ ժամը* 4ին եւ 5ին :

7 *Յունուար, Կիրակի, Տօն Ծննդեան եւ Աստուածայայտնութեան, սկիզբ արարողութեան ժամը* 8, *Ս. պատարագ ժամը* 10 : *Հանդիսաւոր Ջրօրհնէք՝ ժամը* 11·45 :

8 *Յունուար, Երկուշաբթի, Ցիշատակ Մեռելոց·— Սկիզբ ժամերգութեանց ժամը* 8·30ին, *հանդիսաւոր պատարագ եւ հոգեհանգիստ ժամը* 10 :

ՏԻՍԻՆ

ՇԱԲԱԹ երեկոյեան ժամը ճիշդ 5ին *ժամերգութիւն, ապա ընթերցուածներ, և ՈՂԻՆ Է պիտոյ, եւ ապա հանդիսաւոր Ձրագալոյցի պատարագ, երկսեռ երգչախումբին կողմէ, մասնակցութեամբ տեղւոյն դպրաց դասուն* :

ԿԻՐԱԿԻ առաւօտուն ժամերգութիւն, ժամը 8·30ին, *հանդիսաւոր պատարագ ժամը* 10ին, *Ծննդեան քարոզ* 11ին *եւ յետ պատարագի հանդիսաւոր Ջրօրհնէք : Դարձեալ երգչախումբին կողմէ դպրապետութեամբ Պ. Գրիգոր Մարտիրոսեանի : Պատարագիչ եւ քարոզ Վարագ քհնյ. Աւագեան* :

ՍԻՆ ԺԵՐՄԻ ՄԷՋ

ՇԱԲԱԹ, Ձրագալոյց Ծննդեան, երեկոյեան արարողութիւն եւ Ս. պատարագ ժամը 4ին, *եւ պիրքերու ընթերցում ժամը* 5ին :

ԿԻՐԱԿԻ, Տօն Ծննդեան և Աստուածայայտնութեան, արարողութիւն ժամը 8ին, *Ս. պատարագ ժամը* 10ին, *հանդիսաւոր Ջրօրհնէք ժամը* 11·45ին :

Երկուշաբթի, Ցիշատակ Մեռելոց·— Սկիզբ ժամերգութեանց ժամը 8·30ին, *հանդիսաւոր պատարագ եւ հոգեհանգիստ ժամը* 10ին :

ՎԱԼԱՆՍԻ ՄԷՋ

ՇԱԲԱԹ, Ձրագալոյց Ծննդեան ժամերգութիւն ժամը 9ին, *երեկոյեան ժամը* 6ին *Ս. պատարագ* :

ԿԻՐԱԿԻ, Տօն Ս. Ծննդեան, սկիզբ արարողութեան ժամը 8ին, *Ս. պատարագ ժամը* 10ին, *հանդիսաւոր Ջրօրհնէք յետ պատարգի* :

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, Մեռելոց, սկիզբ ժամերգութեան ժամը 9ին, *Ս. պատարագ եւ հոգեհանգիստ* :

Այրի Տիկին Հայկանուշ Էքիզեան, Տէր եւ Տիկին Հ. Թումայեան եւ զաւակները (Նիւթաուն), Տէր եւ Տիկին Հրաչ Էքիզեան եւ զաւակը, Պ. Լեւոն Պաքըրճեան եւ զաւակը՝ Ալէն, Պ. Պարոյր Պաքըրճեան, Տէր եւ Տիկին Եարմայեան եւ զաւակը, ինչպէս նաեւ Պալճեան ընտանիքը եւ Օր. Շահրիկեան ցաւով կը ծանուցանեն իրենց զաւկին, եղբօր, մօրեղբօր, հօրեղբօր, քրոջ զաւկին եւ աղգականին՝

ՑԱՐՈՒԹԻՒՆ ԷՔԻԶԵԱՆԻ

կսկծալի մահը, որ տեղի ունեցաւ Դեկտեմբեր 29ին :

Յուղարկաւորութիւնը կատարուեցաւ Յունուար 2ին, Փարիզի Ս. Յովհ. Մկրտիչ եկեղեցին եւ թաղումը կատարուեցաւ Թիէի գերեզմանատունը :

« ՅԱՌԱՋ » ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

Տիկին Պահչէճեան մէկ տարեկան Յառաջ կը նուիրէ Պ. Արմէն Պայրամեանի, (Պուա Քոլոմպ) :

Թուլոնէն Տիկին Գալփաքճեան մէկ տարեկան Յառաջ կը նուիրէ իր մօր՝ Տիկին Սանտիքճեանի, Մարսէյլ :

ԵԹԷ 4000 ՀՈԳԻԷՆ ԱՒԵԼԻ ՎԱՅՐԻ ՄԸ ՄԷՋ : ՊԶՏԻԿ ԴՐԱՄԱԳԼՈՒԽ ՄԸ ՈՒՆԻՒ ԵՒ ԼԱՒ ՏԵՂ ՄԸ՝ ԽԱՆՈՒԹ ՄԸ.

ՏԵՂԱՒՈՐԵՑԷՔ

Pressing Automatique

ՄԸ

Եւրոպական առաջնակարգ *մաթէրիէլով* : Մեծ եկամուտ : Ոչ մէկ *սթոք* : Հաճելի աշխատանք : Վճառումի մեծ դիւրութիւններ : Մեր միջոցաւ բացատրութիւններ եւ լուսաբանութիւններ :

Տեղեկութեանց եւ Տրվիի համար դրել :—

Aïvazian

93, Rue Maisena,

LYON 6e

ԾՆՈՒՆԴԻ ԵՒ ՆՈՐ ՏԱՐԻՈՅ

ՈՒՐԱԽ ՕՐԵՐՈՒՆ ԵՒ ԱՄԲՈՂՋ ՏԱՐԻՆ

Եւրոպայի Մեծագոյն Արեւելեան Վաճառատունը

ՊԱՀԱՍՈՒՐԵԱՆ խանութ մը չայ – ցեվղին սեղանին վրայ ամէնէն հարմով պատառը կը պակսի՝ մեծին ու պզտիկին համար : ՊԱՀԱՍՈՒՐԵԱՆ վաճառատան մէջ պիտի գտնէք ա – ւանդական ընդհէնէներու եւ անու – շեղէններու ամէն տեսակը, անմրցելի գիներով :

Ապսպրանքի վրայ, ծրարի առա – քում Ֆրանսայի ամէն կողմ եւ դէպի արտասահման՝ Պելժիա, Զուիցերիա, Անգլիա :

ՊԱՀԱՍՈՒՐԵԱՆ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

LYON

246, Rue Vendôme -	Tél. MO 11-84
20, Rue Villeroy	MO 32-10
65, Rue Robert	LA 07-72

ԵՒ ԻՆԶՊԻՍ ՄԻՇՏ

Արմաւ, «պամիա», «եալանճի տոլմա», յունական «թուրչի», «պիպէօ», տերեւ, թահին հելվա, «վանիլլ», չոքոլա, «նուազէթ», «լոզում», «սապըզ», պիստակ, Շիրակ օղի (41 – 45o), Իզմիրի չամիչ, «սուճուք», կեսարական «պաստըրմա» : առաջնակարգ սուրճ, (fարավան եւ մոգա), համեմներ «մահլէպ», «սալէպ», ձիթապտուղ, ձէթ, «քաչքավալ» պուլկարական, ձերմակ պանիր ոչխարի կաթով : Ամէն կարգի պահածոներ, «քուսքուս», հարիսա, սումագ, թարամա, լաfեթտա, քաֆլաւա, fատայիֆ, տերեւ եւայլն :

ՊԱՀԱՍՈՒՐԵԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆԸ

Ունի նաեւ մասվաճառատուն մը, որուն առաջնակարգ մխաերը դոհացում կուտան ամէնէն նրբաճաշակ – ներուն : Ոչխարի, հօրթի եւ եղան միս (քաշուած միս, եւայլն) :

Հ. Յ. Դ.

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հ. Յ. Դ. Մարսէյլի Շրջ. Կոմիտէի հրաւիրած ընկերական ժողովներու :—

Հ. Յ. Դ. Մարսէյլի Շրջ. Կոմիտէն՝ ստիպողաբար ընկերական ընդհ. ժողովի կը հրաւիրէ հետեւեալ ենթակոմիտէներու եւ խումբերու անդամ ընկեր – ընկերուհիները :

ՔՐԻՍՏԱՓՈՐ ենթակոմիտէ, 6 Յունուար, Շաբաթ երեկոյ, ժամը 21ին :

ԶԱԻԱՐԵԱՆ ենթակոմիտէ, 6 Յունուար Շաբաթ երեկոյ, ժամը 21ին :

ՎՌԱՄԵԱՆ ենթակոմիտէ՝ 7 Յունուար կիրակի կէսօրէ ետք ժամը 15ին :

ԱԿՆԱՒՈՒՐ ենթակոմիտէ 13 Յունուար, Շաբաթ երեկոյ ժամը 21ին :

ՎԱՐՈՒԺԱՆ խումբ՝ 14 Յունուար, կիրակի կէսօրէ ետք ժամը 15ին :

ՀԱՄԱԶԱՍՊ խումբ՝ 13 Յունուար, Շաբաթ երեկոյ, ժամը 21ին :

ԹԱԹՈՒԼ խումբ՝ 14 Յունուար, կէսօրէ ետք ժամը 15ին :

ԸՆԿԵՐ ԿԱՐՕ խումբ՝ 14 Յունուար, կիրակի կէսօրէ ետք ժամը 15ին :

ՀԱՅԱՍՏԱՆ խումբ՝ 13 Յունուար, Շաբաթ, ժամը 21ին :

ՎԱՐԱՆԴԵԱՆ խումբ՝ 15 Յունուար, երկուշաբթի, ժամը 21ին :

ԳԷՈՐԳ ՉԱՎՈՒՇ խումբ՝ 20 Յունուար Շաբաթ, ժամը 21ին :

ՄՈՒՐԱՏ խումբ՝ 21 Յունուար, կիրակի կէսօրէ ետք, ժամը 15ին :

ՆԻԿՈԼ ԴՈՒՄԱՆ խումբ՝ 21 Յունուար, կիրակի կէսօրէ ետք, ժամը 15ին :

ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ խումբ՝ 20 Յունուար, Շաբաթ, ժամը 21ին :

Սոյն ժողովները տեղի պիտի ունենան իրենց սովորական հաւաքատեղիները : Խիստ կարեւոր օրակարգ : Բոլոր ընկեր – ընկերուհիներու ներկայութիւնը պարտաւորիչ է : Վարչութիւնները նախապէս պէտք է բոլոր ընկերներուն տեղեկացնեն ժողովներու վայրի եւ թուականի մասին : Ներկայ պիտի ըլլան Շրջ. Կոմիտէի ներկայացուցիչները :

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՆ ՕՐԸ

Կազմակերպուած Պուլ. Օտտոյի Ֆ. Կ. Ֆաչի մասնաճիւղի կողմէ :

Այս կիրակի կէսօրէ ետք ժամը 3ին, *Պառ էնթէռնասիոնալ, Շըմէն տը Մատրակ – վիլ* :

Կը մասնակցին հայկ. դպրոցի աշակերտութիւնները :

Կը խօսի դպրոցի ուսուցիչ Պ. Յակոբ Արթինեան : Գեղարուեստական ճոխ բաժին : Երգ, արտասանութիւն, հայկական պարեր :

Imprimerie Spéciale du journal « Haratch »
32, Rue de Trévise, PARIS (9e)

ՖՐԱՆՍԱՀԱՅ ԿԱՊՈՒՏ ԽԱՉԻ ՓԱՐԻԶԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԻ

ՏԱՐԵԿԱՆ ՊԱՐԱՀԱՆԴԷՍԸ

HOTEL LUTETIA, 43 Bd. Raspail

Յունուար 6ին, Շաբաթ գիշեր, միւնէեւ առաւօտ

Գեղարուեստական ճոխ բաժին

Պ. Պէպէեանի երգերուն մասնակցութեամբ, նաեւ ուրիշ անակնկալներ

Ճոխ պիւֆէ, պար եւ մեծ խնդավառութիւն

Այժմէն սեղանները ապահովել Օփեռա 37–62

ԼՈՑՍ ՏԵՍԱՒ

Հայ – երաժշտութեան հիւգերորդ սկաւառակը MC 20167

«Promenade en Arménie»

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՄԲ ԵՒ ՂԵԿԱՎԱՐՈՒԹԵԱՄԲ

ԱՐԱՒ ՊԱՐԹԵՒԵԱՆԻ

(14 կտոր, 45 վայրկեան)

ՆՈՒԱԳԱՀՈՒՄԲ, ԽՄԲԵՐԳ, ՄԵՆԵՐԳ

Խաղողաբաղ, Խնջոյքի պահ, Օրօր կանչեմ, Մանոցի երգ, Շորոր, Երեսիդ Մազերը սրմա կումանի, Հայոց գիւնի, Լեռնական պար, Լուսնակ գիշեր, Կապելայում, Պիւլպիւլը կու կանչէ, Սեւանայ ափին, Եարամօ :

Գեղարուեստական չքեղ եւ գունաւոր կողք, երգերու թարգմանութեամբ եւ բառերով միասին :

Ստանալու համար դիմել Ա. ՊԱՐԹԵՒԵԱՆԻ,
14, Rue Petit, Paris 19 (BOT. 99-22)
կամ Եկեղեցւոյ դիւանատունը

Փնտռել նաեւ նախորդ սկաւառակները՝ 20103, 20136, 20157,, 20162, *եւ պատարագները Եկմալեան* 20114, *Կոմիտասեան* 20150

Գաւառներու համար խնամուած ծրարով առաքում,

Contre Remboursement

Գինն 30 Ն. Ֆ.

ԵՒՐՈՊԱՅԻ

ՄԵԾԱԳՈՅՆ ԱՒՏԱԴՐՈՒՅՔԸ

ՀԷԼՎԱ ԼՈԳՈՒՄ Սուսամ – ՀԷԼՎԱ

ԹԱՀԻՆ ՇԱՐՈՑ (ՌՈՃԻԿ) ՎԱՐԴԷ-ԱՆՈՅՇ

ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ...

CHOC-ALVA • CHOCO-LOC

Sté le BOSPHORE

SIÈGE SOCIAL

2, Rue Louis Astouin /Marseille (2ème)

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

Le PREMIER QUOTIDIEN ARMENIEN en EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction et Administration : 32, Rue de Trévise - PARIS-9e

Fondé en 1925
R. C. Seine 57 A 2731

Téléph. : PRO. 86 - 60
C. C. P. Paris 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա՝ Տար. 50 Ն. Ֆ. Վեցամսեայ՝ 27 Ն. Ֆ.
Արտասահման՝ Տար. 60 Ն. Ֆ. Հատը՝ 0.25 Ն. Ֆ.

ՈՒՐԲԱԹ
5
ՅՈՒՆՈՒԱՐ
VENDREDI
5 JANVIER
1962

38ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 9296 38e ANNÉE Fondateur : SCHAVARCH MISSAKIAN ՆՈՐ ՇՐՋԱՆ, 18ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 5097

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

ՅՈՅՍԻ ՏԱՐԻ

Տարի մը եւս թաւալեցաւ անկիզը ու անվախճան ժամանակի անհունութեան մէջ։

Էջ մը եւս աւելցաւ աշխարհի պատմութեան մեծ դրքին վրայ։

Օղակ մը եւս փրթաւ մեր կեանքի շղթային։

Անցնող տարին իր չարով ու բարիով յիշատակելի օրեր ապրեցնել տուաւ մարդկութեան։ Ցոյսն ու հիասթափութիւնը յաջորդեցին իրարու։

Մեռնելու մասին պէտք չէ դէշ խօսիլ, կ'ըսէ ժողովրդական իմաստութիւնը։

Մեռնող տարին հակառակ իր չատ դէշ կողմերուն, ունեցաւ մէկ առաւելութիւն, որ բաւական է քաւել տալու իր բոլոր մեղքերը։ Պահպանեց խաղաղութիւնը, որուն ա՛յնքան կը կարօտի աշխարհ, ամէն բանէ առաջ։

Պահպանուեցաւ խաղաղութիւնը, այո՛, սակայն չատ պատիւը զոհելու գնով։

Պատերազմի մղձաւանջը չարատեւ ըսպառնալիք մը դարձած, քանիցս անար – դարանալի դիմումներու մղեց ազատ աշխարհը։

Միացեալ Ազգերու Կազմակերպութիւնը, որ կը չաւակնի վարել քաղաքակիրթ աշխարհը՝ իբրեւ պահակ խաղաղութեան եւ ժողովուրդներու ազատութեան, 1961ին անգամ մը եւս հաստատեց թէ ի զուր են իր վրայ դրուած յոյսերը։

Ինկած է սնանկութեան այն վիճակին, որ բաժինն էր եղած Ազգերու Դաշնակցութեան, Լիմանի ափերուն վրայ, ամբողջ քսան տարի, համաշխարհային երկու պատերազմներու միջանկեալ շրջանին։

Ժընեւէն Նիւ Եորք փոխադրուելով, բան մը չփոխուեցաւ ազգերու արիսպագոսին մէջ։ Ուխտի սկզբունքները հիմնականին մէջ նոյնը մնալով, աւելի եւս մանրամասնուեցան Ատլանտեանի ափերուն վրայ։

Սակայն համամարդկային, ազատագան պաղատարները մնացին գուտ վարդապետական վեհի վրայ։ Իրականին մէջ զօրաւորն է դարձեալ, որ յաղթանակը տարաւ, խաչելով արդարութիւնը։

Վերջացող տարուան ընթացքին Ափրիկէի մէջ անկախութեան տիրացան սեռամորթ կարգ մը ազգեր եւս, ՄԱԿի անդամներուն թիւը հասցնելով 105ի։ Այդ նորազատ ժողովուրդներու ազգային դրօշակներն ալ տնկուեցան Ազգաժողովի մուտքին առջեւ, մեծ ու փոքր խայտաբղետ ազգերու դրօշներու չարքին։

Հայ ժողովուրդը համակրութեամբ կ'ողջունէ նոր պետութեանց կազմութիւնը, ժողովրդավար, ազատական վարչաձեւի տակ։

Դարերով օտարի բռնակալ լուծին տակ ապրող Հայը ուրիշ ազգերէ չատ աւելի բարձր կը գնահատէ ազգերու ազատութիւնը, զիտէ թէ ինչ մեծ արժէք կը ներկայացնէ սեփական, անկախ հայրենիքը։

Ահա՛ թէ ինչու սրտի ճմլումով կը փակէ տարին, ափսոսալով որ 1961ին ալ չիրականացան իր յոյսերը, գոնէ նուազագոյն չափով։

Զօրզարձակութեան իր փոքրիկ հայրենիքին ներքին սահմանները, հակառակ խոստումներու։ Ալ ի՞նչ խօսք արտաքին սահմաններու մասին, կազմելու համար Միացեալ Հայաստանը։

Հապա՞ Անկախ Հայաստանը։

Մինչ գոյնզգոյն ցեղեր կ'ազատագրեն աշխարհակալներու տիրապետութենէն, հեռաւոր Ասիոյ եւ խաւարակուռ Ափրիկէի մէջ, Եւրոպայի պորտին վրայ տասնեակ քաղաքակիրթ եւ զարեւոր մը՝ Չեխոսլովաքիա տէր ազգեր 1961ին եւս մնացին բռնակալ վարչաձեւի տակ, զուրկ մարդկային տարրական ազատութիւններէ։

Այդ չարքին մէջ է նաեւ մեր երկիրը։

ՄԱԿի անդամ չէ Հայաստան։ Մեր ազգային դրօշակը չի ծածանիր ազատ ու անկախ ազգերու դրօշներու կողքին։

Հակառակ բոլոր ուրացումներու եւ մոռացումներու, չենք կորսնցուցած սակայն մեր հաւատքը։ Կը տոկանք՝ Հայու չարքաշութեամբ։

Այն հաստատ յոյսով, որ անպայման պիտի իրականանան մեր երազները։

1962ը յոյսի տարի մը ըլլայ հայ ժողովուրդին համար։

ՀՐԱՆՏ–ՍԱՄՈՒԷԼ

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ԿՕԱՅԻ ԽՆԴԻՐԸ ՆՈՐ ՍԿՍԱԻ

ԿՐՍՄԷ ՍԱԼԱԶԱՐ ԵՒ ԿՐ ՍՊԱՌՆՈՑ ՀԵՌԱՆԱԼ ՄԱԿ–ԻՆ

Սալազար բուռն ճառ մը խօսեցաւ Լիզպոնի Խորհրդարանին առջեւ։ Գլխաւոր – բաբար յայտնեց թէ պէտք է վերաքննել Անգլիոյ հետ, Փորթուկալի աւանդական յարաբերութիւնները, ապա սպառնայ ՄԱԿէն հեռանալ։

«Արդար է որ մենք մեզի հարց տանք թէ ի՞նչ կ'ընենք ՄԱԿի մէջ եւ ի՞նչ կ'ընեն հոն այն փոքր երկիրները որ Ռուսիոյ բարեկամութիւնը չեն վայելեր եւ որ Ա–րեւմուտքի հետ իրենց համախոհութեան պատճառաւ իրենց վրայ կը հրաւիրեն հակարեւմտեան պլոքին թշնամութիւնը։ Իմաստուն Զուիցերիոյ պէս, Փորթուկալ պէտք չէ դիմէր ՄԱԿի որ անդամակցի։ Դիմեցինք Անգլիոյ եւ Ամերիկայի առաջարկին վրայ, տեղի տալով այն պատճառաբանութեան թէ պէտք էր ամրապնդել արեւմտեան դիրքը ատիպողական պարագաներու։ Մեր դիմումը, տարիներ չարունակ, խորհրդային վեթոյին հանդիպեցաւ եւ ի վերջոյ կրցանք ներս մտնել սակարկութիւններէ ետք։ Այս պայմաններու տակ իրաւունքն ունինք պահանջելու որ մեզի ըսեն եթէ մեր ներկայութիւնը եւ գործակցութիւնը այլեւս աւելորդ են։ Եւ եթէ չըսեն կրնանք առանց երկիրը չըլլալ որ հեռանայ ՄԱԿէն, բայց ապահովաբար առաջինները ըլ–լանք եւ մինչ այդ կը մերժենք մեր դրամակցութիւնը որեւէ բանի համար որ մեր չահերուն հետ կապ չունի»։

Այս նախաբանէն ետք, Սալազար ծանրացաւ «բրիտանական քաղաքականութեան խոհեմ դպրոցին վրայ»։ Ցիչեց անդլեւփորթուկալեան դինակցութիւնը եւ դաչինքները։ Աւոնցմէ մէկը կը պարտաւորէ Անգլիան որ պաշտպանէ անդր–ծովեան փորթուկալեան հողամասերը։ Անգլիա տարբեր կը մեկնաբանէ այս դաչինքը։ « Բրիտան. դիւանագիտութեան չատ խոհեմ դպրոցը երեւոյթ մը ունի ո–րուն չատ կը հիանամ, այն է որ ոչ մէկ ճիգ կը խնայէ, նոյնիսկ ամէնէն ծանրակչիռ պարագաներուն մէջ ձեռք ձգե–լու համար չօշափելի պայմանապրու–թիւններ անորոշ խոստումներու փոխա–րէն։ 30 տարուան ընթացքին երբեք չեմ դիմած զինակցութիւններու, որովհետեւ կը խորհէի թէ երբեք չհերքուած հաւատարմութիւն մը, զաւոնք վերածած էր խորունկ զգացումներու երկու երկիրներու քաղաքականութեան մէջ, բայց Անգլիա, ինք յիշեց այդ դաչինքները ձեռք ձգելու համար (1943ին) Ասորներու կա–յանները հակառակ անոր որ չէզոքու–թեան յայտարարութիւն ըրած էինք պա–տերազմին սկիզբը»։ Եւ Սալազար յիշատակելով « անխուսափելի սահմանումները» որոնց ակնարկեց Անգլիա կօայի խնդրին առթիւ, աւելցուց թէ իրեն ալ կ'ինյայ վերաքննել իր երկրին դիրքը Անգլիոյ հանդէպ եւ ուսումնասիրել նաեւ

ԻՍՄԷԹ ԻՆԷՕՆԻԻ ՄՈՍԿՈՒԱ՞ ԿԸ ՀՐԱՒԻՐՈՒԻ

ԹՈՒՐՔԵՒՈՒԻՍ ՍԻՐԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

Անդարայի լաւատեղեակ շրջանակները որոնք ուշի ուշով կը հետեւին Թուրք եւ–խորհրդային «սիրաբանութեան » չատ հաւանական կը նկատեն որ խորհրդային կառավարութիւնը Մոսկուա հրաւիրէ Թուրքիոյ վարչապետը՝ Հալքի պարա–գլուխ՝ Իսմէթ Ինէօնիւ։ Ասիկա, խորքին մէջ, կրկնութիւնն է այն հրաւէրին որ ե–ղաւ 1960 Մայիս 27ի յեղափոխութենէն առաջ, վարչապետ Ատնան Մենտերէսի։

Նոյն շրջանակներու համաձայն , հա–ւանական է որ իրերայ այս կացութեան մէջ, Ինէօնիւ առայժմ դրական պատաս–խան չտայ։ Արդարեւ նման հրաւէր մը , Թուրքերուն համար, մաս կը կազմէ Խորհրդ։ Միութեան վարած նոր քաղա–քականութեան, Թուրքիոյ հանդէպ որ – պէտք այս վերջինը ընդունի այն տնտե–սական օգնութիւնը որուն անմիջական կարիքն ունի եւ զոր այնքան «ազնուա–թեամբ» կ'առաջարկէ Մոսկուայէ կառա–վարութիւնը ։

Նման օժանդակութիւն մը արդէն մեր–ժուած էր Ազգ։ Միաբանականութեան կո–միտէին կողմէ, յեղափոխութեան վա –ղորդային։ Բայց ներկայիս Թուրքիոյ տնտեսական եւ ելմտական վիճակը ծան –րացած է, ինչ որ նոր հոսանք մը ստեղ–ծած է հանրային կարծիքին եւ Խորհրդա–րանին մէջ որոնք աւելի տրամադիր են ընդունելու խորհրդային օժանդակութիւ–նը։ Քննադատական ոգի մը ունին արդէն արեւմտեան օժանդակութեան նկատ–մամբ։

Այս սիրաբանութեան առթիւ կարգ մը մանրամասնութիւններ ալ կ'առնենք Պոլ–սոյ թերթերէն։ Առջի օրուան Ինէօնիւի տեսակցութեան մասին խորհրդային դեսպանին հետ, հետեւեալ տեղեկու–թիւնները կը տրուին ։

Անդարայէն կը հաղորդեն թէ վարչա –պետ Իսմէթ Ինէօնիւ խորհրդ։ դեսպան Նիքիթա Իւիժովը ընդունեցաւ եւ իննը –սուն վայրկեան տեսակցեցաւ։ Տեսակ –ցութիւնը խորհրդային դեսպանին պա –հանջով տեղի ունեցաւ ի ներկայութեան արտաքին նախարար Սէլիմ Սարբէրի ։

Վարչապետ Ինէօնիւ եւ դեսպան Ռի–ժով լրագրողներուն լուսաբանութիւն չտուին տեսակցութեան մասին։ Նիքիթա Ռիժով ըսաւ. «վարչապետ Ինէօնիւի հետ Թուրքիոյ եւ Խորհրդ. Միութեան փոխ–յարաբերութեանց մասին չատ դեղեցիկ տեսակցութիւն մը ունեցանք »։

Խորհրդային դեսպանը պատասխանե –լով այն հարցումին թէ «Ռուսիա Թուր –քիոյ օժանդակութիւն առաջարկած է թէ ոչ» ըսաւ ·

— Փոքր եւ անկարեւոր խնդիր մըն է Ռուսիոյ օժանդակութիւնը Թուրքիոյ ։ Մենք ա՛լ աւելի կարեւոր խնդիրներու մասին տեսակցեցանք։ Թուրքիոյ հետ մեր յարաբերութիւնները ու երկու եր –կիրները չահագրգռող նմանօրինակ կա –րեւոր խնդիրներու վրայ ծանրացանք »։

Վարչապետ Իսմէթ Ինէօնիւ ալ տե –սակցութեան մասին տեղեկութիւն ուղղ լրագրողներուն որպիսութիւնը հարցնե –լով բաւականացաւ ։ Լրագրողներուն պն–դումին վրայ Ինէօնիւ ըսաւ. «Իրրեւ վարչապետ կարգ մը չփումներ կատարել իմ պարտականութիւնս է »։

Տեսակցութեան ներկայ արտաքին գործակալ Սէլիմ Սարբէր ալ լրագրող –ներուն հարցումին պատասխանեց .

« Այս տեսակցութեան մասին ոչ ոքէ որեւէ լուր կրնաք ստանալ։ Տեսակցու –թիւնը չատ գաղտնի պիտի մնայ »։

Այս ևոյն ևիւթին շուրջ Միլլիյէթ հե –տեւեալ առաջնորդող յօդուածը հրատա–րակած է։

« Քաղաքական շրջանակներուն ուշա –դրութիւնը գրաւած է այն իրողութիւնը թէ Անդարայի խորհրդ. դեսպանը իր փափաքով մէկուկէս ժամուան տեսակ –ցութիւն մը ունեցած է վարչապետ Ինէօ–նիւի հետ, ի ներկայութեան Արտաքին նախարար Սէլիմ Սարփերի։ Դեսպանը մէկ օր առաջ ալ Արտաքին նախարարին հետ երկար տեսակցութիւն մը ունեցած էր։ Այս չփումները ցոյց կուտան թէ խ–կապէս երկու կառավարութիւններուն միջեւ կարեւոր զարգացումներ կ'ըլլան ։

« Անոնք որ տեսան թէ երկու կողմերն ալ զոհունակութեամբ բաժնուած են չը –փումէն, կը հաւատան թէ բանակցու –թիւնները գրական նիւթի մը շուրջ կը դառնան։ Մեկնաբանութիւնները առաւե–լապէս կը դառնան խորհրդային օժան –դակութեան շուրջ, որուն խօսքը կ'ըլլայ հինէն ի վեր։ Ինչպէս կը յիշուի, խոր –հրդային կառավարութիւնը վերջին տա–րիներուն Թուրքիոյ օժանդակութիւն ա –ռաջարկած էր, Մայիս 27էն ետք նոյն առաջարկը կրկնած էր յեղափոխական կառավարութեան մօտ ։ Սովետներուն այս առաջարկները միշտ երկչոտու –թեամբ դիմաւորուած են մեր կառավա –րութիւններուն կողմէ ։ Սակայն քաղա –քական շրջանակները կ'ըսեն թէ այս ան–դամուան ձեռնարկը լրջօրէն ձեռք պիտի առնուի եւ գրական արդիւնքի մը պիտի յանգի ։ Անոնք որ այս մեկնաբանութիւնը կ'ընեն, երկու կէտի վրայ կը հիմնեն ի –րենց եզրակացութիւնը ·

1 ·— Աբեւելքի մէջ սովը, պիւտճէի բացը եւ տնտեսական լճացումը վտան –գաւոր հանգամանք մը կը ստանան եւ կրնան մեծ տագնապի մը ծնունդ տալ մօտաւոր ապագայի մը մէջ։ Կարիք կայ ատիպողական միջոցառումներու որոնք սփոփանք բերին այս կացութեան։ Նկա –տելով որ անմիջապէս արդիւնք պիտի չտան օժանդակութեան պահանջները գոր կատարած ենք Ամերիկայէն եւ ՆԱ–ԹՕէն, ուրիշ տեղէ օժանդակութեան կա–րիք երեւան եկած է ։

2 ·— Ինէօնիւ երբ վարչապետ էր Թուր–քիոյ Հանրապետութեան առաջին տարի –ներուն , յաջողած էր խորհրդային կա –ռավարութենէն ապահովել այն տեն –ուան համար չատ կարեւոր տնտեսական օժանդակութիւններ։ Կարելի է որ նոյն ձեւով չարժի այսօր՝ երբ դարձեալ վար–չապետ եղած է ։

Ուինստոնի 1899ի յայտարարութիւնը ճշ–դելու համար թէ գրական ի՞նչ կը մնայ անոր մէջ։ Սալազար յայտնեց նաեւ թէ Անգլիա ութ օր գրած էր մերժելու հա –մար իր օգակայանները տրամադրելՓոր–թուկալի որպէսզի կապ հաստատէ Կօայի հետ։

Իր եզրակացութեան մէջ , Սալազար յայտնեց թէ Կօայի հարցը ոչ թէ վերջ–ացած չէ այլ՝ նոր կը սկսի։ «Հնդկաստան կրնայ մեզի դէմ պատերազմ ընել, բայց չի կրնար առանց մեզի խաղաղութիւն ը–նել»։ Այս ուղղութեամբ Սալազար օրի –նագիծ մը պատրաստած է գոր պիտի ներկայացնէ Ազգ· ժողովին ։

Լոնտոնի արտաքին նախարարութեան մէկ բանբերը, անդրադառնալով Սալա –զարի ամբաստանութեան թէ ութ օր ուշ պատասխանած է Փորթուկալի դիմու –մին, ըսաւ թէ թիւրիմացութիւն է ։

ՖՐԱՆՍԱՑԻ մասվաճառները տեղի տուին վերջ տալով իրենց գործադուլին ։ Արդէն Նախարարաց Խորհուրդը որոշած էր Պարտադիր Աշխատանքի ենթարկել ե–թէ չամաձկին ։

ՍՈՒՐԻՈՅ նախկին վարչապետը Ֆարէս էլ Խուրի մեռաւ առջի օր Դամասկոսի մէջ։ Բազմաթիւ անգամներ ալ նախագա–հը եղած էր խորհրդարանին։ 85 տարե –կան էր ։

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԳԱՐԵԳԻՆ ՎՐԴ.Ի ՀԵՏ

—o—

ԽՄԲ.— *Ալիքի աշխատակիցներէն մին հանդիպում սը ունեցած է Կիլիկիոյ կաթողիկոսութեան դպրեվանէի տեսուչ Խարեգին վարդապետ Սարգիսեանի հետ, որ մասնակցելու համար Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդին Բ. համագումարին (Նոր – Տեհլի), վերադարձի ճամբուն վրայ հանդիպած էր Թեհրան: Կուտանք տեսակցութեան հիմնական մասերը.—*

ՀԱՐՑՈՒՄ.— *Ի՞նչ առիթով եւ նպատակով էք այցելել Թեհրան:*

ՊԱՏԱՍԽԱՆ.— *Թեհրան եկած եմ առանց որեւէ մասնաւոր առաքելութեան կամ յատուկ ծրագրի: Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի Բ. ընդհ. համագումարին մասնակցելու համար գացած էի Նոր – Դեհլի (Հնդկաստան): Անթիլիաս վերադարձիս ճամբուս վրայ, Թեհրան հանդիպեցայ անձնապէս տեսնելու համար Թեհրանի Հայոց Թեմի Ա. առաջնորդ եւ միաբանակից եղբայրը Սր. տաճ. Արքեպիսկոպոսը: Այցելելու նաեւ Ն. Ջուղա ու Թաւրիզ եւ անձամբ տես. նուելու Ներսէս եւ Արսէն միաբանակից եղբայրներուս հետ, ծանօթանալու մեր փառաւոր անցեալի եւ մշակոյթով հարուստ այդ կեդրոններուն հետ:*

Բնականօրէն մեծ փափաք մըն էր ինծի համար անձամբ տեղեկանալ Իրանահայ մեր սիրելի զաղութի կեանքին, առնոր դործունէութեան եւ կարիքներուն:

Հ.— *Չէ՞ք ցանկանայ, այս առիթէ, որպէ տեղեկութիւններ եւ մանրամասնութիւններ հաղորդել Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, Կաթողիկոսարանի եւ Դպրեվանքի մասին:*

Պ.— *Սրտիս չատ մօտիկ հարցում մըն է ասիկա եւ մեծ ուրախութեամբ կրնամ խօսիլ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, Կաթողիկոսարանի եւ Դպրեվանքի կեանքի ու անոր դործունէութեան մասին:*

Նախ Կաթողիկոսարանի մասին ընդհանրապէս խօսելով կ'ուզէի յայտնել, որ Զարեհ Ա. Կաթողիկոսի ընտրութենէն եւ օծումէն ասդին, չատ աւելի կանոնաւոր եւ եռանդուն վիճակի մէջ է Կաթողիկոսարանի վարչական դործունէութիւնը՝ իմաստուն եւ խանդավառ առաջնորդութեամբ Նորին Վեհափառութեան:

Կաթողիկոսարանի եւ թեմերու փոխադարձ կապը հետզհետէ աւելի կ'ամրանայ ու կ'արդիւնաւորուի եւ երիտասարդ ու կորովի Հայրապետը աչալրջութեամբ եւ նախանձախնդրութեամբ կը հետեւի թեմերու բոլոր կարգի՝ եկեղեցական, վարչական, մշակութային եւ ազդային դործունէութեանց, եւ յաճախակի թղթակցութիւնների եւ տեղեկագրերի մի ջոցով տեղեակ կը մնայ բոլոր թեմերու բոլոր տեսակի դործերուն եւ կարիքներուն մասին: Ցաճախ իր նամակներով Հայրապետական անհրաժեշտ ցուցմունքները կը հաղորդէ Առաջնորդ Հայրերուն, միչտ հայրական ոդիով եւ եկեղեցւոյ հոդեւոր ու ազդային շինութեան նախանձախնդիր ղդացմունքներով:

Իր մասնաւոր ուրդուրանքին առարկայ են դարձած այն թեմերը, որոնք իր հոդեւոր հովանաւորութիւնը խնդրեցին եւ ինք, մղուած Հայ Եկեղեցւոյ կենսունակութեան եւ բարեզարդութեան նախանձախնդրութենէն, ստանձնեց ծանր բեռը այդ թեմերու հոդեւոր եւ ազդային ընդհանուր ծառայութեան:

Անցնելով Դպրեվանքին, որ մեր վեհափառ Հայրապետի իսկ բառով՝ «Սիրտը է կաթողիկոսարանին», այստեղ կրթական եւ մշակութային դործը կը զարդանայ հետզհետէ ամով խանդավառու. թեամբ եւ յուսադրիչ արդիւնքով: Անցեղ դպրոցական տարեշրջանի վերջաւորութեան դպրեվանքի չորս սարկաւագները ընդունեցան կուսակրօն քահանայութեան (աբեղայութեան) կարդը եւ նոր վեղարներուն չուքին տակ ընդունեցան՝ Կիլիկիոյ միաբանութեան ուխտին:

Դպրեվանքի գործունէութեան մասին, առաւել եւս չօշափելի զաղափար տալու համար, կ'արժէ այստեղ արձանագրել, որ Վեհափառ Հայրապետի ընտրութենէն (1956) ասդին, 15 նոր վարդապետներով զօրացաւ Կիլիկեան միաբանութիւնը, որուն ընդհանուր թիւը այսօր կը հասնի 23ի (1 Կաթողիկոս, վեց եպիսկոպոս, 10 վարդապետ եւ վեց աբեղաներ):

Մինչ մեկ կողմէ 13ը գրուած են աշխարհի չորս կողմերը եւ ժողովրդական ծառայութեամբ կը սպասասորեն Աստուծոյ եւ հայ ժողովուրդին, մնացեալը բոլորուած Վեհ. Հայրապետին չուրջը, յառաջ կը տանին կաթողիկոսարանին զործունէութիւնը զանազան բաժանմունքներու մէջ, Անթիլիասէն ներս:

Դպրեվանքի այս տարուան ուսանողութեան թիւը վաթսուն է, բոլորն ալ դի. ջերօթիկ ուսանողներ են 15 – 20 տարեկանի միջեւ, որոնց բոլորին կեցութեան եւ կրթութեան ծախքերը կը հոդացուին Դպրեվանքին կողմէ:

Դպրեվանքի Շամեայ ուսումնական ընթացքէն անկախ երկու տարիներէ ի վեր վերաբացուած է քահանաներու յատուկ դասընթացք մը, որուն հետեւող 7 ուսանողները անցնող Նոյեմբեր ամսու սկիզբը քահանայ ձեռնադրուեցան եւ յատկացիկայ տարուան ընթացքին պիտի ցրուին Կիլիկեան թեմերուն մէջ ծառայելու համար, հոն ուր եկեղեցիները կարիք ունին երիտասարդ, հաւատաւոր եւ զարդացած քահանաներու:

Հ.— *Ո՞ր երկրներից են դալիս այդ ուսանողները եւ ի՞նչպէս է հոդացւում նրանց ծախքերը:*

Պ.— *Առհասարակ՝ մեծամասնութիւնը կուգան Սուրիոյ եւ Լիբանանի հայաշատ զաղութներէն, ունինք նաեւ ուսանողներ Եդիպտոսէն եւ Թուրքիայէն: Այս տարի ուրախութիւնն ունեցանք ընդունելու նաեւ երկու ուսանողներ Թեհրանէն: Վեհափառին թելադրութեամբ զպրեվանքի տեսչութեան համար յատուկ արժէք ունի այն պարագան, որ ուսանողները դան կիլիկիոյ կաթողիկոսութեան բոլոր թեմերէն:*

Գալով ձեր հարցումի Բ. բաժնին կը նամ բաւականանալ յայտնելով միայն, որ ուսանողութեան ծախքերը կը հոդացուին կաթողիկոսարանի պիւտճէէն:

Կան եկեղեցասիրական եւ կրթասիրական միութիւններ, ինչպէս նաեւ կրօնական ու ազդանուէր հայ անհատներ, որոնք իրենց կամ իրենց զերդաստանի անունով, սոներ կը պահեն դպրեվանքին մէջ, ապագային զանոնք հոդեւորականի սքեմին տակ տեսնելու քաղցր յոյսով:

Այս բոլոր միութիւններն ու անհատները Հիւսիսային Ամերիկայի մեր պատուական զաղութին կը պատկանին: Ուրախութիւս էր, որ առնոց օրինակը տարածուէր Կիլիկեան ուրիշ թեմերուն մէջ եւս:

Հասկնալի է անշուշտ, որ պիչերօթիկ վարժարանի ծախքերը ծանր կը ճնշեն կաթողիկոսարանին պիւտճէին վրայ, այդ ծանրութեան դիմաց մեր յոյսը եւ հաւատքը չատ զօրաւոր են մեր ժողովրդին ազնիւ ու բարեսէր Մեծ Սիրտին վրայ: Ան է մեր զանձարանը, թէ նիւթական եւ թէ բարոյական իմաստով:

Հ.— *Հետաքրքիր է իմանալ, թէ Դպրեվանքի բոլոր ուսանողներն էլ հոդեւոր կոչում են ընդունո՞ւմ, թէ ոչ:*

Պ.— *Դժուար է այս հարցումին պատասխանել, որովհետեւ անհատներուն կոչման պարագան կարելի չէ ճշդել ի յառաջագունէ: Հոդեւորականութեան կոչումը անձնապէս ղդացող սրբազան պարտք մըն է եւ մենք կ'աչխատենք, որ ուսանողները Աստուածաչունչի եւ հայ ժողովրդի պատմութեան ուսումնասիրութեամբ դիտակցեն այդ պարտքին կարեւորութեան եւ ինքնաբերաբար իրենք դիրենք ընծայեն հոդեւոր ծառայութեան:*

Ուրախութիւն է մեզի համար յայտնել, որ վերջերս արդիւնաւոր եղաւ Դպրեվանքի դործը այս տեսակէտէն: Իսկ երբ դանուին ուսանողներ, որոնք կուսակրօն հոդեւորականութեան կոչումը ծանր ըղդան եւ չնետուին անոր ծառայութեան մէջ, անոնք առհասարակ յետագային ուսուցչական ասպարէզին մէջ կամ ազդային այլ դործերու մէջ, կ'արդիւնաւորեն իրենց ստացած կրթութիւնը ու դիտութիւնը Դպրեվանքի մէջ:

Մեծ է թիւը այն ուսուցիչներուն, մասնաւորաբար Սուրիոյ եւ Լիբանանի մէջ, որոնք Դպրեվանքի ուսանողները եղած են եւ Դպրեվանքէն ստացած իրենց հայկական ոդին եւ ուսումնական հարստութիւնը:

Դպրեվանքի արդիւնքը պէտք չէ գնահատել միայն ընդունուած քահանաներու թիւով:

Հ.— *Ուրիչ ի՞նչ դործեր են տարուում Կաթողիկոսարանում:*

Պ.— *Կաթողիկոսարանը ունի իր յատուկ պաչտօնաթերթը՝ «Հասկ» ամսագիրը, եւ Դպրեվանքը ունի իր պարբերականը՝ «Գլաձոր», երկուքն ալ կը տպուին Կաթողիկոսարանին մէջ, ուր տպատան բակչական դործը կը տարածուի կրօնական երկասիրութիւններու եւ հայադիտական — բանասիրական լուրջ դործերու տպադրութեան վրայ: Վերջերս տպարանը օժտուեցաւ Գարուսո Կիւլպէնկեան Հիմնարկութեան կողմէ նուիրուած տողաչար մեքենայով մը:*

Վերջնադոյն հրատարակութիւններէն կրնամ յիչել՝ «Գալաթիոյ ազգային մտաւնադարանին ձեռագրաց ցուցակը» հեղինակութեամբ Բարսէղ Աթոռակից Կաթողիկոսի եւ նիւթական մատակարարութեամբը Գ. Գիւլպէկեան հիմնարկութեան, չուրջ 1500 մեծադիր եւ երկսիւն էջերով զեղատիպ հրատարակութիւն մը, որ բոլոր դիտնականներուն դնահատանքին արժանացաւ: Տպարանէն լոյս տեսաւ նաեւ Եղուարդ Տարօնեանի լեղուաբանական ուսումնասիրութիւնը «Բաղէշի նահանգի խուլթիկ գաւառի բարբառի մասին»: Դարձեալ դիտական՝ լուրջ եւ բազմանպաստ հրատարակութիւն մը կատարուած հրատարակութիւնն մըն է:

Կաթողիկոսարանի դործունէութիւնները այս հակիրճ ակնարկին մէջ կ'արժէ յիչել կիրակնօրեայ վարժարանները կազմակերպութիւնը, որ հոդեւոր արթնութեան եւ դաստիարակութեան բազմարդիւն չարժում եւ վերակենսունակութեան ընթացքի մէջ մտած է:

Կաթողիկոսարանի դործունէութեան մէջ ղեղեցիկ պատկեր մըն է, որ կը պարդուի Կիրակի առաւօտները, երբ մեծաթիւ վարդապետները Անթիլիասէն կը մեկնին Պէյրութ եւ կը տարածուին քաղաքի զանազան եկեղեցիները եւ Աստուծոյ խօսքը կը տարածեն հայ ժողովրդի հաւատացեալ զաւակներուն, Հայ Եկեղեցւոյ Սրբազան բեմերէն:

Հ.— *Նախքան վերջացնելը, ի՞նչ կը ցանկանայիք աւելացնել:*

Պ.— *Ոչինչ, բայց միայն յայտնել այն բացառիկ ուրախութիւնը, որ ունեցայ իբրեւ հայաստանեայ միաբան Հայրապետական Աթոռին եւ Կաթողիկոսի եւ նիւթական մատակարարութեամբը Գ. Գիւլպէկեան հիմնարկութեան, չուրջ 1500 մեծադիր եւ երկսիւն էջերով զեղատիպ հրատարակութիւն մը, որ բոլոր դիտնականներուն դնահատանքին արժանացաւ: Տպարանէն լոյս տեսաւ նաեւ Եղուարդ Տարօնեանի լեղուաբանական ուսումնասիրութիւնը «Բաղէշի նահանգի խուլթիկ գաւառի բարբառի մասին»: Դարձեալ դիտական՝ լուրջ եւ բազմանպաստ հրատարակութիւն մը կատարուած հրատարակութիւն մըն է:*

Կաթողիկոսարանի դործունէութիւնները այս հակիրճ ակնարկին մէջ կ'արժէ յիչել կիրակնօրեայ վարժարանները կազմակերպութիւնը, որ հոդեւոր արթնութեան եւ դաստիարակութեան բազմարդիւն չարժում եւ վերակենսունակութեան ընթացքի մէջ մտած է:

Կաթողիկոսարանի դործունէութեան մէջ ղեղեցիկ պատկեր մըն է, որ կը պարդուի Կիրակի առաւօտները, երբ մեծաթիւ վարդապետները Անթիլիասէն կը մեկնին Պէյրութ եւ կը տարածուին քաղաքի զանազան եկեղեցիները եւ Աստուածոյ խօսքը կը տարածեն հայ ժողովրդի հաւատացեալ զաւակներուն, Հայ Եկեղեցւոյ Սրբազան բեմերէն:

Հ.— *Նախքան վերջացնելը, ի՞նչ կը ցանկանայիք աւելացնել:*

Պ.— *Ոչինչ, բայց միայն յայտնել այն բացառիկ ուրախութիւնը, որ ունեցայ իբրեւ հայաստանեայ միաբան Հայրապետական Աթոռին եւ Կաթողիկոսի եւ նիւթական մատակարարութեամբը Գ. Գիւլպէկեան հիմնարկութեան, չուրջ 1500 մեծադիր եւ երկսիւն էջերով զեղատիպ հրատարակութիւն մը, որ բոլոր դիտնականներուն դնահատանքին արժանացաւ: Տպարանէն լոյս տեսաւ նաեւ Եղուարդ Տարօնեանի լեղուաբանական ուսումնասիրութիւնը «Բաղէշի նահանգի խուլթիկ գաւառի բարբառի մասին»: Դարձեալ դիտական՝ լուրջ եւ բազմանպաստ հրատարակութիւն մը կատարուած հրատարակութիւն մըն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒԹԻՒՆԸ

(Ր. եւ վերջին մաս)

Գալով անասուններու որակին, մինչեւ 1926 ցեղական եւ բարելաւուած կենդա – նիներուն թիւը Հայաստանի մէջ անչան էր: Միայն 1932էն 1947ին էր, որ 7000 ղլուխ ցեղական կենդանիներ ներածուե – ցան արտասահմանէն: Փիւղատնտեսական կենդանիներուն բարելաւումին մէջ չատ մեծ դեր խաղաց կենդանիներու արհես – տական սերմնաւորումը: Այսպէս, օրի – նակ, այսօր մաքիներուն ղրեթէ հարիւր տոկոսը եւ կովերուն եւ երինջներուն մօտ երեսուն տոկոսը կը սերմնաւորուին ար – հեստական եղանակով: Մօտիկ ապագա – յին բոլոր կովերը եւ երինջները պիտի սերմնաւորուին արհեստական ճեւով:

Ներկայիս անասուններու ղեկավարող մասը ղեցական է: Ասոր իրրեւ ապացոյց կարելի է բերել օրինակներ: Կովեր կան, որ մէկ տարուան մէջ 8390 քիլօ կաթ կ'արտադրեն: Ցարդի ցեղ է կովկասեան պորչը, որ յաջողած են տրամախաչումի (Թրուագըմաճ) միջոցաւ մէջտեղ բերել հայ ղիւղատնտեսները, Լոռիի չրջանին մէջ: Ասոնց թիւը հասած է քսան տասա – բի, տոկուն են, յարմարած են տեղական պայմաններուն: Այս անասունները խո – շոր ըլլալէն զատ (կը կշռեն 450 – 500 քիլոկրամ), լաւ միս ունին եւ առատ կաթ:

1960 Յունուար մէկին Հայաստանի 785 կոլտնտեսութիւններուն մէջ, միջին հաշ – ուով, իւրաքանչիւր ագարակին մէջ կար 135 կով: Առանձին կոլտնտեսութիւնները ունին 900 կով:

Աշխարհաբուծութեան բնագաւառին մէջ մեծ փոփոխութիւններ տեղի ունեցան յատկապէս ցեղերու բարելաւման, բուր – դին որակը եւ քանակը բարձրացնելու ուղղութեամբ: Աւելի կարելի եղաւ իրա – դործել տեղական ոչխարները տրամա – խաչելով նրբաբուղ ցեղերու խոյերուն հետ: Այս աշխատանքը անհրաժեշտ էր կատարել, որովհետեւ Հայաստանի ոչ – խարներուն կոպիտ բուրդը կարելի էր դործածել գորգագործութեան, կոշ – մահուդներու եւ տունի զանազան բան – ուածքներու համար միայն եւ կարելի չէր դործածել արդի տիւսուածեղէնի արդիւ – նաբերութեան համար: Այս պատճառով մինչեւ այսօր քան հազար նրբաբուղ ցե – ղերու խոյեր ներածուած են դուրսէն եւ կազմակերպուեցան արհեստական սերմ – նաւորման, ընդամէնը 650 կայաններ:

Շնորհիւ այս աշխատանքին բարելաւ – ուած է Հայաստանի ոչխարին տեսակը: Այդ տեսակէտէն բնորոշ են հետեւեալ տուեալները. 1935ին, այսինքն՝ ոչխար – ներու ցեղին բարելաւումէն մէկ տարի ա – ռաջ ցեղական ոչխարները կը կազմէին ոչխարներու ղլխաքանակին միայն 0·2 տոկոսը: Տասնըհինդ տարի հետը, 1950 – ին ասոնք կը կազմէին 28 տոկոս, 1953 – ին՝ 57 տոկոս, իսկ 1958ին ոչխարներուն ղեկավարող մասը կամ 87 տոկոսը ցե – ղական էր: Միայն բալթաս ցեղին ոչ – խարներն են, որ չեն տրամախաչուած, նկատի առնելով անոնց մաքուր բուրդը, որ չատ յարմար է դորգ չինելու համար: Այս ոչխարներէն 1958ին հարիւր, հա – զար հատ կար Հայաստանի մէջ:

Խոզաբուծութիւնը, անցեալին, տա – բածուած էր անտառոտ չրջաններուն մէջ: Տեղական խոդերը մէկ երկու տար – ուան մէջ տալիս կը տանէին 50–70 քեղ – կրամի, իսկ կը ծնէին տարին մէկ ան – դամ, այս ալ փարնան եւ կուտային 4–5 ծոճկոր: Խոզերուն հիմնական կերը ա – տառի պտուղներն էին՝ կաղին, ածառ, վայրի խնձոր եւ տանձ: Այդ էր պատճա – ռը, որ խոզաբուծութիւնը սահմանափակ էր, իսչպէս նաեւ արտադրութիւնը, ըս – պառողը պիւղացին էր:

1960 Յունուար մէկին Հայաստանի մէջ կար 115·000 ղլուխ կով: Ցանկին հետ բարելաւուած է նաեւ անասունին որակը:

Արդի թափով կը զարդանան նաեւ թռչնաբուծութիւնը, ճազարաբուծու – թիւնը, մեղուաբուծութիւնը եւ չերամա – պահութիւնը: Երեւանի, Լենինականի չր – ջակաները կը զործեն թռչնաբուծու – բաններ՝ մինչեւ քառասուն եւ աւելի հա – զար ածան հաւերով:

Հայաստանի չրջաններուն մեծ մասը բացառիկ նպաստաւոր պայմաններ ունի չերամապահութեան զարդացման համար: Այս է պատճառը, որ դարերու պատմու – թիւն ունի չերամապահութիւնը Հայաս – տանի մէջ:

Չերամապահութեան զուգընթաց՝ 1925 – 1926ին հիմնուեցաւ նաեւ չերամապա – հական տոմարաբուծութիւն, չերամի ձու – երու արտադրութիւն, որուն բարձր որա – կին պատճառով մեծ յաջողութիւն գտած է արտասահմանի եւ մ. Միութեան մէջ:

Ներկայիս Հայաստանի մէջ կան չեր – մի ձուերու չորս կեդրոններ, որոնց ար – տադրութեան ութսուն տոկոսը կ'ընթայ մ. Միութիւն:

Չերամի հին տոզին ցեղերուն փոխա – րէն այժմ Հայաստանի մէջ կը խնամուին սպիտակաթել բարձր մթերատու նոր ցե – ղեր: Վերջիններս ունին միատաքի մա – քուր զոյն, բարձր եղք եւ թեֆեֆ լաւ ցուցանիչներ:

Ներկայիս Հայաստանի մէջ չերամա – պահութեամբ կը զբաղին 17 չրջաններ, որոնց արտադրած բոժոժը առ այժմ դեռ չի բաւարարեր երկրին պահանջը:

Մեղուաբուծութիւնը անասնաբուծու – թեան կարեւոր ճիւղերէն է: Արդարեւ, մեղրին եւ մեղրամոմին զատ, մեղունե – րուն դերը մեծ է պտղաբուծութեան, այգեպործութեան, բանջարաբուծութեան եւ խոտերու սերմնաբուծութեան զար – գացման համար: Մէկ ծաղիկէն դէպի միւսը փոչի տանելով կը սատարեն խա – չաձեւման:

Հայաստան իր բնական – կլիմայական պայմաններով եւ աշխարհագրական դիր – քով չատ նպաստաւոր է մեղուաբուծու – թեան համար: Լեռներու բնական բազմե – րանդ ծաղիկներէն հաւաքած մեղրը, իր ոսկէ դոյնով, անուշ համով, բուրաւէտ հոտով, բուժիչ յատկութիւններով եւ բարձր սննդաբերութեամբ չայտնի է Հա – յաստանի մէջ ու անոր սահմաններէն դուրս եւս:

Մեղուաբոյծ Ա. Կոթոլեան 1939ին մը – չակեց մեղուի ընտանիքները բազմացնե – լու եւ մթերատուութիւնը բարձրացնելու ձեւ մը, որուն շնորհիւ մէկ ընտանիքէն ստացուեցաւ 405 քիլոկրամ մեղր, 15 քիլկ. մոմ եւ ամ՝ 1200 տոկոսով, որ կը նկատուի համաչխարհային չափանիշ եւ մինչեւ այսօր ալ չէ պերազանցուած:

Ա. ԵՐԻՑԵԱՆ

ԹՈՒՐՔԻԱ ԻՆՉՊԷՍ ՈՐ Է

ԴՐԱՄ, ԴՐԱՀՄ, ԴՐԱՀՄ ...

Թուրքիոյ պետական կամ ընկերային բոլոր դործունէութեանց մէջ, այս օրե – րուն, դրամն է որ կը զբաղեցնէ միտքե – րը:

Երեսփոխանները ամսականի յաւելում կը պահանջեն, ինչ որ ընդհանուր դժդո – հութեան աղաղակ բարձրացուց երկրին մէջ ամէն կողմ:

Գաւառներէն հեռագիր կը տեղան Ան – կարա, պահարակելով երեսփոխանները, որոնք ամսականի յաւելում կը պահան – ջեն.— « Մենք ձեզ ատո՞ր համար ընտ – րեցինք»: Կամ, «այն պահուն՝ երբ ա – բեւելեան նահանդներուն մէջ անօթու – թիւն կը տիրէ, ձեր թոչակներուն մասի՞ն կը մտածէք»: Ոմանք կը պահանջեն որ Հանրապետութեան նախադահը, Զօր. Կիւրսէլ, վեթօ դնէ՝ եթէ Ազդ. Ժողովը ընդունի երեսփոխաններու ամսականի յաւելումը: Ուրիշներ կը պահանջեն կու – սակցութիւններէն արտաքսել իրենց է – րեսփոխան ընկերները, եթէ յաւելում պահանջեն:

ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ ԵՐԵՍՓՈԽԱՆՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

Պատկերազարդ խայտառակութեան ձեւ առած է արդէն թուրք երեսփոխաններուն պահանջը՝ ամսականի յաւելման մասին. — Գլուխն ըլլալով Պոլիսը, զանազան քաղաքներու մէջ «Ամանորի օժանդակու – թիւն» անունով նուիրահաւաքութեան ձեռնարկուեցաւ՝ այն երեսփոխաններուն համար, որոնք կը պնդեն թէ կազանդը անցընելու դրամ չունին: Այս նուիրահա – ւաքութեան կը մասնակցին մուրացկան – ներ ու բեռնակիրներն ալ: Պոլսոյ թէք – նիք համալսարանի Գ. կարպի ուսանող – ները իրենց միջեւ 383 ղրուշ հաւաքեցին եւ Մարտինի երեսփոխան Քեմալ Այպարի ղրկեցին: Նաեւ նամակ մը, ուր ի մէջ այլոց կ'ըսեն թէ հարուստ ուսանողները տասը, աղքատ ուսանողներն ալ մէկ ղը – րուշ տալով նուիրահաւաքութեան մաս – նակցած են:

Մարբուչչուլարի մէջ 51 բեռնակիր ու մուրացիկ 21·75 ղրուշ նուիրած են:

Ուսանողական ոտանին մէջ ալ 1056 ուսանող 48 ոսկի 13 ղրուշ հաւաքելով Անդարայի երեսփոխաններուն ղրկած են հետեւեալ նամակին հետ.—

« Տեղեկացանք որ Տարեզլուխը անցը – նելու դրամ չունիք: Այս պատճառաւ 1056 ընկերներ 2·5 – 3 ղրուշով նուիրահաւա – քութեան մասնակցեցանք: Ասոնք տոպ – րակի մը մէջ դնելով ձեզի կը ղրկենք: Բարի զուարճութիւն »:

Բանուորներն ու փոստաբաններն ալ ղրամ կը հաւաքեն, իսկ ժողովուրդը հնդկահաւ, սիկարէթ եւ պաուղ ալ ղըր – կել սկսաւ:

ՄԶԿԻԹՆԵՐՈՒՆ ՄԷՋ ԹԱՇԿԻՆԱԿ ԲԱՑԱՌ ԴՐԱՄ ԿԸ ՀԱՒԱՔԵՆ

Թուրք թերթերուն մէջ կը կարդանք.—

Երկրին մէջ ամէն կողմէ հաղարաւոր ողորմութեան հավալէներ կը չարունա – կեն հասնիլ Ազդ. Ժողովի նամակատու – նը: Կ'ըսուի թէ ցարդ երկու հազար ոսկի ղրկուած է Ատաչէթ կուսակցութեան այն երեսփոխանին, որ ողբացած էր թէ կա – ղանդը անցընելու դրամ չունի: Այս վեր – ջինը երէկ մամլոյ ասուլիս մը ընելով ը – սաւ թէ ինք 3500 ոսկիէ աւելի թոչակ չէ ուզած:

Կ'ըսուի թէ տկարացած է երեսփոխան – ներու թոչակներուն յաւելում ընելու յոյսը:

Բեռնակիր մը առաջարկած է որ թուր – քիոյ բոլոր բնակիչները տասնական փա – րա ողորմութիւն տան երեսփոխաննե – րուն:

Համբպայրամ մզկիթին մէջ թաչկինակ բացուած է երեսփոխաններուն ողորմու – թիւն հաւաքելու համար:

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ԿԸ ԲՈՂՈՔԵՆ

Իզմիրի մէջ եղեւնիի համալսարանին ուսանողները որոշած են ղոլոքի գոյգ մը ընել սա կարդի գուցատախտակներով. « Մթթէ միայն հայբենակիցնե՞րը պիտի սեղմեն գօտիները», «Ասո՞ր համար ընտ – րեցաք»:

× Գուսակալ Թուլկա ալ մեղադրած է երեսփոխանները որ թոչակի յաւելում կ'ուզեն:

ՉՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ ՉԵԻԱՓԻՐՆԵՐԸ ՉԵՆ ՎԵՐԱԴԱՐՁՈՒԻԻ:

«ԾԱՌԱՉ»Ի ԹԵՐԹՕՆԸ (126)

ԹԻԱՊԱՐՏԸ

(ՎԷՊ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿԵԱՆՔԷ)

ԳՐԵՑ

ԱՐՄԷՆ ՇԻՏԱՆԵԱՆ

ՄԱՍՆ ԵՐԲՈՐԴ

Հասկցաւ թէ պաչարուած էր... ի՞նչ ընէը... եթէ կիրճը մտնելու ըլլար, մեծ դժուարութիւն պիտի քաչէր յառաջանա – լու: Ուստի արագ արագ դէպի Լալէզա – րին դառնած ապառաժին եկաւ եւ ամէն բան յայտնեց:

— Դուն չուտով սա դիմացի քարայրին մէջ մտիր: Լալէզար, պատուիրեց Պատ – րիկ անվեհեր ձայնով մը:

— Ամենեւին... չեչտեց Լալէզար:

— Կը պաղատիմ... կրկնեց Պատրիկ:

— Ինչո՞ւ համար կը պաղատիս. մթթէ՞ կ'ուղես մինակդ կռուիլ...: Ուրեմն ինչ բանի պիտի ծառայէ սա վեց հարուածը: Ոտնաձայները կը մօտենային...: Պատրիկ փուճ տեղ կ'աղաչէր որ Լալէզար կռուին մասնակից չըլլար...:

Վայրկեան մը մտածեց... չորս դին նայեցաւ... քարայրը քննեց... տեսաւ որ հոն մտնելով երկուքն ալ պիտի վը – ատնդուէին:

Այս վարանոտ դիրքին մէջ էր, երբ ձայն մը լսեց. այդ ձայնը խրոխտաբար կը դոչէր.

— Անձնատուր եղէք...:

Պատրիկ կուրծքէն հանեց վեց հարուա – ծը եւ առանց ժամանակ կորսնցնելու, եր – կու անդամ պարպեց զայն:

Վեց հարուածին ձայնը սարսափով մը լեցուց Քիւրտերն, որոնք ապառաժներէն վար թափուեցան վայրի զաղաններու պէս: Բայց քառորդ մը չանցած ահագին բազմութեամբ մը բոլոր լեռը բռնեցին ու պաչարումի տակ դրին երկու անձնուէր – ները:

— Կը պաղատիմ, Լալէզար, դեռ ժա – մանակ կայ, մրմնջեց Պատրիկ դողալով. հեռացիր ասկից... բարձրացիր դէպի սառը... անոր եւին հայ պիւղը կայ... կրնաս ազատիլ... ես բաւական աւեն պիտի դիմադրեմ...: Եթէ Աստուած յա – ջողութիւն տայ, մուքը կոխելուն պէս ալ ազատ պիտի ըլլամ...:

Երբեք... կրկնեց մանկամարդ աղջիկը՝ մոլոր աչքերը դէպի Քիւրտերուն կողմէ դարձնելով: Փիացիր որ քայլ մը չեմ հե – ռանար ասկից, քանի որ դէմս իմ ոխերիմ Թշնամիս կը տեսնեմ...: Այո, պաչար – ուած ենք... մեր կեանքը վտանգի մը տակ է...: Պիտի կռուինք... պիտի մեռ – նի՞նք... ուրեմն միասին... ահա իմ վերջին խօսքս:

Պատրիկ տեսնելով որ Լալէզար անդրդ – ուելի կը մնար իր կամքին մէջ եւ վերա – հաս վտանգին հանդէպ աննման արիու – թիւն մը ցոյց կուտար, ստիպուեցաւ հա – մակերպիլ:

— Ուրեմն կանչենք Աստուած... Թո – թովեց Պատրիկ՝ մանկամարդ աղջկան ձեռքը բռնելով:

— Այո, կանչենք Աստուած...: Կրկ – նեց Լալէզար:

Երկու անձնուրացները ժայռի մը եւին կեցան ու յարմար դիրք մը բռնեցին:

Կէս օրուան մօտ էր:

Քիւրտերը հետզհետէ ապառաժներու վրայ կը լեցուէին: Ցանկարծ հրացանի մը որոտումը նշան տուաւ յարձակումի մը:

Պատրիկ վեց հարուածով իրարու ետե – ւէ դետին կը փռէր դէպի իր ժայռը դի – մող Քիւրտերը:

Կռիւը կատաղի էր...:

Այս դիւցազնական դիմադրութիւնն ամբողջ ութ ժամ տեւեց:

Լալէզար չուտով վեց հարուածները լեցունելով կը զբաղէր, իսկ Պատրիկ կը պարպէր Թշնամիներու վրայ:

Օհ, ասանկ ճգնաժամի մը վերութիւնն անոնք միայն կրնան զդալ, որ տեսած են...:

Պատրիկ անպարտելի էր, Քիւրտերու պնդակը չէր հասներ իրեն... կարծես թէ աներեւոյթ ընդդիմադրութիւն մը կը զարնուէր պնդակին ու զայն դողդոջացնե – լով ապառաժին առջեւը կը ձդէր:

Բայց... ահա ամէն բան կը վերջա – նար: Վեց հարուածին փամփուչտը կը պակսէր երթալով:

Լալէզար վերջին անդամն ըլլալով լե – ցուց Պատրիկի վեց հարուածը: Կը մնար մէկ փամփուչտ՝ զոր պահեց:

— Ուրիշ չի կա՞յ... դոչեց Պատրիկ:

— Ոչ... չեչտեց Լալէզար:

— Ուրեմն... մրմնջեց Պատրիկ ու կատաղութենէն ապառաժին վրայ կանդ – նելով վերջին պնդակն ալ պարպեց:

Ու, այդ պահուն, Քիւրտերու չաչ – խանային հրաւառ կապարի կոտր մը մխ – ուեցաւ Պատրիկի սրտին մէջ...:

Մանկամարդ աղջիկը խռոված յուզ – մունքով մը զլուխը դրաւ դիւցազնի կուրծքին վրայ. չրթունքները մօտեցուց անոր արիւնահոս վէրքին ու ծծեց անոր կարմիր արիւնը... յետոյ համբուրեց անոր ճակատը, անոր կիսափակ աչքերը, անոր բերանը՝ որմէ «ախ, մայր իմ, մայր իմ» խեղդուած բառերը կ'արտայայտ – ուէին...:

(Շար.)

ԺԱՄԱԿԱՐԳՈՒԹԻՒՆ Ս. ԾՆՆԴԵԱՆ

ՓԱՐԻԶԻ Ս. ՅՈՎՀ. ՄԿՐՏԻՉ ԵԿԵՂԵՑԻ ՈՒՐԲԱԹ, ձրագալոյց Ս. Ծննդեան եւ Աստուածայայտնութեան *Տեառն Մերոյ Յիսուսի Քրիստոսի* : *Սկիզբը ժամերգութեան ժամը* 15·30ին, *Ս. պատարագ ժամը* 17ին :

ՇԱԲԱԹ, Տօն Ս. Ծննդեան եւ Աստուածայայտնութեան : *Սկիզբը ժամերգութեան ժամը* 8ին, *Ս. պատարագ* 10ին :

Կը պատարագէ եւ քարոզէ Գեր. Տ. ՍԵՐՈՎԲԷ ԵՊԻՍԿ. ՄԱՆՈՒԿԵԱՆ :

ԿԻՐԱԿԻ, Մեռելոց, *ի յիշատակ Մեռելոց Ս. պատարագ եւ հոգեհանգիստ ժամը* 10ին :

ՇԱԻԻԼԻ ԵԿԵՂԵՑԻ

Այս կիրակի առաւօտ Ս. Ծննդեան Տօնի առթիւ հանդիսաւոր Ս. պատարագ կը մատուցուի Շաւիլի եկեղեցւոյ մէջ : Ցառաջիկայ պատարագի Քրօհնէքի արարողութիւն :

ՄԱՐՍԷՅԼԻ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

6 *Յունուար, Շաբաթ, Առաւօտ ժամերգութիւն ժամը* 8·30ին, *երեկոյ, ձրագալոյց եւ Ս. պատարագ ժամը* 4·45ին :

7 *Յունուար, Կիրակի, առաւօտ ժամերգութիւն ժամը* 8ին, *Ս. պատարագ, Քրօհնէք, Մեռելոց ժամը* 10ին :

ԼԻՈՆ ԵԿԵՂԵՑԻ

ՇԱԲԱԹ երեկոյ, ձրագալոյց, սկզբնաւորութիւն ժամերգութեանց ժամը 4·30ին :

ԿԻՐԱԿԻ, Ս. Ծնունդ·— Սկզբնաւորութիւն ժամերգութեանց առաւօտեան ժամը 7·30ին :

Պատարագ·— ժամը 10ին : *Քրօհնէք, ժամը* 11ուկէսին :

Սիրով կը հրաւիրուին Լիոնի եւ չոր – ջաններու բարեպաշտ Հայ ժողովուրդը ներկայ ըլլալու սոյն արարողութեանց :

Այս առթիւ կը խնդրուի մեր հաւատացեալ ժողովուրդէն, բերել իրենց իւղազինի բաժինը վառ պահելու համար մեր Ս. եկեղեցին :

ՅՆՈՒՆԴՐ ՊՕՄՈՆԻ ՄԷՋ

6 *Յունուար, Շաբաթ, ձրագալոյց Ծննդեան·— Երեկոյեան արարողութիւն եւ պատարագ ժամը* 4ին եւ 5ին :

7 *Յունուար, Կիրակի, Տօն Ծննդեան եւ Աստուածայայտնութեան, սկիզբ արարողութեան ժամը* 8, *Ս. պատարագ ժամը* 10 : *Հանդիսաւոր Քրօհնէք՝ ժամը* 11·45 :

8 *Յունուար, երկուշաբթի, Ցիշատակ Մեռելոց·— Սկիզբ ժամերգութեանց ժամը* 8·30, *հանդիսաւոր պատարագ եւ հոգեհանգիստ ժամը* 10 :

ՏԷՍԻՆ

ՇԱԲԱԹ երեկոյեան ժամը ճիշդ 5ին *ժամերգութիւն, ապա ընթերցուածներ, և ՈՒչինչ է պիտոյ, եւ ապա հանդիսաւոր ձրագալոյցի պատարագ, երկսեռ երգչախումբին կողմէ, մասնակցութեամբ տեղւոյն դպրաց դասուն* :

ԿԻՐԱԿԻ առաւօտուն ժամերգութիւն, ժամը 8·30ին, *հանդիսաւոր պատարագ ժամը* 10ին, *Ծննդեան քարոզ* 11ին *եւ յետ պատարագի հանդիսաւոր Քրօհնէք : Դարձեալ երգչախումբին կողմէ դպրապետութեամբ Պ. Գրիգոր Մարտիրոսեանի : Պատարագիչ եւ քարոզ Վարագ քհնյ. Աւագեան* :

ՍԷՆ ԺԵՐՈՄԻ ՄԷՋ

ՇԱԲԱԹ, Ձրագալոյց Ծննդեան, երեկոյեան արարողութիւն եւ Ս. պատարագ ժամը 4ին, *եւ դիրքերու ընթերցում ժամը* 5ին :

ԿԻՐԱԿԻ, Տօն Ծննդեան և Աստուածայայտնութեան, արարողութիւն ժամը 8ին, *Ս. պատարագ ժամը* 10ին, *հանդիսաւոր Քրօհնէք ժամը* 11·45ին :

Երկուշաբթի, Ցիշատակ Մեռելոց·— Սկիզբ ժամերգութեանց ժամը 8·30ին, *հանդիսաւոր պատարագ եւ հոգեհանգիստ ժամը* 10ին :

ՎԱԼԱՆՍԻ ՄԷՋ

ՇԱԲԱԹ, Ձրագալոյց Ծննդեան ժամերգութիւն ժամը 9ին, *երեկոյեան ժամը* 6ին *Ս. պատարագ* :

ԿԻՐԱԿԻ, Տօն Ս. Ծննդեան, սկիզբ արարողութեան ժամը 8ին, *Ս. պատարագ ժամը* 10ին, *հանդիսաւոր Քրօհնէք յետ պատարգի* :

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, Մեռելոց, սկիզբ ժամերգութեան ժամը 9ին, *Ս. պատարագ եւ հոգեհանգիստ* :

ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ ԱՌԹԻՒ « ՅԱՌԱՋ » ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

Պ. Կուպաթեանի (Տէսին) զաւակները, մէկ տարեկան Ցառաջ կը նուիրեն իրենց հօր :

ՆՈՒԷՐՆԵՐ

Օր. Գոհար Շահրիկեան կը նուիրէ 10 *Ն. Ֆ. «Ցառաջ»ի բարեգաւաճման, Ամերիկա մեկնելուն առթիւ,* 10 *Ն. Ֆ. ալ Կապոյտ Ծաչի կայանին* : (*Տառնալ Ցառաջէն*) :

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Հրանդ եւ Զարեհ Աթթարեան, Աթթարեան ընտանիքը (Թուլոն) եւ Քէչիչեան ընտանիքը (Կրընոպլը) կը ծանուցանեն թէ հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի

ՍԱՐԿԻՍ ԱԹԹԱՐԵԱՆԻ

(*Ատամնաբոյժ*)

յիշատակին, այս կիրակի Մարսէյլի Մայր եկեղեցւոյ մէջ (Փրատօ) : *Կը հրաւիրեն ողբացեալին յիշատակը յարգողները* :

×

Տէր եւ Տիկին Գուրգէն Տարաքճեան եւ զաւակը, Տէր եւ Տիկին Գրիգոր Ճերմակեան եւ զաւակները, Այրի Տիկին Սրբուհի Սաղաթէլեան, Արապեան եւ զաւակները հանդուցեալ իրենց քրոջ, մօր եւ մեծ մօր ՎԱՍԻԼՈՒՀԻ ՃԵՐՄԱԿԵԱՆԻ մահուան քառասունքին առթիւ հոգեհանգիստ պաշտօն պիտի կատարելտան, Կիրակի Մեռելոցի օրը, Փարիզի Ս. Յովհ. Մկրտիչ եկեղեցւոյ մէջ : *Հանդուցեալին յիշատակը յարգողներէն կը խնդրուի ներկայ գտնուիլ* :

×

Այրի Տիկին Ֆիլոր Նիկողոսեան եւ զաւակները, Պ. Յակոբ Յարութիւնեան, Տէր եւ Տիկին Մարուքէ Պօյաճեան եւ զաւակները կը ծանուցանեն թէ հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի այս կիրակի առաւօտ, Փարիզի Ս. Յովհ. Մկրտիչ եկեղեցւոյ մէջ, իրենց մօր եւ մեծ մօր ՄԱՐԻԱՄ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻ (ծնեալ Փափազեան) մահուան տարելից – ին եւ հօր եւ մեծ հօր ՅԱՐՈՒԹԻՒՆ ՅԱՒՈՒԹԻՒՆԵԱՆԻ մահուան քառասունն – երորդ տարելիցին առթիւ (Աք Շէհիրցի) : *Կը հրաւիրուին ողբացեալներուն յիշատակները յարգողները* :

×

ԱԼՖՈՐՎԻԼ·— Այրի Տիկին Մարիամ Գոստիկեան, Պ. Վարդգէս Գոստիկեան, Տէր եւ Տիկին Գէորգ Էլմայեան կը ծանուցանեն թէ հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի ողբացեալ ԳՐԻԳՈՐ ԳՈՍՏԻԿԵԱՆԻ մահուան քառասունքին առթիւ, այս կիրակի առաւօտ Ալֆորվիլի Ս. Պօղոս Պետրոս եկեղեցին :

Կը հրաւիրուին իր յիշատակը յարգողները :

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ Ս. ԽԱՉ ԵԿԵՂԵՑԻ

10 bis, Rue Thouin, PARIS

Այս կիրակի, հանդիսաւորութիւն Ցայտնութեան եւ Մկրտութեան Քրիստոսի : Հայրապետական ճաշկառոյց պատարագ ժամը 10·30ին : *Պիտի պատարագէ եւ քարոզէ՝*

ԳԵՐՊ. ԿԱՐԱՊԵՏ ԵՊԻՍԿ. ԱՄԱՏՈՒՆԻ

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

ՄԱՐՍԷՅԼԻ Ազգ. – Որբախնամ Միութիւնը չնորհակալութեամբ ստացած է Տիկին Անիճայ Տէրվէնեանէ 50 *Ն. Ֆ., իր ամուսնոյն մահուան* 13րդ *տարելիցին առթիւ* :

Imprimerie Spéciale du journal « Haratch »
32, Rue de Trévise, PARIS (9e)

ՖՐԱՆՍԱՀԱՅ ԿԱՊՈՅՏ ԽԱՉԻ ՓԱՐԻԶԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԻ

ՏԱՐԵԿԱՆ ՊԱՐԱՀԱՆԴԷՍԸ

HOTEL LUTETIA, 43 Bd. Raspail

Ցունուար 6ին, Շաբաթ գիշեր, միւնչեւ առաւօտ

Գեղարուեստական ճոխ բաժին

Պ. Պէպէեանի երգերուն մասնակցութեամբ, նաեւ ուրիշ անակնկալներ

Ճոխ պիւֆէ, պար եւ մեծ խանդավառութիւն

Այժմէն սեղանները ապահովել Opéra 37–62

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՆ ՕՐԸ

Կազմակերպուած Պուլ. Օտտոյի Ֆ. Կ. Ցաչի մասնաճիւղի կողմէ :

Այս կիրակի կէսօրէ ետք ժամը 3ին, *Պատ Էնթէռնասիոնալ, Շըմէն տը Մատրակ – Վիլ* :

Կը մասնակցին հայկ. ղպրոցի աչա – կերտ – աշակերտուհիները :

Կը խօսի ղպրոցի ուսուցիչ Պ. Յակոբ Արթինեան : *Գեղարուեստական ճոխ բաժին* : *Երգ, արտասանութիւն, հայկական պարեր* :

ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ ԱՌԹԻՒ

ՄԱՐՍԷՅԼ· — *Վասպուրականի Հայր. Միութեան կեդր. վարչութիւնը կը ներկայացնէ իր չնորհաւորութիւնները նոր տարուան առթիւ, իր բոլոր հայրենակիցներուն եւ մասնաճիւղերուն, եւ առող – ջութեան լաւագոյն մաղթանքներ կ'ընէ* :

ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ ԱՌԹԻՒ

Հայ կարմիր խաչի օդափ· կայանի ընդարձակման ի նպաստ կը նուիրեմ·—

Այրի Տիկին Սրբուհի Լօրէնեան (Տրակինեան) 50 *Ն. Ֆ., Ժ. Օ. Ս. Հաստատութիւն* 150, *Պ. Երամեան (Վիլլմօպլ) յիսուն, Այրի Տիկին Վահանոյշ Արսլան – եան (Սէն Շամոն) յիսուն, Պ. Պ. Սան – ճեան (Լիմա) յիսուն, Նշանեան (Վիչի) յիսուն, Գարակիզլեան (Սթէյն), Մ. Թիւթիւնճեան (Սեվրան), Ք. Գայալը – եան (Ժուան լէ Փէն), Արամ Ալէմեան (Նիս) քսանական Ն. Ֆ.: Պ. Պալեան (Կուէնվիլ), Զ. Պարթեւեան (Սէնմօր), Տէր եւ Տիկին Սաաթճեան (Քոլոմպ), Վ. Մոսկոֆեան (Լը Վէզինէ), Վարժապետ – եան (Քուրպըվուա), Մարտիրոսեան (Փավիյօն սու Պուա), Այրի Տիկին Եօթ – նեղբայրեան (Փրէ Սէն Ժերվէ), Պահա – տուրեան (Շավիլ), Տաղլարեան (Նիս) տասնական Ն. Ֆ.:*

ԵԹԷ 4000 ՀՈԳԻԷՆ ԱՒԵԼԻ ՎԱՅՐԻ ՄԸ ՄԷՋ: ՊԶՏԻԿ ԴՐԱՄԱԳԼՈՒԽ ՄԸ ՈՒՆԻՒ ԵՒ ԼԱՒ ՏԵՂ ՄԸ՝ ԽԱՆՈՒԹ ՄԸ·

ՏԵՂԱԽՕՐԵՅԻՔ

Pressing Automatique

ՄԸ

Եւրոպական առաջնակարգ *մաթե – րիէլով*: Մեծ եկամուտ: Ոչ մէկ *սթոք*: Հաճելի աշխատաւիճ: Վճա – րումի մեծ դիւրութիւններ: Մեր միջոցաւ բացատրութիւններ եւ լուսաբանութիւններ :

Տեղեկութեանց եւ Տըվիի համար դրել :—

Aïvazian

93, Rue Massena,

LYON 6e

Հ. Յ. Դ.

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՂՑ

Հ. Յ. Դ. Մարսէյլի Շրջ. Կոմիտէի հրաւիրած ընկերական ժողովներու :—

Հ. Յ. Դ. Մարսէյլի Շրջ. Կոմիտէն՝ ամենայողջարար ընկերական ընդհ. ժողովի կը հրաւիրէ հետեւեալ ենթակոմիտէներու եւ խումբերու անդամ ընկեր – ընկերուհիները:

ՔՐԻՍՏԱՓՈՐ ենթակոմիտէ, 6 *Յունուար, Շաբաթ երեկոյ, ժամը* 21ին :

ԶԱԻԱՐԵԱՆ ենթակոմիտէ, 6 *Յունուար Շաբաթ երեկոյ, ժամը* 21ին :

ՎՌԱՄԵԱՆ ենթակոմիտէ՝ 7 *Յունուար կիրակի կէսօրէ ետք ժամը* 15ին :

ԱԿՆՈՒՆԻ ենթակոմիտէ 13 *Յունուար, Շաբաթ երեկոյ ժամը* 21ին :

ՎԱՐՈՒԺԱՆ խումբ՝ 14 *Յունուար, կիրակի կէսօրէ ետք ժամը* 15ին :

ՀԱՄԱԶԱՍՊ խումբ՝ 13 *Յունուար, Շաբաթ երեկոյ, ժամը* 21ին :

ԹՔՓՈՒԻ խումբ՝ 14 *Յունուար, կէսօրէ ետք ժամը* 15ին :

ԸՆԳԵՐ ԿԱՐՕ խումբ՝ 14 *Յունուար, կիրակի կէսօրէ ետք ժամը* 15ին :

ՀԱՅԱՍՏԱՆ խումբ՝ 13 *Յունուար, Շաբաթ, ժամը* 21ին :

ՎԱՐԱՆԴԵԱՆ խումբ՝ 15 *Յունուար, երկուշաբթի, ժամը* 21ին :

ԳԷՈՐԳ ԶԱՎԱՒԻՇ խումբ՝ 20 *Յունուար Շաբաթ, ժամը* 21ին :

ՄՈՒՐԱՏ խումբ՝ 21 *Յունուար, կիրակի կէսօրէ ետք, ժամը* 15ին :

ՆԻԿՈԼ ԴՈՒՄԱՆ խումբ՝ 21 *Յունուար, կիրակի կէսօրէ ետք, ժամը* 15ին :

ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ խումբ՝ 20 *Յունուար, Շաբաթ, ժամը* 21ին :

Սոյն ժողովները տեղի պիտի ունենան իրենց սովորական հաւաքատեղիները : Ինչ կարեւոր օրակարգ : Բոլոր ընկեր – ընկերուհիներու ներկայութիւնը պարտաւորիչ է : Վարչութիւնները նախապէս պէտք է բոլոր ընկերներուն տեղեկացնեն ժողովներու վայրի եւ թուականի մասին : Ներկայ պիտի ըլլան Շրջ. Կոմիտէի ներկայացուցիչները :

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ԿՍՊ. ԽԱՉԻ Վալանսի մասնաճիւղի ընդհ. անդամական ժողովը այս կիրակի, կէսօրէ վերջ ժամը 3ին, *Տիկին Կօչկակարեանի բնակարանը: Կը խնդրուի բոլոր ընկերուհիներէն ներկայ ըլլալ այս կարեւոր ժողովին* :

ԿԸ ՓՆՏՌՈՒԻ

Հայաստանէն Պ. Սարգիս Յովհաննէս Ղուկասեան կը փնտռէ իր հօրեղբայրը, որ Ցինանա կամ Ամերիկա կը գտնուի: Ժամանակին գտնուած է Թիֆլիսի որբանոցը: Ձինք կը կոչեն եղեր Սվոյի որդի: Հօր անունն է Յովհաննէս իսկ մօրը անունը Սրբուհի: Իրեն ծանօթներ են Սիրօ, Մարճան եւ Գուրգէն Ենգոեաններ: Իր անունն է Աւետիք: Ձինքը ճանչցողներէն կը խնդրուի տեղեակ պահել Փարիզի Ս. Յովհ. Մկրտիչ եկեղեցւոյ դիւանը, 15 Բիս ժան Կուժօն, Փարիզ(8) :

AU BEAU NOYER

A 50 metres du Métro MARCEL SEMBAT

7 ETAGES D'EXPOSITION

D'AMEUBLEMENTS

CRÉDIT SANS FORMALITÉS

ՀԱՑԵՐԷՆ ԿՐ ԽՕՍԻՆՔ

185, BD. JEAN JAURÈS --- 15, AV. ANDRÉ MORIZET - BOULOGNE — MOL. 06.03 et 60.38

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

Le PREMIER QUOTIDIEN ARMENIEN en EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction et Administration : 32, Rue de Trévise - PARIS-9e

Fondé en 1925 — Téléph. : PRO. 86 - 60
R. C. Seine 57 A 2731 — C. C. P. Paris 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա՝ Տար· 50 Ն· Ֆ· Վեցամսեայ՝ 27 Ն· Ֆ·
Արտասահման՝ Տար· 60 Ն· Ֆ· Հատը՝ 0·25 Ն· Ֆ·

ՇԱԲԱԹ 6 ՅՈՒՆՈՒԱՐ
SAMEDI 6 JANVIER 1962

38ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 9297 — 38e ANNÉE — Fondateur : SCHAVARCH MISSAKIAN — ՆՈՐ ՇՐՋԱՆ, 18ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 5098

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

ՄԵՐ ԾՆՈՒՆԴԸ

Հայկ դիւցազն իր «լայնալիճ աղեղ»ի մահացու մէկ հարուածով դիտապաստ գետին տապալեց բռնակալ բէլը եւ հիմը դրաւ Հայոց Քաղաքական անկախու – թեան :

Գրիգոր Լուսաւորիչ պետական կրօնք դարձնել տալով քրիստոնէութիւնը, ա – պահովեց հայ ժողովուրդի կրօնական անկախութիւնը :

Սահակ Պարթեւ, Մեսրոպ Մաշտոց եւ Յովհաննու երէց ու փոքր Թարգմանիչ – ները հայերէն գիր ու լեզու կերտելով մեզի պարգեւեցին Մշակութային անկա – խութիւն :

Հայաստանեայց առաքելական եկեղե – ցին չեչտելով իր անկախութիւնը, Ձի – սուսի Ծնունդը կը տօնէ ոչ թէ Դեկտ· 25ին,— ինչպէս մեծազոյն մասը քրիս – տոնեայ — կաթոլիկէ ու բողոքական — եկեղեցիներուն,— այլ Յունուար 6ին :

Իրրեւ աւանդապահ ժողովուրդ, Հայը հաւատարիմ մնացած է հին եկեղեցիին, որ երուսաղէմի եպիսկոպոս Յակովբոս Տեառնեղբօր օրերէն սկսեալ Յունուար 6ին կը տօնէր Ծնունդը՝ Աստուածայայտ – նութեան (Էպիփանի) տօնին հետ :

Հակառակ քրիստոնէութեան տարած – ման, հեթանոսական հին տօները երկար տեն ի պատուի էին տակաւին Հռոմէա – կան կայսրութեան եննթակայ երկիրներու մէջ :

Հեթանոս Հռոմի պէսպսւոր հանդիսու – թիւններէն մէկն էր Արեւ–Աստուծոյ տօ – նը, որ կը տօնուէր ամէն տարի Դեկտեմ – բերի 25ին :

Հեթանոսութեան հետքերը միանգամ ընդ միշտ ջնջելու համար, Լեւոն Ա· Պա – պէ (440 – 461) առաջարկով, 451ին Քաղ – կեդոնի (Գատըգիւղ) տիեզերական ժողո – վը որոշեց բաժնել երկու տօները : «Աստ – ուածայայտնութիւն»ը, մոգերու երկր – պագութիւնը կամ ինչպէս սովոր են կո – չել՝ «Թագաւորաց Օր»ը պիտի տօնուէր ըստ առաջնոյն Յունուար վեցին, իսկ Ծը – նունդը՝ Դեկտեմբեր 25ին, Արեւ – Աս – տուծոյ տօնին օրը :

Հայաստ· եկեղեցին ընդունած չըլլա – լով որոշումները Քաղկեդոնի ժողովին , որ կը զումարուէր Վարդանանց պատե – րազմի տարին, կը շարունակէ Ծնունդն ու Աստուածայայտնութիւնը տօնել միշտ Յունուար վեցին, Զբօրհնէքի հողեպա – րար արարողութեամբ :

«Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ . Ձեզի մեզի մե՛ծ աւետիս » :

Կարգ մը երկիրներու մէջ Յունուար 6ի տօնին կը տրուի հանդիսական երեւոյթ :

Այսպէս, Սպանիոյ մէջ այդ օրը թա – գաւոր մոգերը, Մելքոն, Փասպար եւ Պալտասար, ուղտերու վրայ նստած, խաղալիկներ կը բաշխեն այն տղոց, որ իրենց մուճակները կը դնեն պատուհանին եզերքը :

Իտալիոյ մէջ Յունուար վեցին Պէֆանա կոչուած ծուռ քիթով պառաւ վհուկ մը խաղալիկներ կը լեցնէ բարի տղոց եւ ա – ծուխի կտորներ՝ չարերու գուլպային մէջ :

Սրճոտոքս Ռուսերը Եւրոպայի մէջ Յունուար 7ին կը տօնեն Ծնունդը :

Հայկական Ծնունդը պահած է հին օ – րերու աւանդութիւնները, պահելով անոր զուտ կրօնական հանդամանքը : Մինչդեռ Դեկտեմբեր 25ի Նոեղը քրիստոնէականէն զատ զգեցած է աշխարհիկ դոյն, որ տարուէ տարի աւելի եւս կը չեչտուի , առիթ ընծայելով ցայտաճաշերու եւ ոչ – կրօնական խրախճանքներու :

Արեւելքի մէջ մեր հայրենակիցներուն համար տօնական օրեր են միշտ Յուն – ուար վեցի Ծնունդն ու Յունուար եօթնի Մեռելոցը : Արեւմուտքի մէջ հետեւելով ընդհանուր յորձանքին, Հայերն ալ Դեկ – տեմբեր 25ին կը տօնեն Ծնունդը :

Հայաստ· եկեղեցին է միայն եւ հայ աւանդապահ ընտանիքներ, որ կը շարու – նակեն տօնել այսօր Ծնունդը, երգելով՝

Խորհուրդ մեծ եւ սքանչելի,
Որ յայսմ աւուր յայտնեցար :

ՀՐԱՆՏ–ՍԱՄՈՒԷԼ

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՅԱՆՐ ԲԱԽՈՒՄՆԵՐ ԱԼԺԵՐԻՈՅ ՄԷՋ

ԲԱԶՄԱԹԻՒ ԶՈՀԵՐ ԱԼԺԷԻ ԵՒ ՕՌԱՆԻ ՄԷՋ

Քանի մը օր է մթնոլորտը չատ լար – ուած է Ալժերիոյ մէջ, ուր տանտիկին – ները սկսած են պաշար հաւաքել եւ պար – պել նպարավաճառի խանութները : Ժո – ղովուրդը, իբրեւ հետեւանք Սալանի զօ – րակոչին այն տպաւորութիւնը կը թողու թէ աշք առած է քաղաքացիական պատե – րազմը որ սկսած է արդէն, փոքր աստի – ճանի վրայ :

Ի՞նչ կ'ըսէր Սալան : Զօրակոչի կ'են – թարկէր 18էն 45 տարեկան բոլոր այրե – րը : Այս կը նշանակէր չատերուն համար թէ բան մը կը պատրաստուի : Ալժէի բո – լոր պատերուն վրայ հանրային ազդեր « ընդհանուր զօրակոչի» հրաւէր կ'ընէին « Ռաուլ Սալանի հրամանին վրայ» : Մաս մը պատռուած, առաւօտեան մօտ նոր ազդեր կը կրկնէին հրահանգը : Այս ազ – դերով Գաղտնի Բանակի կազմակերպու – թիւնը կը յայտնէր թէ զօրակոչ հրաւէ – ուած է ընդդիմանալու համար Ալժերիոյ լքումին եւ պահպանելու համար ազգա – յին հողամասին ամբողջականութիւնը : Այս ազդերուն առաջին հակազդեցութիւ – նըն է տանտիկիններուն ըրած պահեստ – ները , կաթի , չաքարի , օճառի կամ պահածոներու :

Միւս կողմէ չատ ծանր բնոյթ կրող բախումներ տեղի ունեցած են Օռանի մէջ : Առաւօտեան եօթնէն արդէն կը լըս – ուէին զէնքի ձայներ, մինչ նախորդ օր – ուան (Զորեքշաբթի) հաշուեկշիռը արդէն իսկ ծանր էր՝ 40 մեռեալ, պաչտօնապէս :

Հինդշաբթի կացութիւնը կը վատթա – րանար : Օրուան յատկանշական եւ ծան – րակշիռ բնոյթ ունեցող դէպքը հետեւ – եալն էր :— Մառեչալ Ցուլի հրապարակին վրայ, չէնքի մը մէջ դիրք գրաւած էին Ալժ· Ազատ· ճակատի ահաբեկիչները : Ապահովութեան ուժերը երկու ժամ ,պա – շարեցին չէնքը, որպէսզի դուրս հանեն ահաբեկիչները եւ հոն ապաստանած էին ծանրօրէն վիրաւորելէ ետք պահակ մը , ժողովուրդը դրդռուած է, «սպաննեցէ՛ք, սպաննեցէ՛ք» կը գոռայ երբ քանի կաս – կածելիները դուրս կ'ելլեն չէնքէն : Ակա – նատեսներու կարծիքով ուրիշներ փախած են տանիքներէն եւ պատուհաններէն :

Առաջին լուրերու համաձայն, 9 մեռ – եալ կայ (երկուքը Եւրոպացի) եւ երե – սուն վիրաւոր (տասը Եւրոպացի) :

Նոյնքան ծանր բնոյթ ունեցող բա – խումներ տեղի ունեցած են Ալժէի մէջ , Գ· Բ·ի Ալժ· Ազատ· ճակատի , Ապահո – վութեան ուժերու եւ ժողովուրդին մի – ջեւ :

Կացութիւնը եղերական իսկ բնոյթ ու – նի երբ նկատի առնենք նաեւ թէ Օռանի հիւանդանոցներու բժիշկները զործադուլ կ'ընեն , ասոնց մեծ մասը, վերջին պահուն հիւանդանոցին պաչտօնէութիւնը :

Նոյնը կ'ընեն Ալժէի հիւանդանոցներու Արաբ թէ Ներքին բժիշկները :

Ալժերիոյ խնդրին առթիւ, Տըպրէ Թու – րի մէջ յայտարարեց թէ կառավարու – թիւնը կ'ուզէ ամէն գնով արագացնել զի – նադուլը եւ պարտադրել հանրային կար – գապահութիւնը :

ԹՈՒՐՔԻԱ ԻՆՉՊԷՍ ՈՐ Է

ԴՐԱՄԸ ԿՆԱՒՆԷՆ, ԲԱՑՑ ԳՈՀ ՉԵՆ

Անգարայէն կը հաղորդեն թէ Ազգային ժողովի ելմտացոյցի խառն յանձնախում – բին մէջ, երբ վիճաբանութեան կը դրը – ուէր ազգ· պաչտպանութեան պիւտճէն , երեսփոխաններէն մէկը յայտնեց թէ իր դինուորական բեռերուն փոխարէն անբա – ւարար չափով օժանդակութիւն կը ստա – նայ Թուրքիա , թէ ասիկա տարբերու – թիւն չունի Թիմուրլենկի փիլերէն, եւ ա – ւելցուց .

— Ամերիկացիները մեզի նորոյթէ դաղրած զէնքեր կուտան , եւքն ալ «օ – ժանդակեցինք» կ'ըսեն : Մէկ ձեռքով կու տան , միւս ձեռքով ետ կ'առնեն : Ազդէն անոնք տնտեսապէս կործանել կ'ուզեն մեզ : Մտադիր են մեզ գործածել իբրեւ չուկայ մը : Մենք պէտք է պահանջենք օ – ժանդակութիւնը : Էյվալլահ ըսելով չընդունինք ինչ որ անոնք կուտան :

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ

Պոլսոյ թերթերը կը գրեն թէ Անգարայի խորհ· դեսպան Ռիժով կը շարունակէ իր տեսակցութիւնները Թուրք կառավարու – թեան ներկայացուցիչներուն հետ : Այս – պէս այցելեց ներքին նախարար Ահմետ Թոփալողլուի :

Որեւէ յայտնութիւն չկատարուեցաւ այս այցելութեան մասին : Շահագրգռ – ուողները ըսին թէ «քաղաքավարական այց մըն էր» :

Դեսպանը յաջորդ օրը այցելեց ելմը – տական, Առեւտրական եւ Ներքին նախա – րարներուն :

Ռիժով կը յայտնէ թէ կարգ մը պայ – մաններու տակ աւելի կրնայ ծաւալիլ բարեկամութիւնը Թուրքիոյ եւ Սովետ – ներուն միջեւ , ուսկից հարկ կը տեսնէ որ վերցուին կամ լրջօրէն սահմանափակուին հրթիռի արձակավայրերը որոնք կը պա – հուին Թուրքիոյ մէջ : Դեսպանը կը չեչտէ թէ կարգ մը ամերիկեան օդանաւեր , ո – րոնք թռիչք կը կատարեն, օդ կը բարձ – րանան գրեթէ առանց լուր տալու թրքա – կան պատկան իչխանութիւններուն, եւ կ'աւելցնէ թէ այս խնդիրները կարգա – դրելու պարագային՝ Թուրքիա անմիջա – պէս կրնայ ուղածին չափ վարկ ստանալ Խորհ· Միութենէն, երկար պայմանաժա – մով եւ փոքր տոկոսով :

ՄՐՑՈՒՄ ... ՕԳՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԹՈՒՐՔԻՈՅ

Ինչպէս կը գրէինք երէկ, խորհ· դես – պանին տեսակցութեանց իրրեւ պատակամ խօսք կայ որ Մոսկուա հրաւիրուի Թուր – քիոյ վարչապետը, Ինէօնիւ : Այս լուրը մեծ յուզում պատճառեց Ուչինկթընի մէջ : Զարմանալի ոչինչ կայ, ուրեմն , եթէ Ամերիկեան կառավարութիւնը որո – շեց աւելցնել անտեսական եւ զինուորա – կան օժանդակութիւնը, զոր կը կատարէ Թուրքիոյ տարիներէ ի վեր :

Անգարայի ամերիկեան դեսպանը, իր կարգին, տեսակցութիւն մը ունեցաւ Թուրքիոյ վարչապետին եւ արտաքին նախարարին հետ, հաղորդելու համար իր կառավարութեան տրամադրութիւնը այդ նպատակով : Օժանդակութիւնը պի – տի կատարուի կարճ ժամանակի մը մէջ : Դեսպանը իր կառավարութեան զոհունա – կութիւնը յայտնած է Թուրք կառավա – րութեան քաղաքականութեան կրած վեր – ջին յեղաշրջումին առթիւ, ինչպէս եւ Օ – թանի մէջ ցոյց տուած զործակցութեան համար :

Այս առթիւ կ'իմացուի որ Սելիմ Սար – փեր, արտաքին նախարարը, մօտերս պի – տի երթայ Ուչինկթըն, յարաբերութեան մէջ մտնելու համար Ռուսքի հետ :

Ինէօնիւ, իր կարգին, որոչում մը տա – լու համար կը քննէ խորհ· օգնութեանց առաջարկները :

ՏԽՐՈՒՆԻ

ՎԻՊԱԳԻՐ ՄԱԼԽԱՍԻ ՄԱՀԸ

« Ազդակ » հեռագրով մը կը գուժէ Մալխասի մահը, որ տեղի ունեցած է Զորեքշաբթի (4 Յունուար) Պէյրութի մէջ : Յուղարկաւորութիւնը պիտի կա – տարուի Յունուար 9ին :

Մալխաս ծանօթ է մեր ընթերցողնե – րուն իր վէպերով, ընդհանրապէս յեղա – փոխական կեանքէ քաղուած , «Լուսա – դէմին » , « Զարթօնք » եւայլն : Իրրեւ թերթօն հրատարակած ենք մէկ մասը, Յառաջի մէջ : Մեծ ժողովրդականութիւն չհասած էր այս վէպերով, ոմանք նոյնիսկ իր մէջ կ'ողջունէին «նոր օրերու Րաֆ – ֆի մը » :

Քանի մը տարի առաջ երկար ճամբոր – դութիւն մը կատարեց դէպի Արեւելք , նիւթ հաւաքելու համար հայ գաղութնե – րէն : Կ'ապրէր Ամերիկա (Միացեալ Նա – հանգներ) : Հակառակ իր յառաջացած տարիքին, «բարեւ կուտար արդէն իննը – սունին», այնքան տոզորուած էր խան – դավառութեամբ որ դարձեալ ուզեց պը – տոյտ մը կատարել Մերձ· Արեւելքի մէջ, բայց հազիւ Պէյրութ հասած, երեք օր ետքը կը մեռնի :

Օժտուած դիտելու կարողութեամբ եւ իւրայատուկ խմբագրով մը, չատ հաղոր – դական վէպեր տուաւ, իրապաչտ պատ – կերներ, — կարելի է ըսել՝ լուսանկար – ներ Հ· Ց· Խաչնակցութեան յեղափոխա – կան չարժումներէն :

×

ՀԱՅԿԱՆՈՒՇ ԳԻՒԼԽԱՆԴԱՆԵԱՆ

Յաւով կ'իմանանք թէ յետ երկարատեւ հիւանդութեան իր մահկանացուն կնքած է Տիկին Հայկանուշ Գիւլխանդանեան, այրին՝ ողբացեալ Աբրահամ Գիւլխան – դանեանի, նախկին նախարար :

Հայկանուշ Գիւլխանդանեան երկար տարիներ տառապելէ ետք Դեկտեմբեր 1ին փոխադրուած էր Պիշայի հիւանդա – նոցը ուր եւ մեռաւ Յունուար 4ին :

Յուղարկաւորութեան մանրամասնու – թիւնները՝ յետագային :

Մեր ցաւակցութիւնները իր զաւկին՝ Ռուբէն Գիւլխանդանեանի :

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՊԷՅՐՈՒԹԷՆ հասած լուրերը որոչ պատկեր մը չեն պարզեր կացութեան : Դաղաքը պաչարուած բերդի տպաւորու – թիւն կը թողու կը զրէ տեղական մամու – լը, մինչ ուրիչ աղբիւրներու համաձայն Հանրապետութեան նախկին նախագահ Քամիլ Շամոն ձերբակալուած է : (Այս լուրը կուտայ «Փարի – Փրէս», յիչենք սակայն թէ Քամիլ Շամուն երեսփոխան է) : Կ'ըսուի նաեւ թէ Սուրիական ժողո – վրդական կուսակցութեան 2500 կողմնա – կիցներ բանտ նետուած են : Միւս կողմէ կառավարութիւնը մտադիր է արդարու – թեան յանուկ Ատեան մը ստեղծել դա – տելու համար ձախողած պետական հար – ուածին հեղինակները : Պէյրութի ձայ – նասփիւռին համաձայն թաղ – ճաֆարի մէջ 32 «օտարներ» որոնք ձերբակալուած էին պետական հարուածին ընթացքին փորձեցին փախիլ, փորձին ընթացքին ա – նոնցմէ վեցը սպանուեցան : «Ազդակ»ի վերջին թիւէն (Յունուար 3) կ'իմանանք թէ կառավարութիւնը երեք օրուան հա – մար փակած է «Լը Սուար»ը եւ զինուո – րական Ատեանի յանձնած կառավարու – թիւնը քննադատող խմբագրականի մը համար :

ԽՆԶԱՐԱՅԻ ԲԱՐՁՈՒՆԻՑ

ԻՍԻԴՈՐ ՌԱՄՇՎԻԼԻ

—o—

Զարմանալի է, ճպուռները այսօր հանդարտ են, ղրեթէ անխօս մայրինների վը– բայ: Ի՞նչ է պատահել, հարցնում եմ սպասեակին: Մատով ցոյց է տալիս ես – կինքը ինչ որ մոլորուած ամպեր են երե– ւում այնտեղ: Եւ հինդ մատներով անո – րոշ չարժում է անում: Ինչ ուզում ես հասկացիր :

Եւ, իրօք, օրը մռայլ է, ինչքան կա – րող է մռայլ լինել Օգոստոսին: Ինչարա – յի բարձունքին: Ճպուռները սովոր չեն մռայլ օրերի: Մարդիկ էլ վարժուած չեն եւ տխուր բանների մասին են մտածում :

Միւս է Օգոստոսը 1918ի: Ճակատա – գիրը ինձ նետել էր Սոչի, Սեւ Ծովի ա – փին: Գնում էի որոշ յանձնարարու – թեամբ կամաւորական բանակի հրամա – նատարին տեսնելու եւ ճամբայ չէի ղա– ռում անցնելու ոչ ծովով, ոչ ցամաքով : Օդը այն ժամանակ դեռ չէր նուաճուած :

Սոչին վրաց իշխանութեան տակ էր : Կարմիրները փախել էին եւ սպիտակնե – րը չէին եկել: Վրացիները զգում էին ի – րենց շրջանի տէր եւ ուրախ էին, թէեւ շրջանում վրացի բնակչութիւն չկար իսկ ռուս եւ հայ բնակչութիւնը շատ էլ գոհ չէր Վրացիների վարչածեւից, վրացի պինուորներն ու զուարդիականները, յաճախ, չփոթում էին բնակչութեան ու– նեցուածքը իրենց սեփականութեան հետ:

Դժգոհ էին առանձնապէս Հայերը Տը– բապիզոնի շրջանի գաղթականները, ո – րոնք կարեւոր թիւ էին կազմում Սոչի քաղաքում եւ զաւառում: Վրաց իշխա – նութիւնները տեղի – անտեղի նեղում էին նրանց, օգտակար չէին համարում նրանց ներկայութիւնը: Վրացիները, առհասա – րակ հաշտ աչքով չէին նայում Թրքահայ գաղթականների վրայ: Հայերի զօրացու– մը Կովկասում համարում էին Վրացի – ների տկարացում :

Ընկերները յայտնեցին, որ մի քանի օր է Սոչիում է Իսիդոր Ռամշվիլին եւ ու– զում է ինձ տեսնել: Պարկեշտ եւ հա – մակրելի ծերունի էր Իսիդոր Ռամշվի – լին՝ ճիշդ հակապատկերը Նոյ Ռամշվի– լիի: Ես նրա հետ ծանօթ էի Թիֆլիսի պա– լատից, ուր միասին աշխատել էինք գա – նազան յանձնախմբերի մէջ: Մեր Քաղաղ– նունիի տիպի գործիչ էր եւ Հայերի հանդէպ նախապաշարուած չէր :

Գնացի: Իջել էր «Բիվիերա» հոյակապ պանդոկը ծովափին, ուր առաջ ապրում էին մայրաքաղաքից ամարանոց եկած բարձրաստիճան պաշտօնեաները, աղնը – ւականներն ու հարուստները :

Անալիք ծովի դիմաց, լայն ու հան – դիստ պատշգամբում այնպէս հաճելի էր օրը :

— Ես անսահման ուրախ եմ, ասաց Ռամշվիլին, պինդ սեղմելով ձեռքս :

Չհասկացայ՝ ինձ տեսնելու համար ու– րախ էր, թէ՞ պատշգամբի դեղեցկու – թեան :

— Այո՛, ասացի ես, դեղեցիկ է այս – տեղ ...

— Չեպուխա (պարապ բան), խօսքս կտրեց Ռամշվիլին: Գեղեցիկ է ամէն տեղ, եթէ մարդը ինքը դեղեցիկ է :

Եւ խօսքը հեռացաւ օրուայ հարցերի մասին : Թիֆլիսում «անա – խորժ» լուրեր էին տարածել Սոչիից եւ ի– րեն ուղարկել էին քննութեան «անսահ – ման» իրաւունքներով: Իսկ ես ի՞նչ էի անում այստեղ: Ես էլ գնում էի Ութոտով մօրս տեսնելու, բայց միշոց չունէի ճա – նապարհս չարունակելու :

— Չեպուխա սիրելի ընկեր, այսպիսի ժամանակ մօրը տեսնելու համար չեն ղը– նում :

Նա արդէն լուր ունէր իմ ճամբորդու– թեան նպատակի մասին :

— Գիտէք ինչ, ասաց նա մտերմօրէն, եկէք խօսենք անկեղծ : Դուք գիտէք իմ զգացումները դէպի Հայերը, բայց ասում եմ ձեղ՝ սխալ էք անում: Ութուը այլեւս զործ չունի Կովկասում :

— Բայց դուք զործ ունէ՞ք Սոչիում, հարցրի ես եւ զղջացի: Ապա չփոթած .

— Ներողութիւն, յիմար խօսք էր իմ կողմից :

— Մի չփոթուէք, յիմար խօսք չէր: Ես ձեղ հետ համաձայն եմ, ի՞նչ զործ ունենք մենք Սոչիում: Մեր «ուռա–պատ– րիոտները» երազում են սահմանը հաս – ցնել մինչեւ Լազարեւկա: Չեպուխա: Ով որ իր բնական սահմանից դուրս զայ , ով աչք դնի ուրիշի հողերի վրայ, կը կործանուի: Մենք զործ չունենք Սոչիում եւ պէտք է հեռանանք: Եթէ չհեռանանք մեզ կը հեռացնեն: Բայց դուք էլ զործ չունէք կամաւորական բանակի մօտ, որ ձեզ օգնելու համար մեր դիակների վրա– յով պէտք է անցնի :

— Բայց , հակառակ դէպքում, Թուրքը կ'անցնի մեր դիակների վրայով: Մենց որ մեզանից կախուած չէ Ռուսին Կովկաս բերելը կամ չբերելը :

— Այդ լաւ ասացիք: Թողնենք ուրե – մըն , բարձր քաղաքականութիւնը եւ մեր զործին նայենք: Մերոնք զանդատւում են, որ այս շրջանի Հայերը զործում են մեր դէմ, օգնում են բոլշեւիկներին, լեռ– ների վրայով կապ են պահում Ութոների հետ :

— Ձղիտեմ՝ կապ են պահում բոլշեւիկ– ների հետ, թէ ոչ, բայց, այո, տեղական բնակչութիւնը դոհ չէ ձեր իշխանութիւ– նից եւ պինուորներից, որոնք իրենց պա – հում են այնպէս, կարծես նուաճուած թշնամի երկրում լինէին: Կողոպուտ , թալան, կաշառակերութիւնը, բռնութիւ– նը սովորական երեւոյթներ են շրջա – նում ...

— Ես փաստեր եմ ուզում, խնդրում եմ օգնեցէք ինձ ...

Յաջորդ երեկոյ ես նրա մօտ տարայ Սոչիի հայկական կոմիտէի նախագահ Ա– բամ Յակորեանին, որ յարդուած անձնա– ւորութիւն էր թէ մեր ընկերների եւ թէ շրջանի բոլոր Հայերի կողմից: Աբամը , անուններով եւ փաստերով, մանրամասն տեղեկութիւններ տուեց վրաց պաշտօն – եաների զործած չահատակութիւնների մասին: Ռամիշվիլին լսում էր ղլուխը կախ՝ վրդոված :

Երբ մենք մտանում էինք պանդոկին , Աբամին ծանօթ մի վրացի ասաց ևրան ռուսերէն .

— Կացո, լեզուդ ակռաներիդ ետեւ պահէր :

Աբամը քաղաքացիական քաջութեան տէր , համարձակ մի մարդ էր: Առանց վախենալու իրեն ուղղուած սպառնալի – քից, նա լրիւ կերպով Ռամիշվիլուն ներ– կայացրեց շրջանի Հայերի կրած նեղու – թիւնները Վրացիների ձեռքից :

Ես չիմացայ, ինչո՞վ վերջացաւ Իսի – դոր Ռամիշվիլիի առաքելութիւնը: Շու – տով ես մեկնեցի Սոչիից: Շուտով Վրա – ցիներն էլ փախան Սոչիից, կամաւորնե– րի առջեւից: Տեղական բնակչութիւնը , ուռս թէ հայ, առանց խորութեան օգ – նեց կամաւորական բանակին, մաքրելու շրջանը՝ բոլշեւիկներից եւ Վրացիներից :

Ապագային, 1920 թ. Մայիսին, երբ ես նորից հանդիպեցի Իսիդոր Ռամիշվիլիին Երեւանում, ծերունին, թոթուելով ղլու– խը, ասաց .

— Ի՞նչ չեպուխա բաներ զործեցինք : Ի՞նչ եղաւ այն անվախ մարդը, որ ինձ տեղեկութիւններ հաղորդեց Սոչիում :

— Աբամ Յակորեա՞նը:

— Կարծեմ :

— Ողջ է եւ նոյնքան համարձակ պատշգան ժողովրդական իրաւունքների :

Անձնուէր, խիզախ զործիչ էր Աբամը : Հայաստանի խորհրդայնացումից յետոյ նա անցաւ Պոլիս: Քեմալականների ձեռ– քը չընկնելու համար անցաւ Սոֆիա, ուր չարունակեց իր հանրային ծառայութիւ– նը, իր սղզակիցներին :

Պուլղարիան բոլշեւիկների կողմից բըռ – նադրաւուելուց յետոյ, Աբամն էլ բան – տարկուեց եւ ուղարկուեց Ռուսաստան , ուր եւ անհետացաւ: Ո՞ւր մեռաւ, ի՞նչ պայմաններում, ո՞վ կարող է ասել :

Մայիսի մէկն էր ծօնում Երեւանում եւ Իսիդոր Ռամիշվիլին, խորհրդարանի պատշգամից լսում էր ճառախօսներին : Երբ սկսեց խօսել բոլշեւիզան մի Ֆաշ – նակցական, Ռամիշվիլին չդիմացաւ եւ զոչեց կտրուած ռուսերէնով .

— Էտում պրովոկատորիու նուժնօ վի – գոնիտ — այդ պրովոկատորին պէտք է քշել ...

Անկեղծ հայրենասէր եւ անկեղծ հա – յասէր էր Իսիդոր Ռամիշվիլին :

Բայց ո՞րտեղից որտեղ այս պատմու – թիւնը: Սոչին ո՞ւր, Մենժինսքին ուր: Գուցէ մոլորուած ամպը՞ երկնքում յիշեցնել տուեց իմ մոլորուած վի – ճակը Սոչիում : Գուցէ :

Ս. ՎՐԱՅԵԱՆ

ՔՈՒԷՅԹԸ՝ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ

—o—

Պարսից ծոցի այս փոքրիկ էմիրութի– նը անկախ պետութիւն մը դարձաւ՝ Անգ– լիոյ հետ համաձայնութեամբ: Իրաք ան– միջապէս ուզեց տէր կանգնել քարիւղի այս չտնմարատին, անգլիական զօրքեր ցամաքահանում կատարեցին կայմը ար– դիլելու համար, ազաբակաւ երկիրները բողոքեցին, մերժեցին կայմը :

Պատմութիւնը կը կրկնուի, կ'ըսեն , երբ նոյն պարագաները կը ներկայանան , նոյն հետեւանքները կ'ունենան: Ձիշդ վաթսուն տարի առաջ չէյխ Մուպարաք սպառնալիքի տակ էր Նեճի հզօր էմիրէն, ինչպէս նաեւ սուլթանէն, որ երկրին վե– հապետն էր: Թուրք կառավարութիւնը կը պատրաստուէր օսմանեան զինուորներ զրկել էմիրին զօրքերուն դէմ: Շէյխը երկու տարի առաջ Անգլիոյ պաշտպա – նութեան տակ մտած էր, սպառնալիքի պարագային՝ իրաւունք ունէր Անգլիոյ պաշտպանութեան դիմելու :

Դաչինքի պայմաններուն համաձայն , շէյխը դիմեց Հնդկաստանի փոխարքա – յին, լորտ Քըրզընը , որ զրկեց ռազմա – նաւ մը եւ զինուոր ցամաք տանեց թնդա– ձօթով (15 Յունուար 1902), ընդդիմա – նալու համար սպառնացող էմիրին եւ օս– մանեան դունդերու մուտքին:

Շէյխը աւելին կը պահանջէր , կը փա – փաքէր անգլիական պաշտպանութիւնը տեւականացնել: Լոնտոն կը վախնար բարդութիւններէ :

Ցամաքահանումն իսկ դիւանագիտա – կան պայքարի տեղի տուաւ: Բարձրա – դոյն Դուռը բողոքեց: Գերմանիա յայտ – նեց, թէ «անգլիական ցամաքահանումը սուլթանին վերապետութեան դէմ զոր – ծուած արարք մըն է եւ հակառակ է Պերլինի դաշինքի արամադրութիւննե – րուն »:

Ախթէն օգտուելով եւ սուլթան Համի– տի հականգլիական տրամադրութիւնը չահագործելով, գերման դեսպան Ֆոն Մարշալ 17 Յունիս 1902ին բացայայտ համաձայնութիւն մը կը կնքէր Թուրքիոյ հետ, Գոնիայէն երկաթուղիի գիծը մին– չեւ Պասրա չարունակելու համար: Պաղ– տատի երկաթուղիին շինութեան արտո – նութիւնը, տարիներէ ի վեր առկախ եւ վէճի առարկայ, Դուէյճի միջադէպով կը տրուէր Գերմանիոյ : Պաղտատի Փը – րանսական հիւպատոս Ռուէ կը զրէր ար– տաքին զործոց Նախարար Տելքասէի.

«Սուլթանը իր երկրի այս ծայրամասին մէջ առկարող ըլլալով պայքարելու անգ– լիական ծաւալապաշտութեան դէմ, Գեր– մանիոյ յանձնեց Անգլիոյ հետ կայսրու– թեան ծայրամասի նաւահանգիստի տար– ցին կարզադրութիւնը »:

Տարիներ չարունակ Պաղտատի գծին շինութեան արտօնութիւնը դիւանագի – տական հարց մըն էր, սուլթանը կը լու–

(10 Շար.)

ԱՄԲԱՍՏԱՆԵԱԼ ՍԹԱԼԻՆ, ՈՏՔԻ՛

—o—

«Մեծ մաքրագործումին» նախօրեակին ենք: Անհրաժեշտ էր, որ Կէփէուի (մինչ այդ զարձած՝ Ենգալիչեւ) զլուխը զըր– նուի բացարձակապէս վստահելի մարդ մը: Միւս կողմէ, Իակոտա այնպիսի ծա– ռայութիւններ մատուցած էր, որոնք վարձատրութեան արժանի զարձուցած էին զայն :

Ըսուեցաւ իրեն , որ եթէ կ'ուզէ այդ պաշտօնին տիրանալ՝ կրնայ այնպէս մը զնել, որ պաշտօնը առանց տիրոջ մնայ : Բախտէն՝ Մենժինսքի հիւանդ էր· չըն– չարզելութիւն ունէր եւ յաճախ անկողնի կը մնար: Իակոտայի «զարմանումի»ը զործադրելու լաւ առիթ էր :

Իակոտա Մենժինսքիի մօտ ուղարկեց Տոքթ. Կազաքովը :

— Որեւէ մէկ զժուարութեան չէք հանդիպիր , քանի որ Մենժինսքի լաւ տը– բամաղրուած է ձեղի հանդէպ· ձեր վրայ վստահութիւն ունի· ձեր խորհուրդնե – րուն կը հետեւի: Ախպիսի տեղ մը տը – ւէք, որ իր վախճանը փութացնէ .— ը– սաւ Իակոտա տոքթ. Կազաքովի :

Քանի մը օր ետք, Իակոտա իր մօտ կանչել տուաւ բժիշկը .

— Մենժինսքին տեսա՞ք վերջերս :

— Այսօր իսկ, պատասխանեց Կազա – քով :

— Ի՞նչպէս զտաք իր վիճակը :

— Շատ ծանր :

Պահ մը լռութիւն տիրեց· Իակոտա խը– զեց լռութիւնը .

— Ձիշդն ըսելով, ոչ ոք յոյս ունի թէ Մենժինսքի պիտի ապաքինի :

Այս ձեւով է, որ Իակոտա զարձաւ Կէ– քավէնէի պետը՝ 1934ին: Երեք տարի ետք, Իակոտա յաջորդ մը ունէր արդէն :

Սը մը, Սթալին կանչել տուաւ Տոքթ· Պլեանեւը եւ ըսաւ .

— Տմիթրի Տմիթրիեւիչ, ձեզի կը նա– յիմ եւ կը մտածեմ՝ եթէ օր մը ձեր կամ ձեր պաշտօնակիցներէն որեւէ մէկուն տալ ինծի, ի՞նչ կը պատահի: Սթալինը մէկ֊տեղէն վերցնել, հը՞, ի՞նչ մեծ դէպք:

— Ձիս խորապէս կը վիրաւորէք, Ժո – զէֆ Վիսարիոնովիչ: Ի՞նչպէս կարելի է, որ ես ձեր աչքին այդպիսի թշուառական մը երեւամ: Բայց այդ, լաւ գիտէք, որ ձեզի համար որոշուած դեղերը երբեք հետս չեմ բերեր· ամէն բան կը կատար – ուի Կրեմլինի բժշկական – առողջապա – հական ռեօրկնուէեան եւ դեղարանին հսկողութեան տակ: Բոլոր դեղերն ալ բազմաթիւ անդամ կը քննուին· Կենքավէ– ատէն մօտէն կը հսկէ ամէն բանի վրայ :

— Սեպենք թէ· բայց եթէ նախապէս դաղտնի համաձայնութեան եկած ըլլաք Իակոտայի հետ· աշխարհի վրայ ամէն բան կը պատահի: Ատո՞ր ինչ կ'ըսէք :

Այդ օրէն սկսեալ որոշուած էր Իակո – տայի ճակատագիրը: Տանի մը ամիս ետք, կը հանուէր Կենքավէնէի պետի իր պաշտօնէն, կը նշանակուէր Թղթատա – րական սպասարկութեանց նախարար, ա– պա կը ձերբակալուէր: 1938ի Մարտին, « հակախորհրդային աջակողմեանները եւ Թրոցքիականները խմբակ»ի դատա – վարութեան մէջ ամբաստանեալներու ցանկին վերը կը զտնուէր Իակոտայի ալ անունը: Իր կողքին կը զտնուէին կրեմ – լինի բժիշկները — Կազաքով, Պլեանեւ , Լեւին :

Եւ բժիշկները մեղադարտ յայտարա – րեցին իրենք զիրենք: Այս ձեւի զատա – վարութիւններու մէջ օրէնքը այդ կը պա– հանջէր: Յայտարարեցին, թէ սպանած են, ի միջի այլոց, Մենժինսքին, Քուպի– չեւը (Պոլիտբիւրոյի անդամներէն մէկը), Կոբքիի որդին՝ Մաքսիմ Պեչկովը) եւ նոյն ինքն Մաքսիմ Կորքին :

ԱՑՈ, ՆՈՑՆԻՍԿ Մ. ԿՈՐՔԻՆ...

Թոլսթոյէն եւ Տոսթոյեւսքիէն ի վեր , Ռուս մեծագոյն զրողը Կորքին է անկաս– կած: Սկիզբը բոլշեւիկներու հակառա – կորդներէն մէկը եղած էր, բայց աւելի ուշ յարեցաւ համայնավար յեղափոխու – թեան՝ պահելով հանդերձ արտայայտու– թեան որոշ ազատութիւն մը, որ յաճախ չղայնութիւն կը պատճառէր Լենինի եւ Ժրոցքիի: Ի վերջոյ , 1921ին Լենին խորհուրդ տուած էր Կորքիի, որ արտա– սահման անցնի՝ «առողջութիւնը խնամե– լու համար »:

Կորքի Իտալիա հաստատուեցաւ :

1928ին Ռուսիա վերադարձաւ՝ իր վաթսունամեակին առթիւ կազմակերպը– ւած հանդիսութեանց ներկայ զտնուելու հրաւէրով: Այնուհետեւ, իր կեանքին մէկ մասը կ'անցընէր Իտալիա, միւս մասը՝ Մ. Միութիւն, մինչեւ այն օրը, երբ Սթալին որոշեց թէ խոհեմութիւնը կը պահանջէր Կորքին տեւապէս Մ. Միու– թեան մէջ պահել: Լաւ գիտէր, որ զրա– զէտը առանց քաշուելու կը քննադատէ իր անմարդկային քաղաքականութիւնը· ա – ռաջին հնգամեայ ծրագրին եւ հողերու համայնացման չրջանն էր, որ միլիոնա – ւոր մարդոց մահուան պատճառ հանդի – սացան՝ սովի, չարզերու, ճնշումներու եւ մասսայական տեղահանութեանց հե – տեւանքով: Սթալին լաւ գիտէր, որ Կոր– քի զաղտնի օրագրութիւն մը կը պահէ, որուն մէջ Մ. Միութեան տիրոջ հանդէպ խիստ զատումներ չէ որ կը պակսէին : Կը վախնար որ արտասահմանի մէջ ու – նեցած իր ազատութենէն օգտուելով ,Կոր– քի կրնայ հանդիսաւոր բողոք բարձրա – ցնել օր մը :

ծէը պան մէկ անդամէն : Զայրացած էր Անգլիոյ դէմ, որ խլած էր Կիպրոսը՝ Ռուսիոյ հետ կարսի չուրջ սակարկելէ առք : Թունուզը տուած էր Ֆրանսայի , հաստատուած էր Եղիպտոսի մէջ, երէն դէմ կը չարժէր Արաբական թերակղզին, պաշտպան կը կանգնէր Քուէյթի :

Ռուսիա գոհ էր ,որ Անատոլուի գիծը դէպի վար կը հակէր, փոխանակ մինչեւ գիծը բռնելու եւ դէպի Սերաստիա երկաթելու : Անգլիա կը բողոքէր արտօնու – թեան դէմ, որովհետեւ տարաւ գիծը երկարելով մինչեւ Պաղտատ եւ Պասրա՝ կը սպառնար Հնդկաստանի ցամաքային ճամբուն : Ֆրանսա ալ կը մտահոգուէր, որովհետեւ գիծը պիտի անցնէր Սուրիոյ հիւսիսէն, ուր զերման ազդեցութիւնը պիտի զօրանար, անտեսական թափան – ցումը կարելի պիտի ըլլար : Անցեալին ալ անգլիական գիծի մը չինութեան ընդդիմացած էր :

Սըը Ֆրենսիս Զեսնի 1856ին թուրք կառավարութենէն ստացաւ Սուէտիա – Քուէյթ երկաթուղիի չինութեան մենա – ընորհը : Գիծը պիտի երկարէր Հալէպէն մինչեւ Պաղտատ եւ պիտի ունենար 1400 քիլոմեթր երկարութիւն : Ֆրանսա ընդ – դիմացաւ, որովհետեւ ցամաքային ճամ – բան մրցակից պիտի ըլլար բացուելիք Սուէզի ջրանցքին : Գրամագլուխն ալ կը պակսէր : Ապա կրնար հաստութաթեր չըլ – լալ, որովհետեւ անապատի երկայնքին կարեւոր մէկ քաղաք միայն կար : Մենա – ընորհ ստացողը մտածեց Իմմայիլիա – Քուէյթ գիծի չինութեան մասին, բայց Սուէզի բացումէն եառք ծրագիրը լքուե – ցաւ եւ կը մնար առկախ :

Գերմանիա աւելի կը մերձենար Թուր – քիոյ, սուլթանը պաշտպան մը կը գտնէր հակառակորդներուն դէմ : 1896էն ի վեր անգլիատուս լարուածութիւնը կը չարու – նակուէր : Ֆրանսա ալ այլ պատճառներով եա կանչած էր իր դեսպանը, գործակա – տար մը ձգելով Պոլիս եւ ծովակալ Քա – յարի տորմիղը եկած էր Միթիլինէ, ան – շուշտ ոչ բարեկամական այցելութեան մը համար :

Հալածախտէ բռնուած՝ սուլթանը իր կայսրութեան չուրջ մղուած պայքարները կը դիտէր անվրդով : Ծանօթ էր եւրո – պական պետութեանց չահերու հակամար – տութիւններուն, մէկուն եւ միւսին մէ – նաշնորհներ կուտար՝ մրցակցութիւնները հրահրելու եւ դիտելու համար : Գերմա – նիոյ պաշտպանութիւնը թանկագին էր ի – բեն համար : Մտադիր էր երկաթուղիի մը չինութեան արտօնութիւնը տալ Աւբս – արիոյ, ռուսական – աւստրիական մըր – ցակցութիւն մը առեղծելու համար, եթէ Ռուսիա ճնշէր արեւելեան սահմաններուն վրայ :

Պաղտատի երկաթուղիին չուրջ մըղ – ուած միջազգային պայքարը պիտի չա – րունակուէր մինչեւ համեւրոպական պատերազմ եւ, մասնագէտներու համա – ձայն, պիտի ըլլար անոր պատճառներէն մէկը : Քուէյթի միջադէպը իր տեղը ու – նի պատմութեան մէջ :

Եթէ Համիտ չհամապարէը արտօնու – թիւնը տալու, Գերմանիա պիտի չինէր միջին գիծը, որուն չինութեան կ'ընդդի – մանար Ռուսիա, բայց, ռուսեւճափոն պատերազմը պիտի ակարացնէր Ռուսիան եւ մանաւանդ Գերմանիան չկրնար պահ – լու համար՝ պիտի դադրէր ընդդիմանա – լէ եւ երկաթուղագիծը Սերաստիա հաս – նելէ եառք, պիտի հակէր հարաւ՝ դէպի Խարբերդ – Մալաթիա – Տիարպէքիր , ո – րովհետեւ նախապէս կնքուած թուրքիա – ռուս համաձայնութեան մը պատճառով՝ արեւելեան նահանգները փակ կը մնային օտար արտօնութեանց առջեւ :

Պալատական բժիշկ Մաւրոնի փաչա եւ յոյն սեղանաւոր Զարիֆի համոզեցին Համիտը կիպրոսի համաձայնութիւնը կնքելու, որպէսզի յոյն բնակիչները անդ – լիական հովանաւորութեան տակ անցնին : Հրեաներն ալ եւ Հրեաներուն հետ սերտ յարաբերութիւն պահող կրօնակից Ման – թելբեթայմ, 1898էն ի վեր թարգման ռուս դեսպանատան, յաջողեցան թուրք – եւռուս համաձայնութիւնը կնքել տալ եւ զերման մեծաշնորհը զէպի հարաւ դար – ձնել : Մտադրութիւն՝ Ռուսիոյ, ծառա – յութիւն՝ Գերմանիոյ :

ԹՈՐՔԷՆ ԳԱԲՐԻԿԵԱՆ

ԳԱՂՈՒԹԷ ԳԱՂՈՒԹ

ՊԷՅՐՈՒԹի Նչան Փալանճեան ճեմա – րանի ընդհանուրութենէ միութիւնը երե – կոյթ մը կազմակերպած էր նուիրուած Լ. Շանթի յիշատակին, իր մահուան տաս – համեակին առթիւ : Ս լուսթեան առենա – պետ՝ Ե. Քէչիչեան բացատրած է նան – զկսին բնոյթը եւ նպատակը : Բանախօս – ները եղած են Գրիգոր Շահինեան եւ Մուշեղ Բշիան : Կործադրուած է զեղար – ուեստական բաժին մը :

ՍԱՆ-ՓՐԱՆՍԻՍԿՕ զացած է Դեկտեմ – բեր ութին Հայ Կաթողիկէ Միբրանաւոր – Պատրիարքը ուր ներկայ եղած է եկեղե – ցական ժողովի մը : Նախքան այս ճամ – բորդութիւնը, Կարդինալ Աղաճանեան , պատարագած էր Ս. Մէյրի Մայր Եկե – ղեցւոյ մէջ երեք հազար հաւատացեալ – ներու ներկայութեան :

ՊՈՒՔՐԻԵԻի համբաւաւոր բժշկուհին՝ Աննա Աւան Պոն եւ Լոնտոն հրաւիրուած է խորհրդակցութեան համար : Կը կար – ծուի թէ Ուինսթըն Զրչիլի եւ Աթընա – ուըրի բժիշկները չատ կը զնահատեն Տիկին Աւանի մեթոտները :

ՊՈԼՍՈՑ Ս. Փրկիչ Հիւանդանոցի հո – գաբարձութիւնը կը ծանուցանէ թէ Տոքթ. Հայկ Եղիազարեան քսան հազար Թրքական ոսկի նուիրած է հիւանդանո – ցին :

ՊՈԼՍՈՑ մէջ մեռած է զերասան Վահ – րամ Պալըքճեան որ մաս կազմած էր Պէնլեան թատերախումբին, Պոլսոյ տրա – մաթիկին, Գարագաչի եւ Աչոտ Մա – տաթեանցի խումբերուն :

ՀԱՅԱՍՏԱՆ

—o—

ՌՈՒՄԷՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԵՐԷՆ

Ծանօթ զրագէտ Գուրգէն Բորեան, որ անցեալ տարի այցելեց Ռումանիա, « Սով. Գրականութեան» ամսաթերթի Յուլիսի թիւին մէջ, «Ռումինական քը – նար» խորագրին տակ կը ներկայացնէ ռումէն զրականութեան մասին ուսում – նասիրութիւն մը, որուն կը յաջորդեն ռումէն «Ճոյնա»ներու եւ ռումէն զասա – կան եւ ժամանակակից բանաստեղծներու զործերէն բազմաթիւ թարգմանութիւն – ներ :

«ՎԷՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ»Ն՝ ԼԱԹՎԻԵՐԷՆ

Աշխատասէր Աբովեանի ծանօթ «Վէրք Հայաստանի» վէպը թարգմանուած է զա – նազան լեզուներու եւ երթալով աւելի կը մեծնայ այս զործին հանդէպ զոյց տը – ուած հետաքրքրութիւնը :

Լաթվիացի Եան Ռայնիս զրագէտը տե – ղեակ էր Մ. Աբովեանի այս վէպին եւ փափաքած էր թարգմանել զայն : Այսու – հանդերձ, անկատար մնաց իր երազը :

Բարեբախտաբար Լաթվիայի պետական հրատարակչականը վերջին տարիներուն ձեռնամուխ եղաւ այս զործին թարգմա – նութեան, որ, ահա, հրապարակի վը – րայ է :

Գրքին կցուած է Ս. Բազեանի յօդուա – ծը Մ. Աբովեանի եւ «Վէրք Հայաստանի» վէպին մասին :

Այս հրատարակութեան համար օգտա – զործուած են Գրիգոր Խանճեանի նկարա – զարդումները, ինչպէս նաեւ Մ. Աբով – եանի դիմանկարը :

« Վէրք Հայաստանի » լաթվերէն թարգմանութիւնը լոյս տեսած է 15.000 տպաքանակով, ընտիր թուղթի վրայ :

«ՀԵՐՈՍՈՒՀԻ ՄԱՅՐ »

Մ. Միութեան Գերագոյն Խորհուրդի նախագահութիւնը պարբերաբար «Հերո – սուհի Մայր» պատուոգիրը կը շնորհէ 10 երախայ ծնած եւ զաստիարակած մայրե – րուն : Վերջին պատուոգիրները յանձնը – ուած են Հայաստան բնակող երեք մայրե – րու՝ Նարաթ Իսմայիլովա, Թաղուհի Իս – մայիլովա եւ Նադիր Վալիեւա, երեքն ալ, զաւակով իրենց անուններէն՝ Աղը – բէջանուհիներ :

ԵՐԵՒԱՆ ԵԼԱՒ ԳՈՂԵՐՈՒ ՄԵԾ ՅԱՆՑ ՄԸ

Քանի տարեկան երիտասարդ մը՝ Ց. Պետրոսեան եւ իր քեռին՝ Ց. Գրիգորեան յաջողած են կազմել ամչափահասներէ բաղկացած զողերու խմբակ մը, մասնա – գիտականացած հօտերու եւ խանութնե – րու կողոպուտով : Այս խմբակին կ'ո – ժանդակէին պետական պաշտօնեաներ եւ զանազան անձեր, զողցուած ապրանքնե – րը պահելով եւ ծախելով : Խմբակին պա – տասխանատուները զատապարտուեցան տասը տարուան , մնացեալները՝ զանազան ժա – մանակամիջոցներով բանտարկութեան :

ԵՒՐՈՊԱՅԻ ԱՄԷնԷն ՄԵԾ ՀԵՌԱԴԻՏԱԿԸ

Բիւրականի մէջ հաստատուեցաւ Շմի – թի զրութեամբ աշխատող հեռադիտակ մը, որ ունի կատարելագործուած ինքնա – չխատ (օբսմաթիկ) յարմարութիւնները : Հեռադիտակին խոշոկը ունի աշխարհի ա – մէնէն մեծ զիտակի պրիսմակը, որուն տրամագիծը մէկ մեթր է : Այս հեռադի – տակը կը նկատուի եւրոպայի ամէնէն մե – ծը եւ կարելիութիւն պիտի տեղծէ ու – սումնասիրելու Մէր կաթիններէը եւ ա – նոնց կուտակումները :

ՄԱՐԶԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Ծանրութեան քաշի նոր մրցանիշեր հաստատուեցան վերջերս, Երեւանի մէջ : Կիսաթեթեւ քաշի մէջ Ս. Այդինեան սեղմեց 102·5 քիլոկրամ, որ 2·5 քկմ. աւելի է նախկին մրցանիշէն , եւ ծռած ձեւով բարձրացուց հարիւր քի – լոկրամ, հինգ հարիւր կրամով յառաջ անցնելով նախկին մրցանիշէն, հաստատ – ուած Մ. Աչատրեանի կողմէ :

× Թիֆլիսի մէջ տեղի ունեցան զաստա – կան ըմբշամարտ Խորհ. Միութեան 1961ի խմբական մրցումները : Հայաստա – նի խումբը զրաւեց 5րդ տեղը : Աբժէ յի – շել, որ անցեալ տարի Հայաստանի խումբը զրաւած էր 13րդ տեղը :

ՄԵԾԱՐԱՆՔԻ ԵՐԵԿՈՑ

Երեւանի Պետ. համալսարանի զահլի – ճին մէջ տեղի ունեցաւ Փրոֆ. Համա – զասպ Համբարձումեանի ծննդեան 80ամ – եակին նուիրուած երեկոյ մը :

Համբարձումեանի կեանքին եւ զոր – ծունէութեան մասին խօսեցաւ բանասէ – բական զիտութիւններու տոքթէօր, փրոֆ. Մ. Մկրեան : Զեկուցաբերը նչեց փիլիսոփայութեան, արուեստի, հոգե – բանութեան եւ զիտութեան զանազան բը – նագաւառներուն մէջ յոբելեարին զոր – ծունէութիւնը :

Ապաք առին նաեւ զանազանները, հուսկ ուրեմն ինքը՝ յոբելեարը, որ չնորհակա – լութիւն յայտնեց կազմակերպուած երե – կոյթին համար :

ՎՐԱՍՏԱՆի ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՑՑԸ

Հայաստանի Հեռագրական զործակա – լութիւնը կարճ հաղորդագրութեամբ մը կը հաղորդէ, թէ Դեկտեմբեր ութէն 11 էջմիածին կը զանուէր Ամենայն Վրաց Կաթողիկոս Եփրեմ Բ. որ եկած էր իբրեւ հիւր Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազ – գէն Ա.ի :

Դեկտեմբեր 11ին երկու կաթողիկոս – ները քաղաքավարական այցելութիւն մը տուած են Հայաստանի Նախարարներու Խորհուրդի Նախագահին տեղակալ՝ Գ. Պետրոսեանի :

ԹԻԱՊԱՐՏԼ

(ՎԷՊ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿԵԱՆՔԷ)

ԳՐԵՑ

ԱՐՄԷՆ ՇԻՏԱՆԵԱՆ

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Օհ, մէկ խօսքով .

Լսեց անոր վերջին հրաժեշտն ալ ... : Ժամանակ չկար.. Քիւրտերը հասած էին իր ժայռին տակ ու զէպի վեր կը բարձ – բանային :

Մեքենաբար փեչին տակ ծածկուած վեց հարուածը ձեռքն առաւ ու բերնին մէջ դնելով պայթեցուց զայն :

— Միասին, Պաւրիկ, միասին... մըր – մնջեց Լալէպար ու ինկաւ իր պաշտելի դիւցազնին զրկաց մէջ... :

Քիւրտերը երկիւղալի զդուշութեամբ մը մօտեցան երկու անձնուրացներու մարմիններուն ... :

Իրենց վրէժը լուծելու համար զազանի մը պէս յօշոտեցին այդ երկու մարմին – ները ... :

ՎՏԱՆԳԻՆ ԴԻՄ

Թրքեշանի ապառաժուտ լեռներուն մէջ Պաւրիկ ու Լալէպար յօշոտուած էին վայրենաբարոյ Քիւրտերէն... այս քա – մնելի լուրը սարսափով մը լեցուցած էր Վանի ամբողջ նահանգը :

Ինչ հարկ էր մտածել :

Ինչ հարկ էր ընել ... :

Կառավարութիւնը չէր լսեր... ուշա – զրութեան անդամ չէր առներ... այլ զաղանի կերպով կը թելադրէր Քիւրտե – րը, անոնց զէնք կուտար եւ խոստումնե – րով կը շլացնէր ... :

Մոլեռանդութեան ոգին կը պատկերա – նար իր բովանդակ զարշելիքը մէջ, ինչպէս թունաւոր իժ մը :

Աղունդը կը բացուէր ... :

Ներսէս Արծրունին ու Վանականը կը զղային թէ վանդի մը դէմ կը զանը – էին, ու անխուսափելի կը դառնար :

— Ի՞նչ պէտք է ընել, Վանական, կը հարցնէր Ներսէս Արծրունին խռովայոյզ ձայնով մը :

— Ձեմ զիտեր... միայն թէ զանակը ոսկորին հասած է. կը պատասխանէր Վանական վրէժխնդրութեամբ լեցուած չէչոով մը : Ո՛հ, մեր անմահ ընկերները մէկիկ մէկիկ կ'իյնան լեռներու մէջ ... մեր թշուառ եղբայրներու արիւնը կը վաղէ հեղեղի պէս. կառավարութիւնը իր նպատակին հասնելու համար ամէն չա – րագործութիւն ընելու չի քաշուիր : Դեռ ե – րէկ, բացէ ի բաց վաղի փաշայի հրամա – նով բոլոր մէտրէսաներու մէջ յայտարա – րութիւններ կարդացուած են, զրգռելու համար թուրք խուժանը՝ անզէն Հայե – րու դէմ : Մէկ խօսքով՝ վանդին դէմ կը զանուինք ... :

— Այո կը զղամ թէ համբերելու ժա – մանակ չմնաց , կը զղամ թէ անզէն մնացած Հայերու կորուստն անխուսա – փելի է, Վանական, բայց ... սեւ օձ մը կայ մեր առջին... անդամ մըն ալ այդ սեւ օձին վրայ նայինք ու այնպէս քայլ մը փոխելու որոշումը տանք ... :

Ներսէս Արծրունիի ակնարկութիւնը Վանականին հոգին կը զառնացուներ, հետեւաբար ընկճուած եղանակով մը կ'ը – սէր .

— Իրաւունք ունիք... տարիներէ ի վեր պատրաստուած ուժը հետզհետէ կը ջլատուի կուսակցական պատակառումնե – րու չնորհիւ : Այսօր անհասկացողութիւնն ան աստիճան տիրած է մեր մէջ որ՝ իրա – րու ձեռք բռնելու ժամանակ՝ սոսկումով մը եա կը քաշուինք... : Ինչ որ կառա – վարութիւնը չէր կրնար Քուրդի թնդա – նօթներով ընել. կուսակցութիւնները կը յաջողին զործադրելու :

Այս եւ ասոր նման քամնելի հանգա – մանքներու վրայ խօսելով մեր երկու անձնուրացները չէին զիտեր ինչ ընել – նին :

Գիշեր մը Վանական ու Ներսէս Ար – զրունին իրենց ամէնէն հաւատարիմ ըն – կերոջ, Մկրտիչ Աւետիսեանի տունը զա – ցին :

Մկրտիչ Աւետիսեան, երեսունն անցած միջահասակ փափուկ ու նիհարակազմ, մելամաղձոտ ու մտայոյզ կերպարանքով, ճաղատ ու լայն ճակտով մեծ ու փոսը ինկած աչքերով, լուրջ, ծանր արտայայ – տութիւն մը պատկերացնող նկարագրով անձ մըն էր :

Երբ Վանական ու Ներսէս Արծրունին՝ պատաւի մը առաջնորդութեամբ՝ Մկըր – տիչ Աւետիսեանի աշխատութեան սենեա – կը մտան դիր զրելու զրաղած էր ան :

— Բարիրկուն. Աւետիսեան, մրմնջեց Ներսէս Արծրունին իր ձեռքը դրոված – քով մը անոր ուսերուն վրայ դնելէ ետ – քը :

Մկրտիչ Աւետիսեան իր վեհ դլուխը վեր առաւ ու մեքենաբար առքի եղնելով սեղմեց երկու անձնուրացներու ձեռքերը :

— Ո՛հ, արդէն կը փափաքէի տեսնել ձեզ, մրմնջեց Մկրտիչ Աւետիսեան ան – հուն խանդաղատանքով մը : Կ'ուզէի յայտնել ձեզ թէ կառավարութիւնը մտա – դիր է զինուորական չքթայի տակ առնել ամբողջ քաղաքը ... :

(Շար.)

ԺԱՄԱԿԱՐԳՈՒԹԻՒՆ Ս. ԾՆՆԴԵԱՆ

ՓԱՐԻԶԻ Ս. ԾՈՎՀ. ՄԿՐՏԻՉ ԵԿԵՂԵՑԻ

ՇԱԲԱԹ, Տօն Ս. Ծննդեան եւ Աստուածայայտնութեան: *Սկիզբ ժամերգութեան ժամը 8ին, Ս. պատարագ 10ին:*

Կը պատարագէ եւ քարոզէ Գեր. Տ. ՍԵՐՈՎԲԷ ԵՊԻՍԿ. ՄԱՆՈՒԿԵԱՆ:

ԿԻՐԱԿԻ, Մեռելոց, *ի յիշատակ Մեռելոց Ս. պատարագ եւ հոգեհանգիստ ժամը 10ին:*

ՇԱՒԻԼԻ ԵԿԵՂԵՑԻ

Այս կիրակի առաւօտ Ս. Ծննդեան Տօնի առթիւ հանդիսաւոր Ս. պատարագ կը մատուցուի Շաւիլի եկեղեցւոյ մէջ: Ցաւարտ պատարագի Ջրօրհնէքի արարողութիւն:

ՄԱՐՍԷՅԼԻ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

6 Յունուար, Շաբաթ, Առաւօտ ժամերգութիւն ժամը 8·30ին, երեկոյ, Ճրագալոյց եւ Ս. պատարագ ժամը 4·45ին:

7 Յունուար, Կիրակի, առաւօտ ժամերգութիւն ժամը 8ին, Ս. պատարագ, Ջրօրհնէք, Մեռելոց ժամը 10ին:

ԼԻՈՆ ԵԿԵՂԵՑԻ

ՇԱԲԱԹ երեկոյ, Ճրագալոյց, սկզբնաւորութիւն ժամերգութեանց ժամը 4·30ին:

ԿԻՐԱԿԻ, Ս. Ծնունդ·— Սկզբնաւորութիւն ժամերգութեանց առաւօտեան ժամը 7·30ին:

Պատարագ·— ժամը 10ին: Ջրօրհնէք, ժամը 11ուկէսին:

Սիրով կը հրաւիրուին Լիոնի եւ շրջանակներու բարեպաշտ Հայ ժողովուրդը ներկայ ըլլալու սոյն արարողութեանց:

Այս առթիւ կը խնդրուի մեր հաւատացեալ ժողովուրդէն, բերել իրենց իւղաճրագի բաժինը վառ պահելու համար մեր Ս. եկեղեցին:

ԾՆՈՒՆԴԸ ՊՕՄՈՆԻ ՄԷՋ

6 Յունուար, Շաբաթ, Ճրագալոյց Ծննդեան·— Երեկոյեան արարողութիւն եւ պատարագ ժամը 4ին եւ 5ին:

7 Յունուար, Կիրակի, Տօն Ծննդեան եւ Աստուածայայտնութեան, սկիզբ արարողութեան ժամը 8, Ս. պատարագ ժամը 10: Հանդիսաւոր Ջրօրհնէք՝ ժամը 11·45:

8 Յունուար, Երկուշաբթի, Յիշատակ Մեռելոց·— Սկիզբ ժամերգութեանց ժամը 8·30, հանդիսաւոր պատարագ եւ հոգեհանգիստ ժամը 10:

ՏԷՍԻՆ

ՇԱԲԱԹ երեկոյեան ժամը ճիշդ 5ին ժամերգութիւն, ապա ընթերցուածներ, և ոչինչ է պիտոյ, եւ ապա հանդիսաւոր Ճրագալոյցի պատարագ, երկսեռ երգչախումբին կողմէ, մասնակցութեամբ տեղւոյն դպրաց դասուն:

ԿԻՐԱԿԻ առաւօտուն ժամերգութիւն, ժամը 8·30ին, հանդիսաւոր պատարագ ժամը 10ին, Ծննդեան քարոզ 11ին եւ յետ պատարագի հանդիսաւոր Ջրօրհնէք: Դարձեալ երգչախումբին կողմէ դպրաց պետութեամբ Պ. Գրիգոր Մարտիրոսեանի: Պատարագիչ եւ քարոզ Վարագ քհնյ. Աւագեան:

ՍԻՆ ԺԵՐՄԻ ՄԷՋ

ՇԱԲԱԹ, Ճրագալոյց Ծննդեան, երեկոյեան արարողութիւն եւ Ս. պատարագ ժամը 4ին, եւ դիրքերու ընթերցում ժամը 5ին:

ԿԻՐԱԿԻ, Տօն Ծննդեան և Աստուածայայտնութեան, արարողութիւն ժամը 8ին, Ս. պատարագ ժամը 10ին, հանդիսաւոր Ջրօրհնէք ժամը 11·45ին:

Երկուշաբթի, Յիշատակ Մեռելոց·— Սկիզբ ժամերգութեանց ժամը 8·30ին, հանդիսաւոր պատարագ եւ հոգեհանգիստ ժամը 10ին:

ՎԱԼԱՆՍԻ ՄԷՋ

ՇԱԲԱԹ, Ճրագալոյց Ծննդեան ժամերգութիւն ժամը 9ին, երեկոյեան ժամը 6ին Ս. պատարագ:

ԿԻՐԱԿԻ, Տօն Ս. Ծննդեան, սկիզբ արարողութեան ժամը 8ին, Ս. պատարագ ժամը 10ին, հանդիսաւոր Ջրօրհնէք յետ պատարգի:

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, Մեռելոց, սկիզբ ժամերգութեան ժամը 9ին, Ս. պատարագ եւ հոգեհանգիստ:

ԱՐՆՈՒՎԻԼԻ ՎԱՐ. Ս. ԽԱՉ ԵԿԵՂԵՑԻ

ԿԻՐԱԿԻ, Տօն Ս. Ծննդեան եւ Աստուածայայտնութեան, սկիզբ արարողութեան ժամը 9ին, պատարագ 10·30ին:

Ս. ԹԱԴԷՈՍ (ՍԷՆԹ ԱՆԹՈՒԱՆ)

ՇԱԲԱԹ, Սկիզբ առաւօտեան ժամերգութեանց ժամը 8ին, երեկոյեան (Ճրագալոյց) ժամը 6ին, Ս. պատարագ 7ին:

ԿԻՐԱԿԻ, (Ս. Ծնունդ) առաւօտեան ժամը 7·30ին, Ս. պատարագ 10ին, քարոզ 11ին:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ համօրէն ննջեցելոց եւ Ջրօրհնէք ժամը 11·30ին:

ԱԼՖՈՐՎԻԼ

Այս ՇԱԲԱԹ առաւօտ, քառաձայն պատարագ:

ԿԻՐԱԿԻ, Մեռելոց:

Ալբի Տիկին Վ. Ոսպիկեան, Տէր եւ Տիկին Սարգիս Ընտրիկեան եւ զաւակները, Տէր եւ Տիկին Ստեփան Ալանեան, Պ. Նազարէթ Ոսպիկեան եւ զաւակները, Պ. Գէորգ Ոսպիկեան եւ զաւակները, ինչպէս նաեւ Ամուճայեան, Մուրատեան, Մոսքոսեան, Թորոսեան ընտանիքները ցաւով կը ծանուցանեն իրենց զաւկին, եղբօր եւ ազգականին՝

ԳՐԻԳՈՐ ՈՍՊԻԿԵԱՆԻ

մահը, որ տեղի ունեցաւ Յունուար 4ին, 68 տարեկանին:

Հաւաքուիլ այսօր՝ (Յունուար 6) ժամը 15·30ին, Սէն Շամոնի Փեթիթ-աննեռու մատուռը, ուրկէ մարմինը կը փոխադրուի Նոթր Տամ եկեղեցին:

Արարողութենէն ետք միայն ընտանիքը ներկայ պիտի ըլլայ թաղումին:

ՑԱՒԱՌ·— Մեր ցաւակցութիւնները Տէր եւ Տիկին Ս. Ընտրիկեանի:

Կը խնդրուի ծանուցանել

ԱՐԱՄ ՀԱՆՋԵՐԻ

մահը: (Մարգիր – տնօրէն «կէս – կատակ կէս – չիտակ» երգիծաթերթին):

Յուղարկաւորութիւնը կը կատարուի այս երկուշաբթի առաւօտ, Պանեէոյի գերեզմանատունը, ուր մարմինը պիտի ամփոփուի Հ. Բ. Ը. Մ. մատուռական – ներու դամբարանը:

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Ասնուվիլի Ազատ Ցղութեան քոյրերը չնորհակալութիւն կը յայտնեն Ֆ. Կ. Թաչի Շրջ. վարչութեան, որ Մանուկներու Օրուան առթիւ հակառակ իրենց բացակայութեան չէ մոռցած վարժարանի մանուկներուն բաժինը կազանդի առթիւ եւ մինչեւ իրենց հաստատութիւնը յանձն առած է ղրկել զանազան միրգեր:

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Հ. Ց. Դ. Նոր Սերունդի Իսիի Խանաբոր խումբի գեղարուեստական եւ պարանցիկ երեկոյթը Իսիի մէջ, Փետր. 10ին:

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ Ս. ԽԱՉ ԵԿԵՂԵՑԻ

10 bis, Rue Thouin, PARIS

Այս կիրակի, հանդիսաւորութիւն Յայտնութեան եւ Մկրտութեան Քրիստոսի: Հայրապետական ձայնաւոր պատարագ ժամը 10·30ին: Պիտի պատարագէ եւ քարոզէ՝

ԳԵՐՊ. ԿԱՐԱՊԵՏ ԵՊԻՍԿ. ԱՄԱՏՈՒՆԻ

Թեան ժամը 9ին, պատարագ 10·30ին:

Ս. ԹԱԴԷՈՍ (ՍԷՆԹ ԱՆԹՈՒԱՆ)

ՇԱԲԱԹ, Սկիզբ առաւօտեան ժամերգութեանց ժամը 8ին, երեկոյեան (Ճրագալոյց) ժամը 6ին, Ս. պատարագ 7ին:

ԿԻՐԱԿԻ, (Ս. Ծնունդ) առաւօտեան ժամը 7·30ին, Ս. պատարագ 10ին, քարոզ 11ին:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ համօրէն ննջեցելոց եւ Ջրօրհնէք ժամը 11·30ին:

ԱԼՖՈՐՎԻԼ

Այս ՇԱԲԱԹ առաւօտ, քառաձայն պատարագ:

ԿԻՐԱԿԻ, Մեռելոց:

Imprimerie Spéciale du journal « Haratch »
32, Rue de Trévise, PARIS (9e)

ՖՐԱՆՍԱՀԱՅ ԿԱՊՈՅՏ ԽԱՉԻ ՓԱՐԻԶԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԻ

ՏԱՐԵԿԱՆ ՊԱՐԱՀԱՆԳԷՍԸ

HOTEL LUTETIA, 43 Bd. Raspail

Յունուար 6ին, Շաբաթ գիշեր, միջնէն առաւօտ

Գեղարուեստական ճոխ բաժին

Պ. Պէպէեանի երգերուն մասնակցութեամբ, նաեւ ուրիշ անակնկալներ

Ճոխ պիւֆէ, պար եւ մեծ խանդավառութիւն

Այժմէն սեղանները ապահովել Opéra 37–62

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

ԱԼՖՈՐՎԻԼ·— Այբի Տիկին Մարիամ Գոստիկեան, Պ. Վարդգէս Գոստիկեան, Տէր եւ Տիկին Գէորգ Էլմայեան կը ծանուցանեն թէ հոգեհանգստեան պաշտօն սփիտի կատարուի ողբացեալ ԳՐԻԳՈՐ ԳՈՍՏԻԿԵԱՆԻ մահուան քառասունքին առթիւ, այս կիրակի առաւօտ Ալֆորվիլի Ս. Պօղոս Պետրոս եկեղեցին:

Կը հրաւիրուին իր յիշատակը յարգողները:

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Փարիզի եկեղեցւոյ դիւանը չնորհակալութեամբ ստացած է հետեւեալ նուիրատուութիւնները, Պ. Պ. Ա. Հարենց 25 Ն Ֆ., Գառնիկ Վարժապետեան 50 Ն·Ֆ:

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ԿԱՊ. ԽԱՉԻ Վալանսի մասնաճիւղի ընդհ. անդամական ժողովը այս կիրակի, կէսօրէ վերջ ժամը 3ին, Տիկին Կօշկարեանի բնակարանը: Կը խնդրուի բոլոր ընկերուհիներէն ներկայ ըլլալ այս կարեւոր ժողովին:

ԿՈՒԶՈՒԻ ՍՏԻՊՈՂԱԲԱՐ

Հանդերձապահուհի մը Ս. Մուրատեան վարժարանին համար: Դիմել տեղւոյն վրայ:

26, Rue Troyon, SEVRES (S. et O.)
Métro : Pont de Sèvres
Tél. : OBS. 18-28



ՃԱՇԱՐԱՆ

ԵԱՓ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԹԵԻԱՆԵԱՆ

Եւրոպական, հայկական եւ կովկասեան ընտիր ճաշեր:

Առաջնակարգ կովկասեան խորոված – ներ, շաշլիֆ, բարսֆի:

ՀԱՃԵԼԻ ՄԹՆՈԼՈՐՏ

Bar Américain

AU CŒUR MÊME DES CHAMPS-ÉLYSÉES

4, RUE ROBERT-ETIENNE
(Rue Marbeuf) PARIS - 8e
Téléphone : BAL. 31-21
Métro : F. D. Roosevelt

ԵՒՐՈՊԱՅԻ ՄԵԾԱԳՈՅՆ ՀԷԼՎԱ ԼՈԳՈՒՄ Սուսամ – ՀԷԼՎԱ

ԱՐՏԱԴՐԻՉԸ ԹԱՀԻՆ ՇԱՐՈՑ (ՌՈՃԻԿ) ՎԱՐԴԷ-ԱՆՈՅՇ

ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ...

CHOC-ALVA • CHOCO-LOC

Sté le BOSPHORE
SIÈGE SOCIAL
2, Rue Louis Astouin /Marseille (2ème)

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՕՆԵՐՈՒՆ,

ՀԱՅԿԱԿԱՆ ՍԵՂԱՆ ՁԿԱՅ

ԱՌԱՆՑ

ՀԱՅԿԱԿԱՆ **ԱՆՈՒՇԵՂԷՆՆԵՐՈՒ**

ՈՐՈՆՑ ՄԻԱԿ ՎԱՐՊԵՏՆ Է՝

ՍՏԵՓԱՆ ՄԱՐԳԱՐԵԱՆ

32, Rue de Trévise, PARIS (9e) TAI. 65-44

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

Le PREMIER QUOTIDIEN ARMENIEN en EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction et Administration : 32, Rue de Trévise - PARIS-9e

Fondé en 1925 — Téléph. : PRO. 86 - 60

R. C. Seine 57 A 2731 — C. C. P. Paris 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա՝ Տար· 50 Ն· Ֆ· — Վեցամսեայ՝ 27 Ն· Ֆ·

Արտասահման՝ Տար· 60 Ն· Ֆ· — Հատը՝ 0·25 Ն· Ֆ·

ԿԻՐԱԿԻ 7 ՅՈՒՆՈՒԱՐ

DIMANCHE 7 JANVIER 1962

38ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 9298 — 38e ANNÉE — Fondateur : SCHAVARCH MISSAKIAN — ՆՈՐ ՇՐՋԱՆ, 18ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 5099

ՕՐՈՒԱՆ ՏՕՍՔԸ

ԹՈՒՐՔԻՈՅ ՀԱՅԵՐԸ 1961 ԻՆ

Վերջացող տարուան ընթացքին Հայութիւնը զանազան երկիրներու մէջ ապրե – ցաւ խռովայոյզ օրեր :

Թուրքիոյ մէջ յեղափոխական կառա – վարութիւնը ոտնակոխ ընելով Լօզանի դաշնագրին բացորոշ տրամադրութիւն – ները փոքրամասնութեանց իրաւունքնե – րուն մասին, միջամուխ եղաւ Հայոց ներքին ազգային, եկեղեցական, կրօնա – կան եւ համայնքային խնդիրներուն :

Նախորդ կառավարութիւնները արդէն իսկ բոլորովին ջնջած էին Ազգային Սահ – մանադրութիւնը, որով կը ղեկավարուէր Թուրքիոյ Հայութիւնը 1860էն ի վեր :

Պոլսոյ կուսակալ Զօր· Թուլկա իր նը – շանաւոր հրամանագրով զանազան սեղ – մոմներու ենթարկեց հայկական հիմ – նարկութիւնները, տեղական հանդամանք ունենային անոնք թէ տարրային :

Գարեգին պատրիարք դեմոկրատներու օրով կրցեր էր լեզու գտնել պետական վարիչ դէմքերու, մասնաւորապէս Պոլ – սոյ կուսակալ Ֆախրէտտին Կէօքայի հետ, զանազան առաւելութիւններ ապա – հովելով իր հօտին : Մանաւանդ յաջողած էր ամուր հիմերու վրայ դնել Սկիւտարի Ս· Խաչ դպրեվանքը :

Կիւրսէլի կառավարութեան ծայրայեղ տարրերը, խոնդ ազգայնամոլ, առաջին օրէն իսկ մտադրած ըլլալով մաքրել Թուրքիոյ փոքրամասնութեանց հաշիւը, իրենց առաջին հարուածը ուղղեցին Հա – յութեան դէմ :

Մտի փաթթոց ընելով Պատրիարքին մէկ նամակը՝ ուղղուած անկեալ վարչա – պետ Առնան Մենտէրէսի, Թուրքերէն Թերթերը յարձակողականի սկսան անոր դէմ : Իրենց բուն նպատակն էր պատ – րիարքը վարկաբեկելով արդարացնել Հայոց իրաւունքներուն դէմ իրենց կա – տարած տնձգութիւնները :

Ծնունդի առթիւ ժողովուրդին ուղ – ղուած պատգամի մը մէջ հոգեւոր պատ – րիարքը կ'ըսէր· «Տուն մը ունինք, որ պիտի կառավարենք մեր միջոցներով եւ աւանդութիւններով» (Յառաջ, 20 Յուն – ուար, 1961) :

Սակայն Մարտին կառավարութիւնը խիստ հրահանգով մը կը ստիպէր Պոլ – սոյ Հայերը կարճ ժամանակի մէջ նոր վարիչներ ընտրել հանրային հիմնարկու – թեանց համար : Ստեղծուեցաւ ընդհա – նուր զայրոյթի մթնոլորտ մը : Թեկնա – ծուներէն շատեր հրապարակաւ հրաժա – րական տուին : Քանի մը ձգձգումներէ ետք, վերջապէս տեղի ունեցան նոր ըն – տրութիւնները :

Պոլսոյ մեր հայրենակիցները այլեւս սեփականատէր չէին իրենց տան մէջ, զայն իրենց միջոցներով եւ աւանդու – թիւններով կարենալ կառավարելու հա – մար :

Կուսակալ Թուլկայի հրամանագիրը նոյնիսկ կ'արգիլէր օտարահպատակ կրօ – նաւորներուն պատարագել Թուրքիոյ հայ եկեղեցիներուն մէջ ... :

Ժամանակին բողոքեցինք Լօզանի դաշ – նագրի յօդուածներու խախտումին դէմ, ուշադրութիւնը հրաւիրելով երաշխաւոր պետութիւններուն :

Մինչ այդ Յունիս 22ին վախճանեցաւ Գարեգին պատրիարքը, մեծ պարապ մը ձգելով :

Այս առթիւ ականատես եղանք աննա – խընթաց երեւոյթի մը : Ամենայն Հայոց կաթողիկոսը չքախտմբով մը էջմիածի – նէն անցաւ Պոլիս եւ ներկայ եղաւ յու – ղարկաւորութեան, որ կատարուեցաւ Յուլիս 7ին :

Վազդէն Ա· մինչեւ Անգարա գնաց, Մ· Քեմալի դամբարանը այցելեց եւ տեսնուեցաւ պետութեան նախագահին հետ :

Ո՛չ ոք կրցաւ թափանցել այս բարձր դիւանագիտութեան խորհուրդին :

Հոկտեմբեր 11ին Շնորհք եպիսկ· Գա – լուստեան ընտրուեցաւ պատրիարք Թուր – քիոյ Հայոց, գահակալութիւնը տեղի ու – նեցաւ Յունուար 3ին :

Յուսա՞նք որ վարչապետ Իսմէթ Ինէօ – նիւ, վարդբե վերկիսիի հերոսը, նոր դաւ մը պիտի չնիւթէ այս անգամ ալ Թուրքիոյ փոքրամասնութեանց դէմ :

ՀՐԱՆՏ–ՍԱՄՈՒԷԼ

ՕՐՈՒԱՆ ԻԷՊՔԵՐԸ

ԱԼԺԷԻԷՆ ՓԱՐԻԶ

ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԲԱՑԱՌԻԿ ՄԻՋՈՑՆԵՐ

Կ'ԸՍՈՒԻ ԹԷ ՍԱԼԱՆ ՊՐԻՒՍԷԼ Է

Շաբաթ առաւօտ Եւրոպա թիւ 1 ձայ – նասփիւռի կայանը լուր մը կը հաղոր – դէր, զոր չէր կրցած ստուգել եւ ըստ ո – րուն Լուսուլ Սալան Պրիւսէլ կը գտնուէր : Ամէն պարագայի մէջ հակողութեան բա – ցառիկ միջոցներ ձեռք առնուած են փը – րանքեւսելժիական սահմանին վրայ եւ կարելի է նոյնիսկ ըսել թէ սահմանապը – լուխը կէս փակ է :

Ապահովութեան չատ խիստ միջոցներ ալ առնուած են Ալժէրի մէջ ուր բանակի եւ ոստիկանութեան կարեւոր ուժերհամա – խմբուած են, գլխաւորաբար Ալժէրի եւ Օռանի մէջ : Ասոնց գլխաւոր նպատակն է կարգը պահպանել եւ արգելք հանդիսա – նալ որ համայնքները բախումներ ունե – նան :

Ձայնասփիւռը կ'ըսէ՝ նաեւ թէ կարե – ւոր ուժերը կը համախմբուին նաեւ Փա – րիզ, ինչ որ կարծել կուտայ թէ կառա – վարութիւնը եթէ նոյնիսկ բանի մը չի սպասեր, կ'ուզէ ցոյց տալ թէ տէրն է կացութեան եւ վճռած է տեղի չտալ գր – գռութեանց :

Այս առթիւ յիշենք թէ Համայնավար կուսակցութիւնը կոչ մը ըրած էր իր չարքերուն որպէսզի հաւաքուին Փլաս Քոսութի իր կեդրոնատեղիին չուրջ (Շա – թօտէօն), այս չարժումին կը միանար Աչխատանքի համայնավար դաշնակցու – թիւնը միեչ ժողովրդավար բոլոր կազ – մակերպութիւնները կը մերժէին : Այս ցոյցը անչուշտ բողոք մըն է Կաղտնի Բա – նակի ահաբեկչական արարքներուն դէմ : Ներքին Նախարար Ֆրէ յիշեց թէ հրա – պարակային բոլոր ցոյցերը արգիլուածկը մնան բայց համայնավար պաշտօնաթեր – թը կը հրաւիրէր իր համակիրները որ Շաբաթ ժամը չորսին հաւաքուին իր չէնքին առջեւ :

Ալժէրի մէջ մթնոլորտը միշտ լարուած է : Կաղտնի բանակի ձայնասփիւռի մէկ հաղորդումին ընթացքին անծանօթ խօս – նակ մը յայտարարեց .— « Տը Կոլ ըս – տանձնեց քաղաքացիական պատերազմի մը պատասխանատուութիւնը : Դէմ պի – տի դնենք իր հրաւէրին եւ քաղաքացիա – կան պատերազմ մըպիտի սկսի զոր պիտի չհինենք : Ալժէրիոյ քաղաքներուն մէջ , գործողութիւնները արդէն սկսած են : Նոյնը պիտի ըլլայ պիւղերուն մէջ : Մայր հայրենիքին մէջ Կաղտնի բանակը, որ լաւ կազմակերպուած է ծանր հարուած – ներ պիտի բերէ կառավարութեան : Ալ – ժերացիները, Ալժերուհիները, խանդավա – ռութեամբ եւ կարգապահութեամբ պէտք է պատասխանէք զօրակոչի հրա – հանգներուն, զոր պիտի ստանաք : Ի մօ – տոյ, գաղտնի բանակը կռթնած բանակին հայրենասէր ընկերներուն վրայ պիտի տանի պայքարը» :

Վերջին երկու ամիսներու ընթացքին Գաղտնի Բանակի 237 անդամներ ձերբա – կալուած են, 1650 խուզարկութիւններ կատարուած եւ բաւական զէնք եւ զինա – մթերք գրաւուած Ալժէրիոյ մէջ :

ԸՆԿԵՐԱՑԻՆ ՋԱՐԹՕՆՔԸ ԹՈՒՐՔԻՈՅ ՄԷՋ

Պոլսոյ մէջ, առաջին անգամ ըլլալով , տասնեակ հազարաւոր աշխատաւորներ տողանցեցին փողոցներուն մէջ նշանա – բաններով զոյս ոչ մէկ Թուրք, ցարդ ար – տասանած էր, կը գրէ կը Մոնտ :

Ցուցարարները զործադուլի իրաւունք կ'ուզեն եւ ամսականի յաւելում : Նման ցոյց մը նոր դարաշրջան մը կը բանայ Թուրքիոյ մէջ : Ցարդ «արդի» Թուրքիոյ ոչ մէկ կառավարութիւն, ոչ Աթաթիւրք, ոչ իր յաջորդները հանդուրժած էին որ ընկերային պահանջները հաւաքական ցոյցի մը առարկայ դառնան :

1960 Մայիս 27ի զինուորական յեղա – փոխութենէն ետք, կացութիւնը արագօ – րէն յեղաշրջուած է : Շարժումին հեռա – նկարն էր, նախապէս , «վերադարձ ժողո – վրդավար հիմնարկութեանց » :

Այն երիտասարդ սպաները , որոնց աչ – խատանքները յանդեցան Ինէօնիւի դահ – լիճին կը դտնէին թէ առաջն առնելու համար Մենտերէսի օրով եղած չահա – գործումներուն, պէտք է կռթնիլ ժողո – վուրդին կամքին վրայ : Այս մտահոգու – թեամբ տարուած է, կը գրէ միշտ կը Մոնտ, որ կարգ մը զինուորականներ , ո – րոնց կողքին էին խումբ մը մտաւորա – կաններ ուզեցին ընկերային բարենորոգ – ման չարժում մը պատրաստել, նկատի առնելով որ միայն այն կրնար ստիպել ամբոխին որ վարչաձեւին զօրավիգ կե – նայ :

Աւոր առաջին նշանն էր մամուլի դոր – ծադուլը : Թերթի տնօրէնները չէին ու – զած գործադրել այն բարելաւումները որ եղած էին լրագրողներուն :

Իչխանութիւնները ոչ միայն արգելք չհանդիսացան գործադուլի այս չարժու – մին այլեւ անուղղակի քաջալերեցին : Ի – րենց նպատակն էր ձեռք ձգել գործատե – րոջ մտայնութեան փոփոխութիւն մը եւ ցոյց տալ ամբոխին թէ Մայիս 27ի յեղա – փոխութիւնը ընկերային արդար քաղա – քականութեան մը մեկնակէտն էր :

Այս ամբողջը ցոյց կուտան թէ նոր հո – սանք մը ստեղծուած է Թուրքիոյ մէջ :

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՖՐԱՆՍԱԿԱՆ ոստիկանութիւնը թոյլ չտուաւ որ եգիպտացի երեք ճամբորդներ որոնք բրաւզլէք Մարսէյլէն կ'անցնէին , նաւէն դուրս ելլեն :

ՄՈՍԿՈՒԱՅԻ մէջ վերջերս ժողով մը տեղի ունեցաւ նուիրուած դաղափարա – կան հարցերուն որուն ընթացքին Կ· Կո – միտէի քարտուղար Իլիչեւ կ'առաջարկէր մամուլին որ խոհեմութեամբ վարուի այն հարցերուն հետ որոնք անձի պաչտա – մունքին կը վերաբերին : Իսկ Փարիզի Իւմանիթէին մէջ Փիէր Քուռթատ կը գրէ թէ վերջերս էկոնոմիչեսկայա կազեթա ոչ « ուղղափառ» յօդուած մը հրատարա – կած էր, ուր հեղինակը այնքան հեռու գացած է սթալինականութեան քննադա – տութեան մէջ որ կը հերքէ ընկերվարու – թեան հիմնական օրէնքին գոյութիւնն իսկ : Արդէն չի հաւատար նաեւ թէ հիմ – նական օրէնքներ ըլլան տնտեսութեան մէջ : Այս տեսակէտը անչուշտ չընդուն – ուիր կուսակցութեան թերթերուն կողմէ, Յատկանչական է սակայն որ այս յօդ – ուածին հեղինակը ուրիչ մէկը չէ եթէ ոչ Գիտութեանց Ակադեմիայի անդամ՝ Լէ – ոնթիէվ :

ՈՒՈՇԻՆԿԹընի խորհրդային դեսպանը մեկնեցաւ դէպի Մոսկուա : Այս առթիւ դեսպանը յայտարարեց թէ Ամերիկայի եւ Խորհ· Միութեան յարաբերութիւնները բարելաւուած էին· բայց տակաւին չատ բան կայ ընելիք : «Կենսականը հիմա, վերջին պատերազմին հետքերը մաքրելն է եւ հաչտութեան դաշնագիր մը ստորա – գրելը երկու Գերմանիաներուն հետ, ո – րովհետեւ երկու Գերմանիաները կան, ուզէք թէ չուզէք » չեչտեց նախկին դես – պանը :

ԱՆԱՍՏԱՍ ՄԻԿՈՑԵԱՆ Ռասպէթ հան – դիպելէ ետք , Ուրբաթ օր Նոր – կինէ հասաւ : Քոնաքրիէն ետք, Խորհ· Միու – թեան փոխ – վարչապետը Ղանա պիտի երթայ ուր հրաւիրուած է Ն'Քրումանի կողմէ : Ս իկոյեան ապա կրկին Ռասպէթ պիտի վերադառնայ այս անգամ պաչտօ – նական այցելութեան մը համար :

ՊՈՆԻ Մէջ, Ուրբաթ օր Տոքթ· Քոն – բառ Առջնաւորի 86րդ տարեդարձը տօնուեցաւ :

ԽՈՐՀ· ՄԻՈՒԹԻՒՆԸ առաջարկեց որ , Ֆրանսա մասնակցի Փընեւի հիւլէական ապազինման խօսակցութիւններուն :

ԽՐՈՒՇՉեւ տուժէ կը տառապի եւ այդ պատճառաւ յետաձգեց Բելգոռուսիա կա – տարելիք իր այցելութիւնը :

ՊԱՂՏԱՏԷՆ կը հաղորդեն թէ քարիւղի երեք ընկերութիւնները միջազգային է – րաւարար մարմին մը կը պահանջեն քըն – նելու համար իրաքեան կառավարութեան հետ իրենց ունեցած տարակարծութիւնը :

ՊԵՐԼԻՆԻ ծանօթ պատը, առջի դիչեր երկու տեղերէ փլաւ : Արեւելեան Գերմա – նացիները ձեռնարկած են վերաչինու – թեան :

ՊՈՒՐԿԻՊԱ ճառ մը խօսեցաւ Ուրբաթ առաւօտ , որուն ընթացքին յայտարարեց թէ Շաբաթ օրուընէ ի վեր նոր եւ նպաս – տաւոր տուեալներ կան Ֆրանքեւթունուղ – եան բանակցութեանց մէջ, Պիզերթի չուրջ :

ՓԱՐԻԶի համայնավար կեդրոնատեղի – ին վրայ (Փլաս Քոսութ) յարձակում մը եղաւ առջի օր : Պահակ մը ծանրօրէն վի – րաւորուեցաւ :

ՌԱՊԱԹԻՆ Մարտ Էնֆորմասիոն թեր – թը կը գրէ թէ հանդիպում մը տեղի ու – նեցած է, Իտալիոյ մէջ Լուի Ժոքսի (Ալ – ժերիոյ հարցերու նախարար) եւ «Ա.Հ.Ա – կ»ի «արտաքին նախարար» Սաուս Տահ – լապի հետ :

ՊԼԵՑՐՈՒԹի ներքին նախարար կամալ Ճումպլաթ յայտարարեց թէ սուրիական ժողովրդ· կուսակցութիւնը «դաւերու չարք մը կը պատրաստէր Միջին Արեւել – քի զանազան երկիրներուն մէջ» : Ասոնց առաջինն էր՝ Լիբանան :

ԱՆՈՒՆԴ ՏԱԼԻՍ

Հայաստան, անունդ տալիս ,
ժայռի մէջ մի տուն եմ յիշում ,
Ալեւտր կամուրջի յօնքին
Ծիծառի մի բոյն եմ յիշում ,
Թեհռուած մի մատուռ եմ յիշում
Եւ բերդի տեղահան մի դուռ ,
Աւերակ տաճարի մի վէմ
Եւ բեկուած մի սիւն եմ յիշում :

Յիշում եմ լճուած մի թոնիր ,
Բերանին մամռոտած մի խուփ ,
Մամռոտած որմի խոռոչում
Մասրենու վարսաթափ մի թուփ ,
Աշխարհի էսբերին մաշուած ,
Աշխարհից խռռված մի ցուպ , —
Եւ հեռում ինչ – որ ուշացած
Ձիերի դոփիւն եմ յիշում :

Արեւտր մի սար եմ յիշում —
Ձակատին ճիւնի պատառիկ ,
Սարն ի վար բարակ մի առու —
Շուրթերին հայրէն ու տաղիկ ,
Ցորենի կանաչ արտի մէջ
Արուսյտի կապոյտ մի ծաղիկ
Եւ արտի եզրին՝ մեւաւոր
Մի բարդու շրջիւն եմ յիշում :

ՀԱՄՕ ՍԱՀԵԱՆ

Ծննդեան Գիշեր

Սիբելի ընկեր ԽԱՉԻԿ ԿԱՐԱՊԵՏԵԱՆԻ
Ջաղցր յիշատակին :

Վո՛ւ, վո՛ւ, վո՛ւ...

Հովն է, որ գայլի պէս կը վազէ դուրս՝ կռնակը քսելով դիւղական տնակներ – րուն դռներուն : Եւ վախէն կը դողայ գենիստան, լուսեղէն մատները կ'երկա – րէ, ապատան փնտռելու ձեւեր կ'առնէ, կը ծռի, կը բարակնայ, կը գերկենայ, հալած մեղրի գոյները կը թափէ մոխ – րին վրայ : Բայց երբ հովը հեռու կ'եր – թայ, կ'երկարէ քիթը, կը փաթթուի բո – ցերուն, ցերեկուան պէս լուսաւորելով սենեակը :

Պրըթոնները գենիստայ կը վառեն Ծննդեան դիշերը(*) :

Օջախին կողքին՝ նստած է հանին հըս – կայ կոճղի մը վրայ, դոր փորած են թիկնաթոռի մը պէս : Ի՛մը՝ ծունկի վը – րայ, իր թոռնիկը, մատղաչ աղջիկ մը, հայց – թուխ հանդերձանքով,— լայն քոթոնակ, գլխուն՝ կողպատ ժանեակէ ծոպով :

Աղջիկը թերթ կ'եփէ տապակի վրայ, իսկ տանին կը դիտէ ու կ'երազէ : Մերթ ընդ մերթ կը խօսի .

— Սեւ – ամիսն անցաւ, լուս – ամի – սըն եկաւ(**) :

Այս խօսքերով կը համբէր կարծես իր կեանքին ժամանակը :

Ցեղոյ լուութիւն : Ցեղոյ երազ՝ ման – կութենէն մինչեւ ծերութիւն :

Աղջիկը տապակին վրայ կը թափէ լոյծ խմորը ու կը փռէ ակիւ ի ձեռին, քաղցր բոյր մը սփռելով սենեակին մէջ : Տնեցի – ները, բոլորը, զացած են եկեղեցի, ներ – կայ ըլլալու դիշերային պատարագին :

— Այս ժամուս, կը խօսի հանին, պա – տարագիչը ժողովուրդին կը ներկայա – ցընէ Ս. Հաղորդութիւնը, եւ նոյն ժա – մուն կ'երեւին Ծննդեան դիշերուան հրա – շալիքները :

Եւ կը խաչակնքէ :

— Ի՞նչ հրաշալիքներ, հանի պաշտելի :

—Քառասուն անգամ պատմած եմ, ա՛յ թաղմանս վկայ(***), փոյթ չէ՝ նորէն կը պատմեմ :

Ս. Հաղորդութեան սկիհը ներկայաց – ուած պահուն, ուրեմն ճիշդ Ծննդեան կէս գիշերին, կ'արթննան բոլոր արա – բածները որ կան դետնին տակը, դետնին վրան եւ դետնէն վեր՝ երկնքի մէջ :

— Ի՞նչ բազմութի՜ւն, ի՜նչ բազմու – թիւն, հանի պաշտելի :

— Այնքան որքան մարախ կայ մար – գագետինին մէջ, այնքան որքան կարմիր հնոտիկ կը տեսնես սրափուշի ծառին վը – րայ : Բոլորը շարք կազմած, երեք կարգ, մէկը միւսին վրայ՝ ինչպէս Քէմփէր գա – գաքին ապարանքներուն յարկերը իրարու վրայ, կուգան խոնարհիլ...

— Մէկ շարքը միւսէն տարբե՞ր է միթէ :

— Այո՛, թաղմանս վկայ, ամէն մէկ շարք առանձին դասակարգ մը կը ներ – կայացնէ :

Սառնայարկի շարքին մաս կը կազմեն անտառին պարիկները, որոնք նուէր կը բերեն իրենց դանձերը, իսկ առանձին սրուակներու մէջ՝ կախարդական ըմպե – լիներ : Ցեղոյ Ջուրերու յաւերժահարսնե – րը, որոնց վրայէն քանի կը հոսին Ջու – րերը, չղարչ կը դառնան ու կը ծածկեն մերկութիւնը : Ցեղոյ Քոռիկանները, (ուրիշ դիշեր մը կը պատմեմ ճերմակ գորեղի երկրին այս բնակիչներուն պատ – մութիւնը), մուրճ ի ձեռին դուրս ելլե – լով անտաշ քարէ չինուած իրենց տունե – րէն, որոնց դռներուն առջեւ կը հսկեն վիշապները՝ թաղուած դանձերուն պա – հապան : Անոնց բոլորին առաջնորդ՝ խո – շոր գլուխով տղայ մը, որ անձրեւուտ դի – շերները կը վազէ քաղաքներու փողոցնե – րուն մէջ եւ կաղնեփայտէ իր սանդալնե – րով կը դոփէ սալաքարերը : Ցեղոյ կու – գան մարդագայլերը, որոնք դուրս կ'ել – լեն անտառներէն՝ երբ կը սկսի մթնել, փնտռելու համար հինգ տարեկանէն վար մանուկներ որ յօշոտեն : Ցեղոյ մեռելա – կիրները, որոնք յաճախ կ'երեւին լեռ – ներուն վրայ՝ մահաղ մը ուսին, որու մէջ դրուած կ'ըլլայ մեղաւորներու հո – գին : Ի վերջոյ խարող ձին, որ կը բա – պասէ դպրոցներու դռներուն առջեւ, թողլով որ դպրոցականները տեղաւոր – ուին իր գաւակին վրայ, որպէսզի փայ – լակի արագութեամբ սուրայ եւ փախցնէ երկրին բոլոր մայրերուն սրտահատոր – ները :

— Իսկ երկրորդ չարքին վրայ ...

— Երկրորդ չարքին առաջնորդն է ա – նիծեալ հրեշտակը : Այս չարքին մէջ կը դտնուի աւետու կառքը, առջեւէն կ'ընթա – նայ մահուան թռչունը : Ցեղոյ կ'երեւի կրակ Վաննէսը, որ պահած կ'ըլլայ ո – րովհետեւ ձմեռ է, իսկ երբ ամառ կ'ըլ – լայ, լուսնկայ գիշերով, Կրակ Վաննէսն է որ կը թաղաւորէ,— կը վազէ գիւղէ գիւղ, դաշտէ դաշտ՝ լուսաւառ մատները խաղցնելէն, մինչ լճակներու եզերքը եւ դերեզմաններու մէջ կը սկսին պարել կա – պոյտ բոցեր : Ցեղոյ քաւարան մտած հոգիները, որոնց Ատուած պարգեւած է կարճ արտօնութիւն մը՝ աշխարհ վերա – դառնալու եւ իրենց մահէն առաջուան աշխատանքը շարունակելու համար, — մէկը ցորեան կը քաղէ, միւսը մանուրիկ քայլերով կը հետեւի իր սիրականին : Այս չարքին մէջ են ջրամոյն խեղդուած – ները, որոնք բաղուկ կ'երկարեն դէպի ի – րենց գիւղին զանգակատունը, — այս դժբախտները կը դտնուին անիծեալ նա – ւակի մը մէջ, որ պիտի ծփայ անհուն ով – կիանոսի մը վրայ մինչեւ վերջին Դա – տաստան : Այս չարքին մէջ են քահանա – ները, որոնք դրամ առած են պատարագի համար : Աւելի ետքը կուգան մեղաւորնե – րը, որոնք ամէն ճիշ կ'ընեն վեր բար – ձրացնելու համար իրենց չիրմաքարը խնդրելով որ աղօթեն իրենց համար, — կուրծքին սեղմած են անոնք խաչ մը որ կ'այրէ իրենց ձեռքերը : Այստեղ է ճամ – բաներու վրայ թափառող ատտանան՝ ձեռքին մէջ սեւ հաւ մը : Այստեղ է վը – հուկը, որ կը փնտռէ ոսկի խոտ, եւ Բեթղեհէմի էշն ու եզը, որոնք, այսօր լեզու ելած, կը խօսին իրարու :

— Հապա երրորդ չո՞րքը...

— Այո՛, սրտիս ամէնէն թանկագին չերտը, երրորդ չարքն ալ կայ դեռ, եր – կու չարքերուն վերեւ : Այստեղ են մար – տիրոսները, սուրբերը եւ հրեշտակները, ո – րոնք կը յառաջանան եռեւէ եռեւ : Անոնք կիսովին ծածկուած են ամպով մը, ո – րովհետեւ երկնաբնակ են, Ատուծոյ հետ հաղորդ հանապազորդ :

— Եւ բոլոր ասոնք, իրենց դանձերով եւ հարստութիւններով, Ծննդեան դիշե՞ – րը միայն կ'երեւին :

— Այո, միայն Ծննդեան դիշերը եւ մէկ անդամ, մէկ վայրկեան : Այն պա – հուն միայն՝ երբ Ս. Հաղորդութեան սկիհը կը ներկայացուի ժողովուրդին : Ցեղոյ անհետ կը կորսուին բոլորը : Եթէ քրիստոնեայ մը օրհնուած ջուր սրսկէ ա – նոնց ցուցադրած դանձերուն վրայ, տէր կը դառնայ առանց մեղանչելու :

— Ցիսո՛ւս – Քրիստոս, ու մինչեւ հի – մա չդտնուեցա՞ք քրիստոնեայ մը, որ փորձէր, աղաղակէց աղջիկը եւ ձեռքէն ձգեց ակիւը, բոլորովին ապշահար :

— Մէկ վայրկեան իսկ չի տեւեր , աղ – ջիկս : Ի՞նչպէս հասնիլ, ի՞նչպէս հաս – նիլ :

— Ի՛նչքան երջանիկ պիտի ըլլայինք , մեծ – հայրիկ, երբ տէր դառնայինք այդքան հարստութեանց : Քեղի բան մը ըսե՞մ, հանի պաշտելի, Ատուած չի սի – րեր քրիստոնեաները՝ որ կը պահէ այդ անսպառ հարստութիւնը, փոխանակ բաշ – խելու...

— Լռէ, խենթուկ, լռէ... ահա եկան աւետիսաւորները :

Արդարեւ, դուրսը, խաւարին մէջ ձա – հեր կը շարժէին, ուրախութեան ազա – ղակներ կը լսուէին : Ժամուորները տուն կը վերադառնային :

Երդ մըն էր, որ կը թրթռար ձիւնով ճերմկած դիշերուան մէջ, երդ մը քաղցր եւ մաերմիկ , որ աւելի կ'անուշնար քա – նի կը մօտենար .

— Ցնծութի՜ւն ամենուրեք, ցնծու – թի՜ւն յաւիտեան, ո՛վ քրիստոնեաներ , Փրկիչը ծնաւ :

Ծնաւ դոմի մը մէջ, հաստատելու հա – մար թէ ինք Ատուածն է չքաւորներուն եւ տառապեալներուն :

Եկաւ աշխարհ եւ ոչ ոսկի կը բերէ, ոչ ալ արծաթ, այլ միայն երկու տարտուր – թիւն ,որոնք աւելի թանկագին են քան ատղերը :

Կը բերէ երկու պարգեւ, մէկը մեր մարմնոյն համար, միւսը մեր հոգւոյն համար :

Մարմնոյն համար՝ ազատութիւն :

Հոգւոյն համար՝ արքայութիւն :

Թարգմ.
Շ. ՆԱՐԴՈՒՆԻ

(*) Պրըթոնները լեզուով՝ ժան : Տունկ մը, որ հրաշալի կը վառի, ճարճատուն ու լուսեղ բոցերով : Փշոտ է : Ըստ աւան – դութեան՝ Յիսուս, հալածանքի մը ժա – մանակ, պահուըտած է գենիստայի թու – փի մը ետեւ : Ի վարձատրութիւն՝ գենիս – տային տրուած է միշտ կանանչ մնալ եւ ծաղիկը անպակաս :

(**) Պրըթոնները սեւ ամիս կը կոչեն Նոյեմբերը, ու լուս – ամիս՝ Դեկտեմ – բերը, երբ կը լուսաւորուի աշխարհ Յի – սուս – Մանուկին ծնունդով :

(***) Պրըթոնները այսպէս կը կոչեն իրենց թոռները՝ այն աւանդութեամբ թէ անոնք աշխարհ կուգան, Ատուծոյ հրա – մանով, մահուան մօտենալը յայտնելու համար ծերերուն եւ անոնց թաղման ներ – կայ գտնուելու համար :

1961ի ԳՐԱԿԱՆ ՏԱՐԻՆ

(Համադրական պատկեր մը)

Ա.

Սովորութիւն մը յարգելու եւ կամ պարտականութիւն մը կատարելու հա – մար չէ որ 1961ի գրական հաշուեյար – դարութիւնը պիտի ընենք :

Գրական սեռերը ներկայացնող առան – ձին դործերէն աւելի, այս անդամ պիտի փորձենք բացատական համադրական պատկեր մը տալ, որովհետեւ գրական չրջան մը բնորոշող ո՛չ վիպական , ո՛չ բանաստեղծական եւ ոչ ալ դիտական կամ բանասիրական որեւէ ստեղծագոր – ծութիւն պիտի կրնանք մատնանշել :

Այս ըսել չէ անշուշտ թէ ամուլ տարի մը անցուցինք : Քանի մը տասնեակ գիր – քեր մեր ուշադրութիւնը դրաւեցին : Բայց ինչ որ տրուեցաւ մեզի, հայ գրա – կէտներուն մտքի յղացածութիւնը կ'ա – պացուցանէ, որովհետեւ հայ բանաստեղ – ծը եւ վիպադիրը աւելի շատ իրենք զի – րենք կրկնեցին, սովորական քերթուածով մը կամ պատմուածքով մը, առանց ինք – նատիպ ստեղծագործութեան մը վաստա – կին :

Գրական քննադատական սեռը բաղդա – տաբար աւելի գործօն վիճակ մը ցոյց տուաւ, իրրեւ հետեւանք մտաւորական – ներու երկունքին եւ արտադրելու կարո – ղութեան :

Սփիւռքի հայ մամուլը, պարբերական – ներ եւ օրաթերթեր, առանց բացառու – թեան լծուած են դիւրին աշխատութեան մը, տխուր փաստը տալով որ ուրիշնե – րուն մտքի յղութիւնն ու քրտինքը կը չահագործուին այդ կերպով : Արտատը – պամի եարպիկութիւնը մրցակցութիւն ստեղծած է :

Բազմաթիւ օրինակներէն մէկը պիտի յիշենք :

Այս էջերուն մէջ խմբագիրը մնայուն մէկ աշխատակցին յօդուածը կը հրատա – րակէ մեռնող բանասէրի մը եւ ազգա – դրագէտի մը մահուան առթիւ : Անոն մը եռք Պուէնոս Այրէսի «Արմինիա» օրա – թերթը կ'արտատպէ զայն : Կ'անցնին քա – նի մը չաբաթներ եւ յանկարծ «Կոչնակ Հայաստանի» ամսաթերթին մէջ կը կար – դանք նոյն յօդուածը : Դիւրին թերթ հը – րատարակելու եւ խմբագրական պարտա – կանութիւն մը կատարողի այս ճարպիկ – կութիւնը կը չարունակուի տարին տաս – ներկու ամիս : Ո՛չ հեղինակի իրաւունք կը ճանչցուի, ոչ ալ գրական պարկեշ – տութիւն կը չարդուի : Միայն յօդուած – ներուն արտատպումը չէ որ գրական մեր բարքերուն յատկանիշը կը կազմէ : Մեր բոլոր օրաթերթերն ալ իրենց թերթօննե – րուն նիւթ կը հայթայթեն, արտատպե – լով ոչ միայն արդէն տարիներ առաջ լոյս տեսած ու մոռցուած վէպերը, այլեւ մասնաւորաբար Հայաստանի մէջ լոյս

(11 Շար.)

ԱՄԲԱՍՏԱՆԵԱԼ ՍԹԱԼԻՆ, ՈՏՔԻ՛

—o—

Այսպիսի մէկու մը ձայնը կրնար ար – ձագանգ գտնել աշխարհի չորս ծագե – րուն :

Ուրեմն, կորքի վերջնական կերպով վերադարձաւ Ս. Միութիւն : 1936 Յունիս 18ին մեռաւ Կրեմլին հիւանդանոցին մէջ՝ թոքաբորբի վերածուած ծանր պաղառու – թեան մը հետեւանքով :

68 տարեկան էր : Կրնթէ յիսուն տա – րիէ ի վեր թոքերը տկար էին : Իր մահը կրնար բնական նկատուիլ եւ զարմանք չպատճառել : Բայց եւ այնպէս, հազիւ աչքերը փակած, Մոսկուայի մէջ լուրեր չրջան ընել սկսան, թէ մահը բնական չէր :

Արդ, 1938ի դատավարութեան ընթաց – քին, տոքթ. Լեւին, որ անձնապէս խը – նամած էր Կորքին՝ «խոստովանեցաւ».—

— Կ'ընդունիմ թէ վնասակար դեղեր տուի Կորքիի : Մաքսիմ Կորքիի, իր զա – կին եւ Փոսպիչեւի կանխահաս մահուան պատասխանատուն ես եմ : Իակոտա ըս – ւած էր համապատասխան հրահանգները :

— Ինչո՞ւ կ'ենթարկուէիք Իակոտայի :

— Իր հրահանգներուն ենթարկուելու մերժումս համապատասխան կ'ըլլար իմ ու ընտանիքիս մահուան : Իակոտայի ճի – րաններէն ազատիլը անկարելի էր : Մարդ մըն էր, որ ոչ մէկ բանի առջեւ կ'ընկրկէր : Նոյնիսկ եթէ հոգին տակը պահուէք՝ կուգար եւ կը գտնէր ձեզ :

Ի՞նչ հաւատք կարելի է ընծայել այս խոստովանութեանց, որոնք չարչարանք – ներով կորզուած էին Լեւինէն, ըստ Ը – րուչչեւի իսկ յայտարարութեան : Ըստ ամենայն հաւանականութեանց, Տոքթ. Լեւին անմեղ էր իր խոստովանած յան – ցանքէն : Կրեմլինի մէջ իրեն, Պլեոնեւի նման բժիշկներ կային, որոնք պարկեշտ մարդիկ էին. անշուշտ, վերջին եկած հը – րահանգներու ենթարկուելու համար ա – ռողջական զեկոյցներ կը տոորագրէին այս կամ այն անձին մահուան պատճառ – ներուն մասին, որոնք չէին համապա – տասխաններ ճշմարտութեան. բայց այն – պիսի մարդիկ չէին, որ ոճիրի մը մաս – նակից ըլլային : Արդէն, Իակոտա իրենց պէտք չունէր Թունաւորիչի իր գործը կատարելու համար :

Կորքի Իակոտայի — կամ աւելի չուտ՝ Սթալինի զոհերէն մէկը եղաւ — քանի որ Իակոտա ինքնագլուխ չէր գործեր բը – նաւ. հրահանգներու կ'ենթարկուէր :

Ինչպէս կ'ըսէ Թրոցքի՝ ճիշդ է , որ Թունաւորուածներ եւ Թունաւորիչներ կային, բայց բոլոր Թունաւորիչները ամ – բաստանեալի աթոռին վրայ չէին գըտ – նուեր :

ԿԱՐԴԱՑԵՔ ՏԱՐԱԾԵՑԵՔ «ԾԱՌԱՉ»Ը

ՋՈՐՐՈՐԴ ՈՒՆԿՆԴՐՈՒԹԻՒՆ ՍԹԱԼԻՆԻ ԽԱՐՈՒԱԽՈՒԹԻՒՆՆԵՐՆ ՈՒ ՄԵԹՈՆԱՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Երիտասարդութեան տարիներուն , բանտին մէջ, Սթալին զուարճանալու հա – մար չէ որ 1961ի գրական հաշուեյար – դարութիւնը պիտի ընենք :

Գրական սեռերը ներկայացնող առան – ձին գործերէն աւելի, այս անդամ պիտի փորձենք բացատական համադրական պատկեր մը տալ, որովհետեւ գրական չրջան մը բնորոշող ո՛չ վիպական , ո՛չ բանաստեղծական եւ ոչ ալ դիտական կամ բանասիրական որեւէ ստեղծագոր – ծութիւն պիտի կրնանք մատնանշել :

Այս ըսել չէ անշուշտ թէ ամուլ տարի մը անցուցինք : Քանի մը տասնեակ գիր – քեր մեր ուշադրութիւնը դրաւեցին : Բայց ինչ որ տրուեցաւ մեզի, հայ գրա – կէտներուն մտքի յղութիւնն է : Միայն յօդուած – ներուն արտատպումը չէ որ գրական մեր բարքերուն յատկանիշը կը կազմէ : Մեր բոլոր օրաթերթերն ալ իրենց թերթօննե – րուն նիւթ կը հայթայթեն, արտատպե – լով ոչ միայն արդէն տարիներ առաջ լոյս տեսած ու մոռցուած վէպերը, այլեւ մասնաւորաբար Հայաստանի մէջ լոյս

տեսած երկարաշունչ վէպերը: Որովհետեւ մեր հեղինակները, նոյնիսկ երիտասարդ գրողները, գրական այդ սեռը մշակելու ընդունակութիւնը ցոյց չեն տար: Իսկ պատմուածք անունով հրապարակի վրայ երեւցածներն ալ ոչ նիւթի եւ ոչ ալ արուեստի ինքնատպութիւն եւ չնորհ կը բերեն:

Ցաճախ կը զանգատինք ընթերցողնե– րու պակասէն: Փոքրաթիւ ընթերցողներն ալ՝ չափազանց խստապահանջ են: Ոչ թէ իրենց ճաշակները նրբացուցած են, այլ անոնք կը փնտռեն գուարթ եւ իրապաշտ էջեր ամէն բանէ առաջ: Ձեն ախորժիր յուշերու գրականութենէն, որոնցմով գրեթէ լեցուած են մեր քանի մը պարբեր – բականները: Ձեն ախորժիր մանաւանդ մօտիկ անցեալը յիշեցնող յուշերէն: Իսկ բանաստեղծութիւն գրեթէ կարդացող չունինք: Եւ հակառակէն, քերթուածնե– րու հատորներն ալ ստեղծագործական գրականութեան նիւթը կը կազմէ միայն: Տաղանդաւոր գրագէտ Համաստեղի վեր– ջին գործը լոյս տեսաւ տարի մը առաջ, «Այծեառմար» խորագրով, «Ցուսաբեր»ի մատենաշարէն (թիւ 99): Ֆրանսահայե– րու հարիւր հազարէ աւելի հաչուող հայ գաղութէն 1 ընթերցող իսկ չգտնուեցաւ հետաքրքրուելու համար այս ինքնատիպ եւ խորհրդանշական քերթուածով: Նոյնը նաեւ «բանաստեղծութիւններ»ու նոր լոյս տեսած քանի մը հատորներով, որոնց հե– ղինակները սկսնակներ չէին եւ մեր բա– նաստեղծական գրականութեան մէջ որոշ տեղ ու վաստակ ունէին արդէն:

Մեր թերթերը, ամէնէն լաւատեսներն իսկ, սկսած են մատնանշել հայ գրքին տագնապը: Ոչ միայն գրքին՝ այլ եւ պարբերականներուն հետզհետէ չեզտուող տագնապը: Ծանօթ գրագէտ մը, մեզ – նոյն տան պարբերականի մը խմբագի – րը, տխուր խոստովանութիւն մը ըրաւ, որուն համաձայն նոր տարիէն սկսեալ, 1500ի հասնող իր տպաքանակէն պակաս – ցնել հինգ հարիւր օրինակ, որովհետեւ... որովհետեւ իր բաժանորդները չեն վճա– րեր իրենց բաժնեդինը, որ 1500 Ֆրանք է տարեկան...:

Կրնա՞նք արդեօք հայ գրքի տագնա – պին միացնել նաեւ հայերէն լեզուին տագնապը, մէկը մեւսով պայմանաւոր՝ երբ Փարիզահայ եւ արուարձաններուն մեր միօրեայ դասարաններուն աշակերտ– ները հետզհետէ կը պակսին մեծ համե – մատութեամբ... Փարիզի եկեղեցիին կեդրոնի դասարանէն սկսած:

Այս բացասական մտածումներէն հեռ, քանի մը մանաւանդ երեւոյթներ մեր խորհրդածութեան նիւթը պիտի կազմեն, առ՝ քաջալերութիւն անհատա– կան ճիգերու:

1961ի չրջանէն « Ապրիլեան Եղեռնի » մատենաշարէն (Անթիլիաս) սոսկացանք թիւ 8, 9, 10 գրքակները: Այս էջերուն հեղինակները, առանց գրագէտ ըլլալու, կը փորձեն գրականութիւն ընել, գեղեց– կացնել իրենց նիւթը, կրկնութիւնները ը–

ԾՆՆԴԵԱՆ ՏՕՆԸ

ՊԵՐԼԻՆԻ ՄԷՋ

Ծննդեան տօնը Գերմանիոյ նախկին մայրաքաղաքին մէջ տօնուեցաւ այս տա– րի բոլորովին կիսուած՝ երկու տարման– ներէն անդին եւ տակին: Արեւմտեան Պերլինը, թէեւ ճոխ՝ նիւթին մշակոյ – թով, բայց տխուր տրամադրութիւն մը

նել, ուր զգալի է վաւերականութեան պակասը: Ազգ թուական կայ եւ ոչ ալ տե– ղի անուններ: Բացառաբար թիւ 9ը, « կեանք եւ մահ » խորագրով, պատմը – ւած՝ տիկին Հայկանուշ Մելքոնեանի կոմսէն: Նման գրութիւններէն կը զանա– զանուի անով որ կուտայ, ոչ միայն կեն– սագրական քանի մը տեղեկութիւններ, այլեւ Բաբերդի սովորութիւնները, բար– քերուն նկարագրութիւնը, պիւզանդական կեանքը եւ դաշտային աշխատանքները: Նման երկասիրութիւններուն առթիւ, նոյնիսկ աւելի ընդարձակ հատորներու մէջ, վաւերականութեան ծածանդրու – թիւնը փնտռուած չէ:

Տխուր եւ սրտամղիկ պատմութիւննե– րուն քով, սկսած ենք հերոսական դէպ, – ուածներ փնտռել, եւ անոնց կրկնութիւ– նը ներելի գտնել: Այդպիսի հատոր մըն է Սիրաք Սարհադեանի «Կեանքիս Ցուշե– րիս» (Թեհրան, 1961), որուն առաջին մասը անձնական եւ ընտանեկան յուշեր են, բայց երկրորդ մասը Վասպուրականի հերոսամարտը կը նկարագրէ, անձնու – թեան եւ հերոսական դրուագներով, պատմուած՝ ականատեսի վկայութեամբ, որուն մասին ժամանակին հարատած վը – կայութիւններ տուին մեզի Օննիկ Մխի – թարեան եւ ուրիշներ: Եթէ նոյնիսկ տա– րիներ անցնելէն ետքն ալ մեր վէրքը ա– ւելի կը խորանայ, սակայն եւ այնպէս Հայուն ինքնապաշտպանութեան ու դի – մադրութեան, եւ մէկ սիրտ մէկ հոգի գործունէութեան յատկանշական դէպ – ուածները մեզի սփոփանք կը պատճա – ռեն:

Աւելի համեստ էջ մըն է նաեւ Օթոն Յ. Հէքիմեանի «Սամսոնի Հայութեան տը – խուր բաժինը 1915 – 1918ի մեծ եղեռ – նէն» խորագրով հատորը (Փարիզ,1961), որ նմանօրինակ գրականութիւններուն վրայ կուգայ մասնաւոր գրուագ մը եւս աւելցնել:

1961 տարին կը յատկանշուի կ'ըսէինք քննադատական գրականութեամբ, քանի մը գործերով: Առաջինը անոնցմէ Բ. Թաշեանի «Ներածութիւն հայ գրական պատմութեան» աշխատութիւնն է, որ նա– խապէս երբեմն թերթոն «Ցուսաբեր»ի մէջ լոյս տեսաւ, յետոյ՝ երբեմն գիրք («Ցու– սաբեր» Գահիրէ, 1961):

ՄԿՐՏԻՉ ՊԱՐՍԱՄԵԱՆ

(Մնացեալը յաջորդով)

կը մատնէր քաղաքական տեսակէտէ: Օգոստոս 13 թուականէն ի վեր երկու մեթր բարձրութեամբ պատնէշներ, եւ կրկնակ ըլլալով փշաթելեր ալ քաղաքին փողոցներն ու հրապարակները կիսած են: Սահմանապահ զինուորներ կ'արգիլեն որեւէ անցք: Օտարականներ կրնան որոշ– եալ մէկ փողոցէ միայն այս կամ այն կողմ երթեւեկել, անցագիր ցոյց տալով, բայց առանց լուսանկարելու, զինուի կամ բնակութեան իրաւունքի: Նախապէս գոյութիւն ունեցող ութսուն սահմանա – յին անցքերը փակուած են, բացի 5 – 6 սահմանային երթեւեկի ճամբաներէ: Մի եւնոյն քաղաքի բնակիչ Գերմանացի – ներ չեն կրնար զիրար տեսնել, այլ մի – այն նամակով կրնան հաղորդակցիլ եւ ծրարներ ուղարկել: Այս «չնորհը» լեւ– լի օգտագործելով արեւմտեան մասի բը – նակիչները հարիւր հազարաւոր ծրարներ ղրկեցին դէպի արեւելեան Պերլին եւ ա – րեւելեան գօտի: Այս ծրարները ղրկելու սովորութիւնը թէեւ մէյ – մի կայ, այնպէս որ Նոյեմբերին կը սկսէին կապոցներ մեծ ու փոքր իրարու ղրկել, բայց այս տարի առանձնակի նշանակութիւն ստացաւ, ո– րովհետեւ ոչ թէ մէկ ծրար, այլ 4–5 ծը– րար ղրկողներ չատ եղած են միշտ իրենց ազգականին: Արեւելեան Գերմանիոյ վարչութիւնը որոշ չափ եւ սահման նը – չանակած է կարգ մը ուտելիքներու եւ ճաշակելիք բաներու, ինչպէս կարագ, քաքաօ, սուրճ, ծխիկ եւայլն: Բայց եւ նոր հաղուստեղէնի համար ,այլ մանա – ւանդ գործածուած հագնելիքները պէտք է հականեխուած ըլլան եւ յատուկ պաշ – տօնական հատատադիր միասին ղրուին:

Գերմանացիները, որ մանաւանդ Ս. Ծնունդի տօնին օրերուն իրենց ընտանե– կան անդամներուն քով երթալու եւ նա– խասիրաբար ճամբորդելու սովորութիւնը ունին, չատ խիտ կը դտնեն այս տար – ուան բաժանումը նոյն քաղաքի իրենց սիրելիներէն, այս օրերուն:

Սակայն արեւմտեան քաղաքամասը նո– րէն զարդարուած է տօնածառերով: Հրապարակներուն մէջտեղը եւ տուներէն ներս եղեւիններ էլեկտրական մոմաճեւ լոյսերով կը փայլին: Այս տարի հազար տօնածառեր ալ դէպի արեւելք նայող սահմաններուն վրայ բարձրադիր տըն – կուած են եւ ժամը 17էն հետը կը լուսա– վառեն գոնէ այս կերպով միասին տօնե – լու եւ աւետիս տալու՝ «եւ յերկիր խա –ղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն »: Անգլիացի սահմանապահ զինուորները նախկին հպարտ այլ այժմ կիսաւեր Ռայխսթագին ամէնէն բարձր տեղէն տա– կտյական տօնածառ մը կանդնած են, որ եթէ լուսաւորի, քաղաքին արեւելեան մասին հեռաւոր տեղերէն կարելի կ'ըլլայ տեսնել:

Մեծ վաճառատուներուն, չուկային եւ տուներուն մէջ ոգեւորութիւնը փոքր մա– նուկներուն եւ Կաղանդ Հայրիկին անու – նով կ'ընթանայ, բայց մեծերն ալ կ'օգ – տուին կերպով մը, հաճելի պահեր ան – ցընելու համար ընտանեկան չրջանակի մէջ, փոխադարձ նուէրներ տալով կամ դնելով սիրուն, զործնական եւ սէկտցու իրեղէններով ճոխացած ծրարներ Կաղան– դի ծառին տակ, երբ Դեկտեմբեր 24ի իթման իրիկունը հոգեւոր երգեր կ'եր – գուին եւ մամերու կամ ելեկտրական մո– մերու խորհրդաւոր չողերուն մէջ եւրեթ– ղեհմի ատաղը կը փայլի գոյնզգոյն խըն– ձորներով եւ արծաթ թղթիկներով, չո – քոլայէ ճաշակելիքներով բեռնաւորուած տօնածառին զատթիէն ...: Այս օրերուն չատեր «խօսքակապ» կ'ընեն իրենց ազա – գայ կեանքի ընկերոջ հետ, կը նչանուին կամ հարսնիք կ'որոչեն: Սուրբ Ծնունդը ընտանեկան հաւաքոյմի եւ ուրախու – թեան տօն մըն է Գերմանիոյ մէջ եւ ա – սոր գիւրութիւն կ'ընծայէն զպրոցական– ներու երկու չաբաթ տեւող արձակուրդը և զործաւորներու 4–5 օրուան դադա– րը: Փոքրերուն հետ մեծերն ալ կը զբա – ղին զարմանալի խաղալիկներով, որոնց համաչխարհային կեդրոնը Գերմանիոյ Նիւրընպերկ քաղաքն է: Կարդ մը ճար– տարապետական խաղալիկներ սպառած էին այս տարի Դեկտեմբերի 16ին իսկ, որովհետեւ տղոց հետաքրքրութիւնը ա – սոնց կը հակի մեծ մասով ներկայիս: Այս տօնը մայրերու եւ հայրերու չար – գանքին նուիրուած է միանգամայն չա – փահաներու կողմէ, բայց մայրերու յաղնութիւնը անգահման է, որովհետեւ ոչ մէկուն քանի մը օրուան սեղանի պատրաստութեան հոգը իրենց վրայ կ'ինկնայ, այլեւ զանազան կարկանդակնե– րու, մեղրով եւ համեմներով չինուած կրկնեփներու պատրաստութիւնը:

... եկեղեցիի բեմէն օրուան պատշաճ քարոզները եւ պաշտօնական քաղաքական ճառերը, մասնաւորաբար Աւետարանա – կան Դիբելիոս եպիսկոպոսի , ծիրանաւոր Բենդէի, քաղաքապետ Վիլլի Պրանդի , նախագահ Քենըտիին փոխանորդ Զօրա– վար Քլէյ, Արեւմտեան Բերլինի, Հանրապետու – թեան նախորդ նախագահ Հոյսի ,այլ մա– նաւանդ Ս. Պատիճ եւ հիւրաբար Պերլին այցելող ամերիկացի ծիրանաւոր Սիթել – մանի արտայայտութիւնները կը ձգտէին հանդարտեցնելու զերման ժողովուրդին յուզմունքը: Որովհետեւ կացութիւնը այս տարի աւելի անյոյս վիճակ մը կը տիրէ վերամիացման եւ քաղաքական ինքնորոշման տեսակէտէ քան որեւէ ա – տեն ասկէ առաջ: Ճառերը հաւատքի եւ խոհականութեան ձեւաւորումներով յոյ– սի նշոյլ մը դեռ կը տեսնէին մօտալուտ բանակցութիւններուն մէջ, որոնք տեղի պիտի ունենան Ուաշինկթընի եւ Մոսկու– այի պետական անձնաւորութեանց միջեւ Պերլինի խնդրին վերաբերմամբ, եւ կը մաղթէին որ քաղաքը բաժնող պատնէշ – ները վար առնուէին՝ ճամբայ բանալու համար խաղաղութեան, որուն կը ցան – կայ ամէն մարդ:

Պ. ՓՐՈՒՆՃԵԱՆ

«ՅԱՌԱՋ»Ի ԹԵՐԹՕՆԸ (128)

ԹԻԱՊԱՐՏԸ

(ՎԷՊ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿԵԱՆՔԷ)

ԳՐԵՑ

ԱՐՄԷՆ ՇԻՏԱՆԵԱՆ

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Կ'ուզէի յայտնել ձեզ թէ այս չարա – գոյն հրամանը կը կատարուի քանի մը թրքացած խամբանները խորհուրդով ո – րոնք անունով միայն հայ կոչուելու զրժ– բախտութիւնն ունեցած են ....

— Գիտենք... ընդհատեց Ներսէս Աբ– ծրունին՝ իր դառնութեամբ լեցուած նայուածքը սիրելի ընկերոջ վրայ յառե – լով, բնական է որ ներկայ սեւ օրերու մէջ «մեր օձերը» դլուխնին պիտի վեր – ցունեն...: Այնօրի գայլերը միշտ ամպա– մած եղանակը փնտռելու կ'աշխատին: Զգաւինք այդ մասին... որովհետեւ ա – մոնցմէ ուրիշ բան չէինք կրնար սպասել:

— Ո՛հ, նոյնիսկ... ընդհատեց Մկրտիչ Աւետիսեան ղողղալով բայց չկրցաւ շարունակել:

— Ի՞նչ կայ... հարցուց Ներսէս Աբ – ծրունին, որ կռահեց Մկրտիչ Աւետիս – եանի այլայլութիւնը:

— Դաւադրութիւն մը կայ, պատաս – խանեց Մկրտիչ Աւետիսեան:

Դաւադրութիւն մը ...

— Այո:

— Որո՞նց դէմ:

— Ձեզի դէմ:

— Ի՞նչպէս ...

— Կառավարութիւնը կը փնտռէ ձեզ... յայտնի բան է որ մատնուած էք:

— Մատնուա՞ծ ենք:

— Ճիշդ է: Ոստիկանութիւնը կարեւոր ապացոյցներ ունի ձեր մասին եւ դիտէ թէ քաղաքին մէջ կը գտնուիք:Այդ պատ– ճառաւ, մեծամեծ պարզեւները խոստաց – ուած են ամէն անոնց որ տեղեկութիւն մը տայ ...:

— Ուսկի՞ց իմանաք:

— Մեր հաւատարիմ ընկերներէն մին եկաւ ինծի այս առաւ ու խնդրեց որ ան– միջապէս հաղորդեմ ձեզի: Սպանութեան մեծ դերը քահանայի մը կը վերագրուի:

— Քահանա՞յի մը:

— Այո:

— Ո՞վ է:

— Տէր Կոմիտաս:

— Տէր Կոմիտա՞ս ... անկարելի է:

Այդ քահանան իր բարի դէրն ունեցած է մեր գործունէութեան մէջ, գուցէ վըր – պարտութիւն մը ըլլայ ...:

— Ո՛հ, չէ... ըսողը հաստատ աղբիւրէ մը տեղեկացած էր եւ դիտէր թէ Տէր Կոմիտաս գաղտնի կերպով Վալի փաշա– յին ապարանքը մտած է ...:

— Կեցիր, սիրելի Աւետիսեանս, միայն այդ պատճառո՞վ մատնութեան սեւ մը – րուրը քսուած է Տէր Կոմիտասի ճակտին: Եթէ ոչ ուրիչ ապացոյցներ կան ...:

— Ապացոյցներ կան ...:

— Ցայտնեցէք կը խնդրեմ:

— Նախ՝ երկու օր առաջ այդ քահա – նան Աբարուց Թաղին մէջ բնակող մեր ընկերներէն մէկուն տունը կը գտնուի եւ տնտեղ անուղղակի կերպով տարցաքըն – նութեան տակ կ'առնէ ձեր գործունէու – թիւնն ու նպատակը: Ցետոյ կը յայտնէ ձեզի հետ տեսակցութիւն ընելու փափա– քը:

— Աղէկ ... է՞տքը:

— Երկրորդ օրը յանկարծ մեր ընկերը կը ձերբակալուի ու անորմէ կը պահան– ջուի ձեր ուր գտնուիլը:

— Դեռ բանտարկուա՞ծ է:

— Այո... այսօր Տէր Կոմիտաս տե – սակցութեան գացած է: Առանց ամչնա – լու, պահանջած է որ դիտցած ճշմար – տութիւնը չուրանայ, եթէ ոչ ծանր դատապարտութիւն մը պիտի կրէ ...:

Ներսէս Արծրունին, աք խոր լռութեան մը մէջ ինկած մտիկ կ'ընէր Մկրտիչ Աւ– ետիսեանի յայտնածներուն, պահ մը Վանականին երեսը նայեցաւ, անոր որո– շակի այլայլութիւնը դիտեց ու ճնշուած արտայայտութեամբ մը հարցուց:

— Ի՞նչ կը մտածէք, Վանական: կը յուսա՞ք թէ Տէր Կոմիտաս մարդկային բարի կերպարանքով հրէշ մը ըլլայ... կը յուսա՞ք թէ տարիներով ազգին ցաւերը լացող այդ եկեղեցականը սրտին մէջ սեւ օձ մը սնուցած է եւ այսօր կը դաւաճա– նէը սկզբունքին ու իր պաշտած գաղա – փարին դէմ:

Վանական , որ իր հոգւոյն ամէնէն մօ– տիկ եկեղեցականը նկատած էր Տէր Կո – միտասը, մէկէն ի մէկ չկրցաւ որոշում մը տալ. հետեւաբար պատասխանելէ ա – ռաջ, սակայն չարժում մը ըրաւ, եղած զարհուրելի ամբաստանութեան ծանրու – թիւնը նկատի առաւ ու յետոյ՝ մրմնջեց:

— Ոչ գիտէ... անանկ սեւ օրերու հա– ասած ենք որ՝ դժբախտաբար մեր ճանչ – ցած հրեշտակը սատանայ մը դարձած է: Իրաւ է որ Տէր Կոմիտաս հայրենասէր ե– կեղեցական մըն է... սակայն, չենք կըր– նար պնդել թէ փոխուած չէ... չենք կր– նար հաստատապէս ըսել թէ բարութիւնը զարչելի նենգութեան մը տեղի տուած չէ անոր բնութեանը մէջ, ճառագայթի՝ մը պէս՝ որ տեղի կուտայ մռայլ խաւարի մը:

(Շար.)

ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ ԱՌԹԻՒ « ՅԱՌԱՋ » ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

Ընկեր Արչէն Փափազեան մէկ տարե – կան Յառաջ կը նուիրէ ընկեր Վարուժան Աթթարեանի :

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Դպրոցասէր Տիկնանց վարժարանի Ծը– նողաց Միութիւնը շնորհակալութեամբ ստացած է Տիկին Պաղըրճեանէ յիսուն Ն. Ֆ. ապահովութեան սանդուխի Փոն – տին՝ իր ամուսնոյն՝ Արչակ Պաղըրճեա – նի մահուան քառասունքին առթիւ :

ՆՈՒԷՐՆԵՐ

Նոր տարուան առթիւ Հայ կարմիր Ա– չի օգափոխութեան կայանի ընդարձակ– ման ի նպաստ կը նուիրեն :—

Տիկին Մուրատեան եւ զաւակը, Պ. Տէր Դէորգեան , Պ. Տ. Նշանեան (Մուլէյն) , Պ. Ժ. Սաղըրեան (Ամիէն) 50ական Ն.Ֆ.: Տիկին Մաքրուհի Ապուլեան (Մըլէօն) , Տիկին Վ. Նուպար եւ Պ. Ճանումեան 30ական Ն.Ֆ.: Տօքթ. Օտապաշեան (Շամպլի), Տիկին Ա. Նուպար, Տիկին Տօնապետեան, Տիկին Մ. Շապըրի 20ա – կան Ն. Ֆ.: Տիկին Թագուհի Մեպուր – եան (Վիլլմօմպլ), Տէր եւ Տիկին Մու – թաֆեան (Գլամառ), Սր. Շամտանճեան, Պ. Մինասեան 10ական Ն. Ֆ.:

Հաճեան ընտանիք (Տրակինեան), Այրի Տիկին Վ. Ալանճեան (Սէն Շամոն), Տէր եւ Տիկին Տ. Ադամեան (Վալանս), 50ա – կան Ն. Ֆ.: Տիկին Ճէվիսեան (Անթիպ), Պ. Յակոբեան (Նիս), 20ական Ն. Ֆ. : Պ. Ոսկանեան (Վիլլմօմպլ) , Պ. Աքաչ– եան 15ական Ն. Ֆ.: Օր. Մ. Պապաեան , Պ. Ա. Քիւրէղեան (Ալֆորվիլ), Պ. Մեն– ծիկեան (Մարսէյլ), Տէր եւ Տիկին Կէ – տիկեան (Պոռտօ), Տէր եւ Տիկին Տօնէլ– եան (Պ. Քոլոմպ), Տէր եւ Տիկին Հէքիմ– եան, Պ. Ժ. Տիրաց, Պ. Ախուշեան, Պ. Մէրճիքեան տասնական Ն. Ֆ.:

ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ

Վերջին չաբաթներու ընթացքին բազ – մաթիւ բաժանորդներ, Փարիզէն եւ գա – ւառէն կը դժգոհին թէ չատ անկանոն եւ երբեմն ալ բնաւ չեն ստանար Յառաջը :

Անգամ մը եւս կը վստահեցնենք մեր բաժանորդները, թէ Յառաջը ամէն օր , նոյն կանոնաւորութեամբ (ժամը 16էն 16·30ին) կը յանձնուի Ցղտ թաղամասի կեդրոնական Թղթատարութեան որ կը ղրաղի առաքումով : Մեր բազմաթիւ բո– ղոքներուն պատասխանուած է թէ անկա– նոնութեան պատասխանատուները ցրտադ Թղթատարներն են եւ ոչ այստեղի առա– քումի կեդրոնը :

Շատ կը ցաւինք որ հակառակ մեր ջան– քերուն կարելի չէ եղած առաջքն առնել անկանոնութեան մը որ աւելի չեշտուե – ցաւ, վերջերս տօնական օրերու առթիւ :

Կը թելադրենք մեր բաժանորդներուն դիմել իրենց չրջանի Թղթատարին, իսկ Յառաջի վարչութեան դրելու պարագա – յին, դրել փրանսերէն, որպէսզի բողոք – ներուն բնագիրները ներկայացնենք պատկան դրասենեակին :

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Imprimerie Spéciale du journal « Haratch »
32, Rue de Trévise, PARIS (9e)

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՕՐԸ

Ֆ. Կ. Պոլսի Կրօնական մասնաճիւղը կը տօնէ, Մանուկներու Օրը, Կիրակի, 14 Յունուար, կէսօրէ վերջ ժամը 3ին, Սալ Սէն Լուի (Բիւ Ժէ) :

Խմբերգ, տրամախօսութիւն, մենախօ– սութիւն, արտասանութիւն եւ մանկա – կան անակնկալներ :

Ըստ աւանդութեան՝ ԿԱՂԱՆԴ ՊԱՊԱՆ պիտի բաժնէ մրգեղէնները, առանց բա – ցառութեան բոլոր սրահի ներկայ տղա – յոց :

Կը խնդրուի Կրօնական Վարչութիւնը նաժիշտ եւ Ֆիլգօտի բոլոր հայրենակիցնե – րէն իրենց ներկայութեամբ քաջալերել դպրոցին մանուկները :

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Հ. Ց. Դ. Նոր Սերունդի Իսիի Խանա – սոր խումբի գեղարուեստական եւ պա – րանցիկ երեկոյթը Իսիի մէջ, փետր·10ին :

ՅԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հ. Բ. Ը. Միութեան Փարիզի Երիտ· Մշակութային ակումբը կը ծանուցանէ թէ իր խնդրանքին վրայ Ճարտարապետ Եդուարդ Իւթիւճեան, գաստիօս Փարի– զի Գեղարուեստից Բարձր· Վարժարանին Ճարտարապետական ճիւղին, յառաջիկայ երեքշաբթիէ 9 Յունուար , պիտի բանա– խօսի Ռախմանինօֆի երաժշտանոցի սը – րահին մէջ, 126 Ավրընիւ տը Նիւ Եորք , Փարիզ (16), մէթրօ Ալմա Մարսօ, երե– կոյեան ժամը 9ին : Նիւթ ունենալով՝

«Քրիստոնէութեան սրբավայրերը եւ Ս. Գերեզմանին վերակառուցումը Երու– սաղէմի մէջ» :

Այս բանախօսութեան ընթացքին ե· Իւթիւճեան մոգական լապտերով պիտի ցուցադրէ, յատուկ պաշտօնով իր վեր – ջին ճամբորդութեան ընթացքին իր կող– մէ առնուած գունաւոր լուսանկարները :

Բոլոր ազգակիցները եւ ի մասնաւորի երիտասարդութիւնը սիրով կը հրաւիր – ուին ներկայ ըլլալու այս հետաքրքրական բանախօսութեան, ծանօթանալու համար այն բոլոր ձիգերուն, զորս մեր երէց սե– րունդները ըրած են Սուրբ Տեղեաց պահ– պանութեան, ինչպէս նաեւ հայ ժողո – վուրդին բերած ծառայութեան, քրիստո– նէական կրօնքին տարածման համար :

ԼՈՒՅՍ ՏԵՍԱԻ

ՅՈՒՇԱՄԱՏԵԱՆ ԿՈՒՏԻՆԱՀԱՅԵՐՈՒ

Պատկերազարդ, հեղինակ՝ Արշակ Ալ– պօյաճեան, Պէյրութ 1961, էջ 230 :

Գինն՝ 4·50 տոլար

Լաթակազմ 5·50 տոլար

Սոյն հատորին լրացուցիչ մասը՝

Ա.— Կուտինահայ ժամանակագրու – թիւն· Հրատարակիչ՝ Համբարձումջօրթ– եան (Առնակ) :

Բ. – Կաթողիկէ Հայերը Կուտինայի (Փիւթահիա)· պատկերազարդ· աչխա – տասիրող՝ Հ. Իգնատիոս Աքեան, Վիէն – նա, 1960, էջք 164+109= 273:

Գինն՝ մէկ տոլար

Առանձինն՝ Բ. կաթողիկէ Հայերը · էջ 109: Գինն՝ 0·50 տոլար

Դիմել՝

P. IGNACE AKIAN
Méchitharistengasse 4
VIENNE (Autriche)

VICTOR GARDON

LE CHEVALIER
à
L'EMERAUDE

« Une très belle épopée qui a pour cadre l'Arménie légendaire »
(*Réalités*).

« Les mots sont brefs, justes, légers, mais portés par un souffle d'épopée ».
RENÉ MASSON (*Nouveau Candide*).

« Un livre plein d'entrain, de rebondissements qui émeuvent... il grouille de personnages chaleureux ».
ALAIN BOSQUET (*Combat*).

« Le héros de cette épopée est un parent de Lancelot et de Perceval ».
(*Feuille d'Avis de Neuchâtel*).

« Une fois de plus Victor Gardon affirme un talent sans défaut ».
(*Libre Belgique*).

STOCK

Կ'ՈՒԶՈՒԻ ՍՏԻՊՈՂԱԲԱՐ

Հանդերձապահուհի մը Ս. Մուրատեան վարժարանին համար : Դիմել տեղւոյն վրայ :

26, Rue Troyon, SEVRES (S. et O.)
Métro : Pont de Sèvres
Tél. : OBS. 18-28

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ

Ծննդեան 1600ամեակը համազգային շուրով կը տօնուի Մարսէյլի մէջ :

Փետրուար 18ին, կիրակի կէսօրէ ետք, Քազա տ'Իթալիայի չքեղ թատրոնին մէջ :

×

Լիմն·— « Մանուկներու Օր»ը տեղի կ'ունենայ 28 Յունուար, կիրակի, Բիւ տիւ Նաւառի սրահին մէջ :

Հ. Յ. Դ.

ՓԱՐԻԶ·— Հ. Ց. Դ. Շրջ· կոմիտէն ներկայացուցչական ժողովի կը հրաւիրէ Փարիզի եւ չրջանի մարմիններու ներկա– յացուցիչները այս Շաբաթ երեկոյ ժամը 8·30ին, Մշակոյթի Տան սրահին մէջ : Կարեւոր օրակարգ : Շրջ· ժողովի օրա – կարգի քննութիւն :

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՑՑ

Հ. Ց. Դ. Մարսէյլի Շրջ· Կոմիտէի հը– րաւիրած ընկերական ժողովներու ·—

Հ. Ց. Դ. Մարսէյլի Շրջ· կոմիտէն՝ ստիպողաբար ընկերական ընդհ· ժողովի կը հրաւիրէ հետեւեալ ենթակոմիտէնե – րու եւ խումբերու անդամ ընկեր – ընկե– րուհիները :

ՎՌԱՄԵԱՆ ենթակոմիտէ՝ 7 Յունուար կիրակի կէսօրէ ետք ժամը 15ին :

ԱԿՆՈՒՆԻ ենթակոմիտէ 13 Յունուար , Շաբաթ երեկոյ ժամը 21ին :

ՎԱՐՈՒԺԱՆ խումբ՝ 14 Յունուար, կի– րակի կէսօրէ ետք ժամը 15ին :

ՀԱՄԱԶԱՍՊ խումբ՝ 13 Յունուար , Շաբաթ երեկոյ, ժամը 21ին :

ԹԱՓՈՒԼ խումբ՝ 14 Յունուար, կէս – օրէ ետք ժամը 15ին :

ԸՆԿԵՐ ԿԱՐՕ խումբ՝ 14 Յունուար , կիրակի կէսօրէ ետք ժամը 15ին :

ՀԱՑԱՍՏԱՆ խումբ՝ 13 Յունուար , Շաբաթ, ժամը 21ին :

ՎԱՐԱՆԴԵԱՆ խումբ՝ 15 Յունուար , երկուշաբթի , ժամը 21ին :

ԳԷՈՐԳ ՉԱՎՈՒՇ խումբ՝ 20 Յունուար Շաբաթ , ժամը 21ին :

ՄՈՒՐԱՏ խումբ՝ 21 Յունուար, կիրա– կի կէսօրէ ետք, ժամը 15ին :

ՆԻԿՈԼ ԴՈՒՄԱՆ խումբ՝ 21 Յունուար, կիրակի կէսօրէ ետք , ժամը 15ին :

ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ խումբ՝ 20 Յունուար , Շաբաթ, ժամը 21ին :

Սոյն ժողովները տեղի պիտի ունենան իրենց սովորական հաւաքատեղիները : Ներկայ կարեւոր օրակարգ : Բոլոր ընկեր – ընկերուհիներու ներկայութիւնը պարտա– տորիչ է : Վարչութիւնները նախապէս պէտք է բոլոր ընկերներուն տեղեկացնեն ժողովներու վայրի եւ թուականի մասին : Ներկայ պիտի ըլլան Շրջ· Կոմիտէի ներ – կայացուցիչները :

ԼՈՒՅՍ ՏԵՍԱԻ

1962 ԳՈՅԱՄԱՐՏ ՕՐԱՑՈՑՑ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Հ· Ց· Դ· ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻ, ՄԱՐՍԷՅԼԻ ՇՐՋԱՆԻ :

Ճոխ բովանդակութեամբ եւ ընտիր նկարներով :

ՓԱՐԻԶԻ համար դիմել Նոր Սերունդի կեդր· վարչութեան, Հրանտ – Սա – մուէլ ղրատունը , եւ «Յառաջ»ի խմբագրատունը :

ՄԱՐՍԷՅԼ

PHOTO - REX, 2 Rue Bernard du Bois

ՏՕՆԱԿԱՆ ՕՐԵՐՈՒ ԼԱՒԱԳՈՅՆ ՆՈՒԷՐԸ

ՍԻՓԱՆ – ԿՈՄԻՏԱՍԻ՝ նոր սալը

"ՀԱՑ ԿՐՕՆԱԿԱՆ ԵՐԳԵՐ"

Chants Religieux Arméniens

կը դեկավարէ Կ· ԱՓՐԻԿԵԱՆ

Փնտռել՝ երգչախումբի վարչութեան անդամներուն, բարեկամներուն եւ հե– տեւեալ հասցէներուն մօտ :

Restaurant ARTHUR
5, Rue Augustin Thierry
Place des Fêtes. Paris 19e

Librairie H. SAMUEL,
51, Rue Monsieur-le-Prince, PARIS

ՆՈՐ ՏԱՐԻԻ ԹԱՆԿԱԳԻՆ ՆՈՒԷՐ ՄԸ

ՀԱՅԿԱԿԱՆ
ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹԻՒՆ

... « *Հայերս հպարտութեամբ կրնանք դիտել եւ ուրիշին ցոյց տալ այս հա– տորը, արուեստասէր օտարները եւս հիացումով պիտի Թղթատեն հայ հան – ճարին գովքը հիւսող՝ մանրանկարչութեան այս մեծ հայաշունչ մատեանը ..* » :

ՀԱՑԱՍՏԱՆ ԼՈՒՍԱՆԿԱՐՈՒԱԾ՝ ՓԱՐԻԶ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ

Աչխոյժ եւ գունաւոր նկարներով

ՖՐԱՆՍԱԿԱՆ ՇՔԵՂ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԸ

Մեծադիր փառաւոր հատոր մը, 200 էջ, 100 արտատպում :

Գինն 120 Ն· Ֆ·

Դ Ի Մ Ե Լ

« HARATCH », 32 Rue de Trévise, PARIS (IX·)

MORY et Cie

ՆՈՒԷՐՆԵՐՈՒ ԵՒ ԾՐԱՐՆԵՐՈՒ ԱՌԱՔՈՒՄ ԴԷՊԻ ԽՈՐՀՐԴ· ՄԻՈՒԹԻՒՆ :

Գնեցէք զանոնք ձեր ուզած տեղը եւ առաքումը մեզի վստահեցէք : Նուազա – գոյն ծախքերով կը ղրկենք խորհրդ· Միութիւն :

Դիմեցէք մեր նոր գիները գիտնալու համար·—

10, Rue St. Vincent de Paul, Paris 10·

(PRÈS DE LA GARE DU NORD)

Téléphone : TRU. 27-70

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

Le PREMIER QUOTIDIEN ARMENIEN en EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction et Administration : 32, Rue de Trévise - PARIS-9e

Fondé en 1925 — Téléph. : PRO. 86 - 60
R. C. Seine 57 A 2731 — C. C. P. Paris 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա՝ Տար. 50 Ն. Ֆ. — Վեցամսեայ՝ 27 Ն. Ֆ.
Արտասահման՝ Տար. 60 Ն. Ֆ. — Հատը՝ 0·25 Ն. Ֆ.

ԵՐԵՔՇԱԲԹԻ 9 ՅՈՒՆՈՒԱՐ
MARDI 9 JANVIER 1962

38ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 9299 — 38e ANNÉE — Fondateur : SCHAVARCH MISSAKIAN — ՆՈՐ ՇՐՋԱՆ, 18ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 5100

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

ՄԵՐՁԱԻՈՐ ԱՐԵՒԵԼՔԸ 1961ԻՆ

Անցնող տարուան ընթացքին կարեւոր դէպքերու թատր դարձան Մերձաւոր Արեւելքի երկիրները, մասնաւորաբար Իրաք, Քուէյթ, Եգիպտոս, Սուրիա եւ Լիբանան, առանց հաշուելու Թուրքիան :

Արաբական Լիկան, որուն գերը կը մեծնայ տարուէ տարի, Յունուարի վերջերը պաղտատի մէջ ունեցաւ արտակարգ նստաշրջան մը, որուն մասնակցեցաւ նաեւ Թունուզ, երկու տարի քէն պահելէ վերջ :

Օրակարգի վրայ էր Ալժերիոյ հարցը, որուն քննութեան առեն ներկայ էին Ա.Հ.Ա.Կի պատուիրակներն ալ :

Պաղեստինի արաբ գաղթականներն ու Իսրայէլ, Օմանի եւ Մասքարայի վէճը, Մաւրիտանիոյ խնդիրը եւ այլ հարցեր եւս մաս կը կազմէին օրակարգին :

Սեպտեմբեր 16 – 21 Ազեքսանդրիոյ մէջ գումարուեցաւ արաբական քարիւղի երրորդ համաժողովը, որ վաւերացուց Ա.Հ.Ա.Կի պահանջները Սահարայի վրայ :

Ապրիլին Անգարայի մէջ տեղի ունեցաւ Սէնթոյի ժողովը : Նախկին «Պաղտատի Ուխտ»ն է այս կազմակերպութիւնը, որ կոչուած է Թումբ կանգնելու բոլշեւիկեան աշխարհակալութեան առջեւ, արեւելքի մէջ : Անոր անդամներն են Թուրքիա, Իրան, Փաքիստան եւ Անգլիա, հովանաւորութեամբ Մ. Նահանգներու : 1958 Յուլիս 14ի յեղափոխութենէն ետք Իրաք քաշուած էր անկէ, պատճառ դառնալով անուան փոփոխութեան :

Տարուան կէսին փորձաքար մը, աւելի ճիշդը փորձանք մը եղաւ Քուէյթի խնդիրը Արաբական Լիկային համար :

Յուլիս մկրին Անգլիա անկախութիւն շնորհեց իր թեւարկուութեան ենթակայ այս մանրանկար իշխանապետութեան, որ Պարսից Ծոցին վրայ աշխարհի ամէնէն հարուստ քարիւղի հանքերը կը պարունակէ :

Արիթէն օգտուելով, զօրավար Քասըմ փորձեց իրաքի կցել սահմանակից այս հողամասը, զոր նկատելով անոր բաժան մասը : Օսմանեան կայսրութեան օրով, Քուէյթ կապուած է եղեր Պասրայի կուսակալութեան : Հետեւաբա՞ր ...

Արաբական Լիկան կանգնեցաւ Անգլիոյ կողքին : Էլիզապէթ Բ. թագուհիին մարտանաւերն ու զինուորները փութացին պաշտպանել նորագոյտ երկիրը : Վտանգն անցնելէ վերջ, Լիկայի կարգադրութեամբ արաբ զինուորներ յաջորդեցին Անգլիացիներուն, Քուէյթի անկախութիւնը պահպանելու համար :

Հարցը չէ փակուած դեռ : Հնդկաստանի կողմէ Կոայի զրաւումը՝ ՄԱԿի մեղսակցութեամբ՝ նոր յոյսեր կը ներշնչէ Զօր. Քասըմի, որուն ուժ կուտայ ներ – կայիս նախագահ Նասը :

Տարուան ընթացքին Իրաքի մէջ ղլուխ բարձրացուցին Քիւրտերը, ղեկավարութեամբ Շէյխ Մուսթաֆա Պարզանիի : Մարտին Քէրքիւքի մէջ արիւնալի կռիւներ տեղի ունեցան Քիւրտերու եւ Թիւրքմէններու միջեւ : Իսկ աշնան հիւսիսային նահանգները ապստամբեցան Պաղտատի իշխանութեան դէմ, առանց ղրական արդիւնքի մը յանդելու : Ներկայիս կռիւները վերսկսած են, հանդարտութեան չընջանկ մը վերջ :

Սակայն 1961ի ամէնէն կարեւոր դէպքն էր Արաբական Միացեալ Հանրապետութեան կազմալուծումը :

Դամասկոսի մէջ Սեպտեմբեր 28ին ծագած զինուորական անարիւն յեղափոխութիւն մը վերահաստատեց Սուրիոյ անկախութիւնը : Նախագահ Նասը հաւանութիւն տուաւ այս անխուսափելի անցման, չուզելով պատճառ դառնալ եղբայրասպան կռիւի : Դեկտեմբերին նախագահը վերջ տուաւ նաեւ Եմէնի հետ կնքուած դաշնակցութեան :

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՖՐԱՆՔԵՒԱՓՐԻԿԵԱՆ ՀՈԳԵՐ

«ՆԻՒ ԵՈՐՔ ՀԵՐԸԼԼՏ» ՇԱՏ ՅՈՒՌԵՏԵՍ Է

Մինչ ապահովութեան միջոցները կը բազմապատկուին Ֆրանսայի եւ Ալժերիոյ մէջ, «Նիւ Եորք Հերըլտ Թրիպիւնը» շատ յուռեթես խմբագրական մը գրած է ուր կը չեչտէ .— « Ալժերիոյ ինչպէս Ֆրանսայի մէջ կը զգացուի որ նոր բան մը կը պատրաստուի որ հարկ եղածին չափ ուժգին պիտի ըլլայ որպէսզի ցարդ կատարուած կռիւները աննշան նախաբան – ներ նկատուին : Այս նոր ընդդիմութիւնը Ֆրանսայի պաշտօնական թշնամի՝ Ալժ. Ազատ. Ճակատի հետ պիտի չըլլայ այլ՝ այն Ֆրանսացիներուն միջեւ որոնք կը պաշտպանեն անկախ Ալժերիոյ մը կոլեան տեսակէտը, եւ անոնք որ վճռած են Ալժերիան միշտ Եւրոպացիներու կողմէ ղեկավարուած տեսնել : Ասոր կուսախնճորը Ֆրանսական հանրապետութիւնը ինք է, որովհետեւ անոնք որ կ'ընդդիմանան որ կոլի ալժերական քաղաքականութեան իր անկումին կը ձգտին : Ազատական եւ մարդկային լուծումի մը բոլոր յոյսերը կը չարունակեն որ կոլի կոթնիլ, բայց ան այլեւս չի վայելեր Ֆրանսացիներուն միաձայն օժանդակութիւնը, հակառակ անոր որ իր ալժերական քաղաքականութիւնը չէ այլ՝ կառավարելու իր ձեւը, ընդհանրապէս որ կը բաժնէ : Եթէ Հանրապետութիւնը վերապրի ալժերական ողբերգութեան, չնորհիւ իրեն պիտի ըլլայ : Բայց դժբախտաբար, ներկայիս ե – ղած հարցը այն է Թոյլ պիտի տրուի՞ իրեն որ ինքզինքին վերապրի» :

Այս է ոչ միայն Ամերիկացիներուն այլեւ քաղաքական դէտերուն կարծիքը, որոնք չատ մտահոգ են Ֆրանսայի կացութեան ի տես :

Պելժիացիները կը հաստատեն սակայն Թէ Սալան Պրիւսէլ չի գտնուիր : Եթէ պատահէր որ Սալան Պելժիա գտնուէր, պարզապէս ուրիշ սահմանագլուխ մը պիտի առաջնորդուէր որովհետեւ Պելժիա քաղաքական ապաստանեալի հանդամանքը չի ճանչնար : Պրիւսէլէն Թերթ մը, սակայն, կը գրէր Թէ Սալան չփոխուիլը ունեցած է՝ փիէր Թոլիի հետ որուն անունը յաճախ յիշուած է Օրթիզի առթիւ :

Ֆրանսայի մէջ, գլխաւորաբար Փարիզի Գաղտնի Բանակի դէմ ձեռք առնուած միջոցները կը խստանան : Համայնավարներու ցոյցը սակայն կարելի է ձախողած նկատել : Ծանօթ է որ ցոյցը արգիլուած էր , բայց կուսակցութիւնը ետ չէր առած իր կոչը եւ չորս – հինգ հազար «ուղղափառներ » հաւաքուած էին Փլաս Քոսութ (Շաթօտէօն) եւ առանց միջադէպի տողանցեցին փողոցէ փողոց ծանօթ յանկերգներով՝ «Խաղաղութիւն Ալժերիոյ մէջ», «Գաղտնի Բանակ՝ ոճրագործ», «Ֆաշիզմը պիտի չանցնի » եւն. :

Յուցարարներու Թիւը , 50·000ի կը հասնի , անշուշտ , մինչեւ Իւմանիթէի սիւնակները : Միւս կողմէ ընկերվարական ինքնաւար կուսակցութիւնը զոր կը գլխաւորէ Է. Տէփրէօ զեկոյց մը հրատարակեց ուր կ'ըսէ Թէ պատուիրակութիւն մը ղրկած է համայնավարներու կեդրոնը համախոհութեան իբրեւ փաստ : Այս առթիւ չէշտած է նաեւ Թէ «ժամը աւելի քան երբեք միութեան ժամն է բոլոր դեմոկրատներու ֆաշիզմի դէմ» :

× Րիւ Պոնափարթ, փան – Փօլ Սարթրի յարկաբաժինին առջեւ փլասթիք ռումբ մը պայթեցաւ որ նիւթական մեծ վնասներ պատճառեց եւ անզգրծածելի դարձուց սանդուխը չորրորդ յարկէն դէպի վեցերորդ :

× Մարսէլ Փօլ (համայնավար նախկին նախարար) ապառնալիքի նամակ ըստացած է Գաղտնի Բանակէն ու կը յայտնուի իբրեն Թէ որոշուած է զինքը սպանել : Լիլի եւ Մարսէյլի համայնավար կեդրոնատեղիներն ալ փլասթիք ռումբերու արժանացան :

× Մարոքի մէջ «Ա.Հ.Ա.Կ»ը ժողով դուրս մարած է քանի օր է : Հաւանական կը նկատուի որ իր կեդրոնատեղին Թունուզէն Ռապաթ փոխադրուի :

ԸՍՈՂԸ ՄԵՆՔ ԶԵՆՔ

"ՖԻԿԱՌՕ" ԻՐ... ԵՒ ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ

Մեր բաժանորդներուն, որոնք նեցուկներն ու հաւատարիմ բարեկամներն են մեր Թերթին, կը բաղձայինք ապացոյցը տալ մեր աշխատասիրութեան եւ յարատեւ հոգածութեան : Մե՛ղք որ դիւրին չէ գործնապէս կատարել մեր այդ Թանկագին բաղձանքը :

Թերթին օրը օրին ցրուումի յապաղումին եւ ընդհատումներուն համար դառնները երթալով կը բազմանան :

Մեր աշխատանքը (տպագրութեան ժամ, հասցէագրութիւն եւ առաքում) այնպէս կազմակերպուած է որ «Ֆիկառօ» իր բաժանորդներուն ձեռքը հասնի՝ առօրեայ Թղթատարի առաջին ժամու ցրուումով : Դժբախտաբար չատ լաւ գիտենք որ այդ ճշդապահութիւնը միշտ չի գործադրուիր : Ո՞վ է յանցաւորը : Վերապրելի է կարգ մը Թղթատարական ուղեւորումի սպասարկութեանց անպարտաճանաչութեան, հոս հոն կատարուող մասնակի գործադուլներուն որոնք կը խանգարեն Թղթատարական կանոնաւորութիւնը, որոչ միջանկեալ արգելքներու որոնք երբեմն յարուցուած են չարամտութեամբ :

Այս անկանոնութեան դէմ մենք անդադար կը պայքարինք յամառօրէն, եւ ստէպ այնպիսի ուժգնութեամբ մը զոր չեն կրահեր մեր բաժանորդները եւ որու մասին անոնք պէտք չէ կասկածին : Կ'ուզենք պարզապէս որ անոնք գիտնան այս կէտը, չտարակուսին Թէ մեր կողմէ ամէն ջանք ի գործ կը դրուի եւ Թէ կը զգանք իրենց հասած ակամայ վնասը :

Առ այժմ մեզի կը մնայ՝ մեր բաժանորդներուն համբերութեան եւ բարեացակամ վստահութեան ապաւինիլ, միաժամանակ յուսալով որ կը դադրին այս անկանոն օրերը եւ մեր կրած վնասները :

Այսպէս կը գրէ Փարիզի «Ֆիկառօ» օրաթերթը, Յունուար 6–7ի իր թիւին առաջին էջին վրայ, հաստատելով որ միայն «Յառաջ»ի բաժանորդները չեն այս պարբերական անկանոնութեանց զոհերը :

ՊՈԼՍՈՅ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ԳԱՇԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ

Ինչպէս գրած էինք, անցեալ Զորեքշաբթի, 4 Յունուար, տեղի ունեցաւ Պոլսոյ Հայոց Պատրիարքին գահակալութեան եւ ասպէտ ընտրութեան հանդիսութիւնը Մայր Եկեղեցւոյ մէջ :

Հանդիսութեան ներկայ էին Պոլսոյ կուսակալը եւ տիկինը, Պոլսոյ զինուորական կառավարիչը, երեսփոխանները : Դիւանագիտական մարմինէն՝ Փորթուգալի, Նորվեկիոյ, Հոլանտայի, Մորմ. Մխութեան, Անգլիոյ, Ռումանիոյ, Ամերիկայի, Գուլկարիոյ, Իսլանտայի, Իրայէլի, Գերմանիոյ հիւպատոսները : Հոգեւորականներէն Յունաց Տիեզերական Պատրիարքարանի վեց ներկայացուցիչները Գատըգիւղի մետրոպոլիտին հետ, Հրէից բարձրագոյնը, Պոլսոյ միւֆթին, պապական նուիրակին փոխանորդը, Հայ կաթողիկէ եկեղեցւոյ վիճակաւոր Քէրէսեան արք. , Ասորիներու եպիսկոպոսը, Անկլիքան եկեղեցւոյ ներկայացուցիչը :

Արտասահմանէն Պաղ Արք. Ալտպահեան, Սուրէն Արք. Քէմհաճեան, Պսակ Եպիսկոպոս եւ աշխարհական հիւրեր :

Պատրիարքական փոխանորդին ձեռամբ սան յանձնուելէ ետք, Շնորհք Արք. արտասանեց իր շնորհակալութեան խօսքը, յետոյ կատարուեցան պաշտօնական շնորհաւորութիւնները :

Պատրիարքը իր պատգամին մէջ յայտնեց Թէ «երջանիկ եւ բախտաւոր պիտի զգայ՝ եթէ կարենայ միշնորդի օգակը ըլլալ եւ վերահաստատուին եղբայրական յարաբերութիւնները, որոնք անհրաժեշտ են նուիրապետական աթոռներու միջեւ» :

Երեկոյին Փարք Օթէլի մէջ տրուեցաւ հացկերոյթ մը, ուր ճառեր խօսեցան Պաղ եւ Սուրէն արքեպիսկոպոսները եւ ուրիշներ :

× Էջմիածինէն Պոլսոյ պատրիարքարան հասած հաղորդագրութեան մը համաձայն, եկեղեցիներու Համաշխարհային Մորհուրդին հրաւէրով՝ Ամենայն Հայոց կաթողիկոսին կողմէ իբրեւ դիտող հիւր՝ Դերենիկ եպիսկոպոս մասնակցած է Նոր Տէլհիի ժողովին, (ՄՄԲ. — Կիլիկիոյ կաթողիկոսութեան կողմէ նոյնպէս իբրեւ դիտող հիւր կը մասնակցէր Խորէգին վրդ. Սարգիսեան) :

× Նոյն հաղորդագրութենէն կը տեղեկանանք Թէ Դեկտեմբեր 8 – 11 Էջմիածնի հիւր եղած է Համայն Վրաստանի պատրիարք – կաթողիկոսը, Եփրեմ Բ., որու ընկերացած են Թպիլիսի արք., Վրաստանի Ռուսաց առաջնորդ Զինովի, Վրաստանի Հայոց առաջնորդ Կոմիտաս եպս. Թիֆլիսի Հայոց Մայր Եկեղեցւոյ առաջնորդ Ազեքսանդր քհնյ., Վրաստանի Հայոց Թեմական Մորհուրդի անդամ Սուրէն Ավճեան :

Յաջորդ չարթու վաղդէն կաթողիկոս ընդունած է անկլիքան եկեղեցւոյ մէջ – կեղեցական յարաբերութեանց քարտուղարը :

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՊՈԼՍՈՑ մէջ քանի մը հարիւր ուսանողներ հակահամայնավար ցոյց մը կատարած են : Ոստիկանութիւնը միջոցներ ձեռք առած է պաշտպանելու համար խորհրդային դեսպանատունը :

ՊԼՑՐՈՒԹԻՆ կը հաղորդեն Թէ 137 հոգի ձերբակալուած են, կիրակի օր, Լիբանանի մէջ :

ՓԱՔԻՍՏԱՆ կը մտահոգուի հնդկական զօրքին չարժումներէն իր սահմանագիծին վրայ, կը Թուի Թէ Կաչմիրը եղբ կարզը Փաքիստանի եկած է :

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐՈՒ
ՄԻՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ...

— « Մտացածին եւ հրէշաւոր մեղադրանքներով բանտարկուեցան եւ աքսորուեցան Հարիւրաւոր ազնիւ եւ հայրենասէր ղրկղէտներ : Ասոնց մէկ մասը կամայականութեան զոհ դարձաւ, իսկ ողջ մնացողները արդարացուեցան եւ վերադարձան քայքայուած առողջութեամբ :

Անփոխարինելի կորուստներ ունեցաւ խորհրդահայ գրականութիւնը,— եղիշէ Չարենց, Ակսել Բակունց, Զապէլ Եսայեան, Վահան Թոթովենց եւ ուրիշներ : Տասնեակ տարիներ բանտարկութեան եւ աքսորի սէջ էին Գուրգէն Մահարի, Վահրամ Ալազան, Վաղարշակ Նորենց, Գ. Հայկունի, Ա. Վարդանեան, Սկրտիչ Արմէն եւ ուրիշներ : *Ահա պաշտամունքի վերածուած անհատի կամակոյտութեան հետեւանքները*» :

Այս ուշ մնացած սրտակեղեք խոստովանութիւնը ըրած է Հայաստանի Խորհրդային Գրողներու Միութեան ընդհանուր քարտուղարը՝ Էդ. Թոփչեան, երեւանի մէջ Դեկտեմբեր վեցին դումարուած « Հայաստանի Խորհ. Գրողներու Միութեան կուսակցական կազմակերպութեան ժողով»ին առջեւ համայնաւար կուսակցութեան 22րդ համագումարի մասին իր ըրած զեկուցումին ընթացքին :

Էդ. Թոփչեան, որ մասնակցած է Մոսկուայի մէջ վերջերս դումարուած համայնաւար կուսակցութեան 22րդ համագումարին, իր զեկոյցին մէջ երկարօրէն խօսած է «անհատի պաշտամունքին» հետեւցուցած վնասներուն, Հայաստանի գրականութեան նուաճումներուն, թերիներուն եւ խորհրդահայ գրագէտի կոչումին մասին :

Վերջ դնելով անհատի պաշտամունքի աղետաբեր գրութեան «մեր բանաստեղծութիւնը ազատեցաւ հոեստորական աղմկարարութենէն, դուրս եկաւ ներքոյ հիւսող քերթուածներու միօրինականութենէն, դարձաւ աւելի թանձրացեալ եւ թաթաւուն» յայտարարած է ի մէջ այլոց զեկուցաբերը : Այսուհանդերձ, հակառակ այս գրական երեւոյթին եւ հակառակ անոր, որ «աւելի հարստացած է մեր գրականութեան բովանդակութիւնը եւ աւելի կատարելագործուած է անոր արուեստը» ու Հայաստանի գրագէտնե-րուն չափածոյ եւ արձակ գործերը հետզհետէ կը թարգմանուին օտար լեզուներու, Հայաստանի Գրողներու Միութեան ընդհանուր քարտուղարը դժգոհ է, որ Հայաստանի գրագէտները կը խուսափին ներկայացնելէ «ժամանակակից նիւթեր, յատկապէս բանուոր դասակարգին աշխատանքն ու կեանքը»:

Էդ. Թոփչեանի յայտարարութեան համաձայն « դանդաղ կը զարգանայ արձակը կին արուեստը » : Արդարեւ, ըստ Էդ. Թոփչեանի Հայաստանի մէջ մշակուող արձակը աչքի կը զարնէ իր «պրիմիտիվութիւնով», այլ խօսքով՝ չափէն աւելի նախնական է : Գոհացուցիչ չէ նաեւ թատերագրութեան սեռը, որ այլեւս դադրած է բաւարարութիւն տալէ . « Ասով պէտք է բացատրել գրական յայտնի երկերէն թատերախաղեր ստեղծելու մեծ մասամբ անյաջող ջանքերը, նոյնիսկ ամպլիսի տարօրինակ ձեռնարկ մը, ինչպէս է, Չարենցի գործերէն կազմուած « Դէպի ապագան » թատերախաղը » :

Էդ. Թոփչեանի զեկուցումէն եզք, միութեան փոխանակութեան կարգով խօսք առած են Ստ. Կուրտիկեան, Ս. Կապուտիկեան, Վ. Նորենց եւ ուրիշներ : Բոլորն ալ չատագոված են 22րդ համագումարի որոշումները եւ համաձայն դտնուած են, որ «գրականութիւնը պէտք է օգնէ կուսակցութեան յաղողութեամբ իրականացնելու Մրագրին մեծ նախագիծերը», որ «Գրականութիւն իր այդ վեհ ու պատուաւոր դերը կրնայ կատարել համայնաւարութեան գաղափարները բոլոր աշխատաւորներուն դիտակցութեան հասցնելով » եւայլն, եւայլն :

Արտայայտուղները դիտել տուած են ի մէջ այլոց, թէ «Պարբերական մամուլը, ձայնասփիւռը եւ պատկերասփիւռը նախաձեռնարկ ըլլալու փոխարէն, յաճախ վախկոտութիւն ցոյց կուտան եւ կը խուսափին ընթերցողներուն եւ ունկնդիրներուն հասցնել մեր կեանքին վատ երեւոյթներուն մասին քննադատական ճշմարիտ խօսքը, կը զերազասեն շափաղուն եւ տրաֆարիտը», այսինքն կաղապարեալ եւ ուռուցիկ նշանախօսքերը :

Ընդհանուր առմամբ խիստ ձեւով քննադատած են Հայաստանի Խորհրդային Գրողներու Միութեան վարչութեան եւ մասնաճիւղերուն գործունէութիւնը :

1961Ի ԳՐԱԿԱՆ ՏԱՐԻՆ

(Համադրական պատկեր մը)

(Բ. եւ վերջին մաս)

Այս խորագրով առաջին անգամ ուրացեալ Նիկոլ Աղբալեան երկասիրութիւն մը տուաւ, թէեւ քիչ նիւթերով, բայց աւելի խորացած ձեւով, իբրեւ ներածութիւն հայ գրականութեան : Բ. Թաչեան նին «ներածութիւնը» հարցեր եւ երեւոյթներ կը քննէ, ոչ թէ անձեր, որով հետեւ անձերը մաս կը կազմեն գրական նուիթեան պատմութեան : «Ներածութիւնը» պատմութիւն չէ, պատմութեան նախադուռն է : Այս գործին մէջ կը խօսուի գրական եւ պատմափիլիսոփայական բազմաթիւ նիւթերու մասին, ինչպէս օրինակ, գրողը եւ մտաւորականը, գրողին արուեստին եղանակները, լեզու եւ ոճ, դեկավարուած գրականութիւն, գրականութեան պատմութիւն եւ գրական պատմութիւն, նախամեսրոպեան դիր ու գրական նուիթիւն, հայ գրերու գիւտը, Աստուածաշունչի թարգմանութիւնը , ոսկեդարի թեր ու դէմը, լեզու եւ բարբառ , եւն., եւայլն :

Նոյն հեղինակէն իբրեւ թերթօն, գրաձեալ «Յուսաբեր»ի մէջ լոյս տեսաւ «Լուսաւորչեան հայ լեզուի» խորագրով, նոյնքան չահեկան եւ ինքնատիպ յօդուածաշարք մը, բոլոր այն քերականական, բանասիրական եւ գրագիտական նիւթերը, որոնք երբեմն երբեմն ասկէ առաջ կը յայտնուէին զանազան հեղինակներու կողմէ , առանց ներքին կապակցութեան եւ քննական ոգիի : Առաջին անգամ ըլլալով Բ. Թաչեանի կողմէ կը մշակուին ու կը ներկայացուին համապրական ձեւով : Իրմէ առաջ նման գործեր կը ներկայացնէին Հայր Գ. Զարբհանալեանի «Պատմութիւն հայերէն գպրութեան Բ. հատորը», ինչպէս նաեւ 1954ին Երեւան տպուած Ս. Ջանուկեանի «Ուերականութեան եւ ուղղագրութեան աշխատութիւնները հին եւ միջնադարեան Հայաստանում» գործը :

Գրական այս սեռին մէջ կարելի է մատնանշել Ե. Նարդունիին, « Լուսեղէն Շիրիմներ», նոր շարք մը գրական դիմաստուերներու, ուր կը յայտնուին կը – րագէտներ, հանրային գործիչներ, հրապարակագիրներ, բարեթաստեղան եկեղեցականներ, երաժիշտներ : Այս էջերը գրի առած է հեղինակը միշտ պարագայական առիթներով, ոգեկոչելով ամէն մէկը իր նկարագրին բնորոշ եւ յայտուն գիծերով, միշտ ինքնատիպ ոճով ու լեզուով, յիշեցնելով նման երկասիրութիւններէն , բանաստեղծ Արտաշէս Ճարութիւնեանը (« Դիմաստուերներ») , հրապարակագիր Հրանդ Ասատուրը («Դիմաստուերներ») , նորավիպագիր Երիզոր Զօհրապը («Ծա – նօթ դէմքեր») եւ եղիա Տէմիրճիպաշեանը («Գրական եւ հանրային դէմքեր») :

Գրական դիմաստուերներու նոր ժամանակներու ոգիով խմբագրուած շարքէն է Կ. Փոլատեանի «Զրոյց»ները, ո – րուն երկրորդ շարքը լոյս տեսաւ 1961ին, ներկայացնելով՝ Սէյն – Ճոն Փերսին , Հայր Ն. Վ. Ակինեանը, Անտրէ Ժուսօն, Կոսման Զարեանը եւ Սիմոն Վրացեանը : Հեղինակը իր հարցումներով կը խօսեցնէ : Իր դերն է այդ անձերուն գրական կամ հանրային գործիչի փորձառութիւնները ներկէն օգտուիլ, եսթականները մղել վերյիշելու իրենց անցեալ ու ներկայ դրո – ծունէութիւնը, վերագնահատելու զա – նոնք, մնալով միշտ ժուռերի մէջ, յայտնուած միտքերուն պատասխանատուու – թիւնը ձգելով հեղինակներուն :

Մեր օրաթերթերուն վրայ ակնարկ մը նետելով, « Ցուսաբեր» օրաթերթը (Գահիրէ) , բացի մեր յիշած յօդուածաշարքերէն, իբրեւ թերթօն հրատարակեց Վահրամ Անանեանի «Սեւանի ափին»ը , արկածային վիպակ մը, բնութիւնը սի – րողներու կեանքէն : Նուարդի թարգմանութեամբ ռումանացի գրագէտ Վիրժիլ կորկիուի «Մարակը», որուն ուրիշ մէկ արժէքաւոր վէպը՝ «Բսանեւհինգ – րորդ ժամը» նոյնպէս կարդացինք «Ցուսաբեր»ին մէջ : «Մարակ»ին մէջ, ինչպէս առհասարակ իր բոլոր գործերուն մէջ , ռումանացի վիպագիրը կը քննէ անձկութիւնը այն մարդուն, որմէ կը խլեն իր հայրենիքը :

Նոյն օրաթերթին մէջ կ'արժէ յիշել «Զարենց» խորագրով մէկ ուսումնասիրութիւնը ողբացեալ Վ. Նաւասարդեանի համանուն յուշերուն եւ խորհրդածութիւններուն մասին : Տարիներ առաջ Վ. Նաւասարդեան Հռովմի մէջ Զարենցի հետ խօսակցութիւն մը կ'ունենայ : Հռովմի պատմական մէկ պատին վրայ Հայաստանի մէկ քարտէսին կը հանդիպին , որ 2700 տարուան դոյութիւն ունի : Այդ միջոցին «Ցուսաբեր»ի երբեմնի խմբագիրը, Զարենցի «Ես իմ անուշ Հայաստանի արեւահամ բառն եմ սիրում» չատ ծանօթ քերթուածը կ'երգէ : Զարենց կ'ըսէ . «Եթէ իմանայի որ այդքան դուք պիտի սիրէք այս կտորը, ես այն չէի գրի ... Ոչ կը գրէի, բայց չէի հրատարակի ...» : Աւելորդ է բացատրել քերթողին այն օրերուն ներքին տրամադրութիւնը, կրած հակադրեցութիւնը եւ նկարագիրը :

« Ցառաջ » օրաթերթը 1961ի ընթացքին քանի մը ուշագրաւ թերթոններ լոյս ընծայեց : Վահան Թոթովենցի «Հռովմէական ճանապարհի վրայ» եւ Ստ. Զօրեանի «Հայոց բերդը» պատմական մեծ վէպերն եւ, ամիսներէ ի վեր սկսած է հրատարակել Արմէն Շիտանեանի «Թիապարտը» յեղափոխական կեանքէ ժողովրդական վէպը : Նոյն օրաթերթը բացառիկ թիւեր նուիրեց Գրիգոր Զոհրապի, որուն ծննդեան հարիւրամեակն էր 1961ը :

Իսկ «Հայրենիք» օրաթերթը Ֆրանց Վէրֆէլի «Մուսա լերան 40 օրեր»էն եր – քը, տուաւ Դ. Դէմիրճեանի «Վարդանանք» մեծ եւ երկհատոր վէպը իբրեւ թերթօն :

Իբրեւ եղրակացութիւն,— յոռետես մեծահոդութիւնները երթալով կը սատկանան : Ընթերցողի, դրքի եւ հայերէն լեզուի տաղնապը նոյնիսկ, մատնանշութիւն կը պատճառէ : Որո՞ւ միտքէն կ'անցնի հեղինակ դառնալ, դիրք լոյս ընծայել եւ անոր սպառումով տառապիլ : 1962ը ահաւասիկ այս պայմաններուն մէջ կը սկսինք դժբախտաբար :

ՄԿՐՏԻՉ ՊԱՐՍԱՄԵԱՆ

ՇԷՅՔՍՓԻՐԻՆ ԳԱՆԿԸ

Բրիտանական թանգարանին մէջ, գրասաշրջիկներու առաջնորդ մը իր «ոչխարներուն» ցոյց կուտայ գանկ մը.— Շէյքսփիրին գանկն է, կ'ըսէ գիտոսիկը :

« Ոչխարներէն » մէկը կը տեսնէ փոքր գանկ մը.— Ասիկա որո՞ւն գանկն է :

— Ատիկա ալ Շէյքսփիրին գանկն է, երբ դեռ տասը տարեկան էր Շէյքսփիր:

ԱՄԲԱՍՏԱՆԵԱԼ ՍԹԱԼԻՆ, ՈՏՔԻ՛

—o—

1923ին մեռաւ Սվերտլով՝ Սովետներու Հանրապետութեան առաջին նախագահը : Թրոցքի, որ գաղափարներու ճարտար աճպարար էր, բայց մարդիկը լաւ չէր ճանչնար, նախագահի զուտ անուանական պաշտօնի համար առաջարկեց Քալինինի անունը : Լենին, , ինչպէս նաեւ Պոլիտբիւրոյի միւս անդամները, մէջէն ըլլալով նաեւ Սթալինն՝ համաձայնութիւն յայտնեցին :

ՔԱԼԻՆԻՆ ԿԸ ԴԱՒԱՃԱՆԷՐ
ԱՄԷՆ ՄԱՐԴՈՒ

Քիչ առեն եւք պայքար ծայր տուաւ մէկ կողմէն Թրոցքիի եւ միւս կողմէն՝ « Թրոյքա»ի միջեւ, որ բաղկացած էր Զինովիեվէ, Կամենեւէ եւ Սթալինէ : Թրոցքի տխուր անակնկալը ունեցաւ տեսնելու , թէ Քալինին, իր դաշնակիցը , իրեն կը դաւաճանէր՝ իր հակառակորդներուն ի չահ :

Անդամ մը որ Թրոցքի պարտութեան մատնուեցաւ, կարդը հասաւ Զինովիեվի եւ Կամենեւի :

Առանք եւս զարմանքով հաստատեցին , որ Քալինին իրենց դէմ դիրք կը բռնէր՝ հակառակ նախապէս տուած հաւաստիացումներուն :

1928ին, Սթալին, Պոլիտբիւրոյի «ձախ» թեւը (Թրոցքի, Զինովիեվ, Կամենեւ) պարտութեան մատնելէ եւք, դարձաւ «աջ» թեւին դէմ (Բուխարին, Ռիքով եւ Թոմսքի) : Ցայտարարեց , թէ «ընկերվարութիւնը դաշտերու մէջ իրագործելու» ժամանակը հասած է, թէ անհրաժեշտ է յայտարարել «հողերու համայնացումը» :

Այս ուղղութեամբ կատարուած փորձերը ցոյց տուած էին, թէ ռուս գիւղացիները այնքան ալ դիւրաւ պիտի չհամակերպին հողերու համայնացման : Ուրեմն «ընկերվարութիւնը» բռնի ուժով պէտք պիտի ըլլար պարտադրել : Այդպէս ալ եղաւ . ահռելի ձեւով : Այնքան մեծ թիւով մարդիկ աքսորուեցան եւ մահուան դատապարտուեցան, որ համայնացման չըրջանին համապատասխանող սերունդը այսօր նոյնքան ցանցառ է, որքան 1914–18ի պատերազմին համապատասխանող սերունդը :

Քալինին գիւղացիական ծագում ունէր : Հակառակեցաւ հողերու համայնացման մասին Սթալինի առաջարկութեան : Ընդդիմութեան մէջ իր եաեւէն քաշեց նաեւ ուրիշ «սթալինական» մը՝ Վորոշիլովը :

Պոլիտբիւրոյէն ներս Սթալին միայն երկու ձայն կը հաշուէր , իրը եւ Մոլոթովինը :

Պուխարին ինքզինք յաղթական կը նկատէր արդէն : Իր յոյսերը չատ կարճատեւ եղան : Արդարեւ, քանի մը օր եւք Պոլիտբիւրօն քուէարկութիւն կատարեց նոյն հարցին շուրջ եւ Սթալին ձայներու առաւելութիւնը ունեցաւ :

Պուխարինէն սկսեալ ամէն ոք զարմանքի մատնուած էր .

— Վերջին պահուն՝ Վորոշիլով եւ Քալինին դիրք փոխեցին . չեմ գիտեր թէ ի՞նչ տեսակի շղթաներով Սթալին ձեռքը բռնած է անոնց սանձը.— յայտնեց Բուխարին իր բարեկամներէն մէկուն :

Արդարեւ, Վորոշիլովի եւ Քալինինի սանձը Սթալինի ձեռքը կը դտնուէր :

1925ին, Վորոշիլով յաջորդած էր Ֆրունզէի՝ որպէս Պատերազմական նախարար եւ Ցամաքային ու Ծովային բանակներու պետ : Կիտէր, որ Ֆրունզէ «գիտական կերպով» սպանուած էր Սթալինի կողմէ .(աւելի վերը տեսանք թէ Ֆրունզէ ինչ ձեւով պարտաւորուեցաւ վիրաբուժական գործողութեան ենթարկուիլ , մինչ բժիշկները նախապէս վտանգաւոր նկատած էին գործողութիւնը) :

Վորոշիլով այս բոլորէն տեղեակ եղած էր ոչ թէ Ֆրունզէի մահէն եւք, այլ՝ առաջ : Սթալին զինքը տեղեակ պահած էր իր ծրագիրներուն մասին, եւ Ֆրունզէի պաշտօնը Վորոշիլովին խոստանալով՝ յաղթահարած էր այս վերջինի առարկութիւնները :

« Քալինինի պարագան» նուազ արիւնահածածկ է :

Ցանկարծ Հանրապետութեան նախագահի պաշտօնին բարձրացուած այս նախկին բանուորը, ուզած էր կեանքի հաճոյքները վայելել : Իր բարձր դիրքին չնորհիւ, սիրուհի մը ունեցաւ : Մոսկուայի Օփերայի պարուհիներէն մէկն էր : Ցանցանքը այնքան ալ ծանրակչիռ չէր , մանաւանդ երբ նկատի ունենանք թէ այդ օրերուն Կրեմլինի բարքերը չատ ազատ էին . եւ այս «արկածախնդրութիւնը » միայն ժպիտի տեղի կրնար տալ, եթէ պարուհին չափազանց պահանջկոտ մէկը եղած չըլլար, եւ անոր պահանջներուն դոհացում տալու համար Քալինին այն – պիսի բաներ ըրած չըլլար, որոնք նոյն – իսկ համայնավար վարչաձեւի տակ այնքան ալ պարկեշտ չեն նկատուիր : Պետութեան դանձին մէջ դտնուող արքայական դոհարներուն չարքին թանկագին վզնոց մը կար, որ ցարուհիին պատկանած էր . Քալինին այդ վզնոցը առած էր պետութեան դանձարկղէն եւ պարուհիին վիզը անցուցած :

Սթալին լուր ունեցած էր այս դէպքէն : Պարապ տեղը չէ, որ Պոլիտբիւրոյի հաշուին կը վարէր քաղաքական ոստիկանութեան վերին հակոդութիւնը, որուն անօրէնն էր Ճերժինսքի :

(12 Շար.)

ՖՐԱՆՍԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱԿԱՐԳ ԳՐԱԻ Լ.ՕՒՍՆԻՆ ՀԱՄԱՐ

LE FABULEUX PARI SUR LA LUNE (1)

—o—

Ալպէռ Տիւքրօք՝ երիտասարդ հնարիչ ու գիտնական հեղինակ լուրջ ուսումնասիրութեանց, այս նոր գրքով կը բացատրէ ու կը վերլուծէ 12 Սեպտեմբեր, 1959ին Ռուսերու կողմէ Լուսին ղրկուած Լունիք Բ.ի ճամբորդութեան գիտական, քաղաքական եւ ընկերային նշանակութիւնները :

Ընթերցողները անշուշտ չեն մոռցուած որ այդ թուականին երբ Խրուշչեւ Նիւ Եորք կը հասնէր, անդին՝ Թաս գործակալութիւնը աշխարհի կը ծանուցանէր որ պատմութեան մէջ առաջին անգամ լլլալով երկրէն արձակուած առարկայ մը լուսին հասած էր : Դէպքը գրեթէ աննկատ մնաց, որովհետեւ լրատիրները անհրաժեշտ կարեւորութեամբ չկրցան տալ մանրամասնութիւնները եւ Ռուսերն ալ չառախօսութիւն չըրին : Քաղաքական մեծ դէմքեր արհամարհելին մինչ ուրիշներ չհատուցին հակառակ անոր որ Անգլիոյ գիտունները վայրկեանը վայրկեանին հետեւած էին հրաշքին ընորհիւ իրենց աշխարհի մեծագոյն ռատիօ – թէլէսքոփիա :

Ըստ Ա. Տիւքրօքի գիտական պատճառաբանութեանց՝ աստեղագիտական մարզին մէջ ցարդ կատարուած բոլոր փոր – ձերուն ամէնէն փառաւորն է այս գործը, որովհետեւ անհատապատի ճշգրտութեամբ յաջողած ռմբարձակում մըն է 370 հազար քիլոմեթր հեռու նշանակէտի մը հասած : Արուեստական արբանեակները եւ հապիւ տասը հազար քիլ. հասնող ռումբերը անբաղդատելի կերպով կը նմանին այս արտակարգ յաջողութեան քով :

Վերլուծելով Միացեալ Նահանգներու գիտական նուաճումները եւ բաղդատելով զանոնք Ռուսերու աշխատանքներուն հետ, հեղինակը կը պնդէ որ Ամերիկացիները առնուազն տասը տարի ետ մնացած են Ռուսերէն , որոնք արդէն լուծած են բազմաթիւ անհատապատի խնդիրներ :

Որոշ գիտական ծանօթութեանց տէր ընթերցողը չատ բան կը սորվի այս գրքէն, որ պայծառ կերպով կը բացատրէ բազմաթիւ «հրաշքներ» :

Մինչ մէկ կողմէ երեւակայական ու ցնորական վէպերով կը խճողուի հրապարակը, միւս կողմէ լուրջ, գիտական բայց մատչելի հրատարակութիւնները կուգան սանձել հիւանդագին մաքերը :

Զափազանց չահեկան գիրք մըն է :

Մ. ՓՕԼ ՏԸ ՎԱՆՍԻ ԿԱՌՔԸ

LE CAR DE SAINT PAUL DE VENCE (2)

Գերմանուհի Մելիթա Մաշմանի երկ – րորդ վէպն է այս , զոր Ֆրանսերէնի Թարգմանած է Քրիստիան Շմիտ սա – հուն ու բարախուն լեզուով մը :

12 Սեպտեմբեր 1958ին Սէն Փօլ տը Վանսի ճամբուն վրայ գրօսաշրջիկներու կառք մը տապալեցաւ, որուն տասներեք ճամբորդներուն տասնմէկը մեռան : Ո՞վ կին այս գրօսաշրջիկները եւ ճակատագրի ո՞ր կարգադրութեամբ աշխարհի չորս ծայրերէն եկած էին հոդ մահանալու :

Իրարմէ անջատ բայց ճակատագրական դպալի կապով մը գիրքը ամբողջացնող պլուխներու մէջ հեղինակը կը պատմէ իւրաքանչիւրին կեանքն ու անհատական – նութիւնը ինքնատիպ ու սիրուն ոճով մը որ երեւութապէս չի ձգտիր հոգեբանական խորութեանց առանց սակայն հեռանալէ խորապէս մարդկային իրականութենէն :

Ընթերցումը աւարտելէ եաք մէնակ կը մնայ լիովին գնահատել վիպասանին ինքնատիպ տաղանդը : Գործը ամբողջական վէպ մըն է որուն իրական հերոսը մարդոց պլուռն վրայ սաւառնող անվը – րկպ մահն է :

Սիրուն եւ յուզիչ դործ մըն է :

ՓԻԵՌ ԵՒ ԱՄԵՐԻԿԱՑԻՆԵՐԸ

PIERRE ET LES AMÉRICAINS (3)

Ռոպէր Ֆէլսէթի երրիծական այս դործը կը պատկանի այն չարքին, որ կը դուարճացնէ Ամերիկան միայն գիրքերէն ճանչցող ընթերցողը :

Այն ապաւորութիւնը կը թողու որ փիէռ՝ դրքին պատմող հերոսը, արդէն իսկ Ամերիկա չգացած ամերիկացի կինեդուն մասին անձիշդ գաղափար մը ունէր եւ իր հանդիպած կիները իբր այդ տեսնելու ջանաց միշտ :

Հակառակ Ռոմէն կարելի արտակարգ կերպով ուռուցիկ յատաջաբանին ընթերցողը գրական գոհացում չի գտներ այս գրքին մէջ, եթէ անշուշտ քիչ մը կը ճանչնայ Ամերիկան :

Հեղինակին բաղմաթիւ սիրուն գիւտերը ենթադրել կուտան որ երրիծաբանի տաղանդ մը ունի, բայց ազդ մը ծաղրելու համար թեթեւ կը կշռէ այս տաղանդը :

Հաճելի է կարդալ այս գիրքը, պայմանաւ որ իրականութիւն չնկատուի պատմուածք :

Մ. ՀԱՃԵՄԱՆ

---

1) Albert Ducrocq: Robert Lafont, Paris 1961.
2) Melita Maschmann: » » » »
3) Robert Felsette: Julliard, Paris 1961.

ԻՄԱՍՏՈՒՆ ԽՕՍՔԵՐ

Սէրը լոյսն է սրտին :

ՊԱԼԶԱՔ

Սէրը չարաբաստ կինը ծերանալ սկը – սած է :

ՏԻՏԸՐՕ

Այրերը սէրը միշտ յոգնակի կը հաս – կընան :

ՓՕԼ ՊՈՒՐՃԷ

ՀԱՅԱՍՏԱՆ

—o—

ՀԱՅ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐՈՒՆ ՆՊԱՍՏԸ ՌՈՒՍ ԳԻՏՈՒԹԵԱՆ

Հինէն ի վեր հայ գիտնականները կարեւոր նպաստ մը բերած են ռուս գիտութեան :

Դեռ անցեալ դարու վերջերուն եւ մեր դարուն սկիզբը, ռուս գիտութեան մէջ համբաւ վայելող անուններ էին, ի շարս այլոց, գիտութիւններու համաուսական ակադեմիայի թղթակից – անդամ, երկ – րաբան Անդրէաս Արծրունի եւ ծանօթ հայ երդահան Ալ. Սպենդիարեանի եղբայրը՝ Լէոնիդ Սպենդիարեան :

Արծրունիի գիտական գործունէութեան դաշինեպատակը եղաւ քիմիական տարրե – րու համաձեւ (իզոմորփ) տասը չարքերու հաստատումը, որոնք երբեմն գիտական արժէքը չեն կորսնցուցած մինչեւ այսօր եւ գանոնք, յեռադային, զարզացուց ա – կադեմական Վերնադոկի :

Ակադ. կարպենկիի աշակերտ Լ. Սպենդիարեան մասնակցեցաւ երկրաբա – նութեան ուսերորդ միջազդային համա – դումարէն առաջ կազմակերպուած Ու – րալեան արշաւախումբին, իսկ անկէ ա – ռաջ՝ մասնակցեցաւ Ցիւրիխի համադու – մարին եւ կը թողու Կովկասեան ծովային ոլնիներուն նուիրուած արժէքաւոր հե – տազոտութիւն մը : Հայ գիտնականին մա – հէն եռք իր անունով մրցանակ սահմանուեցաւ երկրաբանական լաւագոյն աշխատութեան համար : 1900ին, ուսերորդ համագումարին, Փարիզ, առաջին անգամ Սպենդիարեանի մրցանակը տուաւ Կարպինսկի, այլ խօսքով հայ գիտնականին ուսուցիչը : Այնուհետեւ կարգ մը պատկառելի երկրաբաններու աշխատութիւններ ալ արժանացան նոյն մրցանա – կին, որ այսօր ալ գոյութիւն ունի եւ երկրաբանութեան գիտութեան ամէնէն բարձր մարմինը, Միջազդային համագումարը, զոյն կը ընորհէ աշքի զարնող գործերու հեղինակներուն :

Խորհրդային իրականութեան մէջ եւս հայ գիտնականները չարունակեցին իրենց նպաստը բերել ռուս գիտութեան : Առանց – մէ չատերը ծանօթ անուններ են ոչ մի – այն Խորհ. Միութեան, այլեւ անոր սահմաններէն դուրս եւս : Այս պատկառելի գիտնականներուն չարքին կը պատկանին յայտնի երկրաբան Վարդան Նաւակա – տիկեան, ճանչցուած՝ Վարդան Լոդոչ – նիկով անունով, իր բիւրեղագ – տեսութեան հետազոտութիւններով յայտնի Լեւոն Վարդանեանց եւ երկրաբնագի – տութեան հարցերու մասնագէտ Նիքոլա Խիտարով (Մխիթարեան), որ արժանա – ցած է Խորհ. Միութեան Գիտութիւննե – րու ակադեմիայի ամէնէն բարձր պարգեւին՝ Վերնադովի մրցանակին :

Վերջապէս ռուս գիտութեան իր կա – րեւոր նպաստը բերած է Պավլովի աշա – կերտը՝ Ակադեմական Լ. Օրբելի, վաթսուն տարի ապրելով եւ գործելով Պե – տերբուրգ – Լենինկրատի մէջ եւ հիմը դնելով բնախօսներու միջազդային ըղպ – րոցին :

Զմռռնանք աւելցնելու Վ. Համբար – ձումեանի անունը իր բերած կարեւոր նպաստին համար :

Ա. ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆ

ԶԱՅՆԵՐ ԳԱԻԱՌԷՆ

ՀԱՑՈՐԴԻԻ ՄԸ ԵՂԵՐԱԿԱՆ ՎԱԽՃԱՆԸ

—o—

ՄԱՐՍԻԼԻ, (Սէն Փերոմ).— Դեկտեմբեր 16ին չմեռցուիչ լուր մը կը չրջի թաղիս մէջ : Ոչ ոք կ'ուղէր հաւատալ դժբախտ իրականութեան : Ընկ. Ս. Ասատչանի քսան տարեկան որդին, Վարդանը, արկածի զոհ : Լուրը կուգար Գերմանիայէն, Մխիթարի ամերիկեան գիտուրական իչխանութիւնը նամակով մը կը յայտնէ իր ծնողքին թէ Վարդանը ամսոյս 12ին հիւանդանոց փոխադրուած եւ 15ին մեռած է :

Երեւակայել ծնողքին կրած հարուածը : Դիմումներ Ամերիկեան փոխ – հիւպա – տոսանքը : Դառն իրականութիւն :

Երիտասարդ Վարդանը ասկէ երկու տարի առաջ Հիւսիսային Ամերիկա կը մեկնի իր աղդականներուն մօտ : Ցետոյ կը գինուորագրուի ամերիկեան բանակին մէջ ու Մխիթարի չրջանը կը փոխադրուի միչտ յարաբերութիւն ունենալով ծնող – քին հետ : Այս ամառ արձակուրդով ծը – նողքին մօտ կուգայ միչտ ուրախ եւ խանդավառ տրամադրութեամբ, խոստա – նալով Նոր Տարուան առթիւ դարձեալ դալ : Դժբախտ ճակատագիրը այլ կերպ անօրինած էր : Զինուորական բեռնակառք մը, որու մէջ կը գտնուէր, կը չրջի եւ ծանրապէս կը վիրաւորուի Վարդանը :

Ծնողքին դիմումով մարմինը կը փո – խադրուի Մարսէյլ : Դագաղը ծածկուած էր ամերիկեան դրօչով եւ գինուորական ներկայացուցիչ մը կը հետեւէր մեռելա – կառքին, ինչպէս եւ յուզարկաւորներու խումն բաղմութիւն մը : Սէն Փերոմի Հայոց եկեղեցին նեղ կուգար : Հոդեւոր հովիւը Փանոսեան քահանան պատրաստ դամբանականով մխիթարութիւն եւ համբերութիւն մաղթեց հարազատներուն, եաղն փոխան ծաղկեպատկի՝ եկեղեցիին եւ դպրոցին համար նուիրատուութիւններ :

Հ. Ց. Դ. Հայաստան Ենթակոմիտէն փոխան ծաղկեպատկի «Հայ–Բոյժ»ի բարերաձման կը նուիրէ երեսուն Ն. Ֆ. : Ենթակոմիտէն սրտաբեկ կը խոնարհի սիրելի Վարդանի թաղմ հոդակոյտին առջեւ եւ սրտանց ցաւակցութիւններ կը յայտնէ ընկերներ Ս. եւ Մ. Աւտոյեաններու, Մաչուհի Ասրինէի, ընկեր Վ. Աւիկեանի, ինչպէս եւ բոլոր պարագաներուն :

Մ. Զ.

կերոջ՝ Ակադեմական Լ. Օրբելի, վաթսուն տարի ապրելով եւ գործելով Պետերբուրգ – Լենինկրատի մէջ եւ հիմը դնելով բնախօսներու միջազդային ըղպրոցին :

Զմռռնանք աւելցնելու Վ. Համբարձումեանի անունը իր բերած կարեւոր նպաստին համար :

Ա. ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆ

«ԾԱՌԱԶ»Ի ԹԵՐԹՕՆԸ (129)

ԹԻԱՊԱՐՏԸ

(ՎԷՊ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿԵԱՆՔԷ)

ԳՐԵՑ

ԱՐՄԷՆ ՇԻՏԱՆԵԱՆ

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

— Այդպէս է... հառաչեց Ներսէս Արծրունին անբացատրելի դառնութեամբ մը : Միայն թէ անհոդ եղէք, սիրելի Աւետիսեան, կառավարութիւնը չի կրնար յաջողիլ, մեր գտնուած տեղը, ամէնէն ապահով տեղն է : Դուք յայտնեցիք մեզի մեր ներքին ուժերու մասին ի՞նչ կ'ըսեն կուսակցական խելամտականներու ծառայող «միամիտները». ի՞նչ կը մտածեն ներկայ հանդամանքներու մէջ երբ վեհասա վտանգը՝ ժանիքաւորը ցանցէ մը դուրս գալարուող լիժի մը պէս, կը տընկուի մեր դէմը ու կը սպառնայ :

Մկրտիչ Աւետիսեան, որ իր բոլոր ուժովը կռուած «կուսակցութիւն» բառին դէմ եւ ամէն կերպով ցոյց տուած էր անկից եկած ապազայ չարիքը, գրեթէ հոգեկան անզուսպ դառնութեամբ մը պատասխանեց :

— Ախ, ի՞նչ կարելի է ընել վէրքը մեր սրտին մէջ խոր բացուած է՝ անդարմանելի բտախտի մը պէս : Կուսակցութիւները կազմուիլը հաստատ հիմ ձգած է ու քանդուելու չնար չկայ : Արդէն իւրաքանչիւր կուսակցութիւնն իր ներկայացուցիչն ունի, որ կը վարէ դաղտնի մասնաճիւղ մը : Միեւնոյն առեն, բռնութեան ներքեւ սկսած են դրամ պահանջել :

— Բռնութեան ներքեւ սկսա՞ծ են դրամ պահանջել :

— Այո, հակառակ պարագային մէջ, սպառնալով մահուան դատապարտել դրամական դումարը մերժող մը :

— Տէր Աստուած, ի՞նչ սկզբունքով :

— Կ'ըսեն թէ մեր խամբաները դրամական օգնութիւն մը չեն ըներ, մինչեւ որ վեց հարուածին կոթը կամ դաշոյնին ծայրը չտեսնեն : Կ'ըսեն թէ մեր հարուստ դասակարդը չի կրնար հայրենասէր ըլլալ, առանց բռնութեան ու ըսպառնալիքներու : Այս է բոլորը :

— Չեմ հասկնար. եթէ խամբան իր եկամուտներու արիւնն ունի որ Հայի հարստատ կենսականութիւնն է, ի՞նչ հարկ հայ անկից բռնութեամբ դրամ պահանջելու, չէ՞ որ անիկա իր պարտականութիւնը կը ճանչնայ. իսկ եթէ խամբան իր դարչելի կաշիին տակ ծածկուած հրէշ մըն է... աւելի ճիշդն ըսելով՝ «հայ – տուտ» մըն է, ինչո՞ւ հայ անունը տանք իրեն :

— Դրամ պահանջելու ձեռնարկութիւնը նո՞ր սկսած են. ընդհատեց Վանական խեղդուած ձայնով մը :

— Այո, պատասխանեց Մկրտիչ Աւետիսեան :

— Իհարկէ, առաջարկեցիք այդ մասին, չէ՞, վրայ բերաւ Վանական :

— Անօդուտ եղաւ... «մենք այդպէս վճռել ենք, եւ այդպէս էլ գործադրելու ենք» կ'ըսեն : Մէկ խօսքով եթէ ուզենք հակառակիլ : Պէտք է որ իրարու դէմ կուռնինք ու մնացած ուժերնիս ջլատենք ... տխուր պարագայ մը՝ որ դաւաճանութեանց ամէնէն գարչելին է :

Ներսէս Արծրունին ու Վանական խորին հառաչանք մը քաշեցին ու վայրկեան մը իրարու երես նայեցան՝ սրտին վէրքէն ճնշուած մարդու մը պէս : Բաւական ատենէ ի վեր տեղեկութիւն մը ունէին կուսակցականներու ներքին ուղղութեանց մասին. հիմակ որ այդ ազետալի լուրը կ'առնէին, հիմակ որ բաժանեալ ուժին վրայ սեւ ստուեր մը կը նշմարէին, ինչ ընթացք բռնելնին չէին գիտեր :

— Ուրե՞մն ... բացագանչեց Ներսէս Արծրունին : Ա՛կից եաքը՝ ի՞նչ պիտի ընենք... : Ահա Պատրիկի վինակիը խումբը ջնջուեցաւ, միայն Վազգէնի խումբը կը մնայ Արտօսր լերան եաին :

— Դուք գիտէք... մրմնջեց Մկրտիչ Աւետիսեան :

— Վերջին անգամ փոխադրուած գէնքերը ապահո՞վ տեղ են, ընդհատեց Ներսէս Արծրունին :

— Այո :

— Ա... գիւղը բաւական գէնք զրկը – ւեցա՞ւ :

— Ամէնէն աւելի այդ գիւղը գին – ուած է :

— Տէր Օհանի տրամադրութեան տակ, անանկ չէ՞ :

— Անշուշտ :

— Խիստ լաւ, կ'ուղեմ երկու կուսակ – ցութեանց ներկայացուցիչներու հետ խօսիլ, արդեօ՞ք կարելի է :

— Ի՞նչ ըսեմ. չատ չեմ վստահիր :

— Ի՞նչ որ ըլլայ, որոշած եմ. նկատել տուաւ Ներսէս Արծրունին հաստատ ձայնով մը :

Մկրտիչ Աւետիսեան որեւէ առարկութիւն մը չըրաւ :

— Գալով Վանականին, կը փափաքիմ որ Տէր Կոմիտասը քննելու երթայ, վրայ բերաւ Ներսէս Արծրունին : Տեսնենք ... գուցէ կուսակցական նենգութեան մը զոհ կ'երթայ ան :

Ու անվերհեր մարդը մեքենաբար ոտքի ելլելով ըսաւ.

(Շար.)

Տէր եւ Տիկին Սարգիս Թիւթիւնճեան եւ զաւակը Լեւոնիկ (Քլերմոն Ֆերրան), Տէր եւ Տիկին Ներսէս Թիւթիւնճեան (Լիոն), Տէր եւ Տիկին Տիվրիկեան (Նիւ Եորք), Տիկին Ռեբեկա Ա.Էմէեան կը ծանուցանեն մահը իրենց մօր, մեծ մօր, քրոջ, աղգականին եւ խնամիին՝ Այրի Տիկին

ԼԻՒՍԻ ԹԻԹԻՒՆՃԵԱՆԻ

որ տեղի ունեցաւ Քլերմոն Ֆերրանի մէջ, 1961 Դեկտեմբեր 23ին եւ յուղարկաւորութիւնը կատարուեցաւ Դեկտ. 26ին :

Այս տխուր առթիւ փոխան ծաղկեպսակի Փարիզի Մշակոյթի Տան կը նուիրեն.— Տէր եւ Տիկին Սարգիս Թիւթիւնճեան, Տէր եւ Տիկին Ներսէս Թիւթիւնճեան, Տիկին Ռեբեկա Ա.Էմէեան» յիսունական Ն. Ֆ. եւ Շաւիլէն Տէր եւ Տիկին Փափազեան՝ 30 Ն. Ֆ.:

« ՅԱՌԱՋ » ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

Օր. Արշակուհի Աղաճեան մէկ տարեկան «Յառաջ» կը նուիրէ Տէր եւ Տիկին Զաքեանի (Թուռ):

ՆՈՒԷՐՆԵՐ

Կապոյտ Խաչի վարչութիւնը չնորհակալութեամբ ստացաւ Պ. Պ. Գալիկեանէ քսան Ն. Ֆ., իր կնոջ դործողութենէ յառջող ազատերուն առթիւ: Ընկերուհի Ս. Աւետեանէ տասը, իր երկրորդ թոռնիկին ծննդեան առթիւ: Ընկերուհի Վ. Էք-սիզեանէն հինգ Ն. Ֆ., ընկերուհի Ֆ-ի նոսեանի կսկծալի մահուան առթիւ փոխան ծաղկեպսակի: Պ. Պ. Այոնեան (Վիլֆրանչէն) քսան Ն. Ֆ. Նազելիկի ծննդեան առթիւ:

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Մարսէյլէն Տիկին Մաննիկ Աչճեան կը տեղեկացնէ թէ իր ամուսինը Ասիկ Աչճեան, վիրաբուժական գործողութենէ վերջ բաւական ապաքինուած ըլլալով ամսոյս չորսին փոխադրուած է իրենց բնակարանը, 35 Րիւ Ֆրանսուա Պրիոնո, Վալոն Մոնթեպելլո:

Այս առթիւ ընտանեօք չնորհակալութիւն կը յայտնեն մասնաւորապէս Պ.Ճաղոր Պապիկեանի, Հ. Ց. Դ. «Ակնունի» ենթակոմիտէի, Ս. Լուի Թաղականութեան, եւ բոլոր ընկերներուն, բարեկամներուն եւ աղգականերուն, որոնք իրենց ազնիւ այցելութեամբ համակրութիւն յայտնեցին:

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Վալանսի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ հոդաբարձութիւնը չնորհակալութեամբ ստացած է հանդուցեալ Ճուհար Ստեփանեանի թաղման առթիւ, փոխան ծաղկեպսակի, Փամկոչեան եղբայրներէ յիսուն Ն. Ֆ., Լիոնէն, իսկ Վալանսէն Շաբախեան ընտանիքի կողմէ 30 Ն. Ֆ.:

×

ԼԻՈՆ.— Ազգ. Միութիւնս չնորհակալութեամբ ստացած է Միութեանս անդամ Պ. Գարեգին Սողոմոնեանի միջոցաւ Նիւս Տէր եւ Տիկին Յովհ. Պարգեւեանէ իրենց զաւկին ծննդեան առթիւ 100 Ն.Ֆ.:

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՕՐԸ

Ֆ. Կ. Խաչի Կրընոպլի մասնաճիւղը կը տօնէ, Մանուկներու Օրը, Կիրակի, 14 Յունուար, կէսօրէ վերջ ժամը 3ին, Սալ Սէն Լուի (Րիւ ժէ):

Խմբերգ, տրամախօսութիւն, մենախօսութիւն, արտասանութիւն եւ մանկական անակնկալներ:

Ըստ աւանդութեան՝ ԿԱՂԱՆԴ ՊԱՊԱՆ պիտի բաժնէ մրգեղէններ, առանց բացառութեան բոլոր սրահի ներկայ տղաքոց:

Կը խնդրուի Կրընոպլի, Լանսէի, Ռէնաժի եւ Ֆիլքօռի բոլոր հայրենակիցներէն իրենց ներկայութեամբ քաջալերել դպրոցին մանուկները:

×

ՊՕՄՈՆԻ ՄԷՋ

Կապոյտ Խաչի մասնաճիւղը Մանուկներու Օրը կը տօնէ այս Շաբաթ, կէս օրէ վերջ, Սահակ – Մեսրոպ սրահին մէջ, դպրոցի երեկոեան աշակերտութեան կողմէ մէկ պատրաստուած գեղարուեստական բաժինով մը:

×

ՎԻԼՆԻ ՄԷՋ

Կապոյտ Խաչի մասնաճիւղը Մանուկներու Օրը կը տօնէ այս Կիրակի կէսօրէ վերջ ժամը երեքին, Սէրքլը Կաթոլիկի սրահին մէջ:

Գեղարուեստական բաժին դպրոցի աշակերտ – աշակերտուհիներու կողմէ: Երգ, արտասանութիւն եւ պարեր:

Աւանդական կաղանդ Պապան իրեն նուէրներով պիտի ուրախացնէ մանուկները:

Կ'ՈՒԶՈՒԻ ՍՏԻՊՈՂԱԲԱՐ

Հանդերձապահուհի մը Ս. Մուրատեան վարժարանին համար: Դիմել տեղւոյն վրայ:

26, Rue Troyon, SEVRES (S. et O.)
Métro : Pont de Sèvres
Tél. : OBS. 18-28

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ

Ծննդեան 1600ամեակը համազգային շուքով կը տօնուի Մարսէյլի մէջ:

Փետրուար 18ին, կիրակի կէսօրէ ետք, Բազա տ'Իթալիայի չքեղ թատրոնին մէջ:

×

ԼԻՈՆ.— « Մանուկներու Օր»ը տեղի կ'ունենայ 28 Յունուար, կիրակի, Րիւ տիւ Նուառի սրահին մէջ:

FOURRURES

Roger YOPIAN

PRIX INTERESSANTS
NEUF et REPARATION

84, Boulevard de Stalingrad, 84
— CHOISY-LE-ROI (Seine) —

Autobus : de la Porte de Choisy, descendre 3 Communes ou Rue du Docteur-Roux.

Imprimerie Spéciale du journal « Haratch »
32, Rue de Trévise, PARIS (9e)

ԱՄԱՆՈՐ

Իսիի Մրլմեան վարժարանի ամանորի հանդէսը այս կիրակի ժամը 13·30ին, վարժարանին մէջ:

Աշակերտութեան կողմէ պիտի ըլլան երգեր, արտասանութիւններ, եւ «ԿԱ-ՂԱՆԴ ՊԱՊԱՆ:

Իսիի զաղութէն կը խնդրուի ներկայ դտնուիլ ասոր հանդէսին, ճշդապահ ըլլալով:

ՄՕՏ ՕՐԷՆ — ՄՕՏ ՕՐԷՆ

Զաւարեան ենթակոմիտէի հովանաւորութեամբ «Շանթ» թատերախումբը պիտի ներկայացնէ մեծ պատրաստութեամբ Ազգ. Տրամը «ՎԱՐԴԱՆԱՆՔԸ», Պոմոնի սրահին մէջ:

Մանրամասնութիւններ մամուլով եւ առանձին յայտարարութեամբ:

ԾՆՈՒՆԴԻ ԵՒ ՆՈՐ ՏԱՐԻՈՅ
ՈՒՐԱԽ ՕՐԵՐՈՒՆ ԵՒ ԱՄԲՈՂՋ
ՏԱՐԻՆ
Եւրոպայի Մեծագոյն
Արեւելեան Վաճառատունը

ՊԱՀԱՏՈՒՐԵԱՆ խանութ մը չայ ցելոդին սեղանին վրայ ամէնէն համով պատառը կը պակսի՝ մեծին ու պզտիկին համար: ՊԱՀԱՏՈՒՐԵԱՆ վաճառատան մէջ պիտի գտնէք աւանդական ընդեղէններու եւ անուշեղէններու ամէն տեսակը, անմրցելի գիներով:

Ապսպրանքի վրայ, ծրարի առաքում Ֆրանսայի ամէն կողմ եւ դէպի արտասահման՝ Պելժիա, Զուիցերիա, Անգլիա:

ՊԱՀԱՏՈՒՐԵԱՆ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ
LYON

246, Rue Vendôme - Tél. MO 11-84
20, Rue Villeroy MO 32-10
65, Rue Robert LA 07-72

ԵՒ ԻՆՁԳԷՍ ՄԻՇՏ

Արմաւ, «պամիա», «եալանճի տոլմա», յունական «թուրչի», «պիպէռ», տերեւ, թահին հելվա, «վանիլլ», չոքոլա, «նուազէթ», «լոդում», «սագըզ», պիստակ, Շիրակ օղի (41 – 45o), Իզմիրի չամիչ, «սուճուք», կեսարական «պաստըրմա»: առաջնակարգ սուրճ, (fraîchement եւ մոգա), համեմներ «մահլէպ», «սալէպ», ձիթապտուղ, ձէթ, «քաչքավալ» պուլկարական, ճերմակ պանիր ոչխարի կաթով: Ամէն կարգի պահածոներ, «քուսքուս», հարիսա, առմագ, թարամա, լաֆերտա, բաֆլաւա, fantaisie, տերեւ եւայլն:

ՊԱՀԱՏՈՒՐԵԱՆ ՀԱՄՏԱՏՈՒԹԻՒՆ

Ունի նաեւ մասնաճառատուն մը, որուն առաջնակարգ միսերը պոհա-ցում կուտան ամէնէն նրբաճաշակ-ներուն: Ոչխարի, հորթի եւ եղան միս (քաչուած միս, եւայլն):

Հ. Յ. Դ.

ՓԱՐԻԶ.— Հ. Ց. Դ. Շրջ. կոմիտէն ներկայացուցչական ժողովի կը հրաւիրէ Փարիզի եւ շրջանի մարմիններու ներկայացուցիչները այս Շաբաթ երեկոյ ժամը 8·30ին, Մշակոյթի Տան սրահին մէջ: կարեւոր օրակարգ: Շրջ. ժողովի օրակարգի քննութիւն:

ՓԱՐԻԶ.— Հ. Ց. Դ. «Փոթորիկ» խումբի ժողովը այս Հինգշաբթի իրիկուն: Սովորական հաւաքատեղին: կարեւոր օրակարգ:

ԱԼՖՈՐՎԻԼ.— Հ. Ց. Դ. Ս. Մինասեան ենթակոմիտէն ընդհ. ժողովի կը հրաւիրէ բոլոր ընկերները այս Ուրբաթ ժամը 21ին:

Ներկայ կ'ըլլան կեդր. եւ Շրջ. կոմիտէներու ներկայացուցիչները:

Կը խնդրուի ճշդապահ ըլլալ:

ՊԱՆԵԼՕ – ՔՈՇԱՆ.— Հ. Ց. Դ. «Արծիւ» ենթակոմիտէն ընդհ. ժողովի կը հրաւիրէ ընկերները այս Հինգշաբթի, ժամը 20·30ին, ծանօթ հաւաքատեղին: կարեւոր օրակարգ:

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ. Ց. Դ. Մարսէյլի Շրջ. Կոմիտէի հրաւիրած ընկերական ժողովներու.—

Հ. Ց. Դ. Մարսէյլի Շրջ. Կոմիտէն՝ ստիպողաբար ընկերական ընդհ. ժողովի կը հրաւիրէ հետեւեալ ենթակոմիտէներու եւ խումբերու անդամ ընկեր – ընկերուհիները:

ԱԿՆՈՒՆԻ ենթակոմիտէ 13 Յունուար, Շաբաթ երեկոյ ժամը 21ին:

ՎԱՐՈՒԺԱՆ խումբ՝ 14 Յունուար, կիրակի կէսօրէ ետք ժամը 15ին:

ՀԱՄԱԶԱՍՊ խումբ՝ 13 Յունուար, Շաբաթ երեկոյ, ժամը 21ին:

ԹԱԹՈՒԼ խումբ՝ 14 Յունուար, կէսօրէ ետք ժամը 15ին:

ԸՆԿԵՐ ԿԱՐՕ խումբ՝ 14 Յունուար, կիրակի կէսօրէ ետք ժամը 15ին:

ՀԱՅԱՍՏԱՆ խումբ՝ 13 Յունուար, Շաբաթ, ժամը 21ին:

ՎԱՐԱՆԴԵԱՆ խումբ՝ 15 Յունուար, երկուշաբթի, ժամը 21ին:

ԳԷՈՐԳ ՋԱՎԱՒԻՇ խումբ՝ 20 Յունուար Շաբաթ, ժամը 21ին:

ՄՈՒՐԱՏ խումբ՝ 21 Յունուար, կիրակի կէսօրէ ետք, ժամը 15ին:

ՆԻԿՈԼ ԴՈՒՄԱՆ խումբ՝ 21 Յունուար, կիրակի կէսօրէ ետք, ժամը 15ին:

ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ խումբ՝ 20 Յունուար, Շաբաթ, ժամը 21ին:

Սոյն ժողովները տեղի պիտի ունենան իրենց սովորական հաւաքատեղիները: Միասն կարեւոր օրակարգ: Բոլոր ընկեր – ընկերուհիներու ներկայութիւնը պարտաւորիչ է: Վարչութիւնները նախապէս պէտք է բոլոր ընկերներուն տեղեկացնեն ժողովներու վայրի եւ թուականի մասին: Ներկայ պիտի ըլլան Շրջ. կոմիտէի ներկայացուցիչները:

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Հ. Ց. Դ. Նոր Սերունդի Իսիի Խանասոր խումբի գեղարուեստական եւ պարանոցիկ երեկոյթը Իսիի մէջ, փետր. 10ին:

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

Հայ – երաժշտութեան հիւգերորդ սկաւառակը MC 20167

«Promenade en Arménie»

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՄԲ ԵՒ ՂԵԿԱՎԱՐՈՒԹԵԱՄԲ

ԱՐՒԱ ՊԱՐԹԵԻԵԱՆԻ

(14 կտոր, 45 վայրկեան)

ՆՈՒԱԳԱԽՈՒՄԲ, ԽՄԲԵՐԳ, ՄԵՆԵՐԳ

Խաղողաբաղ, Խնչոյքի պահ, Օրօր կանչեմ, Մանոցի երգ, Շորոր, Երեսիդ Մազերը սրմա կումանի, Հայոց գիհին, Լեռնական պար, Լուսնակ գիշեր, Կապելայում, Պիլպիլը կու կանչէ, Սեւաճայ ափին, Եարամօ:

Գեղարուեստական չքեղ եւ դունաւոր կողք, երգերու թարգմանութեամբ եւ բառերով միասին:

Ստանալու համար դիմել Ա. ՊԱՐԹԵԻԵԱՆԻ,
14, Rue Petit, Paris 19 (BOT. 99-22)
կամ եկեղեցւոյ դիւանատունը

Փնտռել նաեւ նախորդ սկաւառակները՝ 20103, 20136, 20157,, 20162, *եւ պատարագները Եկմալեան* 20114, *Կոմիտասեան* 20150

Գաւառներու համար խնամուած ծրարով առաքում,

Contre Remboursement

ԳԻՆ 30 Ն. Ֆ.

ԵՒՐՈՊԱՅԻ
ՄԵԾԱԳՈՅՆ ԱՐՏԱԴՐՈՒՔԸ
ՀԷԼՎԱ
ԼՈԳՈՒՄ
Սուսամ –
ՀԷԼՎԱ
LE BOSPHORE MARQUE DEPOSÉE
ԹԱՀԻՆ
ՇԱՐՈՑ
(ՌՈՃԻԿ)
ՎԱՐԴԷ-ԱՆՈՅՇ
ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ...
CHOC-ALVA • CHOCO-LOC
Sté le BOSPHORE
SIÈGE SOCIAL
2, Rue Louis Astouin /Marseille (2ème)

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

Le PREMIER QUOTIDIEN ARMENIEN en EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction et Administration : 32, Rue de Trévise - PARIS-9e

Fondé en 1925
R. C. Seine 57 A 2731

Téléph. : PRO. 86 - 60
C. C. P. Paris 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա՝ Տար. 50 Ն. Ֆ. Վեցամսեայ՝ 27 Ն. Ֆ.
Արտասահման՝ Տար. 60 Ն. Ֆ. Հատը՝ 0·25 Ն. Ֆ.

ՋՈՐԵՔՇԱԲԹԻ
10
ՅՈՒՆՈՒԱՐ
MERCREDI
10 JANVIER
1962

38ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 9300 38e ANNÉE Fondateur : SCHAVARCH MISSAKIAN ՆՈՐ ՇՐՋԱՆ, 18ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 5101

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ

Մոսկուա չարունակեց դառնալ միջազգային քաղաքականութեան առանցքը վերջացող տարուան ընթացքին եւս :

Պերլինի եւ արեւելեան Գերմանիոյ անլուծելի վէճերը, հիւլէական փորձերու դադարման եւ ապազինման յաւիտենական խնդիրները 1961ի սկիզբէն մինչեւ վերջը զբաղեցուցին արեւմտեան ազատ աշխարհի դիւանագէտները, առանց արդիւնքի մը յանգելու :

Ջիղերու պաղ պատերազմը ոչ միայն չմեղմացաւ, այլ երբեմն սպառնական հանգամանք ստացաւ :

Միացեալ Նահանգներու նոր նախագահին գահակալութիւնը տարուոյն սկիզբնեբը՝ որոշ յոյսեր ներշնչած էր : Կը կարծուէր թէ վերջ պիտի գտնէր, կամ գոնէ զգալիօրէն պիտի մեղմանար արեւելք – արեւմուտք լարուածութիւնը :

Ամերիկայի արտաքին քաղաքականութեան մէջ փոփոխութիւն տեղի չունեցաւ : Հանրապետական կուսակցութեան թեկնածու Նիքսըն դեմոկրատ Քենըտիի հաւասար քուէ ստացեր էր նախագահական ընտրութեանց առեն :

Երիտասարդ նախագահը չարունակեց Այզընհաուըրի դծած ուղին : Կարգ մը պարագաներու մէջ նոյնիսկ իր նախորդէն աւելի խիստ ու անդրդուելի վերաբերում ցոյց տուաւ :

Քենըտի Փարիզ եկաւ Մայիս 31ին եւ տեսակցեցաւ Զօր. տը Կոլի հետ : Ցետոյ դնաց Վիէննա, ուր Յունիս 3ին հանդիպում ունեցաւ Խրուշչեւի հետ :

Ու մինչ կը յուսացուէր թէ նոր լոյս մը պիտի ծագի եւ խաղաղութիւնը ամուր հիմերու վրայ պիտի դրուի, յանկարծ առեղծուեցաւ Ցանը կացութիւն մը, երբ Օգոստոս 13ին երկաթէ վարագոյր մը եւ փշաթելեր երկուքի բաժնեցին Գերմանիոյ նախկին մայրաքաղաքը :

Լարուած վիճակը կը չարունակուի դեռ, հակառակ այն փաստին, որ Խրուշչեւ անդամ մը եւս տեղի տուաւ եւ չզործադրեց քանիցս կրկնուած իր սպառնալիքը՝ արեւելեան Գերմանիոյ հետ անջատ դաշնագիր կնքելու մասին :

Նոր տարին կը սկսի նոր յոյսերով : Սպասե՛նք եւ յուսանք :

Ներքին քաղաքականութեան մարզին մէջ Խրհ. Միութիւնը պատմական օրեր ապրեցաւ :

Ցունուարին գումարուեցաւ համայնավար կուսակցութեան կեդրոնական կոմիտէի լիակատար նստաշրջանը Մոսկուայի մէջ : Այս առթիւ Խրուշչեւ բուռն քննադատութեանց ենթարկեց Ուկրայինոյ, Քազաքստանի, Ազրբէյճանի եւ Հայաստանի երկրապործական նախարարները, որոնք թերացած էին իրենց պարտակատնութեանց մէջ,— կոլխոզներն ու սով խոզները չէին արտադրած եօթնամեայ ծրագրով որոշուած «նորմա»ները :

Ցրանսայի համայնավար կուսակցութիւնն ալ Ցունուարի վերջերը ծանր տագնապ մը անցուց : կարգ մը ականաւոր վարիչներ վտարուեցան, մեծ ալ մուկ յարուցանելով :

Օգոստոսի սկիզբը Խրուշչեւ հրատարակութեան տուաւ կոմկուսի նոր ծրագիրը, որ կը խոստանայ քսան տարի վերջ, 1980ին երկրային դրախտի վերածել բոլշեւիկեան բռնակալութեան ենթակայ երկիրները :

Սակայն տարուոյն ամէնէն նշանակելի դէպքն էր կոմկուսի Իբ. համագումարը :

Սթալինի դէմ բացուած պայքարը այնտեղ իր գերագոյն աստիճանին հասաւ : «Հանճարափայլ»ը կարմիր հրապարակի իր դամբարանէն դուրս նետուեցաւ, իր անունը կրող քաղաքներն ու փողոցները նոր մկրտութիւն ստացան :

Իր անմիջական գործակիցներէն ու

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՄԻԿՈՅԵԱՆ ԿԻՆԷԻ ՄԷՋ

«ԱՄԷՆ ԵՐԿԻՐ ԻՐ ՆԵՐՔԻՆ ՔԱՂԱՔԱ – ԿԱՆՈՒԹԵԱՆ ՏԷՐՆ Է» Կ'ԸՍԷ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՓՈԽ-ՎԱՐՉԱՊԵՏԸ

Պատասխանելով Քոնաքրիի կառավարութեան «Հրաւէր»ին, Անաստաս Միկոյեան կինէ գնաց բացումը կատարելու համար խորհրդային ճարտարարուեստի եւ առեւտուրի առաջին ցուցահանդէսին :

Այս առթիւ խօսած ճառին մէջ, կինէի նախագահը՝ Սեքու Թուրէ մասնաւորա – բար յիշատակեց խորհրդային օժանդակութիւնը այն երկիրներուն որոնք, նախապէս գաղթավայր, այսօր անկախ պետութիւններ են : Սեքու Թուրէ չէշտեց նաեւ .— « կ'ուզենք օգտագործել այն ճամբաները որոնք կը համապատասխանեն մեր իւրայատուկ պայմաններուն : Այդ պատճառաւ է որ, քանիցս կրկնած ենք թէ յեղափոխութիւնները ոչ կը նետածուին , ոչ ալ կ'արտածուին, այլ՝ ժողովրդական կամքի մը պտուղն են : Համագործակցութեան ոգին պէտք է հիմնուած ըլլայ պետութիւններու հաւասարութեան գաղափարին վրայ եւ փոխադարձ պարկեշտութեան եւ բարեկամութեան : Նոր ժողովուրդը կը հրաժարի անարդար կապերէ» :

Միկոյեան յայտարարած է թէ աշխարկալները եւ գաղթատէրերը կը փորձեն ղրպարտել Խորհ. Միութիւնը, որպէսզի « գաղթականացուած» երկիրները չզորձակցին իրենց հետ եւ իր գոհունակութիւնը յայտնեց որ առաջին անգամ ըլլով Ղանան, կինէն եւ Մալին նեկայցուցիչներ ունեցած են Խորհ. Միութեան համաչափ կուսակցութեան Իբ. համագումարին : Միկոյեան, ապա աւելցուցած է .— «Իւրաքանչիւր երկիր իր ներքին քաղաքականութեան տէրն է եւ ոչ ոք իրաւունք ունի արգելք հանդիսանալու որ իր ուզածը ընէ : Այս մասնաւորաբար պարագան է ափրիկեան երկիրներու, ըստեղծուած երբ աշխարհակալութիւնը մաքրուեցաւ» : Ալժերիոյ մասին, Անաստաս Միկոյեան յայտարարած է «տակաւին որքան ատեն պիտի հանդուրժենք որ Ցրանսա այս աղտոտ պատերազմը տանի Ալժերիոյ դէմ», գալով Քոնկոյի Միկոյեանի համար ան (իմա՛ Քոնկո) կը չարունակէ պայքարը եւ «անմահ յեղափոխական Փաթրիս Լումումպայի պաշտպանած դատը անյաղթելի է» :

Այս ճառերուն եւ Սեքու Թուրէ .— Միկոյեան տասնըմէկ ժամ խօսակցութեանց տպաւորութիւնն այն է թէ երկու երկիրներու մէջ խրամատ չկայ — ծանօթ է որ ամիս մը առաջ նախագահ Սեքու Թուրէ յայտարարած էր թէ համայնավարները պետական հարուած մը պատրաստած էին :

Քոնաքրիի խօսակցութեանց մասնակ –

մեղսակիցներէն Մոլոթով, Մալենկով եւ ընկերները իբրեւ « հակա – կուսակցական » անարդութեան պիւնին զամուեցան : Ձեղք մը բացուեցաւ կոմկուսի միջպղպային ընտանիքին մէջ,— Ալպանիա :

Իբ. համագումարը յիշատակելի պիտի մնայ նաեւ Խ. Հայաստանի պատմութեան համար :

Առաջին անգամ այդ ժողովին մէջ է, որ համայնավար կուսակցութեան պատասխանատու վարիչներ հրապարակաւ քօղազերծեցին 1937ին եւ 1949ին Հայաստանի մէջ կատարուած ահռելի ոճիրները,— 3500 մտաւորականներ ձերբակալուած եւ առանց դատի գնդակահարուած , հազարաւորներ Սիպերիա աքսորուած իբրեւ «Դաշնակցական» :

Ի՞նչեր կը վերապահէ մեզի 1962ը :

ՀՐԱՆՏ-ՍԱՄՈՒԷԼ

Օր ը Օրթ ը

ՄԱՆՐ, ՇԱՏ ՄԱՆՐ ԼՈՒՐ ՄԸ

Մանր, շատ մանր լուր մը հրատարակուեցաւ այստեղ, երկու ամիս առաջ : Ոչ ոք ուշադրութիւն ընծայեց լուրին, — ոչ մեր ժողովուրդը՝ որ կիրակիէ կիրակի կը հիասնայ իր եկեղեցիին վրայ եւ « Ո՛վ մեծասքանչ » կ'երգէ հանդէսէ հանդէս, ոչ ալ մեր մեծերը՝ որոնմ մեծ լուրերու վրայ կը պարպեն իրենց հրացանը եւ ատաղձ մանր – մունր լուրերու որսորդութեամբ չեն զբաղիր երբեք :

Ընտրելու եւ ընտրուելու խնդիր ալ չէր,— ընտրութիւնները, ինչպէս գիտէք, շուտ կ'արթցնեն մեր ժողովուրդը ,փոյթ չէ թէ «հաւ ուտողներու ընկերութեան» նախագահ մը ընտրելու խնդիր միայն ըլլայ պարագան :

Ատանկ կարեւոր բան մը չէր : Տեսէք թէ ի՞նչ էր :

Երեւանի Գրական Թերթը գրեր է (Սեպտեմբեր 29) թէ Հայաստանի հա – մայնավար կուսակցութեան 22րդ համագումարին մէջ ճնշուածքեան առնուեր է կոմունիստական ··· (զանց կ'առնեմ մըւացեալ բառերու ցարդավաթը) Նոր Ատեստաբանը : Եւ խօսք առեր է Նայիրի Զարեան, — խելացի մարդ է Զարեան , կոմունիստական բոլոր մաքրագործում – ներէն վեր կանգնած՝ կոմունիզմ ուսանելու չէ գացած մինչեւ··· Սիպերիա : Փիտցածը կը բաւէր :

Ի՞նչ կ'ըսէ կոմունիզմի նոր ծրագիրը եւ ի՞նչ կ'ըսէ կոմունիստ Նայիրի Զարեան :

Հարցը նոր ծրագրով սահմանուած ազգային լեզուներու մասին է, կ'ենթադրեմ որ մեզ ալ կը շահագրգռէ, այսինքն՝ որ – ճան «սոցիալիզմ կառուցողները» (Հա –

ցած են նաեւ խորհրդային պատուիրա – կութեան անդամները եւ կինէի ժողո – վրդավար կուսակցութեան կեդրոնական կոմիտէի 17 անդամները : Ոչ մէկ յայ – տարարութիւն եղած է, սակայն, այս առթիւ : Միկոյեանի մեկնումէն առաջ , անշուշտ, միացեալ ղեկոյց մը պիտի հրատարակուի :

× Խորհ. Միութիւնը «օժանդակութեան» արշաւանք մըն ալ սկսած է Մերձաւոր – Արեւելքի վրայ : Անձնական նամակ մը յանձնուեցաւ առջի օր Նասրի Խրուշչեւի կողմէ : Եգիպտական մամուլը յատկապէս կը ծանրանայ այս նամակին կարեւորութեան վրայ «երբ արեւմուտքը անտեսական պլոքիւսի կ'ուզէ ենթարկել Եգիպտոսը» :

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

Պելժիական Սապենա օդանաւային ընկերութեան պատկանող մէկ ֆառավէրը որ Թեհրանէն Պոլիս կ'երթար պատահաբար իջած է Երեւան : Գարգ մըլուերու համաձայն օդաչուն ինք է որ, մեքենաներու խանգարման պատճառաւ արտօնութիւն ուզած է Հայաստան իջնելու : Օդանաւը Թեհրանէն Պոլսոյ եւ Աթէնքի համբոյ Պրիւսէլ կ'երթար : Պատմեց թէ ո՞ւր ըլլալը չէր գիտեր եւ կը կարծէր թէ Վանի (Թրքահայաստան, կը գրէ Ֆիկարօ) մօտ է երբ ըսած է թէ պէտք է հետեւի «Միկ»երու որոնք գինքը Խորհ. Միութիւն կ'առաջնորդեն : Պելժիա անմիջապէս պահանջած է որ օդանաւը եւ ճամբորդները արտօնութիւն ստանան մեկնելու :

ՀՈԼԱՆՏԱՑԻ մէջ երկու կառախումբեր սոսկալի բախում մը ունեցած են որուն հետեւանքով 104 հոգի մեռած են եւ 90 վիրաւորներ կան : Ազգային սուգ հռչակուած է երկրին մէջ :

յաստան) , ևոյնիսկ «եկեղեցի կառուցողները» (արտասահման) :

Ըստ Խրուշչեւի աւետարանին .—

« Սոցիալիզմի պայմաններում տեղի է ունենում ազգերի ծաղկում , ամրապնդւում է նրանց գերիչխանութիւնը» եւ , այնուհետեւ «կոմունիստական ծաւալուն չինարարութիւնը ՍՍՌՄում ազգային յարաբերութիւնների զարգացման նոր հանդրուան է նշանաւորում , որ բնութագրւում է ազգերի յետագայ մերձեցմամբ եւ նրանց լիակատար միասնութեան իրագործմամբ » , (Նոր ծրագիր , 4րդ գլուխ) :

Ըստ Ն. Զարեանի աւետարանին .—

« Հիանալի բան կը լինէր , եթէ մի առաւօտ քնից արթնանալով տեսնէինք , որ աշխարհում գոյութիւն չունի որեւէ ազգային կամ ընդհանուր տարբերութիւն եւ բոլոր ժողովուրդները միաձուլուած են մէկ ընդհանուր կոմունիստական հասարակութեան մէջ : Դա մեր իդեալն է » :

Ձե՞ս երգեր .—

Հալալէ, ջալօ՛, հալալէ,
Էս ի՞նչ բեաֆուր դարու հասանիք հալալէ :

Զարեանի խօսքերէն կը հասկցուի թէ շատեր, « անյապաղ միաձուլման կողմնակից, *շատում են մերկանալ դեռ ծոլին չհասած*» : Այսինքն , այժմէն իսկ կ'ուզեն տեսնել « ազգային կամ լեզուական որեւէ տարբերութիւն » վերցուած , « բոլոր ժողովուրդները միաձուլուած մի ընդհանուր կոմունիստական հասարակութեան մէջ » :

Կը թուի թէ դա՛րն է որ կը բերէ այս « ունիվերսալիզմը» .— Պապը կ'ուզէ որ ամբողջ մարդկութիւնը « միաձուլուի մի ընդհանուր կաթոլիկական հասարակութեան մէջ» : Յոյներու տիեզերական պատրիարքը կ'ուզէ որ ամբողջ մարդկութիւնը « միաձուլուի մի ընդհանուր օրթոտոքսական հասարակութեան մէջ» : Սուրբ Ռուսիոյ պատրիարքը ··· (ընթերցո՛ղ, դուն շարունակէ) : Իսկ Խրուշչեւ··· :

Դո՛ւն ինչ կ'ըսես, հա՛յ ժողովուրդ :

Զարեան խոհեմ է, կը խորհի թէ ժամանակ կը պահանջէ կոմունիզմի « իդէալին» հասնիլը : Մինչ այդ, ցանկութիւն կը յայտնէ կոմունիզմի նոր ծրագրին մէջ աւելցնել պարբերութիւն մը, որ շեշտէ լեզուներու պահպանութեան եւ զարգացման անհրաժեշտութիւնը :

Եւ իր խօսքին պոչին կը կապէ սա « դիալեկտիկան» .—

« Սովետական ազգային լեզուները ազգային կուլտուրաների հիմնական ձեւերն են, սոցիալիստական բովանդակութեան տարբեր ձեւեր եւ ինչպէս ասուած է Ծրագրում՝ պէտք է ազատ կերպով զարգանան, մինչեւ այն հեռաւոր երջանիկ ապագան, երբ նրանց բազմակողմանի ծաղկումը կը տայ այնպիսի հասունացած պտուղներ, որոնք հետզհետէ, անխուսափելի կերպով կ'անէանան մի նոր համամարդկային կոմունիստական լեզուի պայմաններում » :

Մենք ի վիճակի չենք հասկնալու այս – քան բարձր « դիսերտացիա» : Ուրեմն հասկնալի է որ ամբողջ մարդկութիւնը « միաձուլուի մի ընդհանուր կաթոլիկական հասարակութեան մէջ» : Յոյներու տիեզերական պատրիարքը կ'ուզէ որ ամբողջ մարդկութիւնը « միաձուլուի մի ընդհանուր օրթոտոքսական հասարակութեան մէջ» : Սուրբ Ռուսիոյ պատրիարքը ··· (ընթերցո՛ղ, դուն շարունակէ) : Իսկ Խրուշչեւ··· :

Դո՛ւն ինչ կ'ըսես, հա՛յ ժողովուրդ :

Զարեան խոհեմ է, կը խորհի թէ ժամանակ կը պահանջէ կոմունիզմի « իդէալին» հասնիլը : Մինչ այդ, ցանկութիւն կը յայտնէ կոմունիզմի նոր ծրագրին մէջ աւելցնել պարբերութիւն մը, որ շեշտէ լեզուներու պահպանութեան եւ զարգացման անհրաժեշտութիւնը :

Եւ իր խօսքին պոչին կը կապէ սա « դիալեկտիկան» .—

« Սովետական ազգային լեզուները ազգային կուլտուրաների հիմնական ձեւերն են, սոցիալիստական բովանդակութեան տարբեր ձեւեր եւ ինչպէս ասուած է Ծրագրում՝ պէտք է ազատ կերպով զարգանան, մինչեւ այն հեռաւոր երջանիկ ապագան, երբ նրանց բազմակողմանի ծաղկումը կը տայ այնպիսի հասունացած պտուղներ, որոնք հետզհետէ, անխուսափելի կերպով կ'անէանան մի նոր համամարդկային կոմունիստական լեզուի պայմաններում » :

Մենք ի վիճակի չենք հասկնալու այս – քան բարձր « դիսերտացիա» : Ուրեմն հասկնալի է որ ամբողջ մարդկութիւնը « միաձուլուի մի ընդհանուր կաթոլիկական հասարակութեան մէջ» : Յոյներու տիեզերական պատրիարքը կ'ուզէ որ ամբողջ մարդկութիւնը « միաձուլուի մի ընդհանուր կաթոլիկական հասարակութեան մէջ» : Սուրբ Ռուսիոյ պատրիարքը ··· (ընթերցո՛ղ, դուն շարունակէ) : Իսկ Խրուշչեւ··· :

Դո՛ւն ինչ կ'ըսես, հա՛յ ժողովուրդ :

Զարեան խոհեմ է, կը խորհի թէ ժամանակ կը պահանջէ կոմունիզմի « իդէալին» հասնիլը : Մինչ այդ, ցանկութիւն կը յայտնէ կոմունիզմի նոր ծրագրին մէջ աւելցնել պարբերութիւն մը, որ շեշտէ լեզուներու պահպանութեան եւ զարգացման անհրաժեշտութիւնը :

Եւ իր խօսքին պոչին կը կապէ սա « դիալեկտիկան» .—

« Սովետական ազգային լեզուները ազգային կուլտուրաների հիմնական ձեւերն են, սոցիալիստական բովանդակութեան տարբեր ձեւեր եւ ինչպէս ասուած է Ծրագրում՝ պէտք է ազատ կերպով զարգանան, մինչեւ այն հեռաւոր երջանիկ ապագան, երբ նրանց բազմակողմանի ծաղկումը կը տայ այնպիսի հասունացած պտուղներ, որոնք հետզհետէ, անխուսափելի կերպով կ'անէանան մի նոր համամարդկային կոմունիստական լեզուի պայմաններում » :

Մենք ի վիճակի չենք հասկնալու այս – քան բարձր « դիսերտացիա» : Ուրեմն հասկնալի է որ ամբողջ մարդկութիւնը « միաձուլուի մի ընդհանուր կաթոլիկական հասարակութեան մէջ» : Յոյներու տիեզերական պատրիարքը կ'ուզէ որ ամբողջ մարդկութիւնը « միաձուլուի մի ընդհանուր օրթոտոքս

ԽՆԶԱՐԱՑԻ ԲԱՐՁՈՒՆՔԻՑ

ՆՈՐ ԾՐԱԳԻՐԸ

Մոսկուայից հեռագիրները հաղորդե – ցին որ Մ. Միութեան համայնավար կու– սակցութեան 22րդ համագումարը հաս – տատել է Համայնավար կուսակցութեան նոր ծրագիրը, որ ասում են 180 էջնոց մի ծրագիր է : Շուտով անշուշտ կ'իմա– նանք մանրամասնութիւնները, բայց նախնական տեղեկութիւններից էլ արդէն պարզ է այդ ծրագրի էութիւնը :

Մինչեւ այժմ Մ. Միութիւնն անցնում էր նախահամայնավարական, այսպէս ա– սած նախապատրաստ. կոլեկտիւիզմի շրջան. սեփականութիւնը դառնում է հա– ւաքական, ամէն մարդ պէտք է աշխատի, բայց պէտք է վարձատրուի ըստ աշխա– տանքի. շատ արտադրողը շատ կը վար – ձատրուի, քիչ արտադրողը քիչ կը ստա– նայ :

1970 թուականին, ըստ նոր ծրագրի, կոլեկտիւիզմը լրիւ կերպով պէտք է յաղ– թանակէ, եւ Մ. Միութիւնը անտեսու – թեան եւ մշակոյթի զարգացումով պէտք է ներպաստէ Հիւս. Ամերիկան :

1980ին, ըստ նոր ծրագրի, վերջ պիտի դնէ կոլեկտիւիզմի շրջանը եւ Մ. Մի – ութիւնը պիտի թեւակոխէ կոմունիզմի՝ համայնավարութեան դարաշրջանը. սո – ցիալականութիւնը լրիւ կերպով պիտի դառնայ հասարակական, ամէն ոք պարտ– ուոր է աշխատել եւ աշխատանքը պիտի վարձատրուի ըստ կարիքի, 1980էց յե – տոյ Մ. Միութիւնը պէտք է դառնայ հա– մայնավարական դրախտ, ուր մարդիկ նուազագոյն աշխատանքով պիտի վայե – լեն առատեւզագոյն երջանկութիւն :

Ծրագիրը պատկերացնում է 1960–1980 թուականների աստիճանական զարգաց – ման հանգրուանները վիճակագրական տուեալներով, թուերով եւ փաստերով : Օրինակ, այս ինչ թուականին բանուոր – ների միութիւնը այսքան պողպատ պիտի արտադրէ, այսքան էլեկտրականութիւն պիտի ունենայ եւայլն, գերազրական թուեր՝ Ամերիկայի համեմատութեամբ :

Այդ ինձ յիշեցրեց մի զաւեշտաղրեր – գական պատմութիւն մեր կեանքից :

1921 թուականի Յունուարին, Ցեղկոմի առնձարձակապետութեան ամենամռայլ շրջանը Հայաստանում : Բոլշեւիկները «սոցիալիզմ էին կառուցում» Հայաստա – նի գիւղերում ու քաղաքներում : Ամէն ինչ արձանագրում, հաշուառկում եւ օ – բէնքի տակ էին դնում երբեք չգործա – գրելու համար : Մեզ մօտ, մանաւանդ գիւղերում ստեղծուել էր քաոս եւ անիշ – խանութիւն :

Մի օր մօտս եկաւ Ախտայի շրջանի մեր ընկերներից մէկը՝ Առաքել Բիճան : Մեր հասկացողութեամբ աշխատաւոր գիւղա– ցի էր ընկեր Առաքելը, իր ընտանիքի պէտքերին բաւարարող արտերից զատ, ունէր բաւականին մեծ մի ծառաստան, մեղրի փեթակներ եւ տան համար հաւ ու ճիւ : Բոլշեւիկների աչքին «կեղտոտ կու– լակ» էր :

Ընկերը Առաքելը եկել էր շրջանի կոմի– տէի յանձնարարութեամբ խնդրելու, որ դիմեմ կասեցնին, որպէսզի վերջ տրուի բոլշեւիկ կոմիսարների չհատատակութիւն– ներին Ախտայի շրջանում :

— Ապրել չի լինում, դանդատւում էր Առաքելը, ամէն օր մի գերադա գալիս է երեւանից, թէ կոմիսար եմ, ա՛յս տուր, ա՛յն տուր : Ա՛յս արա, ա՛յն արա : Իլալ չմնաց գեղականի մէջ : Ամէն ինչ արձա– նագրեցին, հաշուի տակ առին : Ամէնքի վրայ տուրք դրին, թէ այսքան ցորեն պիտի տաս, այսքան եռնջա, այսքան պա– նիր ու կարագ, այսքան, ես ինչ իմանամ ինչ :

— Տուն – տուն արձանագրեցին բոլոր հաւերը, չարունակեց Առաքելը քթի տա– կից խնդալով, արձանագրեցին, թէ այս– քան հաւկիթ պիտի տաք : Է՛, ցուրտ ձը– մեռ է, անիրաւ հաւերը չեն ածում, ո՞նց անենք.... Իլալ չմնաց գեղականի մէջ :

Կասեցնին պատմեցի Ախտայի շրջանի հաւերի «սարոտաժը» Ցեղկոմի իշխանու– թեան դէմ : Նոյնիսկ այդ խնդալ չիմա – ցող պաղպաղուր մարդը ծիծաղեց :

— Ուրեմն, ի՞նչ էք ուզում, որ անեմ, հարցրեց նա :

— Պարզ է, իրրեւ Ցեղկոմի նախագահ, «դեկրէտ» հանեցէք, որ հաւերը ածեն, այլապէս ...

— Այլապէս, կտրեց խօսքս դառն հեգ– նանքով, մեր ընկերները կ'ուտեն ...

Հիմա մտածում եմ ես. համայնավար – ների նոր ծրագիրը եւ նոր ծրագրի վիճա– կագրական թուերը արդեօք Ախտայի շր– ջանի ընկեր կոմիսարների հաշիւների նը– ման չե՞ն : Հապա եթէ «կոլեկտիւ» հա – ւերը չածեն, «կոմունիզմի դարաշրջանը» ո՞նց պիտի թեւակոխենք :

Բանն այն է, որ հաւ կոչուած կենդա – նին տարօրինակ արարած է ,ոչ մի «ռեզ– լեմենտացիայի» չի ենթարկւում :

Թէ որքան իրական են նոր ծրագրի թուերը եւ նախատեսութիւնները համայ– նավարութեան յաղթանակի մասին, այդ ցոյց կը տան դէպքերը : Այսօրուայ պայ– մաններում թէ համայնավարութեան ջա– տագովների, թէ հակառակորդների աս– լիքները միայն ենթադրութեան սահման– ներում կը մնան, ինչպէս մնացին մինչեւ այժմ ասուած բոլոր խօսքերը :

Բոլշեւիկները ասում էին, թէ իրենք ստեղծում են ապադասակարգային ընկե – րային կարգեր, բայց իրօք ստեղծեցին նոր դասակարգեր նոյնքան անարդար, որքան եւ առաջ : Մենք ասում էինք, որ Բոլշեւիզմը երկար չի ապրի : Վեց ամիս, 6 տարի, տասնըվեց տարի եւ կը խոր – տակուի, բայց տես չուտով կը լինի քա– ռասունըվեց տարի և ապրում է :Ընկեր– ային մարդարէութիւնը սուրճի գաւաթ նա– յելու պէս մի բան է, ասանկ ալ կ'ըլլայ, անանկ ալ կ'ըլլայ :

Ցամենայն դէպս, Բոլշեւիզմը դեռ ապ– րում է եւ «Նոր Ծրագիրը» ապացոյց է, որ դեռ յոյս ունի ապրելու երկար՝ ան– կախ նրանից, թէ որքան իրական է այդ յոյսը :

Երբ նոր ծրագրի բնագիրը ամբողջու – թեամբ հասնի արտասահման, մի ջազդա– յին հանրային մխքը, անշուշտ, բազմա– կողմանի ու մանրակրկիտ քննութեան կ'ենթարկէ նրա տուեալները : Առանձնա– պէս մեզ համար կենսական կարեւորու – թիւն ունի նրա լուրջ ուսումնասիրութիւ– նը : Հայաստանը անմիջական առարկան է համայնավարական վարչաձեւի փոր – ձերի եւ հայ ժողովրդի ապագան սերտ կապուած է Մ. Միութեան ապագայի հետ : Մենք պէտք է պիտենանք, թէ ի՞նչ է ներկայ վիճակը եւ ո՞ւր է գնում Մ. Միութիւնը :

Եւ պէտք է պիտենանք առաջին աղբիւ– րից եւ ոչ թէ պատահական ճամբորդների պատահական տեղեկութիւններից : Հա – մայնավարների նոր ծրագիրը այս տեսա– կէտից, անշուշտ, խիստ կարեւոր վաւե – րագիր է : Մորթրդային քաղաքականու – թեան շատ երեւոյթների բացատրութիւ– նը կարելի պիտի լինի գտնել այդ վաւե – րագրի մէջ :

Թէժբախտաբար, հայ միտքը Սփիւռ – քում վաղուց դադարել է նման լուրջ հարցերով զբաղուելուց : Հներից քիչ մարդ է մնացել, նորերը չեն հետաքրքր– ւում ընկերային հարցերով : Եւ ցաւալի պիտի լինի, եթէ նոր ծրագիրն էլ դիտ – ուի օտար լրագրողների ակնոցներով եւ ըստ այնմ մեկնաբանուի :

Պէտք է նկատի ունենալ, որ շատ երե – ւոյթներ եւ պաղափարներ Մ. Միութեան մէջ տարբեր նշանակութիւն ունեն, քան « ազատ աշխարհում» : Օրինակի համար՝ «կոլեկտիւիզմ», «անդասակարգ պետու – թիւն», «ազգութիւն »եւն. : «Կոլեկտիւ» ընկերային կա՞րգ է ներկայ կարգը Մ. Միութեան մէջ : Ընկերային պետութեան հասկացողութեամբ , ի տարկէ ,ոչ :

« Ազատասակարգայի՞ն պետութիւն» է Մ. Միութիւնը : Հարուստներ եւ աղքատ– ներ չկա՞ն այնտեղ : Արտադրութիւնը եւ սպառումի գծով ընկերային բոլոր խա – ւերը երկրում համաչափ հատուցմա՞ն են ենթարկուած : Ի հարկէ, ոչ : Երբ կան միլիոնատէրներ եւ տակաւ օրըցայ հացի համար աշխատավարձ ստացողներ, ուր կան տէրեր ու ծառաներ, ծիծաղելի չէ՞ « ազատասակարգային» խօսքը :

Մի երկրում , ուր ի զօրու է դրամա – կան դրութիւնը, ուր կայ անհատական առուծախ չուկայում, ուր կարող էք դը – րամով սպասաւորներ պահել, ուր դոյու– թիւն ունեն դրամատուներ, որոնց մէջ կարող էք միլիոններ պահել որոշ տոկոս ստանալով, այդ ընկերվարութիւն է կամ կոլեկտիւիզմ՝ ա լա բոլշեւիկ : Շատ – շատ խորհրդային ներկայ ընկերային կարգը կարելի է կոչել պետական դրա – մատիրութիւնը, անհատ գործարանատի– րոջ տեղը բռնել պետութիւնը, որպէս դրամատէր, որ նոյնքան եւ աւելի չահա– գործում է աշխատաւորներին :

Նոր ծրագիրն ասում է, որ պետու – թիւնը իր իրաւունքների եւ պարտակա – նութիւնների, այսինքն իշխանութեան մեծ մասը պիտի փոխանցի ազակենտրոն շրջաններին, այսինքն՝ ժողովրդին : Հնարաւո՞ր է այդ, երբ Մ. Միութիւնը շրջապատուած է անհաչտ թշնամիներով : Լենինը դեռ քառասուներկու տարի առաջ յայտարարեց պետութեան եւ դրամի մա– հը, բայց պետութիւնն ու դրամը ոչ մի – այն չանհետացան, այլեւ աւելի զօրա – ցան ...

Երեւի նոր ծրագիրը նկատի ունի, որ մէկ երկու տասնեակ տարիների ընթաց– քում Բոլշեւիզմի հակառակորդ ուժերը այնքան պիտի տկարանան, որ այլեւս վտանգաւոր չեն լինի խորհրդային տի – րակալութեան համար, բայց, ինչպէս ա– սում են, հաւի ճուտը աշնանն են հաչ – ւում ...

Մեր նպատակը համայնավար ծրագրի ըստ էութեան քննութիւնը չէր : Մինչեւ ծրագրի բնագիրը ձեռքի տակ ունենալը, այդ մասին խօսքը վաղաժամ է :

Սակայն վաղաժամ չէ, այլ նոյնիսկ ուղ է հրաւիրել մեր հասարակութեան, մա– նաւանդ երիտասարդութեան ուշադրու – թիւնը Մ. Միութեան հետ կապուած ըն – կերային հարցերի լուրջ ուսումնասիրու– թեան վրայ :

Ի՞նչ անդրադարձում կարող է ունենալ համայնավար կուսակցութեան նոր ծրա– գիրը նաեւ մեր վրայ :

Ս. ՎՐԱՅԵԱՆ

ԱՐԵՒԵԼՔ, ԱՐԵՒՄՈՒՏՔ ԵՒ ԹՈՒՐՔԻԱ

ՕԳՆՈՒԹԵԱՆ ՎԱՋՈՂՆԵՐՈՒ ՊԱՐԸ ... ԹՈՒՐՔԻՈՅ ԱՌՋԵՒ

Արեւմտեան հեռագրական գործակա – լութիւններէն առնելով հաղորդեցինք թէ ի՛ջ փութիկոտութիւն ցոյց կուտան Ամե– րիկան եւ Ռուս. Միութիւնը՝ օգնութեան հասնելու համար Թուրքիոյ : Ի՞նչ հո – գածութիւն, ի՞նչ դուրգուրանք :

Այս անգամ, թուրք թերթերէն կը քա– ղենք հետեւեալ տեղեկութիւնները այն եռուզեռին մասին, զոր ցոյց կուտան ռուս եւ ամերիկեան դեսպանները, Անգ – արայի մէջ :

Նախարարներու խորհուրդը չորս ժամ տեւողութեամբ երկարատեւ նիստ մը գումարեց եւ քննեց օժանդակութեան ա – ռաջարկը, որ կատարուած է Ռուս. Մի– ութեան կողմէ : Վարչապետ Ինէօնիւ եւ Արտաքին նախարար Մելիմ Սարփեր բա–

մատիրութիւնը, անհատ գործարանատի– րոջ տեղը բռնել պետութիւնը, որպէս դրամատէր, որ նոյնքան եւ աւելի չահա– գործում է աշխատաւորներին :

Նոր ծրագիրն ասում է, որ պետու – թիւնը իր իրաւունքների եւ պարտակա – նութիւնների, այսինքն իշխանութեան մեծ մասը պիտի փոխանցի ազակենտրոն շրջաններին, այսինքն՝ ժողովրդին : Հնարաւո՞ր է այդ, երբ Մ. Միութիւնը շրջապատուած է անհաչտ թշնամիներով : Լենինը դեռ քառասուներկու տարի առաջ յայտարարեց պետութեան եւ դրամի մա– հը, բայց պետութիւնն ու դրամը ոչ մի – այն չանհետացան, այլեւ աւելի զօրա – ցան ...

Երեւի նոր ծրագիրը նկատի ունի, որ մէկ երկու տասնեակ տարիների ընթաց– քում Բոլշեւիզմի հակառակորդ ուժերը այնքան պիտի տկարանան, որ այլեւս վտանգաւոր չեն լինի խորհրդային տի – րակալութեան համար, բայց, ինչպէս ա– սում են, հաւի ճուտը աշնանն են հաչ – ւում ...

Մեր նպատակը համայնավար ծրագրի ըստ էութեան քննութիւնը չէր : Մինչեւ ծրագրի բնագիրը ձեռքի տակ ունենալը, այդ մասին խօսքը վաղաժամ է :

Սակայն վաղաժամ չէ, այլ նոյնիսկ ուղ է հրաւիրել մեր հասարակութեան, մա– նաւանդ երիտասարդութեան ուշադրու – թիւնը Մ. Միութեան հետ կապուած ըն – կերային հարցերի լուրջ ուսումնասիրու– թեան վրայ :

Ի՞նչ անդրադարձում կարող է ունենալ համայնավար կուսակցութեան նոր ծրա– գիրը նաեւ մեր վրայ :

Ս. ՎՐԱՅԵԱՆ

ԱՄԲԱՍՏԱՆԵԱԼ ՍԹԱԼԻՆ, ՈՏՔԻ՛

Զայն չհանեց, բայց, խղդին թղթա – ծրարը խնամքով պահեց :

Երբ Քալինին «ալակոզմեան»ներուն միացաւ, Սթալին թոյլ տուաւ որ բաւա– կան առաջ երթայ, ապա իր զրասենեակը կանչել տուաւ Քալինինը.

— Շատ կարեւոր զործի մը համար է. լաւ զրկեց :

Ժպիտով մը ներս առաւ զայն ու թղ – թածրարը զրաւ ձեռքին մէջ :

— Աչք մը նետեցէք ասոր վրայ, ըսաւ. մեր զաղտնի սպասարկութիւնները ան – պատման սխալմունքի մէջ ըլլալու են :

Քալինին զոյնը նետեց, զլուխը կորան– ցուց, քանի մը բառ կակազեց, Սթալին սկսաւ քահ քահ խնդալ .

— Ի՞նչ զայթակղութիւն. Սովետներու Հանրապետութեան Նախագահը զողու – թեամբ ամբաստանուած : Բայց այս բո– լորը կրնայ կարգադրուիլ ...

Արդարեւ , կարգադրուեցաւ : Քալինին մնաց նախագահի իր պաշտօնին վրայ . պարուհին պահեց վզնոցը. եւ Սթալին ունեցաւ ձայներու առաւելութիւնը :

Այդ թուականէն սկսեալ, Քալինին այլ եւս ոչ մէկ բան մերժեց Սթալինի : Նոյն– իսկ իր ստորագրութիւնը կցեց իր բարե– կամներուն՝ Խուխարինի եւ Ռիքովի մա – տնագրին թուղթին :

ՄԱՌԵՇԱԼԻՆ ԿԻՆԸ ՆՈՐԷՆ ՍՐՏԻ ՏԱԳՆԱՊ ՈՒՆԻ

Մառեչալ Պուտիէննիի մասին, ամէն մարդ ժպտալով կ'ըսէր՝ նախ «մառեշալ– ֆէլրաճ» (պայտագործ) եղած է, յետոյ՝ «մառեշալ տէ լոժի» (հին բանակներու մէջ՝ ենթասպայ) եւ վերջապէս՝ մառե – շալ :

Այս տիտղոսին վրայ մառեշալ Պուտիէն– նի կրնայ ուրիշ մը եւս աւելցնել. Մ.Մի– ութեան առաջին տնող մառեշալներէն մի– ակն է, որ տակաւին ի պատուի է այսօր. միւսներէն՝ Թուխաչեւսքի, Եէկորով, Բլիւխէր, զնդակահարուած են. իսկ Վո– րոշիլով այսօր կ'ամբաստանուի որպէս « հակակուսակցական » : Ընդհակառա – կըն, Պուտիէննի, վերջերս դարձեալ ըն – տրուեցաւ Կեդր. Կոմիտէի անդամ :

Ցարական բանակներու այս նախկին ենթասպան, որ 1918ին բոլշեւիկներուն միացաւ ու քաղաքացիական պատերազմի օրերուն զնդապետ նշանակուելէ ետք, ի վերջոյ հասաւ մառեշալի աստիճանին, ամէն բան կը պարտի Սթալինի հանդէպ ունեցած սորուկի հաւատարմութեան : Հաւատարմութիւն մը, որ ոչ մէկ կապ ունէր քաղաքական կամ այլ համոզմունք– ներու հետ. բայց պարզապէս հիմնուած էր շանթաժի վրայ :

Այս եռուն զինուորականը, որ հասա – րակ չարքերէն բարձրացած էր մինչեւ ա– մէնէն բարձր աստիճանին, յեղափոխա – կան ժամանակներու ատեն շատ սովորա– կան եղող արկածախնդրութեան մը մէջ մտաւ : «Նոր պարոններու» կերթ չորա – նակին մէջ, անոնց ձեւերը կապկել սոր – վելէ ետք, չուտով այն եղրակացութեան հասաւ, թէ իր կինը այլեւս յարմար չէր իրեն (այս կնոջ հետ ամուսնացած էր տակաւին ենթասպայ եղած միջոցին) :

Սիրուհի մը առաւ. բայց մառեշալին կինը չէր ուզեր հանդուրժել այս վերա – ւորանքին : Իուռն կերպով բողոքեց ա – մուսնին եւ միշտ խնդիր կը հանէր : Մա– ռեշալն ալ համբերատար բնաւորութիւն չունէր :

Օր մը, Սթալին լուր առաւ թէ տիկին Պուտիէննի անհանդիստ է. իր բժիշկները զրկեց հիւանդին քով : Բայց մառեշալին կինը այլեւս պէտք չունէր բժիշկներու խնամքին. այս վերջինները կրցան միայն հաստատել, թէ հիւանդը մեռած էր սրտի տաղնապի մը հետեւանքով :

Մառեշալը, Սթալինի օրհնութեամբ, ամուսնացաւ իր սիրուհիին հետ : Բայց օր մը, Սթալին իր մօտ կանչել տուաւ Պուտիէննին : Այս վերջինը անակնկալի եկաւ, երբ տեսաւ թէ Սթալին առանձին չէ. ներկայ էին նաեւ այն երկու բժիշկ – ները, որոնք առաջին տիկնին Պուտիէննիի մահը բնական յայտարարած էին :

— Ըսէք ինչ որ պիտէք, բժիշկներուն հրամայեց Սթալին :

Բժիշկները ըսին իրենց պիտացածը եւ Պուտիէննի անմիջապէս ըմբռնեց, թէ ո – րուն կը պարտէր բժիշկներուն «բարեա – ցակամութիւնը»: Երբ բժիշկները զրա – սենեակէն դուրս ելան, Սթալին եւ Պու – տիէննի զլուխ զլխի մնացին : Ոչ ոք պիտցաւ թէ ինչ ըսին իրարու, բայց զժ– ուար չէ երեւակայելը, երբ նկատի ունե– նանք թէ ամբողջ քսանըվինդ տարի Պու– տիէննի Սթալինի ամէնէն հաւատարիմ օգնականն ու լրտեսը մնաց :

Սթալինի կենսագիրներէն մէկը հետեւ– եալ մանրավէպը կը յիշէ, որ պատերազ– մէն առաջ բերնէ բերան շրջան կ'ընէր Մոսկուայի մէջ :

Օր մը, Սթալին իր քով կանչել կուտայ Մոլոթովը .

— Յարաբերութիւններդ ի՞նչպէս են Կականովիչի հետ :

— Շատ լաւ են .

— Բայց լսեցի որ Կականովիչ ամէն մարդու կը պատմէ, թէ կակազ ես :

— Ի ... ի... բականութիւնը այն է , որ կը կա... կակազեմ :

— Այո, բայց ինչո՞ւ այդքան կը խօսի այս մասին : Անպայման յետին նպատակ մը ունի :

— Իրաւունք ունիս. արդեօք նպատակը ի՞նչ է.— կը մտածուի Մոլոթով :

(13 Շար.)

ցատրութիւն տուին ղեսպան Ռիժովի առաջարկներուն մասին :

Ժողովէն մեկնած ատեն Սարիբեր խոստացաւ բացատրութիւն տալէ : Վարչապետին օգնականը Ա. Բյիտոզան անպատասխան թողուց լրագրողներուն հարցումները :

ՌՈՒՍԵՐՈՒՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ

Շահագրգռուողները սակայն հրապարակեցին մէկ մասը այն տեսակցութիւն – ներուն, զորս խորհրդ. մեծ դեսպան Նիքիթա Ռիժով անցեալ շաբթու կատարած է թուրք կառավարական մարդոց հետ : Դեսպանը յայտնած է թէ Խորհրդ. Միութիւնը իր բարի կամեցողութիւնը կը բերէ եւ թէ կ'ուզէն զարգացնել բարի դրացնութեան յարաբերութիւնները Թուրքիոյ հետ :

Խորհրդային տեսակէտը հետեւեալ ձեւով կ'ամփոփուի .

1.— Աչխարհի խաղաղութեան տեսա – կանացման տեսակէտով՝ տեղին պիտի ըլլայ որ Թուրքիոյ հրթիռի խարխնները եւ մնացեալ խարխնները վերցուին :

2.— Ոչ Թուրքիա Խորհրդ. Միութեան, ոչ ալ Խորհրդ. Միութիւնը Թուրքիոյ որեւէ սպառնալիք պիտի չընեն յարձակում գործելու, եւ այս մասին երաշխիք պիտի տան :

3.— Աթաթիւրքի եւ Լենինի ընդհանուր ռուսեւթրքական բարի դրացնութեան յարաբերութիւնները պէտք է վերահաստատուին :

4.— Խորհրդ. Միութիւնը եթէ փափաք յայտնուի, պիտի կրնայ Թուրքիոյ օժանդակութիւն ընել կարգ մը պայմաններով :

Շահագրգռուողները կը հաղորդեն թէ ղեսպանը իր չփումներուն ընթացքին օ – ժանդակութեան նիւթին շուրջ որեւէ դումար կամ պայման չէ թուած, միայն ըսած է թէ կրնայ օժանդակութիւն ընծայել :

« Աքչամ » թերթին համաձայն Խորհ. Միութենէն օժանդակութիւն ուզել խնդրոյ առարկայ չէ :

Դարձեալ «Աքչամ»ի համաձայն, Խորհ. Միութիւնը կ'առաջարկէ գործադրել օ – ժանդակութեան յայտարար մը, որ կը նախատեսէ փուխով կանխել սովի վտանգը արեւելեան Անատոլուի մէջ : Ռուսերը Տրապիզոնին վրայով առատ պնդանութիւ պիտի ղրկեն արեւելեան շրջան : Ասիկա՝ կարճ պայմանաժամով օժանդակութիւն է : Ասկէ զատ, երկար պայմանաժամով օ – ժանդակութեան ծրագիրներ ալ մշակած են, որով կարճ ատենէն պիտի կրնայ վերականգնիլ Անատոլուն : Այս նպատակով, նախ անհանաբաւժութիւնը պիտի զարգացնեն, միւս կողմէ ալ քրաֆթէօլի, երկրագործական գործիքներ, մօրթի գործածքներ պիտի հիմնեն եւ թաքուն անդրծուքեան վերջ պիտի տան : Ռուսերը բացատրած են թէ արեւելեան շրջանին բը – նակչութեան վիճակին ալ կրնան բարելաւել եւ մինչեւ դիւղերը էլեկտրական լոյս փոխադրել :

Այս բոլորին փոխարէն, Թուրքիայէն քրոմ, բամպակ, ծխախոտ, շոր պտուղ եւ նարինջ պիտի գնեն : Կ'ուզուի նաեւ որ Խուրքիոյ արտաքին քաղաքականութիւնն ալ բարեփոխուի եւ ուղղուի դէպի չեզոքութիւն :

ԻՄԿ Ի՞ՆՉ Կ'ԸՍԵՆ ՌՈՒՍԵՐԸ

Անգարայի ամերիկեան դեսպան Ռէյմըտ Հէր վարչապետ Իսմէթ Ինէօնիւի այցելելով ժամ մը յիսուն վայրկեան տեւակցեցաւ : Կը հաղորդուի թէ վարչապետը եւ ամերիկեան դեսպանը Թուրքիոյ ընծայելի օժանդակութեան մասին տեսակցած են թէ զինուորական եւ թէ կ'ուզեն տնտեսական օժանդակութիւնը աւելցնել :

Հէր վարչապետարանէն մեկնած պահուն լրագրողներուն յայտարարեց թէ վարչապետին հետ կարեւոր տեսակցութիւններ ունեցած է առաւելապէս օժանդակութեան մասին :

Ամերիկեան դեսպանը ինքնաշարժը նստելէ առաջ՝ վար իջաւ եւ լրագրողներուն քով դալով յայտնեց թէ կ'ուզէ յայտնել բարութիւն մը տալ եւ հետեւեալը ըսաւ.

— « Օժանդակութեան մասին կացութիւնը ցարդ լաւ էր, հիմա ալ լաւ կ'ընթանայ : Մեր տեսակցութեան նպատակն է այս լաւ կացութիւնը ալ աւելի լաւ դարձնել : Մեր տեսակցութիւնները լաւ եւ կարեւոր են» :

Լրագրողները թէեւ ուզեցին վերահասու դառնալ ամերիկեան դեսպանին տեսակցին Անգարայի Խորհրդային դեսպանին չփումներուն մասին, բայց հէր ոչինչ լսաւ այդ մասին :

Արտաքին գործավար Սէվիմ Սարփէր, որ ներկայ եղած էր այս տեսակցութեան, վարչապետարանէն մեկնած պահուն հետեւեալը յայտարարեց .

— « Երկու ժամ տեւեց տեսակցութիւնը : Դեսպանը յայտնեց թէ ինք եւ թէ իր կառավարութիւնը ջանք կը թափեն, որպէսզի ալ աւելի օգտակար դարձնեն տնտեսական եւ զինուորական օժանդակութիւնները» :

Այնուհետեւ վարչապետ Իսմէթ Ինէօնիւ ամերիկեան դեսպանին հետ ունեցած տեսակցութեանը մասին յայտարարեց . «Շատ գոհ եմ : Շատ գոհ եմ : Շատ լաւ բաներու մասին խօսեցանք» :

Ամերիկեան կառավարութիւնը որոշած է աւելցնել օժանդակութիւնը , նկատելով որ Թուրքիոյ մէջ զօրաւոր կառավարութիւն մը հիմնուած է եւ կայունացման չորրիւ վերականգնումի ծրագիրը հաշտ է Քենըտիի կայունացման քաղաքականութեան :

Դեսպանը Ինէօնիւի հաղորդած է թէ Մ. Նահանգաց հնարաւորութեանց սահմանին ներքեւ պիտի աւելցուի օժանդակութիւնը :

ՖՐԱՆՍԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

«ԲՐԻՍՏՈՍ՝ ՎԵՐՍՏԻՆ ԽԱՉՈՒԱԾ»

Ցոյն մեծանուն դրաղէտ – վիպասան Նիքոս Քազանձաքիի գործերը սիրացած են համաչխարհային համբաւ մը : «Ա – լեքսի Զորպա», «Մահ կամ Ազատութիւն» եւ մանաւանդ «Քրիստոս՝ վերստին խաչուածը» թարգմանուած են բազմաթիւ լեզուներով :

Շարժանկարը նոյնպէս իրագործած էր Քազանձաքին, անոր «Քրիստոս՝ վերստին խաչուածը» վերածելով ժապաւէնի մը :

Այս անգամ Ֆրանսական թատրոնն է որ ձեռք կը զարնէ անոր : Արդարեւ, Ֆրանսացի Թատերադէտ Ժրանսուա Տա – վիճ Քազանձաքիի վէպը վերածած է թատերգութեան մը, ընդգրկելով այդ գործը ճարտար ամփոփումի մը մէջ պարփակելով, ջանալով իր թատերգութեան մէջ դետեղել վէպին մանրամասնութիւնները : Դժուար գործ, ուրկէ Ֆրանսացի թատերադէտը կրցած է յաղթանդամ դուրս դալ :

Ֆրանսացի յայտնի բեմադիր՝ Տիվիէն Մարսել Թասէնքուր առանձնած է թատերգութեան բեմադրութիւնը, եւ այս միջոցիս՝ Վերսայլի Թէաթրը որ Մոն – փառնիէի բեմին վրայ յոյն վիպասանին երկը կ'արժանանայ ժողովրդական խանդավառ ընդունելութեան մը :

Քազանձաքիի « Քրիստոս՝ վերստին խաչուած»ին նիւթը ծանօթ է արդէն շատերուն, որուած ըլլալով այդ վէպին Ֆրանսայի մէջ դտած անօրինակ ընդունելութիւնը :

Ա. Համաչխարհային պատերազմէն անմիջապէս եաք եւ 1922ի արտագաղթէն քիչ մը առաջ, Անատոլուի Լիքովրիսոսի դիւղին մէջ կ'ապրին Յոյներ, բոլորն ալ երջանիկ եւ բարեկեցիկ, հակառակ այն մտրակին զոր կը չափեցնէ ամէն առթիւ դիւղին մահմետական Աղան՝ որ կը ներկայացնէ Թրքական իշխանութիւնը :

Դիւղին «փոփ»ը՝ Կրիկորիս երաւունք ունի նոյնիսկ ամէն տարի ներկայացնելու Քրիստոսի «Զարչարանք»ը , իր դերա – կատարները ընտրելով դիւղին քրիստոն – եայ բնակիչներէն :

Դերերը կը բաշխուին : Հովիւ Մանոլիս կը ստանձնէ Յիսուսի դերը : Մի ոմն Փանայոթաոս կը մարմնաւորէ Յուդա Իսկարովտացին, եւ դիւղին մէկ քանի եբիտասարդները կ'ըլլան Քրիստոսի աչակերտները :

Այդ միջոցին, յանկարծ, ուրիշ դիւղի մը խումբ մը բնակիչները, Թուրքերէն հալածուած, հարստահարուած ու կողոպտուած , երեք ամսուան հետիոտն ճամբորդութենէ մը եաք կը հասնին Լիքովրիսոս : Ցողնաբեկ, սովալլուկ եւ կիսամեռ այս դաղթականները հաց կը խնդրեն նախ եւ առաջ եւ ապա կը ցանկան ունենալ խոպան հողեր՝ աչխատելու համար :

Առանց որեւէ Քրիստոնէական զութի , փոփ Կրեկորիս եւ դիւղին մեծամեծները կտրուկ կերպով կը մերժեն դժբաղտութեան դիրկը նետուած իրենց եղբայրա – կիցները, որոնց մէջ կը տեսնեն միայն ու միայն անբաղձալիներ եւ դատարկապորտներ :

Եւ ահա, նոր «Զարչարանք» մըն է որ ծայր կուտայ դիւղին մէջ, ուր, բնակիչները կը բաժնուին 2 հատուածներու , եւ որոնց Պիղատոսեան իրաւարարը կ'ըլլայ մահմետական Աղան :

Այդ պահէն սկսեալ, կարծես նախասահմանուած կարդադրութեամբ մը , աստուածային թատերգութեան բարի ու չար դերակատարները, բոլորն ալ, առանց բացառութեան, կը նոյնանան իրենց ստանձնած տիպարներուն հետ, կը մոռնան ու կ'անդիտանան այլեւս իրենց իսկական անհատականութիւնը եւ այս դանդիճաղանճին մէջ է որ վերստին կը խաչուի Քրիստոսը՝ այսինքն հովիւ Մանոլիոսը :

Տիկին Մարսէլ Թասէնքուրի շուրջ հաւաքուած դերասանները, իրենց փայլուն տաղանդով, կրցած են յոյն վիպասանին այս ցնցող երկին տալ արուեստի հզօր շունչ մը, երկը դարձնելով կրկնակիօրէն յուզիչ ու մարդկային :

Դերակատարներէն յատկապէս յիշատակութեան արժանի են Տիկին Տորա Տոլ (Մարիամ Մադթալինացի), Սերժ Մերլին (Հովիւ Մանոլիոս), ինչպէս նաեւ այլ արժանաւոր արուեստագէտներ» Ռաուլ Տէրպլէ, Լուի Արպէսիէ, Փիեր Թապար, Ալէն Փոթէ, Ժերար Լորէն եւ ուրիշներ :

Ֆրանսական մամուլը միաձայնութեամբ դրուատական տողեր կը նուիրէ Տիկին Մարսէլ Թասէնքուրի այս նոր ձեռնարկին, եւ կը մաղթէ որ յոյն վիպասան Քազանձաքիի այս հոյակապ գործը ներկայացուի չուտով նաեւ փարիզեան բեմի մը վրայ :

ԱՐՏԱՇԷՍ ԳՄԲԷԹԵԱՆ

«ՅԱՌԱՋ»Ի ԹԵՐԹՕՆԸ (130)

ԹԻԱՊԱՐՏԸ

(ՎԷՊ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿԵԱՆՔԷ)

ԳՐԵՑ

ԱՐՄԷՆ ՇԻՏԱՆԵԱՆ

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

— Կը խնդրեմ, Վանակա՞ն, ուղղակի Տ. Կոմիտասին տունը գացէք. իսկ ես կուսակցութեանց ներկայացուցիչները տեսնելու պիտի երթամ : Ժամանակ չը – կայ. վաստերու վրէժխնդրութիւնը պոռթկալու աստիճանին հասած է եւ մենք ա – ղետաւոր վտանգի մը դիմաց կը դտնուինք : Երթանք... երթանք... ան որ իր պարտականութեան մէջ դասալիքի՛ ըլլայ, իր կոչումին կը դաւաճանի ...

Գիշերուան ժամը չորսը կը մօտենար երբ Ներսէս Արծրունին ու Վանական մեկնեցան :

ՎԵՂԱՐԱՒՈՐ ՈՒ ՔԱՀԱՆԱՅ

Արեւը նոր ծագած էր ղեղեցիկ անհուն կապոյտին մէջ : Անուշ հով մը կը փչէր :

Այդ միջոցին Արարուց նորաչէն եկեղեցին վարդապետ մը կը մտնէր :

Վարդապետին դլուխը կխոսվին ծած – կուած էր սեւ մեւաքսախառն վեղարով մը, որուն տակէն արտայայտուղ դէմքը մեր ծանօթ Վանականին էր :

— Զաւակս, տէր հայրը հո՞ս է, հար – ցուց վարդապետը բակին մէջ կեցող ե – բիտասարդի մը :

— Ո՞ր տէր հայրը, նկատել տուաւ ե – բիտասարդը :

— Տէր Կոմիտաս, չեշտեց վարդապե – տը :

— Հոս է... իր խուցն է, մրմնջեց ե – բիտասարդը :

— Կը խնդրեմ, բարի զաւակս, ցոյց տուէք ինձ տէր հօր խուցը :

Երիտասարդը յարդանքով մը առաջնորդեց վարդապետը Տէր Կոմիտասին խուցը :

Տէր Կոմիտաս նստած էր խուցին մէջ եւ կը զբաղէր նշխարները չինելու : Երբ վարդապետին ներս մտնելը տեսաւ, մէ – քենաբար ոտքի ելաւ ու հրամցուց որ մինտարին վրայ բազմի :

Վարդապետը լռիկ ու լուրջ եղանակով մը մինտարին վրայ կծկտեցաւ ու Տէր Կոմիտասին վրայ նայեցաւ որուն առջին փոքր սեղանիկ մը դրուած էր :

— Քաղքէ՞ն կուգաք, հայր սուրբ, հարցուց Տէր Կոմիտաս :

— Ոչ, վանքէն կուգամ, պատասխա – նեց վարդապետը :

— Վարագա՞յ վանքէն :

— Այո :

Պիտի փափաքի՞ք քանի մը օր հոս մը – նալ :

— Տեսնենք... մտադիր եմ երկու օրի չափ ձեր եղբայրութեան հիւրը ըլլալու : Անչուշտ, այդ չնորհքը չէք պանար , ա – նանկ չէ՞ :

— — Ամենայն սիրով, հայր սուրբ, ատ ի՞նչ խօսք է. մեր դլխուն վրայ անդամ տեղ ունիք : Արդէն. չատոնց է որ Վա – րագայ վանքէն վարդապետներ չեն եկած հոս :

— Շնորհակալ եմ. մրմնջեց վարդա – պետը՝ որ կը ջանար դէմքը ծածկել ու ձայնը կեղծել :

Ու յետոյ, խորունկ հառաչանք մը հա – նելով , հարցուց .

— Տէր եղբայր, քաղքին դրութիւնն ի՞նչպէս է :

— Ոհ, բնաւ մի հարցնէք, պատասխա – նեց Տէր Կոմիտաս՝ որ առջեւի սեղանը մէկդի դրաւ ու նշխարներու տուփերը տեղաւորեց արկղիկի մը մէջ :

— Ինչո՞ւ համար... արդեօք ծանր դէպքեր պատահած են այս օրերուս մէջ :

— Դէպքերը չարաւեւ են... առանց նկատմամբ բան մը ըսել չէ դիտաւորու – թիւնս :

— Հապա՞ .

— Ի՞նչ ըսեմ... դուցէ յայտնի չեն ձեր սրբութեան հոս անցած դարձածները :

— Չէ... բան մը լմացած չեմ : Վը – տա՞նդ մը կայ :

— Այո... մեր ձեռքով պերեզման մը կը պատրաստենք, հայր սուրբ :

— Ի՞նչպէս ... չեմ հասկնար :

— Ըսել կ'ուզեմ թէ անդիտակցաբար դէպի անդունդը կը դիմենք , առանց լը – սելու ձայնն՝ որ ցոյց կուտայ մեր աղետալի կորուստը :

— Ո՞վ է դէպի անդունդը դիմողը :

— Մի՞թէ չէ՞ք դիտեր. ո՞վ պիտի ըլ – լայ, բացի քանի մը տաք դլուխ երիտասարդներէ, որոնք կարծնուն պէս կը կապեն ու ամէն բան իրենց խելապատակին համաձայն կը կատարեն :

Քանի մը երիտասարդներ ի՞նչ կարող են ընել, Տէր եղբայր :

— Հը՛ըմ... մէկ մըն ալ ատ առարկութիւնն անոնց առջին ըրէք. ան ատեն կը տեսնէք թէ իրենք ի՞նչ են. ինչ գիտեն եւ ի՞նչ կրնան ընել : Անանկ եկեղեցի է աս, քահանա՞յ է, վարդապե՞տ է, մէկ խօսքով կրօնական՞ մըն է, բանի մը տեղ չեն դներ ու տգիտութիւն կը համարին հաւատալ մեր բոլոր նախնեաց օրէնքներն – րուն ու ծէսերուն :

(Շար.)

Պ. Պ. Ցակոբ եւ Մովսէս Ժամկոչեան խոր ցաւով կը ծանուցանեն իրենց քրոջ և քրոջ զաւակներուն

ՍԻՐՎԱՐԴ ՍԸՆԸՔՃԵԱՆի եւ ՄԱՐի Եւ ԺԻՐԱՅՐ ՍԸՆԸՔՔԵԱՆԻ, եղերական մահը, որ տեղի ունեցաւ կառքի արկա – ծով, Ցունուար 7ին, Կիրակի :

Յուղարկաւորութիւնը՝ այս Հորեքշաբ– թի, ժամը 10·30ին, Փարիզի Ս. Յով – հաննէս Մկրտիչ Եկեղեցին, ուրկէ մար– մինները պիտի փոխադրուին Փանթէոնի դերեզմանատունը :

Մահազդ չստացողներէն կը խնդրուի, ներկայս իբրեւ այդ նկատել :

Պ. Ռուբէն Գիւլխանդանեան ցաւով կը ծանուցանէ իր մօր՝

ՀԱՅԿԱՆՈՒՇ ԳԻՒԼԽԱՆԴԱՆԵԱՆի

մահը, որ տեղի ունեցաւ Ցունուար 4ին :

Յուղարկաւորութիւնը կատարուած է Երեքշաբթի առաւօտ, չատ մտերիմ չըր– ջանակի մէջ եւ մարմինը ամփոփուած է Մոնմորանսիի դերեզմանատունը :

Ֆ. Կ. ԽԱՉԻ ԱՆԻԷՒ – ՊՈՒԱՔՈԼՈՄՊի ՄԱՍՆԱՃԻՒղի ՏԱՐԵԿԱՆ ԹԷՅԱՍԵղԱՆԸ

Անիէռի թաղապետարանի սրահին մէջ Սաթք Ատմինիսթրաթիֆ է Սոսիալ :

Այս Կիրակի, ժամը 15էն 20 :

Կը հրաւիրուին Փարիզի եւ չրջաններու ընկերուհիներն ու համակիրները :

Գեղարուեստական ճոխ բաժին եւ անա– կընկալներ :

Մուտքը ազատ է :

Կ'ՈՒԶՈՒԻ

Ouvrières à Domicile pour Chemisiers.

Travail soigné.

JASMINE (BALTAYAN)

19, Rue du Fbg. St.-Denis, Paris

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Փարիզի Աղքատախնամի վարչութիւնը չնորհակալութեամբ ստացած հետեւեալ նուէրները .—

Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկու – թիւն, Նոր Տարւոյ առթիւ, Ծերանոցնե– րուն՝ 1000 Ն. Ֆ., Տէր եւ Տիկին Նիքօթ– եան, փոխան ծաղկեպսակի ողբացեալ Պ. Վահրամ Վարդանօֆի մահուան առթիւ 30, Պ. Վահէ Զօփուրեան, նոյն առթիւ 20, Տիկին Արշակուհի Աղամճանեան, փոխան ծաղկեպսակի ողբ. Տիկին Մարիամ Մար– տիկեանի մահուան առթիւ քսան, Պ. Յա– կոբ Մանուէլեան, նոյն առթիւ քսան, Պ. Պետրոս Քիւրքճեան, իր եղբօր մահ– ուան Գ. տարելիցին առթիւ երեսուն, Տիկին եւ Օր. Պօյաճեան, Ծերանոցնե– րուն 10, Պ. Արշակ Քիւրքճեան (Քալի – Քորնի), իր այցելութեան առթիւ 15, Տիկին Սրբուհի Լօրէնեան (Տրակինեան) 10, Տիկին Լօրէնեան, Ծնեալ Պանտիք – եան, Տիկին Ճէվիզեան Ծնեալ Լօրէնեան (Ժուան լէ Փէն), Տիկին Տէկրանժ Ծնեալ Լօրէնեան (Ժուան լէ Փէն) տասնական, Պ. Մխսք Հանէսեան եւ զաւակները, իրենց մօր մահուան վեցերորդ տարե– ցին առթիւ, Մոնմորանսիի Ծերանոցին 30, Տիկին Մինէլեան Անժէլ, փոխան ծաղկեպսակի ողբացեալ Տիկին Քէյեանի մահուան առթիւ հարիւր Ն. Ֆ., Պ. Մի– քայէլեան Շնորհք (Փուաթիէ), փոխան հոգեհանգիստի ողբացեալ Դէորդ Միքա– յէլեանի յիշատակին քսան, Պ. Միքայէլ– եան Պերճ (Քան) 12, Պ. Փիլիճեան Յա – րութիւն 12, Պ. Պօղոսեան Ուզուն (Սէն Ժերմէն ան Լէյ) փոխան ծաղկեպսակի ողբացեալ Մակարոս Նազլաչեանի մահ– ուան առթիւ Մոնմորանսիի Ծերանոցին 20, Տէր եւ Տիկին Գաբեդին Նազլաչ – ճեան նոյն առթիւ քսան, Պ. Ապրօ Խան– ճեան 900 Ն. Ֆ., Պ. Թիւրապեան Գե – զամ 12, Ողբ. Մովսէս Շաքարեանի մահ– ուան առթիւ, աղամանդեղէնի ակումբի իր բարեկամներուն կողմէ հաւաքուած՝ 221 Ն. Ֆ., Պ. Հօտաղեան Ախա 12, Տէր եւ Տիկին Սարգիս եւ Նուարդ Փափազ – եան, իրենց ողբացեալ մօր յիշատակին, Մոնմորանսիի Ծերանոցին 50, Տիկին Ա – զապի Թօփալեան եւ իր զաւակները, փո– խան ծաղկեպսակի ողբացեալ Յարութիւն Եօթնեղբայրեանի մահուան առթիւ 50, Պ. Աբրամ Սարգիսեան հարիւր Ն. Ֆ. :

(Շար.)

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՕՐԸ

Ֆ. Կ. Խաչի Կրընոպլի մասնաճիւղը կը ծանչ, Մանուկներու Օրը, Կիրակի, 14 Ցունուար, կէսօրէ վերջ ժամը 3ին, Սալ Սէն Լուի (Րիւ Ժէ) :

Խմբերգ, տրամախօսութիւն, մենախօ– սութիւն, արտասանութիւն եւ մանկա – կան անակնկալներ :

Ըստ աւանդութեան՝ ԿԱՂԱՆԴ ՊԱՊԱՆ պիտի բաժնէ մրգեղէններ, առանց բա – ցառութեան բոլոր սրահի ներկայ տղա – յոց :

Կը խնդրուի Կրընոպլի, Լանսէի, Ռէ – նաժի եւ Ֆիգըօռի բոլոր հայրենակիցնե – րէն իրենց ներկայութեամբ քաջալերել ղպրոցին մանուկները :

×

ՊՕՄՈՆի ՄԷՋ

Կապոյտ Խաչի մասնաճիւղը Մանուկնե– րու Օրը կը ծանչ այս Շաբաթ, կէս օրէ վերջ, Սահակ – Մեսրոպ սրահին մէջ, ղպրոցի երեկոեւ աշակերտութեան կող – մէ պատրաստուած գեղարուեստական բաժինով մը :

×

ՎԻԷՆի ՄԷՋ

Կապոյտ Խաչի մասնաճիւղը Մանուկ – ներու Օրը կը ծանչ այս Կիրակի կէսօրէ վերջ ժամը երեքին, Մէրքըը Կաթոլիկի սրահին մէջ :

Գեղարուեստական բաժին ղպրոցի ա – շակերտ – աշակերտուհիներու կողմէ : Երգ, արտասանութիւն եւ պարեր :

Աւանդական Կաղանդ Պապան իրեն նը– ւէրներով պիտի ուրախացնէ մանուկնե – րը :

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Սէն Շամոն .— Պ. Գրիգոր Այանեան, զաւակները եւ ընտանեկան բոլոր պարա– գաները կը ծանուցանեն թէ, այս Կիրակի 14 Ցունուար, հայկական մատրան մէջ, յետ պատարագի կը կատարուի հոգեհան– գստեան պաշտօն՝ ՄԱՐի ԱՑԱՆԵԱՆի եւ ԿԻՒԼՊԷՆԿ ԳԱԼԱՑՃԵԱՆի մահուան առա– ջին տարելիցին առթիւ :

Կը հրաւիրուին ողբացեալներուն յիշա– տակը յարգողները :

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Մարսէյլի Արմենիա երգչախումբը կը հաղորդէ որ վերսկսած է երգի իր փոր– ձերը, առաջնորդութեամբ Պէյրութէն նոր ժամանած երիտասարդ երաժիշտ՝ ՌԱՖՖԻ ՍԿԱՃԵԱՆի :

Արմենիայի անդամները կը հրաւիրուին ներկայ գտնուիլ այս փորձերուն, որ տե– ղի կ'ունենան ամէն երեքշաբթի եւ Հինգ– շաբթի օրերը, ժամը 20ին, 19 Րիւ Վաճ– թիւր, երկրորդ յարկ :

Մարսէյլի եւ չրջականերու հայրենա – կիցները, որ կը փափաքին մասնակցիլ Արմենիայի յառաջիկայ դործունէու – թեանց կը հրաւիրուին արձանագրուիլ եւ մասնակցիլ փորձերուն, վերոյիշեալ օրերը, նոյն վայրը, ժամը 19·30ին :

JACQUES TORANIAN

Agent Immobilier

Assureur Conseil.

Ձեզի պիտի ընդունի ամէն օր իր գրասենեակը

RIVE GAUCHE IMMOBILIER

42, *Bld. Arago — Tél. : POR.* 03–94

կամ ձեզի կ'այցելէ ժամադրութեամբ

ՓԱՎԻՅՕՆՆԵՐՈՒ, ՑԱՐԿԱԲԱՃԻՆ – ՆԵՐՈՒ, ՇԷՆՔԵՐՈՒ (fo–փրոփրիէ– թ) ՀՈՂԵՐՈՒ, ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՑԱՐ– ԿԱԲԱՃԻՆՆԵՐՈՒ, ԽԱՆՈՒԹՆԵՐՈՒ, ԱՌՈՒԾԱԽի ձեր բոլոր խնդիրներուն համար

Expertise Gratuite

Ձեր տրամադրութեան տակ է նաեւ բոլոր ապահովագրութեանց համար

Auto
Incendie
Dégâts des eaux
Vie

— PRIX ETUDIES —

Tous risques assurés

VICTOR GARDON

LE CHEVALIER à L'EMERAUDE

« Une très belle épopée qui a pour cadre l'Arménie légendaire »

(*Réalités*).

« Les mots sont brefs, justes, légers, mais portés par un souffle d'épopée ».

RENÉ MASSON (*Nouveau Candide*).

« Un livre plein d'entrain, de rebon– dissements qui émeuvent... il grouille de personnages chaleureux ».

ALAIN BOSQUET (*Combat*).

« Le héros de cette épopée est un pa– rent de Lancelot et de Perceval ».

(*Feuille d'Avis de Neuchâtel*).

« Une fois de plus Victor Gardon af– firme un talent sans défaut ».

(*Libre Belgique*).

STOCK

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Սէն Ժերմէ Թաղ. Մորմուրդս՝ երի – տասարդ Վարդան Աւետեանի վաղամեռ եւ կսկծալի մահուան առթիւ փոխան ծաղկեպսակի չնորհակալութեամբ ստա– ցած է հետեւեալ նուէրները.— Պ. Պ. Միհրան Հայազործեան, Տիգրան Նիկո– ղոսեան, Արմիկ Ցակոբեան, Տէր – Զա – քարեան ընտանիք, Սիրունեան, Վարդ– դէս Աւիքեան, եւ Սարգիս Կիւ– կէքեան, Իսկենտէրեան Մազսուտ, Եղիա Դաւիթեան, քսանական Ն. Ֆ. : Վասպուրականի Հայր. Միութիւն, Պան– տիկեան ընտանիք 15ական, Ցակոբ Ցով– սէփեան, Ռաֆֆի Նազարեան, Տարօն Սալնոյ Զորի Հայր. Միութիւն, Աւետիս Պաղէեան, Պառ Թապա ; Նազարեան Պետրոս, Հէքիմեան Ցովհաննէս, Թով – մաս Մարկոսեան, Բենիամին Իվանեան, Սահակ, Աւետեան տասնական, իսկ Տա– նիէլ Եղիշէեան հինդ Ն. Ֆ. ի նպաստ Թաղիս Եկեղեցւոյ : Վասպուրականի Հայր. Միութիւն, Պանտիկեան ընտանիք 15ական, Ռաֆֆի Նազարեան, Տարնոյ Սալնոյ Զորի Հայր. Միութիւն, Վարդ – դէս Աւիքեան եւ Սարգիս Կիւրկէքեան, Մկրտիչեան եղբարք, Տիկին Շամիրեան, Ցովհ. Հայազործեան, Պապայեան Ալիք– սան, Ալճիպաչեան Ցարութիւն, Հրաչ – եան Արշաւիր, տասնական Ն. Ֆ. Թաղիս դպրոցին :

Այս տխուր առիթով Պ. Սահակ Աւետ– եան եւ Վարդդէս Աւիքեան տասնական Ն. Ֆ. կը նուիրեն Թաղիս Կապ. Խաչին :

ՇՈՒՏՈՎ ԼՈՑՍ ԿՐ ՏԵՄՆԷ

ՀԱՅ - ԲՈՑԺ

ԺՈՂ. ԱՄՍԱԹԵՐԹ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ

Խմբագիր՝ Շ. ՆԱՐԴՈՒՆԻ

—o—

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ .— (Թիւ 234 – 236) .— Վիքթոր Հիւկօ եւ Բժիշկները (Խմբ.) .— Նախաճաշի մասին (Տոքթ. Փօլ Ֆարէզ) .— Մազերու Թափելուն դէմ (Տոքթ. Գէորգեան) .— Ծծկեր երախաննե– րու մարսողական խանգարումները (Տոքթ. Բամպուճեան) .— Արկածով մեռնողները Ֆրանսայի մէջ (Քադիան). Ջոման (Ցովհ. Պապէսեան) .— Շա – դրանակագեղձը խոչորցած է, չի կրնար միզել (Տոքթ. Շ. Այվազեան) .— Սիեռ – կայի հիւանդութիւնը, լանջախիթ (Շ. Նարդունի) .— Օդառիւր ջրից եւ արեւից (Տոքթ. Փարսադանեան) .— Քոլեսթե – րոլս չատցած է (Տոքթ. Ա. Աշճեան) .— Ջաւակ բերել առանց ցաւի (Տոքթ. Աս– ֆանազ) .— Պայքարը այրերու եւ կիներու մէջեւ (Տոքթ. Արշակ Պօղոսեան). — Շաչառնդամ կինը կամ կնոջ պազութիւ – նը (Տոքթ. Գալուստեան) .— Բերանը կոկորդիլոսի բերան (Տոքթ. Գեղամ Այ – վազեան) :

Տարեկան բաժնեգինն Ֆրանսա 15 Ն. Ֆ., արտասահման՝ 20 Ն. Ֆ. :

Հասցէն դրել ճիշդ այսպէս.— Շ. Նար– դունի, խմբագրատուն Ցառաջի,

Ch. Aïvazian
Au journal HARATCH
32, Rue de Trévise, Paris (9e)

Հ. Ց. Դ.

ՓԱՐԻԶ.— Հ. Ց. Դ. Շրջ. կոմիտէն ներկայացուցչական ժողովի կը հրաւիրէ Փարիզի եւ չրջանի մարմիններու ներկա– յացուցիչները այս Շաբաթ երեկոյ ժամը 8·30ին, Մշակոյթի Տան սրահին մէջ : կարեւոր օրակարգ : Շրջ. ժողովի օրա – կարգի քննութիւն :

ՓԱՐԻԶ.— Հ. Ց. Դ. «Փոթորիկ» խում– բի ժողովը այս Հինգշաբթի իրիկուն : Սովորական հաւաքատեղին : կարեւոր օ – րակարգ :

ԱԼՖՈՐՎիԼ.— Հ. Ց. Դ. Ս. Մինաս – եան ենթակոմիտէն ընդհ. ժողովի կը հր– աւիրէ բոլոր ընկերները այս Ուրբաթ ժամը 21ին :

Ներկայ կ'ըլլան կեդր. եւ Շրջ. կոմի – տէներու ներկայացուցիչները :

Կը խնդրուի ճշդապահ ըլլալ :

ՊԱՆԵԼՕ – ՔՈՇԱՆ.— Հ. Ց. Դ. «Ար – ծիւ» ենթակոմիտէն ընդհ. ժողովի կը հրաւիրէ ընկերները այս Հինգշաբթի, ժամը 20·30ին, ծանօթ հաւաքատեղին : կարեւոր օրակարգ :

ՓԱՐԻԶ.— Հ. Ց. Դ. Ռուստամ խումբի ժողովը այս Ուրբաթ, ժամը 21ին, ընկեր Մանուկի բնակարանը : կարեւոր օրա – կարգ :

ԼիՈՆ.— Հ. Ց. Դ. Վարանդեան կոմի– տէն ժողովի կը հրաւիրէ բոլոր ընկերնե– րը այս կիրակի, կէսօրէ վերջ ժամը 3ին, 101 Ավընիւ տը Սաֆսի սրճարանի ներք – նասրահը : կարեւոր օրակարգ :

ՎԱԼԱՆՍ.— Հ. Ց. Դ. Շրջ. կոմիտէի ընկերական ընդհ. ժողովը, այս Շաբաթ, ժամը 20·30ին, Ա.Տարոնեան ակումբը : Շատ կարեւոր օրակարգ : Բոլոր ընկեր – ներուն ներկայութիւնը պարտաւորիչ է :

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՑՑ

Հ. Ց. Դ. Մարսէյլի Շրջ. Կոմիտէի հր– աւիրած ընկերական ժողովներու .—

Հ. Ց. Դ. Մարսէյլի Շրջ. կոմիտէն՝ ստիպողաբար ընկերական ընդհ. ժողովի կը հրաւիրէ հետեւեալ ենթակոմիտէնե – րու եւ խումբերու անդամ ընկեր – ընկե– րուհիները :

ԱԿՆՈՒՆի ենթակոմիտէ 13 Ցունուար, Շաբաթ երեկոյ ժամը 21ին :

ՎԱՐՈՒԺԱՆ խումբ՝ 14 Ցունուար, կի– րակի կէսօրէ ետք ժամը 15ին :

ՀԱՄԱԶԱՍՊ խումբ՝ 13 Ցունուար, Շաբաթ երեկոյ, ժամը 21ին :

ԹԱՔՈՒԻԼ խումբ՝ 14 Ցունուար, կէս – օրէ ետք ժամը 15ին :

ԸՆԿԵՐ ԿԱՐՕ խումբ՝ 14 Ցունուար, կիրակի կէսօրէ ետք ժամը 15ին :

ՀԱՑԱՍՏԱՆ խումբ՝ 13 Ցունուար, Շաբաթ, ժամը 21ին :

ՎԱՐԱՆԴԵԱՆ խումբ՝ 15 Ցունուար, երկուշաբթի, ժամը 21ին :

ԳԱՌՈԳ ԶԱՎՈՒՇ խումբ՝ 20 Ցունուար Շաբաթ, ժամը 21ին :

ՄՈՒՐԱՏ խումբ՝ 21 Ցունուար, կիրա– կի կէսօրէ ետք, ժամը 15ին :

ՆԻԿՈԼ ԴՈՒՄԱՆ խումբ՝ 21 Ցունուար, կիրակի կէսօրէ ետք, ժամը 15ին :

ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ խումբ՝ 20 Ցուն– ուար, Շաբաթ, ժամը 21ին :

Սոյն ժողովները տեղի պիտի ունենան իրենց սովորական հաւաքատեղիները : Միատ կարեւոր օրակարգ : Բոլոր ընկեր – ընկերուհիներու ներկայութիւնը պարտա– ւորիչ է : Վարչութիւնները նախապէս պէտք է բոլոր ընկերներուն տեղեկացնեն ժողովներու վայրի եւ թուականի մասին : Ներկայ պիտի ըլլան Շրջ. կոմիտէի ներ – կայացուցիչները :

Կ'ՈՒԶՈՒԻ

Հայ երիտասարդ մը, որ փափաքէր արտածումի եւ ներածումի կարեւոր որ– ձի մը մէջ ապագայ ունենալ :

Ներկայանալ ամէն օր՝

Յ. ՓԱՓԱԶԵԱՆ հաստատութիւն,

3a, Rue Lafayette, MARSEILLE

Կ'ՈՒԶՈՒԻ ՍՏԻՊՈՂԱԲԱՐ

Հանդերձապահուհի մը Ս. Մուրատեան վարժարանին համար : Դիմել տեղւոյն վրայ :

26, Rue Troyon, SEVRES (S. et O.)
Métro : Pont de Sèvres
Tél. : OBS. 18-28

Imprimerie Spéciale du journal « Haratch »
32, Rue de Trévise, PARIS (9e)

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

Le PREMIER QUOTIDIEN ARMENIEN en EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction et Administration : 32, Rue de Trévise - PARIS-9e

Fondé en 1925
R. C. Seine 57 A 2731

Téléph. : PRO. 86 - 60
C. C. P. Paris 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա՝ Տար. 50 Ն. Ֆ. Վեցամսեայ՝ 27 Ն. Ֆ.
Արտասահման՝ Տար. 60 Ն. Ֆ. Հատը՝ 0·25 Ն. Ֆ.

ՀԻՆԳՇԱԲԹԻ
11
ՅՈՒՆՈՒԱՐ
JEUDI
11 JANVIER
1962

38ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 9301 38e ANNÉE Fondateur : SCHAVARCH MISSAKIAN ՆՈՐ ՇՐՋԱՆ, 18ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 5102

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

ԽՌՈՎԱՅՈՅԶ ԱՐԵՒԵԼՔԸ

Աչխարհի նոր բաժանումը, իբրեւ հետեւանք վերջին պատերազմին, Եւրոպայէն մինչեւ Միջին Արեւելք ստեղծեց անկայուն կացութիւն մը, որ տեղի կուտայ պարբերական ցնցումներու :

Վերջին 17 տարիներու ընթացքին բազմաթիւ պատմական դէպքեր հիմնովին յեղաշրջեցին Մերձաւոր Արեւելքի քաղաքական քարտէսը :

Լրիւ անկախութեան տիրացան Հոգա տարութեան ենթակայ երկիրներէն Սուրիա, Լիբանան եւ Պաղեստին: Այս վերջինի բաժանումով 1948 Մայիս 15ին ստեղծուեցաւ Իսրայէլի անկախ պետութիւնը: Մնացեալ հողամասը կցուեցաւ Անդրյորդանանի, որ սահմանները տարածելով յայսկոյս գետի, մինչեւ Երուսաղէմի հին թաղերը՝ դարձաւ Յորդանանի թագաւորութիւնը : Մէկ միլիոն արաբ գաղթականներ հեռացան Պաղեստինէն՝ 1948ի կռիւներուն առեն :

Եգիպտոս ընդմիշտ ձերբազատուեցաւ անգլիական թեւարկութենէն, երբ Սուէզի պահակախումբը ամբողջովին պարպեց Ջրանցքի շրջանը :

1952 Յուլիս 26ին երիտասարդ զինուրականներ վերջ տուին թագաւորական վարչաձեւին, երկրէն հեռացուցին Ֆարուք թագաւորը եւ Հանրապետութիւն հռչակեցին : Զօրավար Նէգիպի յաջորդեց նկ զնդապետ կամալ Նասըր՝ իբրեւ հանրապետութեան նախագահ :

1956 Յուլիս 26ին նախագահ Նասր ազգայնացուց Սուէզի Ջրանցքի տիեզերական ընկերութիւնը: Քանի մը ամիս վերջ, Հոկտեմբերին՝ Իսրայէլ յարձակեցաւ Եգիպտոսի վրայ: Իրեն օգնութեան փութացին Անգլիա եւ Ֆրանսա: Ուժ չինկերների եւ Մոսկուայի միջամտութեամբ վերջ դրան կռիւները:

Սուրիոյ մէջ 1949 Օգոստոս 15ին քիւրտ զնդապետ մը՝ Հիւսնի Զայիմ զինուորական յեղափոխութեամբ մը տապալեց կառավարութիւնը եւ ձեռք առաւ իշխանութիւնը: Դարձաւ մառեչալ եւ հանրաքուէով մը կարծեց ամրացնել իր դիրքը:

Շատ չանցած իր զէնքի ընկերներէն զնդապետ Հինաուի նոր յեղափոխութեամբ մը ձերբակալեց եւ զնդակահարեց Զայիմը : Սակայն երկար չտարաբեցաւ: երրորդ զնդապետ մը՝ Զիչքլի ասպարէզէն քշեց Հինաուին եւ քանի մը տարի կառավարեց երկիրը, մինչեւ որ ինք ալ տիպուեցաւ հեռանալ Սուրիայէն :

Շիւքրիւ Քուվաթլի, Խալէտ Ազէմ, Ապտիւլ Համիտ Սարրաճ եւ ընկերները համաձայնեցան Եգիպտոսի հետ միանալով հիմը դնել Արաբ Միացեալ Հանրապետութեան, 1958 Փետր. 2ին:

(1961 Սեպտ. 28ին Սուրիա բաժնուեւ ալ այս վերջինէն, վերստին անկախութիւն հռչակեց):

1958ին Եգիպտոսի եւ Սուրիոյ միացումը իր անմիջական արձագանգները ունեցաւ Ջրացի երկիրներէն Լիբանանի, Իրաքի եւ Յորդանանի մէջ :

1958 Մայիս 8ին Լիբանանի մէջ սկսաւ քաղաքային կռիւ մը, որ չարունակուեցաւ մինչեւ Հոկտեմբեր, երբ վերջ դուաւ Քամիլ Շամունի նախագահութեան շրջանը :

Նոյն տարուան Յուլիս 14ին Պաղտատի մէջ ծագած յեղափոխութիւն մը վերջ տուաւ Հաշիմի թագաւորութեան: Ցէյ. սալ Բ. եւ զահաժառանգ Ապտիլիլահ սպաննուեցան: Զօր. Քասըմ զարձաւ նախագահ Իրաքի Հանրապետութեան :

Յորդանան եւ Լիբանան օգնութիւն խնդրեցին արեւմուտքէն: Անգլ. զինուորներ Յորդանանը, Ամերիկացիները Լիբանանը իրենց պաշտպանութեան տակ առին, մինչեւ որ ամէն վտանգ անհետացաւ :

Անցեալ Յուլիսին Իրաքի սպառնական կեցուածքին առթիւ Քուվէյթ օգնութեան կանչեց անգլիացի դաշնակիցը :

Քիւրտերը ապստամբեցան Իրաքի մէջ եւ կ'ըսուի թէ տակաւին կը չարունակեն կռուիլ :

Այս բոլորէն վերջ, 1961 Դեկտեմբեր 30էն 31 լուսնալիք գիշերը Լիբանանի կառավարութիւնը տապալելու անյաջող փորձ մը կատարուեցաւ Պէյրութի մէջ՝ Սուր փոքրիկ քաղաքէն ճամբայ ելած խումբ մը զինուորականներու կողմէ, որոնք մեղսակիցներ ունէին մայրաքաղաքին մէջ:

Այսպէս , խռովայոյզ վիճակը վերջ չէ դտած դեռ արեւելքի մէջ:

ՀՐԱՆՏ–ՍԱՄՈՒԷԼ

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՅՈՒՇԱԳԻՐԸ՝ ԳԵՐՄԱՆԻՈՅ

ՄՈՍԿՈՒԱ ԿՐ ՓՈՐՁԷ ԼԵԶՈՒԻ ԳՏՆԵԼ ՊՈՆԻ ՀԵՏ

Պոնի կառավարութիւնը առջի օր ,Մոսկուայի իր դեսպանին ձեռամբ ստացաւ խորհրդային յուշագիր մը: Առընաւորը յայտարարեց այս առթիւ թէ երբեք այսքան տարօրինակ փաստաթուղթ մը չէր ստացած , որուն ցայտուն նպատակն էր բաժնել Արեւմուտքը :

Այս անսպասելի յուշագրին գլխաւոր մասերը հրատարակուեցան առջի օր , բայց Պոնի մամուլի սպասարկութիւնը ճշդեց թէ պաշտօնական բնոյթ չունի : Այս խիստ չահեկան փաստաթուղթին մէջ, Խորհրդ. Միութիւնը կը յայտնէ թէ ինք եւ դաշնակցային Գերմանիան « Եւրոպայի երկու մեծագոյն պետութիւններն են», կը զարգանան ընկերային եւ տնտեսական տարբեր հիմերու վրայ բայց պէտք է նոյն ջանքը թափեն նոր պատերազմէ մը խուսափելու համար :

Խորհրդային յուշագիրը կը չեշտէ նաեւ թէ անցեալը պատճառ չէ որ ընդունելի եւ նպաստաւոր կապեր չհաստատուին երկու երկիրներու միջեւ: « Արեւմտեան պետութիւնները, կ'ըսէ խորհրդային յուշագիրը, չեն ուզեր համաձայնիլ ապահինման չուրջ եւ արդելք կը հանդիսանան Գերմանիոյ հետ հաչտութեան դաշնագրի մը , ինչպէս նաեւ Արեւմտեան Պերլինի համար լուծումի մը: Այդպէս կ'ընեն ոչ թէ որովհետեւ սրտանց կը բաժնեն զերմանացի ժողովուրդին ազգային բաղձանքները կամ Արեւմտեան Գերմանիոյ ժողովուրդին իրաւունքները այլ՝ որովհետեւ պէտք է խրենց ենթարկուած պահեն Ատլանտեան Ուխտի մաս կազմող երկիրները»: Խորհրդային յուշագիրը ուրիշ «չահեկան» բաներ ալ կ'ըսէ :— «Եթէ Դաշնակցային Հանրապետութիւնը կ'ուզէ նաեւ խուսափիլ պատերազմէ մը, լաւագոյն միջոցն է՝ հրաժարիլ վրէժխնդրութեան իր ծրագիրներէն, Արեւելքի հանդէպ եւ բարելաւել իր յարաբերութիւնները ընկերվարական երկիրներուն հետ : Զենք ուզեր խօսիլ էն – ղօքութեան քաղաքականութեան մասին: Անոնք որոնք կը կարծեն թէ Ֆրանսայի յամառութիւնը Գերմանիա աւելի սերտօրէն կապելու Ատլանտեան Ուխտին, Գերմանիոյ հանդէպ զոյութիւն ունեցող արտակարգ սիրոյ մը արդիւնքն է, կը սխալին: Անոնք կ'ուզեն միայն աւելի մօտէն հսկել Գերմանիոյ յառաջխաղացութին, մինչեւ որ ամէն վտանգ անհետացաւ :

Անցեալ Յուլիսին Իրաքի սպառնական կեցուածքին առթիւ Քուվէյթ օգնութեան կանչեց անգլիացի դաշնակիցը :

Քիւրտերը ապստամբեցան Իրաքի մէջ եւ կ'ըսուի թէ տակաւին կը չարունակեն կռուիլ :

Այս բոլորէն վերջ, 1961 Դեկտեմբեր 30էն 31 լուսնալիք գիշերը Լիբանանի կառավարութիւնը տապալելու անյաջող փորձ մը կատարուեցաւ Պէյրութի մէջ՝ Սուր փոքրիկ քաղաքէն ճամբայ ելած խումբ մը զինուորականներու կողմէ, որոնք մեղսակիցներ ունէին մայրաքաղաքին մէջ:

Այսպէս , խռովայոյզ վիճակը վերջ չէ դտած դեռ արեւելքի մէջ:

ՀՐԱՆՏ–ՍԱՄՈՒԷԼ

ՍՈՒՐԻՈՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Խորհրդարանին առջեւ, Սուրիոյ նոր վարչապետը՝ Մաարուֆ Տավալիպի իր կառավարութեան քաղաքական ծրագիրը ներկայացուց :

Արտաքին ճակատի վրայ, Տավալիպի «ոչ – դաշնակիցի» քաղաքականութիւն մը պաշտպանեց, չեշտելով սակայն թէ «առանց պայմանի զօրավիգ կը կանգնի ալժերական ազգային պայքարին Ֆրանսական աշխարհակալութեան դէմ մինչեւ այն առեն երբ Ալժերիա կրկին մասկազմէ արաբական համայնքին»: Վարչապետը ըսաւ նաեւ թէ ոչ մէկ ջանք պիտի խնայէ « ազատագրելու համար Պաղեստինը», եւ թէ «Պաղեստինը չվերազառնայ արաբական համայնքին մէջ, եթէ սիոնականութիւնը չվնջուի, եթէ Իսրայէլի անիրաւ պետութիւնը չտապալի, Սուրիան միշտ դաշոյն մը պիտի ունենայ իր սրտին մէջ, որ կը սպառնայ իր կեանքին եւ Մերձաւոր Արեւելքի եւ արաբական աշխարհի բոլոր երկիրներու կեանքին »:

Սուրիոյ վարչապետը տրամադիր է նաեւ չարունակելու «աւանդական ջանքերը» համարաբական միութեան համար եւ յարգելու Միացեալ Ազգերը: Տավալիպի զգուշացուց նաեւ խորհրդարանը, Իսրայէլի խորհրդաւոր չարժումներուն առթիւ Սուրիոյ սահմանին երկայնքին :

Տնտեսական գետնի վրայ, վարչապետը համարաբական Հասարակաց Շուկայի մը կողմնակից է եւ յայտնեց թէ իր կառավարութիւնը «չինարար ընկերվարութեան » քաղաքականութիւն մը պիտի ընորէ: Տավալիպի ըսաւ նաեւ թէ դրամական ազատ դրութիւն մը պիտի ստեղծուի :

յանձնէ նաեւ թէ Ատլանտեան Ուխտը չէ կրցած պահպանել արեւմտեան իշխանութեանց զինուորական գերազանցութիւնը եւ թէ ընկերվարական վարչաձեւը բանի ուժով չի ջնջուիր: Ուրեմն պէտք է իրեւ սկզբունք ընդունիլ թէ երկու վարչակարգ կայ.— դրամատիրութիւնը եւ ընկերվարութիւնը: Դաշնակցային Հանրապետութեան կառավարութիւնը պէտք չէ. այն տպաւորութիւնն ունենայ թէ Խորհ. Միութեան հետ իր յարաբերութիւնները կարգ մը տուեալներէ կախում ունին, մանաւանդ ինչ կը վերաբերի Արեւելեան Գերմանիոյ, ոչ մէկ պատրանք պէտք է ունենայ. — «Խորհ. Միութիւնը միտք չունի արեւելեան Գերմանիոյ ներքին հարցերով զբաղելու»: Միացման մասին, Մոսկուա կը խորհի թէ աւելի նպատակայարմար է որ Պոն ուղղակի փանքովի հետ խօսի :

Խորհ. Միութիւնը կ'առաջարկէ նաեւ առեւտրական կապեր, որովհետեւ ընկերվարական երկիրները «ովկիանոս» մըն են որոնք կրնան լափել արեւմտեան Գերմանիոյ ճարտարարուեստական բոլոր արտադրութիւնները :

Մոսկուա կը խօսի նաեւ Պերլինի մասին յայտնելով թէ դէմ չէ որ Արեւմտեան Գերմանիան եւ Արեւմտեան Պերլինը դրական կապեր ունենան , քաղաքական, մշակութային եւ տնտեսական մարզերու մէջ :

Իր եղրակացութեան մէջ խորհրդային յուշագիրը կ'անդրադառնայ հաչտութեան դաշնագրին, խաղաղութեան եւ յաւ կը յայտնէ որ «Դաշնակցային Հանրապետութիւնը մտահոգութիւններ կը պատճառէ »:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՔԱՄԸՄ յայտարարեց թէ՝ անսպասելի հարուածներ պիտի տայ աչխարհակալներուն : « Իրաք զօրաւոր եւ ուժեղ ժողովուրդ մը եղած է» չեչտած է վարչապետը : Քիւրտերու մասին ըսած է թէ «ըմբոստ տարրերու մաքրագործումը կը չարունակուի պարսկական եւ Թրքական սահմանային չրջաններու մէջ :

ՍՈՖԻԱՑԻՆ կը հաղորդեն թէ Աչէր Ի – զաաք Հանանել, Պուլկարիոյ մեծ բարեկամ պետը եւ կարգ մը ուրիշ անձեր գոհարեղէնի առեւտուրի համար ձերբակալուած եւ դատապարտուած են: «Բարեկամ պետը հասարակ մաքսանենգ մըն է որ Սոֆիայի ժողովարանը չհաղորդուեցաւ եւ թրաֆիֆի կեղրոնի մը վերածած էր » կ'ըսէ այս առթիւ հրատարակուած զեկոյցը :

ՖՐԱՆՍԱՑԻ բնակչութեան թիւը 1961 Յունուար մէկին 46 միլիոն 200 հազար է: 500·000 աւելի քան անցեալ տարի : Հինգ միլիոն աւելի քան հինգ տարի առաջ : Ծնունդները չատցած են, ամուսնութիւնները պակասած են: 90ամեայները զգլխաւորաբար կիներ են :

ԽՈՐՀ. ՄԻՈՒԹԵԱՆ բնակչութեան թիւը 220 միլիոն է:

ԹՈՒՐՔԻԱԽՈՐՀՐԴԱՅԻՆ առեւտրական դաշինք մը ստորագրուեցաւ Անգարայի մէջ, որ 26 միլիոն տոլարի փոխանակութիւն կը նախատեսէ :

ՊԷՅՐՈՒԹԷՆ կը հաղորդեն թէ Թրքա – հպատակ 92 անձեր որոնք կը փորձէին հիւսիսային Լիբանան մտնել ձերբակալուած են :

ԱՅԽՄԱՆ իր փաստաբանին տուած է իր յուշերու հրատարակութեան մենա – չնորհը: Այս հինգ հարիւր էջնոց գիրքով, Այխմանի փաստաբանը իր ծախքերը կ'ուզէ հանել :

ՎԱՐՇԱՒԱՑԻՆ արտաքսուած է «Լը Մոնտ»ի մնայուն թղթակիցը: Իբրեւ պատճառ , ըսուած է իրեն թէ «հետաքրքրուած է լեհական հարցերով որոնք թղթակիցի մը իրաւասութեան սահման – ները կ'անցնին » :

ՊԵԼՃԻԱԿԱՆ Սապենա ընկերութեան Քառավելը արտօնութիւն ստացաւ մեկնելու Խորհրդային Միութենէն: Նախապէս յայտարարուած էր թէ օդանաւը երեւան իջած է մինչ վերջին լուրերու համաձայն կրոզնի կը գտնուէր (Հիւսիսային Կովկաս):

ԿՈՆԿՈՑԻ փոխ – վարչապետը՝ Կիզենկա որ Լէոփոլտվիլէն հեռացած էր եւ Սթանլէվիլ «անջատողական» չարժում մը կը վարէր, հրաւէր ստացաւ որ Լէոփոլվիլ վերադառնայ եւ բացատրութիւններ տայ խորհրդարանին առջեւ : Արտաքսուեցաւ իր խակ կուսակցութենէն (Ազրիկեան համախոհ կուսակցութիւն):

ՊԷՅՐՈՒԹԻ մէջ պետական հարուածին առթիւ ձերբակալուած անձերէն 711 հոգի ազատ արձակուեցան :

ՍՈՓԱՐՆՕ տասը օր պայմանաժամ տրուած է դիւանապետական ճամբով կարգադրելու համար հոլանտական կինէի խնդիրը : Այդ պայմանաժամէն ետք Սոքարնօ որոշած է Նեհրուի օրինակին հետեւիլ եւ ուժի դիմել: Փափուները սակայն վճռած են կռուիլ Ինտոնեզիոյ զօրքին դէմ եթէ ցամաքահանում կատարէ :

ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱՑԻՆ 26 Ֆրանսացիներ արտաքսուեցան: 48 ժամ պայմանաժամ տրուեցաւ իրենց մեկնելու համար :

ՄԱՔՄԻԼԸՆ – Առընաւորը խօսակցութիւնները վերջացան: Երկու վարչապետները համաձայնած են կարգ մը կէտերու չուրջ: Գերմանիա դրամական կարեւոր օժանդակութիւն մը պիտի ընէ Մեծն – Բրիտանիոյ: Առընաւորը եւ Մաքմիլըն համաձայն են որ չփուփներ ըլլան Մոսկուայի հետ :

ՄԵՐ ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

Ծանօթ ղրող՝ Կոստան Զարեան, որ անցեալ Յուլիսին Նորվրդ. Հայաստան դացած էր, «Սովետ. Հայաստան» թերթի թղթակիցին տեսակցութիւն մը տուած էր :

Այս նշանաւոր տեսակցութիւնը հրատարակուած էր թերթին Յուլիս 19ի թիւով, անտեղի խորհրդածութիւններով :

Տեսակցութեան բովանդակութեամբ ղբաղած էինք երկու խմբագրականներով (Օգոստոս 26 եւ 27), «երբ մտաւորականներ կ'այցելեն Հայաստան» խորագրով :

Կը թուի թէ այժմ վերապարձած է եւ հարկ դատած է «լուսաբանութիւն» տալու, նոյն խորագրով յօդուած մը ղբրկելով ոչ – դաշնակցական թերթերուն :

Նորապէս կը ցաւինք որ իր «Լուսաբանութիւնը » սովորական, հռետորաբանութիւն մըն է միայն, որ ոչ թէ կը լուսաբանէ Հայաստանի մէջ իր ըրած ապերասան յայտարարութիւնները, այլ խանձը մթութեան մէջ աւելի կը թաղէ ղրողի եւ մարդու իր նկարագիրը :

Խեղաթիւրած է իրականութիւնը, բացարձակապէս :

Նախ, մեծամտութենէ տառապող ղբաղաքը կը յայտարարէ թէ «նոր միայն խմացեր է, որ հայ թերթերից ոմանք, սովետական Հայաստանի հանդէպ ըրնած իմ դիրքը դարձրել են բուռն ինա – դատութիւններու առարկայ» :

Սխալ, չըսելու համար սուտ, որովհետեւ այդ թերթերը կը ստանայ ինք եւ հետեւաբար, «իմանալու» խնդիր չկայ :

Ցետոյ, սխալ դարձեալ, որովհետեւ այդ թերթերը, այդ «ոմանք»ը, երբեմ զբաղած չեն սովետ Հայաստանի հան – դէպ իր բռնած դիրքով :

Զբաղած են միայն իր դիտումնաւոր յայտարարութիւններով :

Զարեան կը հաղորդէ թէ իր ճամբոր – դութիւնը մայր երկիր «ինձ խորապէս համոզեց, որ հայ աշխարհը մինչեւ հիմա չտեսնուած վերելքի մէջ է, որ այդտեղ գետեղումի են հայ մշակոյթի հաստա – տուն հիմքերը, ստեղծուում են նպաստաւոր պայմաններ նոր ու միացեալ ազգային կեանքի, որ այնտեղ տարուած վիթխարի աշխատանքները ոչ միայն նշանա – կալից են ազգային տեսակէտից, այլ կըրում են համաշխարհային բնոյթ» :

Ինչու չըսել տիեզերական բնոյթ : Սակայն, իր տպաւորութիւններն են, չատ չատերու կողմէ կրկնուած : Եւ մենք մէկ բառ իսկ չենք ըսած այդ հռետորական կարծիքներուն համար :

Ինքն է որ կը ղբէր վերջերս .

« Ու, ինչքան էլ գրաւուած երկրի ա – ճեակոյ առիւծները խոպոտ ձայնով ոռ – նան ու բռնանան, ու չարչարեն՝ Ոգին չեն կարող մարել» : («Պիլլերը», թիւ 1, Հայ կրթ. Հիմնարկութեան) :

Նորվրդ. Հայաստանի իշխանաւորնե – րուն իր կողմէ ուղղուած խօսքերը են ա – նոնք, որոնք կը հակասեն իր նոր կար – ծիքներուն : Սակայն, մենք նկատի չու – նինք այս բոլորը, ընդհակառակն, ու – րախ ենք, որ Նորվ. Հայաստան գնաց, ուրկէ չատ դժուարութեամբ արտասահ – ման ելած էր 1924ին, ալ չվերադառ – նալու համար : Ուրախ ենք, որ իր նոր այցելութեամբ, առիթը ունեցած է աւելի ոգեւորուելու Հայութեամբ եւ աւելի հայանալու : Կ'ուզենք հաւատալ իր խոս – քերուն :

Սակայն, լուսաբաններ այժմ, թէ Զարեան սխալ «իմացեր » է : Իր Հայաստա – նասիրութիւնը կամ հայ մշակոյթի հան – դէպ իր զեղումները, կամ Երեւանը հին Ամէնքին հետ իր բաղդատութիւնները չեն որ քննադատուած են մեր կողմէ : Բացասական մէկ բառ իսկ կարելի չէ դանել մեր քննադատութիւններուն մէջ : Ո՞վ իրաւունք ունի մէկու մը ղբացում – ները քննադատելու, եթէ նոյնիսկ չափա – զանցութիւն ըլլան : Գրագէտ մըն է, որ երեւակայութեան թեւ տուած է եւ իրա – ւունք ունի մինչեւ աստղերը սաւառնե – լու, առանց նկատի առնելու ուրիշներու պատմածները. իրականութիւնն ու իր փուչերը :

Մենք քննադատած ենք եւ ցաւով ղի – տել տուած ենք Դաշնակցութեան մասին իր արտաւոյ կարծիքները, ղորս յայտնած է ան «Սով. Հայաստան» թերթի թղթա – կիցին :

Այսպէս, Զարեան հարկ դատեր է ըսե – լու, թէ ինք «Դաշնակցական երբեք չէ ե – ղած» : Ճիշդ . չէ եղած եւ լաւ որ չէ ե – ղած : Իր կապը եղած է Դաշնակցական թերթերու ու հանդէսներու եւ մէկ քանի Դաշնակցական անհատներու հետ, եւ այսքան :

Սակայն, իր կարծիքը ուղեր են, իբրեւ « մօտիկից » ծանօթ մէկուն : Եւ այս «մօ – տիկից» ծանօթը յայտարարեր է, թէ Դաշնակցութիւնը կը նկատէ «մեծ մա – սամբ հին վաճառականներից եւ կէս – մտաւորականներից կազմուած կուսակ – ցութիւն մը » :

Զենք ղիտեր թէ որո՞նց կ'ակնարկէ՝ երբ «հին վաճառականները» կը տեսնէ Դաշնակցութեան մէջ : Իր արհամարհան – քը անմտութեան կը հասնի, որովհետեւ հին կամ նոր վաճառականները, եթէ կը – նան օգտակար ըլլալ մեր հայրենիքին ու ժողովուրդին, նոյնքան յարգելի են, որ – քան ուեւէ հայ մարդ : Դաշնակցութիւնը, հակառակ անոր որ մեծ մասով խոնարհ տարրերէ բաղկացած է, դասակարդային կազմակերպութիւն մը չէ եղած և չէ այ – սօր ալ : Եւ եթէ «հին վաճառականներ » կուզան աշխատելու եւ ղոհելու Դաշնակ – ցութեան ազդային ու դաղափարական պայքարին, գնահատուելու արժանի կը դառնան, ոչ թէ արհամարհանքի ու քըն – նադատութեան :

Ինչ կը վերաբերի «կէս – մտաւորա – կաններին», Զարեան բարոյական ու ի – րական ծանր սայթաքումի մէջ ինկած է, որովհետեւ Դաշնակցութեան մէջ եղած են հայ ժողովուրդի լաւագոյն մտաւո – րականները, Վարուժանէն ու Սիաման – թոյէն սկսած, Զարդարեանէն ու Գեղամ Բարսեղեանէն սկսած, մինչեւ Զօհրապն ու Օշականը, որոնք Դաշնակցութեան կողքին եղած են միշտ : Անոնք եւ բազ – մաթիւ ուրիշներ «կէ՛ս » մտաւորական – նե՞ր եղած են, «լման» մտաւորականի քղամիղը ձգելով իրեն : Չի՞ յիշեր, թէ «Ազատամարտ»ի օրերէն սկսած, այդ «կէս – մտաւորականներն» են որ ընդ – պատած են դինք, քաջալերած եւ հրա – պարակ բերած : Չի՞ յիշեր, որ այդ «կէս – մտաւորականներէ» եւ հին վաճառական – ներէ բաղկացած կուսակցութիւնն է , որ ահը կեցած է իրեն, իր մամուլի էջերը բանալով իր ղրականութեան առջեւ : Այդ « վաճառականներն » են որ հրատա – րակած են իր գործերը : Այդ «կէս – մտաւորական»ներն են որ հայ դատին մէջ առած են դինք, լայնօրէն վը – ճարելով : Ճեմարանին մէջ դասախօս հը – րաւիրած են : Անոնք է որ ղեռ անցեալ Մարտ 19ին, Լոս Անճըլըսի մէջ պատուոյ սեղան սարքած են, յորելեան կատարած եւ այս թերթը մասնաւոր թիւեր նուի – րած է, միշտ նկատի ունենալով իր ղբ – րական շնորհները, հակառակ անոր որ ծանօթ էր թէ առեն մը «ոսպապուր» կե – րած է Ժընեւի մէջ Լենինի հետ ...

Այս բոլորը պատիւ կը բերեն Դաշնակ – ցութեան ու իր մամուլին, որոնք վեր մնացած են խորհրդային ոգիէն, յանուն հայ ղրականութեան ու հայ մշակոյթին :

Սակայն, ինչ որ ամէնէն աւելի ար – ժանի նկատուած է քննադատութեան, Զարեանի այն յայտարարութիւնն է, թէ « իմ կարծիքով, 'Դաշնակցութեան հա – կա – Հայաստանեան պայքարը միանգա – մայն անմիտ եւ վնասակար է: Եթէ այդ կուսակցութիւնը՝ բշնամիների միանա – լու տեղ, նպաստէր այն մեծ գործին որ տարուում է այստեղ, փրկած կը լինէր նաեւ այն բազմահազար երիտասարդնե – րին, որոնք կորուստի մատնուելու վրայ են » :

Ուրիշներու կարդին, մեր խմբագրա – կաններուն մէջ, «ծիծաղելի եւ անմիտ» նկատած էինք այս կարծիքը, ուեւէ մէ – կուն համար, մանաւանդ Զարեանի հա – մար, որ իբր թէ «մօտիկից» ծանօթ եղած է 'Դաշնակցութեան գործին :

Ուրեմն, Զարեաններուն համա՞ր ալ Դաշնակցութեան պայքարը «հակահա – յաստանեան» է եւ այդ կուսակցութիւնը կընայ «միանալ մեր թշնամիներուն» ....

Աննկարագիր պէտք է ըլլայ մէկը, որ չըմբռնէ Դաշնակցութեան հակասովետ պայքարի էութիւնը. եւ եղկելիօրէն բա – րոյապէս կոյր, Դաշնակցութիւնը «Ըզբ – նամիին» հետ տեսնելու համար ...

« Մօտիկից » ծանօթ Զարեանը այս անհեթեթութիւնները ըսած է: Ուրեմն , այսքա՞ն յեղյեղուկ ու արատաւոր նկա – րագիր ունի ան, 'Դաշնակցութեան չքեղ գործունէութիւնը չըմբռնելու աստիճան. այդքան չհախնդի՞ր է, Նորվ. Հայաս – տանի մէջ իրմէն պահանջուածը ստորա – գրելու համար :

Ի՞նչ ոդբերգութիւն հայ մտաւորականի մը համար :

Մեր ցաւն ու վրդովումը այս կէտերուն մասին է, ոչ թէ իր «Հայաստանասիրու – թեան», որ պիտենք թէ ինչ արժէք ունի :

Լաւ է որ մարդիկ իրենց «լուսաբանու – թեան» մէջ, ոչ թէ խեղաթիւրեն , այլ պարկեշտ ըլլան, ճշմարտութեան լոյսը վառելու համար :

Տեղը չէ՞ յիշելու.— կը սիրենք Պղա – տոնը, բայց աւելի՛ կը սիրենք ճշմար – տութիւնը, հին ասացուածքը :

«ՀԱՅՐԵՆԻՔ»

ԸՆԴՈՒՎԵԱՅ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԸ

ՀՌՈՄԱՅԵՑԻ ԲՈՒՆԱՊԵՏ ՍԻԼՎԱՅԻ ԱԻԱՐԸ...

1925ին Ս. Ռայնախ ըսած էր. «Աշ – խարհի ամէնէն հարուստ թանգարանը կը դտնուի Մ.Նահանգներու Ծովուն յատակը». Սակայն կ'աւելցնէր. «Այս թանգարանը դեռ ամմատչելի է մեզի համար » :

Արդարեւ, ցարդ ծովուն յատակը ղբա – նուած առարկաները մեծ արժէք կը ներ – կայացնեն հնէաբանական տեսակէտէն :

Սպունգի որսորդներ, Թունուզի ծովե – ղերքը, քառասուն մեթր խորութեան մէջ դտան բազմաթիւ արձաններ : 1907 – 1913 հնչակաւոր հնէաբան Ալֆրետ Մերլին փնտռտուքներ կատարեց Թունուզեան ծո – վերեզերքին վրայ՝ Մահմատյէն տինգ քի – լոմեթր հեռու դտնուղ վայրի մը մէջ : Արդիւնքը հիանալի էր. պղնձեայ հին արձաններ եւ դեղարուեստական բազմա – տեսակ առարկաներ, որոնք եկան ճոխա – ցնելու Թունուզի Ալաուի թանգարանը :

Այս առարկաները կը դտնուէին հռոմէ – ական նաւու մը վրայ, որ Ծուխաստանի Հռոմ կ'երթար եւ ընկղմած էր Թունուզ – եան ծովեզերքին մօտերը : Կը կարծուի, թէ նաւարկութիւնը տեղի ունեցած է Քրիստոսէ առաջ 97 թուականին, երբ Հռոմայեցի բռնապետ Սիլլա, Ցունաս – տանի խաղաղութիւն չնորհելէ ետք, կը փոխադրէր աւարը, հռոմէական իր պա – լատը զարդարելու համար : Այս աւարին մէկ մասը կը բաղկանար յունական դե – ղարուեստական դործերէ :

ՆԵՄԻ ԼԻՃԻՆ ԳԱՆՁԵՐԸ ԳՈՂՅՈՒԱԾ

1927 – 1932 իտալական կառավար – ութիւնը փնտռտուքներ կատարել տուաւ Նեմի լիճին մէջ, որ քահանայապետա – րուն ամառնային ապարանքին՝ Քասթել Կանտոլֆոյի մօտերը կը դտնուի : Անոր նպատակն էր ձեռք ձգել դանձերով բեռ – նաւոր նաւեր, որոնք ընկղմած էին հռո – մայեցի կալիկուլա կայսեր օրով : Գանձ չդտնուեցաւ, բայց երեւան հանուեցան հին նաւեր, որոնք, դժբախտաբար, չըղ – ղեհուեցան նահանջող Գերմանացիներուն կողմէ, 1944ին :

Գտնուեցան նաեւ արժէքաւոր արձան –

ԱՄԲԱՍՏԱՆԵԱԼ ՍԹԱԼԻՆ, ՈՏՔԻ՛

—o—

Մոլոթով դուրս կ'ելլէ. Սթալին կանչել կուտայ կականովիչը :

— Ցարաբերութիւնները ի՞նչպէս են Մոլոթովի հետ :

— Շատ լաւ են :

— Բայց լսեցի, որ Մոլոթով ամէն տեղ կը կրկնէ, թէ հրեայ ես :

— Իրականութիւնը այն է, որ հրեայ եմ :

— Այո, բայց ինչո՞ւ այդքան կը կրկնէ հրեայ ըլլալդ. անպայման յետին նպա – տակ մը ունի :

— Իրաւունք ունիս. արդեօք ի՞նչ է փորին ցաւը. կը մտահոդուի կականովիչ :

Կականովիչ դուրս կ'ելլէ. Սթալին ձեռ – քերը կը չփէ գոհունակութեամբ .

— Հիմա կրնամ հանդիստ աշխատիլ . կ'ըսէ մտքէն :

Հարիւրաւոր օրինակներ կարելի է տալ Սթալինի այս ձեւի վարուելակերպին մասին, ոչ միայն իր կուսակցութենէն այլ նաեւ Միջազդայինէն եւ քոյր կու – սակցութիւններէն ներս :

ԹՈԼԻԱԹԻ, ԹՈՐԻՋ, ԹԻԹՕ
ԵՐԵՔ «Թ»ԵՐՆ ԱՒ ԽԱՂԻ ԲԵՐԱՆ Է

Այս նոյն ձեւով է որ Սթալին իբարու – ղէմ լարած է երեք Թ.երը՝ Թոլիաթթի եւ Թորէզ մէկ կողմէն՝ Թիթօ միւս կող – մէն :

Երեք Թ.երը, դանազան պատճառնե – րով, չատ կապուած էին իրարու եւ ա – սիկա մեծ դժդոհութիւն կը պատճառէր Կրեմլինի տիրոջ, որ միշտ կը վախնար «խմբակ»ներու, «հատուած»ներու կազ – մութենէն եւ միւս կողմէ՝ արդէն որոշած էր «լիկուիտացիա»յի ենթարկել Թիթօն :

Ահա թէ ինչպէս գլուխ հանեց իր նը – պատակը :

Ցանկարծ հրահանգեց եւրոպական զա – նազան համայնավար կուսակցութեանց, որ ներկայացուցիչներ ղրկեն Լեհաստան 1947 Սեպտ. 22ին կոմինֆորմը կազմելու համար :

« Այս ժողովին նպատակն էր՝ խորունկ փոս մը բանալ Եուկոսլաւիոյ համայնա – վար կուսակցութեան եւ Ֆրանսայի ու Իտալիոյ համայնավար կուսակցութեանց միջեւ». կը ղրէ Թիթօյի պաշտօնական կենսագիրը՝ Տեդիճէր : «Ժամանակ, որ այս ժողովին մէջ Սթալինը կը ներկայա – ցնէր, մեծ ճարտարութեամբ մղեց Եու – կոսլաւիոյ ներկայացուցիչները՝ Քար – տէլժ եւ Ճիլաս, որ Ժակ Տիւքլոյի եւ Լուիճի Լոնկոյի կարղացած տեղեկա – տուութիւններէն անմիջապէս ետք առա – ջին խօսք առնողները ըլլան եւ հրաւիրեց որ քննադատեն Ֆրանսական ու Իտալա – կան համայնավար կուսակցութեանց քա – ղաքականութիւնը : Քարտէլժ եւ Ճիլաս քաջալերանքի պէտք չունէին արդէն. Եուկոսլաւիոյ կուսակցութիւնը ծանր քն – նադատութիւններ ունէր՝ պատերազմի ընթացքին ու պատերազմէն ետք Ֆրան – սական եւ իտալական համայնավար կու – սակցութեանց ունեցած գործունէութեան մասին» :

Դիւրաւ կարելի է երեւակայել, թէ այս ձեւի յարձակումները ջղայնացուցին Ֆը – րանսացի եւ իտալացի պատգամաւորնե – րը :

«Տիւքլօ կատղած էր.— կը չարունակէ Տեդիճէր : Կը մերժէր խօսիլ ուեւէ մէկուն հետ : Ժողովէն ետքը պարտէզին մէջ ա – ռանձնացաւ » :

Բայց եւ այնպէս՝ Ֆրանսացիներն ու Իտալացիները տեղի տուին. դիտէին, որ Ճիլաս եւ Քարտէլժ այսքան բուռն լեզու չէին գործածեր եթէ համապատասխան հրահանգ ստացած չըլլային Սթալինէն : Բայց եւ այնպէս մեծ ոխ պահեցին Եու – կոսլաւներուն դէմ :

Սթալինի ուզածն ալ այս էր :

Ցաջորդ տարին, Սթալին յարձակեցաւ Թիթոյի վրայ : Պարզ էր, որ Թիթօ չէր կրնար որեւէ օժանդակութիւն յուսալ ըլլայ կարմիր բանակի դրաւման տակ դտնուղ համայնավար երկիրներէն, ըլ – լայ ազատ աշխարհի ամէնէն ուժեղ հա – մայնավար երկու կուսակցութիւններէն՝ Ֆրանսականէն ու իտալականէն. Սթալին ղաքականութիւնը : Քարտէլժ եւ Ճիլաս քաջալերանքի պէտք չունէին արդէն. Եուկոսլաւիոյ կուսակցութիւնը ծանր քն – նադատութիւններ ունէր՝ պատերազմի ընթացքին ու պատերազմէն ետք Ֆրան – սական եւ իտալական համայնավար կու – սակցութեանց ունեցած գործունէութեան մասին» :

Դիւրաւ կարելի է երեւակայել, թէ այս ձեւի յարձակումները ջղայնացուցին Ֆը – րանսացի եւ իտալացի պատգամաւորնե – րը :

«Տիւքլօ կատղած էր.— կը չարունակէ Տեդիճէր : Կը մերժէր խօսիլ ուեւէ մէկուն հետ : Ժողովէն ետքը պարտէզին մէջ ա – ռանձնացաւ » :

Բայց եւ այնպէս՝ Ֆրանսացիներն ու Իտալացիները տեղի տուին. դիտէին, որ Ճիլաս եւ Քարտէլժ այսքան բուռն լեզու չէին գործածեր եթէ համապատասխան հրահանգ ստացած չըլլային Սթալինէն : Բայց եւ այնպէս մեծ ոխ պահեցին Եու – կոսլաւներուն դէմ :

Սթալինի ուզածն ալ այս էր :

Ցաջորդ տարին, Սթալին յարձակեցաւ Թիթոյի վրայ : Պարզ էր, որ Թիթօ չէր կրնար որեւէ օժանդակութիւն յուսալ ըլլայ կարմիր բանակի դրաւման տակ դտնուղ համայնավար երկիրներէն, ըլ – լայ ազատ աշխարհի ամէնէն ուժեղ հա – մայնավար երկու կուսակցութիւններէն՝ Ֆրանսականէն ու իտալականէն. Սթալին մաքիավէլեան ճարտարութեամբ իրա – րու դէմ լարած էր երեք Թ.երը :

— Կը բաւէ որ ճկոյթ մատս բարձրա – ցնեմ. եւ Թիթօ թաւալդլոր վար պիտի իյնայ. կ'ըսէր Սթալին :

Ճկոյթ մատը բարձրացուց . եւ Թիթօ թաւալդլոր վար չինկաւ : Բայց յանցանքը Ֆրանսացի եւ իտալացի համայնավարնե – րուն չէր. Թիթոյի եւ «Թիթոյականնե – րու» դէմ կատարուած ամէնէն կատաղի յարձակումները Ֆրանսացիներէն եւ Ի – տալացիներէն եկան : Լուծելիք վրէժ ու – նէին :

Սթալինի կազմակերպած մաքիաւէլեան ծրագիրը կատարեալ ճշդրտութեամբ աշխա – տած էր :

Մաքիաւէլեան այս մեթոդը կը դոր – ծածէր նաեւ արտաքին քաղաքականու – թեան մէջ : Քաղաքական կտակի բնոյթ կրող իր դրութիւններէն մէկուն մէջ, որ իր ղրչէն ելած վերջին հրատարակութիւ – նը եղաւ, Սթալին հետեւեալ ձեւով կը պարզէր իր մեթոդը՝ 1952 Օգոստոսին.—

« Ընկերներ կը խորհին, թէ դրամա – տիրական երկիրները իրարու դէմ պա – տերազմ պիտի չընեն այլեւս, եւ թէ այս պահուս՝ ընկերվարական պլոքին եւ ղը – րամատիրական պլոքին միջեւ է որ պայ – քար կը մղուի : Այս ընկերները կը սխա – լին : Դրամատիրական երկիրներու միջեւ պատերազմները անխուսափելի են» :

(14 Շար.)

ներ. Արկեմիզոնի Արամազդը պահուեցաւ Էրակլէի յունական ծովեզերքին մօտ. պը – ղնձեայ հսկայական արձան մըն է, որ այժմ կը պահուի Աթէնքի Թանգարանին մէջ: Գտնուեցան նոյնպէս Մարաթոնի եփեզը եւ Անդիսթերի եփեզը :

Գտնուած են նաեւ այլ բազմաթիւ ա – ռարկաներ, մանաւանդ հնադարեան սափորներ :

ՓՆՏՈՒՈՒԻԲԻ ՎԱՅՐԵՐԸ

Փնտուուքի վայրերը· մինչեւ 15 մե – թըը խորութեամբ ծովուն մէջ դժուար է բան դանել, կողպուտը եւ ծովուն մա – կընթացութիւնը անհետացուցած է ամէն ինչ: 15 – 25 մեթը խորութեան մէջ կա – րելի է հանդիպիլ որոշ մնացորդներու . 25 – 35 մեթրի մէջ կարելի է դանել ամ – բողջ նաւեր :

Նաւերու բեկորները առ հասարակ տա – բածուած չեն ծովուն յատակը, այլ աւա – զուտքին մէջ են եւ մասամբ ծածկուած՝ ծովային բուսականութեամբ :

Շօշափելի արդիւնքներ ձեռք ձգելու համար հարկ է ունենալ յատուկ եւ կա – տարելագործուած սարքաւորումներ :

ԴՐԱԿԱՆ ԱՐԴԻՒՆՔՆԵՐ

1950ին իտալացի Նինօ Լամպուկա, Լի – գուրեան Միջազգային հիմնարկին տնօ – րէնը, ուզեց գտնել ճենովական ծովե – պերքին մօտ ընկղմած նաւ մը: Նաւը կը – տաւ, ուրկէ հանեց ութ հարիւր հնա – դարեան սափորներ եւ չիչեր, բայց նաւը չկրցաւ ցամաք հանել:

1952ին , Ֆրանսայի հրամանատար Գուստոյ ուզեց ձեռք անցընել ուրիշ հին նաւ մը, Մարսիլիոյ մօտերը: Ֆրանսա – կան կառավարութիւնը հետաքրքրուեցաւ ձեռնարկով եւ անոր իրրեւ օգնական ղր – կեց հնէաբան մը՝ Ժեռնան Պլնուա: Նաւը գտնուեցաւ 35 – 45 մեթը խորու – թեան մէջ: Նաւուն մէջ գանազան առար – կաներ գտան, բայց չկրցան ցամաք հա – նել զայն, որովհետեւ ծածկուած էր ժայռերով, որոնք փլուզումի մը հետե – ւանքով անոր վրայ ղիպուած էին:

1957ին հրամանատար Ֆիլիպ Թայէդ հետազօտութիւններ կատարեց Լըւան կղ – զիի հիւսիս – արեւելեան կողմը, ուր նշ – մարուած էր նաւ մը, 1948ին. Թայէդ կրցաւ գտնել 700 չիչեր, լամբարներ, հին զրամներ (նաւը ընկղմած էր Քրիստոսէ առաջ 50 թուականին): Հրամանատարը մինչեւ իսկ նաւուն բեկորները յաջող – ցաւ ցամաք հանել :

Ծանօթ է, որ Անդիսի մօտերը կը գտ – նուին առնուազն 12 ընկղմած նաւեր: Ըն – կղմած ամէնէն հին նաւը կը կարծուի, թէ Քրիստոսէ առաջ՝ վեց հարիւր տար – ուան հնութիւն ունի: Այսպէս, հնէաբա – նական յատուկ արժէք ունեցող եւ հետա – զօտութեան ենթարկուող ընկղմած նա – ւերը ունին հնութիւն մը, որ կ'երկարի Քրիստոսէ առաջ 2· դարէն մինչեւ Դ·

ՄԱԼԽԱՍ

—o—

Առջի օր հաղորդած էինք գրագետմալ – խասի մահը, Պէյրութի մէջ, Յունուար 4ին: Այս առթիւ Ազդակ հետեւեալ ման – րամասնութիւնները կուտայ ողբացեալ վիպագրին կեանքին մասին:

Հինգշաբթի առաւօտեան, Պէյրութի Սի· էմ· Սի· հիւանդանոցին մէջ , սրտի կաթուածէ հետեւանքով, իր աչքերը յա – ւիտենապէս փակեց հայ ազատագրու – թեան պայքարներու հաւատարիմ սպա – սարկուն եւ անկեղծ պատմիչը՝ զրագէտ Մալխաս, որ իր գործով, գտած էր հայ ժողովուրդի սրտի ճամբան եւ դարձած էր ամէնէն չատ կարդացուող հեղինակ – ներէն մէկը :

Անուններ կան, որոնք իրենց վճիտ պարզութեամբ իսկ կը վերապահեն փառքի ամենաբարձր տիպարները: Այս կարգին կը պատկանի մեր հանդուցեալ

դար Քրիստոսէ ետք: Նաւերուն մեծ մա – սը ընկղմած է Հռոմէական հանրապե – տութեան շրջանին, երբ վաճառականու – թիւնը մեծ թափ սացած էր :

ՍԱՓՈՐՆԵՐՈՒ ՕԳՏԱԿԱՐՈՒԹԻՒՆԸ

Բայց ինչո՞ւ ամէնէն աւելի հին սա – փորները կը գտնուին նաւերուն մէջ: Ո – րովհետեւ հին դարերուն ամէնէն զործա – ծական առարկաներն էին:

Ըստ Սթրապոնի, կային նաւեր, որոնք երբեմն կը կրէին մինչեւ 10·000 սափոր : Քրիստոսէ առաջ 218 թուականին, Հռո – մայեցիները օրէնք մը հրատարակեցին որ կ'արգիլէր ծերակուտականներուն ե – րեք հազարէ աւելի սափոր բեռնաւորել իրենց նաւերուն վրայ :

Սափոր մը կրնար պարունակել մինչեւ 26 լիտր, ուստի երեք հազար սափորի պարունակութիւնը կը հաւասարէր չուրջ ութսուն թոնի :

Յունական սափորները աւելի զեղեցիկ էին, մինչ Հռոմէականները՝ աւելի զործ – նական:

Երեք հազար սափոր փոխադրելու հա – մար բաւական էր երեսուն մեթր երկա – րութիւն եւ չուրջ տասը մեթր լայնք ու – նեցող նաւ մը :

Սափորները կը պարունակէին զինի , ձէթ , ձկան իւղ, ալիւր , ոսպէ , լուխաս , նուշ , ընկոյզ , արմաւ , եւայլն :

Իրենց տիրոջ հասնելէ ետք, սափորնե – րը կընային ամէն բանի համար զործած – ուիլ: Անոնց կտորները կը լեցնէին տան ստորերկրեայ պարապութիւններուն մէջ, ինչպէս երեսուն եկած է պեղումներէն : Սափորներու կափարիչներուն վրայ կա – րելի է երբեմն գտնել նաեւ անոնց վաճա – ռանիչը :

Հայացուց՝ ՎԱՐԴԱՆ Վ· ԹԷՔԷԵԱՆ

ընկերոջ անունը: Այս հաստատումին ճշ – մարիտ վկաներն են իր գործերը — «Ապ – բումներ», «Զարթօնք», «Լուսադէմին », « Ճամբուս վրայ » — որոնց մտայղ եւ պայծառ էջերէն մեր հազարաւոր ֆէտա – յիներուն քաղցր ու անդիմադրելի ձայնը կը լսենք, անոնց պարզ ու հզարտ կեց – ուածքը կը դիտենք ու անոնց սիրտերուն խորը, հայրենիքին զոհուելու անդրդուե – լի ուխտը կ'ընդունդմարենք :

Իր մահով , մեր յուշադրային դրակա – նութիւնը կը կորսնցնէ իր ամէնէն տա – ղանդաւոր դրադէտներէն մէկը, որ իր գործին զուտ հայադրոմ բովանդակու – թեամբ եւ անկաշկանդ ու սահուն ոճին նպաստով, կրցած էր դառնալ փնտռուած հեղինակ մը, հզօր հրապոյրով :

Մալխաս ծնած է Տրապիզոն, 1877 փե – տրուար 24ին: Նախնական կրթութիւնը կը ստանայ իր ծննդավայրի ազգային վարժարանին մէջ : Պատանի հասակէն՝ կը զառնայ մոլի ընթերցող, գիշեր ցերեկ գիտպեր կարդալով: Երկու տարի կը յա – ճախէ Կարինի Սանասարեան վարժարա – նը, ապա զարձեալ Տրապիզոնի ազգ· վարժարանը : Դաշնակցութեան չարքերը կը մտնէ 1896ին: Նոյն տարին կը մեկնի Մ· Նահանգները, ուր եօթը տարի մնալէ ետք, Փարիզի ու Ժընեւի վրայով կ'անց – նի Թիֆլիզ: Այնուհետեւ, կուսակցական զործով, կը մեկնի Ժընեւ, ապա Յունաս – տան: 1906ին կը վերադառնայ Կովկաս , անկէ Պարսկաստան: 1907ին՝ ծպտուած, կը մտնէ Վան: Երբ կը պատրաստուէր կրկին Ամերիկա անցնիլ, կը ձերբակալուի եւ կը նետուի Մեհեկի բանտը, ուր կը մնայ չորս ամիս : Սահմանադրութեան օ – րերուն, կը դառնայ Տրապիզոն, հանրա – յին զործով: Հոն կը հրատարակէ «Ծա – իրիս» չաբաթաթերթը, կարգ մը մտա – տորականներու հետ :

Առաջին աշխարհամարտի պայթումին, կը գտնուէր Պուրսա, ուրկէ կ'անցնի Պո – լիս, ապա Թիֆլիզ, ուր արդէն սկսած էր կամաւորական շարժումը, զլխաւորու – թեամբ Անդրանիկի եւ Իշխան Արղութ – եանի: Մեծապէս կը սատարէ կամաւոր – ներու հաւաքման զործին:

Հայաստանի անկախութեան օրերուն , կ'ընտրուի երեսփոխան: Փետրուարեան ապստամբութեան շրջանին, միանալով Քանաքեռէն եկող խումբին, կը մտնէ Ե – րեւան: Քանի մը ամիս ետք, ուրիշ բազ – մաթիւ զործիչներու եւ մտաւորականնե – րու հետ, կ'անցնի Պարսկաստան, ու Հնդկաստանի, Պուրմայի, Ճինաստանի եւ Ճափոնի վրայով, կը հասնի Մ· Նա – հանգներ: Անկէ ի վեր կը մնար Նիւ Եորք: 1956ին այցելեց Մերձաւոր Արե – ւելքի հայաշատ կեդրոնները, ուր մնաց մօտ ութ ամիս :

Երկրորդ անգամ Պէյրութ եկած էր՝ հրատարակելու համար իր կարգ մը ձե – ռագիրները: Բայց մահը, որուն պատ – րաստուած էր տարիներէ ի վեր, վերջին այդ սփոխանքը զլացաւ իրեն:

Ցարգա՛նք իր անմահ յիշատակին :

ՄԻԽԱՅԻԼ ԼՈՄՈՆՈՍՈՎ

(Ծննդեան 250ամեակին առթիւ)

—o—

Պատմութեան անցած եւ իրենց անունը պահած են փառքով բազմաթիւ զիտնա – կաններ: Իտալացի յայտնի նկարիչ Լէօ – նարտօ տա Վինչի միաժամանակ եղած է ճարտարապետ, զիւտարար : Գերմանացի բանաստեղծ Կէօթէ միեւնոյն ատեն կա – տարած է զիտական հետազօտութիւններ: Աղեքսանդր Պորտին եղած է բժիշկ, քիմիագէտ եւ երաժիշտ: Այս ցանկը կա – րելի է աւելցնել, բայց ասոնց մէջ հազիւ կարելի ըլլայ գտնել մէկը, որ հաւասարի Միխայիլ Լոմոնոսովի, 18րդ դարու ռու – սական զիտութեան հիմնադիրը :

Լոմոնոսով հանճար մըն էր, որուն խորաթափանց միտքը ընդգրկեց բնական եւ ընկերային զիտութիւններու զանա – զան բնագաւառները, կատարեց զիտա – կան լուրջ յայտնագործութիւններ: Կարգ մը զիտական հարցերու լուծման տեսա – կէտէն յառաջ անցաւ իր ապրած դարա – շրջանէն աւելի քան հարիւր տարիով :

Կարելի չէ օրաթերթի մը մէջ ներկա – յացնել այն յեղաշրջումները, զոր կա – տարած է բնագիտութեան, հիւզէի ու – սումնասիրութեան , բնալուծութեան , մթնոլորտի էլեկտրականութեան, աստ – ղագիտութեան, երկրաբանութեան, աշ – խարհագրութեան մէջ: Ձիշենք իր զոր – ծերէն «Անզդայուն զիտքի մասնիկ – ներուն մասին», Մաթեմատիկական քի – միային տարրերը» եւայլն :

Լոմոնոսով կարեւոր աշխատանքներ կատարած է նաեւ լեզուագիտութեան եւ պատմագիտութեան բնագաւառներէն ներս: Հանդիսացած է ռուս լեզուին բա – ցառնորոգիչը: Անոր զրչին կը պատկանին պատմական ուսումնասիրութիւններ, ե – զած է այդ առեղնուան համար մեծ բա – նաստեղծ մը եւ հռետոր մը: 1748ին կը վերջացնէ «Ճարտասանութիւն» գիրքը , իսկ 1755ին՝ «Լուսերէնի քերականու – թիւնը » : Այդ քերականութիւնը օրինակ ծառայեց յետագային քերականութեան դասագիրքեր կազմողներուն համար :

« Առանց քերականութեան, կը գրէր , բութ է երաժշտական երկը, թերիստ է բանաստեղծութիւնը, անհիմն է փիլիսո – փայութիւնը, տհաճ է պատմութիւնը , կասկածելի է իրաւաբանութիւնը ... բո – լոր զիտութիւնները քերականութեան պէտքը ունին»:

Լոմոնոսով կը նկատուի ռուս զրական լեզուին հիմնադիրը : Հետաքրքրական են իր տեսակէտները զրականութեան, յատ – կապէս բանաստեղծութեան մասին: Ահա թէ ինչ կը պահանջէր բանաստեղծներէն. «Կատարեալ բանաստեղծ ըլլալու համար, հարկ է բոլոր զիտութիւններու մասին բաւական գաղափար ունենալ, իսկ չատե – րուն նկատմամբ՝ կատարեալ զիտելիք եւ արուեստ: Բաւական չէ, որ բանաստեղծը փափաքի անուշցնել, երբ ան ոչ մէկ բան կրնայ սորվեցնել»: Լոմոնոսով զգալի ժամանակ յատկացուցած է ռուսական պատմութեան հարցերուն:

Աւելորդ է ըսել, թէ Լոմոնոսով բարձր գնահատուած է ծանօթ զիտնականներու եւ մտաւորականներու կողմէ: Այսպէս , Պուշկին կը գրէր .— «Կամքի արտասովոր ուժը միացնելով արտակարգ ըմբռնումին հետ, Լոմոնոսով ընդգրկեց լուսաւորու – թեան բոլոր ճիւղերը: Զիտութեան ծա – բաւը կը հանդիսանար կիրքերով լեցուն այս մարդուն ամէնէն ուժեղ կիրքը : Պատմաբան, ճարտասան, քիմիագէտ , հանքաբան, նկարիչ եւ բանաստեղծ՝ ան ամէն ինչ ճաշակեց եւ ամէնուն մէջ թա – փանցեց »:

«ԾԱՌԱՋ»Ի ԹԵՐԹՕՆԸ (131)

ԹԻԱՊԱՐՏԸ

(ՎԷՊ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿԵԱՆՔԷ)

ԳՐԵՑ

ԱՐՄԷՆ ՇԻՏԱՆԵԱՆ

ՄԱՍՆ ԵՐԲՈՐԴ

— Աղիկա իրենց խիղճէն կախում ու – նի, Տէր եղբայր, ինչո՞ւ համար նկատո – ղութեան կ'առնէք:

Երբ մարդ մը չհաւատար կրօնական սրբութեանց ու կ'անարգէ մեր նախա – հաց օրէնքները, բռնութեամբ չենք կըր – նար զինքը ճամբու բերել: Ան որ իր խղճին ղէմ կը զործէ, անձնասպան մըն է, որ իր զերեզմանը ձեռքով կը փորէ, բայց հանրութեան վնաս մը չի – տար: Այդ երիտասարդները հանրային շահուն վնաս մը կը հասցնե՞ն :

Տէր Կոմիտաս իր փառաւոր մօրուքը տնկեց, ակամայ ցնցում մը զգաց իր է – ութեան մէջ ու պատասխանեց :

Այո, թէ ատոնք ոչ իրենց խղճին դէմ կը զործեն, այն հանրային շահը , ուժը, պատիւն ու վստահութիւնը չարա – շար կը զործածեն ու կը վնասեն անոնց յառաջդիմութեանց :

— Պատճա՞ռը :

— Պատճառը պարզ է, հայր սուրբ , պիտենք թէ անխոհեմաբար ներկայ հան – զամանքներն անոնք ստեղծեցին, պիտենք թէ քանի մը տարիներէ ի վեր տիրող կա – ռավարութեան աչքը մեր վրայ զարձու – ցին եւ մահմետական տարրին առելու – թիւնը զրգռելու տեղի տուին : Գաղտնի բան մը չմնաց· ամէն բան հրապարակի վրայ զրուեցաւ ու հոն կատարուեցաւ : Ցայտնի կերպով « մենք էլի ապստամբ – ներ ենք· մենք յեղափոխականներ ենք , մենք զինուորներ ենք»· պոռացին փողո – ցին մէջ ու չլսեցին բոլոր մեծերու խը – րատները: Ահա դեռ ի՞նչ ըլլայ ... դեռ ինչ աղէտ մը պատրաստուի :

— Դուք ի՞նչ կ'ըսէք· չըլլա՞ն յեղափո – խականներ, չըլլա՞ն զինուորներ :

— Յեղափոխական ըլլալով մենք իրա – ւունք կ'ունենանք մեր եկեղեցական օ – րէնքները ծաղրել ու անարգել :

— Ի հարկէ ոչ· միայն թէ զերու – թեան ներքեւ ճնշուած ամէն ազգ, ամէն ժողովուրդ իր ծոցին մէջ ունեցած է անձնուէր զաւակներ, որոնք արիւն թա – փած են, ոգի ի բուն աշխատած են եւ հայրենիքի անունը յեղյեղելով փշած են իրենց վերջին շունչը :

— Ճշմարիտ յեղափոխականին ով ինչ կրնայ ըսել : Բայց եկուր սա քաղաքը տակն ու վրայ դարձնող քանի մը ցնորա – միտներուն յեղափոխական անուն տուր , եւ հաւատայ թէ Հայոյն ճակատագիրը չարաչար պիտի չզործածուի ատոնց ձեռ – քին մէջ: Ո՛հ հայր սուրբ, չեմ կրնար հա – ւատալ · չեմ կրնար ընդունիլ :

Վարդապետը խորին լռութեամբ մտիկ կ'ընէր քահանայի մը ճշմարիտ տրամա – բանութեանը մինչեւ ան ատեն Տէր Կո – միտասի հոգւոյն պատկերացումը մաքուր ու ջինջ մչուշի մը մէջ, ճառագայթի մը պէս կը ցոլար եւ հոն աղետաւոր ստուեր մը չէր թափանցեր: Մինչեւ ան ատեն , այդ ամբաստանուած եկեղեցականին չը – թունքը սեւցած չէր ու լեզուն դեռ զար – չելի բառ մը արտայայտած չէր :

— Տէր եղբայր , մրմնջեց վարդապետը՝ պահ մը մտածելէ ետքը, ի՞նչ կ'ըսէք, ի՞նչ կերպ վարուելու է այդ ցնորամիտ երիտասարդներու հետ :

Տէր Կոմիտաս, առանց քննելու հար – ցումին նշանակութիւնը, պատասխանեց·

—Լսա իս , թողնելու չէ որ ատոնք հա – յութեան ճակատագրին հետ ուզածնուն պէս վարուին :

– Ախտ լաւ, ի՞նչ միջոցաւ, ընդհատեց վարդապետը :

— Միջոցը չէ որ կը պակսի, հայր սուրբ, այլ՝ կամք: Երբ ազգային հոգե – ւոր իշխանութիւնը նկատի առնէ չարիքը, մի թէ՞ չի կրնար առաջքը առնել: Բայց մեր ազգային հոգեւոր իշխանութիւնն ալ կամքէ զինկած մարմնոյ մը կը նմանի , կարծես թէ իր մէջ ոչ ուժ մնացեր է, ոչ ալ տրամադրութիւն: Անդամալոյծ մը զարձեր է, որ կ'ապրի, սակայն զործե – լու եղանակէն զրկուած է :

— Կը հաւատա՞ք թէ ազգային հոգե – ւոր իշխանութիւնը կարող է չարիքին ա – ռաջքը առնելու :

(Շար·)

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Այրի Տիկին Բ. Փափազեան, զաւակ – ները եւ թոռները կը ծանուցանեն թէ հո– գեհանգստեան պաշտօն պիտի կատարուի այս Կիրակի առաւօտ, Ալֆորվիլի Ս. Պօղոս – Պետրոս եկեղեցիին մէջ, իրենց ամուսնոյն, հօր եւ մեծ հօր՝

ԲԱՐԹՈՂ ՓԱՓԱԶԵԱՆԻ

մահուան քառասունքին առթիւ :

Կը հրաւիրուին յիշատակը յարգող – ները :

×

Այրի Տիկին Զօրթեան եւ զաւակները կը ծանուցանեն թէ հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի այս Կիրակի առաւօտ Ալֆորվիլի Ս. Պօղոս Պետրոս ե– կեղեցւոյ մէջ իրենց ամուսնոյն եւ հօր՝

ՀԱՃԿԱԶ ԶՕՐԹԵԱՆԻ

մահուան քառասունքին առթիւ :

Կը հրաւիրուին ողբացեալին յիշատակը յարգողները :

ՑԱԻԱԿՑՈՒԹԻՒՆ

Հ. Ց. Դ. Մարսէյլի Շրջ. կոմիտէն՝ իր շրջանի բոլոր ընկերները – ընկերուհիներու անունով, ցաւակցութիւն կը յայտնէ ըն– կեր Սիմոն Աւտոյեանի եւ ընտանեկան պարագաներուն, իր որդւոյն ՎԱՐԴԱՆ ԱՒՏՈՑԵԱՆԻ կսկծալի մահուան առթիւ :

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

ՊՕՄՈՆԻ Թաղ. Խորհուրդը փոխան ծաղկեպսակի նուէրներ ստացած է հան– գուցեալ Պ. Կարապետ Մանուկեանի յու– շարկաւորութեան առթիւ :

Պ. Պ. Մեսրոպ Տամլամեանէ եկեղեց – ւոյ, Աղքատաց, Փանոս Տամլամեան աղքատաց, Յովհաննէս Ցակոբեան աղ – քատաց, Նշան Տատեան եկեղեցւոյ, Նը– շան Դարբինեան եկեղեցւոյ տասնական Ն. Ֆ. : Աւետիս Պարէեան եկեղեցւոյ 5 Ն. Ֆ., Մեսրոպ Սարգիսեան (էքմէկն) և – կեղեցւոյ տասը Ն. Ֆ., Տաճատ Շալ – ճեան, Վրոյր Շալճեան, Ցակոբ Պետրոս– եան, Խտուար Փափազեան, Համի Վար– դանեան միասնաբար եկեղեցւոյ կը նուի– րեն 25 Ն. Ֆ. :

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ Ս. ԽԱՉ ԵԿԵՂԵՑԻ

10 bis, Rue Thouin, PARIS

Այս Կիրակի, Հայրապետական ձայնա– ւոր պատարագ պիտի ըլլայ Շաւիլի Նո – թըր–Տամ Մայր եկեղեցիին մէջ, 155 Ա– վընիւ Ռոժէ – Սալանկրօ, երեկոյեան ժամը վեցին :

Պիտի պատարագէ եւ քարոզէ՝

ԳԵՐ. ԿԱՐԱՊԵՏ ԵՊԻՍԿ. ԱՄԱՏՈՒՆԻ

Փոն տը Սէվրէն թիւ 171 օթօպիւս, իջնել Փուի Սան Վէն :

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Հ. Ց. Դ. Նոր Սերունդի Իսիի Խանա – սոր խումբի գեղարուեստական եւ պա – րանցիկ երեկոյթը Իսիի մէջ, փետր. 10ին :

×

Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ

Ծննդեան 1600ամեակը համազգային շուրջով կը տօնուի Մարսէյլի մէջ :

Փետրուար 18ին, կիրակի կէսօրէ ետք, Քազա տ'Իթալիայի չքեղ թատրոնին մէջ :

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՕՐԸ

Ֆ. Կ. Խաչի Կրընոպլի մասնաճիւղը կը տօնէ, Մանուկներու Օրը, կիրակի, 14 Յունուար, կէսօրէ վերջ ժամը 3ին, Սալ Սէն Լուի (Րիւ ժէ) :

Խմբերգ, տրամախօսութիւն, մենախօ– սութիւն, արտասանութիւն եւ մանկա – կան անակնկալներ :

Ըստ աւանդութեան՝ ԿԱՂԱՆԴ ՊԱՊԱՆ պիտի բաժնէ մրգեղէններ, առանց բա – ցառութեան բոլոր սրահի ներկայ տղա – յոց :

Կը խնդրուի Կրընոպլի, Լանսէի, Ռէ – նաժի եւ Ֆիլգօռի բոլոր հայրենակիցնե – րէն իրենց ներկայութեամբ քաջալերել զպրոցին մանուկները :

×

ՊՕՄՈՆԻ ՄԷՋ

Կապոյտ Խաչի մասնաճիւղը Մանուկնե– րու Օրը կը տօնէ այս Շաբաթ, կէս օրէ վերջ, Սահակ – Մեսրոպ սրահին մէջ, զպրոցի երեկոեւ աշակերտութեան կող – մէ պատրաստուած գեղարուեստական բաժինով մը :

×

ՎԻԼՆԻ ՄԷՋ

Կապոյտ Խաչի մասնաճիւղը Մանուկ – ներու Օրը կը տօնէ այս կիրակի կէսօրէ վերջ ժամը երեքին, Սէրքլը կաթոլիկի սրահին մէջ :

Գեղարուեստական բաժին զպրոցի ա – շակերտ – աշակերտուհիներու կողմէ : Երգ, արտասանութիւն եւ պարեր :

Աւանդական Կաղանդ Պապան իրեն նը– ւէրներով պիտի ուրախացնէ մանուկնե – րը :

ՇՈՒՏՈՎ ԼՈՑՍ ԿԸ ՏԵՍՆԷ

ՀԱՅ - ԲՈՑԺ

ԺՈՂ. ԱՄՍԱԹԵՐԹ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ

Խմբագիր՝ Շ. ՆԱՐԴՈՒՆԻ

—o—

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.— (Թիւ 234 – 236).— *Վիքթոր Հիւկօ եւ Բժիշկները* (Խմբ.).— *Նախաճաշի մասին* (Տոքթ. Փօլ Ֆարէզ).— *Մազերու թափելուն դէմ* (Տոքթ. Գէորգեան).— *Ծծկեր երախանե– րու մարսողական խանգարումները* (Տոքթ. Բամպուճեան).— *Արկածով մեռնողները Ֆրանսայի մէջ* (Քաղհան). *Ձաման* (Յովհ. Պապէսեան).— *Շա – դրանակագեղձը խոշորցած է, չի կրնար միդել* (Տոքթ. Շ. Այվազեան).— *Սննե – կայի հիւանդութիւնը, լանջախիք* (Շ. Նարդունի).— *Օգտուիր ջրից եւ արեւից* (Տոքթ. Փարսադանեան).— *Քոլեսթէ – րոլս չատցած է* (Տոքթ. Ա. Աշճեան).— *Ձաւակ բերել առանց ցաւի* (Տոքթ. Ան– ֆանեզ).— *Պայքարը այրերու եւ կիներու մէջեւ* (Տոքթ. Արշակ Պօղոսեան). — *Շաշանդամ կինը կամ կնոջ պաղութիւ – նը* (Տոքթ. Գալուստեան).— *Բերանը կոկորդիլոսի բերան* (Տոքթ. Գեղամ Այ – վազեան) :

Տարեկան բաժնեգին Ֆրանսա 15 Ն. Ֆ., արտասահման՝ 20 Ն. Ֆ. :

Հասցէն զրել ճիշդ այսպէս.— Շ. Նար– դունի, *խմբագրատուն* Յառաջի,

Ch. Aivazian
Au journal HARATCH
32, Rue de Trévise, Paris (9e)

Հ. Ց. Ի.

ՓԱՐԻԶ.— Հ. Ց. Դ. Շրջ. կոմիտէն ներկայացուցչական ժողովի կը հրաւիրէ փարիզի եւ շրջանի մարմիններու ներկա– յացուցիչները այս Շաբաթ երեկոյ ժամը 8·30ին, Մշակոյթի Տան սրահին մէջ : կարեւոր օրակարգ : Շրջ. ժողովի օրա – կարգի քննութիւն :

ՓԱՐԻԶ.— Հ. Ց. Դ. «Փոթորիկ» խում– բի ժողովը այս Հինգշաբթի իրիկուն : Սովորական հաւաքատեղին : կարեւոր օ – րակարգ :

ԱԼՖՈՐՎԻԼ.— Հ. Ց. Դ. Ս. Մինաս – եան ենթակոմիտէն ընդհ. ժողովի կը հր– աւիրէ բոլոր ընկերները այս Ուրբաթ ժամը 21ին :

Ներկայ կ'ըլլան կեդր. եւ Շրջ. կոմի – տէներու ներկայացուցիչները :

Կը խնդրուի ճշդապահ ըլլալ :

ՊԱՆԵԷՕ – ՔԱՇԱՆ.— Հ. Ց. Դ. «Ար – ծիւ» ենթակոմիտէն ընդհ. ժողովի կը հրաւիրէ ընկերները այս Հինգշաբթի, ժամը 20·30ին, Ծանօթ հաւաքատեղին : կարեւոր օրակարգ :

ՓԱՐԻԶ.— Հ. Ց. Դ. Ռոստոմ խումբի ժողովը այս Ուրբաթ, ժամը 21ին, ընկեր Մանուկի բնակարանը : կարեւոր օրա – կարգ :

ԼԻՈՆ.— Հ. Ց. Դ. Վարանդեան կոմի– տէն ժողովի կը հրաւիրէ բոլոր ընկերնե– րը այս կիրակի, կէսօրէ վերջ ժամը 3ին, 101 Ավընիւ տը Սաֆսի սրճարանի ներք – նասրահը : կարեւոր օրակարգ :

ՎԱԼԱՆՍ.— Հ. Ց. Դ. Շրջ. կոմիտէի ընկերական ընդհ. ժողովը, այս Շաբաթ, ժամը 20·30ին, Ահարոնեան ակումբը : Շատ կարեւոր օրակարգ : Բոլոր ընկեր – ներուն ներկայութիւնը պարտաւորիչ է :

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՑ

Հ. Ց. Դ. Մարսէյլի Շրջ. կոմիտէի հր– աւիրած ընկերական ժողովներու .—

Հ. Ց. Դ. Մարսէյլի Շրջ. կոմիտէն՝ սեպտեմբեր ընկերական ընդհ. ժողովի կը հրաւիրէ հետեւեալ ենթակոմիտէնե – րու եւ խումբերու անդամ ընկեր – ընկե– րուհիները :

ԱԿՆՈՒՆԻ ենթակոմիտէ 13 Յունուար, Շաբաթ երեկոյ ժամը 21ին :

ՎԱՐՈՒԺԱՆ խումբ՝ 14 Յունուար, կի– րակի կէսօրէ ետք ժամը 15ին :

ՀԱՄԱԶԱՍՊ խումբ՝ 13 Յունուար, Շաբաթ երեկոյ, ժամը 21ին :

ԹԱԹՈՒԼ խումբ՝ 14 Յունուար, կէս – օրէ ետք ժամը 15ին :

ԸՆԿԵՐ ԿԱՐՕ խումբ՝ 14 Յունուար, կիրակի կէսօրէ ետք ժամը 15ին :

ՀԱՅԱՍՏԱՆ խումբ՝ 13 Յունուար, Շաբաթ, ժամը 21ին :

ՎԱՐԱՆԴԵԱՆ խումբ՝ 15 Յունուար, երկուշաբթի, ժամը 21ին :

ԳԷՈՐԳ ԶԱՎԱՒԻՇ խումբ՝ 20 Յունուար Շաբաթ, ժամը 21ին :

ՄՈՒՐԱՏ խումբ՝ 21 Յունուար, կիրա– կի կէսօրէ ետք, ժամը 15ին :

ՆԻԿՈԼ ԴՈՒՄՄԱՆ խումբ՝ 21 Յունուար, կիրակի կէսօրէ ետք, ժամը 15ին :

ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ խումբ՝ 20 Յուն– ուար, Շաբաթ, ժամը 21ին :

Սոյն ժողովները տեղի պիտի ունենան իրենց սովորական հաւաքատեղիները : Ախտ կարեւոր օրակարգ : Բոլոր ընկեր – ընկերուհիներու ներկայութիւնը պարտա– ւորիչ է : Վարչութիւնները նախապէս պէտք է բոլոր ընկերներուն տեղեկացնեն ժողովներու վայրի եւ թուականի մասին : Ներկայ պիտի ըլլան Շրջ. Կոմիտէի ներ – կայացուցիչները :

Imprimerie Spéciale du journal « Haratch »
32, Rue de Trévise, PARIS (9e)

Ֆ. Կ. ԽԱՉԻ ԱՆԻԷՌ – ՊՈՒԱՔՈԼՈՄՊԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԻ ՏԱՐԵԿԱՆ ԹԷՑԱՍԵՂԱՆԸ

Անիէռի թաղապետարանի սրահին մէջ ՍաՒթր Ատմինիսթրաթիփ է Սոսիալ :

Այս կիրակի, ժամը 15էն 20 :

Կը հրաւիրուին փարիզի եւ շրջաններու ընկերուհիներն ու համակիրները :

Գեղարուեստական ճոխ բաժին եւ անա– կընկալներ :

Մուտքը ազատ է :

Կ'ՈՒԶՈՒԻ

Հայ երիտասարդ մը, որ փափաքէր արտածումի եւ ներածումի կարեւոր գոր– ծի մը մէջ ապագայ ունենալ :

Ներկայանալ ամէն օր՝

Յ. ՓԱՓԱԶԵԱՆ հաստատութիւն,

3a, Rue Lafayette, MARSEILLE

Կ'ՈՒԶՈՒԻ ՍՏԻՊՈՂԱԲԱՐ

Հանդերձապահուհի մը Ս. Մուրատեան վարժարանին համար : Դիմել տեղւոյն վրայ :

26, Rue Troyon, SEVRES (S. et O.)
Métro : Pont de Sèvres
Tél. : OBS. 18-28

ԾՆՈՒՆԴԻ ԵՒ ՆՈՐ ՏԱՐԻՈՑ

ՈՒՐԱԽ ՕՐԵՐՈՒՆ ԵՒ ԱՄԲՈՂՋ ՏԱՐԻՆ

Եւրոպայի Մեծագոյն Արեւելեան Վաճառատունը

ՊԱՀԱՍՈՒՐԵԱՆ *խանութ մը չայ – ցելոյին սեղանին վրայ ամէնէն հա– մով պատառը կը պակսի՝ մեծին ու պզտիկին համար : ՊԱՀԱՍՈՒՐԵԱՆ վաճառատան մէջ պիտի գտնէք ա – նանդական ընդեղէններու եւ անու – շեղէններու ամէն տեսակը, անմրցե– լի գիներով :*

Ապսպրանքի վրայ, ծրարի առա – քում Ֆրանսայի ամէն կողմ եւ դէ– պի արտասահման՝ Պելժիա, Զուի– ցերիա, Անգլիա :

ՊԱՀԱՍՈՒՐԵԱՆ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ LYON

246, Rue Vendôme -	Tél. MO 11-84
29, Rue Villeroy	MO 32-10
65, Rue Robert	LA 07-72

ԵՒ ԻՆԶՊՂԻՍ ՄԻՇՏ

Արմաւ, «պամիա», «եալանճի տոլ– մա», յունական «թուրչի», «պի – պէռ», տերեւ, թահին հելվա, «վա– նիլլ», չոքոլա, «նուազէթ», «լո – ղում», «սագըզ», պիտտակ, Շիրակ օղի (41 – 45o), Իզմիրի չամիչ, «սուճուք», կեսարական «պաստըր – մա» : առաջնակարգ սուրճ, (fարա– վան եւ մոգա), համեմներ «մահ – լէպ», «սալէպ», ձիթապտուղ, ձէթ, «քաչքաւալ» պուլկարական, ճեր– մակ պանիր ոչխարի կաթով : Ամէն կարգի պահածոներ, «քուսքուս», հարիսա, սումագ, թարամա, լա – ֆերտա, բաֆլաւա, fատայիֆ, տե– րեւ եւայլն :

ՊԱՀԱՍՈՒՐԵԱՆ ՀԱՒԱՏԱՏԻՔԻՆԸ

Ունի նաեւ մասնաճառատուն մը, ուրուն առաջնակարգ միսերը պատ – րաստ կուտան ամէնէն արբանեակ – ներուն : Ոչխարի, հորթի եւ եղան միս (քաչուած միս, եւայլն) :

ԵՒՐՈՊԱՅԻ ՄԵԾԱԳՈՅՆ ԱՒՏԱԴՐՈՒՆՔԸ

ՀԷԼՎԱ ԼՈԳՈՒՄ Սուսամ – ՀԷԼՎԱ

ԹԱՀԻՆ ՇԱՐՈՑ (ՌՈՃԻԿ) ՎԱՐԴԷ–ԱՆՈՑՇ

ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ...

CHOC-ALVA • CHOCO-LOC

Sté le BOSPHORE
SIÈGE SOCIAL
2, Rue Louis Astouin /Marseille (2ème)

ՏՕՆԱԿԱՆ ՕՐԵՐՈՒ ԼԱՒԱԳՈՅՆ ՆՈՒԻՐԸ

ՍԻՓԱՆ – ԿՈՄԻՏԱՍԻ՝ նոր սալը

"ՀԱՅ ԿՐՕՆԱԿԱՆ ԵՐԳԵՐ"

Chants Religieux Arméniens

Կը վարակաւարէ Կ. ԱՓՐԻԿԵԱՆ

Փնտռել՝ երգչախումբի վարչութեան անդամներուն, բարեկամներուն եւ հե– տեւեալ հասցէներուն մօտ :

Restaurant ARTHUR
5, Rue Augustin Thierry
Place des Fêtes. Paris 19e

Librairie H. SAMUEL,
51, Rue Monsieur-le-Prince, PARIS

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

Le PREMIER QUOTIDIEN ARMENIEN en EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction et Administration : 32, Rue de Trévise - PARIS-9e

Fondé en 1925 — R. C. Seine 57 A 2731

Téléph. : PRO. 86 - 60 — C. C. P. Paris 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա՝ Տար· 50 Ն· Ֆ· Վեցամսեայ՝ 27 Ն· Ֆ·
Արտասահման՝ Տար· 60 Ն· Ֆ· Հատը՝ 0·25 Ն· Ֆ·

ՈՒՐԲԱԹ 12 ՅՈՒՆՈՒԱՐ // VENDREDI 12 JANVIER 1962

38ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 9302 — 38e ANNÉE — Fondateur : SCHAVARCH MISSAKIAN — ՆՈՐ ՇՐՋԱՆ, 18ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 5103

ԾՆՈՒՆԴԸ ԷՋՄԻԱԾՆԻ ԵՒ ՊՈԼՍՈՑ ՄԷՋ

—o—

Ծնունդի առթիւ, Ամենայն Հայոց Հայրապետը քարոզած է էջմիածնի մէջ։ Նոյն դիշերը արարողութեան մէկ մասը եւ քարոզը ձայնասփռուած են, երեւանի ձայնասփիւռէն։

Քարոզին մէջ կաթողիկոսը անդրադառնալէ առք Ցիսուսի ծննդեան եւ յայտնութեան, ծանրացած է Հայաստանեայց Ե – կեղեցւոյ դերին եւ պարտականութեան վրայ։ Վազգէն Ա· այս առթիւ յիշած է թէ էջմիածինը միշտ աղօթող եղած է խաղաղութեան եւ այդ իսկ պատճառաւ մասնակցած է Փրակայի քրիստոնէական համաշխարհային համագումարին։

ՊՈԼՍՈՑ ՄԷՋ

Ուրբաթ օր վերջին անգամ ըլլալով, Պոլսոյ եկեղեցիներուն մէջ յիշուեցաւ Գարեգին Պատրիարքի անունը եւ բոլոր եկեղեցիներուն մէջ սկսաւ յիշատակուիլ նորընտիր պատրիարք Շնորհք Աբք· Գալուստեանի անունը։

Այս առթիւ Պոլսոյ թերթերէն կը քաղենք հետեւեալ մանրամասնութիւնները։

Ս· Ծննդեան Տօնին առթիւ, Ուրբաթ երեկոյեան Ճրագալոյցի պատարագի երեցողութեանց, Ֆերիքիւղի եկեղեցին, իսկ երէկ առաւօտ Ծնունդի արարողութեանց նախագահեց, քարոզեց եւ Ջըրօրհնէքը կատարեց Խադ Աբք· Ալճապահեան, Պէյօղլուի Ս· Երրորդութիւն եկեղեցին՝ Սուրէն Աբք· Քէմհաճեան, Ֆերիքիւղի եկեղեցին՝ Սահակ Ծ· վրդ·Փափազեան, Սկիւտարի Ս· Խաչ եկեղեցին՝ Շահան Ծ· վրդ· Սվաճեան, իսկ միւս եկեղեցիներուն մէջ պատարագեցին եւ Մխիթարեանց Միաբանական Ընդհանուր Առաջնորդը կատարեցին իրենց քահանաները։

Ա֊ոռանիստ Մայր եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ Պատրիարքական անդրանիկ Ս· Պատարագ։ Բազմահազար ժողովուրդ եկած էր հետեւելու մօտակայ եւ հեռաւոր թաղերէ։

ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ

Կէսօրէ վերջ Գումգափուի Պատրիարքարանի ժամը 15ին տեղի ունեցաւ պաշտօնական ընդունելութիւնը։ Ներկայ էին Պաղ, Սուրէն Աբք·ները, Սահակ եւ Շահան Ծ· վարդապետները եւ Պատր· փոխանորդ Տ· Արամ քհնյ· Պասմաճեանը, Անգլիոյ համայնքի ներկայացուցիչ Սարգիս Քիւրքճեան, ծերակուտական Պերճ Թորան։ Ցաջորդաբար կը հասնէին Կալֆայեան տան առաքինազարդ մայրը լանչախաչը կուրծքին, Վեհետիկեան մեքանաներէն Հ· Յակոբոս Ծ· վրդ· Փոսալըճեան եւ Անտոն վրդ· Ճիվանեան։ Սրթոռքանեղու տիեզերական պատր· Աբք· Նակորաս Սրբազանը իր հետեւորդներով դիմաւորուեցան Արամ Ա· քհնյ· Տ· Սահակ եւ Շահան Ծ· վարդապետներէ եւ քանի մը քահանայ հայրերէն, ապա սանդուխին գլուխը դիմաւորեց Սուրբ Աբք· Քէմհաճեան իսկ մայր դահլիճի դուռէն Ս· Շնորհք պատրիարք հայրը եւ Խադ Աբք·ը ներկայացումի ձեւակերպու – թիւնները երբ կը կատարուէր ժամանակին նաեւ հայ կաթողիկէ վիճակաւոր Արխ· Պօղոս Աբք· Քիւրքճեան իր հետեւորդներով, Վիէննականներէն Հ· Սարգիս Ծ· վրդ· Խաչեան եւ Հ· Գրիգորիս վրդ· Մանեան, Անկիւրեան եկեղեցւոյ պետ Հ· Մ· Ս· Վ· Փայլերը եւ Հ· Հարութիւն, հայ բողոքականաց ներկայացուցիչները պատուելի Ս· Աղասեան եւ Տ· Լեւոն Քարաքոչեան, Սուրիանիներու Գորգեվիսկոպոս Սամուէլ Էպիսկոպոսը եւ մակաբար մարմինէն Ապտուլլահ Այտէմիր եւ Սիմոն Գէտիկօղլու։

Կիւլպէնկեան Ֆոնտի ներկայացուցիչ Գորթուկալի Հիւպատոս Ապրեվանել եւ Գարակէօզեանի Տան Տնօրէնուհի Տիկին Խերումեան խումբ մը աչակերտու – թեամբ։ Օրթոտոքսներու Տիեզերական Պատրիարքը խօսք առնելով ըսաւ· «Հին դարերուն ըլլայ օրթոտոքսները եւ ըլլայ Հայերը աւանդութեանց խոկապէս կապուած են։ Ամէն գործի մէջ ուժեղ են· հաւատքով, սրտով աւանդապաշտու – թեամբ ու ջանասիրութեամբ որուն համար կը հիանամ»։

« Ազգ մը եւս հայ ժողովուրդը կը ընորհաւորեմ տօնական այս առթիւ։ Երջանկայիշատակ Յակոբեան Պատրիարքը կ'ոգեկոչեմ եւ հոգւոյն համար կ'աղօթեմ։ Նորընտիր Պատրիարքը կը ընորհաւորեմ, շատ տարիներու հասնի· վստահ եմ թէ Հայերը ձերդ սրբազնու – թեան շուրջ բոլորուելով պիտի աշխատին եւ զօրավիգ պիտի կանգնին ձեզի· Նոր Սրբազան Պատրիարք հայրը դիտութիւնը սիրող, դիտութեան կարեւորութիւն տը – ւող, համայն աշխարհի եկեղեցեաց աչքերուն մօտէն տեղեակ եւ եկեղեցւոյ պիտելիքներու տեղեակ է»։

«Արդէն յոյն եւ հայ ժողովուրդը, եկեղեցւոյ աշխատանքները միասին պիտի տանին եւ մեր այս աշխատանքները պիտի դործադրուին մեր կառավարութեան օ – րէնքներուն թոյլատուութեամբ»։

Շնորհք Պատրիարք իր պատասխանին մէջ ընորհակալութիւն յայտնած է Աբք – նակորաս պատրիարքին որ կրկին խօսք առած է քիչ առք։

Նոյն օրը Պատրիարքը ընդունեցաւ համայնական ներկայացուցիչները եւ այս առթիւ յայտնեց իր ծրագիրները։

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

"ԱՀԱԿ"Ի ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

—o—

ԿՈՒԶԵՆ ԲԱՑԷ Ի ԲԱՑ ԿՌՈՒԻ, ԳԱՂՏՆԻ ԲԱՆԱԿԻՆ ԴԷՄ

Ալժ· Ազատ· Ճակատի վարիչները վերջացուցին իրենց ժողովը, զոր գումարած էին Մոհամէտիայի մէջ (Մարոք)։ Հրատարակուած վեկոյցով «Ա.ՀԱԿ»ը կը յայտնէ թէ քննած է ալժերական յեղափոխութեան չուրջ եղած զինուորական, քաղաքական եւ դիւանագիտական տեղեկագիրները, ինչպէս նաեւ այն հարցերը որ կապ ունին Ֆրանքեւալժերական համանական բանակցութեան մը։ «Ա.ՀԱԿ»ը իր պայքարի ամրապնդման համար որոշումներ տուած է եւ միջոցներ ձեռք առած ճգմելու համար «Ֆաշիստ եւ աջ – խարհակալ տարրերու» գործունէութիւնը, որոնք կը փորձեն Ալժերիոյ ետրոպացիները քաշել արկածախնդրութեան մը մէջ որ ճակատագրական կրնայ դարձնել իրենց ապագան Ալժերիոյ մէջ ինչպէս նաեւ իրենց օրինաւոր շահերը։

« Ահակ» իր գոհունակութիւնը կը յայտնէ նաեւ ՄԱԿի գիրքէն եւ Մաղրէպեան համախոհութեան ամրապնդումէն։ Տրամադիր է բանակցելու խաղաղ լուծում մը գտնելու համար որ յանգի ինքնորոշման եւ անկախութեան հարկ եղած երաշխաւորութիւններով ալժերացի ժողովուրդին եւ Ֆրանսայի օրինաւոր շահերուն համար։

Այս զեկոյցին գլխաւոր նորութիւն այն է թէ «Ա.ՀԱԿ»ը կը յայտարարէ որ այլեւս «ներքին հարց» չի նկատեր Գաղտնի Բանակի կազմակերպութիւնը եւ պիտի բացէ ի բաց պայքարի անոր դէմ։ Այս կը նշանակէ ահաբեկչական արարքներու նոր արշաւանք մը իր բոլոր հետեւանքներով։ Բանակին պարտականութիւնն է, աւելի քան երբեք կը յիշեցնէ նախարար Մեսմէր, կարգը ապահովել։

Ցատկանշական է եւ քաղաքական նըկատել թէ «Ա.ՀԱԿ»ը երկու անգամ ակնարկութիւններ կ'ընէ Ֆրանսայի եւ Ալժերիոյ Եւրոպացիներուն «օրինաւոր շահերուն»։ Անկէ զատ զեկոյցը շատ բան չըսեր, աւելի «Նորմանտացիի պատասխանի մըն է» քան դրական առաջարկ մը։

Ալժերիոյ մէջ կացութիւնը բարելաւման ոչ մէկ նշան ցոյց կուտայ։ Եւրոպացի երեք ուսուցիչներ սպաննուած են Ալժ· Ազատ· Ճակատի մարդոց կողմէ երբ դպրոցէն դուրս կ'ելլէին։ Օռանի մէջ Ապահովութեան Ուժերը Եւրոպացի մը սպաննած են ցոյցի մը ընթացքին։

Մայր Երկրի մէջ Գաղտնի Բանակի դէմ հակազդեցութիւնները եւ անշարժութեան դատապարտելու կառավարական միջոցները կը շարունակուին։

Պելժիայէն եկած լուրերը միշտ անորոշ են։ Ոչ մէկ հետք կայ Սալանի, բայց Պրիւքսէլի համամիտավար «կարմիր դրօշը» երկար տեղեկագիրներ կը հրատարակէ Գաղտնի Բանակի պելժիական գործունէութեան չուրջ։

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՓԱՓՈՒ մը որուն հարց տրուած է թէ ի՞նչ պիտի ընեն եթէ Ինտոնեզիացիներ իրենց վրայ յարձակին։ «Պիտի ուտենք» պատասխանած է։

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԳԵՐՄԱՆԻՈՑ Քուիթ պարբերաթերթը զրաւուեցաւ պինուորական զաղտնիքներ հրատարակած ըլլալուն համար։ Այդ տառիւ զրուած յօդուածը նկարներով զարդարուած էր եւ կը յայտնէր թէ ուր պիտի ապաստանի կառավարութիւնը պատերազմի պարագային։ Քառլսռուհըի դատական Ատեանը կը յայտնէ թէ չաբաթաթերթին պատասխանատուները պիտի հետապնդուին պետական զաղտնիքներ երեւան հանած ըլլալուն համար։

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ լրագրողներու խումբ մը Քուպա մեկնեցաւ ուր պիտի մասնակցի (Ցունուար 12ին) լրագրողներու Մի – ջազգային կազմակերպութեան ժողովին։ Պատուիրակութեան մաս կը կազմեն Իզվեստիայի խմբագրապետ եւ Խրուշչեւի փեսայ Ադժուպէյ, Փրաւտայի խմբագրապետը Սաֆիուքով եւ ուրիշներ։

ԱՐԱԲԱԿԱՆ Լիկան մինչեւ 3 ամիս 3 նոր դրասենեակներ պիտի բանայ Վանայ, Դանիա եւ Ճափոն։ Մինչեւ տարւոյն վերջ ուրիշ ութ դրասենեակներ մտադիր է բանալու.— Ինտոնեզիա, Նեփալ, Պիրմանիա, Սկյլան, Սպանիա, Ֆրանսա, Նիժերիա եւ Զանզիպար։ Ներկայիս ութ դրասենեակները ունի արտասահմանի մէջ։

ԻՆԷՕՆԻ յայտարարեց թէ կարելի չէ իսկ մտածել թէ Թուրքիա կրնայ հրաժարիլ Արեւմուտքի հետ իր կապերէն եւ մտնել խորհրդային զինակցութեան մը մէջ։ Թուրքիոյ վարչապետը չէչտեց Նաեւ « Թուրքիա կեդրոնական (նախկին պաղտատ) եւ Ատլանտեան Ուխտերու մաս կը կազմէ։ Մխա կողմէ խորապէս կապուած է Մ.Ա.Կի պաղտատեան։»

ԻՍՐԱՑԷԼԻ Արտաքին նախարարութեան մէկ բանբերը «յիմար եւ անհիմն» որակեց այն լուրերը ըստ որոնց Օռանի հըրեաները հանդանակութիւն կատարած են Գաղտնի Բանակի ի նպաստ։ Բանբերը չեչտեց թէ այս լուրերը կը ձգտին վնասելու Ֆրանքեւիսրայէլեան յարաբերութեանց։

ԻՏԱԼԻՈՑ վարչապետը Ամինթոռէ Ֆանֆանի եւ Արտաքին նախարարը՝ Անթոնիօ Սէնեի Լոնտոն պիտի երթան, պաշտօնական այցելութեան, Ցունուար 17ին։

ՍԷՆԻ նահանգին մէջ աֆթիվիսթներու ձերբակալութիւնները կը շարունակուին։ Նոր հետապնդում մը սկսած է պետական իշխանութեան դէմ դուի մը համար։ Ա –

Ս Ր Ը Ս Ր Թ Ե

ԿՈՏՈՇԻ ՄԱՍԻՆ

—o—

Հայ անհատին մեծագոյն արժանիքը, զոր կրնանք տաղանդ եւս կոչել, խմբագիրի ընդունակութիւնն է։

Հայը ի ծնէ խմբագիր է։

Ապացոյցը այն չէ թէ համեմատաբար աւելի մեծ թիւով օրաթերթ ունինք քան ուրիշ ժողովուրդներ, այլ այն որ ամէն Հայ պատրաստ է գործը ձգելու եւ խրատ տալու օրաթերթի մը տնօրէնին կամ խմբագրին։

Օրինակ, հայրենակից մը նամակով կը պահանջէ հրատարակել տեղեկատուութիւն մը իր բարեկամին կնոջ մասին, — դառնացած սիրտով կը պատմէ այդ կնոջ անհաւատարմութեան պարագաները, աւելցնելով որ *տէթէքթիֆի* մը յանձներ է անուրանալի փաստ մը ապահովելու պաշտօնը՝ անշուշտ վճարովի։ *Քոնթան* կը կատարուի այն ձեւով որ արդարութիւնը կը պահանջէ, խայտառակութեան ամէնէն պատկերազարդ ձեւովը, անշուշտ։ Այս մասին, ամուսինին բարեկամը, «թղթակցութիւն» մը ղրկած էր մեզի՝ հրատարակութեան խնդրանքով։ Չհրատարակուեցաւ՝ ոչ թէ ռոմանթիզմի հետեւ ինչ գտանք ամուսնոյն կոտոշներուն թիւը եւ կնոջ մտերմութիւնը կուպիդոնի հետ, այլ անոր համար որ այս երկրին մէջ չես կրնար «գող» կոչել գողը, մատնանշելով անունով եւ մականունով։ Ըսելու եւ մատնանշելու այլ ձեւեր կան։ Բայց մեր թղթակիցը այնքան կատղած էր, որ եթէ հնար ըլլար՝ պատկերն ալ պիտի տպէր։ Մերժեցինք։

Դժգոհ մնաց մեր *քոռնարին* բարեկամը նոր նամակով մը բացատրելէ ետք թէ ի՛նչպէս պէտք է խմբագրել թերթը, բարոյական ի՛նչ դասեր պէտք է տալ ընթերցող հասարակութեան, վերջապէս ի՛նչ պէտք է ընել՝ չհաջաերելու համար *թաւիւնէօզ*ները (մենք *առկօ* դրինք իր գործածած բառին փոխարէն), կը մեղադրէ որ ոչ միայն ծանօթ չենք հրապարակագրութեան պարտականութիւններուն, այլ եւ կողմնակցութիւն կ'ընենք՝ հրատարակելով միայն մեր ··· ընկերներուն գրութիւնները։ Կերած ապուրը։ Ի՞նչ, մխիթարելու համար ինքզինք՝ բախտակից՞ց կը փնտռէ մեր ընկերներուն մէջ։ Այս պատմութեան վերջաբանն այն է թէ մեր դժբախտ բաժանորդը կը ջնջէ իր բաժանորդագրութիւնը՝ չուզելով հաջալերել թերթ մը, որու խմբագիրները չեն գիտեր թերթ խմբագրել, որովհետեւ չեն հրատարակած ··· կոտոշներուն իր պատմութիւնը։

Ունինք դեռ ուրիշ նամակագիրներ ալ, որոնք խմբագրութիւն կը սորվեցնեն մեզի, այլազան ձեւերով։

Շարն ընդհատ։

ԱՐԱՋ

Հաբեկչական արարքները նոյնքան սաստիկ են։ Առջի օր Ալժ· Ազատ· Ճակատը մահմետական մը, կինը եւ երկու աղջիկները սպաննեց։ Գաղտնի Բանակն ալ երկու Եւրոպացի սպաննեց «դաւաճանութեան» համար։ Կը թուի թէ տարակարծութիւններ ալ կան Գաղտնի Բանակի շարքերէն ներս։ «Սալանի խմբակ» մը կայ բայց նաեւ «Սիւզինի խմբակ մը»։

ՏՐ ԿՈՒ նոր շրջապատյաններ պիտի կատարէ պարնան։ Պիտի այցելէ Սէն է Ուազի, Սէն է Մառնի, Ուազի եւ Էնի նահանգները։

ՓԱՐԻԶի մէջ, երկուշաբթի օր ֆրանքեւթունուզեան բանակցութիւններ պիտի սկսին։

ՀԱՅԱՍՏԱՆԻ 1962Ի ՊԵՏԱԿԱՆ ՊԻՒՏՃԷՆ

—o—

Դեկտեմբեր 20 – 21ին Երեւանի մէջ դումարուեցան Հայաստանի Գերագոյն Խորհուրդի վեցերորդ նստաշրջանի նիստերը, նախագահութեամբ Հայաստանի Գրոշներու վարչութեան ընդհանուր քարտուղար՝ Էդուարդ Թոփչեանի :

Օրակարգը բաղկացած էր երեք հարցէ– րէ·

1) Հայաստանի ժողովրդական տնտե – սութեան զարգացման 1962ի պետական ծրագիրը :

2) Հայաստանի 1962ի պետական պիւտ– ճէն եւ 1960/61ի պետական պիւտճէին գործադրութեան հաշուետուութիւնը եւ

3) Հայաստանի Գերագոյն Խորհուրդի Նախագահութեան հրամանագիրներուն հաստատումը :

Օրակարգի առաջին հարցին շուրջ զե – կուցում մը տուաւ Հայաստանի Նախա – րարներու Խորհուրդին Պետպլանի (Պե – տական Ծրագիրը) նախագահը՝ Լ. Խաչ– տրեան, իսկ երկրորդ հարցին շուրջ՝ Հայաստանի ելմտական նախարարը՝ Ա. Շեկոյեան : Այս երկու հարցերուն մասին յարակից զեկուցում մը ըրաւ Հայաստա– նի Գերագոյն Խորհուրդի պիւտճէի յանձ– նախումբին անդամներէն մէկը՝ Մ. Գէ – ոզեան :

Ելմտական նախարար Ա. Շեկոյեանի զեկուցումէն կ ըսզատուի, որ 1962ի պե– տական պիւտճէին եկամուտները պիտի ըլլան 413·767·000 ռուբլի, իսկ ծախքե – րը՝ 410·784·000 ռուբլի՝ այլ խօսքով, ծախքերուն նկատմամբ՝ եկամուտներուն 2·983·000 ռուբլիի դերազանցումով : Անցեալ տարուան, այսինքն 1961ի պետա– կան պիւտճէին համեմատութեամբ՝ այս տարուան (1962) պիւտճէն կը նախատեսէ 12·3 տոկոս եկամուտնե – րու, իսկ 11·7 տոկոս ծախքերու յաւե – լում մը :

Անցեալ տարուան (1961) պետական պիւտճէին հաստատուած եկամուտները եղած են 368·524·000 ռուբլի, իսկ ծախ – քերը՝ 367·744·000 ռուբլի : Տարուան ըն– թացքին, սակայն, հարկ տեսնուած է ո– րոշ փոփոխութիւններ կատարել, որոնց պատճառաւ եկամուտները բարձրացած են 382·555·000 ռուբլիի, իսկ ծախքերը՝ 381·519·000ի :

Այսուհանդերձ, ակնկալուած որոշ ե – կամուտներ չեն դանձուած : Այսպէս, չա– հերէն մէկ կողմ ղրուածներէն՝ 5·400·– 000 ռուբլի, կոլտնտեսութիւններէն դան– ձուող եկամուտի հարկերէն՝ 2·300·000 ռուբլի եւայլն : Այս մուտքերուն պակասը լրացուցած են պիւտճէին միւս աղբիւր – ներէն եւ յատկապէս շէնքանտութեան հարկէն գոյացած լրացուցիչ եկամուտ – ներէն :

Այս տարուան (1962) պետական պիւտ– ճէի եկամուտներուն եւ ծախքերուն համար յատկացումները պիտի ըլլան 40·200·000 ռուբլի :

Ընկերային ապահովութեան համար ե– ղած յատկացումներուն ընդհանուր գու– մարը պիտի կազմէ 48 միլիոն ռուբլի, որ անցեալ տարուան համեմատութեամբ 3·400·000 ռուբլի աւելի է : «Այդ գումա– րով լրիւ կ'ապահովուի կենսաթոշակնե – րուն վճարումը, բազմազաւակ մայրե – րուն նպաստները եւ ընկերային ապահո– վութեան դիծով իրականացուղ միւս միջոցառումները» վստահացուցած է ել– մտական նախարարը՝ Ա. Շեկոյեան :

Գալով բնակարաններու շինարարու – թեան, նոր պիւտճէն կը նախատեսէ 45·– 300·000 ռուբլի յատկացում մը, ինչպէս նաեւ յաւելեալ վարկեր :

Վերջապէս, իբրեւ չրջաններու պիւտ – ճէներու եկամուտներուն եւ ծախքերուն ընդհանուր գումար նախատեսուած է 158·880·000 ռուբլի :

Հայաստանի Գերագոյն Խորհուրդի վե– ցերորդ նստաշրջանին մասնակցող երես– փոխաններէն շատերը պնդացան առար – կութիւններ ըրած են նոր պիւտճէին ա – ռընչութեամբ, յատկապէս քէչ պատ են իրենց չրջաններուն կամ այս ու այն նը– պատակներուն եղած կարգ մը յատկա – գումները : Օրինակ, Երեւանի Ֆռունզէ չրջանի պատգամաւորը՝ Մ. Գրիգորեան դժգոհութիւն յայտնած է բարեկարգու – թեան համար նախատեսուած պիւտճէին. « Հայաստանի պայմաններուն մէջ, որուն բնակչութիւնը 1920էն ի վեր աւելցած է գրեթէ երեք անգամ, իսկ անոր մայրա – քաղաքին Երեւանի բնակչութիւնը չատ – ցած է 25 անգամ եւ կը շարունակէ չատնալ մեծ թափով, ապա բարեկարգ – ման ծախքերուն իջեցումը կը թուի ան – բնական եւ նոյնիսկ անհասկնալի» : Ապա– րանի պատգամաւորը Հ. Տոնոյեան դան– դատած է, որ իր «չրջանի բարեկարգու– թեան համար նախատեսուած գումարնե– րը, 1961ի համեմատութեամբ, 10·000 ռուբլիով պակաս են» : Խնդրած է 15·000 ռուբլիի յաւելեալ յատկացում մը : Եւ այսպէս ուրիշներ :

Պատասխանելով եղած առարկութիւն – ներուն, Պետպլանի նախագահը՝ Լ. Խա – չատրեան դիտել տուած է, թէ մինչ «Խորհրդային Միութեան ժողովրդական տնտեսութեան զարգացման 1962ի ծրա – գրին մէջ կապիտալ ներդրումներու ամբ նախորդ տարուան համեմատութեամբ կը կազմէ ընդամէնը 6–7 տոկոս, անդին, մեր հանրապետութեան ծրագրին մէջ այդ ամբ կը կազմէ 24 տոկոս» : Ասոր վրայ պէտք է աւելցնել նաեւ ուրիչ պա – րագայ մը, այն, որ «1961ին յատկաց – ուած դումարները օգտագործուած են խիստ անբաւարար» :

Արդարեւ, Լ. Խաչատրեանի խոստով– նութեամբ, անցեալ տարուան ծրագրով յատկացուած 202 միլիոն ռուբլիին դի – մաց փաստօրէն գործածուած է մօտ 184 միլիոն ռուբլին միայն, այլ խօսքով չէ հետեւեալ պատկերը :

Պիւտճէին ծախքերուն ընդհանուր գու– մարն է, կլոր հաշուով՝ 410·800·000, որ– մէ ժողովրդական տնտեսութեան պիտի յատկացուի՝ 179·100·000, Մշակութա – յին եւ հանրային գործերու՝ 207·800·000, պետական – կառավարական ծախքերու՝ 9·100·000, զանազան ծախքերու՝ 14·800– 000 ռուբլի :

« Այս տուեալներէն կը պարզուի, յա– տարած է նախարարը, որ նախ՝ անց – եալ տարուան պիւտճէին համեմատու – թեամբ այս տարուան ծախքերը աւելցած են 43 մլ· ռուբլիով կամ 11·7տոկոսով, և երկրորդ՝ այս տարուան պիւտճէին բոլոր ծախքերուն 94·2 տոկոսը կամ 386·900·– 000 ռուբլիի գումար մը նախատեսուած է յատկացնել ժողովրդական տնտեսութեան եւ ընկերային – մշակութային նպատակ – ներու համար» :

Մեկայ ժողովրդական տնտեսութեան համար յատկացուելիք ծախքերը այս տարուան ընթացքին պիտի կազմեն 360 միլիոն ռուբլի, որուն 179·100·000ը պե– տի դայ պիւտճէի միջոցներէն, իսկ 180·– 900·000ը՝ տնտեսութեան սեփական մի – ջոցներէն :

Ժողովրդական տնտեսութեան, այսին– քըն թեթեւ արդիւնաբերութեան, պիւղա– տնտեսութեան, ճամբաներու շինութեան եւայլն յատկացուելիք 360 միլիոն ռուբ – լիի ընդհանուր գումարէն 160 միլիոնը պիտի յատկացուի ծանր ճարտարարուես– տին, այլ խօսքով քիմիական, մեքենաշի– նութեան, շինանիւթերու արդիւնաբերու– թեան, էլեկտրակայաններու եւայլն :

12·300·000 ռուբլիի յատկացում մը սահմանուած է երկրաբանութեան եւ ըն– դերքի պահպանութեան վարչութեան, իսկ պիւղատնտեսութեան համար սահ – մանուած է՝ 54·600·000 :

Մշակութային եւ հասարակական օդ – տակարութիւն ունեցող ձեռնարկներուն համար 1962ի պետական պիւտճէն նա – խատեսած է 207·800·000 ռուբլիի յատ – կացում մը : Այդ գումարէն լուսաւորու– թեան ծախքերը պիտի կազմեն 119·700·– 000 ռուբլի, իսկ Հայաստանի մէջ գոյու– թիւն ունեցող 696 գրադարաններուն, 952 ակումբներուն, 12 պետական թատրոն – ներուն, համանուագախումբին ձայն – պատկերասփիւռին եւ այլ մշա – կութային ձեռնարկներուն համար 1962ի պիւտճէէն պիտի յատկացուի աւելի քան 7·800·000 ռուբլի : 23·400·000 ռուբլի նախատեսուած է 11 բարձրագոյն ու – սումնական հաստատութիւններուն, 40 թէֆիֆ եւ 31 փրոֆէսիոնել ուսումնա – րաններուն համար :

Գիտութեան բոլոր բնագաւառներուն մէջ տեսական հետազոտութիւններուն համար 1962ին պիտի յատկացուի 24·100– 000 ռուբլի, որուն 9·400·000ը՝ Հայաս – տանի Գիտութիւններու Ակադեմիայի հիմնարկութիւններուն պահպանութեան համար :

Առողջապահական եւ մարզական հիմ – նարկութիւններուն եւ ձեռնարկներուն համար յատկացումները պիտի ըլլան 40·– 200·000 ռուբլի :

Ընկերային ապահովութեան համար ե– ղած յատկացումներուն ընդհանուր գու– մարը պիտի կազմէ 48 միլիոն ռուբլի, որ անցեալ տարուան համեմատութեամբ 3·400·000 ռուբլի աւելի է : «Այդ գումա– րով լրիւ կ'ապահովուի կենսաթոշակնե – րուն վճարումը, բազմազաւակ մայրե – րուն նպաստները եւ ընկերային ապահո– վութեան դիծով իրականացուղ միւս միջոցառումները» վստահացուցած է ել– մտական նախարարը՝ Ա. Շեկոյեան :

Գալով բնակարաններու շինարարու – թեան, նոր պիւտճէն կը նախատեսէ 45·– 300·000 ռուբլի յատկացում մը, ինչպէս նաեւ յաւելեալ վարկեր :

Վերջապէս, իբրեւ չրջաններու պիւտ – ճէներու եկամուտներուն եւ ծախքերուն ընդհանուր գումար նախատեսուած է 158·880·000 ռուբլի :

Հայաստանի Գերագոյն Խորհուրդի վե– ցերորդ նստաշրջանին մասնակցող երես– փոխաններէն շատերը պնդացան առար – կութիւններ ըրած են նոր պիւտճէին ա – ռընչութեամբ, յատկապէս քէչ պատ են իրենց չրջաններուն կամ այս ու այն նը– պատակներուն եղած կարգ մը յատկա – գումները : Օրինակ, Երեւանի Ֆռունզէ չրջանի պատգամաւորը՝ Մ. Գրիգորեան դժգոհութիւն յայտնած է բարեկարգու – թեան համար նախատեսուած պիւտճէին. « Հայաստանի պայմաններուն մէջ, որուն բնակչութիւնը 1920էն ի վեր աւելցած է գրեթէ երեք անգամ, իսկ անոր մայրա – քաղաքին Երեւանի բնակչութիւնը չատ – ցած է 25 անգամ եւ կը շարունակէ չատնալ մեծ թափով, ապա բարեկարգ – ման ծախքերուն իջեցումը կը թուի ան – բնական եւ նոյնիսկ անհասկնալի» : Ապա– րանի պատգամաւորը Հ. Տոնոյեան դան– դատած է, որ իր «չրջանի բարեկարգու– թեան համար նախատեսուած գումարնե– րը, 1961ի համեմատութեամբ, 10·000 ռուբլիով պակաս են» : Խնդրած է 15·000 ռուբլիի յաւելեալ յատկացում մը : Եւ այսպէս ուրիշներ :

Պատասխանելով եղած առարկութիւն – ներուն, Պետպլանի նախագահը՝ Լ. Խա – չատրեան դիտել տուած է, թէ մինչ «Խորհրդային Միութեան ժողովրդական տնտեսութեան զարգացման 1962ի ծրա – գրին մէջ կապիտալ ներդրումներու ամբ նախորդ տարուան համեմատութեամբ կը կազմէ ընդամէնը 6–7 տոկոս, անդին, մեր հանրապետութեան ծրագրին մէջ այդ ամբ կը կազմէ 24 տոկոս» : Ասոր վրայ պէտք է աւելցնել նաեւ ուրիչ պա – րագայ մը, այն, որ «1961ին յատկաց – ուած դումարները օգտագործուած են խիստ անբաւարար» :

Արդարեւ, Լ. Խաչատրեանի խոստով– նութեամբ, անցեալ տարուան ծրագրով յատկացուած 202 միլիոն ռուբլիին դի – մաց փաստօրէն գործածուած է մօտ 184 միլիոն ռուբլին միայն, այլ խօսքով չէ

ԱՄԲԱՍՏԱՆԵԱԼ ՍԹԱԼԻՆ, ՈՏՔԻ՛

—o—

Երկրորդ աշխարհամարտէն ալ առաջ այնպէս կը թուէր թէ պլխաւոր պայքարը կը կայանար զրամատիրական աշխարհը Խ. Միութեան դէմ հանող հակառակու – թեան մէջ : Բայց եւ այնպէս՝ աշխարհա – մարտը ծայր տուաւ զրամատիրական եր– կիրներու մէջեւ սկսած պատերազմի մը պատճառով : Այո, զրամատիրական եր– կիրներու մէջեւ պատերազմը անխուսա – փելի է» :

Առանց բառերը ծամծմելու ըսել կ'ու – զէր, որ համայնավարները ամէն ճիդ պէտք է թափեն, որպէսզի զրամատիրա– կան երկիրները պատերազմին իյարու դէմ : Խ. Միութիւնը կռիւէն հեռու կը մնայ մինչեւ այն օր, երբ պատերազմող– ները բաւական տկարացած ըլլան՝ Խ. Մի– ութեան ձեռնարկներուն դէմ զնելու ուժ չունենալու չափ· այդ միջոցին, այս վերջինը կը միջամտէ՝ դուբսէն եւ ներ – սէն զրաւելու համար զրամատիրական երկիրները :

Այս պատճառով է, որ Սթալին 1939ին ատորագրեց ռուսեւզերման դաշինքը, որ աշխարհի պատմութեան ամէնէն արիւ – նալի պատերազմին պայթեւումն պատճառ դարձաւ :

Խասը բաւարար եղած չէր Պաթումի նախկին բանտարկեալին : Պատրաստ էր ամէն բան ծայրէն սկսելու : Մինչ մինեւ նոյն հիւանդապին համոյքը կը զգար երբ կը տեսնէր թէ մարդիկ, խումբեր եւ ժո– ղովուրդներ զիրար կը խողխողեն :

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՈՒՆԿՆԴՐՈՒԹԻՒՆ

1936 – 38ի մեծ մաբզագործումներուն արդիւնքը՝ 3 միլիոն հոգի մեռած, 9 միլիոն հոգի բանտարկուած

1934 Դեկտեմբեր մէկին Սէրգէյ Կիրով կը սպաննուէր Լենինկրատի Կուսակցու – թեան Տան՝ Սմոլնի Ինստիտուտի մէջ : Հին բոլշեւիկ էր, 1904էն ի վեր կուսակ– ցութեան անդամ, 1927էն ի վեր, Պոլիտ– բիւրոյի անդամ, Զինովիեւի եւ կուսակ– ցութեան «ձախ»թեւին դէմ մղուած պայ– քարին ընթացքին Սթալինի ամէնէն հա– ւատարիմ օժանդակներէն մին : « Ձախ » եւ «աջ» թեւերու ընդդիմադիրներու չէ – զոքացումէն ի վեր, զարձած էր Պոլիտ– բիւրոյի ամէնէն աչքառու դէմքը՝ Սթա – լինէն ետք :

Կիրովի սպանիչին անունն էր՝ Նիկոլա– յեւ, Կոմսոմոլի (Երիտասարդ կուսակ – ցականներու կազմակերպութիւն) ան – դամ : Ծոծրակին մէջ տեղաւորուած զն– դակով մը մեռցուցած էր Կիրովը : Սպան– նելու այս ձեւը ստորագրութեան համա – պատասխան էր· արդարեւ, այս կերպով է, որ խորհրդային ոստիկանութիւնը կը գործադրէ մահապատիժները :

Ինչո՞ւ այս ոճիրը : Եթէ երբեք Նիկո – լայեւ բացատրութիւններ տուաւ իր թէ– ական զռնփակ զաւակներուն ըն – թացքին, ոչ ոք ոչինչ դիտցաւ պնդը մը– ղոլ պատճառներուն չուրջ : 1935ին, լա– կոնական զեկոյց մը կը յայտարարէր՝ « Նիկոլայեւ ու իր մեղսակիցները գնդա– կահարման դատապարտուեցան : Վճիռը գործադրուեցաւ » :

Աւրտքին աշխարհը միայն այս դիտ – ցաւ Նիկոլայեւի զաւակներուն մա – սին :

Ատենին, զանազան մեկնաբանութիւն – ներ եղան այս դէպքին չուրջ· սիրայի՞ն ոճիր· քաղաքակա՞ն ոճիր :

Երբ Թրոցքի եւ Սուվարին ըսին, ա – ռանց իրարու հետ խորհրդակցած ըլլա – լու, թէ ոճիրը կազմակերպուած էր Լե – նինկրատի ոստիկանութեան մեղսակցու – թեամբ եւ անկասկած՝ Սթալինի հրա – հանգով, ամէն ոք գայթակղեցաւ : Արդ, Խրուշչեւ այս վերջին տեսակէտն է որ հաստատեց հռչակաւոր Համագումարին ընթացքին : Ահաւասիկ դէպքերը, որոնք յատկանշական են :

1) «Կիրովի սպանութենէն քանի մը չա– բաթ առաջ Նիկոլայեւ փորձած էր Սմոլ– նիի պալատը մուտք գործել· զինք խու – զարկած եւ պայուսակին մէջէն ատրճա – նակ մը գտած էին : Նիկոլայեւ ձերբա – կալուեցաւ : Բայց, կ'ըսէ Խրուշչեւ, վե– րէն եկած հրահանգի մը հիման վրայ Նի– կոլայեւ ազատ արձակուեցաւ եւ ատր – ճանակն ալ իրեն վերադարձուցին :

Ո՞վ տուած էր այս հրահանգը :

2) Կիրով կը մերժէր զաղանի ոստիկա– նութեան կողմէ իր տրամադրութեան տակ դրուած թիկնապահներ ունենալ· կը բաւականանար իրեն հաւատարիմ անձ – նական թիկնապահով, որ կը կոչուէր Բորիսով :

Սպանութեան յաջորդ օրը, Դեկտեմբեր երկուքին, Բորիսով, որպէս վկայ, հրա– ման ստացաւ էնքավէտէի կեդրոնատեղին ներկայանալ : Ոստիկանութիւնը փոխա – դրատար կառք մը ղրկեց Բորիսովը տա– նելու համար : Դժբախտաբար (?) փոխա– դրակառքը արկած ունեցաւ, որուն ըն – թացքին Բորիսով (եւ միայն Բորիսով) մեռաւ :

Նեղացուցիչ վկան մէկտեղէն վերցուած էր :

Արդ, կ'աւելցնէ Խրուշչեւ, այս արկա– ծը կեղծ արկած մըն էր : Շարժավարը, որ արկածէն անմիջապէս ետք կեդրոնաց– ման կայան մը ղրկուած էր, հրաչքով վերապրած է իր կրած տառապանքնե – րուն· եւ պատմած է ամէն բան :

(15 Շար·)

ՀԻՆԳՀԱՐԻՒՐԱՄԵԱԿ ՄԸ

ԻՇԽԱՆՆԵՐԸ

(Ե. եւ վերջին մաս)

Բալուէն կուղայ ալքատ ընտանիք մը քալելով։ 12 տարեկան Պօղոսի ուշիմու – թիւնը Գրիգոր Ամիրա Պալեանի ուշա – դրութիւնը կը գրաւէ, կը կարդացնէ, կը – բաւեներին մէջ դրացրութեան պաշտօն կուտայ։ Պօղոս Պետրոսեան արժանի կ'ըլլայ ամիրային հոգածութեան, ալ – պային չքնաղակի մէջ կը գրաւէ պատուա – բեր դիրք մը, զաւակները՝ Յակէկ, Գը – իգոր, Եւփիմէ, ալղայլին ղէմքեր կը դառնան՝ Օաեան մականունը կցելով ի – րենց անուններուն։

Տաեաննները 1845ին Արմաշի մէջ կը բանան դպրոց մը, 60 աշակերտներով։

Պետական պաշտօնեաները կը պատ – բաստուին հայ երիտասարդներէ եւ կը գրաւեն բացառիկ դիրքեր։ Հայ քարտու – ղարներ կան օսմանեան դեսպանատուն – րու մէջ, Շահումեան՝ Վիէննայի, Դա – ւթեան Լոնտոնի մէջ՝ 1845ին։

Պօղոսն զուրս ալ հայ առեւտրականը բերած է իր օժանդակութիւնը հայ մշա – կոյթին՝ տպարան հիմնելով, մեկենաս հանդիսանալով կարեւոր հրատարակու – թեանց։ Ամսթերտամի մէջ հաստատ – ուած առեւտրականներու մեկենասու – թեամբ Ոսկան վարդապետ հրատարակեց օգտագործուած 18 միլիոն ռուբլիի դու – մար մը։

« Առանձնապէս թերի են օգտագործ – ուած բնակարաններու չինարարու – թեան, զպրոցաշինութեան եւ դիւղատն – տեսութեան զարգացումին համար եղած յատկացումները։ Բնակարաններու չի – նարարութիւնը վատ է նոյնպէս տովխող – ներու մէջ։ Մօտաւորապէս մէկ հարիւր հազար ռուբլի օգտագործուած չէ հան – րային միջոցառումներու դիծով։ Լենի – նականի մէջ հանրային (կոմիտաթ) չի – նարարութեան դումարները օգտագոր – ծուած են միայն յիսուն տոկոսով, իսկ առողջապահութեան դիծով՝ վաթսուն տոկոսով» եւայլն։

Իվերջոյ, փոքր փոփոխութիւնով վա – ւերացուած է Հայաստանի 1962ի պիւտ – ճէն։ Եկամուտներու ընդհանուր դումար սահմանուած է 414·955·000 ռուբլի, փո – խանակ նախապէս ճշդուած 413·767·– 000ի։ Ծախքերու ընդհանուր դումար՝ 411·872·000 ռուբլի, փոխան՝ 410·784·– 000ի։

Ատուածաշունչը 1666ին։ Գաղութը ան – ճիտուեցաւ, եկեղեցին մնաց անտէր, տարիներ վերջ, 1874ին ռուս հիւպատո – սարանը Գէորգ Դ.ի հրահանգով ծախեց եկեղեցին 12·000 ֆիորինի, եւ պատրաստ 15·000 ֆիորին դումարին հետ էջմիածին

ՀԱՅԱՍՏԱՆ

ՎՐՋԻՆԸ ԿԸ ԽՕՍԻ ...

Հայաստանի Նկարիչներու Տան մէջ 45 արուեստագէտներ այս միջոցին ցուցա – դրութեան հանած են երեք հարիւր նկար – ները, բոլորն ալ արտասահմանեան եր – կիրներու տպաւորութիւններ եւ գծուած վերջին երեք տարիներու ընթացքին։ Ե – դիպտոսը իր աւագի տարածութեամբ, Ֆելլահով եւ բուրդերով ներկայացուած է Արմէն Զիլինգարեան։ Ուրիշ մը՝ Սար – դիս Արուտչեան կը ներկայացնէ իր տը – պաւորութիւնները Մ. Նահանգներէն « Ուոշինկթըն», «Նիւ Եորք», «Պոսթըն» եւայլն նկարներով։ Վերջապէս կան ի – տալական, պուլկարական, իրաքեան, հնդկական եւ պոլսական տպաւորութիւն – ներ, բոլորն ալ, դառնով Մ. Սարեանի տպաւորութիւններէն, ինքնատիպ եւ յա – ջող արուեստով ներկայացուած են։

ՋԵՐՆԻՇԵՒՍԿԻ ՀԱՅԵՐԷՆ ԳԻՏԷՐ

Իր կեանքին վերջին վեց տարիներուն, 1883 – 1889ին, ռուս ծանօթ յեղափոխա – կան – գաղափարախօս՝ Ն. Ջերնիշեւսկի չփում հաստատած էր Հայերու հետ եւ կ'ապրէր հայկական ընտանիքներու մօտ։

Մեղքնալով «Թիւ 5 գաղտնի յանցաւո – րին » վրայ, (այդ անունով էր որ փո – խադրեցին գինքը Սիպերիոյ իր աքսորա – վայրէն՝ Վիլիույսկիէն), Աստրախանի Հայերը, առանց վախնալու, ամէն օժան – դակութիւն ցոյց տուին աքսորեալին։ Այդ տարիներուն ռուս յեղափոխականը հե – տաքրքրուեցաւ Հայութեան պատմու – թեամբ, մեր մշակոյթով, իսկ յետագա – յին սորվեցաւ հայերէն գրել կարդալ։ Այս փաստը կը հաստատէ Պ. Եուէթին յօդուածով մը, որ տպագրուած է «Իս – տորիչեսկի Վեստնիկ» թերթին 1906ի ա – ռաջին թիւին մէջ։

Ասկէ զատ, երեւան ելած է գիրք մը, որ նուիրուած է Աստրախանցի Աւետովին եւ որուն վրայ կայ Ջերնիշեւսկիի սեփա – կան ձեռքով հայերէն գրուած ինքնագի – րը։

Այս փաստը, կարդ մը այլ փաստերու կողքին յիշատակուած է Գուրգէն Յով – նաննեանի «ռուս–հայկական գրական կա – պերը (19 – 20րդ գարեր)» երկհատոր մենագրութեան մէջ, որ վերջերս լոյս տեսաւ Երեւանի մէջ։

Բերելով ռուս յեղափոխականին կեան – քին վերջին տարիներուն վերաբերեալ այս փաստերը, գիրքին հեղինակը կը խօսի նաեւ իր հետազօտութիւններուն մասին՝ կատարուած Սարատովի, Աս – տրախանի, Վոլգոգրատի, Թիֆլիզի եւ այլ քաղաքներու պետական դիւանատուն – ներուն մէջ։ Բազմաթիւ հետաքրքրական փաստաթուղթեր յայտնաբերած է։

4000 ՀԵԿՏԱՐ ՆՈՐ ԱՅԳԻ

Տարուէ տարի կ'ընդարձակուին խաղո – ղի եւ պտուղներու այգիները։ Այս տար – ուան ընթացքին մշակուած են 4000 հեկ – տար տարածութեամբ նոր հողեր, յատ – կապէս խաղողի եւ պտուղներու համար։

ՍՏԱՅԱՆՔ

ԲԱՂԷՇԻ ՆԱՀԱՆԳԻ ԽՈՒԼՔԻՒ ԳԻՒՂԻ ԲԱՐԲԱՌԸ, գրեց եղուարդ Տաբօնեան։ Տպարան Կաթողիկոսութեան Հայոց Մե – ծի Տան Կիլիկիոյ։ Անթիլիաս 1961։

ԲԱԳԻՆ, ամսագիր, գրականութեան եւ արուեստի։ Վարիչ խմբագիր Կ. Սասու – նի։ Խմբագիրներ՝ Եղ. Պօյաճեան, Պ. Անապեան, Խմբագրական անդամներ՝ Յ. Գեղարդ, Տ. Մակունի, Բ. Փափազեան, վ. Օշական։ Թիւ 1 Յունուար, 1962, Պէյրութ։ Հասցէ՝ Պուաթ Փոսթալ 587, Պէյրութ, Լիբանան։

ԻՄ ԱՇԽԱՐՀԻՆ, գրեց Շահանդուխտ, պատմուածքներ։ Պէյրութ 1961։ Հեղի – նակի հասցէ՝ Պուաթ Փոսթալ 2623 Պէյ – րութ, Լիբանան։

ՅԱԿՈԲ ՊԱՐՈՆԵԱՆ, Մեծապատիւ Մու – բայականները, քաղաքավարութեան վնաս – ները, Առանձին Տեսարաններ եւ Պաղատա – սար Աղբար։ Հրատարակութիւն Արամ – եան Սանուց Մխիթեան, Պոլիս 1961։

ԹԻԱՊԱՐՏԸ

(ՎԷՊ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿԵԱՆՔԷ)

ԳՐԵՑ

ԱՐՄԷՆ ՇԻՏԱՆԵԱՆ

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

— Ինչպէս չէ՛... բաւական է որ ապա – գայ չարիքին նշանակութիւնը հասկը – նայ։ Երբ ամբողջ ազգ մը զարհուրելի անդունդէ մը դէպի վար քշուի. երբ խա – բուսիկ երեւոյթներով աս յիմարական խելապատահներու ծառայող երիտա – սարդները մեր խեղճ ժողովուրդին ա – ռաջնորդ կ'ըլլան, ինչ միջոց չիկրնար ու – նենալ, հոգեւոր իշխանութիւնը ...։

— Ի՞նչ միջոց կրնայ ունենալ, ընդհա – տակ վարդապետը չհասկնալու զարնելով։

— կամք ունենալ կը հասկնամ, Տէր եղբայր, բայց ազդեցութիւն ի՞նչպէս ձեռք բերելու է. քանի որ ազգային հո – գեւոր իշխանութիւնը չունի քաղաքական ուժ մը զանոնք պատժելու։

— Այո, հոգեւոր իշխանութիւնը քա – ղաքական ուժն գործադրելու իրաւունք մը չունի, բայց տիրող կառավարութեան ուժը կրնայ տրամադրելի ընել իրեն։

— Տիրող կառավարութեան ուժը տրա – մադրելի ընելու համար ի՞նչ պատճառ – ներ ցոյց տալու է ներկայ պարագաներու մէջ։ Զէ՞ որ կառավարութիւնը պատիժը սահմանած է միայն չարագործին հա – մար։ կրնա՞նք ըսել թէ առանք չարա – գործներ են, առանք ազգային չահը վը – տանգող խռովարարներ են... մէկ խօս – քով՝ առանք դատապարտուելու արժանի են։ Ի հարկէ ոչ, որովհետեւ երկրին օ – րէնքը վերապահութեամբ դատելու եւ պատժելու պայման մը չունի, ան առեն ... ի՞նչ ըրած պիտի ըլլայ հոգեւոր իշ – խանութիւնը։ Ճշմարտութիւնը յայտնե – լո՞ւ է, թէ ոչ ...։

Տէր Կոմիտաս վարդապետին երեսը նայեցաւ, անոր սեւ վեղարի մը տակ կի – սուվին ծածկուած դէմքը խորին ուշա – դրութեամբ մը դիտեց ու ըսաւ.

— Ինչո՞ւ պիտի չյայտնուի ճշմարտու – թիւնն, երբ ազգային չահն այդ կը պա – հանջէ ներկայ պարագաներուն մէջ։

— Ազգային չահը կը պահանջէ՞ կառա – վարութեան յանձնել մեր եղբայրները, Թոթովից վարդապետը սարսռալով։

— Երկու չարեաց փոքրագոյնը... կրկ – նեց Տէր Կոմիտաս՝ չեչտելով իր խօսքը։

Վարդապետը բոլոր մարմնով դողդողաց ... Տէր Կոմիտասի այդ վերջին պարբե – րութիւնն իր հոգւոյն վրայ ծանր երկա – թի մը պէս ճնշեց։ Պահ մը առաջ ունե – ցած զգափարը մթնցաւ իր մէջ, եւ դէ – մը գտնուող այդ Աստուծոյ տաճարին նուիրուած պաշտօնեան կերպարանափոխ վիճակի մը մէջ երեւցաւ իրեն... ։ Օհ, կարծեց թէ քահանային տեղը՝ հրէշ մը նստած էր. կարծեց թէ մարդու մը տեղը նենգութեան մարմնացումը կը պատկե – րանար իր աչքին։

— կը հաւատաք որ հոգեւոր իշխանու – թիւնը՝ չարիքին առաջքն առնելու հա – մար, այդ աստիճան ստորին պատասխա – նատուութիւն մը յանձն պիտի առնէ։

— Պատասխանատուութիւն կա՞յ անոր մէջ, վրայ բերաւ Տէր Կոմիտաս, մթիէ մէկը ամէնուն համար չի գտնո՞ւ ը... մթիէ մարմնոյ մը մէկ անդամը չկրնար – ուի՞ը, երբ անդարմանելի վէրք մը ու – նենայ։

Ըստ իս, ապագայ չարիքը բառնալու համար, ասկից պատ ուրիշ միջոց չկայ։ Եթէ ոչ, պէտք է որ ձեռքերը ծալենք ու սպանդանոց քաշուած ոչխարի մը պէս. անոնց հետեւինք ամէնայն համակերպու – թեամբ։ Եթէ ոչ, պէտք է աչքերնիս դոցենք ու կուրօրէն քաշկռտուինք դէ – րեզմանի մը մէջ. չեմ գիտեր, հայր սուրբ իմացա՞ծ էք թէ այս մէկ տարուան մէջ քանի քանի զոհեր տուինք։ Մէկը կ'սպաննուի՝ մատնիչ անուան տակ, մի – սը կը սպաննուի դրամը մերժելուն հա – մար... վերջապէս, ամէն օր զոհ մը կը պահենք մեր ցանկերուն տակ ... ։ Ի՞նչ ունէր սա խեղճ Առաքել էֆէնտին, զոր տունին մէջ սպաննելէն եառքը չթողուցին որ եկեղեցական կարգ ու կանոնին հա – մաձայն թաղուի՝ անձնասպան է ըսելով։

— Անձնասպան չէ՞ր այդ մարդը՝ ընդ – հատեց վարդապետը խղդուելու մօտ չեչ – տուլ մը։

— Ամենեւին... ի՞նչ ունէր անձնաս – պան ըլլալու։

—Մխա՛ս լաւ, ինչո՞ւ կը սպաննէին զին – քը։

— Ցիմար առարկութեամբ մը... ուրիշ ոչինչ։

— Ի՞նչ առարկութեամբ։

— Առաքել էֆէնտին պաշտօնեայ մըն է, կառավարութեան դուռը ... մանա – ւանդ Վալի փաշային ալ սիրելի եղած էր ... ահա բոլորը։

— Կառավարութեան դուռը չատ հայ պաշտօնեաներ կան, ինչո՞ւ համար չեն սպաններ զանոնք։

— Էհ, նախանձը չատ բաներ կ'ընէ, հայր սուրբ. Առաքել էֆէնտին իրենց կամաց համաձայն չէր ընթանար, այդ պատճառաւ «մատնիչ է, ազգադաւ է, կառավարութեան լրտեան է ...» ըսելով, խեղճ միամիտ ժողովուրդին միտքը պըղ – տորեցին ու ամէնէն եառքը սպաննեցին զինքը։

(Շար.)

ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ ԱՌԹԻՒ « ՅԱՌԱՋ » ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

Տիկին Պէզճեան մէկ տարեկան Յառաջ կը նուիրէ Պ. Ոսկերիչեանի :

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Կապոյտ Ֆաչի Վալանսի մասնաճիւղը, չնորհակալութեամբ ստացած է Տէր եւ Տիկին Ղազարոսեանէ քսան Ն. Ֆ. իրենց զաւկին Արմէնի վինոտրութիւնէն ան-վտանգ տուն վերադարձին առթիւ : 10 Ն. Ֆ. Պ. Ազատ Պալեանէ, իր հօրեղբօր Սեդրակ Պալեանի եւ զարմիկին Յա-կոբ Հէլվաճեանի մահուան առթիւ :

×

Ալֆորվիլի Ս. Պ. Պ. եկեղեցւոյ հոգա-բարձութիւնը չնորհակալութիւն կը յայտնէ Պ. Յովհաննէս Տէր Յովհաննէս-եանի (Իթալիէն) որ նուիրած է զորգ մը եւ հարիւր Ն. Ֆ. իր մօրը յիշատակին :

ՊԱՏԱՐԱԳ ՓԱՐԻԶԻ ՄԷՋ

Փարիզի Ս. Յովհ. Մկրտիչ եկեղեցւոյն մէջ, այս Շաբաթ, Աւետանակոչութեան տօնին առթիւ պիտի մատուցուի Ս. պա-տարագ , ժամը 10ին :

Յաւարտ պատարագի Դպրաց Դասը եւ քահանայ հայրերը մասնաւոր թափօրով պիտի առաջնորդուին եկեղեցւոյ խորհր-դարանը եւ պիտի կատարուի Տնօրհնէքի արարողութիւնը , նախագահութեամբ Հայրապետական պատուիրակ Գերաչնորհ Տէր ՍԵՐՈՎԲԷ ԵՊԻՍԿ. ՄԱՆՈՒԿԵԱՆի :

ԿԻՐԱԿԻ քառաճայն Ս. պատարագ ժա-մը 10ին : Հայ հասարակութիւնը կը հը-րաւիրուի ներկայ գտնուիլ :

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ Ս. ԽԱԶ ԵԿԵՂԵՑԻ

10 bis, Rue Thouin, PARIS

Այս Կիրակի, Հայրապետական ճայնա-ւոր պատարագ պիտի ըլլայ Շաւիլի Նո-թըր-Տամ Մայր եկեղեցիին մէջ, 155 Ա-վընիւ Ռոժէ – Սալանկրօ , երեկոյեան ժամը վեցին :

Պիտի պատարագէ եւ քարոզէ՝

ԳԵՐ. ԿԱՐԱՊԵՏ ԵՊԻՍԿ. ԱՄԱՏՈՒՆԻ

Փոն տը Սէվրէն թիւ 171 օթօպիւս , իջնել Փուի Սան Վէն :

Կ'ՈՒԶՈՒԻ ՍՏԻՊՈՂԱԲԱՐ

Հանդերձապահուհի մը Ս. Մուրատեան վարժարանին համար : Դիմել տեղւոյն վրայ :

26, Rue Troyon, SEVRES (S. et O.)
Métro : Pont de Sèvres
Tél. : OBS. 18-28

Imprimerie Spéciale du journal « Haratch »
32, Rue de Trévise, PARIS (9e)

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Այրի Տիկին Բ. Փափազեան, զաւակ-ները եւ թոռները կը ծանուցանեն թէ հո-գեհանգստեան պաշտօն պիտի կատարուի այս Կիրակի առաւօտ, Ալֆորվիլի Ս. Պօղոս – Պետրոս եկեղեցիին մէջ, իրենց ամուսնոյն, հօր եւ մեծ հօր՝

ԲԱՐԹՈՂ ՓԱՓԱԶԵԱՆԻ

մահուան քառասունքին առթիւ :

Կը հրաւիրուին յիշատակը յարգող-ները :

×

Պ. Պ. Թէրզեան եղբարք եւ ընտանիք-ները կը յայտարարեն թէ՝ այս Կիրակի Լիոնի Հայոց եկեղեցին (Րիւ տիւ Փան-սիօնա), իրենց մօր հանգուցեալ

ԹԱՄԱՄ ԹԷՐԶԵԱՆԻ

(ծնեալ Ադամեան) մահուան քառասուն-քին առթիւ հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի :

Հանգուցեալին յիշատակը յարգողներէ կը խնդրուի ներկայ ըլլալ :

×

Օր. Արշալոյս Կէմալմազեան, Տէր եւ Տիկին Արտաւազդ Յակոբեան, Տէր եւ Տիկին Հմայեակ Զայըրեան եւ ընտանե-կան պարագաները կը ծանուցանեն թէ հոգեհանգստեան պաշտօն պիտի կատար-ուի ողբացեալ

ԱՅՐԻ ՏԻԿԻՆ ՀԵՂԻՆԷ ԿԷՄԱԼՄԱԶԵԱՆԻ

մահուան քառասունքին առթիւ , այս Կիրակի առաւօտ Փրատոյի Մայր Եկեղե-ցին :

Կը հրաւիրուին իր յիշատակը յարգող-ները :

Ֆ. Կ. ԽԱԶԻ ԱՆԻԷՌ – ՊՈՒԼՈՒԱԻՈՒՄՊԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԻ ՏԱՐԵԿԱՆ ԹԷՅԱՍԵՂԱՆԸ

Ազիէռի Թաղապետարանի սրահին մէջ Սաթրդ Ատմինիսթրաթիփ է Սոսիալ :

Այս Կիրակի, ժամը 15էն 20 :

Կը հրաւիրուին Փարիզի եւ չրջաններու ընկերուհիներն ու համակիրները :

Գեղարուեստական ճոխ բաժին եւ անա-կընկալներ :

Մուտքը ազատ է :

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ

Ծննդեան 1600ամեակը համազգային շուրով կը տօնուի Մարսէյլի մէջ :

Փետրուար 18ին, Կիրակի կէսօրէ ետք, Քազա տ'Իթալիայի չքեղ թատրոնին մէջ :

Կ'ՈՒԶՈՒԻ

Հայ երիտասարդ մը, որ վաճառքէր արտածումի եւ ներածումի կարեւոր դոր-ծի մը մէջ ապագայ ունենալ :

Ներկայանալ ամէն օր՝

Յ. ՓԱՓԱԶԵԱՆ հաստատութիւն,
3a, Rue Lafayette, MARSEILLE

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՕՐԸ

Ֆ. Կ. Խաչի Կրընոպլի մասնաճիւղը կը տօնէ, Մանուկներու Օրը, Կիրակի, 14 Յունուար, կէսօրէ վերջ ժամը 3ին, Սալ Սէն Լուի (Րիւ Ժէ) :

Մրցերգ, տրամախօսութիւն, մենախօ-սութիւն, արտասանութիւն եւ մանկա-կան անակնկալներ :

Ըստ աւանդութեան՝ ԿԱՂԱՆԴ ՊԱՊԱՆ պիտի բաժնէ մրգեղէնները, առանց բա-ցառութեան բոլոր սրահի ներկայ տղա-յոց :

Կը խնդրուի Կրընոպլի, Լանսէի, Ռէ-նաժի եւ Ֆիլգօռի բոլոր հայրենակիցնե-րէն իրենց ներկայութեամբ քաջալերել զպրոցին մանուկները :

×

ՊՕՄՈՆԻ ՄԷՋ

Կապոյտ Ֆաչի մասնաճիւղը Մանուկնե-րու Օրը կը տօնէ այս Շաբաթ, կէս օրէ վերջ, Սահակ – Մեսրոպ սրահին մէջ, զպրոցի երեկոեա աշակերտութեան կող-մէ պատրաստուած գեղարուեստական բաժինով մը :

×

ՎԻԷՆԻ ՄԷՋ

Կապոյտ Ֆաչի մասնաճիւղը Մանուկ-ներու Օրը կը տօնէ այս Կիրակի կէսօրէ վերջ ժամը երեքին, Սէրքըլը Կաթոլիկի սրահին մէջ :

Գեղարուեստական բաժին զպրոցի ա-շակերտ – աշակերտուհիներու կողմէ : Երգ, արտասանութիւն եւ պարեր :

Աւանդական կաղանդ Պապան իրեն նը-ւէրներով պիտի ուրախացնէ մանուկնե-րը :

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Հ. Յ. Դ. Նոր Սերունդի Իսիի Ֆանա-սոր խումբի գեղարուեստական եւ պա-րանոցիկ երեկոյթը Իսիի մէջ, Փետր. 10ին :

ԼՈՑՍ ՏԵՍԱԻ

ՅԱԿՈԲ ՏԷՐ-ՅԱԿՈԲԵԱՆ

ՊԱՐՏԻԶԱԿԸ ԻՍԱՈՒՏԻԿ

Յաւելուածաբար՝ ՄԱՆՈՒՇԱԿ ԵՒ ԻՐ ՀԷՔԵԱԹՆԵՐԸ :

500 էջ
13 Hors-Texte

Հասոյթը Փարիզի եկեղեցւոյ կըր-թական մարմնին :

Գին 12 Ն. Ֆ.

Թղթատարի ծախքով 13·40 Ն. Ֆ.

Արտասահման 4 տոլար :

Դիմել՝

Յառաջին
Հայ գրավաճառներուն
Փարիզի եկեղեցին կամ Տպարան
ՏԷՐ – ՅԱԿՈԲԵԱՆ

Հ. Յ. Դ.

ՓԱՐԻԶ.— Հ. Յ. Դ. Շրջ. կոմիտէն ներկայացուցչական ժողովի կը հրաւիրէ Փարիզի եւ չրջանի մարմիններու ներկա-յացուցիչները այս Շաբաթ երեկոյ ժամը 8·30ին, Մշակոյթի Տան սրահին մէջ : կարեւոր օրակարգ : Շրջ. ժողովի օրա-կարգի քննութիւն :

ԱԼՖՈՐՎԻԼ.— Հ. Յ. Դ. Ս. Մինաս-եան ենթակոմիտէն ընդհ. ժողովի կը հը-րաւիրէ բոլոր ընկերները այս Ուրբաթ ժամը 21ին :

Ներկայ կ'ըլլան կեդր. եւ Շրջ. կոմի-տէներու ներկայացուցիչները :

Կը խնդրուի ճշդապահ ըլլալ :

ՓԱՐԻԶ.— Հ. Յ. Դ. Ռոստոմ խումբի ժողովը այս Ուրբաթ, ժամը 21ին, ընկեր Մանուկի բնակարանը : կարեւոր օրա-կարգ :

ԼԻՈՆ.— Հ. Յ. Դ. Վարանդեան կոմի-տէն ժողովի կը հրաւիրէ բոլոր ընկերնե-րը այս Կիրակի, կէսօրէ վերջ ժամը 3ին, 101 Ավընիւ տը Սաֆսի սրճարանի ներք-նասրահը : կարեւոր օրակարգ :

ՎԱԼԱՆՍ.— Հ. Յ. Դ. Շրջ. կոմիտէի ընկերական ընդհ. ժողովը, այս Շաբաթ, ժամը 20·30ին, Ահարոնեան սրահը : Շատ կարեւոր օրակարգ : Բոլոր ընկեր-ներուն ներկայութիւնը պարտաւորիչ է :

ԺԱՄԱՆԱԿԱՅՈՑՑ

Հ. Յ. Դ. Մարսէյլի Շրջ. Կոմիտէի հը-րաւիրած ընկերական ժողովներու .—

Հ. Յ. Դ. Մարսէյլի Շրջ. Կոմիտէն՝ ստիպողաբար ընկերական ընդհ. ժողովի կը հրաւիրէ հետեւեալ ենթակոմիտէնե-րու եւ խումբերու անդամ ընկեր – ընկե-րուհիները :

ԱԿՆՈՒԻՆ ենթակոմիտէ 13 Յունուար, Շաբաթ երեկոյ ժամը 21ին :

ՎԱՐՈՒԺԱՆ խումբ՝ 14 Յունուար, կէ-րակի կէսօրէ ետք ժամը 15ին :

ՀԱՄԱԶԱՍՊ խումբ՝ 13 Յունուար, Շաբաթ երեկոյ, ժամը 21ին :

ԹԱԹՈՒԼ խումբ՝ 14 Յունուար, կէս-օրէ ետք ժամը 15ին :

ԸՆԿԵՐ ԿԱՐՕ խումբ՝ 14 Յունուար, կիրակի կէսօրէ ետք ժամը 15ին :

ՀԱՅԱՍՏԱՆ խումբ՝ 13 Յունուար, Շաբաթ, ժամը 21ին :

ՎԱՐԱՆԴԵԱՆ խումբ՝ 15 Յունուար, երկուշաբթի, ժամը 21ին :

ԳԷՈՐԳ ՋԱՎԱԻՇ խումբ՝ 20 Յունուար Շաբաթ , ժամը 21ին :

ՄՈՒՐԱՏ խումբ՝ 21 Յունուար, կիրա-կի կէսօրէ ետք, ժամը 15ին :

ՆԻԿՈԼ ԴՈՒՄԱՆ խումբ՝ 21 Յունուար, կիրակի կէսօրէ ետք , ժամը 15ին :

ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ խումբ՝ 20 Յուն-ուար, Շաբաթ, ժամը 21ին :

Սոյն ժողովները տեղի պիտի ունենան իրենց սովորական հաւաքատեղիները : Խիստ կարեւոր օրակարգ : Բոլոր ընկեր – ընկերուհիներու ներկայութիւնը պարտա-ւորիչ է : Վարչութիւնները նախապէս պէտք է բոլոր ընկերներուն տեղեկացնեն ժողովներու վայրի եւ թուականի մասին : Ներկայ պիտի ըլլան Շրջ. Կոմիտէի ներ-կայացուցիչները :

ՏՕՆԱԿԱՆ ՕՐԵՐՈՒ ԼԱՒԱԳՈՅՆ ՆՈՒԻՐԸ

ՍԻՓԱՆ – ԿՈՄԻՏԱՍԻ՝ Նոր սալը

"ՀԱՅ ԿՐՕՆԱԿԱՆ ԵՐԳԵՐ"

Chants Religieux Arméniens

Կը ղեկավարէ Կ. ԱՓՐԻԿԵԱՆ

Փնտռել՝ երգչախումբի վարչութեան անդամներուն, բարեկամներուն եւ հա-տուկ հասցէներուն մօտ :

Restaurant ARTHUR
5, Rue Augustin Thierry
Place des Fêtes. Paris 19e

Librairie H. SAMUEL,
51, Rue Monsieur-le-Prince, PARIS

ՍԱԿԱԳԻՆ ԸՆԹԱՑԻԿ ԱԶԴԵՐՈՒ

ՄԷԿ ԱՆԳԱՄՈՒԱՆ ՀԱՄԱՐ

ՄԱՀԱԶԴ	30 Ն. Ֆ.	մինչեւ 1/4 սիւնակ
ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ	15 Ն. Ֆ.	մինչեւ 1/8 սիւնակ
ՑԱԽԱԿՑՈՒԹԻՒՆ	10 Ն. Ֆ.	» » »
ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ	20 Ն. Ֆ.	» » »
ՀԱՐՍԱՆԻՔ, ՆՇԱՆՏՈՒՔ	20 Ն. Ֆ.	» » »
ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ	10 Ն. Ֆ.	» » »
«ՓՈԽԱՆ ԾԱՂԿԵՊՍԱԿԻ»	10 Ն. Ֆ.	» » »
«ԿԸ ՓՆՏՌՈՒԻ»	5 Ն. Ֆ.	» » »
ԾԱՆՕՒ Է	20 Ն. Ֆ.	» » »

Այս գիները մէկ անգամ հրատարակելի եւ նշանակուած ծաւալով ազ-դերու համար են, չորրորդ էջը :

Կանխիկ վճարումը պարտաւորիչ է :

Առեւտրական կամ այլ ազդերու մասնաւոր պայմաններուն համար դիմել վարչութեան :

ԼՈՑՍ ՏԵՍԱԻ

1962 ԳՈՑԱՄԱՐՏ ՕՐԱՑՈՅՑ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Հ. Յ. Դ. ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻ, ՄԱՐՍԷՅԼԻ ՇՐՋԱՆԻ :

Ճոխ բովանդակութեամբ եւ ընտիր նկարներով :

ՓԱՐԻԶԻ համար դիմել Նոր Սերունդի կեդր. վարչութեան, Հրանտ – Սա-մուէլ գրատունը , եւ «Յառաջ»ի խմբագրատունը :

ՄԱՐՍԷՅԼ

PHOTO - REX, 2 Rue Bernard du Bois

AU BEAU NOYER

A 50 mètres du Métro MARCEL SEMBAT
7 ETAGES D'EXPOSITION
D'AMEUBLEMENTS
CRÉDIT SANS FORMALITÉS
ՀԱՑԵՐԷՆ ԿԸ ԽՕՍԻՆՔ

185, BD. JEAN JAURÈS — 15, AV. ANDRÉ MORIZET - BOULOGNE — MOL. 06.03 et 60.38

ՀԱՅՐԱՆԻՔ

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

Le PREMIER QUOTIDIEN ARMENIEN en EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction et Administration : 32, Rue de Trévise - PARIS-9e

Fondé en 1925 — Téléph. : PRO. 86 - 60
R. C. Seine 57 A 2731 — C. C. P. Paris 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա՝ Տար. 50 Ն. Ֆ. — Վեցամսեայ՝ 27 Ն. Ֆ.
Արտասահման՝ Տար. 60 Ն. Ֆ. — Հատը՝ 0·25 Ն. Ֆ.

ՇԱԲԱԹ 13 ՅՈՒՆՈՒԱՐ
SAMEDI 13 JANVIER 1962

38ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 9303 — 38e ANNÉE — Fondateur : SCHAVARCH MISSAKIAN — ՆՈՐ ՇՐՋԱՆ, 18ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 5104

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

ԵՐԿԻՐ ՀԱՒԱՍԱՐԱԿՉՈՒԹԵԱՆ

—o—

Մերձաւոր Արեւելքի մէջ բացառիկ դերք մը կը ղրաւէ Լիբանան, որ ամէն բանէ առաջ հաւասարակշռութեան երկիրն է :

Գրեթէ կէս առ կէս քրիստոնեաներէ եւ իսլամներէ բաղկացած, իր բնակիչները հաչտուած են համակեցութեան գաղափարին հետ եւ ըստ այնմ ներդաշնակած իրենց կեանքը :

Եթէ զանց առնենք 1958 Մայիս – Հոկտեմբերի դէպքերը, զորս բացառութիւն մը պէտք է նկատել, իրերու հետեւանք հարեւան Սուրիոյ մէջ առաջ եկած յեղաշրջումին, քաղաքական ներդաշնակ եւ հաւասարակշիռ վիճակ մը տիրած է միշտ Լիբանանի մէջ, 1943ին անկախութեան տիրանալէն ի վեր :

Օսմանեան տիրապետութեան օրով, Տիւրզիները քանիցս ջարդած ըլլալով քրիստոնեայ դիւղերու բնակիչները, Նապոլէոն Գ.ի կառավարութեան միջոցաւ 1861ին ինքնավարութիւն էր տրուած լեռնային Լիբանանի, որուն առաջին եւ վերջնական կառավարիչները եղան Հայեր, — Տավուտ փաշա եւ Յովհ. փաշա Գուլումճեան :

1918ի Զինադադարէն վերջ Լիբանան Սուրիոյ հետ միասին մտաւ Ֆրանսայի հոգատարութեան տակ : 1920ին ճշդուեցան «Մեծ Լիբանան»ի սահմանները : 1926ին դարձաւ Հանրապետութիւն, ժողովրդավարական դրութեամբ :

Լռելեայն համաձայնութիւն գոյացած է քրիստոնեայ եւ իսլամ տարրերուն մի – ջեւ, հաւասարակշռութիւնը պահպանելու համար : Այսպէս, Հանրապետութեան նախագահը պէտք է ըլլայ քրիստոնեայ, վարչապետն ու երեսփ. ժողովի Նախագահը՝ իսլամ : Նախարարական խորհուրդի անդամները պէտք է ըլլան կէս առ կէս իսլամ եւ քրիստոնեայ : Նոյն համեմատութիւնը նաեւ — մօտաւորապէս — երեսփոխաններուն համար :

Շնորհիւ համակեցութեան եւ ներդաշնակութեան այս օրինակելի դրութեան է : որ ցարդ ո՛չ մէկ խոր ցնցում առաջ եւ կած է երկրին ու վարչաձեւին մէջ :

Այս տեսակէտէն մեծապէս կը տարբերի իր հարեւաններէն — Սուրիա, Եգիպտոս եւ Իրաք : Վերջին երկու երկիրներուն մէջ արքայական վարչաձեւերը փոխարինուեցան հանրապետական կարգերով, զեկավարութեամբ զինուորականներու :

Հանրապետութիւնը մայրիներու երկրին մէջ ղրուած է ամուր հիմերու վրայ : Նոյնիսկ 1958ի խռովայոյզ օրերուն ո՛չ մէկ լուրջ փորձ կատարուեցաւ «պետական հարուածով» մը կառավարութիւնը տապալելու եւ մենաիրեական վարչաձեւ մը հաստատելու :

Զօր. Ֆուատ Շէհապ, այժմու Հանրապետութեան նախագահը, որ այդ բախտորոշ օրերուն բանակի ընդհանուր հրամանատարն էր, հետեւեցաւ քաղաքականութեան մը, որուն նպատակն էր ամէն բանէ առաջ պահպանել ներդաշնակութիւնն ու հաւասարակշռութիւնը : Այդ պատճառով ալ չհետեցաւ կողմերու մխահամուռ վստահութիւնը եւ 1958 Հոկտեմբերէն ի վեր խմաստութեամբ կը զեկավարէ երկիրը :

Զարմանալի չէ, որ ձախողեցաւ Դեկտեմբեր 30–31ի դիչերուան փորձը, հակառակ զօրաւոր կուսակցութեան մը կողմէ կազմակերպուած ըլլալուն :

Լիբանան հարիւր տարի ինքնավարութեան բարիքները վայելած ըլլալով, մեծապէս կը գնահատէ անկախութիւնը, որուն կառչած է հոգիւին եւ որուն պահպանումը իր գերագոյն նպատակն է :

ՀՐԱՆՏ–ՍԱՄՈՒԷԼ

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

"ԱՀԱԿ"Ի ՋԵԿՈՅՑԷՆ ԵՏՔ

—o—

ԴԱՂՏՆԻ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿՐ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ

Ինչպէս գրած էինք երէկ, « ԱՀԱԿ »ի զեկոյցին կարեւոր մասը այն է որ կը վերաբերի Ֆրանսայի եւ Ալժերիոյ եւրոպացիներուն «օրինաւոր չահերուն» : Այս կէտն է նաեւ զոր կը մատնանչէ Ալժ. Ազատ. Ճակատի մամուլի գործակալութիւնը՝ Ալժերի Փրէս Սերվիս եւ որ «պատմական» կ'որակէ հրատարակուած զեկոյցը :

Այս բոլորին կողքին ընդհանուր կարծիքն այն է, հակառակ քանիցս կրկնուած յոռետես յայտարարութիւններու թէ Ֆրանքեւալժերիական բանակցութիւնները կը չարունակուին, նոյն գաղտնապահութեամբ եւ թէ, իրականին մէջ, կապը երբեք չէ խզուած : Թունուզի Ալ Ամալ թերթը կը գրէր այս առթիւ թէ, պէտք չէ զարմանալ «ԱՀԱԿ»ի լռութենէն կարգ մը կենսական հարցերու առընչութեամբ՝ դինուորական կայան, մանրամասնութիւններ երաչխաւորութեանց մասին եւն. եւ Նոր Տեսքուրի պաչտօնաթերթը կ'աւելցնէ թէ ատիկա անհրաժեչտ է քանի որ «բանակցութիւնը դաղտնի կը մնայ » :

Ալժերիոյ մէջ, մամուլը հարց կուտայ թէ արդեօք ի՞նչ ձեւով, Ալժ. Ազատ. Ճակատը կը մտածէ պայքարիլ Գաղտնի Բանակին դէմ : Թունեզ տ'Ալժէն կը գրէ թէ «ԱՀԱԿ»ի յայտարարութիւնը կը հաստատէ կարգ մը դէտերու տպաւորութիւնը ըստ որուն Գաղտնի Բանակը, վերջերս, մասնաւորաբար յարձակած էր Ալժ. Ազատ. Ճակատի Ֆատերուն վրայ : Այս ուղղութեամբ ուրիչ լուրեր ալ կան որ կը ձգտին հաստատելու թէ Գաղտնի Բանակը մեծ գործողութեան մը պիտի ձեռնարկէ Ֆելլականներու դէմ :

Մարոքի կառավարական շրջանակները լաւատես են սակայն եւ գոհունակութեամբ կը դիմաւորեն «ԱՀԱԿ»ի զեկոյցը : Բաներէ մը յայտարարեց այս առթիւ «Մարոք վստահ է թէ ալժերական ձգտումները անկախութեան, գերիչխանութեան եւ հողային ամբողջականութեան ձեռք պիտի ձգուին Մաղրեպի քոյր ժողովուրդներու աջակցութեամբ եւ համախոհութեամբ » :

× *Նիւ Եորֆ Թայմզ կը գրէ թէ ալժերական կուիւը կը հասնի ճակատագրական ժամերու, ուր վճռական ուժը կամ պար – զապէս ուժը պէտք է ըսէ «այլեւս այս պէս չի կրնար չարունակուիլ » : Ամերիկեան թերթին կարծիքով «ԱՀԱԿ»ի զեկոյցը այն տպաւորութիւնը կը թողու թէ Ալժ. Ազատ. Ճակատը կը մօտենայ տը կոլի առաջարկած ազնիւ պայմաններուն : Անկախութիւնը արդէն իսկ չնորհուած է սկզբունքով, տը Կոլ, իր կողմէ, երաչխաւորութիւններ կ'ուզէ Ալժերիոյ մէկ միլիոն 200 հազար Եւրոպացիներուն համար եւ արդար կարգադրութիւն մը Սահարայի եւ իր քարիւղի ճատարարութեան տին : Եղերական պարագայ մը կայ, սակայն, ամերիկեան թերթին համար, այն է որ բանակցութեամբ կամ պարտադրուած լուծումի մը պարագային, կարգ մը տարրեր դժուարութիւններ պիտի ըստեղծեն :*

× *Պէն Խեատա «ԱՀԱԿ»ի զեկավարը կ'երկարաձգէ իր այցելութիւնը Մարոքի մէջ : Կրկին պիտի տեսնուի Հասան Բ.ի հետ :*

× *Պապ ըլ Ուէտի շրջանը մահմետական հանները սկսած են չարժիլ : Ահաբեկումներ ծայր տուած են : Միւս կողմէ Օր – լէանվիլի բանտէն բազմաթիւ մահմետական հաններ կրցած են փախիլ :*

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԱՆԱՍՏԱՍ ՄԻԿՈՅԵԱՆ Աքքրա հասած է, ուր ընդունուած է Նիքրումահի կողմէ :

ՊԼՅՐՈՒԹԷՆ կը հաղորդեն թէ լիբանանեան բանակը մաքրադործումի աչխատանքները կը չարունակէ, գլխաւորաբար այն շրջանները ուր ըմբոստներ տակաւին դիմադրութեան շրջաններ կազմակերպած են : Զորեքչաբթի օր 115 հոգի ձերբակալուած է որոնց մէջ Սուրի փոխ–նահանգապետը՝ Հալիմ Փայատ եւ երկրագործական նախարարութեան երեսուն պաչտօնեաները : Առանց անդամ էին Սուրիական ժողովրդական կուսակցութեան զոր կառավարութիւնը լուծեց : Նահանգապետը խնդրոյ առարկայ դարձած է տնտեսութեան նախկին նախարար եւ Ազգային Ազատական Կուսակցութեան (Ք. Շամուն) փոխ նախագահ Քազըմ Էլ Խալիլի խոստովանութեանց իրերու հետեւանք :

ՓԱՐԻԶի լեհ թղթակիցի մը վիզան չերկարաձգուեցաւ Արտաքին նախարարութեան որոչումով : Ծանօթ է որ վարչապետի իչխանութիւնները չէին նորոգած Լը Մոնտի թղթակիցին Լեհաստան մնալու արտօնութիւնը :

ՊՈԼՍՈՑ մէջ քանի մը հազար ուսանողներ հանդիսաւոր ցոյց մը կատարած են արտայայտելու համար իրենց հաւատարմութիւնը Աթաթիւրքի բարենորոգութեանց եւ 1960 Մայիս 27ի յեղափոխութեան ոգիին : Ցուցատախտակներու վրայ գրած էին.— Թուրք երիտասարդութիւնը որ յեղափոխութեան պահակն է պիտի չներչ Աթաթիւրքի թշնամիներուն : Պիտի ճզմենք անկեալ վարչաձեւին կողմնակիցներուն գլուխը : Պիտի խեղդենք անիծեալ համայնավարութիւնը » :

ՔԵՆԸՏԻ ճառ մը խօսեցաւ եւ իր մէկ տարուան նախագահութեան հաչուեկչիռը ներկայացուց : Նախագահը անդամ մը եւս յայտնեց թէ վճռապէս որոշած է պաչտպանել Պերլինը : Քենըտի կ'ուզէ նաեւ որ Միացեալ Նահանգները «Հասարակաց Շուկայի» ժամուն վրայ լարեն իրենց ժամացոյցը :

ՓԵՐՈՒԻ մէջ ահաւոր աղէտ մը պատահած է որուն հետեւանքով հինգ հարիւր հոգի մեռած են : Ծայռեր եւ սառի կոյտեր ամբողջ գիւղեր թաղած են : Հիմա ալ ողղոյժի վախ կայ :

ԱՏԼԱՆԱՒԻՑ յայտարարեց թէ Դաչնակցային Հանրապետութիւնը հարիւրէն հարիւր Ատլանտեան Ուխտին հետ է :

ՅՈՒԿՈՍԼԱՒԻՈՑ մէջ երկրաչարժ պատահած է : Մէկ զոհ կայ : Վնասներն ալ չատ մեծ չեն :

ԻՍԼԱՄԱԿԱՆ համագումարը որ մահմետական 25 երկիրներու ներկայացուցիչներու ժողովն է, վերջացաւ առջի օր Երուսաղէմի մէջ : Բոլորն ալ կոչ մը ըստորագրեցին «աղատագրելու համար Պաղեստինը» եւ դատապարտեցին համայնավարութիւնը :

ՄԻՇԵԼ ՏԷՊՐԷ պաչտօնական բացումը կատարեց «Ֆրանս» նաւուն որ կոչուած է Ատլանտեանի վրայ բարձր պահել Ֆրանսական ծովային փրեսթիժը : Այս առթիւ խօսած իր ճառին մէջ, նախարարը պետը յայտնեց թէ Ֆրանսայի կոչումն է ոչ միայն ազգ մը մնալ այլև ուժ մը ըլլալ : Պատասխանեց նաեւ այն քննադատութեանց (փինէ) որ եղած են այս բազմաթախս ձեռնարկին համար : Տըպրէ չէչտեց թէ Ֆրանսացիները պէտք չէ վերապահ ըլլան, կասկած ունենան : Պէտք է ընդհակառակն համոզուիլ թէ Ֆրանսա մեծ երկիր մը կ'ուզէ մնալ եւ պէտք է որ մնայ : Տըպրէի համար Ֆրանսա հարկ է – ղածին չափ բնակուած չէ : Ընդհանուր ձեւով, նախարարապետը կ'ըսէ թէ պէտք է լաւատես ըլլալ, եւ ատիկա հակառակ չէ ալժերական ողբերգութեան հետ :

ԹՐՔԱՊԱՏՈՒՄ

—o—

ՄԵՆՏԵՐԷՍԻ ԴԻԱԿԸ Կ'ՈՒՋԵՆ

Իզմիրէն կը գրեն Պոլսոյ Թերթերուն : Ատալէթի կուսակցապետ Րահըպ Կիւ – միւչբալայի նախագահութեամբ Ատա դիւանագիտական ներկայացու – ցիչներուն հետ եղած հաւաքոյթին ընթացքին «ներման » մասին երաչխիք ուզուեցաւ կիւմիւչբալայէ : Մամլոյ գործավար Քեամուրան Իվլիյաօղլու ներում ուզող կուսակցականներուն ըսաւ թէ ներման համար գետին կը պատրաստուի : Կրնաք վստահ ըլլալ : Եզմը – տացոյցի վիճաբանութիւններէն յետոյ ներումը ձեռք պիտի առնուի» :

Երեք ժամուան հաւաքոյթին չորս Ա – տալէթական գործավար ու քանըրինը ծերակուտական եւ երեսփոխան ներկայ էին : Կուսակցական ներկայացուցիչները խստիւ յարձակեցան Իվլիյաօղլուի վրայ ինչօնիւի ներքողը հիւսած ըլլալուն համար : Գործավարը յայտնեց որ ինչօնիւ անկեղծ է ներման մասին եւ այս ուղղութեամբ կ'աչխատի :

ՄԵՆՏԵՐԷՍԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՕԳՆՈՒԹԻՒՆ

Հաւաքոյթին ընթացքին Մենտէրէսի ընտանիքին օժանդակութեան հարցը մէջտեղ դրուեցաւ եւ յայտնուեցաւ որ ցարդ ձեռքի տակէ մէկուկէս միլիոն տոկի հաւաքուած է : Վարչ. Խորհուրդի անդամ մը ըսաւ. « Մենտերէսի ընտանիքը իրօք դժնդակ կացութեան մէջ է : Զենք կասկածիր որ բաւականաչափ դրամ պիտի հաւաքուի գնելու համար այն ինչքերը որոնք պետական դանձին կողմէ պիտի առնուին այս ընտանիքին ձեռքէն ծախու հանուելով » :

Եւ ըսէ՛ք Մենտերէսն ալ Այնգարայի մէջ չէչտեց որ իրենց տեղեկութենէն դուրս բացուած է հանդանակութիւնը եւ «պիտի ընդունի՞ք » հարցումին պատասխանեց . « Ասոր փաստաբաններս կը խոհնուին» :

Ատալէթի պարագլուխ Կիւմիւչբալա Հալքի, Միլլէթի եւ Ենի Տիւրքիյէի կեդրոնները այցելեց ու չուրջիններուն ազդարարութեամբ մեծժեց լուսանկարուիլ վեց նետաւոր դրօչին տակ Հալքի կեդրոնին մէջ :

Մերսին ժամանած Իզմիրի Ատալէթական երեսփոխան Մ. Ալի Ալթաչ անկախութեան պողոտային վրայ գինքը շրջապատած ժողովուրդին ըսաւ. «Այս պողոտան Մենտերէսը բացաւ : Անունն ալ Մենտերէսի պողոտա պիտի դնենք» եւ աւելցուց որ իր կուսակցութիւնը դեմոկրատ կուսակցութեան չարունակութիւնն է :

×

Անդարայէն կը հաղորդեն թէ Ատալէթի երիտասարդական ճիւղերը յառաջիկայ օրերուն պիտի պահանջեն որ Եսար Ատայի բարձր. տեսանին որոչումով կախաղան հանուած նախկին պետական ատենապետին դիակները ընտանիքներուն յանձնուին : Երիտասարդական ճիւղերու նախագահ Եավուզ Խամէրսոյ յայտնեց որ այս մասին հանրաժողով մը պիտի դումարուի :

Ըստ Խամէրսոյի անձ մը ինչ ձեւով ոչ ալ մեռած ըլլայ դիակը ընտանիքին պէտք է յանձնուի : Հակառակը ներհակ է սահմանադրութեան :

× *Երկրին ցորենի պահանջը դիմադրելու մտօք կառավարութիւնը ամերիկեան կառավարութենէն պահանջեց 1961ին ներածուած մէկ միլիոն թօնին յաւելուածաբար այս տարի ալ հինդ հարիւր հազար թօն ցորեն ղրկել :*

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՐԱԹՈՆԸ

Ա.

Սիբելի
ՅՈՎՀ. ՉԱԼԸՓԵԱՆԻՆ

ՄՄՔ.— Շ. Նարդունի, որ վերջերս հրաւիրուած էր Մարսէյլ՝ խօսելու Հ. Յ. Դաշնակցութեան տօնին առթիւ, առող – ջական պատճառներով չկրցաւ մեկնիլ : Բայց իր ճառը ժապաւէնի վրայ առնուե – լով ղրկուեցաւ Մարսէյլ: Գոհացում տա – լու համար մեր ընկերներուն փափաքին , կը հրատարակենք ամբողջութեամբ :

Սիբելի հայրենակիցներ որ ի Մարսէ – լիա,— Այս երեկոյ պիտի տեսնէիք այս բեմին վրայ: Եւ ահա··· բացակայ : Բայց ես չատ կը փափաքէի զալ Մարսէ – լիա՝ տեսնելու համար հայկական ծովը, ոչ թէ Միջերկրականը, այլ այն ծո՛ւլ բազմութիւնը՝ զոր սովոր էք տեսնել տարին երկու անգամ, տարիներ առաջ, հանդիսական առիթներով: Ատոր համար է որ կ'ըսէին թէ իմ մէջնաբերդս է Մարսէլիան :

Երկար տարի է որ չեմ տեսած ձեզ ա – մէնդդ, սրահները լեցնող, ջրամբարի պէս զոռացող, խանդավառող ու խանդա – վառուող ձեր բազմութիւնը: Կարօտցած եմ ձեզ, հայրենիք մը կարօտնալու ձե – ւով: Եւ ի՞նչ է արդէն հայրենիքը, եթէ ոչ՝ լեզուով եւ հոգիով միացած բազմու – թիւն մը, նոյն երազներով ու հաւատքով ապրող զանգուած մը, նոյն ալօթքներով եւ պատմութեամբ կենդանի հաւաքակա – նութիւն մը, մարդկային քաղաքակրթու – թեան իր ինքնատպութիւնը եւ հանճարը նպաստ բերող ժողովուրդ մը, ինչպէս դուք որ մէկ պատառն էք Հայութեան :

Ախո՜ս, բացակայ եմ ձեր մէջ, այ – սօր :

Գիրս պիտի կարդացուի, բայց ձայնս պիտի չլսուի : Ձայնս պիտի լսէք, բայց պիտի չտեսնէք դիս : Վանդի fonûներվայի վերածուած եմ ահա: Տուփի մէջ դրը – ուած սպրտելայի պէս: Ձայնաւոր ժա – պաւէնին յանձնած եմ մտածումներս, զգացումներս, հաւատքս, կարօտս, այն բոլոր յիշատակները որ դիս կը կապեն ձեզի: Ախո՜ս, այս կարելիութի՛ւնն ալ պիտի չունենամ օր մը՝ երբ մտնեմ հոգին տակ: Ատոր կը պատրաստէ դիս առող – ջութիւնս, որ կը տատանի եւ սկսաւ ար – դէն դաւաճանել՝ պատճառ դառնալով որ չկարենամ զալ ձեր մօտ: Ուրիշ պատճառ չկար: Առողջական վիճակս էր որ թոյլ չտուաւ զալ՝ ուրախանալու համար ձեզի հետ, խանդավառուելու համար ձեզմով, հայանալու համար ձեր մէջ: Վանդի, ինչպէս կ'ըսենք յաճախ այստեղ, երբ Հայութեան աւիշը կը սկսի նուազիլ մեր մէջ, երբ կը զորչանայ կամ կը թառամի մեր Հայութիւնը, երբ վերջապէս Հայու – թեան միւռոնը կը ցնդի մեր ճակատէն, կը խորհինք ու կ'ըսենք· « Երթանք Մար – սելիա եւ հայանանք քիչ մը» :

Ա՛խ, եթէ դիտնայի թէ միայն Հայու – թիւն չէ, այլ եւ առողջութիւն կրնաք տալ ինծի, ճընկըլ – ճընկըլ կամ կաղն ի կաղ կուգայի Մարսելիա: Ցառաջի մէջ երեւալս, անունով կամ առորագրու – թեամբ, ապացոյց մը չէ առողջութեանս: Զարմանալի՛ բան,— ժամանակ մը, երբ կը պարծենայի երիտասարդութեամբս , չէին ուզեր հաւատալ երիտասարդու – թեանս, ինչպէս ետքէն պիտի չուզէին հաւատալ ծերութեանս, եւ ահա չեն ու – զեր հաւատալ առողջական տկարութեա – նըս: Բայց ես կը զգամ թէ կը տկարա – նամ հետզհետէ,— տակիա ալ փոյթս չէ թէեւ: Կ'աշխատիմ, պիտի աշխատիմ, ձեռքս պիտի չկենայ զրիչը, հակառակ ցաւերուս: Ամօթ պիտի ըլլար զրողին՝ հեռանալ այս աշխարհքէն, զրիչը ձեռքէն ձգած ընդմիշտ: Գրիչը ձեռքիս մէջ պիտի դանէ զիս դէսը՝ որ զարկաւ աչքիս եւ այժմ կը պարնէ ողնայարիս: Թեւս է մի – այն ազատ, հիմա, զրելու համար ձեզի, զրոյ խօսելու համար ձեզի , զրերն մէջ թափելու համար ձայնս , կա – տաղութիւնս, ընդվզումս, — ա՛խ, հրե – զէ՛ն երիտասարդութիւն, քաջառողջու – թի՛ւն··· փոք – ֆրիքով կազմուած :

Բայց յորդ է հաւատքս, եւ փրփրա – զայր : Ցաւերժական է հաւատքս հայկա – կան զրիչին մասին : Ու կ'ըսեմ ձեզի, չըլ – լա՛յ թէ պակսի ձեր հաւատքը, ձեր յոյ – սը, ձեր խանդավառութիւնը: Պիտի լը – սե՛մ, պէ՛տք է լսեմ, հեռաւոր Փարիզէն, նոյնիսկ հոգին տակէն՝ ուր պիտի մըտ – նեմ օր մը, թէ դուք հաւատարիմ կը մը – նաք ձեր ուխտին: Ուստի լեցուցէք հան – դիսասրահները, տօնեցէք ձեր հաւատքը, ձեր երազները, ձեր աղգային խաչելը , եւ տղմնեցէք , մեծարեցէք, ծափահա – րեցէք չառաչաձայն :

Իմ թելադրանքս, ահա միակ խորհուր – դըս եւ ցանկութիւնս Օրուան առթիւ :— Տօնեցէք ձեր կա՛մքը, որպէսզի թշնամին ևս լսէ թէ Հայութիւնը դեռ կը տօնէ իր աղգային տեղերը, կը տօնէ իր աղգային ուխտը, կը տօնէ իր մեծ կազմակերպու – թեան Օրը եւ գործը, ըրածներուն յիշա – տակը եւ անելիքներուն հաւատքը: Այն օրը որ լռեն ձեր ծափահարութիւնները , թշնամին պիտի ըսէ թէ մեռան կորան :

Անշուշտ պիտի իյնան մեզմէ չատեր: Փա՛ռք մնացողներուն: Փա՛ռք վաղուան Դաշնակցականներուն, որոնք պիտի տես – նեն մեր երազները իրրեւ իրականու – թիւն: Ինուիթեան օրէնքն է, մեզմէ չա – տեր պիտի յաղնին, պիտի մաշին, պիտի ընկրկին, ինչպէս ես ահա: Ես որ իմ բորբ ձայնս բերեր եմ յաճախ ի մար – սիլիա, ահա թուղթ մը միայն կը ղրկեմ, ձայնաւոր թուղթ մը միայն, երիլ մը : Զեղաւ որ զայի եւ բեմ բարձրանայի իմ կրակովս, իմ չանթերովս, իմ ողջոյննե – րովս, իմ հայկազա՛նց բառարանովս , լեցուն՝ օրհնութեամբ եւ հայհոյու – թեամբ, լեցուն՝ փառաբանանքով եւ պարսաւանքով, բաշխելով ըստ արժան – ույն եւ ըստ տեղին :

Է՛հ , բնութեան օրէնքն է, ըսի,— այ – ժըմ օրը երիտասարդներո՛ւնն է : Ահա ըն – կերս, որ կը խօսի դինովցնելով զիս իր երիտասարդութեամբ, իր ձայնին ջեր – մութեամբ, իր խօսքին նեկտարով : Մենք, երէցներս, պէ՛տք է լռենք որ խո – սին անոնք: Ի՞նչ ուրախութիւն յաճախ լսելը եւ դիտելը :

Մեղքը չառնենք, սակայն, սատանային կամ հրեչտակին : Իրողութիւնն այն է որ կան տոկուններ՝ որոնք աւելի երկար կը տոկան ու կը դիմանան: Մենք տոկուն չենք եղեր : Դիմացկուն չեն եղեր մեր ոսկորները, մեր ջիղերը, մեր երակները: Այսքան կրնայ ըլլալ եղեր մեր առողջու – թիւնը :

Ես առողջ կ'ըսեմ, քաջառողջ եւ յաւի – տենապէս առողջ կ'անուանեմ ···

Գիտէ՛ք թէ ո՛վ է այդ քաջառողջը: Ա – ռոյգ, քաջառողջ, յաւիտենապէս առողջ այդ երջանիկը կը կոչուի Հ. Յ. Դաշ – նակցութիւն :

Այսօր հաւաքուած ենք մեծարելու համար հօթանասուն առաւել մէկ տարե – կան այդ առողջ երիտասարդը, Հ. Յ. Դաշնակցութիւնը :

Մենք կը ծերանանք, մենք կը տկարա – նանք, վաղը կը կորսուինք կ'երթանք , — կա՛յ ու կը մնայ Հ. Յ. Դաշնակցու – թիւնը: Օժտուած յաւիտենական առող – ջութեամբ, Հ. Յ. Դաշնակցութիւնը կ'ապրի ու կը տեւէ, կ'աշխատի ու կը զործէ հազար ձեւերով, հուրով, սուրով, բահով, զրիչով, Հայոց լեզուին եւեկ – տրական բառերով: Ուղեցին կոտրել չախչախել իր ոսկորները,— միշտ կը մը – նայ ոտքի: Կտրեցին փետրկտեցին իր ջի – ղերը,— միշտ կանգնած է ոտքի: Բացին երակները եւ արիւնը հոսեցուցին առատ – օրէն,— ահա զարձեալ կը ցցուի , կը բարձրանայ, կը ծառանայ, հէ՛յ «սալվ ու չինար» Դաշնակցութիւն :

Ես լաճ մըն էի՝ երբ հերոսացած էր արդէն Հ. Յ. Դաշնակցութիւնը Հայոց Պատմութեան մէջ: Այսօր ծերացած եմ արդէն, ինք կը մնայ դեռ երիտասարդ , միշտ երիտասարդ , յաւիտենապէս երի – տասարդ , աւելի քան առողջ, աւելի քան առոյգ, կայտառ, չարքաշ, աշխոյժ, կա – րիճ, հուժկու, ջղուտ, կորովի, վառվը – ռուն, քաջալանջ, մեծազօր :

Ֆիզիքական դուշնաքեայ ցաւեր կ'ան – դամալուծեն զիս: Մինչդեռ Հ. Յ. Դաշ – նակցութիւնը, որ մեծցաւ ձիւնամրրիկ – ներու մէջ, արծուօրէն սաւառնեցաւ ամ – պածրար բարձունքներու վրայ, զարկաւ – զարնուեցաւ, խոցեց – խոցուեցաւ, ա – րիւն թափեց՝ արիւն կորանցնելով, կըռ – ուեցաւ ակն ընդ ական, ատամն ընդ ա – տաման, կը մնայ այնքան հզօր, կը մնայ այնքան ուժեղ՝ որքան պայքարի առաջին օրերուն···

Կը յիշեցնէ ···

Ուրիշ անգամ՝ օրինակ բերած եմ ռուս ժողովրդական բանահիւսութեան առաս – պելական մէկ հերոսը, որ քանի դեռին կ'իյնար՝ այնքան կը զօրանար, նոր ուժ առնելով հողէն :

Այս անգամ օրինակ պիտի բերեմ յու – նական դիցաբանութեան մէկ հսկան , Անտէոսը, — այս քայլայ քայլն էր որ քա – ռուղի մը վրայ կանգնած՝ զօտեմարտ – տութեան կը հրաւիրէր բոլոր աստղատակ – ները, հարաւէն դային թէ հիւսիսէն : Եւ անյաղթելի կը մնար, որովհետեւ ամէն անգամ որ դետին իյնար՝ նոր ուժ եւ զօ – րութիւն կը ստանար հողէն : Հ. Յ. Դաշ – նակցութիւնը այդ Անտէոսն է, որ կանգ – նած է քառուղիի մը վրայ՝ ուր հաստատ – ուած է Հայաստան աշխարհը: Կը կռուի Հիւսիսի դէմ, Հարաւի դէմ, Արեւելքի դէմ, Արեւմուտքի դէմ, բոլոր ասպա – տակներուն եւ ստամբակներուն դէմ: Երբ դետին կ'իյնայ զօտեմարտութեան զըժ – բախտ մէկ պահուն, յոդնած կամ ուժա – քամ, հայկական հողը կը լեցնէ իր ջիղե – րը նոր ուժով եւ նոր զօրութեամբ: Եւ ոտքի կը կանգնի ան՝ զարնելու համար աւելի ուժգին, կռուելու համար մինչեւ յաղթանակ :

Հայութի՛ւնն է այդ հողը, հողերուն լաւագոյնը եւ հրաշագործ տեսակը, որ դիւցազնական աւիշ կուտայ եւ չունչ : Ահա թէ ինչո՛ւ յաւիտենական այդ մար – տիկը կը կոչուի Հայ Յեղափոխականնե – րու Դաշնակցութիւն :

Հայ է այս կազմակերպութիւնը, իր մէջ խտացուցած՝ Վանի, Սասունի, Շա – պինի – Գարահիսարի, Սարղարաբատի , Ուրֆայի, Մուսա Լերան եւ այլ ռազմա – վայրերու ժողովուրդին հերոսական ըն – դունակութիւնը: Իր մէջ խտացուցած է ոչ միայն Գէորգ Զավուշներու եւ Անդ – րանիկներու, այլ եւ Մօրուք ժիրայրնե – րու եւ Եկաւեաններու աննման քաջու – թեան աւանդութիւնը :

Հայ Յեղափոխականներու Դաշնակցու – թիւն կը կոչուի, վասնզի ամբողջական յեղափոխութեան արձագանգն է որ կը հնչեցնէ դարերու խորքէն, երիքովի փո – ղերուն նման՝ ի փուլ բերելով թշնամւոյն պատնէշները :

Հ. Յ. Դաշնակցութիւնը կը յիշեցնէ Սասունցի Դաւիթը: Յովհ. Թումանեանն է որ կը պատմէ, աւելի ճիշդ՝ կը վկայէ·

Մի խեճք ծնուեց Հայոց ազգին ···

Ահաւասիկ այդ «խեճքն» է , Հ. Յ. Դաշնակցութիւնը, որ կը յայտարարէ թշնամւոյն ճակտին, բոլոր ասպատակ – ներուն ականջին, ընդդէմ ուրիշին սեփա – կանութեան աչք տնկողին .

Ձեմ տայ, չեմ տայ իմ հօր ոսկին,
Ձեմ տայ կանայքն իմ հայ ազգին,—
ՍԱՍՄԱՑ ԵՐԿԻՐ ՁԵԶ ՏԵՂ ՁԿԱՑ :

Ո՞ր աւանակն է որ ասոր համար կը նեղանայ Հ. Յ. Դաշնակցութեան: Տա՛լ պէտք էր արդեօք, ա՞յդ կը թելադրէր կարգ մը մարդոց անպատիւ տրամաբա – նութիւնը:

Չի բաւեր անշուշտ յայտարարել, այլ եւ պայման է պաշտպանել: Ատոր համար հիմնուած է Հայ Յեղափոխականներու Դաշնակցութիւնը, որ կը յայտարարէ աստպատակին .

Քու թագաւոր թող գայ, թող գայ,
Թող գայ՝ ինձ հետ կռիւ անի,
Թէ դոչաղ է՝ զօռով տանի:

Եւ, ձօյա՛դ Դաշնակցութիւն, չի կըռուիր օտար զէնքերով, օտար սուինե – րով, օտար դրամով, օտարի բերնով: Կը կռուի Հայութեան ուժով, Հայու բար – բառով, յանուն Հայութեան :

Թերեւս ոմանք զարմանան լսելով Հ. Յ. Դաշնակցութեան այս ափոլոժին, եւ հարցնեն.— Այդքան կատարեա՞լ է: Ո՛չ, ոչ եւ ոչ,— բայց կը նմանի մեզի, կը նը – մանի Հայութեան, արաբեալ ըստ պատ – կերի Հայկազանց: Երբեմն ձախաւերու – թիւն, երբեմն որոմն ի մէջ ցորենոյն , երբեմն անպէտ խմոր որ չի հասուննար Դաշնակցութեան տաշտին մէջ, վերջա – պէս թերաճ երիտասարդութիւն, այս ա – մէնը արատ կը բերեն կազմակերպու – թեան: Բայց երբ Աստուծոյ ստեղծած բաներն իսկ կատարեալ չեն, ինչո՞ւ զարմանալ՝ երբ բիծեր կը նշմարուին Հ. Յ. Դաշնակցութեան ադամանդին մէջ :

Սակայն, Օրը զոր կը տօնենք՝ կը թե – լադրէ մեզի խօսիլ կատարելութեան մա – սին, Հ. Յ. Դաշնակցութեան նուաճում – ներուն մասին, խոչընդոտներուն մասին, ըրա – ւունքներուն մասին, զորս կը պահանջէ ի դին իր արեան :

Շ. ՆԱՐԴՈՒՆԻ

ԽՆՋԱՐԱՑԻ ԲԱՐՋՈՒՆԻՑ

TU MIHI, LEONI PRODERIS ?

Անբրաւ ձպուռների միալար համբերը մայրենիների վրայ ներչ է բերում մարդու, եւ սկսում ես երազել, մտքով թափառել անցեալի ոլորտներում :

Աշակերտ եմ թեմական դպրոցում : Լա – տիերէնի դաս : Դրրոզլաւի խունացած դասագրքից ձանձրոյթ է բուրում , բայց պարոն Քիրլեանը անողոք է·

— *Ի՞նչ, փո՛ւչ կենդանի, նոլիթ կարդա·*

— Tu mihi, leoni proderis ?

— *Ի՞նչ ասել է փրոտերիս ցանցառ.*

— Proderis ?... proderis ?...

Սատկին այդ լէոնին էլ, փրոտէրիսն էլ: Ես ի՞նչ պէտք ունեմ այդ չիմար լա – տիներէնին: Պարոն Քիրլեանի խոժո – նացածքի տակ մեծ ճիղով թարգմա – նում եմ .

— *Դու ինձ՝ առիւծիս պիտի օղնե՞ս :*

Ինչ անբարտաւան անասուն է այդ ա – ռիւծը : Թակարդի մէջ է ընկել, խճող – ուել է պարանների մէջ, մուկը առաջար – կում է օղնել, եւ դոռոզ չիմարը պոռում է նրա երեսին :

— *Դու ինձ՝ առիւծիս օղնե՞ս :*

Բայց փոքրիկ մուկը, չիր չարժումով, կրծում է պարանը եւ ազատում դազան – ների թագաւորին անխուսափելի մահից :

— *Հապա, չպտաղով հարցրեց մեր ու – սուցիչը, ձեռքի քանոնը զարնելով առա – ջին սեղանի ալթոռակալ բթամիս հա – բրեանի դլխին, ասա, տեսնենք ,ի՞նչ ա – բաս առիւծը, երբ ազատուեց թակար – դից :*

— *Փախաւ, առանց մտածելու պատաս – խանեց Բաբլեանը :*

— *Մուկին սպանեց, ասաց յետոյ մկկը :*

— *Շնորհակալութիւն յայտնեց մու – կին ···*

— *Բոլորդ էլ ցանցառ էք, եղբայրակից պարոն Քիրլեանը : Առիւծը քաղցած էր , կերաւ մուկին :*

Պարոն Քիրլեանը կատակ էր անում, անշուշտ, բայց ի՞նչ ասել այն կատակին, որ կէսը ճիշդ չլինի : Դրրոզլաւը չէր ա – սում, թէ ինչպէս վարուեց մեծամիտ ա – ռիւծը վեհանձն մուկի հետ, բայց մենք ամէն օր տեսնում ենք, թէ ինչպէս են վարուում մարդ – առիւծները մարդ–մու – կերի հետ: Հեռուները չերթանք, առնենք մեր պատմութիւնը եւ մեր առօրեան :

Համաչխարհային Առաջին պատերազմ: Անգլիա, Ֆրանսիա, Ռուսաստան զաշ – նակից՝ խճճուել են մահացու թակարդի պարանների մէջ: Հայ – մուկը վազում է նրանց օղնելու: Առիւծի մեծութիւնն էլ չունեն· չեն ասում .

— Tu mihi, leoni proderis ?

Ընդհակառակն, ազաչում են օղնել: Ոստանում են, յաղթութիւնից յետոյ , պատժել Թուրքին, պատժել, եթէ Հայե – րին չարդէ : Ոստանում են ազատել Հա – յաստանը Թուրքի ճիրաններից : Շա՛տ – բան են խոստանում :

Դաշնակիցները ազատուեցին մահացու Թակարդից· Հայ – մուկը եւ չատ ուրիշ մուկեր կրծեցին Թակարդի պարանները : Զարդարար Թուրքը պատժուեցա՞ւ: Հա – յաստանը ազատուեցա՞ւ Թուրքի ճիրան – ներից : Չէր կատակում պարոն Քիրլեա – նը յաղթական դաշնակիցները նախամարտին Հայի մխով :

Ո· Ռուսաստանը, երբ պէտք ունէր Հայ – մուկի ատամներին, լեզուի բերա – նով պռոցց ի լուր աշխարհի, — Թրքա – Հայաստանը պէտք է լինի ազատ· անկա – խութի՛ւն Հայաստանին: Անխելք մուկը Հաւատաց եւ սկսեց կրծել Թակարդի պա – րանները: Վերջը — Բրեստ – Լիտովսկ, Մոսկուայի ու Կարսի դաշնագիրը: Թըր – քահայաստանին վերադիր Կարսն էլ, Ար – տահանն ու Սուրմալուն էլ փեշրէշ Թուր – քին :

Միայն առի՛ւծն է աներես խորագէտ : Մո՞ւկն է միայն անխելք :

— *Ցանցառ, պիտի ասէր պարոն Քիր – լեանը, անխելքը դու ես, փուչ կենդանի, դասդ սորվէ :*

Հարիւր տարի է եւ աւելի մենք դա – ենք սերտում Դրրոզլաւի խունացած դա – սագրքով եւ միշտ այնտեղ ենք, որտեղ որ էինք: Նորից չարունակում ենք երա – զել, հաւատալ եւ զարմանալ, երբ մեզ դործ են տալիս իրրեւ խուրդա աշխարհի սակարանում: Եւ արթնանում ենք միայն

Ինչպայմանի բարձունքում, երբ ճպուռների ականջ ծակող համանուագը մայրինների վրայ այլեւս անտանելի է դառնում :

Դարեր առաջ հասկանալի էր, որ մեր Իսրայէլ Օրինները եւ Ցովսէփի Էմիննները մաշում էին պապերի, կայսրների, թա – գաւորների եւ իշխանների դռները ազա – տութիւն ազերսելով, քրիստոնեայ էին եւ քրիստոնեայ եղբայրներին էին դի – մում՝ միամիտ սրտով հաւատալով քը – րիստոնեայ եղբայրութեան :

Հասկանալի էր, երբ մեր հայրենասէր Արմիաններն ու Զերաղները Պերլինում ակնկալում էին դանել Հարիսա :

Հասկանալի է եւ բնական, որ թղթէ չերեփներով հարիսա չկարողանալով ըս – տանալ՝ Արմիանի յաջորդները ձեռք ա – ռին երկաթէ չերեփներ, եւ Հայոց լեռ – ներում որոտաց հայ յեղափոխականի մո – սինը :

Եւ այնուհետեւ մենք տեսանք Մեծ Ե – ղեռն, եւ «առիւծը թափարդի մէջ էր» եւ Կիլիկիայի նահատակութիւն՝ «առիւծի » մասնակցութեամբ, եւ Իմմիրի հրկիզում ու սպանդ՝ «առիւծի» նաւերի աչքի առ – ջեւ, եւ թղթէ Սեւր եւ «ամբոխները խե – լագարուած» եւ խայտառակ Լօզան : Եւ լսեցինք Թուրքի ոռնոցը համբուրող մեծ «առիւծների » անբարոյական խօսքերը .

— Tu mihi, leoni proderis ?

Լսեցինք խելագարուած երգչի մեղա – յականը .

— Հա՛յ ժողովուրդ, fn միակ փրկու – թիւնը fn հաւաքական ուժի մէջ է :

Եւ ուրիշ շատ բարբարոս գործեր տե – սանք եւ ուրիշ շատ իմաստուն խօսքեր լսեցինք, բայց նորից այնտեղ ենք, որ – տեղ որ էինք :

Եւ նստած Ինչպայի բարձունքին, մայրինների տակ, ճպուռների համանուա – գով, երազում ենք աչխարհի մասին . ո՞ւր է «միակ փրկութիւնը» : Մոսկուա – յո՞ւմ, Փեքինո՞ւմ, Նիւ Եորքո՞ւմ, թէ Փոթոմաքի ափին : Ինչո՞ւմն է «միակ փրկութիւնը»— կոլխո՞զ կառուցանելով, թէ Ալբընի նահանգապետարանի դլխին եռադոյն դրօշ անկելով : Ո՞ւր է, ասա , իմաստուն Իդիպոս :

« Մեր նախնիքը ազդի համար իրենց կեանքը զոհեցին»... Զոհենք. եւ մենք սովոր ենք զոհելու եւ զոհուելու : Բայց զոհենք ազգի՛ համար եւ ո՛չ՝ առիւծի ... Առիւծի, որ ի վերջոյ արհամարհանքով կը չպրդէ երեսիդ .

— Tu mihi, leoni proderis ?

Հին յոյն իմաստասէրն ասել է .

Փանտայ ռէյ· ամէն բան հոսում է :

Կեանքն էլ է հոսում, դաղափարներն էլ են հոսում, աչխարհն եւս հոսում է : Հո – սում է որոշ տրամաբանութեամբ, հա – մաչխութեան մէջ, անվարան :

Վա՛յ նրան, որ ականջ չունի լսելու կեանքի համանուագը :

Ս· ՎՐԱՑԵԱՆ

ԶԱՅՆԵՐ ԳԱԻԱՌԷՆ

Հ· Մ· Ը· Մ·

ՄԱՐՍԷՅԼ.— Երկար լուութենէ մը ետք, ահաւասիկ Մարսէյլի Հ· Մ· Ը· Մ·ը կրկին ասպարէզ կ'իջնէ ուրախ լու – րեր տալու համար Ֆռանսահայ մարզա – սէր հասարակութեան :

Նախ սկսինք վարչական կազմէն : Այժմ ունինք իսկ հոդինոց վարչութիւն մը , որուն մաս կը կազմեն Հ· Մ· Ը· Մ·ի նախկին տարեց վարիչ անդամները : Ու – նինք մօտաւորապէս ութսուն ֆութպո – լիստներ, որոնցմով կազմուած են հինդ խումբեր : Այս խումբերը կը մասնակցին կանոնաւորապէս ամէն Կիրակի ֆութպո – լի պաչտօնական մրցումներու : Անոնց մարմինները մարզելու համար ամէն հինդշաբթի չուէտական մարզանքներ կու տայ Հ· Մ· Ը· Մ·ի մարզիչը Փիմնաղ – Լոնդանի մէջ : Արդէն մեծ փոփոխութիւն կը տեսնուի անոնց խաղարկութեան մէջ :

Հ· Մ· Ը· Մ·ի առաջին խումբը ունե – ցաւ 11 պաչտօնական մրցումներ, որոնց իններն մէջ յաղթական դուրս եկաւ եր – կուքին մէջ պարտուեցաւ : Եւ այժմ իր պատկանած կարդին երկրորդն է : Ուրա – խութիւնը մեծ է վարիչի եւ մարզիկի միջեւ : Ամէն միջոց ձեռք առնուած է այս տարի բարձրացնելու Հ· Մ· Ը·Մ·ի կար – գը Փրօմօսիոն տ'Օնէօր Ա·ի :

Մարսիլիոյ Հ· Մ· Ը· Մ·ին 35 տար – ուան բեղուն աչխատութեան եւ իր տա – րեց երեք վարչական անդամներուն բա – րեկամական յարաբերութեանց շնորհիւ Ֆրանսական մարզական եւ քաղաքական շրջանակներու մէջ, կարելի դարձաւ որ Տիւթրիեթ տը Փրովանսը Հ· Մ· Ը· Մ·ի տրամադրութեան տակ դնէ Մոնթոլիվէի Սենաֆրիքա հսկայ մարզադաչտը, օժ – տուած՝ ֆութպոլի եւ պասկէթպոլի մարզադաչտերով :

Մարսէյլի քաղաքապետութիւնը 37 մի – լիոնի դումար մը քուէարկած է մարզա – րաններուն բարւոքման համար, ուր հետ – զեհտ պիտի չինուին հարիւր մէթր վազ – քի չորս փիսթեր, պատուոյ ամպիոններ երկու հազար հոդիի համար, էլեկտրա – կան զետեղում մարզադաչտին բոլորտի – քը՝ զիշերային մրցումներու համար եւ նմանապէս լողարաններու տաքութեան եւ տաք ջուրերու զետեղում : Վերջապէս Հ· Մ· Ը· Մ·ի մարզադաչտը պիտի ըլլայ Մարսէյլի մարզադաչտերէն ամենագե – ղեցիկներէն մին : Ինչ ուրախութիւն եւ խանդավառութիւն Մարսէյլի մարզասէր հասարակութեան մէջ : Այսքան տարիներ Հ· Մ· Ը· Մ·ը թափառելէ ետք մարզա – դաչտ մարզադաչտ, վերջապէս կ'ունե – նայ իր մարզադաչտը եւ այս բոլորը ձը – րիաբար : Ահա կազմակերպութիւն մը, որ կը զնահատուի Ֆրանսական կառավա – րութենէն : Իսկ մեր երիտասարդութիւնը ինչ կը մտածէ այս մասին, չի՞ կարծեր որ այլեւս ժամանակը հասած է, որ բո – քեր զնեն ու կառավարութեան օրէնքնե – րուն հակառակին .

— Ա՞յդ է բոլորը :

— Այո :

— Բարեկամ էիք Առաքել էֆէնտիին հետ :

— Շատ մօտէն ;

— Կին, զաւակները ունի՞ :

— Կին մը ունի, որ բաւական առեղծ է վեր անյայտ եղած է ;

— Ի՞նչպէս անյայտ եղած է :

— Կը կասկածուի թէ կինն ալ չարա – չար սպաննուած ու հետքը կորսուած է :

— Տխուր բան ... ամբողջ քաղաքը սարսափելի դրութեան մը մէջ է, Տէր եղբայր, չիտակը՝ իրաւունք ունիք այդ խռովարարներուն հակառակիլ... դիմա – նալու բան չէ :

Տէր Կոմիտաս սիրտ առաւ ու աւելի լայնօրէն բացաւ իր հոդւոյն մթին վար – ղոյրը՝ պատկերացնելու համար անոր ամբողջ զարչութիւնը : Ուստի, ամենայն համարձակութեամբ յայտնեց .

— Այո, մեր ամէնուս պարտականու – թիւն է աղդային գոյութիւնը վտանգող չարիքին հանդէպ նետուիլ ու չխղդուլ որ աղէտը յառաջանայ : Մեր ժողովուրդը կը նմանի ոչխարի մը , որ ամէն ձայնի, ամէն ստուերի եաեւէն կ'երթայ : Բռնենք անոր ձեռքէն ... գոյց տանք իր առջին բացուած անդունդը : Թող չխաբուին : Ապագայ չարիքը իր կորուստն է, որ ան – հոդի զոհ պիտի տանք ու մեր նպատակին խուսափելի կը դառնայ : Բայց եթէ կա – ռավարութեան ալ դիմել հարկ պիտի ըլ – լայ... ի՞նչ ընենք... կան պարագաներ որու մէջ կը զոհուին մարդիկ ... :

— Եթէ կառավարութեան յանձնել հարկ ըլլայ , պիտի կրնանք ընել :

— Ինչո՞ւ չէ... առանկով մէկ երկու ալ պիտի հասնինք :

— Զէ՞ որ ժողովուրդը պիտի չհասկը – նայ մեր ընթացքը... չէ՞ որ պիտի կար – ծուի թէ մեր կոչման հակառակ կը վար – ուինք :

— Այդպէս է· բայց հոգեւոր իշխանու – թեան պաչտօնեայ մը կարող է զաղանի գործել ու ցոյց չտալ իր դերը : Դիցուք թէ խլրտում մը կը նշմարեն այս ար – ուարձանին մէջ... առանց կասկածի տե – ղի տալու, տեղական ոստիկանութեան կ'իմացնեմ ... ու կը վերջանայ ամէն բան : Ո՞վ պիտի թէ քահանան է կամ վարդապետը : Նոյնպէս «պոդի» հաւաքող վարդապետ մը կարող է ծածուկ կերպով ամէն միջոց գործածել ու յաղթիլ :

Վարդապետը կը խղդուէր : Ցայտնի բան էր որ խղճի մը չարչրկումներու ներքեւ կը գտնուէր, յայտնի բան էր որ անզուսպ ու վրէժխնդրական տրամա – դրութիւն մը կը թելադրէ զինքը ... մէկ խօսքով, յայտնի բան էր որ սարսռալի ու հրատապ պարբերութիւն մը իր կո – կորդը կը ճզմէր : Նստած տեղէն ակա – մայ չարժում մը ըրաւ, ու պոռթկեցաւ մօտ ձայնով մը բացագանչեց .

— Տէր Կոմիտաս... մատնութեան դի – մենք :

Ու, մեքենաբար, ձեռքը վեղարին տա – րաւ, զայրոյթով մէկդի նետեց զայն ու ցոյց տուաւ իր կերպարանքը :

— Տէր Կոմիտաս անմիջապէս ճանչ – ցաւ ... ուստի մրմնջեց :

— Վանական ... :

— Դաւաճան. ո՞ւր է խիղճդ, գոչեց Վանական վրէժխնդրութեամբ լեցուած չեշտով մը :

— Ներեցէք ... թոթովեց Տէր Կոմի – տաս, Վանականին առաջը ծունկի դա – լով :

— Ի՞նչ դարձաւ քու մէջդ... աս ի՞նչ դաղափարներու ենթարկուած էք, յարեց Վանական՝ բարձր ու անվեհեր ձայնով մը : Մինչ՝ չարիքը բառնալու համար չարագործի ընկեր ըլլալու է : Մինչ կա – ռավարութիւնը մեր չահը նկատի առնե – լով պիտի աչխատի, եթէ ոչ իր չահը պի – տի փնտռէ մեր բնաչնջումին մէջ : Թխտ լաւ, մատնենք մեր եղբայրները, պատ – ժենք ու հալածենք զանոնք· բայց կը հա – ւատա՞ք որ այդ կերպով դերութեան չըլ – քան մեր վզին վրայ աւելի չենք ծանրա – ցներ... : Կը հաւատա՞ք որ Համիտին ծրագիրը գործադրած չենք ըլլար :

(Շար.)

ՄԻՏՔ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ

ՄՈԼԻԵՐԻ ԾՆՆԴԵԱՆ 340ԱՄԵԱԿԸ

Յունուար 15ին, Ֆրանսայի Ազդային Թատրոնը (Քոմետի Ֆրանսէզ) ոչկո – չելու համար ծննդեան 340ամեակը մեծա – նուն Մոլիերին, պիտի ներկայացնէ անոր «Ագահը», բեմադրութեամբ Ժաք Մո – լիէրի :

Մոլիերի ղլուխ գործոցը համարուող «Ագահ»ը առաջին անդամ ներկայաց – ուած է 9 Սեպտեմբեր 1668ին, Փարիղի Փալէ Ռուայալի բեմին վրայ, ուր հեղի – նակը ինքը անձնաւորած է խաղին հերո – սին՝ Արփակոնի դերը :

Սկիղբները, Մոլիերի այս գործը պաղ ընդունելութիւն գտած է ժողովուրդին մէջ , որ ընտելացած ըլլալով հանճա – րեղ հեղինակին տաղաչափեալ գործե – րուն, հինդ արարուոց այս արձակ երկը գտած է չափազանց ժլատն եւ դրեթէ տաղտկացուցիչ : Իր հրապարակ գալու օրէն ետք, տաղիս քանի մը անդամ կը ներկայացուի «Ագահը», մինչեւ որ ժո – ղովուրդը լայնօրէն կ'ընտելանայ գործին ու կը սկսի սիրել զայն : 14 Դեկտեմբեր 1668ին կը վերսկսին «Ագահը»ի ներկա – յացումները եւ մինչեւ հեղինակին մահը՝ (17 Փետրուար 1673) կը ներկայացուի ան քառասուն եւ աւելի անդամներ :

Իսկ այսօր, «Ագահը» կը համարուի լորուին Հ· Մ· Ը· Մ·ի չուրջ : Հ· Մ· Ը· Մ·ի վարիչները խանդավառութեամբ նը – ւիրուած են այս գործին : Վստահ են որ պիտի յաջողին միութեան վարկը եւ յար – դը բարձրացնելու :

Անոնք որոշած են միանդամընդմիչտ ա – դատել մարզիկները սրճարաններու մէջ ժողովներէ : Հանդանակութիւններով ու նուիրատուութիւններով պիտի կարողա – նան պահել հսկայ սրահ մը, որ պիտի կոչ – ուի Մարսէյլի Հ· Մ· Ը· Մ·ի Տունը : Բոլոր հայ կազմակերպութիւնները պիտի օգտուին Հ· Մ· Ը· Մ·ի ձեռնարկներէն : Ահաւասիկ ուրախ լուրեր Մարսէյլի Հ· Մ· Ը· Մ·էն :

× Կիրակի, 14 Յունուար, Հ· Մ· Ը· Մ·ը իր մարզադաչտին վրայ կը կատարէ ախոյենական դարձի առաջին մրցումը , Ա· Ս· Էէթբրիտիթէի դէմ : Այս ան խում – բըն է որ Հ· Մ· Ը· Մ·ը պարտութեան մատնեց առաջին երթի խաղարկութեան ընթացքին, օգտուելով մերոնց անփոր – ձութենէն : Այս անգամ կը յուսանք որ մեր կորովի մարզիկները իրենց գեղեցիկ խաղարկութեամբ չարաչար պարտու – թեան պիտի մատնեն :

Կը խնդրենք յարգոյ հասարակութե – նէն, որ բնաւ չմիջամտեն դատաւորին տուած որոշումներուն մէջ, եթէ նոյն իսկ անոնք անիրաւ ըլլան : Հ· Մ· Ը· Մ·ի վարիչները պէտք եղած բոլոր միջոցները առած են :

Վ· ՇԱՄԼԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ

ՅՈՒՅԱՀԱՆԴԷՍ

— Ցայտնի երաժչտագէտ, խմբավար եւ երգահան Սպիրիտոն Մելիքեանի ծննդ – եան ութսունամեակին առթիւ ցուցահան – դէս մը կազմակերպուած է Երեւանի պե – տական պրազարանին մէջ :

Ներկայացուած նիւթերը կը խօսին Մե – լիքեանի կեանքին եւ գործունէութեան մասին : 1912ին Թիֆլիսի մէջ կը հիմնէ « Հայկական երաժչտական ընկերու – թիւն»ը, որ կարեւոր դեր խաղայ հայ ե – րաժչտութեան կեանքին մէջ : Մինչ կոչ – մէ հաւաքած եւ մչակած է ժողովրդական աւելի քան հազար երգեր : Այդ մասին կը պատմեն Մելիքեանի «Դասագիրք երգե – ցողութեան», «Վանայ ժողովրդական եր – գեր», «Շիրակի երգեր», «Հայ ժողովր – դական երգի ձայնաչար» եւ այլ աչխա – տութիւններ :

Մոլիերի ամէնէն չատ ներկայացուած գործը : Արդարեւ 1680էն մինչեւ 1954 թուականը 1926 անդամ բեմադրուած է ան :

Արփակոնի տիպարը, որ Մոլիերի ըս – տեղծած տիպարներուն ամէնէն համաչ – խարհայինը եւ մարդկութեան օրինակ ծառայողը հանդիսացած է, բնական է Ֆրանսայի մէջ ունեցած է արժանաւոր մեկնարկողներ, սկսած հեղինակէն իսկ : Մեր օրերու Ֆրանսացի լաւագոյն Արփա – կոններէն մին է Քոմետի Ֆրանսէզի դե – րասաններէն Ժոռժ Շամարա, որուն վի – ճակուած է Մոլիերի անմահ տիպարին մեկնարկութիւնը՝ Յունուար 15ի ոգեկոչ – ման ներկայացման ընթացքին :

Ֆրանսական երկու ուրիշ բեմերու վը – րայ եւս պիտի երեւին Արփակոններ՝ այս օրերուս :

Առաջինը՝ Ֆրանսացի դերասան Ժաք Տիւֆրէնօ Ա֊ԹԸԼիէի բեմին վրայ, իսկ երկ – րորդը՝ Ժան Վիլար՝ Ազգային Ժողովր – դական Թատրոնին մեծանուն դեկավարը, Փալէ տը Շայոյի բեմին վրայ :

Բնական է, բազմաթիւ ազգերու թատ – րոնները իւրացուցած են անմահ Մոլիերի այս նոյնքան անմահ տիպարը :

Հայ Թատրոնը անմասն չէ մնացած այդ պատիւէն :

Արդարեւ, մօտաւորապէս դար մը ա – ռաջ, խաւարակուռ Թուրքիոյ խորերը , Պրուսայի մէջ, Թումաս Թաուլիճեան բեմադրած է Մոլիերի գործերը եւ հայ բեմը ունեցած է իր անստգիւա Արփակո – նը, յանձին դերասան Դաւիթ Թրեանցի :

Աւելի ուշ, հայ բեմերու վրայ Արփա – կոնով փայլած է դերասան Արմէն Ար – մէնեանը, ներկայիս Հայաստանի մէջ՝ ինքնուսնամեայ :

ԿԱՐԴԱՑԵՔ ՏԱՐԱԾԵՑԵՔ «ԾԱՌԱՋ»ԸՀ

ԹԻԱՊԱՐՏԸ

(ՎԷՊ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿԵԱՆՔԷ)

ԳՐԵՑ

ԱՐՄԷՆ ՇԻՏԱՆԵԱՆ

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

— Կեցէք... իմացածիս նայելով՝ այդ Առաքել էֆէնտի ըսած մարդերնիդ մատ – նած է եղեր Կեմ զեղի ուսուցիչը, սո՞ւտ է ասիկա :

— Կեմ զեղի ուսուցիչը կը ճանչէ՞ք , հայր սուրբ :

— Ոչ ... միայն թէ անունը լսած եմ :

— Ուրեմն հաւատացէք որ այդ ուսու – ցիչը մատնութեան արժանի էր :

— Պատճա՞ռը :

— Նախ՝ վանքերու հասոյթները կտրել տուած էր, այնպէս որ «Պոդի» հաւաքող վարդապետները սկսան հալածուիլ, նա – խատուիլ ու զեղերու մէջէն վռնտուիլ . յետոյ զեղացիները համոզած էր որ զէն – քեր գնեն ու կառավարութեան օրէնքնե – րուն հակառակին .

— Ա՞յդ է բոլորը :

— Այո :

— Բարեկամ էիք Առաքել էֆէնտիին հետ :

— Շատ մօտէն ;

— Կին, զաւակներ ունի՞ :

— Կին մը ունի, որ բաւական առեղծ է վեր անյայտ եղած է ;

— Ի՞նչպէս անյայտ եղած է :

— Կը կասկածուի թէ կինն ալ չարա – չար սպաննուած ու հետքը կորսուած է :

— Տխուր բան ... ամբողջ քաղաքը սարսափելի դրութեան մը մէջ է, Տէր եղբայր, չիտակը՝ իրաւունք ունիք այդ խռովարարներուն հակառակիլ... դիմա – նալու բան չէ :

Տէր Կոմիտաս սիրտ առաւ ու աւելի լայնօրէն բացաւ իր հոդւոյն մթին վար – ղոյրը՝ պատկերացնելու համար անոր ամբողջ զարչութիւնը : Ուստի, ամենայն համարձակութեամբ յայտնեց .

— Այո, մեր ամէնուս պարտականու – թիւն է աղդային գոյութիւնը վտանգող չարիքին հանդէպ նետուիլ ու չխղդուլ որ աղէտը յառաջանայ : Մեր ժողովուրդը կը նմանի ոչխարի մը , որ ամէն ձայնի, ամէն ստուերի եաեւէն կ'երթայ : Բռնենք անոր ձեռքէն ... գոյց տանք իր առջին բացուած անդունդը : Թող չխաբուին : Ապագայ չարիքը իր կորուստն է, որ ան – հոդի զոհ պիտի տանք ու մեր նպատակին խուսափելի կը դառնայ : Բայց եթէ կա – ռավարութեան ալ դիմել հարկ պիտի ըլ – լայ... ի՞նչ ընենք... կան պարագաներ որու մէջ կը զոհուին մարդիկ ... :

— Եթէ կառավարութեան յանձնել հարկ ըլլայ , պիտի կրնանք ընել :

— Ինչո՞ւ չէ... առանկով մէկ երկու ալ պիտի հասնինք :

— Զէ՞ որ ժողովուրդը պիտի չհասկը – նայ մեր ընթացքը... չէ՞ որ պիտի կար – ծուի թէ մեր կոչման հակառակ կը վար – ուինք :

— Այդպէս է· բայց հոգեւոր իշխանու – թեան պաչտօնեայ մը կարող է զաղանի գործել ու գոյց չտալ իր դերը : Դիցուք թէ խլրտում մը կը նշմարեն այս ար – ուարձանին մէջ... առանց կասկածի տե – ղի տալու, տեղական ոստիկանութեան կ'իմացնեմ ... ու կը վերջանայ ամէն բան : Ո՞վ պիտի թէ քահանան է կամ վարդապետը : Նոյնպէս «պոդի» հաւաքող վարդապետ մը կարող է ծածուկ կերպով ամէն միջոց գործածել ու յաղթիլ :

Վարդապետը կը խղդուէր : Ցայտնի բան էր որ խղճի մը չարչրկումներու ներքեւ կը գտնուէր, յայտնի բան էր որ անզուսպ ու վրէժխնդրական տրամա – դրութիւն մը կը թելադրէ զինքը ... մէկ խօսքով, յայտնի բան էր որ սարսռալի ու հրատապ պարբերութիւն մը իր կո – կորդը կը ճզմէր : Նստած տեղէն ակա – մայ չարժում մը ըրաւ, ու պոռթկեցաւ մօտ ձայնով մը բացագանչեց .

— Տէր Կոմիտաս... մատնութեան դի – մենք :

Ու, մեքենաբար, ձեռքը վեղարին տա – րաւ, զայրոյթով մէկդի նետեց զայն ու ցոյց տուաւ իր կերպարանքը :

— Տէր Կոմիտաս անմիջապէս ճանչ – ցաւ ... ուստի մրմնջեց :

— Վանական ... :

— Դաւաճան. ո՞ւր է խիղճդ, գոչեց Վանական վրէժխնդրութեամբ լեցուած չեշտով մը :

— Ներեցէք ... թոթովեց Տէր Կոմի – տաս, Վանականին առաջը ծունկի դա – լով :

— Ի՞նչ դարձաւ քու մէջդ... աս ի՞նչ դաղափարներու ենթարկուած էք, յարեց Վանական՝ բարձր ու անվեհեր ձայնով մը : Մինչ՝ չարիքը բառնալու համար չարագործի ընկեր ըլլալու է : Մինչ կա – ռավարութիւնը մեր չահը նկատի առնե – լով պիտի աչխատի, եթէ ոչ իր չահը պի – տի փնտռէ մեր բնաչնջումին մէջ : Թխտ լաւ, մատնենք մեր եղբայրները, պատ – ժենք ու հալածենք զանոնք· բայց կը հա – ւատա՞ք որ այդ կերպով դերութեան չըլ – քան մեր վզին վրայ աւելի չենք ծանրա – ցներ... : Կը հաւատա՞ք որ Համիտին ծրագիրը գործադրած չենք ըլլար :

(Շար.)

ՅԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

Կապոյտ Խաչի Անկէնի մասնաճիւղը իր խորին ցաւակցութիւնը կը յայտնէ Պ. Ռուբէն Ա. Գիւլխանդանեանի, իր սիրելի մօր՝ Տիկին Հայկանոյշ Գիւլխանդանեանի զառնակսկիծ մահուան առթիւ։ Ող – բացեալը 1932ին ի վեր Անկէնի մասնա – ճիւղի կազմութեան հիմնադիրներէն էր եւ մինչեւ վերջը մնաց հաւատարիմ ան – դամուհի ։

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Այրի Տիկին Հայկանուշ Քիւրքճեան եւ զաւակները կը ծանուցանեն թէ հոգե – հանգստեան պաշտօն պիտի կատարուի ի – րենց ամուսնոյն եւ հօր՝

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՔԻՒՐՔՃԵԱՆԻ

մահուան քառասունքին առթիւ, ինչպէս նաեւ Քիւրքճեան եւ Զէյլպէկեան գեր – դաստաններու համայն ննջեցեալոց յիշա – տակին, այս Կիրակի առաւօտ Փարիզի Ս. Յովհաննէս Մկրտիչ եկեղեցւոյ մէջ։

Կը հրաւիրուին յիշատակը յարգողնե – րը ։

×

Սէն Շամոն։ — Պ. Գրիգոր Այանեան, *զաւակները եւ ընտանեկան բոլոր պարա – գաները կը ծանուցանեն թէ, այս Կիրակի 14 Յունուար, հայկական մատրան մէջ, յետ պատարագի կը կատարուի հոգեհան – գստեան պաշտօն՝ ՄԱՐԻ ԱՅԱՆԵԱՆԻ եւ ԿԻՒԼՊԷՆԿ ԳԱԼԱՅՃԵԱՆԻ մահուան առա – ջին տարելիցին առթիւ։*

Կը հրաւիրուին ողբացեալներուն յիշա – տակը յարգողները։

ԱՄԱՆՈՐ

Իսիի Խրիմեան վարժարանի ամանորի հանդէսը այս Կիրակի ժամը 13·30ին, վարժարանին մէջ ։

Աշակերտութեան կողմէ պիտի ըլլան երգեր, արտասանութիւններ, եւ «ԿԱ – ՂԱՆԴ ՊԱՊԱՆ ։

Իսիի զաղութէն կը խնդրուի ներկայ գտնուիլ սոյն հանդէսին, ճշդապահ ըլ – լալով ։

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԸ Կ'ԵՐԳԵՆ

ՄԱՐՏ 18ԻՆ

ԵԹԷ 4000 ՀՈԳԻԷՆ ԱԻԵԼԻ ՎԱՅՐԻ ՄԸ ՄԷՋ։ ՊԱՏԻԿ ԴՐԱՄԱԳԼՈՒԽ ՄԸ ՈՒՆԻՔ ԵՒ ԼԱՒ ՏԵՂ ՄԸ՝ ԽԱ – ՆՈՒԹ ՄԸ։

ՏԵՂԵԱՒՈՐԵՑԷՔ

Pressing Automatique

ՄԸ

Եւրոպական առաջնակարգ *մաքե – րիչով*։ Մեծ եկամուտ։ Ոչ մէկ *սթոք*։ Հաճելի աշխատանք։ Վճա – րումի մեծ դիւրութիւններ ։ Մեր միջոցաւ բացատրութիւններ եւ լու – սաբանութիւններ ։

Տեղեկութեանց եւ Տրվիի համար դրել ։–

Aïvazian

93, Rue Massena,

LYON 6e

FOURRURES

Roger YOPIAN

PRIX INTERESSANTS

NEUF et REPARATION

84, Boulevard de Stalingrad, 84

— CHOISY-LE-ROI (Seine) —

Autobus : de la Porte de Choisy, descendre 3 Communes ou Rue du Docteur-Roux.

ՊԱՏԱՐԱԳ ՓԱՐԻԶԻ ՄԷՋ

Փարիզի Ս. Յովհ. Մկրտիչ եկեղեցւոյն մէջ, այս Շաբաթ, Անուանակոչութեան օրինն առթիւ պիտի մատուցուի Ս. պա – տարագ, ժամը 10ին։

Ցաւարտ պատարագէ Դպրաց Դասը եւ քահանայ հայրերը մասնաւոր թափօրով պիտի առաջնորդուին եկեղեցւոյ խորհր – դարանը եւ պիտի կատարուի Տճօրհնէքի արարողութիւնը, նախագահութեամբ Հայրապետական պատուիրակ Գերաչնորհ Տէր ՍԵՐՈՎԲԷ ԵՊԻՍԿ. ՄԱՆՈՒԿԵԱՆի ։

Կիրակի քառաճաշն Ս. պատարագ ժա – մը 10ին։ Հայ հասարակութիւնը կը հր – աւիրուի ներկայ գտնուիլ ։

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ՍԵԲԱՍՏԻՈՑ Մուրատ Ուս. Միութեան Մարսէյլի մասնաճիւղի ընդհ. ժողովը այս Կիրակի, ժամը 15ին, Պառ տիւ Կլոպ սրահին մէջ։ 7 Պալվ. տ'Ալբէն ։ Օրա – կարգ՝ բացառիկ խորհրդակցական ընդհ. ժողով, կեդրոնէն ստացուած նոր նամակի մը առթիւ։ Խիստ կարեւոր է բոլորին ներկայութիւնը ։

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Հ. Բ. Ը. Միութեան
ՏԱՐԵԿԱՆ ՊԱՐԱՀԱՆԴԷՍԸ
ՓԵՏՐՈՒԱՐ 18ԻՆ

×

Հ. Յ. Դ. Նոր Սերունդի Իսիի Խանա – սոր խումբի գեղարուեստական եւ պա – րանոցիկ երեկոյթը Իսիի մէջ, փետր. 10ին։

×

Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ

Ծննդեան 1600ամեակը համազգային շուրջով կը տօնուի Մարսէյլի մէջ։

Փետրուար 18ին, Կիրակի կէսօրէ ետք, Քաղ տ'Իթալիայի չքեղ Թատրոնին մէջ։

Կ'ՈՒԶՈՒԻ

Հայ երիտասարդ մը, որ փափաքէր արտածումի եւ ներածումի կարեւոր գոր – ծի մը մէջ ապագայ ունենալ ։

Ներկայանալ ամէն օր՝

Յ. ՓԱՓԱԶԵԱՆ հաստատութիւն,

3a, Rue Lafayette, MARSEILLE

JACQUES TORANIAN

Agent Immobilier

Assureur Conseil.

Ձեզի պիտի ընդունի ամէն օր իր գրասենեակը

RIVE GAUCHE IMMOBILIER

42, *Bld. Arago — Tél. : POR.* 93–94

կամ ձեզի կ'այցելէ ժամադրութեամբ

ՓԱՎԻՅՈՆՆԵՐՈՒ, ՅԱՐԿԱԲԱԺԻՆ – ՆԵՐՈՒ, ՇԷՆՔԵՐՈՒ (fonds-փրոփրիէ-թէ) ՀՈՂԵՐՈՒ, ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՅԱՐԿԱԲԱԺԻՆՆԵՐՈՒ, ԽԱՆՈՒԹՆԵՐՈՒ, ԱՌՈՒՆԴԱԽի ձեր բոլոր խնդիրներուն համար

Expertise Gratuite

Ձեր տրամադրութեան տակ է նաեւ բոլոր ապահովագրութեանց համար

Auto
Incendie
Dégâts des eaux
Vie

— PRIX ETUDIES —

Tous risques assurés

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՕՐԸ

Ֆ. Կ. Խաչի Կրընոպլի մասնաճիւղը կը տօնէ, Մանուկներու Օրը, Կիրակի, 14 Յունուար, կէսօրէ վերջ ժամը 3ին, Սալ Սէն Լուի (Րիւ Ժէ)։

Խմբերգ, տրամախօսութիւն, մենախօ – սութիւն, արտասանութիւն եւ մանկա – կան անակնկալներ ։

Ըստ աւանդութեան՝ ԿԱՂԱՆԴ ՊԱՊԱՆ պիտի բաժնէ մրգեղէնները, առանց բա – ցառութեան բոլոր սրահի ներկայ տղա – յոց ։

Կը խնդրուի Կրընոպլի, Լանսէլի, Ռէ – նաժի եւ Ֆիլքօռի բոլոր հայրենակիցնե – րէն իրենց ներկայութեամբ քաջալերել զպրոցին մանուկները ։

×

ՊՕՄՈՆԻ ՄԷՋ

Կապոյտ Խաչի մասնաճիւղը Մանուկնե – րու Օրը կը տօնէ այս Շաբաթ, կէս օրէ վերջ, Սահակ – Մեսրոպ սրահին մէջ, զպրոցի երեկոեւ աշակերտութեան կող – մէ պատրաստուած դեղարուեստական բաժինով մը ։

×

ՎԻԼՆԻ ՄԷՋ

Կապոյտ Խաչի մասնաճիւղը Մանուկ – ներու Օրը կը տօնէ այս Կիրակի կէսօրէ վերջ ժամը երեքին, Սէրքլը Կաթոլիկի սրահին մէջ ։

Գեղարուեստական բաժին զպրոցի ա – շակերտ – աշակերտուհիներու կողմէ ։ Երգ, արտասանութիւն եւ պարեր ։

Աւանդական կաղանդ Պապան իրեն նը – ւէրներով պիտի ուրախացնէ մանուկնե – րը ։

Ֆ. Կ. ԽԱՉԻ ԱՆԻԷՌ – ՊՈՒԼՈՒՕՐԼՈՄՊԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԻ ՏԱՐԵԿԱՆ ԹԷՅԱՍԵՂԱՆԸ

Անիէռի թաղապետարանի սրահին մէջ ՍաՆքր Ատիճինքսթրաքթիֆ է Սոսիալ ։

Այս Կիրակի, ժամը 15էն 20։

Կը հրաւիրուին Փարիզի եւ շրջաններու ընկերուհիներն ու համակիրները ։

Գեղարուեստական ճոխ բաժին եւ անա – կընկալներ։

Մուտքը ազատ է ։

Հ. Յ. Դ.

ՓԱՐԻԶ.— *Հ. Յ. Դ. Շրջ. կոմիտէն ներկայացուցչական ժողովի կը հրաւիրէ Փարիզի եւ շրջանի մարմիններու ներկա – յացուցիչները այս Շաբաթ երեկոյ ժամը 8·30ին, Մշակոյթի Տան սրահին մէջ ։ Կարեւոր օրակարգ։ Շրջ. ժողովի օրա – կարգի քննութիւն ։*

ԼԻՈՆ.— *Հ. Յ. Դ. Վարանդեան կոմի – տէն ժողովի կը հրաւիրէ բոլոր ընկերնե – րը այս Կիրակի, կէսօրէ վերջ ժամը 3ին, 101 Ավընիւ տը Սաֆսի սրճարանի ներք – նասրահը ։ Կարեւոր օրակարգ ։*

ՎԱԼԱՆՍ.— *Հ. Յ. Դ. Շրջ. կոմիտէի ընկերական ընդհ. ժողովը, այս Շաբաթ, ժամը 20·30ին, Ահարոնեան ակումբը ։ Շատ կարեւոր օրակարգ։ Բոլոր ընկեր – ներուն ներկայութիւնը պարտաւորիչ է ։*

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՑ

Հ. Յ. Դ. Մարսէյլի Շրջ. Կոմիտէի հը – րաւիրած ընկերական ժողովներու ։—

Հ. Յ. Դ. Մարսէյլի Շրջ. Կոմիտէն՝ ստիպողաբար ընկերական ընդհ. ժողովի կը հրաւիրէ հետեւեալ ենթակոմիտէնե – րու եւ խումբերու անդամ ընկեր – ընկե – րուհիները։

ՎԱՐԱՆԴԵԱՆ խումբ՝ 15 Յունուար, երկուշաբթի, ժամը 21ին։

ԳԷՈՐԳ ՋԱՎԱՇ խումբ՝ 20 Յունուար Շաբաթ, ժամը 21ին։

ՄՈՒՐԱՏ խումբ՝ 21 Յունուար, Կիրա – կի կէսօրէ ետք, ժամը 15ին։

ՆԻԿՈԼ ԴՈՒՄԱՆ խումբ՝ 21 Յունուար, Կիրակի կէսօրէ ետք, ժամը 15ին։

ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ խումբ՝ 20 Յուն – ուար, Շաբաթ, ժամը 21ին։

Սոյն ժողովները տեղի պիտի ունենան իրենց սովորական հաւաքատեղիները ։ Խիստ կարեւոր օրակարգ։ Բոլոր ընկեր – ընկերուհիներու ներկայութիւնը պարտա – ւորիչ է ։ Վարչութիւնները նախապէս պէտք է բոլոր ընկերներուն տեղեկացնեն ժողովներու վայրի եւ թուականի մասին։ Ներկայ պիտի ըլլան Շրջ. Կոմիտէի ներ – կայացուցիչները ։

Imprimerie Spéciale du journal « Haratch »
32, Rue de Trévise, PARIS (9e)

ՄՈՒՐԱՏ ՌԱՓԱՅԷԼԵԱՆ
ՆԱԽԿԻՆ ԱՇԱԿԵՐՏԱՑ ՄԻՈՒԹԻՒՆ

ՏԱՐԵԿԱՆ ՄԵԾ ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

ՋՈՒԱՐԹ

Մայրամուտէն մինչեւ կէս գիշեր

ՋՈՒԱՐԹ ՄԹՆՈԼՈՐՏ

ԿԻՐԱԿԻ՝ ՓԵՏՐՈՒԱՐ 11, ԺԱՄԸ 17ԷՆ՝24

AMBASSADEURS

3, Ave. Gabriel, 3

ԵՐԳ ՈՒ ՊԱՐ

ՄԵԾ ՆՈՒԱԳԱԽՈՒՄԲ

Attractions *ԽԱՂԵՐ* **Bar-Buffet**



ՃԱՇԱՐԱՆ

ԵԱՐ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԹԵՒԱՆԵԱՆ

Եւրոպական, հայկական եւ կովկասեան ընտիր ճաշեր ։

Առաջնակարգ կովկասեան խորոված – ներ, շաշլիֆ, խարսխի ։

ՀԱՃԵԼԻ ՄԹՆՈԼՈՐՏ

Bar Américain

AU CŒUR MÊME DES CHAMPS-ELYSÉES

4, RUE ROBERT-ETIENNE
(Rue Marbeuf) PARIS - 8e
Téléphone : BAL. 31-21
Métro : F. D. Roosevelt

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Նախաձեռնութեամբ Կապոյտ Խաչի Ալֆորվիլի մասնաճիւղին ։

Յունուար 27, Շաբաթ, ժամը 20·30ին, Մեզոն Ալֆորվիլի Սալ տէ Ֆէթին մէջ։

Առնուիլի Թատերախումբը կը ներկայացնէ՝

ԱՇԽԱՐՀԻ ԴԱՏԱՍՏԱՆԸ

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

Le PREMIER QUOTIDIEN ARMENIEN en EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction et Administration : 32, Rue de Trévise - PARIS-9e

Fondé en 1925 — Téléph. : PRO. 86 - 60

R. C. Seine 57 A 2731 — C. C. P. Paris 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա՝ Տար. 50 Ն. Ֆ. — Վեցամսեայ՝ 27 Ն. Ֆ.

Արտասահման՝ Տար. 60 Ն. Ֆ. — Հատը՝ 0.25 Ն. Ֆ.

ԿԻՐԱԿԻ 14 ՅՈՒՆՈՒԱՐ

DIMANCHE 14 JANVIER 1962

38ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 9304 — 38e ANNÉE — Fondateur : SCHAVARCH MISSAKIAN — ՆՈՐ ՇՐՋԱՆ, 18ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 5105

ՕՐՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՖՐԱՆՍԱՅԻ ՀՈԳԵՐԸ

« ՏԸ ԿՈՂ ԼԱՒԱՏԵՍ ԷՐ »
Կ'ԸՍԷ ԱՆԿԱՒ ԵՐԵՍՓՈԽԱՆ ՄԸ

Իզէռի նահանգի անկախ երեսփոխան էմէ Փաքէ տը Կոլին հետ տեսակցութիւն մը ունեցած է առջի օր երբ արդէն «Ա – ՀԱԿ»ի զեկոյցը հրապարակուած էր :

Այս տեսակցութեան վաղորդային , Փաքէ յաղուած մը հրատարակած է կրը – նոպլի Տօֆինէ Լիպէռէյին մէջ ուր կը յայտնէ թէ Պետութեան նախագահը դը – տած է զարմացնելու աստիճան քալ եւ պայծառատես : Երեսփոխանը կը պատմէ թէ տեսակցութեան վերջաւորութեան ան – դրադարձած են ալժերական ողբերգու – թեան եւ տը Կոլ ըսած է :— « Ֆրանսա իր ճամբան առած էր , կարծեմ Ալժ . Ա – զատ . ճակատն ալ իրը կ'առնէ » : Եւ Փաքէ կը շարունակէ , տը Կոլի խօսքերէն այնպէս կ'երեւի թէ հակառակ ամենօր – եայ փոփոխակներուն , լաւատես է ապա – գային համար : «Ամէն ինչ լաւ կ'ելլ – թայ , ըսած է տը Կոլ , որովհետեւ այդ – պէս կ'ուզէ Իշխանութիւնը » : Տը Կոլ մը – տահոգ իսկ չէ Գաղտնի բանակին նկատ – մամբ : « Իրադարձութիւն մը զոր կա – րելի էր նախատեսել եւ որ , հաւանաբար անխուսափելի է , չէզոտած է նախագահը , բայց բան չի փոխեր հիմնական հարցին որն է սերտ համագործակցութիւն մը ա – պահովել անկախ Ալժերիոյ եւ նախկին Մայր հայրենիքին միջեւ » :

Տը Կոլ եւ անկախ երեսփոխանը խօսած են նաեւ Սահմանադրութեան բարեփո – խութեանց մասին , Փաքէ հարցուցած է թէ ո՞ւր հասած են այս առընչութեամբ նախատեսուած ծրագիրները : Տը Կոլ յայտնած է թէ մտադիր է իրեն եւ իր յաջորդին համար հանրաքուէով ընտր – ութեան դրութիւնը տեղծել , կը մտածէ նաեւ բարեփոխութիւն մը Ծերակոյտին եւ Տնտեսական Խորհուրդին համար :

Ծանօթ է որ Հանրապետութեան Նա – խագահին ընտրութիւնը , հանրաքուէի միջոցաւ չատ սիրելի գաղափար մըն է տը Կոլին , բայց զարմանալի է նկատել թէ իրեն համար իսկ այդ ձեւին մասին կը խորհի :

Ինչ կը վերաբերի Ծերակոյտին եւ Տն – տեսական Խորհուրդին , տրամադրութիւն կայ ձուլելու երկու ժողովները որպէսզի « ապաքաղաքականացնէ » բարձրագոյն ժողովը եւ անոնց աւելի զբաղեցնէ արդի ժողովրդավարութեան մը չօշափելի խն – դիրներով :

Շահեկան դտնելով հանդերձ , պէտք չէ անշուշտ անդիտանալ թէ Փաքէի տեսակ – ցութիւնը տը Կոլի հետ չի կրնար մոռցը – նել տալ թէ ամէն ինչ ալ այնքան դիւրին չէ բանակցութեան մէջ : Իզէռի երես – փոխանը Նախագահը « համեմատաբար » լաւատես դտած է , մինչ ուրիշ այցելու – ներ ոչ լաւատես ոչ յոռետես կը դտնէին վերջերս : Վստահութիւն ունի իր քաղա – քականութեան մէջ , բայց յուսախաբ է տեսնելով երկու ծայրերու ծայրայեղու – թիւնները : « Այս մահմեդականներուն հետ որոնք բոլորն ալ ֆելլական են , իս – կապէս դժուար է» ըսած է վերջերս :

Փաքէ չի դրեր թէ ուրիշ բան մըն ալ հարցուցած է տը Կոլի , բայց Փարի–Փրէս կը պատմէ թէ անկախ երեսփոխանը հարց տուած է թէ ինչո՞ւ 1958ին տը Կոլ չըսաւ թէ կ'ուզէ անկախութիւն տալ Ալ – ժերիոյ : Կ'ըսուի թէ տը Կոլ պատասխա – նած է որ պէտք է բաներ հասկցնել , չէր կրնար քայքայել Ազգային միասնական – նութիւնը ցորչափ հարկ եղած յեղաշրը – չումը չէր կատարուած մտքերուն մէջ :

× Ալժէյի մէջ Գաղտնի բանակը նոր հրահանգները տուաւ : Թելադրեց Ալժէա – յիներուն որ երկու ամսուան պաշար եւ ոսկի պահեն իրենց տունը : կարգ մը բա – ներ ալ ըսած է անուղղակի ձեւով :

Անկախները որ հաւաքուած էին Խոր – հրդարանը բանաձեւ մը քուէարկեցին , ուր կը չեշտեն թէ միակ լուծումն է Փը – բանական Հանրապետութեան մէջ պա – հել Ալժերիան եւ Սահարան : Ընդհանուր բանաձեւին այս հատուածը միայն քուէ – արկութեան դրուեցաւ եւ արժանացաւ ջախջախիչ մեծամասնութեան մը՝ 12ի դէմ 179 ձայն : Անկախները դէմ արտա – յայտուեցան նաեւ Նախագահի ընտրու – թեան հանրաքուէի միջոցաւ :

Ժողովրդավարութեանց ընթացքին Անկախ – ները չեշտած են թէ որեւէ պարագայի կարելի չէ Ալժ . Ազատ . ճակատը նկատել իրրեւ միակ ներկայացուցիչը Ալժերիոյ մահմեդական բնակչութեան :

ԹՈՒՐՔԻԱ ԻՆՉՊԷՍ ՈՐ Է

Հիւր Վաթանի մէջ , «1961 Թուրքիա » խորագրով Սուպհի Ուզունճա ի մէջ այ – լոց հետեւեալը կը գրէ Պիթլիսի մասին :

— Պիթլիս չորս թաղ ունի : Ամէնէն նը – շանաւորը Իշէօնիւի թաղն է : Ոմանք Քիւրթիմ ալ կը կոչեն զայն : Իսմէթ Իշէօ – նիւի նախահայրերը այդ տեղէն կուգան : Իր պապերէն ոմանք ալ հոս պառկած են : Քիւրթիմցիս չատ կայ հոս : Ամէն մարդ Ինէօնիւն ազգական ցոյց կուտայ :

Այստեղ չէյխերը կը տիրապետեն : Շէյխերուն մարդիկը խեղճեր են , որոնք հաւաքուած են այդ աւատապետական դաղափարին չուրջ : Անոնք կուտան , չէյ – խը կ'առնէ : Աւատապետի հպատակի դրութիւն մը : Շէյխութեան դարերով չարունակուիլը աչխարհագրական պատ – ճառ մըն ալ ունի : Երկանը ցից է : Երկար տաեն , Հիզանի եւ այլ չրջանները ոչ օ – րէնք մուտք գործած է , ոչ կառավարա – կան ներկայացուցիչ : Գիւղացիները , իրրեւ միակ իչխանութիւն , իրենց գլու – խը դնոնուղ չէյխը տեսած էին : Զիւն ձմեռին ոչ մէկ փոխադրամիջոց կ'անցնի այդ տեղի ճամբաներէն , որոնք ճամբայ չեն : Որով Շէյխը աւատապետական իրա – ւակարգ մը հիմնած է հոն : Շէյխ Սալա – հատտին Պիթլիսի մէջ 12·000 ընտրողներ կը պահէ եղեր իր ազդեցութեան տակ : Շէյխ Շեֆիք ալ Մուտքի գաւառակին մէջ կը գտնուի : Այս գաւառակը միւսէն ալ ցից է եւ գժուարամերձ : Այս պատճա – ռով ալ տակաւին բանի մը Հայեր կ'ապ – րին այստեղուանիք :

Ճամբորդիչքի մէջ կը կարդանք .

« Սերհատ Արտահան» թերթը կը գրէ թէ մէկ բժիչկ իսկ գոյութիւն չունի 60 հազար բնակչութիւն ունեցող Փոսոֆ գիւղաքաղաքին մէջ որ ճիշդ սահմանա – գլուխին վրայ կը գտնուի : Ժողովուրդը միջոցը գտեր է առանց բժիչկի բուժուե – լու հիւանդութեան պարագային , բայց ոճիրներու տաեն չահագրգռուողները չատ գժուարին դիրքի կը մատնուին , ո – րովհետեւ ըստ օրէնքի անհրաժեչտ գիա – զննութիւնը չի կրնար կատարուիլ :

Անցեալները Ազարա գիւղին մէջ երկու հոգի սպաննուեր են : Փոսոֆի դատախա – զը նեղը մնալով օգնութիւն ուղեր է Ար – տահանի դատախազէն : Արտահանի դա – տախազը եւ կառավարական բժիչկը մին – չեւ Տամալ գիւղը կրցեր են երթալ : Մեռեալներուն ազերն ալ դիակները սահնակներու բեռցնելով նոյն վայրը գա – ցեր են գժուարաւ : Իրազննութիւն կա – տարուեր է , դիակները կրկին սահակ բեռցուելով ճամբայ ելեր են :

Որքան գժուար է հաւատալ թէ ոչ թէ Ափրիկէի անապատներուն , այլ Թուրքիոյ մէջ կը գտնուի անկիւն մը , ուր մեռեալ – ները անգամ վերջին ճամբորդութեան ելլելէ առաջ՝ հարիւր քիլ . տարածու – թիւն կտրել կը պարտաւորուին : Ինչքան գառն է խորհիլ թէ այդ հոգիը երեսփո – խաններ ալ ունին Ազգ . Մեծ Ժողովին մէջ , որուն անդամները ամսական 5400 ոսկի թոշակ կը պահանջեն ...

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

Պէճրոյթի մէջ ձերբակալուած է հա – րիւրապետ Շավլէի Խայրալլահ , ըմբոստ երկու սպաներէն մէկը որոնք փորձեցին տապալել Լիբանանի կառավարութիւնը :

ԵԳԻՊՏԱԿԱՆ Արտաքին նախարարու – թիւնը յուչագիր մը յանձնած է Լուչինկ – թըն , որուն մէջ կը հերքէ այն լուրերը ըստ որոնց խորհրդային կայանները պիտի ստեղծուէին Եգիպտոսի մէջ :

ՅՈՒԼԻՍ 1ԷՆ սկսեալ փարիզ – Մար – սէյլ երկաթուղին բոլորովին ելեկտրա – կանացած պիտի ըլլայ : Կառախումբին ժամական միջինը՝ 140 քիլոմեթր պիտի ըլլայ եւ ճամբորդութիւնը 7 ժամ 10 պի – տի տեւէ փոխանակ 7 ժամ 34ի :

ՓԱՓԻՍՏԱՆ չատ մտահոգ է Քաչմիրի հարցով եւ Ապահովութեան Խորհուրդին դիմեց որ անմիջապէս նիստ գումարէ :

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ Արտաքին նախարարութիւնը յայտարարեց թէ այլ – եւս անցպելիր պիտի չտրուի համայնավար Ամերիկացիներուն :

ՔԱՍԸՄ անդամ մը եւս յայտարարեց թէ քրտական ըմբոստութիւնը ճղմուած է :

ԽՐՈՒՇՉԵՒԻ մասին մանրավէպ մը պատմեց Նիւ Եորքի կառավարիչը՝ Ռոք – ֆելլէր : Երբ Խրուչչեւ Նիւ Եորք էր 1959ին , կառավարիչը ըսած է իրեն թէ քաղպքին մէջ մօտ 500 հազար ծագումով Ռուսեր կան : Գիտեմ , ըսած է Խրուչչեւ , քիչ մնացած էր որ ես ալ գայի : «Ինչո՞ւ» հարցուցած է Ռոքֆելլէր : «Որովհետեւ ամսաթոշակները աւելի լաւ են» պատաս – խանած է Խրուչչեւ :

ՄԻԿՈՅԵԱՆ որ քանի մը օրէ Աքքրա կը գտնուի այցելութիւն մը տուածէ Ն'Քրու – մահի : Խօսած են Խորհ . Միութեան եւ Ղանայի բարեկամական յարաբերու – թեանց եւ համագործակցութեան մասին :

ԽՐՈՒՇՉԵՒ որ Մինաք կը գտնուի խսա – օրէն քննադատած է Բելգոռուսիոյ երկրա – դործութիւնը :

ՕՐ ԸՍ ՕՐՆ

ԽՄԲԱԳԻՐ ԸԼԼԱԼՈՒ ՀԱՄԱՐ

— Եղբա՛յր , շարունակ կը գրէք ազգա – պահպանումի մասին , Նոր Սերունդի մա – սին : Նոր Սերունդը բռնելու համար լայն տեղ տուէք մարզական կեանքին : Ֆրան – սական թերթ կը կարդա՞ք դուք , էջերը կը լեցնեն փութպոլի մրցումներու նկա – րագրութեամբ : Դուք ալ ատանկ ըրէք : Ծօդուած կարդացող չկայ , թերթօն ո՞վ պիտի կարդայ — փութպո՛լ , փութպո՛լ , փութպոլի մասին գրեցէք ...

— Հայութիւն ըսել եկեղեցի ըսել է , գրեցէք որ ժողովուրդը եկեղեցի յանա – խէ : Հոգեպարար շարականներով եւ հո – գեշահ խարոզներով միայն կը փրկուի Հայութիւնը : Ձեր թերթը շատ քիչ տեղ կուտայ եկեղեցական արարողութեանց : Ֆաջալերելու համար՝ պէտք է գովել սարկաւագին ձայնը , պատարագիչին խարազը , խունկը , ծնծղան ...

— Ձեզի բան մը ըսե՞մ , նիւթական՛ն է հիմը ամէն բանի , ազգ , հայրենիք , ըն – տանիք նիւթական ապահովութեամբ մի – այն կը դիմանան : Դուք ազգապահպա – նում կ'ըսէք , բայց օր մը օրանց ֆաթա – լերա՞ծ էք մեր վաճառականները : Օրի – նակ , խալիի վաճառականները : Ազգային ճարտարարուեստ է խալին , ի՞նչ գիրքեր գրուած են խալիի արուեստին մասին , դուք խապար ունի՞ք , մէկ տող բան գրած չունիք ձեր թերթին մէջ :

— Ձմեռը եկաւ , ամէն մարդ կը դո – ղայ : Տաքցնել պէտք է ժողովուրդը : Կ'երեւի թէ դերձակները շատ փարա կու – տան ձեզի , հագուստի մասին կը գրէք՝ բայց ածուխի մասին գրած չունիք : Արա – լանպէկի , Օվաճրի եւ հայկական գիւղե – րու մէջ ազգ . արհեստ դարձած էր ած – խագործութիւնը : Ածուխի մասին յօդ – ուած մը գրեցէք , եղբայր , մէկ անգամ սխալեցէք եւ ածուխը փառաբանեցէք ...

— Հայկական կերակուրներու մասին գրած ունի՞ք : Այսի՞նչ ազգասիրութիւն է , կը ծուլուիլիք կոր եւ մտածած չունիք հայկական *տոլմայի* մասին :

Վերջապէս , մենք որ նստած ենք գրա – սեղաններու առջեւ , կը նմանինք այն ա – շակերտներուն , զորս վարժապետը կը յանդիմանէ՝ երբ լաւ սորված չեն իրենց դասը : Ամէն մարդ ներս կը մտնէ՝ խմ – բագրութեան դաս կուտայ :

Կօշիկ ծախողը կ'ուզէ որ թերթը լեց – ուի միայն կօշիկաբանութեամբ : Պտղա – վաճառը կ'ուզէ որ տանձի մասին գրը – ուի : Եթէ Հայ մըն ալ ... ջուր ծախելու ելլէ , կ'ուզէ որ ամբողջ ազգը ջուրի մա – սին խօսի :

Մէկը կ'ուզէ որ սինեմայի մասին շատ գրուի : Ուրիշ մը ... ձիարշաւներու մա – սին : Երրորդ մը՝ պարահանդէսներու մասին :

— Լուրը ի՞նչ պիտի ընենք , ձայնաս – փիւռէն կը լսենք արդէն :

— Յօդուածը ի՞նչ պիտի ընենք , ռնիր – արկած պատմեցէք մեզի :

Ա՛լ կրնաք երեւակայել խմբագիրին վի – ճակը : Որո՞ւն ուզածը տայ :

Այս ամէնուն մէջ՝ կատակերգականը ո՞րն է , գիտէ՞ք : Բոլորն ալ խմբագրու – թիւն կը սորվեցնեն , դաս կուտան :

Այս արհեստատրներէն մէկը , վարսա – վիրայ , երբ անցեալ օր՝ իր խանութը մտայ եւ մազերս կտրած ժամանակ դի – տողութիւն մը ըրի , սաստեց զիս .

— Ինծի ճայէ , ինծի , ես հասարակ սափրիչ մը չեմ , տարիներով կատարելա – գործած եմ արհեստս եւ արուեստի վե – րածած :

Ըսել ուզեց .

— Խմբագի՛ր , գրիչը վերցուր ու գրէ , սորվելիք բան կա՞յ միթէ : Ամէն մարդ խմբագիր է , բայց ... սափրիչ ըլլալու համար՝ պէտք է սափրիչ ծնիլ եւ տարի – ներով *սթաժ* ընել :

Երէկ *տիվիթ* մը պէտք էր , այսօր՝ գը – րիչ մը , խմբագիր ըլլալու համար : Բայց արհեստատո՛ր ըլլալու համար ...

Գնա կորսուէ , վարժապետ *խաֆալը* ...

ԱՐԱՋ

ԱՆՈՑՇ ՀԱՅԱՍՏԱՆ

Թողի երկիրն իմ հայրենի ,
Գացի մինչեւ Իրան ու Հինդ ,
Տեսայ մարդիկ չորս գլխանի ,
Տեսայ հազար աղէտ ու խինդ :

Հասայ մինչեւ չին ու մաչին ,
Հասայ մինչեւ Ծովը Ճերմակ ,
Տեսայ երկրի ծայրը վերջին ,
Եւ դրախտի դուռը կըրակ :

Հազար անգամ ծագեց արեւ ,
Ու մայր մտաւ հազար անգամ ,
Տեսայ ծառեր հրատերեւ ,
Տեսայ ակուիճ արեգական :

Եւ փերիներ՝ ճիճուշ ու սեւ ,
Աչերը բոց , իրենք խաւար ,
Եւ փերիներ տեսայ թեթեւ ,
Փրփուրի պէս ճերմակ ու վառ :

Բոլորը ծո՛ւխ , բոլորն աւա՛զ ,
Բոլորն աւար ջրին , քամուն ,
Չկայ ճեզնից գերիչ երազ ,
Իմ Հայաստա՛ն , անոյշ անուն :

ՎԱՀԱՆ ՏԻՐԵԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՐԱԹՈՆԸ

(Ր. եւ վերջին մաս)

Այսպէս է, ա՛յս իրաւունքով եւ ա՛յս պատճառաբանութեամբ, որ կը կոուի Հ. Ց. Դաշնակցութիւնը եօթանասունեւմէկ տարիներէ ի վեր: Կը կոուի եւ տարիները կ'անցնին, բայց կը մնայ երիտասարդ: Ծերը ե՛ս եմ, որ ցաւերս զրկած՝ զրնէ մխայն կը չարժէմ: Ծերը ա՛յն է մանաւանդ, որ հաւատքը կորնցուցած, զար – ձած՝ դասալիք, զրուժան, ուրացող, կը վարկաբեկէ Հ. Ց. Դաշնակցութիւնը, քցփոխիկ զործերու մէջ զանելով իր ան– հատի եռանդին կամ փառասիրութեան զոհացումը:

Ո՞նչ պիտի ըլլար մեր ժողովուրդին վի– ճակը, կը հարցնեմ ես ինծի՝ երբեմն, ե– թէ զոյութիւն չունենար այս ըմբոստ կազմակերպութիւնը, որ վարժութիւն չունի ըսելու .

— Այո՛, այո՛, Տիար Բարեզործական:

— Հրամանքդ, ընկեր Մոսկով:

Այս կազմակերպութիւնը այն փառք – մուրացողը չէ, որ տասը տարին անգամ մը յորելեան կը սարքէ իր չունեցած կա– րողութեանց ի վարձատրութիւն, կամ տարեդարձ կը ծօնէ՝ սզզային որեւէ օգտակարութիւն չունեցած իր տարինե – րուն հոլովոյթին ի ցուցադրութիւն: Լի– բանանի հարիւրամեայ մայրիները տարե– դարձ կը ծօնե՞ն մինէ, չուզելով յիշե – ցնել ցաւը այն ազգասաններուն, որոնք կը– նային կրակ վառելու օգտագործել ան – պէս, զօսացած եւ երիցացած տարիքոտ ծառերը:

Հ. Ց. Դաշնակցութիւնը կ'ապրի եւ իր երկարակեցութեամբ հպարտ՝ կը յայ – տարարէ.— կա՛մ եւ կը մնամ ,որպէսզի ըսեմ թէ այս աղգին արիւնը կամ քըը – տինքը ծախու չէ երեսուն խուրուչով:

Ահաւասիկ, սակայն, այս մեծ ծա – ռին է որ քար կը նետեն կարգ մը սուա– հակներ, կը ջանան ճղաքանց ընել՝ չար– ժելով իրենց կեզտոտ ջալոտը: Այս մեծ ծառին բունէն վրիժած, թափած, փտած կեղեւներ թող խշրատ՛ն, թող ազմկե՛ն, ի՞նչ վտյթ,— ոչինչ կը չահին՝ ջանալով վարկաբեկել, միշտ պիտի մնան սակայն ազգի կոխան:

Սիրելի հայրենակիցներ,

Երբ մէկը կը վարկաբեկէ իր հարա – զատները, մայրը կը պատասխանէ ա – ւանդական անէծքով.

— Հարա՛մ ըլլայ առած կաթս:

Հայութիւնը, մեր հասարակաց մայրը, նոյն անէծքն է որ կը կրկնէ բոլոր ա – նոնց հասցէին, որոնք այսօր կ'աշխատին վարկաբեկել Հ. Ց. Դաշնակցութիւնը՝ ա– բիւնով հարազատ, զաղափարով հարա – զատ, խոչալով հարազատ, վաստկի Հ.Ց. Դաշնակցութիւնը կազմակերպութիւն մըն է նախ եւ առաջ մեզմէ ծնած, մեզմով ծնած, մեզմով ազած, կնքուած՝ Հա՛յ ինչպէս մենք: Դեռ աւելին.—

Հայոց Պանթէոնը մխուռնով կնքուածը չէ որ կ'ընդունի, այլ այն որ կնքուած է արիւնով: Արեամբ կնքուած այս հայ կազմակերպութիւնն է որ Պանթէոնին է տուեր փետայիներ, ուսուցիչներ, զրա – դէտներ, վարդապետներ, մայրեր, ո – րոնք կը կազմեն Հայութեան փառքը: Ա– նոնք կոուեր են Հ. Ց. Դաշնակցութեան դրօշն ի ձեռին, վրան զրուած միայն. « Մահ կամ ազատութիւն»:

Նոյն տիլէմը չկրկնեցի՞ս միթէ եղիչէի հերոսները: Երբ Վարդանանքը կը փա – ռաբանէք, ինչո՞ւ կը պարսաւարանէք Դաշնակուներքը: Շա՞տ է Դաշնակցու – թեան պահանջը: ԸՀ, ըսէք, ինչո՞վ ա – ւելի բարձր ենք Զուլոնեըէն կամ Պա – լումպանեըէն:

Վա՛յ ձեզ, հակառակորդներ, «որ զմժ– զուկս քամէք եւ զուզաս կլանէք», վա՛յ ձեզ որ զուրկ էք մարդկային նուազագոյն յարգանքի զգացումէն եւ կ'անարգէք ձեր նահատակները: Անոնք չինական խալի փախցնելու համար մաքսատունէն կամ ոսկի – ազամանդ, ոչ ալ Բարեզործակա– նի բանալիները պահելու համար իրենց մօտ, այլ միայն՝ կարենալ երդելու հա– մար աշխարհի դիմաց.

Հայ ապրինճ, եղբարք, մարդկութեան մէջը,

Հայ կնճեր է մեզ պատմութեան էջը:

Եւ Հայ ապրելու համար, որպէսզի Հայ ապրինք մենք, ինկան անոնք պատուոյ դաշտերուն վրայ:

Հ. Ց. Դաշնակցութեան Օրը կը ծօնուի արծարծելու համար այդ նահատակնե – րուն յիշատակը:

Այս երեկոյ, ես, զրչի զինուոր եւ ի – տէալի ընկեր, երբ կը խորհիմ այս մեծ կազմակերպութեան նահատակներուն մասին, երեւակայութեանս առջեւ կը պարզուի Մարաթոնի դաշտը:

Ես տեսած եմ այդ դաշտը:

Տասը քիլոմեթր երկարութիւն ունի Մարաթոնի դաշտը, հինգ քիլոմեթր լայ– նութիւն, ու կիսալուսնի մը ձեւը: Գո – դաւոր մասը ծովն է որ կը կազմէ, — կոնակը լեռները:

Այս դաշտին մէջ է որ 490 թուականին (Ն. Ք.), Սեպտեմբեր 17ին, իրարու բա– խեցան Հելլէնները եւ Պարսիկները, — առաջինները վերջիններուն կուտային Մար անունը, իրենց մեկ սարսափը:

Այս վերջինները 100·000 էին իբրեւ հե– տեւակ, որոնց կողքին 10·000 հեծելա – զօրք: Արտաքսենէսի հրամանատարու – թեամբ, անոնք ցամաք ելած էին զարնան եւ հեղեղի պէս կ'իջնէին հիւսիսէն հա – րաւ, քանդելով, կողոպտելով, անապա– տի վերածելով երկիրը: Այս հզօր բանա– կին կը հետեւէր իրենց նաւատորմը, որ կանգ առաւ Մարաթոնի առջեւ:

Հելլենական բանակը կը բաղկանար 9000 հոգիէ: Ոչ ձիաւոր ունէին, ոչ ալ նաւատորմ:

Արտօրէն, Ապէնքէն հիւսիս բարձրա – ցաւ այս փոքրիկ բանակը՝ ուզելով թումբ կանգնել Մարաթոնի ճահիճներուն տակ: Տասը ռազմագէտներ ունէին յան – դուգն, բայց կը վարանէին յարձակիլ Էղոսին վրայ:

Իվերջոյ յաղթանակեց Միլտիադէսի ձայնը: Եւ յարձակման նախաձեռնութիւ– նը առած՝ բացաւ բանակին երկու թեւե– րը, աւելի զօրաւոր, մինչ կեդրոնը կը մնար տակաւ:

Առտուան կրօնական պտտաբերութեան արարողութենէն ետք, մէկ հոգիի պէս բայց կարզապահ՝ Հելլէնները սկսան վա– զել դէպի յառաջ, յառաջ, յառաջ: 1500 մեթր վազեր էին արդէն եւ հասած Պար– սիկներուն մօտ, որոնք, զարմանահար ի տես այս «խենթութեան» կամ անձնաս– պանութեան, կռիւն ընդունեցան անխը – ռով, վստահ՝ իրենց թուական գերակշ– ռութեան, ինչպէս յաղթանակին վրայ: Կատաղի՛ էր գիրկընդխառնութիւնը: Զը– բահներու չառաչիւնը, թուրերու չկա – հիւնը, տէղերու չաչիւնը կը թնդացնէին Մարաթոնի երկինքը, մինչ բլուրներուն վրայէն փողերը կը հրահրէին եւ կը զե– կավարէին մարդայօշոչ զործողութիւն – ները: Մահու կենաց զուպար անախորն – թաց:

Երկար տեւեց այս արիւնհեղութիւնը: Հելլէններուն ընտրանին անդամ մնած էր կռիւին մէջ, — բանաստեղծ, հռե – տոր, փիլիսոփայ: Մա՛հ կամ ազատու – թիւն:

Ցեսմիլօրէին, տեսնուեցաւ որ Հելլէն– ներու աջ ու ձախ թեւերը կը յառաջանա– յին, բայց թշնամին խորտակած էր կեդ– րոնը եւ կը մխրճուէր հելլենական բանա– կին սիրտը՝ սեպի ձեւով: Այն տեն Միլ– տիադէսի երկու թեւերը օգնութեան հա – սան կեդրոնին՝ ջանալով մկրատել պարսկական յառաջացող բանակը:

Պարսիկները տեսան վտանգը: Եւ յան– կարծ, անհաւատալի՛ բան, ծովէն հնչեց նահանջի փողը: Պարսիկները կը փախ – չէին զէպի ծով, ուր կը սպասէր նաւա – տորմը Ահաւոր կոտորած մը նահանջի այս ճամբուն վրայ, — լա՛յն է աւազա– փը (փլաժ) այստեղ, եւ աւազափէն եռք խորունկ չէ ծովը: Միլտիադէս հրամա – յեց կռիւը չարունակել ջուրերուն մէջ, հետապնդել թշնամին ու կոտորել զեռ չհասած մինչեւ նաւատորմ: Ահաւոր էր կոտորածը, թշնամին ինկաւ դաշտին վը– րայ, աւազին վրայ ու ջուրերուն մէջ:

Կը պատմուի թէ բանաստեղծ Եսքիղ– սի եղբայրը, Քիւնեկիրոս, կառչած էր թշնամի նաւակի մը՝ թոյլ չտալով որ հեռանայ: Անոր նման ուրիշներ, լողալով կը հալածէին Պարսիկները, կոտորելու կամ զերի վարելու համար յետին թշնա– մին: Ահա այդ պահուն, նաւակին մէջ ապաստանած պարսիկ զինուորը կացի – նով կը զարնէ կը կարէ Քիւնեկիրոսի ձեռքը՝ ազատելու համար նաւակը եւ փախչելու համար մինչեւ նաւատորմ: Քիւնեկիրոս միւս ձեռքով կը կառչի նա– ւակին: Կացինը անդամ մը եւս կ'իջնէ:

Անձնուրացութի՜ւն, անձնազոհու – թի՜ւն, ի՜նչ անգութ պատերազմ էր որ տեղի ունեցաւ այդ օրը՝ յանուն ազա – տութեան: Ազատ ապրելու կա՛մքն էր, համապզային արբազան կատաղութիւնն էր որ կատաբեալ ըրաւ յաղթանակը: Թշնամի հսկայ բանակը, հազարաւոր սպանեալ թողլով Մարաթոնի զաշտին վրայ, ծովափը եւ ջուրերու մէջ, խոյս տուաւ նաւատորմին օգնութեամբ՝ չա – բաչար կոտորակեալ:

490 թուականին, Սեպտեմբերին էր որ չըքեցաւ պատմութեան ընթացքը ի նը – պաստ Արեւմուտքի:

Աթենացիք 192 զոհ մխայն տուած էին: Անոնք թաղուած են Մարաթոնի զաշ– տին մէջ:

Երբ կը մեկնիք Աթէնքէն, կ'այցելէք Սորոսի արուեստական բլուրը(*), սան – դուխով մխայն մաշչելի,— հոլաթումբ մը 11 մեթր բարձր, որու տակ թաղուած են մեծ նահատակները: Կը բարձրանաք բրդաձեւ հոլաթումբին զագաթը, ձեր նայուածքը կը պտըցնէք ծալկաւէտ մր– զաստաններու վրայ: Ցետոյ վար կ'իջ – նէք, կը յառաջանաք, կը մտնէք Մարա– թոնի բուն զաշտը ,— այստեղ, ահաւոր տպաւորութիւն մը կը տպաւորացնէ ձեզ: Երկու քաղաքակրթութիւն իրարու զար – նուած են այստեղ: Դարը զարուն հետ է կոուելը: Մարաթոնի կռնակէն ձեզի կը նային լեռները, որոնք հսկա՛յ, հսկա՛յ տաշտ մը կը չինեն, մէկ կողմը բաց՝ դէպ ի ծով: Դեռ ոչինչ ,— կը յառաջանաք զաշտին մէջ: Ցանկարծ լռութիւն: Տա – րօրինակ լռութիւն մը կը տիրէ այստեղ: Բոլոր ճանապարհորդները կը վկայեն թէ պակուցիչ լռութիւն մըն է, տաճարային, աստուածային լռութիւն մը որ կը կեցնէ հոգը՝ երբ կ'իջնէ Պենտելիկէի լեռնա – շղթայէն, կը լռեցնէ Մարաղբայի ջուրի երակը, որ կը կարէ զաշտը զէպի ծով: Թռչուններն իսկ կը յարգեն այս խորհր– դաւոր տպաւորութիւնը: Աչխարհի վրայ որեւէ անկիւն՝ անձանօթ է այս լռու – թիւնը: Այնպիսի լռութիւն մը, զոր հո – գեբական զիւցազներգութեան ծանօթ լեռնե՞րն են արդեօք որ կը ներշնչեն, թէ զաշտը՝ ուր կը յածին հայրենասէր նա – հատակներու ոգիները,—իրողութիւն է որ կը զգաք մրմունջ մը ձեր ականջին մէջ, մրմունջ մը որ վկայութիւն կուտայ ան – հաւատալի զիւցազներգութեան մը մա – սին:

Չի կրնար չմարտալ ով որ կը կանգնի այդ զաշտին մէջ,— կռնակը լեռներուն, երեսը ծովին, կանգնած՝ զերեզմաններու վրայ: Լռութիւն, ու ներշնչում:

Հ. Ց. Դաշնակցութիւնը եւս ունի իր Մարաթոնները: Մեր Սարդարապատ Մարաթոն մը չէ՞ միթէ: Նոյնքան ներ– շնչական կռուազաշտեր չունի՞նք միթէ: Ջունի՞նք մեր մեծ նահատակները: Ո՞ւր թաղուած են անոնք,— ախտո՞ս, մէկը աննշան քարի մը տակ, միւսը լերան մը

(*) Վաթերլոյի ռազմադաշտին վրայ եւս (Պելճիքա) կայ արուեստական եման բլուր մը:

ԱՄԲԱՍՏԱՆԵԱԼ ՍԹԱԼԻՆ, ՈՏՔԻ՛

Փոխադրակառքին մէջ, ոստիկան մը նստած էր չարժավարին կողքին: Ցան – կարծական չարժումով մը, ոստիկանը ձեռքը կը նետէ կառքին չարժակին եւ կ'ուզղէ դէպի պատի մը անկիւնը: Շար– ժավարը կը յաչողի չակել կառքին ուղ– զութիւնը. հազիւ զլած էին պատին: Երբ կառքէն վար կ'իջնէ, կը տեսնէ թէ ոստիկանները փոխադրակառքին եռեւի կողմէն դուրս կը հանեն Բորիսովը, ո– րուն զլուխը ջախջախուած էր: Զէրկրնար արկածին հետեւանքով մեռած ըլլալ, քա– նի որ արկած տեղի ունեցած չէր ի վեր– ջոյ: Բայց եւ այնպէս մամուլին մէջ հը– րատարակուեցաւ «արկած»ին նկարա – զրութիւնը, որուն զոհ զացած էր Բորի – սով:

3) 1935 Ցունուար 23ին, Լենինկրատի ընքավէտէի պետն ու իր զլխաւոր զոր – ծակիցներէն տասնըմէկ հոգի «իրենց պաշտօնին մէջ ոճրապարտ թերացումի» համար դատապարտուեցան երկու կամ ե– րեք տարի կեդրոնացման կայան զրկուե– լու: Պատիժը իրապէս թեթեւ էր, մանա– ւանդ երբ նկատի ունենանք ահ ու սար – սափի կլիման, որ ստեղծուած էր Կիրովի մահուան յայտարարութեան վրայ: Ամ – բաստանեալները ուղարկուեցան Քոլիմա, ոսկիի աքսորավայրը, ու ձեռք առին կեդրոնացման կայանին վարչական ղըէ – խաւոր պաշտօնները: Այլ խօսքով, իրա – պէս աքսորուած չէին, այլ՝ նոր պաշտօն– ներու կոչուած:

Բայց, 1937ին, բոլորն ալ Լենինկրատ կանչուեցան եւ մահապատիժի ենթար – կուեցան:

Ահա ուրիշ վկաներ ալ, որոնք խօսելու անկարող զարձան: Այլեւս չէին կրնար պատմել, թէ Կիրովը սպաննելու կամ սպաննել տալու հրահանգը որմէ՞ ստա – ցած էին: Եթէ Սթալին մատ չունենար Կիրովի սպանութեան զործին մէջ, այս – քան աճապարանքով կը չարժէ՞ր արդեօք:

Այնպէս կը թուի թէ Կիրով սպաննուած է առաւօտուն չատ կանուխ: Նոյն իրի – կունն իսկ պետական մասնաւոր հրամա – նագիր մը կը հրահանգէր «զատական իշ– խանութեանց» , որ մահապատիժի են – թարկեն այն բոլոր անձերը, որոնք ձեր – բակալուած էին ահաբեկչական նպատակ– ներ ունենալու ամբաստանութեամբ: Սթալինլենինկրատ մեկնեցաւ ճնշումները անձամբ կազմակերպելու համար:

ԱՀ ՈՒ ՍԱՐՍԱՓԸ ԾԱՑՐ ԿՈՒՏԱՑ

Վերոյիշեալ հրամանագրին հիման վրայ, հարիւր տասնը հօթը հոգի տեղն

թարկել բոլոր կուսակցականներուն թըղ– թածրարները: Բ) Ընքավէտէի խողովա – կով զաղտնի քննութեան առարկայ զար – ձնել իւրաքանչիւր կուսակցականի քա – ղաքական կեցուածքը:

3) Նամակով կոչ ուղղել կուսակցու – թեան բոլոր անդամներուն, որ կրկնա – պատկեն «բոլշեւիկեան աչալրջութիւնը», այսինքն՝ մատնեն կասկածելի նկատուած որեւէ անձ:

Այս առաջին միջոցառումները ուղղը – ւած էին մասնաւորաբար կուսակցութեան անդամներուն դէմ: Բայց Սթալին կ'ու – զէր ամբողջ ժողովուրդը ազատել «ժողո– վուրդի թշնամիներէն» :

Ընքավէտէի կեդրոնական սպասարկու – թիւնները մասնաւոր ուղեցոյցներ պատ – րաստեցին ուրեմն, որոնց զործադրու – թեան ընորհիւ մաքրազործումները պիտի հասնէին հսկայական չափանիշներու:

Այս ուղեցոյցներն էին՝

1) Հասուն տարիքի հասած բոլոր այլ մարդիկն ու կիներու մասնաւորական զաղ– քաղաքական տեսակէտէ զաղտնի քննու – թեան պիտի ենթարկուին Ընքավէտէի սպասարկութեանց կողմէ:

2) Այս կացութիւնը պիտի տարուի ըն– կերային դասակարգերու հիման վրայ — մասնաւորականներ, բանուորներ, գիւղա – ցիներ :

(16 Շար.)

կողքին, դեռ եւս մին՝ ձորի մը մէջ, միւսը՝ ճամբու մը վրայ, միւսը՝ ղէս – տանի մէջ, Սիպերիոյ մէջ, ծովի մը ա – լիքներուն մէջ, դեռ ի՞նչ դիտնամ թէ ո՛ւր: Ձեր եղբայրներն են անոնք, ձեր հարազատները: Ձեր նահատակները: Հայ են անոնք, որ 'Իաչնակցական դրուե – ցան եւ իրրեւ 'Իաչնակցական մեռան, բայց մէկ բան միայն կը թելադրէր ի – րենց,— մեռնիլ Հայութեան համար:

Այժմ, հայրենի տուէն հեռու, մեր կո – ուի դաշտերէն հեռու, մեր Մարաթոնը Հ. Ը. Իաչնակցութեան Սրն է,— ոճնա – կան այս սրահներով, այսօր, կ'աչխա – տինք այս սրահներով, այսօր, կ'աչխա – տինք տալ պատկերը այն դաշտին, ուր կը նկչեն մեր նահատակները: Հաւաք – ուած ենք այստեղ, լռութեան մէջ, անոնց Թողած յիչատակներուն մէջ, լսելու հա – մար հայ փետայիներուն խօսքը: Հայաս – տանի լեռներուն դիմիւռը, այսօր, չուն – չը կը բռնէ պահ մը, կը տիրէ լռութիւն, կը տիրէ խորհրդաւոր եւ տաճարային լը – ռութիւն, որու մէջ կը լսուի, սակայն, խօսակցութիւն մը: Մեր նահատակները են որ կը խօսին ձեզի.—

Ինչ էիր, բայց մեզի հետ էր Ագատն Աստուած:
Մեզի հետ էին Սարդարապատի Իարերը, աւազը, փուչը, Հայոց արիւնով օծուած:
Մեզի հետ էին էջմիածնի եկեղեցիներուն ղօղանջները, որոնք տակաւին կը լեցնեն մեր ականջները:
Մեզի հետ էին կաթողիկոսները, առաջ – նորդները, Իաղճցիները, հարուստ – ները, գիւղացիները, ազգատնե – րը, որբերը:
Մենք միացած էինք բոլորս:
Մեզի հետ էին Սօսեաց անտառին նուիր – ուած հին արճաները,
Մեզի հետ էին վահէվահեան Իուրմերը,
Մեզի հետ էր Օշականի սուրբը,
Մեզի հետ էին ժայռերը պատելով եկե – ղեցի շինող ճարտարապետները,
Մեզի հետ էին հին վանիներու մէջ մոմի լոյսով «Հայոց Պատմութիւն» ըն – դօրինակող արհեղաները,
Մեզի հետ էին 18–20 տարեկան երիտա – սարդները, որոնք լեռներու վրայ վառեցին ազատութեան կրակը:
Միասին էինք Դաշնակցական, Արմենա – կան, Հնչակեան, Ռամկավար:
Մենք միացած էինք ամէնքս:
Մենք ամէնքս միացած ենք, դարձեալ, այստեղ հողին տակ:
Մենք ամէնքս միացած ենք, դարձեալ, հիմա, այս սրահին մէջ, ուր եկեր ենք լսելու ձեր խօսքը:

Ու կը հարցնենք ձեզի.

— Կը պահէ՞ք մեր ուխտը, Հայութեան ուխտը:

Հայկական Մարաթոնի մեռելները են որ կը խօսին, այս սրահին մէջ, այս ե – կեղեց:

Լռութի՛ւն:

Մի՛կ ըրէք, մի՛կ ըրէք:

Շ. ՆԱՐԴՈՒՆԻ

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՀԻՆ ԴԷՄՔԵՐ

ԱՐՇԱԿ ՊԷՆԼԵԱՆ

Թրքահայ թատերական պատմութեան մէջ յիչատակելի անուն մըն է Թողած Ար – շակ Պէնլեան, մանաւանդ՝ դուռանները – պական սեղնի մէջ: Պէտք չէ սակայն չը – փոթել այս անունը մեծ Սերովբէ Պէնկ – լեանին հետ, որ, ինչպէս իր ատենին պը – րած ենք այս սիւնակներուն մէջ, եղած է հիմնադիրը արեւմտահայ Թատրոնի դու – ռանէրդական (օփերէք) ճիւղին:

Այսուհանդերձ, Արշակ Պէնլեան Սև – րուիրէ Պէնկլեանի աչակերտներէն է: Իր երիտասարդ տարիքին, աչխատակցած է մեծ վարպետին եւ անոր մահէն ետք (1900) յաջողած է չարունակել անոր գործը, սկիզբները պարբերական ներկա – յացումներով եւ ետքն ալ 1910ին, իր վարպետին մահէն տասնամեակ մը ետք, վերջնականապէս հիմը դնելով «Պէնլեան օփերէքի խումբ»ին:

Արշակ Պէնլեան մեծ Սերովբէին պէս դուրկ էր դաչտն իսկ ուսումէ, ոչ իսկ ըն – դունակ՝ գրելու իր անունը: Եւ սակայն, այս արտակարգ մարդը ունէր ընդոծին տաղանդ մը, տաղանդ մը՝ անսեթեւեթ ու առանց բռնադրօսիկ որեւէ ծեքծեքու – մի, կարծես բնատուր զսպանակ մը՝ ուր – կէ դուրս կը ժայթքէր առատօրէն ար – ուեստին հրաչալիքը:

Երբ Արշակ Պէնլեան կը հիմնէ իր օ – փերէքի խումբը, բոլորովին տարբեր ծը – պերի մը կ'որդեգրէ, ճիշդ հակառակը իր վարպետին՝ Սերովբէ Պէնկլեանին:

Մինչ այս վերջինը իր դուռանէրդական խումբով կը ներկայացնէր բացի Տիգրան Զուխաճեանի գործերէն նաեւ եւրոպական օփերէքներ, ինչպէս՝ «Պէլ – Էլէն», «Ժի – րօֆլէ – Ժիրօֆլա» եւ այլ դուռանէրդու – թիւններ, Արշակ Պէնլեան իր գործունէ – ութիւնը կեդրոնացուցած էր միայն ու միայն հայ մեծ երգահանին՝ Տիգրան Զուխաճեանի երկերուն վրայ եւ գործած տեսակ մը անոնց մասնագէտը:

Բնիկ կեսարացի, Արշակ Պէնլեան օժ – տուած էր նաեւ «գործի մարդու» յատ – կութիւններով եւ ունէր կազմակերպչա – կան մեծ կարողութիւն:

Եւ սակայն, այս «գործի մարդը» հե – ռու մնացած է նիւթին պաչտամունքէն եւ ի սէր գործին, ի սէր իր Թատրոնին չը – քեղութեան կանգ չէ առած նիւթական որ եւ է զոհողութեան առջեւ:

Այս առթիւ կը վկայէ Վահրամ Փա – փազեան, հետեւեալ տողերը գրելով իր Յուշերու հատորին մէջ.—

« ... Անսովոր ընդունելութիւնը գոր պտել էր Պէնլեանը Պոլսում, եւ գրա հե – տեւանք լայն ու բարձրորակ կեանքով ապրելու միջոցները չէին չփացրել այդ ծայրատիճան համեստ, պարզակենցաղ մարդուն: ... Պէնլեանը Թատրոնի ամ – բողջ եկամուտը ծախսում էր ներկայա – ցումների չքեղութեան, իր դերասանների հարուստ ու բարձրորակ կենցաղի վրայ: Ինքը մի կատր պանիր հացով գոհանում էր էոլիսների եռեւում եւ հայրական խնամքով, հպարտ ու ինքնա – գոհ ժպիտով հեռուից դիտում էր դեր – ասաններին՝ քաղաքի ամենաթանկ ուես – տորաններին ճաչելիս»:

Թերեւս Վահրամ Փափազեանի վերո – յիչեալ տողերուն մէջ կայ չափազանցու – թիւն, տրուած ըլլալով որ մեծանուն դե – րասանը իր բեմական անդերազանցելի կարողութիւններուն քով, ունի նաեւ բո – յական երեւակայութիւն մը, ինչ որ իր ճուչերուն մէջ դինքը յաճախ տարած է «դիծէն դուրս»: Եւ սակայն, «պանիր հաց»ի պարագան իրողութիւն է, վասն զի, տակիւ տասնեւչորսամեայ պատանի՝ երբ կը դեղերդի Պէնլեանի ներկայացում – ներու «Կուլիս»ներուն եռեւը, յաճախ տեսած եմ դինքը պանիր – հացի կտորը ձեռքին ...

Ըսինք թէ՝ Պէնլեան իր մասնագիտու – թիւնը դարձուցած էր Տիգրան Զուխա – ճեանի օփերէքները:

Արդարեւ, Պէնլեանի երեւումով է որ ժողովուրդին լայն սեփականութիւնը դարձած են հայ երգահանին «Քէօսէ – Քէհեա»ն, «Արիֆին Հիլէսի»ն եւ մանա – ւանդ համբաւաւոր «Լէպլէպիճի»ն, ո – րուն Չօր Հօր– աղային դերը ոչ ոք կարո – ղացած է մեկնաբանել այնքան բնական հարազատութեամբ մը, որքան բնականէն արուեստագէտ ծնած Արշակ Պէնլեանը:

Չօր Հօր – աղային դերը Արշակ Պէնլեա – նի բեմական ստեղծագործութիւններուն գլուխ – գործոցը եղած է: Իրմէ առաջ իր վարպետը՝ Սերովբէ Պէնկլեան, ուեւէլ վերջը՝ Մարտիրոս Մնակեան մարմնաւո – րած են նոյն այդ դերը, սակայն, ըստ ժամանակակից քրոնիկագիրներու կար – ծիքին ասոնցմէ ոչ մէկը իր մեկնարկու – թեան մէջ կարողացած է լրիւ կերպով տալ միամիտ գիւղացի Չօր Հօրին տիպա – րը այնքան հարազատութեամբ եւ այն – քան արտառուչ պարզութեամբ, որքան Արշակ Պէնլեան:

Ըսինք թէ Արշակ Պէնլեան անուս էր: Եւ սակայն, այս անուս մարդը իր Թա – տերական գործունէութեան ընթացքին յաջողած է պատրաստել, մարզել ու մէկ – տեղ բերել բազմաթիւ երգիչ – երգչու – հիներ, որոնք յետագային Թուրքիոյ օ – փերեթային խումբերուն փառքը կազ – մած են:

Առանցմէ մէկն է եղած ամբողջ Պոլսա – հայութեան քաջ ծանօթ երգչուհի Ռոզա – լին (Պուլկարուհի):

Արշակ Պէնլեան Ռոզալին Պոլիս բերած է Ռուսճուքէն: Հոն կատարած իր Թատե – րական մէկ շրջապտոյտէն վերադարձին: Գեղեցիկ ձայնով մը օժտուած այս երգ – չուհին, սկիզբները դուրկ է եղած բեմա – կան որեւէ շնորհէ եւ նոյնիսկ, հակառակ իր ձայնին, եղած է երգելու ալ անըն – դունակ: Շնորհիւ Արշակ Պէնլեանի չան – քերուն, քիչ առենէն Պուլկարուհին իր վարպետին ձեռքին տակ դարձած է նշա – նաւոր երգչուհի մը, երկար տարիներով համակերպ ամբողջ Պոլսոյ այլազգի հա – սարակութիւնը:

Արշակ Պէնլեանի գլխաւոր մէկ Թատերական արուեստը գարգացած եւ յառաջդիմած են նաեւ բազմաթիւ այլ հայ դերասաններ: Առանցմէ մէկն էր նա – եւ Շաւարչ Գարագաչը (իր մասին գրած ենք այս էջերուն մէջ), Վահրամ Պաղտա – սարեանը (Փարիզահայ վաղեմի դերա – սան՝ յայտնի իր զուեչտական ստեղծա – գործութիւններով): Պէնլեանի աչա – կերտն էր նոյնպէս վերջերս Պոլսոյ մէջ մահացած Վահրամ Պալըքճեան (Զիկու – նի): Այս վերջինը սակայն լքեց բեմը, հեռացաւ եւ մուտ գործի ասպարէզը ու մնաց միջակութիւն մը՝ հայ Թատերա – կան աչխարհին մէջ:

Արշակ Պէնլեանի լաւագոյն աչակերտը եղաւ դերասան Հայկ Զուխաճեան, որ իր վարպետին մահէն ետք արժանաւորապէս գրաւեց անոր տեղը, մանաւանդ Հօր հօրի դերին մեկնարկութեամբ: Տակաւին կան Պէնլեանի մահկանին տակ յառաջացած բազմաթիւ Թուրք դերասաններ ալ, ո – րոնց անունը Թուել աւելորդ կը համա – րիմ:

Արշակ Պէնլեան իր ստեղծագործած տիպարներուն հետ կը նոյնանար, կ'ըն – տելանար, այնքան որ իր անձնաւորում – ները կը դառնային բոլորովին ինքնու – րոյն, պճնազարդուած յղացումներու եւ արտայայտութեան խայտաբղէտ ձեւե – րով:

Ընդունուած ճչմարտութիւն է որ Թատ – րոնի ճաչակը հայ ժողովուրդին զուտակ – ներն են որ ներչնչած են Թուրք ժողո – վուրդին: Ֆասուլիաճեանները, Մաղաք – եանները, Մնակեանները եւ ուրիչներ են որ հիմը դրած են այսօրուան Թուրք Թատրոնին:

Անժխտելի ճչմարտութիւն է նոյնպէս, որ Թատրոնի դուռանէրդական ճիւղին ալ հիմնադիրները եղած են Հայերը: Սերով – բէ Պէնկլեանը հիմը դրաւ անոր 1875ին եւ չարունակեց այդ գործը մինչեւ իր մահը՝ 1900:

Իրմէ ետք, իր աչակերտը Արշակ Պէն – լեան վերստին վառեց մարած ջահը՝ 1910ին հիմնելով նոր օփերէքի խումբը Պոլսոյ մէջ:

Եւ այսօր եթէ գոյութիւն ունի Թուր – քիոյ մէջ օփերէքի խումբ, անոնք այդ գոյութիւնը կը պարտին Հայու զուտակ Արշակ Պէնլեանին, ինչպէս իրենց բուլան – գակ Թատրոնին գոյութիւնը կը պարտին գործեալ Հայու հանճարին, հոգ չէ Թէ ուրանան այդ պարագան եւ աչխատին Թրքացնել նոյնիսկ... կոմիտասը:

Արշակ Պէնլեան մեռաւ Ա. Աչխարհա – մարտի վինաղադարէն ետք:

Կը յիչեմ իր յուղարկաւորութեան օրը:

Ամբողջ Պոլսոյ ժողովուրդը, Հայ, Յոյն, Թուրք եւ Հրեայ հետեւեցան իր գագաղին, որուն վրայ դետեղուած էր իր բեմական ստեղծագործութիւններուն գլուխ – գործոցը եղող Չօր հօր ազգային հէյպէն եւ խալպուրը, մինչ նուագա – խումբը կը հնչեցնէր «Պիզ էէօռ օղ – լու...»ն:

Եւ Զուխաճեանի երաժչտութեան այս խորախորհուրդ մեղեդիին ընկերացած Արշակ Պէնլեան գնաց միացաւ իր վար – պետին՝ Սերովբէ Պէնկլեանին, որուն սկսած գործը այնքան վայելուչ կերպով վերջացուցած էր արժանաւոր ու տաղան – դաւոր աչակերտը, ի փառս Հայկեան հանճարին:

ԱՐՏԱՇԷՍ ԳՄԲԻԹԵԱՆ

«ԾԱՌԱՉ»Ի ԹԵՐԹՕՆԸ (134)

ԹԻԱՊԱՐՏԸ

(ՎԷՊ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿԵԱՆՔԷ)

ԳՐԵՑ

ԱՐՄԷՆ ՇԻՏԱՆԵԱՆ

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Տէր Կոմիտաս դասատուի մը առջեւ դանուող անարդ ոճրագործի մը պէս, բոլոր մարմնով կը դողար եւ կը զգար Թէ խղճահարութիւնը կը խեղդէր զինքը:

Դուք որ աղղին ցաւերը մեզի հետ լա – ցիք, չարունակեց Վանական, ի՞նչ չուտ դասաճաններիք ձեր սկզբունքին դէմ: Ոչ. իմ ճանչցած քահանան չէք դուք այլ ալի – տի ըսեմ Թէ նուիրական օքեմի մը տակ ծածկուած լրտես մըն էք, որ կատարա – րութեան մեղսակից մը ըլլալով՝ ամէն չարիք կարող է գործել: Բայց Տէր Կո – միտաս. յիչեցէք որ Աստուծոյ տաճարին մէջ կը գտնուիք. յիչեցէք որ ձեր չբր – Թունքները սատանի պատուէրներն ար – տասանելու համար չէ. յիչեցէք որ ձեր կոչումը սեւ օքեմի մը տակ գարչելի կա – չի մը ծածկել չէ...: Մէկ խօսքով քահա – նան ամէնուս ատելի եղող մոլեռանդ մը չէ: Ի՞նչ... ատ գաղափարին կը ծառա – յի՞ք, երբ մատնեցինք Սիրվարդը ...:

— Սիրվարդ... ղողղաց Տէր Կոմի – տաս:

— Այո:

— Ե՞ս մատնեցի ...

— Անչուչտ, դուք մատնեցիք:

— Ամենեւին:

— Հըըմ... սուտ կը խօսիք:

Տէր Կոմիտաս չկրցաւ պատասխանել: Հոգին ճնշուեցաւ. ու կերպարանքը սեւ – ցաւ, ինչպէս պաղ ջուրէ հանուած կա – պարը:

— Սո՞ւտ է... դուք չմատնեցի՞ք, կրկ – նեց Վանական՝ խիստ ու հրամայական եղանակով մը: Խոստովանեցէք ... եթէ ոչ ապացոյցներ ունիմ:

— Թողութիւն կը պաղատիմ ...:

— Որո՞ւ ձեռքով մատնեցիք զինքը, յարեց Վանական:

— Վալի փաչային ձեռքով:

— Ի՞նչ ամբաստանութեամբ:

— Ամբաստանեցի Թէ խռովարար մըն է ...:

— Պատճա՞ռը:

— Ոհ, պարզապէս կիրքս էր:

— Կի՞րքդ.

— Այո:

— Անձնակա՞ն հակառակութենէ առաջ եկած:

— Այո. անձնական հակառակութենէ առաջ եկած:

— Ի՞նչ էր այդ:

— Մարիկ ըրէք. Սիրվարդ աղղական – ներէս մէկուն աղջիկը սիրած էր: Երկու – քըն ալ իրարու համար հոգի կուտային: Հայց աղղականս չէր ուզեր իր աղջիկը Սիրվարդին տայ: Ի՞նչ ընել հարկ էր: Ուրիչ միջոց չկար. այդ պատճառաւ ձեր – բակալել տուինք գինքը եւ աքսորելու դատապարտեցինք որ աղջիկը մեր ուզած երիտասարդին հետ ամուսնացնէինք:

— Ե՞տքը...:

— Ոհ, Վանական, կը խոստովանիմ Թէ ըրածս վատութիւն է, կը խոստովանիմ Թէ խիղճս կը տանջէ գիս... վերջապէս կը խոստովանիմ Թէ ամէնէն գարչելի վատութիւնը գործած եմ: Կը խոստովա – նիմ, այո... ըսէք, ինչ որ կ'ուզէք: Մոռցած էի կոչումս, երբ ներս մտայ Վալի փաչային ապարանքէն. մոռցած էի Թէ մարդ մըն էի այդ պահուն:

— Անկից ի վեր չխղճահարուեցա՞ք:

— Չեմ գիտեր ...: Միայն Թէ մոլու – Թեան ուղին ժանիքաւոր երկաթէ ցանց մըն է. երբ մէկը նետուի անոր մէջ, չա – րունակ կը քաչտուտի ու չի կրնար ազա – տիլ: Ախ, անկից ետքը Վալի փաչային գործիքն եղայ:

— Դո՞ւք:

— Այո, ես:

— Ուրիչ մատնութիւններ ալ ըրի՞ք:

— Կ'ուզէի ընել. Թէեւ չյաջողեցայ:

— Միայն Սիրվա՞րդը մատնեցիք:

— Ոչ, Մէլիկ պէկին ալ մատնած եմ:

— Ցետո՞յ:

— Ահ, ուրիչ մատնութիւն մը չեմ ը – րած... ճչմարիտը կը խօսիմ:

— Խիստ լաւ, կը խոստանա՞ք որ աս – կից վերջը ձեր կոչման համաձայն պիտի վարուիք:

— Կը խոստանամ Վանական... կ'երդ – նուիմ խղճիս ու Աստուծոյ վրայ:

Վանական պահ մը մտածեց ... իր դէմը գտնուող եկեղեցականին երեսը նա – յեցաւ ու չարունակեց.

— Ուրեմն, հիմակ Սիրվարդին գով պիտի երթաք ու բանտին մէջ իրմէն նե – րողութիւն պիտի խնդրէք: Այս կը պա – հանջուի ձենէ. պիտի ընդունի՞ք:

(Շար.)

Այրի Տիկին Ասրինէ Ճիւհէրեան եւ ընտանեկան պարագաները ցաւով կը ծանուցանեն իրենց ամուսնոյն եւ ազգականին՝

ԵՐՈՒԱՆԴ ՃԻՒՀԷՐԵԱՆԻ

կսկծալի մահը, որ տեղի ունեցաւ Ցունուար 11ին, յետ կարճատեւ հիւանդութեան :

Ցուղարկաւորութիւնը՝ այս Շաբաթ 17 Ցունուար, ժամը 14·15ին, Փարիզի Ս· Ցովհ· Մկրտիչ եկեղեցւոյ մէջ :

Մահագդ չստացողներէն կը խնդրուի, ներկայս իբրեւ այդ նկատել :

ՄԱՅԻՍ 28Ը ԿԸ ՏՕՆՈՒԻ

կիրակի, Մայիս 27ին, Միութիւնէն մեծ սրահին մէջ :

ԼՐԱՏՈՒ ԱՐՈՒԵՍՏԻ

«ԴԱՐՈՒՍ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐԸ»

չարքին մէջ Փարիզ 312 մեթրի վրայ (մինչեւ ալիք) Ֆրանսական ճայնասփիւռը կը ներկայացնէ երկու հայ բանաստեղծներ· ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆ և ԵՂԻՇԷ ՉԱՐԵՆՑ, կիրակի (Ցունուար 21) ժամը 14·30ին: Հատուածներ պիտի կարդան Նաթալի Խերեան, Ժան – Ժագ Ալանեան, Հայկուհի Խըտըչեան :

Զրոյց՝ ՌՈՒԲԻՆ ՄԵԼԻՔԻ ՀԵՏ :

ՄԱՐՍԷՅԼԻ ԱՂՔ· ՄԻՈՒԹԻՒՆ

Միութիւնս իրենց հոգեհանգստի առաթով, չնորհակալութեամբ ստացաւ, Տէր եւ Տիկին Խրիմեանէ երեսուն Ն· Ֆ·, փնչպէս նաեւ Տիկին Զապէլ Մանուէլեանէ տասը Ն· Ֆ·:

FOURRURES
Roger YOPIAN
PRIX INTERESSANTS
NEUF et REPARATION
84, Boulevard de Stalingrad, 84
— CHOISY-LE-ROI (Seine) —
Autobus : de la Porte de Choisy, descendre 3 Communes ou Rue du Docteur-Roux.

Imprimerie Spéciale du journal « Haratch »
32, Rue de Trévise, PARIS (9e)

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻ

ՊԱՐԱՀԱՆԴԷՍԸ

կազմակերպութեամբ Սէն Շամոնի խումբին, այս Շաբաթ իրիկուն ժամը 21–էն մինչեւ լոյս :

Սէն Շամոնի Քաղաքապետարանի սրահը (Սալ տէ Ֆէթ) :

Նուագախումբ՝ ՃԻՄԻ ՌԻՒԷԼ :

Պիւֆէ, պառ, ֆոթիյոն, ժէօ :

ԾՆՈՒՆԴԻ ԵՒ ՆՈՐ ՏԱՐԻՈՑ

ՈՒՐԱԽ ՕՐԵՐՈՒՆ ԵՒ ԱՄԲՈՂՋ ՏԱՐԻՆ

Եւրոպայի Մեծագոյն
Արեւելեան Վաճառատունը

ՊԱՀԱՍՈՒՐԵԱՆ խանութ մը չայ – ցելողին սեղանին վրայ ամէնէն համով պատառը կը պակսի՝ մեծին ու պզտիկին համար: ՊԱՀԱՍՈՒՐԵԱՆ վաճառատան մէջ պիտի գտնէք ա – ւանդական ընդեղէններու եւ անու – շեղէններու ամէն տեսակը, անմրցելի գիներով :

Ապսպրանքի վրայ, ծրարի առա – քում Ֆրանսայի ամէն կողմ եւ դէպի արտասահման՝ Պելժիա, Զուէյցերիա, Անգլիա :

ՊԱՀԱՍՈՒՐԵԱՆ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ
LYON
246, Rue Vendôme - Tél. MOn 11-84
20, Rue Villeroy MO 32-10
65, Rue Robert LA 07-72

ԵՒ ԻՆՁՊԷՍ ՄԻՇՏ

Արմաւ, «պամիա», «եալանճի տոլմա», յունական «թուրլի», «պի – պէօ», տերեւ, թահին հելվա, «վանիյլ», չոքոլա, «նուագէթ», «լո – գում», «սագըզ», պիստակ, Շիրակ օղի (41 – 45o), Իզմիրի չամիչ, «սուճուք», կեսարական «պաստըր – մա»: առաջնակարգ սուրճ, (բարավան եւ մոգա), համեմներ «մահ – լէպ», «սալէպ», ձիթապտուղ, ձէթ, «քաչքավալ» պուլկարական, ճերմակ պանիր ոչխարի կաթով: Ամէն կարգի պահածոներ, «քուսքուս», հարիսա, սումագ, թարամա, լաֆերտա, բաֆլաւա, ֆատայիֆ, տերեւ եւայլն :

ՊԱՀԱՍՈՒՐԵԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆԸ

Ունի նաեւ մասվաճառատուն մը, որուն առաջնակարգ միսերը գոհացում կուտան ամէնէն նրբաճաշակ – ներուն: Ոչխարի, հորթի եւ եզան միս (քաչուած միս, եւայլն):

VICTOR GARDON

LE CHEVALIER à L'EMERAUDE

« Une très belle épopée qui a pour cadre l'Arménie légendaire »
(*Réalités*).

« Les mots sont brefs, justes, légers, mais portés par un souffle d'épopée ».
RENÉ MASSON (*Nouveau Candide*).

« Un livre plein d'entrain, de rebondissements qui émeuvent... il grouille de personnages chaleureux ».
ALAIN BOSQUET (*Combat*).

« Le héros de cette épopée est un parent de Lancelot et de Perceval ».
(*Feuille d'Avis de Neuchâtel*).

« Une fois de plus Victor Gardon affirme un talent sans défaut ».
(*Libre Belgique*).

STOCK

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Հ· Բ· Ը· Միութեան

ՏԱՐԵԿԱՆ ՊԱՐԱՀԱՆԴԷՍԸ ՓԵՏՐՈՒԱՐ 18ԻՆ

×

Հ· Ց· Դ· Նոր Սերունդի Իսիի Խանասոր խումբի գեղարուեստական եւ պարային երեկոյթը Իսիի մէջ, Փետր·10ին :

Հ. Յ. Դ.

ՓԱՐԻԶԻ Հ· Ց· Դ· Շրջ· կոմիտէն ընկերական ընդհ· ժողովի կը հրաւիրէ «Ազդակ» էնթակոմիտէի բոլոր ընկերները այս Ուրբաթ ժամը 8·30ին, Մշակոյթի Տան սրահին մէջ: Կարեւոր օրակարգ : Ներկայ կ'ըլլայ Կ· Կ·ի ներկայացուցիչը:

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՑՑ

Հ· Ց· Դ· Մարսէյլի Շրջ· Կոմիտէի հրաւիրած ընկերական ժողովները :—

Հ· Ց· Դ· Մարսէյլի Շրջ· Կոմիտէն՝ սահմողաբար ընկերական ընդհ· ժողովի կը հրաւիրէ հետեւեալ էնթակոմիտէները – րու եւ խումբերու անդամ ընկեր – ընկերուհիները :

ՎԱՐԱՆԴԵԱՆ խումբ՝ 15 Ցունուար, երկուշաբթի, ժամը 21ին :

ԳԷՈՐԳ ԶԱՎԻՇ խումբ՝ 20 Ցունուար Շաբաթ, ժամը 21ին :

ՄՈՒՐԱՏ խումբ՝ 21 Ցունուար, կիրակի կէսօրէ ետք, ժամը 15ին :

ՆԻԿՈԼ ԴՈՒՄԱՆ խումբ՝ 21 Ցունուար, կիրակի կէսօրէ ետք, ժամը 15ին :

ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ խումբ՝ 20 Ցունուար, Շաբաթ, ժամը 21ին :

Սոյն ժողովները տեղի պիտի ունենան իրենց սովորական հաւաքատեղիները : Խիստ կարեւոր օրակարգ : Բոլոր ընկեր – ընկերուհիներու ներկայութիւնը պարտաւորիչ է : Վարչութիւնները նախապէս պէտք է բոլոր ընկերներուն տեղեկացնեն ժողովներու վայրի եւ թուականի մասին : Ներկայ պիտի ըլլան Շրջ· Կոմիտէի ներկայացուցիչները :

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Ս· ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ

Ծննդեան 1600ամեակը համազգային շուրով կը տօնուի Մարսէյլի մէջ :

Փետրուար 18ին, կիրակի կէսօրէ ետք, Քազա տ'Իթալիայի չքեղ թատրոնին մէջ :

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Նախաձեռնութեամբ կապոյտ Խաչի Ալֆորվիլի մասնաճիւղին :

Յունուար 27, Շաբաթ, ժամը 20·30ին Մեզոն Ալֆորի Սալ տէ Ֆէթին մէջ :

Առնուվիլի թատերախումբը կը ներկայացնէ՝

ԱՇԽԱՐՀԻ ԴԱՏԱՍՏԱՆԸ

MORY et Cie
ՆՈՒԷՐՆԵՐՈՒ ԵՒ ԾՐԱՐՆԵՐՈՒ ԱՌԱՔՈՒՄ ԴԷՊԻ ԽՈՐՀՐԴ· ՄԻՈՒԹԻՒՆ :
Գնեցէք զանազան ձեր ուզած տեղը եւ առաքումը մեզի վստահեցէք : Նուազագոյն ծախքերով կը ղրկենք խորհրդ· Միութիւն :
Դիմեցէք մեր նոր գիները գիտնալու համար.—
10, Rue St. Vincent de Paul, Paris 10e
(PRÈS DE LA GARE DU NORD)
Téléphone : TRU. 27-70

ՆՈՐ ՏԱՐԻԻ ԹԱՆԿԱԳԻՆ ՆՈՒԷՐ ՄԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹԻՒՆ

... « Հայերս հպարտութեամբ կրնանք գիտել եւ ուրիշին ցոյց տալ այս հատորը, արուեստասէր օտարները եւս հիացումով պիտի թղթատեն հայ հանճարին գովքը հիւսող՝ մանրանկարչութեան այս մեծ հայաչունչ մատեանը..»:

ՀԱՑԱՏԱՆ ԼՈՒՍԱՆԿԱՐՈՒԱԾ՝ ՓԱՐԻԶ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ

Աչտիպ եւ գունաւոր նկարներով

ՖՐԱՆՍԱԿԱՆ ՇՔԵՂ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԸ

Մեծադիր փառաւոր հատոր մը, 200 էջ, 100 արտատպում :

ԳԻՆ 120 Ն· Ֆ·

ԴԻՄԵԼ

« HARATCH », 32 Rue de Trévise, PARIS (IXe)

ՏՕՆԱԿԱՆ ՕՐԵՐՈՒ ԼԱՒԱԳՈՑՆ ՆՈՒԷՐԸ
ՍԻՓԱՆ – ԿՈՄԻՏԱՍԻ՝ ճոր սալը
"ՀԱՅ ԿՐՕՆԱԿԱՆ ԵՐԳԵՐ"
Chants Religieux Arméniens
կը ղեկավարէ Կ· ԱՓՐԻԿԵԱՆ
Փնտռել՝ երգչախումբի վարչութեան անդամներուն, բարեկամներուն եւ հետեւեալ հասցէներուն մօտ :
Restaurant ARTHUR
5, Rue Augustin Thierry
Place des Fêtes. Paris 19e
Librairie H. SAMUEL,
51, Rue Monsieur-le-Prince, PARIS

ԵՒՐՈՊԱՅԻ
ՄԵԾԱԳՈՑՆ ԱՒՏԱԴՐԻՉԸ
ՀԷԼՎԱ
ԼՈԳՈՒԻՄ
Սուսամ – ՀԷԼՎԱ
ԹԱՀԻՆ ՇԱՐՈՑ (ՌՈՃԻԿ)
ՎԱՐԴԷ-ԱՆՈՑՇ
LE BOSPHORE
MARQUE DEPOSEE
ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ...
CHOC-ALVA • CHOCO-LOC
Sté le BOSPHORE
SIÈGE SOCIAL
2, Rue Louis Astouin /Marseille (2ème)

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

Le PREMIER QUOTIDIEN ARMENIEN en EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction et Administration : 32, Rue de Trévise - PARIS-9e

Fondé en 1925
R. C. Seine 57 A 2731

Téléph. : PRO. 86 - 60
C. C. P. Paris 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա՝ Տար. 50 Ն. Ֆ. Վեցամսեայ՝ 27 Ն. Ֆ.
Արտասահման՝ Տար. 60 Ն. Ֆ. Հատը՝ 0·25 Ն. Ֆ.

ԵՐԵՔՇԱԲԹԻ
16
ՅՈՒՆՈՒԱՐ
MARDI
16 JANVIER
1962

38ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 9305 38e ANNÉE Fondateur : SCHAVARCH MISSAKIAN ՆՈՐ ՇՐՋԱՆ, 18ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 5106

ՄԱԼԽԱՍ

« Հին պահակազունդ»ի վերջին նուիրեալներէն մէկն ալ անդարձ բաժնուեցաւ մեզմէ : Մահը տարաւ ինչ որ կորնչելի էր Մալխասէն՝ մեզի ձգելով այն՝ որ բաժին է անմահութեան, հայ ժողովուրդի սրտին մէջ :

Շատոնց հաշտուած մահուան գաղափարին հետ, այս զուարթամիտ ու զը – ւարթախօս ծերունին, արդէն առենէ մը ի վեր կը շրջէր «երկնքի փողոցներուն մէջ»՝ ապրելու համար իր վաղեմի ըն – կերներու կողքին, որոնց հետ շրջագա – յած էր ամբողջ Հայաստանը, յեղափո – խութեան անմար կրակով :

Հազիւ հազորդած էինք իր ժամանու – մը, երբ, օր մը ետք, տխուր պարտակա – նութիւնը տրուեցաւ մեզի՝ դուժելու մա – հը : Մահուան հետ ժամադրուած էր կարծէք հոս, իր ժողովուրդի ծոցին մէջ՝ վերջին հանգիստը տալու համար իր բազ – մատանջ մարմնին, որ իր վախտ պարու – նակին մէջ, կը պարփակէր խոշոր սիրտ մը :

Այսօր, իր անվերադարձ մեկնումին առջեւ, Հայոց յեղափոխութեան հսկա – յական բեմն է որ կը բացուի դարձեալ, իր Վարդաններով եւ Լեւոններով, որոնք « բարկացած աստուածներու նման ան – ցան Հայաստանի լեռներուն վրայէն» , յեղափոխութեան եւ հայրենասիրութեան « կրակէ չապիկը » հագած :

Յեղափոխական փաղանգի այս վերջին շառաւիղը իրագործեց դեղեցկագոյնը հրաշքներուն, տասնամեակներ ետք , իր դիւցազնատիպ հերոսները ապրեցնելով մեր մէջ, զանոնք կենդանի չունչ եւ ապ – րում դարձնելով Հայութեան վտարանդի սերունդներուն :

Մալխաս եղաւ ծարաւի մը յագեցումը : Հայրենազուրկ բազմութիւնները ծարաւն ունէին իրենց հայրենի լեռներուն եւ ձո – րերուն, այդ լեռնաչխարհէն ներս դոր – ծած, մարտնչած ու նահատակուած հե – րոսներուն : Այս ծարաւը յագեցաւ չնոր – հիւ Մալխասի , որ տարիներ շարունակ դործօն մասնակցութիւն բերելէ ետք մեր յեղափոխական մարտնչումներուն, երբ հայրենիքէն հեռացաւ, մերժեց ապրիլ այլոց հետ քան իր հարազատներուն, եւ իր վէպերուն մէջ վերակենդանացուց իր ղէնքի ընկերները, հերոսական ֆէտայի – ները : Անոնց հետ ապրեցան ու ներչըն – չուեցան հայրենակարօտ բազմութիւննե – րը, սերունդները բոլոր, որոնք գաղթաշ – խարհի բոլոր երկինքներուն տակ, փըն – տռեցին ու կարդացին Մալխասի վէպե – րը, որոնք կենդանի ու վառ գոյներով կուտան համապատումը մեր յեղափո – խութեան :

Մալխասի գրականութիւնը ներշնչա – րան մըն է, անարատ ու վճիտ աղբիւր մը, որմէ պիտի գան իրենց պապակը յա – գեցնելու ներկայ ու գալիք բոլոր սե – րունդները : Որովհետեւ բազմավաստակ գրագէտը կրցած է տալ դիւցազնական կողմը այն ժողովուրդին, որ բարոյալը – քումի օրերուն, Մալխասը պիտի ունենայ իրրեւ կորովաչունչ գրագէտ :

Շնորհիւ Մալխասի, մեր յեղափոխու – թեան առասպելական հերոսները մեզի հետ են ամէն օր, որովհետեւ Մալխաս այն գրագէտն է, որ գիտցաւ կեանք ու չունչ տալ իր մտատիպարներուն :

Այսօր, երբ բազմավաստակ գրագէտը կը յանձնենք հողին, երանի կուտանք իր հոգիին, որ իր ամբողջ կեանքի ընթաց – քին, խանդավառուեցաւ հայ ժողովուրդի եւ անոր հայրենիքի ազատագրութեան գաղափարով եւ այդ գծով իր առաւելա – գոյն ծառայութիւնները մատոյց նոյն այդ գաղափարի յաղթանակին համար :

«ԱԶԴԱԿ»

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ԱՐԻՒՆԱԼԻ ՕՐԵՐ ԱԼԺԵՐԻՈՅ ՄԷՋ

ԿԻ ՄՈԼԷ ԴԷՄ Է ԱԼԺԵՐԻՈՅ ԼՔՈՒՄԻՆ

48 ժամուան հաշուեկշիռ մը ցոյց կու տայ արդէն թէ ինչ ողբերգական օրեր ապրած է Ալժերիա : 48 մեռեալ եւ 116 վիրաւոր :

Ահաբեկչական արարքները իրարու յա – ջորդեցին եւ Գաղտնի Բանակն ու Ալժ. Ազատ. Ճակատը ցոյց տուին իրենց «Ալ. ժը» : Նախ Գաղտնի Բանակը՝ որ ռումբ մը նետելով «Ցոյցի Սրճարանին» վրայ 8 մեռեալ եւ 93 վիրաւոր, բոլորն ալ մահ – մետական, պատճառեց : Մահմետական – ները իրար անցան, յարձակեցան եւ քարեր նետեցին Եւրոպացիներու կառքե – րուն վրայ : Կը կարծուի թէ Ա. արար – քին հեղինակները՝ Գաղտնի Բանակի մարդիկը ուզեցին վրէժը լուծել կաթնա – վաճառի մը զոր Ալժ. Ազատ. Ճակատը սպաննեց առջի օր :

Ալժէի արուարձանի մը մէջ Եւրոպացի – ներու կառք մը յարձակումի ենթար – կուեցաւ Ալժ. Ազատ. Ճակատի մարդոց կողմէ, երեք հոգի սպաննուեցան , եր – կու հոգի վիրաւորուեցան : Համայնք – ներու բախումը աւելի քան երբեք սաս – տիկ է, տեւելութիւնը կը չատնայ եւ մթ – նոլորտը, կ'ըսէ «Ֆիկարո»յի թղթակիցը 1956 – 57ի սեւ օրերը կը յիշեցնէ :

Օրանի մէջ, չարաթաւերջը նոյնքան խառնակ եղաւ : Յարձակումներ, առե – ւանդումներ եւն. : Ուսուցիչներուն դոր – ծադուլը Շաբաթ օր, ազատ կը թողուր ութսուն հազար երիտասարդներ : Այս պատճառաւ ապահովութեան արտակարգ միջոցներ ձեռք առնուած էին : Նոյն օրը, պատասխանելով Գաղտնի Բանակի հրա – հանդներուն, Եւրոպացիները կը պարպէ – ին նպաստավաճառներուն խանութները ուր չաքարը եւ ձէթը անգտանելի կը դառ – նային : Հրէական թաղամասին մէջ փոր – ձեր կը կատարուէր, այրերու մահմետա – կաններու խանութները մինչ անդին մահ – մետական բնակչութիւնը արդէն լարուած էր :

Միւս կողմէ Գաղտնի Բանակին կը վե – րագրուի առեւանգում մը որ կատարուած է Օրանի բանտին մէջ : Պաշտօնական թուղթեր ցոյց տալով, Շաբաթ օր , հինգ ոստիկանները որոնց գլուխն էր են – թասպայ մը տէր կը դառնային մահմե – տական չորս բանտարկեալներու, որոնց երեքը մահուան դատապարտուած էին եւ վերջինը՝ ցկեանս բանտարկութեան ըս – պանութեան համար :

Այս ամբողջին առջին հաշուեկշիռն է, ինչպէս վերը ըսինք, 48 մեռեալ որոնց 13ը՝ Եւրոպացի, 116 վիրաւոր, որոնց 48ը՝ Եւրոպացի :

×

Էլիզէն պաշտօնական զեկոյցով մը հեր – քեց այն արտայայտութիւնները զոր անկախ երեսփոխան՝ Փաքէ վերագրած էր տը Կոլի, անոր հետ տեսակցութիւն մը ունենալէ ետք :

Ծանօթ է որ (տես Յառաջ՝ Յունուար 14), Իզէռի երեսփոխանը գլուխ գլխի խօսակցութենէ մը ետք տը Կոլի հետ , բաներ մը պատմած էր Տօֆինէ Լիպեռէի մէջ, զոր բովանդակ մամուլը արտատը – պած էր, չահեկան նկատելով :

Այս առթիւ, Էլիզէի զեկոյցը կ'ըսէ թէ այն յայտարարութիւնները զոր «իբրեւ թէ» նախագահը ըրած է անձնական խո – սակցի մը եւ որոնց արձագանգ եղաւ մա – մուլը առանց արդարացումի եւ առանց վերաքննութեան, չեն համապատասխա – ներ իրականութեան եւ կը զգուշացնէ հանրութիւնը նման գործելակերպերու դէմ : Կը յիշեցնէ նաեւ թէ միայն հարա – զատ կարելի է նկատել Նախագահին այն խօսքերը որոնք արտասանուած են հան – րութեան առջեւ կամ հաղորդուած պաշ – տօնական աղբիւրէ :

Իր կարգին՝ Տօֆինէ Լիպեռէ կը ճշդէ թէ պատասխանատու չէ այն մեկնու – թիւններուն զոր մամուլը տուած է փա – քէի տեսակցութեան առթիւ բայց մէկ տող չի ջնջեր այն խօսքերէն որոնք տը Կոլի բերանը դրուած են եւ Ալժերիոյ կը վերաբերին :

Ցիշենք նաեւ թէ նոյն թերթը տեսակ – ցութիւն մը հրատարակած է կի Մոլէի հետ, ուր Ընկերվարական Ընդհանուր քարտուղարը՝ անհրաժեշտ կը դտնէ ինքնորոշումը Ալժերիոյ մէջ արուն կող – քին պէտք է ըլլան նաեւ «հաւասար եւ փոխադարձ երաշխիքներ երկու հա – մայնքներուն համար» : Այդ երաշխիքնե – րը պէտք է միջազգային ըլլան : Եւ ըն – կերվարական պարագլուխը կը չարունա – կէ :— « Ալժերիոյ Ֆրանսացիները նոյն իրաւունքները ունին ինչպէս Ֆրանսացի Ալժերացիները : Պէտք է պաշտպանուին բռնութեան դէմ , ուրկէ ալ գայ, անիկա : Այս կէտին վրայ է որ, մենք ընկերվա – րականներս, համաձայն չենք Զօր. տը Կոլի հետ : Ինքնորոշում, այո՛, բայց պարզապէս քաշուիլ՝ ո՛չ : Ալժերիոյ պարզ լքումը՝ իրական լուծումը չէ , ո – րովհետեւ կրնայ պատճառ դառնալ ան – հանդուրժելի ջարդերու մարդկային խղ – ճին համար » :

ՄԱԼԽԱՍԻ

ԱԶԳԱՅԻՆ ՅՈՒՂԱՐԿԱԽՕՐՀՈՒԹԻՒՆԸ

—o—

Երեքշաբթի, Յունվ. 9ին, Նոր Մարաշի Քառասուն Մանկանց եկեղեցիին մէջ տե – ղի ունեցաւ թաղմանական կարգն ու յու – ղարկաւորութիւնը զրագէտ Մալխասի :

Շատ կանուխէն, եկեղեցին եւ շրջակա – նները լեցուած էին խուռն բազմութեամբ մը :

Ժամը ճիշդ 2ին, Ամերիկեան հիւան – դանոցէն դագաղը բերուեցաւ եկեղեցի :

Ժամը ճիշդ 3ին սկսաւ արարողութիւ – նը :

Արարողութեանց կը նախագահէր Լի – բանանի Թեմի առաջնորդ Տ. Տրէն Արք. Բարոյեան, շրջապատուած վարդապետ – ներով եւ տասնեակ մը քահանայ հայրե – րով :

Ցաւարտ արարողութեան, Տ. Տրէն Արք. խօսեցաւ հոգեչունչ եւ իմաստալից դամ – բանական մը, վեր հանելով հանգուցեա – լին արժանիքները, իբրեւ գրող, մտաւո – րական եւ յեղափոխական :

Տեղատարափ անձրեւին պատճառաւ, տեղւոյն վրայ յարմար նկատուեցաւ որ դամբանականները խօսին Քառասուն Մանկանց դպրոցի բակին մէջ, ուր փո – խադրուեցաւ հանգուցեալին դագաղը՝ ե – ռագոյնով ծածկուած :

Համազգայինի եւ Ն. Փալանճեան ճե – մարանի կողմէ խօսեցաւ Մ. Իչխան՝ դր – ուատանքով, եւ ցաւակցութիւն յայտնեց հանգուցեալի այրիին ու պարագաններուն :

Ապա , Հ. Ց. Դաշնակցութեան Գերա – գոյն Մարմինին կողմէ խօսք առաւ ըն – կեր Կարօ Սասունի, որ Դաշնակցութեան բոլոր Կեդր. Կոմիտէներու եւ Մարմին – ներուն կողմէ ցաւակցութեան խօսք ուղ – ղեց այրիին եւ ներկայ գտնուող հազա – րաւոր երիտասարդ ընկեր եւ բարեկամ – ներուն :

Հակառակ տեղատարափ սաստիկ անձ – րեւին, թափօրը կազմուեցաւ :

Դագաղը եկեղեցւոյ գռնէն դուրս ելած ատեն, Պուրճ Համուտի ոստիկաններու Ջոկատ մը, իրենց պետերուն առաջնոր – դութեամբ, պատուի ատեն, բերելով յարգանքի իրենց բաժինը :

Հ. Մ. Ը. Մ.ի Սկաուտները, Արծուիկ – ները եւ Աղգր Նահրի բոլոր վարժարաննե – րու աշակերտութիւնը կարգի չարուած՝ իրենց որդիական յարգանքը մատուցին մեծ անհետացողին : Անձրեւը արգելք ե – ղաւ սակայն, որ հազարաւոր դպրոցա – կաններ հետեւին դագաղին :

Ապա քաջարի երիտասարդ ընկերներ և սկաուտներ, անգոսնելով բուք ու բոր – ան, մինչեւ գերեզմանատուն ձեռամբարձ տարին դագաղը, անցնելով հայկական թաղերէն :

Ստուար բազմութիւն մը նախապէս ար – դէն հասած էր գերեզմանատուն, ուր և – կեղեցական – թաղմանական կարգէն յե – տոյ ընդհանուր յուզումի մէջ հողին յանձնուեցաւ Մալխաս, իր այնքան սի – րած հայ ժողովուրդի գերեզմանատան մէջ :

Ծաղկեպսակները ղրկած էին՝

Հ. Ց. Դաշնակցութեան Գերագոյն Մարմինը, Հ. Ց. Դ. Հրուանդանի Կ. Կո – միտէն, Տիկին Անահիտ Մալխաս : իր զա – ւակը եւ թոռնիկը, Հ. Ց. Դ. Պէյրութի եւ Աղգր Նահրի բոլոր կոմիտէները, Հա – մազգայինի Կեդր. վարչութիւնը, Պէյ – րութի վարչութիւնը, Ճեմարանի Շրջ. Միութիւնը, Պուրճ Համուտի քաղաքա – պետական խորհուրդը, Լիբանանի Օգն. Խաչի Կեդր. վարչութիւնը, « Ազդակ » , « Ազատ Օր » (Յունաստան), Հ. Մ. Ը. Մ.ի շրջանային եւ քաղաքին ու Աղգր Նահրի բոլոր վարչութիւնները, ինչպէս նաեւ Օգն. Խաչի քաղաքի եւ Աղգր Նահ – րի բոլոր մասնաճիւղերը, Քառասուն Մանկանց, Նոր Սիսի եւ Ատանայի թա – ղական խորհուրդները եւ անոնց յարա – կից բոլոր վարժարանները, Ազգարեան եւ Ահրամճեան վարժարանները , Հայ Աւետարանական Գոլէճը (Պէյրութ), Պ. Գէորգ Երեւանեան, Դաղարեան ընտա – նիք, Վարուժան Աղասարդիսեան , Հա – մավասպուրական Հայր. Միութեան կեդ – րոնական վարչութիւնը եւ Պէյրութի վարչութիւնը :

Թափօրի անցած բոլոր թաղերուն մէջ , Հայերու եւ Արաբներու պատկանող բոլոր խանութները զոցուած էին, ի յարգանս ննջեցեալին :

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԵՒՐՈՊԱՑիի վերջերը որոնք 23 օր է նիս – տի նստած էին Պրիւսէլի մէջ առանց հա – մաձայնութեան մը գալու, ի վերջոյ լու – ծումի մը յանդեցան ի վնաս Դաշնակցա – կին Կերմանիոյ, որ ստիպուեցաւ պիջում – ներ ընել երկրագործական մարզին մէջ :

ԹՈՒՐՔԻԱՅէն եկած լուրերը մատնո – ղիչ կը թուին տեղական մամուլին որ նոյնիսկ անմիջական կը դտնէ երկրորդ յեղափոխութիւն մը :

ԱՆԳԼԻԱ «յեղափոխական» որոշում մը տուաւ : Այսուհետեւ չերմութեան աստի – ճանները պիտի տրուին սանթիկրատով , փոխանակ դարերէ ի վեր տեւող փարը – ւայքը :

ՓԵՐՈՒԻ աղէտին առթիւ Ֆրանսա 150 հազար Նոր Ֆրանքի օժանդակութիւն մը ըրած է :

ԳԱՀԻՐԷի մէջ երկուշաբթի օր բաց – ուեցաւ Ֆրանսացի «լրտեսներու» դատա – վարութիւնը : Ասոնք կ'ամբաստանուին այն մեղադրանքով որ փորձած են սպան – նել... Նասրը : Հաւանական կը նկատուի որ վճիռը արդէն որոշուած ըլլայ՝ ցկեա – նըս տաժանակիր աշխատանք :

ԼԻԲԱՆԱՆի կառավարութիւնը արտօ – նութիւն չտուաւ նախկին նախագահ՝ Քա – միլ Շամունի եւ հինգ ուրիշ անձնաւո – րութեանց որ Լիբանանէն դուրս ելլեն, երկրին ներկայ պայմաններուն մէջ :

ԵԿՂԻՏԷՍ ՀԱՅԵՐԷՆ

Մինչեւ վերջերս հայագիտութեան ուշադրութեան առարկան գլխաւորաբար հայ պատմիչներն էին եւ հայ տաղերգուները: Գիտութեան նուաճումները անոնց տեսողութենէն դուրս մնացած էին: Եւ տարիներու ընթացքին այն սխալ տպաւորութիւնը առեղծուած էր, թէ հայ մտաւորականութիւնը աղքատ է ճշդրիտ գիտութիւններուն վերաբերեալ աշխատութիւններով:

Գիտութեան եւ թէճնիքի բուռն զարգացումը Հայաստանի մէջ բնական հետաքրքրութիւն յառաջացուց դէպի ճըշդրիտ գիտութիւններու պատմութիւնը: Հայ գիտնականներուն ջանքերով մատենադարանի ձեռագիրներուն մէջ երեւան եկան ճշդրիտ գիտութեան պատմութեան վերաբերեալ սքանչելի գոհարներ, որոնք հրատարակուեցան եւ գիտութեան լայն շրջանակին սեփականութիւնը դարձան: Սակայն դեռ կան գիտութիւններու պատմութեան հետ կապ ունեցող բազմաթիւ առեղծուածներ:

Հայագիտութեան ամէնէն մեծ առեղծուածներէն մէկը Գ. դարուն (Ք. Ա.) ապրած Աղեքսանդրեան դպրոցի հանճարեղ յոյն թուաբանագէտ Եւկղիտէսի «Տարերք երկրաչափութեան» հայերէն ամբողջական բնագիրին բացակայութիւնն է: Մինչդարու հայ մատենադրութեան մէջ մինչեւ այսօր յայտնի է միայն անոր մէկ փոքրիկ պատառիկը, որ 1051-ին յունարէնէ հայերէնի թարգմանած է Գրիգոր Մագիստրոս: Մեզի հասած հին հայկական ճարտարապետական հիանալի կոթողները, որոնք չինուած են արտաքարզ համաչափութեամբ եւ ներդաշնակութեամբ, ուսողութեան դասաւանդութիւնները Գլաձորի նշանաւոր համալսարանին եւ միջնադարու բարձրագոյն միւս դպրոցներուն մէջ, Ե.–Զ. դարերուն հայ ուսանողներուն Աղեքսանդրիա ուսանելու փաստը եւ պատմական միջանկեալ տեղեկութիւնները հիմք տուած են հայագէտներուն ենթադրելու, որ հին ատենէն ի վեր գոյութիւն ունեցած է Եւկղիտէսի «Երկրաչափութեան» ամբողջական բնագիրը հայերէն, որ, դժբախտաբար, չէ հասած մեր ձեռքը:

Եւկղիտէսի «Երկրաչափութեան» վերջին հայկական պատառիկին վերջին հրատարակիչներէն մէկը՝ Ն. Ակինեան, քննութեան առնելով Եւկղիտէսի «Երկրաչափութեան» ամբողջական բնագիրին հայերէնի թարգմանութեան հարցը ու գալով այն համոզումին, թէ ան խիստ գոյութիւն ունեցած է, իր ուսումնասիրութիւնը ամփոփած է հետեւեալ բառերով, «... Տար բառը եւ գոնէ Եւկղիտեան «Երկրաչափութեան« հայերէն թարգմանութիւնը՝ իւր ամբողջութեան մէջ»:

Հայ ազբիւրագէտներուն տարիներու փնտռտուքները վերջապէս պսակուեցան յաջողութեամբ, յայտնաբերուեցաւ Եւկղիտէսի «Երկրաչափութեան» հայերէն ընդարձակ բնագիրը: Ձեռագիրին տարօրինակ դիպուածովը այս բնագիրը յայտնաբերուեցաւ ոչ թէ Երեւանի Մատենադարանին հարուստ հաւաքածոյին մէջ, ուր կարելի էր ակնկալել, այլ Հիւսիսային Ամերիկայի Քանզաս քաղաքին մէջ ապրող հայ բանասէրի մը ձեռագիրներու հաւաքածոյին մէջ: Այդ յայտնագործութիւնը հետեւեալ պատմութիւնը ունի:

1959ին «Բազմավէպ» ամսաթերթին մէջ լոյս տեսաւ բանասէր Յ. Փիւրտեանի մէկ փոքրիկ հաղորդագրութիւնը այն մասին, թէ իր ձեռագիրներէն մէկը կը պարունակէ Եւկղիտէսի «Երկրաչափութեան» ընդարձակ բնագիրը եւ մասնագէտ բանասէրներուն ուշադրութիւնը կը հրաւիրէր: Այս լուրը դրաւեց մեր ուշադրութիւնը: Մենք նամակով խնդրեցինք իրմէ՝ ղրկել իր ձեռագիրին միքրոֆիլմը: Բանասէրը Փիւրտեան սիրով ընդառաջ գնաց մեր խնդրանքին եւ ուղարկեց պատճէնը: Ձիշտ բնագրին վերծանութենէն եւ մասնագիտական ուսումնասիրութենէն պարզուեցաւ, որ մենք մեր առջեւ ունինք գիտութիւններու պատմութեան համար եզակի նշանակութեամբ բնագիր մը, որ արժանի է բացառիկ ուշադրութեան:

Եւկղիտէսի նորայայտ «երկրաչափութեան» հայերէն ընդարձակ բնագիրը պարունակող ձեռագիրը կիսակաշի լաթակամ է՝ բաղկացած 228 թերթերէ: Ձեռագիրը գրուած է միասին, նօտր-դիր, սեւ մելանով: Էջերը վերցուած են եռափի ոսկիէ չրջանակի մը մէջ: Ձեռագիրը կը պարունակէ Եւկղիտէսի ութ գիրքերը՝ 1–6 եւ 11–12: Համապատասխան տեղերուն մէջ գետեղուած են երկրաչափական 222 գծագրութիւններ, որոնք կատարուած են արտակարգ խնամքով, կարմիր եւ մանուշակագոյն մելանով: Երկրաչափական գծագրութիւնները նշանակուած են հայկական տառանիշերով: Բնագիրին լեզուն գրաբար է:

Հայկական նորայայտ բնագիրին համեմատութիւնը Եւկղիտէսի «Երկրաչափութեան» օտար այլ եւ այլ լեզուներով գրուած եւ նախնական համարուած բնագիրներուն հետ, ցոյց տուաւ, որ հայերէն բնագիրին բովանդակութիւնը հիմնականին մէջ կը համընկնի հետեւեալ բնագիրին մէջ կը համընկնի հետեւեալ բնագիրին հետ. նման են երկրաչափական սահմանումները, գործողութիւնները, երկրաչափական խնդիրները մէջտեղ դնելու եւ լուծելու ձեւերը, երկրաչափական գծագրութիւնները մեծ մասը եւայլն: Սակայն այս երկու բնագիրներուն մէջ կը նկատուին նաեւ զգալի տարբերութիւններ:

Եւկղիտէս իր «Երկրաչափութեան» մէջ խուսափած է չափագիտական խնդիրներ չօշափելէ, մինչդեռ հայկական տարբերակին հեղինակը լայնօրէն կ'արծարծէ կիրառական երկրաչափութեան վերաբերեալ խնդիրները: Հայերէն բնագրին մէջ, իրրեւ կանոն, ամէն մէկ թեորեմի ապացոյցէն եռք կը մատնանշուի թեորեմի գործնական օրինակը: Հայ հեղինակը, ի տարբերութիւն Եւկղիտէսի, տուած է չրջանակին աստիճաններուն բաժանումը եւ գործադրութիւնը:

«Երկրաչափութեան» հայ հեղինակը իր կազմած բնագրին մէջ լայն տեղ յատկացուցած է հաշուական թուաբանութեան, որով եւ կը հեռանայ Եւկղիտէսէն: Այս պարագան յատկապէս նկատելի է 2րդ եւ 3րդ գիրքերուն մէջ:

«Երկրաչափութեան» տեսողական պատկերացումին հայ հեղինակը կուտայ մեծ կարեւորութիւն: Ասով պէտք է բացատրել այն իրողութիւնը, որ 11րդ գիրքին մէջ տարածաչափական գծագրութիւնները ներկայացուած են հեռանկարներով: Երբեմն հայ հեղինակը կուտայ իր ապացոյցը, ինչպէս օրինակ՝ 3րդ գրքին 3րդ տեսութեան մէջ:

Երկրաչափական հաշիւներուն մէջ Եւկղիտէսին գծագրութիւնները ամբողջացած են նոր գծագրութիւններով: Մեծ հետաքրքրութիւն կը ներկայացնէ այն փաստը թէ հեղինակը կը կատարէ ան-վերջ մեծ եւ անվերջ փոքր մեծութիւն-ներու գործադրութիւն: Կոնդին ծառալը կը պատկերացնէ անվերջ թիւով, անվերջ կոներու կազմութեամբ, որոնց ծայրը պտնուելով գունդին կեդրոնը, բարձրութիւնը կը հանդիսանայ գունդին չառաւիղը, իսկ հիմքը՝ գունդին մակերեւոյթին վրայ անվերջ փոքր մակերեսը: Կոնը կը դիտուի իբրեւ անվերջ կողմեր ունեցող բուրգ, իսկ գլանը՝ անվերջ թիւերով կազմուած բազմակող պրիսմակ:

Հայերէն բնագիրին հեղինակը տարբեր մօտեցում ունի նաեւ զուգահեռներու հարցին մէջ: Ի տարբերութիւն Եւկղիտէսի «Երկրաչափութեան», հայկական բնագիրը ունի միայն երեք փոսբուլատ: Ուղիղ անկիւններուն եւ զուգահեռականներուն վերաբերեալ փոսբուլատները կը գտնուին գործողութիւններուն մէջ:

Նորայայտ հայկական բնագիրին բազդատութիւնը Եւկղիտէսի «Երկրաչափութեան» հետ յստակ ցոյց կուտայ, թէ մենք գործ ունինք ոչ թէ մեքենայօրէն, բառացի եղած թարգմանութեան մը հետ, այլ Եւկղիտէսի «Երկրաչափութեան» վերամշակուած եւ զատաւանդութեան համար յարմարցուած բնագիրի մը հետ:

Հայ հեղինակը, ըստ իր հայեցողութեան, ոչ միայն կրճատած է առանձին հատուածներ, այլեւ տեղ-տեղ, այս կամ այն երկրաչափական խնդիրը հասկնալի դարձնելու համար, կը բացատրէ, կը պարզէ գայն: Այսպէս, օրինակ, հայ թարգմանիչը փոխած է Եւկղիտէսի 2րդ գիրքին 5րդ խնդիրը, տալով հետեւեալ ծանօթութիւնը, «Մենք փոխեցինք Եւկղիտէսի ապացոյցը, որպէսզի տանք լաւագոյն այնպիսի ապացոյց մը, որ աւելի լաւ լուսաւորէ ընթերցողին միտքը» (մէջբերումը կուտանք աշխարհաբար թարգմանութեամբ):

Աղբիւրագիտական մանրազնին ուսումնասիրութիւնը մեզ բերած է այն եզրակացութեան, որ Եւկղիտէսի «Երկրաչափութեան» նորայայտ հայկական տարբերակը կազմուած ժէ. դարուն, երեք հինգական աղբիւրներու հիման վրայ: Հին հայկական, որ յունարէնէ թարգմանուած պէտք է ըլլայ ե.— Զ. դարերուն, հատուածաբար Աղեքսանդրիա ուսանող հայ երիտասարդներու կողմէ, արաբական բնագիրէն, որուն հետքերը մնացած են առանձին արաբերէն բառերուն եւ արեւելեան արաբական թուանշաններուն գործածութեան մէջ եւ լատինական աղբիւրէ մը, որմէ հայ բնագիրին անցած են եւրոպական երկրաչափութեան նորութիւնները:

Մեր ուսումնասիրութենէն պարզուեցաւ նաեւ, որ հայերէն բնագրին հատուածական հեղինակն է Գրիգոր Կեսարացի, որ, ըստ ժամանակակիցներու վկայութեան, եղած է անուանի ուսուցչապետ եւ գրագէտ է երկրաչափութեամբ: Ան է, ի դէպ, որ կազմած է հայերէն առաջին աշխարհագրունդը: Կ'ենթադրուի նաեւ, որ «Երկրաչափութեան» նորայայտ բնագիրը կազմած է Նոր – Զուղայի բարձրագոյն դպրոցին համար:

Եւկղիտէսի «Երկրաչափութեան» նորայայտ հայկական տարբերակը բացառիկ արժէք ներկայացնող փաստ մըն է դիտութիւններու պատմութեան համար Հայաստանի մէջ: Ան կուգայ նորէն փաստելու այն մեծ հետաքրքրութիւնը, որ ցոյց տուած է հայ միտքը միջնադարու մռայլ իրականութեան մէջ բնական դիտութիւններուն, մասնաւորաբար երկրաչափութեան նկատմամբ:

«Երկրաչափութեան» նորայայտ հայկական բնագիրին արժէքը սակայն չի սահմանափակուիր տեղական նշանակութեամբ: Ան կարեւոր է ընդհանրապէս Եւկղիտէսի «Երկրաչափութեան» նախնական բնագրին, անոր մեկնութիւններուն եւ տարբերակներուն հետ կապուած հնոտառ հարցերու ուսումնասիրութեան եւ լուսաբանութեան համար:

Անհրաժեշտ է նաեւ նկատել, որ «Երկրաչափութեան» ներկայ բնագիրը իր մէջ կը համադրէ տուեալ բնագաւառին մէջ ստեղծուած հին դիտութեան յաջողութիւնները արեւելեան ազգերու ստեղծագործ միտքին եւ Եւրոպական դիտական միտքին նորութիւններուն հետ: Այդ իմաստով, ան կը հանդիսանայ Արեւելքի եւ Արեւմուտքի դիտական միտքը զոդող ոսկեայ օղակներէն մէկը:

Գ. ՊԵՏՐՈՍԵԱՆ
եւ Ա. ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

ԿԱՐԴԱՑԵՔ ՏԱՐԱԾԵՑԵՔ «ԾԱՌԱԶ»Ը

ԱՄԲԱՍՏԱՆԵԱԼ ՍԹԱԼԻՆ, ՈՏՔԻ՛

—o—

3) Այս դասակարգերէն իւրաքանչիւրին համար նախապէս որոշուած տոկոսի մը համապատասխանող թիւով մարդիկ պիտի մաքրագործուին:

4) Ճշդրիտ թուականներ պիտի որոշուին իւրաքանչիւր նահանգի, շրջանի եւ դաշնակցային հանրապետութեան մէջ՝ իւրաքանչիւր դասակարգի մաքրագործման համար:

Դիւրաւ կարելի է երեւակայել կամայականութեան այն աստիճանը, որուն պիտի հասնէին ձերբակալութիւնները, երբ մտածենք թէ ոստիկանութեան հրահանգուած էր նախապէս որոշուած համեմատութեամբ մարդիկ ձերբակալել իւրաքանչիւր դասակարգէ: Երբ որոշուած համեմատութեան թիւէն պակաս ըլլային ձերբակալուածները՝ այս անգամ պատասխանատու ոստիկանները կը ձերբակալուէին որպէս «ժողովուրդի թշնամի»:

Քրուչչեվ, «Ազատութիւնն ընտրեցի» գրքին հեղինակը, կը պատմէ թէ ինչպէս օր մը, ոստիկան մը սարսափով կը բացագանչէր՝

— Ձերբակալութեանց մեր ծրագիրը լիովին չենք գործադրած ...

Առաջին հերթին բռնուեցան այն բոլոր անձերը, որոնք էնքավէտէի թղթածրարներուն մէջ նշանակուած էին որպէս կասկածելի: Մեծ էր ասոնց թիւը, բայց անբաւարար:

Ցետոյ դիմեցին մատնիչներու օգնութեան: «Փրաւտա» եւ միւս թերթերը «բոլշեւիկեան աչալրջութեան» կոչ կ'ուղղէին իրենց ընթերցողներուն: Անոնցմէ կայելի չափանիշներու հասան մատնութիւնները: Մոսկուայի գործարաններէն մէկուն մէջ միայն երեսուն հազար մատնութիւններ արձանագրուեցան: Զաւակ մը մատնեց իր հայրը. անչուշտ անհիմն կերպով. հայրը սպաննեց այդ զաւակը: Արձան մը բարձրացուցին երիտասարդ հերոսին յիշատակը պանծացնելու համար:

Այս բոլորը դեռ բաւական չէր. հարցաքննեցին, հետապնդեցին, չարչարեցին բոլոր ձերբակալեալները, որպէսզի խոստովանին թէ որո՞ւն կողմէ մղուած էին, կամ ուրիշ ո՞վ մղած էին հակա-յեղափոխական գործունէութեան:

Այսպէս, մէկէն – միւսին անցնելով, ամէն ոք սպառնալիքի տակ էր:

Ահ ու սարսափը կը տիրէր ամբողջ երկրին վրայ:

Այս հսկայատարած մաքրագործումը դլուխ բերելու համար թունաւորիչ իա – կոտա անբաւարար նկատուեցաւ չուտով Մանր – մունր գործերու մարդ էր: Ան – հրաժեշտ էր զայն փոխարինել աւելի լայն հայեցողութիւն ունեցող անձով մը:

1936 Սեպտեմբեր 25ին Սթալինն, որ Սոչիի մէջ հանգստանալու գացած էր, հետեւեալ հեռագիրը կը ղրկէր Կեդրոնական կոմիտէին.

«Իակոտա վերջնականապէս փաստեց Թրոցքիական – Զինովիէվական խմբակը դիմազերծելու իր անկարողութիւնը: Այս խնդրին մէջ էնքավէտէն չորս տարուան յապաղում մը ունի: Բացարձակապէս անհրաժեշտ եւ անյետաձգելի կը դտնենք, որ ընկերը Եկով նշանակուի ներքին գործերու ժողովրդական կոմիսար»:

Երկու տարիէ ի վեր Եկով Իակոտայի օգնականն էր:

Լէնինկրատցի բանուոր, Ցեղափոխութեան առեն 22 տարեկան էր: Քաղաքական պատերազմին ընթացքին կարմիր բանակին մէջ կը ծառայէր, բայց առանց մասնաւոր հաւատքի կամ քաջութեան: Տեսակ մը թզուկ էր (հասակը՝ մէկուկէս մեթր), որուն անպիտութիւնը սահման չէր ճանչնար:

Երբ Կրեմլինի աստղերէն մէկը դարձաւ, «Փրաւտա» գայն կը յորջորջէր «երկաթեայ մարդը», «Սթալինի վստահելի ընկերն ու հաւատարիմ գործակիցը», «հակայեղափոխութեան չանթը»: Բայց պաշտօնական կենսագիրները յուսահատութենէն իրենց մազերը կը փետէին, ուրտեղէ՞ն հնարել էնքավէտէի վախազդու պահին չգործած քաջագործութիւնները:

Իրականին մէջ, միայն կուսակցութենէն ներս է, որ Եկով «քաջագործութիւններ» կատարած էր, այն ալ՝ մասնաւոր ձեւի քաջագործութիւն. մասնագիտացած էր մատնութեան մէջ: Երկրամշակութեան նախարարութեան մէջ աննշան ու երկրորդական պաշտօնեայ՝ այս նախարարութեան սպասարկութիւններէն ներս կուսկցութեան դէմ ուղղուած «դաւադրութիւն» մը դիմազերծելով իր վրայ հրաւիրեց մեծերու ուշադրութիւնը: «Դաւադրութեան» կազմակերպիչն ալ ուրիշ մէկը չէր եթէ ոչ ... նոյն ինքն նախարարը, հին բոլշեւիկ Սմիրնովը, որ պաշտօնէն հանուեցաւ:

Այս սխրագործութենէն եռք, Եկովի ապագան այլեւս չտկուած էր: 1934ին նշանակուեցաւ կեդրոնական կոմիտէի անդամ (Խրուչչեւի հետ միաժամանակ): 1935ին դարձաւ Եակոտայի օգնական: Ինքն է, որ պատրաստեց մաքրագործութիւններու ծրագիրները: Իր անհուն անպիտութիւնը առատ անունդ կը տանար այդ պաշտօնին մէջ:

Եկովի եռա վիճակուեցաւ իր բոլոր նախորդներուն վախճանը. 1938 Դեկտեմբերին պաշտօնազրկուեցաւ եւ անհետացաւ տակաւին չճշդուած պայմաններու մէջ. վստահաբար սպաննուեցաւ էնքավէտի նկուղներէն մէկուն մէջ:

(17 Շար.)

ԱԼԻՇԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԸ ՀՌՈՄԻ ՄԷՋ

—o—

(Մահուան 60ամեակին առթիւ)

ՀՌՈՄ, (Յատաջ).— Տարւոյն վերջին օրը, առաւօտեան ժամը 10ին, Հռոմի Հայ գաղութը հաւաքուած է Հայոց չքեղ եկեղեցին մէջ· վարժարանի մեծաւորը Ներսէս Ծ· Վ· Սէթեան, պատարագ կը մատուցանէ Ալիշանի խնկելի յիշատակին, երջախտաւորը՝ կազմուած Մխիթարեան եւ Լեւոնեան վարժարանի մեր կենսու – րախ ժառանգաւորներէն, մերթ ընդ մերթ լսելի կ'ընէ Եկմալեան եւ Կոմիտասեան բազմաձայն պմպլելի մեղեդիները, յուզումի արցունքներ խլելով բնաչխարհի յուշերով ապրող չատ մը ներկաներէ :

Պատարագը աւարտած է, ներկաները կ'ուղղուին վարժարանի ճաշակաւոր ընդարձակ դահլիճը որ ազգայնօրէն զար – դարուած է, կեդրոնը ունենալով Հայոց Նահապետին մեծազիր նկարը, չրջա – պատուած վաւրուան եռագոյնով : Աջին ու ձախին ճոխ բուսականութեան մը մէջ – չէն կը սեւնուին իտալական եւ Ս· Աթո – ռի գոյզ դրօշակները :

Ժամը 11, ծափերու մէջ գահլեհ կը մտնեն Գրիգոր Աբգ· Հինաիէ, Գեբպ·կի – բակոսեան, Հ· Հմայեակ վրդ· Գէտիկեան Մեծաւոր Մխիթարեան Ուսանողաբանին, Գերյ· վարդապետները Տ· Ներսէս Սէթ – եան, Տ· Յովսէփ Գաֆթանճեան, Տէր Յարութիւն Թէքէեան՝ Հովիւը Ուրու – կուէի հայ – կաթոլիկէ համայնքին, Տ· Դէորգ Ձիվէրմեան Արժանթինի անդրա – նիկ պատուիրակ, չարաթ մը առաջ ձեռնա – դրուած Ամենայ· Հոգեւոր Տիրոջ ձեռ – քով, եւն ...

Ներկաներուն մէջ աչքի կը զարնեն հայ մայրապետներու եւ մեր համալսարանա – կան երիտասարդութեան (Մ· Լուփայէլ – եանի նախկին սաներ, մեծ մասամբ) բազ – մութիւնը :

Զարնկի արեւահամ բառերուն զուգ – ուած Սաթեանի կենսուրախ երաժչտու – թիւնը լսեցինք մեր երջախտաւորէն, ըն – կալաւորուած Գաֆթանճեան վարդապետի կողմէ իր լաւագոյն բացումը այս հայ – րենական հանդիսին :

Արդէն բեմին վրայ է Յարութիւն Եվէ – քեկեան (Լեւ· վարժարան) որ Ալիշանի կենսագրականը կ'ընէ, թուելով անոր կարեւոր գործերը, դաստիարակչական գործունէութիւնը, Լուփայէլեան վար – ժարանին մէջ եւ իրեն չունչով հասուն – ցած վերածնունդի մեր գործիչները :

Անտոն Փանոսեան (Լեւ· վարժարան) զգացումով կ'արտասանէ «Մերուն նա – հապետին» երիտասարդական ոտիւնով գրած քերթուածը «Հայաստանի Ոգիին» նուիրուած, ապա բեմ կը հրաւիրուի Գաբրիէլ Սահակեան (Մխիթ· Ուսանող) որ երկար՝ բայց քնարական չունչով օ – ծան ուսումնասիրութիւն մը կը կարդայ Ալիշանի բանաստեղծական ապրումնե – րուն վրայ :

Երջախտաւորի թովիչ ձայնը այս ան – գամ մեզ կը փոխադրէ չատ հեռուները, հոն ուր կը կանչէ Աւարայրի Պլպուլը եւ ուր Ալիշանի գրիչին կը միանայ Ալէմ շա – հի անոյչ սիրտը մեզի տալու համար այս քաքուչ գլուխ – գործոցը «Ո՛հ դու բա – րեկա՛մ» :

Հիմա Ալիշան ինքն է որ կը խօսի Ռա – փայէլ Անտոնեանի (Մխիթ· Ուսանող) եւ Լեւոն Զէքեանի (Մխիթ· Ուսանող) բեր – նով պատմելով բնածին եւ անկեղծ չէշ – տով երեն՝ ներանձնացած կրօնաւոր հո – գիին վիշտն ու տառապանքը «Խոնաս – տեղծութեան ոգիին» պատճառած ցը – րումներուն համար որուն կուտայ երեն « Հուսկ բանը» (32 տարեկան երիտա – սարդ հասակին) ոչ առանց խոր կսկիծի

«Երգերուս դու ոգի՛, ո՞ւր ես մայր
Խաղդիս գեղեցիկ ·
Ջրնար, լրոիկ լուծուեցա՞ր, սիրտ իմ ,
ալ չե՞ս ազդեցիկ ·
Ջկա՞ն ալ երգեր, ա՛լ չկայ սիրտ, ի՛նչ
որ էի, ալ չե՞մ ես···
Ժամանակնե՛ր, ոհ փախէ՛ք, անհուն
քող կլլէ գիս :»

Եղիա Գիրէճեան (Լեւ· վարժարան), Ալիշանի կեանքէն յատկանշական դէր – ուագներ քաղելով կը ներկայացնէ մեղի պարզ, համառօտ ու կոկիկ ձեւով· «Ձեմ գիտեր թէ ի՞նչպէս Արքայութիւն կրնայ երթալ անձկա որ երեն ազգը չի սիրեր» կ'ըսէ եղեր հանճարեղ Մխիթարեանը իր եղբայրակիցներուն· եւ թէ ինչ կարօտով կը ողջագուէր Հայաստանէն վերադար – ձող միաբանակիցներն ու ուխտաւորները տեսակ մը նախանձով նայելով նոյնիսկ անոնց կօչիկներուն որ արժանի եղած են հայրենի Ս· հողին դպչելու :

Վերջին պահուն երկու խօսք մը կը խնդրէ վարժարանի յարգոյ մեծաւորը փոխանցելու համար Ծիրանաւոր – Պատ – րիարքի, Կարդինալ Ագաճանեանի հայ – րական խնդակցութիւնը, օրհնութիւնը եւ խոր ցաւը որ ակամայ չէր կրնար այդ պահուն «իրեն որդիներուն» մէջ ըլլալ (Հռոմէն բացակայ էր)· ապա ընթացք տալով իրեն եկեղեցական եւ հայրենասէր հոգիին, մեծարգոյ հայրը կը փակէր ի – րեն խորհրդածութիւնները պեղեցիկ յոր – դորով որ Մեծն Ալիշանի նման միացը – նենք մեր բոլոր կարողութիւնները ծա – ռայելու մեր նուիրագործուած Հայրենի – քին եւ անոր միջոցով՝ Աստուծոյ :

Հուսկ ուրեմն ներկաները յոտնկայս ունկնդրեցինք ռազմաչունչ « Փամ – բո – րոտան»ը քառաձայն երգուած մեր բազ – մարիւն երգչախումբին կողմէ :

ԹՂԹԱԿԻՑ

ՉՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ ՁԵՌԱԳԻՐՆԵՐԸ ՉԵՆ ՎԵՐԱԴԱՐՁՈՒԻՐ :

ԿՈՉ

Ատանացիներուն եւ յատկապէս կի – լիկիոյ իրադարձութեանց ծանօթ ան – ձերուն :

—o—

15 Հոկտեմբեր 1961ին վերակազմուե – ցաւ Ատանայի Հայր· Մխիթեան վար – ժարանը եւ վերընտրուեցաւ «Ատանայի Հայոց Պատմութեան Մշտրագրական մար – մինը» :

Զոյգ մարմինները վճռած են չարժման մէջ դնել երեսից տրամադրութեան տակ գտնուող նիւթական եւ բարոյական բո – լոր միջոցները, հնարաւոր եղածին չափ չուտ ու խնամեալ ձեւով խմբագրելու եւ հրատարակելու համար այն գործը, որ պիտի կրէ «Պատմութիւն Հայոց Ատա – նայի» խորագիրը :

Ս· այդ, ներկայով կոչ կ'ուղղուի ամէն Հայու, մասնաւորաբար Ատանացիի, որ իրազեկ է կիլիկեան մեծ ոստանին պատ – մութեան, անյապաղ թղթակցելու խըմ – բագրական Մարմնին հետ, տեղեկանալու համար մեր ձեռնարկին օրտակար ըլլալու պայմաններուն :

Միւս կողմէ, կը խնդրուի ամէն Հայէ ու մասնաւորաբար Ատանացի Հայրենա – կիցներէ, խմբագրական մարմնին տրա – մադրութեան տակ դնել — վերադար – ձնելու պայմանով — ամէն վաւերա – թուղթ, նկար, ինքնագիր յուչեր, հին թերթերու հատուածներ, վիմագրա – կան, պատմական, աչխարհագրական ու քաղաքական իրղարձութենց հայոյ տե – ղեկութիւններ, որոնք կրնան սատարել ձեռնարկին յաջողութեան :

Մասնաւորաբար կոչ կ'ուղղենք մեր տարեց հայրենակիցներուն, պետական թէ կուսակցական չրջանակներուն մէջ պատասխանատու անցեալ ունեցած Ատա – նացիներուն, որ դրի առնեն կամ դրի տա – նել տան իրենց յուչերը, ամբողջական կերպով ներկայացնելու համար Պատմու – թիւն Հայոց Ատանայի երկը, որուն պա – կասը զգալի է դարձած ոչ միայն մեր հայրենակիցներուն, այլ նաեւ ապագայ պատմաբաններուն ամմար :

Խմբագրական մարմինը արդէն իսկ ըս – կսած է պատրաստել յատուկ թղթածը – րաներ, կապ հաստատել մեծ հաստա – տութեանց, մատենադարաններու եւ ան – հատ մտաւորականներու հետ, կարելի բարեխղճութեամբ ու բացարձակ առար – կայականութեամբ տալու համար երկ մը, որ հարազատ պատկերացումն ըլլայ Ա – տանայեցիներուն եւ Ատանացիներուն :

Խմբագրական կարողութիւնը եւ զոհա – բերութիւնը չեն կրնար առանձինն գլուխ հանել այս գործը : Անոր հրատարակու – թիւնը պայմանաւոր է մասնակցութեամ – բը կիլիկեան անցուդարձերուն իրազեկ մէն մի Հայու բերելիք գործակցութեան, որուն մասին ոչ մէկ կասկած ունինք Ա – տանայի Հայր· Մխիթեան վարչութիւնը եւ խմբագրական մարմինը, որ ներկայիս կը բազկանայ հետեւեալ հայրենակիցնե՝ ներէ՝

Պ· Պ· Միհրան Սէֆէրեան՝ (խորհըր – դական), Գէորգ Պաղճեան՝ (առենադը – պիր), Բիւզանդ Եղիայեան՝ (առենա – պետ), Եղիչէ Մանուկեան՝ (հաչուա – պահ) :

Ս· այդ կը խնդրուի՝

Ա·— Դրամական ամէն առաքում կա – տարել·— Մասնաւոր յիչատակութեամբ « Պատմութիւն Հայոց Ատանայի» ֆոն – տին, հետեւեալ հասցէին՝

Ժիրայր Ուզունեան, ՊԵՀ ՄՈՏ, Փլաս տը լ'Էքուալ, Պէյրութ, Լիբանան :

Բ·— Պատմութեան վերաբերեալ նիւ – թերը՝ հետեւեալ հասցէին՝

Պ·Գէորգ Պաղճեան, նամակատուփ թիւ 26 : Պէյրութ – Լիբանան

Ի դիմաց՝ Ատանայի Հայր· Մխիթեան վարչութեան առենադպիր՝ Փ· Տօնիկեան, առենապետ՝ Լուիֆիկ Պուլտուգեան :

Ի դիմաց «Պատմութիւն Հայոց Ատա – նայի» խմբագրական մարմնին՝ առենա – դպիր՝ Գէորգ Պաղճեան, առենապետ՝ Բիւզանդ Եղիայեան :

ԿՈՐՈՒԱՍՏ ՄԸ

—o—

ՊԵՐԼԻՆ.— Դեկտեմբեր 18ին յանկար – ծամահ եղաւ սրտի կաթուածէ, գաղու – թիս ծանօթ գործի վաճառական Պ· Պօ – ղոս Ֆէրմանեան: Սկիւտարցի, քաղաքիս ամէնէն կեդրոն տեղը մեծ վաճառատուն մը ունի, ինչպէս նաեւ Ֆրանքֆուրթ : Հանգուցեալը եղած է Պերլինի Գաղու – թային Մխիթեան վարչական անդամ եւ պանճապահի պաչտօնը վարած է երկար տարիներ: Եկեղեցական երգիչի եւ սար – կաւագի պաչտօն կատարած է Գր· Ծ· վրդ· Շահլամեանի օրերէն մինչեւ վեր – ջերս՝ երբ հոգեւորական մը եկած է Պեր – լին: Երգած է նաեւ ազգային եւ ժողո – վրդական երգեր քաղաքիս հայկական հաւաքոյթներուն մէջ՝ քառասուն տարի առաջ այստեղ եկած օրէն ի վեր: Շատ համեստ պայմաններու տակ ապրած, ար – հեստ սորված եւ առեւտրական մեծ յա – ջողութիւն ունեցած է մեր հայրենակիցը: Օժանդակած է գաղութին, որ այժմ կ'ողբայ իր կորուստը: Ֆէրմանեան 59 տարեկան էր եւ կը թողու երեք անչա – փահաս զաւակներ: Թաղման արարողու – թիւնը կատարեց Փարիզէն հրաւիրուած Պարգեւ քհնյ· Մերճանեան :

Ֆ·

ԻՄԱՍՏՈՒՆ ԽՕՍՔԵՐ

Սէրը ժամանակին հետ կապ չունի: Կը ծլի ու կը ծաղկի մէկ վայրկեանի մէջ :

ՔԱՌՆԵՐ

Ապերախտ է սէրը: Մեծագոյն զոհո – ղութիւններն իսկ բիչ կը գտնէ :

ԺԵՐՖՕ

ԹԻԱՊԱՐՏԸ

(ՎԷՊ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿԵԱՆՔԷ)

ԳՐԵՑ

ԱՐՄԷՆ ՇԻՏԱՆԵԱՆ

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Առաջարկութեան պայմանը ծանր ու սոսկալի էր: Ի՞նչ պատասխանէր... մի – եւնոյն ատեն ի՞նչպէս մերժէր: Սկսաւ մտածել :

— Ինչո՞ւ կը մտածէք, հարցուց Վա – նական: Ծանր պայման մը առաջարկե – ցի՞ :

— Ոհ , չէ, պարտականութիւնս է թո – թովեց Տէր Կոմիտաս :

— Կատարեցէք զայն... վաղը կուգամ եւ ձեր մեղայագիրը կը կարդամ :

Տէր Կոմիտաս խօսք մը չըրաւ, միայն թէ ոտքի ելաւ ու մրմնջեց ·

— Պատրաստ եմ ...:

— Վանական վեղարը դեռնէն վեր ա – ռաւ, գլուխը ծածկեց ու անխօսուն կեր – պով մը մեկնեցաւ :

Ֆահանան պահ մը կեցած տեղը դամ – ուած մնաց· ինչպէս քարէ արձան մը · յետոյ ձեռքը ճակատ ու սպիացած ճակ – տին վրայ դրաւ, որուն խորշոմները լայն ու զալարուն էին· մտածեց երկար ու դառն հառաչանքով մը ու բացագանչեց ինքնիրեն ·

— Ով արդարութիւն, վերջապէս պատ – ժեցիր զիս :

Ու ինքն ալ եկեղեցիէն դուրս ելնելով, արագ արագ դէպի քաղաքը դիմեց :

Կէս օրուան մօտ, Տէր Կոմիտաս բան – տին դուռը հասաւ ու անարդել կերպով ներս մտաւ :

Բանտապահը դիտէր թէ Տէր Կոմիտաս վաղի փաչային մարդն էր եւ չատ անգամ անգլիական հիւպատոսին հետ այցելու – թեան եկած էր՝ ոստիկանապետին առաջ – նորդութեամբ :

— Ո՞ւր կը գտնուի Սիրվարդ, հարցուց Տէր Կոմիտաս՝ բանտապահին մօտենա – լով :

—Այս գիչերէն եօքը հրամայուեցաւ որ առանձնարանը նետուի, փափաղ էիք – տի, պատասխանեց բանտապահը: Կ'ու – զէ՞ք տեսնել զինքը :

— Այո, ո՞ր առանձնարանն է :

— Դիմացի առանձնարանը :

— Սա՞ :

— Այո :

— Բացէք անոր դուռը :

Բանտապահը համակերպուած եղանա – կով մը առաջ անցաւ ու բացաւ առանձ – նարանին դուռը :

Տէր Կոմիտաս ներս մտաւ՝ զարշելի նկուղի մը նմանող այդ զնտանին տեսա – րանը խաւարի մը մէջ թաղուած էր: Պահ մը կեցաւ, աչքը մէկ անկիւնէն միւս ան – կիւնը պտըտցուց ու նչմարեց երիտա – սարդ մը՝ որ պատին տակ ինկած էր ո – ղորմելի դրութեան մը մէջ ու կը քնա – նար :

Տէր Կոմիտաս դողդողալով մօտեցաւ այդ ողորմելի գոհին, անոր դէմքը դի – տեց, անոր տանջուած դրութիւնն աչքին առջեւ բերաւ... ու սարսռաց :

Մէկէն ի մէկ չկրցաւ ձայն տալ : Ներ – քին ճնշումը սեղմած էր իր կոկորդը: Եր – կու անգամ զերաշոյն ձիղեր ըրաւ... բայց խղդուեցաւ: Վերջապէս փղձկած ձայնով մը մրմնջեց :

— Սիրվարդ, Սիրվարդ ...:

Երիտասարդը դողդողալով վեր ցատկեց ու իր չուրջը նայեցաւ :

Հազիւ քանի երկու տարեկան կար· մի – ջահասակ էր ու չափազանց նիհարա – կազմ: Մնոտին ազուամազը տակաւին նոր բուսած էր ու պեխերը կը մրայլին :

— Ես եմ, Սիրվարդ, յարեց Տէր Կո – միտաս հայրական խանդաղատելի ձայ – նով մը, անհոգ եղէք :

Սիրվարդ յարշանքով մը ոտքի ելաւ ու սեղմեց Տէր Կոմիտասին ձեռքը :

— Կը քնանայի՞ք, ըսաւ Տէր Կոմի – տաս :

— Ի՞նչ ընեմ... մրմնջեց Սիրվարդ : Այսօր հոս նետեցին զիս, Տէր հայր : Բայց դիմանալու բան չէ: Պիտի մեռնիմ այս նկուղին մէջ :

— Աստուած ողորմած է, որդեակս, չատ չէք մնար այստեղ :

Սիրվարդ որ իմացած չէր իր բանտար – կութեան պատճառը, իմացած չէր թէ Տէր Կոմիտաս մատնած էր զինքը, ցաւա – լի բացագանչութեամբ մը մրմնջեց :

— Ախ, Տէր Հայր, անպատճառ մէկը կայ որ իմ արիւնս մտած է, մէկը կայ որ իր հողին սեւցուցած է՝ զիս հոս քաչկո – տելու համար... : Ջեմ գիտեր... որո՞ւ դէշութիւն մը ըրած էի, որո՞ւ վատ բան մը ըրած էի· Տէր Աստուած որ ասկից աղատուելէս ետքն զիտնայի անոր ով ըլ – լալը... ուրիչ բան մը չեմ ուզեր :

Տէր Կոմիտաս ոտքէն մինչեւ զլուխը դող մը զգաց կերպարանքը մթնեցաւ, ինչպէս զիչերուան խաւարը, զալարուե – ցաւ ինքն իր մէջ, սառած ու անարդ օձի մը զարչութեամբը :

— Հոգ չէ, որդեակս, պէտք է որ նե – րողամիտ ըլլաք, ընդհատեց Տէր Կոմի – տաս խղդուելով :

— Իմ արիւնս մտնողին դէմ ...

— Այո, ձեր արիւնը մտնողին դէմ ...

(Շար·)

ՄԱՅԻՍ 28Ը ԿԸ ՏՕՆՈՒԻ

Կիրակի, Մայիս 27ին, Մխիթարեան Միաբանութեան մեծ սրահին մէջ։

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Մարսէյլի Աղբ· – Որբախնամ Միու – թիւնը, ի պատասխան Նոր Տարուոյ իր կոչին՝ չնորհակալութեամբ ստացաւ հե – տեւեալ նուիրատուութիւնները Ն· Ֆ·ի հաշուով։

Պ· Պ· Բէռնայեան եւ կարիպեան 100 Ն·Ֆ·։ Եղիա Մելքոնեան, Ա· Պիպեռեան, Ս· Սահակեան, Այնտաճեան, Հաճեան (Տրակինեան), Ժ· Զարզաւաթճեան, Ճանուսեան, Ե· Զարդարեան 50ական Ն·Ֆ·։

Պ· Պ· Լ· Գազազեան, Մ· Գէորգեան, Ժ· Արութիւնեան, Նորայր Սահաթճեան (Նիս), Գերյարզելի Զուհաճեան վրդ·, Թահթալեան 30ական։

Պ· Պ· Զ· Ալիքսանեան, Տէր Ա· քհնյ· Աատուրեան, Բարեշնորհ Գաբրիէլ Ա – ւագ Սարկաւագ, Միքայէլեան, Ալանմէ – քայէլ, Մ· Սիրունեան, Գ· Պաղտասար – եան, Մ· Գասպարեան (Կարտաճ), Մա – նուկեան, Հայազատ Մբոյրեան, Եփմէ – նիճեան, Տէյմէնճեան, Պ· Հայթայեան, քսանական Ն·Ֆ·։

Պ· Պ· Տոքթ· Զազարեան, Մ· Պէտէլ – եան, Նաճարեան 15ական։ Պ· Զաքար Գրիգոր 25 Ն·Ֆ·։

Պ· Պ· Ն· Գուլումճեան, Թ· Թերզեան, Հ· Թէրզեան, Զ· Փիլիպպոսեան, Ա· Մենծիկեան։ Ք· Գալուստեան (Կար – տան), Մայր Ճընտիկեան, Ե· Տէր Մի – նասեան, Թէրզեան (Տրակինեան), Մար – զուանլըեան, Տ· Ասլիկեան, Ց· Մելէ – մէտճեան, Ա· Սիմոնեան, Ս· Կարապետ – եան (Տրակինեան), Ղուկասեան, Ժ·Տա – լաքուփէեան, Աւետիսեան (Տրակինեան), Մ· Աատուրեան, Զալկճեան, Հէլվա – ճեան, Տիկին Զ· Առաքելեան (Պաննէօ), Ե· Թորոսեան, Բէչքէչեան, Առաքելեան Ց· (Փարիզ), եւ Ն· Քէօթահլըեան 10ա – կան Ն·Ֆ·։

Պ· Պ· Պ· Զամարեան, Տ· Գէորգոֆ, Տիկին Հաճի Աւետիսեան, Կ· Ահարոն – եան, Մկրտիչեան, Տիկին Մ· Ասլիկեան հինգական եւ Գարագաշեան 1 Ն·Ֆ·։

Կ'ՈՒԶՈՒԻ

Պաշտօնական զբաղեցնակի մը մէջ աշ – խատելու համար, երիտասարդ տաքթիլօ օրիորդ մը կը փնտռուի։ Մանրամաս – նութեանց համար դիմել ՑԱՌԱԶ։

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

ԿԱՊՈՑՏ ԽԱՉԻ ՕՐԸ

Ֆ·Կ· Խաչի օրը կը տօնուի Ապրիլ 1ին, Կիրակի, կէսօրէ վերջ, Շիմիի սրահը։

ԴՊՐՈՑԱՍԷՐ ՏԻԿՆԱՆՑ ՎԱՐԺԱՐԱՆ

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

ՑԵՐԵԿՈՅԹ

ՄԱՐՏ 11ԻՆ

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

ՇԱՀԱՆ ԱՏՈՒՐ

Ա· Տպագրութիւն, 1929

Գին 7 Ն· Ֆր·

Դիմել ՑԱՌԱԶԻՆ

Imprimerie Spéciale du journal « Haratch »
32, Rue de Trévise, PARIS (9e)

ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ

Վերջին չարաթներու ընթացքին բազ – մաթիւ բաժանորդներ, փարիզէն եւ գա – ւառէն կը դժգոհին թէ չատ անկանոն եւ երբեմն ալ բնաւ չեն ստանար Ցառաջը։

Անգամ մը եւս կը վստահեցնենք մեր բաժանորդները, թէ Ցառաջը ամէն օր, նոյն կանոնաւորութեամբ (ժամը 16էն 16·30ին) կը յանձնուի 9րդ թաղամասի կեդրոնական թղթատարութեան որ կը ղրկէ առաքումով։ Մեր բազմաթիւ բո – ղոքներուն պատասխանուած է թէ անկա – նոնութեան պատասխանատուները ցրուող թղթատարներն են եւ ոչ այստեղի առա – քումի կեդրոնը։

Շատ կը ցաւինք որ հակառակ մեր ջան – քերուն կարելի չէ եղած առաջքն առնել անկանոնութեան մը որ աւելի չեշտուե – ցաւ, վերջերս տօնական օրերու առթիւ։

Կը թելադրենք մեր բաժանորդներուն դիմել իրենց չրջանի թղթատարին, իսկ Ցառաջի վարչութեան դրելու պարագա – յին, գրել փրանսերէն, որպէսզի բողոք – ներուն բնագիրները ներկայացնենք պատկան գրասենեակին։

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԼՈՑՍ ՏԵՍԱԻ

ՅՈՒՇԱՄԱՏԵԱՆ ԿՈՒՏԻՆԱՀԱՅԵՐՈՒ

Պատկերազարդ, հեղինակ՝ Արշակ Ալ – պօյաճեան, Պէյրութ 1961, էջ 230։

Գին՝ 4·50 տոլար

Լաթակազմ 5·50 տոլար

Սոյն հատորին լրացուցիչ մասը՝

Ա.— Կուտինահայ ժամանակագրու – թիւն· հրատարակիչ՝ Համբարձումեան Օրթ – եան (Ամնակ)։

Բ.— Կաթողիկէ Հայերը Կուտինայի (Փիւթահիա)· պատկերազարդ· աչխա – տասիրող՝ Հ· Իգնատիոս Աքեան, Վիէն – նա, 1960, էջք 164+109= 273։

Գին՝ մէկ տոլար

Առանձինն՝ Բ· Կաթողիկէ Հայերը· Գին՝ 0·50 տոլար

էջ 109։

Դիմել՝

P. IGNACE AKIAN
Méchitharistengasse 4
VIENNE (Autriche)

ՏՕՆՈՒՆԴԻ ԵՒ ՆՈՐ ՏԱՐԻՈՅ

ՈՒՐԱԽ ՕՐԵՐՈՒՆ ԵՒ ԱՄԲՈՂՋ ՏԱՐԻՆ

Եւրոպայի Մեծագոյն
Արեւելեան Վաճառատունը

ՊԱՀԱՏՈՒՐԵԱՆ խանութ մը չայ – ցելոզին սեղանին վրայ ամէնէն հա – մով պատառը կը պակսի՝ մեծին ու պզտիկին համար։ ՊԱՀԱՏՈՒՐԵԱՆ վաճառատան մէջ պիտի գտնէք ա – ւանդական ընդեղէնեներու եւ անու – շեղէններու ամէն տեսակը, անմրցե – լի գիներով։

Ապսպրանքի վրայ, ծրարի առա – քում Ֆրանսայի ամէն կողմ եւ դէ – պի արտասահման՝ Պելժիա, Զուի – ցերիա, Անգլիա։

ՊԱՀԱՏՈՒՐԵԱՆ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ
LYON

246, Rue Vendôme - Tél. MO 11-84
20, Rue Villeroy MO 32-10
65, Rue Robert LA 07-72

ԵՒ ԻՆՁՊԷՍ ՄԻՇՏ

Արմաւ, «պամիա», «եալանճի տոլ – մա», յունական «թուրչի», «պի – պէօ», տերեւ, թահին հելվա, «վա – նիլլ», չոքոլա, «նուաղէթ», «լո – կում», «սաքըզ», պիստակ, Շիրակ օղի (41 – 45օ), Իզմիրի չամիչ, «սուճուք», կեսարական «պաստըր – մա»։ առաջնակարգ սուրճ, (fարա – վան եւ մոգա), համեմներ «մահ – լէպ», «սալէպ», ձիթապտուղ, ձէթ, «քաչքավալ» պուլկարական, ճեր – մակ պանիր ոչխարի կաթով։ Ամէն կարգի պահածոներ, «քուսքուս», հարիսա, սուրմագ, թարամա, լա – ֆերտա, քաֆլաւա, fատայիֆ, տե – րեւ եւայլն։

ՊԱՀԱՏՈՒՐԵԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆԸ

Ունի նաեւ մասնաճառատուն մը, որուն առաջնակարգ մթերքը գոհա – ցում կուտան ամէնէն նրբաճաշակ – ներուն։ Ոչխարի, հորթի եւ եզան միս (քաշուած միս, եւայլն)։

ՆՈՐ ՍԵՐԻԱՆԴԻ

ՊԱՐԱՃԱՆԴԷՍԸ

Կազմակերպութեամբ Սէն Շամոնի խումբին, այս Շաբաթ իրիկուն ժամը 21 – էն մինչեւ լոյս։

Սէն Շամոնի Քաղաքապետարանի սրա – հը (Սալ տէ Ֆէթ)։

Նուագախումբ՝ Ճիմի Ռիէլ։

Պիւֆէ, պառ, fոթիյոն, ժէօ։

ՀԱՆԴԻՍ – ՏՕՆԱԾԱՌ

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՕՐՈՒԱՆ ԱՌԹԻԻ

Կազմակերպուած՝ Ֆ·Կ· Խաչի Տէսինի մասնաճիւղի կողմէ։ Մասնակցութեամբ՝ զպրոցին աշակերտութեան։

Այս Կիրակի Կէսօրէ ետք, ժամը 3·30 – ին Հ·Ց·Դ· Տան մէջ։

Խմբական երգեր, արտասանութիւններ աշակերտներու կողմէ։

Կը ներկայացուին՝ 1) Կաղանդ Պապան, 2) Ուրիշին տունը հարսանիք (զաւեշտ)։ Երգերով ու հայկական պարերով։

Մուտքը ազատ է։

Կը հրաւիրուի Տէսինահայութիւնը ան – խտրապէս։

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Մարսէյլի Արմենիա երգչախումբը կը հաղորդէ որ վերսկսած է երգի իր փոր – ձերը, առաջնորդութեամբ Պէյրութէն նոր ժամանած երիտասարդ երաժիշտ՝ ՌԱՖՖԻ ՍՎԱՃԵԱՆԻ։

Արմենիայի անդամները կը հրաւիրուին ներկայ գտնուիլ այս փորձերուն, որ տե – ղի կ'ունենան ամէն երեքչաբթի եւ հինգ – շաբթի օրերը, ժամը 20ին, 19 Րիւ Վաճ – թիւր, երկրորդ յարկ։

Մարսէյլի եւ չրջականերու հայրենա – կիցները, որ կը փափաքին մասնակցիլ Արմենիայի յառաջիկայ գործունէու – թեանց կը հրաւիրուին արձանագրուիլ եւ մասնակցիլ փորձերուն, վերոյիշեալ օրերը, նոյն վայրը, ժամը 19·30ին։

Հ· Ց· Դ·

ԸՆԿԵՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

ՓԱՐԻԶ.— Հ· Ց· Դ· Շրջ· կոմիտէն ներկայացուցչական ժողովի կը հրաւիրէ փարիզի եւ չրջանի մարմիններու ներկա – յացուցիչները, այս Կիրակի կէսօրէ վերջ ժամը 2·30ին, Մշակոյթի Տան սր – բահին մէջ։

ՕՐԱԿԱՐԳ.— Շրջ· ժողովի օրակարգի քննութիւն։ Ներկայացուցիչ ընկերներու պարտաւորիչ ներկայութիւն։

ՓԱՐԻԶԻ Հ· Ց·Դ· Շրջ· կոմիտէն ըն – կերական ընդհ· ժողովի կը հրաւիրէ «Ա – բամ» ենթակոմիտէի բոլոր ընկերները այս Ուրբաթ ժամը 8·30ին, Մշակոյթի Տան սրահին մէջ։ Կարեւոր օրակարգ։ Ներկայ կ'ըլլայ Կ·Կ·ի ներկայացուցիչը։

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՑՑ

Հ· Ց· Դ· Մարսէյլի Շրջ· Կոմիտէի հր – րաւիրած ընկերական ժողովներու ։—

Հ· Ց· Դ· Մարսէյլի Շրջ· կոմիտէն՝ ստիպողաբար ընկերական ընդհ· ժողովի կը հրաւիրէ հետեւեալ ենթակոմիտէնե – րու եւ խումբերու անդամ ընկեր – ընկե – րուհիները։

ԳԻՈՐԳ ԶԱՎՈՒՇ խումբ՝ 20 Յունուար Շաբաթ, ժամը 21ին։

ՄՈՒՐԱՏ խումբ՝ 21 Յունուար, կիրա – կի կէսօրէ ետք, ժամը 15ին։

ՆԻԿՈԼ ԴՈՒՄԱՆ խումբ՝ 21 Յունուար, կիրակի կէսօրէ ետք, ժամը 15ին։

ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ խումբ՝ 20 Յուն – ուար, Շաբաթ, ժամը 21ին։

Սոյն ժողովները տեղի պիտի ունենան իրենց սովորական հաւաքատեղիները։ Խիստ կարեւոր օրակարգ։ Բոլոր ընկեր – ընկերուհիներու ներկայութիւնը պարտա – ւորիչ է։ Վարչութիւնները նախապէս պէտք է բոլոր ընկերներուն տեղեկացնեն ժողովներու վայրի եւ ժամուան մասին։ Ներկայ պիտի ըլլան Շրջ· Կոմիտէի ներ – կայացուցիչները։

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Նախաձեռնութեամբ կապոյտ Խաչի Ալֆորվիլի մասնաճիւղին։

Յունուար 27, Շաբաթ, ժամը 20·30ին Մեզոն Ալֆորի Սալ տէ Ֆէթին մէջ։

Առնուվիլի թատերախումբը կը ներկայացնէ՝

ԱՇԽԱՐՀԻ ԴԱՏԱՍՏԱՆԸ

ՄՈՒՐԱՏ ՌԱՓԱՅԷԼԵԱՆ
ՆԱԽԿԻՆ ԱՇԱԿԵՐՏԱՑ ՄԻՈՒԹԻՒՆ

ՏԱՐԵԿԱՆ ՄԵԾ ՊԱՐԱՃԱՆԴԷՍ

ՁՈՒԱՐԹ

Մայրամուտէն միւնչեւ կէս գիշեր

ՁՈՒԱՐԹ ՄԹՆՈԼՈՐՏ

ԿԻՐԱԿԻ՝ ՓԵՏՐՈՒԱՐ 11, ԺԱՄԸ 17ԷՆ՝24

AMBASSADEURS

3, Ave. Gabriel, 3
ԵՐԳ ՈՒ ՊԱՐ
ՄԵԾ ՆՈՒԱԳԱԽՈՒՄԲ

Attractions *ԽԱՂԵՐ* **Bar-Buffet**

ՍԱԿԱԳԻՆ ԸՆԹԱՑԻԿ ԱԶԴԵՐՈՒ

ՄԷԿ ԱՆԴԱՄՈՒԱՆ ՀԱՄԱՐ

ՄԱՀԱԶԴ	30 Ն· Ֆ·	միւնչեւ	1/4	սիւնակ
ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ	15 Ն· Ֆ·	միւնչեւ	1/8	սիւնակ
ՑԱԻԱԿՑՈՒԹԻՒՆ	10 Ն· Ֆ·	»	»	»
ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ	20 Ն· Ֆ·	»	»	»
ՀԱՐՍԱՆԻՔ, ՆՇԱՆՏՈՒՔ	20 Ն· Ֆ·	»	»	»
ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ	10 Ն· Ֆ·	»	»	»
«ՓՈԽԱՆ ԾԱՂԿԵՊՍԱԿԻ»	10 Ն· Ֆ·	»	»	»
«ԿԸ ՓՆՏՌՈՒԻ»	5 Ն· Ֆ·	»	»	»
ԾԱԽՈՒ Է	20 Ն· Ֆ·	»	»	»

Այս գիները մէկ անգամ հրատարակելի եւ նշանակուած ծաւալով ազ – դերու համար են, չորրորդ էջը։

Կանխիկ վճարումը պարտաւորիչ է։

Առեւտրական կամ այլ ազդերու մասնաւոր պայմաններուն համար դիմել Վարչութեան։

ՀԱՐԱՁ

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

Le PREMIER QUOTIDIEN ARMENIEN en EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction et Administration : 32, Rue de Trévise - PARIS-9e

Fondé en 1925
R. C. Seine 57 A 2731

Téléph. : PRO. 86 - 60
C. C. P. Paris 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա՝ Տար· 50 Ն· Ֆ· Վեցամսեայ՝ 27 Ն· Ֆ·
Արտասահման՝ Տար· 60 Ն· Ֆ· Հատը՝ 0·25 Ն· Ֆ·

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ
17
ՑՈՒՆՈՒԱՐ
MERCREDI
17 JANVIER
1962

38ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 9306 38e ANNÉE

Fondateur : SCHAVARCH MISSAKIAN

ՆՈՐ ՇՐՋԱՆ, 18ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 5107

Ի ՏՂԱՅ ՏԻՈՑ...

Արտասահմանի Հայութեան սպառնացող ապազգայնացման վտանգը միշտ օրակարգի վրայ է :

Սփիւռքահայ թերթերը յարատեւօրէն կ'արծարծեն հարցը, ամենք լուստես եւ ուրիշներ ալ յոռետես եզրակացութիւն – ներով :

Այդ դժուարին պայքարը յաջողուելու – թեամբ տանելու համար կ'առաջարկուին բազմազան եւ բազմաթիւ միջոցներ :

Շատ իրաւամբ հայ ընտանիքը կը նը – կատուի առաջին եւ ամէնէն զօրաւոր ազդակը նոր սերունդը հայ պահելու , հայ ոգիով ու չունչով մեծցնելու համար :

Կասկածէ դուրս է , թէ ապազգայնացումը ամէն բանէ առաջ կը սկսի ընտանիքէն :

Իր կոչումին հաւատարիմ եւ ազգային դիտակցութեամբ ու նախանձախնդրու – թեամբ օժտուած ընտանիքի մը զաւակ – ները ամէնէն քիչ ենթարկուած են սպի – տակ ջարդին՝ ինչպէս սովորութիւն ե – ղած է որակել ապազգայնացումը :

Հակառակը ըլլալով, այն ընտանիքնե – րը, որոնք թեթեւամտօրէն կը մօտենան հարցին եւ անտարբեր են իրենց զաւակ – ներու հայեցի կրթութեան, ազգայ – նացման գոհերէն առաջինը կոչուած են ըլլալու իրենք ալ, իրենց զաւակներուն հետ :

Այն ծնողքը, որ նախանձախնդիր չէ , ընտանիքէն ներս եւ անկէ դուրս իր մա – նուկները կրթելու ազգային ոգիով, որ չմշրներ ազգային կրթութեան եւ դաս – տիարակութեան անհրաժեշտութիւնը, որ չի խօսիր հայերէն լեզուով եւ չուսուց – ներ զայն նաեւ իր զաւակներուն, ոչ մի – այն իրրեւ հայ դաստիարտուած է կո – րըստեան, այլ՝ կը հանդիսանայ վարա – կիչ յոռի օրինակ մը նաեւ ուրիշներուն :

Հայ ծնողքը ուրեմն, ապազգայնաց – ման լուրջ վտանգին առջեւ, որ կը սպառ – նայ այս կամ այն հայ զաղութին առա – ւել կամ նուազ չափով, նայած միջավայ – րին եւ պայմաններուն, պէտք չէ մնայ անտարբեր՝ որ համազօր է յանգցապար – տութեան :

Ան պէտք է նախանձախնդիր ըլլայ ըն – տանիքին մէջ կենդանի պահելու հայ լե – զուն, ազգային աւանդութիւնները եւ հայաշունչ մթնոլորտը :

Ան պէտք է սրբութեամբ մօտենայ հայ մեծասքանչ լեզուին եւ սիրէ ու սիրցնէ զայն իր զաւակներուն :

Ան պէտք է ի դիմ ամէն գոհողութեան , նախընտրէ հայեցի կրթութիւնն ու դաս – տիարակութիւնը, որ կրնայ տրուիլ մի – այն եւ միայն հայ վարժարաններէ ներս :

Ծնողքը պէտք է ջանայ ի տղայ տիոց, իրենց մանուկները մօտ պահել հայ ղըլ – բոցին , եկեղեցիին, հայ պատանեկան միութիւններուն, որպէսզի անոնք աւելի պիտակից տարիքին կազուած մնան հայ կազմակերպութեանց եւ հայ համայնքին, այդ կերպով չկղզիացնելու կամ իր նուա – զագոյնին իվերացնելու համար միջավայրին ուժեղ ազդեցութիւնը :

Փողոցն ու օտար միջավայրը չէ, որ հայ մանկտին հայ պիտի պահէն, այլ հայկական օճախները, ազգային չունչով առլցուն հիմնարկութիւնները :

Այս բոլորով հանդերձ ճիշդ է, թէ հայ միջավայրը չատպակասաւոր է յանկուցիչ ըլլալու համար հայ մանուկին : Ասոր երբ կը խօսինք ապազգայնացման վտան – գի մասին ու այլազան միջոցներ կ'առա – ջարկենք, ամէն բանէ առաջ պէտք է, որ գործի վերածենք այդ միջոցները, բան մը՝ որ չատ քիչ սահմաններու մէջ տեղի կ'ունենայ :

Պէտք է բարեկարգենք մեր կրթական հաստատութիւնները ամէն ուղղու – թեամբ :

Պէտք է բարձրացնենք մեր վարժարան – ներու կրթական մակարդակը եւ ապահո – վենք որակեալ ուսուցչական կազմեր :

Հայ լեզուն, հայ մանուկներուն սիր – ցնելու համար պէտք է ստեղծենք մանկա – կան մատչելի եւ նպատակասլաց գրակա – նութիւն, բան մը, որ եղերօրէն կը պակ – սի արտասահմանի ամբողջ հայ գաղութ – ներուն մէջ :

Մանկական – պատանեկան անունով հոս ու հոն լոյս տեսնող թերթերը չատ հեռու են իրենց նպատակին ծառայելէ, ըլլայ իրենց անհամապատասխան , յա – ճախ տափակ եւ անհետաքրքիր բովան – դակութեամբ , ըլլայ թուղթով ու տպա – գրութեամբ, ըլլայ իրենց նկարազարդու – մով :

Հայերէնի խնամուած դասագրքերով ու մանկական պարբերականներով է, որ պզտիկները պիտի սիրեն հայ լեզուն ու կապուին անոր :

Բոլորս ականատես ենք, թէ ի՞նչպէս մեր փոքրիկները հիանդպրին կոչուելու առիթման սէր մը ունին հանդիպ տեղա – կան մանկական հրատարակութիւններու եւ ինչպէս կը լափեն զանոնք, չատ ան – պամ պիտանիին հետ անպիտան հրատա – րակութիւնները ալ ճաշակելով ...

Կ'ուզե՞նք փրկել սերունդը ապազգայ – նացումէ, այդ սերունդը պէտք է կրթել ի տղայ տիոց, քանի մատղաչ է դեռ եւ կրնայ կաղապարուիլ բաղձացուած կա – ղապարով :

Այս պեղնին վրայ ամէն յապաղում , կրնայ մեզ առաջնորդել միայն, ուշացած ապաշաւի մը անօգուտ եւ անպտուղ :

«ԱՐՄԵՆԻԱ»

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ԳԱՀԻՐԷԻ ԴԱՏԸ ՍԿՍԱՒ

ՅԿԵԱՆՍ ՏԱԺԱՆԱԿԻՐ ԱՇԽԱՏԱՆՔ ԿԸ ՊԱՀԱՆՋՈՒԻ ԲՈԼՈՐԻՆ ԴԷՄ

«ԵԳԻՊՏԱԿԱՆ ԲՍՄՊԱԿ ՄԻ ԳՆԷ՛Ք »
Կ'ԸՄԷ ՖՐԱՆՍԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ
ՖՐԱՆՍԱՑԻ ՆԵՐԱԾՈՂՆԵՐՈՒՆ

2000 հոգի հրաւիրուած էին, ինչպէս նաեւ պատկերասփիւռը, մամուլը, դես – պանատունները, դիւանագիտական բոլոր առաքելութիւնները ձայնասփիւռը եւն., եւն. : Դատը, որ կազմակերպուած է թա – տերական ներկայացումի մը ձեւով պիտի դրաւի Ֆրանսացի չորս դիւանագէտնե – րով, որոնք Գահիրէ զացած էին ... «Նասրը սպաննելու» :

Զորս ամբաստանեալներու կողքին կան Ֆրանսացի փաստաբաններ որոնք սակայն իրաւունք չունին պաշտպանողական ար – տասանելու, բայց կրնան խորհուրդներ տալ եգիպտացի փաստաբաններուն : Ներ – կայ դիւանագիտական մարմիններուն մէջ կը նշմարուին Հոլանտայի, Զուիցերիոյ , Լիբանանի եւ Թունուզիայի դեսպանները : Դատավարութիւնը տեղի կ'ունենայ արա – բերէն. բայց ինչպէս միջազգային ժո – ղովներու, անմիջական թարգմանութեան դրութիւն մը ստեղծուած է : Ուրիշ չորս թարգմաններ հարցումները եւ պատաս – խանները կը թարգմանեն Ատեանին հա – մար :

Պետութեան Ապահովութեան Գերա – գոյն Ատեանը որ 1957էն ի վեր կը փոխա – րինէ զինուորական ատեանները քաղաքա – կան ատենակալներէ կազմուած է ,ինչպէս Ֆրանսացիները դատող ատեանը, կամ բանակի բարձրաստիճան սպաներէ ըստ Հանրապետութեան նախագահին որոշու – մին : Վճիռները վերաքննելի չեն : Միակ ընորհը որ կայ Հանրապետութեան նա – խագահը կրնայ տալ :

Երբ դատավարութիւնը կը սկսի , առա – ջին առթիւ ամբաստանաղիրը կը կար – դացուի :

Զորս Ֆրանսացիները ամբաստանուած են իբրեւ լրտես, ապա պատրաստած են Նասրի սպանութիւնը եւ անոր վարչա – ձեւին տապալումը : Սկիզբէն իսկ պաշտ – պան փաստաբանները ճչդեցին թէ Ատ – եանը որեւէ իրաւասութիւն չունէր դա – տելու չորս Ֆրանսացիները որոնք դիւա – նագիտական անձեռնմխելիութիւն կը վա – յելչեն :

Անդր Մուրճոնի փաստաբանը յոյց տը – ւաւ նամակ մը. որ 1959 Ապրիլ 23ի թիւ – ւականը կը կրէ եւ ուր եգիպտոսի Ար – տաքին նախարարութիւնը կը յայտարարէ թէ Ֆրանսական առաքելութիւնը հետեւ – եալ դիւրութիւնները կը վայելէ.— Ա) Անձեռնմխելիութիւն դատական հետա – պնդումներու դէմ : Բ) Անձեռնմխելիու – թիւն մաքսի համար : Գ) Գործադրում այն բոլոր դիւրութիւններուն որոնք չը – նորհուած էին անգլիական առաքելու – թեան որուն կը յաջորդէ Ֆրանսականը :

Ընդհանուր դատախազը , Ալի Նուրէտ – տին ցկեանս տաժանակիր աշխատանք պահանջեց բոլոր ամբաստանեալներուն համար եւ տասը հազար եգիպտական ոս – կիի տուգանք (ութսուն հազար Ն. Ֆ.) : Դատախազը յայտնեց նաեւ թէ Ցիւրիխի համաձայնութիւնը որ ստորագրուած է Եգիպտոսի եւ Ֆրանսայի միջեւ դիւանա – գիտական անձեռնմխելիութիւն չի ճանչ – նար Ֆրանսական պատուիրակութեան անդամներուն : Պաշտպան փաստաբաննե – րը 24 ժամի յետաձգում մը ուզեցին պատրաստելու համար իրենց պատճառա – բանութիւնները : Կը կարծուի թէ կրկին պիտի խօսին դիւանագիտական անձեռն – մխելիութեան մասին :

Ֆրանսական կառավարութիւնը կոչ կ'ընէ Ֆրանսացի ներածողներուն որ այլ – եւս եգիպտական բամպակ չգնեն : Ծանօթ է որ Ֆրանսա ամէնէն կարեւոր յաճա – խորդներէն է եգիպտական բամպակի չուկային :

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՊԼԻՑՐՈՒԹի «Այդ»ը կը գրէ թէ « Լը Սուար», հինգ օրուան դադարէ մը ետք վերսկսաւ իր հրատարակութիւնը : Լսելէ ետք Պ. Տիւրան Թոսպաթի յայտարարու – թիւնները. դատարանը թերթը դատա – պարտած էր հինգ օր դադրեցումի եւ 100 լիր. ոսկի տուգանքի : Տիւրան Թոսպաթ Վճռաբեկ Ատեանին պիտի դիմէ բողոքե – լու համար այս վճիռին դէմ, եւ 100·000 լիր. ոսկիի վնասուց հատուցումի դատ պիտի բանայ պետութեան դէմ : «Այդ» կը ճչդէ նաեւ թէ Պ. Տիւրան Թոսպաթ ներ – կայացած է Հարցաքննիչ Ատեանին եւ ոչ յանձնուած Զինուորական Ատեանի ինչ – պէս մենք ալ գրած էինք :

ՄՈՍԿՈՒԱՅի «Փրաւտա»ն կը գրէ թէ դատավարութիւն մը սկսած է Կաթողիկէ քահանաներու դէմ, Վիլնայի մէջ : Այս յօդուածը որուն խորագիրն է «կապայով առաւ – փախաւները» կ'ամբաստանէ կայս – փեթայի (նախկին Մէմել) նաւահանգիս – տին եկեղեցին քահանան տարաղրա – մի առեւտուրով զբաղող խմբակի մը իբրեւ պետը որ հակախորհրդային յանձ – նախումբ մը 250 տոլար ստացած է և – կեղեցի մը վերաշինութեան համար :

ՍՈՒՐԻՈՅ վարչապետը Տոքթ. Տալա – լիպի մերժեց Մեծ Սուրիոյ մը կազմու – թեան ծրագիրը որ պիտի միացնէ Սու – րիան, Լիբանանը, Իրաքը եւ Յորդանա – նը արեւմտասէր մեծ պետութիւն մը կազմելու համար : Վարչապետը չեչտեց թէ Լիբանանի վերջին պետական հար – ուածի փորձը կապ ունէր մեծ պետու – թեան մը զինուորական պատրաստու – թեանց հետ, Մերձաւոր Արեւելքի մէջ եւ նշեց թէ կատարուած էր Ատլանտեան վերջին ժողովներէն ետք :

ՔԵՆԸՏԻ մամուլի ասուլիս մը տուաւ եւ յայտնեց թէ պիտի չարունակէն Մոս – կուայի հետ չփման մէջ մնալ :

ԻՆԷՕՆԻԻ ՄՈՍԿՈՒԱ ՉԵՐԹԱՐ

Յորհ. Միութեան կողմէ Պրեժնեւ ու Խրուշչեւ միասնաբար ուղերձ մը ղրկած են Թուրքիոյ վարչապետ Ինէօնիւին, ղե – տել տալով թէ Սթալին խզած էր Թուրք – եւխորհրդային բարեկամութիւնը, իսկ ի – րենք կ'ուզեն իրագործել այդ բարեկա – մութիւնը :

Անգարայի Յորհ. դեսպանն ալ այցե – լած է Ինէօնիւի, ըսած է թէ Մայիս 27էն առաջ տեղի ունեցած հրաւէրը ուղղուած էր ոչ թէ Ատնան Մենտերէսի անձին , այլ Թուրքիոյ վարչապետին, եւ յայտ – նած՝ Յորհ. Միութեան վարիչները զո – հունակութիւն պիտի զգան Ինէօնիւն ըն – դունելով Մոսկուայի մէջ: Վարչապետը պատասխանած է թէ իր«առողջական վի – ճակը թոյլատու չէ որ ընդառաջէ այս հրաւէրին »:

× Վարչապետ Ինէօնիւ Անգարայի մէջ լրագրողներուն հետ ունեցաւ մամլոյ հա – ւաքոյթ մը : Այս հանդիպումին մասին չարտայայտուելու համար լրագրողները նախապէս փրոթոֆոլ մը ստորագրած է – ին :

ՀԱԿԱՅ ՄԻԹԻՆԿ ՄԸ

Պոլսոյ Թրքական համալսարանի երի – տասարդութիւնը մեծ միթինկ մը կատա – րեց իբրեւ բուռն ազդարարութիւն յետա – դիմականներուն :

Տասնեակ հազարաւոր երիտասարդնե – րու միթինկը սկսաւ Ազատութեան հրա – պարակին վրայ եւ վերջ գտաւ Աթա – թիւրք Թանգարանին առջեւ : Այս առթիւ ապահովութեան միջոցներ ձեռք առ – նուած էին իբրեւ յետադիմական ամբաս – տանուած «Ենի Իսթանպուլ» թերթին Շիշհանէի խմբագրատան չուրջ, զոր հա – րիւրէ աւելի ոստիկան կը պաշտպանէին :

Երիտասարդները դիւցեր մը առաջ մի – թինկին պատրաստութեանը ձեռնարկած եւ հազարաւոր թռուցիկներ ցրուած էին :

Բոլոր ուսանողները վերջ տալով դասե – րուն, Ազատութեան հրապարակին վրայ հաւաքուիլ սկսան :

Շատ չանցած տասնեակ հազարներու հասնող երիտասարդները Թուրհան Էմէք – սիզի նահատակուած տեղը Անկախու – թեան քայլերգը երգեցին : Ցետոյ այլա – զան ցուցատախտակներ ի ձեռին, քայ – լերգներ երգելով Ազատայ, Սարաչհանէ ուղղութեամբ չարժման անցան :

Ցուցատախտակներուն վրայ կը կար – դացուէր. «Թուրք երիտասարդութիւնը պիտի չներէ ձեզի», «Յեղաշրջութեանց անվախ պահակներն ենք», «Գարշելի հա – մայնավար, ձեր գլուխը պիտի կոտրի », «Հետքիդ վրայ ենք Աթաթիւրք», «Մեղի միշտ ձեր դէմը պիտի գտնէք», «Վերջ յետադիմութեան», «Մի սպառէք մեր համբերութիւնը » :

Ուսանողները Հարպիյէի, Տաղտաշընը Տուման ալմբչ, Կազի Օսման փաչա քայ – լերգները երգելով հասան Սարաչհանէ հրապարակը, ուր թէքնիք համալսարանի ուսանողները կը սպասէին: Այնտեղ ու – սանողները կրակոտ ուղերձներ արտասա – նեցին : Երկու համալսարանական տեղ – ւոյն փոքր մզկիթին մինարէն բարձրա – ցան դրօշներ ու Աթաթիւրքի լուսանկարը ի ձեռին :

Ճառաբեմին առաջին ուղերձը արտա – սանեց Թուրք Ուսանողական Միութեան ընդհ. նախագահ Մէթին Քումապասար որ մասնաւորաբար ըսաւ .

— Ո՛վ Աթա, ահա քու հաւատացած ու վստահած Թուրք երիտասարդութիւնը դէմդ, այստեղ հաւաքուած է, վերջին ազդարարութիւնը ուղղելու համար ա – նոնց որ չեն ուզեր հաւատալ քեզի ու քու մեծ գործերուդ :

ԱՆՀԵՏԱՁՈՂ ՏԱՐԻՆ

—o—

Վերջացող տարին ալ սահեցաւ, երբեմն մեղմ, երբեմն փոթորկոտ, բայց երբեք խաղաղ: Ժողովուրդներու ճակատագիրը վարողները անճրկած կը մնան մինչ ջաղացային բարդ հարցերու առջեւ, կը բանակցին, կը սպառնան, հարցի մը լուծումը չգտած, ուրիշ հարցի մը կ'անցնին եւ սակայն կը զինուին ու կը սպառազինուին, միանդամայն յայտարարելով, թէ զէնքերու ահարկու կատարելագործումը կ'արգիլէ բախումը: Ամերիկայի նախագահը ՄԱԿի մէջ կը յայտնէր, թէ իւրաքանչիւր անհատի զլուխին վերեւ կախուած է հիւլէական դամոկլեան սուրը, ահա տարիներէ ի վեր աշխարհ կ'ապրի անհանգիստ մը մէջ:

Արեւելք կ'աշխատի իր վարդապետութիւնը տարածել եւ համոզուած է, թէ աշխարհ պիտի որդեգրէ նոր կրօնը, ո՛չ բովհեռ պրոլետարներու կրօնն է եւ աշխարհի բնակչութեան մեծամասնութիւնը պրոլետար է: Արեւմուտք կը դիմադրէ յարձակողականին, որովհետեւ նոր կրօնը իր հետ կը բերէ բռնութիւն եւ թշուառութիւն: Երկրորդական կը մնան Պերլինի, Գերմանիոյ միութեան հարցերը, մոռցուած են արաբանեակ երկիրներու ազատագրումը, ինքնորոշման իրաւունքի գործադրութիւնը: Ծայրագոյն Արեւելքի մէջ Համայնավար Աչխարհ մը սպառնական դիրք բռնած է դրացիներուն դէմ եւ կը սպասէ համաշխարհային պայքարի բովանդակ Ասիան կլանելու համար:

Երեք տարիէ ի վեր կը յեղյեղէն Պերլինի համար «Պերլին ազատ քաղաք ըլլալու է»: 1948 Յունիս 2ին Մոսկուա պաշարեց Պերլինի արեւմտեան կողմը, դաշնակիցներ օդային փոխադրութիւններ կատարեցին եւ Սթալին տեղի տուաւ: Արեւմուտք բանակցացաւ պաշարումի վերացումով եւ չարունակեց բանակցիլ, չկրցան վճռական քայլ մը առնել, երբ Մոսկուա տակաւ էր:

Դեկտեմբեր 18ին Գերմանիոյ վարչապետը զառնութեամբ կ'ըսէր լրագրողներուն. «45ին յայտնականները զրաւեցին Պերլինը, երբ զերման կառավարութիւն չկար: Դաշնակիցներ Ռուսերուն թողուցին ընդարձակ հողամաս մը եւ բաժնեցին Պերլինը: Ասիկա մեծ սխալ մը եղաւ: Այսպէս կազմուեցաւ Արեւելեան Գերմանիա մը՝ կարեւոր նահանգներով»:

Արեւմտեանները կազմեցին Արեւմտեան Գերմանիան, Խորհրդ. Միութիւնն ալ իր կողմի Գերմանիան ստեղծեց: Խրուշչեւ 7 Նոյեմբեր 1958ին առաջարկեց Արեւմտեան Պերլինը ազատ քաղաք դարձնել, առանձին խաղաղութեան դաշինք կնքել արեւելեան բաժնին հետ: 20 Մարտ 1960ին վերադարձաւ առաջարկին եւ տակաւին պիտի բանակցին հարցը կարգադրելու համար: Բայց հոս համաձայն չեն Արեւմտեան դիմակիցները: Ֆրանսայի նախագահը անդրդուելի կը մնայ իր որոշուած – մին՝ ոչ մէկ բանակցութիւն Խորհրդ. Միութեան հետ: Անգլիասաքսոնները, ընդհակառակն, փորձեալը կ'ուզեն փորձել: Հետաքրքրական է, որ քաղաքագէտ են խորհրդային վարչապետին տեղատուութենէն՝ հրաժարում որուան պայմանա – ժամէն: Աքընաուերը չկրցաւ տարհամոզել Ֆրանսայի նախագահը, որ իր կարգին Լոնտոն այցելելով անկարող եղաւ համոզելու լաւատես վարչապետը՝ թէ անօ – դուտ է ոեւէ բանակցութիւն:

Ասլանեան Ուխտի քարտուղար Տիրք Սթիքքըր ալ (նախկին արտաքին նախարար Հոլանտայի) արտաքին նախարար – ներու ժողովին յայտնեց, թէ կացութիւնը ծանր է, տագնապը հետզհետէ պիտի աւելնայ, հարկ է զօրացնել զօրակուռ – րը, չարունակել հիւլէական փորձերը (13 Նոյեմբեր): Կ'առաջարկեն ընդհանուր զինաթափում եւ մեւնոյն առեն սպառազինում:

Ամերիկայի նախագահը հպարտութեամբ յայտարարեց ՄԱԿի մէջ, թէ 42 երկիրներ անկախութիւն ստացան, շուրջ մէկ միլիառ մարդ թօթափեցին գաղթային պետութեանց լուծը, մինչդեռ ինքնորոշման իրաւունքը կը ժխտուի երկաթէ վարագոյրին եւրոպական ազգ ժողովուրդներ – ուն: Վիշինսկին վերադարձին կ'ըսէր. «Մեւնոյն բառերը՝ պատերազմ, խաղաղութիւն, տեմոքրատիա, ժողովրդային տարբեր նշանակութիւններ ունին երկու աշխարհներու մէջ: Խօսակիցս կրկնեց. «Ինչ ձեր գործով գրաւեցիք, մենք մեր գործով գրաւինք, համայնավարութիւնը պիտի ծաւալի առանց պատերազմի՝ ինչ որ ալ ընէք դուք»:

Ամերիկայի նախագահը յոռետես չէ, վստահ է, թէ պիտի կարենայ վիճակից – ներուն հետ արդիլել համայնավարու – թեան ծաւալումը: «Խրուշչեւի յարձակողականը կարելի չէ կեցնել ռմբակոծիչներով: Պիտի օգնենք ամէնուն ազատ աշ – խարհի պաշտպանութեան համար, բայց ոչ անոնց, որոնք չեն ուզեր իրենք իրենց օգնել, որոնք չեն ուզեր վարչական բա – րենորոգումներ կատարել, ընկերային արդարութիւն հաստատել»:

Նախագահը իրաւունք ունի ազահոված բար, 1948էն 1960 երեսուն միլիառ տո – լար բաշխեցին եւ տնտեսագէտ Փոլ Հոֆման, ցոյց տուաւ, թէ բաշխումը ազարդիւն եղած է: Այժմ զերման տնտեսագէտ Ֆրից Մէյէր ահազանգը կը հնչեցնէ՝ օգնութիւնը հակառակ արդիւնք տուած է եւ պիտի տայ անպայման: Ցայտուն օ – րինակ մըն է Լաոսը: Ամերիկա երեսուն միլիոն տոլար յատկացուց, հարիւրի մօտ անձեր իւրացուցին դումարը, վիլ – լաներ չինեցին, պերճանքի հետեւեցան: Դպրոցները ազատագրուեցան, դրամ ալ գտան, բայց մարդ չգտան, չկան պատրաստ ղեկավարներ, ձեռներէց ոդիի տէր անձեր: Բնակչութեան կէսը յետա – մնացած է: Փոխանակ ճարտարարուեստը զարգացնելու, առեւտուրի կը հետեւին, վաչխառութեամբ կը զբաղին: Գերման տնտեսագէտը կ'եզրակացնէ. «Անոնք որ կը մտածեն, նպաստ կը ստանան, անոնք որ իմաստուն վարչութեամբ նպաստը կ'օգտագործեն՝ նպաստ չեն ստանար, դէշ ընողը պարզեւ կը ստանայ, լաւ ը – նողը կը պատժուի: Ամերիկեան նպաստը կը զօրացնէ պետական տնտեսութիւնը, պետական ընկերվարութիւնը, ժողովուրդը կը զրկուի, կ'ըմբոստանայ, կը դառ – նայ համայնավար:

Լաոսին Ամերիկայի քան հանրապե – տութիւնները փունթա տ'Լոթէյի մէջ ժողով գումարեցին Օգոստոս 7էն 16 եւ ներկայացուցիչները ստորագրեցին զա – չինք մը «Զինակցութիւն՝ Յառաջդիմութեան համար»: Մ. Նահանգներու զան – ձային նախարարը յայտարարեց, թէ Աստղազարդ Հանրապետութիւնը պիտի նպաստէր տնտեսական եւ ընկերային զարգացման՝ տասը տարուան ընթացքին տասնեւհինգ միլիառ տոլար տրամադրելով: Հրատարակուեցաւ նաեւ վաւերա – կիր մը՝ «Յայտարարութիւն ամերիկեան ժողովուրդներուն», ուր կը բացատրուին համագործակցութեան նպատակ – ները, միջոցները, սկզբունքները: Ցատ – կացումները պիտի ըլլան երկրագործա – կան եւ ճարտարարուեստական ձեռնարկներու համար, որպէսզի ապահովուի ժո – ղովուրդներու բարեկեցութիւնը:

Իրան քաղաքական անդորրութիւնը չդտաւ: Երկիրը հարուստ է, տարեկան վեց հարիւր միլիոն տոլար եկամուտ ունի քան միլիոն բնակչութեան վրայ, բայց 15 միլիոն գիւղացիները հողատէր չեն, աղքատ են, երկրագործութիւնը նախնական վիճակի մէջ է, հողատէրը չի հե – տաքրքրուիր իր կալուածով: Հարուստ մը հարուածի մը համար կը ծախէ այնքան, որքան հարիւր գիւղացի մէկ տարուան մէջ: Հազարի մօտ չանաճուկեր կ'ապրին հողային եկամուտներով: Միջին դասակարգի պատկանող պաշտօնեաներ, ընչաքաղց եւ կաշառակեր, մեծերու պաշտպանեալներն են: Կորովի տէր եւ պարկեշտ վարչապետ մը կը չանայ մաքրագործել երկիրը: Չերբակալեց քաղաքական անձեր, զօրավարներ, պաշտօնեաներ: «Ազգային ճակատը» դոն չէ մաքրագործումներէն, կը պահանջէ դիւղացիներու ազատագրումը դարաւոր սորվութենէ: Հակառակորդները հակառամայնավար են, պահանջին համայնավար կը նկատուի, բայց եթէ զոհացում չդտնէ իրենց պահանջը, կը վախնան որ յեղաշրջումը անխուսափելի կ'ըլլայ:

Խրուշչեւ կ'ըսէր Ամերիկացի հրապարակագիրը Լիփմանի. «Առանց համայնավարութեան, պրոլետարներու յառաջդիմութիւնը կարելի չէ, երկկ պարագան Գուպայինն էր, վաղը Իրանինը պիտի ըլլայ»: Մոսկուա եւ Փահլեւի ձախնասութիւններով կ'աշխատին չարժել զանգուածները: Թեհրանի խորհրդային դեսպանատունը հազար երկու հարիւր պաշտօնեայ ունի, որոնք անշուշտ անպործ չեն եւ կ'աշխատին որ տեղացիները ալ գործեն:

×

Պրազիլիոյ նախագահ Քուատրոս վաթսուն հազար պաշտօնեաներ արձակեց, պիւտճէն կանոնաւորելու համար: Ինչպիսի կատերու չնորհիւ մակարդակը մը հաստատուած էր պաշտօնատուներու մէջ, մինչդեռ երկիրը Ամերիկայի պարտք ունէր երկու միլիառ տոլար: Ծրագրից յարաբերութիւն մշակել Մոսկուայի եւ Փեքինի հետ առեւտրական նպատակներով, բայց ինք ալ ատիպուցաւ հեռանալու երկրէն: Անհատի մը ուժերէն վեր կը մնայ, ինչ որ ալ ըլլայ իր դիրքը, պայքարիլ արմատացած հիւանդութեանց դէմ:

Հնդկաստանի վարչապետը մխիթարուեցաւ փորթուկալեան կալուած մը գնելով, փարատելու համար մատնոտութիւնները՝ հիւսիսէն եւ հարաւէն եկող դժուարութիւններէն՝ Հնդկաստան կը յառաջդիմէ հսկայաքայլ, արմատի արտադրութիւնն էր 1949ին 57·6 միլիառ, 1960ին 75 միլիոն: Պողպատի արտադրութիւնն եղաւ արագարագ, բայց բնակչութեան աճումին համեմատականը չէ: 1951ի մարդահամարով 372 միլիոն բնակիչ ունէր Հնդկաստան, 1960ին 431 միլիոնի բարձրացած էր թիւը: Կրթութիւնը պարտաւորիչ դարձնելու վորձ եղաւ, 1947ին ունէր 140·000 նախակրթարան, 1956ին 278 հազար: Զորս տարիէն 6–11 տարեկան վաթսուն միլիոն երախաները դպրոց պիտի դիմեն, ուրկէ՞ պտնել ուսուցիչ, չենք, դրամ: Տարեկան 13 միլիառ լիր. ոսկիի պէտք պիտի ունենայ:

Սոքարնօ ռազմամթերք կը առնայ Մոսկուայէն, եգիպտոս՝ ռազմանաւեր, Խորհրդ. Միութիւնը նաւային խարխնոներ կ'ուղէ պատրաստել դէս ու դէն՝ Ալպանիոյ խարխոը կորսնցնելէ ետք: Ամերիկայի դրամատունը ամէնուն պիտի հասնի յարձակողականները կեցնելու համար, միջազգային կեանքը դեկավարելու համար: Մեծապոյն վտանգը Արեւմտեան Գերմանիան չէզոքացնելն է, դերման հանրային կարծիքը յայտնուեցաւ վերջին ընտրութիւններէն, քաւութեան նոխազ եղաւ արտաքին նախարարը:

Ներկայ քաոսային վիճակը չարունակութիւնն է նախորդներուն սկսած Պերլինէն: Միտտան կ'ըսէր. «Պիտի պատերազմինք մինչեւ մահ, Եւրոպայի պիտի թողունք մեր դիակը թաղելու հողը»: Եւրոպա չկրցաւ թաղել դիակը, դիակը եկաւ ինկաւ անդնդախոր փոսին մէջ, այժմ կը տապալակի դուրս դալու համար:

ԽՈՐԷՆ ԳԱԲՐԻԿԵԱՆ

ՉՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ ՁԵՌԱԳԻՐՆԵՐԸ ՉԵՆ ՎԵՐԱԴԱՐՁՈՒԻՐ:

ԱՄԲԱՍՏԱՆԵԱԼ ՍԹԱԼԻՆ, ՈՏՔԻ՛

—o—

Իր յաջորդն (ու սպանիչը) յայտնի ա – նուն մը ունի. կը կոչուէր Բերիա:

Խրուշչեւ վերջերս պատմեց, թէ Բե – րիա ինչպէս մեռաւ 1953 Յունիսին՝ Պո – լիտբիւրոյի իր գործակիցներուն ձեռքով (ասոնց գլուխը կը գտնուէր Խրուշչեւ):

ՄՕՏ ԵՐԵՔ ՄԻԼԻՈՆ ՀՈԳԻ ՄԵՌԱՒ

Ո՞վ կրնայ պիտակել սարսափի այս չորս տարիներուն ընթացքին ձերբակալուած – ներուն, մահապատիժի ենթարկուածնե – րուն, կեդրոնացման կայաններու կամ բանտերու մէջ զրկանքներու հետեւանքով մեռածներուն ճշդրիտ թիւը: Նոյնիսկ խորհրդային պատկան սպասարկութիւնները դիտնալու չեն որոշ կերպով:

Հաւանականօրէն քանի մը թիւեր տա – լով.

1) Խրուշչեւ կարդ մը մանրամասնու – թիւններ տուաւ մաքրագործուած կու – սակցական դեկավարներու եւ բարձրաս – տիճան կուսակցականներու մասին: 1934ի համագումարին կողմէ ընտրուած կեդրո – նական կոմիտէն բաղկացած էր 139 ան – դամներէ, որոնց 98 հոգին ձերբակալ – ուեցան եւ զնդակահարուեցան. այսինքն՝ 70 առ հարիւրը:

1934ի համագումարին կը մանակցէին 1966 պատգաւորներ. առնցմէ 1108 հոգին ձերբակալուեցան հակա – յեղափոխական ոճիրներու ամբաստանութեամբ:

2) 1936ի սկիզբէն մինչեւ 1938ի վերջը 850էն 900·000 կուսակցականներ վտար – ուեցան չարքերէն: Այսինքն՝ կուսակցա – կաններու ընդհանուր թիւին մէկ երրոր – դը: Այլ խօսքով, օրական միջին հաշ – ուով հազար հոգի կը հեռացուէին կու – սակցութենէն:

Արդ, «մաքրագործուած», կուսակցու – թենէն վտարուած մը ամէն բան կը կոր – սընցնէ — զործէն կը հանուի, բնակած տունէն դուրս կը դրուի. միեւնոյն մի – ջոցները ձեռք կ'առնուին նաեւ իր ընտա – նիքին անդամներուն դէմ: Ընդհանուր առմամբ, կուսակցութենէն վտարուածը կ'աքսորուի:

3) 1936 – 37 – 38 տարիներուն ընթացքին ութէն մին միլիոն հոգի ձերբակալ – ուած են ամբողջ Խ. Միութեան մէջ: Այս հաստատումը կ'ընէ 1931էն ի վեր Խ. Միութիւն հաստատուած եւ 1937ին ձերբա – կալուած աւստրիացի պլոմպական մը, Ա. Լեքսանդր Վայսպերկ, որ միջազգային մամուլին մէջ Այնշթայնի, Ժան Փերէնի, Ֆրէյտէրիք Ժոլիո – Քիւրիի հրատարա – կած բողոքներուն չնորհիւ է միայն, որ մահուընէ ազատեցաւ:

Վայսպերկ հետեւեալ ձեւով կը հիմնաւորէ իր հաստատումը.

«Ձերբակալուածներուն թիւը հաշուե – լու համար չատ պարզ ձեւ մը կար: Խորհրդովի կեդրոնական բանտէն ներս ընդունուած միջոցին, իւրաքանչիւր նորեկ կը յանձնէր վրան գտնուած դրամն ու մանրամունը առարկաները, որոնց փոխարէն թուագրուած ստացագիր մը կուտային ձեռքը: Այդ անդամ որ նոր մէկը կը բերէին մեր խցիկը, ստացագրին վրայէ թիւին չնորհիւ կրնայինք հասկընալ, թէ նախորդ եկողէն ի վեր քանի՞ հոգի ձերբակալուած էին այդ չրջանին մէջ:

«Երբ, 1939 Փետրուար 20ին հեռացայ Խարքովէն, կրցած էինք հաստատել, թէ նահանգին ընդհանուր բնակչութեան առ նուազն հինգ ու կէս առ հարիւրը ձերբակալուած էր վերջին երկու տարիներուն ընթացքին:

«Ուրիշ քաղաքներէ որպէս վկայ բերուած բանտարկեալներէ տեղեկացանք, թէ բոլոր կեդրոնական բանտերուն մէջ հաշուելու այս ձեւը կը կիրարկուէր: Ամէն տեղ հինգ ու կէս առ հարիւրի հա – մեմատութիւն գտած էին»:

Արդ, այդ տարիներուն, խորհրդային ընդհանուր բնակչութեան թիւը 170 մի – լիոնէն քիչ մը աւելի էր: Ուրեմն, կարելի էր ըսել թէ 9 միլիոն հոգի ձերբակալուեցան այդ տարիներուն, մէջէն ըլլալով նաեւ «քրէական յանցաւորները» որոնք չատ փոքր համեմատութիւն մը կը կազմեն:

Այս ինը միլիոն բանտարկեալներէն քանի՞ն մեռան. ըստ ոմանց՝ մէկ չորրորդը. ըստ ուրիշներու՝ մէկ երրորդը: Ցամենայն դէպս, միլիոններու կը հասնի անոնց թիւը:

Պատմութեան ընթացքին ոչ մէկ տեն տեսնուած էր բանտարկեալներու այսքան մեծ բանակ մը, այն ալ՝ խաղաղութեան ժամանակ:

Այս սարսափներուն չրջանին էր, որ Սթալին խմբագրել տուաւ խորհրդային նոր սահմանադրութիւնը, որ միչտ ի զոյ – րու է, եւ որ արտասահմանի մէջ ընդունուար համայնավարութեան նոյնիսկ թշնամիներուն՝ թէ Խ. Միութիւնը սկզբսած է աւելի ազատական դառնալ...

ՎԵՑԵՐՈՐԴ ՈՒՆԿՆԴՐՈՒԹԻՒՆ

Ի՞ՆՉՊԷՍ ՄԱՔՐԱԳՈՐԾՈՒԵՑԱՒ ԼԵՆԻՆԻ ԱՌԱՋԻՆ ՕՐԵՐՈՒ ԸՆԿԵՐՆԵՐԸ

— Գիտէ՞ք թէ աշխարհի ամէնէն անուղ բանը ինչ է,— 1923ին Սթալին կը հարցընէր կամենալի եւ ձերժինսքիի, որոնք հակա – թրոցքիական պայքարի իր դաշնակիցներն էին, մինչ Լենին կ'ապրէր իր վերջին ամիսները: — Աչխարհի ամէնէն անուշ բանն է՝ զոհդ զատել, մանրամասնօրէն պատրաստել հարուածը որ գայն պիտի տապալէ եւ վրէժդ լուծել, պատերթալ եւ քնանալ:

(18 Շար.)

ՓԵՇՏԱՅԻ ''ՄԵՆԱՒՈՐ'' ԿԻՆԵՐԸ

«Անահէր» կիներու հարցը որոշ մտա–տանջութիւն կը պատճառէ համայնավար Հունգարիոյ մայրաքաղաքին մէջ: Վեր–ջին վիճակագրութենէ համաձայն Փեշ–տայի կիները հարիւր տարի տղիով ա–ւելը չատ են այրերէն: Քաղաքին բնա–կիչներուն ընդհանուր թիւը մէկ միլիոնի կը հասնի:

Այս կիներէն չատեր, բնականաբար, զուր կը փնտռեն սէրը քաղաքի մը մէջ, որ թէեւ դեռ կիսակործան վիճակի մէջ է, սակայն վիպասքա ըլլալէ չէ դադ–րած:

Ամուսին գտնելու համար արուեստ ծա–նուցմունները, որ առեն մը օրէնքէ դուրս հռչակուած էին համայնավար իշխանու–թեանց կողմէ, զարձեալ սկսան տրատա–րակուիլ: Համայնավար կուսակցութեան պաշտօնաթերթին անցամ կը հրատարակէ նման յայտարարութիւններ:

Թերթերուն մէջ նման յայտարարու–թիւններ տրատարակող պետական զոր–ծակալութեան մը տեսչին վերջերս յայ–տարարեց, թէ Փեշտայի թերթերուն մէջ 250 հազարէ աւելի յայտարարութիւններ հրատարակուած են:

Այս կիներէն ոմանց յուսահատութիւնը տրուին ամէն տարիքի կիներու կողմէ, որ անձնական կեանքի ընկեր մը կը փըն–տռեն իրենց համար:

Այս կիներէն ոմանք յուսահատութիւնը երեւան կուգայ վերջերս հրատարակուած սա յայտարարութիւնէն. «Երեսուն տա–րեկան զարգացած երիտասարդուհի մը կ'ուզէ ծանօթանալ լուրջ պարոնի մը հետ, եթէ կարելի է՝ ամուրի:

Սակայն, կան նաեւ անրուժելի զազա–փարապաշներ:

« 23 տարեկան երիտասարդուհի մը պիտի ուզէր ծանօթանալ եւ ամուսնանալ լուրջ պարոնի մը հետ, որ չի սիրեր յայտարարութիւններու միջոցով ծանօ–թացումը »:

Փեշտայի չատ մը ընտանիքներուն մէջ միայնակ կիներու համար բացուած են ակումբներ, կանանց Համայնավարական Մարմարդի եւ Արհեստակցական Միու–թեանց կանանց յանձնախումբերու հո–վանաւորութեան տակ:

Փեշտայի « Ապրիլ 4» զործատան ա–կումբին մէջ քառասուն տարեկան հա–մակրելի կին մը ըսաւ, թէ ինքզինք աւե–լի երջանիկ կը զգայ ակումբին անդամ ըլլալէն ի վեր, որովհետեւ նախապէս կ'ապրէր «զոց ընտանեկ»ի մը մէջ, — իր սենեակէն զործատուն եւ զործատունէն սենեակ:

Զործատան երեք հարիւր կիներէն ա–ւելի քան հարիւրը առանձինն կ'ապրին: Երեսունը ակումբի անդամ են: Այս ա–կումբի անդամուհիները շաբաթը անգամ մը միասին կը ճաշեն, միասին թատրոն կ'երթան, միասին կը կարդան եւ բոլոր տօներուն մէկտեղ երեկոյթ կը կազմա–կերպեն:

Այս կիները բնաւ պարասրահ չեն եր–թար եւ չեն ուզեր թէթեւաբարոյ կին նկատուիլ:

Փեշտայի մենաւոր կիներէն չատեր է–րիտասարդուհիներ են, որ բաժնուած են իրենց ամուսիններէն, հիասթափ՝ ա–մուսնական կեանքէն:

1959ի վիճակագրութեան համաձայն, 90 հազար ամուսնութիւններ կնքուած եւ 22·000 ամուսնալուծումներ տեղի ունե–ցած են: Հունգարիոյ բնակիչներուն ընդ–հանուր թիւը մօտ տասը միլիոն է:

Կարգ մը ամուսնալուծումներ բնակա–րանի պակասին եւ չատ մը մարդոց նոյն տան մէջ բնակութեան արդիւնք են: Սա–կայն, ուրիշ ամուսնութիւններ ալ ար–դիւնք են ամուսնութենէ առաջ եւ ետք չատ մը Հունգարացիներու բռնած ըն–թացքին:

Հունգարացին հրաշալի է իրրեւ սիրա–հար: Կը ջանայ զոհացում տալ կնոջ մին–չեւ իսկ ամէնէն փոքր քմահաճոյքին եւ այնպէս կ'ընէ, որ ան յաւիտեան նոյն հոգածութիւնը սպասէ իրմէ: Հետեւա–րար Հունգարուհին երբ կը տեսնէ, որ ամուսնութենէն ետք արդ ամրողջ չահա–դրդութիւնը յօդս կը ցնդի, ամուսնա–լուծում կը պահանջէ:

Հունգարիոյ մէջ ըրձան կ'ընէ հետեւ–եալ զրոյցը. մահմեդական կիներուն եւ Հունգարուհիներուն միջեւ միակ տար–բերութիւնը այն է, որ առաջինները ա–մուսնանալէ առաջ հազուադէպօրէն կը տեսնեն իրենց ամուսինները, իսկ երկ–րորդները՝ ամուսնանալէ ետք:

Հունգարիոյ կանանց միակ պարբերա–կանը՝ « Նոք Լափիա», կը զրէ, թէ մի–այն կիները, սիրային յայտարարու–թիւններէն աւելի քաղաքակիրթ եւ մարդկային ձեւեր պէտք է զտնէին իրենց խնդիրները լուծելու համար:

Պարբերականը կը զրէ նաեւ, թէ նման յայտարարութեամբ այր մարդու մը եւ կնոջ մը միջեւ եզած հանդիպումը տուր–պար « չատ պաղ եւ չատ կոպիտ » է ընկերային յարաբերութեան համար յար–մար մթնոլորտը ստեղծելու տեսակէտէն:

« Նոք Լափիա» կ'աւելցնէ. «Եթէ զիւ–րաղած կին մը նման հանդիպումէ մը ետք մերժուի, իր արդէն իսկ խախուտ ինքնավստահութիւնը անվերականգնե–լիօրէն խորտակուած պիտի ըլլայ »:

Պարբերականը կ'առաջարկէ կարգ մը նոր չէնքեր տրամադրել միմիայն ամուրի մարդոց, ուր, եթէ ուզեն, կարենան խա–ղըն ճաչասրահներու մէջ ճաչել եւ խառն պրօսասրահներու մէջ պրօսնուլ:

Փեշտայի կանանց պարբերականը, սակայն, կը մռնչայ, թէ Փեշտայի եր–բեմի այնքան չէնչող կիներուն պա–տուհաններու խամրումին պատասխանա–տուն մեծ մասամբ Հունգարիոյ աչխա–տանքի եւ բնակութեան տխուր պայման–ներն են:

Թարգմ. Վէն

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍՊԵՆԴԻԱՐԵԱՆ

1961 Նոյեմբեր մէկին, ծնդեան 90ամ–եակն էր Ալեքսանդր Սպենդիարեանի, որ կոմիտասի եւ Ա. Տիգրանեանի կողքին, կը նկատուի հայկական մշակուած երա–ժչտութեան հիմնադիրներէն մէկը:

Ալ. Սպենդիարեան ապրեցաւ եւ դոր–ծեց այնպիսի ժամանակաշրջանի մը մէջ, երբ ռուսական ազգային երաժչտու–թիւնը կերտողներուն օրինակը ուրիշ ազ–գերու երաժչտականներն ալ կը մղէր քա–ղելու նոյն ճամբէն՝ հիմը դնելու համար ազգային կեանքէն եւ երաժչտութենէն ներչնուած ինքնատիպ երաժչտութեան մը, օգտագործելով ժողովրդական երա–ժչտութեան առանձնայատկութիւնները:

Ալ. Սպենդիարեան ծնած է Քահովքա, Ուկրայնա: Իր երախայութեան տարինե–րը անցուց Սեմֆերոպոլի մէջ, ուր, զպ–րոցի սովորական աշխատանքներուն կող–քին, կը զբաղէր նաեւ երաժչտութեամբ: Մոսկուայի Համալսարանի օրէնսգիտա–կան ճիւղին ուսանող եղած չրջանին, Սպենդիարեան կը նուագէր ուսանողնե–րու նուագախումբին մէջ: Ասոր զեկավա–րը՝ Քլենովսկի, նկատելով երիտասարդ Հայուն տալանդը, անոր կը դասաւանդէ երաժչտագիտութիւն: Պետերբուրգի մէջ, Սպենդիարեան կը չարունակէ իր երա–ժչտական ուսումը Ռիմսկի – Ֆորսաքովի առաջնորդութեամբ եւ մեծ երգահանին չունչին տակ ան իր քայլերը կ'ուղղէ դէպ ի փոլիորի ուսումնասիրութիւնը՝ արա–զօրէն զարգացնելով իր ստեղծագործ ան–հատականութիւնը:

Անոր առաջին յօրինումները, այսինքն «կոնցերտի ուվերթիւրան», բազմաթիւ մեղեդիներ, որոնց կարգին «Վարդը» եւ « Սիրուհիս », Լերմոնտովի մէկ բանաս–տեղծութեան վրայ զրած «Երեք արմա–ւենիները» համանուաղ պատկերը, ակըն–բախ են իրենց առատ մեղեդիութեամբ, ղեզացումներու ճչմարիտ արտայայտչա–կանութեամբ եւ մարդկային ապրումնե–րով, ինչպէս նաեւ ունկնդիրներու հոգ–դանդուածին կողմէ հասկնալի ըլլալու մտադրադումով:

Այս զործերուն կը յաջորդէ հայրենա–սիրական բնաբաններով զրուած յօրի–նումներու ուրիշ չարք մը, ինչպէս են՝ « Մի լար պլպուլ»ը, « Հայաստանին » երգը՝ թամբերզակի (պարիթոն) եւ նը–ուագախումբի համար, բարձրերզակի (թենոր) եւ նուագախումբի համար զրած հերոսապատում երգը՝ «Այնտեղ, պատ–ուոյ դաչտին վրայ», որ բոցաչունչ կոչ մըն է ազատութեան համար եւ ներչըն–չուած է Մ. Աբովեանի «Վէրք Հայաստա–նի» վէպէն, երգ մը, որ արգիլուած է ռուսական զրաքննութեան կողմէ:

Սպենդիարեանի երաժիչտի համբաւը հետզհետէ կը բարձրանայ ռուս երաժչ–տական չրջանակներուն մէջ, մանաւանդ իրը հետեւանք այն իրողութեան, որ ան, չնորհիւ իր կարող մը արժէքաւոր զործե–րուն, երեք անգամ կ'արժանանայ «Կլին–քա» մրցանակին:

1924ին վերջնականապէս Երեւան կը հաստատուի եւ կը նուիրուի Հայաստանի երաժչտական կեանքի զարգացումին: Կ'ունենայ անխոնջ զործունէութիւն մը Հայաստանի Փիւռեղեան եւ արուեստի հիմնարկութեան, Երեւանի երաժչտանո–ցին եւ երաժչտական հրատարակութիւն–ներու աչխատանքներուն մէջ: Երաժիչտ–ներու ամրողջ սերունդ մը Սպենդիար–եանէն ստացած է երաժչտական ձեռնտաս պատրաստութիւն: Երաժչտական կեան–քը, որ կը սկսի բարթիել նորաստեղծ Հայաստանի մէջ, Սպենդիարեանի մօտ կը զտնէ արժէքաւոր զեկավար եւ կազ–մակերպիչ մը:

Այդ տարիներուն, անոր տեղծագոր–ծութեան կապը աւելի կ'ամրապնդուի հայ ժողովուրդի կեանքին, մչակոյթին եւ երաժչտութեան հետ: Ան, Սայաթ – Նո–վայի երգերուն հիման վրայ կը յօրինէ « Երեւանի էթիւտները» նուագախումբի համար, «Ղարիպ պլպուլ» տուիքը՝ եր–գեցողութեան եւ նուագախումբի համար, եւ մինչեւն տաեն կ'աչխատի իր ամէնէն կարեւոր զործին՝ «Ամմատ» օփերային վրայ՝ Յովհաննէս Թումանեանի «Թմբը–կաբերդի առումը» քերթուածին նիւթով, որ ներչնչուած է ԺԸ. դարու Հայութեան մղած տերոսական պայքարէն՝ ազատ–ուելու համար պարսկական լուծէն: Այս–տեղ, հայ ժողովրդական երգերու եւ պարերու հարուստ դանձարանը երեւան կուգայ չատ վարպետ վերամչակումներու ձեւին տակ, աչխատութեան տալով ազ–գային չեչտուած նկարագիր մը: «Ամ–մատը», ինչպէս Տիգրանեանի «Անուչ» օփերան, իրապէս ժողովրդական օփերա–ներու չարքին կը պատկանի:

Սպենդիարեան մեռաւ Երեւանի մէջ, 1928 Մայիս ութին: Իր մահը մեծ կո–րուստ մը եղաւ հայ երաժչտական աո–ուեսին համար:

Երաժչտութեան բնագաւառին մէջ ա–նոր ունեցած բեղուն զործունէութեան իրը վարձատրութիւն եւ ի նչան ժող–ովուրդին երախտագիտութեան, 1926ին Հայաստանի պետական իշխանութիւնը ի–րեն չնորհեց Հայաստանի ժողովրդական արուեստագէտի բարձր կոչումը: Նոյն–պէս, Երեւանի օփերայի եւ բեմադարձ թատրոնը, պետական երաժչտանոցը եւ լարային նուագախումբը կը կրեն հայկա–կան երաժչտութեան այս մեծ դաստիա–րին անունը:

ՄԵԼԻՆԷ ԲՈՂԱՏԵԱՆ

«Նոր կեանք»

ԿԱՐԴԱՑԷՔ ՏԱՐԱԾԵՑԷՔ «ԾԱՌԱՋ»Ը

ԹԻԱՊԱՐՏԸ

(ՎԷՊ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿԵԱՆՔԷ)

ԳՐԵՑ

ԱՐՄԷՆ ՇԻՏԱՆԵԱՆ

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

— Ոչ, անկարելի է, Տէր Հայր... չեմ կրնար:

Ան որ իր հոգին սեւցուցած է ամբաս–տանելով պիս, միայն իմ անձիս թշնա–մին չէ, այլ Հայութեան թշնամին է ... Հետեւաբար, երբ իմանամ անոր ով ըլլա–լը կախաղանն ալ տանելու ըլլան իմ մարմինս, զարձեալ վրէժս պիտի լուծեմ ... երեկ կ'ըսէիք ինծի որ ճչմարտու–թիւնը յայտնեմ ... ի՞նչ պիտի որ ինչ յայտնէի: Փուճ տեղ մարդասպանի մը պէս կը վարուին ինծի հետ.

— Աստուծոյ Թողու... մրմնջեց Տէր Կոմիտաս:

— Աստուծո՞յ:

— Այո: որդեակս:

— Աստուած չի պահանջեր որ թշնամի–անպատիժ թողում:

— Իրաւ է ... բայց կրնայ ըլլալ որ թշնամիդ սխալած է ու ձեռնէ ներողու–թիւն կուգայ խնդրելու:

— Մինչ՞ կարելի է ... ո՞ր սեւ հոգի արարած՝ վատաբար իր ձեռքը արեանս մէջ թաթխելէն ետքը կուգայ կը խոստո–վանի յանցանքը ու ներողութիւն կը խնդրէ ... :

Տէր Կոմիտաս մեքենաբար ծունկի եկաւ ու բացատրեց.

— Ես, որդեակս... ես :

— Դո՞ւք, զոչեց Սիրվարդ զարշան–քով մը :

— Այո... ես՝ կրկնեց Տէր Կոմիտաս թոթովելով :

Սիրվարդ տեղէն վեր ցատկեց, քայլ մը ետ քաչուեցաւ՝ մարդու մը պէս սեւ օձէ մը խոյս տուողի պէս սարսռազ մարմ–նովը ու յետոյ կատաղութիւնը չկրնալով զսպել յարձակեցաւ Տէր Կոմիտասին վը–րայ ու ծանր ապտակ մը իջեցուց անոր երեսին, զոչելով .

— Դիւ , դիւ... հրէչ ... :

Տէր Կոմիտաս անչարժ մնաց: կարծես թէ, չզգաց այն ծանր ապտակը զոր Սիր–վարդ անոր երեսին իջեցուց: Միայն թէ՝ զրպանէն սեւ թաչկինակ մը հանեց ու սրբեց այտերուն վրայէն վազող թուքը:

Սիրվարդ խեղդել կ'ուզէր այդ հրէչը ... բայց չկրցաւ քայլ մը յառաջանալ , որովհետեւ խիղճը տանջեց զինքը: Վա–րանած ու ինքնիրմէն ելած՝ սկսաւ զո–ղալ :

Ու, յիմարի մը պէս, զլուխը թողուց ու անոր վիրը բռնել ուզեց: Բայց այդ պահուն մէկը թեւէն ուժգին կերպով մը քաչեց ու ձայնեց .

— Բաւական է , Սիրվարդ :

Երիտասարդը մեքենաբար ետին զար–ձաւ ու տեսաւ որ իրեն հետ խօսողը Վա–նականն էր:

— Թողէք վիս... ահա այդ հրէչը կը խոստովանի թէ իմ արիւնս մտած է, բա–ցատրեցէք Սիրվարդ :

— Լռութիւն ... բանտապահը հիմակ հոս պիտի զայ, ընդհատեց Վանական :

Ու յետոյ, Տէր Կոմիտասին զառնալով, ըսաւ .

— Երթանք , Տէր Հայր:

Տէր Կոմիտաս ոտքի եկաւ ու ապուչի մը պէս հետեւեցաւ Վանականին :

ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆՑ ՆԵՐԿԱՑՑԱՑՈՒՑԻՉՆԵՐ

Ակօրի թաղի մէկ անկիւնը միայարկ ու բաւական կոկիկ չինուածքով տուն մը կար, որուն տէրը յիսունն անցած ծերու–նի մըն էր:

Ծերունիին կինը մեռած էր չատ տա–րիներ առաջ, իսկ զաւակ ունեցած չէր:

Այդ մենաւորիկ տունին մէջ երիտա–սարդ մը կը բնակէր՝ համեստ վարձք մը վճարելով :

Ներսէս Արծրունին այդ տունը մտաւ եւ երիտասարդին սենեակը առաջնոր–դուեցաւ :

Երիտասարդը զբաղած էր, երբ Ներ–սէս Արծրունին անոր մօտեցաւ ու բարե–ւեց :

— Հրամմեցէք , բարեկամս, ըսաւ ե–րիտասարդը համակրական չեչտով մը:

— Հանգիստ եղէք, կը խնդրեմ, մը – մնջեց Ներսէս Արծրունին:

Ու կակուղ մինտարի մը վրայ նստե–ցաւ:

Կը համի՞ք ձեր ով ըլլալը յայտնելու , հարցուց երիտասարդը՝ հետաքրքրուած ձայնով մը:

— Ա... զեղչն եմ, պարոն, անունս Սեպուհ է, պատասխանեց Ներսէս Ար–ծրունին վերապահ չեչտով մը:

— Այսօ՞ր եկաք :

— Ոչ, երկկ զիչեր եկած եմ :

— Ի՞նչպէս է զիւղը :

— Լաւ է ... : Միայն թէ ...

— Ի՞նչ կայ :

— Երբեմն ցաւալի զէպքեր սկսած են պատահիլ :

— Ի՞նչ զէպքեր ... :

— Կոլտակցական կռիւներ՝ ըսել կ'ու–զեմ :

(Շար.)

ՄԱՅԻՍ 28Ը ԿԸ ՏՕՆՈՒԻ

Կիրակի, Մայիս 27ին, Մխիթարեանց մեծ սրահին մէջ :

ՆՈՒԻՐՆԵՐ ԿԱՊ. ԽԱՉԻ ՕԴԱՓ. ԿԱՑԱՆԻՆ

Ֆ. Կ. Խաչի Շրջ. վարչութիւնը չնորհակալութեամբ ստացած է Օր. Գաթրին Աքնազարեանէ յիսուն Ն. Ֆ., ի նպաստ Պէյճոնթէնի օդափոխութեան կայանին :

Նոյն նպատակին համար ստացուած է նաեւ յիսուն Ն. Ֆ. Տէր եւ Տիկնոջ մը կողմէ :

ՑԱԽԱԿՑՈՒԹԻՒՆ

Ֆ. Կ. Խաչի Սէւրանի մասնաճիւղի ընկերուհիները իրենց խորին ցաւակցութիւնները կը յայտնեն Քէպապճեան ընտանիքներուն իրենց մօր եւ մեծ մօր տիկին Փառանձեմ Քէպապճեանի մահուան առթիւ եւ փոխան ծաղկեպսակի 50 Ն. Ֆ. կը նուիրեն Մոնմորանսիի Հանդստեան տան : (Մտանալ «Ցառաջ»էն) :

ԼՐԱՏՈՒ ԱՐՈՒԵՍՏԻ

«ԴԱՐՈՒՄ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐԸ»

չարքին մէջ Փարիզ 312 մեթրի վրայ (մէջին ալիք) ֆրանսական ձայնասփիւռը կը ներկայացնէ երկու հայ բանաստեղծներ . ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆ և ԵՂԻՇԷ ՉԱՐԵՆՑ, Կիրակի (Յունուար 21) ժամը 14·30ին : Հատուածները պիտի կարդան Նթալի Խերեան, Ժան – Ժագ Ալանեան, Հայկուհի Խըտըչեան :

Ջրոյց՝ ՌՈՒԲԷՆ ՄԵԼԻՔԻ ՀԵՏ :

VICTOR GARDON

LE CHEVALIER
à
L'EMERAUDE

« Une très belle épopée qui a pour cadre l'Arménie légendaire »
(*Réalités*).

« Les mots sont brefs, justes, légers, mais portés par un souffle d'épopée ».
RENÉ MASSON (*Nouveau Candide*).

« Un livre plein d'entrain, de rebondissements qui émeuvent... il grouille de personnages chaleureux ».
ALAIN BOSQUET (*Combat*).

« Le héros de cette épopée est un parent de Lancelot et de Perceval ».
(*Feuille d'Avis de Neuchâtel*).

« Une fois de plus Victor Gardon affirme un talent sans défaut ».
(*Libre Belgique*).

STOCK

ՇԱՀԱՆ ԱՆՈՒՇ

ՆԱՀԱՆՋԸ ԱՌԱՆՑ ԵՐԳԻ

Ա. Տպագրութիւն, 1929

Գին 7 Ն. Ֆր.

Դիմել ՑԱՌԱՋԻՆ

JACQUES TORANIAN
Agent Immobilier
Assureur Conseil.
Ձեզի պիտի ընդունի ամէն օր իր գրասենեակը
RIVE GAUCHE IMMOBILIER
42, *Bld. Arago — Tél. : POR.* 03-94
կամ ձեզի կ'այցելէ ժամադրութեամբ ՓԱՎԻՅՈՆՆԵՐՈՒ, ՑԱՐԿԱԲԱԺԻՆ – ՆԵՐՈՒ, ՇԷՆՔԵՐՈՒ (fo–փրոփրիէթէ) ՀՈՂԵՐՈՒ, ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՑԱՐԿԱԲԱԺԻՆՆԵՐՈՒ, ԽԱՆՈՒԹՆԵՐՈՒ, ԱՌՈՒԾԱԽԻ ձեր բոլոր խնդիրներուն համար
Expertise Gratuite
Ձեր տրամադրութեան տակ է նաեւ բոլոր ապահովագրութեանց համար
Auto
Incendie
Dégâts des eaux
Vie
— PRIX ETUDIES —
Tous risques assurés

FOURRURES
Roger YOPIAN
PRIX INTERESSANTS
NEUF et REPARATION
84, Boulevard de Stalingrad, 84
— CHOISY-LE-ROI (Seine) —
Autobus : de la Porte de Choisy, descendre 3 Communes ou Rue du Docteur-Roux.

Imprimerie Spéciale du journal « Haratch »
32, Rue de Trévise, PARIS (9e)

ՆՈՐ ՍԵՐԻԱՆԴԻ

ՊԱՐԱՇԱՆԴԷՍԸ

Կազմակերպութեամբ Սէն Շամոնի խումբին, այս Շաբաթ իրիկուն ժամը 21–էն մինչեւ լոյս :

Սէն Շամոնի Քաղաքապետարանի սրահը (Սալ տէ Ֆէթ) :

Նուագախումբ՝ ձիմի Ռիվլ :

Պիւֆէ , պար , fոթիյոն, ժէօ :

ՀԱՆԴԷՍ – ՏՕՆԱԺԱՌ
ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՕՐՈՒԱՆ ԱՌԹԻԻ

Կազմակերպուած՝ Ֆ. Կ. Խաչի Տէսինի մասնաճիւղի կողմէ : Մասնակցութեամբ՝ զպրոցին աշակերտութեան :

Այս կիրակի կէսօրէ ետք, ժամը 3·30–ին Հ. Ց. Դ. Տան մէջ :

Մոթական երգեր, արտասանութիւններ աշակերտներու կողմէ :

Կը ներկայացուին՝ 1) Կաղանդ Պապան, 2) Ուրիշին տունը հարսանիք (զաւեշտ) : Երգերով ու հայկական պարերով :

Մուտքը ազատ է :

Կը հրաւիրուի Տէսինահայութիւնը անխտիր :

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ
ԿԱՊՈՑՏ ԽԱՉԻ ՕՐԸ

Ֆ. Կ. Խաչի օրը կը տօնուի Ապրիլ 1ին, կիրակի, կէսօրէ վերջ, Շիմիի սրահը :

ԴՊՐՈՑԱՍԷՐ ՏԻԿՆԱՆՑ ՎԱՐԺԱՐԱՆ

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ
ՑԵՐԵԿՈՅԹ
ՄԱՐՏ 11ԻՆ
ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Կ'ՈՒԶՈՒԻ

Պաշտօնական դրասենեակի մը մէջ աշխատելու համար, երիտասարդ տաճիկ օրիորդ մը կը փնտռուի : Մանրամասնութեանց համար դիմել ՑԱՌԱՋ :

Հ. Յ. Դ.

ՓԱՐԻԶ.— Հ. Ց. Դ. Շրջ. կոմիտէն ներկայացուցչական ժողովի կը հրաւիրէ Փարիզի եւ շրջանի մարմիններու ներկայացուցիչները, այս կիրակի կէսօրէ վերջ ժամը 2·30ին, Մշակոյթի Տան սրահին մէջ :

ՕՐԱԿԱՐԳ.— Շրջ. ժողովի օրակարգի քննութիւն : Ներկայացուցիչ ընկերներու պարտաւորիչ ներկայութիւն :

ՓԱՐԻԶԻ Հ. Ց. Դ. Շրջ. կոմիտէն ընկերական ընդհ. ժողովի կը հրաւիրէ «Արամ» ենթակոմիտէի բոլոր ընկերները այս Ուրբաթ ժամը 8·30ին, Մշակոյթի Տան սրահին մէջ : Կարեւոր օրակարգ : Ներկայ կ'ըլլայ Կ. Կ-ի ներկայացուցիչը :

ՎԻԼԻՆ.— Հ. Ց. Դ. Անի կոմիտէն ընդհ. ժողովի կը հրաւիրէ բոլոր ընկերները այս Շաբաթ, ժամը 20·30ին, Հ. Օհանջանեան ակումբին մէջ : Կարեւոր օրակարգ :

ԱՌՆՈՒՎԻԼ – ՍԱՐՍԻԼ.— Հ. Ց. Դ. Վարդան ենթամոմիտէի ժողովը այս Ուրբաթ երեկոյ, սովորական հաւաքատեղին : Կարեւոր օրակարգ :

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՑՑ

Հ. Ց. Դ. Մարսէյլի Շրջ. Կոմիտէի հրաւիրած ընկերական ժողովներու :—

Հ. Ց. Դ. Մարսէյլի Շրջ. Կոմիտէն՝ սոխպողաքար ընկերական ընդհ. ժողովի կը հրաւիրէ հետեւեալ ենթակոմիտէները – րու եւ խումբերու անդամ ընկեր – ընկերուհիները :

ԳԷՈՐԳ ՋԱՎՈՒՇ խումբ՝ 20 Յունուար Շաբաթ, ժամը 21ին :

ՄՈՒՐԱՏ խումբ՝ 21 Յունուար, կիրակի կէսօրէ ետք, ժամը 15ին :

ՆԻԿՈԼ ԴՈՒՄԱՆ խումբ՝ 21 Յունուար, կիրակի կէսօրէ ետք, ժամը 15ին :

ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ խումբ՝ 20 Յունուար, Շաբաթ, ժամը 21ին :

Սոյն ժողովները տեղի պիտի ունենան իրենց սովորական հաւաքատեղիները : Միատ կարեւոր օրակարգ : Բոլոր ընկեր – ընկերուհիներու ներկայութիւնը պարտաւորիչ է : Վարչութիւնները նախապէս պէտք է բոլոր ընկերներուն տեղեկացնեն ժողովներու վայրի եւ ժամուկանի մասին : Ներկայ պիտի ըլլան Շրջ. Կոմիտէի ներկայացուցիչները :

ՍԱԿԱԳԻՆ ԸՆԹԱՑԻԿ ԱԶԴԵՐՈՒ

ՄԷԿ ԱՆԳԱՄՈՒՆ ՀԱՄԱՐ

ՄԱՀԱԶԴ	30 Ն. Ֆ.	մինչեւ 1/4 սիւնակ
ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ	15 Ն. Ֆ.	մինչեւ 1/8 սիւնակ
ՑԱԽԱԿՑՈՒԹԻՒՆ	10 Ն. Ֆ.	» » »
ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ	20 Ն. Ֆ.	» » »
ՀԱՐՍԱՆԻՔ, ՆՇԱՆՏՈՒՔ	20 Ն. Ֆ.	» » »
ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ	10 Ն. Ֆ.	» » »
«ՓՈՒԱՆ ԾԱՂԿԵՊՍԱԿԻ»	10 Ն. Ֆ.	» » »
«ԿԸ ՓՆՏՌՈՒԻ»	5 Ն. Ֆ.	» » »
ԾԱԽՈՒ Է	20 Ն. Ֆ.	» » »

Այս գիները մէկ անգամ հրատարակելի եւ նշանակուած ծաւալով ազդերու համար են, չորրորդ էջը :

Կանխիկ վճարումը պարտաւորիչ է :

Առեւտրական կամ այլ ազդերու մասնաւոր պայմաններուն համար դիմել Վարչութեան :

ՀՐԱՆՏ ՍԱՄՈՒԷԼԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

51, Rue Monsieur-le-Prince, PARIS - 6e — Chèque Postal : 1278-35

PEINTRES et SCULPTEURS ARMENIENS, par *Onnig Avédissian*, Le Caire	100 NF.
MINIATURES ARMENIENNES, par *Lydia Dournova*, Paris.	120 NF.
NAREK, le Livre de Prières, trad. par *Isaac Kéchichian*, Paris, 1961.	25,20 NF.
LE CHANT DU PAIN, *Daniel Varoujan*, Paris.	6,30 NF.
HISTOIRE DE L'ARMENIE, par *H. Thorossian*, Paris.	10 NF.
ԲԱՌԱՐԱՆ ՖՐԱՆՍԵՐԷՆԷ ՀԱՅԵՐԷՆ , Հ. Ե. Տէր Ղազարեան, Պէյրութ,	20Ն.Ֆ.
ԲԱՌԱՐԱՆ ՖՐԱՆՍԵՐԷՆ ՀԱՅԵՐԷՆ , Մեսրոպ Նուպարեան, Պէյրութ	40 Ն.Ֆ.
ԲԱՌԱՐԱՆ ՀԱՅԵՐԷՆԷ ԳԱՂՂԻԵՐԷՆ , Հ. Գ. Պայեան, Վենետիկ ,	40 Ն.Ֆ.
ԱՌՁԵՒՆ ԲԱՌԱՐԱՆ ՀԱՅ. ԳԱՂՂ. Հ. Դ. Սահփանեան, Վենետիկ	9 Ն.Ֆ.
ԲԱՌԱՐԱՆ ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ, Մ. Գաբամաճեան, Պէյրութ,	40 Ն.Ֆ.
ԱՆԳԼԵՐԷՆԷ ՀԱՅԵՐԷՆ ԲԱՌԱՐԱՆ , Ց. Ց. Զազմազեան, Պէյրութ	40 Ն.Ֆ.
ՑՈՒՇԱՄԱՏԵԱՆ Հ. Մ. Ը. Մ.Ի, 1918–1958, Պէյրութ	22 Ն.Ֆ.
ԿԵԱՆՔԻ ՈՒՂԻՆԵՐՈՎ, Բ. Հատոր, Մ. ՎՐԱՑԵԱՆ, Պէյրութ	12 Ն.Ֆ.
ՋՐՈՑՑ, Կ. ՓՕԼԱՏԵԱՆ, Ա. Հատոր 3·50 Ն. Ֆ. Բ. Հատոր 5 Ն. Ֆ.	
ԱՆԴՐՇԻՐԻՄԵԱՆ ՁԱՅՆԵՐ, Գ. Մնացեան, Պէյրութ	4 Ն. Ֆ.

Առաքման ծախքը գնողին վրայ

ՁՈՒԼ ՄԹԵՐՔ ՀԱՑԱՍՏԱՆԵԱՆ ԵՒ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆՑ

ԵՒՐՈՊԱՅԻ
ՄԵԾԱԳՈՅՆ ԱՒՏԱԴՐՈՒՉԸ
ՀԷԼՎԱ
ԼՈԳՈՒՄ
Սուսամ – ՀԷԼՎԱ
ԹԱՀԻՆ
ՇԱՐՈՑ
(ՌՈՃԻԿ)
ՎԱՐԴԷ-ԱՆՈՑՇ
LE BOSPHORE MARQUE DEPOSEE
ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ...
CHOC-ALVA • CHOCO-LOC
Sté le BOSPHORE
SIÈGE SOCIAL
2, Rue Louis Astouin /Marseille (2ème)

ՅԱՌԱՋԱԳԻԾ

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

Le PREMIER QUOTIDIEN ARMENIEN en EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction et Administration : 32, Rue de Trévise - PARIS-9e

Fondé en 1925
R. C. Seine 57 A 2731

Téléph. : PRO. 86 - 60
C. C. P. Paris 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա՝ Տար· 50 Ն· Ֆ· Վեցամսեայ՝ 27 Ն· Ֆ·
Արտասահման՝ Տար· 60 Ն· Ֆ· Հատը՝ 0·25 Ն· Ֆ·

ՀԻՆԳՇԱԲԹԻ 18
ՅՈՒՆՈՒԱՐ
JEUDI 18 JANVIER 1962

38ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 9307 38e ANNÉE Fondateur : SCHAVARCH MISSAKIAN ՆՈՐ ՇՐՋԱՆ, 18ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 5108

ՔԱՐՈԶՉՈՒԹԻՒՆԸ ԻԲՐԵՒ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑ

Քարոզչութիւնը (պրոպականտա) այսօր կը հանդիսանայ հանրային կեանքի մեծագոյն ազդակներէն մին :

Առեւտրական, քաղաքական որեւէ առաջադրութեան, որեւէ ձեռնարկի յաջողութեան համար նպատակայարմար կերպով կազմակերպուած քարոզչութիւնը լաւագոյն գրաւականն է յաջողութեան :

Այս ճշմարտութիւնը լաւագոյն կերպով ըմբռնած են քաղաքակիրթ ժողովուրդները եւ ոչինչ չեն խնայեր այդ ուղղութեամբ :

Քարոզչութիւնը դժբախտաբար սահմանուած չէ միայն արդար դատի մը, կամ օգտակար ձեռնարկի մը ծառայելու համար :

Ան ազդու զէնք մըն է, որ այսօր կ'օգտագործուի ոչ միայն պարկեշտ նպատակներու, այլ նաեւ՝ ամէնէն անարդար պահանջներու եւ ամէն չիլ նպատակներու յաջողութեան համար :

Քարոզչութիւնը այսօր ի վիճակի է անարդարը՝ արդար, վնասակարը՝ օգտակար, սեւը՝ ճերմակ ցոյց տալու, նայելով թէ ի՞նչ աստիճանի ուժեղ է եւ ինչ չափով լաւ կազմակերպուած անոր մեքենան :

Անտարակոյս որ միջազգային, տնտեսական, առեւտրական եւ մանաւանդ քաղաքական գետնի վրայ, այդ զէնքէն ա-մէնէն աւելի կ'օգտուին աշխարհակալ, մեծ պետութիւնները, արժեցնելու համար իրենց արդար կամ անարդար, վնասաբեր կամ դատապարտելի որեւէ առաջադրութիւնն ու նպատակը :

Ըսենք նաեւ այն՝ որ իր ծննդեան օրէն, միջազգային համայնավարութիւնը յանձին Խորհրդ· Միութեան, ոչ միայն հասկցաւ քարոզչութեան արժէքն ու կարեւորութիւնը, այլև գիտցաւ նաեւ լաւագոյն կերպով կազմակերպել զայն եւ օգտուիլ անկէ, ծառայեցնելով զայն իր օրինական, եւ շատ յաճախ իր ապօրէն ձգտումներուն յաղթանակին :

Ապօրէն ըսինք պարզ անոր համար, որ խորհրդային իշխանութիւնը ամէն միջոց ընդունելի նկատեց իր որեւէ մէկ նպատակին հասնելու համար :

Ան, իր ներքին կեանքին մէջ սրածեց միլիոնաւոր մարդիկ ու ջնջեց դասակարգերը, ջերմութեան մատնեց իր իշխանութեան տակ գտնուած ժողովուրդները, բայց միշտ ալ իր քարոզչական մեքենային բերնով այդ բոլոր չարիքները ըզգեստաւորեց ազատութեան, հաւասարութեան, արդարութեան պատմուճանով, վարագուրել փորձելով իր արարքներուն էութիւնը եւ չիմութեան մատնելով ժողովրդական բազմութիւնները՝ որոնք արդարօրէն դժգոհ իրենց կեանքէն, յանձին համայնավարութեան կարծեցին տեսնել փրկութեան պարան մը :

Խորհրդ· Միութիւնը իր սահմաններէն դուրս գալով նուաճեց փոքր ժողովուրդներ, ենթարկելով իր լուծին եւ անխնայ չահագործելով զանոնք, ջրկելով ազատութենէ եւ մանելով թշուառութեան, բայց այդ բոլորը ան ճգնեցաւ ցոյց տալ արտաքին աշխարհին իբրեւ փրկարար եւ ազատարար քայլեր, ընորհիւ իր քարոզչութեան հրէշային մեքենային որ կը գործէ աշխարհի ամէն կողմը առանց դուլ եւ դադար :

Աշխարհի ներկայ կարգ ու սարքին մէջ, ոչ միայն մեծ ժողովուրդներն ու պետութիւնները, այլեւ փոքրերն ալ, Ասիայէն մինչեւ Լբբեմնի «խաւարակուռն» Աֆրիկէն, տասկցած են քարոզչութեան ազդ կարեւորութիւնը եւ իրենց կարելին ի գործ կը դնեն, օգտագործելու համար զայն յօդուտ իրենց նպատակներուն :

Դժբախտաբար, մենք որ արդարագոյն դատ մը ունինք եւ կը չարունակենք ա-

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՖՐԱՆՍԱ ԵՒ ԻՐ ԱՓՐԻԿԵԱՆ ՀՈԳԵՐԸ

ՄԹՆՈԼՈՐՏԸ ՄԻՇՏ ԼԱՐՈՒԱԾ Է
ՕՒԱՆԻ ԵՒ ԱԼԺԻՒ ՄԷՋ

Ալժերական հարցերու նախաբար լուի ժողք քանի մը օր է խորհրդակցութիւն – ներ կ'ունենար Լուչէ Նուառ (Ալժէ) քաղաքային եւ զինուորական պատասխանատուներու հետ :

Առաջին առթիւ երկար խօսակցութիւն մը ունեցած է ընդհ· պատուիրակ ժան Մորէնի հետ, ապա ներաղոյն հրամանատար՝ Զօր· Այըրէի : Ընդունած է նահանգապետները եւ փոխ – նահանգապետները : Խօսակցութեանց գլխաւոր նիւթերը եղած են, տնտեսական հարցերը եւ ինչ որ աւելի քան երբեք ստիպողական բնոյթ ստացած է՝ կարգը : Ըստ չհաս – տատուած լուրերու, հաւանական կը թուի նոյնիսկ որ պաշարման կամ պատերազմական վիճակ հռչակուի Ալժէրի եւ Օռանի մէջ :

Ամէն պարագայի մէջ, ժողք որ առջի իրիկուն Փարիզ վերադարձաւ, քննելէ ետք Ալժերիոյ կացութիւնը, պիտի կարենար մանրամասն զեկուցում մը տալ Հանրապետութեան նախագահին : Ահաբեկչական արարքներու թիւը օրէ օր կ'աւելնայ, համայնքներու բաժանումը որ իրականութիւն դարձած է ողբերգական վիճակ մը ստեղծած է եւ այս բոլորը պատճառ պիտի դառնան որ իշխանութիւնները կոչնած «յատուկ իրաւասութեանց» վերյայ ձեռք առնեն կարեւոր միջոցներ :

Գաղտնի Բանակն ալ կը շարունակէ իր գործունէութիւնը : 63 հատ ձայնասփիւռ գործիքներ գողցած է առջի օր, ինչ որ կը նշանակէ թէ իր առաջին մտահոգութիւնն է ապահովել կապերը ռատիոյի միջոցաւ : Ասոնց 37 հատը չատ զօրաւոր են եւ 300 քիլոմեթրի վրայ կրնան հաղորդակցութիւններ ապահովել : Այս գողութեան պարագաները ցարդ անորոշ են : Ամէն պարագայի մէջ, երբ նկատի առնենք թէ գողցուած ապրանքը եօթը թոն կը կշռէ, կը պարզուի թէ առնուազն 12 հոգի պէտք եղած է գլուխ հանելու համար այս գործողութիւնը :

Մահմետականներն ալ զրդռուած վիճակ մը ունին : Առջի օրուան սրճարանի զոհերուն թաղումը պատճառ եղաւ որ յարձակին եւ քարեր նետեն Եւրոպացիներուն վրայ մինչ երիտասարդ յուցարարներ «Ֆրանսական Ալժերիա» կը պոռային :

Գաղտնի բանակը երեք ձայնասփռում – ներ տուաւ առջի օր, Ֆրանսա Ե· (Ալժէ) կայանի մերձաւոր ալիքներուն վրայ : Այս վերջին հաղորդումներուն առթիւ վարդապետ մը փորձած է համոզել ունկնդիրները թէ Գաղտնի բանակի գործողութիւնները ղէմ չեն եկեղեցւոյ ուսուցման : կը կարծուի թէ տեսակ մը պա-

ներաւուած մնալ մեր անժխտելի իրաւունքներուն իրագործման ճամբուն վրայ, կը թուի թէ դեռ չենք ըմբռնած քարոզչութեան կարեւորութիւնն ու անհրաժեշտութիւնը, ի պաշտպանութիւն մեր ազգային եւ մարդկային չահերուն :

Այս զետնի վրայ մենք գրեթէ կազմակերպուած ձեւով, յստակ առաջադրութիւններով, ոչինչ կ'ընենք :

Ոչինչ՝ մեր ներքին ճակատին վրայ :

Ոչինչ՝ մանաւանդ արտաքին աշխարհին մէջ, որուն նպատակաւոր կամ անոր պատճառ տրամադրութենէն կախում ունի կարեւոր չափով մը, մեր դատին բարեյաջող կայ ձախող լուծումը :

«ԱՐՄԵՆԻԱ»

Օր ը Օրթն

ՆՈՐ ՄՐՑՈՒՄ ՄԸ

Խնչպայի բարձունքէն, *իմպրով* օծուն իր յուշերուն եւ խորհրդածութիւններուն մէջ՝ Ընկեր Ս· Վրացեան անգամ մը եւս անմահացուց ցպուտները, որոնք մռռացման դատապարտուած էին երբեմնի ա-ռակախօսներուն եւ նախակրթարանի մեր դասագիրքերուն հետ :

Բայց ի՞նչ անողոք դատակնիք է որ արտասանեց ընկեր Վրացեան, յայտնելով իր ընդվզումը հանդէպ բարի եւ երջանիկ ցպուտներուն, որոնց կեանքը նախանձ կը շարժէ, գէթ իմ մէջս :

Երեւակայեցէք ցպուտ մը, որ «յօդոյ յղանայ եւ ծնանի» (Մխ· Գօշ, 147), արեւով կ'արբենայ եւ եղեւիններու բոյրով կը գինովնայ, ա՛լ ուրիշ գործ չունի՝ օրն ի բուն երգ երգոց կը կարդայ, ասկէ աւելի նախանձելի բա՞ն կայ : Եւ դեռ չըսի թէ արուեստագէտ է, առաջնակարգ նը-ւագածու : Հոմերոս, «Լիրիոն» (շուշան) բառէն ածական մը շինելով, «շուշանի պէս ճիմուշ» կ'անուանէ ցպուտին երա-ժշտութիւնը : Իսկ Անակրէոն մասնաւոր տող մը կը նուիրէ ցպուտին, վկայելով նաեւ թէ Ապօղոն շատ կը սիրէր այս միջատին «խաղցրալուր» երաժշտութիւնը (*Տաղ ԽԳ·*) :

Ճպուռը վարկաբեկողը նախ մրջի՛ւնն եղաւ : Այդ պատմութիւնը մեզի ծանօթ է Լա Ֆոնթէնի առակով, զոր հայերէնի թարգմանած են շատեր, — Գարագաշեան, Հիւրմիւզ, Սիպիլ, Մեսրոպ Նուպարեան, Քուշներեան : Ես կ'առնեմ Քուշներեանի թարգմանութիւնը ·

Շատիսօս ճպուռն ամառն ի բուն ,
Առաւօտէ մինչ իրիկուն ,
Ժիժի, ժիժի, բերանաբաց
Անհոգ անփոյթ ժիր ճրճրաց :

Բայց ցպուռին այս պատմութիւնը չէ որ կը հետաքրքրէ մեզ : Ոչ ալ այն թէ Լա Ֆոնթէնն զայն առած է Եսովպոսէն (*Առակներ*, 335) : Խնդիրն այն է թէ պարագայ մը կայ ուր Լա Ֆոնթէնի տեսա-

կէտը բոլորովին կը տարբերի ընկեր Վրացեանի տպաւորութենէն : Կրնայ ա-ռարկուիլ թէ Լա Ֆոնթէնն զոհ գացած է Հեսիոդոսի (*Աշխատանք եւ Օրեր*, 580), Թէոկրիտէսի (*Հով· Ա·* 148), Վիրգիլիոսի (*Մշակ· Գ·* 330) վկայութեանց, ուր կը հաստատուի ցպուռին հոմերական զբաղումը : Դեռ աւելին,— Տիմոն պերճաբարբառ Պղատոնը կը բաղդատէ Ակադեմոսի անտառին ցպուռներուն հետ :

Այս հաշիւով, ընկեր Վրացեան մեծ ա-նիրաւութիւն մը գործած է՝ անուանարկելով ցպուռները :

Եկուր տես որ ֆրանսացի մատենագիր մը, Պլանշար, կը հաստատէ թէ Լա Ֆոնթէնն զոհ գացած է բնապատմական մեծ սխալի մը, ի շարս նման այլ սխալներու :

Նոր սերունդին կը մնայ ցոյց տալ այդ սխալը,— մրցումի կը դնեմ :

Ֆրանսական լիսէներէ շրջանաւարտ, դուք լաւ կը գանչնաք անշուշտ Լա Ֆոնթէնը : Ունիք անպայման իր Առակները : Անգամ մը եւս կարդացէք եւ ցոյց տուէք սխալը «ճպուռն ու մրջիւնը» առակին մէջ,— այս անգամ գրական կամ հոգեբանական չէ, այլ գիտական :

Բացատրեցէք այդ սխալը, փոյթ չէ թէ ֆրանսերէն լեզուով : Մեր ցպատակն է ձեր մէջ հետաքրքրութիւն արթնցնել հայկական հրատարակութեանց մասին՝ ձեր ծնողաց ընթերցանութեան խոդովակով, միաժամանակ սրել դիտելու եւ զննելու կարողութիւնը, ինչպէս եւ հրահրել վերաբաժնութիւնը, եռխոցնել համայնագիտական ծանօթութիւնները :

Յաջող պատասխանները պիտի հրատարակուին այստեղ :

×

Մրցում մըն ալ հայագէտներուն համար :

Հայերէն՝ ցպուռին համանիշ կը տրուին ժիժի, եռիկ, գարեխազ բառերը : Տարբեր է ծղրիթը, որու համանիշ կը տրուի արուսիկ :

Հայերէն բանի՞ բառ գիտէք որ կը վերջանայ իթ, ինչպէս՝ ծղրիթ : Այդ բառերուն կարգին՝ ունիք յատուկ անուն մը, Դաւիթ, որ ըստ տառադարձութեան՝ պէտք է գրել Դաւիդ, բայց կը գրուի Դաւիթ,— ինչո՞ւ :

ԱՐԱԶ

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԱՆԱՍՏԱՍ ՄԻԿՈՅԵԱՆ Պամաքօ (Մալի) հասած է եւ ձայնասփիւռէն յայտարարած է թէ Նիքիթա Խրուշչեւի ողջոյնը կը բերէ Մօտիպօ Քայթայի :

ԴԱՄԱՍԿՈՍԷն կը հաղորդեն թէ միջադէպեր պատահած են ընկերակցական եւ համալսարանական շրջանակներու մէջ : Այս առթիւ կառավարութիւնը կարգ մը միջոցներ ձեռք առած է եւ պաշտօնանկ ըրած՝ Համալսարանի տեսուչը՝ Մահմուտ Ղոնիմ :

ԼԻԲԱՆԱՆԻ մէջ 171 հոգի ձերբակալուած են վերջին 24 ժամուան ընթացքին : Ներքին նախարար՝ Կամալ Ճումպլաթ յայտարարած է թէ կասկածելիներու հարիւրէն ութսունը Լիբանանցի չեն : Ասոնց մէջ կան 130 Թուրքեր որոնք գաղտնի Լիբանան մտած են, բազմաթիւ Ցորդանցիներ եւ հարիւրաւոր Սուրիացիներ եւ Պաղեստինցիներ : Ներկայիս ձերբակալուած 3500 հոգիին, հազարը միայն Լիբանանցի են :

ՔՐԿԶԻՍՏԱՆԻ մէջ կերպասի լայնածաւալ առեւտուր մը երեւան հանուած է որուն մէջ քանի հոգի մաս ունին, մէջն ըլլալով առեւտուրի, փոխ – նախարարը : Գործը սկսած է 1955ին : Երկու գործարուններու հաշիւները կեղծուած էին, ինչ որ մօտ 16 միլիոն Ն· Ֆ·ի չափ մը ապահոված են առաւ – փախաւներուն :

ԻՏԱԼԻՈՅ վարչապետը Լոնտոն հասած է ուր խօսակցութիւններ կ'ունենայ Մաքմիլլընի հետ : Խօսած են մանաւանդ Հարաւսարակաց Շուկայի մասին :

Ֆ· ՄԻՈՒԹԻՒՆԸ Արաբ Միացեալ Հանրապետութեան առաջարկեց որ Նիւթական եւ թեքնիք գետնի վրայ իր մասնակցութիւնը բերէ քարիւղի հետաքննութեանց եւ ճարտարարուեստի զարգացման համար :

Մ· ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ Արտաքին նախարարին կարծիքով բան մը կ'անցնի կը դառնայ Կրեմլինի մէջ : Անկարելեց նոյն-իսկ ներքին տագնապի մը :

"ՊԱՐԱՊ ՓԱՄՓՈՒՇՏՆԵՐ"

Այս պատկերասրը բացատրութիւնը — « Պարապ փամփուշտները » — Զօհրապին է : Մենք զայն փոխ կ'առնենք՝ պարզա – պէս ըսելու համար, թէ պարապ փամ – փուշտներ են՝ տրուած, բայց չկատար – ուած խոստումները, ինչպէս անհատա – կան, նաեւ ու մանաւանդ հանրային կեանքի մէջ :

Սխալ չէ այն կարծիքը, թէ ճէնթըլ – մէնութեան ղեկաւար յատկանիշներէն մէ – կըն է տէրն ըլլալ տրուած խոստումին , եւ կամ բնաւ չխոստանալ : Եթէ ամէն տեղ, ամէն տուն, ամէն առթիւ եւ ամէ – նուն խոստումները տանք՝ զանոնք չկա – տարելու նախատրամադրութեամբ , խախտած կ'ըլլանք ճէնթլմէնութեան օ – րինագրքին առաջին «յօդուած»ը :

Անշուշտ , հաճելի ըլլալու կերպ մըն է ամէն ինչ խոստանալ խնդրարկուին այն յոյսը ներշնչելով, թէ իր խնդրանքը նկատի պիտի առնուի : Այս կերպը, — խոստանալ, բայց խոստացածը չկատա – րել :— վարկաբեկիչ է խոստացողին հա – մար, յուսալքիչ՝ խնդրարկուին համար, այլասերիչ՝ հանրային կեանքին մէջ եւ հանրային կեանքի համար :

Ինչո՞ւ ուրեմն խոստանալ բան մը, զոր որոշած ենք չկատարել կամ զոր կատա – րելու ի վիճակի չենք : Կը կարծե՞նք արդ – եօք, թէ խոստանալով, բայց մեր խոս – տումը չկատարելով, վարկ մը ապահո – ված կ'ըլլանք մենք մեզի եւ կամ հա – մակրանք ստեղծած կ'ըլլանք մեր անձին շուրջ : Ճիշդ հակառակը, այսինքն՝ չխոս – տանալով, բայց մեր չխոստացածը կամ կէս բերան խոստացածը կատարելով մի – այն կրնանք չահիլ թէ մեր փնտռած վարկը եւ թէ մեր յուսացած համակրան – քը :

Դիւանագիտութեան մէջ զրեթէ օրէնքի կարգ անցած է ոչ թէ խոստանալը, այլ չխոստանալ : «Չեմ խոստանար», կ'ըսէ դիւանագէտը : « Կը խոստանամ», կ'ըսէ ոչ – դիւանագէտը, ան՝ որ կը կարծէ , թէ ամէն ինչ խոստանալով, բայց ոչինչ կատարելով՝ բարձրացուցած կ'ըլլայ իր անձին հմայքը :

Ոչ ոք կրնայ մեղադրել մեզ անոր հա – մար, որ չենք խոստանար, բայց մեր չխոստացածը կը կատարենք : Սակայն , ամէն մարդ կրնայ իրաւամբ մեղադրել մեզ այն բանին համար, որ կը խոստա – նանք միշտ եւ մեր խոստացածը չենք կա – տարեր երբեք : Առաջին պարագային՝ մեղադրանքը արդար չէ անշուշտ, երկ – րորդ պարագային՝ արդար է :

Ո՞վ կը ստիպէ մեզ խոստանալ, եթէ ո – րոշած ենք չկատարել մեր տուած խոս – տումը : Ոչ ոք : Այո, ոչ ոք կրնայ բռնո – ւթեան ստիպել մեզ՝ որեւէ խոստում ընել , եթէ մեր խոստումը կատարելու ոչ տրա – մադրութիւնը ունինք, ոչ կարելիութիւ – նը :

Դաս առնենք պատմութենէն :

Նափոլէոն աշխարհ մը խոստացաւ Ֆը – րանսայի, բայց հազիւ կրցաւ պահել Ֆը – րանսան :

Հիթլերը կայսրութիւն մը խոստացաւ դերման ժողովուրդին, բայց ունեցածն ալ վրայ տուաւ :

Մուսոլինի խոստացաւ վերականգնել հռոմէական կայսրութիւնը, սակայն ի վերջոյ, իր չհասածն ալ կորսնցուց :

Զըրչիլ իր ժողովուրդին խոստացաւ... քրտինք, արցունք եւ արիւն, բայց կա – տարեց իր չխոստացածը, չհեցաւ յաղ – թանակը :

Անոնք, որ առաւելագոյնը կը խոստա – նան, յաճախ նուազագոյնն իսկ չեն կըր – նար տալ : Ո՞րն է լաւը արդեօք. խոստա – նալ եւ խոստացածը չկատարե՞լ, թէ՞ չխոստանալ, բայց Ջանալ չխոստացածը կատարել : Ամէն մարդ այդ հարցումին պիտի ուղէր պատասխանել ոչ թէ առա – ջին ձեւով, այլ երկրորդ ձեւով :

Ժողովուրդները աւելի շատ կը վստա – հին քիչ խոստացողներուն, բայց շատ տուողներուն , քան շատ խոստացող , բայց քիչն ալ չտուողներուն :

Կրնայ ըլլալ, որ շատ խոստացողները խանդավառեն բազմութիւնները եւ անոնց մէջ ստեղծեն յոյսը : Յոյսը՝ գալիքին : Կրնայ ըլլալ նաեւ, որ ժողովուրդները, խանդավառութենէ մղուած, հերոսական գործեր կատարեն պահ մը : Մենք այս խանդավառութիւնը կը կոչենք յարդի բոց կամ, Զօհրապի պատկերասրը բա – ցատրութեամբ, « Պարապ փամփուշտ» :

Սակայն համոզուած չենք որ յոյսով , յարդի բոցով կայ պարապ փամփուշտնե – րով կարելի է ճակատամարտ շահիլ եւ վերջնական ու վճռական յաղթանակները ապահովել : Ըսինք արդէն, թէ պատմու – թիւնը արձանագրած է Նափոլէոնի պա – րագան, Հիթլերի պարագան, Մուսոլի – նիի պարագան : Արձանագրած է նաեւ Զըրչիլի պարագան :

Ր՞ուչ կրնանք եզրակացնել մեր ըսածնե – րէն եւ չըսածներէն ալ : Սա միայն .— Մի խոստանաք : Պարապ փամփուշտները մի նետէք : Մանաւանդ երբ վստահ չէք , թէ պիտի կարենաք կամ պիտի ուզէք կա – տարել ձեր խոստումը : Մանաւանդ երբ պիտի չէք, թէ առաւելագոյնը խոստանալով եւ նուազագոյնն իսկ չկատարելով ոչ միայն բան մը չէք շահիր , այլ եւ կը կորսնցնէք ձեր ունեցած քիչն ալ :

Կանոնը այս է ուրեմն .— Չխոստա – նալ, բայց կատարել , եւ ոչ թէ խոստա – նալ, բայց չկատարել : Առաջին պարա – գային՝ մարդիկ պիտի վստահին ձեզի մինչեւ իսկ երեսնց կեանքը, երկրորդ պա – րագային՝ պիտի չվստահին ոչ իսկ երեսնց ոտքի փոշին :

Միջազգային կեանքի մէջ՝ ամէն մարդ խաղաղութեան մասին կը խօսի եւ խա – ղաղութիւն կը խոստանայ, բայց նաեւ պատերազմի կը պատրաստուի : Իսկ մեր ազգային կեանքին մէջ՝ չատ են միաս – նականութեան մասին խօսողները, բայց քիչ են միասնականութեան մասին խոր – հողները :

Միասնականութիւն կը քարոզեն, բայց անջատականութիւն կը սերմանեն : Ան – ներդաշնակութիւն մը կայ խօսքին եւ մտածումին միջեւ, քարոզին եւ գործին միջեւ :

Եթէ կողմնակից ես միասնականու – թեան, այլեւս ինչո՞ւ կը մտածես պա – տակառում սերմանելու մասին : Այս նոյն տրամաբանութեամբ՝ կրնայինք հարցնել աշխարհի վարիչներուն .— Եթէ իրաւամբ խաղաղութիւն կ'ուզէք , ինչո՞ւ ուրեմն պատերազմի կը պատրաստուիք :

Ո՞րն է ձեր նետած փամփուշտներուն մէջ պարապը, եւ որն է լեցունը :

Աւելի լաւ է, որ պատերազմի մասին խօսինք, բայց մտածենք խաղաղութեան մասին, քան թէ խաղաղութեան մասին խօսինք, բայց մտածենք պատերազմի մասին միայն : Ինչպէս որ աւելի լաւ է օրէնքի մասին չխօսիլ բնաւ, բայց օրի – նապահ ըլլալ, քան թէ ամէն օր եւ ամէն ժամ օրէնքի մասին խօսիլ, բայց ամէն օր եւ ամէն ժամ օրէնքի դէմ գործել : Պիտի ըսենք նաեւ, որ աւելի լաւ է բան մը չխոստանալ եւ գործել, քան թէ չատ բան խոստանալ եւ չգործել :

Մեր կեանքին մէջ « օրինապահ »ներ կան, որոնք կը հանդուրժեն ապօրինու – թեան բոլոր ձեւերուն : Կան նաեւ միաս – նականութեան ջատագովները ու պաշտ – պաններ , որոնք ամէն օր միասնականու – թեան սկզբունքին ու ոգիին դէմ կը գոր – ծեն :

Եւ եթէ մէկը ելլէ հարցնէ, թէ ո՞րն է իրենց նետած փամփուշտներուն մէջ լե – ցունը եւ որն է պարապը, այսինքն՝ ի – րենց խօսքի՞ն պէտք է հաւատալ թէ գործին, կ'ըսեն կամ ըսել կ'ուզեն .— Մենք օրինապահ ենք, եթէ օրէնքը կը պատշաճի մեր բաղձանքներուն : Մենք միասնականութեան կողմնակից ենք, եթէ միասնականութիւնը համապատասխան է մեր ըմբռնումներուն :

Իսկ եթէ չի՞ պատշաճիր, իսկ եթէ հա – մապատասխա՞ն չէ ...

Այն ատեն « օրինապահ »ները կը դադ – րին օրինապահ ըլլալէ : Այն ատեն միաս – նականութեան ջատագովները կը դառնան կ'ըլլան մոլեռանդ անջատականներ :

Դարձեալ պիտի կրկնենք .— Օրինապա – հութիւն մի խաղաք : Միասնականութիւն մի բեմադրէք :

Մի խոստանաք բան մը, զոր որոշած էք չկատարել, զոր կատարելու ոչ փափաքը, ոչ տրամադրութիւնը, ոչ իսկ դիտումը ունիք :

« Պարապ փամփուշտներ»ը ձեզի պա – հեցէք : Եւ մի մոռնաք, որ այսպիսի փամփուշտներով ճակատամարտ չի շահ – ուիր ...

Բ. ԹԱՇԵԱՆ

ԴՐՈՇՄԱԹՈՒՂԹԵՐԸ

ԴՐՈՇՄԱԹՈՒՂԹԵՐՈՒ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ

Դրոշմաթուղթերու պատրաստութիւնն ու գործածութիւնը Անգլիոյ մէջ սկսած է 1840ին : Նոյն տարւոյ Թղթատարական անօրէնքը՝ Իոլանտ Նիլ, առաջին անգամ ըլլալով սկսած է դրոշմաթուղթերու պատրաստութիւնն ու գործածութիւնը նամակատան մէջ : Այն կանոն դրած է , որ նամակ ղրկել ուզողները պարտաւոր են դրոշմաթուղթ փակցնելու՝ պահարաննե – րուն վրայ : Թղթատարական պաշտօնեա – ները այդ դրոշմաթուղթերը մկրատով կարելով կը յանձնէին յաճախորդներուն, որոնք մօտակայ սեղանի վրայ դրուած սոսինձով զայն փակցնելով, կը նետէին նամակատուփ : Այս կարգադրութիւնը թէ արագացուցած եւ թէ ալ աւելի գործ – նական դարձուցած է նամակի առաքում – ները եւ նպաստած՝ դրոշմաթուղթերու ապագայ զարգացման :

ՆԵՐԿԱՅ ԴՐՈՇՄԱԹՈՒՂԹԵՐՈՒ ՆԱԽԱՀԱՅԸՐԸ

Սեւ գոյնով եւ մէկ փենի արժէքով դր – ոշմաթուղթ մը եղած է, ներկայիս մեր գործածած արդիական դրոշմաթուղթե – րու նախահայրը : Ան դրոշմուած էր քլի – չէներու վրայ, նման ներկայ լուսանը – կարներու քլիչէներուն : Այս ժամանակին եւ սեւորակ դրոշմաթուղթը, 105 տարի – ներէ ի վեր փնտռուած է եւ կը փնտռուի դրոշմաթուղթ հաւաքողներու կողմէ, ո – րուն արժէքը առասպելական բարձրու – թեան մը հասած է այսօր :

ԴՐՈՇՄԱԹՈՒՂԹԵՐՈՒ ՀԱՒԱՔԱԾՈՆԵՐ

Այսօր աշխարհի բոլոր կողմերը միլիո – նաւոր մարդիկ ունին իրենց դրոշմա – թուղթերու հաւաքածոները զանազան ձեւերու տակ : Դրոշմաթուղթ հաւաքող – ները երկու դասակարգի կը բաժնուին , — դրոշմաթուղթի սիրահարներ եւ դրոշ – մաթուղթերու առեւտուրով զբաղող վա – ճառականներ : Դրոշմաթուղթերը կը հա – ւաքուին չարունակ այս երկու դասակար – գի մարդոց կողմէ, իրենց տեսակներուն եւ արժէքներուն համեմատ : Այսպէսով ալ դրոշմաթուղթերու պահարանները հետ – զհետէ մեծցած եւ տուարացած են ա – մէն կողմ :

ԱԿՈՒԱՑՈՎ ԵՒ ՍՈՍԻՆՁՈՒԱԾ ԴՐՈՇՄԱԹՈՒՂԹԵՐ

1854ին, գարձեալ Անգլիոյ մէջ, առա – ջինէն 14 տարի վերջ, պատրաստուած եւ գործածութեան սկսած են ակռայով եւ սոսինձով դրոշմաթուղթերը : Մեր այսօր գործածած եւ շրջաբերութեան վրայ պտ – նուղ դրոշմաթուղթերու տեսակները , հետզհետէ չատցած եւ բազմացած են վե – րոյիշեալ թուականէն ի վեր աշխարհի բոլոր կողմերը՝ այլեւայլ առիթներով եւ նպատակներով եւ սպառած են իրարու ե – տեւէ եւ կը չարունակուին հետզհետէ ա – ւելի այլազան նմոյշներով : Ամէն նոր պատրաստուած դրոշմաթուղթ, տեղւոյն վրայ, իրենց տեսակներով եւ գիներով առանձին քարտերու վրայ տպուելով , իբր նմոյշ կը պահուին նամակատուն – րու գանձարաններէն, առանց ակռայի եւ սոսինձի :

ՔԱՆԱՏԱԿԱՆ ԴՐՈՇՄԱԹՈՒՂԹԻ ՄԸ ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Քանատայի մէջ, տարիներ առաջ, ա – ռեւտրական հաստատութեան մը քար – տուղարը, ծառան ղրկելով 30 հատ հինգ սենթինոց դրոշմաթուղթ բերել կուտայ եւ անոնցմէ մաս մը փակցնելով պահարան – ներու վրայ, կը ղրկէ նամակատուն : Հե – տեւեալ առտու նոյն քարտուղարը, մնա – ցած դրոշմաթուղթերը, գործատէրէ ա – ռաջ, ուշի ուշով նայելով կը տեսնէ, որ անոնք զարմանալի կերպով տպուած եր – կու կողմէն ալ կրկնակի տեսարաններ կը պարզեն : Անմիջապէս կը հեռաձայնէ նա – մակատուն, որուն անօրէնը քննելով կը տեսնէ սխալը եւ հաւաքել տալով ցրուե – ւած դրոշմաթուղթերը, նամակատուն պանուածներու հետ՝ կէսը ձեռք անցընե – լով փճացնել կուտայ : Տպուած քանակին միւս կէսը սպառած էր եւ ղրկուած ամէն կողմ, կամ մնացած մեծաքանակ գնող յաճախորդներու քով : Այս դրոշմաթուղ – թերը յետոյ արժէք կը ստանան : Առանց – մէկ չորս հատը Պէյրութի մէջ դանուած եւ ծախուած են իւրաքանչիւրը 6000 ո – կիի, ամերիկացի միլիոնատէրերուն :

ԱՇԽԱՐՀԻ ԱՄԷՆԷն ԱՐԺԷՔԱՒՈՐ ԴՐՈՇՄԱԹՈՒՂԹ

Այս դրոշմաթուղթը կը պատուի ամե – րիկացի միլիոնատէրի մը քով՝ 300·000 տոլար արժէքով : 1857ին տպուած դրոշ – մաթուղթ մըն է , որմէ օրինակ մը մի – այն կը պահուի աշխարհի մէջ : Մնաց – եալները փճացած են :

ԷՄԻՐ ՊԵՇԻՐ ՇԵՀԱՊԻ ՆԿԱՐԸ ԿՐՈՂ ԴՐՈՇՄԱԹՈՒՂԹԵՐ

« Լիբանանի դրոշմաթուղթերու թա – զաւորը» անունը կրող այս դրոշմաթուղ – թերը չատ հազուագիւտ են եւ կը ծախ – ուին իւրաքանչիւրը 1500 ոսկիի : Արժէ – քաւոր դրոշմաթուղթերու վաճառական – ները Հայեր են Լիբանանի մէջ : Հայ ա – ռեւտրականներու քով կարելի է պտնել այս կարգի թանկարժէք դրոշմաթուղթե – րէն նմոյշներ , որոնք ամերիկացի հա – րուստներու կողմէ կը փնտռուին չարու – նակ :

ԼԻԲԱՆԱՆԻ ՄԷՋ ՆԵՐԿԱՑԻՍ ՇՐՋԱԲԵՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ ԳՏՆՈՒՈՂ ԴՐՈՇՄԱԹՈՒՂԹԵՐՈՒ ԵՒ ԴՐՈՇՄԱԿՆԻՔՆԵՐՈՒ ՏԵՍԱԿՆԵՐԸ

1) Մեկի ծանօթ են ակռայով եւ սոսին – ձուած դրոշմաթուղթերու տեսակները : Առանք զանազան տեսարաններով եւ դի – ներով կը գտնուին, յաճախորդներու կող – մէ, պարզ, ապահովագրուած եւ օդանա – ւով ղրկուելիք նամակներու համար : 2) Առանց ակռայի սոսինձուած դրոշմա – թուղթեր : Առանք մկրատով կարուելով կը ծախուին եւ չատ քիչ կը գործածուին մասնաւոր պահանջներով, զանազան ա – ռաքումներու համար : 3) Դրոշմաթուղ – թեր, որոնք քարտերու վրայ տպուած վիճակի մէջ կը ծախուին եւ կը գործած – ուին ընդհանրապէս ճամբորդներու կող – մէ : 4) Օթոմաթիկ մեքենաներով տպ – ուած դրոշմաթուղթեր : Այժմեական դրոշ – մաթուղթեր են ասոնք, որոնք յայտարա – րութիւններու եւ թերթերու առաքում – ներու համար կը գործածուին, առեւ – տրականներու եւ մամուլի ներկայացու – ցիչներու կողմէ : Առանք կը տպուին պէտք եղածին չափ եւ որոշ գիներով, գումարումի եւ վճարումի դիւրութեան համար : 5) «Վճարուած» դրոշմակնիքով գործածութեան մէջ եղողներ, որոնք պա – հանջուած քանակով կնքուելով կը ղրկը – ուին բաժանորդներուն : 6) Կատավարա – կան թուղթերու առաքման համար գոր – ծածուող դրոշմակնիքները, որոնց վրայ թուականը միայն նշանակուած է : 7) Դրոշմակնիք, որոնք կը գործուին թաֆ անունով պահարաններու վրայ : Այս կարգի նամակները ստացողները կը վճա – րեն նամակատան կողմէ նշանակուած գումարներ, երբ ղրկողներ առանց գրոշ – մաթուղթի կամ պակաս արժէքով դրոշ – մաթուղթերով ղրկելու ըլլան իրենց հա – ցէներուն : 8) Պատմական բնոյթ ունե – ցող դրոշմաթուղթեր : Այս կարգի դրոշ – մաթուղթեր մասնաւոր պարագաներուն եւ առիթներուն հրապարակ կ'ելլեն : Ա – սոնց նպատակն է անմահացնել քաղաքա – կան, դրական; գիտական եւ պատմական դէպքի մը յիշատակը : Այս կարգի դրոշ – մաթուղթեր թէպէտ իրենց մասնաւոր գիները կ'ունենան, բայց յետագային տասնապատիկ բարձր գիներով կը ծախ – ուին, երբ անյայտանան հրապարակէն : 9) Բանակի պէտքերուն յատուկ, մաս – նաւոր տպուած դրոշմաթուղթեր, որոնք կ'աւելնան, հասարակ եւ որոշ գին ունե – ցող դրոշմաթուղթերու կողքին պահա – րաններու վրայ, գնուելով իրենց կար – գին :

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԴՐՈՇՄԱԹՈՒՂԹԵՐԸ

Ռուսական դրոշմաթուղթեր եղած են ասոնք, վրան աւելցուած՝ «Հայաստան» փակագիրերով : Արեւելահայաստանի գր – բաւուժմէն ետք, Ռուսիոյ ցարական կա – ռավարութիւնը, կովկասեան հայ կամա – ւորական բանակներու ու հայ զօրավար – ներու անձնուէր զոհողութիւններուն պա – րէն, Երեւանի ընդհանուր Ազգային Տան հռչակած է արեւելահայութեան համար : Իսկ 1902 – 1917 թուականին, ռուսական թղթատարական անօրէնութեան հրամա –

նով, սկսուած է «ՀԱՅԱՍՏԱՆ» փակա – դրեր ղարնուիլ ռուսական դրոշմաթուղ – թերու վրայ : Այս փակադրերը կրող դը– րոշմաթուղթերէն մնացած են հազուա – դիւտ նմոյշներ, որոնք կը փնտռուին եւ յարգի են այսօր :

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԴՐՈՇՄԱԹՈՒՂԹԵՐԸ

1918ին վերածնած Հայաստանի Հան – րապետութիւնը, 1920ին պատրաստած է չարք մը հայկական դրոշմաթուղթեր, ո– րոնք սակայն լոյս տեսնելէ առք հպիւ թէ չըշաբեբութեան դրուած, տեղի ու – նեցած է Հայաստանի սովետականացումը եւ մնացած են անգործածելի : Զանազան դիներով երեք չարք էին ատոնք· 1) Ա· չարքի վրայ դրոշմուած էր զեղեցիկ ա – րուեստի մը տեսարանը, թաթերով սուր մը բարձրացուցած : 2)Բ· չարքի վրայ դրոշ– մուած էր Արարատի տեսարանը՝ իր չո – ջակայ դաշտերով : 3) Գ· չարքը կը կրէր հայ կնոջ մը նկարը, ճախարակով, ո – րուն վրայ կը մանէր :

ԽՈՐՀՐԴ· ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴՐՈՇՄԱԹՈՒՂԹԵՐԸ

Խորհրդային Հայաստանը 22 չարք դը– րոշմաթուղթեր պատրաստել տալով1923– ին չըշաբեբութեան դրած է դանոնք , ո– րոնք գործածուած են 13 տարի, մինչեւ 1936 թուականը, որոնք կրած են հետեւ– եալ տեսարանները·—

Ա· չարք, ձի մը առիւծի պլուխով :

Բ· չարք, Անի քաղաքի աւերակները :

Գ· չարք, հայ աղջիկ մը սիրամարգի փետուրներով :

Դ· չարք, հայ մարտիկ մը, պահակ կեցած, Արարատի Փոնին վրայ :

Ե· չարք, հայ ձկնորս մը, Արաքսի ա– փին :

Զ· չարք, առիւծ մը թեւաւոր :

Է· չարք, հայկական զարդանկարներէն աքանչելի նմոյշ մը :

Ը· չարք, Արարատ լեռը, Շէրակի դաշ– տերով :

Թ· չարք, Երեւանի նամակատան հիա– նալի մէկ տեսարանը :

Ժ· չարք, Սեւանայ լիճը, իր նշանաւոր վանքով :

ԺԱ· չարք, Անիի մայր եկեղեցին, գմ– բէթով :

ԺԲ· չարք, Երեւանեան հրաւալարակի մը տեսարանը :

ԺԳ· չարք, թռչուն մը՝ ձիու գլուխով :

ԺԴ· չարք, Արարատ լեռը՝ իրիկուան պահուն :

ԺԵ· չարք, Արարատ լեռը՝ առտուան պահուն :

ԺԶ· չարք, հսկայ արագիլի մը պատ – կերը :

ԺԷ· չարք, հայ սերմնացան մը, որ կը ցանէ :

ԺԸ· չարք, երկաթագործ մը, որ կը կռանէ, Արարատի Փոնի վրայ :

ԺԹ· չարք, հայ կին մը՝ ջրհորի դըլ – խուն :

Ի· չարք, հայ պիւղացի մը, ջլապինդ բազուկներով :

ԻԱ· չարք, Արարատ լեռը Արագածով :

ԻԲ· չարք, Արարատ լեռը հայ ձիաւոր պինուորով :

Այս դրոշմաթուղթերէն չատեր այսօր հազուագիւտ դարձած են եւ անոնց ար – ժէքը բարձրացած է հինգ հարիւր ռուկիի : 1936էն վերջ Հայաստանի մէջ կրկին ըս– կըսած է ռուսական դրոշմաթուղթերու գործածութիւնը՝ հայկական նամակա – տուներու կնիքներով :

ԱՒԵՏԻՍ ԵՒ ՊԵՏՐՈՍ ԹԻՓԷՆԵԱՆ

ԳԱՂՈՒԹԷ ԳԱՂՈՒԹ

ՄԵԼՊԸՐՆԻ մէջ (Աւստրալիա) յանկար– ծամահ եղած է Ռ· Բարսեղեան որ մօտ վեց տարիէ ի վեր փոքրածաւալ, մեքե – նաշրուած չորս էջերով տեղեկատու մը (Զայն) կը հրատարակէր : Ցուղարկաւո– րութիւնը կատարուած է Դեկտեմբեր 28– ին :

ՎԻԵՆՆԱՑի Մխիթարեան Միաբանու – թեան ընդհ· Աբբահայր Հապղնեան Աբք· որ առենէ մը ի վեր Ամերիկա կը գըտ – նուի, պաշտօնապէս յայտարարեց թէ Մասաչըսէթի նահանգին մէջ հարիւր հա– զար տոլար արժէքով կալուած մը գըն – ուած է ուր նախ պիտի հաստատուի ա – մառնային զպրոց մը : Այս ձեռնարկը որ « նուէր մըն է Ամերիկահայ երիտասար– դութեան» ինչպէս լսած է Աբբահայրը , կոչուած է հայապահպան դեր մը խաղա– լու Ամերիկայի մէջ :

ՊԻՑՐՈՒԹի մէջ, Յունուար վեցին տե– սիլ ունեցած է Համազգայինի Պէյրութի վարչութեան՝ Ծննդեան տարեկան հան – դիպումը : Բացումը կատարած է ընկեր Ե· Բամպուքեան խօսքը տալով ընկեր Ս· Վրացեանի, որ յայտնած է թէ ճեմարա– նի թիւ մէկ սրահը պիտի կոչուի «Յակոբ Տէր – Մելքոնեան սրահ» առ ի երախտա– դիտութիւն բարոյական եւ նիւթական այն բոլորանուէր աշակերտութեան , որ ճեմարանի հիմնադրութենէն ի վեր Յա – կոբ Տէր – Մելքոնեան ընծայած է հայ մշակոյթի այդ տան :

ՊԻՑՐՈՒԹի Ս· Նշան վարժարանի ծը– նընդեան տարեկան ճաշ – պարահանդէսը մեծ յաջողութիւն դտած է այս տարի : Ներկայ եղած են պետական երեսփոխան– ները :

ՍՏԱՅԱՆՔ

ԸՆՏԱՆԻՔ , Յունուար 1962, ԺԵ· տարի թիւ 1 (171) ամսաթերթ : Հասպէ Ս· Ղազար, Վենետիկ :

խուն :

Ի· չարք, հայ պիւղացի մը, ջլապինդ բազուկներով :

ԻԱ· չարք, Արարատ լեռը Արագածով :

ԻԲ· չարք, Արարատ լեռը հայ ձիաւոր պինուորով :

Այս դրոշմաթուղթերէն չատեր այսօր հազուագիւտ դարձած են եւ անոնց ար – ժէքը բարձրացած է հինգ հարիւր ռուկիի : 1936էն վերջ Հայաստանի մէջ կրկին ըս– կըսած է ռուսական դրոշմաթուղթերու գործածութիւնը՝ հայկական նամակա – տուներու կնիքներով :

ԱՒԵՏԻՍ ԵՒ ՊԵՏՐՈՍ ԹԻՓԷՆԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ

ՇԱՐԺԱՆԿԱՐԻ ՏՈՒՆ

Ձարտարապետ Է· Սաֆարեանի նա – խագիծով, Երեւանի մէջ, այս տարի պի– տի չինուի Շարժանկարի տուն մը, երկու դեղեցիկ չէնքերով : Եռայարկ չէնքերէն մէկուն համար նախատեսուած է վեց հարիւր աթոռով եւ լայն պատշգամով չարժանկարի սրահ մը, ուր պիտի ցու – ցադրուին խորհրդային եւ արտասահմա– նեան ժապաւէնները : Այս չէնքին մէջ պի– տի հաստատուի նաեւ ցուցասրահ մը՝ նուիրուած չարժարուեստի պատմու – թեան : Միւս չէնքը պիտի ունենայ 120 հոգինոց եւ լայն պատշգամով սրահ մը : Նաեւ յարակից սրահներ՝ յատկացուելու համար զանազան նպատակներու :

—1961Ի 10 ԼԱՒԱԳՈՅՆ ՄԱՐԶԻՆԵՐԸ —

Հայաստանի մարմնամարզի լրագրող – ներուն դաշնակցութիւնը, ըստ ընդուն– ուած սովորութեան, հարցարան մը բա– ցած է անցեալ տարուան Հայաստանի 10 լաւագոյն մարզիկները որոշելու համար :

Ահա հարցումին արդիւնքները, Իկոր Նովիկով (հնդամարտ), Ա· Կոնով (թե – թեւ աթլեթիկ), Վ· Զերնիկով (սուսերա– մարտ), Ռ· Գալոյեան (ծանրութիւն բարձրացնող), Ա· Ագնաւուորեան (մարմ– նամարզ), Ս· Զաուիկեան (ոտնագնդակ), Մ· Սեմչրճեան (ոտնագնդակ), Ս· Քո – չարեան (ջրացատկ), Ռ· Վարդանեան (դասական ոճի ըմբշամարտ) եւ Տ· Ա – ւադեան (հեծելանիւ) :

ԹԵԹԵՒ ԱԹԼԵԹԻԶԻ ՄՐՑՈՒՄՆԵՐ

Զորս օր տեւեց թեթեւ աթլեթիզի ա – խոյենական մրցումները :

Կիներու հարիւր մեթր վազքին մէջ ա – ռաջնութիւնը չահած է Հռա Ոսկանեան , վազելով 12·5 վայրկեանէն : Այրերուն մէջ 10·7 վայրկեանի մրցանիչ մը հաս – տատեց Ս· Տօնոյեան : 7·20 մ· երկարու – թիւն ցատկեց Ռազմիկ Թումանեան : 800 մեթրի առաջնութիւնը հաստատեց Ա· կո– նով, իսկ հինգ հազար մեթրինը՝ Կ·Յով– հաննիսեան : Եռացատկի մրցումներուն Ռուբիկ Սահակեան հաստատեց պատա – նիներու նոր մրցանիչ մը՝ 14·12 մեթ – րով :

ՈՏՆԱԳՆԴԱԿ

Մալիի ոտնագնդակի խումբը Երեւանի մէջ պարտուեցաւ հայկական խումբին : « Պաղին սկիզբէն նկատելի էր հիւրերուն դնդակը տիրապետելու բարձր խաղար – կութիւնը, արագ որոշումները, ճիշդ փո– խանցումները եւայլն», կը գրեն Երեւանի թերթերը, ու միեւնոյն ատեն դիտել կու տան, թէ Մալիի խումբը Ափրիկէի ամէ– նէն զօրաւոր ոտնագնդակի խումբերէն մէկն է : Մրցումին արդիւնքը եղած է 4 – 0 :

ՋՐԱԳՆԴԱԿ

Երեւանի ջրագնդակի (Ոսաքըր – Փոլօ) խումբը յաջորդաբար պարտութեան մատ– նեց Ուզպեկիստանի, Լաթվիոյ, Տաճի – կիստանի, Ղազախիստանի եւ Թուրքմե – նիստանի խումբերը եւ իրաւունք ստացաւ այս տարիէն սկսեալ մասնակցելու ջրա – գնդակի «Ա·» դասի մրցումներուն :

ՀԵԾԵԼԱՆԻԻ

Ուկրայնայի մէջ տեղի ունեցած արա – զութեան հեծելանիւի մրցումի մը ըն – թացքին առաջին հանդիսացաւ Հայաս – տանի խումբը : Զորս քիլոմեթը երկարու– թիւնը կտրած են հինգ վայրկեան , վեց երկվայրկեանէն :

Հայաստանի խումբէն Տիգրան Աւագ – եան եւ Մարինա Գրիգորիա չահած են ար– ծաթ եւ ոսկի մետալները :

ՁԱՏՐԱԿ

Տիգրան Պետրոսեան եւ Գրիգորիչ(Եու– կոսլաւ) 12·5 կէտով Բ· հանդիսացան Եուկոսլաւիոյ մէջ տեղի ունեցած ձատ – րակի միջազգային մրցումին : Առաջին եւ երկրորդ տեղերը գրաւեցին Միխայիլ Տալ (Խորհրդ· Միութիւն) եւ Ռ· Ֆիչըր (Մ· Նահանգներ) :

Ա.Խ· ԻՍԱՀԱԿԵԱՆԻ ՏՈՒՆ–ԹԱՆԳԱՐԱՆԸ

Ա.Խ· Իսահակեանի Երեւանի տունը վերածուած է թանգարանի : Ամէն ինչ պահուած է իր բնական վիճակին մէջ : Թանգարանը երկյարկանի չէնք մըն է, հինգ սենեակով՝ ննջասենեակ, աշխա – տասենեակ, ղրադարան, ճաշասենեակ – հիւրանոց : Տանը մէջ խնամքով պահ – ուած են բանաստեղծին անկողինը, գրա– սենեակը, հագուստները, կօշիկները , ձեռնափայտը, ակնոցները եւ հարիւրա – ւոր նկարներ եւ նուէրներ :

Ա.Խ· Իսահակեանի տունը ունէր պարտէզ մը, պտղատու ծառերով , ո – րոնցմէ չատերը տնկած է ինքը, իր կեն– դանութեան օրով : Պարտէզին մէջ կայ նաեւ զարդաքանդակներով քարէ նստա – րան մը, որ հայ ճարտարապետները նը – ւէր ըրած են իրեն :

Ա.Խ· Իսահակեան ձգած է գրական մեծ ժառանգութիւն մը : Թանգարանին մէջ հաւաքած են իր բոլոր գործերը : Ունի նաեւ կէս ձգած ձեռագիրներ : «Ոս– տա Կարոյին» 250 էջնոց մէկ տպրելա– կը, «Եօթը օր ապատում, եօթը օր անա– պատում», «Ղազարոս», «Հայկական Ֆա– ուստ» եւ տասնեակ այլ անաւարտ գոր – ծերու ձեռագիրներ :

ԿԱՐԴԱՑԵՔ ՏԱՐԱԾԵՑԵՔ «ՅԱՌԱՋ»Ը

ԹԻԱՊԱՐՏԸ

(ՎԷՊ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿԵԱՆՔԷ)

ԳՐԵՑ

ԱՐՄԷՆ ՇԻՏԱՆԵԱՆ

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

— Ի՞նչ անել··· կուսակցական կռիւ – ներ տեղի կ'ունենան ոչ թէ անօգուտ բա– ներու համար, այլ ի հարկէ՝ հանրային շահը նկատի առնելով, բարեկամս, ա – նանկ չէ՞ : Բայց ձեր գեղին մէջ ալ կու – սակցական բաժանումներ կա՞ն ··· :

— Զկային ··· բայց սկսած են ըլլալ :

— Անչուշտ , հարուստներու եւ գոր – ծաւոր դասակարգերու կռիւին վրայ չէ·· փառք Աստուծոյ, գեղերու մէջ առանձի կռիւներ չունինք, ինչպէս տեղի կ'ունե – նան ձեր քաղաքը :

Հապա՞ ··· ընդհատեց երիտասարդը :

Ներսէս Արծրունին կռահեց որ դէմինը չհասկնալու կը ջանայր իր յայտնութիւն– ները· կռահեց որ երկիւղալի վերապա – հումքամբ կը խօսէր եւ կը տարակուսէր իրմէն· ուստի առանց պատասխանելու , հարցուց ·

— Պարոն, պիտի վստահինք իրարու վրայ ···:

— Ի՞նչ կայ չվստահելու ··· չեմ հաս– կընար, առարկեց երիտասարդը՝ ժպտու– նելով :

— Լաւ ուրեմն, խոստացէք որ պիտի չհակածիք իմ անկեղծութեանս վրայ :

Երիտասարդը զրեթէ զարմանքով մը նայեցաւ այս անգամ ու մրմնջեց ·

— Բան մը ունի՞ք ըսելու :

— Այո··· եւ չատ կարեւոր է, չեչտեց Ներսէս Արծրունին :

— Ցայտնեցէք, կը խնդրեմ, ընդհատեց երիտասարդը յուզմունքով մը :

— Կեցէք··· նախ՝ յայտնելու համար պայման մը ունիմ :

— Ի՞նչ պայման :

— Պէտք է որ ծանօթանանք իրարու : կարծեմ թէ Ցեղափոխական կուսակցու – թեան մը ներկայացուցիչն էք դուք այն– պէս չէ՞ :

— Ամենեւին··· ո՞վ ըսաւ, բացագան– չեց երիտասարդը·

— Երբ յայտնեմ թէ ով ըսաւ ձեր Ցե– ղափոխական կուսակցութեան մը ներկա– յացուցիչն ըլլալը, պիտի հաւատա՞ք ին– ծի :

— Ո՞վ է ···:

— Կը ճանչնա՞ք Ներսէս Արծրունին ·

— Հչ··· միայն թէ իր անունը լսած եմ :

— Կը հաւատա՞ք թէ Անկախութեան հիմնադիրներէն մին է ան :

Կը հաւատամ ·

— Խիստ լաւ··· պիտցէք որ ան է ըսո– ղը··· իր կողմէն կուգամ :

Երիտասարդը լռեց : Արդարեւ լսած էր այդ մեծ մարդուն անունը, զոր Թուր – քերն ու Քիւրտերը զրեթէ առասպելի մը պէս կը պատմէին :

— Ուր կը գտնուի ան, հարցուց երի– տասարդը դողդողալով :

— Ով գիտէ··· իրն է լեռը, իրն է ան– տառը, իրն է լեռնաշղթաներու ամէնէն զարհուրելի կիրճը· մէկ խօսքով՝ իրն է ազատ երկինքը, պատասխանեց Ներսէս Արծրունին, հոգւոյն խոռվքը զսպելու ջանալով :

Երիտասարդին կերպարանքը ճառա – գայթ մը պատեց, ինչպէս խաւարին մէջ թափանցող լուսոյ ցոլք մը : Հոգին հան – գարտած էր : Երկիւղը փարատած էր ա– մէն կերպով : Հետեւաբար ոտքի ելաւ ու Ներսէս Արծրունին ձեռքը բռնելով մըր– մնջեց ·

— Վստահ եմ ձեր վրայ եւ կը յայտ – նեմ թէ վանի մէջ կազմակերպուած կու– սակցութեան մը լիազօր ներկայացուցիչն եմ ես :

— Ո՞ր կուսակցութեան, հարցուց Ներ– սէս Արծրունին :

— Դրօշակեան կուսակցութեան :

— Ո՞ւր է ձեր կուսակցութեան կեդրո– նը :

— Մեր կուսակցութիւնը կեդրոն մը չունի, բարեկամս :

— Հապա՞ :

— Մենք Ազակեղրոնացեալ կուսակ – ցութիւն մը ունինք՝ որ իր տրամադրու– թեան ներքեւ երկու «պիւռօ»ներ կը պա– հէ : Պիւռօներէն մին Արեւմտեանն է , ո– րուն իրաւասութիւնն է վարել թերթի մը վարչական բարձրագոյն պաշտօնը, միւ– սը՝ Արեւելեանն է· որմէ կախում ունի հայդուկային արշաւանքներու ծրագրին դործադրութիւնը :

— Ըսել է թէ՝ մասնաւոր կեդրոն մը չունիք որ վարէ ձեր կուսակցութեան ամ– բողջ գործերն, անանկ չէ՞ :

— Ո՛չ··· ի՞նչ հարկ կայ :

— Եթէ հայդուկային արշաւանք մը պատրաստուելու հարկը տեսնուի, դուք կարո՞ղ էք ձեռնարկել :

— Անշուշտ :

— Ձեր պատասխանատուութիւնը մէկէ մը կախում չունի՞ ·

— Ունի··· «պիւռօն» է :

Ներսէս Արծրունին գլուխը չարժեց թե– թեւ կերպով մը ու ժպտեցաւ : Երիտա – սարդը չէնշմարեց ··· հետեւաբար չարու – նակեց իր խօսքը ·

(Շար·)

ՅԱԽԱԿՑՈՒԹԻՒՆ

Ֆ. Կ. Խաչի Սէն Ժեռոմի մասնաճիւղը իր խորին ցաւակցութիւնները կը յայտ – նէ, իր անդամուհիներէն Տիկին Աւրինէ Աւտոյեանի, Պ. Սիմօն Աւտոյեանի եւ ըն– տանեկան պարագաներուն, ողբացեալ Վարդան Աւտոյեանի վաղահաս մահուան առթիւ:

Այս տխուր առիթով մասնաճիւղս փո – խան ծաղկեպսակի չնորհակալութեամբ ստացած է Պ. Գաղիկ Շալճեանէն քսան Ն. Ֆ., Պ. Սահակ Աւետեանէն եւ Պ. Վարդգէս Աւիգեանէն տասնական Ն. Ֆ.:

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Լիոնի եկեղեցաչէն Տիկնանց Միութիւ– նը չնորհակալութեամբ ստացաւ հետեւ– եալ նուիրատուութիւնները ի նպաստ Լիոնի եկեղեցւոյ չինութեան.—

Տէր եւ Տիկին Ճ. Պահատուրեանէ 150 Ն. Ֆ., Քոնկոյէն Պ. Մաթէոս Մարկոս– եանէ հարիւր Ն. Ֆ., Տէր եւ Տիկին Սար– գիս Ցովհաննէսեան յիսուն, Տիկին Թա – գուհի Չէյթունցեանէ տասը, Ոմն տասը, Վէզէն Տիկին Յակոբեան 15, Տիկին Հայ– կանոյշ Սիմոնեան տասը, Ոմն 50, Տէր եւ տիկին կարապետ Ցովակիմեան իրենց զաւկին ղինուորութենէ վերադարձին առ– թիւ յիսուն Ն. Ֆ.:

Աղքատախնամ Տիկնանց Միութիւնը չնորհակալութեամբ ստացաւ հետեւեալ նուիրատուութիւնները.—

Տէր եւ Տիկին Ճ. Պահատուրեանէ 250 Ն. Ֆ., Պ. Արսէն Թէրզեանէ իր մօր մահուան առթիւ հարիւր, Պ. Հրանդ Թաղէոսեանէ տասը, Տէր եւ Տիկին կա – րապետ Ցովակիմեանէ իրենց զաւկին ղինուորութենէ վերադարձին առթիւ 50:

Տէր եւ Տիկին Ճ. Պահատուրեան զպ – րոցի համար ալ նուիրած են 100 Ն. Ֆ.:

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

Կազմակերպուած Սէնթ Անթուանի Ս. Թաղէոս եկեղեցւոյ կրթ. Մարմնի կող – մէ:

Պատուոյ նախագահութեամբ ՎԱԶԳԷՆ վրդ. ՔԷՇԻՇԵԱՆի:

Ղեկավարութեամբ Ուսուցիչ Պ. Հա – մազասպ Նաճարեանի:

Այս կիրակի կէսօրէ վերջ ժամը 15ին, Պար Վիատիւբի սրահը:

Պիտի ներկայացուի դպրոցի աշակերտ– ներու կողմէ ՄԱՐԳԱՐ ՎԱՐԺԱՊԵՏԸ:

Հայկական եւ կովկասեան պարեր, երգ եւ արտասանութիւն:

Սրահի ջերմութիւնը ապահովուած է:

Մուտքը ազատ է:

ԹԱՀԱՆ

Ա

Հ

Ն

ԱՀԱՆՋԸ ԱՌԱՆՑ ԵՐԳԻ

Ո

Ի

Ր

Ա. Տպագրութիւն, 1929

Գին 7 Ն. Ֆր.

Դիմել ՑԱՌԱՋԻՆ

FOURRURES

Roger YOPIAN

PRIX INTERESSANTS
NEUF et REPARATION

84, Boulevard de Stalingrad, 84
— CHOISY-LE-ROI (Seine) —

Autobus : de la Porte de Choisy, descendre 3 Communes ou Rue du Docteur-Roux.

Imprimerie Spéciale du journal « Haratch »
32, Rue de Trévise, PARIS (9e)

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ Ս. ԽԱՉ ԵԿԵՂԵՑԻ

10 bis, Rue Thouin, PARIS

Այս կիրակի, երեկոյեան ժամը 18·30– ին Հայկական ձայնաւոր պատարագ, Մարի Մէտիադրիս եկեղեցիին մէջ, Պուլ– վար Սէհաստիէ, Փարիզ (19), մեքրօ Փորթ տէ Լիլա կամ Փրէ Սէն Ժերվէ:

ՄՕՏ ՕՐԷՆ — ՄՕՏ ՕՐԷՆ

Զաւարեան ենթակոմիտէի հովանաւո – րութեամբ «Շանթ» թատերախումբը պի– տի ներկայացնէ մեծ պատրաստութեամբ Աղգ. Տրամը «ՎԱՐԴԱՆԱՆՔԸ», Պօմոնի սրահին մէջ:

Մանրամասնութիւններ մամուլով եւ առանձին յայտարարութեամբ:

Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ

Ծննդեան 1600ամեակը համազգային շուքով կը տօնուի Մարսէյլի մէջ:

Փետրուար 18ին, կիրակի կէսօրէ ետք, Քաղա տ'Իթալիայի չքեղ թատրոնին մէջ:

ԼՈՑՍ ՏԵՍԱՒ

ՅԱԿՈԲ ՏԷՐ–ՅԱԿՈԲԵԱՆ

ՊԱՐՏԻԶԱԿԸ

ԻՍԱՏԻԿ

Ցաւելուածաբար՝ ՄԱՆՈՒՇԱԿ ԵՒ ԻՐ ՀԷՔԵԱԹՆԵՐԸ:

500 էջ

13 Hors–Texte

Հասոյթը Փարիզի եկեղեցւոյ կըր– թական մարմնին:

Գին 12 Ն. Ֆ.

Թղթատարի ծախքով 13·40 Ն. Ֆ.

Արտասահման 4 տոլար:

Դիմել՝

Ցառաջին

Հայ գրավաճառներուն

Փարիզի եկեղեցին կամ Տպարան

ՏԷՐ – ՅԱԿՈԲԵԱՆ

ԾՆՈՒՆԴԻ ԵՒ ՆՈՐ ՏԱՐԻՈՑ

ՈՒՐԱԽ ՕՐԵՐՈՒՆ ԵՒ ԱՄԲՈՂՋ ՏԱՐԻՆ

Եւրոպայի Մեծագոյն Արեւելեան Վաճառատունը

ՊԱՀԱՏՈՒՐԵԱՆ խանութ մը չայ – ցելողին սեղանին վրայ ամէնէն հա– մով պատառը կը պակսի՝ մեծին ու պզտիկին համար: ՊԱՀԱՏՈՒՐԵԱՆ վաճառատան մէջ պիտի գտնէք ա – ւանդական ընդեղէններու եւ անու – շեղէններու ամէն տեսակը, անմրցե– լի գիներով:

Ապսպրանքի վրայ, ծրարի առա – քում Ֆրանսայի ամէն կողմ եւ դէ– պի արտասահման՝ Պելժիա, Զուի– ցերիա, Անգլիա:

ՊԱՀԱՏՈՒՐԵԱՆ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

LYON

246, Rue Vendôme - Tél. MOn 11-84
20, Rue Villeroy MO 32-10
65, Rue Robert LA 07-72

ԵՒ ԻՆՁԳԻՄ ՄԻՇՏ

Արմաւ, «պամիա», «եալանճի տոլ– մա», յունական «թուրչի», «պի – պէռ», տերեւ, թահին հելվա, «վա– նիլլ», չոքոլա, «նուազէթ», «լո – ւում», «սագըզ», պիստակ, Շիրակ օղի (41 – 45o), Իզմիրի չամիչ, «սուճուք», կեռարական «պաստըր – մա»: առաջնակարգ սուրճ, (fարա– վան եւ մոգա), համեմներ «մահ – լէպ», «սալէպ», ձիթապտուղ, ձէթ, «քաչքավալ» պուլկարական, ճեր– մակ պանիր ոչխարի կաթով: Ամէն կարգի պահածոներ, «քուսքուս», հարիսա, աումագ, թարամա, լա – fերտա, բաֆլաւա, fատայիֆ, տե– րեւ եւայլն:

ՊԱՀԱՏՈՒՐԵԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆԸ

Ունի նաեւ մասնաճառատուն մը, որուն առաջնակարգ միսերը գոհա – ցում կուտան ամէնէն նրբաճաշակ – ներուն: Ոչխարի, հորթի եւ եզան միս (քաշուած միս, եւայլն):

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻ

ՊԱՐԱՇԱՆԴԷՍԸ

Կազմակերպութեամբ Սէն Շամոնի խումբին, այս Շաբաթ իրիկուն ժամը 21– էն մինչեւ լոյս:

Սէն Շամոնի Քաղաքապետարանի սրա– հը (Սալ տէ Ֆէթ):

Նուագախումբ՝ Ճիմի Ռիէլ:

Պիւֆէ, պար, fոթիյոն, ժէօ:

ՀԱՆԴԷՍ – ՏՕՆԱԾԱՌ

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՕՐՈՒԱՆ ԱՌԹԻԻ

Կազմակերպուած՝ Ֆ. Կ. Խաչի Էմփնի մասնաճիւղի կողմէ: Մասնակցութեամբ՝ ղպրոցին աշակերտութեան:

Այս կիրակի կէսօրէ ետք, ժամը 3·30– ին Հ. Ց. Դ. Տան մէջ:

Ժամբական երգեր, արտասանութիւններ աշակերտներու կողմէ:

Կը ներկայացուին՝ 1) Կաղանդ Պապան, 2) Ուրիշին տունը հարսանիք (զաւեշտ):

Երգերով ու հայկական պարերով:

Մուտքը ազատ է:

Կը հրաւիրուի Էմփնահայութիւնը ան– խտրաբար:

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ԼԻՈՆ.— Ֆ. Կ. Խաչի Լիոնի վարչու – թիւնը ընդհ. ժողովի կը հրաւիրէ իր բո– լոր ընկերուհիները, այս կիրակի կէսօրէ վերջ ժամը չորսին, եկեղեցւոյ սրահը: Կարեւոր օրակարգ:

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

ԿԱՊՈՑՏ ՅԱԶԻ ՕՐԸ

Ֆ. Կ. Խաչի օրը կը տօնուի Ապրիլ 1ին, կիրակի, կէսօրէ վերջ, Շիմիի սրահը:

ԴՊՐՈՑԱՍԷՐ ՏԻԿՆԱՆՑ ՎԱՐԺԱՐԱՆ

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՅԵՐԵԿՈՅԹ

ՄԱՐՏ 11ԻՆ

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Կ'ՈՒԶՈՒԻ

Պաչտօնական զրասենեակի մը մէջ աշ– խատելու համար, երիտասարդ տաքթիլօ օրիորդ մը կը փնտուի: Մանրամասնութեանց համար դիմել ՑԱՌԱՋ:

Հ. Յ. Փ.

ԸՆԿԵՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

ՓԱՐԻԶ.— Հ. Ց. Դ. Շրջ. կոմիտէն ներկայացուցչական ժողովի կը հրաւիրէ Փարիզի եւ շրջանի մարմիններու ներկա– յացուցիչները, այս կիրակի կէսօրէ վերջ ժամը 2·30ին, Մշակոյթի Տան սը– րահին մէջ:

ՕՐԱԿԱՐԳ.— Շրջ. ժողովի օրակարգի քննութիւն: Ներկայացուցիչ ընկերներու պարտաւորիչ ներկայութիւն:

ՓԱՐԻԶԻ Հ. Ց. Դ. Շրջ. կոմիտէն ըն– կերական ընդհ. ժողովի կը հրաւիրէ «Ա– րամ» ենթակոմիտէի բոլոր ընկերները այս Ուրբաթ ժամը 8·30ին, Մշակոյթի Տան սրահին մէջ: Կարեւոր օրակարգ: Ներկայ կ'ըլլայ Կ. Կ-ի ներկայացուցիչը:

ՎԻԷՆ.— Հ. Ց. Դ. Անի կոմիտէն ընդհ. ժողովի կը հրաւիրէ բոլոր ընկեր– ները այս Շաբաթ, ժամը 20·30ին, Հ. Օհանջանեան ակումբին մէջ: Կարեւոր օ– րակարգ:

ԱՌՆՈՒՎԻԼ – ՍԱՐՍԷԼ.— Հ. Ց. Դ. Վարդան ենթամոմիտէի ժողովը այս Ուր– բաթ երեկոյ, սովորական հաւաքատեղին: Կարեւոր օրակարգ:

ՓԱՐԻԶ.— Հ. Ց. Դ. «Քրիստափոր» խումբի ընկերական ժողովը այս Հինգ – շաբթի ժամը 21ին, Մշակոյթի Տան մէջ: Ընկերներուն ներկայութիւնը անհրա – ժեշտ է:

ԼԻՈՆ.— Հ. Ց. Դ. Կոմիտէն ժո – ղովի կը հրաւիրէ բոլոր ընկերները այս Ուրբաթ, ժամը 20·30ին, սովորական հաւաքատեղին: Կարեւոր օրակարգ:

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՑՑ

Հ. Ց. Դ. Մարսէյլի Շրջ. Կոմիտէի հը– րաւիրած ընկերական ժողովներու.—

Հ. Ց. Դ. Մարսէյլի Շրջ. Կոմիտէն՝ ստիպողաբար ընկերական ընդհ. ժողովի կը հրաւիրէ հետեւեալ ենթակոմիտէնե – րու եւ խումբերու անդամ ընկեր – ընկե– րուհիները:

ԳԷՈՐԳ ՉԱՎԱՒՇ խումբ՝ 20 Յունուար Շաբաթ, ժամը 21ին:

ՄՈՒՐԱՏ խումբ՝ 21 Յունուար, կիրա– կի կէսօրէ ետք, ժամը 15ին:

ՆԻԿՈՂ ԴՈՒՄԱՆ խումբ՝ 21 Յունուար, կիրակի կէսօրէ ետք, ժամը 15ին:

ՇԱՒԱՐՇ ՄԻՄԱՔԵԱՆ խումբ՝ 20 Յուն– ուար, Շաբաթ, ժամը 21ին:

Սոյն ժողովները տեղի պիտի ունենան իրենց սովորական հաւաքատեղիները: Ներկայ պիտի ըլլան Շրջ. կոմիտէի ներ – կայացուցիչները:

ՍԱԿԱՒԱԳԻՆ ԸՆԹԱՑԻԿ ԱԶԴԵՐՈՒ

ՄԻԿ ԱՆԴԱՄՈՒԱՆ ՀԱՄԱՐ

ՄԱՀԱԶԴ	30 Ն. Ֆ.	միջեւ 1/4 սիւնակ
ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ	15 Ն. Ֆ.	միջեւ 1/8 սիւնակ
ՑԱԽԱԿՑՈՒԹԻՒՆ	10 Ն. Ֆ.	» » »
ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ	20 Ն. Ֆ.	» » »
ՀԱՐՍԱՆԻՔ, ՆՇԱՆՏՈՒՔ	20 Ն. Ֆ.	» » »
ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ	10 Ն. Ֆ.	» » »
«ՓՈՆԱՆ ԾԱՂԿԵՊՍԱԿԻ»	10 Ն. Ֆ.	» » »
«ԿԸ ՓՆՏՌՈՒԻ»	5 Ն. Ֆ.	» » »
ԾԱՒՈՒ Է	20 Ն. Ֆ.	» » »

Այս գիները մէկ անգամ հրատարակելի եւ նշանակուած ծաւալով ազ – դերու համար են, չորրորդ էջը:

Կանխիկ վճարումը պարտաւորիչ է:

Առեւտրական կամ այլ ազդերու մասնաւոր պայմաններուն համար դիմել Վարչութեան:

ՏՕՆԱԿԱՆ ՕՐԵՐՈՒ ԼԱՒԱԳՈՑՆ ՆՈՒԷՐԸ

ՍԻՓԱՆ – ԿՈՄԻՏԱՍԻ՝ ճոր սալը

"ՀԱՅ ԿՐՕՆԱԿԱՆ ԵՐԳԵՐ"

Chants Religieux Arméniens

Կը ղեկավարէ Կ. ԱՓՐԻԿԵԱՆ

Փնտռել՝ երգչախումբի վարչութեան անդամներուն, բարեկամներուն եւ հե– տեւեալ հասցէներուն մօտ:

Restaurant ARTHUR
5, Rue Augustin Thierry
Place des Fêtes. Paris 19e

Librairie H. SAMUEL,
51, Rue Monsieur-le-Prince, PARIS

ՅԱՌԱՋԱԳԻԾ

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

Le PREMIER QUOTIDIEN ARMENIEN en EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction et Administration : 32, Rue de Trévise - PARIS-9e

Fondé en 1925 — Téléph. : PRO. 86 - 60

R. C. Seine 57 A 2731 — C. C. P. Paris 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա՝ Տար. 50 Ն. Ֆ. — Վեցամսեայ՝ 27 Ն. Ֆ.

Արտասահման՝ Տար. 60 Ն. Ֆ. — Հատը՝ 0·25 Ն. Ֆ.

ՈՒՐԲԱԹ 19 ՅՈՒՆՈՒԱՐ

VENDREDI 19 JANVIER 1962

38ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 9308 — 38e ANNÉE — Fondateur : SCHAVARCH MISSAKIAN — ՆՈՐ ՇՐՋԱՆ, 18ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 5109

ՎԱՂԸ ԿՐՆԱՅ ՈՒՇ ԸԼԼԱԼ...

Մեր նախորդ թիւով, ծանրացանք քաղաքագիտական կատարած կարեւոր դերին վրայ, քիչ մը ամէն ասպարէզի մէջ եւ ամէն կարգի նպատակներու յաջողութեան կամ յաղթանակին համար :

Ինչ որ այսօր մեզի կը հետաքրքրէ առաւելապէս, այդ ալ Հայ Դատի ի նպաստ կատարուելիք քարոզչութեան հարցն է :

Դատ մը ունինք, մասնաւորապէս Ա. Հայաստանի ազատագրութեան Դատը, որ քիչ առ քիչ կը մոռցուի ոչ միայն արտաքին աշխարհին, միջազգային քաղաքական ուժերու կողմէ, այլ նոյն ինքն Հայութեան՝ մասնաւորապէս նոր սերունդին որ գրեթէ անծանօթ է հայ ազգային պատմութեան եւ հայ ժողովուրդի մղած դուպարներուն, անոր տրուած անթիւ եւ անհամար զոհերուն, ի խնդիր հայրենիքի ազատութեան եւ անկախութեան :

Ըսինք թէ, մեր կիսանկախ փոքր հայրենիքը մեզի համար կը հանդիսանայ ամէնէն հիմնական ազդակը Հայ Դատի լուծման տեսակէտէն :

Այսօր սակայն Հայաստան իր ժողովուրդով կ'ապրի այնպիսի պայմաններու մէջ, որ ինք ազատ չէ մեր ազգային պահանջներու իրագործման ի նպաստ որեւէ քայլ առնելու :

Այսօր դերը վերապահուած է այն օր – ուան՝ երբ միջազգային քաղաքական պայմանները թոյլատու պիտի ըլլան որ ան ալ իր խօսքը ըսէ :

Մինչ այդ, Հայ Դատի պաշտպանութեան եւ անոր ի նպաստ կատարուելիք քարոզչութեան պարտականութիւնը կ'իյնայ Սփիւռքի ազատատենչ եւ հայրենասէր Հայութեան :

Կ'իյնայ հայկական այն պաղութենեքուն՝ որոնք կ'ապրին ազատութեան մէջ, վայելելով հիւրընկալ երկիրներու եւ ժողովուրդներու բարեացակամութիւնը :

Ազատ աշխարհի ազատ Հայուն պարտքն է արծարծել Հայ Դատը ամէն մէկը իր միջավայրին մէջ եւ անոր ընձեռած պայմաններուն եւ հնարաւորութիւններուն չափաձեւն ներս :

Արտասահմանի բոլոր հայ գաղութները ոչ միայն պարտական են, այլեւ նիւթական ու բարոյական ամէն կարելիութիւն ունին նախամտածուած ծրագրի մը հի – ման վրայ կազմակերպելու Հայ Դատին քարոզչութիւնը :

Յարդ այդ ուղղութեամբ, ոչինչ կ'արտաքեցաւ : Եթէ հոս ու հոն մասնակի ձեռնարկներ եղան, սառնք չատ հեռու են դպացուած պահանջին զոհացում տալէ :

Օտար շրջանակներու հետ պահուած, յաճախ պատահական, հանդիպումները, մէկ երկու օտարալեզու հրատարակու – թիւններ, ոչինչ կը փոխեն իրականութենէն, կամ ոչինչով կրնան նպաստել Հայ Դատը իր մոռացութեան վիհէն դուրս հանելու եւ միջազգային հանրային կարծիքին եւ շահագրգռութեան առարկայ դարձնելու համար :

Նկատի ունենալով պիտութեան եւ արհեստագիտութեան (թէքնիք) հսկայ քայլ եւ հրաշալի յառաջդիմութիւնը, նոյնանոր հրէշային, աշխարհակործան զէնքերու առկայութիւնը, չատ հաւանաբար պատերազմները չեն որ ասկէ ետք պիտի լուծեն ժողովուրդներու միջեւ գոյութիւն ունեցող հողային կամ այլ վէճերը :

Պատերազմներու յաղթականները չէ որ յետ այսօրիկ սուրի ուժով պիտի իրենց կամքը պարտադրեն :

« Իրաւունքը զօրաւորինն է »ի անբարոյական եւ անարդար բանաձեւումը, այլեւս կը չէուած է կարեւոր չափով մը պատմութեան սեփականութիւնը դառնալու, իբրեւ ժամանակավրէպ խմաստութիւն...

Հայութիւնը պէտք է պատրաստուի այժմէն իսկ խաղաղ պայքարով արժեցը-

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ԳԱՀԻՐԷ

ԱՄԲԱՍՏԱՆԵԱԼՆ Է՝

ՖՐԱՆՍԱ

Ֆրանսացի դիւանագէտներուն եզիպտացի դիւանագէտներուն հետ փաստաբանները մեծ չանք թափեցին փաստելու համար թէ ամբաստան – եալները՝ դիւանագէտ են եւ երկար ծառայութեան Միջազգային Իրաւունքին վրայ, յիշելով մինչեւ իսկ Նափոլէոնը :

Առաջին փաստաբանը՝ Մուսթաֆա Էլ Պարատայ վճռական է.— Միջազգային օրէնքը կը բերէ մէջտեղ ուր չատ յստակ ըսուած է թէ առաքելութեան մը ոեւէ մէկ անդամը անձեռնմխելի է : Դատախազը կը պատճառաբանէ սակայն թէ Գահիրէի Արտաքին Նախարարութեան նամակը (տես «Յառաջ»՝ Յունուար 17) խոստում մըն էր միայն : Այլ խօսքով ըսել կ'ուզէ թէ պարտաւորութիւն մը չէր : Պաշտպան Բ. փաստաբանը կը բարկանայ : Եթէ կառավարութիւնը այդպէս կը հասկնայ խոստումները պարզապէս խոստումի դժուամ է, բռնաբարութենէ : Որեւէ խոստում կը պարտաւորէ կառավարութիւնը տէր կենալու իր խօսքին :

Փաստաբան Մանսուր՝ կրկին խօսք կ'առնէ եւ կ'ոգեկոչէ Մոհամէտը : Արդարեւ Իսլամի աւանդութեան համաձայն « կեղծ Մարգարէն» Մէքքէ ղրկած էր երկու դեսպաններ որոնք խափանարար – կան գործունէութեան ձեռնարկած էին : Մարգարէն, սրտնեղած կանչել տուաւ երկու դեսպանները եւ յայտարարեց.— « Եթէ դեսպան չըլլայիք, ձեր գլուխը կտրել կուտայի» եւ զոհացաւ միայն երկրէն արտաքսելով : Փաստաբանը ուրիշ պատճառաբանութիւն մըն ալ մէջտեղ կը բերէ. Իսլամի օրէնքէն առնուած : Ժ. դարուն արաբ օրէնսդիր Ապու Էլ Խարակ կ'ըսէ թէ «կարելի չէ բռնաբարել օտար դեսպանի մը անձեռնմխելիութիւնը, նոյն իսկ եթէ այդ վերջինը դաղութիւն կամ չնութիւն ըրած ըլլայ » (երկու տճիր – ներ զրոս Քուրանը խստօրէն կը պատժէ) : Եւ վերջապէս անսպասելի ուրիշ ոգեկոչում մը՝ Նափոլէոն : Ջերբակալել տուած էր Ցարին դեսպանը զոր ստիպ – ուեցաւ ազատ արձակել որովհետեւ պաշտպանուած էր «դիւանագիտական անձեռնմխելիութեամբ» : Եւ դատարանը յայտնեց թէ իրաւունք չունի դատելու : Փաստաբանը չարունակեց յայտարարել – լով թէ ամբաստանեալը՝ Ֆրանսան է ոչ

նելու իր իրաւունքները՝ որոնք ոչինչով վիճելի են :

Պէտք է ձեռնարկել մեր արդար Դատին քարոզչութեան, հոն՝ ուր հնարաւոր է :

Այդ քարոզչութիւնը եթէ հնար է, արտասահմանի Հայութիւնը պէտք է կազմակերպէ հաւաքարար եւ ղեկավարուի միակ կեդրոնէ մը, բան մը՝ որուն հնարաւորութեան մասին չատ լաւատես չենք, նկատի ունենալով մեր ներքին ախտաժէտ մթնոլորտը :

Եթէ այս անկարելի է, կը մնայ որ ամէն բազմահայ գաղութ իր սեփական միջոցներով կատարէ հնարաւորը, իր ղեկավարուած ժողովուրդին ու պետական քաղաքական ու մտաւորական շրջանակներուն ծանօթացնելու համար Հայ Դատը :

Յարդ թերացանք մեր այս նուիրական պարտականութեան մէջ, մեր եռանդը վատնելով անպտուղ ձեռնարկներու եւ վէճերու մէջ :

Ինչ որ չըրինք երէկ՝ աշխատինք ընել այսօր, որովհետեւ վաղը՝ կրնայ ուշ ըլլալ ...:

« ԱՐՄԵՆԻԱ »

ԹՈՒՐՔԻԱ ՊԻՏԻ ԲՆԱՋՆՋՈՒԻ

ԿԱՄ ՀԻՒԼԷԱԿԱՆ ՌՈՒՄԲԵՐՈՎ ԿԱՄ ԱՆՕԹՈՒԹԵԱՄԲ

Պալսոյ թերթերուն մէջ կը կարդանք.—

Մոսկուայի ռատիօն, երէկ (12 Յուն – ուար), «ՆԱԹՕի յարձակողական ծրագիրները եւ Թուրքիա» խորագրով մեկնաբանութիւն մը կարդալով՝ այն կարծիքը յայտնեց թէ Ամերիկա դժուարու – թիւններու կ'առաջնորդէ Թուրքիան :

Մեկնաբանը մասնաւորաբար ըսաւ թէ ՆԱԹՕն եւ Ամերիկան պէտք եղած ձեւով չեն օժանդակեր Թուրքիոյ, այս պատճառով մեծ անօթութիւն մը ծայր տուած է արեւելեան նահանգներու մէջ, եւ թէ Թուրքիա կը չհագործուի միայն զին – ուորական նպատակներու համար :

Մեկնաբանը ծանրացաւ այն կէտին վրայ թէ Մորմ. Միութեան եւ արբանեակ – ներուն դէմ յարձակումը պիտի սկսի Թուրքիայէն, այդ պատճառով, աւելացուց, Թուրքիան առաջին թիրախը պիտի դառնայ հիւլէական զէնքերու :

Մեկնաբանը, եզրակացնելով, ուզեց որ Թուրքիա հրաժարի ՆԱԹՕի եւ Ամերիկացիներուն հետ իր զինակցութիւններէն եւ հետեւեալ ձեւով չարունակեց .

— « Թուրքիա կամ անօթութենէ եւ կամ հիւլէական փոշիներէ պիտի բնաջնջուի : Այս կացութենէն փրկուելու համար առեն չէ անցած դեռ» :

ԵՒ ԱՄԵՐԻԿԱ ԿՐ ՓՈՒԹԱՑ ՕԳՆՈՒԹԵԱՆ

Անդարայէն կը հաղորդեն թէ պետական նախարար Թուրհան Թէյդիօղլու երգրում մեկնեցաւ Արեւելքի չրջանին մէջ ուսումնասիրութիւններ կատարելու համար :

Միւս կողմէ, կը տեղեկացուի թէ Միացեալ Նահանգներու կառավարութիւնը յառաջիկայ օրերուն ստորագրելի համաձայնագրով մը ուժասուն հազար թոն ցորեն կը նուիրէ Թուրքիոյ Արեւելեան նահանգներու բնակչութեան՝ իբրեւ օժանդակութիւն : Թուրք կառավարութիւնը Միացեալ Նահանգներու կառավարութեան մօտ ձեռնարկ կատարած է, որպէս զի ապահովուի 1963 եւ 1964 տարիներու համար ցորենի մթերքը, եւ ուզած է որ առաջին առթիւ կէս միլիոն թոն հացահատիկի օժանդակութիւն մը կատարուի :

Ամերիկա այս մասին իր որոշումը կատարութեան պիտի հաղորդէ յառաջիկայ օրերուն :

ՄԻԹԻՆԿԷՆ ԵՏՔ

Նկարագրած էինք Թուրք ուսանողնե – րու հսկայ միթինկը Թրքայատուկ «քա – ղաքագրծութիւններով» : Այս մասին պաշ – տօնական անձերու կողմէ դժգոհութիւն յայտնուած ըլլալով, երեսաարդները *մամլոյ հաւաքոյթ մը ընելով ըսին թէ « Թուրքիոյ մէջ ընկերվարութիւնը եւ համայնավարութիւնը կը չփոթուին, երբ իրաւունք կը պահանջուի՝ անմիջապէս մուր կը քսեն, վախի հետեւանքով ընկե – րային իրաւունքները չեն իրականանար» :*

Այս հաւաքոյթը տեղի ունեցաւ լրա – գրողներու ընկերակցութեան չէնքին մէջ : Ուսանողական միութիւններու նախագահները դանդատեցան թէ «կ'ուզուի ըստեղծել այնպիսի մթնոլորտ մը, որպէս թէ երկրին մէջ համայնավարական զօրաւոր հոսանք մը գոյութիւն ունի», եւ իրեւ փրկութեան ճամբայ ցոյց տուին « ընկերային կարգուսարքի հաստատում մը » :

Միւս կողմէ, Թուրք Ուսանողական Ազգային Միութիւնը յայտարարեց թէ իր սկզբունքները « Աթաթիւրքճիութիւնը եւ ազգայնականութիւնն» են, աւելցնելով .

— « Զափաւորութեան կը հրաւիրենք այն Թերթերը, որոնք իրենց առաջին է – ջին վրայ խոշոր տառերով կուտան ան – դորրութիւնը խռովելու բնոյթ ունեցող լուրերը : Անխնայ թշնամի ենք համայ – նավարութեան եւ յեղափոխութեան, ո – րոնք Աթաթիւրքի սկզբունքներուն ան – հաշտ գաբշելի գաղափարներ են : Սա – կայն պիտի չհանդուրժենք որ խափանուի մեր իրապաշտ, անկեղծ մամուլը, որ կը հակի մեր ընկերային եւ տնտեսական խ – րականութիւններուն վրայ, սկզբունք ընդունած է երկիրը խաւարէն լոյսի , յե – տադիմութենէն յառաջադիմութեան հա – նել » :

Իր կարգին, ներքին նախարար Ա. Թո – փալօղլու յայտարարութիւն մը կատարեւ – լով յայտնեց .

—Փողոցներուն մէջ պատահով չի հետա – պնդուիր համայնավարը : Համայնա – վարներուն դէմ աշխատող պետական ոս – տիկանութիւն կայ : Այս աշխատանքները չեն հրապարակուիր :

ՇՈՒԷՏԱԿԱՆ ԹԵՐԹի մը համաձայն Մոլոթովի իր «յուշերը» յանձնած է գուլեցերական դրամատան մը : Ավեւնակա Տակպլատաք այս լուրը առած է վիէննայէն : Մոլոթով 1814 էջնոց թղթածրար մը յանձնած է Մոսկուա մեկնելէ առաջ : Նոյն Թերթը կ'ըսէ թէ այս յուշերը հաւասարակշռուած տեղեկագիր մըն է խորհրդային արտաքին քաղաքականութեան :

ԻՏԱԼԱՅի նախկին համայնավար մը՝ Ռիչէլ որ հիմա Սառակաթի կուսակցութեան անդամ է յայտնեց թէ Խրուշչեւ ըսած է որ Բերիան խեղդած են :

«ՓՐԱՒԻՏԱ» ծանր յարձակումներ կ'ընէ հակակուսակցական խմբակին վրայ եւ դլխաւորաբար Մոլոթովի : Կը պարզուի թէ Խրուշչեւ դժուարութեանց մէջ է :

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՐՈՒԱԾ մը կատարուած է Դոմինիկեան Հանրապետութեան մէջ : Բազմաթիւ զոհեր կան եւ մայրաքաղաքին վիճակը խառնակ է :

ԱԼԺԵՐԻՈՅ մէջ կացութիւնը միշտ ծանր է, Պոնի մէջ փլապթիֆ ռումբ մը պայթեցաւ Մահմետականներու բնակած չէնքի մը մէջ : 10 հոգի մեռան : Ամբոխ կատղած է եւ կ'այրէ ու թալանի կուտայ խանութները եւ կառքերը : Մահմետական – ականներ կացինով սպաննեցին 39 տարեկան եւրոպացի մը, դիակը կտոր կտոր ընելով : Այրեցին եւրոպացիի մը պատկանող իւղի գործատունը :

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՊՈՒԿԱՎՈՒԻ (Քոնկօ) եպիսկոպոսը վանականի մը բերնէն լսեց թէ Քաթանկա ղրկած իր Ս. Հոգիի առաքելութեան 19 անդամները մորթուած են : Վանականին նկարագրութիւնը սարսափելի է : Կրօնաւորները ձերբակալուած են Դեկտեմբեր 31ի պիչերը, պինուորներու խումբի մը կողմէ որ լաւ մը ծեծած է միսիոնարները այն պատրուակով թէ կը թունաւորեն միտքերը եւ երիտասարդութիւնը : Ապա սկսած է ջարդը եւ կտոր կտոր ընելէ ետք չարչարուած դիակները, ըստկըտած են մաս մը դեռ նետել, մնացեալ մասն ալ ... ուտել :

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՐԱՐՈՒԵՍՏԸ

—o—

Արուեստաներէն ամէնէն քիչ ուսումնա-
սիրուածը պարարուեստն է՝ չարժումնե-
րու արուեստը: Ցաւալի է այս պարա-
ղան, քանի որ պարարուեստը կարեւոր
դեր կատարած է եւ կը շարունակէ կա-
տարել ազգերու մշակոյթի կեանքին մէջ:
Պարարուեստը, անշուշտ, նպաստած է
միւս արուեստներու ծաղումին եւ զար-
գացումին:

Պարը աւելի լայն եւ լաւ ըմբռնուած էր
առեն մը, քան հիմա: Հին Յոյներուն
մօտ, օրինակ, «խորէյա», «կինեմատիկա»
կամ «օրխեստիկա» տարազները կը նչա-
նակէին ոչ միայն պար՝ այժմեան մեր
հասկացողութեամբ, այլեւ՝ դումարը
բազմաթիւ արուեստներու, որոնց մէջ
նաեւ պարը, մնջախաղը, արարողութիւ-
նը, լարախաղացութիւնը, մարմնամար-
զութիւնը, ձեռքերու խաղը, այսինքն՝ այն
չարժումը, որ պարին հետ կը ծառայէր
իբրեւ միջոց մարդոց հետ շփման մէջ
մտնելու:

Վարք ու բարքին, աշխատանքին, մար-
զանքի ընթացքին եւ ժողովրդական ար-
հեստավիտութեան ու ինքնագործ ար-
ուեստին մէջ մարդուն կատարած չար-
ժումները իրենց ամբողջ բազմազանու-
թեամբ կրնան յարատեւել եւ գիտական
ուսումնասիրութեան նիւթ դառնալ այն
պարագային միայն, երբ ասոնք արձա-
նագրուին:

Սակայն բոլոր ժողովուրդներուն մօտ
պարային արուեստը անընդհատ փոփո-
խութեան ենթարկուած է եւ որովհե-
տեւ չեն արձանագրուած, ուստի մոռա-
ցութեան մատնուած են: Մինչեւ այսօր
ալ ոչ մէկ ժողովուրդ ունի իր պարային
եւ թատերական արուեստին ամբողջական
եւ կատարեալ դիւանը, բան մը, որ չատ
կարեւոր է, ըլլայ պարարուեստը սորվե-
ցնելու, ըլլայ անոր պատմութիւնը ու-
սումնասիրելու համար:

Շատեր հասկցած են կինետիկ (չար-
ժումներու) կարեւորութիւնը եւ այդ
ուղղութեամբ փորձեր կատարած են:
Սակայն այդ փորձերուն հիմնական թե-
րութիւնը եղած է այն, որ ասոնց հեղի-
նակները իրենց ջանքերը սահմանափա-
կած են մեծ մասամբ հիւրանոցի (սալո-
ն) եւ երբեմն ալ դասական կամ յատ-
կանշական որեւէ պարի մը այս կամ
չարժումներու նկարագրութիւնով:

Մինչդեռ չարժումներու դրութեան
ընդհանուր համակարգը, որուն օգնու-
թեամբ կարելի է դրի առնել մարդուն
կատարած ամէն մէկ չարժումը՝ ըլլայ
կենցաղին թէ աշխատանքին մէջ, պատե-
բազմի դաշտին վրայ թէ մարզանքի ժա-
մանակ, պարի, օփերայի թէ թատրոնի
մէջ, կրնայ լուծել գիտական ձեւով հիմ-
նաւորուած չարժումներու դրութիւն ըս-
տեղծելու հարցը, դրութիւն, որ պարա-
յին եւ այլ չարժումներու այս կամ այն
ամբողջութիւնը վերցնելու պարագային
ոչ թէ կը մեռնի, այլ չարժման արուես-
տի զարգացումին հետ զուգահեռ ինքն ալ
օրինաչափ ձեւով կը զարգանայ:

Շարժումներու դրութեան այդ համա-
պարփակ եղանակին, այսինքն չարժում-
ներու դրութիւն մը ստեղծելու գործին
նուիրուած է Սրբուհի Լիսիցեան՝ 1930էն
ի վեր, երբ դինքը հրաւիրեցին Հայաս-
տան՝ երիտասարդ պարողներու խմբեր
պատրաստելու համար: Լիսիցեանի հե-
տազօտութիւնները պսակուեցան յաջո-
ղութեամբ: Արդարեւ, ստեղծեց չար-
ժումները դրի առնելու, այսինքն գծելու
բազմակողմանի համակարգ մը՝ ընդա-
մէնը 34 նշաններով, որոնց օգնութեամբ
կարելի է դրի առնել գեռնի վրայ եւ տա-
րածութեան մէջ՝ օդին մէջ, մարդուն
մարմնին ընդհնած ամէն մէկ դիրքը:
Այդ դրութեան համակարգին միջոցաւ Ս.
Լիսիցեան յաջողեցաւ ճշդրտօրէն արձա-
նագրել մարդուն կատարած ամէն մէկ
չարժումը, որուն չարքին եւ՝ պարինը,
ղեկավարներու խաղը, բեմական տեղա-
բաշխումները, դիմախաղը եւ նոյնիսկ մար-
դուն հիւանդագին չարժումները: Անհրա-
ժեշտ է նշել, որ մարդուն այդ հիւանդա-
գին չարժումներուն արձանագրութիւնը
կարեւոր նշանակութիւն ունի բժշկու-
թեան, ինչպէս նաեւ այլ գիտութիւննե-
րուն համար:

Շարժումները դրի առնելու այս համա-
կարգով հետզհետէ սկսան հետաքրք-
րուիլ Հայաստանէն դուրս գտնուող հիմ-
նարկութիւններն ալ: Խորհ. Միութեան
Գիտութիւններու Ակադեմիային մարզա-
բանութեան եւ ազգագրութեան հիմնար-
կութեան (Լենինկրատ) պատուէրով Ս.
Լիսիցեան դրեց «Շարժումնագրութիւն»
(կինետոգրաֆիա) դիրքը, որ 1940ին
լոյս ընծայեց Մոսկուայի «Իսկուսստո»
(«Արուեստ») հրատարակչականը: Ս.
Լիսիցեանի գործով հետաքրքրուեցան եւ
չահեկան գտան Ա. Միութեան Լեզուի եւ
մտածողութեան կաճառը, Գիտութիւն-
ներու ակադեմիայի Արեւելագիտութեան
կաճառին առընթեր գործող Կովկասա-
գէտներու Միութիւնը: Լենինկրատի օ-
փերայի եւ բեմապարի ակադեմական
թատրոնը (երեքն ալ Լենինկրատէն), Մոսկուայի մեծ թատրոնը: Վերջինս Ս.
Լիսիցեանի առաջարկեց բեմապարի ար-
ուեստագէտներուն սորվեցնել չարժում-
ներու դրութեան նոր եղանակը, որպէսզի
ասոնք յետագային կարողանան դրի առ-
նել թատրոնի բեմապարերը եւ օփերայի
ներկայացումները, սակայն այդ գործը
կէս մնաց երկրորդ համաշխարհային պա-
տերազմին պատճառով: Այնուհետեւ դը-
րեց «Ինչպէս հետաքրքրել եւ զբաղեցնել
*ժողովրդական պարերը» դիրքը:

Արդէն երեսուն տարի է, որ Սրբուհի
Լիսիցեան դրի կ'առնէ զանազան ազգե-
րու պարերը եւ այլ ներկայացումները:
Ինքն է որ պատրաստած է պարարուեստի
ուսումնասիրաններուն ծրագիրով նախա-
տեսուած դասական վարժութիւններուն
ամբողջ դասընթացքը: Առանձնայատուկ
ուշադրութեամբ կը հետեւի հայկական
պարերուն եւ թատերական ներկայա-
ցումներուն: Արդէն դրի առած է աւելի
քան 650 հայկական եւ 50 քրտական մե-
նապարերը եւ խմբապարերը, բազմաթիւ
ժողովրդական թատերախաղեր:

Հայաստանի Գիտութիւններու Ակադե-
միայի Հնագիտութեան եւ ազգագրու-
թեան հիմնարկութեան առընթեր ներկա-
յիս խումբ մը սորվողներ կ'ուսումնասի-
րեն չարժումները դրի առնելու Ս. Լի-
սիցեանի եղանակը:

Մեր մատնանշած երկարամեայ հետա-
զօտութիւններուն եւ գործնական աշխա-
տանքներուն հիման վրայ Սրբուհի Լի-
սիցեան դրած է մեծածաւալ գիտական
աշխատութիւն մը՝ «Հայ ժողովրդի հը-
նագոյն պարերը եւ թատերական ներկա-
յացումները», որ կազմուած է չորս հա-
տորներէ: Այդ աշխատութեան առաջին
հատորը, որ 1958ի աշնան լոյս տեսաւ
Հայաստանի Գիտութիւններու Ակադե-
միային հրատարակութեամբ, կ'ընդգրկէ
ներածութիւնը, ուր չարադրուած են
տուեալ աշխատութեան ընդհանուր դը-
րոյթները, ինչպէս նաեւ՝ որոշ տեսակի
հայկական խմբապարերու՝ «Մանդր Գե-
ոնդ», «Վեր – վեր», «Քոչարի», վերլուս-
ծութեան նուիրուած չորս գլուխները:
Առաջին հատորին մէջ հեղինակը զետե-
ղած է նաեւ իր «Շարժումնագրութիւն»
աշխատութեան մշակումը: Այստեղ բեր-
ուած պարերուն նախապիծերը (փլաննե-
րը) կը հատատեն Ս. Լիսիցեանի այն
տեսակէտը, թէ հայ ժողովուրդին, ինչ-
պէս նաեւ անոր կազմին մէջ մտնող հին
ցեղերու միջավայրին մէջ պարային եւ
կիրառական արուեստները հինէն ի վեր
մօտիկ կապ ունեցած են ու իրարու մէջ
համադրուած են:

Տպագրութեան մէջ եղող երկրորդ հա-
տորը կ'ընդգրկէ հեղինակին կողմէ հա-
ւաքուած միւս բոլոր հայկական խմբա-
պարերու նկարագիրները, խմբապարեր,
որոնցմէ շատերը ոչ միայն 19րդ դարէն
ժառանգութիւն ինկած են, այլեւ՝ միջին
եւ հնագոյն դարերէն: Այդ պարերը խս-
կական ազգային ճեւի պարեր են եւ կր-
նան հարուստ նիւթ հայթայթել հայկա-
կան պարարուեստագէտներուն:

Ս. Լիսիցեանի այս գործին երրորդ
հատորը նուիրուած պիտի ըլլայ հայկա-
կան մենապարերուն, զուգապարերուն,
ինչպէս նաեւ՝ թատերական ներկայա-
ցումներուն:

Աչխատութեան չորրորդ հատորին մէջ
տեղ պիտի գտնեն Հայերուն ամենօրեայ
ծոներուն եւ տարբեր արարողութիւննե-
րուն, ինչպէս նաեւ անոնց ուսումնասի-
րութեան վերաբերող նիւթեր:

Հայ լեզուաբանութեան համար անգնա-
հատելի օգտակարութիւն ունին Սրբուհի
Լիսիցեանի հաւաքագրած պարային ու
թատերական հայերէն տարազները:

Առաջին հատորին մէջ զետեղուած են
Հայաստանի զանազան շրջաններու ազ-
գային տարազներուն բազմաթիւ պատկե-
րազարդումները: Մնացեալ հատորները
նոյնպէս պիտի պատկերազարդուին: Ի-
րաքանչիւր հատորին մէջ ուսումնասի-
րութեան առարկայ դարձած հայկական
պարերուին եղանակին հետ պիտի տրուի
նաեւ անոր բնաբանը՝ հայերէն եւ ռու-
սերէն:

Ցառաջիկային՝ Երեւանի գեղարուես-
տա – թատերական հիմնարկութեան մէջ
կը սկսի չարժումները դրի առնելու Ս.
Լիսիցեանի մշակած համակարգի ուսու-
ցումը: Այդ գործին, հասկնալի է, նա-
մանուն կ'ըլլան նաեւ Երեւանի պարար-
ուեստին ուսումնարանը, ինչպէս նաեւ՝
ժողովրդական ստեղծագործութեան տու-
նը:

Սրբուհի Լիսիցեանի գիտական աշխա-
տութիւնները մեծ ծառայութիւն պիտի
մատուցանեն հայկական պարային եւ
թատերական արուեստին, ինչպէս նաեւ՝
արուեստագիտութեան, թատերագիտու-
թեան եւ ազգագրութեան զարգացումին
համար:

Զ. ՄՈՒՐԱՏԵԱՆ

1961 Ի ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ԿԱՐԵՒՈՐԱԳՈՑՆ ԴԷՊՔԵՐԸ

—o—

ՅՈՒՆՈՒԱՐ

8·— Ալժերիոյ մէջ, ալժերական հարցի լուծման համար կատարուած հանրա-քուէն որ կրնի յաղթանակին յանգեցնել:

14·— Քոնկոյի մէջ կրակը դադրեցնելու համաձայնութիւն գոյացաւ:

20·— Ճոն Քենըտի ստանձնեց Միացեալ Նահանգներու նախագահի պարտականութիւնները:

24·— Փորթուկալեան «Սանթա Մարիա» նաւուն վրայ տգստամբութիւն ծագեցաւ նախագահ Սալազարի դէմ:

31·— Ամերիկացիները հրթիռով կապիկ մը արձակեցին դէպի Անդրգետ:

— Սփոփաք հրաժարեցաւ Ատլանտեան Ուխտին ընդհ. քարտուղարի պաշտօնէն:

ՓԵՏՐՈՒԱՐ

2·— Փորթուկալեան «Սանթա Մարիա» նաւը Պրազիլիոյ իշխանութեանց անձնատուր եղաւ եւ ըմբոստութիւնը վերջ գտաւ:

12·— Խորհրդ. Միութիւնը անջրպետային ինքնաւար դիտարան մը դրկեց դէպի Արուսեակ:

13·— Քոնկոյի դեկավար Փաթրիս Լումումպա եւ իր երկու գործակիցները ըսպաննուեցան Քաթանկայի մէջ:

15·— Կիպրոսի Ներկայացուցչական Ժողովը որոշեց որ Կիպրոս մտնէ Բրիտանական Համագործակցութեան մէջ:

ՄԱՐՏ

5·— Արեւմտեան Գերմանիոյ մարքին ամբողջ դասընթացքը: Առանձնայատուկ ուշադրութեամբ կը հետեւի հայկական պարերուն եւ թատերական ներկայացումներուն: Արդէն դրի առած է աւելի քան 650 հայկական եւ 50 քրտական մենապարերը եւ խմբապարերը, բազմաթիւ ժողովրդական թատերախաղեր:

Հայաստանի Գիտութիւններու Ակադեմիայի Հնագիտութեան եւ ազգագրութեան հիմնարկութեան առընթեր ներկայիս խումբ մը սորվողներ կ'ուսումնասիրեն չարժումները դրի առնելու Ս. Լիսիցեանի եղանակը:

Մեր մատնանշած երկարամեայ հետազօտութիւններուն եւ գործնական աշխատանքներուն հիման վրայ Սրբուհի Լիսիցեան դրած է մեծածաւալ գիտական աշխատութիւն մը՝ «Հայ ժողովրդի հնագոյն պարերը եւ թատերական ներկայացումները», որ կազմուած է չորս հատորներէ: Այդ աշխատութեան առաջին հատորը, որ 1958ի աշնան լոյս տեսաւ Հայաստանի Գիտութիւններու Ակադեմիային հրատարակութեամբ, կ'ընդգրկէ ներածութիւնը, ուր չարադրուած են տուեալ աշխատութեան ընդհանուր դրոյթները, ինչպէս նաեւ՝ որոշ տեսակի հայկական խմբապարերու՝ «Մանդր Գեոնդ», «Վեր – վեր», «Քոչարի», վերլուծութեան նուիրուած չորս գլուխները: Առաջին հատորին մէջ հեղինակը զետեղած է նաեւ իր «Շարժումնագրութիւն» աշխատութեան մշակումը: Այստեղ բերուած պարերուն նախապիծերը (փլաններ) կը հաստատեն Ս. Լիսիցեանի այն տեսակէտը, թէ հայ ժողովուրդին, ինչպէս նաեւ անոր կազմին մէջ մտնող հին ցեղերու միջավայրին մէջ պարային եւ կիրառական արուեստները հինէն ի վեր մօտիկ կապ ունեցած են ու իրարու մէջ համադրուած են:

Տպագրութեան մէջ եղող երկրորդ հատորը կ'ընդգրկէ հեղինակին կողմէ հաւաքուած միւս բոլոր հայկական խմբապարերու նկարագիրները, խմբապարեր, որոնցմէ շատերը ոչ միայն 19րդ դարէն ժառանգութիւն ինկած են, այլեւ՝ միջին եւ հնագոյն դարերէն: Այդ պարերը խսկական ազգային ճեւի պարեր են եւ կրնան հարուստ նիւթ հայթայթել հայկական պարարուեստագէտներուն:

Ս. Լիսիցեանի այս գործին երրորդ հատորը նուիրուած պիտի ըլլայ հայկական մենապարերուն, զուգապարերուն, ինչպէս նաեւ՝ թատերական ներկայացումներուն:

Աչխատութեան չորրորդ հատորին մէջ տեղ պիտի գտնեն Հայերուն ամենօրեայ ծոներուն եւ տարբեր արարողութիւններուն, ինչպէս նաեւ անոնց ուսումնասիրութեան վերաբերող նիւթեր:

Հայ լեզուաբանութեան համար անգնահատելի օգտակարութիւն ունին Սրբուհի Լիսիցեանի հաւաքագրած պարային ու թատերական հայերէն տարազները:

Առաջին հատորին մէջ զետեղուած են Հայաստանի զանազան շրջաններու ազգային տարազներուն բազմաթիւ պատկերազարդումները: Մնացեալ հատորները նոյնպէս պիտի պատկերազարդուին: Իրաքանչիւր հատորին մէջ ուսումնասիրութեան առարկայ դարձած հայկական պարերուին եղանակին հետ պիտի տրուի նաեւ անոր բնաբանը՝ հայերէն եւ ռուսերէն:

Ցառաջիկային՝ Երեւանի գեղարուեստա – թատերական հիմնարկութեան մէջ կը սկսի չարժումները դրի առնելու Ս. Լիսիցեանի մշակած համակարգի ուսուցումը: Այդ գործին, հասկնալի է, նամանուն կ'ըլլան նաեւ Երեւանի պարարուեստին ուսումնարանը, ինչպէս նաեւ՝ ժողովրդական ստեղծագործութեան տունը:

Սրբուհի Լիսիցեանի գիտական աշխատութիւնները մեծ ծառայութիւն պիտի մատուցանեն հայկական պարային եւ թատերական արուեստին, ինչպէս նաեւ՝ արուեստագիտութեան, թատերագիտութեան եւ ազգագրութեան զարգացումին համար:

Զ. ՄՈՒՐԱՏԵԱՆ

ԱՄԲԱՍՏԱՆԵԱԼ ՍԹԱԼԻՆ, ՈՏՔԻ՛

—o—

Կամենեւ եւ Ձերժինսքի նախազգացումը ունեցա՞ն արդեօք այդ պահուն, թէ երբեք ալ զոհ պիտի դառնան Սթալինի վրիժառութեան:

Լենինի հետ բոլշեւիկ կուսակցութիւնը հիմնողներէն, յեղափոխութիւնը կազմակերպողներէն, խորհրդային վարչակարգը ստեղծող «հին պահակազունդ»ին անդամներէն գրեթէ ոչ ոք ազատեցաւ Սթալինի ձեռքէն: Քանի մը հոգին մեռան բնական մահով: Շատ փոքր թիւ մը հրաժարեցաւ: Բայց մնացեալ բոլորը, որ կը կազմեն ջախջախիչ մեծամասնութիւն, Սթալինի կողմէ «լիկուիդացիայի» ենթարկուեցան:

Վախ ունէր, որ ասոնցմէ մէկը իշխանութիւնը իր ձեռքէն կը խլէ՞: Հաւանական է: Բայց որոշ է, միւս կողմէ, որ իր հիւանդագին անապահովութիւնը չէր հանգուցեալ կամ իրմէ աւելի հեղինակութիւն ունեցող մարդոց գոյութեան: Ասոր լաւագոյն փաստը այն է, որ չբաւականացաւ զանոնք միայն մեռցնելով. այլ բոլոր գրքերու մէջէն վերցնել տուաւ անոնց անունները, կարծէք թնաւ գոյութիւն ունեցած չըլլային: Որոշ է նաեւ, որ Թրոցքիի, Զինովիեւի եւ Բուխարինի նմանները կ'ատէր ալ, քանի որ բազմաթիւ անպամներ զգացնել տը-ւած էին իր մտային կարողութեանց չափազանց սահմանափակ ըլլալը:

Այո, կ'ատէր զանոնք: Ոչ մէկ առեն կարեւորութիւն ընծայած է դաշափարի, յեղափոխականի, պայքարի եղբայրակցութեան:

Լենինի օրով Պոլիտբիւրօն բաղկացած էր ութ անդամներէ. Լենին, Թրոցքի, Զինովիեւ, Կամենեւ, Սթալին, Իլիչով, Բուխարին եւ Թոմսքի:

Ասոնցմէ միայն Լենին եւ Սթալին մեռան բնական մահով: Թրոցքի սպաննուեցաւ Սթալինի հրահանգով: Զինովիեւ, Կամենեւ, Իլիչով, Բուխարին դատուեցան որպէս դաւաճան եւ մահուամբ պատժուեցան՝ Սթալինի հրահանգով: Թոմսքի գերծ մնաց այս վարկաբեկումէն, որովհետեւ դատավարութենէն առաջ ինքնասպանութիւնը գործեց բանտի իր խցիկին մէջ:

Նոյնպէս, 1917ի Հոկտեմբերեան յեղափոխութեան քառասնեակ անդամներէն տասնըհինգը որպէս դաւաճան մահուան դատապարտուեցան՝ Սթալինի հրահանգով: 1917 Նոյեմբեր 7ի յեղափոխութենէն յետոյ կառավարութիւնը կազմող 15 ժողովուրդի կոմիսարները (նախարար) նմանապէս մահուան դատապարտուեցան որպէս դաւաճան:

ԹՐՈՑՔԻ ԱԶԱՏԵՑԱՒ, ԲԱՅՑ,

11 ՏԱՐԻ ՎԵՐՋԸ...

Ասոնց մէջ, առաջին գործէ հետացուղը՝ Թրոցքի, ամէնէն բախտաւորը եղաւ, քանի որ այդ առեն, Սթալին տակաւին ամենակարող տէրը չէր, եւ «քաղաքական հաշուեյարդարը» տակաւին հոմանիշ դարձած չէր «ֆիզիքական հաշուեհարդար»ի, «քաղաքական դիակ»ը պարզ «դիակ»ի չէր վերածուած ինքնաբերաբար:

Թրոցքի քաղաքական պարտութիւն կրեց 1924ին, կուսակցութենէն վտարուեցաւ 1927ին, «Մոսկուայէն հետացուեցաւ» (այսինքն՝ Սիպերիա աքսորուեցաւ) 1928ին: Բայց ի մեծ բարեբախտութիւն իրեն, աչալուրջ պահապաններու հսկողութեան տակ առաջնորդուեցաւ մինչեւ Թրքական սահմանագիծը եւ վտարուեցաւ խորհրդային հողէն՝ 1929ին: Այս արտաքսումին չնորհիւ, անպատուութենէ ազատեց իր անունն ու դինքը Պոլիտբիւրոյէն հանելու գործին մէջ Սթալինի օժանդակող իր ընկերներէն քանի մը տարի աւելի ապրեցաւ:

Սթալին երբեք չմոռցաւ այս որսը, որ ատիպուած ձգած էր որ փախչի: Ամբողջ տասներկու տարի, հանգիստ չձգեց Թրոցքին. իր ամէնէն ճարպիկ լրտեսները, ամէնէն վարպետ մարդասպանները Թրոցքիին յատկացուց: Թրոցքիի պաւակներէն երկուքը, որոնք Ա. Միութիւն մը նացած էին՝ Սիպերիա ուղարկուեցան եւ անհետացան: Աւազ տղան, Լէոն Սեդով, իր հօր հետ բռնած էր աքսորի ճամբան: Նիսի մէկ քլինիքին մէջ կուրացիքի գործողութեան մը ընթացքին մեռաւ. քլինիկին տէրերը կասկածելի Ռուսեր էին:

Բայց Սթալինին ուղածը Թրոցքիի արիւնն է:

1940ին, Թրոցքի կ'ապրէր Մեքսիքոյի արուարձաններէն մէկուն մէջ՝ կնոջը եւ բազմաթիւ քարտուղարներու հետ: Աչխարհի բոլոր լեզուներով թարգմանուած իր գրքերուն չնորհիւ, նիւթապէս ապահով կեանք մը ունէր, բայց չատ զգուշ եւ չըշահայեաց էր: Անգամ մը, հրաչքով ազատած էին ինք ու կինը՝ իրենց ննջասենեակին վրայ քաչուած հարիւրէ աւելի պնդակի հարուածներէն:

Զգուշ է, բայց կասկածի ոչ մէկ զգացում ունի քանի մը չաբաթէ ի վեր յաճախ իր մօտը եկող երիտասարդին մասին, որ ինքզինք կը ներկայացնէ որպէս Թրոցքիի ջերմ հետեւողներէն մէկը:

Ֆրանք Ձաքսոն, ըստ սովորականին, կը ներկայանայ Թրոցքիի: Վերաբերուն թեւին վրայ պահած էր:

(19 Շար.)

ղինը հինգ առ հարիւր զեղչուեցաւ առ – լարին համեմատութեամբ :

8·— Լոնտոնի մէջ սկսաւ Հասարակա– պետութեան վարչապետներու խորհրդա– ժողովը :

13·— Կիպրոս ընդունուեցաւ Բրիտա – նական Հասարակապետութեան մէջ :

15·— Հարաւային Ափրիկեան Միու – թիւնը հեռացաւ Բրիտանական Հասարա– կապետութենէն ցեղային խարականու – թեան հարցին պատճառով :

ԱՊՐԻԼ

11·— Երուսաղէմի մէջ սկսաւ Ատոլֆ Այխմանի դատաւարութիւնը :

12·— Իուսերը դէպի Անդրպետ արձա– կեցին Եուրի Կակարինը, որ ողջ – ա – ռողջ երկիրը վերադարձաւ մէկ ժամ 48 վայրկեան թռիչք կատարելէ յետոյ :

15·— Քուպայի մէջ, Ֆիտէլ Քաստրո– յի դէմ յեղափոխութիւն պայթեցաւ :

19·— Քուպայի յեղափոխութիւնը ղես– պուեցաւ :

22·— Ալժերիոյ մէջ, ոտ Կոլի դէմ յե– ղափոխութիւն պայթեցաւ :

24·— Տը Կոլ ամբողջ Ֆրանսայի եւ Ալժերիոյ մէջ պաշարման վիճակ յայ – տարարեց :

25· — Ալժերիոյ յեղափոխութիւնը քայքայուեցաւ :

ՄԱՅԻՍ

5·— Միացեալ Նահանգները դէպի Ան – ջրպետ արձակեցին փոխ – նաւապետ Ալ– լէն Շիփըրտը, որ քառորդ ժամ թռիչք կատարելէ յետոյ, վերադարձաւ ողջ – առողջ :

15·— Հարաւային Քորէայի կառավա – րութիւնը տապալեցաւ բանակի պետա – կան հարուածով :

26·— Ալժերիոյ մէջ ահաբեկչութեան նոր հոսանք մը սկսաւ :

ՅՈՒՆԻՍ

1·— Դոմինիկեան Հանրապետութեան բռնապետ Թրուխիլօ սպանուեցաւ :

3·— Նախագահ Քենըտի եւ վարչապետ Խրուշչեւ Վիէննայի մէջ հանդիպում ու – նեցան :

9·— Խորհրդ· Միութեան եւ Ալպանիոյ յարաբերութիւնները պաղեցան :

16·— Նախագահ Քենըտի մերժեց կո – րիպային փորձերու դադրեցման խօսակ– ցութիւնները ջինաթափութեան բանակ – ցութեանց հետ խառնելու Խրուշչեւի ա– ռաջարկը :

— Միացեալ Նահանգները արձակեցին « Տիսքովըրըր 23» արբանեակը :

26·— Իրաքի վարչապետ զօրավար Քա– սըմ Քուվէյթի իշխանապետութիւնը ի – րաքի կցուած յայտարարեց :

ՅՈՒԼԻՍ

1·— Անգլիա դինեալ ուժեր ցամաքա – հանեց Քուվէյթ՝ որ Մ.Ա.Կին դիմեց Իրա– քի ներխուժման սպառնալիքին դէմ :

2·— Ամերիկացի դրագէտ էրնէսթ Հե– մինկուէյ մեռաւ :

13·— Եուկոսլաւիոյ արտաքին գործոց նախարար Փոկովիչ Մոսկուա գնաց խո– սակցութեանց համար :

19·— Ֆրանսական ուժեր պաշտպանո – ւական գործողութեանց դիմեցին Պիղեր– թի մէջ :

21·— Ամերիկա դէպի Անդրպետ արձա– կեց երկրորդ աստղանաւորդը՝ Վիրճիլ Կրահամը :

— Պիղերթ վերաւորեցաւ Ֆրանսական ուժերու կողմէ :

31·— Վարչապետ Մաքմիլլըն Խորհրդ – դարանին առջեւ յայտարարեց թէ Մեծն Բրիտանիա Եւրոպական Միացեալ Շու – կայի մէջ ընդունուելու համար դիմում կատարած է :

ՕԳՈՍՏՈՍ

6·— Խորհրդ· Միութիւնը դէպի Անդր– պետ արձակեց՝ կերման Թիթովը որ եր– կիրը վերադարձաւ 25 ժամ յետոյ :

11·— Խրուշչեւ Մոսկուայի մէջ ճառ մը խօսելով՝ սպառնաց կործանել Ցու – նաստանը, առանց Ակրոպոլն իսկ խնա – յելու :

13·— Խորհրդ· Միութիւնը Արեւելեան Պերլինէն Արեւմտեան Պերլին անցքի ու– դիները փակեց :

19·— Միացեալ Նահանգներու փոխ նախագահ Ճոնսըն Արեւմտեան Պերլին այցելեց իրրեւ նախագահ Քենըտիի պատգամաւորը եւ զերման ժողովուրդին հաւատացեց թէ՝ Միացեալ Նահանգները որոշած են պաշտպանել Պերլինի զոյա – վիճակը :

26·— Պիղերթի հարցին շուրջ, Մ.Ա.Կի Ընդհանուր Ժողովին մէջ, Ֆրանսա պար– տուեցաւ :

(Մնացեալը յաջորդով)

ՀԱՅԱՍՏԱՆ

ԸՆԴԱՐՁԱԿԵԼ ԵՐԿԱԹՈՒՂԻՆԵՐՈՒ ՅԱՆՁԸ

Հաղորդակցութեան նախարարու տար– տարապետ Ա. Սահրադեան, յօդուածով մը անհրաժեշտ կը դտնէ Հայաստանի եր– կաթուղիներու ցանցին ընդարձակումը : Կուտայ պատճառները եւ կը նկարագ – րէ նոր օրէնսական առաջարկները, որոնք ե– թէ իրագործուին, Հայաստան կը դառ – նայ երկաթուղիներու լայն ցանցով պատուած երկիր մը :

Ահաւասիկ Ա. Սահրադեանի առաջարկ– ները :

Արփա գետին ջուրը Սեւան չհասնելու աշ– խատանքները, որոնք պիտի սկսին 1963– ին եւ պիտի աւարտին 4 – 5 տարուան ընթացքին, չատ դժուար գործ մըն է : Արդարեւ, պէտք է չինուին քանի մը տասնեակ քիլոմէթը երկարութեամբ փա– պուղիներ, ջրամբարներ եւ աւազաններ : Այս աշխատանքներուն համար անհրա – ժեշտ է տեղափոխել մեծ քանակութեամբ չինանիւթ եւ այլ ապրանքներ : Այս պատճառով ալ անհրաժեշտ է Սեւանէն Մարտունի գացող երկաթուղագիծ մը հաստատել, որ ի հարկին կարելի է եր – կարել մինչեւ Բասարդեչար՝ Զօղի ոսկիի տանքերը, քանի որ հոն ալ մեծ տարո – դութեամբ աշխատանքներ պիտի կատար– ուին :

Աւելորդ է ըսել թէ Սեւան – Կամօ · Մարտունի – Բասարդեչար – Զօղ երկա– թուղագիծը իր բարերար դերը պիտի ու– նենայ տեղւոյն չրջաններուն արդիւնա – բերութեան եւ դիւղատնտեսութեան վե – րայ :

Որատան դետին վրայ երեք Ջրելեկտրա– կայաններուն եւ Ջրամբարներուն չինու – թեան ծրագրին մէջ կարելի է մտցնել Ղափան – Տաթեւ – Սիսիան – Բաղարչայ երկաթուղագծին չինարարութիւնը :

Ցառաջիկայ չորս – հինգ տարիներու ընթացքին Ջերմուկը պիտի դառնայ Խոր– հրդային Միութեան օրինակելի առողջա– րաններէն մէկը, ուստի անհրաժեշտ է, որ մինչեւ Ջերմուկ գացող երկաթուղա – գիծ մըն ալ չինուի, որ իր օդուտը պիտի ունենայ Եղեգնաձորի, Աղիպթեկովի եւ մօտիկ այլ չրջաններուն համար :

Հայաստանի գլխաւոր գարկերակները կրնան ըլլալ Երեւան – Հրազդան – Մեղ– րաձոր – Համզաչիման – Դիլիջան – Իջե– ւան – Ախտաճա եւ Համզաչիման – Կի– րովական երկաթուղագիծերը, որոնց չի– նութեան մասին յաճախ կը խօսուի եւ կը գրուի երկար տարիներէ ի վեր :

Ծանօթ է, որ Արփային ջուրը Սեւան տանող փապուղիին եւ այլ աշխատանք – ներուն համար պէտք է մեծ քանակու – թեամբ չինանիւթ բերուի գանազան վայ– րերէ, եւ չոգեկառքը տեղւոյնն ծառայ – պատրաստ պիտի կատարէ Աղստաճա – Նաւթլուղ – Լենինական – Երեւան – Բա– ասրդեչար գիծով, որ համեմատած Աղս– տաճա – Համզաչիման – Հրազդան – Բա– ասրդեչար գիծին հետ, երկու անգամ ա– ւելի երկար է : Հետեւաբար, Հրազդան – Աղստաճա եւ Համզաչիման – Կիրովական երկաթուղագիծերը պէտք է չինուին յա– ջորդ քանի մը տարիներու ընթացքին : Այս գիծերուն չնորհիւ կարելի կը դառ– նայ Ալավերդիի հանքանիւթերը Ալա – վերդի – Կիրովական – Համզաչիման – Հրազդան գիծով բերել Հրազդանի մետա– ղաձուլարանը : Այս ճամբան համեմա – տած Ալավերդի – Լենինական – Երեւան – Հրազդան գիծին հետ, մօտ 124 քիլոմէթր աւելի կարճ պիտի ըլլայ :

Այս գիծերուն չնորհիւ Լուսաւան, Սեւան եւ Հանքաւան արդիւնաբերական վայրերը պիտի կապուին Կիրովականի հետ : Այս գիծը, այսինքն Կիրովական – Համզաչիման – Հրազդան երկաթուղին, համեմատած Հրազդան – Երեւան – Լե – նինական – Կիրովական գոյութիւն ունե– ցող երկաթուղագիծին հետ, կարճ պիտի ըլլայ 240 քիլոմէթրով :

ԻԼԻԱ ԷՀՐԵՆՊՈՒՐԳԻ

ՆՈՐ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Մոսկուա դումարուած գրական հա – ւաքոյթի մը ընթացքին, Խորհրդային Թիւ մէկ գրագէտը՝ Իլիա Էհրեմպուրգ խօսք առնելով յայտարարած է թէ՝ «պի– տի աշխատի վերյարուցանել վիշտակը խորհրդային գրողներու եւ արուեստա – գէտներու, հիմա որ արդէն վերյարուց– ուած են զօրաւարներ » :

Սրահին մէջ գտնուղներէն մէկը հար– ցուցած է գրագէտին.

— Ի՞նչպէս յաջողեցաք ցարդ ողջ մը– նալ ...

Իլիա Էհրեմպուրգ պատասխանած է .

— Դժուար է ըսելը, բայց կը խորհիմ թէ մեծ վիճակահանութեան պէս բան մը եղաւ առիկա ուր ես ունէի չահող թիւը :

Ակնարկելով 1930ի մեծ «մաքրագոր – ծումներուն» : գրագէտը յայտարարած է .

— Այդ թուականին մենք (գրողները ը– սել կ'ուզէի) չատ մեկուսացած կեանք մը կ'ապրէինք Մ. Միութեան մէջ : Նոյնիսկ չէինք կրնար խօսիլ մտերիմ բարեկամնե– րու հետ : Բոլորս ալ մեղսակիցներն է – ինք մեծ դաւադրութեան մը ... մեր լը– ռութեամբ :

Այնուհետեւ, Իլիա Էհրեմպուրգ յայ – տարարած է թէ՝ պիտի պատասխանէ մի– այն այն հարցումներուն որոնք առընչու – թիւն ունին իր վերջին հատորին հետ եւ պիտի չխօսի միջազգային հարցերու մա– սին, ու աւելցուցած է .

— Պիտի հարցնէի՞ն Ջեխովին Քենըտիի կառավարութեան մասին...

Եղած հարցումներէն մէկը՝ չափազանց հեգնական .—

— Ձեզի բիւր տեղեկութիւններ կան, հարց տուած է ներկայ մը, որոնք կը հատուա – ւեն Փասթերնաքի մահը, եւ սակայն այդ մահը պաշտօնապէս չէ յայտարարուած :

Իլիա Էհրեմպուրգ դիտել տուած է թէ 1960ին «Տոքթոր Ժիվակո»ի հեղինակին մասին երեւցած էր չորս տողնոց կարճ ծանուցում մը, եւ սակայն, մեծ զրոյնե– րը ներկայ չէին եղած անոր թաղումին , մինչդեռ «Ռուս մեծ գրող մը մեռած էր», աւելցուցած է Իլիա Էհրեմպուրգ :

Այս վերջին խօսքերը յառաջացուցած են ծափահարութիւններու տարափ մը , մինչ Իլիա Էհրեմպուրգ գոչած է .

— Ինչո՞ւ ծափահարել հիմա : Պէտք էր դիտնայիք ընտրել ծափահարելու պատշաճ պահը ...

Եւ ապա, չարունակած է .

— Այն ձեւը՝ որով ծանուցուեցաւ Փասթերնաքի մահը երբեք արժանավայել չէր անոր անձին :

Այնուհետեւ, Իլիա Էհրեմպուրգ մեղա– դրած է Խորհրդային գրողները, որ թէ– կունք չեն հանդիսացած Փասթերնաքի , եւ աւելցուցած .

— Ասիկա ապրելակերպ մըն է որ, բա– րեբախտաբար անհետանալու վրայ է ...

«ԾԱՌԱՋ»Ի ԹԵՐԹՕՆԸ (138)

ԹԻԱՊԱՐՏԸ

(ՎԷՊ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿԵԱՆՔԷ)

ԳՐԵՑ

ԱՐՄԷՆ ՇԻՏԱՆԵԱՆ

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

— Պիւռօն ըլլայ Արեւելեանը, ըլլայ Ա– րեւմտեանը, ներքին հաղորդակցութեան մէջ է երկրին բոլոր մասնաճիւղերուն հետ :

— Ինչո՞ւ համար տեղի ունեցաւ ձեր մէջ այս տեսակ կուսակցական բաժանում մը, ընդմիջեց Ներսէս Արծրունին :

— Պատճառը կեղրոնական կուսակցու– թեան մը պլուխը գտնուող Պետին ըն – թացքն էր որ անտանելի եղած էր :

— Չէ՞ որ այդ մարդը դարձեալ կու – սակցութեան մը պլուխը կը գտնուի եւ ա– հագին թուով համախոհներ ունի :

— Այո, ճշմարիտ է առիկա... բայց պիտացէք որ չատ չի տեւեր՝ պիտի տապալի իր բարձրութենէն վար :

— Մինակ այդ մարդուն համա՞ր բաժ– նուեցաք :

— Գլխաւոր պատճառը ան էր· յետոյ՝ կեղրոնական կուսակցութիւն մը պար – զապէս մխպետներ ստեղծելու պիտի ծառայէ : Քանի որ ազատութեան ուղին նետուեցանք, քանի որ մեր անհատական իրաւունքը բռնարարող կառավարութեան մը դէմ մաքառելու հարկադրուեցանք , ինչո՞ւ համար Մուրթաֆա. Հալիմ ու Համիտ փաչաներու տեղ Միհրան, Վա – հան ու Սուրէն իշխաններ ունենալու աչ – խատին, որոնք մեր արտաքին մարմնոյն վրայ փակչելու տեղ, մեր ներքին պո – յութեան մէջ պիտի մտնեն ու այնպէս մեր արիւնը պիտի ծծեն :

— Ապակեղրոնացեալ կուսակցութիւն մը պիտի յաջողի՞ հիմնել այս տեսակ ա– զատ կառավարութիւն մը .

— Ամենայն վստահութեամբ :

— Շատ աղէկ, ի՞նչ պիտի ընէ ան ա– տեն ձեր հակառակորդ կուսակցութիւնը :

— Ժամանակ մը պիտի քաչկռտէ իր դոյութիւնը... մինչեւ որ ժողովուրդը հասկնայ մեր երկուքնուս մէջ տիրող ա – հագին տարբերութիւնն ու վստահաբար մեր եռեւէն գայ :

— Երբ դուք այսպէս մտածէք՝ պարոն, դիտէ՞ք թէ Համիտն ալ ի՞նչ կը մտածէ :

Երիտասարդին մարմինը փուշ փուշ ե– ղաւ ...:

— Ըստ իս, այդ կերպ մտածելու ժա – մանակ չէ, յարեց Ներսէս Արծրունին խռովայոյզ ձայնով մը : Քիւրտեր, որոնք մոլեռանդութեան անարդ ոգւով մեզի դէմ կը զրդռուին, առանք ծրագիրէ չեն հասկնար ... առանք կեղրոնացում եւ ապակեղրոնացում բառերու տարբերու – թիւնը չեն գտներ... : Միեւնոյն առեն , պիտացէք որ թշնամին՝ որուն համար կը պատրաստուինք, չի սպասեր մեզի ,լսեր թէ հայերը թող կուսակցական ծրագիր– ներու ուղղութիւնը կանոնաւորեն ու այն– պէս մեր դէմը գան : Ոչ : Թշնամին կը քալէ... կը յառաջանայ ... մինչեւ իսկ կը վաղէ դիւերու պէս... : Մի՛թէ՞ ա– մէն կողմէ ջարդերու, մասնակի կոտո – րածներու եւ մանաւանդ քամնելի չա · րագործութեանց դուժը չի՞ հասնիր ձեր ականջին... :

— Ի՞նչպէս չէ ... բայց կը կարծէ՞ք թէ կուսակցութիւնը նկատի չառներ այդ ա– զգետալի պարագաներու պատասխանա – տուութիւնը : Մենք, ե հարկ, կ'իմա – նանք եղածներն , եւ մեր ձեռքէն եկածը չենք խնայեր : Մանաւանդ երբ քիչ առեն է որ կազմակերպուած է մեր կուսակցու– թիւնն, ի՞նչ կրնայ ընել ...

— Ըսել է թէ կը յուսաք զօրաւոր ուժ մը ունենալ ու այնպէս ձեր նպատակին հասնելու յաջողիլ չէ՞ :

— Այո... եւ ասիկա չատ հեռու չէ , բարեկամս :

— Աղէկ... բայց պիտի հրամայէ՞ք սա Քիւրտերուն որ չթալլեն, չզարնեն ու չբռնաբարեն մեր գիւղերը· պիտի հրա – մայէ՞ք կառավարութեան որ Համիտիյէ վաչառը չկազմակերպէ... մինչեւ որ ձեր կուսակցութեան ուժը քիչ մը տեղը դայ ու դուք ալ Համիտիյէ վաչառու դէմ հայդուկային խումբեր հանելու պատրաստուիք ... :

Երիտասարդը չախչախուած ու այլայ– լած կերպարանքով Արծրունիի երեսը նա– յաւ ու թոթովեց .

— Կարելի՞ է հրամայել ...

— Ի՞նչ գիտնամ... կ'ըսեն թէ մեծ պե– տութիւններու ներկայացուցիչները չատ անգամ վերջնագիր մը կուտան Համիտի կառավարութեան եւ առանկով կը յաջո– ղին մեծ դեր մը խաղալ ... նկատեցաւ ե– ւաւ Ներսէս Արծրունին իր հեղնական ձեւը չփոխելով :

— Առանկ իրաւասութիւն մըն ալ տր– ուա՞ծ է մեզի :

— Չէ՞ տրուած :

— Երբեք :

— Չէ՞ որ դուք ալ լիաշօր ներկայա – ցուցիչ մըն էք, պարոն :

— Իրաւ է ... բայց յեղափոխական կուսակցութեան մը հիմնած կառավա – րութիւնը պաշտօնապէս ճանչցուած չէ որ անոր ներկայացուցիչներու ձայնն ալ մեծ ազդեցութիւն մը ունենայ :

(Շար·)

ՄԱՐՍԷՅԼ.— Վաստուրականի Հայր. Միութեան կեդր. վարչութիւնը իր բոլոր մասնաճիւղերով (Վիէն, Տէսին, Փիւժ ՍիւրԱրժանս) խոր ցաւով կը ծանուցանէն իրենց ժրաջան գործավարին՝

ԱՐԱՄ ՀԻՒՍԵԱՆԻ

յանկարծական մահը, որ տեղի ունեցաւ Յունուար 13ին, 67 տարեկանին :

Այս տխուր առթիւ իրենց ցաւակցու – թիւնները կը յայտնեն Արմենակ եւ Հը – մայեակ Հիւսեանի, ինչպէս նաեւ ընկեր Վ. Հիւսեանի (Տէսին) :

Տէր եւ Տիկին Օննիկ Իսպիրեան եւ զա – ւակները եւ ընտանեկան բոլոր պարա – գաները Պոլիս, Պարսկաստան, Ամերի – կա, ցաւով կը ծանուցանեն իրենց զար – մուհին, եւ ազգականին՝

ԱՆՆԻԿ ՍԱՐԱՃԵԱՆԻ

մահը, որ տեղի ունեցաւ Յունուար 16ին :

Յուղարկաւորութիւնը կը կատարուի, այս երեքշաբթի, Յունուար 23ին, ժամը 14·15ին, Փարիզի Ս. Յովհ. Մկրտիչ ե – կեղեցին :

Մասնաւոր մահագդ չստացողներէն կը խնդրուի ներկայս իբրեւ այդ նկատել :

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Այս կիրակի Փարիզի Ս. Յովհ. Մկր – տիչ եկեղեցւոյ մէջ յետ հանդիսաւոր պատարագի, Հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի եկեղեցաչէն, մեծ բա – րերար ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱՆԹԱՇԵՒԱՆի եւ Մանթաշեան գերդաստանի համայն նըն – ջեցեալներու հոգւոց հանգստեան :

Հայ հասարակութիւնը սիրով կը հրա – ւիրուի :

ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ՏԱՆ

Գրիպոր Ժամկոչեանի մահուան առթիւ փոխան ծաղկեպսակի ընկեր Քաչանեան քսան Ն. Ֆ. կը նուիրէ Շաւարշ Միսաք – եան սրահին : (Ստանալ «Յառաջ»էն) :

ՇԱՒԻԼ

Այս կիրակի առաւօտ Շաւիլի եկեղեց – ւոյ մէջ պատարագ տեղի չունենար :

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՆԴԻՍ

Կազմակերպուած Սէնթ Անթուանի Ս. Թադէոս եկեղեցւոյ կրթ. մարմնի կող – մէ :

Պատուոյ նախագահութեամբ ՎԱԶԳԷՆ Վրդ. ՔԷՇԻՇԵԱՆի :

Ղեկավարութեամբ Ուսուցիչ Պ. Հա – մազասպ Նաճարեանի :

Այս կիրակի կէսօրէ վերջ ժամը 15ին, Պար Վիատիւբի սրահը :

Պիտի ներկայացուի դպրոցի աշակերտ – ներու կողմէ ՄԱՐԳԱՐ ՎԱՐԺԱՊԵՏԸ :

Հայկական եւ կովկասեան պարեր, երգ եւ արտասանութիւն :

Սրահի ջերմութիւնը ապահովուած է :

Մուտքը ազատ է :

ԿՈՒԶՈՒԻ

Պաշտօնական գրասենեակի մը մէջ աշ – խատելու համար, երիտասարդ տափթիլօ օրիորդ մը կը փնտռուի : Մանրամաս – նութեանց համար դիմել ՅԱՌԱՋ :

ՆՈՒԷՐՆԵՐ

Նոր Տարուան առթիւ Հայ կարմիր Խա – չի Օգ. կայանի ընդարձակման ի նպաստ կը նուիրեն :—

Պ. Տավուտեան (Մէօտօն) երեսուն Ն. Ֆ., Տոքթ. Ռ. Զարդարեան (Քան), Պ. Տէմիրճեան և Պ. Տէօվլէթեան քսանական Ն. Ֆ.: Տէր եւ Տիկին Բալուէեան (Պուրժ 15 Ն. Ֆ., Տոքթ. Մինաս Ցարութիւն – եան, Պ. Պ. Մէրճիքեան, Գօճապաշեան (Մարսէյլ), Տէր եւ Տիկին Էպպէրեան (Ալֆորվիլ), Տիկին Տոքթ. Քէչեան (Մարսէյլ), Տէր եւ Տիկին Փանոսեան (Անթոնի), Պ. Աթալլահ (Քոլոմպ), Տէր եւ Տիկին Գաբրիէլ Խանճեան (Անկէն), Պ. Գազանճեան (Մէօտօն), Տիկին Անա – հիտ Շարպարօնոփ, Տէր եւ Տիկին Եսայի Էսայեան, Պ. Թիւլէքեան (Ժուան լէ փէն), Պ. Իւնանեան, Տէր եւ Տիկին Գա – պարեան (Պուրժ) տասնական Ն. Ֆ.:

Տոքթ. Շամլեան (Լիղիէօ), Տէր եւ Տի – կին Հարբուտեան, Պ. Սաքայեան, Տէր եւ Տիկին Պօղապալեան (Տրակինեան), Պ. Տիշլեան եւ Պ. Մանուկեան (Ուք) հա – կան Ն. Ֆ.:

Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ

Ծննդեան 1600ամեակը համազգային շուրջով կը տօնուի Մարսէյլի մէջ :

Փետրուար 18ին, կիրակի կէսօրէ ետք, Քաղա տ'Իթալիայի չքեղ թատրոնին մէջ :

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ Ս. ԽԱՉ ԵԿԵՂԵՑԻ

10 bis, Rue Thouin, PARIS

Այս կիրակի, երեկոյեան ժամը 18·30 – ին Հայկական ճաշնաւոր պատարագ, Մարի Մէտիաղրիս եկեղեցիին մէջ, Պուլ – վար Սէոիւրիէ, Փարիզ (19), մեծ փորթ տէ Լիլա կամ Փրէ Սէն Ժերվէ :

ԿՈՒԶՈՒԻ

Դերձակի փուրնիթիւրի խանութի մը համար, պարոն մը որ վերջացուցած ըլ – լայ իր զինուորական պարտականութիւ – նը եւ կառք վարելու արտօնութիւն ունե – նայ : ԴԻՄԵԼ՝

17, Rue Saulnier

ԼՈՑՍ ՏԵՍԱՒ

ՅԱԿՈԲ ՏԷՐ-ՅԱԿՈԲԵԱՆ

ՊԱՐՏԻԶԱԿԸ

ԻՄԱՏՈՒՏԻԿ

Յաւելուածաբար՝ ՄԱՆՈՒՇԱԿ ԵՒ ԻՐ ՀԷՔԵԱԹՆԵՐԸ :

500 էջ

13 Hors-Texte

Հասցէն Փարիզի եկեղեցւոյ կըր – թական մարմնին :

Գին 12 Ն. Ֆ.

Թղթատարի ծախքով 13·40 Ն. Ֆ.

Արտասահման 4 տոլար :

Դիմել՝

Յառաջին

Հայ գրավաճառներուն

Փարիզի եկեղեցին կամ Տպարան

ՏԷՐ – ՅԱԿՈԲԵԱՆ

Imprimerie Spéciale du journal « Haratch »
32, Rue de Trévise, PARIS (9e)

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻ

ՊԱՐԱՒԱՆԴԷՍԸ

Կազմակերպութեամբ Սէն Շամոնի խումբին, այս Շաբաթ իրիկուն ժամը 21 – էն մինչեւ լոյս :

Սէն Շամոնի Քաղաքապետարանի սրա – հը (Սալ տէ Ֆէթ) :

Նուագախումբ՝ Ձիմի Ռիէլ :

Պիւֆէ, պառ, ռոթիյոն, ժէօ :

ՊԱՏԱՐԱԳ ՁԱՅՆԱՍՓԻՒՌԻՆ

Այս կիրակի առաւօտեան ժամը 10·30 – ին, հայածէս ճաշնաւոր պատարագ եւ քարող պիտի ճայնափոխուի Վատիկանի կայանէն հետեւեալ ալիքներու վրայ : Միջին ալիք 196մեթր : կարճ ալիք 31·10, 25·53, 19·84 :

Պիտի պատարագէ՝

ԳԷՈՐԳ ԱՐՔ. ԼԱՁԷՔԵԱՆ

(Առաջնորդ Հալէպի հայ կաթ. հա – մայնքին) :

Պիտի քարոզէ՝

ՆԵՐՍԷՍ Ծ. Վ. ՍԷԹԵԱՆ

Նիւթ՝ «Տեսանելի եկեղեցւոյ, տեսա – նելի իշխանութիւնը» :

ՀԱՆԴԷՍ – ՏՕՆԱԾԱՌ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՕՐՈՒԱՆ ԱՌԹԻՒ

Կազմակերպուած՝ Ֆ. Կ. Խաչի Տէսինի մասնաճիւղի կողմէ : Մասնակցութեամբ՝ դպրոցին աշակերտութեան :

Այս կիրակի կէսօրէ ետք, ժամը 3·30 – ին Հ. Յ. Դ. Տան մէջ :

Ժամբական երգեր, արտասանութիւններ աշակերտներու կողմէ :

Կը ներկայացուին՝ 1) Կաղանդ Պապան, 2) Ուրիշին տունը հարսանիք (պաւէշտ) : *Երգերով ու հայկական պարերով :*

Մուտքը ազատ է :

Կը հրաւիրուի Տէսինահայութիւնը ան – խտրապէս :

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ԼԻՈՆ.— Ֆ. Կ. Խաչի Լիոնի վարչու – թիւնը ընդհ. ժողովի կը հրաւիրէ իր բո – լոր ընկերուհիները, այս կիրակի կէսօրէ վերջ ժամը չորսին, եկեղեցւոյ սրահը : Կարեւոր օրակարգ :

ՄՕՏ ՕՐԷՆ — ՄՕՏ ՕՐԷՆ

Զաւարեան ենթակոմիտէի հովանաւո – րութեամբ «Շանթ» թատերախումբը պի – տի ներկայացնէ մեծ պատրաստութեամբ Ազգ. Տրամը «ՎԱՐԴԱՆԱՆԴԸ», Պօմոնի սրահին մէջ :

Մանրամասնութիւններ մամուլով եւ առանձին յայտարարութեամբ :

Հ. Յ. Դ.

ԸՆԿԵՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

ՓԱՐԻԶ.— Հ. Յ. Դ. Շրջ. կոմիտէն ներկայացուցչական ժողովի կը հրաւիրէ Փարիզի եւ շրջանի մարմիններու ներկա – յացուցիչները, այս կիրակի կէսօրէ վերջ ժամը 2·30ին, Մշակոյթի Տան սրահին մէջ :

ՕՐԱԿԱՐԳ.— Շրջ. ժողովի օրակարգի քննութիւն : Ներկայացուցիչ ընկերներու պարտաւորիչ ներկայութիւն :

ՓԱՐԻԶԻ Հ. Յ. Դ. Շրջ. կոմիտէն ըն – կերական ընդհ. ժողովի կը հրաւիրէ «Ա – բամ» ենթակոմիտէի բոլոր ընկերները այս Ուրբաթ ժամը 8·30ին, Մշակոյթի Տան սրահին մէջ : Կարեւոր օրակարգ : Ներկայ կ'ըլլայ Կ. Կ.ի ներկայացուցիչը :

ՎԻԷՆ.— Հ. Յ. Դ. Անի կոմիտէն ընդհ. ժողովի կը հրաւիրէ բոլոր ընկեր – ները այս Շաբաթ, ժամը 20·30ին, Հ. Օհանէսեան ակումբին մէջ : Կարեւոր օ – րակարգ :

ԱՒՐՈՒՎԻԼ – ՍԱՐՍԷԼ.— Հ. Յ. Դ. Վարդան ենթակոմիտէի ժողովը այս Ուր – բաթ երեկոյ, սովորական հաւաքատեղին : Կարեւոր օրակարգ :

ԼԻՈՆ.— Հ. Յ. Դ. կոմիտէն ժո – ղովի կը հրաւիրէ բոլոր ընկերները այս Ուրբաթ, ժամը 20·30ին, սովորական հաւաքատեղին : Կարեւոր օրակարգ :

ԺԱՄԱՆԱԿԱՅՈՑՑ

Հ. Յ. Դ. Մարսէյլի Շրջ. Կոմիտէի հը – րաւիրած ընկերական ժողովներու.—

Հ. Յ. Դ. Մարսէյլի Շրջ. կոմիտէն՝ ստիպողաբար ընկերական ընդհ. ժողովի կը հրաւիրէ հետեւեալ ենթակոմիտէնե – րու եւ խումբերու անդամ ընկեր – ընկե – րուհիները :

ԳԷՈՐԳ ԶԱՎՈՒՇ խումբ՝ 20 Յունուար Շաբաթ, ժամը 21ին :

ՄՈՒՐԱՏ խումբ՝ 21 Յունուար, կիրա – կի կէսօրէ ետք, ժամը 15ին :

ՆԻԿՈԼ ԴՈՒՄԱՆ խումբ՝ 21 Յունուար, կիրակի կէսօրէ ետք, ժամը 15ին :

ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ խումբ՝ 20 Յուն – ուար, Շաբաթ, ժամը 21ին :

Սոյն ժողովները տեղի պիտի ունենան իրենց սովորական հաւաքատեղիները : Խիստ կարեւոր օրակարգ : Բոլոր ընկեր – ընկերուհիներու ներկայութիւնը պարտա –ւորիչ է : Վարչութիւնները նախապէս պէտք է բոլոր ընկերներուն տեղեկացնեն ժողովներու վայրի եւ թուականի մասին : Ներկայ պիտի ըլլան Շրջ. կոմիտէի ներ – կայացուցիչները :

AU BEAU NOYER

A 50 mètres du Métro MARCEL SEMBAT

7 ETAGES D'EXPOSITION

D'AMEUBLEMENTS

CRÉDIT SANS FORMALITÉS

ՀԱՅԵՐԷՆ ԿԸ ԽՕՍԻՆՔ

185, BD. JEAN JAURÈS --- 15, AV. ANDRÉ MORIZET - BOULOGNE — MOL. 06.03 et 69.38

ԵՒՐՈՊԱՅԻ

ՄԵԾԱԳՈՅՆ ԱՒՏԱԴՐՈՒՔԸ

ՀԷԼՎԱ ԼՈԳՈՒՄ Սուսամ – ՀԷԼՎԱ

ԹԱՀԻՆ ՇԱՐՈՑ (ՌՈՃԻԿ) ՎԱՖԼԷ-ԱՒՈՑՇ

ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ...

CHOC-ALVA • CHOCO-LOC

Sté le BOSPHORE

SIÈGE SOCIAL

2, Rue Louis Astouin / Marseille (2ème)

ՍԱԿԱԳԻՆ ԸՆԹԱՑԻԿ ԱԶԴԵՐՈՒ

ՄԻԿ ԱՆԳԱՄՈՒԱՆ ՀԱՄԱՐ

ՄԱՀԱԶԴ	30 Ն. Ֆ.	մինչեւ 1/4 սիւնակ
ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ	15 Ն. Ֆ.	մինչեւ 1/8 սիւնակ
ՑԱԽԱԿՑՈՒԹԻՒՆ	10 Ն. Ֆ.	» » »
ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ	20 Ն. Ֆ.	» » »
ՀԱՐՍԱՆԻՔ, ՆՇԱՆՏՈՒԻՔ	20 Ն. Ֆ.	» » »
ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ	10 Ն. Ֆ.	» » »
«ՓՈԽԱՆ ԾԱՂԿԵՊՍԱԿԻ»	10 Ն. Ֆ.	» » »
«ԿԸ ՓՆՏՌՈՒԻ»	5 Ն. Ֆ.	» » »
ԾԱԽՈՒ Է	20 Ն. Ֆ.	» » »

Այս գիները մէկ անգամ հրատարակելի եւ նշանակուած ծաւալով ազ – դերու համար են, չորրորդ էջը :

Կանխիկ վճարումը պարտաւորիչ է :

Առեւտրական կամ այլ ազդերու մասնաւոր պայմաններուն համար դիմել վարչութեան :

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

Le PREMIER QUOTIDIEN ARMENIEN en EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction et Administration : 32, Rue de Trévise - PARIS-9e

Fondé en 1925
R. C. Seine 57 A 2731

Téléph. : PRO. 86 - 60
C. C. P. Paris 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա՝ Տար. 50 Ն. Ֆ. Վեցամսեայ՝ 27 Ն. Ֆ.
Արտասահման՝ Տար. 60 Ն. Ֆ. Հատը՝ 0.25 Ն. Ֆ.

ՇԱԲԱԹ
20
ՅՈՒՆՈՒԱՐ
SAMEDI
20 JANVIER
1962

38ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 9309 38e ANNÉE Fondateur : SCHAVARCH MISSAKIAN ՆՈՐ ՇՐՋԱՆ, 18ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 5110

ՕՐՈՒԱՆ ՏՕՍՔԸ

ԱՂԵՔՍԱՆԴՐ ՄԱՆԹԱՇԵԱՆՑ

Փարիզի Հայոց եկեղեցին տարին մէկ անգամ հոգեհանգստեան պաշտօն կը կատարէ իր հիմնադիրը – բարեբարին՝ Ա – ղեքսանդր Մանթաշեանցի յիշատակին :

« Ազգային բարերար»ի համբաւին տիրացած հայ մեծատուններու չարքին մասնաւոր տեղ մը կը գրաւէ Մանթաշեանց, որ ծանօթ անուն մըն էր ո՛չ մի – այն Կովկասի, այլև Թուրքիոյ և արտասահմանի մէջ, շնորհիւ իր առատաձեռն նուիրատուութեանց :

Ծնած էր Թիֆլիզ 1842 Մարտ 3ին, մեռաւ Պետրոգրատ 1911 ապրիլ 19ին եւ թաղուեցաւ Թիֆլիզի հայ Պանթէոնը :

Հայերը կանուխէն հետաքրքրուած էին բազուի քարիւղի հանքերով : Շատեր կարեւոր դիրքեր գրաւած էին սեւ ոսկիի ոստանին մէջ :

Գալուստ կիւլպէնկեան անգամ երիտասարդ տարիքին հետախուզական ճամբորդութիւն մըն էր կատարած դէպի Կովկաս եւ Ասլչերոնի թերակղզին : Ու 1891ին Փարիզի մէջ ֆրանսերէն լեզուով հրատարակած էր դիրք մը բազուի նաւթահանքերուն մասին :

Մանթաշեանց քարիւղի արդիւնաբերութեան գործին մէջ մտած էր Միքայէլ Արամեանց անուն ղարաբաղցի վաճառականի մը թելադրութեամբ : Շնորհիւ իր ձեռներէց ոգիին, չուտով յառաջդիմեց, Րոչիլտի եւ Նոպէլի հետ մրցելով : Գրասենեակները բացաւ եւ մասնաճիւղեր հաստատեց Պոլսոյ , Եգիպտոսի , Սեւանիկի , Կովկասի , Ռուսիոյ , Հնդկաստանի , Պարսից ծոցի , Անգլիոյ , Ֆրանսայի մէջ եւ այլուր :

Մանթաշեանց ընկերութեան գրամագլուխն էր քսան միլիոն ռուբլի, ինչ որ խիստ մեծ գումար մը կը ներկայացնէր :

Բազմաթիւ են կրթական եւ եկեղեցական հիմնարկութեանց համար իր կատարած նուիրատուութիւնները :

Աւելի քան 250·000 րուբլի ծախսելով կառուցանել տուած է Էջմիածնի հոյակապ վեհարանը, բացուած 1910 Յունիս 6ին՝ Իլմիրլեան Հայրիկի օրով :

Երեք հարիւր հազար րուբլի յատկացուցած է Թիֆլիզի Ներսիսեան վարժարանի նոր ընդարձակ շէնքի կառուցման, ընդառաջ երթալով տեսուչ Աւետիս Ա – հարոնեանի դիմումին (բացումը 1909 Յունիս 14ին) :

Ռուսիոյ բարձրագոյն վարժարաններուն եւ Եւրոպայի համալսարաններուն մէջ ուսանող չուրջ հազար երիտասարդ – ներու օգնած է : Կանոնաւոր թոշակաւորներ եղած են անոնցմէ չատեր :

Օգնութիւն ստացողներու շարքին յի – շենք Նիկ. Ադոնցը, Ստեփան Շահումեանը , Արմենակ Շահմուրատեանը, Կոմիտաս վարդապետը եւ ուրիշներ : Օգնած է նաեւ Աղեքսանդր Երիցեանցի, Մուրացանի եւ Յովհ. Թումանեանի : « Բայց երբ իմացաւ թէ Թումանեան Դաշնակցական էր, խոստիւ պատուիրեց որ ոչ ոք չիմանայ թէ ինք նպաստամ է իրեն», կը գրէ իր կենսագիրը՝ Ա. Սարուխան :

Ամբողջ յիսուն տարի օգնած է կարօտ ուսանողներուն : « Ուսանողը մեր ազգի ապագան է», կ'ըսէ եղեր միշտ :

Նորոգել տուած է Թիֆլիզի Հայոց մայր եկեղեցին եւ յարակից շէնքը :

Վերջապէս իր հօր՝ Յովհաննէսի յիշատակին 1·540·000 ֆր. (ոսկեդրամ) ծախսելով կառուցանել տուած է Ժան Կուժօն փողոցի Ս. Յովհ. Մկրտիչ եկեղեցին : Հիմը դրուած էր 1902 Յուլիս 14ին, բացումը կատարուեցաւ 1904 Հոկտ. 2ին :

Փարիզահայերը միշտ երախտապիտութեամբ պիտի յիշեն իր անունը :

ՀՐԱՆՏ–ՍԱՄՈՒԷԼ

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՖՐԱՆՍԱՅԻ ՀՈԳԵՐԸ

ԵԼՄՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐԸ ԿԸ ՓՈԽՈՒԻ

Կացութիւնը օրէ օր կը ծանրանայ եւ առջի օր որոշուեցաւ Ալժերիայէն երկու զօրաբաժիններ եւս չբերել ինչպէս նախադահ տը Կոլ յայտարարած էր Դեկտեմբեր 30ի իր ճառին մէջ : Այս որոշումը տրուեցաւ խորհրդակցական ժողովի ընթացքին որ, էլիզէի մէջ, տը Կոլի շուրջ հաւաքած էր սպայակոյտի պետերը, եւ Զօր. Այլերէ :

Ալժերիոյ մէջ, արդարեւ, դրեթէ ան – կարելի դարձած է կարգն ու կանոնը ա – պահովել : Օրանի մէջ կարելի եղաւ չըրջապատել եւ « կղզիել» մահմետական թաղամասը, մինչ 14 ահաբեկիչներ կը սպանուէին :

Օրանիոյ չրջանին « Միութիւն Նոր Հանրապետութեան համար» կուսակցութեան ընդհ. քարտուղարը հրաժարեցաւ դտնելով թէ Ալժերիոյ ապագան կը նայիսուլ առանց օժանդակութեանը , այն մէկ միլիոն Ֆրանսացիներուն որոնք հոն կը դտնուին :

Ալժ. Ազատ. ճակատէն զատ Գաղտնի բանակն ալ կը չարունակէ իր ահաբեկումները :

Ալժէլի մէջ ոստիկանները երեւան հանած են Գաղտնի բանակի Հրամանատատութեան կայան մը : Հոն դտնուած են տպագրական արդի մեքենաներ որոնք կը ծառայեն Գաղտնի բանակի « Կոչ Ֆրանսայի» թերթին տպագրութեան : Ոստիկանները անուանացանկ մըն ալ գտած են, բայց բոլոր պատասխանատուները ժամանակին լուր ստացած ըլլալով , ոչ մէկը բռնուած է : Բոլորն ալ փախած էին : Ալժէլի լատատեղեակ չրջանակներուն մէջ սակայն, զարմանալի կը դտնեն որ Գաղտնի բանակը տեղւոյն վրայ տպէ ինչ որ կը ցրուէ իր քարոզչութեան համար : Աւելի հաւանական նկատուած էր ցարդ որ Գաղտնի բանակի հրատարակութիւնները օտար երկրի մը մէջ տպուին, ապա Ալժերիա կամ Մայր Հայրենիք ցրուուին :

× « Ձախի կոմիտէն» որ իր մէջ հաւաքած է Պուրժէս – Մօնուրիի , Լաքոսթի , Անտրէ Մորիսի նման մարդիկ եւ որուն տեսակէտն է Հանրապետութեան ծոցին մէջ պահել Ալժերիան, կոչ մը հրապարակեց ուր կ'ըսէ թէ « Ա.Հ.Ա.Կ»ը յաղթա – նակի հաչտութիւն մը կը նախընտրէ բանակցուած հաչտութենէ մը :

× Երիտասարդ 2 փլասթիէօրներ գործի վրայ բռնուեցան առջի օր : Երկուքն ալ թեկնածուներ են Սէն – Սիրի :

× Ժակ Սուստել յայտարարութիւն մը ըրած է ուր կը չեշտէ թէ որեւէ ձեւով չի կրնար դատապարտել Գաղտնի Բանակը :

ԵԼՄՏԱԿԱՆ ՆՈՐ ՆԱԽԱՐԱՐԸ

Ե. Հանրապետութիւնը առջի օր, երրորդ անգամ ըլլալով փոխեց ելմտական իր նախարարը : Փինէյ ետք Վիլֆրիտ Պօմկարթնէը ստանձնած էր այդ ծանր պատասխանատուութիւնը, բայց առջի օր հրաժարական նամակ մը ղրկեց Հանրապետեան նախագահին : Տը Կոլ իր պատասխանին մէջ կը յայտնէ թէ « ցաւով» կ'ընդունի այդ հրաժարականը :

Ելմտական նոր նախարար նշանակուեցաւ Ժիսքար տ'Էսթէն որ 36 տարեկան պիտի ըլլայ Փետրուար 2ին : Ըսել է թէ ամէնէն երիտասարդ նախարարն է որ այդ պաշտօնին կոչուած է Փուէնքառէէն ի վեր :

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԿԵՍԱՐԻՈՑ մէջ եասը Ատալի դատա – պարտեալներուն ի նպաստ ցոյց մը կատարած է : Ասոնցմէ չորսը , որոնց մէջ Պոլսոյ նախկին կուսակալը որ ցկեանս բանտարկութեան դատապարտուած է , ատամնաբոյժի կը տարուէին երբ քանի մը հազար ցուցարարներ հաւաքուեցան ծափահարելով բանտարկեալները : Ոչ մէկ ձերբակալութիւն կատարուեցաւ : Քանի մը հարիւր քիլոմեթր անդին ալ , էգէականի փոքր քաղաքի մը մէջ Ատալէթի պարագլուխը՝ Կիւմիւչիալա « նեղրում, ներում» խօսքերով ողջունուեցաւ : Մենտերէսի ժառանգորդ նկատուած այս զօրավարը « ի մօտոյ կ'ըլլայ » պատասխանեց :

ԱՆԴԱՐԱՑԻՆ կը հաղորդեն թէ Պարզանի Քիւրտերու քսան հոգինոց խումբ մը թրքական հողամաս մտած է եւ երկու գիւղերու վրայ « յարձակում գործած է» :

ԴԱՄԱՍԿՈՍի մէջ վերջ գտաւ « օտար – ներու դրդումով» սկսած գործադուլը :

ԱՆԱՍՏԱՍ ՄԻԿՈՑԵԱՆ Մալիէն Ռապթ հասաւ , ուր պիտի տեսնուի Հասան Բ.ի հետ եւ կարգ մը չրջաններ ալ այցելէ :

ԵԳԻՊՏՈՍ աչխարհի ամէնէն երիտասարդ երեսփոխանները պիտի ունենայ : Արդարեւ այս առընչութեամբ հրատարակած հռովմտական կ'ըսէ թէ 16 տարեկան սկսեալ կարելի է թեկնածու ըլլալ, ուսանողները ներկայացնելու համար խորհրդարանին մէջ :

ՔՈՒՎէյԹի մէջ առաջին կառավարութիւնը կազմուեցաւ : Բոլոր նախարարները բացի հինգ հատէ, էմիրներ են, դահակալին ազգական :

ԿՐԵՄԼԻՆի մէջ համայնավար քարտեղուն անակնկալ ժողով մը դումարուեցաւ : Ըստ Մոսկուայի ձայնասփիւռին պատգամաւորները լսեցին դանազան տեղեկագիրներ, գլխաւորաբար Իր. Համագործակցութեան որոշումներու գործադրութեան համար : Օտար չրջանակները, մանաւանդ արեւմտեան, մեծ կարեւորութիւն կուտան այս ժողովին որ տեղի կ'ունենայ այնպիսի ժամանակ մը երբ կ'ըսուի թէ Խրուչչեւ դժուարութիւններ ունի :

ԺԸՆԵՒի մէջ Լաոսի երեք իչխաններու հանդիպումը՝ ձախողեցաւ : Ոչ մէկ համաձայնութեան կրցան յանկիլ :

ԱՆԿԱԽՆԵՐԸ նոր պաշտօնաթերթ մը պիտի հրատարակեն « Անկախներու Թեր – թը» : Արդարեւ իրենց նախկին ընդհ. նոր քարտուղարը՝ Տիւչէ որ անճնապէս տէրն էր նախորդ պաշտօնաթերթին յայտնած էր թէ կը չարունակէ անոր հրատարակութիւնը :

ԻՄՄԷՖ ԻՆԷՕՆԻ յայտարարեց թէ երբեք Թոյլ պիտի չտայ « մխակ կուսակցութեան » վարչաձեւին վերահաստատումը : Այդ պիտի նչանակէր, ըսաւ Ինէօնիւ, ժողովրդավարութեան լքումը :

ԱՖԻՆԻ հասած է Ասլանեան Ուխտի երեք հոգինոց պատուիրակութիւն մը, որուն կը նախագահէ Էհկառ Ֆօռ : Պատուիրակութիւնը պիտի ուսումնասիրէ Յունաստանի ըլլալիք նիւթական օժանդակութեան մը հարցը, թեթեւցնելու համար զինուորական ծանր ծախքերը :

ՊԱՂՏԱՏԷՆ կը հաղորդեն թէ Իրաքի կառավարութիւնը ետ կանչած է յորդանանի իր դեսպանը : Կը կարծուի թէ այս դէպքը կապ ունի Քուվէյթի եւ Յորդանանի դիւանագիտական յարաբերութեանց ստեղծումին հետ :

ՄՈՍԿՈՒԱ նոր յուչագիր մը յանձնեց Պերլինի մասին ուր ոչ մէկ զիջում կ'ընէ :

ԳԱՀԻՐԷի դատավարութեան ընթացքին պաշտպան փաստաբանները Ֆրանսացիներուն անմիջական ազատ արձակումը պահանջեցին :

ՊՈՒՐԳԻՊԱ պաշտօնապէս յայտարարեց իր ամուսնալուծումը եւ այս առթիւ « Անկախութեան մեծ չքնաղ » չնորհեց իր լքած կնոջ, որ իրմէ 17 տարի մեծ Ֆրանսուհի մըն է :

ՏԸ ԿՈԼ – ՔԵՆԸՏԻ նամակներ փոխանակած են վերջերս :

ԴԱՄԱՍԿՈՍԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

« Տօնական օրերու առթիւ մօտ 18 օրուան դադարէ վերջ, անցած չաբաթ օր , 13 Յունուար, Դամասկոսի զինուորական դատարանին առջեւ վերսկսաւ մեր մեղադրուած ընկերներու դատավարութիւնը, որ տեւեց առտուան ժամը 9էն մինչեւ ժամը 3 : Երթը մեղադրուած ընկերներ հարցաքննուեցան եւ բոլորն ալ ուժգին կերպով հերքեցին Մապահէսներու կողմէ ծեծով ու սպառնալիքով իրենցմէ կորզուած « խոստովանութիւն»ները եւ մեղադրանքները :

« Մեղադրեալ ընկերները իրենց հարցաքննութեան ընթացքին համարձակ կերպով մանրամասնութիւններ տուին Մապահէսներու կողմէ ի գործ դրուած անմարդկային խոչտանգումներու եւ բռնութիւններու մասին եւ պարզեցին ճշմարտութիւնը փաստացի բացատրութիւններ տալով :

« Ճակատագրական օր, Կիրակի, չարունակուեցաւ դատավարութիւնը, որ սկսաւ առտուան ժամը 9ին եւ վերջացաւ կէսօրէ վերջ ժամը 2ին : Հարցաքննուեցան եօթը մեղադրեալներ, որոնք նմանապէս հերքեցին իրենց վերագրուած մեղադրանքները եւ յստակ բացատրութիւններ տուին ուղղուած բոլոր հարցումներուն :

« Հարցաքննուող ընկերներէն չատերը, առանց թարգմանի, դեղեցիկ արաբերէնով ներկայացուցին իրենց պատասխանները ու բացատրութիւնները :

ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՎԵՐԱՑԱՆ, ՑԱՏԿԱՆՇԱԿԱՆ ԵՐԵՒՈՑԹՆԵՐ ԻՆՉՊԷՍ ԿՈՐԶՈՒԱԾ ԵՆԹՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

« Երկուշաբթի, Դամասկոսի զինուորական դատարանին առջեւ չարունակուեցաւ դատավարութիւնը : Մօտ հինգ ժամ տեւող այս դատավարութեան ընթացքին հարցաքննուեցան վերջին տասը մեղադրեալները, որոնց բոլորն ալ, ինչպէս նախորդ հարցաքննուողները, սրտաճմլիկ մանրամասնութիւններ տուին Մապահէսներու կողմէ ի գործ դրած բռնութեանց եւ խոչտանգումներու մասին : Բացատրեցին թէ ինչ միջոցներով խոստովանութիւնները կորզած են իրենցմէ :

« Այս վերջին հարցաքննութեանց ընթացքին պարզուեցան կարգ մը իրական նուիթիւններ, որոնք յստակ կերպով ցոյց տուին եղած մեղադրանքներուն եւ կորզուած խոստովանութիւններուն չինծու եւ անհիմն ըլլալը :

« Այսպէս, երէկուան դատավարութեան մէկոյին հարցաքննութեան կանչուեցաւ քրտախօս հայ մեղադրեալ մը, որ նաեւ քիչ մը հայերէն դիտէր : Փնտուեցաւ քրտախօս եւ արաբախօս թարգման մը զայն հարցաքննելու համար :

« Այս նոյն մարդէն խոստովանութիւնները կորզած էին իր չղիտցած լեզուով եւ ստորագրել տուած էին, հակառակ մեղադրեալին թարգման պահանջելուն : Մարդը զարմացաւ երբ վերահաստատ եղաւ իրեն վերագրուած յայտարարութիւններուն :

« Աւարտած ըլլալով մեղադրեալներու հարցաքննութիւնները , դատարանը որոչեց լսել քանի մը վկաներ, որոնք դատարան պիտի ներկայանան առաջիկայ կիրակի :

« Կը կարծուի թէ մինչեւ ամսոյս վերջը դատավարութիւնը կ'աւարտի » :

«ԱԶԴԱԿ»

ԸՆԹԵՐՑՈՂԻՆ ՅՈՒՇԱՏԵՏՐԸ

ԼԵԶՈՒԱԲԱՆԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

—o—

Պատահականութեան արդիւնք է թէ – թեւս, որ մեր « Ծուչատեարին մէջ այս անդամ երեք լեզուաբանական, բանասի – րական ձեռնարկներու մասին պիտի ար – տայայտուինք :

Առաջինը Անուշաւան Վրդ. Զղլան – եանի « Հրաչեայ Աճառեան եւ իր լիա – կատար քերականութիւնն է », որուն վը – քայ հեղինակը վերլուծական եւ քննական փորձ մը կը կատարէ :

Երկրորդը՝ Հր. Ն. Թորոսեանի « Ա – րեւմտահայ աշխարհաբարի ծագումը եւ զարգացումը» եւ երրորդը՝ Եդուարդ Տարօնեանի «Բաղէշի Նահանդի Խուլթիկ գիւղի բարբառը»:

Անուշաւան Վրդ. Զղլանեանի այս աշ – խատութիւնը նուիրուած է անզուգական Հ. Աճառեանի «լիակատար Քերականու – թիւն Հայոց լեզուի» բազմահատոր երկա – հրութեան « Ներածութեան » միայն : Անշուշտ առեղն է, որ մեծանուն բանա – ձէրին ընդհանուր վաստակը մեներգու – թեան մը մէջ քննութեան առնուի, եւ իր բազմակողմանի յատկանիշներով ներկա – յացուի : Ինչպէս ծանօթ է այս պատկա – ռելի երկասիրութիւնը արդիւնքն էր 562 լեզուներու համեմատական ուսումնասի – րութեան, որուն նմանը ոչ մէկ եւրոպա – կան լեզուով հրապարակ եկած էր :

Տակաւին շատ թարմ է այն տխուր պատմութիւնը, որուն հետեւանքով Հր. Աճառեան կ'ամբաստանուէր իբրեւ քաղ – քենի լեզուաբան մը եւ կը կախակայուէր որոշ չրջան մը : Բայց այսօր այդ անիրաւ եւ ոչ դիտական սխալը բարեբախտաբար սրբագրուած է : Իր առեղին գիտունը կ'արհամարհէր նոյնիսկ բանտ ու աքսոր, հաւատարիմ մնալով լեզուական – բանա – ձիրական ճշմարտութեան, նոյն իսկ Մթալինեան բռնակալութեան չրջանին, երբ ամէն բանաստեղծ եւ դրագէտ ըս – պիսուած էր իր տուրքը տալ :

Ընդդծելով լեզուաբանին ունեցած ընդ – հանուր ղարգացման անհրաժեչտութիւ – նը, Հր. Աճառեան հետեւած էր բացի լեզուաբանութեան օրէնքներուն, բանա – ձիրութեան, բնախօսութեան, բնագիտու – թեան, պատմութեան, աչխարհագրու – թեան, հնագիտութեան, ազգագրութեան եւ հոգեբանութեան :

Հր. Աճառեան լեզուի մէջ պահպանո – ղականութեան նկարագիրը կը պաչտպա – նէր, այդ կերպով լռելեայն Ազեւելահա – յերէնի մէջ կատարուած ներմուծութիւն – ներու դէմ էր, որոնք կ'աղճատեն հայե – րէն լեզուն, իր հնչաբանական, քերա – կանական եւ չարահիւսական մարդերուն մէջ :

Նոյն ձեւով դէմ էր նաեւ Մառի այն տեսութեան, որուն համաձայն տեսա – կան փոփոխութիւնները յառաջ կը բերեն նաեւ լեզուական փոփոխութիւններ : Այս կերպով Հր. Աճառեան համաձայն չէր այն դաղափարին, որ հայերէնը ռուսե – րէնով ճոխացնել կ'ուղուէր, ինչպէս որ Հայաստանի կարգ մը երիտասարդ դրող – ները կը չատախոսէին, եւ որուն կը տե – սեէին այնքան հետեւակօրէն :

Հր. Աճառեանի «լիակատար քերակա – նութեան » ներածական հատորը բաժին մը ունի, որուն մէջ կը նչէ մասնաւո – րաբար Հնդեւրոպական լեզուախումբին մէջ հայերէնին անկախ դիրք մը ունե – նալը : Անուշաւան Վրդ. Զղլանեանի դիր – քին մէջ կը յիչուին հայերէն բառարան – ներու եւ քերականութիւններու մասին : Ինչպէս՝ « Նոր բառադիրք Հայկազեան լեզուի» Վենետիկ, 1836 – 7, երկու հա – տոր, Ստ. Մալխասեանի «Բացատրական բառարանը, Երեւան , 1944 – 5, չորս հատոր, Ա. Ամատունիի «Հայոց բառ ու բանը», Հ. Աճառեանի «Գաւառական բա – ռարանը», 1913, «Հայոց անձնանունների բառարանը», Երեւան 1942 – 48, չորս հատոր : Գալով քերականութիւններուն , կը յիչուին Հ. Ա. Բագրատունիի «Հա – յերէն քերականութիւն ի պետս Զարգա – ցելոց»ը, Վենետիկ, 1852, Հ. Վրթանէս Զալըխեանի «Քերականութիւն Հայկազ – եան լեզուի»,Հ.Ա.Այտընեանի «Քննական քերականութիւն Աչխարհաբար կամ արդի հայերէն լեզուի» Վիէննա, 1866 : Առանց մոռնալու Հր. Աճառեանի «Ստուգաբա – նական բառարանը » 7 հատոր :

Նոյնքան չահեկան է ցանկը բոլոր լուրջ եւ կարեւոր աչխատութիւններուն՝ հայ լեզուի եւ լեզուագիտութեան մասին , ո – րոնք քանի մը տասնեակներու կը հաս – նին : Անուշաւան Վրդ. Զղլանեանի այս հատորը ուղեցոյցի մը դերը պիտի կա – տարէ բոլոր մասնագէտներուն համար :

×

« Հայ գրականութեան պատմութեան» (1951), «Հայաստանի եւ հայ ժողովուր – դի պատմութեան » (1957) Ֆրանսերէն աչխատութիւններէն եռքը, — յիչելու համար միայն այս երկու կարեւոր ձեռ – նարկները, Հր. Ն. Թորոսեան լոյս կ'ընծայէ ահաւասիկ «Արեւմտահայ աչխար – հաբարի ծագումը եւ զարգացումը, նոյն – քան չահեկան հատորը, որուն կը հետեւի նոյն հատորին մէջ «Ի՞նչպէս ճոխացնել արդի հայերէնը » գրութիւնը :

Հակառակ իր համեստ ծաւալին, ըսենք անմիջապէս որ այս ձեռնարկը անհրա – ժեչտ պահանջ մը կը լրացնէ եւ առաջին անգամն է որ հեղինակ մը նոյն նիւթը կը ներկայացնէ յստակ եւ ամփոփ տարազի մը տակ, առանց անորոչութիւններու եւ երկդիմութիւններու : Մեր բանասէրնե – րէն եւ լեզուաբաններէն չատերը քննու – թեան եւ պրպտումի նիւթ ըրած են, Ա – րեւմտահայ աչխարհաբարի ծագումն ու զարգացումը, դիմելով ամէնէն հին չրը – ջաններուն , գտնելու համար մասնաւո – րաբար աչխարհաբարի ծագումը ներկա – յացնող հետքերը, իբրեւ բառեր, ոճեր եւ ժողովրդական արտայայտութիւններ : Հր. Ն. Թորոսեան գիտական ակնար – կով մը, կը փնտռէ ժողովրդական բար – բառին հետքերը դասական լեզուին մէջ , եղրակացնելու համար, որ հին Հայաս – տանի մէջ, եթէ ոչ բազմաթիւ գաւառա – բարբառներ, գոնէ գաւառաբարբառ մը գոյութիւն ունեցած է, քանի որ Ոսկե – դարու գրականութեան մէջ սպրդած են ժողովրդական բարբառէն բառեր եւ քե – րականական ձեւեր :

Դարերու ընթացքին, երբ գրաբարը հետզհետէ կը կորսնցնէ գրական լեզուի իր յատկանիչներն ու կարեւորութիւնը , ժ. եւ ԺԱ. դարերուն արդէն ռամկօրէնը կը գրաւէ անոր տեղը, երբ ժամանակա – կից գրողները, ընթերցողներուն հասկը – նալի ըլլալու համար, ռամկօրէնը կամ Կիլիկեան հայերէնը , ուրիչ խօսքով աչ – խարհաբարը գործածել կը սկսին : Եւ այս – պէս նաեւ յաջորդ դարերուն :

Հր. Ն. Թորոսեան «Արեւմտահայ աչ – խարհաբարի» ծագումը բացատրելէ եռք, եւ չօշափելի գործնելու համար անոր զարգացումը, ամէն դարաչրջաններէն մանրամասն նմոյչներ կը ներկայացնէ , հասնելու համար մինչեւ 19րդ դարաչրը – ջանը, ակնարկ մը նետելով նաեւ Նահա – պետ Ռուսինեանի «Ուղղախօսութիւն Ար – դի Հայ Լեզուին», ինչպէս նաեւ Միհրան Զերազի «Ընտրողական Աչխարհաբարին», բարեհոգումն ճախողած փորձերուն : Որուն կը յաջորդեն Գրաբարի եւ Աչխար – հաբարի սուր պայքարները, մինչեւ 1890 թուականները, երբ վերջ կը գտնեն աչ – խարհաբարի յաղթանակով :

Աչխարհաբարը ճոխացնելու համար , հեղինակը կը թելադրէ բազմաթիւ գրա – բար բառեր, մեր մատենագիրներէն քաղ – ուած, որոնց մէկ մասը արդէն գործած – ուած են մեր բանաստեղծներուն եւ ար – ձանագիրներուն կողմէ : Շնորհիւ այդ աչխատանքին է, որ աչխարհաբարը կեն – դանի լեզուի մը ճոխութիւնն ու կատա – րելութիւնը ստացած է : Հր. Ն. Թորոս – եանին այս ձեռնարկը մեծ դիւրութիւն պիտի տայ բոլոր անոնց, որոնք այս նիւ – թին վերաբերեալ ընդարձակ եւ մանրա – մասն գրականութեան մը փոխարէն, խը – տացած եւ յստակ ձեռնարկ մը պիտի ու – նենան տրամադրելի :

×

Հարիւրաւոր, նոյնիսկ հազարաւոր է – ղեր պարունակող եւ չատախօսութիւննե – րով լեցուն հատորներն այնքան չահեկան եւ օգտակար չեն, որքան այս մէկը, որ նահանգի մը մէկ գիւղին մշակոյթի պատմութեան վկայութիւնը կը բերէ :

Հեղինակը կը ճանչնանք : Ոչ միայն կրթական առաքելութեան մը լծուած էր երէկ, այլեւ «Համատիւռ» խորագրով , գաւառական խօսակցութիւններով ու տե – սարներով, պատմուածքներու հաւաքա – ծոյ մը կը ստորագրէր : Ահաւասիկ նոյն վաստակաւորը, իր հայրենի «Խուլթիկ » գիւղին, մշակոյթի պատմութեան կը նը – ւիրէ հատոր մը : Շատերը պիտի զարմա – նան, հարցնելով թէ գիւղ մը, որուն ա – նունը չատերու անծանօթ է, ի՞նչպէս կը – նայ կարեւորութիւն ստանալ, եւ իր տնտ – չաբանութիւնը, հնչափոխութիւնը եւ բա – ռակազմութիւնը առանձնայատուկ օ – րէնքներով յատկանչուիլ, դառնալու հա – մար մասնաւոր բարբառ մը : Այսպէս չէ՞ն ընդհանրապէս մեր բոլոր բարբառները , որոնք քանի մը տասնեակի կը հասնին , ներկայացնելով լեզուական, բանասիրա – կան եւ բարբառին յատկանիչներ, պահ – լով յաճախ Մայր Լեզուին հետ իրենց ու – նեցած նմանութիւններն ու օրէնքները , ինչպէս «Խուլթիկ»ի բարբառը :

Եդուարդ Տարօնեան իր ծննդավայրին քերականութիւնը չի տար միայն , այլեւ մշակոյթի հարստութիւնները, առածներ, ասոյթներ, մպղթանքներ, հանելուկներ, հէքեաթներ եւայլն , եւայլն , հագուստ կապուստը, հողի բերքերը, արհեստնե – րը, առտնին կեանքը :

Բարեբախտաբար հեղինակին մօտ եր – բեք չէ պակաս նուիրումի ոգին, հակա – ռակ իր ֆիզիքական աննպաստ պայման – ներուն :

ՄԿՐՏԻՉ ՊԱՐՍԱՄԵԱՆ

Յ. Գ.— 1. *Հրաչեայ Աճառեան եւ իր լիակատար Քերականութիւնը» (վերլու – ծական եւ քննական փորձ մը «Ներածա – կան» հատորին) : Անուշաւան Վրդ. Զղլ – եանեան, տպ. Սրբոց Յակոբեանց, Երու – սաղէմ, 1960 :*

2. *«Արեւմտահայ աչխարհաբարի ծա – գումը եւ զարգացումը» եւ ի՞նչպէս ճո – խացնել արդի հայերէնը : Հր. Ն. Թո – րոսեան, տպ. Պայքարի, 1961 :*

3. *«Բաղէշի նահանգի խուլթիկ գիւղի բարբառը», Եդուարդ Տարօնեան, Անթի – լիաս, 1961 :*

1961 Ի ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՐԵՒՈՐԱԳՈՑՆ ԴԷՊՔԵՐԸ

—o—

(Բ. եւ վերջին մաս)

ՍԵՊՏԵՄԲԵՐ

1.— *Պելկրատի մէջ դումարուեցաւ ոչ – դաչնակից երկիրներու խորհրդաժողովը :*

— *Խորհրդ. Միութիւնը կոթիզային փորձերը վերսկսելով՝ առաջին ռումբը պայթեցուց :*

4.— *Ոչ – դաչնակից երկիրներու խոր – հրդաժողովը որոչեց խաղաղութեան հա – մար կոչ ուղղել նախագահ Քենըտիի եւ վարչապետ Խրուչչեւի :*

9.— *Անյաջող մահափորձ կատարուե – ցաւ նախագահ տը Կոլի դէմ :*

15.— *Միացեալ Նահանգներն ալ կոթի – զային փորձերը վերսկսելով առաջին ռումբը պայթեցուցին դեռեին տակ :*

— *Մենաերէս , Փոլթքան եւ Զոլ – վաստակաւորը, իր հայրենի «Խուլթիկ » գիւղին, մշակոյթի պատմութեան կը նը – ւիրէ հատոր մը : Շատերը պիտի զարմա – նան, հարցնելով թէ գիւղ մը, որուն ա – նունը չատերու անծանօթ է, ի՞նչպէս կը – նայ կարեւորութիւն ստանալ, եւ իր տնտ – չաբանութիւնը, հնչափոխութիւնը եւ բա – ռակազմութիւնը առանձնայատուկ օ – րէնքներով յատկանչուիլ, դառնալու հա – մար մասնաւոր բարբառ մը : Այսպէս չէ՞ն ընդհանրապէս մեր բոլոր բարբառները , որոնք քանի մը տասնեակի կը հասնին , ներկայացնելով լեզուական, բանասիրա – կան եւ բարբառին յատկանիչներ, պահ – լով յաճախ Մայր Լեզուին հետ իրենց ու – նեցած նմանութիւններն ու օրէնքները , ինչպէս «Խուլթիկ»ի բարբառը :*

Եդուարդ Տարօնեան իր ծննդավայրին քերականութիւնը չի տար միայն , այլեւ մշակոյթի հարստութիւնները, առածներ, ասոյթներ, մպղթանքներ, հանելուկներ, հէքեաթներ եւայլն , եւայլն , հագուստ կապուստը, հողի բերքերը, արհեստնե – րը, առտնին կեանքը :

Բարեբախտաբար հեղինակին մօտ եր – բեք չէ պակաս նուիրումի ոգին, հակա – ռակ իր ֆիզիքական աննպաստ պայման – ներուն :

ՄԿՐՏԻՉ ՊԱՐՍԱՄԵԱՆ

Յ. Գ.— 1. *Հրաչեայ Աճառեան եւ իր լիակատար Քերականութիւնը» (վերլու – ծական եւ քննական փորձ մը «Ներածա – կան» հատորին) : Անուշաւան Վրդ. Զղլ – եանեան, տպ. Սրբոց Յակոբեանց, Երու – սաղէմ, 1960 :*

2. *«Արեւմտահայ աչխարհաբարի ծա – գումը եւ զարգացումը» եւ ի՞նչպէս ճո – խացնել արդի հայերէնը : Հր. Ն. Թո – րոսեան, տպ. Պայքարի, 1961 :*

3. *«Բաղէշի նահանգի խուլթիկ գիւղի բարբառը», Եդուարդ Տարօնեան, Անթի – լիաս, 1961 :*

ԱՄԲԱՍՏԱՆԵԱԼ ՍԹԱԼԻՆ, ՈՏՔԻ՛

—o—

Թրոցքի կնոջը հետ պարտէզը լքած է՝ նապաստակները կերակրելու համար : Տի – կին Թրոցքի կը մտահոգուի ձագոնի ա – ռողջութեամբ .

— Հիւանդ կ'երեւաք. դուք ձեզ խնա – մել տուէք :

Ապա առանձին կը ձգէ երկու մարդի – կը : Երիտասարդը կ'ուզէ Թրոցքիի կար – ծիքն առնել ամերիկեան պարբերաթերթ – մի համար դրած իր մէկ յօդուածին մասին : Թրոցքի կը սկսի կարդալ դրու – թիւնը : Ձագոն, վերարկուին տակը պահուած տարճանակը կը հանէ եւ կը կրակէ :

Թրոցքի գետին կը փռուի : Հարուածը մահացու է թէեւ, բայց 25 ժամ յետոյ միայն պիտի մեռնի :

Քարտուղարները վազելով կը հասնին , անչարժութեան կը դատապարտեն ոճրա – գործը. իրենց կատաղութեան մէջ կ'ու – զեն սպաննել զայն, բայց Թրոցքի մեծ ճիգով կը բանայ աչքերը :

— Մի մեռցնէք, պէտք է որ խօսի , — կ'ըսէ թոյլ ձայնով :

Ձագոն չխօսեցաւ. կամ ինչ որ ը – սաւ՝ ոստիկանութիւնն ու արդարութիւ – նը սխալ հետքերու վրայ դնելու սահման – ուած էր : Վրայէն նամակ մը դտնուեցաւ , որուն մէջ կը բացատրէր իր գործած ա – րարքին պատճառները. Թրոցքի դինք յու – սահար ըրած ու խաբած էր : Թրոցքի , որ ինքզինք կը ներկայացնէր որպէս միջազ – գային բանուորութեան առաջնորդը՝ բանուոր դասակարգին թշնամին էր :

Այս նամակը, իրականին մէջ խմբա – գրուած էր էնքավէտէի սպասարկու – թեանց կողմէ : Մինչ Թրոցքիի քարտու – ղարները կը ծեծէին ու կը հարցաքննէին Ձագոնը , այս վերջինը վայրկեան մը կորսնցուցած էր իր պաղարիւնութիւնն ու պռոցած՝

— Իրենց ձեռքը խաղալիք ու գործիք եմ. մայրս իրը պատանդ կը պահեն :

Բայց չուտով ինքզինք վերագտաւ ու մինչեւ վերջն ալ ժխտեց էնքավէտէի հետ որեւէ կապ ունենալը, մերժեց նաեւ իր իսկական ինքնութիւնը յայտնել : (Իրա – կանին մէջ կը կոչուէր Ռամոն Մերքա – տէս , ու երբ աւարտեց քսան տարի բան – տարկութեան չրջանը, ազատ արձակուած օրն իսկ Մեքսիքայէն անցաւ Չեխոսլո – վաքիա , ու ապա՝ Մ. Մխութիւն) :

ԷՆՔԱՎԷՏԷԻ ՆԿՈՒՂՆԵՐԸ

Զինովիեվ , Կամենեւ , Ռիքով եւ Բու – խարին խղճալի վախճան մը ունեցանվու – պիանքայի նկուղներուն մէջ : Այս չէնքը, որ կեանքի ապահովագրական ընկերու – թեան մը համար չինուած էր, խորհրդա – յին վարչակարգի հաստատումէն եռք գործած էր Մոսկուայի քաղաքական ոս – տիկանութեան — Չեկա , ապա՝ կէպէու , ապա՝ էնքավէտէ , ու վերջապէս՝ Էմվէ – տէ — կեղրոնատեղին. այսինքն՝ մահ – ուան նախասենեակը :

Լուպիանքայի նկուղներուն մէջ սպան – նուեցան ոչ թէ հրացանազարկութեամբ, այլ՝ խորհրդային ոստիկանութեան իւ – րայատուկ մեթոտով : Բանտարկեալը իր խցիկէն դուրս կը հանեն որեւէ պատճա – ռաբանութեամբ, ու մինչ կը քալէ ամայի նրբանցքի մը մէջէն, բանտարկեալին ե – տեւէն եկող պահակը կը քաչէ ատրճա – նակն ու զնդակ մը կը տեղաւորէ անոր ծոծրակին մէջ :

Այսպէս մեռան Լենինի գործակիցները՝ Լուպիանքայի այս միեւնոյն չէնքին մէջ արուեստի նրբութեան հասցուած չարչա – րանքներ կրելէ վերջ : Չարչարանք, որ – պէսզի ոչ միայն խոստովանին իրենց չը – կատարած ոճիրները, այլ նաեւ որպէսզի համակերպին հրապարակաւ, զղայա – ցունց դատավարութեանց ընթացքին, կատարել այս սխալ խոստովանութիւն – ները :

Բանտարկեալներէն բոլորը տեղի չտը – ւին «ճնչումներուն », եւ սպաննուեցան առանց դատավարութեան : Միւսները՝ հրապարակաւ խոստովանեցան թէ իրենց վրայ ծանրացող ամբաստանութիւնները իրաւացի են. թերեւս կը յուսային իրենց կեանքը փրկել այս ձեւով : Այդինքն՝ «Մոսկուայի դատավարութիւնները» է – ղան, որոնք համաչխարհային հանրայի – կարծիքը ապչութեան մատնեցին :

— 1936 Օգոստոսին՝ « Թրոցքիական – դինովիեվական ահաբեկիչ խմբակի» դա – տավարութիւնը, Զինովիեվի, Կամենեւի, Սմիրնովի եւ տասներեք այլ բոլչեւիկնե – րու մասնակցութեամբ :

— 1937 Յունուարին՝ «Թրոցքիական հակա – խորհրդային խմբակի» դատա – վարութիւնը՝ «Փրաւտա»ի նախկին խմ – բագրապետ Ռատէքի, Բիատաքովի եւ ի – րենց տասնըհինգ «մեղսակիցներ»ու մա – նակցութեամբ :

— 1938 Մարտին՝ «աչակերտականներու եւ Թրոցքիական պլոք»ի դատավարու – թիւնը՝ Բուխարինի , Ռիքովի , եւ տասնը – ութ ուրիչ ամբաստանեալներու (որոնց չարքին՝ Իակոտա եւ Կրեմլինի երեք բը – ժիչկները) մասնակցութեամբ :

Այս մարդիկը ամբողջ աչխարհի մէջ ճանչցուած էին որպէս խորհրդայի – վարչաձեւի հիմնադիրները :

(20 Շար.)

ԿԱՐԻԱՑԵՔ ՏԱՐԱԾԵՑԵՔ «ԾԱՌԱՅ»Ը

մահուան դատապարտուեցան : Ապա կախուեցան :

17.— ՄԱԿի ընդհանուր քարտուղար Տակ Համմըշոլտ օդանաւային արկածի զոհ գնաց Քոնկոյի մէջ :

— Արեւմտեան Գերմանիոյ մէջ կառաւած ընտրութեանց ընթացքին կառավարական Քրիստոնեայ դեմոկրատ կուսակցութիւնը կորնչուց իր ունեցած բացարձակ մեծամասնութիւնը :

26.— Խորհրդ. արտաքին նախարար Անդրէյ Կրոմիքօ մեկնեց նախագահ Քէնըտիի ապագինման առաջարկը :

29.— Ֆրանսայի եւ Թունուզի միջեւ համաձայնութիւն ստորագրուեցաւ՝ Պիզերթէն Ֆրանսական ուժերու մեկնումին չուրջ :

— Սուրիոյ մէջ անջատողական շարժում ծայր տուաւ եւ Սուրիա բաժնուեւ Արաբական Միացեալ Հանրապետութենէն :

ՀՈԿՏԵՄԲԵՐ

16.— Մոսկուայի մէջ իր աշխատանքները սկսաւ Խորհ. Միութեան Համայնավար կուսակցութեան 22րդ համագումարը :

17.— Համագումարին առջեւ Խրուշչեւ յայտնեց Խորհրդ. Միութեան եւ Ալպա նիոյ միջեւ տարակարծութեան դոյութիւնը :

26.— Զօրավար Կիւրսէլ Թուրքիոյ Հանրապետութեան նախագահ ընտրուեւ :

27.— Միացեալ Նահանգները յայտարեցին արձակեցին աշխարհի ամէնէն զօրաւոր «Կրոնոս» հրթիռը որ 460 Թոն ծանրութիւն ունէր :

28.— Սթալինի մարմինը Լենինի դամբարանէն փոխադրուեցաւ Կրեմլինի պարտէզը :

30.— Խորհրդ. Միութիւնը 50 – 70 մեկաթոննոց ռումբ մը պայթեցուց :

31.— Խորհրդ. Միութեան Համայնավար կուսակցութեան 22րդ համագումարի աշխատանքները աւարտեցան Մոսկուայի մէջ :

ՆՈՅԵՄԲԵՐ

3.— ՄԱԿի մօտ Պիրմանիոյ ներկայացուցիչ Ու Թան ՄԱԿի առժամեայ ընդհանուր քարտուղար ընտրուեցաւ :

7.— Տաքթ. Ատենաուըր Արեւմտեան Գերմանիոյ վարչապետ վերընտրուեցաւ եւ Ազատական կուսակցութեան հետ դաշնակցաբար դահլիճ կազմեց :

11.— Խորհրդ. Միութեան նախկին վարչապետ եւ արտաքին նախարար Մոլոթով հսկողութեան տակ վիէննայէն Մոսկուա փոխադրուեցաւ :

— Քոնկոյի մէջ, 13 իտալացի օդանաւորդներ սպաննուեցան բնիկներու կողմէ : Օդանաւորդները կը ծառայէին ՄԱԿի ուժերուն մէջ :

20.— Ուշինկթընի մէջ, նախագահ Քէնըտի վերմանական հարցի չուրջ խորհրդակցութիւն սկսաւ վարչապետ Ատենաուըրի հետ :

24.— Եուկոսլաւ կառավարութիւնը յայտարարեց թէ այլեւս անպայ կը նկատէ Պալքանեան դաշինքը :

28.— Կորիզային փորձերուն վերջ տալու համաժողովի աշխատանքները սկսան Ֆրանսայի մէջ :

— Մոսկուայի «Իզվեստիա» թերթը հրապարակեց միջազգային հարցերու չուրջ նախագահ Քենըտիի հետ իր խմբագրապետ Ատուպէյի ունեցած երկար տեսակցութիւնը :

30.— Պուլկարիոյ փոխ – վարչապետ Զերվենկով երբեւ սթալինեան ամբաստանուելով՝ պաշտօնանկ եղաւ :

ԴԵԿՏԵՄԲԵՐ

11.— Խորհրդ. Միութիւնը խզեց իր դիւանագիտական յարաբերութիւնները Ալպանիոյ հետ :

14.— Ալպանիոյ վերջին հպատակները խմբովին հեռացան Մոսկուայէն :

15.— Ատլանտեան Ուխտը որոշեց Պերլինի հարցին չուրջ բանակցութիւնները վերսկսիլ Խորհրդ. Միութեան հետ :

— Պաեերպրմի ոճրագործ Ատոլֆ Այխմանի մահուան դատապարտուեցաւ Իսրայէլի դատարանին կողմէ :

19.— Հնդկական ուժերը, 36 ժամ տեւած դործողութիւններէ յետոյ, գրաւեցին Հնդկաստան գանուող Կոա, Տաման եւ Տիւ Փորթուկալեան դաղթավայրերը :

21.— Նախագահ Քենըտի եւ վարչապետ Մաքմիլըն Պերմուտեան կղզիներուն մէջ հանդիպում ունեցան՝ վերմանական հարցը եւ միջազգային դլխաւոր հարցերը քննելու համար :

26.— Նախագահ Քենըտի Ծնունդի առթիւ Պերլինի բնակիչներուն յղած պատդամագրին մէջ չեչտեց. «Պերլին պիտի մնանք մինչեւ որ որեւէ պարիսպ իրարմէ չբաժնէ այս քաղաքի բնակիչները» :

Քաղեց՝ Ա. Օ.

ՀԱՅԱՍՏԱՆ

ՎԱՍՏ ՊՐՆԲՅԻԱՆՈՒԻ ԳՈՐԾԸ՝ ԱՆԳԼԵՐԷՆ

Անգլերէնի թարգմանուած լոյս տեսաւ ռումանացի ծանօթ հայագէտ Վաստ Պրնբյիանուի մէկ յօդուածը՝ «Ուրարտա – կան մասնիկները գրաբարի մէջ» : Հեղինակը անդրադառնալով հայերէնի եւ ուրարտերէնի կապերուն, ցոյց կուտայ ուրարտերէն մասնիկներուն մուտքը հայերէն լեզուին մէջ :

ԹԱԼԻՆԻ ԽԱՐԱՄԸ

Թալինի կարմրաչէն աւանին մօտերը կը դտնուի «Կարմիր բլուր»ը, որուն «Ամուլ սար» անունը կուտային մինչեւ վերջերս պիւղացիները : Հայ երկրաբանները այդ վայրին մէջ յայտնաբերեցին խարամի մեծ պաչարներ եւ հիմա այդ բլուրը կը կոչուի «Ոսկէ սար» :

Կարմրաչէնի խարամով կը չինուին միջնադարեան, պատի սիւներ եւ այլն :

ՕԳՏԱԿԱՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒ ԳԻՐՔԸ

« Կենցաղային օդտակար խորհուրդներ » անունով գիրք մը լոյս տեսաւ վերջերս Հայաստանի մէջ : Ամենօրեայ եւ ամէն մարդու համար օդտակար դիտելիքներ կան այս գիրքին մէջ : Օրինակ, հագուստները ի՞նչպէս եւ ինչո՞վ պէտք է մաքրել, տուներու մէջ ծաղիկներ խնամելու կերպերը, ճաշեր պատրաստելու եղանակները եւն. եւն. :

ՆՈՐ ՔԱՂԱՔՆԵՐ

Պաշտօնական երկու հրամանագիրներով, Հայաստանի Գերագոյն Խորհուրդի Նախագահութիւնը քաղաքներու չարքին կը դասէ Հրազդանի չրջանի Լուսաւան եւ Ազիզբէկովի չրջանի Ջերմուկ քաղաքատիպ աւաններըը :

ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

Այս տարի բացուեցաւ Հայաստանի 11րդ բարձրագոյն ուսումնարանը, Երեւանի ռուսական եւ օտար լեզուներու մանկավարժական դպրոցը : Աշրէն 900 ուսանողներ արձանագրուած են : Դպրոցը ունի նաեւ դիշերային դասընթացքներ :

ԲԺ. Ա. ԹՈՒՄԵԱՆ

Երեւանի թերթերէն կ'իմանանք, թէ միջազգային ծանօթ վիրաբոյժ մը դարձած է Հայաստանցի բժիշկ մը՝ Արտաշէս Թումեան : Հայ բժիշկը կը գրաւի կուրծքի վանդակի օրկաններու՝ սրտի եւ թոքերու վիրաբուժութեամբ, ինչպէս նաեւ ձեւընկալ վիրահատութեամբ : Բազմաթիւ առիթներով մասնակցած է վիրաբոյժներու Հայաստանի, Անդրկովկասի եւ Խորհրդ. Միութեան համագումարներուն, իսկ վերջին երեք տարիներուն՝ մասնակցած է ձեւընկալ վիրահատութեան Լոնտոնի միջազգային համագումարին, սրտանօթային վիրահատութեան Պարսկերնի Եւրոպական համագումարին, ուր կարդացած է զեկուցումներ : Այցելած է Փարիզ եւ այլուր :

Վերջերս Լոնտոնի մէջ անգլերէնի թարգմանուած հրատարակուեցաւ Բժ. Ա. Թումեանի վերահսկողնիչ ձեւընկալ վիրահատութեան հարցերուն նուիրուած 1960ի զեկուցումը : Ամերիկեան, անգլիական եւ իտալական բժշկական համալսարաններ եւ կեդրոններ հետաքրքրուած են հայ վիրաբոյժին դործերովը :

ՀԱՅԿ. ՕՍԿԵՐՉՈՒԹԻՒՆԸ

Երեւանի թերթերը դոհունակութեամբ եւ արդար հպարտանքով կը հաստատեն հայ ոսկերիչներուն փայլուն յաջողութիւնները միջազգային ցուցահանդէսներու մէջ : Հայկական գարդերը՝ ոսկիէ մեծ պաչարներ, ապարանջաններ, մատանիներ, ականջօղեր, ոսկեզօծ արծաթէ ամանեղէն եւ ուրիշ շատ մը իրեր, ամէն տեղ գրաւած են իրենց գեղեցկութեամբ եւ նրբագործութեամբ :

ՄԵԾԱՐԱՆՔ

Տիկին Մարգրիտ Արաքսիա Խմկրեան (Տիկին Կոմսուէի Փաթրիմոնիո) արժանացած է պատուոյ վկայականի : Արտաքին նախարարութեան ցանկին մէջ իր անունին կից գրած է նաեւ իր ամուսնոյն անունը : Տիկին Փաթրիմոնիո – Խմկրեան արդէն ունէր «Միս Նայթինկէյլ»ի ոսկի մէկ մետալը որ երկու տարին անդամ մը կը տրուի միայն երկու արժանաւոր թեկնածուներու :

կամ արծաթէ, մեծապէս պնդացուեցան անցեալ տարի Թէ Մոնրէալի (Քանատա) եւ Թէ Մոսկուայի միջազգային ցոնապաճառներուն մէջ :

Թերթերուն տեղեկութեանց համաձայն, հայ վարպետները պատրաստած են 120 տեսակ ոսկիէ մատանիներ, օղեր, ապարանջաններ, կրծքազարդեր, շաքարամաններ, գինիի եւ քոնեաքի սպասներ, անձեռնոցներու պատուանդաններ եւն. :

ԲԱՆԱՍՏԵՂԾ – ԱՇՈՒՂԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

Բանաստեղծ – աչուղ եւ նկարիչ Նաշաղ Յովնաթանի ծննդեան 300ամեակին նուիրուած դիտական համագումար մը տեղի ունեցաւ Երեւանի մէջ, նախաձեռնութեամբ Մատենադարանին եւ Հայաստանի Գիտութիւններու Ակադեմիայի գրականութեան կաճառին :

Կարդացուած են շատ հետաքրքրական եւ դիտական բովանդակութեամբ տեղեկաբերութիւնները, ինչպէս «Նաղաշ Յովնաթանի կեանքն ու դրական ժառանգութիւնը», «Նաղաշ Յովնաթանը եւ Յովնաթանեաններու դպրոցը», «Հայ նոր դրականութեան նախանշանները ԺԶ. – ԺԷ. դարերու տաղերդութեան մէջ եւ Նաղաշ Յովնաթանը», «Նաղաշ Յովնաթանը եւ աչուղական պոէգիան » :

Գիտական համագումարին առթիւ կազմակերպուած է նաեւ ցուցահանդէս մը Մատենադարանի սրահներուն մէջ : Լուսանկարներով ներկայացուած են աչուղին ծննդավայրը եւ շրջակայքը, մեծ քնարերգուին գործերուն ձեռագիր եւ տպադիր տաղարանները, տաղերուն թարգմանութիւնները, անոր մասին եղած ուսումնասիրութիւններ եւ յօդուածներ :

ԳԷՈՐԳ ԳՈՅԵԱՆ ԿԸ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒԻ

« Հայ Թատրոնի 2000 տարին » շատ արժէքաւոր գործին հեղինակը՝ Գէորգ Գոյեան, հայ թատերական արուեստին զարգացման գործին մէջ մատուցած մեծ ծառայութիւններուն համար ստացաւ « արուեստի վաստակաւոր գործիչի » պատուոյ կոչումը՝ չնորհուած Հայաստանի Գերագոյն Խորհուրդի նախագահութեան կողմէ :

«ՅԱՌԱՋ»ի ԹԵՐԹՕՆԸ (139)

ԹԻԱՊԱՐՏԸ

(ՎԷՊ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿԵԱՆՔԷ)

ԳՐԵՑ

ԱՐՄԷՆ ՇԻՏԱՆԵԱՆ

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Երբ Եւրոպայի դիւանագիտական չրջանակներու մէջ հայկական անկախութեան ձայնը լսուի, երբ մեծ պետութիւնները վաւերացնեն անոնց գործակցութիւնը, այն առեն մեր ծանուցագիրը կը մեր վերջնագիրը, մեր սպառնալիքը Քիւրտերուն ու Համիտին վրայ կրնան ազդել :

— Ոհ, ցաւալի բան ... մենք զեղա – ցիներս, շատ միամիտ ենք եղեր որ կը հաւատայինք թէ քաղաքը գանուող մեր կուսակցութեանց ներկայացուցիչները մեծ ձայն ու ազդեցութիւն կրնան բանեցնել տիրահռչակ Համիտին վրայ : Աղէկ, գոնէ մէկուն մը խորհեցէք... ի՞նչ ընեն սա քիւրտ պէկերուն հետ : Բերանին արիւն կը հոտի : Գաղանի մը պէս մեզ յօշոտել կ'ուզեն : Ոչ գիշեր, ոչ ցերեկ եւ ոչ ալ մէկ առեն հանդիստ ենք ... : Իրենցն է մեր ստացուածքը... իրենցն է մեր աշխատութեամբ ձեռք բերած օրապահիկը. մէկ խօսքով իրենցն է մեր պատիւը ... : Չենք կրնար դիմանալ. ինչ ընենք :

Ոչ, բարեկամս առանկ մի մտածէք : Գիտցէք որ յեղափոխական կուսակցութեան մը ներկայացուցիչը չկրնար ուրիշ կերպով աղդեցութիւն բանեցնել քոնա – պետական Ուխժիմին վրայ, եթէ ոչ բռնութեան, արիւնի դէմ արիւն, վերջապէս ուժի դէմ ուժ գործածելով :

— Ճիշդ մեր ուղածն ալ այդ է, պարոն. մենք դիւղացիներս ոչ համբերելու ուժ ունինք, ոչ տրամադրութիւն : Գիտցէք որ յուսահատութիւնը շատ բան կ'ընէ. եւ մենք ամէնքս ալ յուսահատած ենք : Ահա այդ պատճառաւ Ներսէս Արծրունին ձեզի դրկեց գիս որ հասկնամ թէ ի՞նչ տրամադրութիւն ունիք... ի՞նչ կը մտածէք ներկայ պարագաներուն մէջ եւ մինչեւ ե՞րբ պիտի լռէք :

Երիտասարդը նորէն լուռ մնաց : Իր հրատապ գանկին տակ մտածում մը կար, զոր յայտնելու չէր համարձակեր : 0°Հ, կը զդար թէ իր դէմը գտնուղ մարդը պարզ դիւղացի մը չէր... այլ՝ դաստիարակուած ու զարդացած մէկը կ'երեւար ան :

— Կեցէք... մրմնջեց երիտասարդը ճիպ մը ընելով, ձեր դիւղին մէջ կարելի՞ է ենթակոմիտէ մը կազմակերպել :

— Ենթակոմիտէն ի՞նչ է ... հարցուց Ներսէս Արծրունին՝ ապուշ ձեւ մը ընելով :

Այսինքն թէ մասնաճիւղ մը ունենաք որ ենթարկուած ըլլայ տեղւոյս կեդրոնական կոմիտէին, բացատրեց երիտասարդը՝ առանց հասկնալու թէ դէմի մարդը կը հեղնէր զինքը :

— Վայ... դուք մասնաճիւղերուն եւ-թակոմիտէ անուն կուտաք :

— Այո :

— Էյ, ենթադրենք թէ կազմուեցաւ ... ի՞նչ պիտի ըլլայ :

— « Ենթադրենք թէ կազմուեցաւ» ը – սելով չի վերջանար, բարեկամս, պէտք է կազմել. կը խոստանա՞ք :

— Ե՞ս :

— Այո, դուք :

— Կը դարմանամ... ես որ առաջին անդամ ըլլալով կը լսեմ ենթակոմիտէ բառին նշանակութիւնը ... ես որ տղէտ ու պարզ դիւղացի մըն եմ, պարոն, ի՞նչպէս կրնամ առանկ ծանր բեռ մը վրաս առնել : Երեւակայեցէք ... ի՞նչ կրնամ ընել եւ ի՞նչ օդուտ կարելի է սպասել ինէ :

— Հոդ չէ, չուտով կը հասկնաք ա – նոր նշանակութիւնը : Բաւական է որ ձեր դիւղին մէջ քանի մը համակիրներ ունենաք ... Այն առեն կամաց կամաց դէնքեր ալ պիտի հասցնենք :

— Անպատճառ ենթակոմիտէն կազմուելէն ե՞տքը պիտի ըլլայ այդ օդնութիւնը :

— Ի հարկէ :

— Մինչ ուրիշ կերպով չէ՞ք վստահիր :

— Ամենեւին ... ենթակոմիտէ մը չէ-ղած, մենք չենք կրնար ձեր դիւղին մէջ ոչ ուժ ունենալ, ոչ ալ դէնք :

— Քանի որ այսպէս է, խօսեցէք ինծի ձեր պայմանները, յայտնեցէք թէ ի՞նչ են ձեր կուսակցութեան հայեացքները, միջոց ու գործունէութեան եղանակը ... յայտնեցէք որպէսզի Ներսէս Արծրունին երթամ ու պարզեմ ամէն բան : Եթէ հարկ է ենթակոմիտէ մը ունենալ, անիկա կարող է հաւանութիւնը տալ ...

— Ներսէս Արծրունին այդ հաւանութիւնը պիտի չտայ :

— ի՞նչու համար :

— Անիկա կազմակերպութեան հիմնադիրներէն է .

— Թող ըլլայ. չէ՞ որ անկախութեան դիմումը մըն է :

— Իրաւ է ... բայց դաղափարի մեծ տարբերութիւններ ունինք :

— Ի՞նչ են այդ տարբերութիւնները :

(Շար.)

« ՅԱՌԱՋ » ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

Սարգիս Մարզարեան, Նոր Տարուան առթիւ մէկ տարեկան «Յառաջ» կը նուիրէ իր հօրը՝ Դաւիթ Մարզարեանի :

ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ՏԱՆ

Մխիթար Ասորեան եւ Վահէ Բամպուք – ճեան տասնական Ն. Ֆ. կը նուիրեն Յա – րութիւն Օնպաչեան սրահին, Թոռնիկ Թէրզեանի մահուան քառասունքին առ – թիւ : (Ստանալ «Յառաջ»էն) :

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Պ. Պ. Յակոբ եւ Մովսէս Ժամկոչեան շնորհակալութիւն կը յայտնեն բոլոր ա – ռնց որոնք անձամբ, դրւոր, ծաղկե – պակով ցաւակցութիւն յայտնեցին ի – րենց քրոջ եւ քրոջ զաւակներուն՝

ՍԻՐՎԱՐԴ ՍԸՆԸՔՃԵԱՆԻ
ԺԻՐԱՅՐ եւ ՄԱՌԻ ՍԸՆԸՔՃԵԱՆԻ

դառնաղէտ մահուան առթիւ :

ՆՈՒԷՐ

Տիկին Եղիսաբէթ Տէր – Ղուկասեան, իր նահատակուած հարազատներուն յի – շատակին տասը Ն. Ֆ. կը նուիրէ Ֆ. Հ. Կապոյտ Խաչի Անկէնի մասնաճիւղին :

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Ֆ. Կ. Խաչի Պորտոյի մասնաճիւղը իր դպրոցին համար շնորհակալութեամբ ըս – տացած է Պ. Վ. Վարդանեանէ յիսուն Ն. Ֆ., Օր. Արմենուհի Քինոսեանի (վիէնի Խաչուհի) վաղահաս մահուան առթիւ :

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Այս կիրակի Փարիզի Ս. Յովհ. Մկր – տիչ եկեղեցւոյ մէջ յետ հանդիսաւոր պատարագի, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի եկեղեցւոյն, մեծ բա – րեբար Ալեքսանդր Մանթաշեանի եւ Մանթաշեան գերդաստանի համայն նը – ջեցեալներու հոգւոց հանգստեան :

Հայ հասարակութիւնը սիրով կը հրա – ւիրուի :

Կ'ՈՒԶՈՒԻ

Պաշտօնական դրասենեակի մը մէջ աշ – խատելու համար, երիտասարդ տաքթիլօ օրիորդ մը կը փնտռուի : Մանրամաս – նութեանց համար դիմել ՅԱՌԱՋ :

ԿԸ ՓՆՏՌՈՒԻ

Նոր Բայազիտէն (այժմ կամօ) Գոհար Մկրտիչեան կը փնտռէ եղբայրը, Սահ – ակ Մեսրոպի Մկրտիչեանը, ծնած է Նոր Բայազիտ 1921ին : Լսած է որ Նիմ քաղաքը կը գտնուի : Տեղեկութիւն ունե – ցողներէն ջերմապէս կը խնդրուի լուր տալ Փարիզի եկեղեցին, 15 Րիւ ժան Կու – ժօն, Փարիզ (8) :

Կ'ՈՒԶՈՒԻ

Դերձակի փուրնիթիւրի խանութի մը համար, պարոն մը որ վերջացուցած ըլ – լայ իր զինուորական պարտականութիւ – նը եւ կառք վարելու արտօնութիւն ունե – նայ : Դիմել՝

17, Rue Saulnier

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ՔԵՐՈՎԲԷ ԿԱՐԱՊԵՏԵԱՆԻ

ԱԼՊՈՄ ՅՈՒՇԱՄԱՏԵԱՆ

ՆՈՒԻՐՈՒԱԾ

ՏԱՐՕՆ ԱՇԽԱՐՀԻ

Բ. ՄԱՍԸ ՆՈՒԻՐՈՒԱԾ Է ՀԱՅԱՍ – ՏԱՆԻ ՔԱՌԱՄՆԱՄԵԱՑ ՇԻՆԱՐԱ – ՐԱԿԱՆ ՎԵՐԵԼՔԻՆ :

Տպարան ՏԱՐՕՆ, Լիոն, 1962

Դիմել հեղինակին՝
Ք. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ (Տարօն)

20, Avenue des Cottages
CALUIRE (Rhône)

ՊԱՏԱՐԱԳ ՉԱՅՆԱՓԻՒՌԻՆ

Այս կիրակի առաւօտեան ժամը 10·30 – ին, հայածէս ճայնաւոր պատարագ եւ քարոզ պիտի ճայնասփռուի Վատիկանի կայանէն հետեւեալ ալիքներու վրայ : Մէջին ալիք 196մեթր : կարճ ալիք 31·10, 25·55, 19·84 :

Պիտի պատարագէ՝

ԳԻՈՐԳ ԱՐՔ. ԼԱՁԻՔԵԱՆ

(Առաջնորդ Հալէպի հայ կաթ. Հա – մայնքին) :

Պիտի քարոզէ՝

ՆԵՐՍԷՍ Ծ. Վ. ՍԷԹԵԱՆ

Նիւթ՝ «Տեսանելի եկեղեցւոյ, տեսա – նելի իշխանութիւնը » :

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

ԿԱՊՈՑՏ ԽԱՉԻ ՕՐԸ

Ֆ. Կ. Խաչի օրը կը տօնուի Ապրիլ 1ին, կիրակի, կէսօրէ վերջ, Շիմիի սրահը :

×

ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԸ Կ'ԵՐԳԵՆ

ՄԱՐՏ 18ԻՆ

×

Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ

Ծննդեան 1600ամեակը համազգային շուքով կը տօնուի Մարսէյլի մէջ :

Փետրուար 18ին, կիրակի կէսօրէ ետք, Քաղաքի Թատրոնին մէջ :

ԾՆՈՒՆԴԻ ԵՒ ՆՈՐ ՏԱՐԻՈՅ

ՈՒՐԱԽ ՕՐԵՐՈՒՆ ԵՒ ԱՄԲՈՂՋ ՏԱՐԻՆ

Եւրոպայի Մեծագոյն
Արեւելեան Վաճառատունը

ՊԱՀԱՏՈՒՐԵԱՆ խանութ մը չայ – գեղողին սեղանին վրայ ամէնէն հա – մով պատառը կը պակսի՝ մեծին ու պզտիկին համար : ՊԱՀԱՏՈՒՐԵԱՆ վաճառատան մէջ պիտի գտնէք ա – ւանդական ընդեղէններու եւ անու – շեղէններու ամէն տեսակը, անմրցե – լի գիներով :

Ապսպրանքի վրայ, ծրարի առա – քում Ֆրանսայի ամէն կողմ եւ դէ – պի արտասահման՝ Պելժիա, Զուի – ցերիա, Անգլիա :

ՊԱՀԱՏՈՒՐԵԱՆ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ
LYON

246, Rue Vendôme - Tél. MOU11-84
20, Rue Villeroy MO 32-10
65, Rue Robert LA 07-72

ԵՒ ԻՆԶՊՔԻՍ ՄԻՇՏ

Արմաւ, «պամիա», «եալանճի տոլ – մա», յունական «թուրչի», « պի – պէռ», տերեւ, թահին հելվա, «վա – նիլլ», չոքոլա, «նուազէթ» , «լո – կում», «սաղըզ», պիստակ, Շիրակ օղի (41 – 43o), Իզմիրի չամիչ , «սուճուք», կեսարական «պաստըր – մա» : առաջնակարգ սուրճ, (fարա – վան եւ մոգա) ; համեմներ «մահ – լէպ», «սալէպ», ձիթապտուղ, ձէթ, «քաչքավալ» պուլկարական , ճեր – մակ պանիր ոչխարի կաթով : Ամէն կարգի պահածոներ, «քուսքուս» , հարիսա, սումագ, թարամա, լա – բեռտա, բաֆլաւա, fատայիֆ, տե – բեւ եւայլն :

ՊԱՀԱՏՈՒՐԵԱՆ ՀԱՒԱՏԱՏՈՒԹԻՒՆԸ

Ունի նաեւ մասնաճառատուն մը, որուն առաջնակարգ միսերը գոհա – ցում կուտան ամէնէն նրբաճաշակ – ներուն : Ոչխարի, հորթի եւ եղան միս (քաշուած միս, եւայլն) :

Imprimerie Spéciale du journal « Haratch »
32, Rue de Trévise, PARIS (9e)

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՕՐԸ

ԼԻՈՆԻ ՄԷՋ

Նախաճեռնութեամբ Կապ· Խաչի Լիոնի մասնաճիւղի :

28 Յունուար, կիրակի կէսօրէ ետք ժա – մը 3ին, Սքիւտիօ Քրէֆի սրահին մէջ, 24 Րիւ Տիւճօար :

Գեղարուեստական բաժին.— Խմբերգ, արտասանութիւն, ծաղիկներու պար, հայկական պարեր եւ մանկական անա – կնկարներ :

Պիտի ներկայացուի փոքրիկ թատերախ մը՝ « ԿԱՂԱՆԴ ՊԱՊԱՆ » :

Ինչպէս ամէն տարի, այս տարի եւս կաղանդ Պապան իր նուէրները պիտի բաժնէ սրահին մէջ գտնուող բոլոր պըզ – տիկներուն անխտիր :

Մուտքը ազատ է :

Հ. Յ. Դ.

ԸՆԿԵՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

ՓԱՐԻԶ.— Հ. Յ. Դ. Շրջ· կոմիտէն ներկայացուցչական ժողովի կը հրաւիրէ Փարիզի եւ շրջանի մարմիններու ներկա – յացուցիչները , այս կիրակի կէսօրէ վերջ ժամը 2·30ին, Մշակոյթի Տան սը – րահին մէջ :

ՕՐԱԿԱՐԳ.— Շրջ· ժողովի օրակարգի քննութիւն : Ներկայացուցիչ ընկերներու պարտաւորիչ ներկայութիւն :

ՎԻԵՆ.— Հ. Յ. Դ. Անի կոմիտէն ընդհ· ժողովի կը հրաւիրէ բոլոր ընկեր – ները այս Շաբաթ , ժամը 20·30ին, Հ· Օհանջանեան ակումբին մէջ : Կարեւոր օ – րակարգ :

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Նախաճեռնութեամբ Կապոյտ Խաչի Ալֆորվիլի մասնաճիւղին :

Յունուար 27, Շաբաթ , ժամը 20·30ին Մեզոն Ալֆորի Սալ տէ Ֆէթին մէջ :

Առնուվիլի Թատերախումբը կը ներկայացնէ՝

ԱՇԽԱՐՀԻ ԴԱՏԱՍՏԱՆԸ

ՄՈՒՐԱՏ ՌԱՓԱՅԷԼԵԱՆ
ՆԱԽԿԻՆ ԱՇԱԿԵՐՏԱՑ ՄԻՈՒԹԻՒՆ

ՏԱՐԵԿԱՆ, ՄԵԾ ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

ԶՈՒԱՐԹ

Մայրամուտէն մինչեւ կէս գիշեր

ԶՈՒԱՐԹ ՄԹՆՈԼՈՐՏ

ԿԻՐԱԿԻ՝ ՓԵՏՐՈՒԱՐ 11, ԺԱՄԸ 17ԷՆ՝24

AMBASSADEURS

3, Ave. Gabriel, 3
ԵՐԳ ՈՒ ՊԱՐ
ՄԵԾ ՆՈՒԱԳԱԽՈՒՄԲ

Attractions *ԽԱՂԵՐ* **Bar-Buffet**

ՍԱԿԱԳԻՆ ԸՆԹԱՑԻԿ ԱԶԴԵՐՈՒ

ՄԷԿ ԱՆԳԱՄՈՒԱՆ ՀԱՄԱՐ

ՄԱՀԱԶԴ	30 Ն· Ֆ·	մինչեւ 1/4 սիւնակ
ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ	15 Ն· Ֆ·	մինչեւ 1/8 սիւնակ
ՅԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ	10 Ն· Ֆ·	» » »
ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ	20 Ն· Ֆ·	» » »
ՀԱՐՍԱՆԻՔ, ՆՇԱՆՏՈՒՔ	20 Ն· Ֆ·	» » »
ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ	10 Ն· Ֆ·	» » »
«ՓՈՒԱՆ ԾԱՂԿԵՊՍԱԿԻ»	10 Ն· Ֆ·	» » »
«ԿԸ ՓՆՏՌՈՒԻ»	5 Ն· Ֆ·	» » »
ԾԱՒՈՒ Է	20 Ն· Ֆ·	» » »

Այս գիները մէկ անգամ հրատարակելի եւ նշանակուած ծաւալով ազ – դերու համար են, չորրորդ էջը :

Կանխիկ վճարումը պարտաւորիչ է :

Առեւտրական կամ այլ ազդերու մասնաւոր պայմաններուն համար դիմել Վարչութեան :



ՃԱՇԱՐԱՆ

ԵԱՐ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԹԵՒԱՆԵԱՆ

Եւրոպական , հայկական եւ կովկասեան ընտիր ճաշեր :

Առաջնակարգ կովկասեան խորոված – ներ, շաշլիֆ , fարսֆի :

ՀԱՃԵԼԻ ՄԹՆՈԼՈՐՏ

Bar Américain

AU CŒUR MÊME DES CHAMPS-ÉLYSÉES

4, RUE ROBERT-ETIENNE
(Rue Marbeuf) PARIS - 8e
Téléphone : BAL. 31-21
Métro : F. D. Roosevelt

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

Le PREMIER QUOTIDIEN ARMENIEN en EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction et Administration : 32, Rue de Trévise - PARIS-9e

Fondé en 1925
R. C. Seine 57 A 2731

Téléph. : PRO. 86 - 60
C. C. P. Paris 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա՝ Տար. 50 Ն. Ֆ. Վեցամսեայ՝ 27 Ն. Ֆ.
Արտասահման՝ Տար. 60 Ն. Ֆ. Հատը՝ 0·25 Ն. Ֆ.

ԿԻՐԱԿԻ
21
ՅՈՒՆՈՒԱՐ
DIMANCHE
21 JANVIER
1962

38ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 9310 38e ANNÉE Fondateur : SCHAVARCH MISSAKIAN ՆՈՐ ՇՐՋԱՆ, 18ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 5111

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

ՄԱԼԽԱՍ

Տեբեւաթափը կը չարունակուի :

Այս անգամ մահուան անողոք հրեշտա– կը հնձեց կեանք մը, որ տակաւին լի էր երիտասարդական աւիւնով եւ բաբա – խուն՝ յեղափոխական խանդավառու – թեամբ :

Հակառակ իր յառաջացեալ տարիքին , Մալխաս քաղուածքունն էր ունեցած ձմեռ– ուան այս եղանակին Ամերիկայէն երթա– լու մինչեւ Պէյրութ, անձամբ հսկելու համար իր անտիպ գործերու տպագրու – թեան :

1960ի Սեպտեմբերին Նիւ Եորքի մէջ մեր կարճ հանդիպումի ընթացքին խոս – տացած էր այցելել նաեւ Ֆրանսա, դէպի Մերձաւոր Արեւելք կատարելիք իր նոր ճամբորդութենէն վերադարձին : Սակայն ճակատագիրը այլ կերպ տնօրինած էր : Մեր գաղութը բախտը չունեցաւ վայելե– լու այս արտակարգ մարդը, որ աւելի քան ութ տասնեակ տարիներ կուրծք տը– ւած էր բազմաթիւ փոթորիկներու եւ ա– լեկոծութեանց :

Արտաշէս Կ· Յովսէփեան : Այս էր իր բուն անունը, ծանօթ՝ միայն հին սերուն– դի իր ընկերներուն : Արտաշէսը ծարձաւ Մալխաս, երբ 1896 Յունուար 24ին մկըր– տուեցաւ Դաշնակցական, կնքահայրու – թեամբ Արտաշէս Դեւեանի (եղիպտացի) :

Պատանեկութիւնը անցուցած էր Տրա– պիզոնի մէջ , ուր իբրեւ ուսուցիչ ունե– ցած էր Սիմոն Զաւարեանը եւ ուրիշ յե – ղափոխական գործիչներ : Երկու տարի ալ յաճախած էր Սանասարեան վարժարան : Հայրենասիրութեան կրակը բորբոքած էր պատանի Արտաշէսի հոգիին մէջ :

Համիտեան ջարդերու վաղորդայնին կը մեկնի Ամերիկա, ուր կը մնայ եօթը տա– րի, եղբայրներուն հետ (1896–1903) :

Գրական առաջին փորձերը կը սկսի Հայրենիքի մէջ, որ այն տուն կը հրա – տարակուէր իբրեւ չաբաթաթերթ Պոս – թընի մէջ, խմբագրութեամբ գործիչ Ա· Վոսմեանի : 1902 Օգոստոս 23ին լոյս կը տեսնէ իր առաջին վէպը՝ իբրեւ թերթօն՝ Միր – Հազօր ստորագրութեամբ : Եօքէն իր չորս պատմուածքները կը հրատա – րակուին առանձին գրքոյկով «Յեղափո – խական վէպիկներ» խորագրով :

Սիմոն Զաւարեանի հրաւէրով Ամերի – կայէն կը մեկնի 1903 Մարտի վերջը եւ Փարիզի իր ազգականներուն հանդիպելէ վերջ կ'անցնի Ժընեւ, ուր հաստատուած էր Դաշնակցութեան սպայակոյտը, հա – ւաքուածդրօշակի խմբագրութեան չուրջ :

Այնտեղ կը հանդիպի Քրիստափոր Մի– քայէլեանի, Ռոստոմի, Ս· Զաւարեանի, Ակնունիի, Ս· Մինասեանի, Գալֆայեա – նի, Ա· Ահարոնեանի, Սիամանթոյի, Կոմսի, Մարզպետի, Առանձարի, Վար – դոյի, Պիծայի, Եղիպտացիի, Սիմոն Ջա– կոբեանի, Հրաչ Թիրեաքեանի, Համօ Օ – հանջանեանի եւ ուրիշներու : Ցետագա – յին պիտի ծանօթանար Դաշնակցութեան բոլոր մեծ վարիչներուն եւ յեղափոխա– կան գործիչներուն, որոնց իւրաքանչիւ – րին մասին կուտայ իր անկեղծ տպաւո – րութիւնները :

1903 Յուլիսի սկիզբները Ժընեւէն կը մեկնի եւ Միւնիխի եւ Վիէննայի ճամբով կը հասնի Թիֆլիզ, տրամադրուելով Հ· Յ· Դ· Արեւելեան Բիւրոյի հրամանին : Պարսկաստան, Թուրքիա, Կովկաս, Յու– նաստան գործունէութեան լայն դաշտեր կը բանան իր առջեւ : Կը մանակցի կա – մաւորական չարժման, Հայաստանի խոր– հրդարանին (իբրեւ երեսփոխան) եւ փե– տրուարեան ապստամբութեան : Հուսկ ու– րեմն կը վերադառնայ Ամերիկա՝ անցնե– լով Իրանէն Հնդկաստան, յետոյ Պիրմա– նիա, Չինաստան եւ Ճափոն :

Անհատնում չեռմարան մըն էր յիշա – տակներու : Իր «Ապրումները»ը — գրքի

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ խորհուրդի վերջին նիստին վաղորդայնին յայտարարուեցաւ թէ Ալժերիայէն երկու զօրաբաժիններու վերադարձը պիտի սկսի ամսուս վերջ : Ծանօթ է որ նման յայտարարութիւն մը ըրած էր տը կոլ բայց երկկ ճշդուած էր թէ այդ որոշումին գործադրութիւնը յե– տաձգուած է : Քիչ ետք սակայն պաշտօ– նապէս կը հաղորդուէր թէ զօրաբաժին – ները պիտի վերադառնան մինչ որ որոշ յուզում յառաջ կը բերէր : Ազգ· պաշտ – պանութեան յանձնախումբի նախագահը իր զարմանքը կը յայտնէր , աւելցնելով թէ նախապար Մեսմէռ հակառակ հաւաս– տիքը տուած էր իրեն :

ԺԸՆԵԻԻ մէջ երկար տարակարծու – թիւններէ ետք, Լաոսի երեք իշխանները կրցան համաձայնութեան մը յանգիլ , Ազգ· Միաւնականութեան կառավարու – թիւն մը կազմելու համար :

ՊՈՆի ամէնէն աղդեցիկ թերթերէն մէ– կը (բողոքական) Քրիսթ Ուսնտ Վելթ կը գրէ թէ պէտք է ընդունած ըլլային խոր– հրդային առաջարկը՝ գլուխ գլխի խո – սակցութեան :

ԼԵՀ – ԱԼՊԱՆԱԿԱՆ առեւտրական հա– մաձայնութիւն մը ստորագրուեցաւ , Վարչաւայի մէջ :

ՄԻԿՈՑԵԱՆն է որ սպաննած է Բե – րիան, Ֆրանսացի համայնավարներուն կարծիքով : Տէյլի Հերըլտ կը գրէ թէ զանազան ձեւերով պատմուած է Բերիա– յի սպանութիւնը : Շուէտացի համայնա– վարներուն համար գնդակահարուած է : Լեհ եւ գերման համայնավարներուն հա– մար մառեչալ Մոսկալէնկոն սպաննած է մինչ Ֆրանսացիները կ'ըսեն թէ Միկոյ – եանն է որ ատրճանակի հարուածով ծոծ– րակին մէջ, գետին բռած է : Իտալացի համայնավար մը կ'ըսէ Մալենկով, Մի – կոյեան, Կոնիեւ եւ Մոսկալենկօ խեղ – դած են :

ՓԻՆԷ ԵԻ կի ՄՈԼէ տեսակցութիւն մը ունեցած են, կը սպասուի որ հասարա – կաց յայտարարութիւն մը ընեն :

ԱՆԿԱԽՆԵՐԸ, Ընկերվարականները , ժողովրդական Շարժումը եւ արմատա – կանները (Մօրիս Ֆօռ) հանդիպում մը ունեցան : Խորհրդակցութեան դլխաւոր նիւթն էր՝ դէմ դնել, եթէ տադնապ մը ստեղծուի :

ՔԵՆԸԶԻ կ'ուղէ որ Ամերիկա մասնակ– ցի Հասարակաց Շուկային :

վերածուելէ առաջ հրատարակուած Հայ– րենիք ամսագրի մէջ — եւ յեղափոխա – կաններու կեանքէն տուած իր դրուագ – ները շարունակելի մնացին : Զկրցաւ ամբողջացնել գանոնք : Այնքան շատ բան ունէր գրելիք : Մէկ նիւթը ուրիշ յուշեր կ'արթնցնէր իր մէջ :

« Զարթօնք»ի հինդ հատորներու եւ «Լուսագէմին»ի առաջին հատորին հրա – տարակութենէն վերջ ծանր պարտքերու տակ էր ինկած : Ու պահ մը գանացած՝ կը գրէր մեղի թէ կը նախընտրէ կոտրել գրիչը եւ խող արածել :

Իրապէս ալ գործադրեց իր որոշումը :

Սակայն հոգեկան զոհացում չէր ստա– նար խոզարածութեան մէջ : Կրկին դար – ձաւ գրականութեան եւ մեղի տուաւ ձամբուս վրայ հատատիկ հատորը, ո – րուն մէջի գանազան նիւթերը դարձեալ շարունակելի էին մնացած :

Յուսա՞նք որ ամբողջացուցած է գա – նոնք եւ շուտով պիտի հրատարակուին Համազգայինի կողմէ :

Մալխասի գրականութիւնը ներչնչման անսպասելի աղբիւր մը կը կազմէ մեր նոր սերունդին համար, որ այնքան պէտք ունի ճանչնալու հայ ժողովուրդի դիւ– ցազնական մարտերը, յանուն ա – զատ եւ անկախ հայրենիքի :

ՀՐԱՆՏ–ՍԱՄՈՒԷԼ

ԸՍՈՂԸ ՄԵՆՔ ՉԵՆՔ

ԴԵՂԻՆ ՍԱՏԱՆԱՅԻ ՊԱՐԸ

ՄՄԲ.— Ամէն անգամ որ առիթը ներ – կայացած է, գիտակցելով որ «Հայրենի– քը պատդոկ չէ» եւ ոչ ալ շահամոլութեան Արաբատեան դաշտ, չենք վարանած եւ միշտ ալ պիտի չվարանինք անարգու – թեան սիւնին գամելու՝ Հայաստան եր – թեւեկող «հայրենասիրութեան վաճառա– կանները » :

Ամէն անգամ ալէն ձախէն, աւելի ձա– խէն քան քէ ալէն, ըսող կայ քէ «հայ – րենադաւ Դաշնակցականի յերիւրանք» է մեր կողմէ ըսուածը :

Ստորեւ կ'արտատպենք Երեւանի «Սո – վետական Հայաստան» օրաթերթի, 1962 Յունուար 7 թիւին մէջ լոյս տեսած յօդ– ուածը՝ կարգ մը «հայրենասէր» այցե – լուներու մասին :

Այս անգամ ըսողը մենք չենք եւ, որ– քան որ գիտենք, «Սովետական Հայաս – տան» օրաթերթը դաշնակցականիստ չէ :

Նրանք տասնըմէկն էին :

Իրոլորն էլ մեղադրւում էին պետական ծանր յանցանքի մէջ :

Ահա նրանք.—

Միհրան Մանուէլ —վալիւտային (տա– րադրամ) մութ գործարքների բակալա – ւը, Մարի Զաբամկոս — նրա կինը, վաս– տակաւոր մաքսանենդուհի, Աւետիս Ա – րաքեան — միջազգային մասշտաբի (չա– փանիչ) սպեկուլանտ (չահադէտ), մաք – սանենդութեան փորձուած գայլ, Օհան – նէս Դանիէլեան եւ Հայկ Սարգիսեան — ոսկի տեսնելիս ծնկներում ուժգին դող ղգացող բիզնեսմենեներ (ճարտար գործի մարդեր), Պօղոս Բոլոդլեան եւ Բարսե Լաթիֆա — միջատանման արտաքինով ու ներքինով դրամասէրներ, Օհաննէս Ժիրիկեան — սկսնակ մաքսանենդ , Աբ – թին Խաչիկեան — մաքսանենդ, որին բախտը յաճախ կանդնեցնում է աղէտի առջեւ, Մարի Աբթին — (որուն բնութա– գիրը քիչ յետոյ կը տրուի), Մորդօ Անդ– ջանիկ — միշտ երգում է «Հայաստա՛ն, երկիր դրախտավայր···» եւ գալով այդ դրախտավայրը՝ լիուլի տանում է սրտի ուղածի չափ ...

Ստացուեցին թատերական պերսոնաժ– ները (անձերը) : Բայց թատերախաղ չէ, որ այժմ պատրաստւում ենք ներկայա – նել, այլ վերջերս կատարուած մի իրո– ղութիւն :

×

Նրանք բոլորն էլ սիրիահայ եւ լիբա– նանահայ զբօսաշրջիկներ են՝ կոկիկ հաղնուած, մայր հայրենիքի մասին ան– ընդմէջ ճառող այդ պարոնները եւ իրենց պուտուարի թովչանքը Հայաստան բե – րած, էլեգանտ (վայելուչ) չարժումնե – րով տիկինները :

Տես նրանց եւ համարձակուի՛ր ասել, թէ նրանք հայրենիք են եկել այլ բանի համար եւ ոչ թէ ձիւնափարիսա Արարա– տի աննիւթական թուացող դեղեցկու – թեամբ զմայլուելու, տեսնելու մայրա – քաղաք Երեւանի հէքիաթաբորը արչա – լոյսը, իր ալիքների երաժշտութեամբ պանդուխտ Հայութեան լսելիքը չոյող Սեւանի բիլ կապոյտի մէջ մոռանալու օ– տար, ամայի ճանապարհների սեւը ...

Համարձակուի՛ր ասել, որ այս սրբա – զան մղումները չեն բերել նրանց Հայաս– տան ...

Սակայն բացայայտուած փաստերը չի կարելի ծածկել ոչ օսլայած, ձիւնաձեր – մակ օձիքով, ոչ «երկիր – դրախտավայ– րի» մասին ասուող պայծուցիկ փրազնե– րով (նախադասութիւնները), ոչ էլ քա – ղաքավարի չքմեղանքով ու կիրթ չար – ժումներով : Այդ մարդիկ մայր հայրե– նիքը տեսնելու պատրուակի տակ գրաղ – ւում են միջազգային սպեկուլացիայով (չահադիտութեամբ) : Ինչ Հայաստան : Հայաստանը ոսկի կը տա՞յ՝ կը սիրենք գայն, ոսկի չի տայ՝ թքա՛ծ—

Եւ ահա դեղին սատանան, որը նուա – ճել է նրանց վազուց, խենթապար է բե– նում նրանց հոգում : Գնալով այդ պարը ուժեղանում է, ուժեղանում, ցատկել են սկսում բոլոր ներվերը (ջիղերը), ասես իսկական իսպանական կրակաւիթմ պար են կատարում , կամ հեթանոս չարժում– ներ ...

Եւ պայթեցնելու չափ աչքերը դուրս պրծած՝ դեղին սատանան հրում է նրանց դէպի վերջին սրբութեան ոտնահարումը, մայր հայրենիքը դարձնել բորսայական (սակարան) արժէթուղթ, Հայաստան հասկացողութիւնը փոխանակել ինչ որ թչուառական մի ոսկեդրամով, մեր բիբ– լիական ու դչխոյ լեռների սէդութիւնը խոնարհել մինչեւ դոլարի ցեխոտ ոտքե – րը, մեր ծփուն արտերի ոսկէ ծիծաղը վերածել դրամի ...

Մէկ տարուայ մէջ հինդ – վեց անգամ դալիս են նրանք հայրենիք (ինչպիսի կա– րօտ), դալիս են առեւտուր անելու, վա– լուտային եւ ապրանքային սպեկուլացիա՝ միջազգային օրէնքների ընդդէմ :

Ու հայրենիք են բերում նրանք զանա – զան հատուածների կիլոգրամներով ոսկե – դրամներ, բերում են խունկ (վաճառելու սուրբ էջմիածնի սրբերի առջեւ), հարիւ– րաւոր ղոյդ նէյլոնէ գուլպաներ, հարիւ– րաւոր մետրերով թանկարժէք կտորե – ղէն, տղամարդու, կանացի, մանկական տրիկոտաժեղէն (հիւսուածեղէն), ար – տասահմանեան զանազան իրեր ....

Հասնելով մայր հայրենիք եւ իջեւանե– լով «Արմենիա» հիւրանոցում, դուում են նրանք իրենց ուտկանը եւ սպասում որ – սի ...

Դեղին սատանան սկսում է իր մոլապա– րը՝ առանց հրաւէրի : Գայթակղուողների համար հայրենիքի սիրով տառապող ըղ– բօսաշրջիկ սպեկուլանտների իջեւանը դառնում է իսկական Մեքքա :

Արդիւնքը՝ առատ հունձ :

Ոսկին փոխանակւում է խորհրդային դրամով, օտար ապրանքները սպասուում են՝ հրճուանք ու փայլ պարգեւելով դե – ղին սատանային ու նրա սպասաւորնե – րին : Բայց ծիծաղին կեանքում յաճախա– ջորդում է լացը : Մաքսանենդների խը – րախանքը երկար չտեւեց : Նրանք մեր – կացուեցին վերջերս, Նոր տարուայ գա – լստից մի քանի օր առաջ :

Դէ, եկ ու հիմա չնորհաւորիր նրանց ամանորը : Վալուտային եւ ապրանքային մաքսանենդութեան ձեռնածուներին ա – ռաջարկուեց թողնել մեր սրբազան Հայ – րենիքի սահմանները : Եւ այդ մարդիկ , բոլորնու բարոյականութեան ու ախորժա– կի տէր այդ մարդիկ, որոնց նկատմամբ Խորհրդային կառավարութիւնը ցուցաբե– րեց խոշոր մաքսանենդութեան միջազգա– յին պրակտիկայում (գործադրութեան) տակաւին չտեսնուած մարդասիրութիւն , ցինիզմով (անպատկառութեամբ) ճչա – ցին·

— Ախկա մեզ համար հայրենիք չէ , ղրախտավայր չէ, դժոխավայր է ...

Իսկ Տիկին Մարի Զաբամկոսը իր դի – շատիչ առպրանոյով (դիլ ձայնով) փչչում էր·

— Հոս ամէնն ալ չներ են : Երթանք օ – տարներու ոտքը պաղնելու ...

Գնացի՛ք, Տիկին Մարի, եւ դուք պա – րոնայք Մանուէլ – Աւետիսներ, դուք, որ ամէն ժամ, ամէն վայրկեան, դիշեր ու տիւ պաղնում էք դեղին սատանայի ոտքերը, այլ խօսք ձեղնից չէր էլ կարող լսել մայր Հայրենիքը, որ այսչափ մեծա– հոգի գտնուեց ձեր նկատմամբ :

Իսկ ովքե՞ր են այս «հայրենասէր» մաքսանենդները :

Ներկայացնենք մէկ – երկուսի բարո – յական կերպարը :

ՂԱՐԻՊ ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ

(Մնացեալը յաջորդով)

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

Ա.

Հռոդոս հովիւ է, կանգնած իր հօտին դէմը... կղզիներէ կազմուած: Զարմանալի չէ, ուրեմն, եթէ գոյուն ատասը կը կոչուի այդ կղզիներէն մին, եաեւ մնացած, դէպի հիւսիս՝ Զմիւռնիոյ դիմաց: Նմանցուցեր են նաեւ ատաղերու, կապոյտին մէջ լնկած՝ Կարպաթեան ծովէն մինչեւ եգիպտական, գան ու գրիւ: Տեղ – տեղ մանեակ են կազմած անոնք, կամ ոզկոյղ:

« Մառէշալ Ժոֆռ» մեղուի մը նման կը չրջէ ողկոյղին մէջ :

Այժմ, միաքով վերսին կը կատարեմ ճամբորդութիւնը դէպի Հռոդոս,— Փը – բանական մեծ չոգենաւը, ինը տարի ա – ռաջ, գամաք կը հանէր զիս, այստեղ, ա – կամայ ուխտաւոր հեթանոսական ու քրիստոնէական տաճարներու: Շոգենաւը լեցուն էր Ֆրանսայի «ուխտաւորներով», որոնք, ըստ ծրագրի, կ'այցելէին հել – լենական քաղաքակրթութեան վայրերը, Դելփոսէն մինչեւ Հռոդոս, պատմու – թեան եւ հնութեանց դասախօսն ալ միասին: Իրենց հետ գամաք կ'իջնէի ամէն կայքի: Անոնք իրենց ճամբան պիտի շարունակէին մինչեւ Երուսաղէմ, ես կանգ պիտի առնէի կէս ճամբան (Պէյրութ), որոնելու եւ տեսնելու համար Հայոց ժողովուրդը :

Այդ առթիւ էր որ ճանչցայ Հռոդոսը :

Գերահռչակ կղզի մը, որ հիւսիսէն իշնող ծովային ճամբուն վրայ՝ կը յայտնէ – ղէ նոյնքան հռչակաւոր կղզեակի մը, — Կոս: Այս կղզեակին մէջ է ծնած բժշկութեան հայրը, Հիպպոկրատ :

Պօղոս առաքեալն ալ, իր ճամբուն վրայ, հանդիպեցաւ Կոս(1), յետոյ Հռոդոս:

Բազմիցս անուն է փոխած Հռոդոս: Ի հնումն կոչուած է Օփիուսա, այն վկայութեամբ թէ չատ օձ կայ այս կղզիին վրայ: Կոչուած է նաեւ Մակարա, որ Թարգմանի երանեալ՝ ապահովաբար իր ծաղկուն քաղաքակրթութեան ակնարկութեամբ: Կոչուած է դարձեալ Ստադիա, թերեւս իր անտուիկ եւ անպարտելի ամրութենց թելադրութեամբ: Կոչուած վերջապէս Եթրէա, ապա Հռոդոս,— առաւաբանօրէն՝ վերջին անուան նշանակութիւնն է, կ'ըսեն, վարդ, « եւ կոչեցաւ այսպէս վասն ձեւոյն, զի է վարդաձեւ, եւ կամ վասն առատութեան վարդեցն, որք լինին անդ»:

Վարդ բառը Պարսիկներէն են տուած Հայոց, ինչպէս եւ Արեւմուտքի, — բառ մը որ, յունարէնի մէջ, նախապէս վրոդոն, առացած է րոդոն ձեւը, իսկ լատին – ներէնի մէջ՝ ռոզա: Եւ ռոդոն ձեւն է որ առած է, կ'ըսեն, Հռոդոս անունը:

Վերը զրեցինք թէ կղզին կը կոչուէր ի հնումն եթրէա,— նոյն ճամբան, որ վարդը բերած է Արեւմուտք, բերած է նաեւ զենտական աէբրա բառը, որ Թարգմանի կրակ: Աղաւաղումով՝ աէբ – րոս կազմած է րոդոս: Այդ առուգաբանութիւնը կը յենու այն աւանդութեան վրայ, որ կը վկայէ թէ Հռոդոս « էր անուանի վասն պատկերին արեգական, որ էր անդ»:

Արդարեւ արեւապաշտութիւնը չորս երկար տարածուած էր այս կղզիին վրայ, ուր կը մնայ տակաւին առած մը որ կ'ըսէ· «Տարւոյն մէջ ամէն օր արեւ կայ Հռոդոսի վրայ»: Այս առածը կը յիշէ Պլինիոս (Բնագրատմ· Բ· 62): Վերջապէս յունական դիցաբանութիւնը եւս կու գայ վկայել թէ Հելիա (արեւ աստուա – ծուհին) այս կղզիին վրայ էր որ միացաւ Պոսիդոնի հետ, յղացաւ ու բախտաւորուեցաւ եօթը զաւակներով :

Այս աւանդութիւններէն անկախ, Հռոդոս նշանաւորեցաւ մարդակերպ վիթխարի արձանով մը, որ կը մարմնացնէ արեւը,— այս արձանը այնքան խոշոր էր, հսկայական մեծութիւն ունէր, որ ոտքի մատներէն մէկը գրկաչափելու համար՝ բաւական չէր երկու պատանի: Այս արձանն էր որ կը համարուէր աչխարհի մեծագոյն հրաչալիքներէն մին: Երկրաչարժ մը կործանեց զայն, Թողլով միայն սրունքները, որոնք հիացում կը պատճառէին այդ վիճակին մէջ անգամ: Աւելի ետք, բարբարոսները սրունքներէն ալ հետք չձգեցին :

Արեւի պաշտամունքին վերջին վկայութիւնը կուտան Հռոդոսի դրամները, որոնց վրայ մարդկային կիսադէմքի մը դանկը բոց կ'արձակէ: Եւ վերջապէս Հռոդոս նուիրուած է արեւ աստուածին:

Վէճ մը կայ թէ Հռոդոս յիշատակուա՞ծ է Հին Կտակարանի մէջ :

Մեր ոսկեզարեան Թարգմանութիւնը կը յիշատակէ երեք անգամ.— «Հռոդա – ցիք» ձեւով (Ա· Մնաց· Ա· 7), եւ «Հռոդացիք» ձեւով (Ծննդ· ԻԶ· 4 եւ եզ· ԻԵ· 15), բայց երբայերէնը կը դնէ ամէն անգամ Դոդացիք, ապահովաբար տալեր եւ րէշ տառերու չփոթութեամբ :

Հռոդոս այնքան հռչակաւոր էր, որ անկարելի էր չյիշել պատմական ու մատենագրական որեւէ վկայութեան մէջ :

Վարդի, նուռի, խաղողի, դինիի, մեղրի, ցորենի հարստութեամբ բախտաւոր – ուած այս փոքրիկ կղզին արդարօրէն կը պարծենայ, պատմութեան մէջ, իր բարձրարժէք քաղաքակրթութեամբ: Հռետորութեան, նկարչութեան, արձանագործութեան իր դպրոցները այնքան հռչակ տանած էին, որ ուսանելու կուգային հոս մինչեւ Հռոմէն : Լուկուլլոս չկրցաւ հատցնել արձանները, զորս չարունակ կը ղրկէր Հռոմ: Այս կղզիին դպրոցներուն կապուած է Դիոնեսիոս Թրակացիի անունը, իրմէ՝ հայերէն առաջին քերականութեան թարգմանածոյ դիրքը: Զենք դիտեր թէ ի՛նչ չափով կղզիին անունը կը կապուի հայ դիրերու դիւտի պատմութեան, սոյդ է սակայն թէ Աթէնք մըն էր Հռոդոս, արուեստի եւ դիտութեան դերահռչակ օջախ մը, եւ ինչպէս կ'ըսէ հեղինակ մը, պատմութիւնը քաղաքակրթութեան հսկայ ծանրութիւն մը դրած է գամաքի այս փոքրիկ կտորներուն վրայ, Հալիկառնասէն մինչեւ Կոս ու մինչեւ Հռոդոս, մինչ երկրամասի հսկայ տարածութիւններ կան որ չեն կրցած բարուրիլ այնքան :

Զինուորական պատմութեան մէջ եւս Հռոդոս կը փայլի իր քաջութեամբ, դրեթէ միշտ անպարտելի: Այս կղզիին վրայ փչրուած են եղիպտական, հռոմէական, յունական, արաբական, թրքական ղէն – քերը: Ահաւոր եւ հռչակաւոր պաշարումներու ենթակայ, դիմադրեր է միշտ՝ պահպանելու համար իր անկախութիւնը, ու Սուլթան Սիւլէյման իր բանակին կէսը կորսնցուցած է Հռոդոսի պարիսպներուն տակ,— մատնութի՛ւն էր միայն որ իրեն յանձնեց Միջերկրականի այս մարգրիտը:

Քիչ անգամ պարտուած, յաճախ յաղթած այս կղզին Թուրքերուն ձեռքէն անցաւ Իտալիոյ ձեռքը, չէնցաւ զարձեալ, պեղեցկացաւ, իր վարդերուն պէս ծաղկեցաւ, վերջին աչխարհամարտէն ետքը՝ տրուեցաւ Յունաստանի :

Այս կղզին ընտրած էր, անցեալ աչխարհամարտէն, Պօղոյ տիեզերական պատրիարքը, Աթենակորաս, համագումարի մը հրաւիրելու համար օրթոտոքս եկեղեցիները, որոնց կարգին՝ արեւելեան քրիստոնեայ եկեղեցիները իրրեւ հիւր կամ դիտող :

Հայոց եկեղեցին եւ Ամենայն Հայոց կաթողիկոսը կը ներկայացնէր, այստեղ, Սերովբէ Եպ· Մանուկեան :

Շ· ՆԱՐԴՈՒՆԻ

---

(1) Այստեղ լեզուական կարեւոր գիւտ մը կ'ընեմ պատահաբար: Գրաբար Աստուածաշունչ Մատեանը կը գրէ· «Գնացէ՛ք եալ եկա՛ք ի կով, եւ ի վաղիւ անդր ի Հռոդոս» (Գործք, ԻԱ· 1): Յունարէնի լեզուի մէջ՝ առաջին տեղ – անուան հոլովաձեւերն են·— Ուղղական՝ ֆափփա + օմեղա + սիդմա, սեռական՝ ֆափփա + օմեղա, հայցական՝ ֆափփա + օմեղա + նի: Հայերէն տատադարձութեամբ՝ օմեղաները կը փոխարինուին ոմ երկտառով, որու վերջին տառը չի կարդացուիր, այլ միայն կը ծառայէ ձայնաւորին ֆանակը աւելցնելու, ձայնը երկարելու, այնպէս որ կ'ունենանիք·— կովս, կով, կովն: Արդ, սեռականը, որ ձայնաւորով կը վերջանայ, ոսկեդարեան ուղղագրութեամբ գրուած է կով, — այս պարագան շատ հետաքրքրական է՝ ընդելու համար մեր վեմ տարին ձայնը, որ վէճի նիւթ է, չէ՞ որ վեմը համարուած է նաեւ··· ձայնաւոր:

Այս ընդմէջէն ետք՝ կը տեսնեմ որ աչխարհաբար Աստուածաշունչ Մատեանը եւս (տպ· Նիւ Եորք, 1917) նոյն տեղաւորութիւնը կը գրէ··· կով: Ո՞ր կովին մասին է խօսքը, պատուելի՛: կոս է տեղաւորութիւնը, որու փոխարէն ոսկեդարեան մեր թարգմանիչները գրած են կով, սեռական հոլով, հետեւողութեամբ յունարէնի : Այլ տեղեր եւս գտած եմ նման սխալներ :

Կոս «ստուգաբանի գեղմն ոչխարաց, կամ գորգ» (Մխիթար Աբբահայր):

ԲՐՔԱՇԱՅ ԹԱՏՐՈՆԻ ԾԱԳՈՒՄԸ ԵՒ ԱՌԱՋԻՆ ՀԱՅ ԴԵՐԱՍԱՆՈՒՀԻՆ

1· Թրքահայ թատրոնի պատմութեան վրայ առաջին գրողը — եթէ չենք սխալիր — եղած է Տօքթ· Նալպանթեան, որ «Բանասէր» տետրակին մէջ կը գրէ 1898 Սեպտեմբերին «Զմիւռնիա թատերդութեանց ծագման կանխած է Կ· Պոլիսը: Արդարեւ 1836ին Կ· Պոլսեցի Ռուբէն Նեղբեան վարժապետը, որ Իտալիա ուսած էր, առաջին թատերական ներկայացումը տուաւ Զմիւռնիոյ Մեսրոպեան վարժարանին մէջ, ա – ջակցութեամբ իր աշակերտներուն» (Աբեղեան, Կ· Պ· 1898 բ· 3791):

Տաղաւարեանի կարծիքով Պոլսոյ մէջ թատերական առաջին փորձը եղած է 1846ին (Անդ):

Տաղաւարեանի այդ կարծիքին սխալը ըլլալը ջրած էր արդէն «Ս· Անդեղեան տետրակը, որ 1903 Փետրուար մէկին կը տպէր, ակնարկելով Տաղաւարեանի վերոյիշեալ արտայայտութիւնը· «Թատրոն ալ·· Պոլսոյ Հայերուն վերկին մէջն է որ առած է իր առաջին նախընթաց անունը անցեալ դարուս սկիզբները, չատ առաջ այն ժամանակէն, ուր կը կարծեն թէ ծնունդ առած ըլլայ ան: 1818էն առաջ, Հ· Մինաս Վ· Բժշկեան, Տրապիզոնցի Հմուտ Մխիթարեանը, որ վերջէն քանի մը թատերդութիւններ ալ պիտի գրէր, Տիւզեանց բնակարանին մէջ աչխարհաբար լեզուով կատակերգութիւններ կը ներկայացնէ» (Մանդիկ, Կ· Պ· 1903 թ· 1, էջ 2):

Թրքահայ թատրոնի պատմութեան մասնագէտ եւ այդ պատմութիւնը լրիւ գրելու համար բաւարար նիւթ հաւաքող Սմբատ Դաւթեան կը ճշդէ Թրքահայ թատրոնի սկզբնաւորութեան թուականը, գրելով· «1815ին Հ· Մինաս Վ· Բժշկեան Կուրու – Զէշմէի Տիւզեանց ապարանքին մէջ թատերգութիւններ եւ կատակերգութիւններ ներկայացնել կուտայ նորահաս պատանիներուն՝ որոնց մարզիչն էր նոյն ինքն Հ· Մինաս (Թէոդիկ, Ամէնուն Տարեցոյցը, Կ· Պ· 1923, էջ 268: ՀՄՄՏ· նոյն՝ 1926, էջ 397):

Հետեւաբար Թրքահայ թատրոնի սկզբնաւորութեան թուականն է 1815 եւ վայրը՝ Կ· Պոլիս :

2· Ո՞վ եղած է առաջին հայ գերասանուհին:— Տաղաւարեան (անդ) կը չեշտէ որ Զմիւռնիոյ մէջ 1836ին տեղի ունեցած թատերական ներկայացումին մէջ կնոջական դերերը կատարողները Մեսրոպեան վարժարանի մանչ աչակերտներն էին, որոնք կնոջական զգեստ հագած էին:

Իսկ Պոլսոյ մէջ 1815ին սկիզբը առած թատերական ներկայացումներուն մէջ «կնոջ դերերը յաճախ զանց կ'առնուէին եւ եթէ չատ անգամ դերձողութեան քալելը անկարելի իսկ նկատուէր՝ այդ թերթամիներ Թրոցքիի, Զինովիեւի ու Կամենեւի հետ դաւած էին Լենինի, կուսակցութեան եւ խորհրդային Պետութեան դէմ :

Բանէն դուրս կուգար, որ այս բոլոր համայնավարները յեղափոխութիւնը կազմակերպած էին պարզապէս անոր դաւանանելու հաճոյքին համար :

Օրին մէկն ալ՝ անակնկալ մը պատահեցաւ :

1937ի դատավարութեանց մէջ ենք: Ամբաստանեալներու չարքին կը դտնուէր Ն· Կրեստինսքի, կեդրոնական կոմիտէի նախկին անդամ, Սթալինէն առաջ՝ կուսակցութեան ընդհանուր քարտուղար եւ ապա՝ Պերլինի մէջ խորհրդային դեսպան:

Կրեստինսքի մերժեց իրեն վերագրուած յանցանքները խոստովանիլ :

Նախագահը·— Ամբաստանեալ Կրեստինսքի, կ'ընդունի՞ք ձեր վրայ ծանրացող ամբաստանութիւնները:

Կրեստինսքի·— Ինքզինքս յանցաւոր չեմ նկատեր: Թրոցքիական չեմ: Ոչ մէկ առեն մաս կազմած եմ «ալակողմեաններու եւ Թրոցքիականներու խմբակ»ին, որուն դոյութիւնն իսկ կ'անդիտանայի: Ինծի վերագրուած ոճիրներէն եւ ոչ մէկը գործած եմ: Ի մասնաւորի՝ լրտեսական ցանցին հետ ոչ մէկ յարաբերութիւն ունեցած եմ :

(21 Շար·)

ԱՄԲԱՍՏԱՆԵԱԼ ՍԹԱԼԻՆ, ՈՏՔԻ՛

—o—

Արդ, դատավարութեանց ընթացքին կը յայտարարեցին թէ ոչ միայն ուզած են Սթալինը մեռցնել, այլ նաեւ Հիթլերի, Մուքսոլինիի, Ինթեվիճըն Սերվիսի դործակալները եղած են տարիներէ ի վեր: Զէին բաւականանար միայն խոստովանելով· դատախազ Վիչինսքիի բոլոր ամբաստանութիւնները կ'ընդունէին՝ աւելի՛ եւս ճոխացնելով զանոնք :

Զինովիեվ, որ Լենինի կողմէ նշանակուած էր Համայնավար Միջազգայնականի առաջին նախագահ, հետեւեալ ձեւով կը խօսէր·

« Դատապարտեցինք մեր պատկանած կուսակցութեան ... Անդամ մը եւս կ'ուզեմ առանց վերապահութեան խոստովանիլ յանցապարտ ըլլալս : Իմ թերի բոլշեւիկ – կութիւնս վերածուեցաւ հակաբոլշեւիկ – կութեան , եւ Թրոցքիականութեան խոզակով զարձայ Փաչիստ» :

Կամենեւ, 1904էն ի վեր բոլշեւիկ, Լենինի Պոլիտբիւրոյին անդամ, աւելի պերճախօս է ·

« Առնուազն տասը տարիէ ի վեր, եթէ ոչ աւելի, պայքարեցայ կուսակցութեան եւ, անձնապէս Սթալինի դէմ: Պրոլետարական յեղափոխութիւնը առիթ ընծայեց որ մեր սխալները հասկնանք ու սրբագրենք զանոնք, բայց չսրբագրեցինք: Եւ – րեք անգամ դուրս հանուեցայ կուսակցութենէն ու զարձեալ ներս ընդունուե – ցայ· երկու անգամ կեանքս խնայուեցաւ ինծի: Բայց պրոլետարիատի ներողամտութիւնը չափ ու սահման ունի· արդ, մենք այդ սահմաններէն անդին անցանք· Փաչիզմին ծառայեցինք· ընկերվարութեան դէմ հակայեղափոխութիւն կազմակերպեցինք· միջամտութեան ճամբան հարթեցինք: Ահա այս եղաւ մեր որդեգրած ուղին: Ահա աննկարագրելի դաւաճանութեան ու խոստմնազրժութեան փոսը, որուն մէջ գլորեցանք »:

Բուխարին, իր կողմէ՝ կը հաստատէր·

— « Ամէնէն խիստ պատիժին արժանի եմ եւ լիովին համաձայն եմ ընկեր դատախազին հետ, երբ քանիցս կրկնեց, թէ մահուան սեմին կը գտնուիմ»:

Ռիքով հետեւեալ փոխանացութիւնը կ'ունենար «ընկեր դատախազ»ին հետ·—

Դատախազը·— Ձի՞շդ է, որ ձեր կազմակերպութեան մէկ մասէն ներս, ձեր տուած հրահանգներուն վրայ է որ լրտեսական յարաբերութիւններ հաստատուեցան Լեհերուն հետ :

Ռիխով·— Այնչուչա :

Դատախազը·— Բուխարին մաս կը կազմէ՞ր այս խմբակին :

Ռիխով·— Այնչուչա :

Դատախազը·— Դուք եւ Բուխարին չատ կապուա՞ծ էիք իրարու :

Ռիխով·— Այնչուչա :

Դատախազը·— Ուրեմն, դուք երկուքդ լրտեսութեան կազմակերպիչնե՞րն էիք :

Ռիխով·—Լրտեսէ տարբեր բան մը չեմ :

Դատախազը·— Լրտեսութեան կազմակերպի՞չ մըն էիք· լրտե՞ս մըն էիք :

Ռիխով·— Կարելի է ըսել թէ՝ այո :

Աչխարհի ոչ մէկ դատարանին մէջ տակաւին տեսնուած չէին այսքան մեծ յանցապարտներ, որոնք այսքան մեծ բարեացակամութեամբ կ'ընդունէին իրենց ոճիրներն ու մահուան պատիժ կը պահանջէին :

Դատախազ Վիչինսքի, այս խոստովանութիւններով զինուած, աւելորդ կը սեպէր «անհամար դէպքեր թուել եւ դատական քննութեան համար հաւաքուած նիւթերը վերլուծել», ինչպէս յայտարարեց Զինովիեվի ու Կամենեւի դատավարութեան ընթացքին, եւ կ'եզրակացնէր՝

— Կը պահանջեմ որ այս կատղած չուները բոլորն ալ գնդակահարուին :

Իսկ Բուխարինի եւ Ռիքովի դատավարութեան վերջաւորութեան կը յայտարարէր՝

— Դատական քննութիւնները կը հաստատեն, թէ մարդկութեան այս թափթփուքները, Հոկտեմբերեան յեղափոխութեան առաջին իսկ օրերէն, ժողովուրդի թշնամիներ Թրոցքիի, Զինովիեւի ու Կամենեւի հետ դաւած էին Լենինի, կուսակցութեան եւ խորհրդային Պետութեան դէմ :

Բանէն դուրս կուգար, որ այս բոլոր համայնավարները յեղափոխութիւնը կազմակերպած էին պարզապէս անոր դաւանանելու հաճոյքին համար :

Օրին մէկն ալ՝ անակնկալ մը պատահեցաւ :

1937ի դատավարութեանց մէջ ենք: Ամբաստանեալներու չարքին կը դտնուէր Ն· Կրեստինսքի, կեդրոնական կոմիտէի նախկին անդամ, Սթալինէն առաջ՝ կուսակցութեան ընդհանուր քարտուղար եւ ապա՝ Պերլինի մէջ խորհրդային դեսպան:

Կրեստինսքի մերժեց իրեն վերագրուած յանցանքները խոստովանիլ :

Նախագահը·— Ամբաստանեալ Կրեստինսքի, կ'ընդունի՞ք ձեր վրայ ծանրացող ամբաստանութիւնները:

Կրեստինսքի·— Ինքզինքս յանցաւոր չեմ նկատեր: Թրոցքիական չեմ: Ոչ մէկ առեն մաս կազմած եմ «ալակողմեաններու եւ Թրոցքիականներու խմբակ»ին, որուն դոյութիւնն իսկ կ'անդիտանայի: Ինծի վերագրուած ոճիրներէն եւ ոչ մէկը գործած եմ: Ի մասնաւորի՝ լրտեսական ցանցին հետ ոչ մէկ յարաբերութիւն ունեցած եմ :

(21 Շար·)

ՖՐԱՆՍԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

«ՊԷԼ ՔԱՆԹՕ»Ն
LE BEL CANTO (1)

—o—

Օլիվիէ Մեռլէն կը ջանայ բացատրել երգի աշխարհին այս խորհրդաւոր երեւոյթը, որ իր իտալերէն կոչումով կարծես մենաշնորհը նկատուած է իտալացի երգիչներուն :

« Պէլ Քանթօ»ն անցեալ դարու մեծ երգիչներու արուեստն էր, որուն իսկական ու ամբողջական բացատրութիւնը կարելի է գտնել Թէպալտինները եւ Քալասները մոխիկ ընելով :

Ճիշդ չէ պնդել որ միայն իտալական օփերաները երգելու մասնաւոր դպրոց մըն է « Պէլ Քանթօ»ն : Այդ օփերաները երգող նախորդ դարու կարգ մը երգիչները տեսակ մը աւանդութիւն ստեղծած են պարզապէս, որուն հետեւողներ կան ամէն երկրի մէջ Ռուսիայէն մինչեւ Ամերիկա :

Մեռլէնի այս աշխատասիրութիւնը կատարեալ պիտի ըլլար եթէ հեղինակը պայծառ կերպով հասկցնէր նաեւ որ « Պէլ Քանթօ»ի վարպետներէն չատ աւելի մեծ արուեստագէտ երգիչներ կը յայտնին Տէլ Մօնաքօներէն ու Քալասներէն աւելի արուեստի գոհացում բերել աշխարհին ա – ռանց հետեւելու « Պէլ Քանթօ»ի աւան – դութեանց : Բայց Մեռլէն կարծես Պէլ Քանթօյի վարպետ կը նկատէ ով որ համբաւաւոր երգիչի անուն չհած է : Ատկէ ընթերցողը թերեւս հետեւցնէ որ լաւ երգելու համար անհրաժեշտ է « Պէլ Քան – Թօ»ն որդեգրել : Այդպէս չէ անշուշտ , քանի որ էլիզապէթ Շվարցքօֆներու արուեստը չատ աւելի նուրբ ու բանաստեղծական է քան արուեստը այն երգիչնե – րուն որոնք բացառիկ ձայներ ունէին բայց բաւական հեռու են բարձրարժէք արուեստի սահմաններէն :

Ժողովուրդը՝ երաժշտական արուեստին անմիջական ազդեցութենէն միայն խանդավառուող ժողովուրդը որ երգի ոչսիթալի մը ելլելէ առք « ազուոր ձայն ունի» կամ « ազուոր ձայն չունի » կ'ըսէ միայն, կը պահանջէ « պէլ քանթօ»ի վար – պետները, որոնք ամէն բանէ առաջ հիանալի ձայներ ունէին : Միւս կողմէ, պէտք չէ մոռնալ որ հիանալի ձայներուն բոլոր կարելիութիւնները ցուցադրող օփերաները առհասարակ իտալականներն են : Թերեւս հոգ է զազանիքը Պելլինիներու, Վէրտիներու ու Փուչչինիներու ան – սահման ժողովրդականութեան , հակառակ անոր որ արուեստի աշխարհը այս երգահանները չի դասեր Պէթհովէններու կարգին :

Օ. Մեռլէն պատմականը ըրած է նաեւ օփերային , չափազանց հետաքրքրաշարժ ձեւով մը ներկայացնելով դերեր բոլոր հեղինակներն ու այն նշանաւոր երգիչները, որոնք իրենց ձայնով կամ արուեստով ժողովրդական զարմանքին օփերան :

Օփերայի սիրահար բայց ոչ երաժշտագէտ ժողովուրդին օգտակար է այս գիրքը որ անհամար անեքդոտներով ու պատմական ծանօթութիւններով կը յորդի :

Այս ընդարձակ աշխատասիրութիւնը ենթադրել կուտայ որ հեղինակը ի վիճակի է երգի արուեստին մասին տալու չատ աւելի բացատրութիւններ, որոնք կը պակսին : Թէ երգի դասաւանդութիւնն ու թէ երգելու արուեստը խորհրդաւոր պի – տութեան մը վերածուած են հինէն ի վեր : Կարելի է չատ բան գրել այս խոր – հուրդին մասին :

ԲԼԷՌ ՍՕԼԱՍԻԷ
CLAIRE SOLASSIER (2)

Ռոժէ Ռիւսթիկօ Սօլասիէ ընտանիքին կեանքէն քաղուած վէպերու շարքի մը սկսած է : Բլէռի անունով այս հատորը պիտի չարունակուի անշուշտ, քանի որ վերջին էջին տակ գրուած է « Ա. հատո – րին վերջը» : Այս պարագան արդելք մը չէ դատելու համար գիրքը, որ ինքն իր մէջ ամբողջութիւն մըն է :

Ընթերցողը խոհոյն կը կապուի գլխա – ւոր հերոս Բլէռի, որ մեծահարուստի մը չփացած աղջիկն է եւ սեռային ցանկու – թիւններով կը բոցավառի անցեալ դարու վերջերը : Իր ցանկութեանց առարկան աղքատ գործաւոր մըն է , զոր ձեռք ձգե – լու համար ամէն խենդութիւն աչք կ'ա – նէ :

Բաբախուն ու տաք վէպ մըն է վարպե – տի ձեռքով գրուած, բայց մեծ մասամբ կը մնայ նախորդ դարու չրջանակին մէջ եւ մեր օրերու կինն ու սէրը չենք գտներ իր մէջ : Գրելու կերպը ժամանակավրէպ չէ բարեբախտաբար եւ հաճոյքով կը կարդացուի գիրքը :

ՌՈՒԲԷՆ

—o—

Երբ գերեզման իջայ , կեանքիս
խորհուրդն էր
Վաղուց արդէն վշտակոծ :
Բզկտըւած էր ծիրանին փառքերու
Փոթորիկին մէջ դաժան .
Բայց յոյսը դեռ կը կոտտար
Անբուժելի վէրքի մը պէս մահաբեր :
Պիտ' ուզէի հազար մահով ես մեռնիլ
Ամպրոպասաստ լեռներուն մէջ հայրենի .
Բայց մահացայ օտարութեան երկնի
տակ ,
Երբ արիւնիս մէջ կեանքի թոյնն էր
ծորած ,
Եւ ահաւոր ամայութիւն մը հոգիս
Կը պատանիէր թանձրօրէն :

Ջեռերուս տակ մատեան մը կար
յուշերու՝
Որուն անձնիւր էջին վրայ
Սիրտ մ'Էր բացուած հերոսի
Բաբախումով մոլեգին
Ու կարօտով մահագեղ .
Ձայն աւարտել կ'ուզէի ,
Դեռ լայնօրէն բանալ դուռն իմ հոգիիս ,
Շրջել կամարն իր անհուն ,
Որպէսզի վար թափէին
Բոլոր աստղերն երազիս ,
Ու լեցուէին վիհերը մեր լեռներուն
Ծիրանեվառ բոցերով ...

Այնուհետեւ շրջապատուած ապրեցայ
Հերոսներէ՝ որոնց սրտին զարկերով
Տեղողութիւնն իմ օրերուս չափեցի .
Հսկումներով անվախճան
Անոնց համար անբոպատ խունկ ծխեցի
Յիշատակի խորանին :

Ես չմեռայ անոնց հետ ,
Որպէսզի փառքը հիւսեմ ,
Դիւցազնավէպն անոնց կեանքին
զոհաբեր .
Որպէսզի հողն հայրենի՝
Ուր մահատարփ հարսանիքով ննջեցին ,
Նուիրական եւ պանծալի հոչակեմ ...

Բայց ի՞նչ եղաւ ինծի համար
դառնութեան
Ծովին վըրայ նաւարկըւած ամէն օր .
Տանջանք , ցասում եւ սաստկութիւն
կարօտի :

Հետզհետէ ձայները սուրբ լըռեցին ,
Եւ երազները խաչուեցան վատօրէն ,
Սուրը ձեռքիս վերածուեցաւ գըրիչի .
Արիւնն եղաւ թանաք , պայքարը՝ նահանջ ,
Եւ հայրենի լեռներուն տեղ ամեհի
Մեծ ոստանի մը սեւ շէնքերն ունեցայ
Աչքերուս դէմ՝ որ անսեւեռ մընացին
Հրդեհավառ հորիզոնին՝ ուր կ'իջնէր
Մրոայլ գիշերը մահուան ...

Ես ժայռերուն , կատարներուն վարժըւած՝
Արհամարհանք ունէի
Ամէն վայրկեան սպառնացող մահուան
դէմ :
Դիւցազնութեան խառնաբանէն
հրաբորբոք
Ինկած էի գիրկը խաղաղ օրերու ,
Գրասեղանի մը առջեւ :
Չէի ճանչնար իմ հոգիս ,
Եւ կերպարանքը ինծի
Խորթ , անծանօթ կը թըւէր : —

Բայց ուզեցի շրջապատուիլ անոնցմէ՝
Որոնք երէկ իմ ընկերներըս եղան
Մահաբորբոք գեհենին մէջ լեռներուն .
Եւ յուշերու կախարդանքին յանձնըւած
Անոնք եկան մրրկաթեւ խումբերով .
Անոնք եկան կայծակնավառ եւ հսկայ .
Անոնք եկան յորձանաշարժ խենդութեամբ
Անոնք եկան անտառացեալ խաւարով ,
Եւ մատեանին մէջ հոգիզմայլ կարդացին
Յուշերն իրենց ազօթաձայն , երբ արդէն
Կ'իյնար գըրիչը ձեռքէս ...

Ես գերեզման իջայ , բայց հողը երբեք
Չիս որդնահար սեւ պատանքով չծածկեց .
Եւ լայնածիր աչքերըս բաց մընացին
Սեւեռաբիբ հորիզոնի մը՝ ուրկէ
Օր մը պիտի բարձրանայ
Արդար արեւն իմ պապերուս երազին ...

ԱՐՍԻՆ ԵՐԿԱԹ

ԻՄԱՍՏՈՒՆ ԽՕՍՔԵՐ

Միշտ գիտցածդ մի՛ ըսեր , բայց , միշտ ըսածդ գիտցի՛ր :

ՍՈԿՐԱՏ

×

Մտածումի անկախութիւնը՝ ամէնէն ազնուական հպարտութիւնն է :

ՊՂԱՏՈՆ

×

Կարդալ՝ առանց խորանալու՝ առանց մարսելու ուտելու կը նմանի :

ԼԱՖՈՆԹԷՆ

×

Հանճարը՝ մեծ համբերութիւն մըն է :

ՏԻՏԼՐՕ

×

Առողջ տրամաբանութիւնը կը խուսափի ծայրայեղութիւններէ :

ՄՈԼԻԷՌ

Այս առաջին հատորը կրնար անշուշտ անցեալի թեթեւաբարոյ պուրժուայական ընկերութեան յատկանշական պատկերը դնել արդի արուեստագէտի մը թափան – ցումով, բայց հեղինակը գոհացած է իր հերոսին սեռային թեթեւամտութիւնը ընդգծելով միայն :

Ամէն պարագայի չահեկան գիրք մըն է :

Մ. ՀԱՃԵՄԱՆ

1) Olivier Merlin : Juliard, Paris 1961
2) Roger Rudigoz: » » »

ԹԻԱՊԱՐՏԸ

(ՎԷՊ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿԵԱՆՔԷ)

ԳՐԵՑ

ԱՐՄԷՆ ՇԻՏԱՆԵԱՆ

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

— Կազմակերպութեան հիմնադիրները չեն ընդունիր «կուսակցութիւն» բառը . յետոյ, հակառակ են հայդուկային արշաւանքներ կազմակերպելու : Անոնց համար անօգուտ են ազատամարտական շարժումներ, անօգուտ են յարձակողական ծրագիրներու գործադրութիւնը ... մէկ խօսքով անոնց համար մեր գործունէութիւնը վնասակար համարուած է : Մինչեւ ե՞րբ չատ սխալ ըմբռնում մըն է ասիկա :

— Ներսէս Արծրունին այդպէ՞ս կը մտածէ :

— Էյ ... դուք արշաւանքներ պատրաստելու համար հայդուկային խումբեր ունի՞ք :

— Ունինք :

— Երկրի՞ն մէջ են :

— Ոչ :

— Հապա՞ :

— Արտասահման կը գտնուին :

— Ո՞ր երկիրներու մէջ :

— Մաս մը Իւուսաստանի մէջ, մաս մըն ալ Պարսից սահմանադրութիւնը .

— Կը կարծէ՞ք թէ Համիտը տեղեկացած չէ :

— Հայդուկային խումբերո՞ւ մասին :

— Այո :

— Թող իմանայ ... ինչ կարող է ընել : Մեր հայդուկային խումբերը աքանչելապէս զինուած են : Երկնի թռչունը չի վրիպիր անոնց դնդակէն : Անոնք վախ մը չունին, բարեկամս :

— Դիւցուք թէ ձեր հայդուկային խումբերը աքանչելապէս զինուած են, դիւցուք թէ օդին մէջ սուրացող թռչունն անգամ անոնց դնդակէն չազատի, վերջապէս դիւցուք թէ անոնց ուժը մեծ է ... բայց կը կարծէ՞ք թէ կառավարութիւնը աքանչելապէս զինուած զինուորներ չունի, ու այդ զինուորներու դնդակէն՝ օդին մէջ սուրացող թռչունը չի՛ վրիպիր ... : Դուք ձեր հայդուկային խումբերու ձեռքը մէկի տեղ հարիւրաւոր փամփուշտներ տըւած ըլլալու էք, անանկ չէ՞ ... արդեօք անպաշտպան զիւղացիներուն ալ գոնէ հատ մը չնորհած էք ... :

— Օհ , ինչպէս կարելի էր այդ ... բոլոր զիւղացիներուն զէնքեր տալու համար «ահագին» պատրաստութիւն մը պէտք է, ուսկի՞ց կրնանք ձեռք բերել :

— Երբ « ահագին » պատրաստութիւն մը չունիք, ի՞նչպէս կը յուսաք յաղթողիլ ու մեծ օգուտ մը առաջ բերել : Ի հարկէ, մեծ պատրաստութիւններն են որ մեծ դործունէութիւն մը գլուխ հանելու կը յաջողին : Իսայց, զարմանալի չէ՞ երբ քանի մը երիտասարդներ կը բերէք մեր լեռները մտի, ջարդել տալու համար անպէն ու անպաշտպան զիւղացիներն, որոնք տարիներէ ի վեր զանազան քիւրտ Աչի – րէթներու գերիներն եղած են ու իրենց ճակատագիրը պարզապէս այդ վայրենաբարոյ զազաններու կամայականութենէն կախում ունի :

Երիտասարդը շարժում մը ըրաւ ու ակամայ կերպով մը կերպարանքը խոո – նեց :

Ո՞վ էր այդ հսկայ մարդը ... ո՞վ էր այդ զիւղացին որ չախչախիչ փաստերով կը քննադատէր իր կուսակցութեան բռ – վանդակ գործունէութիւնը :

— Կը սխալիք, բարեկամս, մրմնջեց երիտասարդը :

— Ի՞նչ բանի մէջ :

— Գաղափարներու մէջ.

— Ի՞նչ պատճառաւ ... ըսէք ինծի :

— Նախ՝ յեղափոխական կուսակցութիւն մը պարտաւոր չէ նկատի առնելու զիւղացի ժողովրդեան անդէն մնալը, ո – րովհետեւ զիւղացիները զէնք գործածել չեն գիտեր . յետոյ Քիւրտ պէկերու իրա – ւասութեանց ներքեւ ծառայող զիւղացի – ները մեծաւ մասամբ իրենց Հայութիւնը չեն ճանչնար, բարեկամս, ի՞նչպէս կա – րելի է վստահիլ :

— Լաւ ... միայն թէ վանի նահանգին ո՞ր անկիւնը հայ զիւղ մը պիտի գտնէք , որուն տէրը Քիւրտ պէկ մը չէ :

Ուսումնասիրա՞ծ էք թիմարը ... պի – տի՞ք ինչ ազդեցութիւններ ունին այդ կողմը Մլանցկիներ, Շամսկիներ, Մու – կորցկիներ, Շուլիցկիներ , Թակուրցկիներ .. վերջապէս այն Քիւրտ պէկերը, որոնք ա – զատ ու ինքնիշխան կ'ապրին ու իրաւա – սութեանց ներքեւ ճնշուած ու ստրկած հայ զիւղացիներ ունին մեծ թուով ... : Արդ, զիւցուք թէ հայդուկային մէկ երկու խումբեր յարձակին այդ Քիւրտ պէկերու վրայ ... կը յուսաք թէ ընդհանուր վրէժ – խնդրութիւնը, ընդհանուր կոտորածը նոյն վայրկեանին անխուսափելի չի դառ – նար : Ի՞նչ արդիւնք կ'ունենանք ... չէ՞ որ մէկի տեղ հարիւրը պիտի համրենք , չէ որ մեր եռեւ աւեր ու մոխիր պիտի թողունք : Ըսէք, խնդրեմ, կը սխալի՞մ արդեօք : Տեղեկութիւններս չինծո՞ւ են :

— Ձեմ ըսեր թէ տեղեկութիւներդ չինծու են . բայց երկու չարեաց փոքրագոյնն ընտրելու հարկադրուած ենք : Այսօր սպառելու, համբերելու հնարը չկայ ... պէտք է բռնի ուժով մեր իրաւունքը պաշտպանելու աշխատինք :

(Շար .)

ՆՈՒԷՐ

Վաղարշակ Թարզմանեանի մահուան առթիւ, Պ. Վ. Վարդանեան 10 Ն. Ֆ. կը նուիրէ «Ծառայ»ին, փոխան ծաղիկի :

ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

Վասպուրականի Հայր. Միութեան կեդր. վարչութիւնը, ի դիմաց Փարիզի, Վիէնի, Տէսինի, Փլաժէի մասնաճիւղե – րուն, իր խոր ցաւակցութիւնը կը յայտ – նէ Օր. Ազատուհի Հիւսեանի, Հիւսեան գերդաստանի, մօր, Արմենակ, Համայակ եւ Վահան Հիւսեանի եւ Մարզար – եան ընտանիքին :

ԿՆԻՔ

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՕՐԸ

ԼԻՈՆԻ ՄԷՋ

Նախաճեռնութեամբ Կպ. Խաչի Լիոնի մասնաճիւղի :

28 Յունուար, կիրակի կէսօրէ ետք ժա – մը 3ին, Սթիւտիօ Քրէֆի սրահին մէջ, 24 Բիւ Տիւճօար :

Գեղարուեստական բաժին.— Խմբերգ, արտասանութիւն, Ծաղիկներու պար, հայկական պարեր եւ մանկական անա – կնկալներ :

Պիտի ներկայացուի փոքրիկ թատերախ մը՝ « ԿԱՂԱՆԴ ՊԱՊԱՆ » :

Ինչպէս ամէն տարի, այս տարի եւս կաղանդ Պապան իր նուէրները պիտի բաժնէ սրահին մէջ դտնուող բոլոր պըզ – տիկներուն անխտիր :

Մուտքը ազատ է :

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

ԿԱՊՈՑՏ ԽԱՉԻ ՕՐԸ

Ֆ. Կ. Խաչի օրը կը տօնուի Ապրիլ 1ին, կիրակի, կէսօրէ վերջ, Շիմիի սրահը :

×

ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԸ Կ'ԵՐԳԵՆ

ՄԱՐՏ 18ԻՆ

×

Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ

Ծննդեան 1600ամեակը համազգային շուքով կը տօնուի Մարսէյլի մէջ :

Փետրուար 18ին, կիրակի կէսօրէ ետք, քաղ տ'Իթալիայի չքեղ թատրոնին մէջ :

Կ'ՈՒԶՈՒԻ

Պաշտօնական գրասենեակի մը մէջ աշ – խատելու համար, երիտասարդ տաքթիլօ օրիորդ մը կը փնտռուի : Մանրամաս – նութեանց համար դիմել ՅԱՌԱՋ :

GALERIE MOTTE

5, Passage des Lions

— GENÈVE —

CARZOU

EXPOSITION

jusqu'à fin Janvier

ԼՈՑՍ ՏԵՍԱՒ

ՅԱԿՈԲ ՏԷՐ-ՅԱԿՈԲԵԱՆ

ՊԱՐՏԻԶԱԿԸ ԻՍԱՈՒՏԻԿ

Յաւելուածաբար՝ ՄԱՆՈՒՇԱԿ ԵՒ ԻՐ ՀԷՔԵԱԹՆԵՐԸ :

500 էջ

13 Hors–Texte

Հասոյթը Փարիզի եկեղեցւոյ կըր – թական մարմնին :

Գին 12 Ն. Ֆ.

Թղթատարի ծախքով 13·40 Ն. Ֆ.

Արտասահման 4 տոլար :

Դիմել՝

Յառաջին

Հայ գրավաճառներուն

Փարիզի եկեղեցին կամ Տպարան

ՏԷՐ – ՅԱԿՈԲԵԱՆ

Կ'ՈՒԶՈՒԻ

Դերձակի փուրնիթիւրի խանութի մը համար, պարոն մը որ վերջացուցած ըլ – լայ իր զինուորական պարտականութիւ – նը եւ կառք վարելու արտօնութիւն ունե – նայ : ԴԻՄԵԼ՝

17, Rue Saulnier

Imprimerie Spéciale du journal « Haratch »
32, Rue de Trévise, PARIS (9e)

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Նախաճեռնութեամբ կապոյտ Խաչի Ալֆորվիլի մասնաճիւղին :

Յունուար 27, Շաբաթ, ժամը 20·30ին Մեզոն Ալֆորի Սալ տէ Ֆէթին մէջ :

Առնուվիլի Թատերախումբը կը ներկայացնէ՝

ԱՇԽԱՐՀԻ ԴԱՏԱՍՏԱՆԸ

ՄՈՒՐԱՏ ՌԱՓԱՅԷԼԵԱՆ

ՆԱԽԿԻՆ ԱՇԱԿԵՐՏԱՑ ՄԻՈՒԹԻՒՆ

ՏԱՐԵԿԱՆ ՄԵԾ ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

ԶՈՒԱՐԹ

Մայրամուտէն մինչեւ կէս գիշեր

ԶՈՒԱՐԹ ՄԹՆՈԼՈՐՏ

ԿԻՐԱԿԻ՝ ՓԵՏՐՈՒԱՐ 11, ԺԱՄԸ 17ԷՆ՝24

AMBASSADEURS

3, Ave. Gabriel, 3

ԵՐԳ ՈՒ ՊԱՐ

ՄԵԾ ՆՈՒԱԳԱԽՈՒՄԲ

Attractions *ԽԱՂԵՐ* **Bar-Buffet**

ՀԱՅ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ

ՏԱՐԵԿԱՆ ՅԵՐԿՈՑԹ - ՊԱՐԱՀԱՆԴԷՍԻ

Յունուար 28, կիրակի, ժամը 16–24

LES AMBASSADEURS, 3, Avenue Gabriel, Champs-Elysées

կը մասնակցին երկու հռչակաւոր նուագախումբեր

PIERRE DIEUZEY et ses Capitiens — JAZZ NEW ORLEANS

PEPITO GOMEZ — TYPIQUE TANGOS

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՃՈԽ ԲԱԺԻՆ

Կը խնդրուի կանխաւ ապահովել տոմսերը եւ սեղանները հեռաձայնելով

Հայ Կարմիր Խաչի կեդրոնատեղին ԷԼԻզէ 67 – 03

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ. — Վարձուած սեղանները դրաւուած պէտք է ըլլան ամէնէն ուշը ժամը 19·30ին : Հակառակ պարագայ յին պարահանդէսին կազմակերպիչ յանձ – նախումբը որեւէ պատասխանատուութիւն չի ստանձներ :

ՍԱԿԱԳԻՆ ԸՆԹԱՑԻԿ ԱԶԴԵՐՈՒ

ՄԷԿ ԱՆԳԱՄՈՒԱՆ ՀԱՄԱՐ

ՄԱՀԱԶԴ	30 Ն. Ֆ.	մինչեւ	1/4	սիւնակ
ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ	15 Ն. Ֆ.	մինչեւ	1/8	սիւնակ
ՑԱԽԱԿՑՈՒԹԻՒՆ	10 Ն. Ֆ.	»	»	»
ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ	20 Ն. Ֆ.	»	»	»
ՀԱՐՍԱՆԻՔ, ՆՇԱՆՏՈՒՔ	20 Ն. Ֆ.	»	»	»
ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ	10 Ն. Ֆ.	»	»	»
«ՓՈԽԱՆ ԾԱՂԿԵՊՍԱԿԻ»	10 Ն. Ֆ.	»	»	»
«ԿԸ ՓՆՏՌՈՒԻ»	5 Ն. Ֆ.	»	»	»
ԾԱԽՈՒ Է	20 Ն. Ֆ.	»	»	»

Այս գիները մէկ անգամ հրատարակելի եւ նշանակուած ծաւալով ազ – դերու համար են, չորրորդ էջը :

Կանխիկ վճարումը պարտաւորիչ է :

Առեւտրական կամ այլ ազդերու մասնաւոր պայմաններուն համար դիմել Վարչութեան :

ՀՐԱՆՏ ՍԱՄՈՒԷԼԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

51, Rue Monsieur-le-Prince, PARIS - 6e — Chèque Postal : 1278-35

PEINTRES et SCULPTEURS ARMENIENS, par *Onnig Avédissian,* Le Caire	100 NF.
MINIATURES ARMENIENNES, par *Lydia Dournova,* Paris.	120 NF.
NAREK, le Livre de Prières, trad. par *Isaac Kéchichian,* Paris, 1961.	25,20 NF.
LE CHANT DU PAIN, *Daniel Varoujan,* Paris.	6,30 NF.
HISTOIRE DE L'ARMENIE, par *H. Thorossian,* Paris.	10 NF.
ԲԱՌԱՐԱՆ ՖՐԱՆՍԵՐԷՆԷ ՀԱՅԵՐԷՆ, Հ. Ե. Տէր Ղազարեան, Պէյրութ,	20Ն.Ֆ.
ԲԱՌԱՐԱՆ ՖՐԱՆՍԵՐԷՆ ՀԱՅԵՐԷՆ, Մեսրոպ Նուպարեան, Պէյրութ	40 Ն.Ֆ.
ԲԱՌԱՐԱՆ ՀԱՅԵՐԷՆԷ ԳԱՂՂԻԵՐԷՆ, Հ. Գ. Պայեան, Վենետիկ,	40 Ն.Ֆ.
ԱՒՋԵՒՆ ԲԱՌԱՐԱՆ ՀԱՅ. ԳԱՂՂ. Հ. Դ. Ստեփանեան, Վենետիկ	9 Ն.Ֆ.
ԲԱՌԱՐԱՆ ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ, Մ. Գաբամաճեան, Պէյրութ,	40 Ն.Ֆ.
ԱՆԳԼԵՐԷՆԷ ՀԱՅԵՐԷՆ ԲԱՌԱՐԱՆ, Յ. Յ. Զապմաղճեան, Պէյրութ	40 Ն.Ֆ.
ՅՈՒՇԱՄԱՏԵԱՆ Հ. Մ. Ը. Մ.Ի, 1918–1958, Պէյրութ	22 Ն.Ֆ.
ԿԵԱՆՔԻ ՈՒՂԻՆԵՐՈՎ, Բ. հատոր, Մ. ՎՐԱՅԵԱՆ, Պէյրութ	12 Ն.Ֆ.
ԶՐՈՑՑ, Կ. ՓՕԼԱՏԵԱՆ, Ա. հատոր 3·50 Ն. Ֆ. Բ. հատոր	5 Ն. Ֆ.
ԱՆԴՐՇԻՐԻՄԵԱՆ ՁԱՅՆԵՐ, Պ. Մնաքեան, Պէյրութ	4 Ն. Ֆ.

Առաքման ծախքը գնողին վրայ

ՁՈՒ ՄԹԵՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ԵՒ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆՑ

ԷՒՐՈՊԱՅԻ

ՄԵԾԱԳՈՅՆ ԱՒՏԱԴՐՈՒՔԸ

ՀԷԼՎԱ ԼՈԳՈՒՄ Սուսամ – ՀԷԼՎԱ



ԹԱՀԻՆ ՇԱՐՈՑ (ՌՈՃԻԿ) ՎԱՐԴԷ-ԱՆՈՅՇ

ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ...

CHOC-ALVA • CHOCO-LOC

Sté le BOSPHORE

SIÈGE SOCIAL

2, Rue Louis Astouin Marseille (2ème)

MORY et Cie

ՆՈՒԷՐՆԵՐՈՒ ԵՒ ԾԲԱՐՆԵՐՈՒ ԱՌԱՔՈՒՄ ԴԷՊԻ ԽՈՐՀՐԴ. ՄԻՈՒԹԻՒՆ :

Գնեցէք զանազան ձեր ուզած տեղը եւ առաքումը մեզի վստահեցէք : Նուազա – գոյն ծախքերով կը ղրկենք խորհրդ. Միութիւն :

Դիմեցէք մեր նոր գիները գիտնալու համար.—

10, Rue St. Vincent de Paul, Paris 10e

(PRÈS DE LA GARE DU NORD)

Téléphone : TRU. 27-70

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

Le PREMIER QUOTIDIEN ARMENIEN en EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction et Administration : 32, Rue de Trévise - PARIS-9e

Fondé en 1925
R. C. Seine 57 A 2731

Téléph. : PRO. 86 - 60
C. C. P. Paris 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա՝ Տար. 50 Ն. Ֆ. Վեցամսեայ՝ 27 Ն. Ֆ.
Արտասահման՝ Տար. 60 Ն. Ֆ. Հատը՝ 0·25 Ն. Ֆ.

ԵՐԵՔՇԱԲԹԻ
22
ՅՈՒՆՈՒԱՐ
MARDI
22 JANVIER
1962

38ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 9311 38e ANNÉE Fondateur : SCHAVARCH MISSAKIAN ՆՈՐ ՇՐՋԱՆ, 18ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 5112

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՖՐԱՆՍԱ ԻՐ ՀՈԳԵՐՈՎ

ԳԱՀԻՐԷ — ԴԱՏԱՐԱՆԸ ԻՆՔԶԻՆՔԸ ՁԵՌՆՀԱՍ ՀՌՉԱԿԵՑ

ԱԼԺԵՐԻՈՑ ՄԹՆՈԼՈՐՏԸ ՄԻՇՏ ԼԱՐՈՒՄԱՅ Է

Գահիրէի տաեանը , որուն առջեւ կը դատուէին Ֆրանսացի չորս դիւանագէտները, ինքզինքը ձեռնհաս հռչակեց նման դատ մը վարելու : Ծանօթ է որ պաշտպան փաստաբանները խնդրոյ առարկայ դարձուցած էին նման իրաւասութիւն մը նկատի առնելով ամբաստանեալներուն դիւանագէտի հանդամանքը :

Նիստը բացուեցաւ կիրակի առաւօտ եւ կարճ դադարէ մը ետք իրրեւ վկայ լսուեցաւ Զօր. Ապտելաթիֆ Իզաթը : Ցայտնեց, ինչպէս ըրած էր նախորդ օրը դատախազը ,որ Ֆրանսական առաքելութեան միակ պաշտօնն էր գրաւուած ինքզինքերով զբաղիլ : Այդ գետնի վրայ է մի – այն որ հանդիպումներ ունեցած է առաքելութեան անդամներուն հետ : Այդ պահուն Ֆրանսական առաքելութեան պետը՝ Անարէ Մաթիէ խօսք կ'ուզէ աւել – ցնելու համար թէ ուրիշ պաշտօնեաներու ալ հանդիպած է, որոնց մէջ եգիտական նախարար՝ Հասան Ապպաս Սաքի եւ ո – րուն հետ բամպակի համաձայնութեան մը մասին խօսած է : Պաշտպան կողմը կ'առաջարկէ որ եգիտական Նախարարն ալ իրրեւ վկայ լսուի, ինչպէս նաեւ ե – գիպտոսի Իրամատան կառավարիչը , ան տեսական փոխ – նախարարը եւ Ցիւ – րիխի համաձայնութեան եզիպտացի բա – նակցողները :

Նոր դադարէ մը ետք, առեանը կը յայտարարէ թէ չորս ամբաստանեալները իրենց պաշտօններուն սահմանը անցած են :

Առաջին առթիւ կը հարցաքննուի Անտէ Մաթիէ որուն աթոռ մը կը տրուի եւ որ Ֆրանսերէն կը պատասխանէ :

« Եգիպտոս եկած եմ իրրեւ Ֆրանսա – կան կառավարութեան պաշտօնեայ, պետ նշանակուած՝ այն առաքելութեան , ո – րուն գործն է դրաւուած ինչքերու խնդիրը, ըստ Արաբ Միացեալ Հանրապետութեան եւ Ֆրանսայի միջեւ ազատօրէն ստորագրուած համաձայնութեանց : Գործած եմ միշտ ըստ ստացած հրահանգներուս : կը վստահեցնեմ դատարանը որ երբեք իմ չահուս համար չեմ գործած : իմ , ինչպէս եւ իմ առաքելութեանս դերը եղած է Ցիւրիխի համաձայնութեան գործադրութիւնը ,որպէսզի այդ համաձայ – նագրով հաստատուած յարաբերութիւն – ները՝ Ֆրանսայի եւ Արաբ Միացեալ Հանրապետութեան հետ, զարգանան : Այդ համաձայնութիւնը առաջին քայլ մըն է բնական յարաբերութեանց վերահաս – տատման ճամբուն վրայ, անմեղ եմ այն բոլոր ամբաստանութիւններէն որ եղան ինծի դէմ » :

Նաեւ այս դատավարութեան առթիւ յայտարարեց թէ տեղի պիտի չտան « ա – րեւմտեան ճնշումներուն» :

ԱԼԺԵՐԻԱ

Մթնոլորտը միշտ լարուած է դևխա – ւորաբար Գոնի մէջ : Ալժէ բոլորովին մեռած քաղաքի մը ապատօրութիւնը կը թո – ղուր.— Ոչ լոյս , ոչ փոխադրութեան մի – ջոց եւ բժիշկներու ու նաւահանգիստի գործադուլ :

Գոնի մէջ ընդհանուր գործադուլի հը – րահանգ տուած էր Գաղտնի Բանակը եր – կուշաբթի օրուան համար, երեստասերդ Նոեմ Մէկի յուշարկաւորութեան առթիւ: Նոեմ Մէկի որ Գաղտնի Բանակի հանրա – յին ազդերը կը փակցնէր պատերուն վր – րայ, առջի օր սպաննուեցաւ Զինեալ Ու – ժերու ենթասպայի մը կողմէ : Այս վեր – ջինը կը պնդէ թէ օդին մէջ պարպած է զէնքը , բայց կարգ մը զրոյցներու հա – մաձայն Մայր – Հայրենիք փոխադրուած է :

Ամէն պարագայի մէջ, մեռեալներու եւ վիրաւորներու թիւը օրէ օր կը բարձրա – նայ : 8 մեռեալ, 30 վիրաւոր Պոնի մէջ , 16 մեռեալ, 17 վիրաւոր Ալժէի մէջ :

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՊՈՒԼԿԱՐԱԿԱՆ օդանաւ մը՝ Միկ 17 ճգմուեցաւ հարաւային Իտալիոյ հողա – մասին վրայ : Իտալացիներուն համար Պուլկարները լրտեսութիւն կ'ընէին մինչ Պուլկարները կը պնդեն թէ ճամբան կորսընցուցած է : Կը մնայ նաեւ վիրաւոր օ – դանաւորդին պատմութիւնը : Ան ալ ը – սած է թէ «ազատութիւնն ընտրած է » : Իտալացիները լրտեսութեան մասին կը խօսին որովհետեւ չարժանկարի եւ լու – սանկարչլու գործիքներ կան օդանաւին մէջ :

ԹԵՀՐԱՆի մէջ ուսանողական կարեւոր ցոյցեր տեղի ունեցած են եւ ոստիկանու – թիւնը դժուարութիւն ունեցած է ցրուե – լու երիտասարդները : Կառավարութիւնը փակեց նաեւ Համալսարանը : Հարիւր ու – սանողներ վիրաւորուած են, երկու հա – րիւր ուրիշներ ձերբակալուած : Ոստիկա – նութիւնը արգիլեց նաեւ որեւէ հաւա – քոյթ մայրաքաղաքին մէջ :

ԼԵՀԱՍՏԱՆի համայնավար կուսակցու – թեան Ա. քարտուղարը՝ կոմունքա կու – սակցութեան քանամեակին առթիւ երե – ան հանեց այն գաղտնի համաձայնագի – րը զոր Սթալին եւ Հիթլեր ստորագրած էին եւ որ կը նախատեսէր Լեհաստանի բաժանումը :

ԽՈՐՀ. ՄԻՈՒԹԻՒՆԸ մշակութային նոր համաձայնագիր մը պիտի ստորագրէ Միացեալ Նահանգներու հետ :

ՌՈՊԸՐԹ ՔԵՆԸՏԻ, նախագահին եղ – բայրը եւ Արդարութեան նախարար Մոս – կուա հրաւիրուեցաւ, Խրուշչեւի կողմէ :

ՄՈՍԿՈՒԱՑի եւ Արեւելեան Գերմա – նիոյ կառավարութեան միջեւ տարակար – ծութիւններ կան : Ուլպրիխթ յուսախաբ եղած է Մոսկուայի վերջին յուշագրէն Պոնի :

ՊԱՂՏԱՏԷՆ կը հաղորդեն թէ Իրաքի կառավարութիւնը կը վերաքննէ իր յա – րաբերութիւնները, բոլոր այն երկիրներ – ուն հետ, որոնք ճանչցած են Քուվէյթի իշխանապետութիւնը :

ԹԵԼ ԱՎԻՎԷն կը հաղորդեն թէ Եգիպ – տոս երկու նոր սուպհաւ եւ ծանր ռմբա – բաձիգ օդանաւեր ստացած է Խորհ. Մի – ութենէն :

ԻՆՁՕՆԻԻ յայտարարեց թէ 1962ը կար – գըն ու կանոնը վերահաստատելու տարի մը պիտի ըլլայ : 1963ին հնգամեայ ծրա – գիրը իր առաջին պտուղները պիտի տայ, ապրուստի մակարդակը պիտի բարձրա – նայ եւ անգործութիւնը պիտի պակսի :

ՊԻԶԵՐԹի չուրջ կատարուած ֆրանք – եւթունուցեան խօսակցութիւնները փա – րիզի մէջ ընդհատուեցաւ : Թունուզեան պատուիրակութիւնը Թունուզ վերադար – ձաւ :

ԸՍՈՂԸ ՄԵՆՔ ՁԵՆՔ

ԴԵՂԻՆ ՍԱՏԱՆԱՅԻ ՊԱՐԸ

Պ. ՄԱՆՈՒԻԼ եւ Տիկին ՄԱՐԻ :

Առաջին բառը, որ դուրս թռաւ Պ. Մա – նուէլի բերանէն (ախ մոռացայ, այն ժա – մանակ նա դեռ պարոն չէր , այլ անհան – գիստ մի մանչ՝ գայլուկի սոված աչքե – րով) , չէր հայր, կամ մայր, կամ այլ ինչ , այլ ոսկեզրամ դուրս թռաւ նրա մանուկ բերանից . . .

Ոսկին կամ ոսկեզրամը փոխարինեց նրա մօրը : Նա օրօրեց նրան , օրօրոցային երգեց՝ հրապուրելով իր դեղին հեռուներով . . .

Ամէն ինչի մէջ Մանուէլիկը ոսկի էր տեսնում՝ եւ մօրը աչքերում , եւ հօր բե – խերից կախուած ժպտի մէջ, եւ բարկ ա – րեւի տակ մեղմ փռուած Միջերկրականի հոլանի կրծքի վրայ, եւ նոճիների ման – րիկ տերեւների՝ երկնային սիւքից առա – ջացած ծափիւնում . . .

Իսկ երբ մեծացաւ՝ նաեւ . . . Հայաս – տան բառի եւ հասկացողութեան մէջ . . .

Բեխերի չիլ աստուածուհին փութեռան – դօրէն նրան հանդիպեցրեց օրիորդ Մարի Ջաբամկոսի հետ : Նրանց անդրանիկ հանդիպման ժամանակ անաստուած օր – իորդն այնպէս զնդուն էր ծիծաղում, ա – սես բերանից մանր, զնդուն թուրքական ոսկեզրամներ էր չաղ տալիս չորս կողմ : Երիտասարդն աջ ու ձախ կռանում էր՝ գետնից ինչ որ բան վերցնելու ակնկալի – քով : Այր եւ Տիկին Մանուէլները (կամ Ջաբամկոսները) չուտով դարձան մէկ միասնական հոգի, որտեղ գունդ ու կծիկ նստել էր կանաչ աչքերով դեղին սատա – նան . . .

Եւ այդ պահից սկսեալ ամուսինների ձեռվերը պարում են, ճչում, բարձրա – ցընում հիստերիկ (ջղագար) դոռոզոչ , երբ դեղին մետաղը ցուցնում է նրանց իր ղէմքը :

Խելացնոր մի պար է սկսւում նրանց հոգում, նենգոտ մի թաթառ մարդկային սին էութեան, որի աղօտ երկնակամա – րում առկայծում են լոկ տարբեր տա – տումների ոսկեզրամները՝ որպէս չարա – զուշակ աստղեր, աղաղակ է դա ագա – հութեան, կուտակելու, կուտակելու ան – յագ մի ծէնչ, կատարեալ մի բանդագու – չանք, մի սոմնաթռուլա (դիչերաչըը – ջիկ) , որի տակտը տալիս է կանաչ աչքե – րով նոյն դեղին սատանան : . . .

— Տեսնել Նէապոլը (Նափոլի) եւ ապա մեռնել — բացականչել է ռոմանտիկ մի իտալացի :

— Տեսնել աչխարհի վերջին ոսկին եւ նոր միայն մեռնել ,— բացականչում են այր ու տիկին Մանուէլ – Ջաբամկոսնե – րը :

Երբ հնարաւորութիւն ստեղծուեց որ – պէս զբօսաչրջիկ Հայաստան մեկնել , ա – մուսիններն անմիջապէս ծափ զարկեցին .

— Հայաստան . . . ազատ աչխարհ . . . ոսկի կարելի է չինել,— աչքերը փակ եւ բերանը բաց՝ երազեց պարոն Մանուէլը :

— Ոսկի . . . Հայաստան . . . — բերանը փակ եւ աչքերը բաց՝ երազեց տիկին Մա – րին :

Նաւը, ջրերի վրայ ճոճուելով, քանի անգամ մէկ տարուայ մէջ անցաւ Վոսփո – րը, Սեւ Ծովը եւ խարխափ ձգեց Օտեսա – յում : Գնացքը նրանց բերեց Հայաստան :

Հայաստանն ամուսիններին թուում էր Թուրքական մի մեծ ոսկեզրամ . . . որը , տակայն, չընկաւ նրանց դրամապանակը :

×

Պարոն ԱԻԵՏԻՍ :

Գետաձիու չորրորդքի թեթեւ վա – րիանտը (տարբերակը) յիչեցնող քայլ – ուածքով այս լայնորկոր մարդը սպեկու – լացիայի դրամաբոյս դաշտում կատար – եալ մարաթոնեան մարզիկ է : Եթէ նրան ասեն, որ Աւստրալիայի պրերաներում (մարզադետին) տակաւին ողջ մնացած մի պապուասի հետ կարող է առեւտրա – կան գործառնութիւնների մէջ մտնել, յաջորդ օրը նա Հալէպից պապուասի մօտ կը թռչի ժամանակակից պեդաս ինքնա – թիռներով :

Այնքան չատ է այս պարոնը ղրամը սի – րում , ոսկին, որ սիրան հանել եւ տեղը դրել է տոլարների մի տրցակ : Բազմա – թիւ թաքստարաններ ունի եւ իր մարմնի վրայ, եւ իր մարմնից դուրս՝ այլ մար – մինների վրայ· այդ թաքստարաններում պահած նա Հայաստան էր բերել 1·232 ղոյզ նէյլոնէ նախշուն գուլպաներ , կա – նացի նէյլոնէ 57 զլխաչոր ու 34 բաճկո – նակ, 2180 գնտիկաւոր մատիտներ . . . Այս ամէնը չէր բերել հայ աղջիկներին կամ ուսումնատենչ պատանիներին նուի – րելու , քաւ լիցի : Այս ամէնը նա փոխա – նակում էր խորհրդային ղրամով· մեր ղրամը հազարներով հոսում էր արտա – սահման՝ պարոն Աւետիսի լայնորկոր թաքստարաններում . . . .

Ահա եւ ՀԱՑԿ ՍԱՐԳԻՍԵԱՆԸ ,որը ծնկ – ներում ուժեղ դող է զգում ոսկի տեսնե – լիս : Այս պարոնը խոստովանեց , որ ար – տասահմանից բերածը վաճառելու համար է բերել : Երբ նա բռնուեց առեւտրակա – նի տենդի պահին , աղաչանք – պաղա – տանք թափեց (դա իր լեզուն էր) :

— Թողէք մնամ, խմբի հետ երթամ արտասահման :

Մերժում ստանալուն պէս սկսեց յոխոր – տալ, վիրաւորել (դա էլ դեղին սատանա – յի լեզուն էր) :

Ապա նա փլուզեց բաղկաթոռին եւ, հա – մաչխարհային մի վիշտ աչքերում, հայ – եացքով յածեց սենեակում, ուր խառնի – խուռն թափթփուած էին արտասահմանից ճամպրուկներով բերած իր մեծակուտակ «գանձերը» : Մարդ ակամայից խղճում էր դեղին սատանայի այդ տորուկին :

Յանկարծակի նա սկսեց լալ : Լացը է – լեւէջներով մարում էր սենեակի կամար – ների տակ, մաքսանենգի աչքերից քամե – լով դառնաղի արցունքներ· կարելի էր կարծել, որ նա ղղջում է : Բայց, աւա՛ղ, ահա բացեց նա բերանն ու՝

— Դրամ չունիմ , ճանապարհածա՛խս տուէք, ի սէր Աստծոյ . . .

Տուեցին : Այնինչ քո գրպանում , ով լա – լահառաչ պարոն Սարգիսեան, կար 475 ռուբլի (նոր դրամով)· էլ ինչո՞ւ էիր ստորանում, դրամ մուրում . . . Բայց ի՞նչ կայ զարմանալու, չէ՞ որ ընդհանրապէս դու աղքատ ես , չէ՞ որ մուրացիկ ես դու հոգով , մտքով , խղճով , պատուով . . .

ՄԱՐԻ ԱՐԹԻՆ : Այստեղ դրէիս մի պահ կանգ է առնում : Բայց քանի որ վերեւում խոստացայ սրա մասին քիչ յետոյ պատ – մել, սկսում եմ :

Ուր ես հասել, մարդկային արժանա – պատուութիւն , ինչպիսի կեղտի մէջ ես թաւալուել՝ Արթին Մարթի դէմքով . . . Նա չորրորդ անգամն է գալիս Հայաս – տան : Տոլարներ ու խորհրդային ղրամներ է խաղացնում այդ ճարպիկ, ջահել կինը : Ինչպիսի ֆանտազիա (երեւակայութիւն) է պէտք հասկանալու համար, թէ ինչ ճանապարհներով է ոսկեզրամ բերում նա մայր Հայաստան : Ամօթից կարմրի՛ր, պանդուխտ Հայութիւն, քո այդ զարմու – հին թուրքական ոսկին թաքցրել էր իր մարմնի այն մասում , որն աստուածաչնչ – եան Եւան ծածկում էր Քլենու տերեւով :

Քամնելի երեւակայութիւնը ծնում է քամնելի հնարքներ :

Շահամոլութեան տենչը ստիպում է մաքսանենգներին մեր ղրամը պահել ըն – կոյզի մէջ, լենինականան մանկական հեծեծանքի մասերում յատուկ պատ – րաստուած գօտու մէջ, կանացի երկյա – տակ պայուսակներում, հօշիկի տակ , նաւի պլինթներում (փայտերիզ) եւն. :

Իսկ դեղին սատանան հրճւում է, պա – րում . . .

ՂԱՐԻՊ ՀԱՑՐԱՊԵՏԵԱՆ

(2 Մնացեալը յաջորդիվ)

ԽՕՍՈՒՆ ՔԱՐԵՐԸ...

Եօթներորդ տարին է, որ Հայաստանի Գիտութիւններու Ակադեմիային հնագէտ – տութեան եւ ազգագրութեան հիմնար – կութիւնը կը հաւաքէ հայերէն վիմագիրը արձանագրութիւնները եւ հրատարակու – թեան կը պատրաստէ այդ արձանա – գրութիւններուն ամբողջական հաւաքա – ծոն: Այդ կարճ եւ համառօտ, սակայն բովանդակալից յիշատակարանները կա – րեւոր սկզբնաղբիւրները են մեր ազգին պատմութիւնը եւ մշակոյթը ուսումնասի – րելու համար:

Հիմնարկութիւնը արդէն հրատարակած է վիմական արձանագրութիւններուն՝ « դիւան հայ վիմագրութեան» ամբող – ջական հաւաքածոյին առաջին պրակը: Տպագրութեան յանձնուած է դրաւոր յուշարձանները հաւաքելու գործին մէջ վարպետի անուն հանած ակագ. Յ. Օր – բելի՝ Անիի արձանագրութիւններուն հաւաքածոն: Պատրաստ է հրատարակու – թեան նաեւ Փրոֆ. Լ. Մելիքսէթ Բեկի Վիրահայոց արձանագրութիւններուն հաւաքածոն:

Վիմագիր արձանագրութիւններուն մէջ երբեմն արտացոլումը գտած են միջնա – դարեան Հայաստանի ընկերային, քաղա – քական կեանքերը, ինչպէս նաեւ Անդր – կովկասի ազգերուն տնտեսական եւ մը – շակութային յարաբերութիւնները: Անց – եալ տարի, հայ եւ Ազրբէյճանցի հնագէտ – ներու ուժի հոդինոց խումբ մը, ղեկաւա – րութեամբ Ս. Բարխուդարեանի, հաւա – քեց պատմական Արցախի՝ այսօրուան Լեռնային Ղարաբաղի (Ազրբէյճանի են – թակայ) հայերէն, ինչպէս նաեւ սահմա – նին (Հայաստան – Ազրբէյճան) վրայ գտ – նուող կարգ մը յուշարձաններու արաբա – տառ վիմագրութիւնները: Արձանագրող – ները յաջողեցան հաւաքել մօտ հինգ հա – րիւր հայերէն արձանագրութիւններ, ու – սումնասիրել կարեւոր թիւով արաբա – տառ վիմագրութիւններ: Հաւաքուած արձանագրութիւնները կարեւոր տուեալ – ներ կուտան մեր երկրին տնտեսական, քաղաքական պատմութեան, ինչպէս եւ յուշարձաններու չինութեան, աչքի զար – նող պատմական անձնաւորութիւններու կեանքին եւ գործունէութեան վերաբեր – եալ: Հաւաքուած արձանագրութիւննե – րուն ամենամեծ խումբը կը վերաբերի Թ. – ԺԹ. դարերուն: Աւտնց մէկ մասը, ի հարկէ, ժամանակին հրատարակուած է, սակայն սխալներով, դիտութեան այ – սօրուան պահանջներուն չհամապատաս – խանող մեթոտով, առանց գծագրութեան եւ լուսանկարներու:

Համեմատաբար աւելի ուշ ժամանակ – ներու կը վերաբերի արձանագրութիւննե – րուն երկրորդ խումբը, ուր կը դտնենք բազմապիսի հետաքրքրական վկայու – թիւններ Արցախի մելիքութիւններուն, մասնաւորաբար Վարանդայի մելիքնե – րուն մասին: Մելիք Եգանի հայրենասի – րական գործերը ներկայացնող կարեւոր արձանագրութիւններ կան Հադրութի Տող գիւղին մէջ:

Արձանագրութիւններ հաւաքող խում – բը այցելած է Լեռնային Ղարաբաղի գը – րեթէ բոլոր հնութեանց վայրերը: Վի – մական յիշատակարաններով հարուստ յուշարձաններէն է անտառաշատ, գեղե – ցիկ եւ բարձր սարահարթի մը վրայ վեր – խոյացող Գանձասարի վանքը՝ Արցախի ճարտարապետական կոթողներէն ամենէն նշանաւորը պատմական Խաչէնի մէջ: Ցուշարձանին վրայ, չինութեան վերա – բերեալ արձանագրութիւններէն զատ, կան նաեւ նուիրատուական կալուածներու անունները, արդարեւ, մէկ տո մէկ թը – ւարկուած են չէներու, հողամասերու եւ այգիներու անունները: Վանքի գաւիթին մէջ թաղուած են Ջալալեան տոհմի ակա – նաւոր անձերը՝ Հասան Ջալալ Դաւլա, Երեմիա, Եսայի, Դաւիթ, Ցովհաննէս, Սարգիս Աղուանից կաթողիկոսները, Արցախի ծանօթ գործիչ՝ Բաղտասար Արք. Հասան Ջալալեան:

Վիմական արձանագրութիւններով հա – րուստ լաւագոյն կոթողներէն է Թարթառ գետին ալ կողմը գտնուող Վաղուհաս

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ ՔՈՆՐԱՏ ԱՏԸՆԱՈՒՐ

Այս տարի Յունուար 3ին 86 տարեկան եղաւ գերման Դաշնակցային Հանրապե – տութեան վարչապետը Քոնրատ Ատըն – աուըր: Եթէ տարեդարձները հանգ – ուցաններ են յետադարձ ակնարկով վեր – լուծելու համար մարդու մը կատարած գործը եւ առիթ կ'ընծայեն նոր ուղեգիծ ընտրելու կամ չարունակելու նոյն ճամ – բով, առաւել եւս հետաքրքրական կը դառնան եւ չափանիշները կը փոխուին երբ մեծանուն քաղաքական անձնաւորու – թեան մը տարեդարձին մասին է խօսքը:

Նախ իր անհատական կեանքին մէջ Ա. – տընաուըր կը ներկայացնէ պարզասիրու – թեան, չափաւորութեան, ժուժկալու – թեան եւ ընտանեսիրութեան լուրջ տի – պարը: Երկու անգամ այրիացած է, բայց ունի չատ մը զաւակներ եւ թոռներ, ո – րոնք զինքը կը յարգեն մեծապէս: Իր կրտսեր դուստրը մինչեւ վերջերս կ'ըն – կերանար իրեն ճամբորդութեանց ատեն իբր պահապան հրեշտակ: Մանչ զաւակ – ներէն մէկը նուիրուած է կաթոլիկէ հո – գեւոր աստիճանին, ուրիշ մը՝ Տօքթ. Մաքս Ատընաուըր, բարձր պաշտօն ունի Քէօլնի քաղաքային վարչութեան մէջ: Ատընաուըր իր առողջութեան չատ հոգ կը տանի, նիհար եւ առոյգ է կազմով: Տարուան մէջ 2 – 3 անգամ կը ճամբորդէ դէպի իտալական ամարանոց մը, ուր ծանօթ է իր պատյաններով եւ մարզանք – ներով, իսկ Պոնի իր պարտէզին մէջ կը սրտի վարդամշակութեամբ: Ոչ մէկ ա – ռիթով նկատուած է որ բարկացուու – թիւն ցոյց տայ: Կատակախառն խօսքե – րով դիտէ հակակշռել որեւէ նեղացուցիչ պարագայ:

Ատընաուըր ունի բազմավաստակ քա – ղաքական գործունէութիւն մը: Եղած է 1917 – 1933 քաղաքապետ իր ծննդավայր Քէօլն քաղաքին, 1920 – 1932 նախագահ փրուսական պետական խորհուրդին: Հետապնդուած է հիթլերական ամբողջ ժամանակաշրջանին իբր քաղաքապետ եւ կաթոլիկ կուսակցութեան ականաւոր անդամ: 1945ին ուրիշներու հետ հիմնած է «Քրիստոնէական ժողովրդավար» կու – սակցութիւնը, որուն գլխաւոր վարիչն է ցարդ: 1948 – 49 նախագահն եղած է բեսփոխանական ժողով կազմելու կոչ – ուած խորհուրդին ուր կազմաւորուած է արեւմտեան Գերմանիոյ «հիմնական օ – րէնքը», այսինքն պետական սահմանա – դրութիւնը: 1949 Սեպտեմբերէն ի վեր « վարչապետ » է պետութեան որ կը կոչ – ուի նաեւ Պունտըսքանցլէր:

Բայց Պիսմարքէն ոչ մէկ քաղաքապետ այնքան երկար ժամանակ անընդհատ վա – րած է Գերմանիոյ ճակատագիրը իբր վարչապետ եւ աղդեցիկ պետական անձ – նաւորութիւն, որուն խօսքը կշիռ ունի:

Երբ պետական նախագահ Թէոտոր Հոյսի երկրորդ ընտրութեան ժամանակա – շրջանը լրացաւ եւ երրորդ անգամ ընտր – ուիլն անկարելի էր օրէնքով, Ատընա – ուերի թեկնածութիւնը դրուեցաւ իր խոհ հաւանութեամբ եւ ընտրութիւնը բացա – յայտ էր, սակայն վերջին չարաթներուն

Ատընաուըր տեսնելով որ իր «գործը կը պիտի մնայ» եւ իր ուղղութիւնը չի պի – տի կրնայ քալեցնել իբր նախագահ հրա – ժարեցաւ ընտրուելէ, վերցուց թեկնա – ծութեան առաջարկը եւ պահեց իր պաշ – տօնը իբր Պունտըսքանցլեր, որովհետեւ սահմանադրութեան ընծայած առաւելու – թիւնը աւելի ձեռնտու էր իրեն ամբողջ երկրին քաղաքականութիւնը վարելու համար: Ատընաուըրի գործակից նախա – րարները մեծ յարգանք ունին իրեն հան – դէպ, բայց կան նաեւ քննադատութիւն – ներ իր գալտնի եւ այսպէս կոչուած ինքնագլուխ գործունէութեան համար: Անկասկած գործուր է ամէնուն հանդի – ըլլալ երբ մարդ քաղաքական բարձր դիրքի մը վրայ 12 տարի կը գործէ իր ձեռքին մէջ պահելով 54 միլիոն բնակիչ ունեցող պետութեան մը դիկը:

Պէտք է ընդդծել որ Ատընաուըր քա – ղաքացած պետութիւն մը վերականգնեց: Իր օրով Գերմանիոյ արեւմտեան մասին մէջ կատարուեցաւ «տնտեսական հրաշ – քը»: Աւերակ երկիրը վերաշինուեցաւ եւ հարուստ պետութեանց կարգը անցաւ, իր կարգին ձեռնարկներ կ'ընէ թերամ եր – կիրներու զարգացման համար: Վերջա – պէս Գերմանիոյ վերամիացման քաղաքա – կանութիւնը կը հետապնդէ ամուր քայ – լերով: Սարի Գերմանիոյ վերակազմին եւ ազգ Ֆրանսայի հետ սերտօրէն կապուած կը ձգտի Եւրոպայի տնտեսական եւ քա – ղաքական միութեան եւ իրեն կը պատ – կանի ամբողջ Գերմանացիներուն համար սիրելի կարզախօսը՝ «վերամիացում Գերմանիոյ խաղաղութեան եւ ազատու – թեան մէջ»:

Պ. ՓՐՈՒՆՃԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐ ՕՃԱԽ

Երեք ամիս առաջ Լենինականի մէջ հիմնուեցաւ Երկրաբանութեան եւ երկ – րաչարժներու գիտահետազօտական հիմ – նարկութիւնը: Այս հիմնարկութեան գոր – ծը պիտի ըլլայ ուսումնասիրել Հայաս – տանի ընդերքին երկրաբանական կա – ռուցուածքները, ինչպէս նաեւ հետա – զօտել եւ գտնել օգտակար հանածոներու հանքերը:

ՓՈՂՈՑՆԵՐՈՒ ՄԱՔՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Երեւանի երկու հսկայ գործարանները եւ աւելածուներուն ցոյց տուած անտարբերութեան եւ անփութեան դէմ բողոքի նամակ մը ունի՝ ոմն Աբր. Քա – լանթարեան, «Երեւան» թերթի Յունուար 5ի թիւին մէջ, առաջին էջ:

Ձմեռը եկած է եւ ձիւնը նստած է փո – ղոցներուն վրայ եւ սակայն ... մաքրելու ոչ մէկ տրամադրութիւն դտնապաններուն

ԱՄԲԱՍՏԱՆԵԱԼ ՍԹԱԼԻՆ, ՈՏՔԻ՛

—o—

Կարելի է երեւակայել ներկաներու չը – սարումը. ամբաստանեալ մը, որ կը մերժէր խոստովանիլ ... Նախագահը եր – կու անգամ եւս պնդեց. Կրեստինսքի յա – մառեցաւ:

Ունկնդրութիւնը ընդհատուեցաւ:

Բան վայրկեան յետոյ, նիստը վերա – բացուեցաւ. Կրեստինսքի բացակայ էր ամբաստանեալի աթոռէն:

Յաջորդ օրուան դատավարութեան՝ ֆիզիքապէս եւ բարոյապէս քայքայուած Կրեստինսքի մը վերադարձած էր դատա – րան: Ինչ որ պահանջեցին՝ խոստովանե – ցաւ:

ՅԱՏԿԱՆՇԱԿԱՆ ԲԱՌԱՄԹԵՐՔ

Անչուշտ նչմարեցիք դատախազ Վի – չինսքիի ... կուտ ոճը.— կատղած չու – ներ, մարդկութեան թափթփուքներ ... Առաջին անգամ այս դատավարութեանց ընթացքին գործածուած նախատինք մը՝ « լպրծուն օձ», մինչեւ այսօր ալ համայ – նավար դասական բառամթերքին մաս կը կազմէ:

Բայց չատ մը ուրիշ նախատական բա – ռեր գործածուեցան դատավարութեանց ընթացքին՝ ամբաստանեալներու հաս – ցէին. ահա այդ նախատական արտայայ – տութիւններուն մէկ անկատար ցանկը. « Ոճրագործներ, լրտեսներ, աւազակ – ներ, սրիկաներ, արհամարհելիներ, կանկսքերներ, գողեր, ծախուածներ, սապօքէօրներ, ենգվիքներ, թափթփը – փուքներ, աղբեր, այլասերածներ, սուտ – խօսներ, անանկներ, զազրելի դատաճան – ներ, դրամի համար ոճիր գործողներ, ժողովուրդի թշնամիներ, դրամատիրու – թեան սպասակներ, կեսթափոյի գոր – ծակալներ, թշուառական դասալիքներ, գղուելի թափթփուքներ, կատղած չու – ներ, արիւնարբու գազաններ, թունաւոր սողուններ, ժողովուրդի արեան վաչխա – ռուններ, Փաշական գազրելի գործակալնե – րէն ամէնէն գազրելիները, գալարուող եւ լպրծուն սողուններ, խորհրդային պե – տութեան գօրաւոր կաղնիին որդերը, վատ հրէշներ, արիւնածածկ խեղթեր, արհամարհելի չուներ, գեր – աւազակ – ներ, արիւնարբու հսպիտներ, անխիղճ սրիկաներ»... եւայլն:

Մոսկուայի այս դատավարութեանց ամբաստանեալներուն կատարած խոստո – վանութիւններուն «ինչու»ն եւ «ինչպէս»ը երկար ատեն գաղտնիք մնացին: Հազուա – դէպ է, որ իրական յանցաւորներ ամուր – դի նման բարձրացնեն դատախազին կող – մէ իրենց վերագրուած յանցանքները. հապա ի՞նչ ըսել, երբ այս խոստովանու – թիւնները, ինքնաքննադատութիւնները ակներեւ կերպով սուտ էին:

Ոչ ոք վայրկեան մը իսկ մտքէն անցուց որ այս հին բոլշեւիկները տարիներէ ի վեր, յաճախ նաեւ յեղափոխութենէն ի վեր «դրամատիրական» լրտեսական ըս – պասարկութեանց ի հաշիւ կ'աշխատէին:

Այս սուտ խոստովանութեանց մասին չատ մը բացատրութիւններ տրուեցան: Ամենք կը պնդէին թէ ամբաստանեալնե – րը կամազուրկ էակներ դարձած էին՝ թմրեցուցիչներու ազդեցութեան տակ: Ուրիշներ կ'ըսէին, թէ Լենինի « հին պա – հակազունդ»ին այս անդամները համա – ձայնած էին այս վարկաբեկիչ դերը խա – ղալու՝ համոզուած ըլլալով թէ վերջին ծառայութիւն մը կը մատուցանեն կու – սակցութեան:

Խրուշչեւի կարծիքը այլ է. ըստ իրեն, (եւ այս հարցին մէջ իր կարծիքը պերա – կլիտ է), միայն չարչարանքներու չնոր – հիւ է, որ ամբաստանեալները այս խոս – տովանութիւնները կատարեցին:22րդ հա – մագումարին, Խրուշչեւ յայտարարեց.

.. Համագումարի պատգամաւորներուն մէջ ընկերներ կան, որոնք չատ տարիներ բանտերու մէջ անցուցած են իրենց կեան – քը: Իւրայատուկ միջոցներով « կը համոզէին » զանոնք, որ գերմանական, անգլիական կամ այլ լրտեսներ էին: Ո – մանք « կը խոստովանէին»: Նոյնիսկ այն

պարագային, երբ իրենց յայտնուէր քէ լրտեսութեան չանցանքով ամբաստան – ուած չեն այլեւս, բանտարկեալները ի – րենք կը պնդէին իրենց նախկին խոստո – վանութեանց վրայ, մտածելով թէ աւելի լաւ է վայրկեան առաջ վերջ տալ չար – չարանքներուն՝ վայրկեան առաջ մեռ – նելով »:

Սթալին ոչ միայն տեղեակ էր այս չար – չարանքներուն, այս կամայական դատա – պարտութիւններուն, այլ նաեւ ինք եւս կը մասնակցէր՝ երկու ժամ անգամ մը հե – ռաձայնել տալով հսկնալու համար, թէ դոհը խոստովանա՞ծ է. յաճախ խորհուրդ կուտար հարցաքննողներուն, թէ ի՞նչ միջոցաւ աւելի չուտ կրնան կորզել խոս – տովանութիւնը: Իր դրասեղնակին մէջ դետեղուած մասնաւոր միխրոֆոնի մը ը – նորհիւ կրնար նոյնիսկ հետեւիլ հարցա – քննութեանց:

Օր մը, Պոլիտբիւրոյի անդամներ հարց – ուին իրեն, թէ չի՞ վախնար արտասա – մանի մէջ ստեղծուած կարծիքի հոսան – քէն:

Սթալին, մեծ արհամարհանքով պա – տասխանեց.

— Եւրոպան ամէն բան պիտի կլլէ:

(22 Շար.)

եւ աւելածուներուն կողմէ : Ասոր իբրեւ հետեւանք՝ «մարդիկ սայթաքում են, ինքնաշարժները սահում, զարկւում են իրար, պատռւում առանցքի շուրջը »:

Բողոքափերը զրելէ առաջ Ա. Քալան – թաբեան դիմած է պատկան մարմիններ – րուն եւ ցաւով նշմարած է, որ զործին դլուխը կը զտնուին անպատասխանատու անձեր :

Վերջ տալու համար անբարեյոյս այս կացութեան, Երեւանի քաղաքային Խորհուրդի կոմիտէն հրամանագրով մը պարտք կը դնէ Շրջանային խորհուրդներու զործադիրի կոմիտէներուն նախագահներուն, ոստիկանապետին, հիմնարկձեռնարկութիւններու եւ կազմակերպութիւններու դեկավարներուն եւ վերջապէս տնտեսական պատկան պետին՝ հսկել եւ կազմակերպել քաղաքի փողոցներու ձիւնի մաքրութիւնը :

ՈՏՆԱԳՆԴԱԿԻ ԽՈՒՄԲԵՐՈՒՆ ՊԱՏԿԵՐԸ

Պարբերաբար ներկայացուցինք Հայաստանի ոտնագնդակի խումբերուն մէջ զումաները, յատկապէս Ա. եւ Բ. դասի խումբերունը : Սորհ. Միութեան անցեալ տարուան ախոյենական մրցումներուն Հայաստանի կողմէ մասնակցեցաւ «ԸՍպարտակը» եւ զրաւեց 8րդ տեղը: Երկրորդ դասի ախոյենական մրցումներուն մէջ պատուով դուրս եկան Երեւանի «Նայիրի»ն, Լենինականի «Շիրակ»ը եւ Կիրովականի «Լոռի»ն :

Լնդհանուր հաշուեվիակը ընելով այս մրցումներուն մասին, Գ. Թարբինեան, որ ոտնագնդակի Հայաստանի ֆետերա – սիոնին նախագահն է, դիտել կուտայ, որ հայ խումբերը կրնային աւելի լաւ արդիւնքներու հասնիլ, եթէ երբեք «խաղային բարձր մակարդակով»: Դժբախտաբար, «Սպարտակի» խաղացողները չատ դէչ ուսումնասիրած են իրենց մրցակից խումբերուն խաղը զործադրելու ձեւերը տակաւին չեն առած անոնց առաւելութիւններն եւ թոյլ կողմերը»:

Աղբրագտնալով Հայաստանի ոտնագնդակի մակարդակին, Գ. Թարբինեան զոհունակութեամբ կը մատնանշէ հայ մարզիկներուն արձանագրած յաջողութիւնները վերջին տարիներուն : Նոյնը կարելի չէ ըսել ընդհանրապէս կարզապահական խիստ խախտումներու հարիւր դէպք »:

ԻՄԱՍՏՈՒՆ ԽՕՍՔԵՐ

Անմիտ մարդուն սիրտը լեզուին վրայ է իսկ խելացիին լեզուն՝ սրտին մէջ :

ՊՈՍԻՎ

×

Ազնուութիւնը պէտք է ընտրողական ըլլայ եւ ոչ թէ ժառանգական :

ԶԻՄՄԵՐՄԱՆ

ՁԱՅՆԵՐ ԳԱԻԱՌԷՆ

ՄԵՐ ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶԸ

ՄԱՐՍԷԼ.— Քաղաքին արուարձան – ներէն՝ Սէն Փեռոմի Սահակ – Մեսրոպ մանկապարտէզի աւանդական ամանորի հանդէսը տեղի ունեցաւ ամսոյս 12ին, կիրակի կէս օրէ հաք եկեղեցիին կից սրահին մէջ , առնախըմբոյց պայմով եւ անսահման ոգեւորութեամբ: Հանդէսը սկսելէն ժամեր առաջ, սրահը ծայրէ ի ծայր լեցուած էր խուռն բազմութիւնով մը, այնպէս որ կազմակերպիչ յանձնախումբին անդամները մեծ զժուարու – թիւն կրեցին տեղաւորելու համար բոլորը : Երբ ժամը չորսին վարագոյրը բացուեցաւ, բեմին վրայ հասակի կար – գով չարուած 45ն 14տարեկան աշակերտուհիներու երկաձեւ խումբը եւ անոնց կողքին կանգնած հոգեւոր տովիս եւ միեւնոյն ատեն զպրոցին ուսուցիչ՝ Եղիշէ Մաշալեան քահ. Փանոսեանը: Ներկայութիւնը այնքան տպաւորիչ էր ար, հանդիսական – ներու ինքնաբուխ ծափերով ողջունուե – ցաւ : Թաղականութեան առենապետ՝ Պ. Պետրոսեան տանդէսը բացուած յայտա – րարելով, խորունկ յուզումով մը եւ ի մասնաւոյն կերպով բացատրեց մեր ազ – գային եկեղեցիին եւ զպրոցին կարեւոր դերը ազգապատպանումի նուի – րական զործին մէջ :

Ճեպով երգուեցաւ Ֆրանսական ազգա – յին քայլերգը, զոր հանդիսականները ունկընդրեցին յոտնկայս : «Հայրենիք» եւ « Հայաստանի աղջիկները» խմբերգներէն եաք, բոլոր փոքրիկները կարզով կարճ, բայց նոր տարիի մաղթանքներով համեմուած ոտանաւորներ արտասանեցին հա – մարձակ եւ մաքուր առոգանութիւնով : Ամէնէն դեղեցիկ անակնկալներէն մէկը եղաւ մօտիկ արուարձանէ մը՝ Լա Ռոզ բնակող 12 տարեկան աղջիկը՝ Շաքէ Ա. – րապեան, որ քանի մը ամիս առաջ հայե – րէն բառ մը իսկ չէր դիտեր, կարճ ժա – մանակի մը մէջ այնպէս տիրացած է մայրենի լեզուին, որ արտասանած, Մ. Մեծարենցի «Հիւղը» , ինչպէս նաեւ «Ա – րեւ տուր, սիրուն եար» դիւերային սի – րերգն ու մեռապարը հիացում պատճա – ռեցին :

Եօթը տարեկան Քրիստին Պէշիկօղեանի մենապարէն եւ 8 – 10 տարեկան աղջիկ – ներու «Լապտար» խմբապարէն եաք 15 վայրկեանի դադարի մը պահուն ժողո – վուրդը պատուասիրուեցաւ թէյով, քա – ղցրեղէններով եւ կարկանդակներով : Իսկ հանդէսին երկրորդ մասին, ազգային հա – կական հպարտութեան եւ անսահման ո – գեւորութեան մթնոլորտի մը մէջ ապրե – ցանք շնորհիւ Օր. Շաքէ Փանոսեանի , հրաշալի արտասանեց Ե. Զարենցի « Ես իմ անուշ Հայաստանին»: Ժողովուրդին խանդավառութիւնը իր զագաթնակէտին հասաւ երբ 14 – 16 տարեկան աղջիկներ, հայկական դեղեցիկ չորեր հագած՝ բո – ցավառ թչիկներով բեմ եկան առաջնոր – դութեամբ Օր. Փանոսեանի՝ պարելու համար «Սալիորի աղջիկը» ներդաշնակ համաչափ, ճկուն, եղնիկներու պէս ալա – զիկ եւ քաղրադրոտ, միաժամանակ Օր. Շաքէի «Ես պաճուր եմ, վարդի ջուր եմ» սիրերգով, որ խելայեղ ծափերու տակ կրկնուեցաւ: Բոլոր պարերուն կ'ընկե – րակցէր «Սեւան» նուագախումբը դեկա – վարութեամբ Պ. Շահէ Փանոսեանի ձեռ – նադպնակով, ինչպէս եւ Պ. Մինասեան ջութակով եւ Պ. Յակոբեան թառով: Պէտք է խոստովանինք թէ Սէն Փեռոմի մանկապարտէզի այս հանդէսը Մարսէյլի մէջ մինչեւ հիմակ մեր տեսածներէն ա – մէնէն դեղեցիկն էր :

Ժողովուրդին այս խանդավառութենէն օդտուելով, Թաղական Խորհուրդը ինչ – պէս ամէն տարի, այս անգամ ալ զպրո – ցին ի նպաստ հանդանակութեան մը ձեռ – նարկեց եւ զարմանալի չէր որ 5 – 10 վայրկեաններու մէջ 55 հազար Ֆրանքի կոկիկ դումար մը հաւաքուեցաւ : Զորս փոքրիկները յաջող կերպով ներկայացու – ցին «Կազանդ Պապան», որուն վերջաւո – րութեան իսկական Կազանդ Պապան եկաւ եւ բոլոր աշակերտներուն բաժնեց զա – նազան նուէրներ, իսկ պարող աղջիկները իրենց դեկավար Օր. Շաքէին նուիրեցին դեղեցիկ հովանոց մը :

Կը լսենք որ այս տարի աշակերտներու թիւը երեսունէն յիսունի բարձրացած է, շնորհիւ թաղականութեան ջանքերուն եւ մասնաւորապէս հոգեւոր հովիւին : Ը – նորհակալութիւն բոլորին :

Լ. ԿԱԶԼԵԱՆ

×

ՄԵՐ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԸ

Մոր ցաւով իմացանք հայրենակից Ա. – բամ Հիւսեանի մահը, որ տեղի ունեցած է Մարսիլիոյ մէջ :

Արամ ծնած էր Վան 1894ին: Նախնա – կան կրթութիւնը ստացած է ծննդավայ – րին մէջ: 1913ին կը մեկնի Պոլիս, չարու – նակելու համար ուսումը: 1915ին երբ կը սկսի հալածանքը, Հիւսեան կը յաջողի պահուըտիլ: Հրաչքով կ'ազատի ամէն հետապնդումէ, բայց կրելով ամէն տա – ռապանք որ վիճակուած է Հայուն: 1920– ին կ'ամուսնանայ Պոլսոյ մէջ: 1922ին կը փոխադրուի Մարսիլիա, եւ կը հիմնէ Վասպուրականի Հայր. Միութիւնը, որու զործավարը կը մնար մինչեւ վերջ :

Ժպտադէմ, ժրաջան, աշխատասէր , զործնապէս եւ նիւթապէս օգտակար հայրենակից մը, նոյնքան հաւատաւոր Դաշնակցական մըն էր :

Սիրելի Արամ, Վերին Վարագէն փունջ մը դինարբուք եւ անթառամ ծաղիկներ չերմիդ վրայ: Մենք պիտի յիշենք զեզ՝ ինչպէս միշտ կը յիշենք Վասպուրականի պատմական վայրերը, այն յոյսով թէ օր մը պիտի փոխադրուինք մեր հայրենի հողերուն վրայ, մեր սիրելի մեռելներուն ոսկերոտիքն ալ միասին :

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆՑԻՆԵՐ

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսական Բանակի Նախկին Ռազ – միկներու եւ Կամաւորներու Միութիւնը հերթական իր ընդհանուր ժողովը դու – մարեց 1962, Յունուար 14ին, 32 Բիս ոը Թրէվիզ, իր կեդրոնատեղին, իր վարիչ մարմնին անդամներու նշանակումին վա – ւերացման եւ ապագայ պիւտճէին հաս – նութեան համար :

Գաղտնի քուէարկութեամբ եւ 61 քուէ – արկողի վրայ, 48 ձայնով (մէկ չեղեալ եւ 12 դէմ), ժողովը իր ամբողջական վս – տահութիւնը յայտնեց նոր վարիչ մարմ – նին որ կը զտնուի Վահրամ Պարկիրճեա – նի նախագահութեան ներքեւ, հաստատե – լով պիւտճէի անոր ծրագիրը եւ վստ – րացնելով նշանակումը իր պաշտօնատար հետեւեալ անդամներուն.— Պետրոս Զապուճեան, Գէորգ Պաքըրճեան, Յարու – թիւն Տատեան, Յարութիւն Սարաֆեան , Օգսէն Խարրութեան, Ստեփան – Տիւ – րան, Սուրէն Ակոբօֆ, Արսէն Զաքար – եան, Մարտիրոս Մխրաքեան եւ Նիկողոս Պօղոսեան, իրրեւ օժանդակ անդամ, առ – ժամապէս փոխարինելու համար, Պ. Վ. Հայթայեանը, նախատեսուած պաշտօնա – կան թեկնածու, հրաժարեալ, տասնմէկ – կերտրդ կանոնաղրային անդամը պիտի ներկայացուի յետագային, վստերացուե – լու համար յառաջիկայ ընդհ. ժողովին կողմէ :

ԿՆԻԲ

20 Յունուար, 1962

1962ԻՆ ՈԳԵԿՈՉԵԼԻ ՀԱՅ ԱՐԺԷՔՆԵՐ

Ներսէս Շնորհալիի (Կլայեցի) ծննդեան 960ամեակը: Ամենայն Հայոց կաթողիկոս 1166ին: Աստուածաբան, բանաս – տեղծ, առակախօս: Հեղինակ չարական – ներու եւ աղօթքներու:

Սայաթ-Նովայի ծննդեան 250ամեակը: Հոչակաւոր աշուղ – երգիչ, ծնած Թիֆ – լիս, հայ զրականութեան ամէնէն ծանօթ աշուղը : (1712–1795):

Սերեպցի (Յովսէփ Շիշմանեան) ծննդեան 140ամեակը: Նշանաւոր վիպասան , հռետոր: Ամբողջ կիլիկիան չրջելէ վերջ, զրած է կիլիկիոյ հայկական թաղաւորութեան չրջանի աղգային կեանքէն երեք կարեւոր վէպեր՝ «Թորոս Լեւոնի», «Ըերկունք» եւ «Թէոդորոս Ռշտունի»:

Յակոբ Պարոնեանի ծննդեան 120ամեակը: Տաղանդաւոր երգիծաբան: Հայոց Մոլիէռը: (1842 – 1891):

Պետրոս Դուրեանի ծննդեան 110ամեակը: Տաղանդաւոր բանաստեղծ. կը յոր – ջորջուի «Սկիւտարի սոխակը»: Ծնած Պոլիս. մեռած երիտասարդ տարիքին (1852 – 1872):

Հրանդ Ասատուր, ծննդեան 100ամեակը: Բանաստէղծ, հեղինակ զործնական քերականութեան եւ թանգարանի զասըն – թացքներու :

ԹԻԱՊԱՐՏԸ

(ՎԷՊ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿԵԱՆՔԷ)

ԳՐԵՑ

ԱՐՄԷՆ ՇԻՏԱՆԵԱՆ

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Ներսէս Արծրունին, տեսնելով որ Դրօ – շակեան ներկայացուցիչը հասկնալ չէր ուզեր իր յայտնածները, վայրկեան մը մտածեց, ձեռքը ժանդատիպ ճակտին տարաւ, որուն վրայ թանձր մոպյլ մը կ'իջնար, նայեցաւ անբացատրելի դառ – նութեամբ, յետոյ հարցուց :

— Սահմանադլուխը զոնուող ձեր հայ – դուկային խումբերը քանի՞ հոգիէ կը բաղկանան :

— Պարապայ կայ, ուր մեծ թիւ մը կր – նան կազմել անոնք, պատասխանեց երի – տասարդը :

= Ա՛ռ առաւէլն որչա՞փ :

— Մինչեւ հարիւր... եթէ հարիւր պա – հանջէ :

— Մօտ օրերուս մէջ կը պատրաստուի՞ արշաւանքը :

— Թերեւս. առ այժմ տեղեկութիւն մը չունիմ :

Այդ պահուն սենեակին դուռը բացուե – ցաւ ու բարձրահասակ երիտասարդ մը ներս մտաւ :

— Կը ներկայացնեմ ձեզի, բարեկամս , ըսաւ Դրօշակեանը՝ Ներսէս Արծրունիին ուղղելով խօսքը. Պարոնը Հնչակեան ներ – կայացուցիչն է :

— Ուրախ եմ ձեզի հետ տեսնուելուս . մրմնջեց Ներսէս Արծրունին՝ քաղաքա – վարութեամբ Հնչակեան ներկայացուցի – չին ձեռքը սեղմելով :

— Նոյնպէս ես... թոթովեց Հնչակեա – նը՝ խորին ուշադրութեամբ Ներսէս Ա – ծրունիին հնամաշ ու պիւտպայինելու յա – տուկ պարզ տարազը դիտելով :

— Վայրկեան մը լռութենէ եաքը, Դր – օշակեան ներկայացուցիչը ծանր ու լուրջ ձայնով մը ըսաւ .

— Մորհրդակցինք ներկայ կացութեան վրայ : Ահա՝ նահանգին խորերէն ալե – տալի լուրեր կը հասնին: Մէկ կողմէն քիւրտը, միւս կողմէն Համիտ կը դրդռ – տուին մեզի դէմ : Կառավարութիւնը դաղտնի կերպով կը կազմակերպէ լեռնա – բնակ տարրերէ բաղկացած վաչտեր, ո – րոնք պինուորի հագուստով աւազակներ են: Ի՞նչ ընելու է ... մեր վրայ կը ծան – րանայ պատասխանատուութիւնը :

Երկու ունկնդիրները յուզմունքով է – րարու երես նայեցան ու սկսան մտածել :

— Ինչո՞ւ չէք խօսիր, յարեց Դրօշակ – եանը :

— Ինչ խօսիմ ... յարեց Հնչակեանը . չէ՞ որ պարտաւոր եմ կեդրոնիս հրահան – գին սպասելու :

— Այդ մասին ձեր կեդրոնէն հրահանգ մը չկա՞յ, հարցուց Ներսէս Արծրունին :

— Ոչ :

— Ըսել է թէ առանց ձեր կեդրոնի հը – րահանգին ուրէք ձեռնարկութիւն մը չէք կրնար ընել :

— Ի հարկէ :

— Կեդրոնը դիտէ՞ թէ քիւրտ պէկերը կը յարձակին մեր դիւղերու վրայ ու կը ջարդեն մեզ :

— Այո, չարունակ կը տեղեկագրուին ամենաչոքը դէպքերն անդամ :

— Կը խնդրեմ , եթէ դուք ձեռք ձեռքի տաք ու լաո այնմ պատրաստուիք, ար – դիլող մը կ'ունենա՞ք ...

Կուսակցութեանց երկու ներկայացու – ցիչները պահ մը չուարեցան, չէին դի – տեր ինչ պատասխանելնին :

— Կարելի չէ՞ համաձայնիլ, վրայ բե – րաւ Ներսէս Արծրունին :

— Ես չեմ կրնար առանց իմ կեդրոնիս հրահանգին, չեզտեց Հնչակեանը :

— Ես ալ չեմ կրնար առանց իմ Պիւ – ռոյիս հաւանութեանը, նկատել տուաւ Դրօշակեանը :

Ներսէս Արծրունիի կերպարանքը խը – ռովեցաւ, մթնցաւ՝ ինչպէս դիւերուան մոպյլը: Կարծես թէ ըսելիքը խղդեց իր հոգին: Իր մեծ ու արիւնխառած աչքերը դարձուց դէմը կեցող «խլէզներուն» վը – րայ, որոնք ազգութեան մը ճակատադրին հետ կը խաղային՝ դիտեց զանոնք, չա – փեց անոնց զործունէութիւնը, յետոյ՝ ծանր ու հրամայական ձայնով մը ըսաւ.

— Պարոններ... դիտցէք որ ձեր ըն – թացքը չարդարանար ոչ մէկ կերպով : Ես կը հաւատամ թէ ոչ Հնչակեան կեդ – րոնը, ոչ ալ Դրօշակեան պիւռօն արդելք կրնան հանդիսանալ ձեր համաձայնու – թեանը ... : Մտածեցէք... ժողովուրդը ձեռքէ կ'երթայ: Բաւական է ... Այնտեղ – ներու արիւնը ձեր վիզը թողուած է: Հա – մաձայնեցէք որ Ներսէս Արծրունին ալ իր ՈՒԺՈՎ զայ մնանայ ձեզի հետ :

— Չէ՞ որ Ներսէս Արծրունիի ուր ըլ – լալը չեմ դիտեր ըսիք, ընդհատեց Դրօ – շակեանը :

— Դուք տուէք ձեր ձեռքն իրարու... անկից եաքը Ներսէս Արծրունին ալ կը զտնէք, չեզտեց մեր հսկայ աւազակա – պետը :

Կուսակցութեանց երկու ներկայացու – ցիչներն , որոնք դաղտնի կերպով իրարու զործունէութիւն քանդելու կ'աշխատէին, մեքենաբար ոտքի ելան ու ձեռք ձեռքի տուին եղբայրական զորովանքով մը :

(Շար.)

Այրի Տիկին եպրաքսէ Ճունկուրասյան – եան եւ զաւակները, Այրի Տիկին Էլիզէ Նոտարեան եւ զաւակները, Այրի Տիկին Թավչանճեան եւ զաւակները եւ բոլոր պարագաները ցաւով կը ծանուցանեն իրենց մօրաքրոջ, հօրաքրոջ, զարմուհիին՝

ՆԻՄՁԻԻՐ ՊԷՐՊԷՐԵԱՆԷ

մահը, որ տեղի ունեցաւ Յունուար 18ին։

Յուղարկաւորութիւնը կը կատարուի այս Շորեքշաբթի, Յունուար 24ին, ժամը 10·30ին Ալֆորվիլի Ս· Պօղոս Պետրոս եկեղեցին։

Մահազդ ստացողներէն կը խնդրուի ներկայս իրբեւ այդ ընկատել։

ՅԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

Հ· Ց· Դ· Նոր Սերունդի Իսիի Ֆանա – սոր խումբը ցաւակցութիւն կը յայտնէ Ժան Քլօտ Շիրինեանի եւ ընտանիքին իրենց մօր մահուան առթիւ։

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Պօմոնի Թաղականութիւնը չնորհակալութեամբ ստացած է Պ· Արսէն Իսպիր – եանէն՝ իր հօր՝ Պ· Յովհ· Իսպիրեանի հոգեհանգստեան առթիւ իւղաներկ եւ թանկագին «խաչելութեան» նկար մը, որ օծուելէ յետոյ զետեղուած է Ս· Կր· Լուս· եկեղեցւոյս մէջ, ինչպէս նաեւ յիսուն Ն· Ֆ·ի նուէր մը եկեղեցւոյ, Պօմոնի կապ· Խաչին 25 Ն· Ֆ·, Դպրաց դասուն՝ տասը Ն· Ֆ·, Տէր Հօր՝ տասը, դարձեալ նոյն հոգեհանգստեան առթիւ Այրի Տիկին Երանուհի Իսպիրեան եւ զաւակները կը նուիրեն Պօմոնի եկեղեցւոյն 25 Ն· Ֆ· եւ Պ· Գ· Պաղտասարեան նոյնպէս եկեղեցւոյս կը նուիրէ քսան Ն· Ֆ·։

Փոխան ծաղկեպսակի հանդուցեալ Արտաշէս Փափազեանի թաղման առթիւ եղած նուիրատուութիւնները.— Թէրպի – պաշեան եղբարք՝ Դպրաց Դասուն Պօմոնի՝ քսան Ն· Ֆ·, Հայկ Պալթայեան, Աստատուր Գէորգեան տասնական Ն· Ֆ· եկեղեցւոյ, Մխէյէլ Արսլան եկեղեցւոյ 20, Ժորժ Գասպարեան եկեղեցւոյ քսան, Գրիգոր Նաճարեան եկեղեցւոյ 10, Յովհ· Սարաֆեան եկեղեցւոյ 10, Զուլոյեան 10, Ղուկասեան եղբայրներ եկեղեցւոյ 10, Աղքատաց 10, Մխաք Կէմէնճեան եկեղեցւոյ քսան, Տէր Զաքարեան եղբայր – ներ Մուրատ Ռափայէլեան Նախկին Սանուց Միութեան քսան Ն· Ֆ·։

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

ԿԱՊՈՑՏ ԽԱՉԻ ՕՐԸ

Ֆ· Կ· Խաչի օրը կը տօնուի Ապրիլ 1ին, կիրակի, կէսօրէ վերջ, Շիմիի սրահը։

ՇՈՒՏՈՎ ԼՈՑՍ ԿԸ ՏԵՍՆԷ

ՀԱՅ · ԲՈՅԺ

ԺՈՂ· ԱՄՍԱԹԵՐԹ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ

Խմբագիր՝ Շ· ՆԱՐԴՈՒՆԻ

—o—

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.— (Թիւ 234 – 236).— *Վիքթոր Հիւկօ եւ Բժիշկները* (Խմբ·).— *Նախաճաշի մասին* (Տոքթ· Փօլ Ֆարէզ).— *Մազերու թափելուն դէմ* (Տոքթ· Գէորգեան).— *Ծծկեր երախաներու մարսողական խանգարումները* (Տոքթ· Բամպուճեան).— *Արկածով մեռնողները Ֆրանսայի մէջ* (Քադիան)· *Ջաման* (Յովհ· Պապէսեան).— *Շաքարանակագեղձը խոչորցած է, չի կրնար միզել* (Տոքթ· Շ· Այվազեան).— *Սէնէգալի հփանդուքինը, լանջախիթ* (Շ· Նարդունի).— *Օգտուիր ջրից եւ արեւից* (Տոքթ· Փարսադանեան).— *Քոլեսթէրոլը չատցած է* (Տոքթ· Ա· Աշճեան).— *Ջաւակ բերել առանց ցաւի* (Տոքթ· Աֆանաց).— *Պայքարը այրերու եւ կիներու մէջեւ* (Տոքթ· Արշակ Պօղոսեան)· — *Շաշտանդամ կինը կամ կնոջ պազուքին – նը* (Տոքթ· Գալուստեան).— *Բերանը կոկորդիլոսի բերան* (Տոքթ· Գեղամ Այվազեան)։

Տարեկան բաժնեգին Ֆրանսա 15 Ն· Ֆ·, արտասահման՝ 20 Ն· Ֆ·։

Հասցէն գրել ճիշդ այսպէս.— Շ· Նարդունի, խմբագրատուն Ցառաջի,

Ch. Aïvazian
Au journal HARATCH
32, Rue de Trévise, Paris (9e)

Imprimerie Spéciale du journal « Haratch »
32, Rue de Trévise, PARIS (9e)

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՕՐԸ

ԼԻՈՆԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ կապ· Խաչի Լիոնի մասնաճիւղի։

28 *Յունուար*, *կիրակի կէսօրէ ետք ժամը* 3ին, Սթիւտիօ Քրէֆի *սրահին մէջ*, 24 Բիւ Տիւճօար։

Գեղարուեստական բաժին.— Խմբերգ, արտասանութիւն, ծաղիկներու պար, հայկական պարեր եւ մանկական անակնկալներ։

Պիտի ներկայացուի փոքրիկ թատերախ մը՝ « ԿԱՂԱՆԴ ՊԱՊԱՆ »։

Ինչվպէս ամէն տարի, այս տարի եւս կաղանդ Պապան իր նուէրները պիտի բաժնէ սրահին մէջ գտնուող բոլոր պզտիկներուն անխտիր։

Մուտքը ազատ է։

ԼՈՑՍ ՏԵՍԱԻ

ՅԱԿՈԲ ՏԷՐ-ՅԱԿՈԲԵԱՆ

ՊԱՐՏԻԶԱԿԸ

ԽԱՏՈՒՏԻԿ

Յաւելուածաբար՝ ՄԱՆՈՒՇԱԿ ԵԻ ԻՐ ՀԷՔԵԱԹՆԵՐԸ։

500 էջ

13 Hors–Texte

Հասոյթը Փարիզի եկեղեցւոյ կըրթական մարմնին։

Գինը 12 Ն· Ֆ·

Թղթատարի ծախքով 13·40 Ն· Ֆ·

Արտասահման 4 տոլար։

Դիմել՝

Ցառաջին

Հայ գրավաճառներուն

Փարիզի եկեղեցին կամ Տպարան

ՏԷՐ – ՅԱԿՈԲԵԱՆ

ԾՆՈՒՆԴԻ ԵՒ ՆՈՐ ՏԱՐԻՈՅ

ՈՒՐԱԽ ՕՐԵՐՈՒՆ ԵԻ ԱՄԲՈՂՋ ՏԱՐԻՆ

Եւրոպայի Մեծագոյն Արեւելեան Վաճառատունը

ՊԱՀԱՍՈՒՐԵԱՆ խանութ մը հայ – ցելոցին սեղանին վրայ ամէնէն համով պատառը կը պակսի՝ մեծին ու պզտիկին համար։ ՊԱՀԱՍՈՒՐԵԱՆ վաճառատան մէջ պիտի գտնէք ա – ւանդական ընդեղէններու եւ անու – շեղէններու ամէն տեսակը, անմրցելի գիներով։

Ապսպրանքի վրայ, ծրարի առա – քում Ֆրանսայի ամէն կողմ եւ ղէպի արտասահման՝ Պելժիա, Զուիցերիա, Անգլիա։

ՊԱՀԱՍՈՒՐԵԱՆ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ LYON

246, Rue Vendôme - Tél. MOnnier 11-84
29, Rue Villeroy MO 32-10
65, Rue Robert LA 07-72

ԵՒ ԻՆՁԳԻՍ ՄԻՇՏ

Արմաւ, «պամիա», «եալանճի տոլմա», յունական «թուրլի», « պիլպիլ», տերեւ, թահին հելվա, «վանիլլ», չոքոլա, «նուազէթ», «լոկում», «սագըզ», պիւտակ, Շիրակ օղի (41 – 45o), Իզմիրի չամիչ, «սուճուք», կեսարական «պաստըրմա»։ առաջնակարգ սուրճ, (բարակուած եւ մոգա), համեմներ «մահլէպ», «սալէպ», ձիթապտուղ, ձէթ, «քաչքավալ» պուլկարական, ճերմակ պանիր ոչխարի կաթով։ Ամէն կարգի պահածոներ, «քուսքուս», հարիսա, սուման, բարամա, լաֆերտա, բաֆլաւա, Ֆատայիֆ, տեղեւ եւայլն։

ՊԱՀԱՍՈՒՐԵԱՆ ՀԱՄՏԱՍՈՒԹԻՒՆԸ

Ունի նաեւ մսավաճառատուն մը, որուն առաջնակարգ մխեները գոհացում կուտան ամէնէն նրբաճաշակ – ներուն։ Ոչխարի, հորթի եւ եզան միս (քաշուած միս, եւայլն)։

ՀԱՅ ԹԱՏԵՐ· ԵՒ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԲԱՑԱՌԻԿ ԵՐԵԿՈՅԹ

ՆԻՍԻ ՄԷՋ

—o—

Կիրակի, 4 Փետրուար, կէսօրէ ետք, ժամը 3ին, Սալ Արքիսթրէ, 27 Պուլվ· Տիւպուշաժ, Նիս։

ԳՐԻԳՈՐ – ՎԱՀԱՆ

Կը ներկայացնէ իր հեղինակութիւնները, մասնակցութեամբ հայ բեմերու վաղեմի եւ տաղանդաւոր դերասան Յակոբ Լաքիֆեանի եւ Նիսի արուեստասէրներու կազմի մը։

Կը ներկայացուին՝

ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ԿԱՆԹԵՂԸ

Գեղարուեստական բաժնին մէջ՝ ժողովրդական հարնածանօթ երգիչ

ՄԻՇԱ ԱԶՆԱՒՈՒՐ

Երգիծական բաժին՝ հայ աղգային բարերաւութիւնները, Սաքիրական զաւեշտ *երկու գանազան արարներով։*

Մուտք երեք Ն· Ֆ· եւ վերապահուած պատուոյ բազկաթոռներ։

Տոմսերը հայթայթել՝ Պար տիւ Մոնթել, 113 Ավընիւ Քալիֆորնի, *եւ նոյն օրը թատրոնի մուտքը։*

Հ. Յ. Դ.

ՊԱՆԵԼՕ – ՔԱՇԱՆ.— Հ· Ց· Դ· «Արծիւ» ենթակոմիտէի ընդհ· ժողովը այս Հինգշաբթի, ժամը 20·30ին, սովորական հաւաքատեղին։ Օրակարգ՝ չարունակութիւն նախորդ ժողովի։

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ՀԱՄԱ – ԽԱՐԲԵՐԴ· Հայր· Մխիթեան վաստնոի մասնաճիւղի ընդհ· անդամականն ժողովը տեղի կ'ունենայ այս Շաբաթ, ժամը 21ին, սովորական հաւաքատեղին։ Ներկայ կ'ըլլայ կեդր· վարչութեան դիւանը։ Ներկաներու թիւը մեծամասնութիւն պիտի նկատուի։

Կ'ՈՒԶՈՒԻ

Դերճակի փուրնիթիւրի խանութի մը համար, պարոն մը որ վերջացուցած ըլլայ իր զինուորական պարտականութիւնը եւ կառք վարելու արտօնութիւն ունենայ։ ԴԻՄԵԼ՝

17, Rue Saulnier

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Նախաձեռնութեամբ կապոյտ Խաչի Ալֆորվիլի մասնաճիւղին։

Յունուար 27, Շաբաթ, ժամը 20·30ին Մեզոն Ալֆորի Սալ տէ Ֆէթին մէջ։

Առնուվիլի Թատերախումբը կը ներկայացնէ՝

ԱՇԽԱՐՀԻ ԴԱՏԱՍՏԱՆԸ

ՀԱՅ ԿԱՐՄԻՐ ԹԱՋԻ

ՏԱՐԵԿԱՆ ՅԵՐԵԿՈՅԹ - ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

Յունուար 28, Կիրակի, ժամը 16–24

LES AMBASSADEURS, 3, Avenue Gabriel, Champs-Elysées

Կը մասնակցին երկու հռչակաւոր նուագախումբեր

PIERRE DIEUZEY et ses Capétiens — JAZZ NEW ORLEANS
PEPITO GOMEZ — TYPIQUE TANGOS

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՃՈԽ ԲԱԺԻՆ

Կը խնդրուի կանխաւ ապահովել տոմսերը եւ սեղանները հեռաձայնելով

Հայ Կարմիր Խաչի կեդրոնատեղին Էլիզէ 67 – 03

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ· — Վարձուած սեղան ները դրաւուած պէտք է ըլլան ամէնէն ուշը ժամը 19·30ին։ Հակառակ պարագա յին պարահանդէսին կազմակերպիչ յանձնախումբը որեւէ պատասխանատուութիւն չի ստանձներ։

ՏՕՆԱԿԱՆ ՕՐԵՐՈՒ ԼԱՒԱԳՈՅՆ ՆՈՒԷՐԸ

ՍԻՓԱՆ – ԿՈՄԻՏԱՍԻ՝ ճոր սալը

"ՀԱՅ ԿՐՕՆԱԿԱՆ ԵՐԳԵՐ"

Chants Religieux Arméniens

Կը ղեկավարէ Կ· ԱՓՐԻԿԵԱՆ

Փնտռել՝ երգչախումբի վարչութեան անդամներուն, բարեկամներուն եւ հետեւեալ հասցէներուն մօտ։

Restaurant ARTHUR
5, Rue Augustin Thierry
Place des Fêtes Paris 19e

Librairie H. SAMUEL,
51, Rue Monsieur-le-Prince, PARIS

ՍԱԿԱՓԻՆ ԸՆԹԱՑԻԿ ԱԶԴԵՐՈՒ

ՄԷԿ ԱՆԴԱՄՈՒԱՆ ՀԱՄԱՐ

ՄԱՀԱԶԴ	30 Ն· Ֆ·	միջեւ 1/4 սիւնակ
ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ	15 Ն· Ֆ·	միջեւ 1/8 սիւնակ
ՅԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ	10 Ն· Ֆ·	» » »
ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ	20 Ն· Ֆ·	» » »
ՀԱՐՍԱՆԻՔ, ՆՇԱՆՏՈՒԻՔ	20 Ն· Ֆ·	» » »
ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆ	10 Ն· Ֆ·	» » »
«ՓՈԽԱՆ ԾԱՂԿԵՊՍԱԿԻ»	10 Ն· Ֆ·	» » »
«ԿԸ ՓՆՏՌՈՒԻ»	5 Ն· Ֆ·	» » »
ԾԱԽՈՒ Է	20 Ն· Ֆ·	» » »

Այս գիները մէկ անգամ հրատարակելի են եւ ճշանակուած ծաւալով ազդերու համար են, չորրորդ էջը։

Կանխիկ վճարումը պարտաւորիչ է։

Առեւտրական կամ այլ ազգերու մասնաւոր պայմանագիրներուն համար դիմել Վարչութեան։

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

Le PREMIER QUOTIDIEN ARMENIEN en EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction et Administration : 32, Rue de Trévise - PARIS-9e

Fondé en 1925
R. C. Seine 57 A 2731

Téléph. : PRO. 86 - 60
C. C. P. Paris 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա՝ Տար· 50 Ն· Ֆ· Վեցամսեայ՝ 27 Ն· Ֆ·
Արտասահման՝ Տար· 60 Ն· Ֆ· Հատը՝ 0·25 Ն· Ֆ·

ՋՈՐԵՔՇԱԲԹԻ
24
ՑՈՒՆՈՒԱՐ
MERCREDI
24 JANVIER
1962

38ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 9312 38e ANNÉE Fondateur : SCHAVARCH MISSAKIAN ՆՈՐ ՇՐՋԱՆ, 18ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 5113

ՕՐՈՒԱՆ ՄՕՏԻՒԸ

ԵՐԿՈՒ ՍՈՒՐԻ ՄԷՋՏԵՂ

Իշխանութեան գլուխ գալու օրէն ի վեր երկու սուրի մէջտեղ մնացած է Իսմէթ Ինէօնիւ, ներքին եւ արտաքին կրկնակ ճակատներու վրայ :

Քաղաքական ի՞նչ ուղղութեան պիտի հետեւի : Ազատ աշխարհի՞ն հետ պիտի ըլլայ թէ հիւսիսի հարեւանին հետ բարի դրացնութիւն պիտի խաղայ :

Երկրէն ներս ի՞նչ դիրք պիտի բռնէ : Ձինուորական մենատիրութի՞ւն պիտի հաստատէ՝ թէ ժողովրդավար վարչաձեւ պիտի հետեւի :

Բարդ հարցեր, որոնց դժուար է պատասխանել :

Տարօրինակ կացութիւն մըն է ստեղծուած Թուրքիոյ մէջ՝ 1960 Մայիս 27ի յեղափոխութենէն ի վեր :

Մարդիկ չուարած են եւ չեն գիտեր « ո՞ր ոտքի վրայ պարել», ինչպէս կ'ըսեն Ֆրանսացիները :

Ձինուորականներու յեղափոխութիւնը, որուն նպատակն էր իբրեւ թէ ժողովրդավարական կարգեր հաստատել, մենատիրական հանգամանք ստացաւ : Ափ մը զինուորականներ իրենք իրենց թոյլ տուին ոչ – սահմանադրական եւ հակաժողովրդական օրէնքներով կառավարել երկիրը, փնտռել տալով Մենտէրէսը :

Դարերու փորձը ցոյց տուած է արդէն, որ թուրք ժողովուրդը կառավարուելու համար պէտք ունի երկաթէ բռունցքի մը :

Այդպէս էր օսմանեան սուլթաններու բռնապետութեան օրերուն : Այդպէս եղաւ Սահմանադրական Իթթիհատի իշխանութեան տասը տարիներուն : Նոյն վիճակը չարունակուեցաւ Մուսթաֆա Քեմալի հանրապետական վարչաձեւին տակ, Հալք կուսակցութեան մենատիրութեան տակ, մինչեւ 1950 : Դեմոկրատները չուզեցին բացառութիւն կազմել ընդհանուր օրէնքէն :

Աւանդութիւնը մնաց անխախտ, Աղգային Միացեալ Կոմիտէին ճամբով :

Վերջին տարիներու ընթացքին համալսարանական ուսանողներու չարքերուն մէջ արմատ ձգած են ժողովրդավարական սկզբունքները : Մտահոգութիւն պատճառելով օրուան իշխանութեանց :

Մենատէրս չուզեց կարեւորութիւն ընծայել Պոլսոյ եւ Անգարայի ուսանողնե – րու զանգուածային ցոյցերուն եւ զոհ գնաց իր մեծամտութեան :

Իսմէթ Ինէօնիւ աւելի խորամանկ՝ թոյլ կուտայ որ ուսանողները ցոյց կատարեն :

Ժողովրդական չարժումը համալսարանի գրասեղաններէն դուրս ելլելով վարակած է նաեւ բանուոր դասակարգը, որ սկսած է արձնութեան նշաններ ցոյց տալ :

Ճարտարարուեստի զարգացումը բնականաբար ճամբով չանգած է այս արդիւնքին, մանաւանդ որ պակաս չեն դուրսէն բանուորները ղրկուութեան մղող քարոզիչներ :

Տարեդլխէն ի վեր Պոլսոյ եւ Անգարայի մէջ կատարուած ուսանողական, մանաւանդ աշխատաւորական ցոյցերը վերջին ծայր յատկանշական են :

Առաջին անգամն է, որ բանուորները գործադուլի իրաւունք, աշխատավարձի յաւելում եւ «ընկերային արդարութիւն» կը պահանջեն : Կառավարութիւնը ո՛չ միայն չարգիլեր, այլ ընդհակառակն կը քաջալերէ այս ցոյցերը, չի գիտցուիր ինչ նպատակով :

Բանակը սակայն աչալուրջ կը հսկէ եւ թոյլ չի տար, որ միացեալ կառավարութեան հակառակ որեւէ չարժում տեղի ունենայ :

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՖՐԱՆՍԱ

ՄԱՀԱՓՈՐՁ ԵՒ ԱՌԵՒԱՆԳՈՒՄ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՄՏԱՀՈԳ ԵՆ

Երկուշաբթի օր առեւանգում մը եւ մահափորձ մը յիշեցուցին բոլորին թէ երկրին կացութիւնը ծանր է, յիշեցուցին նաեւ թէ Ցունուար 24ի նախօրեակն է : Ծանօթ է որ 1960 Ցունուար 24ին առաջին լմբռստուքիւն մը ծագեցաւ Ալժէի մէջ, որուն դատավարութիւնը (պատնէշներու դատավարութիւն) տեղի ունեցաւ անցեալ տարի :

Երկուշաբթի առտու ժամը 9·30ին Փարիզի մերձաւոր Պուա լա Ռէյնի արուարձանը Միութիւն Նոր Հանրապետութեան համար կուսակցութեան (Ի՛ր Էն Էր) անդամ մէկ բժիշկ առեւանգուեցաւ անծանօթներու կողմէ, իր բնակարանէն : Փոլ Մէնկի ինչպէս իր կուսակցութեան պատկանող ուրիշներ սպառնալիքի նամակներ կը ստանար վերջերս ուր Գաղտնի Բանակը կը յայտնէր թէ ոչնչացնելու համար Ցունուար 24ի տարեդարձը, կոչեան նըկատուած կուսակցութեան անդամներ պիտի առեւանգուին :

Փոլ Մէնկի կառքի մէջ կը ղրուէր երկուշաբթի առտու, մինչ զաւակը կը վազէր ոստիկանատուն, լուր տալու : Առեւանգողները նոյնիսկ ժամադրութիւն ա – ռած էին իրրեւ յաճախորդ : Նոյն օրը սակայն, ժամը 16·30ին, մինչ Արտաքին Նախարարութեան բակը ռումբ մը կը պայթէր մեծ վնասներ պատճառելով, ոստիկանութիւնը կը գտնէր առեւանգուած երեսփոխանը վիլլայի մը մէջ եւ կը ձերբակալէր երկու հոգի մինչ երեք ուրիշներ կը յաջողէին խոյս տալ :

Երեսփոխան բժիշկը կը խորհի թէ դիպուածով ընտրուած է եւ իր առեւանգումը մաս կը կազմէ Գաղտնի Բանակին Թունաւորման ընդհ· արշաւանքին : Ա – ւելցուց թէ զինքը առեւանգողները ու – զած են երեք օր պահել եւ պահանջած են որ հրաժարի Միութիւն Նոր Հանրապետութեան համար կուսակցութենէն : Շեշտեց թէ չատ լաւ վարուած են հետը : Սպառնալիքի ալ ենթարկուած չէ : Բա – ցատրած են իրեն, երկարօրէն, կոլեան քաղաքականութեան վնասները եւ Գաղտնի Բանակին առաւելութիւնները : Բժիշկը լսաւ նաեւ թէ չեն կրցած զինքը համոզել, ոչ ալ ինք՝ զանոնք :

Կէս օրէ ետք, ռումբ մը կը պայթէր արտաքին նախարարութեան ներքին մէկ բակին մէջ, հսկայ վնասներ հասցնելով դիւանատունի պատուհանները :

Իշխանութեան համար մտահոգիչ պարագան այն է, որ երիտասարդական եւ ուսանողական ուրիշ խմբակցութիւններ իրենց կարգին Իմմիրի մէջ ցոյցեր կը կատարեն՝ պահանջելով ներում չնորհել Եասը Առայի դատապարտեալներուն : Միւս կողմէ զանազան վայրերու մէջ իսլամական մոլեռանդութիւնը կը վերածնի եւ Ալճաթիւրքի բարենորոգումներուն դէմ ընդվզումներ կը նշմարուին, ոչ միայն տարեցներու, այլ նաեւ երիտասարդներու կողմէ :

Թոյլ տա՞լ որ ժողովրդավարական ընկերութիւնները լայնօրէն օգտագործուին հակամարտ հոսանքներուն կողմէ՝ թէ հաստատել զինուորական մենատիրութիւն, որ այնքան կը յարմարի Թուրք ժողովուրդին :

Այս երկնտրանքին առջեւ կը գտնուի Ինէօնիւ :

ՀՐԱՆՏ–ՍԱՄՈՒԷԼ

ԸՍՈՂԸ ՄԵՆՔ ՁԵՆՔ

ԴԵՂԻՆ ՍԱՏԱՆԱՅԻ ՊԱՐԸ

(Գ· եւ վերջին մաս)

Երջանիկ ենք մենք, որ նման բարոյադուրկ տիպերը, որոնք մայր հայրենիքի վրայ նայում են որպէս իրենց հայրենիք – կան կալուածքի՝ պատրիմոնիումի վրայ, ուր կարող են խաբել, գռփել պլեբսին (ժողովուրդին), մի բուռ են աննշան՝ սփիւռքահայութեան մէջ :

Որքան հայրենակարօտ Հայեր կան օ – տար երկնակամարների տակ, որ ծարաւ բիբերով կը սպասեն հայրենիք մեկնելու ժամին, որ երազում են հայրենի հողը համբուրել, բայց միջոցներ չեն գտնում գալու եւ այրւում են իրենց երազների բորբ խարոյկի վրայ : Իսկ այս ոսկեդրամաւոր գբօսաշրջիկները տարեկան հինգ – վեց անգամ են գալիս հայրենիք··· հինգ – վեց անգամ նրա պատուի հետ խաղալու :

Որքան ազնիւ Հայեր, գալով հայրե – նիք, հիացել են նրա յառնումով մոխիր – ներից, որքան հրաշալի է քանդակուել Հայաստանի կերպարը նրանց սրտում, մտքում, իրական երազներում :

Հազարաւորները նրանցից աշխատան – քային իրենց երգը ձուլել են մեր երգին, երթն իրենց՝ աշխարհաչէն մեր երթին :

Եւ հիմա նորերն են ցանկանում գալ : Եկէ՛ք, մեր եղբայրներ եւ քոյրեր, Հայ – րենիքը խանդակաթ կը համբուրի ձեր անեղծ, ձեւքերը ձեր աշխատաւոր, խիղճը ձեր մաքուր ···

Իսկ դեղին ոսկուն ծախուածները թող չգան մեզ մօտ ու չբերեն իրենց վարա – կը՝ թունաւորելու որոշ յեղյեղուկ տարրերի, որոնց երազանքը դուրս չի ելնում « Արմենիա» հիւրանոցի արտասահման – եան զբօսաշրջիկների սենեակներից ու խամրում է մոտային (նորաձեւ) փողկապի հանդոյցի վրայ ···

Կարմրիր այսօր եւ դու, երեւանեան սպեկուլանտ, դու, որ նոյնպէս բռնուած ես անաչխատ ճանապարհով դրամ կու – տակելու մոլուցքով : Գիտակցո՞ւմ ես դու արդեօք, որ գործարքի մէջ մտնելով մի – ջազգային մաքսանենգների հետ, կարող ես գլորուել վատթարագոյն ուղին՝ հայ – րենիքի վաճառման ուղին : Այդպիսինե – րին ժողովուրդն ասում է· «երբեցս անաք – զանք քեզ ···»:

×

Դեվալուացիա, ռեվալուացիա, վալուտա, էմբարգօ, դեմպինգ, ոսկի, տոլար ··· Ահա միջազգային մասշտաբի մաքսանենգի լեքսիկոնի (բառգիրք) բառային ամբողջ փոնտը (կալուածը) : Գուցէ աւելացնենք նաեւ կուտակել, խնայել, սիրել բառե՞րը :

— Սիրե՞լ — կը զարմանաք դուք : — Մի թէ՞ ազամանդեայ այդ բառի երաժշտութիւնը կարող է հասնել բիզնեսմենի սրտին :

Բայց չէ՞ որ սիրել բառը բազմազէտ է, եւ իւրաքանչիւրը իւրովի է մեկնաբանում այդ հինաւուրց, աշխարհում ամենաշատ գործածուած բառերից մէկը :

Դեղին սատանայի սպասաւորը եւս սիրում է (ի հարկէ, ոչ հայրենիքը, նրա ջրերի արծաթաճոճ անուրջը եւ կամ, ասենք ցոլացիկ երկինքն ու թափառական ամպը, դրանցից ի՞նչ չահ) : Նա սիրում է այն··· ինչը ատում է նորմալ մարդը, ինչը մարդուն կարող է ետ տանել մի ամբողջ փորմացիա ···

Նա կատարում է դեղին սատանայի արբշիռ պարը, նրա յորձանապատյտի մէջ խաղցնելով իր Էմբրիոնային (սաղմնային) էութիւնը :

Իսկ մենք չենք կարող չգոչել չեչոտու – ղիղ — կանգ առ, պարոն կամ տիկին, դեղին սատանայի Էպիլեպտիկ (լուսնոտ) պարին մեր երկրում ոչ մի բեմահարթակ չի տրամադրուի : Տարէք ձեր պարը դըրամի, ոսկու գալարումների մէջ չնչա – հեղձ ու ճարպակալած ձեր աշխարհը : Մենք այլ երազներ ունենք, ունենք այլ պարեր՝ կառուցման, աշխատանքի, հերոսացման ···

Հայաստանը լեգենդական (առասպելական) փիւնիկի պէս թռչում է դէպի Ա – րեւը, եւ ձեր դեղին սատանայի ծամածռութիւնները որքա՜ն ծիծաղաշարժ ու նուաստ են թուում ···

ՂԱՐԻՊ ՀԱՑՐԱՊԵՏԵԱՆ
«Սովետ· Հայաստան»

դին յուզարկաւորութեան որ սպաննուե – ցաւ առջի օր երբ Գաղտնի Բանակի ազ – դեր կը փակցնէր :

Ալժէի մէջ ժամը 21էն ետք, կառքերու չրջադայութիւնը արգիլուած է :

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ Արտաքին նախարարը՝ Ռըսք յայտարարեց «Նիուզ Էնտ Ուորլտ Ռիփորթին» որ ներկայիս Արեւելք – Արեւմուտք բանակցութիւն չկայ այլ՝ դիրքերու բաղդատութիւն :

ՌՈՊԸՐԹ Քենըտի, Մոսկուա պիտի չերթայ, յայտարարեց Սպիտակ Տան բանբերը :

ԹԵՀՐԱՆի մէջ ընդհանուր գործադուլի հրահանգ տուած է Ազգային Ճակատը, տապալելու համար Տոքթ· Ամինիի կառավարութիւնը :

ԱՐԻԵԼԵԱՆ Գերմանիոյ մէջ պարտուրիչ զինուորական ծառայութիւն հաստատեցաւ : Մորհրդարանը օրէնքը պիտի քուէարկէ վաղը :

ՊԼՅՃՐԻԹԻՆ կը հաղորդեն թէ լուծուած Ազգայնական Ընկերային կուսակցութեան երեք անդամներ սպաննուած են, երբ կը փորձէին սուրիական սահմանը անցնիլ :

ՄՈԼՈԹՈՎ Վիէննա պիտի չերթայ : Զինքը պիտի փոխարինէ Ալեքսանդրով : Մորհ· Միութեան Արտաքին նախարարին կցորդ նշանակուեցաւ՝ Լափին, Աբըս – տրիոյ նախկին դեսպան :

ԳԻՐՔԵՐԱՒԻ ՀԵՏ

Ինչ որ կը գրեմ այս խորագրին տակ, գրախօսական չէ, այլ կարգ մը գրքերու ընթերցումէն իմ կրած տպաւորութիւն – ներուն ամփոփումը: Ներկայիս, ու միշտ ալ, ջանացած եմ ըլլալ հնարաւոր չափով անկեղծ: Անարժէք գրքեր մը, բարեկամիս կողմէ գրուած ըլլալուն համար, չեմ գոված, ոչ ալ դէշ ըսած լաւ գրքի մը համար՝ պարզ այն պատճառով որ իր հեղինակը ծանօթս կամ բարեկամս չէ: Այս ճշդումը անհրաժեշտ էր՝ որովհետեւ ինծի կը թուի թէ հայերէն գրքի տաղնապը, որուն մասին յաճախ կը խօսուի, մեծ չափով կապ ունի ընթերցող հասա – րակութեան ոչ թէ պակասին, այլ՝ «գոր – ծադուլին» հետ ...

Միտքս բացատրեմ:

Բազմաթիւ գրքեր կը հրատարակուին տարեկան, անհետաքրքիր կամ անմարսելի բովանդակութեամբ, ու անոնց հեղինակ – ները միշտ ալ կը գտնեն մէկը, ու այդ մէկը կը գտնէ տեղ մը՝ գանոնք, կամ ա – նոնցմէ մէկին ու միւսը, գովելու: Մխա – մխա ընթերցողը, խարուած այդ գովես – էն, կը գնէ այդ գիրքը· աչք մը կը նե – է վրան, ու դժգոհ, գիրքը կը գնէ մէկ կողմ· հաստատ մտադրելով ալ մարդու չհաւատալ եւ հայերէն գիրք չգնել՝ քա – նի որ հայ հեղինակները «աղուոր գիրք գրել չեն գիտեր»: Կարծեմ կրցի հասկը – ցնել ըսածս: Ընչտել փափաքածս այն է՝ թէ ներկայ հայ գրականութիւնը կը տա – ռապի իրաւ, անկաշառ եւ գիտակից քն – նադատութեան պակասէն: Քանի մը ար – ժանաւորները, ուրիշ բան կը հիւանդ, եւ հրապարակը մնացած է բոպիկներուն: Ջմռռնանք որ, ինչպէս մեր գրողներուն մեծամասնութիւնը, նոյնպէս եւ կարգա – ղողներուն չատ մեծ տոկոսը, կամ 1915ի աղէտէն վերապրողները են, եւ կամ, այդ թուականէն առաջ Թուրքիայէն հոս փա – խած, հիմնական կրթութիւնէ եւ դաս – տիարակութիւնէ զուրկ մարդիկ: Մար – դիկ որոնք, ժամանակ եւ պատեհութիւն չեն ունեցած իրենց ճաշակն ու միտքը մշակելու:

Սխալ չհասկնաք, գանոնք չեմ մեղա – դրեր, այլ երեւոյթը կը պատկերացնեմ, սեւով՝ ճերմակ թուղթին վրայ կը գնեմ, ահա թէ ինչու հարկ է տալ անոնց մտա – հելի գործեր, եւ, տալ նաեւ, անկաշառ քննադատութեան մը չնորհիւ, գանոնք հասկնալու եւ սիրելու պատեհութիւն:

Եթէ այս ցաւին վրայ աւելցնենք ըլ – լանք նաեւ այն ցաւը որ դաշնակցական – ները «միւս» գրողներուն գրածը չեն գներ ու կարդար, եւ միւսներն ալ Դաշնակցա – կան գրողներու գրածները ձեռք առնելէ կը զարհուրին, պատկերը լման կ'ըլլայ:

Ու հիմա, այս քիչ մը երկար յառաջա – բանէն վերջ, անցնինք կարգ մը գիրքե – րու մասին մեր ըսելիքին:

Կը գրեմ անոնց մասին պահելով ժամա – նակագրական կարգը:

ՆՈՐ ԱՋՔԵՐ, Հր· Ֆալեան հեղինակ: Թեհրան:

Տասնեւհինգ պատմուածքներու 312 էջ – նոց աղուոր հատոր մը: Զարմանալի է, « Երկաթէ Վարպետը»ին եռեւէն չատ աւելի երգ, լուր, գիր ու գրականութիւն կը հասնի ներկայիս մեր ձեռքը, քան «անվարպետը» Պարսկաստանէն: Հոն արմատ նետած դաղութը ինքնաբաւ ու ինքնակեդրոն ըլլալու տպաւորութիւնը կը թողու: Կ'ապրի գրեթէ կղզիացած, ին – քըն իր մէջ՝ իր դպրոցներով, եկեղեցի – ներով ու մշակութային կազմակերպու – թիւններով: Կ'ըսուի թէ ամէնէն չատ համալսարանականներ, իրաւ մտաւորա – կաններ ունեցող հայ դաղութն է ան: Հոն գրական չարժումը սկսելու ճիգեր ալ տեղի կ'ունենան: Ջենք կարծեր թէ այս կղզիացումը դիտումնաւոր կամ կամաւոր է, այլ՝ հայ գրքի տարածումն ու սպա – ռումը ամէն տեղ երեսի վրայ ձգուած ըլլալու արդիւնքը: Ցամէնայն դէպս պա – րոն Ֆալեանի գրքին յառաջաբանէն կը տեղեկանանք թէ հեղինակը «նոր»երէն չէ՝ քանի որ այս հատորը լոյս կը տեսնէ իր գրական գործունէութեան 55ամեայ – կին առիթով:

Դիւրընթեռնելի հատոր մըն է՝ բացի «Անհետացող Դարաչըլեան» չարքին մէջ բերուած «Հոդմարց·» կտորէն որուն լե – զուն, դաւառաբարբառով ծանրացած, կը յոգնեցնէ մեզ:

Այլապէս իր բոլոր պատմուածքները, ունին հետաքրքրական բովանդակութիւն եւ կը կարդացուին հաճոյքով: Տիպերը, վերցուած ամէն դասակարգէ եւ սեռէ, իրական են, կենդանի· մտացածին ոչինչ ունին: Հեղինակը յաջողած է տալ իր մի – ջավայրին ու հերոսներու արտաքինին հետ, անոնց ներաշխարհն ալ: Իր դիւղա – յինները կոշտ ու անմշակ, միամիտ ու նախնական, կը մնան համակրելի իրենց ապրումներով ալ:

ԼՈՒՍԵՄԷՆ ՇԻՐԻՄՆԵՐ, Շ· Նարդու – նի, Փարիզ:

Նարդունիի այս 171 էջնոց հատորիկը մաս կը կազմէ «Յառաջ»ի մատենաշա – րին: Առաւել կամ նուազ խանդավառու – թեամբ գրուած դիմաստուերներու չարք մըն է, ուր տեղ գտած են Ահարոնեան, Ռուբէն, Շանթ, Ալբաչեան, Օշական, Շ· Միսաքեան, Թորգոմ Պատրիարք ու Բարսէղն Կաթողիկոս, Ց· Մաղաքեան, Զօպանեան, Եսայան, Ա· Խոսհակեան, Ա – լէմշահ Գուրգէն եւ Հր· Ալեանաք:

Նարդունի գրելու, դատելու եւ տրա – մաբանելու ինքնայատուկ ձեւ ունի: Կա – րելի չէ գինքը մտիկ չընել: Կը կարդաց – ուի հետաքրքրութեամբ: Գիրքը պատկե – րազարդ է:

ԿԵԱՆՔԻ ՅՈՒՇԵՐԻՑ, Սիրաք Սար – հադեան, Թեհրան:

Աչխարհի այս կողմը բնակողներէն չա – տերուն համար անծանօթ անուն մը: Անձնակեդրոն գիրք մըն է իր 350 էջնոց հատորը: Տեսակ մը ինքնակենսագրական վէպ՝ որուն խորքին վրայ կը տարածուի Վանի հերոսամարտին չքնեղ նկարը: Ա – ռանձնապէս տպաւորիչ է գրքին՝ Վանի ժողովուրդին նահանջը դէպի Իգիր ու էջմիածին նկարագրող բաժինը, եւ հեղի – նակին հանդիպումը — այդ ճամբուն վր – րայ, Ազատ Խանջեանի հետ:

Մեղի թուեցաւ թէ Վանի Արամը իր արժանաւոր տեղը գրուած չէ այս հատո – րին մէջ:

ՔԵՐԹՈՒԱԾՔՆԵՐ, Արսէն Երկաթ:

Երկու հարիւր չորսուն էջնոց եւ հինգ ենթախորագրերով հինգ մասի բաժնուած եւ մաքուր թուղթի վրայ, մաքուր տպա – գրութեամբ բանաստեղծութեանց հատոր մը՝ հասունութեան գրոշմը վրան:

Մեր ապրող (ու թերեւս ալ մեռած) բանաստեղծներուն մէջ ամէնէն չատ ար – տադրողն ըլլալ կը թուի Արսէն Եր – կաթ, որուն անունը, չեմ կարծեր թէ աչխարհի որեւէ մասին մէջ բնակող Հա – յերու ականջին հասած չըլլայ:

Երկաթի լեզուն օրինակելի է, երան – պաչնակը՝ ճոխ ու քնարին լարերը բաղ – մապան: Կը թուի թէ արեւուն տակ չկայ բան մը, որ օր մը, տեղ մը, անգամ մը չյուղէ ու ներչնչէ գինքը: Օրինակ, «Հրե – գէն հայութիւն» ենթախորագրուած էջե – րուն մէջ բանաստեղծութիւնները նուիր – ուած են, Սերոբին, Անդրանիկին, Աւե – տարանին, Աղբիւր Սօսէի, Թարգմանչաց Դերեզմանին, Կոմիտասին, Գեղարդին, Զարենցին, Շանթին եւայլն:

Ահռնաստեղծութիւն կարդալ սիրողները բազմաթիւ արժէքաւոր կտորներ պիտի գտնեն այս հատորին մէջ:

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԳՐԱԿԱՆ ՊԱՏ – ՄՈՒԹԵԱՆ, Բ· Թաշեան, «Յուսաբեր» տպարան, Գահիրէ:

Մեծարժէք գիրք մը: Հայուն ու իր մը – չակոյթին վերաբերող ամէն բան կատաղ – օրէն սիրող մէկու մը ըրչէն ելած գիրք մը: Այս յօդուածին սկիզբը ըսի տեղ մը թէ մեզմէ չատեր պատեհութիւն չունե – ցան չատ մը բաներու մասին հիմնական դատաստարակութիւն առանալու, պաչար ամբարելու: Անչուչտ այդ թերի մոր – վըւած բաներուն կարգին էր նաեւ հայ լեզուն,, հայ գրականութեան եւ հայ գը – բական պատմութիւնները: Ահա այս վեր – ջին նիւթին, հայ գրական պատմութեան մասին կը խօսի այս գիրքը լրջութեամբ, սիրով եւ հեղինակաւոր չեչտերով:

Գլուխներ ունի նուիրած բազմաթիւ նիւթերու որոնց մէկ մասը կը թուեմ ա – հա:

Գրողը եւ մտաւորականը, գրականու – թեան օրինակիրքը, գրելու արուեստին պահակները, լեզու եւ ոճ, գեկավար – ուած գրականութիւն, նախամեսրոպեան գիր ու գրականութիւն, հայ այբուբենի գիւտը, Աստուածաչունչի Թարգմանու – թիւնը, ոսկեդարի թեր ու դէմ, լեզու եւ բարբառ, ձեռագիրները եւ իրենց «կենսա – գրական»ները, մեր պատմիչները եւն·:

Գրող, գրել սորվող՝ ու հայ մչակոյթն ու գրականութիւնը սիրողներու համար « բարձի տակ» դրուելու արժանի գիրք մը՝ խանդավառութեամբ եւ ձեռնհասու – թեն գրուած:

Ընթերցմանս պահուն բազմաթիւ նո – թեր առած էի մէջբերումներ ընելու հա – մար, բայց կը տեսնեմ որ անոնց կէսն իսկ առնելով, թերթը կը լեցուի վերէն վար ...

Կը բաւականանամ վերջին էջէն քանի մը հատուածներով:

Կայսրութիւնները կուգան, ու կ'եր – թան, բայց մչակոյթները կը մնան: Կըր – նանք հրաժարիլ կայսրութիւններէն, բայց տրամադիր չենք — եւ չօժար չենք — հր – աժարելու մեր բազմադարեան մչակոյ – թէն:

Մչակոյթը աւելի է, քան կայսրութի – նը: Մչակոյթը ոգի է, կայսրութիւնը հող է: Հողը կորնչնելի է ոգին անկո – րընչելի է»:

ԱՐԱՄ ՀԱՅԿԱԶ

ԱՇԽԱՐՀԱՀՌՉԱԿ ՀԱՅ ԲՆԱԳԷՏԸ

Զաւակը Անդրկովկասի երկաթուղին – մէջ աչխատող մեքենավարի մը՝ Աբրա – համ Ալիխանեան կը դասուի աչխարհա – հռչակ բնագէտներու չարքին: Դպրոց – կան տարիներուն աչխատած է իր հօր հետ իբրեւ օգնական:

Քիմիական փորձեր կը կատարէր իր փոքր եղբօրը հետ իր տունին մէջ, ո – րոնք, չաճախ կը վերջանային անակնկա – պայթումներով, որ ու սարսափի մատնե – լով տնեցիները: Աբրահամ մտադիր կը դառնայ քիմիագէտ: Սակայն ուսանելու համար Լենինկրատ ժամանելէն ետք մասնագիտութեան մասին իր ունեցած ծրագիրները փոխուեցան, — հրապուր – ուեցաւ փորձառական բնագիտութեամբ:

Լենինկրատի բնախօսութեան հիմնար – կութեան մէջ Ալիխանեան կը նուիրուի բիւրեղային զանազան կառուցուածքե – րու հետազօտութեան մէջ՝ ռէօնթկէնեան վերլուծումի կիրարկումին: 1930ի տաս – ները հայ գիտնականը իր ուսումնասի – րութեան առարկան դարձուց ռէօնթկէն – եան ճառագայթներու տեսողական հիմ – նական հարցերու փորձառական հետազո – տութիւնը:

Այդ շրջանի Ալիխանեանի կատարած աչխատանքներէն ամենահետաքրքրակա – նը զանազան նիւթերու բարակ չերտերուն ռէօնթկէնեան ճառագայթներու ներքին լիակատար արտացոլումի օրէնքներուն հետազօտութիւնն է: Այդ նուրբ եւ դըժ – ուար ուսումնասիրութեամբ, Ալիխանեան առաջին անգամն ըլլալով փորձերով

PREMIER QUOTIDIEN ARMENIEN en EUROPE

ԱՄԲԱՍՏԱՆԵԱԼ ՍԹԱԼԻՆ, ՈՏՔԻ՛

—o—

ԵՕԹՆԵՐՈՐԴ ՈՒՆԿՆԴՐՈՒԹԻՒՆ ՄԱՔՐԱԳՈՐԾՈՒՄ՝ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸՆ ՆԵՐՍ

Ռատէք, իր դատավարութեան ընթաց – քին քանի մը անգամ կրկնած էր, թէ Թուխաչեւսքի որեւէ կապ չունէր դաւա – դրութեան հետ:

Կասկածէ վեր է, որ Ռատէք ինքնաբե – բաբար չէ, որ բերանը առած էր կարմիր բանակի սպայակոյտի պետին՝ մառեչալ Թուխաչեւսքիի անունը: Եթէ Սթալին կ'ուզէր, որ այս դատավարութեանց ըն – թացքին յիչատակուի Թուխաչեւսքին, նոյնիսկ անոր «անմեղութիւնը հաստա – տող» նախագատութեան մը մէջ, պարզ է թէ մառեչալին հանդէպ ալ դէչ նպատակ – ներ կը սնուցանէր:

Արդարեւ, 1937 Ապրիլ 12ին լուր տա – րածուեցաւ, թէ կարմիր բանակի սպա – յակոյտի պետ մառեչալ Թուխաչեւսքի հանուած է իր պաչտօնէն, եւ նչանակ – ուած՝ Վոլկայի չրջանի զինուորական հրամանատար:

Ռատէք, իր դատավարութեան ընթաց – քին «մատնած» էր Լոնտոնի խորհրդային դեսպանատան զինուորական կցորդը՝ զօ – րավար Փուրնան: Այս վերջինը, իր կարգին, «խոստովանած» էր, թէ մառե – չալ Թուխաչեւսքի, իր ներկայութեան ընդունած էր Անգլիացիներուն հաչուին լրտեսութիւն կատարել: Այս բոլորը իբր թէ տեղի ունեցած էր այն ատեն, երբ Թուխաչեւսքի, որպէս Ե· Միութեան պաչտօնական ներկայացուցիչ, Լոնտոն պացած էր Անգլիոյ Ժորժ Ե· թագաւորին յուղարկաւորութեան ներկայ գտնուելու համար:

Երբ տեղեկացաւ Զօր· Փուրնայի ը – սածներուն, մառեչալ Թուխաչեւսքի ի – րար անցաւ· գնաց անձնապէս տեսակից – ցաւ Սթալինի հետ եւ պահանջեց, որ դէմ յանդիման բերուի նախկին զինուորական կցորդ Փուրնայի հետ, կամ առիթ ըն – ծայուի իրեն, որ այս զրպարտութիւն – ները հերքէ:

Սթալին հայրական չեչտով պատասխա – նեց·

— Ձդէ այդ յիմարութիւնները· հաւա – տացած եմ, որ այդ բոլորը սուտ խօսքեր են: Թչնամիին ռազմավարութիւններուն մաս կը կազմէ հոգւով մարմնով մեզի հաւատարիմ եղող մարդոց վրայ կասկած արթնցնելը: Բայց խորհուրդ կուտամ, որ մինչեւ մթնոլորտը հանդարտի եւ այս բոլորը մոռցուին՝ Վոլկայի կողմերը եր – թաս եւ այդ չրջանի զինուորական հրա – մանատարութեամբ զբաղիս:

Այս խօսքերը արտասանած իսկ պա – հուն, Սթալին արդէն անհրաժեշտ հրա – հանգները տուած էր, որպէսզի Թուխա – չեւսքի եւ իր սպայակոյտին անդամներէն մեծ մասը դատի քաչուին:

1937 Յունիս 2ին, պաչտօնական հա – ղորդագրութիւն մը կը յայտնէր, թէ Պատերազմական փոխ – նախարար եւն կամարնիք անձնասպանութիւն գործած է բանտի իր խցիկին մէջ: Իրականութիւնը այն է, որ Սթալինի հրահանգով սպան – նուած էր:

Պատճ՞ռը· Սթալին պահանջած էր կամարնիքէն, որ Թուխաչեւսքին ամբաս – տանի: կամարնիք մերժած էր· ասոր վը – րայ, Սթալին հրահանգած էր, որ կա – մարնիք բանտ նետուի եւ միեւնոյն ատեն պայն նչանակել տուած էր Մոսկուայի կեդր· կոմիտէի անդամ· այսինքն՝ առիթ ընծայած էր կամարնիքի, որ մահուան կամ պատիչներու մէջեւ ընտրութիւն մը կատարէ· կամարնիք տեղի տուած չէր· ուրեմն սպանուեցաւ:

Յունիս 11ին կը յայտարարուէր, թէ մառեչալներ եւ զօրավարներ Թուխաչեւս – քի, Եաքիր, Ուպորեւիչ, Կորք, Այման, Ֆելտման, Պրիմաքով եւ Փուրնա, դա – ւաճանութեան յանցանքով ամբաստան – ուած են ու զինուորական Ատեանի առ – ջեւ պիտի դատուին:

Դատական քննութիւնը այն եղրակա – գութեան յանգած էր, որ այս եօթը բար – ձրաստիճան զինուորականները, ինչպէս նաեւ կամարնիք, «Ե· Միութեան հան – դէպ ոչ– բարեկամական քաղաքականու – թիւն վարող օտար պետութեան մը գին – ուորական դեկավար չրջանակներուն հետ յարաբերութեան մէջ ըլլալով, կարմիր բանակին վերաբերող գաղտնի տեղեկու – թիւններ կը հաղորդէին օտար այդ պե – տութեան: Իրենց նպատակն է տկարա – ցնել կարմիր բանակը, եւ օտար յարձակ – ման մը պարագային՝ վերահաստատել հոգատարական ու ղրամատիրական իշ – խանութիւն մը»:

Բոլոր ամբաստանեալներն ալ խոստո – վանութիւններ կատարած էին, ան – չուչտ:

Յունիս 12ին, նոր հաղորդագրութիւն մը կը յայտնէր, թէ դատարանը տուած եւ գործադրած էր իր վճիռը: Բոլորն ալ դնդակահարուած էին:

Ի՞նչ հիմք ունէին այս ամբաստանու – թիւնները:

Շատեր կը խորհին, թէ դաւաճանու – թեան ամբաստանութեան պիտակին տակ (որուն ոչ ոք հաւատաք ընծայեց), Սթա – լին աւելի լուրջ կասկած մը ունէր— պին – ուորական պետական հարուածի մը կա – րելիութիւնը· այսպէս կը կարծէր, որ նուաղն, ճզմած ըլլալ իր քաղաքականու – թեան դէմ բանակին մէջ տիրող ընդդի – մութիւնը:

(23 Շար·)

փասաեց , որ Ֆրենելի եւ Մաքովելի զա–
սական տեսողութիւնը լիուլի կարելի է
կիրարկել թափանցիկ եւ կլանող միջա–
վայրերէն ոչնթիկնեան կոչ ճառա –
գայներու անդրադարձումին նկատմամբ :

Ալիխանեանի գիտական գործունէու –
թեան առաջին շրջանի արդիւնքը եղաւ
ոչնթիկնեան ճառագայթներու տեսողու–
թեան նուիրուած մենագրութիւնը : Այդ
աշխատութեան մէջ, որ իր կարեւորու –
թիւնը չէ կորնչուցած մինչեւ այսօր ,
Ալիխանեան դասաւորեց իրմէ առաջ այդ
ճիւղին մէջ աշխատողներուն կուտակած
հսկայական գիտական նիւթերը :

1933ին գտնուեցան նէօթրոնը եւ պոզի–
թրոնը : Այդ մասնիկներուն ուսումնասի–
րութեամբ սկսան զբաղիլ բազմաթիւ բը–
նագէտներ, անոնց մէջ տեսնելով փորձա–
գական եւ տեսական բնագիտութեան
զարգացման գլխաւոր հեռանկարը : Հիւ–
լէական կորիզին բնագիտութեամբ հե –
տաքրքրուեցան թէ պատկառելի եւ թէ
երիտասարդ գիտնականներ : Ալիխանեա–
նը կը տեսնենք այն երիտասարդ բնա –
գէտներու շարքին մէջ, որոնք մեծ խան–
դավառութեամբ նուիրուած են այդ մեծ
ապագայ ունեցող հարցին ուսումնասի –
րութեան :

Բնագիտութեան այն հիմնական խնդի –
րները, որոնք կապ ունին հիւլէին և –
լեկտրոնիք արտաքին կեղեւի յատկու –
թիւններուն հետ, հիմնական դիծերով կը
մօտենային իրենց վերջնական լուծումին :
Միեւնոյն ատեն իրարու հետեւ կատար –
ուած սքանչելի գիւտերը նոր կարելիու –
թիւններ ստեղծեցին նիւթի տարրական
մասնիկներու յատկութիւններուն եւ ա –
նոնց փոխազդեցութեան օրէնքներուն
հետ կապուած հարցերը ուսումնասիրե –
լու համար :

1939ին Ալիխանեան սկսաւ ուսումնա –
սիրել միեզերական ճառագայթները ,
բացառիկ հմտութիւն ցոյց տալով նիւթե–
րու ընտրութեան մէջ : Բաղդատութեան
դնելով այլ հետազօտողներու փորձերուն
արդիւնքները, դիտնականը եկաւ այն եզ–
րակացութեան, որ միջին բարձրութիւն –
ներուն վրայ միեզերական ճառագայթնե–
րու կազմին մէջ (այդ ատենուան արդէն
յայտնի մասնիկներէն՝ ելեկտրոններէն եւ
մեզոններէն զատ) պէտք է ըլլայ նաեւ
ուրիշ ծանր մասնիկ մը : Ըստ որում , այդ
մասնիկը, պէտք է ունենայ իոնի զարձը–
նող աւելի մեծ ընդունակութիւն, քան ե–
լեկտրոնները եւ մեզոնները :

Հակառակ պատերազմի արգելքներուն
եւ դժուարութիւններուն, Ալիխանեան իր
փոքրիկ եղբօր՝ Արտեմ Ալիխանեանի հետ
1942ին Հայաստանի մէջ, Արագածի վը –
րայ կատարեց միեզերական ճառագայթ–
ներու ուսումնասիրութիւններ : Ալիխան –
եան եղբայրներու եռանդուն գործունէու–
թեան շնորհիւ սահմանուեցաւ միեզեր –
կան ճառագայթներու եւ յատկութիւննե–
րու հետազօտութեան առաջնակարգ կա –
յան մը, որուն գործունէութեան ամէնէն
կարեւոր արդիւնքները հանդիսացան մի–
եզերական ճառագայթներու կազմին եւ
ուժականութեան ուսումնասիրութեան
նոր եղանակի մը մշակումը եւ կիրար –
կումը :

Ճեատագային փորձերու միջոցաւ հաս –
տատուեցաւ, որ միեզերական ճառագայ–
թումի կազմին մէջ կան տարրեր զանգը–
ւածներ ունեցող մեզոններ : Ասով իսկ
փաստուեցաւ Ալիխանեանի ըրած եզրա–
կացութեան ճշգրտութիւնը :

Անուանի բնագէտը գիտական ընդհա –
տիպ ստեղծագործութեան վառ դիծեր
ունի : Արդարեւ, ի վիճակի է բազմաթիւ
կարեւոր հարցերէն ընտրել առաւել կա –
րեւորը, այն որ ամէնէն աւելի հետաքը–
քրկր ունի : Չի վախնար ուսումնասիրել
այնպիսի հարցեր, որոնց ուղղութիւնը
հազիւ կը նշմարուին :

Վերջին տարիներուն Ալիխանեան զբա–
ղած է հիւլէական ուժը խաղաղ նպատակ–
ներու համար օգտագործելու հետ կապ –
ուած բազմաթիւ հարցերու ուսումնասի–
րութեամբ : Հայ գիտնականին գլխաւոր–
րութեամբ հետաքրքրած են հիւլէական ռէակ–
թէօրներ, որոնք արդէն գործածութեան
դրուած են զանազան երկիրներու մէջ :

« Իր գլխաւորութեամբ, կը գրէ ակա –
դեմիկոս Լ. Արցիմովիչ, եւ իր անմիջա –
կան մասնակցութեամբ՝ կատարուած են
ծանր կորիզներու յատկութիւններուն եւ
հիւլէական ռէակթէօրներու մէջ տեղի
ունեցող բնագիտական բնաշրջումներու
ուսումնասիրութեան նուիրուած բազմա –
թիւ աշխատանքներ, որոնց մասին մէկ
քանի տարի առաջ դեկուցում մը եղաւ
հիւլէական ուժը խաղաղ նպատակներու
օգտագործելու համար դումարուած Ժը–
նեւի միջազգային խորհրդաժողովին մէջ,
եւ որոնք արժանացան խորհրդային եւ օ–
տար երկիրներու բնագէտներու գնահա –
տութեան » :

Ալիխանեան չատ զբաղած է նաեւ արդի
տեսական եւ փորձառական բնագիտու –
թեան կարեւոր հարցերէն մէկով՝ կորիզի
պեթա–տրոհման հարցով եւ առնչած է
չատ արժէքաւոր արդիւնքներ :

Ալիխանեան իր աշխատանքներու կար –
ղին դասախարակած ու հատուցած է նա–
եւ բնագէտներու պատկառելի թիւ մը :
Շատեր անուանի բնագէտներ եւ դիտնա –
կաններ զարձած են արդէն :

Կը դեկավարէ Խորհրդ. Միութեան Գի–
տութիւններու ակադեմիայի փորձառա –
կան եւ տեսական բնագիտութեան հիմ–
նարկութիւնը, որ վերջերս, հայ դիտնա–
կանին գործօն մասնակցութեամբը, ըս –
տեղծեց փրոթոն արագացուցիչը, որ ար–
դէն կ'օգտագործուի մեծ ուժանակներու –
թիւններու պարապային կատարուող կո –
րիկային հակազդեցութիւններու ուսում –
նասիրութեան, տարրական մասնիկներու
դասաւորման եւ բազմաթիւ այլ կարեւոր
հարցերու ուսումնասիրութեան համար :

Հայ դիտնականը մեծ նպաստ բերած է
նոյնպէս Հայաստանի բնագիտութեան
զարգացման գործին մէջ :

Ա. ՇՈՒՇԻՆԵԱՆ

ԻՍՄԷԹ ԻՆԷՕՆԻԻ
ԹՐՔԱԿԱՆ ԱԿՆՈՑՈՎ

—o—

Թանինի մէջ Նեվզատ Իւսքիւն այսպէս
կը ներկայացնէ Թուրքիոյ «օրուան մար–
դը», ըստ այլոց «չար ոգին» :—

Անկախութեան պատերազմ, Թուրքիոյ
Հանրապետութեան հիմնում, Իսմէթ –
վարութիւն, Մայիս 27, բոլոր այս դէպ–
քերուն մէջ Իսմէթ փաշային անունը կը
պատուի : Յեսակէտով մը, Իսմէթ փաշան
այն մարդն է որ բաժին ունի Թուրքիոյ
ապրելու պայքարին մէջ :

Տարածուն կարծիքի մը համաձայն ,
ժողովուրդին մեծամասնութիւնը չի սի–
րեր Իսմէթ փաշան, կը քաշուի անկէ :
Կը կարծուի թէ ամէն բան կրնայ ընել
ան : Իսմէթ փաշան եթէ ուզէ՝ յեղափո –
խութիւն կ'ընէ : Եթէ փափաքի՝ ամէն
ինչ կ'ըլլայ : Անոր բռնածը կը բարձրա–
ւայ : Իսմէթ փաշան ոխակալ է , չի մո–
նար : Իսմէթ փաշան մարդը կը գործա –
ծէ այնքան ատեն՝ որ իր գործին կու –
գայ, յետոյ կը վերցնէ կը նետէ :

Այս ամէնը կ'ըսուի, կը գրուի Իսմէթ
փաշային համար : Իսմէթ փաշային համար
« առանձին մարդ է» ըսողները անդամ
կան : Ան այն մարդն է՝ որ չատ անդամ
իր ձեռքերուն մէջ բռնած է Թուրքիոյ ա–
պագան : Այս բոլորին մէջ իրականու –
թեան մեծ բաժին մը կայ, նոյնիսկ ի –
րականութիւնը :

Ինչ որ չի պիտցուիր, չի հասկցուիր ,
այն է թէ Իսմէթ փաշան ո՞ր գաղափարին
մարդն է :

Իսմէթ փաշա ազատակա՞ն է : Թէ այո,
թէ ոչ :

Իսմէթ փաշա պետականութե՞ան կողմ –
նակից է : Թէ այո, թէ ոչ :

Իսմէթ փաշա դիւղական էնսթիթիւտե –
րը բռնա՞ծ է : Թէ այո, թէ ոչ :

Իսմէթ փաշա այն հաղուագիւտ մար –
դոցմէն է, որոնք նոյն ատեն թէ հիւսի –
սի, թէ Հարաւի մէջ կրնան ըլլալ : Հա –
սան Ալի Եւհեզեն ալ Իսմէթ փաշային կը–
թական նախարարն է, Ռեչատ Շեմսեթ –
տին Սիվերն ալ :

Պէտք է բացայայտօրէն ըսել թէ Իսմէթ
փաշա մեծ քաղաքագէտ մըն է : Գալով
պետական մարդ ըլլալուն, ըստ իս՝ ոչ :
Պետական մարդը այն մարդն է, որ իր
հաւատացած մեծ գաղափարը կ'առնէ ,
կը գործադրէ եւ կամ այդ նպատակով
(ուզէր դիծի մը վրայ) կ'աշխատի : Իս –
մէթ փաշա մեծ յաղողութիւններ արձա –
նագրած է առօրեայ խնդիրներու լուծ –
ման մէջ : Գալով մեծ խնդիրներու, նոյն–
իսկ եթէ ընել ուզած է, առօրեայ քաղա–
քական մտահոգութիւններու մէջ՝ նա –
հանգած է : Իրրեւ «փափաք» , ուզած է
չատ բաներու մօտենալ, գանոնք գործա –
դրել, իր անունը այդպէսով պատմու –
թեան անցընել, բայց թերեւս այդ տիե –
զերական հարցերուն պատասխանները
պէտք եղած չափով ղեկտնալուն պատճա–
ռով՝ չէ կրցած դիմադրել իր միջավայ –
րին ճնշումներուն : Իր երկարատեւ քա –
ղաքական կեանքին մէջ մնացած է մարդ
մը, որ անդադար փնտռած է, չէ կրցած
հասնիլ հոն՝ ուր հասնիլ կ'ուզէ, այս
ուղղութեամբ կատարած է մօտումներ ,
որոնք կրնան դինք անէացնել :

Մուսթաֆա Քեմալութիւնն է որ կը
պահպի Իսմէթ փաշային մօտ, որ աղօտ,
մշուշոտ մտածումներու եռեւ միշտ բա–
ները մը ընել կ'ուզէ կարծես , միշտ բա–
ներ մը պիտի ընէ կարծես : Փաշան, որ
քաղաքական խաղերով լեցուն է , պէտք
էր դիտնալ թէ քաղաքականութիւնը մի –
ջոց մըն է , հաւաքականութիւններու
կեանքին մէջ քաղաքականութիւնը իր
կարծածին չափ կարեւոր չէ :

Իսմէթ փաշա այժմ վարչապետ է : Ա–
սիկա վերջին միջոց մըն է, որպէսզի
հանգստօրէն յայտնէ իր մտածումները եւ
գործադրէ դանոնք :

Իսմէթ փաշա այլեւս պէտք է յայտնէ
թէ ո՞վ է Իսմէթ փաշան : Պէտք է մէջ –
տեղ դնէ իր մտածումները : Իր խնդիր –
ները : Եթէ ամբողջ խնդիրը գահլիճը
կազմել է, նշանակուած ըլլալով, Վար –
չապետ , ասիկա կը նշանակէ թէ Իսմէթ
փաշա պիտի փճացնէ Իսմէթ փաշան :

Եթէ դարձեալ առօրեայ յաջողութիւն–
ներու չուքին ապաստանելով՝ «օրը օր ը–
նել»ու քաղաքականութեան պիտի պատ –
չամի, եթէ անդադար պիտի ջանայ «կա–
յունթիւնը» փրկել, եթէ մենք միշտ այս–
պէսով պիտի լսողունք, եթէ Թուրքիա
իր կեանքը պիտի անցընէ միշտ յառաջի–
կայ վեցամսեակը «երաչխիք»ի տակ առ–
նելով, ոչ ասիկա չըլլար այլեւս :

Իսմէթ փաշա իր ձեռքի վերջին խաղա–
թուղթերով անդամ մըն ալ նոտաւ սեղա–
նին գլուխը : Լաւ կ'ըլլայ որ չուտով բա–
նայ իր աթուները : Ուղիղ ճամբան այն է
որ ան չյարմարի իր չուրջը գլուխ չար–
ժողներուն , ձերբազատուի փոլիթիքա –
յէն :

Եթէ այս անդամ ալ գործերը քալեն
Միջին Արեւելեան մտայնութեամբ, ընե–
լիք մէկ բան կը մնայ իրեն,— նստիլ՝ իր
թոռներուն հետ կատակել տան մը մէջ ,
որուն պարտէզին մէջ ծաղիկներ կը բաց–
ուին :

Այս հաւաքականութեան համար աւելի
օգտակար է Մուսթաֆա Քեմալէն քա–
լել դէպքերուն վրայ, քան թէ սեղանին
գլուխը խօսակցել եւ աչք գթթել իրարու :

Թուրք ժողովուրդը ամէն տեսնէ աւե–
լի կը հետաքրքրուի թէ ո՞ւր պիտի եր –
թայ, ի՞նչ պիտի ըլլայ : Քաղաքականու –
թիւն, գաղափարական տեսակցութիւններ , սա,
նա, եւայլն, կը բաւէ այլեւս :

ՉՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ ՉԵՌԱՓԻՐՆԵՐԸ ՉԵՆ
ՎԵՐԱԴԱՐՁՈՒԻՐ :

ԹԻԱՊԱՐՏԸ

(ՎԷՊ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿԵԱՆՔԷ)

ԳՐԵՑ

ԱՐՄԷՆ ՇԻՏԱՆԵԱՆ

ՄԱՍՆ ԵՐԲՈՐԴ

— Ահա այդպէս... բացատրեց Ներ–
սէս Արծրունին : Ուրեմն՝ պարոններ, կը
յայտնեմ ձեզ թէ՝ «Ներսէս Արծրունին
ես եմ ...» :

Երիտասարդները պատկառանքով մը ա–
նոր գլուխ մէջ նետուեցան եւ ուխտեցին
«համաձայնութեամբ գործել ...» :

ՎԱՆԱԿԱՆ ԻՐ ՍՔԵՄԻՆ ՏԱԿ

Վարագայ վանքին ցածուկ ու կէս մը
փլած խուցերէն մէկուն մէջ երիտա –
սարդ վարդապետ մը նստած էր ու խո –
րունկ մտախոհութեան մը ներքեւ կը թը–
ւէր ըլլալ :

Գիշեր էր : Անամպ երկնակամարին վը–
րայ լուսինը կը չողար մելամաղձօրէն ու
իր ոսկի ճառագայթները կը թափէր չորս–
դին : Մառերու մէջէն սիւքը կ'անցնէր
ներդաշնակութեամբ մը :

Վարդապետին խուցը ճրագ չէր վա –
ռեր : Պատուհանին առջեւ նստած էր ու
դուրս կը նայէր .

Բայց լուսնի փայփայուն չողը, որ լու –
սաւորած էր իր հրեշտակային կերպա –
րանքը, իր լայն ու վեհ ճակատը, ցոյց
կուտար թէ երիտասարդ վարդապետը
մեր ծանօթ Վանականն էր :

Վանական ժամերով մտածելէ ետքը ,
մեքենաբար ոտքի ելաւ, խուցին մէջ ան–
դամ մը մտն եկաւ, յետոյ մրմնջեց ինք–
նիրեն :

— Ախ, արդեօք ո՞ւր մնաց Ներսէս Ա–
ծրունին... ինչո՞ւ այսքան ուշացաւ ...
ի՞նչ պատահեցաւ : Երկու ամիս է որ
մեկնած է ...: Այսօր անպատճառ կը
յուսայի որ կուգար ինծի : Բայց փուճ
տեղ աչքս իր ճամբան մնաց ... փուճ
տեղ սպասեցի : Կասկածը կ'ուտէ դիս ...
կը վախնամ թէ չկրցաւ խեղճ Լուսիայի
կեանքը ապահովել ...

Ու ցաւատանջ եղանակով մը, Վանա –
կան նորէն մօտեցաւ պատուհանին ուսկից
կ'երեւար վանքին ծառաստանը շրջապա –
տող թաւուտներուն մէկ մասը, դրեթէ
յուզմունքէն ու մտախոհութենէ խռնջած
գլուխը դողդոջուն ձեռքերուն մէջ ա –
ռաւ, որ տաք քրտինք մը կը թափէր ,
երկար ատեն լուսնին նայեցաւ, ապա դէ –
րուն նայեցաւ, երկնքի անհունութեան
նայեցաւ ու հառաչեց .

— Ի՞նչ ընենք... տուներնիս քանդողը
մեր ներքին թշնամին է... մեր արիւնէն,
մեր միսէն, մեր ոսկորէն կազմուած եղ –
բայրն է ... Կառավարութիւնը քանի որ
քայլ մը կ'առնէ իր բարբարոսական ծրա–
գիրներու մէջ, հայ դաւաճան մը կը գտ–
նէ, որուն անարդ ձեռքը պատրաստ է իր
եղբօր արեան մէջ թաթխելու :

Չեմ գիտեր, չեմ գիտեր, մինչ՞ այլ
վտառները խղճի տեղ սեւ օձ մը կը պահեն
իրենց կուրծքին տակ, մինչ՞ անոնց սիր–
տը թունաւոր զանդուած մըն է, որմէ
պարշտութիւն մը կը թափի, մինչ մար –
դու կերպարանքով հրէշ մը կոչուելու
ստեղծուած են.... : Ախ, այո, Համիտի
կառավարութեան լրտեսը կը գտնան ,
որպէսզի իրենց զղուելի ու սեւցած կա –
չին ծածկեն... :

Բայց թէ՝ այն հացը, զոր իրենց չորը –
թունքներն թրչելու կը տանին, արցուն –
քով խառնուած է... ատիկա աչքի առ –
ջեւը չեն բերեր : Ոչ ոչ. անոնք մէկիկ
մէկիկ չեն վերլուծեր... մեր ցամքած
մարմնին վրայ փակած տղրուկներուն
պէս, պիտի խլնան ու այնպէս սատկին... :

Վանական ժամերով այս դառն մենա –
խօսութեանց մէջ խորասուզուած՝ դրեթէ
անգիտակից մնաց բոլոր դիշերը :

Մօտաւորապէս երեք ամիսէ ի վեր
վանքը քաշուած էր , ծածկելու համար
ինքզինքը հայ դաւաճաններու խուզար –
կութենէն :

Կառավարութիւնը խիստ կերպով կը
ջանար թէ դինքը եւ թէ Ներսէս Արծրու –
նին ձերբակալել , որովհետեւ իրենց ներ–
կայութիւնը յայտնուած էր դաւաճան
Հայերու շնորհիւ :

Բայց Վանական չէր հասկցած թէ ի՞նչ
պարագաներու տակ մատնուած էին եւ
թէ ի՞նչ էր անոր չարժառիթը :

Առտուն արեւը չծագած, վանքին տն –
տեսը Վանականին սենեակը մտաւ եւ ի –
րեն իմացուց թէ դիւղացի մը կար , որ
տեսնել կ'ուզէր զինքը :

Ըսէք թող հոս գայ, մրմնջեց Վանական
անձկութենէն խղդուած ձայնով :

Վանքին ծերուկ տնտեսը դուրս ելաւ ու
քիչ յետոյ դիւղացի մը բերաւ հետը , ո–
րուն աքանչելի ծպտումին մէջ՝ հազիւ
կրցաւ Վանական ճանչնալ թէ Ներսէս
Արծրունին էր ան :

Երբ տնտեսը մեկնեցաւ, Վանական կա–
րօտին խղդուած՝ ինկաւ Ներսէս Արծրու–
նիին գիրկն ու հեծկլտած :

— Ո՜հ, Աստուած իմ, աս ո՞ւր մնացիք
... ըսէք ի՞նչ պատահեցաւ որ այսքան
ուշ վերադարձաք :

— Հանդարտեցէք, սիրելի Վանական ,
ընդհատեց Ներսէս Արծրունին հայրական
խանդաղատանքի չեշտով մը :

(Շար.)

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Կապոյտ Խաչի Սէն Ժեռոմի մասնա – ճիւղը շնորհակալութեամբ ստացած է Պ. Գագիկ Շալճեանէ տասը Ն. Ֆ., փոխան ծաղկեպսակի ողբ. Արամ Հիւսեանի մահուան առթիւ :

ՆՈՒԷՐՆԵՐ

Իսիի Խրիմեան ղպրոցի հոգաբարձու – թիւնը Յունուար 14ի ամանորի հանդէ – սին օրը շնորհակալութեամբ ստացաւ հե– տեւեալ ազգայիններէ 320 Ն. Ֆ. : Ստո– րեւ ցանկը :–

Բարեպաշտ Տիկին մը իր ամուսնին առողջութեան մաղթանքներով 50 Ն. Ֆ., Տիկին Պէնկեան իր ապագինման համար քսան, Տէր եւ Տիկին Ալէքսանեան, Տէր եւ Տիկին Գալիքեան երեսունական, Թո – րիկեան ընտանիք քառասուն, Սերոբեան, Ալանեան, սկաուտներու խումբը, Ոմն, Ասլանեան, Պետուններու խումբը, Ոմն, Մերուժեան, Նիկողոսեան, Մանուկեան, Տիկին Քօրքինեան, Աւագեան Պ., Աւագ – եան Ց. Դարբինեան, Գրիգորեան, Ֆէ – ջաեան, Շէրպէթճեան, եւ Դաւոն տաս– նական Ն. Ֆ. :

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Փարիզի Աղբ.ի վարչութիւնը շնորհա– կալութեամբ ստացած է հետեւեալ նը – ւէրները.– –Տիկին եւ Օր. Պաքըրճեան, ողբ. Պ. Արշակ Պաքըրճեանի յիշատակին քսան Ն. Ֆ., Պ. Հրանդ Պալեան, նոր տարւոյ առթիւ քսան, Պ. Աթապէքեան 12, Տիկին Փափազեան, ողբ. Տիկին Բեր– սաբէ Փափազեանի մահուան առթիւ, Մոնմորանսիի Ծերանոցին յիսուն, Պ. Աղապապեան : տօներու առթիւ տասը, Պ. Ցովհ. Թէլեան, տօներու առթիւ քսան, Տէր եւ Տիկին Մելքոն Պասմաճեան, ի – րենց մօրաքրոջ՝ Տիկին Վարսենիկ Զը – բըլեանի մահուան Յրդ տարելիցին առ – թիւ տասը, եւ Տիկին Բերսաբէ Փափազ– եանի մահուան առթիւ փոխան ծաղկե – պսակի, Անտիլիի Ծերանոցին 15, Պ. Եկէնեան Օննիկ – Արթին, տօներու առ – թիւ 25, Տիկին Եազուպեան 50, Օր. Գոհար Շահրիկեան, Ամերիկա մեկնելուն առթիւ երեսուն, Տոքթ. Մինաս Ցարու – թիւնեան քսան, Պ. Մկրտիչ Գազանճեան, փոխան ծաղկեպսակի ողբ. Տիկին Լիւսի Թիւթիւնճեանի մահուան առթիւ 30, Պ. Սարգիս Թիւթիւնճեան (Գլէրմոն Ֆէրան) իր մօր՝ ողբ. Տիկին Լիւսի Թիւթիւն – ճեանի մահուան առթիւ 40, Տէր եւ Տիկ. Ն. Նիկողոսեան ողբ. Տիկին Մարի Բար– սեհեանի մահուան առթիւ, Անտիլիի Ծե– րանոցին յիսուն, Տէր եւ Տիկին Քէօթա– հիալեան եւ Տէր եւ Տիկին Պալեան, 50, Տիկ. Արմենուհի Խաչիկեան տասը Ն.Ֆ. :

Սեւրանի կապ. Խաչի մասնաճիւղէն, ողբ. Տիկին Քէպապճեանի մահուան առ– թիւ, Մոնմորանսիի Ծերանոցին 50, Պ. Մաթոսեան Մաթէոս, տօներու առթիւ 30 Ն. Ֆ. :

VICTOR GARDON

LE CHEVALIER à L'EMERAUDE

« Une très belle épopée qui a pour cadre l'Arménie légendaire »
(*Réalités*).

« Les mots sont brefs, justes, légers, mais portés par un souffle d'épopée ».
RENÉ MASSON (*Nouveau Candide*).

« Un livre plein d'entrain, de rebondissements qui émeuvent... il grouille de personnages chaleureux ».
ALAIN BOSQUET (*Combat*).

« Le héros de cette épopée est un parent de Lancelot et de Perceval ».
(*Feuille d'Avis de Neuchâtel*).

« Une fois de plus Victor Gardon affirme un talent sans défaut ».
(*Libre Belgique*).

STOCK

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՕՐԸ

ԼԻՈՆԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ կապ. Խաչի Լիոնի մասնաճիւղի :

28 Յունուար, կիրակի կէսօրէ ետք ժա– մը 3ին, Սքիւտիօ Քրէֆի սրահին մէջ, 24 Րիւ Տիւճօար :

Գեղարուեստական բաժին.— Խմբերգ, արտասանութիւն, ծաղիկներու պար, հայկական պարեր եւ մանկական անա – կնկալներ :

Պիտի ներկայացուի փոքրիկ թատերախ մը՝ « ԿԱՂԱՆԴ ՊԱՊԱՆ » :

Ինչվոչէս ամէն տարի, այս տարի եւս կաղանդ Պապան իր նուէրները պիտի բաժնէ սրահին մէջ դտնուող բոլոր պզտ– իկներուն անխտիր :

Մուտքը ազատ է :

×

ՊՈՒՏՈՒՑԻ ՄԷՋ

Այս կիրակի կէսօրէ վերջ, ժամը ճիշդ 3·30ին, Առլաֆ Սոլֆերինօ սրահը, 235 Րիւ Մունէյրա :

Ճոխ յայտագիր :

«ԱՆԻՒՆ ԳԱՆՁԱՆԱԿԸ »

Մանկական թատերդութիւն : 4 արար
(Ատրինէ Տատրեան)

Խմբերգ, մեներգ, պար եւ արտասա – նութիւն :

Նուէրներու եւ մրգեղէններու բաշխում :

Մուտքը ազատ է :

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ Ս. ԽԱՉ ԵԿԵՂԵՑԻ

10 bis, Rue Thouin, PARIS

Այս կիրակի, ժամը 10·30ին, հանգստ– եան ձայնաւոր պատարագ, Գրիգոր Եպս. Պահապանեանի հոգւոյն համար :

Պիտի պատարագէ եւ քարոզէ՝
ԳԵՐՊ. Կ. ԵՊԻՍԿ. ԱՄԱՏՈՒՆԻ :

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

ԿԱՊՈՑ ԽԱՉԻ ՕՐԸ

Ֆ. Կ. Խաչի օրը կը տօնուի Ապրիլ 1ին, կիրակի, կէսօրէ վերջ, Շիմիի սրահը :

ԾՆՈՒՆԴԻ ԵՒ ՆՈՐ ՏԱՐԻՈՑ

ՈՒՐԱԽ ՕՐԵՐՈՒՆ ԵՒ ԱՄԲՈՂՋ ՏԱՐԻՆ

Եւրոպայի Մեծագոյն Արեւելեան Վաճառատունը

ՊԱՀԱՏՈՒՐԵԱՆ խանութ մը հայ – ցելողին սեղանին վրայ ամէնէն հա– մով պատառը կը պակսի՝ մեծին ու պզտիկին համար : ՊԱՀԱՏՈՒՐԵԱՆ վաճառատան մէջ պիտի գտնէք ա – ւանդական ընդեղէններու եւ անու – շեղէններու ամէն տեսակը, անմրցե– լի գիներով :

Ապսպրանքի վրայ, ծրարի առա – քում Ֆրանսայի ամէն կողմ եւ դէ– պի արտասահման՝ Պելժիա, Զուի– ցերիա, Անգլիա :

ՊԱՀԱՏՈՒՐԵԱՆ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ
LYON

246, Rue Vendôme - Tél. MOU 11-84
20, Rue Villeroy MO 32-10
65, Rue Robert LA 07-72

ԵՒ ԻՆՁԳԻՍ ՄԻՇՏ

Ամման, «պամիա», «եալանճի տոլ– մա», յունական «թուրչի», « պի – պէռ», տերեւ, թահին հելվա, «վա– նիլլ», չոքոլա, «նուաղէթ», «լո – ղում», «սագըզ», պիստակ, Շիրակ օղի (41 – 45օ), Իզմիրի չամիչ, «սուճուք», կեսարական «պաստըր – մա» : առաջնակարգ սուրճ, (բարա– վան եւ մոգա), համեմներ «մահ – լէպ», «սալէպ», ձիթապտուղ, ձէթ, «քաշքաւալ» պուլկարական, ձեր– մակ պանիր ոչխարի կաթով : Ամէն կարգի պահածոներ, «քուսքուս», հարիսա, սումագ, բարամա, լա – ֆերտա, բաֆլաւա, բաստըխ, տե– ղեւ եւայլն :

ՊԱՀԱՏՈՒՐԵԱՆ ՀԱՄՏԱՏՈՒԹԻՒՆԸ

Ունի նաեւ մասվաճառատուն մը, որուն առաջնակարգ միսերը գոհա – ցում կուտան ամէնէն նրբաճաշակ – ներուն : Ոչխարի, հորթի եւ եղան միս (քաշուած միս, եւայլն) :

Imprimerie Spéciale du journal « Haratch »
32, Rue de Trévise, PARIS (9e)

Surprise Party

ՊԱՐԱՆՑԻԿ ԵՐԵԿՈՅԹ

Կազմակերպուած Հ. Ց. Դ. Նոր Սե – րունդի Ալֆորվիլի մասնաճիւղին կողմէ :

Այս կիրակի, ժամը 15էն մինչեւ 22, Մշակոյթի Տան մէջ, 17 Րիւ Պլէօ :

Հաճելի մթնոլորտ, պար, պիւֆէ, ըն– տրուած սալերը (տիսք) :

ՀԱՅ ԹԱՏԵՐ. ԵՒ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԲԱՑԱՌԻԿ ԵՐԵԿՈՅԹ
ՆԻՍԻ ՄԷՋ

Կիրակի, 4 Փետրուար, կէսօրէ ետք, ժամը 3ին, Սալ Արթիւթիւ, 27 Պուլվ. Տիւպուշած, Նիս :

ԳՐԻԳՈՐ – ՎԱՀԱՆ

կը ներկայացնէ իր հնդինակութիւնները, մասնակցութեամբ հայ բեմերու վաղեմի եւ տաղանդաւոր դերասան Ցակոբ Լա– բիֆեանի եւ Նիսի արուեստասէրներու կազմի մը :

կը ներկայացուին՝

ԼՈՒՍԱԻՈՐՉԻ ԿԱՆԹԵՂԸ

Գեղարուեստական բաժնին մէջ՝ ժողո– վրդական հարնածանօթ երգիչ

ՄԻՇԱ ԱԶՆԱՒՈՒՐ

Երգիծական բաժին՝ հայ ազգային բա– րերարութիւններ, Սաթիրական զաւեշտ երկու գանազան արարներով :

Մուտք երեք Ն. Ֆ. եւ վերապահուած պատուոյ բազկաթոռներ :

Տոմսերը հայթայթել՝ Պառ տիւ Մոն– թել, 113 Աւընիւ Քալիֆորնի, եւ նոյն օ– րը թատրոնի մուտքը :

Հ. Յ. Ի.

ՊԱՆԵԼՕ – ՔԱՇԱՆ.— Հ. Ց. Դ. «Ար – ծիւ» ենթակոմիտէի ընդհ. ժողովը այս Հինգշաբթի, ժամը 20·30ին, սովորական հաւաքատեղին : Օրակարգ՝ չարունակու– թիւն նախորդ ժողովի :

ՓԱՐԻԶ.— Հ. Ց. Դ. Շրջ. կոմիտէի ներկայացուցչական ժողով այս Շաբաթ, ժամը 20·30ին, Մշակոյթի Տան մէջ :

Օրակարգ.— Շրջ. ժողովի օրակարգի ճշգուքիւն :

ԼԻՈՆ.— Հ. Ց. Դ. Վարանդեան կոմի– տէն ժողովի կը հրաւիրէ բոլոր ընկերնե– րը, այս Ուրբաթ, ժամը 21ին, սովորա – կան հաւաքատեղին : Կարեւոր օրակարգ :

ԿՐՔՆՈՊԼԻ.— Հ. Ց. Դ. Եօթնեղբայր– եան կոմիտէն ընդհ. ժողովի կը հրաւիրէ Լանսէի, «Մուրատ» խումբի եւ Ինճաժի «Գէորգ Զավուշ» խումբի բոլոր ընկեր – ները, այս Շաբաթ, ժամը 20·30ին, դպրոցի սրահին մէջ : Կարեւոր օրա – կարգ :

ՓԱՐԻԶ.— Հ. Ց. Դ. «Փոթորիկ» խում– բի ժողովը, այս Հինգշաբթի, ժամը 21– ին, սովորական հաւաքատեղին : Կարեւոր օրակարգ :

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ՀԱՄԱ – ԽԱԲԲԵՐԴ. Հայր. Միութեան վալանսի մասնաճիւղի ընդհ. անդամա – կան ժողովը տեղի կ'ունենայ այս Շա – բաթ, ժամը 21ին, սովորական հաւաք– տեղին : Ներկայ կ'ըլլայ կեդր. վարչու – թեան դիւանը : Ներկաներու թիւը մեծա– մասնութիւն պիտի նկատուի :

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Նախաձեռնութեամբ կապոյտ Խաչի Ալֆորվիլի մասնաճիւղին :

Յունուար 27, Շաբաթ, ժամը 20·30ին Մեզոն Ալֆորի Սալ տէ Ֆէթին մէջ :

Առնուվիլի Նոր Սերունդի կառավարենց թատերախումբը կը ներկայացնէ՝

ԱՇԽԱՐՀԻ ԴԱՏԱՍՏԱՆԸ

ՀԱՅ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ

ՏԱՐԵԿԱՆ ՅԵՐԵԿՈՅԹ - ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

Յունուար 28, կիրակի, ժամը 16–24

LES AMBASSADEURS, 3, Avenue Gabriel, Champs-Elysées

Կը մասնակցին երկու հռչակաւոր նուագախումբեր

PIERRE DIEUZEY et ses Capétiens — JAZZ NEW ORLEANS
PEPITO GOMEZ — TYPIQUE TANGOS

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՃՈՒԽ ԲԱԺԻՆ

Կը խնդրուի կանխաւ ապահովել տոմսերը եւ սեղանները հեռաձայնելով

Հայ Կարմիր Խաչի կեդրոնատեղին ԷԼԻՍԷ 67 – 03

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ. — Վարձուած սեղանները պրաւուած պիտի չըլլան ամէնէն ուշը ժամը 19·30ին : Հակառակ պարագայ յին պարահանդէսին կազմակերպիչ յանձ– նախումբը որեւէ պատասխանատուութիւն չի ստանձներ :

ԷՒՐՈՊԱՅԻ ՄԵԾԱԳՈՅՆ ԱՐՏԱԴՐՈՒՉԸ

ՀԷԼՎԱ ԼՈԳՈՒՄ Սուսամ – ՀԷԼՎԱ

LE BOSPHORE MARQUE DÉPOSÉE

ԹԱՀԻՆ ՇԱՐՈՑ (ՌՈՃԻԿ) ՎԱՐԴԷ-ԱՆՈՑՇ

ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ...

CHOC-ALVA • CHOCO-LOC

Sté le BOSPHORE
SIÈGE SOCIAL
2, Rue Louis Astouin / Marseille (2ème)

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

Le PREMIER QUOTIDIEN ARMENIEN en EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction et Administration : 32, Rue de Trévise - PARIS-9e

Fondé en 1925
R. C. Seine 57 A 2731

Téléph. : PRO. 86 - 60
C. C. P. Paris 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա՝ Տար. 50 Ն. Ֆ. Վեցամսեայ՝ 27 Ն. Ֆ.
Արտասահման՝ Տար. 60 Ն. Ֆ. Հատը՝ 0·25 Ն. Ֆ.

ՀԻՆԳՇԱԲԹԻ
25
ՑԱՒՆԱՒԱՐ
JEUDI
25 JANVIER
1962

38ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 9313 38e ANNÉE Fondateur : SCHAVARCH MISSAKIAN ՆՈՐ ՇՐՋԱՆ, 18ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 5114

ՕՐՈՒԱՆ ՄՕՏԻՒԸ

ՄԹՆՈԼՈՐՏԸ ԿԸ ՊԱՂՏՈՐԻ

Յառնաչփոթ կացութիւնը կը չարու – նակուի Թուրքիոյ մէջ :

Մէկէ աւելի իրարու հակամարտ հո – սանքներ ձեւ ու մարմին կ'առնեն հետ – զհետէ, մասնաւորաբար երիտասարդա – կան – ուսանողական եւ բանուորական շրջանակներու մէջ :

Այն օրէն ի վեր, որ Թուրքիա ուրա – ցաւ իր ասիական ծագումը եւ դիրք բռո – նեց Եւրոպայի կողքին, մոռնալով «Եւրո – պայի Որհուրդ»ին եւ « Ասլանտեան Ուխտ»ին մէջ, ամէն ճիգ ըրաւ եւրոպա – կան բարքերուն յարմարելու համար :

Սակայն երբեք չկրցաւ ձերբազատուիլ ասիական հին հին դարուց յիշատակնե – րէն : Ուզեց դառնալ «դեմոկրատ», ինչ որ կ'ենթադրէր ժողովրդական սկզբունքնե – րու ընդգրկումը : Սակայն տեսանք, որ «դեմոկրատ» կուսակցութիւնը իր տասը տարուան իշխանութեան ընթացքին աս – տիճանաբար ջնջեց ժողովրդավարութեան չնորհած տարրական իրաւունքները եւ դարձաւ բռնապետական – մենատիրական կառավարութիւն, ինչ որ ի վերջոյ պատ – ճառ դարձաւ իր անփառունակ անկումին :

Մնանկացած էր ա լա թուրքա «դեմոկ – րատիզմ»ը :

Զօր· Կիւրսկլի Սզ· Մխանականու – թեան Կոմիտէն իր էութեամբ խակ դին – ուորական ըլլալով հանդերձ, պարտա – տորուեցաւ ձեւականօրէն յարգել ժողո – վրդավարութեան կարգ մը սկզբունքնե – րը, յաչս արեւմուտքի արդարանալու եւ անոր համակրութիւնը, մանաւանդ նիւ – թական օժանդակութիւնը չտեղու յեթին մտքով :

Սահմանադիր ժողովի գումարումը , նոր սահմանադրութեան մը մշակումն ու հանրաքուէով անոր վաւերացումը կը ձգտէին փոշի փչելու ազատ աչխարհի աչքին :

Հոկտեմբեր 15ի ընտրութիւնները ան – դամ մը եւս չեչտեցին չփոթը, որ կը տի – րէ մթնոլորտ մէջ : Ոչ մէկ կուսակցութիւն կրցաւ մեծամասնութիւն չահիլ : Կը նչա – նակէ թէ չկայ խոչոր մը, դաղափարա – կան մը, որուն չուրջ կարելի ըլլար հա – մախմբել քուէարկուներու մեծադոյն մա – սը : Եղածը աթոռի կռիւ է պարզապէս :

Մէկ կողմը կանդնած է Հալք կուսակ – ցութիւնը, որ հակառակ իր վարկաբե – կումին, տակաւին կը ներկայացնէ կարե – ւոր ուժ մը, մասնաւորաբար ուսանողա – կան չրջանակներու մէջ : Այս չարժումին յարող երիտասարդները պաչտպան կը կանգնին Աթաթիւրքի բարենորոգումնե – րուն եւ դլխաւոր հակառակորդներն են « դեմոկրատ»ներուն : Դէմ են Եասը Ա – տայի դատապարտեալներու ընդհանուր ներումին եւ կրօնական մոլեռանդու – թեան վերազարթումին :

Ասոնք իրենց դէմ կը դտնեն երիտա – սարդական եւ ուսանողական ոչ – նուազ զօրաւոր կազմակերպութիւններ, որոնք «դեմոկրատ»ներու մնացորդներն են եւ կը կոթնին Զօր· կիւմիւչխալայի Ատա – լէթ կուսակցութեան վրայ :

Միւս կողմէ համաչխարհական եւ ըն – կերվարական խմորումներն ալ սկսած են որոշ ծաւալ դտնել բանուորական չրջա – նակներու մէջ : Կարդ մը թերթեր եթէ ոչ ջատագով, գոնէ արձագանգ կը դառնան արհեստակցական — աչխատաւորական ընկերակցութեանց կազմութեան :

Նոր Սահմանադրութիւնը կը ճանչնայ բանուորներու գործադուլի իրաւունքը : Ճարտարարուեստի զարգացումով թուր – քիոյ մէջ ալ բանուորները կը սկսին հետ – զհետէ կազմակերպուիլ, մտահոգութիւն պատճառելով օրուան իչխանութեան :

Բանուորական վերջին յոյցերը լաւ նը – շան մը չեն նկատուիր :

Մթնոլորտը հետզհետէ կը պղտորի :

ՀՐԱՆՏ–ՍԱՄՈՒԷԼ

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՖՐԱՆՍԱ

ԽԻՍՏ ՄԻԶՈՑՆԵՐ ԳԱՂՏՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ԴԷՄ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿՐ ՀԱՄԱՀԱՐՈՒԻՆ

Ոստիկանութիւնը խիստ միջոցներ ձեռք առած է պայքարելու համար կազմակեր – պութիւն՝ Գաղտնի Բանակի դէմ, որուն վերջին երկու ահաբեկչական արարքները մտահոգութիւն եւ յուզում յառաջ բերին : Գաղտնի Բանակի Մայր Հայրենիքի Ընդ – հանուր պատուիրակութիւնը կը դատա – պարտէ սակայն Քէ տ'Օրսէի անճոռնի մահափորձը եւ կը չեչտէ իրղեկոյցին մէջ.— «Քանի մը օր է, Մայր Հայրենի – քի մէջ կատարուած գործողութիւնները վերագրուած են Գաղտնի Բանակին Իշ – խանութեան կողմէ » : Գաղտնի Բանակին համար ասոնք թունաւորման խաղեր են, որոնք «կը կապեն Ֆրանսացի հայրենա – սէրներու դատը բռնատիրական ներչըն – չումով օտար չարժումներուն դատին» : Գաղտնի Բանակը կ'աւելցնէ.— « Ինչպէս զօրավար Սալան կը չեչտէր Ցունուար 3 – ին, ոչ խռովարար համախմբում մըն է ոչ ալ փաչիստ չարժում մը : Հաւատարիմ այս պիծին, Մայր Հայրենիքի ընդհ. պատ – ուիրակութիւնը վճռապէս կը դատապար – տէ կոյր ահաբեկումի ոճրային արարք – ները, ինչպէս առջի օրուան Քէ տ'Օրսէի անճոռնի մահափորձը որ անմեղ զոհեր պատճառեց »:

Ասիկա սակայն չի բաւեր հանդարտե – ցնելու համար մթնոլորտը : Աչխատան – քի Ընկերակցութիւնները ձախ կուսակ – ցութեանց կողքին կ'ուղեն պայքարիլ Գաղտնի Բանակին դէմ : Կուսակցութիւն – ները նաեւ կը պատրաստեն եթէ ոչ տը կոլի առնուազն Տըպրէի յաջորդութիւնը : Ընկերվարականները մէկ կողմէ, ժողո – վրդական Շարժումը միւս կողմէ խորհր – դակցական հաւաքոյթներ ունեցած են : Կի Մոլէ պարզած է իր ընկերներուն առ – ջեւ համախմբումի երկու կարելիութիւն – ներ : Առաջինը բաւական լայնածաւալ է քանի որ Մենդէս – Ֆրանսէն մինչեւ Փի – նէ կ'երթայ մէջն առնելով ժողովրդական Շարժումը : Նման համախմբում մը, սա – կայն, կարելի է նախատեսել չատ ծանր պայմաններու տակ, օրինակի համար երբ իչխանութիւն չըլլայ : Այդ պարագային Մոներվիլի (Վերակոյտի նախագահ որ ըստ Սահմանադրութեան Հանրապետու – թեան նախագահը կը փոխարինէ եթէ ա – նիկա որեւէ պատճառաւ ի վիճակի չըլլայ իր պաչտօնը կատարելու) տրամադրու – թեան տակ կը դրուի այդ «միացեալ ճա – կատը»:

Երկրորդ համախմբումը, աւելի սեղմ է, 12երու նչանաւորքառթելը (ձախ) որ – մէ վերջնականապէս վտարուած է Տէփ – րէօյի անջատուած ընկերվարական չար – ժումը : Կը մնան 11 : Ասոնք ձախ կու – սակցութեանց (բացի համայնավարներէ) եւ ընկերակցութեանց համախմբումն է :

Ասոնք ալ ժողով մը պիտի ունենան պատրաստելու համար չինարար ծրա – գիր մը :

Ժողովրդական Շարժումին առջեւ Քո – լէն խօսեցաւ այն հանդիպումին մասին, զոր ունեցած է Մոլէի, Փինէի եւ Ֆոռի հետ եւ որ առաջին համախմբումին կը ձգտէր :

× Փարիզի Աէքիվիսք չրջանակներուն մէջ բազմաթիւ խուզարկութիւններ կա – տարուեցան : 43 հոգի ձերբակալուեցան :

× «Գաղտնի Բանակի դէմ կազմակեր – պութիւններ» (Անթի Օ – Ա – Էմ) առե – ւանգեցին հրամանատար Սափէն — Լին – եէռի տղան :

× Քէօլնի ձայնասփիւռի կայանը ցա – ւալի նախաձեռնութիւնը ստանձնած էր Գաղտնի Բանակի անդամի մը խօսք տա – լու : Հարիւրապետը Փիէր Սերժան ներ – կայացուած է ունկնդիրներուն իբրեւ «Գաղտնի Բանակի սպայակոյտի պետ եւ Փլասթիէօրներու դեկավար» : Սերժան ը – սած է թէ ֆաչիզմը տը կոլի մօտ է ոչ՝ իրենց եւ եղրակացուցած թէ «բովանդակ Եւրոպան այն համեմատութեան մէջ որ կը դիտակցի համայնավար վտանգին պէտք է օդնէ Գաղտնի Բանակին, որպէս զի Ալժերիան փրկէ » :

Քէօլնի ձայնասփիւռը ինչպէս Գերմա – նիոյ բոլոր կայանները անհատական են , պետական ձայնասփիւռ գոյութիւն չու – նի :

× Մենդէս – Ֆրանս կրկին մէջտեղ դը – րաւ փոխանցման կառավարութեան մը դաղափարը : Մամուլի ասուլիսի մը ըն – թացքին յայտնեց նաեւ թէ դէմ չէ հա – մայնավարներուն հետ դիմակցութեան մը :

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՔԱՐԱՔԱՍԻ մէջ (Վենեցուելա) միջա – դէպեր պատահած են, որոնց հետեւան – քով չորս հոգի մեռած է :

ԱՄԵՐԻԿԵԱՆ «Թայմ» պարբերաթերթը ուսումնասիրութիւն մը հրատարակած է Գաղտնի Բանակին վրայ, ուր կը վերլու – ծէ այս կազմակերպութեան զանազան ե – րեսները : Փարիզի հրատարակութիւնը դրաւուեցաւ, որովհետեւ կողքին վրայ տպած էր Ռաուլ Սալանի նկարը :

ՀՌՈՄԻ Սզ· պաչտպանութեան նա – խարարութիւնը զեկոյց մը հրատարակեց, ուր կը չեչտէ թէ բազմաթիւ փաստեր կան որ կը հիմնաւորեն այն կարծիքը թէ պուլկարական Միկ 17 օդանաւը լրտե – սութիւն կը կատարէր : Պուլկարները ի – րաւունք չունին օդաչուին հետ տեսնը – ւելու ցորչափ քննութիւնը չէ վերջացած :

ԽՈՐՀ· ՄԻՈՒԹԵԱՆ պատուիրակը Զո – րին յայտարարեց թէ Փորթուկալի դաչ –

ՎԱՏԻԿԱՆԷՆ... ՓԱՐԻԶ

ՀԱՑ ԱՆՈՒՆԸ Ի ՊԱՏՈՒԻ

—o—

Զատկական, կիրակի օր հայկական հպարտութեամբ լեցուն օր մը չնորհեց արտասահմանի Հայութեան :

Առաւօտուն, հայկական հանդիսաւոր պատարագն էր զոր Վատիկանի կայանը կը ձայնասփռէր եւ որ կը հասնէր հայ – կական սրտերուն, մինչ կէսօրէ ետք պատչաճ եւ խնամքով պատրաստուած յայտագիր մը Ֆրանսացիներուն կը ներ – կայացնէր Վարուժանը եւ Զարենցը :

Ներկայացման ձեւը, ընկերացող հայ – կական յուզիչ այլ հարազատ երաժչտու – թիւնը, երկու ձեռնհաս խօսնակներու տուած ամփոփ եւ փոքր վրիպումներով տեղեկութիւնները, ինչպէս նաեւ Թան – Թագ Ասլանեանի եւ Հայկուհի Խտըչեանի մասնակցութիւնը չատ յաջող յայտագիրը մը մէջտեղ բերած էին : Լաւն տեղեկու – թիւններ Վարուժանի եւ Զարենցի անձին ու գործին մասին, հայերէն եւ ֆրանսե – րէն կտորներ լաւագոյն ներկայացուցին ֆրանսացի ունկնդիրին , Հայոց բանաս – տեղծները :

Ծանօթ բանաստեղծ Ռուբէն Մելիք պատասխանելով իրեն եղած հարցումնե – րուն , հակիրճ տեղեկութիւններ տուաւ հայ գրականութեան մասին, մատնանը – չելով անոր կրած ազդեցութիւնը արեւ – մուտքէն, մանաւանդ Ֆրանսայէն : Ռու – բէն Մելիք յիչեց նաեւ Փօլ Էլիւարի մէկ յատկանչական պատասխանը հայ լրա – գրողի մը, ուր Ֆրանսացի տաղանդաւոր բանաստեղծը կը յայտնէր թէ «Հայկ· գրականութիւնը ամբողջ դիմադրութեան գրականութիւն մըն է» :

ւալի նախաձեռնութիւնը ստանձնած էր Գաղտնի Բանակի անդամի մը խօսք տա – լու : Հարիւրապետը Փիէր Սերժան ներ – կայացուած է ունկնդիրներուն իբրեւ «Գաղտնի Բանակի սպայակոյտի պետ եւ Փլասթիէօրներու դեկավար» : Սերժան ը – սած է թէ ֆաչիզմը տը կոլի մօտ է ոչ՝ իրենց եւ եղրակացուցած թէ «բովանդակ Եւրոպան այն համեմատութեան մէջ որ կը դիտակցի համայնավար վտանգին պէտք է օդնէ Գաղտնի Բանակին, որպէս զի Ալժերիան փրկէ » :

ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆԻ

ՄԱՀՈՒԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ

Յառաջիկայ վաղուան թիւը, բացառապէս 8 էջ, ամբողջովին նուիրուած է իր հիմ – նադիր – խմբագրապետին յիչատակին :

Գրութիւններ ունին.—

Ս· Վրացեան
Ն· Սարաֆեան
Համաստեղ
Արամ Հայկազ
Կ· Մ· Ալէմշահ
Առլէն Փափազեան
Կ· Պէտուչ
Արտաչէս Գմբէթեան
Ե· Լաչինեան
Հրանդ Բալուեան

Ինչպէս նաեւ՝

Հրանտ – Սամուէլ
Շ· Նարդունի

եւ

ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

նակիցները աւելի կարեւորութիւն կու – տան Ատլանտեան դինակցութեան քան ՄԱԿի Ուխտին :

ՑՈՒՆԱՍՏԱՆԻ խորհրդարանը 111ի դէմ 173 ձայնով մերժեց արդելքի բանա – ձեւ մը, զոր ներկայացուցած էր Կեդրոնի եւ Զախի ընդդիմութիւնը : Ասոնք կ'ամ – բաստանէին կառավարութիւնը որ բըռ – նութիւններով եւ դեղծարարութիւններով փոխած է անցեալ Հոկտեմբեր 29ի ընտ – րութեանց արդիւնքը :

ՔՈՓ Տ'ԻՎՈՒԱՌԻ նախագահը՝ Հուֆու – էթ – Պուանեի ընդունեցաւ Լոնտոն եր – թալ պաչտօնական այցելութեան :

ԱՆԱՍՏԱՍ ՄԻԿՈՑԵԱՆ փրակայէն ան – ցած է դէպի Մոսկուա իր վերադարձի ճամբուն վրայ : Տեսակցութիւններ ունե – ցած է կառավարութեան դեկավարներուն հետ :

ՓԵՔԻՆի «ժողովուրդին օրաթերթը»կը դրէ թէ Քենըտի Խորհ· Միութեան ամ – բողջական անձնատուութիւնը կ'ուղէ Պերլինի հարցին մէջ : Զինագիներու հա – մար Միացեալ Նահանգներու նախագահը յոյս դրած է ընկերվարական պլոքին բա – ժանման վրայ ինչ որ պատրանք է :

ԱԼՊԱՆԱՅԻՆԵՐԸ հազարաւոր թռու – դիկներ նետած են արեւելեան Գերմանիոյ վրայ : Այդ թռուցիկներուն մէջ ալպա – նական աչխատանքի կուսակցութիւնը խստօրէն կը քննադատէ Խրուչչեւի քա – ղաքականութիւնը :

ԽՈՐՀՐԴԱՑԻՆ ճարտարարուեստի ար – տադրութիւնը 9·2 առ հարիւր աւելցած է 1961ին, կ'ըսէ մամուլի «Թաս» գործա – կալութիւնը : Խորհ· Միութիւնը ներկա – յիս 66 միլիոն աչխատաւոր ունի :

ՊԵԼԺԻԱԿԱՆ ոստիկանութիւնը խու – զարկութիւններ ըրաւ Պրիւսէլի մէջ բո – լոր անոնց մօտ որոնք ծանօթ են իրենց համակրական զգացումներուն համար Գաղտնի Բանակին հանդէպ : Մօտ երե – սուն հոգի հարցաքննուած են, ապա՝ ա – զատ արձակուած :

ԵԳԻՊՏՈՍԷն 28 օտարականներ ար – տաքսուած են, որոնց ոչ անուններըն, ոչ ալ հպատակութիւնը, ցարդ յայտնի են :

ԼԵՀԱՍՏԱՆի աւագերէցը՝ Կարդինալ Սթեֆան Վիչինսքի Վատիկան պիտի եր – թայ, ի մօտոյ :

ԹՐՈՑՔԻի այրին մեռաւ Փարիզի մէջ : Ըստ իր փափաքին դիակիզումը պիտի կատարուի Փէռ Լաչէզի մէջ եւ ճաիւն – ները պիտի փոխադրուին Մեքսիքա խառ – նուելու համար իր ամուսնոյն ճաիւննե – րուն :

ԹԵՀՐԱՆի մէջ ոստիկանութիւնը կրակ բացած է ուսանողներու վրայ : Ցուցարար մը սպաննուած է եւ բազմաթիւ ձերբա – կալութիւններ կատարուած են :

ՆԵՓԱԼի թագաւորը մահափորձէ մը հաղիւ ազատեցաւ, առջի օր :

ԿԵԱՑ ԴՈՒ, ՀՈՎԻՒԴ ՔԱՋ

ՄՄԲ.— Սուրիոյ ցաւալի դէպքերուն ատեն իրագեկ աղբիւրներէ եւ ճամբորդներէ լսած էինք թէ Հալէպի Հայ Կաթոլիկէ Առաջնորդը լաւագոյնս արժեցուցած է «Հովիւ էապ» տիտղոսը ճակատագրական պահերու մէջ, դէմ դնելով նոյն ինքն Սարրաժի ճնշումներուն։ Այսօր արտատպելով Պէյրութի *Մասիս* շաբաթաթերթի խմբագրականը, որ նուիրուած է էապ առաջնորդին, կ'ուզենք ծանօթացնել զինք մեր գաղութին։

Անցնող տարուան ընթացքին՝ ամէնէն յուզիչ դէպքերը տեղի ունեցան Սուրիոյ մէջ։ Չերքակալուեցան խումբ մը Հայեր՝ ամենածանր ամբաստանութիւններով։ Ուզղակի կը հարուածէին այդ խումբ մը Հայերը, բայց անուղղակի՝ ամբողջ Հայութիւնը։

Ծանր ամբաստանութիւններուն կը յաջորդէր ղեկավարեալ մամուլին ընդհանուր յարձակումը՝ Հայոց դէմ։ Ոճրագործը պատած էր ոչ միայն Սուրիոյ, այլեւ արտասահմանի ամբողջ Հայութեան սիրտը։ Պարտաճանաչ, հաւատարիմ, երախտագէտ Հայութիւնը կ'ընդվզէր ծանր ամբաստանութիւններուն դէմ, բայց չէր տրուեր իրեն՝ միջոցն իսկ ինքնարդարացման։ Ընդհակառակն, կը պարտադրուէր առաջնորդներուն ինքնաղատում պարտական զրերու ստորագրութիւնը՝ մամուլին մէջ, յանցանաճանաչ բանաձեւերու իւրացումը՝ ատեաններու առջեւ։ Մամուլի յարձակումին կը յաջորդէր բանտարկեալներու խոշտանգումը։

Այդ դժնդակ ժամանակաշրջանին մէջ, որ այնքան չարաշուքօրէն կը յիշեցնէր եղեռնական օրերու նախօրեակը, ամբողջ Հայութեան համար նախախնամական եղաւ դերը՝ Հայ Կաթոլիկէ Առաջնորդին՝ Արհի։ Տ։ Գէորգ Արք։ Լայեքեանի։ Սա եւ մղեց դատապարտական դիր ստորագրելու որեւէ առաջարկ, մերժեց ճանաչումը որեւէ բանաձեւի՝ որ բռնի կը կորզուէր այս կամ այն Հայէն։ Ընդհակառակն, Կուսակալին դէմ առ դէմ, պատհանեց — Հովուեր Առաջնորդի իր հանդամանքով — որ վերջ տրուէր մամուլի յարձակումներուն — որոնք հանրային կարծիքը կը խաթարէին, կրնային յառաջ բերել ծանր հետեւանքներ, յանկիւ նոյն իսկ ազէտի մը։ Խնդրեց որ դադրին խոշտանգումները բանտարկեալներուն։ (ամէն ամբաստանեալ՝ որ տակաւին չէ դատուած, իրաւապէս անմեղ է)։ Արհի։ Տ։ Գէորգ Արք։ Լայեքեան, ի լուր բանտին մէջ մահացած Հայու մը, այցելեց անոր դժբախտ ընտանիքին, թէ սիրելի անոր դժբախտ ընտանիքին համար հանդուցեալին հարազատներին երը, թէ անդորրելու համար խռովահար հոգիները եւ թէ բողոքելու համար՝ դարձեալ եղելութեան դէմ։ (Առաջին անգամ չէր որ կ'առնէր այդ վեհանձն քայլը։ Ծանօթ է բոլորին՝ Շատարեւեանի ցաւալի պարագան)։ Աղղարարութիւնները վարանք չպատճառեցին իրեն, ոչ ալ ըսպառնալիքները՝ երկիւղ։ Կաթողիկէ Ա։ առաջնորդը յայտնեց Կուսակալին՝ թէ զգեցած է սքեմը՝ յանձն առնելու հարմար, ի սէր Աստուծոյ եւ ի սէր ազգին, ամէն զոհողութիւն։

Նոյնքան արի եղաւ դիրքը եւ խօսքը Հայ Կաթոլիկէ Առաջնորդին՝ նախաբար Սարրաժի դէմ առ դէմ։ Նոյն պահանջքը եւ նոյն խնդիրքը զրաւ նաեւ առ ջեւ։— դադարումն մամուլի յարձակումներուն։ Ահա անոնք մը՝ յուղիչ տրամախօսութենէն։—

Սարրաժ։— Մեր թերթերը կը զրկեն՝ ի պատասխան լիբանանեան թերթերուն, փաստելու համար իրողութիւնը։

Կաթողիկէ Առաջնորդը։— Թերթերով, ձայնասփիւռով, պատկերասփիւռով չի փաստուիր իրողութիւնը, կը փաստուի արդար դատաւարութեամբ։ Թերթերը, ձայնասփիւռը կամ պատկերասփիւռը կրնան դերապզուհալ ատիճանի մը հասցընել ամբոխին զայրոյթը, եւ սկիզբ կը տրուի արեան մը՝ զոր ղուք ալ պիտի չուզէիք անշուշտ, եւ զոր պիտի չկարենայիք այլեւս զսպել։

Սարրաժ։— Ուժը եւ ապահովութիւնը մեր ձեռքն է։

Կաթողիկէ Առաջնորդը։— Դատավարութիւնը թող ըլլայ հրապարակային, որպէսզի պարզուի իրողութիւնը, եւ Հայ ժողովուրդին վարկը մնայ մաքուր։

Սարրաժ։— Պիտի ըլլայ հրապարակային։

Հայ Կաթոլիկէ Նուիրապետութեան Մեծերը կը հետեւէին դէպքերուն, որոնք տեղի ունեցան 1961ի ամրան ընթացքին։ Հայ Կաթոլիկէ Նուիրապետութեան Մեծերը իմացան թէ որպիսի արի կեցուածք մը ցոյց տուած էր Արհի։ Տ։ Գէորգ Արքեպիսկ։ Լայեքեան՝ Կուսակալին եւ Նախարարին (Սարրաժի) հանդէպ։ Ս։ Ա։ Թոռը եւս իմացաւ եղելութիւնը։

Եւ ահա, յանկարծ, կանդ առաւ դէպ կավարեալ մամուլին ընդհանուր յարձակումը՝ Հայոց դէմ, լռեց ձայնասփիւռը, վերջ գտան ձերբակալութիւնները։ Հրամանագիր մը Նախարարը (Սարրաժը) փոխադրեց Գահիրէ։

Այնուհետեւ ծանօթ են դէպքերը։ Եկիրը վերադաւ սահմանադրական աղատութիւնները։ Եւ երբ ընտրութիւնն ընդ օրերը մերժեցան, Հայ Կաթոլիկէ Առաջնորդը մտածեց օգտագործել առիթը՝ իրականացնելու համար Հայ ժողովուրդի միասնականութեան դաղափարը, որ ամենէն ազդեցիկ միջոցն էր՝ ի խնդիր ժողովուրդին խորտակուած վարկին վերականգման, յաչս սուրիացի ժողովուրդին։ Իրականացաւ դաղափարը, մկկուկէս ամիս տեւող երկար, անհատական տեսակցութիւններէ ետք, որոնք կարելի դարձուցին երեք պատմական հաւաքոյթները (Նոյեմբերի 14ին, 15ին եւ 16ին)։ Տարիներէ ի վեր առաջին անգամն ըլլալով քովի եկան տարբեր հատուածներու եւ հոսանքներու պատկանող մարդիկ։ Օրակարգի վրայ էր երեսփոխաններու ընտրութեան հարցը եւ այդ հարցին լուծման անհրաժեշտ միասնականութիւնը Հայոց։ Ցարուցուող տարակարծութեանց դիմաց՝ կորովի կերպով խօսեցաւ Առաջնորդը։— Եթէ իրագործենք փնտռուած միասնականութիւնը՝ հայ ժողովուրդին մատուցած պիտի ըլլանք ամենաւեծ ծառայութիւնը։ Ով որ խոչընդոտ հանդիսանայ այս գաղափարին՝ պատասխանատու է հայ ժողովուրդին եւ պատմութեան առջեւ»։

Հարթուեցան տարակարծութիւնները։ Կազմուեցաւ թեկնածուներու հնգանուն ցանկը։ Երեքը քաշուեցան։ Ընտրուեցան Զօրավար Գարամանուկեան և Մեթր Էլիզաթեան։ (առանց այս միասնականութեան՝ երեւակայել իսկ կարելի չէր՝ թէ Հայերը կրնային ունենալ երկու թեկնածուներ։ այս միասնականութեան շնորհիւ կարելի եղաւ կազմել քրիստոնեայ թեկնածուներու ցանկ մը, եւ այս ցանկը յանկարծ, ամէն բան կը փոխուի։ Հիմա կարելի է ազատ շնչել ու խօսիլ եւ մեղեներուս յիշատակը տակաւ կը պակսի վերյարուցուիլ ...։

Աքսորեալները կը սկսին վերադառնալ իրենց տուները, որոնց կարգին նաեւ Ա։ Լեքսանդրը։

Անիկա պատած է իր խաղաղութիւնը՝ մտքի ու հոգիի եւ սակայն աշխատող ձանձրոյթ մը կը զգեանէ զինքը։ Հոգ չ, կը մտածէ վիպասանը, քանի որ մտքին անդորրը ունի, պահած է զայն շնորհիւ համբերատարութեան, հիմա ինքը «ծառը» է որուն արմատները լեղի են այլ սակայն պտուղները՝ քաղցր ...»։

Ալեքսանդր չուտով կ'անդրադառնայ թէ՝ առամը իր մեկնումին մէջ չէր այլ իր վերադարձին։ Անոնք՝ իր կինը, զինքը մոռցած է, ուրացած, կատարելապէս հաւատալով իր յանցապարտութեան, որովհետեւ մեծ էր եղած հնոյ հաւատքը իր հայրենիքին արդարադատութեան վրայ»։

Հիմա, սակայն, ամուսնոյն վերադարձէն ետք, Աննան կը հասկնայ ամէն բան, ու կը խորհրդածէ ։— «Մեզ անդամահատեցին մեր ճշմարտութեան մէջ։ Հիմա դիտենք որ սարսափի զրուխլիւնը անհրաժեշտ չէր ...»։

Աննան իր խաղաղութեան ապաստանը կը գտնէ միայն մահուան մէջ ...

«Վկաներ»են նոյնպէս Ալեքսանդրի ու Աննայի զաւակը եղող Մարին եւ իր երկու երիտասարդ ընկերները, որոնք իրենց վերջոյ կը յաջողին թօթափել իրենց ու-

ՖՐԱՆՍԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

"ՎԿԱՆԵՐԸ"

Փարիզի Վիէօ – Քոլոմպիէի թատրոնը ունի բեղնաւոր գործունէութեան անցեալ մը, սկսած իր հիմնադիրին՝ Ժաք Քոփոյի օրերէն։ Այս թատրոնի բեմին վրայ կուգան բեմադրուիլ առհասարակ երի– տասարդ թատերագիրներու գործերը, որոնցմէ Ժորժ Սորիայի մէկ թատերախաղը՝ «Վկաները» ։ այս միջոցիս կը ներկայացուի հոն ։

Արտակարգօրէն ինքնատիպ հեղինակ մըն է Ժորժ Սորիա եւ իր այդ յատկանիշը յստակօրէն ի յայտ կուգայ նաեւ «Վկաները»ին մէջ։

Հեղինակը՝ իր թատերակին գործողութեան վայրը չէ բնորոշած։ Ո՞ւր կ'անցնի ան, յայտնի չէ։ Եւ սակայն, բեմին յարդարանքը, անոր կարասիները, մանաւանդ ինքնեռ մը եւ թէյի զաւաթները հանդիսատեսին ենթադրել կուտան թէ թատերակին հերոսները կ'ապրին մեզմէ երեք հազարեակ մը մղոն անդին դանուող «արեւելեան կողմն աշխարհի» քաղաքի մը մէջ։

Այդ մարդիկը հոն կ'ապրին երկաթեայ բոունցքի մը տիրապետութեան տակ։ Մաքրագործումներ, ճնշումներ, մահապատիժներ, հետաքրքական տեղահանութիւններ ամէնօրեայ դէպքեր են։ Հոն դիտողները համոզուած են որ այդ ձեւով միայն կարելի է յաւերժացնել վարչական ձեւը։

Զարիքին մասին կը հասնին օր մը խաղին հերոսին՝ վիպասան Ալեքսանդրի վրդին։ կ'աքսորուի ու կ'անյայտանայ։ կ'անցնին քանի տարիներ, եւ ահա, քովի եկան տարբեր հատուածներու եւ հոսանքներու պատկանող մարդիկ։ Օրակարգի վրայ էր երեսփոխաններու ընտրութեան հարցը եւ այդ հարցին լուծման անհրաժեշտ միասնականութիւնը Հայոց։ Ցարուցուող տարակարծութեանց դիմաց՝ կորովի կերպով խօսեցաւ Առաջնորդը ։— Եթէ իրագործենք փնտռուած միասնականութիւնը՝ հայ ժողովուրդին մատուցած պիտի ըլլանք ամենաւեծ ծառայութիւնը։ Ով որ խոչընդոտ հանդիսանայ այս գաղափարին՝ պատասխանատու է հայ ժողովուրդին եւ պատմութեան առջեւ»։

Հարթուեցան տարակարծութիւնները։ կազմուեցաւ թեկնածուներու հնգանուն ցանկը։ Երեքը քաշուեցան։ Ընտրուեցան Զօրավար Գարամանուկեան և Մեթր Էլիզաթեան։ (առանց այս միասնականութեան՝ երեւակայել իսկ կարելի չէր՝ թէ Հայերը կրնային ունենալ երկու թեկնածուներ։ այս միասնականութեան շնորհիւ կարելի եղաւ կազմել քրիստոնեայ թեկնածուներու ցանկ մը, եւ այս ցանկը ինքզինք պարտադրեց ոչ–քրիստոնեայ թեկնածուներու, որոնք միացան անոր եւ յաջողեցան, իրենց խոստովանութեամբ իսկ)։

Տարիներէ ի վեր իրարմէ հեռու կեցած հայ մարդիկ մօտեցան իրարու, սրտակցեցան եւ միասին բաժակ բարձրացուցին միասնական հայ ժողովուրդի բարօրութեան եւ կենաց ։

Գրութիւնս վկայութիւն մ'է հակիրճ։ Ան որ պիտի դրէ Սուրիոյ Հայոց պատմութիւնը՝ պիտի չմոռնայ 1961ի ընթացքին սրատաճնող այս դէպքերը։ Եւ այդ դէպքերուն մէջեւ, եւ դէմքերուն վերեւ պիտի տեսնէ Հայ Կաթողիկէ Առաջնորդը, Արհի։ Տ։ Գէորգ Արք։ Լայեքեանը, որ, դժնդակ պահու մը, իր բարոյական ամբողջ ուժը ի սպաս դրաւ ի սէր Հայ ազգի զաւակներուն, իրագործեց միասնականութեան դաղափարը ։

Կեա՛ց դու, հովի՛ւդ քաջ, տիօք՝ երիտասարդ, խմաստութեամբ՝ երէց ։

Խմբագրական՝ ՄԱՍԻՍԻ

ԱՄԲԱՍՏԱՆԵԱԼ ՍԹԱԼԻՆ, ՈՏՔԻ՛

Արդարեւ, բազմաթիւ բարձրաստիճան զինուորականներ յայտնած էին Սթալին՝ նի, թէ հողերու համայնացման քաղաքականութիւնը դէչ հետեւանքներ կ'ունենայ բանակին բարոյականին վրայ։ քանի որ բանակը մեծ մասամբ բաղկացած էր դիւղացի զինուորներէ։ Արդ, զինուորները պատճառիկ նամակներ կը ստանային իրենց ծնողքներէն ու կը լեցուէին ոխի եւ ընդվզումի զգացումներով ։

«Քուլաք»ները(*) արագ կերպով հաշուեյարդարի ենթարկելու հրահանգ ստացած ըլլալով, Կ'փէուի մարդիկը անխնայ կը կողոպտէին ու կը քանդէին դիւղերը։ Ուկրայինոյ եւ Հիւսիսային Կովկասի մէջ դիւղացիական ըմբոստացումներ ծայր տուին։ Կ'փէուի մասնաւոր ջոկատներն են, որ զազանային վայրագութեամբ ճզմեցին այս չարժումները անշուշտ չէին կրնար ոուս դիւղացիները զինադադարեցնել պարտականութիւնը կարմիր բանակին յանձնել ...

1933ին, մառեչալ Պլուխէր, որ Ծայրագոյն Արեւելքի զինուորական ուժերու հրամանատարն էր այդ միջոցին, վերջնագիր մը դրկեց Սթալինի։— Եթէ արեւելեան Սիպերիոյ դիւղացիները չձերբազատուին իրենց ուսերուն ծանրացող չափազանց մեծ պարտաւորութիւններէն՝ մառեչալ Պլուխէր ոչ մէկ ձեւով կրնայ պահովցնել, թէ ծովեզերեայ նահանգն ու Ամուր գետի հովիտը ինքնապաշտպանութեան կը դիմեն ճապոնական հաւանական յարձակման մը պարագային։

Սթալին այնպէս ձեւացուցած էր, թէ տեղի կուտայ։ Առաջին հերթին անհրաժեշտ էր բանակին մեծ վրդովումը հանդարտեցնել։ Ամէնէն առաջ փորձած էր մառեչալ Թուխաչեւսքիի սիրտը չահիլ՝ տարիներէ ի վեր անոր ուղածը իրականացնելով — այսինքն՝ կարմիր բանակներըը արդիականացնելու համար անհրաժեշտ եղող պիւտճէն տրամադրելով ։

Միայն թէ, Սթալին ոխակալ էր։ իրեն հանդէպ եղած վիրաւորանքները չէր մոռնար երբեք ։ Վախի չիմարական ըզգացումի մը մղուած, Պետութեան եւ կերպութեան «մեծ մաքրագործում»ի հրահանգը տուած էր։ Իսանակը եւս ազատ պիտի չկացուցուէր այս արհաւիրքէն, մանաւանդ որ Սթալին անձնական հաշիւ մըն ալ ունէր մաքրելիք։ Թուխաչեւսքի խորհրդային յեղափոխութեան ամէնէն փայլուն զինուորական դէմքն էր։ Քանի նըշմինդ տարեկան երիտասարդ սպայ մըն էր ապադայ մառեչալը, երբ ծայր տուաւ քաղաքացիական պատերազմը։ Բայց, հակառակ իր երիտասարդ տարիքին, անվարան իրեն յանձնեցին կարմիր առաջին բանակին հրամանատարութիւնը ։

1918 Սեպտեմբեր 12ին պարտութեան մատնեց Զեխերն ու Սպիտակ բանակը՝ Սիմպիրսքի մէջ։ 1919ին դիմագրաւեց Քոլչաքի բանակները, զոր Ուրալէն անդին քշեց, հետապնդեց մինչեւ Սիպերիա եւ վերջնականապէս ձգմեց 1920 Յունուարին։

Անմիջապէս յետոյ կեդրոնի ճակատին հրամանատարութիւնն ստանձնեց եւ պարտութեան մատնեց Դենիքինի բանակները։ Ապա՝ ձեռք առաւ Լեհաստանի դէմ սկսած գործողութիւններուն ղեկավարութիւնը ։

Այնքան փառք արդէն ինքնին ոճիրի համապատասխան էր հիւանդագին նախանձոտութենէ տառապող Սթալինի աչքին ։

Բայց աւելին կար ։

Թուխաչեւսքիի հրամանատարութեան տակ, կարմիր բանակը կը յառաջանար դէպի Վարշաւա եւ 1920 Օգոստոսի սկիզբը՝ Լեհաստանի մայրաքաղաքը դրաւ – ուելու վրայ էր։ Թուխաչեւսքի, իր չանթահարիչ յառաջխաղացքը շարունակելու համար, հրահանգ ղրկած էր Պուտիէննիի եւ Վորոշիլովի հրամանատարութեան տակ գտնուող այրուձիին, որ անմիջապէս իր մօտ հասնին։ այս հրահանգը վաւերացուած էր Մոսկուայի կողմէ ։ Արդ, Պուտիէննիի եւ Վորոշիլովի ընկերացող քաղաքական կոմիսարը չեղեալ նկատեց Թուխաչեւսքիի ու Մոսկուայի հրահանգները եւ այրուձիի հրամանատարներուն հրամայեց Լվովի վրայ քալել ։

Ուժերու այս բաժանման հետեւանքը այն եղաւ, որ Լեհաստանի մէջ գտնուող Ֆրանսական զինուորական յանձնախումբը(Վէյկանի հրամանատարութեան տակ) ժամանակ ունեցաւ փախուստի ճամբան բռնած լեհական բանակը վերակազմակերպելու եւ յաղթական հակա – յարձակման մը մղելու ։

Թուխաչեւսքի գառն արտայայտութիւնն ունեցաւ այս մասին, երեք տարի վերջ, զինուորական Ակադեմիայի մէջ տուած մէկ դասախօսութեան ընթացքին ։

Արդ, Պուտիէննիի 12րդ բանակին ընկերացող քաղաքական կոմիսարը կը կոչուէր Ժողջֆ Վիսարիոնովիչ Սթալին ։

Քանի որ Թուխաչեւսքի համարձակած էր հրապարակաւ քննադատել Սթալինի գործած մէկ սխալը, ապա ուրեմն պէտք էր որ օր մը, ուշ թէ կանուխ, իր պատիժը գտնէր ։— անպատուութիւն եւ մահ՝ Սթալինի ոազմապետութիւնը քննադատելու համարձակող Թուխաչեւսքիի համար ։

(24 Շար։)

(*) Քուլաք՝ սկզբունքով հարուստ գիւղացի։ Բայց իրականին մէջ, բոլոր աւնուճ, որոնք կ'ընդդիմանային հողերու համայնացման ։

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՄԸ ՀԱՅ ՆԿԱՐԻՉԻՆ ՀԵՏ

—o—

ՀՌՈՄ.— Ինչպէս առաւնին տեղեկացուցած էինք, Դեկտեմբեր 21ին Հռոմի կեդրոնական սրահներէն Լա Քասափաքայի մէջ տեղի ունեցաւ բացումը Ժիրայր Օրապեանի ցուցահանդէսին :

Օրապեան, ղրկանքներու եւ ղրկեթէ կղզիացած առանձնութեան մը մէջ, 40 տարիներէ ի վեր կը ղծէ Հռոմի մէջ: Կը տեղծէ պատառ մը, կը կապուի անոր՝ հօր մը պէս, այն զոհունակութեամբ թէ նոր էակ մը աւելցաւ իր բազմանդամ ընտանիքին մէջ՝ որ նկարներէ միայն կը բաղկանայ: Ու ինչ մեծ ղրկանք, երբ տեսած է անոնցմէ մէկէն բաժնուիլ :

Հայկականութի՞ւն: Ժիրայր Հայ է իր բովանդակ էութեամբ: 40 տարի եօք ինքնիսկ կը խոստովանի որ չէ յաջողած օտար մը նկարել: «Ամէն անգամ որ ի – տալացի մը փորձեր եմ նկարել, կ'ըսէ ան, միշտ խոշոր աչքերով Հայ մըն է որ դուրս ելած է: Աչքե՜ր, աչքեր Հայու խոշոր աչքեր որ ամէն անկիւնէ քեզի կը նային, մարդկութեան կը նային ու հարց կուտան. Թէ — ինչո՞ւ անիրաւ զոհուեցար ինծի հանդէպ»: Մեզ լաւ կը ճանչ – նար «Մուսատաղի 40 օրերուն» հեղինակը, երբ կը ղրկէր թէ «Հայերը աչք են սերչն «պատասխանատուութեան » մէ – ձաւանդը ...

Այս է ահա, համառօտակի, «Վկաները» թատերակին նիւթը :

Արդար ըլլալու համար, պէտք է խոստովանիլ թէ, փորձ Սորիա իր երկը կառուցած է անաչառ ու անկողմնակալ ընդով մը: Արեւէ մօտաւոր կամ հեռաւոր ակնարկութիւն չկայ իր գործին մէջ այս կամ այն վարչաձեւի, կամ որեւէ վարդապետութեան դէմ: Իր կէտ նպատակը եղած է ապացուցանել թէ՝ ազատութիւնը հականեր եւ ղեւցաղներ կը առեղծէ, մինչ բռնութիւնն ու տալածանքը կը խթայի քայլերը կուտայ այն մարդոց՝ որոնք պիտի կրնային ճախրել՝ արծիւ – ներու հանդոյն :

Ուժէ Մոլիէռի բեմադրութեամբ ներ – կայացուած այս խաղը մեծ յաջողութիւն գտած է Ֆրանսական Տասարակութեան մէջ :

Ծոմկամի Ֆրանսիզի նախկին դերասան – ներէն Ժան Մարթինելլի Ալեքսանդրի եւ Տիկին Անի Մոնիէ Աննայի դերով լծուած են ամէն ղիշեր ղեղեցիկ մրցակցութեան մը՝ պիրաթ ներկայացնելու :

Այս երկու անուանի արուեստագէտներ – ուն քով համաչափ ներդաշնակութիւն մը կը պահեն Օր. Նելլի Պորկօ, Փիէր Տեպօշ, Ժան Մարթէն, Պերնար Վերլէյ եւ ուրիշներ :

ԱՐՏԱՇԷՍ ԳՄԲԷԹԵԱՆ

ԹՈՒՐՔԵՐԸ ԿԸ ԳԱՂԹԵՆ

—o—

Պոլսոյ Թրքական Թերթերը կը դրեն թէ արեւելեան նահանգներուն մէջ մարդոց եւ անասուններուն անօթութիւնը վերջին ծայր աւելցած ըլլալով, այլեւս հան – դուրժողութիւն չէ մնացած : Զիւն ձմեռը ամբողջ սաստկութեամբ կը չարունակուի երկրում ղրկուած օժանդակութիւնը եւ սննդանիւթը հեռաւոր գիւղերն ու գիւ – ղաքաղաքները չեն կրնար հասնիլ, նկա – տելով որ ճամբաները փակ են եւ առա – քումը դժուար :

Վանի, Մուշի, Պիթլիսի, Էրզրումի շը – ջանները մէջ, ուր առատ անասուն պո – յութիւն ունի, զաղթը սկսած է : Այս շը – ջանները գիւղացիները իրենց միջեւ հա – մաձայնելով՝ հօտերով միասին դէպի հա – րաւ կը զաղթեն :

Զաղթի կարաւանները, որոնք կ'ենթա – րկուի թէ կը բաղկանան 60·555 ոչխա – րէ եւ չորս հազար հոգիէ, առայժմ ան – ջատ խումբերով ճամբայ ելած, Տիգրիսի եւ Եփրատի հովիտները իջած են, ուր ձմեռը յարաբերաբար մեղմ է եւ արօտա – վայրեր կը գտնուին :

Բայց նկատելով որ յատկապէս ոչխար – ները շատ անօթի եւ վատառոյգ են, մեծ զոհ կուտան : Շահագրգռուողներու կար – ծիքին համաձայն, այդ վաթսուն հազար հոգինոց հօտը մինչեւ որ արօտավայր իջնէ, նուազագոյն 10 – 15 հազար զլուխ կորուստ պիտի ունենայ :

Այսօր արեւելքի մէջ ոչխարի մը գինը մինչեւ 7·5 ոսկի ինկած է : Մինչդեռ անց – եալ տարի 25 – 30 ոսկի էր :

Զոնկուլտաքէն եւս կը հաղորդեն թէ ա – նօթութեան պատճառով Արեւելքէն զաղ – թող Թուրքերը խումբ առ խումբ Զոն – կուլտաք հասնելով զործ կը փնտռեն :

ԱՆՕԹԻ ՊԻՏԻ ՄՆԱՆ, ԵԹԷ...

Թուրքիոյ երկրագործական զործավար Ճաւիտ Օրալ հետեւեալ յայտարարու – թիւնն ըրաւ.—

« Թուրքիա իր հացին ցորենը ապահո – վելու է վիճակի չէ : Վաղուան համար մտահոգ ենք : Մեր արտադրութիւնը եօ – թը միլիոն թոն է : Ասոր մէկ միլիոն եր – կու հարիւր հազար թոնը իրրեւ սերմնա – ցու կ'օգտագործուի : Մինչդեռ սպառու – մը ութ միլիոն թոն է : Նախ մեր հացի զաւը ձեռք առնելով պիտի լուծենք : Եթէ Ամերիկայէ ցորեն չկարենանք ներ – բածել դժնդակ դիրքի պիտի մատնուինք եւ անօթի պիտի մնանք :

Եօթը միլիոն 717 հազար հեկթար ար – մտիքի զաշտ ունինք: Անցեալ տարի մեր ձեռք բերած ցորենը եօթը միլիոն թոն է :

Հակառակ Թուրքիա չատ հաց ուտող երկիր մը ըլլալուն, միայն Փորթուկալ եւ Սպանիա այս թուանշաններուն տէր են : Մեր արտադրութեան զարկ տալու հա – մար հարկ է լաւ մշակել մեր հողերը, արուեստական աղբ զործածել, արդիա – կան զործիքներու տէր զառնալ » :

Գործավարը այնուհետեւ յայտնեց թէ 625 հազար հեկթար հողի վրայ ձեռք բերուած բամպակը մէկ միլիոն հակէ պե – րիվեր է, մեր ճարտարարուեստը հարիւր հազար թոն բամպակի կը կարօտի, մը – նացեալը կ'արտածուի :

Օրալ յայտնեց թէ Թուրքիոյ մէջ հինգ միլիոն քիլօ թէյ կ'արտադրուի : Վերջին տասը տարուան ընթացքին նարինջի ար – տադրութիւնը հարիւրին 33, լիմոնին հարիւրին 151 աւելցած է : Այս առթիւ Ահմէտ Օղուզ դիտել տուաւ թէ Իսրայէլ նարինջի արտածումէն 42 միլիոն տոլարի տարադրամ կ'ապահովէ :

Օրալ արուեստական աղբի վրայ ալ ծանրանալով յայտնեց թէ Թուրքիոյ մէջ իւրաքանչիւր հեկթարի հինգ քիլօ աղբ կը վիճակի :

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՆՈՐ ՕԴԱՏՈՐՄԻԶ ՄԸ ՀԱՍԱՒ ԱՏԱՆԱ.

Ամերիկեան Միւթը – Սէյպոլ ճէթ օ – դանաւերէ բաղկացած Ֆ–100 օդատոր – միզ մը Ամերիկայի իր խարխափէն մեկնե – լով Ինճիրլիքի օդակայանը իջաւ (Ատա – նայի չրջակայքը) :

Օդատորմիզը, որ կը զտնուի Գնդ. Ճէյմս Հերի հրամանատարութեան տակ, Ինճիրլիքի օդակայանին մէջ պիտի մնայ չորս ամիս :

ՀԱՅԱՍՏԱՆ

—o—

ՇՐՋԱՆՇԱՆ ՍԱՀՄԱՆԻ ՊԱՀՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ 1

Ցունուար ութին, պաշտօնական հան – դիսաւորութեամբ «Մորհ. Մխիթեան սահմաններու պահպանութեան զերա – պանցութեան չքանչանը» յանձնուած է Սուրէն Բաղդասարեանի, որ 1961ղարնան իր զիւղին մօտերը նշմարած եւ զիւղա – յիներուն օգնութեամբ ձերբակալած է անծանօթ մը, որ ըստ երեւոյթին, կը փորձէր խոյս տալ Մորհ. Մխիթենէն: Ե – րեւանի թերթերը չեն յիշատակած փա – խստականին անունը եւ ձերբակալութեան վայրը : Շքանչանը յանձնած է սահմանա – պահ զօրքերու սպայ՝ Գ. Իւանցով :

« ՀԱՅԱՍՏԱՆ » ԵՌԱՆԿԱՐԸ

Բացառիկ զործի մը ձեռնամուխ եղած է Հայաստանցի երիտասարդ նկարիչ մը՝ Վաղարշակ Սարգսեան : Հայութեան օր – բանին զովքը հիւսող մեծ պատառ մը « Հայաստան» անունով : Պատառը եռա – նկար մը պիտի ըլլայ, որուն ձախ առա – ջին նկարը պիտի ներկայացնէ աչխա – տանքը խորհրդանշող հսկայ եւ ջլապինդ բանուորի մը տիպարը : Մէջտեղը՝ Աբա – րատեան դաշտավայրին առաւօտն է, իսկ աջին երրորդը՝ հայ մայրը, որ իր բա – զուկներուն մէջ առած կը փայփայէ իր սիրասուն մանուկը :

—o—

կան զործիքներու տէր զառնալ » :

Գործավարը այնուհետեւ յայտնեց թէ 625 հազար հեկթար հողի վրայ ձեռք բերուած բամպակը մէկ միլիոն հակէ պե – րիվեր է, մեր ճարտարարուեստը հարիւր հազար թոն բամպակի կը կարօտի, մը – նացեալը կ'արտածուի :

Օրալ յայտնեց թէ Թուրքիոյ մէջ հինգ միլիոն քիլօ թէյ կ'արտադրուի : Վերջին տասը տարուան ընթացքին նարինջի ար – տադրութիւնը հարիւրին 33, լիմոնին հարիւրին 151 աւելցած է : Այս առթիւ Ահմէտ Օղուզ դիտել տուաւ թէ Իսրայէլ նարինջի արտածումէն 42 միլիոն տոլարի տարադրամ կ'ապահովէ :

Օրալ արուեստական աղբի վրայ ալ ծանրանալով յայտնեց թէ Թուրքիոյ մէջ իւրաքանչիւր հեկթարի հինգ քիլօ աղբ կը վիճակի :

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՆՈՐ ՕԴԱՏՈՐՄԻԶ ՄԸ ՀԱՍԱՒ ԱՏԱՆԱ.

Ամերիկեան Միւթը – Սէյպոլ ճէթ օ – դանաւերէ բաղկացած Ֆ–100 օդատոր – միզ մը Ամերիկայի իր խարխափէն մեկնե – լով Ինճիրլիքի օդակայանը իջաւ (Ատա – նայի չրջակայքը) :

Օդատորմիզը, որ կը զտնուի Գնդ. Ճէյմս Հերի հրամանատարութեան տակ, Ինճիրլիքի օդակայանին մէջ պիտի մնայ չորս ամիս :

ԹԱՊԱՐՏԸ

(ՎԷՊ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿԵԱՆՔԷ)

ԳՐԵՑ

ԱՐՄԷՆ ՇԻՏԱՆԵԱՆ

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Հիմակ դուք վարդապետ մըն էք... դիտէք թէ վարդապետ մը մեծ պէտք ու – նի համբերութեան ...: Ինչո՞ւ համար կը տառապիք... մինչ՞ ձեր ընտրած ուղիէն քաշուիլը դիւրին բան է... մինչ՞ այն նպատակը՝ որուն այնքան տենչանքով կ'ուզենք հասնիլ, չի պահանջեր որ համ – բերող ըլլաք :

— Այո... ճշմարիտ է, թոթովեց Վա – նական :

— Ուրեմն նստեցէք որ ամէն բան յայտնեմ, վրայ բերաւ Ներսէս Արծրու – նին, ինքն ալ կակուղ մինտարի մը վրայ իյնալով :

Վանական լռիկ ու անխօսուն կերպով մը նստեցաւ ու սպասեց .

— Ուշանալուս պատճառը Լուսիայի եւ մօրաքրոջս հիւանդութիւնն էր, յարեց Ներսէս Արծրունին: Երկար ճամբորդու – թիւնը, վախը ու յոգնութիւնը ու մանա – նաւնդ անունդի պակասութիւնը չափազանց ազդեցին անոնց վրայ: Երբ Կ... քաղաքը հասանք, ու ապահով տեղ մը ղրուեցան անոնք, քանի մը օր պարտաւորուեցայ խնամել: Հիմակ լաւ են ու կը բարեւեն ձեզ ... :

— Ուրախ եմ... մրմնջեց Վանական :

Ներսէս Արծրունին հառաչանք մը քա – շելով չարունակեց .

— Գիտէ՞ք Վանական, երկու օր առաջ Տէր Կոմիտաս քահանան սպանուած է չարաչար կերպով :

— Ինչո՞ւ համար, ղոչեց Վանական :

— Իրրեւ դաւաճան :

— Ո՞վ է սպաննել տուողը :

— Կուսակցութեան մը ներկայացու – ցիչը :

— Ո՞ր կուսակցութեան :

— Դրօշակեան :

— Ամբաստանութեան ապացոյցներէն տեղեկութիւն մը ունի՞ք :

— Ժբախտաբար ոչ, միայն թէ ոճի – րին մանրամասնութիւնն իմացայ :

— Ոհ, պատմեցէք :

— Դրօշակեան կուսակցութեան տեղ – ւոյս կեդր. Կոմիտէի որոշմամբ Տէր Կո – միտասը «սեւ տէոռի» կ'ենթարկուի : Իրիկուն մը քահանային՝ մէկը կը ներկա – կարծես, տատապած բայց իմաստուն աչ – քեր » :

Ըստ իս, Օրալեանի բովանդակ հմայ – քը կը կայանայ անոր հայկականութեան մէջ: Վարպետօրէն տիրապետելով տան – ղերձ իտալական թեւնրիին՝ ան կը զա – նազանուի բոլոր միւս նկարիչներէն իր ցեղային առաքինութիւններով, իր խո – րաթափանց ազգային կնիքով, որ չի նը – ւազակեր Ս ասիներուն, կամ մեր զմբէ – թատոր տաճարներուն ներկայութիւնը ան – պատճառ, այլ աւելի խոր, աւելի «ցեղա – յին» հայկականութիւն մը (եթէ կարելի է այդպէս ըսել) կը բնորոշէ զինք :

Ցուցահանդէսը ունեցաւ բազմահարիւր այցելուներ եւ մամուլը նուիրեց բազմա – թիւ գնահատական ու վերլուծական յօդ – ուածներ :

Հայերուս մէջ, Օրալեան անձանօթ մըն է որ արժանի է ճանչցուելու եւ զը – նահատուելու, որովհետեւ արժէք մըն է որ սահմանուած է ապրելու եւ ի սիրուս աչխարհի ճանճանչող նշոյլ մը ալիշանեան « Հայ Հանճարին» :

Փալիալուկա, զրական գեղարուեստա – կան քննադատը մայրաքաղաքիս մեծա – զոյն երեկոյեան օրաթերթին, այս առի – թով կը զրէ. «Քանի մը օր առաջ առիթն ունեցայ հայկական երգ ու երաժշտու – թիւն լսելու. երգ մը որ իր լոյսն ու հը – մայքը կը առանայ աստուածաչունչեան հսկայէն, լեռան Արարատէն, ուր հանգ – չեցաւ Նոյի Տապանը :

Երգերուն մէջ հին աղնուականութեան մը վեհմութիւնը կար, որ դիւրաւ զուար – թութեան չառաջնորդեր : Միւս կողմէ մարտիրոս ու տարապիր ժողովուրդի մը պատմութիւնը թերեւս թոյլ չի տար որոշ «մոռացումներ», որոնք սովորական են մեր ներկայ մակերեսային ժամանակնե – րուն համար :

Այս մտածումներն ու անդրադարձու – թիւնները կրկին վերադարձան մեր մէջ՝ երբ Ժիրայր Օրապեանի ցուցադրած նը – կարները կը դիտէինք : Հայ, անառարա – կոյս, որ քառասուն տարիներէ ի վեր կ'ապրի Հռոմի մէջ, չիմանալով իտալական արուեստին հետ :

Անոր դիծերուն, ակնարկներուն, լոյ – սի եւ ստուերի խաղերուն մէջ կայ նէր – քին տառապանք մը, որ անվարժ աչք մը պիտի ուղէր տպաւորապաշտ չարքին մէջ դասաւորել :

Փորձառու անձ մը ընդհակառակն Օ – րալեանի ղէմքերուն մէջ կը զտնէ հեռա – ւոր յիչատակ մը հին տառապանքի, որ այլափոխուած է զերազոյն յոյսի, բայց մի քանի զուտ յոռետես արտայայտու – թիւններէ :

Այս բոլորը նչան մըն է թէ Օրալեանի արուեստը կը հմայէ հոգիները տեւական յուզումով, ինչպէս արդիւ եւ միտքերը խորչերուն մէջ կը մնան հայկական հե – ռաւոր երգերը, ուր կը փառաբանուի «յաւերժական Արարատի» անուչարոյր եւ վայրագ զեղեցկութիւնը » :

Գ. Պ.

ԹՈՒՐՔԵՐԸ ԿԸ ԳԱՂԹԵՆ

—o—

Պոլսոյ Թրքական Թերթերը կը դրեն թէ արեւելեան նահանգներուն մէջ մարդոց եւ անասուններուն անօթութիւնը վերջին ծայր աւելցած ըլլալով, այլեւս հան – դուրժողութիւն չէ մնացած : Զիւն ձմեռը ամբողջ սաստկութեամբ կը չարունակուի երկրում ղրկուած օժանդակութիւնը եւ սննդանիւթը հեռաւոր գիւղերն ու գիւ – ղաքաղաքները չեն կրնար հասնիլ, նկա – տելով որ ճամբաները փակ են եւ առա – քումը դժուար :

Վանի, Մուշի, Պիթլիսի, Էրզրումի շը – ջաններուն մէջ, ուր առատ անասուն պո – յութիւն ունի, զաղթը սկսած է : Այս շը – ջաններու գիւղացիները իրենց միջեւ հա – մաձայնելով՝ հօտերով միասին դէպի հա – րաւ կը զաղթեն :

Զաղթի կարաւանները, որոնք կ'ենթա – րկուի թէ կը բաղկանան 60·555 ոչխա – րէ եւ չորս հազար հոգիէ, առայժմ ան – ջատ խումբերով ճամբայ ելած, Տիգրիսի եւ Եփրատի հովիտները իջած են, ուր ձմեռը յարաբերաբար մեղմ է եւ արօտա – վայրեր կը գտնուին :

Բայց նկատելով որ յատկապէս ոչխար – ները շատ անօթի եւ վատառոյգ են, մեծ զոհ կուտան : Շահագրգռուողներու կար – ծիքին համաձայն, այդ վաթսուն հազար հոգինոց հօտը մինչեւ որ արօտավայր իջնէ, նուազագոյն 10 – 15 հազար զլուխ կորուստ պիտի ունենայ :

Այսօր արեւելքի մէջ ոչխարի մը գինը մինչեւ 7·5 ոսկի ինկած է : Մինչդեռ անց – եալ տարի 25 – 30 ոսկի էր :

Զոնկուլտաքէն եւս կը հաղորդեն թէ ա – նօթութեան պատճառով Արեւելքէն զաղ – թող Թուրքերը խումբ առ խումբ Զոն – կուլտաք հասնելով զործ կը փնտռեն :

ԱՆՕԹԻ ՊԻՏԻ ՄՆԱՆ, ԵԹԷ...

Թուրքիոյ երկրագործական զործավար Ճաւիտ Օրալ հետեւեալ յայտարարու – թիւնն ըրաւ.—

« Թուրքիա իր հացին ցորենը ապահո – վելու է վիճակի չէ : Վաղուան համար մտահոգ ենք : Մեր արտադրութիւնը եօ – թը միլիոն թոն է : Ասոր մէկ միլիոն եր – կու հարիւր հազար թոնը իրրեւ սերմնա – ցու կ'օգտագործուի : Մինչդեռ սպառու – մը ութ միլիոն թոն է : Նախ մեր հացի զաւը ձեռք առնելով պիտի լուծենք : Եթէ Ամերիկայէ ցորեն չկարենանք ներ – բածել դժնդակ դիրքի պիտի մատնուինք եւ անօթի պիտի մնանք :

Եօթը միլիոն 717 հազար հեկթար ար – մտիքի զաշտ ունինք: Անցեալ տարի մեր ձեռք բերած ցորենը եօթը միլիոն թոն է :

Հակառակ Թուրքիա չատ հաց ուտող երկիր մը ըլլալուն, միայն Փորթուկալ եւ Սպանիա այս թուանշաններուն տէր են : Մեր արտադրութեան զարկ տալու հա – մար հարկ է լաւ մշակել մեր հողերը, արուեստական աղբ զործածել, արդիա – կան զործիքներու տէր զառնալ » :

Գործավարը այնուհետեւ յայտնեց թէ 625 հազար հեկթար հողի վրայ ձեռք բերուած բամպակը մէկ միլիոն հակէ պե – րիվեր է, մեր ճարտարարուեստը հարիւր հազար թոն բամպակի կը կարօտի, մը – նացեալը կ'արտածուի :

Օրալ յայտնեց թէ Թուրքիոյ մէջ հինգ միլիոն քիլօ թէյ կ'արտադրուի : Վերջին տասը տարուան ընթացքին նարինջի ար – տադրութիւնը հարիւրին 33, լիմոնին հարիւրին 151 աւելցած է : Այս առթիւ Ահմէտ Օղուզ դիտել տուաւ թէ Իսրայէլ նարինջի արտածումէն 42 միլիոն տոլարի տարադրամ կ'ապահովէ :

Օրալ արուեստական աղբի վրայ ալ ծանրանալով յայտնեց թէ Թուրքիոյ մէջ իւրաքանչիւր հեկթարի հինգ քիլօ աղբ կը վիճակի :

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՆՈՐ ՕԴԱՏՈՐՄԻԶ ՄԸ ՀԱՍԱՒ ԱՏԱՆԱ.

Ամերիկեան Միւթը – Սէյպոլ ճէթ օ – դանաւերէ բաղկացած Ֆ–100 օդատոր – միզ մը Ամերիկայի իր խարխափէն մեկնե – լով Ինճիրլիքի օդակայանը իջաւ (Ատա – նայի չրջակայքը) :

Օդատորմիզը, որ կը զտնուի Գնդ. Ճէյմս Հերի հրամանատարութեան տակ, Ինճիրլիքի օդակայանին մէջ պիտի մնայ չորս ամիս :

(Շար.)

ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ՏԱՆ

Վիէննէն Պ. Խլոյեան 10 Ն. Ֆ. կը նը – ւիրէ Շաւարշ Միսաքեան սրահին : (Մտանալ «Ցառաջ»էն) :

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

ԿԱՊ. ԽԱՉԻ Պօմոնի մասնաճիւղը չը – նորհակալութեամբ ստացած է Պ. Արսէն Իսպիրեանէ 25 Ն. Ֆ. իր հօր ողբ. Յովհ. Իսպիրեանի հոգեհանգստեան առթիւ : Նոյնպէս տիկին Ե. Իսպիրեանէ 25, Զա – րուհի Փիլաճեանի մահուան առթիւ փո – խան ծաղկեպսակի :

Տէր եւ Տիկին Գ. Պաղտասարեան եւ որդին Երուան Ն. Ֆ. Ս. Ծննդեան առ – թիւ : Տիկին Վարդուհի Դաւիթեանէ 25, Ս. Ծննդեան առթիւ հիւանդներուն հա – մար : Մանուկներու օրուան առթիւ Տիկ. Օ. Միւղիքեանէ եւ փոքրիկն Աւետեանէ 10ական , Պ. Յովհ. Սարաֆեանէ 10 , Պօմոնի ղպրոցին ողբ– Արտաշէս Փափազ – եանի մահուան տխուր առիթով :

×

Սէն Ժերոմի Թաղ. Խորհուրդը չնոր – հակալութեամբ ստացած է փոխան ծաղ – կեպսակի հետեւեալ նուէրները ողբաց – եալ Տիկին Անիճա Արութեանի մահուան առթիւ : Պ. Ղազար Ղազարեան 20 Ն. Ֆ., իսկ Սարգիս Քէմմէճեան 10, Թաղիս եկե – ղեցւոյ , իսկ Տօնիկ Զալկըճեան 10, Թա – ղիս աղքատներուն :

Այս տխուր առիթով, Պ. Պ. Սարգիս եւ Տիգրան Ղազարեան քանական Ն. Ֆ. Փարիզի Հայ Մշակոյթի Տան, իսկ Սար – գիս Ղազարեան քան Ն. Ֆ. Հայաստան Թերթին, Պ. Կիրակոս Ղազարեան քան, Թաղիս Կապոյտ Խաչին :

×

ՄԱՐՍԷՑԼ.— Տէր եւ Տիկին Սիմոն Ա – տոյեան եւ եղբայրը, Տէր եւ Տիկին Մ – սակ Աւտոյեան Շնորհակալութիւն կը յայտնեն, Հ. Ց. Դ. Ընկերային կոմիտէ – ին, Հ. Ց. Դ. Հայաստան Ենթակոմիտէ – ին, Վասպուրականի Հայր. Միութեան , Վիէնի Վասպ. Հայր. Միութեան, Տարօ – նի Հայր. Միութեան, Հ. Մ. Ը. Մ.ին, Սէն Ժեռոմի եւ քաղաքի Կապոյտ Խաչին, Տէր Յոսէփով եւ Տէր Փանոսեան քահա – նայ հայրերուն, ղպրոց ղասին, Օր. Ա – լիս Շամիրեանի եւ բոլոր անոնց որոնք իրենց ներկայութեամբ , ծաղկեպսակ – ներով եւ փոխան ծաղկեպսակի նուիրա – տութիւններով, հեռուէն նամակներ – րով, հեռագիրներով, յարկեցին յիշա – տակը ՍԵՐԺԱՆ – ՎԱՐԴԱՆ ԱՒՏՈՑԵԱՆԻ վաղահաս մահուան, Գերմանիոյ Ամե – րիկեան բանակի մէջ արկածի հետեւան – քով :

Մահուան քառասունքին առթիւ փոխան հոգեհանգիստի իր ծնողքը կը նուիրէ :—

Փարիզի Մշակոյթի Տան 20 Ն. Ֆ. : (Մտանալ «Ցառաջ»էն) : Վասպուրականի Հայր. Միութեան 20, Մարսէյլի Նոր Սե – բաստիայի քան, Քաղաքի Կապոյտ Խաչին տասը, Սէն Ժեռոմի Կապ. Խաչին 10 :

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՕՐԸ

ԼԻՈՆԻ ՄԷՋ

Նախաճեռնութեամբ Կապ. Խաչի Լիոնի մասնաճիւղի :

28 Յունուար, կիրակի կէսօրէ ետք ժա – մը 3ին, Սքիւտիօ Քրէֆի սրահին մէջ , 24 Րիւ Տիւճօար :

Գեղարուեստական բաժին.— Խմբերգ, արտասանութիւն, ծաղիկներու պար, հայկական պարեր եւ մանկական անա – կնկալներ :

Պիտի ներկայացուի փոքրիկ թատերախ մը՝ « ԿԱՂԱՆԴ ՊԱՊԱՆ » :

Ինչվպէս ամէն տարի, այս տարի եւս կաղանդ Պապան իր նուէրները պիտի բաժնէ սրահին մէջ գտնուող բոլոր պզտ – իկներուն անխտիր :

Մուտքը ազատ է :

×

ՊՈՒՏՈՑԻ ՄԷՋ

Այս կիրակի կէսօրէ վերջ, ժամը ճիշդ 3·30ին, Առլաֆ Սօլֆերինօ սրահը, 235 Րիւ Մունէյրա :

Ճոխ յայտագիր :

«ԱՆԻՒՆ ԳԱՆՁԱՆԱԿԸ »

Մանկական թատերզուքիւն : 4 արար

(Ատրիճէ Տատրեան)

Խմբերգ, մեներգ, պար եւ արտասա – նութիւն :

Նուէրներու եւ մրգեղէններու բաշխում :

Մուտքը ազատ է :

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ Ս. ԽԱՉ ԵԿԵՂԵՑԻ

10 bis, Rue Thouin, PARIS

Այս կիրակի, ժամը 10·30ին, հանդստ – եան ճաշնաւոր պատարագ, Գրիգոր Եպս. Պահապանեանի հոգւոյն համար :

Պիտի պատարագէ եւ քարոզէ՝

ԳԵՐՊ. Կ. ԵՊԻՍԿ. ԱՄԱՏՈՒՆԻ :

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

ԿԱՊՈՑ ԽԱՉԻ ՕՐԸ

Ֆ. Կ. Խաչի օրը կը տօնուի Ապրիլ 1ին, կիրակի, կէսօրէ վերջ, Շիմիի սրահը :

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ

Վարչութեան ժողովը տեղի պիտի ու – նենայ երկուշաբթի, 29 Յունուար , ժա – մը 18·30ին, Մշակոյթի Տան Շաւարշ Մի – սաքեան սրահին մէջ : Կը խնդրուի ստի – պողաբար ներկայ ըլլալ : Կարեւոր օրա – կարգ :

Surprise Party

ՊԱՐԱՆՑԻԿ ԵՐԵԿՈՑԹ

Կազմակերպուած Հ. Ց. Դ. Նոր Սե – րունդի Ալֆորվիլի մասնաճիւղին կողմէ :

Այս կիրակի, ժամը 15էն մինչեւ 22 , Մշակոյթի Տան մէջ, 17 Րիւ Պլէօ :

Հաճելի մթնոլորտ, պար, պիւֆէ , ըն – տրուած սալեր (տիսք) :

ՀԱՅ ԹԱՏԵՐ· ԵՒ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԲԱՑԱՌԻԿ ԵՐԵԿՈՑԹ ՆԻՍԻ ՄԷՋ

Կիրակի, 4 Փետրուար, կէսօրէ ետք , ժամը 3ին, Սալ Արթիսթիք, 27 Պուլվ· Տիւպուշաժ, Նիս :

ԳՐԻԳՈՐ – ՎԱՀԱՆ

Կը ներկայացնէ իր հեղինակութիւնները, մասնակցութեամբ հայ բեմերու վաղեմի եւ տաղանդաւոր դերասան Յակոբ Լա – թիֆեանի եւ Նիսի արուեստասէրներու կազմի մը :

Կը ներկայացուին՝

ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ԿԱՆԹԵՂԸ

Գեղարուեստական բաժնին մէջ՝ ժողո – վրդական հարնածանօթ երգիչ

ՄԻՇԱ ԱԶՆԱՒՈՒՐ

Երգիծական բաժին՝ հայ աղջային բա – րերարութիւնները , Սաթիրական զաւեշ – երկու զանազան արարներով :

Մուտք երեք Ն. Ֆ. եւ վերապահուած պատուոյ բազկաթոռները :

Տոմսերը հայթայթել՝ Պառ տիւ Մոն – թել, 113 Ավընիւ Քալիֆորնիի, եւ նոյն օ – րը թատրոնի մուտքը :

Հ. Յ. Փ.

ԸՆԿԵՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

ՊԱՆԵԼՕ – ՔԱՇԱՆ.— Հ. Ց. Դ. «Ա – ծիւ» ենթակոմիտէի ընդհ. ժողովը այս Հինգշաբթի , ժամը 20·30ին, սովորական հաւաքատեղին : Օրակարգ՝ չարունակու – թիւն նախորդ ժողովի :

ՓԱՐԻԶ.— Հ. Ց. Դ. Շրջ. կոմիտէի ներկայացուցչական ժողով այս Շաբաթ, ժամը 20·30ին, Մշակոյթի Տան մէջ :

Օրակարգ.— Շրջ. ժողովի օրակարգի ֆինուրիւն :

ԼԻՈՆ.— Հ. Ց. Դ. Վարանդեան կոմի – տէն ժողովի կը հրաւիրէ բոլոր ընկերնե – րը, այս Ուրբաթ, ժամը 21ին, սովորա – կան հաւաքատեղին : Կարեւոր օրակարգ :

ԿՐՔՆՈՊԼԸ.— Հ. Ց. Դ. Եօթնեղբայր – եան կոմիտէն ընդհ. ժողովի կը հրաւիրէ Լանսէի, «Մուրատ» խումբի եւ Ռընաժի «Դէորդ Զաւուշ» խումբի բոլոր ընկեր – ները, այս Շաբաթ, ժամը 20·30ին, ղպրոցի սրահին մէջ : Կարեւոր օրա – կարգ :

ՓԱՐԻԶ.— Հ. Ց. Դ. «Փոթորիկ» խում – բի ժողովը, այս Հինգշաբթի, ժամը 21ին, սովորական հաւաքատեղին : Կարեւոր օրակարգ :

ՅՈՒՇԱՏԵՏՐ

Ֆ. Կ. Խաչի Պանեէօ Քաշանի մասնա – ճիւղի վարչութիւնը ընդհ. ժողովի կը հրաւիրէ իր բոլոր ընկերուհիները այս Շաբաթ, ժամը ճիշդ 21ին, ընկերուհի Ա. Փափազեանի բնակարանը, Րիւ Շառլ Մի – շել , թիւ 6, Պանեէօ : Կարեւոր օրա – կարգ : Կը խնդրուի ներկայ ըլլալ :

ՀԱՄԱ – ԽԱՐԲԵՐԴ. Հայր. Միութեան Վալանսի մասնաճիւղի ընդհ. անդամա – կան ժողովը տեղի կ'ունենայ այս Շա – բաթ, ժամը 21ին, սովորական հաւաքա – տեղին : Ներկայ կ'ըլլայ Կեդր. վարչու – թեան դիւանը : Ներկաներու թիւը մեծա – մասնութիւն պիտի նկատուի :

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Նախաճեռնութեամբ Կապոյտ Խաչի Ալֆորվիլի մասնաճիւղին :

Յունուար 27, Շաբաթ , ժամը 20·30ին Մեզոն Ալֆորի Սալ տէ Ֆէթիւ մէջ :

Առնուվիլի Նոր Սերունդի Կաւավարնոց Թատերախումբը կը ներկայացնէ՝

ԱՇԽԱՐՀԻ ԴԱՏԱՍՏԱՆԸ

ՀԱՅ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ

ՏԱՐԵԿԱՆ ՑԵՐԵԿՈՑԹ - ՊԱԼԱՀԱՆԴԻՄՈ

Յունուար 28, Կիրակի, ժամը 16–24

LES AMBASSADEURS, 3, Avenue Gabriel, Champs-Elysées

Կը մասնակցին երկու Յոչակաւոր Նուագախումբեր

PIERRE DIEUZEY et ses Capétiens — JAZZ NEW ORLEANS

PEPITO GOMEZ — TYPIQUE TANGOS

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՃՈՒԽ ԲԱԺԻՆ

Կը խնդրուի կանխաւ ապահովել տոմսերը եւ սեղանները հեռաձայնելով

Հայ Կարմիր Խաչի կեդրոնատեղին Էլիզէ 67 – 03

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ· — Վարձուած սեղանները գրաւուած պէտք է ըլլան ամէնէն ուշը ժամը 19·30ին : Հակառակ պարագայ մը պարահանդէսին կազմակերպիչ յանձ – նախումբը որեւէ պատասխանատուութիւն չի ստանձներ :

AU BEAU NOYER

A 50 mètres du Métro MARCEL SEMBAT

7 ETAGES D'EXPOSITION

D'AMEUBLEMENTS

CRÉDIT SANS FORMALITÉS

ՀԱՑԵՐԷՆ ԿԸ ԽՕՍԻՆՔ

185, BD. JEAN JAURÈS — 15, AV. ANDRÉ MORIZET — BOULOGNE — MOL. 33.33 et 31.33

JACQUES TORANIAN

Agent Immobilier

Assureur Conseil.

Ձեզի պիտի ընդունի ամէն օր իր գրասենեակը

RIVE GAUCHE IMMOBILIER

42, *Bld. Arago — Tél. : POR.* 03–94

կամ ձեզի կ'այցելէ ժամադրութեամբ ՓԱՎԻՅՈՆՆԵՐՈՒ, ՑԱՐԿԱԲԱԺԻՆ – ՆԵՐՈՒ, ՇԷՆՔԵՐՈՒ (fonds-փրոփրիէ – թէ) ՀՈՂԵՐՈՒ, ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՑԱՐ – ԿԱԲԱԺԻՆՆԵՐՈՒ, ԽԱՆՈՒԹՆԵՐՈՒ . ԱՌՈՒԾԱԽ ձեր բոլոր խնդիրներուն համար

Expertise Gratuite

Ձեր տրամադրութեան տակ է նաեւ բոլոր ապահովագրութեանց համար

Auto
Incendie
Dégâts des eaux
Vie

— PRIX ETUDIES —

Tous risques assurés

ԾՆՈՒՆԴԻ ԵՒ ՆՈՐ ՏԱՐԻՈՑ

ՈՒՐԱԽ ՕՐԵՐՈՒՆ ԵՒ ԱՄԲՈՂՋ ՏԱՐԻՆ

Եւրոպայի Մեծագոյն Արեւելեան Վաճառատունը

ՊԱՀԱՍՈՒՐԵԱՆ խանութ մը հայ – կեղոլին սեղանին վրայ ամէնէն հա – մով պատառը կը պակսի՝ մեծին ու պզտիկին համար : ՊԱՀԱՍՈՒՐԵԱՆ վաճառատան մէջ պիտի գտնէք ա – ւանդական ընդեղէններու եւ անու – շեղէններու ամէն տեսակը, անմրցե – լի գիներով :

Ապսպրանքի վրայ, ծրարի առա – քում Ֆրանսայի ամէն կողմ եւ ղէ – պի արտասահման՝ Պելժիա, Զուի – ցերիա, Անգլիա :

ՊԱՀԱՍՈՒՐԵԱՆ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ LYON

246, Rue Vendôme - Tél. MO 11-84
20, Rue Villeroy — MO 32-10
65, Rue Robert — LA 07-72

ԵՒ ԻՆՁԳԷՍ ՄԻՇՏ

Արմաւ, «պամիա», «եալանճի տոլ – մա», յունական «թուրլի», « պի – լէօ», տերեւ, թահին հելվա, «վա – նիլլ», չոքոլա, «նուագէթ» , «լո – գում», «սապըղ», պիստակ, Շիրակ օղի (41 – 45o), Իզմիրի չամիչ , «սուճուք», կեսարական «պաստըր – մա» : առաջնակարգ սուրճ, (fարա – վան եւ մոգա), համեմներ «մահ – լէպ», «սալէպ», ձիթապտուղ ,ձէթ, «քաշքաւալ» պուլկարական , ճեր – մակ պանիր ոչխարի կաթով : Ամէն կարգի պահածոներ, «քուսքուս» , հարիսա, սումագ, թարամա, լա – ֆերտա, բաֆլաւա, fատայիֆ, տե – բեւ եւայլն :

ՊԱՀԱՍՈՒՐԵԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆԸ

Ունի նաեւ մասվաճառատուն մը , որուն առաջնակարգ միսերը գոհա – ցում կուտան ամէնէն նրբաճաշակ – ներուն : Ոչխարի, հորթի եւ եղան միս (քաշուած միս, եւայլն) :

Imprimerie Spéciale du journal « Haratch »
32, Rue de Trévise, PARIS (9e)

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

Le PREMIER QUOTIDIEN ARMENIEN en EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction et Administration : 32, Rue de Trévise - PARIS-9e

Fondé en 1925
R. C. Seine 57 A 2731

Téléph. : PRO. 86 - 60
C. C. P. Paris 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա՝ Տար. 50 Ն. Ֆ. Վեցամսեայ՝ 27 Ն. Ֆ.
Արտասահման՝ Տար. 60 Ն. Ֆ. Հատը՝ 0.25 Ն. Ֆ.

ՈՒՐԲԱԹ
26
ՅՈՒՆՈՒԱՐ
VENDREDI
26 JANVIER
1962

38ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 9314 38e ANNÉE Fondateur SCHAVARCH MISSAKIAN ՆՈՐ ՇՐՋԱՆ, 18ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 5115

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԵԼԻՑԸ

Աւրդէն հինգ տարի է անցեր այն դժբեմ օրէն ի վեր, երբ այս անցաւոր աշխարհ – հին հրաժեշտ տուաւ Շաւարշ Միսաքեան :

Հի՞նգ տարի : Անհաւատալի՛ :

Ո՛րքան չուտ կը սահին տարիները :

Կարծես տակաւին երէկ էր, որ դէպի իր յաւիտենական հանգստարանը առաջ – նորդեցինք զինքը, ազգովին , արցունքը մեր աչքերուն :

Ա՛յնքան թարմ է իր յիշատակը մեր հոգիներուն մէջ :

Թարմ է միշտ եւ պիտի մնայ անթա – ռամ :

Չէ մեռած անիկա եւ կ՛ապրի մեր մէջ, ամէն օր, ամէն վայրկեան :

Իր հոգին կը սաւառնի մեր վերեւ : Իր աչքը կը հսկէ մեր վրայ, վերէն, ան – քթէթ, հետեւելով մեր ամէն մէկ քայ – լին, ամէն մէկ չարժումին :

Կ՛ապրի՛ միշտ Շաւարշ ու պիտի ապ – րի , քանի կենդանի է իր հոգեւոր զաւա – կը, Յառաջը, որուն վրայ ա՛յնքան գուր – գուրաց, որուն հանդէպ իր սէրը պաշտա – մունքի աստիճանին հասցուց եւ որուն նուիրեց իր աչքին լոյսն ու մտքին պո – հարները եւ որուն գոհեց իր ամբողջ կեանքը՝ կամովին, մեծ հաճոյքով, հո – գեկան անհուն գոհունակութեամբ :

Իր հոգին կը խայտայ ու կը հրճուի անդենականին մէջ, ամէն անգամ որ Յա – ռաջի նոր մէկ թիւը լոյս աշխարհ կու – գայ :

Ճակատագրական առաքելութիւն մըն էր վերապահուած իրեն երիտասարդ տա – րիքէն :

Կանուխէն բաժնուած զարթօսական գը – րասեղաններէն՝ ձեռք էր առած գրիչը , որ իր միակ զրամպլուխը պիտի կազմէր մինչեւ մահը :

Համիտեան բռնակալութեան օրերէն սկսեալ ապրած էր ընորհիւ իր գրիչին , հակառակ բոլոր կաշկանդումներուն :

Սահմանադրութեան չրջանի խարուսիկ ազատութիւնը ազատ թռիչք էր տուած իր յեղափոխական խոյանքներուն, պոլ – սէն մինչեւ Բարձր Հայք :

Հրաչքով ճողոպրած մեծ եղեռնէն ,բա – ցառիկ դեր մը պիտի վիճակուէր իրեն , բազմապատիկ զոհողութիւններով եւ աշ – խատանքով լեցնելու համար իր նահա – տակ ընկերներու ձգած բացը :

Զինադադարի յուսադրիչ օրերուն եւ Հայաստանի անկախութեան խանդավառ տարիներուն պիտի յաջորդէր հիասթա – փութիւնը :

Անգամ մը եւս տարաւէր պիտի դառ – նար Հայութիւնը, ապաստանելով օտար աստղերու տակ :

Այդ տժգոյն օրերուն նախախնամական դեր մը պիտի կատարէր Շաւարշ Միսաք – եան այս երկրին մէջ, որուն հիւրընկալ հողերուն վրայ կը համախմբուէին աչ – խարհի չորս ծագերէն փախստական հայ զաղթականները :

Իր դրիչին հիացող բարեսիրտ Հայու – մը նիւթական փոքրիկ օժանդակութիւնը բաւական պիտի չըլլար հիմնելու Յա – ռաջը, եթէ Շաւարշ չունենար աննկուն կամք եւ գոհողութեան ոգի, անձնուէր ընկերներ եւ համակիր ընթերցողներ :

Առաջին օրերէն իսկ Ֆրանսահայ զա – զաթի սիրուած թերթը դարձաւ Յառաջ :

Ու ահա՛ 37 տարիէ ի վեր անիկա անչեղ կը քալէ այն ճամբէն, զոր գծած է իր հիմնադիրը – խմբագրապետը, իրրեւ բան – բեր հայ ժողովուրդի հայրենասիրական մեծ կուսակցութեան, Հ. Յ. Դաշնակ – ցութեան զաղափարականին, իրրեւ ա – ռաջնորդ տարաւէր Հայութեան, իրրեւ արթուն պահակ Հայութեան նուիրական աւանդութեանց եւ զարաւոր մշակոյթին, իրրեւ ախոյեան ազգապահպանման եւ զեկավար՝ հայ նոր սերունդին :

ՀՐԱՆՏ–ՍԱՄՈՒԷԼ

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՖՐԱՆՍԱ

ՏԸ ԿՈԼ ՊԻՏԻ ԽՕՍԻ ՓԵՏՐՈՒԱՐ 3ԻՆ

ՆՈՐ ՌՈՒՄԲԵՐ ԿԸ ՊԱՅԹԻՆ

Հանրապետութեան նախագահը ձայն – պատկերասփիւռէն ճառ մը պիտի խօսի Փետրուար 3ին, յայտարարուեցաւ Նա – խարարաց Խորհուրդէն հոկ: Նոյն առ – թիւ հրատարակուած զեկոյցը կ՛ըսէ թէ ժողովը զբաղեցաւ Ալժերիոյ կացու – թեամբ : Որոշուեցաւ նաեւ թէ մինչեւ որ օրինագիծ մը ստորագրուի, անմիջական օժանդակութիւն մը պիտի տրուի փլաս – քիճ ռումբերու զոհերուն : Այս առընչու – թեամբ յատուկ վարկ մը բացուեցաւ :

Անդրադառնալով տը Կոլի ուղերձին , նախարար Թեռնուար յայտնեց թէ բացի արտակարգ դէպքէ մը ինչ որ տը Կոլ պի – տի ըսէ բացառիկ չէ : Նախագահը կ՛ուզէ պարզապէս չփոյթը պահել ժողովուրդին հետ :

Թեռնուար ճշդեց նաեւ թէ բռնութեան այս միջոցներով, Գաղտնի Բանակը կ՛ու – զէ փորձի ենթարկել հանրային կարծի – քը եւ մամուլը :

Կառավարութիւնը կարեւոր որոշում մը եւս տուաւ Գաղտնի Բանակի չուրջ : Գաղտնի Բանակի որեւէ հաղորդագրու – թեան կամ թռուցիկին արտաստպումը օ – րէնքի ենթակայ է : Եթէ թերթերը նկա – տի չառնեն այս որոշումը, պիտի գրաւ – ուին եւ անօրէնները պիտի հետապնդուին :

12 պայթումներ տեղի ունեցան առջի գիշեր հետեւեալ անձնաւորութեանց բը – նակարանները :— Միշէլ Տրուա (պատ – կերասփիւռի եւ Գրական Ֆիկարոյի խմ – բագիր), Տիկին Ֆրանսուազ Ժիրու (անօ – րէնուհի էֆսթրէսի) , Փրոֆ. Տիւվերժէ, Ալէն Սաւարի, Պէօվ – Մէոի, եւն.եւն.:

Իրաւաբանութեան համալսարանին մէջ ազգայնական ուսանողներ ոչնկոչեցին պատնէշներու տարեդարձը : Զախ եւ ալ ուսանողներ ցոյցեր կատարեցին , բայց ոստիկանութիւնը չմիջամտեց :

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԻՏԱԼԻԱ. լնկած օդանաւին խորհրդա – րոլութիւնը կը մեծնայ : Վերջին լուրերու համաձայն օդաչուն ալ պուլկար չէ այլ Ռուս :

ԹԵՀՐԱՆԻ մէջ միջադէպերը կը չա – րունակուին :

ՄՐՈՒՇՉԵԻի փեսան որ «Իզվեսթիայի» խմբագրապետն է Յունուար 30ին ճաշի հրաւիրուած է Քենըտիի կողմէ :

Ալժիրի մօտ, վիլլայի մը մէջ ոստիկա – նութիւնը ձեռք դրած է Գաղտնի Բանակի մեծաքանակ թղթածրարներու վրայ :

ՓՈՒՆԹԱ ՏԷԼ ԷՄԻ մէջ կը չարունակ – ուի ամերիկեան պետութեանց համագու – մարը : Մեծ չանք կը թափուի որ Քաս – թրօն չըլլայ այս ժողովին յաղթականը :

ԱՆՏԻԼ ԼՈՒԹ, նկարիչը մեռաւ առջի օր, զոհ ուղեղային արիւնահոսութեան : 75 տարեկան էր :

ԱՆԱՍՏԱՍ ՄԻԿՈՅԵԱՆ Մոսկուա հա – սաւ :

ԱՐԵՒԵԼԵԱՆ Գերմանիոյ խորհրդարա – նը քուէարկեց պինուորական ծառայու – թեան օրինագիծը : Շրջանը 18 ամիս պի – տի տեւէ :

ՔՈՆԿՈՑԷն զանազան լուրեր կը հաս – նին կիզենկայի մասին : Ըստ վերջին տե – ղեկութեանց արգելափակուած է Զօր. Մոպութուի վայրաչուներու կայանին մէջ :

ԱՆԳԼԻՈՑ վարչապետը Մաքմիլըն Ապ – րիլին նոր այցելութիւն մը պիտի տայ նախագահ Քենըտիի :

ՅԱՌԱՋԻ ԴՊՐՈՑԸ

Դէմ առ դէմ դրուած գրասեղաններու վրայ գլխահակ, խմբագրատան երկար սենեակին մէջ, երբեմն չէիք կրնար տեսնել զիրար,— կորսուած կ՛ըլլար ծու – խերու մէջ :

Շատ կը ծխէր : Մանաւանդ երբ կը ըս – կսէր գրել «Մեր Խօսքը» : Նախ կուտար լուրելը, առաջին սիւնակը վերապահելով խմբագրականին՝ կը յորդէր, կը տարած – ուէր, առաջին էջը կ՛ողողէր եւ յաճախ չորրորդ էջ կ՛անցնէր՝ էշելով, հրելով, հալածելով ծանուցումները : Թշնամի էր ծանուցումներու : Կը մեղքնար չորրորդ էջին վրայ, մխլում կը համարէր եւ եթէ ձեռքէն գար՝ այդ էջն ալ պիտի լեցնէր բաղաքական տեսութեամբ մը եւ գրական կտորով մը :— Մե՛ղք էջին, կ՛ըսէր մտա – վի : Այսպէս կը սպառէր Արամին համ – բերութիւնը :

— Ալ կը բաւէ՛, կը բաւէ՛, ուշ պիտի մնայ թերթը :

— Պուլվարի թերթ չէ Յառաջը, կը պատասխանէր բարկացած, ծանուցում պտըտցնող ծանօթ մարդոց կռնակի տախ – տակը չէ Յառաջի չորրորդ էջը :

Ամէն առաւօտ նոյն կռիւը : վարչու – թեան եւ «աշխարհակալին» միջեւ : Կ՛ու – բախանար՝ երբ «տոմսով» մը կը մաս – նակցէի իր «աշխարհակալութեան » , այն օրերուն՝ երբ մաս կը կազմէի խմբագրու – թեան : Յաճախ իմ կը գրէր «տոմսերն» ալ :

— Թերթը իր դիմագիծն ունի, պէտք է պահէ այդ դիմագիծը, կ՛ըսէր :

Յառաջի քոց առած գիրերուն տակ , տեսակ մը մեհեան էր այս թերթը, որու արքայական դուռը կը կազմէր խմբա – գրականը : Անդին, աջ անկիւնը՝ սատա – նային տունը, խարազանելու համար մե – զաւորները : Ցետոյ լուրերը, որոնց խմ – բագրութեան մէջ կը դնէր իր համակ – րանիը կամ ընդվզումը հանդէպ օրուան դէպքերուն :

Երբ գտաւ դիմագիծը, կը սկսէր գրել «Մեր Խօսքը» : Այն ատեն կը վաղէր Մովսէսի մարթենին, ստէպ կամ շարունա – կաբար : Կէս ժամ՝ գրոյցի մէջ կը մըտ – նէր··· Եհովային հետ :

Այդ գրոյցը՝ տաճարի մը սիւնին պէս սրբատաշ, ուղիղ, համաչափ, մարմարե – ղէն :

— « Հօ՛յ նար ··· » կ՛երգէր յանկարծ՝ երբ կ՛աւարտէր առաւօտեան այս աշխա – տանքը, մանաւանդ երբ բարձր կ՛ըլլար տրամադրութիւնը : Ընդհանրապէս « Ա – ւազ Ուրբաթ», ինչպէս կոչած են գինք տանը մէջ՝ իր իսկ վկայութեամբ, բաղա – ձայն էր նաեւ իրրեւ երգիչ :

Ի՞նչ փոյթ թէ բաղաձայն էր, օրեր ու – նէր՝ երբ Ուրբաթը կիրակի կ՛ըլլար , երախայի պէս կը խայտար, արեւը ամ – պին տակէն դուրս կ՛ելլար , ձայները շարական երգողի մը պէս կըճաղցրանար :

Արուեստագէտը ինքզինք կը մատնէր իր ճաշակով, ամէն առիթով :

Շատեր կը ճնճղատէին գինք խօսելով լեզուին համար ցոյց տուած իր խնամքին ու պաշտամունքին մասին : Հրապարակա – գիրը, կ՛ըսէր երիտասարդ գրող մը՝ որ հրապարակագիրի հովեր ունէր, պէտք չէ ոճ ու լեզուական զարդարանք դնէ իր արտայայտութեանց մէջ, — գաղափարը կը խեղդուի լեզուի կախարդանքին մէջ , մտածումը կը կորսնցնէ իր ուժը : Ժիտն ալ կը մտածէր այդպէս, գրականութեան մէջ անգամ ոճի թշնամի :

Եթէ անունները պիտի կոթնինք՝ տե – սակէտ պաշտպանելու համար, յիշենք Ռընանը, որ կը մտածէր ճիշդ հակառա – կը, եւ պատմական, բանասիրական, բը – նագանցական նիւթերն անգամ *հլիքսիրի* կը վերածէր՝ գինովցնելով ընթերցողը, պահելով իր խօսքին տպաւորութեան

ԱՄԷՆ ՓՈՍ...

...ԿՈՉ ՄԸՆ Է

Տարիները կուգան ու կ՛անցնին իրրեւ յիշատակ, եթէ նոր ուժեր չհասնին, ար – ծարծելու համար Անչէջ Բոցը :

Աւրդէն կխոսւեր է այն սերունդը որ իր երակները քամեց, որոչ հանդրուանի մը հասցնելու համար տարապիր բազմու – թիւնները :

Երէկ ժժգոյն եւ նկուն, այսօր բոցա – վառ եւ հասակագեղ, դո՛ւն, երիտասար – դութիւն Հայոց, աչքերդ ուղղէ՛ դէպի հայրենի Տուն :

Ոչ թէ անոր չորս պատերուն մէջ կըծ – կուելու, այլ նոր Հորիզոն փնտռելու եւ պարտուած դիրքերը գրաւելու համար :

«Եաթաղան»ը արեան դետեր հոսեցուց, բայց Հայկազեանց ոգին մնաց անեղծ, սաւառնելով Հորիզոնէ Հորիզոն :

Թոյլ մի՛ տաք, տղաք, որ օտարութեան դոլորչիները ծծեն այդ ոգին, ձեր եռեւ ձգելով միայն գարաւոր պատմութեան մը կմախքը :

Կարգը ձերն է, տղաք :

Շ.

Տակ : Ընդհակառակն, նոյն ծանրու – թեամբ գերման մատենագիրներ չկրցան կատարել նոյն նուաճումը ,չկրցան ստեղ – ծել դպրոց, չկրցան կազմել իրենց հա – սարակութիւնը, վասնզի նիւթերը կու – տային չոր, անհրապոյր, կապարի ծան – րութեամբ : Բոլորովին առարկայական , ինչպէս սովոր էին ըսել :

Շ. Միսաքեան իր լեզուին ու ոճին կա – խարդանքով կենդանութիւն կուտար գաղափարներուն, չըսելու համար անմա – հութիւն : Օշական, որ չէր սիրեր կարդալ օրուան թերթերը, կը փնտռէր Շաւարշի խմբագրականները՝ ոճի ու լեզուի գիւ – տեր որսալու համար : Այդ խմբագրա – կաններուն մէջ դուք չէիք գտներ *ֆրազէո – լոժի*, սնամէջ խօսքեր, աւելորդ բառեր , ըսելիք չունեցող յօդուածագիրներու էր – տինք : Եւ եթէ հարկ է քնորոշել ըստ բո – վանդակութեան, այդ խմբագրականները հրաւէրներ էին պայքարի՝ ընդդէմ կղե – րապետութեան, կեղծ հայրենասիրու – թեան, գրական խանութներու եւ Բանկա – լի իմաստուններուն :

Յառաջի առաջնորդողներուն ընդհա – նուր յատկանիշն էր իրապաշտութիւնը , — տեսակէտ պարգել առանց բառերը ծածմելու, պատրանքները չստեղծել ներ – կելով բառերը, մանաւանդ երիտասար – դացնել գաղափարները, տեսակէտները , ազգային ինքնապաշտպանութեան ճա – կատը :

Ահա *Յառաջի* դպրոցը :

Շ. ՆԱՐԴՈՒՆԻ

ՊԱՀ ՄԸ

Գրեց՝ Ն· ՍԱՐԱՖԵԱՆ

Տեսած եմ զինք իր խմբակրատան մէջ, սեղանին առջեւ : Ցաճախ քալած ենք մի– ասին : Կը խօսէր, թէեւ սակաւախօս էր : Հաւաքոյթներու մէջ տեսած եմ զինք, բե– մին վրայ : Վայելած եմ իր այցելութիւ – նը՝ երբ հիւանդ էի, մահուան մօտ, չատ տարիներ առաջ : Կապ մը կար, տեւական, հակառակ կեանքի վերիվայրումներուն : Բազմաթիւ յիշատակներ կան : Կը տեսնեմ զինք՝ դեռ երբ ան չկայ այլեւս :

Բայց յիշատակներ չէ որ կ'ուզեմ տալ հոս, ոչ ալ ուսումնասիրութիւն : Այլ յատկանշական պահ մը՝ մխայն, այն գոր ունեցայ Զատկի առաւօտ մը՝ զինք տես– նելով ժան Կուժօն փողոցին մէջ, մեր ե– կեղեցին առջեւ՝ ուր կ'երթար երբեմն՝ ծօնական օրերուն : Բազմութեան մէջ էր, կռնակը պատին տուած : Կը նայէր եկե – ղեցիին բաց դուռէն ներս՝ լուսաւորուած խորանին, աղօթողներուն եւ դուրս եկող– ներուն : Մինակ էր : Եւ կը նախընտրէր հաւանաբար ըլլալ մինակ : Բարեւ մը կու տար զինք բարեւողներուն, կը յանձնուէր իր մտածումներուն, բազմութեան մէջ , չատ տարիներ առաջ :

Դժուար էր գիտնալ թէ ի՞նչ կը մտա – ծէր : Բայց, որոշ էր իր ոգեւորութիւնը : Զգացումները դուրս տուող մարդ չէր , բայց գոհութիւն , խանդավառութիւն , ժպիտ, նոյնիսկ, յուզում կար դէմքին վրայ, որ խոժոռ էր առհասարակ : Վե – րացման մէջ էր :

Աղօթքներէն չէր որ կ'առնէր ի հարկ է իր այդ վերացումը : Չէր լսեր զանոնք : Երկնքին նայող մը չէր : Բայց վերացած էր եւ կը նայէր տարուած, յափշտակ – ուած, տեսիլ մը տեսնողի, եւ այդ տեսի– լին կարօտ նայողի մը պէս էր : Կարօտ – եալի մը նման :

Ինծի թուեցաւ թէ այն ինչ որ կը տես– նէր Շ· Միսաքեան՝ այդ առաւօտ, Հայոց ժողովուրդն էր, հոգ՝ փողոցին մէջ եւ խորանին առջեւ : Ան էր որ կը յուզէր եւ կ'ոգեւորէր զինք : Կը տեսնէր զայն՝ ին– կած օտարութեան մէջ, ցանուցիր, եւ կը տեսնէր զայն կապուած՝ իր զարաւոր ա– ւանդութիւններուն, խորանին, խորանէն եկող զօրութեան :

Եւ խանդավառութիւն կը տեսնէր : Կ'ո– գեւորուէր :

Ինծի թուեցաւ թէ զաղափարի զիջում մը կ'ը՛ն էր այդ պահուն եւ գոհութեամբ կը նայէր եկեղեցիին : Իր մէջ հայրենա – սէրը աւելի մեծ էր քան կուսակցականը : Սիրտը աւելի մեծ էր քան միտքը՝ երբ մեր ժողովուրդին կը նայէր :

Կը նայէր եւ կը տեսնէր հաւանաբար իր ժողովուրդը, տառապած, մաքառած, զարէ զար անցած՝ զոհեր տալով չարու– նակ, խաբուած , ընկրկած յաճախ, բայց բարձրացած միշտ, մեծութիւններ ու – ւած, հերոսներ, բանաստեղծներ, գրող – ներ տուած : Եւ կ'ալեկոծէին զինք իր խո– րերէն եկող զգացումներ ,հայրենի յիշա– տակներ ,մեռած ընկերներ :Եւ կ'ալեկոծէ– ին զինք չարականները,թէեւ չէր լսեր զա– նոնք : Մեր լեզուին պաշտամունքը ունէր : Եկած էր կարօտեալի մը պէս, լսելու համար այդ չարականները : Եւ կը լը – սէր ...

Ուրիշ պատի մը տակ էի նաեւ ես, ե– կեղեցիին կողմը, եւ մտածումներու մէջ էի նոյնպէս : Խռովիչ էր փողոցին մէջ խռնուած ժողովուրդը, ժխորը : Եւ չէի ուզեր տեսնել զայն՝ այդպէս : Թերու – թիւնները, ծուռ կողմերը աւելի դիւրու – թեամբ կը տեսնենք : Աւելի դիւրին է խնդալը եւ խնդացնելը : Դժուարը խորա– նալն է : Կ'ուզէի խորանալ, ղեղեցկու – թիւն մը տեսնել : Եւ կը տեսնէի : Ջով քո– վի զալու կարօտ մը՝ օտարութեան մէջ նետուած բեկորներու, խանդավառու – թիւն մը... Ցուզիչ էր : Կարեւորը սիրտ ցնցող այս ղեղեցկութիւնն էր :

Եւ ներսէն լսուող չարականները Զա – տիկներ կը յիշեցնէին, եւ հայր, մայր, տուն, այն բոլորը որ չկային այլեւս : Եւ զարերու խորէն եկող բիւրեղային հեղե– ղի պէս էին երգերը, կուպային ցաւերով, բայց վեհութեամբ նաեւ, արիութեամբ, ուրախութեամբ, սիրտ ցնցող ղեղեցկու – թեամբ : Եւ յարութեան պատգամը կ'ե – րեւար ղեղեցիկ : Կը մտածէի յոյսին՝ ո– րով մարդիկ տարած են տառապանքներ եւ միշտ վեր եկած : Մահուան առջեւ մարդոց ունեցած անձկութեան կը մտա – ծէի եւ անոր վրայ յաղթանակ մը տանե– լու պահանջին : Եւ այս բոլորը կը մղէին զիս՝ մեծութիւն մը տեսնելու :Եւ մեր ժո– ղովուրդին ճակատագիրը կ'երեւար խոր– հուրդ՝ իր մշտական յարութիւններով , եւ յարութեան կարօտով՝ օտարութեան մէջ :

Հաւատք չունէի զարերու խորէն եկած պատգամներուն վրայ : Հաւատք չունէի թէ խաղաղութիւն, եղբայրութիւն եւ եր– ջանկութիւն կ'ըլլայ աշխարհի վրայ : Բայց եւ այնպէս մեծութիւն մը կը տես– նէի, յարութեան այդ օրը : Մարդկութիւ– նը կը տեսնէի խորհուրդ՝ իր անծանօթ ճակատագրով եւ առաքելութիւնով : Կը տեսնէի խորհուրդը՝ անսահմանին, եւ կը տեսնէի թէ ինչպէս կրնայ մեծութիւն ըլ– լալ մարդկութիւնը : Պէտք էր ըլլալ զա – զափարապաշտ, ըլլալով հանդերձ նիւ – թապաշտ : Կարելի չէր միայն վերացա – կան ըլլալ եւ կամ միայն նիւթապաշտ : Պէտք էր ըլլալ թէ մէկը եւ թէ միւսը : Կատարելութիւն չկայ ի հարկէ աշխարհի վրայ, ոչ ոքի մէջ : Բայց ղեղեցկութիւն մը կարելի է տեսնել հոն՝ ուր միացած են իրապաշտն ու վերացական մարդը : Եւ մեծութիւն մը հոն՝ ուր նկարագիր մը կայ, թէեւ այլազան են մեծութիւնները :

Եւ մինչ կը նայէի այսպէս, կը տեսնէի յանկարծ թէ այդպէս էր Շ· Միսաքեան, ցանկալի մարդուն պէս : Իրապաշտ եւ զաղափարապաշտ էր : Վերացական էր : Կաղափար չունէր յաճախ թերթին վար – չական եւ տպարանական զործերուն մա– սին : Այս աշխարհէն չէր յաճախ, այլ հե– ռուն : Չէր զբաղեր առօրեայ թեթեւ խօ– սակցութիւններով : Ժուժկալ էր զո – վեսաներուն մէջ եւ զովեսաներու չէր սպասեր : Կշռած էր կարծէք այդ բոլորը եւ տխրութիւն մը կար իր մէջ : Եւ աւելի վեր կը նայէր : Եւ սակայն երբ զրիչը ձեռք կ'առնէր, գիտէր թէ որու համար կը զրէր : Կը զրէր ժողովուրդին, համա– ձայն անոր պահանջներուն եւ ըմբռնու – մին : Նկատի ունէր անոր կեանքի պայ – մանները, անոր տալիք լեզուն, մչակոյ – թը : Իրապաշտ էր : Եւ այդ ժողովուրդը իր իրականութիւնն էր : Վերացողներէն վեր կը զասէր զայն :

Եւ այս բոլորը կը բացատրուէին իր կուսակցութիւնով : Ցեղափոխական շար – ժումը ընկերվարական էր եւ ազգայնա – կան՝ նոյն ատեն : Կաղափարապաշտ էր եւ իրապաշտ : Կը յուսար եղբայրական աշխարհ մը եւ կ'ուզէր հայրենիքը ազա – տագրուած տեսնել, ժողովուրդին կեան– քը ապահով : Եւ կռուած էր այս բոլորին համար եւ զոհեր տուած : Ցնցած էր ժո – ղովուրդը, զայն իր թմրութենէն վեր բե– րած , արիութիւն տուած էր անոր : Ա – ւարէն վեր բերած էր զայն , յարութիւն տուած էր անոր : Այս էր իր ցանկութիւ– նը՝ զոնէ, եթէ դէպքերը այլ արդիւնք տուին, եւ ղեղեցկութիւն մըն էր հակա – ռակ այդ բոլորին, ինչպէս են եկող եւ անցնող բոլոր յեղափոխութիւնները՝ որ չեն կրնար զերծ մնալ սխալանքներէ եւ սահմանափակ մոլեռանդութիւններէ :

Եւ մեր յեղափոխական այդ չարժումը՝ ժողովուրդին պահանջներէն ծնած՝ կ'ար– տայայտէր ցեղին հիմնական նկարագի – րը : Իրապաշտ էր ցեղը, նիւթապաշտ նոյնիսկ , բայց վերացական՝ նաեւ : Կը սիրէր լոյսը, անոր կը ձգտէր եւ տուած էր զոհեր նաեւ՝ լոյսի ճամբուն վրայ , մարտիրոս մտաւորականներ եւ նահա – տակներ՝ երկու ճակատներուն վրայ , մարդկութեան համար եւ ազգին համար : Արարատէն ազգին եւ անդին ...

Շ· Միսաքեան, այսպէս, վերջին ներ – կայացուցիչներէն մէկն էր այդ յեղափո– խական չարժումին եւ ազգին եւ լոյսի ճամբէն քալողներէն մէկը, լաւագոյննե – րէն մէկը :

Կը նայէի :

Լրագիրներէն աւելի վաղանցիկ բան չկայ : Թիթեռներու պէս են : Բայց մեր մամուլը, ափիւռքի մէջ, կանչուած էր մեծ դեր մը կատարելու, դրականութե – նէն աւելի մեծ թերեւս : Գրականութիւնն է որ կը մնայ, ի հարկէ, ի վերջոյ, բայց

Ըլլալով ցիրուցան՝ ի սփիւռս աշ– խարհի, ստիպուած ենք ինքնա – պաշտպանութեան պայքար մղել ա– մէն ցամաքի եւ ամէն ճակատի վը– րայ :

Այդ պայքարը կը պահանջէ ամփո– փում եւ կազմակերպում բոլոր պի– տանի ուժերու : Կը պահանջէ վերա– նորոգում եւ աշխատանք :

Մեկուսանալ եւ կրաւորական դիրք բռնել՝ նոյնիսկ վնասակար է, որ– քան՛ չլատել ներքին ուժերը· կու – սակցական պատրուակներով :

Որեւէ քաղաքական եւ ընկերային դաւանանք ամէն բանէ առաջ պիտի ծառայէ տարագիր բազմութեանց ինքնապաշտպանութեան եւ բարօ – րութեան , այլապէս կը դառնայ չա– րիք :

« Նոր տարի, նոր բարի » , կ'ըսէ մեր իմաստուն ժողովուրդը :

Ամէն տարուան բարին կախում ու– նի մեր իմաստութենէն եւ աշխա – տանքէն :

Ուրեմն ամփոփուիլ եւ նոր բաներ մտածել , քօթափելով հնութեան եւ հովութեան փոշիները :

Շ·

պէտք է յիշել միշտ թէ լաւ քալող լրա – գիր մը ինչ մեծ նպաստ բերած է սփիւռ– քին, նոյնիսկ գրականութեան : Մեծ էր Շ· Միսաքեանի գերը եւ բերած նպաս – տը մեծ : Ժողովուրդ, ազգային չահեր , պայքար ձուլման դէմ, լեզու, մչակոյթ եւ գրականութիւն : Ամէ՛ն օր, ամէ՛ն օր ...

Իր աշխարհը իր թերթն էր : Անով կը ընէր : Անոր աշխատանքը իր փրկութիւնն էր : Կ'ապրէր անով՝ ինքզինք անոր տա – լով : Իր ինքնութիւնը կախում ունէր ան– կէ : Ի՞նչ պիտի ընէր առանց անոր :

Եւ այս բոլորին համաձայն՝ իր լեզուն, գրական , չքեղ , պայծառ, դիւրամատ – չելի, ջղուտ, զգայուն, բանաստեղծական մերթ եւ տխուր ու խռով մերթ՝ ժողո – վուրդին պէս :

Կը նայէի : Պիտի մօտենայի իրեն, ինչ– պէս միշտ : Բայց կ'ուզէի տեսնել զինք՝ պահ մը՝ հեռուէն :

Ունէր իր գիծը : Կեցած էր անխախտ : Եւ սակայն կը խորհէր հաւանաբար թէ պէտք չէ պէտք եղածէն աւելի հաւատք , վարկ տալ որեւէ գիծի, ոչ մէկ գիծի դի– րին ըլլալ :Եւ յաճախ կը զնահատէր իր գիծէն անդին եղածը, երբ վստահ ըլլար իր կամ ուրիշներու զնահատանքին վրայ : Այսպէս, ծայրայեղ զաղափարապաշտ մը էր, թէեւ միտքը աւելի տիրական էր իր մէջ : Տիրական՝ իրապաշտ գետնի վրայ : Այլապէս աւելի սիրտ էր քան թէ միտք : Ես կը տեսնէի այդ սիրտը, այդ առա – ւօտ : Կը բարախէր Ժան Կուժօն փողոցին մէջ :

Ունէր այլ գիծեր նաեւ՝ ի հարկէ : Բայց ինծի կը թուի թէ այդ օրը տեսած էի իր լաւագոյն մասը, մինչ յուզման եւ վերացման մէջ էի նաեւ ես :

Կը տեսնէի իրապաշտ զաղափարապաշ– տը, յեղափոխականը, հայրենասէրը, ըն– կերվարականը, հայ լեզուի մխիթիքը , սփիւռքի մէջ մեծ դեր մը կատարող խմ– բագիրը եւ կ'ըմբռնէի իր վայելած հա – մակրանքն ու յարգանքը, ակնածանքը , ժողովրդականութիւնը եւ լոյսը՝ որ կը կապէր զինք իրեն :

Կը նայէի :

Կեցած էր, ողնայարը չիտակ, խրոխտ, վեհ եւ համեստ նոյն ատեն : Զուարճանալ չէր զիտեր ոչ ալ զուարճացնել : Առա – քելութեամբ ըրդեղուած մէկն էր, կարծր բայց հեզ նաեւ՝ իր վրայ առած զրահին ետին, թրթռուն, թէեւ փակուած էր յա – ճախ ինքն իր մէջ, թերեւս ակամայ ... փակ՝ բայց համեստ նոյն ատեն : Կը նայէր, կարօտով կը նայէր, աւելի ժո – ղովուրդին կը նայէր քան թէ եկեղեցիին, բայց եւ այնպէս աչքերը սեւեռած էր խո– րանին, լոյսերուն կը նայէր, յարութեան լոյսերուն ...

Ջեմ մոռնար :

Տէր եւ Ծառայ

Գրեց՝ Կ· Մ· Ալէմշա

Սերաստիոյ Զիմառա գիւղին եկեղե – ցւոյ աւագ խորանին առջեւ, սիրտը աղօթքով՝ բուրվառը խունկով գոհ պատարագ կը մխան :

Ասոուածածին 1884 :

Ողջո՛յն եւ ողկոյզ ձօնելու օր :

Պատած է այդին, հասուն է խաղողը Օրհնեքի օր է Հայոց աչխարհի՝ խոր – հուրդ խորին արեւնունակ պատուին :

Այդ տարին, պապենական այդին հետ, Միսաքեան Երդիքին տակ՝ օրհնա – հայ մօր մը սէրն է պտղեր : Անհրեւոյթ բախտաբեր պարիկներ անմեղունակ ձի – ու լաց մը կ'օրօրեն· Եղիազար – Շաւարշ մանուկն է ծներ , ծնողքին նախասիրու – թեամբ՝ Շաւարշ :

Զիմառայէն ... Փարիզ :

Ծնունդէն մինչեւ մահը, զինքը ծնո – ժողովուրդին աղուհացի օրերը բաժ – նեց , տեսաւ անոր չարն ու բարին եւ ա – բոզջ կեանքը իր աննման ժողովուրդի բարիքին համար տքնեցաւ :

Գիրի եւ զաղափարականի մարդ :

Տէր եւ ծառայ հայ զիրին :

Գիրի մարդը առաքեալն էր Մեծա – սքանչին : Առաքեալներուն նման, ատ – զանի անունովն իսկ անչափելի է : Հ – լրագրութեան եւ հայ ժողովուրդի ազգ – չունչ Մատեանին մէջ, իր «Թուղթերը» կան ու կը մնան :

Կայ եւ իր Գործն ու Ոգին :

Այսօր, իր մահէն հինգ տարի առ նոյն յուզումը՝ նոյն բառերով :

Ամէն օր, երբ տպագրական մեքենայի բերնին տրուած կոյս Թուղթի դէզի Թերթ առ Թերթ, բոցատառ խորագիր ճակատին, օրուան «Ցառաջ»ը կը ծնի, ան – չուշտ ամէնօրեայ կենդանութիւնն այդ , իր զործին :

Ամէն օր, երբ հազարաւորներ իրենց Հայու օրը կը սկսին կամ կը փակ « Ցառաջ »ի ապազահական ընթերցու – մով, անշուշտ հանրային վկայութիւնն այդ , իր զործին կենդանութեան :

Բայց զործը կ'ապրի լրիւ, ինչպէս իր օրերուն, եթէ զործէն անբաժան, անո – հետ ու անոր մէջ ապրի եւ ամէն օր Մեծասքանչին առաքեալ իմաստասիրո – ղին :

Մեր լեզուին նուիրեալի իր կատարե – Թանկագին առաքելութեան համար է այսօր ամէն Հայ՝ անխտիր եւ անվարան Հայրենիքէն ներս ալ, երախտապարտ մարդուն եւ իր վաստակին :

Ի ծնէ զրագէտ, ուղեց հրապարակագի – մեռնիլ :

Փոխանակ մտաւորական ընտրանիի մի – միայն մատչելի հեղինակն ըլլալու, ու – զեց եւ կատարելագէս յաջողեցաւ՝ լրա – զրութեան առօրեայ, դիւրահասկրդ – լայն ճամբով, ամբողջ ժողովուրդի մ – լեզուական մչակը եւ առաջնորդը ըլլա

Այդ հիմնական նուիրումին արդիւնք է զարձեալ, եթէ իր անթիւ խմբագրա – կանները եւ լրագրական զրութիւննե – մեծարժէք էջեր են այսօր՝ իրենց անթի – բի լեզուով, պարզ ու պայծառ միտք – րով, յստակ չարադրութեամբ եւ առնա – կան կառուցումով :

Տէր եւ ծառայ հայ ժողովուրդի զա – զափարականին, լուսաւոր նուիրեալ մ – էր անոր զարաւոր եւ արդար զատ – կեանքը, հայ ժողովուրդին կեանքը ա – մէն բանէ վեր եւ առաջ :

Իր համոզումներուն եւ ազգօգուտ ա – սութիւններուն մէջ մնաց անկաչառ :

Գաղափարապաշտ իր խմաստուն խոհ – նուածքին հզօր կամքով, վերազաս Հա – յու հանդուրժող հոգիին բոլոր եռանդո – վը՝ բացառիկ օրինակը Թողուց ազգակի – ու զործօն հայրենասէրի :

Մէկ անձ՝ երկու բնութիւն : Տէր Ծառայ : Ի՜նչ վաւերական եւ բացառի – մեծութիւն Մարդու մը համար, որ կո – չումով ու զաղափարականով ստիպուա – էր մարդոց հետ եւ մարդոց մէջ ապրիլ :

Այսօր եւ միշտ՝ փա՛ռք ու պատիւ մե – Հայուն, որ զիտցաւ ճակատաբաց ապրի – եւ մեռնիլ, իր Հայու առաքելութե – տէր եւ ծառայ :

ԻՐ ԽՕՍՔԸ

Աթաիօս Լուսոյ

Ամէն Ամանոր չորչորուն հեռանկարներ կը բանայ, ի վերջոյ թաղուելու համար մշուշին մէջ, մռայլ ու մխիթնակ :

Մանաւանդ երբ արեւը կ'ողջունենք օտարութեան մէջ, արմատախիլ եւ ծը – փուն :

Արդէն մեր կռնակն ունինք աւելի քան երեսուն տարուան բեռ, եւ սարսուռ մը կը համակէ մեզ, երբ կը մտածենք մնացեալի մասին :

Մինչեւ ե՞րբ : Ի՞նչպէս : Ինչո՞ւ այս – պէս...

Իսկապէս լոյս կը ծագէր մեր գլխուն վերեւ, երբ կը լսէինք դարերէն բխած ե – րգանակը — « Աթաւօտ Լուսոյ » :

Հաւատքի եւ աշխատանքի արեւը ջեր – մութիւն կը ցանէր մեր բոլորտիքը :

Եւ կը քալէինք ու կը քալէինք, մեր հայեացքն ուղղած դէպի լեռները,— դէպ ի բարձունք եւ խորութիւն :

Այսօր մեր ծունկերը կը կթոտին լու – սացնուղ պողոտաներու գարնիթափին վը – րայ եւ մեր աչքերը կը յոգնին օրը իրի – կուն չեղած :

Եւ սակայն պիտի քալենք : Ճամբաները պիտի կարենք անընդհատ ու անվհատ, միշտ լոյսի ձեռին :

Ջահը պիտութեան, ստեղծագործու – թեան եւ ինքնապաշտպանութեան :

Մեր երգը պիտի ըլլայ միշտ — « Աթա – ւօտ Լուսոյ » : Բոլոր ճակատներուն վը – րայ : Բոլոր ցամաքներուն վրայ : Ծովուն դիմաց թէ լերան ստորոտը :

Որքան խուսափի «Արեգակն արդար », այնքան պիտի դառնանք ժիր : Ըմբոստ եւ տոկուն :

Նախ՝ մենք մեզի հանդէպ, որպէսզի կարենանք ուրիշին իրաւունք պահանջել ճակատագրաց :

Պիտի ունենանք պայծառ տեսակէտները եւ քաջութիւն՝ զանոնք պաշտպանելու :

Պիտի պիտանանք լրջալ, որպէսզի կարե – նանք մկկ ափէն միւսն անցնիլ մեր սե – փական ուժերով :

Պիտի պիտանանք երիտասարդացման ա – ւիշը ներարկել ցիրուցան բազմութեանց, որպէսզի կարենայ թօթափիլ հնութեան եւ թմրութեան փոշիները :

Ճամբան պիտի հարթենք յառաջապահ երիտասարդութեան մը համար, անոր ներշնչելով ազգային հպարտութիւն եւ հայրենասիրութիւն :

Պիտի կազմենք միացեալ ճակատ՝ յա – նուն տարագիր բազմութեանց ինքնա – պաշտպանութեան եւ ինքնուրոյն, բազ – մադրոյն մշակոյթի :

Ոչ ծոյլ եւ նկուն համակերպում, ոչ ալ քարացած սովորամոլութիւն :

Երիտասարդացում՝ նաեւ գրականու – թեան, դեղարուեստի, գիտութեան եւ հանրային գործունէութեան մէջ :

Թող Նոր Տարուան եւ բոլոր գալիք տարիներու ընթացքին մեր մաղթանքն ըլլայ միշտ « Աթաւօտ Լուսոյ », բայց եր – բեք «Աչխարհ Ամենայն » :

Երկկ՝ օրուան պահանջն էր երգելով մեռնիլ :

Այսօր՝ ապրիլ երգելով : Աշխատանքի եւ ստեղծագործութեան երգի մը վերա – ծելով մեր կեանքը :

Հայրենիքի կարօտն անդամ պէտք է պրկէ մեր ջիղերը, լաւագոյնս կազմա – կերպելու համար մեր ինքնապաշտպանու – թեան պայքարը, ցամաքէ ցամաք :

Լոյս, լո՛յս, մեր բոլոր ընդունակու – թեանց յարաճուն եւ ներդաշնակ զարգա – ցումով :

Ցարատեւ ճիգ ու պրպտում՝ մեր ան – ցած ճամբաներուն վրայ : Ինչպէս երկկ՝ դժուարին պայմաններու տակ :

Մշուշը ուշ – կանուխ պիտի փարատի մեր հորիզոնին վրայ, քանի կը մնանք հաւատարիմ՝ մեր արեւահամ երգերուն :

1956 Շ.

ԱՆՏԻՊ ԷՋԵՐ

ՅՈՒՇԵՐ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՕՐԵՐԷՆ

ԳՐԵՑ

ՇԱՒԱՐՇ ՄԻՈՒՖՖԵԱՆ

ՅՈՒԼԻՍ 31 (1941) Հայկական տպա – գրութեան մասին գրուած կարգ մը ճըշ – դումներու առթիւ, Իրազեկ հատուած մը կը յիշէ »Ող, Հայաստանեայց» ոտանա – ւորէն, որ տպուած է Մատրաս (Հնդ – կաստան), Շմաւոնեան տպարանին մէջ, հեղինակութեամբ Ցար. քահանայ Սո – դինեանի, 1790 – 91 : Ահա քանի մը տող այդ ոտանաւորէն .

— Եկայք որդեակք այսքան ցաւն է ինձ
բաւական,
Արիացէ՛ք գտչիք ժառանգ ձեր
սեպհական :
Հարցումն արէք ես ինձ ամէն բան
խրատական,
Թէ գինչ լինի՝ հնար որդւոյդ փրկութեան :
Ի ձէնչ բարձէք՝ բնութիւնը ձեր
գոռոզական,
Խոնարհեսչիք և տիճնեսչիք ուսումնական :
Ընթեռնելով ի հին գրուածըս
պատմական,
Գրչիք զպատճառ՝ ազգակորոյս մեր
աւերման :
Այդ՝ դուք բարձէք արձանց, յետոյ
ախտ ծուլութեան,
Արիացէք՝ մտէք հանդէսըս
ֆաջութեան :

Վերջին վեց տողերը որքան կը համա – պատասխանեն մեր այսօրուան իրակա – նութեան... Քանի՞ դրոց – բրոց պիտի դանէիք որ թօթափելով գոռոզութիւնը, խոնարհելով, ուսումնասիրելով, պատմութիւն կարդալով ուղիին դանել «զպատճառ ազ – գակորոյս մեր աւերման», եւ անոր հա – մեմատ ճամբայ իյնային վաղուան հա – մար : Աչխարհ կը դղրդի , բայց մեր մէջ նորէն եւ նորէն քարացած սպիտութիւն , կոչկոտ կապած նախապաշարումներ : Եւ յամառութիւն, յամառութիւն.— «այս – պէս չէ, այսպէս է, ե՛ս գիտեմ ...» :

Ցաճախ չդիտցող գիւղացին շատ աւելի խելացի է քան ամենազէտ քաղաքացին : Կարծեմ սքանչելի Մուրատն է ըսած, ա – րիթով մը,— լերան քիւրտը աւելի խելօք է քան, Հայոց կաթողիկոսը .

... Տէրտէրը իր ոտանաւորին չարու – նակութեան մէջ իբրեւ տիպար՝ կը յու – ցընէ Անգլիացիները — « Հայեցարուք՝ գիտութեամբ աղգացն անգլիական», որոնք «ի բնէ ձկնորսք էին», արթնցան եւ իմացան «ազատութեան քաղցրութիւնը » :

Ուստի ջանիւ՝ իմաստութեան հետեւեցայ,
Եւ գծուութիւն յինգեանց թողին
միանգամայն :

Բայց մխիթարն ատեն խոսիլ կը դատա – պարտէ այլասերումը, օտարամոլութիւ – նը :

Արդ տեսանեմ՝ յԱզգէս մերմէ որ
բազումք կան,
Զմերն թողեալ՝ յարին ի վարս
Այլասերման :
Ոմանք Պարսից գկերպն առեալ որպէս
բնական,
Ոմանք եղեն Հագարացւոց նըմանական :
Ոմանք վարուք Անգլիացւոց կերպ
փոխեցան,
Որք բընակեալք՝ կան ի կոչմունըս
Հնդկական :
Բազում յիշել՝ եւ այլք բազումք որ ի
ցրուեալք կան,
Ազգի ազգի կերպս փոխելով, գոն
այլազան : (Ծուշարար, էջ 26–30) :

Ո՞ւղ Ցարութիւն քահանայ. արթննա – յիր եւ տեսնէ՛ր պատկերը այն բազմու – թեանց որոնք «զմեզն թողեալ՝ յարին ի վարս այլասերման», 1920էն ի վեր, ի սփիւռս աչխարհի ...

1941, ՀՈԿՏԵՄԲԵՐ 7.— Ազգ. ժողո – վին առենադրութիւնները կը կարդայի երէկ, Նուպարեան Մատենադարանին մէջ.— 1878, Յուլիս – Սեպտեմբերի նիստերը, ուր կը յուզուի Հայկ. Հարցը, Պերլինի վեհաժողովին առթիւ : Ինչ ան – սպառ նիւթ, որուն չատեր մօտեցած են, բայց հարեւանցի : Այդ՝ օրերէն է որ կը սկսի մեր ժամանակակից ողբերգութիւ – նը :

Այս առթիւ, անդամ մը եւս փառք Ազգ. Սահմանադրութեան հիմնադիրնե – րուն, որոնք ոչ միայն օրէնքը մշակած, այլեւ վարչական – առենական բառերը, յատկարանութիւնները յօրինած են, դժբախտաբար մեծ մասով մոռցուած : Օրինակ, ո՞վ կը յիշէ թէ «բեսբիոն փը – բէլապլը»ին կ'ըսեն «կանխավճիռ » կամ «նախավճիռ» էթա – սիվիլին «ապդամա – մար» եւն. : 1919ին երբ Երեւան կը զբա – նուէի, «յղել» բառի մասին խօսք եղաւ : Խորհրդարանի առենապետը, Սիրական Տիգրանեան, հարցուց թէ ո՞ր բառին կը համապատասխանէ : Ռրվիեռէ : Եւ զար – մացաւ երբ յայտնեցի թէ բազմաթիւ խորհրդարանական բառեր կան Ազգ. Սահմանադրութեան եւ ժողովական ա – ռենադրութեանս մէջ : (Այն ատեն ես ոչ իսկ այդ առենադրութեանց երեսը ե – ւած էի) :

Առենադրութեանց մէջ գտայ «իմաս – տասիրել» բառը, որ անշուշտ կը նշանա – կէ «ուսումնասիրել» : Շահեկան նմոյշ մը հայերէնի.

Ատենապետը (Տ. Եուսուֆեան).—Պէկ – եան էֆէնտիի թղթերը հո՞ս չենէ յանձ – նաժողովին մէջ կարդացուին, այսօ՞ր չե – նէ ուրիշ օր :

Հապա օրինապահութիւնը : Պատրիար – քը (Ներսէս) իրրեւ նախագահ կ'ուզէ որ Թ. Պէնկեան խօսի եւ բեմ կը հրաւիրէ : Առենապետը դիտել կուտայ թէ խօսելու կարգը ուրիշինն է, եւ բեմէն կ'իջեցնէ Պէկեանը, յետոյ երբ ազատ կը տեսնէ բեմը, Պատրիարքը նորէն կը հրամայէ որ Պէկեան խօսի, մինչդեռ ժողովը կը վի – ճէր օրինական կէտի մը մասին : Երբ Ներսէս կը կրկնէ իր հրամանը, իրրեւ նախագահ, առենապետը տեղի կուտայ, բայց կ'արձանագրէ օրինազանցութիւնը իրրեւ բացառիկ պարագայ մանաւանդ որ Պատրիարքը կը սպառնար հրաժարիլ, խորապէս վրդովուած Թ. Պէկեանի փըս – փըսուքներէն :

Կացութիւնը կը պահանջէ զօրա – շարժ մտաւոր ուժերու : Համա – խմբում եւ աշխատանք : Այն գի – տակցութեամբ թէ ի վերջոյ աշ – խարհացրիւ ժողովուրդը եւ հայրե – նիքն են որ պիտի տուժեն, եթէ նոր ճրագներ չվառին : Եթէ անհետացո – դին աչքերը ետին մնան :

Շ.

ԻՐ ԽՕՍՔԸ

Հայրենիքը Պանդոկ Չէ

Ֆրանսականէն վերջ, այս անդամ ալ ամերիկեան թերթերն են որ չունդալից մանրամասնութիւններ կը հրատարակեն «յուսահաբ» հայրենադարձներու մասին.

Ձեռքի տակ ունինք դէզ մը կտրօններ, բայց պոհացանք միայն մէկը հրատարա – կելով, իրրեւ լուր :

Կարդացիք անշուշտ.— Քանի մը հա – րիւր Ամերիկահայեր, որոնք Հայաստան գացած էին, 1947 – 49ին, նամակ մը ուղղեր են նախագահ Այզընհաուըրի, խնդրելով որ արտօնութիւն տայ Հիւս. Ամերիկա վերադառնալու :

Թերթերը ուրիշ «զգայացունց» մանրա – մասնութիւններ ալ կը հրատարակեն, քաղելով մխիթնոյն աղբիւրէն :

— Երբ հայրենադարձները Պաթում հասան, անոնց ձեռքէն առին ամէն բան եւ ցցոտիներ հագցուցին, որովհետեւ Ռուսերը կ'ուզէին ապացուցանել Ամերի – կայի ագէատութիւնը : (Պոսթըն Փոստ) :

Ինչպէս դիտել կուտայինք Պ. Քրիս – թիան Փինոյի այցելութեան առթիւ ծա – գած միջադէպին ատեն, այս դէպքն ալ կ'ապացուցանէ մեր քաղաքական տես – ութիւնը :

Տարակոյս չկայ թէ եղածը բողոքի ցոյց մըն է այն բռնակալութեան դէմ որ կը կոչուի բոլշեւիկեան դիկտատուրա :

Տարիներ անցեր են եւ մարդիկ տակա – ւին չեն վարժուած նոր կարգուսարքին : Ու կարօտով կը յիշեն ամերիկեան ազա – տութիւնն ու ճոխութիւնը, ինչպէս միա – ները՝ Ֆրանսականը :

Չէ՞ին գիտեր թէ կ'երթան աչխարհ մը որ ի լինելութեան է : Երկիր մը ուր ազա – տութիւնն ալ «պլան»ով կը բաժնեն, եւ երկաթեայ բոունցքով : Բոլորովին տար – բեր կարգուսարք մը :

Կարելի՞ է արդարանալ, ըսելով թէ ա – ւետաբեր բաներ պատմեր էին եւ խաբ – ուեցան :

Բուն իրականութեան մասին ալ տեղե – կութիւններ չլսեցի՞ն կամ չկարդացի՞ն :

Եւ յետոյ, ինչո՞ւ կը սրտնչան անոնք որ անդամ էին համայնավար կուսակ – ցութեան, եւ ինքնակամ ճամբայ ելան, « սոցիալիզմ կառուցելու համար» :

Ներելի՞ է դասալիք ըլլալ, չդիմանալով կարծ մը նեղութեանց որոնք բուն իսկ ի – րենց դաւանանքէն կը բխին :

Այս ողբերգութեան հետեւանքով, ան – շուշտ յանգաւոր են նաեւ անոնք որ «պրոդրեսիւ» մունետիկի դեր կը կատա – րեն, Փարիզի կամ Նիւ Եորքի մէջ, պարտկելով բուն իրականութիւնը, ի հե – ճուկս Դաչնակցութեան :

Կուսակցապար ատելութեամբ մոլեգ – նած գրիչներ երբ կը մոլորեցնեն տարա – դիր բազմութիւնները, ոչ թէ հայրենիքին ծառայած, այլ անոր վարկին վնասած կ'ըլլան : Կը խախտեն հայրենասիրու – թիւնը :

Գալով Ամերիկա վերադառնալու բաղ – ձանքին, պարզապէս կ'արգահատինք :

Հայրենիքը իշխեա՞ն է, կամ պանդո՞կ է, որպէսզի ձեր սիրտը նեղացած տեսն հեռանաք, Ատլանտեանի այս կամ այն ա – փը վերադառնալու համար :

Ի՞նչ չուտ մոռցաք այն օրերը երբ «հէյպէ»ով եւ ջորիով ճամբայ կ'ելլէիք, Խարբերդէն, Մալաթիայէն կամ Տիգրա – նակերտէն, Ամերիկա գաղթելու համար :

Եւ երբ այդ օտար ափերը հասաք, եղ – ու մե՞ղր կը հոսէր ձեր ճամբուն վրայ :

Տոլա՞ր կը ժողվէիք փողոցներուն մէջ, թէ ձեր երիտասարդ արեւը վարձու կու – տայիք, համեստ ապրուստ մը ճարելու համար հսկայական գործարաններու ծու – խին եւ մուրին մէջ, ուրիչ հարիւր հազա – րաւոր բանուորներու հետ :

Գացեր էք ձեր կամքով եւ խելքով : Թերեւս ալ անկեղծ հայրենասիրու – թեամբ :

Ի՞նչ կը նշանակէ էս ճամբէն ետ մը – նալ, ութ – ինը տարի տոկալէ ետք :

Շ.

1956

ՀԻՆԳ ՏԱՐԻ ԵՏՔ

Գրեց՝ ՀԱՄԱՍՏԵՂ

Կեանքը իր տեւողութեան սահմանին մէջ յաւիտենականութիւն մըն է երբ՝ նըպատակով մը կը զոյուի : Ճաւիտենականը՝ հաւատքն է եւ նպատակը : Նպատակը նոյնն է ինչքան ալ ժամանակի արագ վազքին մէջ փլին այդ նպատակները եւ նորերը կազմուին : Հաւատքի մը համար նուիրեալները միշտ ալ չորուն պիծ մը կը ձգեն իրենց ետեւ, երբ կեանքն ու ժամանակը կը դադրի իրենց սրտի բաբախումներուն հետ :

Շաւարշ Միսաքեանի արժանաւոր ալքիկը Արփիկը լինի կը յիշեցնէ, որ արդէն լրացաւ իր հօր, Շաւարշին մահուան հինգամեակը : Կարեւոր է յիշատակել եւ ոգեկոչել մեր այն մեռելները, որոնք իրենց մահէն յետոյ, որպէս զոյութիւն, հայ ժողովուրդին մէջ կը պահեն իրենց ոգին եւ կը շարունակեն իրենց նպատակի հետապնդումը : Վերջին մի քանի տարիներու ընթացքին ունեցանք արժէքաւոր մեռելներ, որոնք իրենց կոպերուն տակ չէին ու արտմութիւնով խմաստուն Հայաստան – աշխարհ մը փակեցին : Շաւարշ Միսաքեան այդ արժէքներէն էր, որ իր նախնիքներէն ձգուած ժառանգութիւնը աւելի հարստացնելով յանձնեց հայ ժողովուրդին :

Մեռելները «կ'ապրին» որպէս հոգեկան կառոյց որովհետեւ առաւելապէս հոգեկանն է, որ խմաստաւորած է հայ ժողովուրդի կեանքը եւ կերտած է ազգային նկարագիրը, տուած է յարատեւ չարժում եւ պայքարելու կորով : Մեր մեռելներն են որ հայ ժողովուրդը զարթուցած են յաւիտենական :

Շաւարշը համակ հաւատք էր եւ ոգի եւ եկա ծէր դեր մը կատարելու որպէս խմբագիր, ազգային գործիչ եւ մանաւանդ մշակոյթի յամառ աշխատաւոր : Ես կը հաւատամ, որ որոշ մարդոց մէջ կան թափանձկոտութիւն, ինչպէս արուեստագէտներուն՝ ուր արտաքին աշխարհը իր լոյսը կը թափանձէ : Նոյն թափանձկոտութիւնն ունին «նուիրեալ»ները ո – րոնց մէջ հայ ժողովուրդը իր լոյսը կը ձգէ ու կը մղէ աշխատանքի ու զոհաբերութեան : Մի՛ութիւն չունին անոնք եւ արդէն այդ ցոլացումին մէջ կը տեսնուի

> Օրուան պահանջն է սերունդ մը որ միջավայրէն ստացած ուսման վրայ բարդէ, անոր հետ ներդաշնակէ իր հայրենի պատմութիւնն ու մշակոյթը, որպէսզի կարենայ պահել եւ զարգացնել ժառանգութիւնը :
>
> Երիտասարդութեան կոչումն է ջահեր վառել, եւ ոչ թէ կերոն բռնել :
>
> ×
>
> Վերջին խօսքը պիտի արտասանէ ան որ գիտէ դիմանալու գաղտնիքը :
>
> Շ.

տաճարի մը չէն ու ղեղեցիկ կերպարանքը : Շաւարշ Միսաքեան, մշակոյթի այդ յամառ աշխատաւորը, Թրքական բանտի ահաւոր ծեծի եւ խոշտանգումներու ներքեւ կրնար պոռալ կենդանիի մը պէս եւ սակայն չէր կրնար քար մը անդամ խախտել իր հոգիի հոյակապ տաճարէն :

Այսպէս կոչուած, Թրքական սահմանադրութեան կարճատեւ շրջանին հրաշքի մը պէս յայտնուեցաւ պայքարող ու իր ճակատը արեւին բռնած սերունդ մը որ տուաւ Թափ՝ մեր ազգային վերելքին — մեր ղրականութեան, մեր մշակոյթին ու մեր լեզուին :

Շաւարշ այն անդաստանին մէջ էր :

Այն շրջանին էր որ «բարիէն» ու «օդտակարէն» անկախ առանձինն Թափ ու զոյն առաւ ազգայինը, դեղեցիկն ու գեղարուեստականը, դեղեցկացաւ մեր լեզուն եւ ստացաւ ցեղային ինքնուրոյն նկարագիրը : Շաւարշի լեզուն էր այդ ուր ճոխ էին հայկական հին մանրանկարներէ – րու խաս գոյները : Ան նոյնպէս չատ կարեւոր դեր կատարեց, Ֆրանսահայ երիտասարդ գրողներու սերունդ մը «Ճառաչ» ին շուրջ հաւաքելով : Անոնք, որոնք որբացած, անցած էին անապատներէն, տառապանքներէն մանաւանդ, որ ըսելիքներ ունէին :

Երբեք պիտի չմոռնամ անոր ծանր ու մտահոգ դէմքը, երբ յաճախ գրոյցի կը նստէին Փարիզի սրճարանի մը մէկ անկիւնը : Հաւատքի չափ ամուր աւանդութիւն մը կար անոր բառերու չունչին մէջ ու կը տեսնէի, կը զգայի մեզմէ առաջ ապրող սերունդի ոգեկան ամրութիւնը :

Մատենաշար»ի հրատարակիչ եւ այժմ Բիւրոյի օգնական քարտուղար էր : Գէ – րասանցապէս գործի մարդ :

Կարելի է ասել, Գեղամն ու Շաւարշը Պոլսահայ առաջին երիտասարդ մտաւորականներն էին, որոնց հանդիպում էի եւ չատ նպաստաւոր տպաւորութիւն կրեցի : Մի քիչ յիշեցնում էին ռուս երիտասարդ ինտելիգենտներին. սրտաբոց եւ մտերիմ անմիջականութիւն :

Ուշադրութեամբ լսեցին եւ իմ ծրագիրները. ուզում էի դրականութեամբ զբաղուել Պոլսում, ուսուցիչ լինել, մանկավարժական պարբերաթերթ հրատարակել : Հաւանութիւն տուին : Այն ժամանակ չմտածեցի, բայց վերջը հասկացայ, որ ձեռք էին առնում ինձ. ինչքա՜ն միամիտ «դրսեցի» պէտք է լինէի, որ այդպիսի ցնորական մտածումներ ունենայի :

Այնուհետեւ Շաւարշի հետ երկար խօսելու առիթ ունեցայ մի քանի չաբաթ վերջը :

Պոլսական ծրագիրներից ձեռք էի քաշել : Հրաժարուել էի եւ Իզմիրից, ուր ընկերները հրաւիրում էին ազգային վարժարանի եւ «Աչխատանք» Թերթի խմբագրի պաշտօնի : Ռուստոմի հեռագրի վրայ պատրաստուում էի մեկնելու կարին : Երեւի «երկրի դործիչի» հանգամանքով՝ Սկիւտարի ընկերները հրաւիրեցին ինձ դասախօսութիւն տալու Բաֆֆիի լսարանում :

Դասախօսութիւնը ուշ վերջացաւ : Բաւական ինձ հետ եկած մի քանի ընկերների հետ պնդեցինք պիչերելու Շաւարշենց տանը : Շաւարշի ծնողները սիրալիր ընդունելութիւն ցոյց տուին մեզ, հիւրասիրեցին, եւ ինչպէ՞ս : 8 հոգի պառկեցին յատակի վրայ փռուած անկողիններում : Մինչեւ լոյս չքնեցինք, եւ կարելի՞ էր քնել, երբ այնքան հրատապ հարցեր քննում էին երիտասարդութեան մտքերը :

Առաջին տպաւորութիւնս Շաւարշից — խոր ակօսներ փորած էին իր դէմքին վրայ ուր մեզմ տխրութեան մը քօղին տակ կը տեսնուէր խրոխտ Հայը, վեհանձն կուսակցականը եւ բարձր մտաւորականը : Այդտեղ կը ցոլար նաեւ կորովի նկարագիր մը ու երբեմն՝ վայրկենաբար կը պոռթկար զօրեղ եւ ազդու խառնուածք մը :

Իր ամբողջ յոյզերը, յոյսերը եւ համոզմունքները — խանդավառ եւ ջերմեռանդ — ամփոփուած են իր գործին մէջ ուր կը տեսնուին մարդը եւ Հայը : Աշխարհը եւ մարդկութիւնը կը տեսնէր իր խմբագրի աչքով եւ իր տեսածը կը վերածէր ազդազով արտադրութեան մը ուր բարեխառն լաւատեսութեամբ, ու երբեմն խստօրէն քննադատելով, կը ջանար զարգացնել այն ինչ որ ազնիւ էր իր ժողովուրդին մէջ :

Միաժամանակ սակայն՝ իր համբերութիւնն ալ չափ ունէր : Տխմարները կ'արհամարհէր եւ խաչադողները կ'ատէր : Աւոր հետ մէկտեղ, երբ պէտք ըլլար՝ անձնազոհ համակերպութեամբ կը պատրաստէր ինքզինքը որ անհանդուրժելին հանդուրժէր :

Ուրիշներու թեթեւաբանութիւնները իր ուշադրութիւնը չէին ցրուեր : Իր ամբողջ ջանքը կեդրոնացուցած էր թերթին վրայ որ իր յարատեւ հետաքրքրութեան առարկան էր : Ժամանակ չունէր ընկերական հաւաքոյթներու մասնակցելու, եւ կը խուսափէր խնջոյքներէ : Բայց եւ այնպէս, ընթրիքը մօտէն ճանչնալով՝ կը յայտնուէր իր դիւրահաղորդ բնաւորութիւնը : Նուրբ սրամտութիւն ունէր եւ երբեմն թեթեւ ժպիտ մը կ'անցնէր իր դէմքին վրայ : Եթէ համակրելի շրջանակի մէջ դտնուէր՝ հաճելի եւ հետաքրքրական խօսակից էր : Այսուհանդերձ՝ լռակեաց ըլլալու չափ սակաւախօս էր : Իր ներքնաչխարհը ունէր : Գլուխը ծռած, իր անբաժան ծխիկը շրթունքին, կը գրէր ու կը գրէր :

Իր ճիւն եւ արագ միտքը չարունակ կ'աշխատէր, ու թէեւ երբեմն վերացական խոկումներով կը տարուէր, այնուհանդերձ՝ միշտ գործնական միջոցներով գործնական նպատակներ կը հետապնդէր :

Իր բարեկամները — ու նոյնիսկ իր հակառակորդները — ճանչցած էին իր ազնուութիւնը դէմքեր, դէպքեր, զարգացումներ ու սկզբունքներ վերլուծելու եւ աներկիւղ՝ դանոնք ներկայացնելու իր

ԹՄԲԱԳՐԻ ՄԸ ՊԱՏԳԵՐԸ

Գրեց՝ ԵՆՈՎՔ ԼԱԶԻՆԵԱՆ

Հայ լրագրութեան վերջին յիսուն տարուան պատմութիւնը անկասկած պիտի ըլլար եթէ անոր մէջ կարեւոր տեղ մը վերապահուած չըլլար Շաւարշ Միսաքեանի :

Այսօր, ժամանակակից ըլլալով իրեն, ի հարկէ դեռ վաղահաս է ճշդրիտ դատաստանով գնահատելու համար այս մեծ — մեծ՝ միջազգային առումով — խըմբագրապետը, արժանիքը եւ վաստակը : Այնուհանդերձ՝ այստեղ կարելի է վրձինի քանի մը լայն եւ արագ հարուածներով — եւ պզտիկ պատառի վրայ — կենդանագրի մը ուրուագիծը տալ այս բացառիկ հայ խմբագրին որ յատուկ դոյն, արժանաւորութիւն եւ խմաստ տուաւ հայ լրագրութեան :

×

Իր գործը իր կեանքն էր եւ իր կեանքը, յամառ անձնուիրութեամբ, չռայլած էր իր գործին : Եւ այս գործը նուիրեց իր ազգին :

Իր ամբողջ կեանքը անցուց աշխատանքով... քունն եւ տաժանելի, անդուլ եւ անխոնջ, վիտակից եւ անաղմուկ : Ոչ միայն ինք ուղորդութիւն՝ այլև ախտ դարձած էր այդ տքնաջան աշխատանքը. այն աստիճան որ ինքզինքը համարեա զրկած էր կեանքի տարրական հաճոյքներէն ... ընտանիք, առողջութիւն, անունդ եւ քուն երկրորդական կարեւորութիւն ունէին իրեն համար : Բայց Թերեւս այդ իսկ պատճառով աւելի սուր էր իր գիտակցութիւնը եւ գնահատումը կեանքի հիմնական արժէքներուն հանդէպ : Արժէր տեսնել թէ զազափարականի տէր մարդը ինչպէս կրնայ ինքզինքը զրկել կեանքի վայելքներէն՝ բոլորանուէր ծառայելու համար իր նպատակին :

Մինչեւ իր վերջին օրը — վերջին ժամը — պահեց իր երիտասարդական եռանդը եւ անխախտ հաւատքը : Տարիներու բեռին տակ երբեք չկքեցաւ իր ուղեղը, ու թէեւ մաշած էին իր մատները՝ բայց իր գրիչը մնաց միշտ զալար :

Իր վարձատրութիւնը իր աշխատանքն էր : Բաւ էր իրեն ատիկա : Բայց իր ժողովուրդին վիշտը եւ ցաւը, անոր ճակատագրին մրրկայոյզ հովերը, լայն եւ

Շաւարշին Հետ

Գրեց՝ ՍԻՄՈՆ ՎՐԱՑԵԱՆ

Շաւարշի հետ ես ծանօթացայ կէս դար առաջ, 1910 թուի ամառը :

Նոր էի հասել Պոլիս եւ անմիջապէս այցելեցի «Ազատամարտ»ի խմբագրատունը : Դրան առջեւ հանդիպեցի մի ուշադրաւ դէմքարկով չատ երիտասարդի, որ դուրս եկաւ «Ազատամարտ»ի օգնականներից խմբագիրներից : Ծանօթացանք :

Սանդուխի մօտ, աջ կողմի սենեակի դուռը լայն բաց էր, եւ ներսը թղթածրարներով եւ տոմարներով բեռնաւորը – ուած սեղանի դլխին նստած էր Բուդդայի աշակերտի խստակրօն տեսքով մի երիտասարդ՝ աչքին ակնոց եւ թիթեռնիկ փողկապով :

— Շաւարշն է, ծանօթացնեմ ձեղ, ա – սաց Գեղամը :

Մանք ներս :

— Շաւա՛րշ, պոռաց Գեղամը, ծանօթացիր, ընկերը Ռուսաստանից է գալիս :

Երիտասարդը բարձրացրեց գլուխը առջեւի թղթերից : Դէմքին երեւաց ժպիտի պէս մի բան եւ ձեռքով ցոյց տուեց կողքի աթոռը :

Վռամեան չկար : Գեղամը առաջարկեց իջնել սուրճ առնելու սրահում, ուր սկսել էին հաւաքուել մարդիկ :

Ի՞նչ խօսեցինք սրահում, որ սպանէք, չեմ յիշում :

Գեղամն ու Շաւարշը հետաքրքրւում են ղրական երեւոյթներով Ռուսաստանում եւ ռուս նոր ղրողներով, որոնցից մի քանիսին հետ ես ծանօթ էի :

Շաւարշի մասին իմացայ, որ՝ աշխատակից էր «Ազատամարտ»ի, «Ազդակ չհօսկան մարդու յօդս ցնդեց : Ո՛չ միայն խօսկան էր, այլեւ ինքնատիպ :

Ես դասախօսութեանս մէջ արծարծեր էի մի չարք հարցեր՝ մտաւորական երիտասարդութեան դերը հայ կեանքում, գաւառի եւ Պոլսի փոխյարաբերութիւնը, «ղէպի՛ գաւառ» կարգախօսը եւայլն :

Ժամանակի ոդին էր. գաւառում երիտասարդութիւնը ձգտում էր դէպի Պոլիս ուսանելու կամ այլ նպատակով : Ես որ ինքս էլ եկել էի Պոլսում հաստատուելու մտաղրութեամբ, այժմ պաշտպանում էի «դէպի գաւառ» միտքը — աղուէսը խաղողին չէր հասնում, ասում էր խակ է...

Ինձ զարմացրեց. բոլոր ներկաների մէջ ամէնից «գաւառասէրը» Թունդ Պոլսեցի Շաւարշն էր : Մի քիչ ռոմանտիկ ձեւով, դրեթէ նոյն խօսքերով, նա պաշտպանում էր այն տեսակէտը, որ ժամանակին Ներսէս Պատրիարք վարժապետանն էր քարոզում : Վերջը իմացայ, որ իմ հրաժարականից յետոյ Իզմիրի ընկերները Շաւարշին էին առաջարկել «Աչխատանք»ի խմբագրութիւնը, Շաւարշը մերժել էր ասելով, թէ «եթէ ես գաւառ երթամ, Հայաստան կ'երթամ» :

Երբ մի տարի վերջը ես տեխպուած եւ ղայ թողնել Կարինը եւ «Ճառաչ»ի համար նոր խմբագրի հարց ծագեց, ես խօսեցի Ռուստոմին Շաւարշի մասին :

— Միսաքեանը Պոլսեցի է, չի դայ, պատասխանեց Ռուստոմը, բայց վատ – ձենք : Եւ Կարինի մեր երիտասարդ ընկերների ուրախութիւնը եղաւ անսահման, երբ Շաւարշը ընդունեց հրաւէրը : Եւ իսկապէս ծայրայեղ «գաւառասէր» եւ ուսանելու Պոլիս մարդու տպաւորութիւն կրեցի : Մի քիչ յիշեցնում էին ռուս երիտասարդ ինտելիգենտներին. սրտաբոց եւ մտերիմ անմիջականութիւն :

Ուշադրութեամբ լսեցին եւ իմ ծրագիրները. ուզում էի դրականութեամբ զբաղուել Պոլսում, ուսուցիչ լինել, մանկավարժական պարբերաթերթ հրատարակել : Հաւանութիւն տուին : Այն ժամանակ չմտածեցի, բայց վերջը հասկացայ, որ ձեռք էին առնում ինձ. ինչքա՜ն միամիտ «դրսեցի» պէտք է լինէի, որ այդպիսի ցնորական մտածումներ ունենայի :

Այնուհետեւ Շաւարշի հետ երկար խօսելու առիթ ունեցայ մի քանի չաբաթ վերջը :

Պոլսական ծրագիրներից ձեռք էի քաշել : Հրաժարուել էի եւ Իզմիրից, ուր ընկերները հրաւիրում էին ազգային վարժարանի եւ «Աչխատանք» Թերթի խմբագրի պաշտօնի : Ռուստոմի հեռագրի վրայ պատրաստուում էի մեկնելու կարին : Երեւի «երկրի դործիչի» հանգամանքով՝ Սկիւտարի ընկերները հրաւիրեցին ինձ դասախօսութիւն տալու Բաֆֆիի լսարանում :

Դասախօսութիւնը ուշ վերջացաւ : Բաւական ինձ հետ եկած մի քանի ընկերների հետ պնդեցինք պիչերելու Շաւարշենց տանը : Շաւարշի ծնողները սիրալիր ընդունելութիւն ցոյց տուին մեզ, հիւրասիրեցին, եւ ինչպէ՞ս : 8 հոգի պառկեցին յատակի վրայ փռուած անկողիններում : Մինչեւ լոյս չքնեցինք, եւ կարելի՞ էր քնել, երբ այնքան հրատապ հարցեր քննում էին երիտասարդութեան մտքերը :

Առաջին տպաւորութիւնս Շաւարշից — բայց չանացի չարունակել նրա ուղիով առանձին ուշադրութիւն դարձնելով պատանական կեանքին եւ Թերթի հետ կապելով գաւառի մտաւորական ուժերը : Շաւարշը անցնելով «Ճառաչ»ի ղլուխը հիմնովին փոխեց նրա ձեւն ու բովանդակութիւնը, պահելով ,անչուշտ, զարդարները ու ոդին :

« Ճառաչ »ը արտաքինով զարձաւ աւելի ներկայանալի : Ճօդուածները՝ կարճ եւ աւելի յղկուած : Մմբագրականները՝ ապագայ Շ.ի նախատիպը : Լեզուն՝ մատուցը, ոճը՝ կարուկ : Սովորական անձնաւորութիւնները, պահելով ,անչուշտ, զարդարները ու ոդին :

Կարինի երիտասարդութեան շրջանում Շաւարշը չերմ ընդունելութիւն զտաւ : Իր անհատականութեամբ ազդեց մի քանի տարիների վրայ՝ ինքն էլ ազդուեց մի քանիներից, գաւառացաւ, աւելի հայացաւ : Կարինից զրած իր նամակներում կարծիք էր յայտնում, մասնաւորապէս, երիտասարդութեան մասին :

Կարինում Շաւարշը մեզ տարի եւ վերադարձաւ Պոլիս : Զգիտեմ՝ Կարինը ցո՞ւրտն էր պատճառ, թէ ուրիշ բան, բայց, նամակներին նայելով, հետացաւ : Պէտք է ասել, որ կարնեցիները էլ նրան սիրել էին եւ նոյնպէս բաժան ուզեցին ցաւով : Ես ուրախութեամբ պիտի վերադառնայի նրա տեղը, եթէ Ամերիկայի ընկերները թոյլ տային : Կարինի առնամանիքը հաճելի էր իմ հիւանդային բնաւորեան :

Երբ 1914ի ամառը ես հանդիպեցի Շաւարշին Պոլսում, նա աշխատում էր «Ազատամարտ»ի մէջ եւ արդէն հասուն տղամարդ էր : Կարինի մասին խօսում էր սիրով եւ կարօտով :

Ես առաջարկեցի նրա դործիչ – խմբագրի աշխատանք Ամերիկայում : Կարուց կերպով մերժեց՝ չէր կարող, (թէ՞ չուզում) թողնել Պոլիսը : Կարող էր, եթէ կամենար, կարին մեկնող պատգամաւոր

ԱՌԱՋԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՍ ԻՐԵՆ ՀԵՏ

—o—

Գրեց՝ ԱՐԱՄ ՀԱՅԿԱԶ

Ես մեծահամբաւ խմբագրապետը ճանչցայ 1927 թուին, երբ ամուսնանալու համար փարիզ էի եկած: Սուտ խօսած չեմ ըլլար եթէ ըսեմ թէ Ֆրանսայի մայրաքաղաքը հասնելէս վերջ առաջին զործս «Ցառաջ»ի խմբագրատան այցելութիւն մը տալս եղաւ: Որքան որ կը յիշեմ,— վրայէն լման երեսուըհինգ տարի է անցած — փայտէ ութ – տասը աստիճան ունեցող սանդուխէ մը վեր բարձրացայ. աջիս դուռ մը կը բացուէր. պատուհանին առջեւ զրուած քառակուսի սեղանի մը դիմաց նստած էր մեծ ղի, – րու դիմազծերով մարդ մը, ու կլուխը հակած՝ կը գրէր. երբ հասակիս չուքը սեղանին վրայ իյնալս, գլուխը վերցուց ու ինծի նայեցաւ:

— Նիւ Եորքէն եմ եկած, Արամ Հայկազն եմ ըսի կարմրելով ես ձեռքս իրեն երկարեցի: Նոր հասայ հոս: Առաջին այցելութիւնս ձեզի է որ կուտամ:

— Ուրախ եմ, ըսաւ ձեռքս սեղմելով, եւ թաւ յօնքերուն տակէն իմացականու – թեամբ չորացող աչքերով զիս վերէն վար քննեց: Հոն, ան պատին տակ նստողն ալ Նարդունին է ըսաւ, կը ճանչնա՞ս զին – քը:

— Իր անունով ու գործերով:

Քանի մը քայլ առի դէպի Նարդունին ու սեղմեցի նաեւ անոր ձեռքը: Կէսօրուան ճաշի պահ էր, ու Նարդունի, «միայն հացով չապրուիր, այլեւ բանիւ»ը չրջած, «բանը» ձգած, հաց ու պանիր կ'ուտէր:

Ան ալ զիս քննեց վերէն վար:

Զեմ գիտեր ի՞նչ եղաւ իրենց տպաւորութիւնը:

— Հեռագիրներէն տեղեկացանք որ Զոբաւոր Անդրանիկ մեռեր է, ըսաւ Մի – սաքեան, իրա՞ւ է, բան մը գիտե՞ս այդ մասին:

— Այո, ըսի, նաեւ առած օրս Պոսթոնէն եկած «Հայրենիք»ին մէջ մեծ գիրերով, առաջին էջին վրայ, տրուած էր լուրը: Եւ պատմեցի ինչ որ այդ լուրի ընթեր – ցումէն մնացած էր մտքիս մէջ:

— Մեղք որ «Հայրենիք»ի այդ թիւը հետդ չես բերած, ըսաւ:

— Ի՞նչ գիտնամ, մինչեւ հիմա կը կար – ծէի թէ փոստը ճամբորդներէ աւելի ա – րագ տեղ կը հասնի:

Ամերիկայէն հետս բերած սիկրէթնե – րէն հրամցուցի իրեն: Առաւ, վառեց հատ մը, ծուխը քթէն բերնէն դուրս տուաւ ու, ըսաւ.

— Լաւ է, մերիններուն հետ չի բաղ – դատուիր, ըսաւ նաեւ թէ քանի որ հոն նեղիայ եմ, «Ցառաջ»ի համար բան մը գրեմ:

Փափկացայ եւ անորոշ պատասխան մը տուի:

Այդ պահուն իսկ գիտէի թէ բան մը պիտի չգրէի «Ցառաջ»ին համար: Վըս – տահ էի: Պիտի չգրէի ոչ թէ անոր համար որ չէի սիրեր «Ցառաջ»ն ու իր անդուզա – կան խմբագրապետը, այլ պարզ այն պատճառով, որ չէի ուզեր որ Միւնաքեան յօդուածս աչքէ անցուցած պահուն տես – նէր թէ որքան ուղղադրական եւ կետա – դրական սխալներ կ'ընէի գրած պահուս:

Աքսորէն վերադարձեր էի 1919ին: Տա – րիուկէս գացեր էի վարժարան՝ եւ անցեր Ամերիկա՝ ուր կը վաղէի օրուան հացիս համար:

Հայերէնը տարուկէսուան մէջ սորվե – լի՞ք լեզու է ...

Մեղա՛յ:

Մենք, ես ու ինծի պէս խորհող բազ – մաթիւ տղաք, կը սիրէինք «Ցառաջ»ը ոչ միայն իր խմբագրին ջղուտ ոճին ու ան – թերի լեզուին համար, այլեւ շատ կը հանդիսինք իր որդեգրած ուղղութեան: Կը հաւատայինք իր խորունկ ազգասիրու – թեան եւ անկողմնակալութեան: Կը բաժ – նէինք իր դժգոհութիւններն ու գնահա – տումները: Նոյնիսկ, երբեմն, եղրակա – գուխեան մը գալու համար, կամ գալէ ա – ռաջ, կը սպասէինք.

— Տեսնենք Միւնաքեան ինչ պիտի ըսէ. կը հաւնէինք Հայաստանի հանդէպ իր որդեգրած ուղղութեան: Ան օրերուն, երբ երկաթէ վարագոյրին ծայրը ոչ թէ բացուած, այլ ձեղքուած իսկ չէր, հայ – բենիքէն բազմաթիւ լուրեր տալով, Ցա – ռաջ կամուրջ կը հանդիսանար գաղութ – ներուն եւ Հայաստանի միջեւ: Ակնկ – զատ, մեզ ամէնէն չատ խանդավառողը, «Ցառաջ»ի ցոյց տուած անկախութեան ոգին էր: Ինքնագատէկ չէր վախնար: Տեղին համեմատ կ'ըսէր նաեւ իր զոհու – նակութիւնը՝ բարձրաձայն ու ինքնավս – տահ: Կարդացողը կը հաւատար թէ, «Ցառաջ» երբ կը քննադատէ, իր սիրտը կ'արիւնի, ու երբ գնահատելի բան մը գտնելով կը խօսի անոր մասին, սրտանց ուրախ է:

Ահա թէ ինչո՛ւ իր բարեկամներն ալ, թշնամիներն ալ, հակառակորդներն ալ գինքը կը լսէին ուշադրութեամբ եւ յար – գանքով: Իրողը հաւատացած էին թէ երբ Շաւարշը բերանը բանար, միայն ազգին չահը ունէր իրեւ նկատում:

Ցարգանք պարտադրող մարդ մըն էր. կը պարտադրէր այդ յարգանքը՝ իր ան – վիճելի արժանիքներով:

Հիմա արդեօք «վերը» ի՞նչ կը խորհի ազգին մասին... անոր իրար անցած զոր – ծերուն մասին... Որքա՞ն կը խնդայ գի – շեր – ցերեկ մեզի հայրենիքը սիրել սոր – վեցնել փորձողներուն վրայ... Չէ՞ որ «մենք հայրենասէր ենք, զուք չէք» պոռացողներ կան ...

Չէ՛, թերեւս ալ չի խնդար: Իր սիրտը կ'արիւնի այս բաներուն համար:

Այդ տեսակ մարդ էր մէկ հատիկ Շ. մը ստորագրողը ...:

Սիւնիքի հայ հոգիին այս անխոնջ պահակը՝ Շաւարշ Միսաքեան, պիտի մնայ ապրող ներունդներուն համար, մշտար – թուն պատգամողը Հայուն արժանապա – րութեան, ու իր ձայնը պիտի արձագան – գէ գիտակից Հայերու սրտին մէջ:

ԲԻՒԶԱՆԴ ԹՕՓԱԼԵԱՆ

Իբր հարազատ վկայ, պարտականութիւն ունիմ խոստովանելու եւ յայտարարելու թէ Շաւարշ Միսաքեան իր անկուն եւ ուղղամիտ աշխատանքով կատարեց հրա – կայական գործ մը Սփիւռքի մէջ, մաս – նաւորապէս Ֆրանսայի համար ուր իր թերթը եղաւ ազգային ամբարտակ մը:

ՅԱԿՈԲ ՏԷՐ – ՅԱԿՈԲԵԱՆ

իր խմբագրին զիմանկարին, ուրեմն պէտք է ընդունիլ որ Շաւարշ Միսաքեան ներշնչում եւ լուսաւորութիւն տուաւ արդի հայ լրագրութեան եւ, իր խմբա – գրի ազդօզուտ գործունէութեամբ, հան – դիսացաւ անոր առաջնորդը:

Շաւարշին տեւական յուշարձանը իր գործն է:

Այս է պատկերը եղակի հայ խմբագրի մը... տաղանդաւոր, կորովի, անվախ, անկախ եւ անձնուէր:

Եթէ թերթ մը արտայայտութիւնն է ազգի մը, ապա պիտի կանգնած իր համոզումնե – րուն վրայ: Հակառակ անոր՝ իր թերթը միշտ հրատարակուած էր յղկուած ոճով եւ գրական նուրբ ճաշակով: Ձոռոմա – բանութիւն չէր կրնար տանիլ: Խոտապա – հանջ էր թերթին ճշդութեան ու նախան – ձախնդիր էր յօդուածներուն լեզուին:

Հաղուագիւտ չնորհքը ունէր ամէնա – բարդ նիւթն իսկ պարզօրէն ներկայա – նելու քանի մը տողով: Իր կուռ ոճը ամբողջացումն էր իրաւ հայերէնի մը ո – րուն նմանը քիչ կը գտնուի ներկայ հայ գրողներու մօտ: Իր կնիքը ձգեց ժամանա – կակից հայերէն լեզուի վրայ ու եթէ այ – սօր որոշ կէտով բարեփոխուած է մեր գրական լեզուն՝ ասիկա գլալի չափով կը պարտինք իրեն: Այդ ընելով՝ ինքը երե – ւան եկաւ որպէս ուժեղ գրող մը, եւ մի – ժամանակ՝ զարձաւ հայ ընթերցողին մտքին եւ երեւակայութեան մէջ տիպար խմբագիրը:

Արդարեւ՝ իր խմբագրականներն էին որ ամէնէն աւելի լայնածաւալ եւ խորա – թափանց ազդեցութիւն գործեցին հայ ժողովուրդին բոլոր խաւերուն վրայ: Դժ – ուար է այժմ ստուգիւ գնահատել այն մեծ դերը որ ունեցան հայ կեանքի մէջ հանրածանօթ «Շ.» ստորագրութիւնը կրող այդ անթիւ խմբագրականները, ուր հարազատ այլ իւրայատուկ կերպով նկա – րագրուած էր հայ կեանքը իր բոլոր գոյ – ներով, լոյսերով եւ ստուերներով:

Եւ այսօր՝ այդ խմբագրականները կը պահեն իրենց թարմութիւնը եւ հետա – քրքրութիւնը ու բնաւ չունին հնութեան մթնոլորտած կերպարանք:

Շաւարշ նոր կեանք մտցուց հայ լրա – գրութեան մէջ եւ այդ ազդեցութիւնը երթալով չատցաւ ու տարածուեցաւ զաղթաչխարհի բոլոր գրական հոսանք – ներէն ներս:

Քիչեր Շաւարշին չափ հասկցած եւ գնահատած են արդի լրագրութեան կա – րեւորութիւնը որպէս անհրաժեշտ օժան – դակ հայ ազգայնական եւ քաղաքական չարժման: Այս տեսակէտը իրեն համար ամէն նիւթական նկատումէ վեր էր եւ այս գիտակցութիւնն էր որ գինքը կը մղէր իր անվերապահ նուիրումին:

×

Այս է պատկերը եղակի հայ խմբագրի մը... տաղանդաւոր, կորովի, անվախ, անկախ եւ անձնուէր:

Եթէ թերթ մը արտայայտութիւնն է ազգի մը, ապա պիտի կանգնած իր համոզումնե – րուն վրայ: Հակառակ անոր՝ իր թերթը միշտ հրատարակուած էր յղկուած ոճով եւ գրական նուրբ ճաշակով: Ձոռոմա – բանութիւն չէր կրնար տանիլ: Խոտապա – հանջ էր թերթին ճշդութեան ու նախան – ձախնդիր էր յօդուածներուն լեզուին:

Հաղուագիւտ չնորհքը ունէր ամէնա – բարդ նիւթն իսկ պարզօրէն ներկայա – նելու քանի մը տողով: Իր կուռ ոճը ամբողջացումն էր իրաւ հայերէնի մը ո – րուն նմանը քիչ կը գտնուի ներկայ հայ գրողներու մօտ: Իր կնիքը ձգեց ժամանա – կակից հայերէն լեզուի վրայ ու եթէ այ – սօր որոշ կէտով բարեփոխուած է մեր գրական լեզուն՝ ասիկա գլալի չափով կը պարտինք իրեն: Այդ ընելով՝ ինքը երե – ւան եկաւ որպէս ուժեղ գրող մը, եւ մի – ժամանակ՝ զարձաւ հայ ընթերցողին մտքին եւ երեւակայութեան մէջ տիպար խմբագիրը:

Արդարեւ՝ իր խմբագրականներն էին որ ամէնէն աւելի լայնածաւալ եւ խորա – թափանց ազդեցութիւն գործեցին հայ ժողովուրդին բոլոր խաւերուն վրայ: Դժ – ուար է այժմ ստուգիւ գնահատել այն մեծ դերը որ ունեցան հայ կեանքի մէջ հանրածանօթ «Շ.» ստորագրութիւնը կրող այդ անթիւ խմբագրականները, ուր հարազատ այլ իւրայատուկ կերպով նկա – րագրուած էր հայ կեանքը իր բոլոր գոյ – ներով, լոյսերով եւ ստուերներով:

Եւ այսօր՝ այդ խմբագրականները կը պահեն իրենց թարմութիւնը եւ հետա – քրքրութիւնը ու բնաւ չունին հնութեան մթնոլորտած կերպարանք:

Շաւարշ նոր կեանք մտցուց հայ լրա – գրութեան մէջ եւ այդ ազդեցութիւնը երթալով չատցաւ ու տարածուեցաւ զաղթաչխարհի բոլոր գրական հոսանք – ներէն ներս:

Քիչեր Շաւարշին չափ հասկցած եւ գնահատած են արդի լրագրութեան կա – րեւորութիւնը որպէս անհրաժեշտ օժան – դակ հայ ազգայնական եւ քաղաքական չարժման: Այս տեսակէտը իրեն համար ամէն նիւթական նկատումէ վեր էր եւ այս գիտակցութիւնն էր որ գինքը կը մղէր իր անվերապահ նուիրումին:

×

Այս է պատկերը եղակի հայ խմբագրի մը... տաղանդաւոր, կորովի, անվախ, անկախ եւ անձնուէր:

Եթէ թերթ մը արտայայտութիւնն է ազգի մը, ապա պիտի կանգնած իր համոզումնե – րուն վրայ: Հակառակ անոր՝ իր թերթը միշտ հրատարակուած էր յղկուած ոճով եւ գրական նուրբ ճաշակով: Ձոռոմա – բանութիւն չէր կրնար տանիլ: Խոտապա – հանջ էր թերթին ճշդութեան ու նախան – ձախնդիր էր յօդուածներուն լեզուին:

Հաղուագիւտ չնորհքը ունէր ամէնա – բարդ նիւթն իսկ պարզօրէն ներկայա – նելու քանի մը տողով: Իր կուռ ոճը ամբողջացումն էր իրաւ հայերէնի մը ո – րուն նմանը քիչ կը գտնուի ներկայ հայ գրողներու մօտ: Իր կնիքը ձգեց ժամանա – կակից հայերէն լեզուի վրայ ու եթէ այ – սօր որոշ կէտով բարեփոխուած է մեր գրական լեզուն՝ ասիկա գլալի չափով կը պարտինք իրեն: Այդ ընելով՝ ինքը երե – ւան եկաւ որպէս ուժեղ գրող մը, եւ մի – ժամանակ՝ զարձաւ հայ ընթերցողին մտքին եւ երեւակայութեան մէջ տիպար խմբագիրը:

Արդարեւ՝ իր խմբագրականներն էին որ ամէնէն աւելի լայնածաւալ եւ խորա – թափանց ազդեցութիւն գործեցին հայ ժողովուրդին բոլոր խաւերուն վրայ: Դժ – ուար է այժմ ստուգիւ գնահատել այն մեծ դերը որ ունեցան հայ կեանքի մէջ հանրածանօթ «Շ.» ստորագրութիւնը կրող այդ անթիւ խմբագրականները, ուր հարազատ այլ իւրայատուկ կերպով նկա – րագրուած էր հայ կեանքը իր բոլոր գոյ – ներով, լոյսերով եւ ստուերներով:

Եւ այսօր՝ այդ խմբագրականները կը պահեն իրենց թարմութիւնը եւ հետա – քրքրութիւնը ու բնաւ չունին հնութեան մթնոլորտած կերպարանք:

Շաւարշ նոր կեանք մտցուց հայ լրա – գրութեան մէջ եւ այդ ազդեցութիւնը երթալով չատցաւ ու տարածուեցաւ զաղթաչխարհի բոլոր գրական հոսանք – ներէն ներս:

Քիչեր Շաւարշին չափ հասկցած եւ գնահատած են արդի լրագրութեան կա – րեւորութիւնը որպէս անհրաժեշտ օժան – դակ հայ ազգայնական եւ քաղաքական չարժման: Այս տեսակէտը իրեն համար ամէն նիւթական նկատումէ վեր էր եւ այս գիտակցութիւնն էր որ գինքը կը մղէր իր անվերապահ նուիրումին:

×

Այս է պատկերը եղակի հայ խմբագրի մը... տաղանդաւոր, կորովի, անվախ, անկախ եւ անձնուէր:

Եթէ թերթ մը արտայայտութիւնն է ազգի մը, ապա պիտի կանգնած իր համոզումնե – րուն վրայ: Հակառակ անոր՝ իր թերթը միշտ հրատարակուած էր յղկուած ոճով եւ գրական նուրբ ճաշակով: Ձոռոմա – բանութիւն չէր կրնար տանիլ: Խոտապա – հանջ էր թերթին ճշդութեան ու նախան – ձախնդիր էր յօդուածներուն լեզուին:

Հաղուագիւտ չնորհքը ունէր ամէնա – բարդ նիւթն իսկ պարզօրէն ներկայա – նելու քանի մը տողով: Իր կուռ ոճը ամբողջացումն էր իրաւ հայերէնի մը ո – րուն նմանը քիչ կը գտնուի ներկայ հայ գրողներու մօտ: Իր կնիքը ձգեց ժամանա – կակից հայերէն լեզուի վրայ ու եթէ այ – սօր որոշ կէտով բարեփոխուած է մեր գրական լեզուն՝ ասիկա գլալի չափով կը պարտինք իրեն: Այդ ընելով՝ ինքը երե – ւան եկաւ որպէս ուժեղ գրող մը, եւ մի – ժամանակ՝ զարձաւ հայ ընթերցողին մտքին եւ երեւակայութեան մէջ տիպար խմբագիրը:

Արդարեւ՝ իր խմբագրականներն էին որ ամէնէն աւելի լայնածաւալ եւ խորա – թափանց ազդեցութիւն գործեցին հայ ժողովուրդին բոլոր խաւերուն վրայ: Դժ – ուար է այժմ ստուգիւ գնահատել այն մեծ դերը որ ունեցան հայ կեանքի մէջ հանրածանօթ «Շ.» ստորագրութիւնը կրող այդ անթիւ խմբագրականները, ուր հարազատ այլ իւրայատուկ կերպով նկա – րագրուած էր հայ կեանքը իր բոլոր գոյ – ներով, լոյսերով եւ ստուերներով:

ՇԱՏԵՐԼԷՆ ՄԷԿԸ

Գրեց՝ ԱՈՒԼԷՆ ՓԱՓԱԶԵԱՆ

Հինգ տարի առաջ էր։ Ժամացոյցին ղոյդ սլաքները միացան 12ին վրայ ու այդպէս մնացին քարացած։ Նոյն պահուն տեղ մը, սփիւռքի մէջ (Փարիզ), հայ բենիքէն այնքան հեռու, վերջ կը գտնէր, մեծ հայրենասէրի մը կեանքը։ Հարա – զատները, սիրելիներ, ընկերներ, բարե – կամներ, Հայեր, իրենց թախիծը ամոքե– ցին արտասուքով, հառաչներով, մըր – մունջներով։ Այդ օրը, հայ լրագրութեան էջերուն մէջ գլխագիր մը պակսեցաւ. այդ գլխին առընթեր ոչի մը, չունչ մը։ Առաջադրող ու առաջնորդող միտք մը ու մտքին մէջ արմատացած խիղճ մը։ Ան – հատականութիւն մը, առինքնող էութիւն մը մէկէ ամբլի անկիւններէ դիտուած։ Ահա մարդը զոր հինգ տարի առաջ յանձ– նեցինք հողի մը որ իրը չէր։ Զառան – ցա՞նք է այս թէ բիրտ իրականութենէն փրցուած ճակատագրական հեգնանք մը։ Բայց ինչ փոյթ։ Զարմանալու զգացումը սկսած է պակսիլ մեր մէջ։ Լաւ է որ այդպէս ըլլայ. քիչ մը պակաս կը տառա– պինք։ Կար ժամանակ երբ կը հաւատա – յինք որ հայրենիքը տէր կը կանգնի իր մեռեալներուն, պատանի էինք ու պատ – րանքը ներելի։ Կը սպասէինք յուսալով որ կտոր մը հող կը յատկացուի եթէ ոչ ... ողկերուն գէթ հայրենիքի կարօտով հող զարձած մարդոց։ Պանթէոն մը չէր մեր ակնկալածը (այնչափ միամիտ չէ – ինք) այլ կտոր մը հող, հայրենիքի սէ – րով հրկիզուած էակներուն համար, կտոր մը հող որպէս զերազոյն հատուցում ա– նոնց տառապած ոսկորներուն։ Այո, պա– տանի էինք ու կը հաւատայինք ու չէինք ուզեր տեսնել այն մութ անէծքը որ կա– պարի ծանրութեամբ բազմած էր մեր ի– րականութեան վրայ։ Աւելի վերջ, արդէն երիտասարդ, զարձուցինք էջը։ Պատ – րանքի տեղ կարիճի նման խայթող ցաւ մը մեր հոգիներուն մէջ անուցինք ու դէո կը սնանենք։ Փոխուած էինք ու կը մնանք այդպէս քանի Հայրենիքը կը չարունակէ լուռ մնալ մեր աղերսին ու կը մերժէ իր նոճիներուն չուքը մեր մեռելներուն հոգ– նատանջ ճակիններուն։ Այս բոլորին փո– խարէն կայ ու կը մնայ «Փէր Լաշէզը» իր ասպնջական հողով ու ցուրտ չիրիմ – ներով եւ ըսել թէ հոն է որ, այդ անանձ– նական տիեզերքին մէջ, ահա երկար տա– րիներ, ապաստան կը գտնեն մեր մեծ մե– ռելները։ Հայոց նորագոյն պատմութեան առասպելատիպ էջերը իրենց արիւնով զրած մարդիկ, կը նիրհեն հոն, օտար հո– ղին տակ ...

Այսօր մենք կ'ողբանք Շ. Միսաքեանի յիշատակով։ Պատմութիւն կերտելէ վերջ իր կարգին անցաւ պատմութեան, ու մենք մնացինք հոս հայրենիքին եւ պատ– մութեան միջեւ։ Մեր տեղը կարծես ա– նուն չունի։ Դարձած ենք հայմաթլօս, լուսանցքին վրայ ապրելու զատապար – տուած տարր մը, սպասման սրահին մէջ ապրող մարդոց հոգեբանութեամբ։ Դա – տապարտուած ենք մեկնելու. այդ լաւ գիտենք։ Երկար տարիներէ ի վեր քանի երթուղարձեր, մտասեւեռումներ, երե – ւակայական քանի խոյանքներ զէպի հոն՝ մեր երկիրը։ Ուղին հարթուած է, ենթա– հողը պատրաստ, բայց մենք կը մնանք հոս, սպասման սրահին մէկ անկիւնը, պատմութեան եւ հայրենիքին միջեւ։ Ան– ջրպետ մը կայ մեր եւ անոր մէջտեղը, թէկուզ արուեստական բայց այսուհան – դերձ գոյութիւն ունի ան։ Պատմութիւ – նը, մեր պատմութիւնը հայրենիքին միա– ցնող կամուրջը կը պակսի ու մեր քայ – լերը կը մոլորին օտար ափերուն վրայ։ Մարդիկ որոնք կրնային կամուրջ հանդի– սանալ, մեկնեցան անդարձ։ Մեր սպաս– ման րոպէներն ալ երկարեցան։ Հիմա կը տատամսինք նման ուղեկորոյս ճամբորդի մը։ Շաւարշն ալ հոս չէ որ իրեն ապա – սխինինք, յուսանք ... Ու տարիները կը թաւալին իրենց ծանր օրերով եւ տեւացող ժամերով, իսկ մեր ուղեցոյցին երկու սլաքներն ալ խանդարուած՝ քարացած կը մնան միջօրէին վրայ։ Այս այն պահն է, ուր տեղ մը, սփիւռքի մէջ (Փարիզ), հայրենիքէն այնքան հեռու, բայց անոր սէրը ու կարօտը իր սրտին մէջ, վերջ կ'առնէր մեծ հայրենասէրի մը օրինակելի կեանքը։

ՅՈՒՇ ՄԸ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆԷՆ

Գրեց՝ ԱՐՏԱՇԵՍ ԳՄԲԷԹԵԱՆ

Ա. Աչխարհամարտի Զինադադարէն անմիջապէս ետք, Պոլսոյ Հայութիւնը սկսաւ ապրիլ զարթօնքի նոր շրջան մը։

Զորս տարիներէ ի վեր լռութեան դա – տապարտուած հայ լեզուն սկսաւ վերս – տին հնչել ազատ ու անվախ։ Սկսան վե – րահրատարակուիլ խափանուած թերթերը եւ հրատարակուիլ՝ նորեր։

Պոլսահայ երիտասարդութիւնը եռան – դուն կերպով փարած էր ազգային կեան– քին։ Լսարաններ, ակումբներ, մարմնա– մարզական միութիւնները, մնայուն եւ կանոնաւոր թատերական խումբեր, ի – րենց կողքին ունենալով սիրողներու ալ կազմակերպութիւնները՝ Գում – Գափուէն մինչեւ Սկիւտարի բարձունքները։

Կուսակցական կեանքն ալ կը գտնուէր եռանդուն գործունէութեան մը մէջ։ Այդ կեանքին երկու բեւեռներն էին Հ. Յ. Դաշնակցութիւնը եւ Ս. Դ. Հնչակեան կուսակցութիւնը, որոնք չարունակական մրցման մըն էին լծուած հայ ազգային կեանքին մէջ առաջնութեան դափնին չա– հելու միտումով։

Այդ կրակոտ շրջանին, տասնըվեցամեայ պատանի մըն էի եւ մաս կը կազմէի Ս.Դ. Հնչակեան կուսակցութեան Գում–Գա – փուի մասնաճիւղին։ Արհեստով ղրաշար էի եւ կ'աշխատէի Պոլսոյ մէջ հրատա –

րակուող «Ճակատամարտ» օրաթերթին, որուն խմբագիրն էր ողբացեալ Շաւարշ Միսաքեանը։

Պէտք է խոստովանիմ որ կը սիրէի ղը– րաչարութիւնը, որուան ըլլալով որ այդ արհեստը ուղղակի կապ ունէր տպա– գին ու տառին հետ եւ հնարաւորութիւն կը տեղծէր ինծի զարգացնելու լոյսի ծարաւի միտքս։

Պէտք է խոստովանիմ նոյնպէս որ մո – լեռնող կուսակցական մըն էր եւ երիտա– սարդական ամբողջ խանդավառ նուիրուած անոր պատրաստ էի կատարելու կէտ առ կէտ ինծի տրուած, կամ աւելի ճիշդը պարտադրուած հրահանգները։

Օր մը, Գում Գափուի մեր մասնաճիւ – ղին հրահանգ եկաւ որ երեք ընկերներ պատրաստուինք երթալ Սամաթիա, ուր տեղի պիտի ունենային թաղական խոր – հուրդի անդամներու ընտրութիւնները, եւ հոն արդիլք հանդիսանայինք Դաշնակ– ցական թեկնածուներու հաւանական ընտ– րութեան, խառնաշփոթութիւն ստեղ – ծելով։

Երեք «կամաւորներ» ներկայացան։ Արշակ Քիւրքճեան, Պրուսացի զէրձակ մը (որուն անունը կը վրիպի յիշողու – թենէս) եւ այս տողերը ստորագրողը։

Ու Շաբաթ իրիկուն մը, բոլոր տարկ եղած «հրահանգ»ները ու «յանձնարարու– թիւն»ները առած, երեք ընկերներս մեկ– նեցանք Սամաթիա, ուր տեղի պիտի ու– նենային ընտրութիւնները տեղւոյն Ս. Գէորգ եկեղեցիին շրջափակին մէջ։

Ս եր «արշաւանք»ը արիւնալի հետե – ւանք ունեցաւ։ Արշակ Քիւրքճեան այդ երեկոյ դաշնակցական երիտասարդ մը՝ Փիրայր Ֆոտիկեան։ Մեւս երկու ընկերներս՝ զերձակն ու ես, խո – ճապէն օգտուելով խոյս տուինք... քա – ջարար։

Հետեւեալ օրը կիրակի էր։ Մեր մաս – նաճիւղին մէջ հաւաքուեցանք, Արշակը կը փնտռուէր ոստիկանութեան կողմէ, իսկ Փիրայր Ֆոտիկեան հիւանդանոցին անկիւնը կը մաքառէր մահուան դէմ ...

Երկուշաբթի օր, ըստ սովորութեան գործիս գլուխն էի։

«Ճակատամարտ»ի խմբագրականները ես կը չարէի։ Շաւարշ Միսաքեան վս – տահութիւն ունէր «հայապետութեանս» վրայ։

Զմոռնամ ըսելու նոյնպէս որ խմբա – գրապետը տեղեակ էր նաեւ որ ես կը զա– նուէի «պատանէչին միւս կողմը»։ Բայց այդ մասին օր մը օրանոց որեւէ ակնար – կութիւն չէր ըրած։

Այդ առաւօտ, ուրեմն, Շաւարշ Մի – սաքեան նեղս մտաւ գրաշարատունէն ու «քացայ»իս վրայ նետելով խմբագրակա– նին ձեռագիրները, ըսաւ խոժոռաբար.

— Դո՛ւն ալ հո՛ն էի՞ր առջի գիշեր ...

— ...

— Ամօ՛թ, ամօ՛թ բոլորին ալ, հերիք չեղա՞ւ մեր թափած արիւնը, հերիք չե – զա՞ւ Թուրքին չարդածը, հիմա ալ իրա՞ր

նուհետեւ տարիներ չարունակ մենք ա – խատում էինք միասին Բիւրոյի ընթացիկ գործերում, «Դրօշակ»ում, ուր նա վա – րում էր «Թուրքիոյ չուրջ» բաժինը, «Ցառաջ»ում, որին աշխատակցում էի։

Տարագիր կեանքի պայմանները տաժա– նելի էին։ Դժուարութիւններ չատ ենք ունեցել։ Կարելի չէ ասել թէ տարա – կարծութիւններ էլ չենք ունեցել, բայց ամբողջ ժամանակ եւ բոլոր այն մարզե – րում, ուր ես աշխատել եմ Շաւարշի հետ, չեմ յիշում մի լուրջ դէպք, ուր մենք, ի վերջոյ, համակարծիք չլինէինք թէ ընդ– հանուր ազգային եւ թէ կուսակցական – ընկերական ինդիրներում։

Աղնուական պարկեշտութեան տէր ան – հատականութիւն էր Շաւարշը, պարկեշտ ինքը իր հետ եւ ուրիշների հանդէպ։ Պարկեշտ, մանաւանդ, դէպի հայ ժողո – վուրդը եւ դէպի ամէն ինչ, որ հայկա – կան է։ Դէպի հայ մշակոյթը, առանձնա– պէս դէպի հայերէն լեզուն, որի մաքրու– թեան եւ զեղեցկութեան ծայրայեղ նա– խանձախնդիրը էր։

Լրագրող էր կամքն Աստծոյ եւ իր լը– րագրութիւնը հասած էր բանաստեղծու– թեան։ Իր խմբագրականները (շ.) յա– ճախ քնարերգութիւն էին։ Եւ «Ցառաջ»ի բոլոր էջերի վրայ, խմբագրականից մին– չեւ ծանուցում, սաւառնում էր Շ.ի ո – գին։

Արտաքինով եւ ձեւով «Ցառաջ»ը մնա – ցել է նոյնը։ Բայց Շաւարշի չունչը չկայ։ Ըստ իս անկրկնելի է։

Ս. ՎՐԱՑԵԱՆ

ծին, Գէորգեան ճեմարան, Թիֆլիսը զբ– ղեթէ Հայաստանի մաս էր կազմում։ Պոլիսը Արեւմտահայերի համար Մայր Երկրից դուրս գրեթէ ինքնուրոյն եւ ինքնամփոփ մի վայր. գաւառ եւ Պոլիս չատ աւելի հեռու էին իրարից, քան ա – րեւմուտքը։ Շաւարշը, ի հարկէ, այն Պոլսականներից չէր, որոնց համար Պո – լիսը տիեզերքի կեդրոնն էր, այսօր էլ դեռ կան նման տարօրինակ մնացորդներ, բայց, մանաւանդ Արեւմտահայութեան Սփիւռք գառնալուց յետոյ Պոլիսը ուժեղ կերպով արտայայտւում էր նրա հան – րային մարդու բնաւորութեան մէջ։

1920ին Հայաստանի կառավարութիւնը որոշեց հրատարակել պետական տարե – գիրք եւ խմբագրութիւնը յանձնեց ինձ։ Արտասահմանի նիւթերի համար ես դի – մեցի «Ճակատամարտ»ին, որի խմբագի – րըն էր Շաւարշը եւ ուրիշներին եւրո – պայում ու Ամերիկայում։ Շաւարշը ու– րախութեամբ յանձն առաւ նիւթեր հաս – ցնել եւ նոյնիսկ մի քանի բաներ էլ ու – ղարկեց – յիշում եմ կտորներ Մելքոն Կիւրճեանի, Փեղամ Բարսեղեանի եւ ու – րիշ նահատակների ձեռագրերից—բայց բոլշեւիկեան մայիսեան խռովութիւնները յաջորդող պատերազմը ուրիշ չատ բա – րեկամեցութիւնների հետ այս ծրագիրն էլ խանգարեց։

Ցաջորդ մեր հանդիպումը՝ Շաւարշի հետ եղաւ 1922ին, երբ ճակատագիրը ինձ Հայաստանից — Գարսկաստանի, Հնդ – կաստանի եւ Եգիպտոսի վրայով — նե– տեց Պոլիս, որ դարձել էր միլազգային խառնարան եւ ռուս ու կովկասեան տա – րագիրների կենտրոն։ Հազիւ մի քանի տեսակցութիւններ ունեցանք «Ճակատա– մարտ»ի չէնքում։ Շաւարշը խորապէս ցնցուած էր Հայաստանի աղէտից եւ Պոլ– սոյ Քեմալականների կողմից սպառնացող վտանգից։

Հայաստանի աղէտը ընդհանուր ազգա– յին դժբախտութիւն էր, Պոլսի անկումը Քեմալականների ձեռքը նաեւ անձնական ողբերգութիւն էր Շաւարշի համար։ Նա ջանաց ամէն գնով երկարաձգել իր տա – րագրութեան ժամը, բայց, ի վերջոյ, ստիպուած եղաւ հետեւելու իրերի ան – խուսափելի ընթացքին։ Անցաւ Իտալա – լիա՝ Պոլիս վերադառնալու յոյսով։

Ես նրան հանդիպեցի Սոֆիայում։

Ձեմ ասում յուսահատ էր— ո՛չ, նա յուսահատուող բնաւորութիւններից չէր — բայց ջղայնացած էր ծայր աստիճանի։ Կարելի էր ասել, իր ջղերի տէրը չէր։

Սոֆիայի հրապարակային իմ դասախո– սութեանը՝ հնչակեանները փորձեցին խանգարել ժողովը։ Նրանց պարագլուխ Յ. Պօղոսեանը զանազան բացականչու – թիւններով աշխատում էր չէոթութիւն առաջ բերել։ Շաւարշը վրդովուած խո– յացաւ վրան եւ մի չառաչիւն ապտակ հասցրեց նրա երեսին։ Ժողովը մի պահ խառնուեց, բայց դասախօսութիւնը չխանգարուեց։ Վստահ եմ, թէ Պօղոս – եանից ոչ պակաս ցաւ զգաց ինքը Շա– ւարշը։

1925ին, Փարիզում գումարուեց Հ. Յ. Դաշնակցութեան Ժ. ընդհանուր ժողո – վը։ Շաւարշը գործօն դեր կատարեց այդ ժողովում։

Ահաւոր օրեր էին։ Իտլչեւիկն ու Թուր– քը եղբայրացած՝ բաժանել էին իրենց մէջ Հայաստանը։ Մեր «մեծ դաշնակիցները» Լօզանի խայտառակութիւնից յետոյ մո – ռացել էին, թէ Հայ ու Հայաստան գո – յութիւն է ունեցել երբեւիցէ։ Շուրջ մէկ միլիոն Հայեր Պոլսից, Իզմիրից, Կիլիկիայից, Հայաստանից մնացեր էին բառին բուն նշանակութեամբ մոխիրների վրայ նստած, անտուն – անտէր։ Երեւա– նը մեռժում էր — եւ ի վիճակի էլ չէր — ամենայն Հայոց կառավարութեան դերը ստանձնելու։ Չկար ազգային հեղինակա– ւոր իշխանութիւն։ Ախտել էր նիւթական եւ բարոյական չաղախը Հայութեան մէջ։

Հոգեբանական այսպիսի պայմաննե – րում գումարուեց Հ. Յ. Դ. Ժ. ընդհա – նուր ժողովը։ Պոլիս վերադարձի յոյսը անհետացեր էր, եւ Շաւարշն էլ հաշտը – ւել էր տարագրութեան մտքի հետ։ Ընդհանուր ժողովում ամէնից չատ նրան զրաղեցնում էր արեւմտահայութեան ճա– կատագիրը, որ անպատմելիօրէն ողբա – լի էր։ Փրկել, պաշտպանել ու պահպանել «մնացորդացը» իր հոգեկան հարստու – թեամբ վերականգնելու համար ապագա – յին ազգային ամբողջութիւնը։

Շաւարշը մտցրեց ժողովի բանաձեւի, ապա եւ Դաշնակցական հրապարակա – գրութեան եւ հռետորութեան մէջ «համ– բանքը պահել» ասութիւնը։

Ընդհանուր ժողովում Շաւարշը ընտր– ուեց Հ. Յ. Դ. Բիւրոյի անդամ եւ այ – նուհետեւ տարիներ չարունակ մենք աշ – խատում էինք միասին Բիւրոյի ընթացիկ գործերում, «Դրօշակ»ում, ուր նա վա – րում էր «Թուրքիոյ չուրջ» բաժինը, «Ցառաջ»ում, որին աշխատակցում էի։

Տարագիր կեանքի պայմանները տաժա– նելի էին։ Դժուարութիւններ չատ ենք ունեցել։ Կարելի չէ ասել թէ տարա – կարծութիւններ էլ չենք ունեցել, բայց ամբողջ ժամանակ եւ բոլոր այն մարզե – րում, ուր ես աշխատել եմ Շաւարշի հետ, չեմ յիշում մի լուրջ դէպք, ուր մենք, ի վերջոյ, համակարծիք չլինէինք թէ ընդ– հանուր ազգային եւ թէ կուսակցական – ընկերական ինդիրներում։

Աղնուական պարկեշտութեան տէր ան – հատականութիւն էր Շաւարշը, պարկեշտ ինքը իր հետ եւ ուրիշների հանդէպ։ Պարկեշտ, մանաւանդ, դէպի հայ ժողո – վուրդը եւ դէպի ամէն ինչ, որ հայկա – կան է։ Դէպի հայ մշակոյթը, առանձնա– պէս դէպի հայերէն լեզուն, որի մաքրու– թեան եւ զեղեցկութեան ծայրայեղ նա– խանձախնդիրը էր։

Լրագրող էր կամքն Աստծոյ եւ իր լը– րագրութիւնը հասած էր բանաստեղծու– թեան։ Իր խմբագրականները (շ.) յա– ճախ քնարերգութիւն էին։ Եւ «Ցառաջ»ի բոլոր էջերի վրայ, խմբագրականից մին– չեւ ծանուցում, սաւառնում էր Շ.ի ո – գին։

Արտաքինով եւ ձեւով «Ցառաջ»ը մնա – ցել է նոյնը։ Բայց Շաւարշի չունչը չկայ։ Ըստ իս անկրկնելի է։

Ս. ՎՐԱՑԵԱՆ

ԿԵԱՆՔԻՍ ՈՒՍՈՒՑԻՉԸ

Գրեց՝ ՀՐԱՆԴ ԲԱԼՈՒԵԱՆ

Կը յիշեմ. չատ տարիները առաջ, 1935–ին, «Ցառաջ»ի տասնամեակին առթիւ բացառիկ թիւ մը կը պատրաստուէր. այդ օրերուն, ի՛նչպէս այսօր, ինքնաբերաբար պատրաստակամութիւն յայտնեցի յար – դանքի սիւնակ մը լեցնել՝ խմբագրին բացառիկ անհատականութիւնը փառա – բանող : Իր քիչ մը չատ լուրջ նայուած – քը կեդրոնացուցած վրաս, թաւ ձայնովը ըսաւ .

— Չափազանցես. արտայայտութիւն – ներուդ մէջ գուսպ եղիր. նկատի ունեցիր որ իմ թերթիս մէջ իմ մասիս է որ պո – վեստներ պիտի չարուին. ուրիշ տեղ դէշ կամ լաւ՝ ազատ ես ուզածդ գրի առնե – լու :

Այսօր, իր մահուան հինգերորդ տարե – դարձին առթիւ, երբ ձեռք կ'առնեմ գրի – չըս իր քաղցր յիշատակը, ու մանաւանդ երբեմնի Խմբագրին ունեցած բարոյական բացառիկ արժանիքները ոգեկոչելու , կարծէք անհետացեալին նոյն ազդու ձայ – նը վերստին կը լսեմ, որ հեռու տեղէ մը խորհրդաւոր փափուքով մը կ'ազդարա – րէ.— Զուսպ եղիր, չափաւոր. չեմ սի – րած անձիս չուրջ գովեստներու բարձրա – ցումը :

Բայց յարգելով իր բաղձանքը, վերջա – պէս հնարաւոր ալ չէ իրականութիւնները քողարկել ու չըսել այն՝ ինչ որ մտանա – ւոր արժանիքները կը կազմէին Շաւարշ Միսաքեան անուն մեծութեան : Կեանքը տեսանք. մեր սերունդը եւս հետզհետէ կը մտնէ տարիք ըսուած աշնան սահմանա – պին. հանդիպեցանք, սերտ չը – փումներ ունեցանք զրադէտ, հանրային գործիչ, զեկավար, խմբագիր ըսուած անձնաւորութեանց հետ, ու այժմ ի վի – ճակի ենք բաղդատել դիրենք իրարու հետ : Զեռքս դնելով խղճիս վրայ, ամե – նայն համարձակութեամբ կրնամ ըսել թէ, Շ.ին բարոյական կշիռը գերազան – էր բոլորին վրայ : Դպաղ ըսուածը սըն – տուկ մըն է, որ օր մը դուրս կուգայ և – կեղեցիի մը դռնէն– պահը քահի մը երկ – վայրկեանի խնդիր է, բայց հող յստակ կերպով կը կշռադատուի մեկնողին մե – ծութիւնը եւ կամ ատոր հակառակ՝ ա – նարժէք հանդամանքը : Հինգ տարի ա – ռաջ, երբ պացինք խոնարհելու Անոր գա – գաղին առջեւ, հազարաւոր պլուխներ ակ – նածանքով ճամբայ կը բանային իր անց – քին : Այդ օրը, քովս կանգնած պիտակից անձնաւորութիւն մը, տեսնելով արտա – բերուած ակնածանքը, ականջիս փսփը – սաց.

— Ահա ասոր կ'ըսեն ժողովրդական յարգանք ու հաւաքական լաց :

Զունէի բան աւելցնելիք :

Կեանքը երբեմն իր փորձաքարը կը սարքէ ամէնէն եղեռնական օրերուն :1915ի վերջաւորութենէն մինչեւ 1918ի սկիզբը՝ երբ Միսաքեան ինկաւ Պոլսոյ կեդրոնա – կան բանտը, հակառակ իր անձին վրայ կիրարկուած տանջանքներուն, նախամե – ծար համարեցաւ երեք յարկ վերէն ինք – զինքը բանտին բակը նետել ու անձնաս – պանութեամբ կեանքին վերջ տալ՝ քան թէ ճնշումներու տակ թուլցնել բերնին կապերը : Շատ տարիներ վերջ, ետ չեմ սխալիր 1932ին, երբ նախորդ ընդհ. պա – տերազմի թուրք զեկավարներ իրենց յուշերը գրի կ'առնէին, Պոլսոյ նոյն բան – տապետն ալ, անուանի իթթիհատական մը, իր կեանքի նկարագրութեան մէջ տեղ մը կը գրէր .— «Նկարագրի զարմանք առթող տոկունութեամբ օժտեալ մարդ մըն էր դաւադրաբար մեր ձեռքը անցած Շ. Միսաքեան անուն յեղափոխականը : Հակառակ մեր գործադրած տեսակ տեսակ ճնշումներուն եւ չարչարանքներուն, չկր – ցանք բերնէն բառ մը, գաղտնիք մը կոր – գել : Շատ ամուր էր բարոյականը իր մէջ» :

Ասիկա ըսողը ընկեր մը չէր, եւ ոչ ալ հայրենակից մը, այլ՝ Սուլթան Ամիէտի հրապարակին վրայի կեդրոնական բան – տին տնօրէնը, որուն ձեռքէն անցան ու Այաչ, Զանդերը աքսորուեցան մեր մտքի ամէն տեսակ չքեղութիւնները :

1941 թուականին հիմնեցի իմ այժմու դրատունս : Այդ օրերուն «Ցառաջ»ը փակուած էր եւ փարիզեան հայ մտաւո – րականութիւնը, զրեթէ բոլորն ալ ան – դորձ՝ կը հաւաքուէին գործատեղիս : Այս չորս – հինգ տարիներուն Շ. Մի – սաքեանը գրեթէ ամէն օր մօտս էր. ան – դամ մը եւս հիացած էի իր նկարագրին տոկունութեանը վրայ. նիւթական ձգձի – մութեանց առջեւ ոչ մէկ ընկրկում , ոչ մէկ խոնարհում. իր անձը զոհութիւն չունէր. ընդհակառակն, աչ ու ձախ կը հրահանգէր, միջոցները ցոյց կուտար, որ – պէսզի հեռաւոր սահմաններէն հոս ա – պաստանած կամ անցորդ հայորդիներուն ընտանեկան ջերմութիւն, կարեկցութիւն ցոյց տրուէր :

Քաղաքական հոտառութիւնը ուժեղ էր իր մէջ. չէր հեռուած քաղաքագիտու – թեան. բայց միւս կողմէ, կրնար զրպա – նէն հանել հեռուձգերը. գալիքը նախ – ապէս զարմանալի բնազդն ունէր. վեր – ջաբանը նախօրօք կը գուշակէր : Հոս չենք ուզեր մանրամասնութեանց մէջ մտնել , բայց զեկավարի արտակարգ կարողու – թիւնը ունէր. բարերախտութիւն թէ դժ – բախտութիւն. չեմ գիտեր. ամուսնացած ու զրաստեղանը գինք արտակարգ կերպով կախարդած էին. մեծը գոհած էր ընթա – ցիկ օրագրութեան եւ իր բառով՝ «քա – նըչորս ժամ ապրող» թերթին : Անշուշտ ասիկա ըսելու ձեւ մըն էր. իր «Սրեր եւ ժամեր»ը մնայուն մատեան մը մնաց :

×

Զեկավար անձնաւորութեան մը մեծու – թիւնը կրնաս հաստատել լիուլի՝ երբ կը պահես տեղը տեւական չափով : Կեանքս այնպէս դասաւորուեցաւ, որ փոքր տա – րիքէս մինչեւ յիսնամեայ , մնացի Շ. Ս իսաքեանի թեւարկութեանը ներքեւ :

Ձիշդ տեղն եմ հասած կեանքի ուսու – ցիչ ըսուած դարձուածքը հիմնաւորելու, եւ ասիկա ըստ փորձառութեանս : Ան – շուշտ այս պատահարը բոլորին չի կրնար վիճակուիլ. լաւ աստղի տակ պէտք է ծը – նած ըլլաս՝ կեանքի ուսուցիչդ ունենալու համար : Հրապարակաւ կը խոստովանիմ թէ, կ'երեւի ես այդ երջանիկներէն մէկն եմ եղած : Այո՛, ուսուցիչ կ'ունենայ ա – մէն մարդ, զպրոցական նստարաններուն վրայ : Շրջան մը չորս – հինգ տարի տե – ւողութեամբ : Իմս եղաւ բոլորովին տարբեր. «Ցառաջ»ի խմբագիրը չունե – ցայ որպէս ուսուցիչ զպրոցական յարկէ մը ներս, բայց ունեցայ կեանքիս ամրող – ջական հասուն տեւողութեանը, երիտա – սարդութեանս առաջին օրերէն մինչեւ իր մահուան կէսօրը, (նոյն գիշերը ինկաւ) Տիշդ հինգ տարի առաջ, երբ գացած էի վերկրող գաւկիս ծննդեան ազդը յանձնե – լու թերթին : Այդ օրը, ո՛վ զարմանք , բացառիկ զուարթ տրամադրութեան մէջ կը լողար. անընդհատ կը կատակէր . իր վերջին օրը ինծի վերջին դաս մըն ալ տուաւ. երբեք պիտի չմոռնամ .— «Տղաղ ալ քեզի պէս անճոռնի, մը չըլլայ» :

Գիտէի թէ վշտացած էր ինծի դէմ. խնդուքով մը պարակեցինք եղելութիւնը ու անցանք :

Երբ գինքը կեանքիս ուսուցիչը ան – ուանեցի, ատոր չարաչարումը կայ . 1919ին չորս – հինգ երիտասարդ գրասէր – ներ Պոլսոյ մէջ խմբակցութիւն մը կազ – մեցինք ու որոշեցինք... գրական ժողո – վածու մը հրատարակել : Ինծի պարտա – կանութիւն մնաց դիմել ամէն կողմ, մեր տուիչներուն որ չէն խանգարեր լերան ընդհանուր տեսքին համայքը :

×

Շաւարշին համար Ազգը նպատակ՝ իսկ կազմակերպութիւնները միջոցներ էին՝ ազգը պահելու համար :

Հոս կարելի է մէջբերել Նազովբեցի Քրիստոսի «Ցուք գիւղերն կոյսեր եւ գԱստուածոյն՝ Աստուածոյ» խօսքը :

Շաւարշը կ'ըսէր «Ցուր Ազգինը Ազգին եւ կուսակցականը՝ կուսակցութեան :

« Ցառաջ »ը իր մարտադաշտն էր : Իր խմբագրականները, համազգային կեանքը եւ քաղաքական դէպքերը իրարու հետ համաձայնեցնելու գրութիւններ էին, ի – րար կ'ամբողջացնէին :

«Ցառաջ»ի խմբագրականները, իրենց ոճովը կարելի է դասել գրականութեան ճիւղին :

Շաւարշը կրնանք առնել խմբագրի եւ գրագէտի հանգամանքներով : Ինք ար – դէն, գրական ճիւղէն կուգար խմբագրա – կանի դաշտը :

« Ցառաջ »ի դաշտին վրայ էին հա – սունցած՝ ծիլ արձակած կարեւոր թիւով նորեր : Հիներէն չատեր հոն է որ չարու – նակեցին իրենց տոհմային ներչնչումնե – րը՝ փոխանցելով նորերուն :

« Ցառաջ »ի խմբագրապետը չատ բը – ծախնդիր էր ոճի մասին : Թղթակցու – թիւնները եւ նոյնիսկ ծանուցումները ա – նոր գրանշարակին տակ կուգային :

Գաղութահայ բոլոր չրջաններու կեան – քը նուիրական էր : Ամենափոքր չրջանն իսկ արժէք կը ներկայացնէր իրեն հա – մար :

×

Շաւարշը երբ կը խօսէր բեմի վրայ , պարզ եւ անկեղծ էին իր խօսքերը : Հայ կեանքի մտահոգութիւններէ մղուած էին անոնք :

Բեմի վրայ, կարծես կը խօսակցէր ուն – կնդիրներուն հետ : Մտահոգութիւն չու – նէր ծափ, օվասիօն գաղելու :

×

Խմբագրական ասպարէզին մէջ չատ քի – չերուն տրուած է յետ մահու երկար ա – տեն յիշուելու բախտը : Շաւարշը այդ քիչերէն մէկն է :

Անակնկալ եղաւ իր մահուան դուժը :

Վերջին խմբագրականը գրած գրչին մէջտեղը չէր չորցած տակաւին երբ աչքե – րը փակեց կեանքի դէմ՝ իր խմբագրա – պետի աթոռը միայն որբ ձգելով :

Եւ այսօր, « Ցառաջ»ը իր հինգ բոցար – ձակ տառերով՝ Շաւարշ Միսաքեան անունը գրկած՝ ամէն առաւու կուգայ ա – ւետելու իր ընթերցողներուն թէ՝ Հայը կ'ապրի, պիտի ապրի իր լեզուով ու իր քաղաքակրթութիւնով : Պիտի ունենայ իր անկախ հայրենիքը՝ ազգերու չարքին մէջ :



Շ.

Մեծասքանչի աւելն ի ձեռին

Գծեց՝ ՏԻՐԱՆ

ՄԱՐՄՆԱԹՈՂՈՒԹԻՒՆ

Գրեց՝ Կ. ՊԵՏՈՒՇ

Փնջիկ մը՝ Շաւարշի յիշատակին :

Այն որ պայքարի դաշտին վրայ կ'իյ – նայ՝ անունին պէտք չէ կցել «մահ»» բա – ռը :

Հայ լեզուն ունի «ննջեցեալ», «հան – դուցեալ», «լուսահոգի» ածականները :

Շաւարշ Միսաքեանի անունին պէտք է որդեգրել «Մարմնաթող» բառը :

ՇԱԻԱՐՇԸ : Օժտուած անկաշառելի ան – հատականութիւնով մը.— իր թերու – թիւննե՞րը... այո՛ իտէալի մը համար պայքարողներու թերութիւնները կը նը – մանին լերան մը կողերուն խորտուբոր –

մատուրականութենէն աշխատակցութիւն խնդրելու : Գրեցի նոյնպէս այդ օրերուն Թիֆլիս ու Երեւան ապրող մեր գրողնե – րուն :

Անցան քանի մը ամիսներ ու օր մը, « Ձակատամարտ»ի սանդուխներուն վը – րայ Շ. Միսաքեանին հետ դէմ առ դէմ պալով, այդ օրը ալ աւելի խոժոռ քան թէ ուրիչ պահերու , ըսաւ .

— Ֆիչ վերջը քովս, խմբագրատուն և – կո՛ւր, քեզի ըսելիք ունիմ :

Հետաքրքրուած բարձրացայ վեր , գը – րասեղանէն դարակ մը քաշեց ու դուրս բերելով կապոց մը՝

— Հոս պահարան մը լեցուած է. գը – րութիւններ եկած են անունիդ, Թ. Թօ – րամանեանէն, Ամմենուէի Տիգրանեանէն, Վէպէրէն, Լէյլիէն եւայլն. ի՞նչ բանի պիտի ծառայեն ասոնք :

Բացատրեցի մեր նպատակը :

— Տակաւին երախայ մըն ես, ներս մտնելու համար հայ գրականութեան ան – դաստանէն. արդեօք մէկ էլ անսխալ կր – նա՞ս մրոտել գրութիւն մը : Այս ըսելն ու ձեռագիրներու կապոցը վերստին դարա – կը նետելը մէկ եղաւ, արհամարհական ակնարկ մըն ալ կախելով դէմքս վար : Փչրուած էի : Թեւերս կոտրած սկսայ ա – րագ արագ վար իջնել սանդուխներէն, անպայման իր հասցէին բաներ մըն ալ մռլտալով :

Տարիներ վերջ, երբ յաճախ անգրա – գտած եմ կեանքիս այս... առաջին պատահարին, երախտագիտական ինչ խոր վարակումով պաշարուած է հոգիս – նս, որ Միսաքեանը խորտակեր է իմ ա – ռաջին ձախաւեր, տղայամիտ քայլս :

Գրական մշակութային ասպարէզին մէջ էականը ենթակայի մը մուտքն է. եթէ խախուտ, կաղնիկաղ քայլերով մտար սրբալայրէն ներս, կը վարկաբեկուիս ու այլեւս անհնարին կ'ըլլայ քանդուած վարկը վերաշինել :

Ահ մը տարիներու զանազանութեամբ Միսաքեանը 1924ին մտաւ Փարիզ : Հոս իր առաջին թափառումներուն գինք չըը – ջապատողներէն մէկն ալ ես էի. անընդ – հատ օրաթերթի մը անհրաժեշտութիւնը կը չեշտէր. 1925ին լոյս տեսաւ առաջին թիւը, որուն տեւական աշխատակիցներէն մէկն ալ համեստօրէն ես եղայ, մինչեւ խմբագրին մահացման տարին : Կեանքս ձեւով մը ազուցուած մնաց այս թերթին ու չրջապատին : Ցիշատակներս չատ են, նոյնպէս ... առացած սաստերս. անչուշտ առանց հակառակ Շ.ին գոհունակութեան ժպիտներն ալ չատ եմ վայելած : Ասիկա ուրիշ առիթի նիւթ է : Խմբագրութեան չրջապատէն ներս գոհ եւ զժգոհներու բանակ մը կ'ապրէր, ոմանք կը տրտնջա – յին թէ խմբագրին յանձնուած գրութիւն – ները ղղալի կերպով կ'անցնէին իր բո – վէն :

Ես, իմ մասիս խօսելով, երախտա – պարտ եմ Շ. Միսաքեանի միջամտու – թեանց. ինծի ուղղութիւն տուաւ եւ սար – վեցուց էականը անջատել երկրորդական մանրամասնութիւններէն . անընդհատ կ'ըսէր.— «Օրաթերթին կեանքը 24 ժամ է. տեղը չէ բանդիտութիւն ծախելու » :

Ափսոս, Թանկագին Միսաքեան, իսկու թէ ողջ մնայիր ու խնդիր չէր, ձեւափո – խիր բոլորիս յօդուածները, ըստ քու հայեցողութեանդ, միայն թէ քեզ ան – ընդհատ տեսնէինք սա մեր Թագին մէջ , երբ մատիտը ձեռքդ, տպարան երթու – դարձիդ ճամբուն մէջ անդամ աշխատե – լով պիտի քալէիր մայթերուն եղերքէն :

Զկաս Փիղիքապէս՝ բայց միշտ մեր մէջ – ըն ես ոգեպէս :

ՄԱՐԴՈՒՆ, բացառիկ արժանիքներով , անտեղիտալի, հիմնական սկզբունքներու մէջ, բայց չափազանց լայնախոհ, կար – ծըը՝ Արարատի ժայռերուն նման, այլ բարի՝ հացի մը պէս, մտահոգ Ազգին , համայնիին ու այլոց ցաւերով, միշտ անտեսող՝ ինքզինք եւ իրենները, էութեամբ նուիրուելով այն ամէն ինչի՝ որ մօտէն ու հեռուէն կը վերաբերէր Հայերուն, որ հայ անուն ուներ՝ կազմակերպութիւն ըլ – լայ այդ թէ ընկերակցութիւն, ուսանող թէ արուեստագէտ , մտաւորական թէ խլեակ, անպատսպար թէ հիւանդ :

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆԻՆ, կուսակցապետին , որ առաջնակարգ դեր խաղացած Դաշ – նակցութեան՝ իր գոյութեան իմաստը ե – ղող կուսակցութեան , պատմութեան մէջ, այն կուսակցութեան՝ որուն շար – ֆերուն մէջ մասնակցած է վաղ երիտա – սարդական տարիներէն, միշտ ամէնէն սպառող գործերուն մէջ... բայց Շաւարշ ազատախօս էր եւ լայնահայեաց : Մէկն էր, որ յարգելով հանդերձ կարգապա – հութիւնը, պարտադրելով մէկտեղ վար – չամեբեւնային անթեռութիւնը, կը ձաղ – կէր ձախաւերութիւնները՝ ո՛վ ալ ըլլար գանոնք գործողը, կը մատնանշէր թիւրն ու թերին, կը պարգեր սխալները եւ կը փորձէր ուղղամտօրէն դարմանել զա – նոնք : Միսաքեան չէր հաշտուեր անար – դարութեան հետ եւ կ'ընդվզէր ամէն տե – սակի չարաշահութեան դէմ : Եւ այս ուղղութեամբ անտեղիտալի էր :

ՏԻԳՐԱՆ ԹՕՍՊԱՖ

ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ ԱՌԹԻԻ « ՅԱՌԱՋ » ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

Մարսէյլէն Պ. Սարգիս Խոզիկեան այս տարի եւս կը նուիրէ մէկ տարուան «Յառաջ» իր հայրենակից Թ. Նազաչեանի , (Առնուվիլ) :

Տէր եւ Տիկին Ռոպէռ Ժեսթրօ եւ զաւակները՝ Ժոզէթ, Միրիամ եւ Փաթրիք – սիա , Պ. Փօլ Ագթանեան, Տէր եւ Տիկին Ալպէր Ագթանեան, Պ. Ալպէր Ագթանեան, Տէր եւ Տիկին Գէսպէրճիքեան, զաւակները եւ թոռները, ինչպէս նաեւ Պօյաճեան, Նազաչեան, Սուլթանեան ընտանիքները ցաւով կը ծանուցանեն իրենց հօր, մեծ հօր, եղբօր, մօրեղբօր եւ աղգականին՝

ԱՆԴՐԱՆԻԿ ԱԳԹԱՆԵԱՆԻ
(Գէորգ Սուլթանեան)

մահը որ տեղի ունեցաւ Յունուար 22ին :

Յուղարկաւորութիւնը կը կատարուի այսօր Ուրբաթ, (Յունուար 26) ժամը 13·45ին, Փարիզի Ս· Յովհ· Մկրտիչ եկեղեցւոյ մէջ, ուրկէ մարմինը պիտի տանի իրենց ընտանեկան դամբարանին մէջ :

Մահազ չստացողներէն կը խնդրուի ներկայս իբրեւ այդ նկատել :

Այրի Տիկին Վահէ Խանչէրեան եւ զաւակները՝ Նիքոլ, Ժերար, Տէր եւ Տիկին Կարպիս Խանչէրեան եւ զաւակները, Տէր եւ Տիկին Բիւզանդ Խանչէրեան եւ զաւակները, Տէր եւ Տիկին Յովսէփ Խանչէրեան եւ զաւակներ, Տէր եւ Տիկին Շալեան եւ զաւակը, ինչպէս նաեւ ընտանեկան բոլոր պարագաները ցաւով կը ծանուցանեն իրենց ամուսնոյն, հօր, եղբօր, հօրեղբօր եւ աղգականին՝

ՎԱՀԷ ԽԱՆՉԷՐԵԱՆԻ

մահը որ տեղի ունեցաւ Յունուար 21ին , 48 տարեկանին :

Յուղարկաւորութիւնը կը կատարուի այսօր Ուրբաթ (Յունուար 26) ժամը 9ին, Փարիզի Ս· Յովհ· Մկրտիչ եկեղեցւոյ մէջ, ուրկէ մարմինը պիտի փոխադրուի Սէնթ Ուէնի գերեզմանատունը :

Մահազ չստացողներէն կը խնդրուի ներկայս իբրեւ այդ նկատել :

49, Բիւ Ռոշըշուար, Փարիզ (9) :

Պ. Պ. Տօնիկ, Նազար եւ Մկրտիչ Մուրթաֆեան, Օր· Յասմիկ եւ Օր· Սօնամուրթաֆեան , Այրի Տիկին Հեղինէ Սալըեան, Զարացեան ընտանիք (Հայաստան), Զարացեան (Մարսէյլ) , Ալթունեան, Խաչմանեան, Սաքալեան եւ Դարբինեան (Ամերիկա), Նէտիլեան, Յակոբեան, Պետրոսեան, Բալուեճեան, Քիւրտեան , Ուստուլիկեան եւ Օր· Փիւռը սրտի զաւակն կսկիծով կը ծանուցանեն

ՄԱՐԻԱՄ ՄՈՒՐԹԱՖԵԱՆԻ
(Ծնեալ Զարացեան)

մահը, որ տեղի ունեցաւ Յունուար 24ին, իր բնակարանը , 33 Բիւ Էթիէն Տօլէ , Ալֆորվիլ,

Յուղարկաւորութիւնը կը կատարուի այս Ուրբաթ, կէսօրէ վերջ ժամը 13·30ին, Ալֆորվիլի Ս· Պօղոս Պետրոս եկեղեցին, ուրկէ մարմինը կը փոխադրուի Ալֆորվիլի գերեզմանատունը իր ընտանեկան դամբարանին մէջ :

Մասնաւոր մահագդ չստացողներէ կը խնդրուի ներկայս իբր այդ նկատել :

ՅԱՒԱԿՑՈՒԹԻԻՆ

Ղազար Ներկարաբեան իր խոր ցաւակցութիւնը կը յայտնէ Օր· Ազատուհի Հիւսեանի, Վահան Հիւսեանի եւ բոլոր պարագաներուն, իրենց սրտի հատոր

ԱՐԱՄ ՀԻՒՍԵԱՆԻ

կսկծալի մահուան առթիւ :

Շ. ՄԻՍԱՔԵԱՆ

Օրեր եւ Դէմքեր

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՕՐԸ
ԼԻՈՆԻ ՄԷՋ

—o—

Նախաձեռնութեամբ Կապ· Խաչի Լիոնի մասնաճիւղի :

28 Յունուար, կիրակի կէսօրէ հաք ժամը 3ին, Սթիւտիօ Քրէֆի սրահին մէջ , 24 Բիւ Տիւճօար :

Գեղարուեստական բաժին.— Խմբերգ, արտասանութիւն, ծաղիկներու պար, հայկական պարեր եւ մանկական անակնկալներ :

Պիտի ներկայացուի փոքրիկ թատերախմը՝ « ԿԱՂԱՆԴ ՊԱՊԱՆ » :

Ինչվպէս ամէն տարի, այս տարի եւս Կաղանդ Պապան իր նուէրները պիտի բաժնէ սրահին մէջ գտնուղ բոլոր պզտիկներուն անխտիր :

Մուտքը ազատ է :

×

ՊՈՒՏՈՑԻ ՄԷՋ

Այս կիրակի կէսօրէ վերջ, ժամը ճիշդ 3·30ին, Առլաֆ Սօլֆերինօ սրահը, 235 Բիւ Մունէյրա :

Ճոխ յայտագիր :

«ԱՆԻԻՆ ԳԱՆՁԱՆԱԿԸ »

Մանկական թատերզուխին : 4 արար
(Ատրիեէ Տատրեան)

Խմբերգ, մեներգ, պար եւ արտասանութիւն :

Նուէրներու եւ մրգեղէններու բաշխում :

Մուտքը ազատ է :

GALERIE MOTTE
5, Passage des Lions
— GENÈVE —
CARZOU
EXPOSITION
jusqu'à fin Janvier

ԼՈՑՍ ՏԵՍԱԻ
ՅԱԿՈԲ ՏԷՐ–ՅԱԿՈԲԵԱՆ
ՊԱՐՏԻԶԱԿԸ
ԻՄԱՍՈՒՏԻԿ
Յաւելուածաբար՝ ՄԱՆՈՒՇԱԿ ԵՒ ԻՐ ՀԷՔԵԱԹՆԵՐԸ :
500 էջ
13 Hors–Texte
Հասոյթը Փարիզի եկեղեցւոյ կըրթական մարմնին :
Գին 12 Ն· Ֆ·
Թղթատարի ծախքով 13·40 Ն· Ֆ·
Արտասահման 4 տոլար :
Դիմել՝
Յառաջին
Հայ գրավաճառներուն
Փարիզի եկեղեցին կամ Տպարան
ՏԷՐ – ՅԱԿՈԲԵԱՆ

Imprimerie Spéciale du journal « Haratch »
32, Rue de Trévise, PARIS (9e)

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ

—o—

Վարչութեան ժողովը տեղի պիտի ունենայ Երկուշաբթի, 29 Յունուար , ժամը 18·30ին, Մչակոյթի Տան Շաւարշ Միսաքեան սրահին մէջ : Կը խնդրուի ամբողջական ներկայ ըլլալ : Կարեւոր օրակարգ :

Surprise Party
ՊԱՐԱՆՑԻԿ ԵՐԵԿՈՑԹ

Կազմակերպուած Հ· Յ· Դ· Նոր Սերունդի Ալֆորվիլի մասնաճիւղին կողմէ :

Այս կիրակի, ժամը 15էն մինչեւ 22 , Մչակոյթի Տան մէջ, 17 Բիւ Պլէօ :

Հաճելի մթնոլորտ, պար, պիւֆէ , ընտրուած սալըր (տիսք) :

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ Ս. ԽԱՉ ԵԿԵՂԵՑԻ
10 bis, Rue Thouin, PARIS

Այս կիրակի, ժամը 10·30ին, հանդստեան ձայնաւոր պատարագ, Գրիգոր Եպս· Պահապանեանի հոգւոյն համար :

Պիտի պատարագէ եւ քարոզէ՝
ԳԵՐՊ· Կ· ԵՊԻՍԿ· ԱՄԱՏՈՒՆԻ :

Հ. Յ. Ի.
ԸՆԿԵՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

—o—

ՓԱՐԻԶ.— Հ· Յ· Դ· Շրջ· կոմիտէի ներկայացուցչական ժողով այս Շաբաթ, ժամը 20·30ին, Մչակոյթի Տան մէջ :

Օրակարգ.— Շրջ· ժողովի օրակարգի քննութիւն :

ԼԻՈՆ.— Հ· Յ· Դ· Վարանդեան կոմիտէն ժողովի կը հրաւիրէ բոլոր ընկերները, այս Ուրբաթ, ժամը 21ին, սովորական հաւաքատեղին : Կարեւոր օրակարգ :

ԿՐՔՆՈՊԼԸ.— Հ· Յ· Դ· Եօթնեղբայրեան կոմիտէն ընդհ· ժողովի կը հրաւիրէ Լանսէի, «Մուրատ» խումբի եւ Ռընաժի «Գէորգ Զավուշ» խումբի բոլոր ընկերները, այս Շաբաթ, ժամը 20·30ին, դպրոցի սրահին մէջ: Կարեւոր օրակարգ :

ՅՈՒՇԱՏԵՏՐ

Յ· Կ· Խաչի Պանեէօ Քաչանի մասնաճիւղի վարչութիւնը ընդհ· ժողովի կը հրաւիրէ իր բոլոր ընկերուհիները այս Շաբաթ, ժամը ճիշդ 21ին, ընկերուհի Ա· Փափազեանի բնակարանը, Րիւ Շաուլ Միչէլ , թիւ 6, Պանեէօ : Կարեւոր օրակարգ : Կը խնդրուի ներկայ ըլլալ :

ԿԱՊ·ԽԱՉԻ Փարիզի մասնաճիւղի վարչութեան ժողովը այս Շաբաթ, ժամը 3ին : Մչակոյթի Տան մէջ : Պարահանդէսի հաշուետուութիւն :

ՀԱՄԱՅԱՐԲԵՐԴ· Հայր· Մխիթեան Վալանսի մասնաճիւղի ընդհ· անդամական ժողովը տեղի կ'ունենայ այս Շաբաթ, ժամը 21ին, սովորական հաւաքատեղին : Ներկայ կ'ըլլայ կեդր· վարչութեան դիւանը : Ներկաներու թիւը մեծամասնութիւն պիտի նկատուի :

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

ԿԱՊՈՑ ԽԱՉԻ ՕՐԸ

Յ· Կ· Խաչի օրը կը տօնուի Ապրիլ 1ին, կիրակի, կէսօրէ վերջ, Շիմիի սրահը :

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ
Նախաձեռնութեամբ Կապոյտ Խաչի, Ալֆորվիլի մասնաճիւղին :
Յունուար 27, Շաբաթ , ժամը 20·30ին Մեզոն Ալֆորի Սալ տէ Ֆէթիւ մէջ :
Առնուվիլի Նոր Սերունդի կառավարենց թատերախումբը կը ներկայացնէ՝
ԱՇԽԱՐՀԻ ԴԱՏԱՍՏԱՆԸ

ՀԱՅ ԿԱՐՄԻՐ ԹԱՋԻ
ՏԱՐԵԿԱՆ ՅԵՐԵԿՈՅԹ - ՊԱՐԱՀԱՆԴԷՍ
Յունուար 28, կիրակի, ժամը 16–24
LES AMBASSADEURS, 3, Avenue Gabriel, Champs-Elysées
Կը մասնակցին երկու հռչակաւոր նուագախումբեր
PIERRE DIEUZEY et ses Capétiens
JAZZ NEW ORLEANS
PEPITO GOMEZ
TYPIQUE TANGOS
ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԾՈՒԱ ԲԱԺԻՆ
Կը խնդրուի կանխաւ ապահովել տոմսերը եւ սեղանները հեռաձայնելով
Հայ Կարմիր Խաչի կեդրոնատեղին Էլիզէ 67 – 03
ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ. — Վարձուած սեղանները պրաւուած պէտք է ըլլան ամէնէն ուշը ժամը 19·30ին : Հակառակ պարագայ չին պարահանդէսին կազմակերպիչ յանձնախումբը որեւէ պատասխանատուութիւն չի ստանձներ :

ՏՕՆԱԿԱՆ ՕՐԵՐՈՒ ԼԱՒԱԳՈՅՆ ՆՈՒԷՐԸ
ՍԻՓԱՆ – ԿՈՄԻՏԱՍԻ՝ Նոր սալը
"ՀԱՅ ԿՐՕՆԱԿԱՆ ԵՐԳԵՐ"
Chants Religieux Arméniens
Կը ղեկավարէ Կ· ԱՓՐԻԿԵԱՆ
Փնտռել՝ երգչախումբի վարչութեան անդամներուն, բարեկամներուն եւ հետեւեալ հասցէներուն մօտ :
Restaurant ARTHUR
5, Rue Augustin Thierry
Place des Fêtes Paris 19e
Librairie H. SAMUEL,
51, Rue Monsieur–le–Prince, PARIS

ՀԱՅՐԱԼՋ

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

Le PREMIER QUOTIDIEN ARMENIEN en EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction et Administration : 32, Rue de Trévise - PARIS-9e

Fondé en 1925
R. C. Seine 57 A 2731

Téléph. : PRO. 86 - 60
C. C. P. Paris 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա՝ Տար· 50 Ն· Ֆ· Վեցամսեայ՝ 27 Ն· Ֆ·
Արտասահման՝ Տար· 60 Ն· Ֆ· Հատը՝ 0·25 Ն· Ֆ·

ՇԱԲԱԹ
27
ՅՈՒՆՈՒԱՐ
SAMEDI
27 JANVIER
1962

38ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 9315 38e ANNÉE Fondateur : SCHAVARCH MISSAKIAN ՆՈՐ ՇՐՋԱՆ, 18ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 5116

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

ՎԱ՞Յ ՁԵԶ ԴՊՐԱՑ ԵՒ ՓԱՐԻՍԵՑԻՈՑ ԿԵՂԾԱՒՈՐԱՑ

Կարդալով «Դեղին Սատանայիին պարը» (Յառաջ, 21, 23 եւ 24 Յունուար), յիշեցինք Ցիսուսի վերի որակումները՝ ուղղուած դպիրներուն եւ փարիսեցիներուն, որոնք անարժանաբար նստեր էին Մովսէսի աթոռին վրայ (Մատթէոս, ԻԳ·)։

Կ'արժէ ամբողջութեամբ կարդալ աւետարանի այս գլուխը, ինչպէս նաեւ Մարկոսի Գլուխ ԺԱ· 15 – 17, տեսնելու համար թէ ինչպէս քանի դար եւոք տակաւին մարդիկ կան, որ արժանի են խարազան նով զուրս վռնտուելու տաճարէն։

Տաճարը՝ «տուն աղօթից»՝ Հայաստանն է, զոր անոպայ մարդիկ ու ընչա – քաղց կանայք զարձուցած են «այրս աւազակաց»։

Ցիսուս «մտեալ ի տաճարն՝ սկսաւ հանել զվաճառականն եւ զընդաղ որ էին ի տաճարին· եւ զսեղանս հատուածեաց ցրուեաց, եւ զաթոռս աղաւնեվաճառաց ցրուեաց, եւ զաթոռս աղաւնեվաճառաց կործանեաց»։

Այսօրուան դպիրներն ու փարիսեցիները կը կրեն փաղաքչական, կեղծաւոր անունները, — «Հայաստանասէր, էջմիած – նասէր»։

Այս խարեպատիր պիտակները իրրեւ վահան գործածելով մարդիկ Հայաստան կ'երթան «ոչ թէ ձիւնափարփառ Արա – բատի աննիւթական թուացող դեղեցկութեամբ զմայլուելու», այլ «երկիր ղրախտավայրը տեսնելու պատրուակի տակ ղրազուած են միջազգային սպեկուլացիայով։ Ի՞նչ Հայաստան։ Հայաստանը ոսկի կը տա՞յ՝ կը սիրենք զայն, ոսկի չի՞ տայ՝ թքա՛ծ», կը ղրէ սրտցաւ Հայ մը՝ Ղարիպ Հայրապետեան, Սով· Հա – յաստանի մէջ։

« Վա՛յ ձեզ դպրաց եւ փարիսեցւոյ կեղծաւորաց, զի յածիք ընդ ծով եւ ընդ ցամաք առնել եկամուտ մի»։

« Վա՛յ ձեզ առաջնորդք կոյրք, զի ասէք, Որ երդնու ի տաճարն՝ չէ ինչ, բայց որ երդնու յոսկին որ ի տաճարին է՝ պարտական է։ Մոլոռք եւ կոյրք, զի՞նչ մեծ է· ոսկի՞ն՝ եթէ տաճարն որ սրբէ զոս – կին»։

Որ ցաւով կարդայինք Հայրապետեան զրուածքը եւ «ամօթից կարմրեցանք» տեղեկանալով թէ ի՛նչպէս հայ կնոջ մը « քամնելի երեւակայութիւնը ծնունդ է քամնելի հնարքներ»։

Առաջին անդամը չէ, որ սիւնագի մամուլը արձագանգ կը դառնայ Հայաստանը չահագիտութեան առարկայ դարձնող « Հայաստանասէր»ներու սխրագործու – թեանց։ Մանաւորաբար Մերձաւոր Արեւելքէն գացող «ուխտաւոր»ներու մասին քանիցս պատկերազարդ պատմու – խիւններ զրուեցան։

Չէ մոռցած դեռ պարապան Պէյրու – թէն Հայաստան գացող կնոջ, որ մաքս չվճարելու համար յայտնած էր թէ նը – ւէրներ բերեր է ամենայն Հայոց Կաթո – ղիկոսին եւ որուն պայուսակներուն մէջէն հանուեր էին մեծ քանակութեամբ նայլըն գուլպաներ, ծծկալներ, կանացի շապ – կներներ, շրթունքի ներկեր եւ այլ ա – րարկաններ։

Ոսկիի եւ ադամանդի չահագիտութիւ – նը սովորական էր զարձած։

Իրագէկները կը հաւաստեն թէ սեւ շուկան մի պատուի է խորհրդային բոլոր երկիրներու մէջ։ Հայաստան չէր կրնար բացառութիւն կազմել անշուշտ։

Երեւան այցելողները կը պատմեն թէ իշխանութիւնները աչք կը զոցեն տեղացիներու առեւտրական զործառնութեանց, որոնք սովորական են զարձած եւ կանոնաւորաբար տեղի կ'ունենան որոշ վայրերու մէջ, որոշ օրեր, մանաւանդ կիրակի օրերը։ Այս պարապան է, որ կը թուի թէ քաջալերած է «ոսկեղբայրական ղբօսաշրջիկները», որոնք «տարեկան հինգ – վեց անգամ զալիս են հայրենիք... նրա պատուի հետ խաղալու»։

Այժմ որ դիմակազերծ են եղած փարիսեցիները, դպիրներն ու կեղծաւորները, կը յուսանք որ Հայրենիքի դուռները կը փակուին ամէն կարգի չահագէտ « Հայասանասէր»ներու առջեւ։

ՀՐԱՆՏ–ՍԱՄՈՒԷԼ

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՖՐԱՆՍԱ

ՎԱՐՉԱՊԵՏԸ ԿՐ ԽՕՍԻ ՊԱՏԿԵՐԱՍՓԻՒՌԷՆ

Կառավարութիւնը ձեռնարկած է ծանր միջոցներու առաջքն առնելու համար, Կղզտնի Բանակի գործունէութեան։

Նախարարապետը անգամ մը եւս յիշեց թէ կառավարութեան ալժերական քաղաքականութիւնը ինքնորոշման քաղաքականութիւնն է։ Մինչ այդ ինքնորոշումը հարկ է սակայն պինդ մնալ։ բայց այս քաղաքականութիւնը մեծ ընդդիմութեան կը բախի, «մէկ կողմէն կամ միւսէն— դիտէք թէ որու մասին կ'ուզեմ խօսիլ — կը վարանին վարուելակերպի մը առջեւ որ, սակայն անփոխարինելի է, ինչպէս կը վարանին յեղաշրջումի մը, որ բնական բաներուն մէջ է եւ որ, ի վերջոյ, Ալժերիոյ լաւագոյն բախտն է »։

Տըպրէ , ապա, կ'անդրադառնայ ծայրայեղներուն որոնք իրենց ոճրային զործունէութիւնը։ Մայր Հայրենիք փոխադրած են եւ որոնք այդ ձեւով միայն Ֆրանսայի տկարացումը ձեռք կը ձգեն, ինչ որ կը նշանակէ Ֆրանսայի հակառակորդներուն յաղթանակը։ Ծայրայեղները կը տարածուին ի վնաս երկրին չահերուն։ Ցաճախ ապրուած փորձառութիւն մըն է որ պէտք է աչքերը բանայ։ Ծայրայեղ Ձախը կ'ուզէ մենաիրութիւն ստեղծել։ Ծայրայեղ Աջը կ'ուզէ անիշխանութեամբ նոյն նպատակին հասնիլ։Միծամղելի է երբ մէկ կամ միւս կողմը հայրենասէր կը կոչէ ինքզինք։ Տըպրէ կ'ըսէ նաեւ թէ այս արարքներուն հեղինակները կը կարծեն թէ անպատիժ պիտի մնան, ճիշդ է որ ժողովրդավարութիւնը ուշ եւ զժուար կը պատժէ, կը յարդէ անհատական տգտտութիւնները ։ Եւ վարչապետը կը յայտնէ թէ կառավարութիւնը քանի մը չարաթէ բաղամաթիւ արդելափակումներ հրահանգած է։ Գալիք օրերուն բազմաթիւ ուրիշ որոշումներ պիտի տրուին , օրինակի համար Զինուորական Ատեանները ատչեւ դատավարութեանց ձեւը կերպութիւնները պիտի արագացուին ։ Միւս կողմէ, Ներքին նախարարը իսկապէս զօրաչարժի մը ձեռնարկած է ոստիկանական եւ կարգապահութեան չարքերուն մէջ։ Ծանր հարուածներ տրուած են արդէն անոնց որ անիշխանութիւն կը փորձեն ստեղծել, աւելի ծանր հարուածներ ալ պիտի տրուին ։

Այս առթիւ տրուած որոշումներուն մէջ յիշենք թէ կրնան երեսփոխան Տոքթ· Մէնկիի առեւանգումին պատասխանատուները Զինուորական Ատեանի առջեւ պիտի քաշուին, ինչպէս նաեւ Թուլուզի փլասթիէօրները։

ԱԼԺԵՐԻԱ

15·000 ԵՒՐՈՊԱՑԻՆԵՐ ՅՈՑՑ ԿԸՆԵՆ

Օրանի մէջ ընդհանուր գործադուլը կը չարունակուի եւ 15·000 Եւրոպացիներ ցոյց մը կատարեցին, բողոքելու համար որ նախորդ օրը յուշարձանին առջեւ զրուած ծաղկեպսակները վերցուած են ։ Այս լուրը որ կը տարածուէր բերնէ բերան արդէն լարած էր մթնոլորտը երբ երեք մահափորձեր աւելի եւս ձգտուած կացութիւն մը ստեղծեցին։ Մահմետական մը զաղտնի հարուածով մը դեպի կը բռնէր 63 տարեկան եւրոպացի մը , քիչ եւոք մահմետական փաստաբան մըն էր որ կը սպաննուէր։ Նոյն օրը մահմետական ահաբեկիչ մը կրակ կը բանար Եւրոպացիներու եւ մահմետականներու վրայ ։ Այս բոլորին իրրեւ հետեւանք ցոյց մը տեղի կ'ունենար, համեմատաբար հանդարտ , բայց ծանր միջադէպ մը կը պատահէր։ Լուր մը տարածուած էր թէ երկու մահմետականներ դիտումով իրենց կառքին տակ առած էին երիտասարդ եւրոպացի մը։

Այս պատճառով եւրոպացի ամբոխը խուժեց ոստիկանատուն ուր ապաստանած էին երկու մահմետականները եւ լինչի ենթարկեց զանոնք ։

Լուսարձել հռչակուեցաւ ժամը 19ին ։

Ցիշենք նաեւ թէ Օրանի Թաղապետարանի խորհուրդը, առանձին բանաձեւումով ցաւ յայտնած էր այն որոշումին համար որ տրուած էր Նախապէս Մեռեալներու Յուշարձանին առջեւէն հանելու համար ծաղկեպսակները ։

Ալժէի մէջ ալ եւրոպացիները զրգռուած են ։

ՅՈՒՆԱԾԷՍ ՊԱՏԱՐԱԳ ՊՈԼՍՈՅ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ

ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆ ԿՐ ՆԱԽԱԳԱՀԷ ԱԹԵՆԱԿՈՐԱՍ ՊԱՏՐԻԱՐՔ

Անցեալ կիրակի Պէյօղլուի Ս· Երրոր – դութիւն եկեղեցւոյ մէջ Յունածէս Ս· պատարագ մատուցուեցաւ ձեռամբ Հէյ – պէլիի Ասատուածաբանական վարժարանէն Տ· Տիրնիսիոս քահանայի, որուն կը սպասաւորէր Յունաց Պատրիարքի Բ· Տիաքոսը Տ· Էմանկելոս։

Ասկէ առաջ 1959ի ամրան Հայածէս Ս· պատարագ մատուցուած էր Մեծ Կղզիի Յունաց եկեղեցիին մէջ, որուն նախագահած էր Տիրան Արք· Ներսոյեան ։

Կատարուած կարգադրութեանց համաձայն, Հայ եւ Յոյն համայնքի ներկայացուցիչներուն համար եկեղեցւոյ մէջ , դասէն մինչեւ Ատեանի կէսը յատկացուած էր, ձախակողմը Յոյն, իսկ աջա – կողմը Հայ հրաւիրեալներու ։

Մինչ մէկ կողմէ կը կատարուէին ա – ռաւօտեան երկեցողութիւնները, Շնորհք պատրիարք Գալատեան ինչպէս նաեւ Խաղ Աչապահեան եւ Սուրէն Ջէմճեան Սրբազանները կը սպասէին խորհրդարանը։ Ս· պատարագի սկզբնաւորութեան ժամանեց Յունաց Տիեզերական պատրիարքը իր հետեւորդներով որոնք դիմաւորուեցան եկեղեցւոյ արտաքին դուռէն եւ երկու պատրիարքները ողջագուրուեցան։ եկեղեցւոյ զանգակները ողջունեցին Աթենակորաս պատրիարքի ժամանումը ։

Երկու պատրիարքները իրենց հետեւորդներով եկեղեցի մտան ։

Դասին մէկ կողմը յատկացուած էր յոյն պատրիարքարանի պլիսաւոր անձանց ուր տեղ էին զրաւած Յոյն Հիւպատոսական պաշտօնատարները, Փորթուկալի Հիւպատոս եւ Կիւլպէնկեան Հիմնարկի ներկայացուցիչ Պ· Ալբեվանել եւն· ։

Օրուան արարողութեան նախագահեց Աթենակորաս պատրիարք, իսկ քարոզ ուղերձը կարդաց Շնորհք պատրիարք Գալատեան ։

Շնորհք Պատրիարք նախ եղբայրական սիրով եւ յարգանօք ողջունեց Յունաց Աթենակորաս պատրիարքը ինչպէս նաեւ օրհնութեամբ անդրադարձաւ այն իրողութեան որ Յոյն Օրթոտոքս եկեղեցւոյ եւ Հայոց Առաքելական եկեղեցւոյ պատմականները պաշտամունքի հաւաքուած են նոյն յարկի տակ ։ Ապա անդրադարձաւ որ Յունուար 18–25 ամէն տարի ամբողջ Քրիստոնէական աշխարհի կողմէ ճանչցուած է որպէս «Քրիստոնէական Միութեան Աղօթքի Շաբաթ» երբ հոգեմտական կաթողիկէները եւ յոյն օրթոտոքսները ։ բողոքականներ եւ անկլիքաններ կ'աղօթեն, մեր եկեղեցւոյ իսկ բառերով՝ «Զի միաբանեսցէ զեկեղեցի իւր սուրբ շինեալ ի վերայ հիման Առաքելոց եւ մարգարէից»։

Պատրիարքը անդրադարձաւ երկու է – կեղեցիներու անցեալին, ապա կարդաց փոքրիկ աղօթք մը առնուած՝ Համաշխարհային եկեղեցիներու խորհուրդին՝ 1962ի «Աղօթքի Շաբաթ»ին համար պատրաստած թերթիկէն, ուր ցաւ կը յայտնուէր այն բոլոր ժխտական երեւոյթներն էին անտարբերութիւն , տգիտութիւն, նախապաշարում, մեծամտութիւն եւ չհամոզութիւն զիրար աւելի լաւ հասկնալու վարդապետական ամուլ հակաճառութիւններ, նեղմտութիւն եւ այլն, որոնց բոլորին համար Աստուծոյ Թողութիւնը կը խնդրուէր ։

ԱԹԵՆԱԿՈՐԱՍ ՊԱՏՐԻԱՐՔԸ ԿՐ ԽՕՍԻ

« Երկու խօսք ալ կ'ուզեմ ըսել հայկական ծիսական պատարագի մասին։ Թէ Տիրոջ զոհունակութիւն կը յայտնեմ ինչպէս նաեւ Պատրիարքին որ պատեհութիւնը տուաւ մեզ այս արարողութիւնը կատարելու։ Այն Աւետարանը որ քիչ առաջ կարդացուեցաւ միեւնոյն բաները կ'ըսէն ։

« Առաջին անդամն է որ այսքան բազմութիւն կը տեսնեմ քրիստոնեայ եկեղեցւոյ մէջ։ Շնորհակալութիւն կը յայտնեմ կարգադիր յանձնախումբին ։

« Հայ եկեղեցւոյ մէջ չատ բաներ տեսանք ։

« Պատրիարքին կը մաղթեմ երկար եւ արեւշատ տարիներ, որ կատարէ իր առաջադրութիւնները, այս սկսուած զործը իրեն պիտի ձգենք չարունակելու համար։ երիտասարդ է, աղնիւ սիրտ մը եւ ասիկա հայ ազգին պատիւ մըն է» ըսելէ վերջ երջանկայիշատակ Պատրիարքը յանդիմանեց Հայրապետական մաղթանքը եւ Հայր Մերը երգելով վերջ դուաւ օրուան հանդիսութիւնը ։

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԿԱՐԴԻՆԱԼ ՊԷՄ մամուլի ասուլիս մը տուաւ յառաջիկայ Տիեզերական ժողովին շուրջ։ Թուականը կարելի չէ որոշ ըսել, որովհետեւ պատրաստութիւնը չատ մանրակրկիտ է։ 2500 մասնակցողներ պիտի ըլլան։ Կարդինալը յայտնեց թէ բաժնուած եկեղեցիներու դէմեր պիտի մտա – նակցին կարգ մը նիստերու ։

ՄՈՍԿՈՒԱՅի Արտաքին Նախարարութիւնը ի պատասխան այն մեղադրանքին զոր նախագահ Քենըտիի եղբայրը ըրաւ Խ· Միութիւն երթալու, յայտնեց թէ երթը չէն հրաւիրած Ռոպըրթ Քենըտին ։

ՍՈՒՐԻՈՑ եւ Իրաքի վերջերս ունեցած խօսակցութեանց իրրեւ արդիւնք հրատարակուած հասարակաց զեկոյցը կ'ըսէ թէ բանակցութիւններ պիտի տարուին պինուորական համաձայնադրի մը համար։ Այ – դաշնակիցի իրենց քաղաքականութիւնը պիտի չարունակեն ։

ԱՐԵՒԵԼԵԱՆ Գերմանիոյ մամուլի դատակալութիւնը հաղորդեց թէ «Փրանքեւերման ընկերութիւն մը» պիտի հիմնուի որ պիտի «ճառագայթէ բովանդակ արեւելեան Գերմանիոյ վրայ եւ Թոյլ տայ որ այդ հանրապետութիւնը աւելի մօտէն ճանչնայ Ֆրանսացի ժողովուրդին յառաջդիմական աւանդութիւնները »։

ԱԼԻ ՓՈՒԱՏ ՓԱՇԱՅԻ ՅՈՒՇԵՐԸՆ

—o—

Ա·

Ալի Փուատ փաշա Թուրքիոյ Միլլի կառավարութեան առաջին դեսպանն էր Մոսկուայի մէջ, 1920էն մինչեւ 1922 — Հայաստանի համար բախտորոշ տարիներուն: 1955ին Պոլսոյ մէջ 348 էջնոց գիրքով մը հրատարակած է իր յուշերը, ո – րոնցմէ թարգմանիչը քաղած է մեզի համար հետաքրքրական հետեւեալ հատուածները ·—

ԿՈՎԿԱՍԸ ԵՒ ԲՈԼՇԵՒԻԿՆԵՐԸ

Հիւսիսային եւ հարաւային Կովկասի կառավարութիւններէն ոչ մէկը բոլշեւիկներուն ընդունելի էր: Ոմանց համեմատ անոնց ցոյց տուած թոյլատու վերաբերումը նոյն չրջանին մէջ բոլշեւիկներուն ակարութեան պէտք է վերագրել: Հիւսիսային Կովկասի լեռներէն Ատրպէյճանը դրաւող զօրամասը 12·000 հոգիէն աւելի չէր եղած ...

Եթէ Ատրպէյճանի անկախութիւն տալու խոստումը չըլլար, այդ տկար ուժով բոլշեւիկները երկրին չէին կրնար տիրանալ :

Վերջերս Վրացիներու եւ համայնավար միւսլիմաններու միջեւ, ինչպէս եւ Մ· Ռուսիոյ հետ հաշակցողութիւն զոյացած ըլլալու մասին կը խօսուէր: Իրականին մէջ, սակայն, Անգլիոյ կողմնակցութեան նէն ձեռք չէին քաշած: Վրաստանի համայնավարները ամբողջութեամբ չէզոքացուած էին :

Հայաստանի դաշնակ կառավարութիւնը նոյնպէս Անգլիոյ կողմնակից էր : Այնուամենայնիւ, Հայերուն մէջ, ուրիշ ազգերու բաղդատմամբ, բոլշեւիզմը աւելի տարածուած էր: Հայ բոլշեւիկները, Հայաստանը իսլամ կառավարութիւններ – ուն չըջապատուած ըլլալուն պատճառով, Թուրքիոյ հետ հաշակցողութեան վարու կողմնակից էին:

ՌՈՒՍԱՍՏԱՆԷՆ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՊԻՏՈՑՔՆԵՐՈՒ ՄԵՐ ՊԱՀԱՆՋԸ

Մոսկուայի Թուրք պատուիրակութեան ղեկուորական խորհրդական ու սպայակոյտի անդամ ղեր – վնդապետ Սէֆի պէյի 29 Օգոստոս 1920 Թուին տուած ծանուցագիրը :

4–3 դէրմանական , 4–1 օսմանեան մառդիչ , երկու հարիւր հազար հրացան, տինդ միլիոն փամփուշտով :

350–400 դաշտային զօրաւոր տասնու – կէսնոց թնդանօթ : 4 – 3 չռափնել եւ 4–1 (օպիւներու) համար կէսառկէս 75 հազար ռումբ, իսկ իւրաքանչիւր թնդանօթի համար առնուազն հազար ռումբ , ամէն մէկուն 15·000փամփուշտի հաշիւով, ինչպէս նաեւ պահեստի մասերով :

Հինդ հարիւր գնդացիր , երկու հարիւր գաշտային հեռաթոս եւ բաւական քանակութեամբ կապոյտ՝ մինչեւ հինդ հարիւր քիլոմեթր տարածութեան վրայ լսուելիք· երկու հարիւր անթել հեռագրի կայան – ներ , երկու հարիւր բեռնատար եւ հա – րիւր մարդատար ինքնաշարժներ, քառասուն մարդատար ինքնաշարժներ, երեք զօրաբանակներու թնդանօթաձիգ դուն – դերու ձիերուն յատուկ կազմածներ :

Հարիւր հազար պինուորի հագուստ եւ պիտոյքներ , յիսուն հազար վերարկուի համար ասուի, փամփուշտի մեքենաներ, էսկիչէհիրի զործարանը արտադրողական վիճակի հասցնելու համար անհրաժեշտ կազմածներ· էրզրումի մէջ՝ հրացանի զործարան· երկաթուղագծեր, մինչեւ Հայաստանի վրայով ճամբայ բացուիլը· Նովոռոսիյսկէն ամսական հինդ հազար փութ (վեց հարիւր հազար քիլոկրամ) պէնզին եւ ծովային փոխադրութեան համար ծովային չարժակներ :

1920 Օգոստոս 30ին , արտաքին զօր – ծոց կոմիսարութեան հրաւէրով տեղի ունեցած հանդիպումին՝ երկու կողմերու ընթացիկ զործերուն մասին դիրար տեղեկացան, ուր առանց բացառութեան մեռան բոլորն ալ :

Գնդակահարուած զօրավարներուն մէկ կար մէկը՝ եաքիր անունով: Այնպիսի մոլեռանդ համայնավար էր, որ չէր կրնար հասկնալ թէ իր դէմ կատարուած սխալ ամբաստանութիւնները ուրկէ՞ մէկտեղ ելան: Համոզուած էր, որ Սթալինին խաբուած էր եւ վարչաձեւին թշնամիներուն կողմէ կազմակերպուած սադրանքներու զոհ զացած էր :

Զինք գնդակահարողներու երեսին պռացած էր՝ «կեցցէ՛ կուսակցութիւնը · կեցցէ՛ Սթալին»:

Երբ եաքիրի վերջին խօսքերը իրեն յայտնեցին, Սթալին ուղղակի կատղեցաւ եւ անլուր հայհոյանքներ տեղացուց «անմիտ» զօրավարին հասցէին :

Այս մանրամասնութիւնները կը պարտինք Խրուչչեւին որ, իր հերթին, Սթալինի կազմակերպած «մեծ մաքրարշաւ – ման» մէջ իր դերը ունեցած է :

Բանակէն ներս կատարուած այս մաքրարշաւը չափազանց ցաւալի հետեւանքներ ունեցաւ Խ· Միութեան համար: Նախ՝ բանակը զրկուած եղաւ Սպանիոյ եւ Մոնղոլիոյ Արեւելքի մէջ ռազմական փորձառութիւն ձեռք ձգած զինուորական զեկավարներէ : Ապա՝ հիմքէն կացնահարեց բանակէն ներս անհրաժեշտ եղող «տիսիպլին»ը, քանի որ, կ'ըսէ Խրուչչեւ, «Տարիներ չարունակ ամէն աստիճանի սպաներուն եւ նոյնիսկ զինուորներուն սորվեցուցին «դիմակազերծ ընել» իրենց մեծաւորները»:

Այս ձեւով ալ դոնէ մասամբ կը բացատրուի Ֆ· աշխարհամարտին սկզբնական չրջանին յուսալքուած եւ կարող զեկավարներէ զրկուած խորհրդային բանակին արձանագրած պարտութիւնները :

Սթալինի արիւնռւշտ խենթութիւնը դրեթէ պատճառ պիտի դառնար իր երկրին կորստեան : Առանց Մ· Նահանգներու օգնութեան , Խ· Միութիւնը անխուսափելի կերպով պիտի պարտուէր Գերմանիային :

Եւ ըսել, որ Սթալինի ողջութեան իրեն տուած յորջորջումներէն մէկն ալ էր «աշխարհի պատմութեան ամէնէն մեծ զօրապետը »···:

ՈՒԹԵՐՈՐԴ ՈՒՆԿՆԴՐՈՒԹԻՒՆ

ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ

1956 տարուան Փետրուար ամսու 24էն 25ի դիշերն ենք: Համայնավար կուսակցութեան 20րդ համագումարին 1600 պատգամաւորները զաղտնի նիստ կը դումարեն: Խրուչչեւ չորս ժամէ ի վեր կը խօսի եւ կը թուէ Սթալինի անհամար ճիրաններուն մէկ մասը :

Հասած է ցեղասպանութեան բաժնին :

(25 Շար·)

ՀԱՅԱՍՏԱՆ

—o—

ՊԱՑՔԱՐ՝ ԹՄՐԵՑՈՒՑԻՉ

ԿՈՐՇԱՑՈՂՆԵՐՈՒՆ Դ[illegible]

Հայաստանի Գերագոյն Խորհուրդի նախագահութիւնը նոր հրամանագրով [illegible] որոշ փոփոխութիւններ մտցուց քրէական օրէնսդրքի թիւ 229 յօդուածին մէջ, որ կը վերաբերի թմրեցուցիչներ զործածողներուն եւ ծախողներուն :

Նոր հրամանագիրը այսպէս կը սահմանէ վերոյիշեալ յօդուածը :— «Առանց բժշկական արտօնութեան մորփին, քոքայինի եւ այլ թմրեցուցիչ դեղեր հայթայթելը կամ զործածելը, ափիոն, հաշիշ եւ թմրեցուցիչ այլ նիւթեր ծխելը կամ այդ նպատակով ձեռք բերելը՝ կը պատժուի մինչեւ մէկ տարի բանտարկութեամբ, կամ նոյնքան ժամանակի համար կը զրկուի ուժանակիր աշխատանքներու [illegible]

զաքին մէջ պատնէշ եւ երթեւեկի արգելք զրուելէն եառ ութսուն հազար զործաւորներ չեն կրնար արեւմտեան մասին մէջ աշխատիլ ասկէ յառաջացած զործաւորի նուազումը պիտի լրացուի արեւմտեան Գերմանիայէն զործաւորներ բերելով եւ կատարելագոյն մեքենաներով զործածելով, ուրեմն այս նպատակով պիտի զրամ տրամադրուած է պիւտճէին մէջ :

Վախէ հեռացողներուն թիւը մեծ չ, եւ ասոնք կը ներկայացնեն տարիքոտներ կամ զործով քաղաքին հետ առընչութիւն չունեցողներ :

Մասնաւոր ուշադրութեան արժանի է որ զպրոցի, համալսարանի, արուեստի, ժողովրդական կրթութեան համար ցարկացուած սովորական 56 միլիոնի վրայ երեսուն միլիոն եւս ծախսել զրաղրուած է, նոյնպէս՝ ընդհանուր պիւտճէէն աւելի ըլլալով ընդհ· վարչութեան եւ քաղդէութեան 6·5 միլիոն, ոստիկանութեան եւ զատարանի 56 միլիոն, քաղաքային փոխադրական միջոցներու 38·5 միլիոն, եւեմտական վարչութեան 15 միլիոն, բացառիկ ծախքերու եւ չինարարութեան 35 միլիոն, 11 քաղաքամասերու օժանդակութեան եւ 12 նոր մանկամսուրներու չինութեան 9·3 միլիոն :

Մենք առիթ ունեցանք Պերլինի վերաչինեալ օփերային մասին զրելու «Ցառաջ»ին մէջ: Այժմ վերջացնենք արձանագրելով որ երկու չաբաթ առաջ հիմնաքարը զրուեցաւ Փիլհարմոնիի նոր չէնքին, որ պիտի արժէ յիսուն միլիոն մարք: Առանց առաստաձեան նպատակի՝ այդ մէկ մշակութային ձեռնարկ կրնայ լրջորոշութեան յոյս ներչնչել ներկայ ժամանակին: Այս իրողութիւնը լաւ ըմբռնած ըլլալ կը թուի Գերմանիայ վարիչները :

Պ· ՓՐՈՒՆՃԵԱՆ

կամ կը զատապարտուին տուգանքի» եւայլն :

ՆՈՐ ՁԵՌԱԳԻՐՆԵՐ

Մատենադարանը անցեալ տարի հարստացաւ արտասահմանէն ստացուած 130 նոր ձեռագիրներով : Ասոնք կը վերաբե – րին. – ԺԴ· դարերուն եւ կ'արծարծեն Միսական , դիտական , պատմական , աստուածաբանական նիւթեր :

Այս ձեռագիրներուն մեծ մասը իրեւ նուէր ղրկուած են Թուրքիայէն, Մ· Նահանգներէն, Սուրիայէն, Ռումանիայէն , ինչպէս նաեւ Որս· Միութեան զանազան քաղաքներէն :

Ուշագրաւ է միջնադարեան ձեռագիր – ներէն մէկը, որ կը պարունակէ հայկական 150 առակներ : Ասոնց մէջ կան մեզի անծանօթ բազմաթիւ առակներ :

Նոր ձեռագիրներուն մէջ կը գտնուի Ա– րիստոտելի «Իմաստասիրութեան» հայերէն թարգմանութիւնը : Այս արժէքաւոր գործը լատիներէնէ հայերէնի թարգմանուած է 1673ին Սահփանոս Լեհացիի կողմէ՝ «համաձեռագ բնականաց» վերտառութեամբ :

Մատենադարանին կարծիքով այս նոր ձեռագիրները չատ արժէքաւոր են : Ա– զգաբեւ, ըստ իրենց, կը ներկայացնեն հայ հին պատմագիրներու, բժիշկներու , տիեզերագէտներու գործերը, որոնք կը վերաբերին առեւտրական, տնտեսական եւ մշակութային ասպարէզներուն ու մի– եւնոյն ատեն ցոյց կուտան հին ժամանակներու մարդոց ըմբռնումները, դի – տական տեսակէտները :

Ներկայիս Երեւանի Մատենադարանը ունի 10·836 հին ձեռագիրներ, որոնց 10·103ը հայերէն, իսկ մնացեալ 733ը՝ արաբերէն, պարսկերէն, յունարէն, վրացերէն, հին սլաւոներէն, լատիներէն , երբայերէն եւայլն :

ՆՈՐ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Վերջերս ժողովները դումարած են Հայաստանի Գերագոյն Խորհուրդի նախագահութիւնը, Հայաստանի Կոմպարտիայի (համայնավար կուսակցութեան) Կեդր· կոմիտէն եւ Հայաստանի Նախարարներու Խորհուրդը :

Գերագոյն Խորհուրդի նախագահութիւնը քննած է, թէ ինչ արդիւնք ցոյց տուած է «Հանրօգուտ աշխատանքէ խուսափող եւ հակահասարակական մակաբոյծի կեանք վարող անձերու դէմ պայքարը ուժեղացնելու մասին» տրուած որոշումը, որ իրրեւ հրամանագիր հրապարակուեցաւ անցեալ տարի (1961, Յուլիս 15) : Օրէնքին հրապարակումէն ի վեր 700 մակաբոյծներ տրամադրութիւն ցոյց տուած եւ հանրօգուտ աշխատանք – ներու նուիրուած են տրդէն : 78 հոգի աքսորուած են :

Հակառակ արձանագրուած այս յաջողութեան, Նախագահութիւնը ցաւով նկատած է, որ Հայաստանի մէջ դեռ կան մեծ թիւով մակաբոյծներ : Ասոր պէհառը պատճառը, ըստ Գերագոյն Խորհուրդի Նախագահութեան, «տեղ – կան մարմիններու անբաւարար աշխատանքին հետեւանքն է» : Արդարեւ , զտնուած են մինչեւ իսկ չրջաններ, ինչպէս Երեւանի երկու չրջանները, Լենինական, Կիրովական, Աբովեան, Կամօ, Ղափան, Մարտունի, Նոյեմբերեան եւայլն, որոնք քննած իսկ չեն Յուլիս 15ի որոշումը : Իսկ այլ վայրերու մէջ գտնացած են քննելով հրամանագիրը, առանց որեւէ կարգադրութիւններ ընելու : Ուրիշներ՝ տալճեպ կարգադրութիւններ ըրած են միայն :

Գերագոյն Խորհուրդի նախագահութիւնը քննութեան առած է նաեւ Հաղորդակցութեան եւ Թղթատարութեան կանոնութիւնները : Ծրուած են համապատասխան որոշումներ :

Միացեալ Նիստի մը ընթացքին, Հայաստանի Կոմպարտիայի կեդրոնկոմը եւ Հայաստանի Նախարարներու Խորհուրդը ղրկած է «դպրոցները պատրաստուած ուսուցիչներով ապահովելու հարցով » :

Նկատի առնուած է, որ պատրաստուած եւ իրենց կոչումին դիտակից ուսուցիչներով դպրոցները ապահովելու հարցը չատ կարեւոր է ընդհանուր կրթութեան յաջող զարգացման համար : Միւս կողմէ, ընդհանուր պարտադիր ութամեայ կրթութիւնը իրագործելու, դիշերօթիկ եւ կիսերկօթիկ դպրոցները հիմնելու եւ դիշերային դասընթացքներ հաստատելու առընչութեամբ զգալի կերպով աւելցած է պատրաստուած ուսուցիչներու եւ դաստիարակներու պահանջը : Իրբաղատարար, սակայն, ուսուցիչներ պատրաստելու աշխատանքները նկատելի կերպով ետ կը մնան երկրին պահանջներէն : Ծանօթ իրրեւ ուսուցիչ եւ դաստիարակ կը նշանակուին այնպիսի անձեր, որոնք չունին համապատասխան պատրաստութիւն : Վերջապէս անբաւարար հոգածութիւն ցոյց կը տրուին դիւղացի երիտասարդներու բարձրագոյն կրթարաններու մուտքին, դիւղերու մէջ աշխատող ուսուցիչներու հանպատութեան համար եւայլն :

Որով, Հայաստանի Կոմպարտիայի կեդրոնկոմը եւ Նախարարներու Խորհուրդը պաշտօնապէս կը յանձնարարեն Պետպլանին եւ Հայաստանի Նախարարներու Խորհուրդի Բարձրագոյն եւ միջնակարգ մասնագիտական կրթութեան կոմիտէին, նկատի ունենալ ուսուցիչներու եւ դաստիարակներու պահանջը, երբ կը կազմեն ուսումնական իրենց ծրագիրները : Միեւնոյն ատեն, որոշում տուած են, 1962 – 63ի ուսումնական տարեշրջանէն սկսեալ, աւելցնել մանկավարժական ուսումնարաններու ընդունելութիւնը, ինչպէս նաեւ ռուս եւ օտար լեզուներու մանկավարժական հաստատութիւններէն ներս աշակերտներու մուտքը, որպէսզի ապահովի 1 – 4 դասարաններու եւ օտար լեզուներու ուսուցչական կազմը : Միւս կողմէ, բացատրաբար, մէկ – երկու տարուան համար պիտի ստեղծուին միամեայ մանկավարժական դասարաններ, միջնակարգ դպրոցներու չրջանաւարտներէն ուսուցիչներ պատրաստելու համար :

Կը նախատեսեն չինել մանկավարժական դպրոցներու չէնքեր Երեւանի եւ Կիրովականի մէջ :

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՕՐԸ

ՄԱՐՍԻԼԻ.— Յունուար 13ին, Շաբաթ իրիկուն, «Մանուկներու Օր»ուան հանդիսութիւնը կատարուեցաւ՝ Պօմոնի Սահակ Մեսրոպ սրահին մէջ, նախաձեռնութեամբ եւ հովանաւորութեամբ՝ Կապոյտ Խաչի մասնաճիւղի վարչութեան :

Մնողքներու եւ երիտասարդներու կիսկիկ բազմութիւն մը եկած էր՝ յարգանքի եւ քաջալերանքի իր բաժինը բերելու մատաղ սերունդին :

Հանդէսին բացումը կատարեց՝ Կապ· Խաչի դասընթացքին ուսուցիչը, հետեւեալ հակիրճ խօսքերով.— «Բիւրաւոր հայ սերունդներ ապրած ու անցած են, բայց չեն ունեցած նման, մասնայատուկ «Օր»

ՁԱՅՆԵՐ ԳԱԻԱՌԷՆ

« ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՕՐԸ »

ՄԱՐՍԻԼԻ.— Յունուար 13ին, Շաբաթ իրիկուն, «Մանուկներու Օր»ուան հանդիսութիւնը կատարուեցաւ՝ Պօմոնի Սահակ Մեսրոպ սրահին մէջ, նախաձեռնութեամբ եւ հովանաւորութեամբ՝ Կապոյտ Խաչի մասնաճիւղի վարչութեան :

Մնողքներու եւ երիտասարդներու կիսկիկ բազմութիւն մը եկած էր՝ յարգանքի եւ քաջալերանքի իր բաժինը բերելու մատաղ սերունդին :

Հանդէսին բացումը կատարեց՝ Կապ· Խաչի դասընթացքին ուսուցիչը, հետեւեալ հակիրճ խօսքերով.— «Բիւրաւոր հայ սերունդներ ապրած ու անցած են, բայց չեն ունեցած նման, մասնայատուկ «Օր» մը : Դուք ունիք, այսօր Մանուկներու օրն է· յոյսի եւ լոյսի օր է անիկա մեզի համար : Մշակեցէք ձեր սիրտը , միտքն ու հոգին եւ ապրեցէք իրրեւ ճշմարիտ մարդիկ, արժանաւոր Հայեր : Դուք էք որ ներկան կը կապէք վաղուան, ինչպէս որ մենք կապեցինք երէկն այսօրուան : Սենք ալ, երբ մանուկներ էինք ձեզի պէս, ղրասեղաններու առջեւ քրտինք թափեցինք ու միտք չարչարեցինք, մեր կրթական մշակներուն եւ հայրերուն խոստանալով ըլլալ՝ մեր ցեղին պատուաբեր զաւակները, չարունակել իրենց դործը՝ զոհողութեան եւ անձնուիրութեան ոգիով : Ահա այսօր ձեր առջեւն ենք ու ձեր մէջ՝ որպէսզի դուք ալ մեզի պէս սիրէք ձեր մայրենի, պատուական լեզուն, ազգն ու հայրենիքը :

Ազնիւ հպարտանքով լեցուեցէք՝ այն դիտակցութեամբ թէ՝ դուք զաւակներն էք արժանաւոր եւ ընտիր ցեղի մը որ հայ կը կոչուի : Ինչպէս տօնուեցաւ երէկ ու կը տօնուի այսօր, վաղն ալ պիտի տօնուի ձեր «օր»ը՝ չնորհիւ Կապոյտ Խաչին որ պատրաստ է չարունակելու իր բոլոր բանուէր ճիգն ու զոհողութիւնները՝ ձեզի եւ ձեր մայրենի դաստիարակութեան համար : Ան կը յարատեւէ ու կ'աշխատի այն խոր դիտակցութեամբ թէ կը կատարէ՝ փրկութեան ազնիւ պարտք մը : Արժանի եղէք անոր սիրոյն եւ սիրեցէք զայն » :

Երկսեռ մանուկները ներկաներուն ընծայեցին հոդեկան անուշ վայելք մը՝ զեղարուեստական սեղմ բաժինով մը : Իմ – բովին երգեցին՝ «Ով մեծասքանչ դուռ լեզուս» :

Փոքրիկն Շուշանիկ Անդրէասեան արտասանեց եւ երգեց «Հրեշտակը» : Ցա – ջորդաբար արտասանեցին՝ Սեդա Փափազեան՝ «Փխրիկը» : Անի եւ Սօնիա Սէմէրճեան՝ « Ո՞վ , ո՞վ », «Ս· Ծնունդ եւ Նոր Տարի» : Անահիտ Մարգարեան՝ « Բարի աղջիկը» : Հերմինէ Աթիչեան՝ « Մաղթանք » : Թադուհի Համբարձում եան՝ «Ով Մեծասքանչ» : Յովհ· Շաքար եան՝ «Ս· Մեսրոպ» եւ Միսակ Պօղոս եան՝ « Մասիս»ը :

Կապ· Խաչի վարչութիւնը, ինչպէս ա – մէն տարի, բազմատեսակ ու բազմաթիւ նուէրներ բաչխեց ոչ միայն իր դասընթացքի մանուկներուն, բոլոր մանուկներուն, որ ներկայ էին այս հանդիսութեան : Երկսեռ Մանուկներու խանդավառութիւնն ու ոգեւորութիւնը հրճուանքով լեցուցին բոլոր հանդիսականներուն սիրտերը :

Թող անմար մնայ Կապոյտ Խաչի ճրագը եւ ապրին ու Հայ մնան հայ մանուկները :

Վ· Մ·

ԶՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ ՁԵՌԱԳԻՐՆԵՐԸ ՉԵՆ ՎԵՐԱԴԱՐՁՈՒԻԻ :

«ԾԱՌԱՋ»Ի ԹԵՐԹՕՆԸ (135)

ԹԻԱՊԱՐՏԸ

(ՎԷՊ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿԵԱՆՔԷ)

ԳՐԵՑ

ԱՐՄԷՆ ՇԻՏԱՆԵԱՆ

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Այսօր Թիմարա բոլոր քիւրա պէկերը յարդանքով մը կը վերաբերին անոր հետ անոր մէկ խօսքը չատ աւելի կ'արժէ, քան երբեք զատաւորի մը օրինական վճիռը : Ասոնք չեն ուրացուիր : Միայն թէ հը – պարտ է եւ ամէն բան իր կամայականութեան ծառայեցնել կ'ուզէ :

— Կարծեմ թէ Ջոջը չափազանց կը պաշտպանէ զինքը, անանկ չէ՞ :

— Ջոջը կը պաշտպանէ զինքը, որով – հետեւ բոլոր Թիմարցիներու աշխատանքը անոր կոկորդը կը լեցուի :

Պօղոս եպիսկոպոսը Ջոջին համար հաստատած էր մեծ գումարներ : Ասոր դիմաց ան կը պահանջէր, որ Ջոջ ամէն տարի Ս· Ծնունդին եկեղեցւոյ համար ոսկիներ կը հոսին ... : Ո՞ւր է ... ի՞նչ կ'ըլլայ այնքան դրամները, որոնք կը թափին Վանահօր մը ձեռքին մէջ· ո՞չ ապաքէն քաղաքը կը փոխադրուին ամէն տարի :

— Երբ Պօղոս եպիսկոպոսը Վահրամին վրայ այդ կերպ կը մտածէ, դուք ի՞նչ միջոց ձեռք պիտի առնէք կարենալ արդիւնաւորելու :

— Անձամբ տեսնելու պիտի երթամ ու իրեն պիտի յայտնեմ ապաղայ պատասխանատուութիւնը :

— Լի՞մ կ'ուզէք երթալ :

— Ո՛չ, իմացայ որ քաղաքը կը դանուի :

— Իր ապրականի՞ն տունը :

— Իհարկէ ... չարթուան երկու օրը հոն է , կ'ըսեն :

Վանական կ'ուզէր կուսակցութիւններու բռնած ընթացքին վրայ տեղեկութիւններ ունենալ, հետեւաբար հարցուց·

— Կուսակցութիւնները ի՞նչ չուրի վրայ են :

— Առ այժմ, իրարու դէմ չեն հակառակիր : Կը դգան թէ վտանգը հասած է իրենց դուռը կը դգան թէ Համիտեան խուժանը, քիւրա պէկը ու կառավարութիւնը չեն ապասեր որ մենք ալ մեր ծրագրերու տարբերութիւնը վերջացուենք ու այնպէս կուռի դաշտը նետուինք : Հաւատացած են թէ քիւրտը կեդրոնացումի համակիրը թողնելով, ապակեղրոնացումին եռեւէն զացող չի փնտռեր ... Շաչխանային գնդակն որու որ հասնի տարբերութեան չի նայիր, ըսել կ'ուզեմ : Ասիկա մտած է անոնց գլուխները մէջ : Ահաղին ծանրութեան մը ներքեւ կը գտնուին, որ կը ճնշէ ... եթէ բաժնուին իրարմէ , կորսուած են ... :

Ո՛հ, ամիկա մխիթարական է ... գոնէ , գոնէ ներկայ ալեւտալի օրերուս մէջ չը – հակառակին իրարու, ընդհատեց Վանական գառնութեամբ մը :

Ներսէս Արծրունին ընդհատելով Վանականին խօսքը , հարցուց ·

— Վանահայրը հո՞ս է :

— –Այո, հոս է, պատասխանեց Վանական :

— Ուրեմն պէտք է տեսնել գինքը :

— Փոխադրութի՞ւն մը կայ :

— Ձիւղ է :

— Ամիկա գիւրին է· ե՞րբ պիտի ըլլայ :

— Թերեւս այս գիշերը :

— Շա՞տ է :

— Հարիւր հատ մը կայ :

— Հարկ չէ Վանահօրը խօսիլ :

— Հապա՞ :

— Ես ամէն բան պատրաստած եմ :

– Ի՞նչպէս :

— Կրցած եմ գտնել ապահով միջոց մը ... անհոգ եղէք· Վազգէնի՞ խումբն է , եթէ ոչ Սիրվարդինն է :

— Վազգէնինն է :

— Ո՞ւր է, կարծեմ թէ Քիւրա Շէյխի մը հազուստը պահած էիք, ընդհատեց Ներսէս Արծրունին :

— Քովս է :

— Տուէք ինծի :

— Շատ աղէկ· ուրի՞շ :

— Քիչ մըն ալ երես քսելու մրուրէն պէտք է :

– Վանական բացաւ սնտուկը · ծրար մը հանեց, որուն մէջ կանաչ վերարկու մը, թուխ քօղոզ մը, ճերմակ փաթթոց մը ու հաստրկեկ կապտադոյն տիպլիկ մը կային : Ցետոյ փոքրիկ չիչ մըն ալ հանեց եւ դանոնք Ներսէս Արծրունիին յանձնեց :

— կարմիր կօշիկները ալ չէ՞ք ուզեր , հարցուց Վանական :

— Կօշիկներն ալ տուէք, մրմնջեց Ներսէս Արծրունին :

Երբ խորհրդաւոր ծրարիկը պատրաստուեցաւ, Ներսէս Արծրունին ոտքի եկաւ, ձեռքը բռնեց իր զաւազանն ու մեկնեցաւ :

Վանական մինակ մնաց : Իր սիրտը հանդարտած էր ինչպէս ծով մը՝ փոթորիկէն ետքը :

— Գնաց Մեծ Մարզը, մրմնջեց Վանական ինքնիրեն : Գնաց, ուր որ պարտականութիւնը կը մղէ զինքը ... Աստուած թող իր առաջնորդն ըլլայ ... :

(Շար·)

ԿԱՐԴԱՑԻՔ ՏԱՐԱԾԵՑԻՔ «ԾԱՌԱՋ»Ը

ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ՏԱՆ

Պ. Տատայեան (Մարսէյլ) իր աղջկան ամուսնութեան առթիւ յիսուն Ն. Ֆ. կը նուիրէ : Նոյն առթիւ եւ նոյն նպատակին Պ. Անդրանիկ Խաչատուրեան՝ յիսուն Ն. Ֆ. : (Ստանալ «Ցառաջ»էն) :

×

Տէփինէն Օր. Բրաբիոն Տապաղեան քրոջ Ն. Ֆ. կը նուիրէ Մշակոյթի Տան, իր այցելութեան առթիւ : (Ստանալ «Ցառաջ»էն) :

×

Մարսէյլի կարգ մը աղջայիններէ հանգանակուած գումար :

	Ն. Ֆ.
Պ. Լօրան Էօքսիւզեան	1000
Ս. եւ Վարուժան Օսքանեան	500
Պ. Պաղտասարեան	250
Օր. Պաղտասարեան	100
Պ. Գրլըճեան Լեւոն	250
Պ. Պանտիկեան	200
Այրի Տիկին Թէրզիպաշեան	200
Պ. Խոսրովեան	200
Պ. Քէօսէեան	100
Պ. Դարբինեան	100
Տէրոյեան եղբայրներ	100
Օր. Սոնիա եւ Նատին Պօղոսեան	100
Օր. Սոնիա Ղազարեան	100
Բ. եւ Գ. Ղազարեան	100
Պ. Գաբրիէլեան Զաւէն	100
Օր. Աննա Տէրոյեան	100
Օր. Ակինեան Անժէլ	100
Պ. Պըժեան	100
Պ. Պարսամ Յակոբեան	50
Պ. Պիպէոեան	50
Պ. Սերժ Սարգիսեան	50
Պ. Գասպարեան Հայրապետ	10
Պ. Գասպարեան	10
Փիէռ Ղազարեան	200
Ընդհանուր գումար՝	4070

ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԸ Կ'ԵՐԳԵՆ

ՄԱՐՏ 18ԻՆ

ԿԸ ՓՆՏՌՈՒԻ

Էջմիածինի չրջանից, Արմիկ Յովհան – նէսեանը, կը փնտռէ իր հարազատ եղբայրը՝ Աչոտ Յովհաննէսեան Ալէքսանի, Էջմիածինի չրջանից Սամադար գիւղացի : Անհետացած է վերջին պատերազմի ըն – թացքին : Տեղեկութիւն ունեցողներէն կը խնդրուի լուր տալ, Պ. Գրիչա Տէր Յա – կոբեանի, Թրավէրս Կրօժան, Շաթօ Կոմպէռ, Մարսէյլ (13) :

Ամերիկահայ Թէրթերէն կը խնդրուի արտատպել :

×

Պոլսաբնակ Տիկին Գոհարիկ Թէրզեան կը փնտռէ իր քոյրը՝ ԳՈՀԱՐԻԿ ԳԱՐ – ԶՈՒՀԻ ԹՈՎՄԱՍԵԱՆ, ծնեալ Տրապի – զոն, 1909, մօրը անունը՝ Տիգրանուհի, հօրը անունը՝ Հայկ, որուն հետքը 1915էն ի վեր կորսուած է : Հասցէ՝ Գոհարիկ Թէրզեան, Օմէռապէտ խան, խաթ 3, թիւ 18, Կալաթա, Խաթանպուլ :

Imprimerie Spéciale du journal « Haratch »
32, Rue de Trévise, PARIS (9e)

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ

Վարչութեան ժողովը տեղի պիտի ու – նենայ երկուշաբթի, 29 Յունուար, ժա – մը 18·30ին, Մշակոյթի Տան Շաւարշ Մի – սաքեան սրահին մէջ : Կը խնդրուի ամէն պաղաբար ներկայ ըլլալ : Կարեւոր օրա – կարգ :

Surprise Party

ՊԱՐԱՆՑԻԿ ԵՐԵԿՈՑԹ

կազմակերպուած Հ. Ց. Դ. Նոր Սե – րունդի Ալֆորվիլի մասնաճիւղին կողմէ :

Այս կիրակի, ժամը 15էն մինչեւ 22, Մշակոյթի Տան մէջ, 17 Րիւ Պիէօ :

Հաճելի մթնոլորտ, պար, պիւֆէ, ըն – տրուած սալեր (տիսք) :

ԾՆՈՒՆԴԻ ԵՒ ՆՈՐ ՏԱՐԻՈՑ

ՈՒՐԱԽ ՕՐԵՐՈՒՆ ԵՒ ԱՄԲՈՂՋ ՏԱՐԻՆ

Եւրոպայի Մեծագոյն Արեւելեան Վաճառատունը

ՊԱՀԱՍՏՈՒՐԵԱՆ խանութ մը չայ – ցելղին սեղանին վրայ ամէնէն հա – մով պատառը կը պակսի՝ մեծին ու պզտիկին համար : ՊԱՀԱՍՏՈՒՐԵԱՆ վաճառատան մէջ պիտի գտնէք ա – ւանդական ընդեղէններու եւ անու – շեղէններու ամէն տեսակը, անմրցե – լի գիներով :

Ապսպրանքի վրայ, ծրարի առա – քում Ֆրանսայի ամէն կողմ եւ դէ – պի արտասահման՝ Պելժիա, Զուի – ցերիա, Անգլիա :

ՊԱՀԱՍՏՈՒՐԵԱՆ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ
LYON

246, Rue Vendôme - Tél. MO 11-84
20, Rue Villeroy MO 32-10
65, Rue Robert LA 07-72

ԵՒ ԻՆԶՊԼԻՍ ՄԻՇՏ

Արմաւ, «պամիա», «եալանճի տոլ – մա», յունական «թուրլի», « պի – պէռ», տերեւ, Թահին հելվա, «վա – նիլյ», չոքոլա, «նուաղէթ», «լո – ղում», «սաղըզ», պլիստակ, Շիրակ օղի (41 – 45o), Իմմիբի չամիչ, «սուճուք», կեսարական «պաստըր – մա» : առաջնակարգ սուրճ, (fabra – vան եւ մոգա), համեմներ «մահ – լէպ», «սալէպ», ձիթապտուղ, ձէթ, «քաչքավալ» պուլկարական, ճեր – մակ պանիր ոչխարի կաթով : Ամէն կարգի պահածոներ, «քուսքուս», հարիսա, սումագ, թարամա, լա – բերտա, բաֆլաւա, fատայիֆ, տե – բեւ եւայլն :

ՊԱՀԱՍՏԻՐԵԱՆ ՀԱՄԱՏԱՏԻԹԻՒՆԸ

Ունի նաեւ մասվաճառատուն մը, որուն առաջնակարգ միսերը գոհա – ցում կուտան ամէնէն երբաճաշակ – ներուն : Ոչխարի, հորթի եւ եղան միս (քաշուած միս, եւայլն) :

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՕՐԸ

ԼԻՈՆԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ կապ. Խաչի Լիոնի մասնաճիւղի :

28 Յունուար, կիրակի կէսօրէ ետք ժա – մը 3ին, Սթիւտիօ Ֆրէֆի սրահին մէջ, 24 Րիւ Տիւճօար :

Գեղարուեստական բաժին.— Խմբերգ ; արտասանութիւն, Ծաղիկներու պար, հայկական պարեր եւ մանկական անա – կնկալներ :

Պիտի ներկայացուի փոքրիկ թատերախ մը՝ « ԿԱՂԱՆԴ ՊԱՊԱՆ » :

Ինչպէս ամէն տարի, այս տարի եւս կաղանդ Պապան իր նուէրները պիտի բաժնէ սրահին մէջ գտնուող բոլոր պզտիկներուն անխտիր :

Մուտքը ազատ է :

×

ՊՈՒՏՈՑԻ ՄԷՋ

Այս կիրակի կէսօրէ վերջ, ժամը ճիշդ 3·30ին, Առլաֆ Սօլֆերինօ սրահը, 235 Րիւ Մունէյրա :

Ճոխ յայտագիր :

«ԱՆԻՒՆ ԳԱՆՁԱՆԱԿԸ »

Մանկական թատերգութիւն : 4 արար
(Ատրիճէ Տատրեան)

Խմբերգ, մեներգ, պար եւ արտասա – նութիւն :

Նուէրներու եւ մրգեղէններու բաշխում :

Մուտքը ազատ է :

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱՎ

ԿԱՊՈՑՏ ԽԱՉԻ ՕՐԸ

Ց. Կ. Խաչի օրը կը տօնուի Ապրիլ 1ին, կիրակի, կէսօրէ վերջ, Շիմիի սրահը :

Հ. Յ. Դ.

ՓԱՐԻԶ.— Հ. Ց. Դ. Շրջ. կոմիտէի ներկայացուցչական ժողով այս Շաբաթ, ժամը 20·30ին, Մշակոյթի Տան մէջ :

Օրակարգ.— Շրջ. ժողովի օրակարգի ճշնութիւն :

ԼԻՈՆ.— Հ. Ց. Դ. Վարանդեան կոմի – տէն ժողովի կը հրաւիրէ բոլոր ընկերնե – րը, այս Ուրբաթ, ժամը 21ին, սովորա – կան հաւաքատեղին : Կարեւոր օրակարգ :

ԿՐՔՆՈՊԼԸ.— Հ. Ց. Դ. Եօթնեղբայր – եան կոմիտէն ընդհ. ժողովի կը հրաւիրէ Լանսէի, «Մուրատ» խումբի եւ Ռընաժի «Դէորգ Զավուշ» խումբի բոլոր ընկեր – ները, այս Շաբաթ, ժամը 20·30ին, դպրոցի սրահին մէջ : Կարեւոր օրա – կարգ :

ՅՈՒՇԱՏԵՏՐ

Ց. Կ. ԽԱՉԻ Պանեէզօ Քաչանի մասնա – ճիւղի վարչութիւնը ընդհ. ժողովի կը հրաւիրէ իր բոլոր ընկերուհիները այս Շաբաթ, ժամը ճիշդ 21ին, ընկերուհի Ա. Փափազեանի բնակարանը, Րիւ Շառլ Մի – շէլ, թիւ 6, Պանեէզօ : Կարեւոր օրա – կարգ : Կը խնդրուի ներկայ ըլլալ :

ԿԱՊ ԽԱՉԻ Փարիզի մասնաճիւղի վար – չութեան ժողովը այս Շաբաթ, ժամը 3ին : Մշակոյթի Տան մէջ : Պարահանդէսի հաշուետուութիւն :

ՀԱՄԱՒԱՐԲԵՐԴ. Հայր. Մխիթեան վալանսի մասնաճիւղի ընդհ. անդամա – կան ժողովը տեղի կ'ունենայ այս Շա – բաթ, ժամը 21ին, սովորական հաւաքա – տեղին : Ներկայ կ'ըլլայ կեդր. վարչու – թեան դէեանը : Ներկաներու թիւը մեծա – մասնութիւն պիտի նկատուի :

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Նախաձեռնութեամբ կապոյտ Խաչի Ալֆորվիլի մասնաճիւղին :

Յունուար 27, Շաբաթ, ժամը 20·30ին Մեզոն Ալֆորի Սալ տէ Ֆէթին մէջ :

Առնուվիլի Նոր Սերունդի կաւվարենց թատերախումբը կը ներկայացնէ՝

ԱՇԽԱՐՀԻ ԴԱՏԱՍՏԱՆԸ

ՀԱՅ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ

ՏԱՐԵԿԱՆ - ՅԵՐԵԿՈՅԹ - ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

Յունուար 28, Կիրակի, ժամը 16–24

LES AMBASSADEURS, 3, Avenue Gabriel, Champs-Elysées

Կը մասնակցին երկու հռչակաւոր նուագախումբեր

PIERRE DIEUZEY et ses Capétiens — JAZZ NEW ORLEANS
PEPITO GOMEZ — TYPIQUE TANGOS

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԾՈՒ ԲԱԺԻՆ

Կը խնդրուի կանխաւ ապահովել տոմսերը եւ սեղանները հեռաձայնելով

Հայ Կարմիր Խաչի կեդրոնատեղին Ելիզէ 67 – 03

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ : — Վարձուած սեղանները դրաւուած պիտի է ըլլան ամէնէն ուշը ժամը 19·30ին : Հակառակ պարագայ մը պարահանդէսին կազմակերպիչ յանձ – նախումբը որեւէ պատասխանատուութիւն չի ստանձներ :



ՃԱՇԱՐԱՆ

ԵԱՐ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԹԵԻԱՆԵԱՆ

Եւրոպական, հայկական եւ կովկասեան ընտիր ճաշեր :

Առաջնակարգ կովկասեան խորոված – ներ, շաշլիֆ, fարսմի :

ՀԱՃԵԼԻ ՄԹՆՈԼՈՐՏ

Bar Américain

AU CŒUR MÊME DES CHAMPS-ÉLYSÉES

4, RUE ROBERT-ESTIENNE
(Rue Marbeuf) PARIS - 8e
Téléphone : BAL. 31-21
Métro : F. D. Roosevelt

ԵՒՐՈՊԱՅԻ

ՄԵԾԱԳՈՅՆ ԱՒՏԱԴՐՈՒՅԸ

ՀԷԼՎԱ ԼՈԳՈՒՄ Սուսամ – ՀԷԼՎԱ

LE BOSPHORE MARQUE DEPOSEE

ԹԱՀԻՆ ՇԱՐՈՑ (ՌՈՃԻԿ) ՎԱՐԴԷ-ԱՆՈՅՇ

ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ...

CHOC-ALVA • CHOCO-LOC

Sté le BOSPHORE
SIÈGE SOCIAL
2, Rue Louis Astouin Marseille (2ème)

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

Le PREMIER QUOTIDIEN ARMENIEN en EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction et Administration : 32, Rue de Trévise - PARIS-9e

Fondé en 1925 — Téléph. : PRO. 86 - 60
R. C. Seine 57 A 2731 — C. C. P. Paris 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա՝ Տար. 50 Ն. Ֆ. — Վեցամսեայ՝ 27 Ն. Ֆ.
Արտասահման՝ Տար. 60 Ն. Ֆ. — Հատը՝ 0.25 Ն. Ֆ.

ԿԻՐԱԿԻ
28
ՅՈՒՆՈՒԱՐ
DIMANCHE
28 JANVIER
1962

38ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 9316 — 38e ANNÉE — Fondateur : SCHAVARCH MISSAKIAN — ՆՈՐ ՇՐՋԱՆ, 18ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 5117

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

"ԲԱԳԻՆ"

Նոր տարուան հետ լոյս աշխարհ եկաւ նոր պարբերական մը Պէյրութի մէջ՝ նը-ւիրուած հայ գրականութեան եւ ար-ուեստի :

Էր երբեմն Փարիզն էր զարձած Պոլսոյ ժառանգորդը՝ իբրեւ վառարան արեւմը-տահայ մշակոյթի :

Այդ հին բարի օրերուն Ֆրանսայի մայրաքաղաքին մէջ համախմբուած էին մեծ թիւով մտաւորականներ, հայաս-տանի Հանրապետութեան նախկին նա-խարարներ, պրազէտներ, բանաստեղծ-ներ, հրապարակագիրներ, հանրային գործիչներ եւ խոստմնալից երիտասարդ գրողներ :

Ժամանակի ընթացքին հետզհետէ նօս-բացան չարքերը, կեանքի բնական օրէն-քով, պակսեցան մտաւորականները : Ե-րէցներէն վերջ չտոնց կարզը եկած է նաեւ միջին սերունդի ներկայացուցիչ-ներուն : Դժբախտաբար նորեր չեն զար-ւեցնելու անդարձ մեկնողներուն տեղը :

Լոյս – քաղաքը մնաց ստուերի մէջ : Ու Լիբանանի մայրաքաղաքը զարձաւ սփիւռքի Հայութեան մշակոյթի կեդրո-նը, իր կրթական ու եկեղեցական հիմ-նարկութիւններով, իր մամուլով եւ հը-րատարակչական տուներով :

Բագին յատկանշական անունով մկրը-տուած է նոր ամսագիրը, յիշեցնելով համանուն պարբերաթերթը, որ Սահմա-նադրութեան շրջանի խաբուսիկ ազա-տութեան օրերուն յառաջապահ բաներն էր եղած Հ. Ց. Դ. Ուսանողական Միու-թեան խանդավառ երիտասարդներուն :

Նոր Բագինը հրապարակ կուգայ դառ-նալու համար «կեդրոնական եւ կեդրոնա-ձիգ բեմ» մը, նպատակ ունենալով քով քովի բերել գրողները, աշխատանքի մը-ղել զանոնք եւ հնարաւորութիւն տալ ա-նոնց արժանաւորապէս ներկայացնելու ի-րենց ստեղծագործութիւնները, բան մը՝ որ վերջին տարիներուն կը պակսէր :

Ահա՛ թէ ինչպէս կը ներկայացնէ Բագին իր առաջադրանքը.

« Երիտասարդ եւ լուրջ պատրաստու-թիւններու տէր սերունդ մը ունինք այ-սօր, որ իր խանդավառութիւնները պոռթկալու եւ հոգին պարպելու հրա-մայականի մը առջեւ կը գտնուի : Նա-խորդ երկու սերունդներու ներկայացու-ցիչներուն կողքին , այս թերթին մէջ տեղ պիտի տրուի նաեւ այդ երիտա-սարդներուն : Նորերու յորդ ապրումնե-րուն եւ հասուն մարդոց հասուն խոհե-րուն բեմը պիտի ըլլայ Բագինը» :

Հաստատուն հիմերու վրայ դրուած է դրական այս ամսագիրը, որ յաջողած է իր չուրջ համախմբել սփիւռքի մէջ ար-դէն իսկ անուն եւ անցեալ ունեցող դրա-դէտներ ու խոստմնալից նորեր : Մամբա-դրական մարմնին մէջ մեծամասնութիւն կը կազմեն երիտասարդ գրողները, ինչ որ գրաւական մըն է ապագայ նոր նուա-ճումներու :

Մերձաւոր Արեւելքը կը տարբերի ա-րեւմուտքի հայկական զաղութներէն : Մինչ այս վերջիններուն մէջ օրէ օր աս-տիճան մը աւելի կը պակսի հայերէն կարդացողներու թիւը, անդին՝ Լիբանա-նի, Սուրիոյ, Իրանի, Իրաքի, Եղիպտո-սի, Յորդանանի, Կիպրոսի եւ Թուրքիոյ բարձրագոյն նախակրթարաններէն եւ միջնակարգ վարժարաններէն ամէն տարի հազարաւոր շրջանաւարտներ դուրս կու գան :

Ասոնք ծարաւն ունին հայ գրականու-թեան : Անոնց մէջէն գրելու տաղանդ ու ընդունակութիւն ունեցողները քաջալե-րանքի կը կարօտին :

Բագին կոչուած է զոհացում տալու այս պահանջներուն, լայնախոհութեամբ, առանց նախապաշարումի, անջահախնդիր կերպով :

Սրտանց կ'ողջունենք Բագինի ծնունդը, յաջողութեան անկեղծ մաղթանքներով :

ՀՐԱՆՏ-ՍԱՄՈՒԷԼ

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՊՈՒՐԿԻՊԱՅԻ ՃԱՌԸ

ԿԱՑՈՒԹԻՒՆԸ ԼԱՐՈՒԱԾ ԿԸ ՄՆԱՑ
ՖՐԱՆՇԱՅԻ ԵՒ ԹՈՒՆՈՒԶԻ ՄԻՋԵՒ

Հապճեպ Պուրկիպա ճառ մը խօսեցաւ կառավարութեան անդամներուն եւ Նոր-Տէլհիի քաղաքական բիւրոյին առջեւ :

Յայտարարեց թէ կարեւոր միջոցներ ձեռք պիտի առնուին երկրին բարիքին համար :

Անդրադառնալով Պիզերթի պարպու-մին, յայտնեց թէ չփոխնակներ տեղի ունեցած են եւ բանակցութիւններ տեղի ունեցած են Փարիզի մէջ : Շեշտած է թէ պարպու-մը անխուսափելի է եւ ատկէ պիտի չէր բաժարին, «միայն պահանջներ չունինք, ըսած է Պուրկիպա այլեւ իրագործելիք հեռանկարներ : Հեռանկարին տանող ճամ-բան է միայն որ կարեւոր է : 10 տարի ա-ռաջ դէմ կը դնէինք Ֆրանսայի անդիջո-ղութեան, այն զոր այսօր կը պահանք կը յիշեցնէ Ֆրանսական ընդդիմութիւնը 1951ին Թունուզեան պահանջներուն դէմ : Ոմանք կը կարծեն թէ Յունուար 5ի ճա-ոիս մէջ, հարցը կարզադրուած նկատած էի : Սխալ է : Այդ ճառին մէջ ըսած էի թէ Հռոմի խօսակցութեանց ընթացքին, Ֆրանսա ընդունած էր բանակցիլ պար-պումի ժամանակացոյցին շուրջ, բայց իբրեւ նախապայման զրած էր վերաքն-նութիւնը համաշխարհային պատերազմի պարագային » :

Պուրկիպա աւելցուցած է նաեւ թէ ա-մէն ատեմ որ պարպումի մասին խօսք կ'ըլլայ, Սուէզի պարագան կը յիշուի որ ի վերջոյ 1951 Յունուար 26ի Փահիրէի միջադէպերուն պատճառ զարձաւ : Պուր-կիպա մերժած է Ֆրանսայի այդ նախա-պայմանը : Ամէն պարագայի մէջ, Ֆրան-սա ընդունած է իր զօրքին քաշուիլը· ո-րոշ ժամանակաշրջանի մը ընթացքին՝ 15 ամիս առաջին պործողութեան մը հա-մար, վեց ամիս յաջորդին :

Բայց այս կարզադրութեան համար , թուական չորոշուիր եւ Թունուզիա, ըստ Պուրկիպայի մերժումի հանդիպած է եւ խօսք զարձած է այդ մասին : Ֆրանսա կը պահանջէ որ ինք որոշէ : Իրրեւ պատրր-ուակ առնուած է, կ'ըսէ Պուրկիպա, մի-ջազգային լարուած մթնոլորտը : Եւ վեր-ջապէս Ֆրանսա առաջարկած է որ բա-նակցութիւնները վերսկսին յառաջիկայ Յունիսին առանց սակայն այդ թուականը նկատելու իբրեւ պարպումի գործողու-թեանց սկիզբ մը : Այս հարցը կապ ու-նի նաեւ Մերս էլ Քըպիրի հարցին : Պի-զերթի պարագան, իբրեւ թէ, նախընթաց մը կրնայ նկատուիլ : Նախագահ Պուրկի-պա եզրակացուցած է թէ մթնոլորտը միշտ լարուած կը մնայ Թունուզիայի եւ Ֆրանսայի միջեւ :

Պուրկիպա ապահովութիւն ալ տուած է որ ուրիշ պետութեան մը պիտի չյանձ-նէ Պիզերթը, ինք տրամադիր է սպասելու մինչեւ Յուլիս, բանակցութիւնները վեր-սկսելու համար :

Մինչեւ Յուլիս, Թունուզիա եւ Ֆրան-սա յարաբերութիւն պիտի չունենան դի-ւանագիտական գետնի վրայ :

ՔԻՒՐՏԻՍՏԱՆԻ ԵՐԱՋԸ

ՕՐՈՒԱՆ ՆԻՒԹ

Սոն Փոսթա կը գրէ «Ուշադրութի՛ւն, ուշադրութի՛ւն, Քիւրտիստանի իտէալը վերստին կ'ողջնայ» խորագրին տակ :—

Մերձաւոր Արեւելքի վերջին տարինե-րու արիւնահեղ դէպքերուն մէջէն զին-ուած մարդ մը երեսան ելաւ, Մուսթաֆա էլ Պարզանի : 64ամեայ բայց առոյգ այս մարդը, որ երիտասարդ մնացած է, հը-րոսակային կռիւներու իր հսկայ փորձա-ռութիւնով տեւական վտանգ մը զարձած է Իրաքի վարչապետարանի համար որու անդադար կը սպառնայ 1958էն ի վեր :

Պարզանի Նոր տարին թեւակոխեց նոր ապստամբութեամբ մը եւ երկար չաբաթ-ներ կառավարութեան մտահոգ քրտինք թափել տալէ առ զարձեալ իր լեռները քաշուեցաւ :

Հիմա նորէն ձայն կը բարձրացնէ :

Ինչպէս յայտնի է, այսօր աշխարհի 4միլիոն զրաւած են Թուրքիոյ, Իրաքի, Իրանի, Սուրիոյ եւ Ռուսիոյ մէջ : Այս 12 միլիոնոց զանգուածին երկու միլիոնը Իրաքի բնակչութեան երկուքուկէսը կը կազմէ : Քրտական պետութիւնը 25 զար առաջ իր տիրապետութիւնը տարածած էր մինչեւ Սուրիա եւ Եղիպտոս : Քիւր-տերը կ'ըսեն թէ մեծահոչակ հերոս Սա-լահատինի էյուպին ալ զտարիւն Քիւրտ էր :

Առենաօք պարսիկ կայսր Աիրուսի Նի-նուան եւ Բաբելոնը զրաւելու համար օգ-նող Քիւրտերը ժամանակի ընթացքին ցը-ուեցան, չկրցան քայլ յարմարցնել քա-ղաքականութեան յառաջդիմութեան եւ վերածուեցան ամենանախնամական ցե-ղախումբերէն մէկուն :

Մուսթաֆա էլ Պարզանի, որ այսօր վերստին մէջտեղ կը նետուի քրտական դատով, ամէն բանէ առաջ սոսկալի թշը-նամի մըն է Թուրքի : Որովհետեւ իր հայ-րը 1908ին , Օսմանեան կայսրութեան շրջանին, Թուրքերուն կողմէ կախուած է :

1930ին, իր եղբայրը՝ Շէյխ Ահմետ ուժ տուած է ապստամբութեան մը , որ ծագած էր զարձեալ Իրաքի մէջ : Պարզա-նիները ճիշդ երեք տարի դիմադրած էին անդլիական միութիւններուն եւ անոնց ծառաներուն : Պարզանի 1942ին աքսոր – ուեցաւ, փախաւ եւ փորձեց քրտական անկախ պետութիւն մը հիմնել, չկրցաւ յարդել իր խոստումը, այս պատճառով քրտական 79 զիւղեր հրկիզուեցան, քան – դուեցան : Պարզանի յետոյ Ռուսիա ա – պաստանեցաւ, միայն 1958ին կրցաւ վե-րադառնալ Իրաք, Քասըմի խօսքով : Պար-զանի հաստատուեցաւ Նուրի Սայիտի ա – պարանքին մէջ , Ռուսիոյ հետ չփման մէջ մտնելով նաեւերով զէնք եւ ռազմա – նիւթ բերել ձեռնարկեց , ինչ որ փոթորիկ յարոյց :

Կասկած չկայ թէ Պարզանի Ռուսիոյ մէջ իրագուցած է համայնավարական սկզբունքները : Բայց ան ամէն բանէ ա – ռաջ կ'ուզէ հիմնել ազատ Քիւրտիստանը :

—Քիւրտերը բաժնող սահմանները ար-ուեստական են, կ'ըսէ ան :

Ա. աշխարհամարտին վախճանին նա – խագահ Ուիլսընի չանքով ողջնցած ազատ Քիւրտիստանի զաղափարը այսօր այս – պէսով վտանգաւոր կերպով ծաւալիլ ըս-կսած է » :

ԵԿԷՔ ԻՄ ՏՈՒՆԸ

Սիրտս մաճուր է, սիրտս բարի է,
Սիրտս բացուած է որպէս սահուկը,
Խնդութեան տօն է ու նոր տարի է,
Եկէ՛ք բոլորդ, եկէք իմ տունը :

Թո՛ղ ձեզ ուղեկցի ձիւների պարը,
Թո՛ղ փաթիլներից ժպտայ գարունը ,
Թո՛ղ խինդով ձգուի ձեր ճանապարհը,
Անուշ ծիծաղով եկէք իմ տունը :

Այսօր անծիր է իմ խնդութիւնը,
Հոգուս անդորրը այսօր երգում է ,
Ասես եկել է կեանքի գարունը
Ասես բացուել է ու համերգում է :

Ծաղկով կը զուգենք մերկ սարերին էլ ,
Բոլորն այդ մեր լոյս բախտի համար է ,
Չին տարուայ նման այս նոր տարին էլ
Բարձունքներ իրար կապող կամար է :

Կանաչ կը բուսնի անգամ քարին էլ,
Ճամբէք կը բացուի դէպի անհունը ...
Այնպէս անչար ու այնպէս բարի եմ ,
Եկէք բոլորդ, եկէք իմ տունը :

ՅԱՐ· ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԱՄԵՐԻԿԱՑԻՆԵՐԸ ձախողեցան առջի օր երբ կը փորձէին ամբողջ տարբերու – ծարան մը լուսին դրկել : Լուսինէն 30–40 հազար քիլոմեթր առաջ տիեզերանաւը չեղեցաւ իր ճամբէն : Նոյն օրը պիտի փորձէին մարդ մըն ալ դրկել :

«ԱՀԱԿ»ի Արտաքին նախարարը՝ Սատա Տահլաւ Մարոքի ճայնասփիւռին յայ-տարարեց թէ ոչ ոմանց լաւատեսութիւնը կը թաժնէ , ոչ ալ ուրիշներու յոռետեսու-թիւնը : Ըստ իրեն պէտք է աշխատիլ որ-պէսզի բանակցուած լուծում մը գտնուի ալժերական հարցին :

ՇՔՐԻՓՆԻԳԻի ծննդեան 97րդ տարե-դարձին առթիւ, Փրաւտա, որուն խմբա-գիրներէն մէկը եղած է 1914ին յօդուած մը նուիրած է ուր կը յիշուի թէ 1917ին արդէն , ուկրայնական կառավարութեան վարչապետը ընդդիմացած է Սթալինի : Այս ձեւով երեւան կ'ելլէ թէ Շքրիփնիգի պատիւը վերահաստատուած է :

ՌԱՊԱԹԻ իշխանութիւնները ցնոր անո-րինութիւն արգիլեցին Թունուզեան թեր-թերու վաճառումը Մարոքի մէջ :

ՖՐԱՆՍԱԿԱՆ ակադեմիայի անդամ ըն-տրուեցաւ Ժան Կեհլնօ, պրազէտ եւ հը-րապարակագիրը : 29 քուէարկողի վրայ ստացաւ 15 ձայն, տասը ձայն ալ ստա-ցաւ Փիէր Մոնթել : Կեհլնօ ծնած է 1890ին : Մամբազրապետը եղած է Էօրոփ պարբերականին, հիմնած է ուրիշ մը՝ Ուրբաթ, Անտրէ Շամսոնի եւ Վիոլիսի հետ : Կ'աշխատակցի Ֆիկարոյի եւ Գրա-կան Ֆիկարոյի :

ԹԵՀՐԱՆԷՆ կը հաղորդեն թէ Զօր· Պախթիար անորոշ ժամանակի համար պիտի հեռանայ Պարսկաստանէն : Մանօթ է իրրեւ աչ – ընդդիմադիր , մեկնումի պահուն յայտարարած է «երկրէս կը հե-ռանամ Շահին առաջարկին վրայ որեւէ պատրուակ չտալու համար Տոքթ· Ամ-նիի» :

ԱՔԵՆՔԻՆ կը հաղորդեն թէ Ցունաս – տանի աւագերէցը՝ Եաքովա Արք· հրա – ժարեցաւ Ցունաստանի ուղղափառ եկե-ղեցւոյ Պատրիարքի իր պաշտօնէն :

ՊԻՒՎի մէջ բիւուչեւ ընդունեցաւ Պիր-ման պատուիրակութիւն մը որ ՈՒ Նուէն մասնաւոր նամակ մը յանձնեց խորհրդա-յին վարչապետին :

ԴԱՄԱՍԿՈՍԷՆ կը հաղորդեն թէ Սար – բաճ եւ իր զործակիցները հրապարակաւ պիտի դատուին Եփտուարին :

ԲԱՌԻ ՄԸ ՇՈՒՐՋ

Ինչո՞ւ Կով զրուած է Կոս կղզիին ա–նունը Նոր Կտակարանին մէջ :

Կով զրչական ձեւը կը համապատաս – խանէ բնաբրային Կո (օմեղայով) զրչու – թեան,— արդարեւ նմանօրէն Ցով կը զրենք Իօ (օմեղայով) աստուածուհիին անունը :

Բայց Կո սեռական հոլով չէ՞ Կոս տե–ղանուան :

Երբ անգլերէն, զերմաներէն, ֆրան – սերէն թարգմանութիւնները Կոս կը կո – չեն կղզին, (յունարէնն ալ՝ իբրեւ ուղ – ղական հոլով), ինչո՞ւ հայերէնը Կով պիտի զրէ՝ կարծել տալով, նախ, թէ կը տեսեւի Կոս տեղանուան յունարէն սեռական հոլովաձեւին, երկրորդ, թէ լեռնած կորսուած է սէ տառը (Կովս) :

Փիչերը քունս չտարաւ : Այլեւս պարզ էր թէ պիտի չկարենայի ուրիշ աչխա – տանք կատարել՝ եթէ չպրպտէի, չքննէի եւ չպարպէի մտածմանս թանսխռնը :

Կոս, իբրեւ տեղանուն, մէկ անգամ զործածուած է Աստուածաչունչ Մատեա–նին մէջ, յունարէնը Կո, հայերէնը Կով ձեւին տակ (Գործ. ԻԱ. 1) : Ցունարէն Հին Կտակարանին մէջ զործածուած է ուրիշ տեղ մըն ալ,— Մակաբայեցւոց ա–ռաջին զիրքին մէջ (Գլ. ԺԵ. 23), բայց մեր հայերէնին մէջ չկայ այդ տեղանու–նը :

Կոս զործածուած է նաեւ իբրեւ անձ – նանուն, մէկ անգամ, Հին Կտակարանին մէջ (Ա. Մնաց. Ի. 8) : Այստեղ մեր զը–բաբերը կը զրէ Կովս : Հարկ է սակայն աւելցնել թէ բոլոր թարգմանութիւններն ալ սխալ կատարած են տառադարձութի–նը,— եբրայերէնը Կոց զրուած է (վեր–ջին տառը՝ ցադէ), եւ կը նշանակէ փուչ, եւ այդ նշանակութեամբ ալ զործածուած է այլ տեղ (Եզեկ. ԻՀ. 24) : Ուրեմն կապ չունի այն բառին հետ, որու ծագումը կը փնտռենք :

Կոս կղզիին մասին բառադիտական պր–պըտումներուս ընթացքին՝ զարմանքով տեսայ որ Ֆ. Նոյէլ կը զրէ թէ, այս կըղ–զիին վրայ, կովի կերպարանափոխուած են բոլոր··· կիները՝ ըստ Ովիդիոսի : Հարկ եղաւ մաղել Ովիդիոսը, ուր ի վեր–ջոյ զտայ բնադիրը որ այսպէս է.— Երբ Հերակլէս առաւ տարաւ իր հօտը, կոտոչ բուսաւ Կոսի կիներուն ճակատին վրայ (Կերպարանափոխ. Է. 363) : Զուտպուէ – պութեան նայեցէք :

Կոս բառ մը կայ եբրայերէն՝ լեզուին մէջ ալ, բայց սկիհ նշանակութեամբ, — առիկա եւս չի հետաքրքրեր մեզ :

Կոս բառ մը ունի նաեւ լատիներէնը, բայց յատնաքար նշանակութեամբ : Ըստ Դիոսկորիդէսի եւ Պլինիոսի տեղեկու – թեանց՝ հին իմաստունները այս յեսա–նաքարին խարտուքը կը զործածէին զար–մանելու համար ճաղատութիւնը, հալե – ցնելու համար փայծաղը, մեղմելու հա – մար լուսնոտութեան տագնապները, և – թեան հանելու համար թունաւորման պարագաները, (զաղտնօրէն յեսանաքարի փոշի կը դնէին թունաւորուած մարդուն բարձին տակ, եւ թունաւորման ենթա – կան կը յայտնէր թէ ո՛ւր եւ ե՛րբ թունա–ւորած է), — տես Դիոսկորիդես Ե. 167 եւ Պլինիոս ԼԶ. 18 :

Իրրեւ պատկերազարդութիւն բառա–խուզական այս աչխատանքին, հետա – քրքրական կը զտնեմ աւելցնել թէ Կոս (սէ օ էս) բառ մըն ալ կայ հին Ֆրանսե–րէնի մէջ,— կը նշանակէ այն ամուսինը՝ որու կը յանձնուի իր կնոջ ապօրէն զա–ւակներուն սնուցման հոզը : Կոս կոչուած այս ամուսիններուն պաշտպան սուրբն ալ կը կրէ Ս. Առնու անունը :

Եւ ահա եկանք հասանք յունարէնին :

Կոս բառը, յունարէնի մէջ, տեղանուն ըլլայ թէ հասարակ բառ, կը ներկայանայ ուղղագրական բազմաթիւ ձեւերով եւ հոլովաձեւերով, նոյնպէս իմաստի այլա–զանութեամբ : Մի խիթար արբշռօր տուած նշանակութիւնը, զեղմ ոչխարաց կամ զորզ, կ'երթայ կօս = կաւաս ուղղա – զրութեամբ նոյն բառին, (այս անունը կը կրէր նաեւ Կորնթոսի մէկ բանաը) :

Կոս բառին բնակակից է Իոս բառը, կղզի մը Եգէականի մէջ : Շատ բարդ չէ այս բառին պատմութիւնը, կը նշանակէ թոյն, եւ սեռական հոլովաձեւն է Իու : Ընդհակառակն, խեղ ու հետս բառ մըն է կոսը, որ քմայավար հոլովաձեւեր ունի, ու կը ծածկէ իր ծագումը :

Հետաքրքրական կէտ մը.— Կոս կղզին նշանաւոր էր հիւսուածեղէնի տեսակով մը, մետաքսեայ շղարշ մը, որ կը կոչուի «կոսական», — նուրբ եւ ծայր աստիճան թափանցիկ, այնքան որ Սենեկա կը զրէ թէ ոչ մարմինը կը պաշտպանեն այդ հիւսուածքները, ոչ ալ ամօթխածութիւ – նը, բայց կին մը կրնայ պնդել, առանց աուտ խօսած ըլլալու, թէ մերկ չէ : Այ–րերն ալ կը հագնէին նման հիւսուածե – ղէնները, հինէն ի վեր չատ յարգի, թէեւ Ցորնաղ խաթիւ կը ձաղկէ նման զղեստ–ները կրողները :

Եւ հիմա ուշադրութիւն.— Հին կոս – կարանին մէջ, երեք տեղ կայ՝ ուր կը յիշատակուի տեղանուն մը, կօա ձեւով, կարզ մը թարգմանութեանց մէջ կոր – սուած,— հայերէնը կը պահէ :

Մնացորդաց երկրորդ զրքին մէջ (Գլ. Թ. 28) կը կարդանք. «Եւ ելք ձիոցն Սո–զոմոնի յԵգիպտոսէ եւ յամենայն երկ – րէ» :

Այստեղ, Եգիպտոսէն զատ, աչխար – հագրական ուրիշ անուն չեն յիշատակեր բոլոր թարգմանութիւնները : Բայց երբ նոյն այս վկայութիւնը կը կրկնուի այլ տեղ, երեւան կուգան թարգմանական տարբերութիւններ եւ աչխարհագրական անուն մը :

« Եւ ելք երիվարաց Սողոմոնի յԵգիպ–տոսէ, եւ ի Թեկուայ վաճառք արքային, եւ առնուին ի Թեկուայ գնովք» (Գ. Թագ. Ժ. 28) :

Այստեղ արդէն երեւան եկաւ նոր տե–ղանուն մը, Եգիպտոսէն առքը :

« Եւ Սողոմոնին ձիերը Եգիպտոսէն կու–զային, ու թագաւորին վաճառականնե – րուն կարաւանը որոշուած գնով մը ձիե–րու երամակներ ծախու կ'առնէին» (Բ. Մնաց. Ա. 16) :

Այստեղ «չակրտուած» է պարբերու – թիւնը, բայց կորսուած երկրորդ տեղա–նունը :

Ըստ ոմանց՝ Թեկուա տեղանունը կօա բառն է, ծագումով եգիպտական : Ըստ այլոց՝ Fուահ բառն է, ծագումով երբա–յական : Վերջին պարագային՝ կը նշանա–կէ վաճառականներուն «կարաւան կաղ – մելը», իսկ առաջին պարագային՝ խօսքը Թանկագին «հանդերձանքի» մասին է, այնպէս որ պարբերութիւնը, սրբագր – ուած ձեւով, աւելի հասկնալի կը զառ – նայ՝ երբ կը ներկայացուի այսպէս.

« Եգիպտոսէն ձիեր կը բերէին Սողո – մոնի համար, եւ նուրբ կերպասներ» : Այս ընթերցանութեամբ կը զարմանուի աչ – խարհագրական անուան կորուստը կամ պարբերութեան մթութիւնը :

Այսպէս, զրաբարին մէջ յիշուած եր–կրորդ տեղանունը, սրբագրելով կրած ա–պաւաղումը, կ'ըլլայ (Թե)կօա, որ ոչ միայն տեղանուն է, այլ եւ տեղւոյն ար–տադրութեան (հանդերձանքի) անուն :

Այս պրպտումը անոր համար որ ըսեմ թէ Կոս, որ կուզայ կօա կամ կօ ձեւերէն, խորթ է յունարէնի (Պուազաք չունի), ա–պահովաբար հին եգիպտերէն : Ժամանակ որ Եգիպտոս կը տիրապետէր այն կղզե –

ԱԼԻ ՓՈՒԱՏ ՓԱՇԱՅԻ ՅՈՒՇԵՐԷՆ

Բ.

ԱՆԳԱՐԱՑԻ ՀԵՌԱԳԻՐԸ

Մոսկուայի Թուրք պատուիրակութեան նախագահ Պէքիր Սամիի Անգարայէն զր–կուած է սա հրահանգը.

« Մեր ուշադրութենէն չէ վրիպած զաչնակներուն Անատոլի կառավարու – թեանց մեքենայութիւններուն մասնակցե–լը : Արեւմուտքի մէջ Ցոյներուն օգնելու մտօք մեզի դէմ տեւաբար յարձակողա – կան դիրք բռնած ըլլալով՝ Արեւելեան ճակատի մեր բանակը անչարժութեան մատնուած է :

« Սեւրի մէջ Պոլսոյ կառավարութեան ստորագրել տուին մեր Արեւելեան նա – հանգները զրաւելու զաչինք մը, այդ ձե–ւով Պասրայի ծոցէն մինչեւ Սեւ Ցով Թուրքիոյ մէջ Անատոլի հեղինակութեան եւ ազդեցութեան ենթակայ մեծ զօտի մը առաջացնելով : Ցունաստանը Բումելիի մէջ չարժման մէջ զրին. Կովկասի եւ Ի–րանի մէջ ալ խլրտումներ առաջ բերին :

« Թուրք Ազգային Մեծ Ժողովը, ընդ–հանուր զործողութեանց սկսելէ առաջ, խոմբին վրայ, որոնք կը լողան Եգէա – կանի մէջ : Թերեւս այդ է պատճառը, որ ուղղագրութեան եւ հոլովաձեւի անկա – նոնութիւն մը կը մատնէ Հիպպոկրատի կղզիին անունը (համեմատել Հոմերոսի, Թէոկրիտէսի, Հերոդոտի վկայութիննե–րը,— Հոմերոս ունի միայն հայցական հոլով) :

Հայերը կօա, կօաս, կօաւս, կաւոս, կուս, կոս, կօ ձեւերէն ընտրած են վեր–ջինը, որ սեռական հոլովաձեւ է : Այստեղ միաքս կ'իյնայ Հ. Եղիա Փէչիկեանի դասը, թէ սեռականը ցոյց կուտայ ոչ թէ բառին արմատը, այլ բունը, որու վրայ կը կազմուին բարդութիւնները : Կոս կղզիին անուան բունը, կօ, կը հա–տատուի նաեւ անով որ Ցոյները կ'ըսեն. — Իս թէն Քօ, այս ասութիւնը կղզիին տուած է, այսօր, Սթանքօ անունը : Այդ fօ կամ կօ բունը առնելով՝ Հայերը, ըստ դասական տառադարձութեան, կազմած են Կով ձեւը, ինչպէս Իօ ձեւէն՝ Ցով ձեւը, փակելով ձայնաւորը : Շատ համոզիչ չէ, բայց ուժս այսքան կը բա – ւէ :

Սխալ չէ, սակայն, առնել նաեւ Կոս բառաձեւը եւ դասական օրէնքով վերա – ծել Կովս ձեւին,— կանխարդիլելու հա–մար որեւէ չփոթութիւն, առաջինը իմ չփոթութիւնս՝ կարծել թէ սեռական հո – լովաձեւ առած է Հիպպոկրատի ծննդա – վայրին անունը Նոր Կտակարանին մէջ :

Շ. ՆԱՐԴՈՒՆԻ

ԱՄԲԱՍՏԱՆԵԱԼ ՍԹԱԼԻՆ, ՈՏՔԻ՛

—o—

« Հրէչային միայն կարելի է յորջորջել ամբողջ ժողովուրդներու տեղահանու – թիւնը — կը բորբոքի Խրուչչեւ.— ամ – բողջ ազգեր, իրենց համայնավար ան – դամներով, կոմսոմոլներով, առանց մէկ հոգին իսկ զանց առնելու, խլուեցան կի – բենց ծննդավայր հողերէն. եւ ռազմական տեսակէտէն ոչ մէկ պատճառ կրնար ար–դարացնել այս տեղահանութիւնները » :

Եւ Խրուչչեւ մի առ մի կը թուէ այն ժողովուրդները, որոնք տեղահան եղան Սթալինի հրահանգով — 1943ին՝ բոլոր Քարաչայները, նոյն տարուան Դեկտեմ – բերին՝ Քալմուքներու լինքնավար հանրա–պետութեան ամբողջ բնակչութիւնը, 1944ի Մարտին՝ բոլոր Չէչէններն ու բո – լոր Ինգուչները : 1944ի Ապրիլին՝ բոլոր Պալքարները :

« Ուկրայնացիները բախտաւոր պէտք է նկատեն իրենք զիրենք, որ երեսուն մի – լիոն էին. եթէ այդքան շատ չըլլային՝ Սթալին զանոնք ալ կը տեղահանէր. բայց այդքան մարդը ո՞ւր պիտի տեղաւորէր» : կը չարաչարէ Խրուչչեւ, մինչ 1600 պատ–գամաւորները բարձրաձայն կը խնդան. ջղային խնդուքով :

Հիւսիսային Կովկասի մէջ բնակող Քա–րաչայները հարիւր հազար հոգի էին. Կասպից ծովու եզերքը բնակող Քալմուք–ները երկու հարիւր հազար հոգի էին. Կովկասի բնակիչ Չէչէններն ու Ինգուչ – ները՝ 700·000 հոգի. Անդրկովկասի բնա–կիչ Պալքարները՝ հարիւր հազար հոգի :

Խրուչչեւ իր յիշատակութեան մէջ մոռ–ցած էր Ղրիմի երկու հարիւր հազար Թա–թարները (1944ին տեղահանուած), վոլ–կայի վեց հարիւր հազար Գերմանացինե–րը, որոնց նախնիքը Ռուսաստան հաս – տատուած էին Եկատերինա Բ. ցարու – հիին հրաւէրով եւ 1924ին, մասնաւոր հրամանագրով մը լինքնատիպ հանրապե–տութիւն հռչակուած էին : 1941 Օգոստոս 28ին, նոր հրամանագիր մը չեղեալ կը նկատէր Գերմանացիներուն լինքնավար հանրապետութիւնը, որուն աչխատասէր, մաքուր, ստեղծագործ ոգի ունեցող ժո – ղովուրդը կը փոխադրուէր Սիպերիա՝ Օմսքի եւ Նովոսիպերսքի շրջանը, կամ կեդրոնական Ասիա՝ Ալթայի շրջանը :

Խրուչչեւ, անշուշտ ոչ մէկ խօսք ըրաւ Վոլկայի շրջանին Գերմանացիներուն մա–սին, քանի որ մասնաւոր սէր մը չունի Գերմանացիներուն հանդէպ : Նոյնիսկ, խորքին մէջ, բաւական զոհ մնացած ըլ–լալու է, որ Սթալին ֆերայատուկ միջոց–ներով լուծած է այդ հարցը :

Միեւնոյն նկատումներով է, որ ոչ մէկ խօսք ըրաւ հալածուած ուրիչ հաւաքա – կանութեան մը — Հրեաներուն մասին :

Վերադառնալով Չէչէններուն եւ Ին–գուչներուն, ասոնք ցարերու տիրապե–տութեան իսկ օրերէն անվհատ պայքար մղած էին ռուսական տիրապետութեան դէմ : 1864ին պարտութեան մատնուած, զարձեալ ապստամբած էին 1897ին եւ անդամ մը եւս պարտուած՝ Ռուսերու Թուական առաւելութեան պատճառաւ :

Երբ պայթեցաւ ռուսական յեղափո–խութիւնը եւ ցարական իշխանութիւնը տապալեցաւ : Չէչէններն ու Ինգուչները անկախութիւն հռչակեցին : Լենին սկիզբը չհակառակեցաւ. ցարական բոլոր զա–ղութներու ժողովուրդներուն անկախու–թիւն խոստացած էր : Բայց, անգամ մը որ իր իշխանութիւնը ամուր հիմերու վը–րայ զրաց, զինքի ուժով Ռուսիոյ միաւ–ցուց նախկին բոլոր զաղութները : Այդ զործը յաջողցնողներն էին՝ Սթալին, Վո–րոշիլով եւ Միկոյեան :

Բայց 1929ին, «Հոգերու համայնացում–մը» այնքան ընդդիմութեան հանդիպե–ցաւ Չէչէններու եւ Ինգուչներու մօտ, որ ընդհանուր ապստամբութեան պատճառ զարձաւ : Խորհրդային իշխանութիւնները ստիպուեցան այդ շրջանին մէջ հոգերու համայնացման ծրագիրը զործագրելի հրաժարիլ :

(26 Շար.)

անոնց յոխորտանքն ու ծրագիրները իր զերեւ հանելու նպատակով, ստիպուած է նախ զաչնակներուն զաս մը տալ :

« Զաչնակներուն ստիպման տակ հայ ժողովուրդը յուսահատութ նահանջելու պարագային, Հայաստանի մէջ Ի. Ռու–սիոյ եւ Թուրքիոյ կողմէ ընդունելի կա–ռավարութիւն մը կազմելու մեր մտա – զրութեան մասին Մոսկուայի կառավա–րութիւնը տեղեակ պահեցէք, կը խնդ – րենք» :

ԹՈՒՐՔԻԱՆ ԾՈՒՂԱԿԸ ԶԳԵԼՈՒ ԱՆՑԱՋՈՂ ՓՈՐՁԸ

Այդ չրջանին Թուրք Ազգային Մեծ Ժո–ղովի եւ կառավարութեան հեղինակու – թիւնը ամբողջ երկրիս մէջ տարածուած էր : Անգլիոյ հովանաւորութեան տակ զտնուող Պոլսոյ կառավարութիւնը իր համայքը կորսնցուցած էր :

Անգլեացիք սկսած էին վարել իրենց համար աւելի կարեւոր Միջին Արեւելքի խնդիրներու լուծումին ձգտող քաղաքա–կանութիւն մը : Նոյն չրջանին Ի. Ռու–սաստան, նոր Թուրքիոյ հետ բարեկա – մութիւն ընելով եւ զաղտնօրէն անոր օգ–նելով հանդերձ, յանկարծ Վանի եւ Բա–ղէչի նահանգներէն ի նպաստ Հայաստա–նի հողամասեր վիջելու հարց յարոյց եւ այդ պատրուակին տակ Անգարայի հետ յարաբերութիւնը խզեց եւ մշակուած հա–մաձայնութիւնը չստորագրեց : Այս քայ–լը, անկասկած, ռուս եւ բրիտանական խ–րատախոհութեան մը ճամբայ հարթելու յարմարադոյն միջոցն էր : Դժբախտա–բար, Անգարայի պատուիրակութիւնը ժամանակին չէր նկատած Ռուսերուն նոր առաջարկին ներքին ծալքերը :

Այդ օրերուն բանակցող կողմերը այն աստիճան անկեղծ կ'երեւային, որ մեր մտքէն բնաւ չէինք անցըներ, թէ Ռուսե–րը նման երկդիմի դիրք մը կը բռնեն : Արեւելքի մէջ երկերեսանիութիւնը ընդ–հանրապէս Արեւմուտքին յատուկ կը նը–կատուէր : Պէքիր Սամի պէյ, Օգոստոս 28ի դիչերը Զիչերինի հետ տեսակցած ա–տեն, անոր խիստ եւ անդիջող ընթացքին ի տես որեւէ իրատախոհութեան մասին չէր մտածած, այլ միայն զիւանագիտա–կան նոր խաղի մը վերապրած էր անոր բռնած դիրքը :

Պէքիր Սամիի Տրապիզոնէն Անգարա յղած հեռագրին մէջ իրատախոհութեան մութ առաջարկ մը կը նշմարուէր :

Ատոր առաջքը առնուեցաւ, չնորհիւ Ազգ. Մեծ Ժողովի եւ կառավարութեան աչալուրջ եւ կորուկ սա հրահանգին. « Մէկ թիզ հող զիջելու տրամադիր չենք » (16 Սեպտեմբեր, 1920) :

Եթէ Հայաստանի վրայ մեր յարձա–կումը հինգ ամիս առաջ կատարուած ըլ–լար, չատ աւելի արդիւնաւոր պիտի ըլ–լար : Ռուսերուն եւ Անգլիոյ հետ բանակ–ցելու առեն մենք Արեւմտեան ճակատին վրայ երկու տեսակ ազդեցութիւն կ'ունե–նայինք, Ռուսերուն հետ նոր սկսած բա–

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆԸ

—o—

Ասկէ չիսուն հարիւր տարի առաջ ա – ռողջապահութիւնը անուշադրութեան մատնուած էր ըրեթէ բոլոր երկիրներուն մէջ: Տարիներու ընթացքին բժշկութեան եւ զիտութեան յառաջդիմութեամբ բա – րեբաւուեցաւ նաեւ բազմաթիւ երկիրներ – րու ժողովուրդներուն առողջապահու – թեան մարմիններու կազմակերպումը : Շատցաւ բժիշկներուն թիւը, բացուեցան հիւանդանոցներ եւ առողջարաններ, ըս – տեղծուեցան առողջապահութեան համար բարենպաստ պայմաններ :

1913ին Հայաստանի մէջ կային 73 բը – ժիշկներ եւ առամբնաբոյժներ, մինչ բը – նակչութեան թիւն էր 700·000, այլ խօս – քով տասը հազար հոգիի կ'իյնար մէկ բը – ժիշկ: Աւելի ողբալի էր հիւանդանոցնե – րուն վիճակը : 1913ին ամբողջ Հայաս – տանի մէջ կար հիւանդանոցի 212 մահ – ճակալ :

Ահա, օրինակ, քանի մը փաստեր , ո – րոնք ցոյց կուտան Հայաստանի առողջա – պահութեան վիճակը ասկէ չիսուն տա – րիւր առաջ: Պրակհաուզ եւ Եֆրոնի հանրագիտարանին մէջ, որ լոյս տեսած է ճիշդ հարիւր տարի առաջ, կը կարդանք հետեւեալը Երեւանի մասին: «Ամառուան տաքին եւ այդ կապակցութեամբ քաղա – քին վատ վիճակին, ինչպէս նաեւ մժեղ – ներուն, մոծակներուն եւ այլ միջատնե – րուն չատութեան պատճառով ամառը հոն մնալը չափազանց ծանր կը դառնայ, որուն հետեւանքով բարեկեցիկ ըւտանիք – ները կը մեկնին Խանաքեռ գիւղը, իսկ պետական մարմինները կը փոխադրուին Կարաչիչակ ամարանոցը »:

Ալէքսանդրապոլի մէջ կար տասը մահ – ճակալնոց միայն մէկ հիւանդանոց, որ բացուած էր 1905ին: Ղարաքիլիսա ունէր ըն – դամէնը մէկ բժիշկ, իսկ գիւղերուն եւ երկրորդական քաղաքներուն մէջ կ'աշ – խատէին հոս ու հոն բժիշկները կամ այսպէս կոչուած «հեքիմները» :

Ինչպէս լսինք, բժշկութեան եւ զի – տութեան յառաջդիմութեամբ բարեփոխ – ուեցաւ ինչպէս շատ մը երկիրներու , այնպէս ալ Հայաստանի առողջապահու – թեան վիճակը: Արդարեւ, արդէն 1928 – ին, Հայաստանի մէջ կային 335 բժիշկ – ներ, որ թէեւ իրականութեան մէջ մեծ թիւ մը չէր, այսուհանդերձ ցոյց կու – տար, թէ քառապատկուած է Հայաստա – նի բժշկներուն թիւը, մօտ տասը տար – ուան ընթացքին: Հայ մայրը, որ անց – եալին նոյնիսկ պաղպաջար չունէր ման – կամսուրի մասին, 1928ին արդէն իր տը – րամադրութեան տակ ունէր 125 մսուր :

Հայաստանի թիւ մէկ հիւանդութիւնը ջերմախտն (մալարիա) էր: Այդ պատճա – ռով ալ աշխատանքներ կատարուեցան մէկ կողմէ չորցնելու համար ճահիճները ու միւս կողմէ բուժելու համար ջեր – մախտաւորները: 1934ին Հայաստանի մէջ կար հինգ արեւադարձային հիւանդու – թիւններու կայան, 18 արեւադարձային հիւանդութիւններու դարմանատուներ , չորս տակաջերմախտի բուժարան եւ 42 տակաջերմախտի բժշկական նախազգու – շական կեդրոն: Միւս կողմէ տեղւոյն չորցուեցան ճահիճները, որոնք ջերմախ – տի վտանգաւոր աղբիւրներն են: Մինչ 1832էն 1934ին չորցուած էր 1376 հեկ – տար ճահիճ ու ցեւագային եւս չարու – նակուեցան աշխատանքները մինչեւ որ վերջնապէս քանդուեցան Ջերմախտի եւ այլ հիւանդութիւններու այդ բոլոր բոյ – ները:

Մեծ քաղաքներու, ինչպէս Երեւանի, Լենինականի եւ Կիրովականի մէջ չին – ուեցան հիւանդանոցներ, դարմանատու – ներ եւ պիտա – հետազօտական բժշկական հիմնարկութիւններ: Շրջանային կեդրոն – ներուն մէջ նոյնպէս հաստատուեցան դարմանատուներ եւ հիւանդանոցներ : Սկիզբները հիւանդանոցներու եւ դար – մանատուներու կառուցումը մեծ դժ – ուարութիւններու հանդիպեցաւ որպէսզի բժիշկներու սուր տապնոպին պատճա – ռով: Սակայն պատերազմի նախօրեակին այդ դժուարութիւնն ալ յաղթահարուե – ցաւ ոչ միայն արտաքսմանէն եկող բը – ժիշկներուն շնորհիւ, այլեւ, Երեւանի բը – ժշկական համալսարանին եւ այլ ուսում – նարաններուն շրջանաւարտներուն շնոր – հիւ: Այս բոլորին շնորհիւ Հայաստանի բժիշկներուն եւ առամբնաբոյժներուն թի – ւը 1940ին հասաւ 1020ի: Այս թիւը կը բաւարարէր մեր երկրին առողջապահա – կան կեդրոններուն (հիւանդանոց եւն.) սպասարկութիւնը, բայց ոչ Հայաստանի առողջապահութեան պահանջները :

Նախապատերազմեան շրջանին հիւան – դանոցներուն մահճակալներուն թիւը հա – սած էր 4092ի:

Հիւանդանոցներու եւ դարմանատուն – ներու չինարարութիւնը աւելի մեծ թափով շարունակուեցաւ յետպատերազմեան տարիներուն: 1940էն առաջ հիւանդանոց – ներով օժտուած էին միայն մեծ քաղաք – ները, իսկ ներկայիս հիւանդանոցներ ու – նին բոլոր շրջանային կեդրոնները եւ ա – ւանները (ալ չենք խօսիր քաղաքներու մասին), մինչեւ իսկ կարգ մը գիւղեր :

Բնակչութեան մահացութիւնը խիստ չափով նուազած է, իսկ ծննդաբերութիւ – նը ածած: Ահա թէ ինչու Հայաստան բը – նակչութեան ածումի տեսակէտով Ա· տե – ղերէն մին կը գրաւէ բովանդակ Ը·Միու – թեան մէջ: Այսպէս, 1940ին բնակչու – թեան ամէն հազար շունչին հասնող բնա – կան ածումը հաւասար էր 27·4 մարդու , 1956ին այդ թիւը հասաւ 30·9ի, իսկ 1958ին՝ 33ի:

Մտորեւ բերուած ալիւսակը ցոյց կու տայ բժշկական անձնակազմին եւ հիւան – դանոցներուն յարաճուն յաւելումը յետ – պատերազմեան տարիներուն:

	Բժիշկներուն թիւը	Հիւանդանոցներուն մահճակալներուն թիւը
1951ին	2340 էր,	1951ին՝ 6·500,
1956ին՝	3728,	1956ին՝ 10·100,
1957ին՝	3963,	1957ին՝ 10·800,
1958ին՝	4167:	1958ին՝ 11·600:

Տեղերուն թիւը մանկամսուրներուն մէջ 1951ին՝ 4·100, 1956ին՝ 5·200, 1957ին՝ 5·500, 1958ին՝ 5·900:

Հետաքրքրութենէ զուրկ չէ հետեւեալ ցուցանիշը: Եթէ Հայաստանի բնակչու – թեան թիւը բաժնենք 1959ին Հայաստա – նի մէջ աշխատող բժիշկներուն թիւին վրայ, ապա կը տեսնուի, որ մեր երկրին մէջ մէկ բժիշկին կ'իյնայ 436 մարդ , ինչ որ շատ լաւ ցուցանիշ մըն է: Եթէ նոյն ձեւով հաշուենք եւ բաժնենք հիւան – դանոցներուն մահճակալներուն թիւը բը – նակչութեան թիւին վրայ, ապա կ'ունե – նանք հետեւեալ ցուցանիշը՝ մէկ մահճա – կալ կ'իյնայ իւրաքանչիւր 146·5 մար – դու : Հետաքրքրութեան համար ըսենք միայն, թէ Թուրքիոյ մէջ մէկ բժիշկ կ'իյնայ իւրաքանչիւր 3400 հոգիին եւ մէկ մահճակալ իւրաքանչիւր 950 մար – դու :

Յետպատերազմեան տարիներուն ման – կապարտէզներուն եւ մանկամսուրներուն ցանցը ալ աւելի ընդլայնուեցաւ : 1959ին Հայաստանի մանկամսուրներուն մէջ կար 5636 տեղ, իսկ մանկապարտէզնե – րուն մէջ 1956ին կը դաստիարակուէին 14·517 երախայ :

Հայաստան լեռնային երկիր է եւ հա – կառակ իր փոքր սահմաններուն, ունի բազմազան կլիմայ, որ որոշ պարագանե – րու մէջ կարելի է օդտագործել որոշ հի – ւանդութիւններ բուժելու եւ ժողովուր – դին համար հանգստեան տուներ բանալու համար: Ժամանակին շատ քչերօգափո – խութեան կ'ենթային, այսօր ըրեթէ ա – մէն մարդ կը փափաքի հանգստանալ, տարին գոնէ մէկ քանի շաբաթ: 1940ին Հայաստանի մէջ կար մեծերուն եւ երա – խաներուն սպասարկող մնայուն չորս ա – պաքինարան, իսկ 1959ին այդ թիւը հա – սաւ 22ի՝ 2975 մահճակալով, իսկ հան – գստեան տուներուն թիւը՝ 925 մահճա – կալով :

Հայաստանէն դուրս իսկ հոգիակ կը վա – յելեն Արզնիի, Ջերմուկի , Դիլիջանի եւ այլ վայրերու բուժարանները: 1925ին հիմնուած Արզնիի բուժարանը ներկայիս դարձած է առաջնակարգ առողջարան , ուր կարելի է բուժել սրտանոթային հի – ւանդութիւնները, լեղապարկի եւ աղիք – ներու, լեարդի եւ այլ հիւանդութիւննե – րը : Արզնիի մէջ կը գործեն երկու ա – պաքինարաններ մեծերուն համար եւ մէկ մանկական ապաքինարան (գլխաւո – րաբար յօդացաւի հետեւանքներէն տա – ռապողներուն համար), 24 տեղնոց լո – ղարան, հանքային ջուր խմելու երեք կէտ, դարմանատուն, հանքաջուրի գոր – ծարան՝ տարեկան 25 միլիոն չիշ արտա – դրութեամբ: Մօտաւորապէս նոյն հիւան – դութիւնները կը բուժուին Ջերմուկի նո – բաստեղծ, բայց մեծ հեռանկարներ ունե – ցող բուժարանին մէջ: Այս բուժարանին աղբիւրները իրենց Փիւրիքա – քիմիական յատկութիւններով մօտ են Զեխոսլովա – քիոյ համաչխարհային հռչակ վայելող Կարլովի Վարի յայտնի բուժարանին : Մեծ հեռանկարներ ունին Հրազդանի շր – ջանին բուժավայրերը: Գեղեցիկ բնու – թիւնը, համեմատաբար բարեխառն կլի – ման, արժէքաւոր հանքային աղբիւրները եւ անտառները հիանալի պայմաններ են այդ շրջանի բուժավայրերը զարգացնելու համար: Հոս կը բանի «Հանքաւան» հան – քային ջուրի գործարանը, որու տարեկան արտադրութիւնը 300·000 շիշ է:

Ծաղկաձորի մէջ գոյութիւն ունին հանգստեան տուներ, մեծերու եւ պզտ – ուիկներու համար Մարմարիկի հովիտին մէջ կը ծաւալի երիտասարդական ճամ – բարներու ցանցը: Արզաքանի մէջ չին – ուած է մայրերու եւ մանուկներու հա – մար հանգստեան տուն: Մեծ համբաւ կը վայելեն նաեւ Դիլիջանի, Ախթալայի եւ այլ վայրերու բուժարանները:

Ապագայի լաւատես ծրագիրներ մշակ – ուած են: Հիւանդանոցներու մահճակալ – ներուն թիւը 1965ին պիտի հասնի 18·900ի, այսինքն՝ իւրաքանչիւր 10·000 հոգիին բաժին պիտի իյնայ 88 մահճա – կալ: Կը յուսացուի որ պիտի աւելնան մասնագէտ բժիշկներուն թիւը , մինչեւ որ անոնց պակասը չզգացուի :

Խ· ԵՓԱՆՈՎ

(Քաղուած «Հայաստանի տնտես· զարգացումը» հատորէն)

ԼՐԱՏՈՒ ԱՐՈՒԵՍՏԻ

ՀՈՐԱՍ 62

Շաբ. Ազնաւուրի վերջին ժապաւէնին՝ Հորաս 62ի առաջին ներկայացումը տեղի ունեցաւ առջի իրիկուն, Պալզաք սինեմ – մային մէջ: Ժամանակին ըրած էինք թէ այս ժապաւէնին մէջ կը խաղար Արտա – շէս Գմբէթեան, որ բացառիկ յաջողու – թիւն պտաւ առջի իրիկուն: Ժան Ռոքեթօ, Օիվէլ Փասքալ, Միշէլ Մոռկան եւ բազ – մաթիւ այլ անձնաւորութիւններ մասնա – ւորապէս շնորհաւորած են հայ արուես – տագէտը, այն հաստատ համոզումով թէ Գմբէթեան երկար տարիներէ ի վեր վարժ է շարժարուեստի :

Առիթ կ'ունենանք առանձին խօսելու ժապաւէնին մասին:

Շէյխը զապանակներով չինուած բազ – մոցին վրայ նստեցաւ: Պահ մը չորսդին պտըտցուց իր աչքը, հիացումով մը դի – տեց կահաւորումն ու ըսաւ .

— Ես Մլանցիներու Աչիրէթին պատ – կանող Փիւրա Շէյխ մըն եմ, պէյ էֆէն – տի: Շատոնց կը փափաքէի տեսնուիլ : Ձեր անունը յարգանք կը վայելէ Աչիրէ – թիս մէջ. ամէնքն ալ ձեր արդարասիրու – թեան վրայ հաւատք ունին: Այդ պատ – ճառաւ եկած եմ ձեզի յայտնելու թէ՝ երբեմն անհարկի խռովութիւններ ակսած են տեղի ունենալ մեր եւ հայ ցեղին մի – ջեւ. խռովութիւններ որոնք կրնան ավե – տարեր հետեւանք մը ունենալ: Պէտք է աղղու միջոց մը ձեռք առնուի, որպէսզի թշնամութիւնը չզրկուի եւ վտանգաւոր կերպարանք մը չառնէ :

Ջոջը՝ սէդ ու անժպիտ կերպարանքը սեւեռեց Փիւրա Շէյխին վրայ, որուն բերնէն այնքան համակրական արտայայ – տութիւններ կ'արտասանուէին, ու պա – տասխանեց .

— Շնորհակալ եմ, Շէյխ էֆէնտի, եւ չափազանց ուրախ եմ ու տեսնուեցանք ի – րարու հետ: Գալով այն «հնհարկի խռո – վութեանց, որոնք մօտ ժամանակներուս մէջ ծագում առած են ձեր եւ հայ ցեղե – րու միջեւ կը յուսամ թէ չուտով վերջ մը կը տրուին եւ առջնուան պէս անոնք սիրով պիտի ապրին ամէն տեղ :

(Շար.)

ԹԻԱՊԱՐՏԸ

(ՎԷՊ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿԵԱՆՔԷ)

ԳՐԵՑ

ԱՐՄԷՆ ՇԻՏԱՆԵԱՆ

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

—o—

ՎԱՆԱՑ ՋՈՋԸ

Երկու յարկի վրայ չինուած, ընդար – ձակ ու պեղեցիկ ապարանքի մը մէջ, յի – սունն անցած, բարձրահասակ պիրուկ կազմուածքով, պատկառելի կերպարան – քով, խորաթափանց աչքերով, թաւ ու կէս մը ճերմկած պեխերով մարդ մը նա – տած էր եւ նամակ կը գրէր :

Այս մարդը Վանայ քաղքին Ջոջն էր:

Հազած էր կովկասեան ձեւով փանէլա ցայդաղգեաս մը եւ գլուխը գրած էր ճերմակ թելերով նախշուն գլաք մը :

Այն տեղեակը, ուր ինքը կը գտնուէր, –քանչելի կերպով պատած էին. որոնց վրայէն գիւղական իւղանկարներ ու տոհ – մային անձնաւորութեանց լուսանկարներ կախուած էին, տախտակամածը ծած – կուած էր պարսկական ընտիր գորգով մը, որուն վրայ չարուած էին բազմոցներ ու աթոռներ. լայն պատուհանները թա – ւիշէ ծանրագին վարագոյրներ ունէին . մէկտեղը գրուած էր քառակուսի սեղան մը փղոսկրեայ կտորներով զարդարուած. պատին տակ մեծ ու ոսկեզօծ շրջանակ – ներով քանդակուած հայելի մը ու ընկու – զի փայտէ չինուած զարան մը կային . ձեղունէն կախուած էր ջահ մը:

Ջոջը մինակ էր :

Երբ վերջացուց նամակը, գրեթէ ան – հանգարտ ու նեղացած չարժուձեւով մը ոտքի ելաւ թաւիշէ վարագոյրներով ծածկուած պատուհանին մօտեցաւ ու բա – նալով զայն դէպի պարտէզը սկսաւ նա – յիլ: Պարտէզը հեշտալի էր: Հինաւուրց ծառերը բարձրացած էին մինչեւ պատու – հանը :

— Ի՞նչ պիտի ըլլայ ասոր վերջը , բա – ցականչեց Ջոջն ինքնիրեն, ո՞ւր պիտի հասնի այս խռովութիւնը : Բոլոր նա – հանգը կրակի մէջ է: Ընդհանուր կոտո – րած անխուսափելի կը դառնայ : Կառա – վարութիւնը սեւ իժի մը պէս կը նայի մեր վրայ: Ախ, որո՞ւ ըսես, որու հաս – կընձես: Ըրին չըրին մինչեւ որ ժողո – վուրդը խելքէ հանեցին ու աս վիճակին բերին ...:

Ջոջը խօսեցաւ ինքնիրենը, տրամաբա – նեց ... ու անխոհեմ գտաւ ժողովրդեան տրամադրութիւնը. հետեւաբար յուզ – ուած եղանակով մը բազմոցին վրայ ին – կաւ ու երկար առեն մտատանջութեան մը մէջ մնաց :

Առ մի՛ջոցին . ապարանքին սպասաւորը ներս մտաւ ու յարգանքով մը բարեւելէ ետքը մրմնջեց :

Ջոջ աղա , քիւրտ Շէյխ մը եկած է եւ տեսնել կ'ուզէ քեզ :

Ջոջը մտատանջութենէն սթափելով՝ սպասաւորին նայեցաւ ու հարցուց .

— Ի՞նչ ըսիր ծօ:

— Ըսի թէ Շէյխ մը կայ վարը ... կրկ – նեց սպասաւորը դողդողալով :

— Է՛յ ...

— Կը փափաքի տեսնել ձեզ :

— Ի՞նչ տեսակ մէկն է:

— Ի՞նչ գիտնամ ... ղլուխը թուխ պո – ղոց մը կայ ճերմակ փաթթոցով է, եւ կանանչ վերարկու մը հագած է :

— Քիւրտ է, եթէ ոչ թուրք :

— Չէ, աղա քիւրտի կը նմանի :

— Ըսէք թող հոս գայ :

Սպասաւորը սենեակէն դուրս ելաւ : Քիչ յետոյ բարձրահասակ ու յաղթան – դամ կազմուածքով Շէյխ մը ներս մտաւ:

— Մէրհապա ... մրմնջեց Շէյխը աջ ձեռքը կուրծքին վրայ դրած ու կէս մը ծռած ձեւով մը:

— Հրամմեցէք ... թոթովեց Ջոջը՝ խորին հետաքրքրութեամբ Շէյխին երեսը նայելէ ետքը:

Պ. Արմենակ Դատաւորեան, Տէր եւ Տիկին Փիրայր Դատաւորեան եւ ընտա – նեկան բոլոր պարագաները խոր ցաւով կը ծանուցանեն իրենց կնոջ եւ մօր՝

ՍՐԲՈՒՀԻ – ՍՕՆԻԱ ԴԱՏԱՒՈՐԵԱՆԻ

(Ծնեալ Թօփալեան)

կսկծալի մահը :

Յուղարկաւորութիւնը կը կատարուի այս երեքշաբթի (Յունուար 30) ժամը 14·15ին Փարիզի Ս. Յովհ. Մկրտիչ եկեղեցւոյ մէջ :

Մահագդ չստացողներէն կը խնդրուի ներկայս իբրեւ այդ նկատել :

ՅԱՌԱՋ.— Մեր ցաւակցութիւնները Դատաւորեան ընտանիքին :

VICTOR GARDON

LE CHEVALIER

à

L'EMERAUDE

« Une très belle épopée qui a pour cadre l'Arménie légendaire »
(*Réalités*).

« Les mots sont brefs, justes, légers, mais portés par un souffle d'épopée ».
RENÉ MASSON (*Nouveau Candide*).

« Un livre plein d'entrain, de rebondissements qui émeuvent... il grouille de personnages chaleureux ».
ALAIN BOSQUET (*Combat*).

« Le héros de cette épopée est un parent de Lancelot et de Perceval ».
(*Feuille d'Avis de Neuchâtel*).

« Une fois de plus Victor Gardon affirme un talent sans défaut ».
(*Libre Belgique*).

STOCK

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

ԿԱՊՈՑՏ ՄԱՇԻ ՕՐԸ

Ֆ. Կ. Մաշի օրը կը տօնուի Ապրիլ 1ին, կիրակի, կէսօրէ վերջ, Շիմիի սրահը :

×

ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԸ Կ'ԵՐԳԵՆ

ՄԱՐՏ 18ԻՆ

ԿԸ ՓՆՏՌՈՒԻ

Էջմիածինի չրջանից, Արմիկ Յովհան – նէսեանը, կը փնտռէ իր հարազատ եղ – բայրը՝ Աշոտ Յովհաննէսեան Ալէքսանի, Էջմիածինի չրջանից Սամադար գիւղացի : Անհետացած է վերջին պատերազմի ըն – թացքին : Տեղեկութիւն ունեցողներէն կը խնդրուի լուր տալ, Պ. Գրիչա Տէր Ցա – կոբեանի, Թրավէրս Կրօժան, Շաթօ Կոմպեռ, Մարսէյլ (13) :

Ամերիկահայ թերթերէն կը խնդրուի արտատպել :

ԱՆՆԱԽԸՆԹԱՑ

ՀԱՅԿԱԿԱՆ ՈՍԿԻ ՇՔԱԴՐԱՄ

Վաճառումի պարտադիր գին

Modèle Deposé Prix Imposé

200 Ն. Ֆ.

Գնելու համար դիմել՝

EDOUARD KHEDERIAN

66, Rue Lafayette, PARIS (9e)

Tél. : PRO. 11-63

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Կապոյտ Աշի Շրջ. վարչութիւնը չը – նորհակալութեամբ ստացած է հազար Ն. Ֆ. Պ. Մուշեղ Ճիչրճեանէ, օգափոխու – թեան կայանին համար :

×

Լիոնի եկեղեցաչէն Յանձնախումբը խո – րին շնորհակալութեամբ ստացաւ հետեւ – եալ նուիրատուութիւնները ի նպաստ Լի – ոնի եկեղեցւոյ չինութեան.—

Պ. Յարութիւն Յովհաննէսեանէ (Թէլէ կլօպ) 2·000 Ն. Ֆ. եկեղեցաչէն Յանձ – նախումբը կրկնապէս երախտապարտ է Պ. Յովհաննէսեանի, տրուած ըլլալով որ երիտասարդ բարերարը, առաջին անգամ չէ որ այսպիսի կարեւոր գումար մը կը նուիրէ, այլ քանի քանի անգամներ, նոյնքան կարեւոր գումարներ բերած է ինքնաբերաբար, որպէսզի Լիոնի Հայոց եկեղեցին ժամ առաջ մարմին առնէ :

Տիկին Բերուզ Ճնկըտըրեան իր զաւկին Պ. Կարպիս Ճնկըտրեանի արկածէ ազա – տելու առթիւ հինգ հարիւր Ն. Ֆ., Ո՛մն, բարեպաշտ տիկին մը երկու հարիւր, Փարիզէն Պ. Ժանօ Ազէլեան 10 Ն. Ֆ. :

Surprise Party

ՊԱՐԱՆՅԻԿ ԵՐԵԿՈՅԹ

Կազմակերպուած Հ. Ց. Դ. Նոր Սե – րունդի Ալֆորվիլի մասնաճիւղին կողմէ :

Այս կիրակի, ժամը 15էն մինչեւ 22, Մչակոյթի Տան մէջ, 17 Րիւ Պէօ :

Հաճելի մթնոլորտ, պառ, պիւֆէ, ըն – տրուած սալերը (տիսք) :

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ

Վարչութեան ժողովը տեղի պիտի ու – նենայ երկուշաբթի, 29 Յունուար, ժա – մը 18·30ին, Մչակոյթի Տան Շաւարշ Մի – սաքեան սրահին մէջ : Կը խնդրուի սակ – պողաբար ներկայ ըլլալ : Կարեւոր օրա – կարգ :

ՋՈՒԻՑԵՐԻԱ

Լէման լճի գեղածիծաղ ափին՝
մեծ հպարհի մը մէջ,
ՓԱՐՏՈՒՂԱՐԻՒՀԻ

մը կ'ուզուի Փաստաքանի մը համար : Լաւ ամառնոչակ, բնակութիւն, վճա – րան ապահովագրութիւններ :

Նախապատուութիւն պիտի տրուի հա – յերէն խօսիլ եւ գրել գիտցող թեկնածու – ին, որ պէտք է եւ շատ լաւ ֆրանսերէն գիտնայ եւ վարժ ըլլայ ֆրանսերէն գրա – գրութեան եւ մեքենագրութեան (սքեռ – տաֆթիլօ) :

Դիմել «Յառաջ» :

ՇՈՒՏՈՎ ԼՈՑՍ ԿԸ ՏԵՄՆԷ

ՀԱՅ - ԲՈՅԺ

ԺՈՂ. ԱՄՍԱԹԵՐԹ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ

Խմբագիր՝ Շ. ՆԱՐԴՈՒՆԻ

—o—

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.— (Թիւ 234 – 236).— *Վիքթոր Հիւկօ եւ Բժիշկները* (Խմբ.).— *Նախաճաշի մասին* (Տոքթ. Փօլ Ֆարէզ).— *Մազերու թափելուն դէմ* (Տոքթ. Գէորգեան).— *Ծծկեր երախանե – րու մարսողական խանգարումները* (Տոքթ. Բամպուճեան).— *Արկածով մեռնողները Ֆրանսայի մէջ* (Քաղհան). *Ձմեռ* (Յովհ. Պապէսեան).— *Շա – դանակադեղձը խոշորցած է, չի կրնար միզել* (Տոքթ. Շ. Այվազեան).— *Սենե – կայի հիւանդութիւնը, լանջախիթ* (Շ. Նարդունի).— *Օգտուիր ջրից եւ արեւից* (Տոքթ. Փափազեան).— *Քոլեսթե – րոլս չափած է* (Տոքթ. Ա. Աչճեան).— *Ձաւակ բերել առանց ցաւի* (Տոքթ. Ասֆանագ).— *Պայքարը այրերու եւ կիներու միջեւ* (Տոքթ. Արշակ Պօղոսեան). — *Շաչտանդամ կինը կամ կնոջ պաղութիւ – նը* (Տոքթ. Գալուստեան).— *Բերանը կոկորդիլոսի բերան* (Տոքթ. Գեղամ Այ – վազեան) :

Տարեկան բաժնեգին Ֆրանսա 15 Ն. Ֆ., արտասահման՝ 20 Ն. Ֆ. :

Հասցէն դրել ճիշդ այսպէս.— Շ. Նար – դունի, խմբագրատուն Յառաջի,

Ch. Aivazian
Au journal HARATCH
32, Rue de Trévise, Paris (9e)

Imprimerie Spéciale du journal « Haratch »
32, Rue de Trévise, PARIS (9e)

ՄՈՒՐԱՏ ՌԱՓԱՅԷԼԵԱՆ
ՆԱԽԿԻՆ ԱՇԱԿԵՐՏԱՑ ՄԻՈՒԹԻՒՆ

ՏԱՐԵԿԱՆ ՄԵԾ ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

ՁՈՒԱՐԹ

Մայրամուտէն մինչեւ կէս գիշեր

ՁՈՒԱՐԹ ՄԹՆՈԼՈՐՏ

ԿԻՐԱԿԻ՝ ՓԵՏՐՈՒԱՐ 11, ԺԱՄԸ 17ԷՆ՝24

AMBASSADEURS

3, Ave. Gabriel, 3
ԵՐԳ ՈՒ ՊԱՐ
ՄԵԾ ՆՈՒԱԳԱԽՈՒՄԲ

Attractions ԽԱՂԵՐ **Bar-Buffet**

ՀՐԱՆՏ ԱԱՄՈՒԼԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

51, Rue Monsieur-le-Prince, PARIS - 6e — Chèque Postal : 1278-35

PEINTRES et SCULPTEURS ARMENIENS, par *Onnig Avédissian*, Le Caire	100 NF.
MINIATURES ARMENIENNES, par *Lydia Dournova*, Paris.	120 NF.
NAREK, le Livre de Prières, trad. par *Isaac Kéchichian*, Paris, 1961.	25,20 NF.
LE CHANT DU PAIN, *Daniel Varoujan*, Paris.	6,30 NF.
HISTOIRE DE L'ARMENIE, par *H. Thorossian*, Paris.	10 NF.

ԲԱՌԱՐԱՆ ՖՐԱՆՍԵՐԷՆԷ ՀԱՅԵՐԷՆ, Հ. Ե. Տէր Ղազարեան, Պէյրութ,	20 Ն. Ֆ.
ԲԱՌԱՐԱՆ ՖՐԱՆՍԵՐԷՆ ՀԱՅԵՐԷՆ, Մեսրոպ Նուպարեան, Պէյրութ	40 Ն. Ֆ.
ԲԱՌԱՐԱՆ ՀԱՅԵՐԷՆԷ ԳԱՂՂԻԵՐԷՆ, Հ. Գ. Պայեան, Վենետիկ,	40 Ն. Ֆ.
ԱՌՁԵՒՆ ԲԱՌԱՐԱՆ ՀԱՅ. ԳԱՂՂ. Հ. Դ. Սահեփանեան, Վենետիկ	9 Ն. Ֆ.
ԲԱՌԱՐԱՆ ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ, Ս. Գաբամաճեան, Պէյրութ,	40 Ն. Ֆ.
ԱՆԳԼԵՐԷՆԷ ՀԱՅԵՐԷՆ ԲԱՌԱՐԱՆ, Յ. Յ. Զազմազճեան, Պէյրութ	40 Ն. Ֆ.
ՅՈՒՇԱՄԱՏԵԱՆ Հ. Մ. Ը. Մ.Ի, 1918–1958, Պէյրութ	22 Ն. Ֆ.
ԿԵԱՆՔԻ ՈՒՂԻՆԵՐՈՎ, Բ. հատոր, Ս. ՎՐԱՅԵԱՆ, Պէյրութ	12 Ն. Ֆ.
ՁՐՈՑՑ, Կ. ՓՕԼԱՏԵԱՆ, Ա. հատոր 3·50 Ն. Ֆ. Բ. հատոր	5 Ն. Ֆ.
ԱՆԴՐՇԻՐԻՄԵԱՆ ՁԱՅՆԵՐ, Պ. Մնապեան, Պէյրութ	4 Ն. Ֆ.

Առաքման ծախքը գնողին վրայ

ՃՈԽ ՄԹԵՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ԵՒ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆՑ

1962

ՁԵՐ ԱՐՁԱԿՈՒՐԴԸ ԱՆՑՈՒՑԷՔ

ՀԱՅԱՍՏԱՆ

Փարիզէն խմբական եւ ընկերակցութեամբ մեկնումներ Շաբաթ օրերը՝ 30/6, 14–7, 28–7, 4–8, 11–8 եւ 1–9 :

Երկաթուղի եւ օդանաւ 23 օր ՓԱՐԻԶԷՆ ՓԱՐԻԶ 19 օր, Տարի. Մխութիւն որուն 15ը ԵՐԵՒԱՆ : Փարիզէն Փարիզ 2·300 Ն. Ֆ.

Օդանաւով ճամբորդութիւն, 11 օր, Փարիզէն Փարիզ, կիրակի 29–7 եւ 5–8

ՓԱՐԻԶԷՆ ՓԱՐԻԶ

Ճամբորդութեան գին՝ 2·370 Ն. Ֆ.

ԿԱՐԵՒՈՐ

Այս ագդը ներկայացնողին 50 Ն. Ֆ.ի մասնաւոր զեղչ, եթէ անձամբ կամ գրաւոր արձանագրուի, 1962 Մարտ 30էն առաջ :

Մասնաւոր խումբեր ՍՈՒՈՒՄԻ ԵՒ ՊԱԹՈՒՄԻ ՀԱՄԱՐ

Տոմսեր բոլոր ուղղ Գիւղերու համար

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

« Tourpol »

AGENCE DE VOYAGES INTERNATIONAUX
SECTION ARMÉNIENNE

21, Rue Bergère, Paris·9· — Métro Montmartre – Tél. PRO. 31-04

Բաց է ամէն օր, բացի կիրակի օրերէն, ժամը 9էն 12 եւ 14էն 18·30 (Շա – բաթ՝ 9էն 12) : Հայերէն խօսող պաշտօնեայ ամէն ժամը 17էն 18·30 :

Դիմումի վրայ, ձրի կը ղրկենք այս ճամբորդութիւնը նկարագրող մեր թռուցիկները :

MORY et Cie

ՆՈՒԷՐՆԵՐՈՒ ԵՒ ԾՐԱՐՆԵՐՈՒ ԱՌԱՔՈՒՄ ԴԷՊԻ ԽՈՐՀՐԴ. ՄԻՈՒԹԻՒՆ : Գնեցէք գանուիք ձեր ուզած տեղը եւ առաքումը մեզի վստահեցէք : Նաւագա – գոյն ծախքերով կը ղրկենք խորհրդ. Միութիւն :

Դիմեցէք մեր նոր գիները գիտնալու համար.—

10, Rue St. Vincent de Paul, Paris 10e

(PRÈS DE LA GARE DU NORD)

Téléphone : TRU. 27-70

ՀԱՅՐԵՆԻՔ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

Le PREMIER QUOTIDIEN ARMENIEN en EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction et Administration : 32, Rue de Trévise - PARIS-9e

Fondé en 1925
R. C. Seine 57 A 2731

Téléph. : PRO. 86 - 60
C. C. P. Paris 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա՝ Տար· 50 Ն· Ֆ· Վեցամսեայ՝ 27 Ն· Ֆ·
Արտասահման՝ Տար· 60 Ն· Ֆ· Հատը՝ 0·25 Ն· Ֆ·

ԵՐԵՔՇԱԲԹԻ
30
ՅՈՒՆՈՒԱՐ
MARDI
30 JANVIER
1962

38ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 9317 38e ANNÉE Fondateur : SCHAVARCH MISSAKIAN ՆՈՐ ՇՐՋԱՆ, 18ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 5118

ՕՐՈՒԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐԸ

ՖՐԱՆՍԱ

ՆՈՐ ՄԻՋՈՑՆԵՐ ԳԱՂՏՆԻ ԲԱՆԱԿԻՆ ԴԷՄ

Սէնի եւ Սէն է Ուազի նահանգներուն մէջ Ապահովութեան Հանրապետական Գումնդեր եկան զօրացնելու համար Գաղտնի Բանակի դէմ կատարուած գործողութիւնները։ «Սարդի կտաւ» կը կոչուի այդ գործողութիւնը որ սկսաւ Շաբաթ առաւօտ ։ Հանրապետական Գումնդերու (Սէնի Էմ) չորս հարիւր անդամներ, մաս-նակցեցան, նոյն ժամուն հասնելով մայրաքաղաք եւ մնայուն կապ պահելով ոստիկանական ուժերուն հետ որոնք արդէն տեղւոյն վրայ էին ։

Միւս կողմէ ոստիկանութեան այն ճիւղը որուն յանձնուած է Գաղտնի Բանակի գործունէութեան քննութիւնը նոր ուժեր ստացաւ իր մէջ ։

Փարիզի եւ զաւառի զանազան շրջան-ներուն մէջ փլասթիֆի ահաբեկումները կը շարունակուին ։

Կիրակի օր, ըստ սովորականին, քա-ղաքական զանազան ղէմքեր ճառեր խո-սեցան, զանազան առիթներով եւ բոլորն ալ անդրադարձան ներկայ կացութեան ։

Ականոնի մէջ, Թէռնուար չէշտեց թէ Հանրապետութիւնը պիտի պաշտպանուի եւ Ֆրանսացի ժողովուրդը իրեն ներկա-յացուած ծուղակը պիտի չիյնայ ։ « Կը հաստատեմ վճռապէս, բաւ նախարարը, երբեք Զօր· տը Կոլ ասկէ աւելի իր ոէրը չէ եղած եւ երբեք ալ ասկէ աւելի վճռա-կան եղած է ։ երբեք մարդը ղոր ճակա-տագիրը նշանակեց իրրեւ փոթորիկներու մարդը, աւելի վճռական չէ եղած ղէմ դնելու համար անցողակի հակառակու-թեան եւ ստանձնելով պատասխանա-տուութեանց ամբողջ ծանրութիւնը » ։

Տեղեկատուութեան նախարարը, Տը Լա Մալէն Ռէնի մէջ, անդրադարձաւ մամու-լի պարտականութեան եւ ազատութեան սկզբունքին։ «Այսօրուան աշխարհին մէջ քիչ են արհեստները որ ըլլան աւելի պատուաբեր , աւելի անհրաժեշտ , բայց նոյն ժամանակ աւելի պատասխանատու» ։

Նիսի մէջ Հանրապետական կեդրոնի մէկ հաւաքոյթին ընթացքին, Անտրէ Մո-րիս իր հաւանութիւնը տալէ առք ճախ-կեդրոնի համախմբման մը յայտարարեց· — « Ալժերիոյ հարցին լուծումը կրնայ ծնիլ միայն երբ ազգային քաղաքական բոլոր կազմակերպութիւնները խորհրդ – դակցութիւն մը ունենան» ։

Անջատուած ընկերվարականներու պա-րագլուխը՝ Էտուար Տէփրէօ Ալժէնի մէջ Ընկերվարական միացած կուսակցութեան տեղեկատուութեան մէկ հաւաքոյթին ընթացքին անդրադարձաւ իր կուսակցու-թեան յարաբերութիւններուն, եթէ ոչ կապերուն, համայնավարներուն հետ ։ Յայտարարեց թէ չատ սխալ է կղզիացնել համայնավարները որոնք բանուորական խաւին մէկ ոչ անհետանալիք մասը կը կազմեն ։ Զանոնք առանձին թողլով մէկ արդիւնք միայն ձեռք ձգուած կ'ըլլայ, այն է համայնավարներուն ձգել բանու-րական դասուն եւ Զախին պաշտպանի մենաշնորհը ։

ԱԼԺԵՐԻԱ

ՄԻՋԱԴԷՊԵՐ ԵՒ ՍՊԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Ահաբեկում եւ սպանութիւն կը շարու-նակուին նոյն թափով ։

Ալժէնի քառասուն քիլոմեթր հեռու Ալ-մայի մէջ, եւրոպացի քաղաքապետը , 72 տարեկան, սպաննուեցաւ Գաղտնի Բա-նակի մարդոց կողմէ ։ Նոյն առեն, Ալժէնի մէջ , մահմետական թաղապետական խորհրդատու մը, 43 տարեկան սպան-նուեցաւ Ալժ· Ազատ ճակատի մարդոց կողմէ ։ Նկատուած էր իբրեւ ալժերացի մը որ կողմնակից է Ալժերիոյ Ֆրանսայի մաս կազմելուն ։

Այս արարքներուն կողքին, կան նաեւ զործադուլներ եւ ուրիշներ ալ կը նա-խատեսուին ։

Օրանի մէջ բազմաթիւ ահաբեկումներ 14 մեռեալ (որոնց չորսը եւրոպացի) եւ 18 վիրաւոր պատճառեցին ։

Ալժէի արքեպիսկոպոսը՝ Տէբապայծառ Տիւվալ ճչդում մը հրապարակեց որ ձե-ւով մը պատասխան մըն է Գաղտնի Բա-նակին ։ Ծանօթ է որ վերջերս փիրաք հաղորդումի մը ընթացքին խօսած էր կրօնաւոր մը հանդարտեցնելու համար քրիստոնեայ այն խղճերը որոնք դէմ էին Գաղտնի Բանակի «Հակաքրիստոնեայ » գործունէութեան ։ Այս առթիւ, Գեր· Տիւվալ կ'ըսէ թէ նման պաշտօն (Օմոնիէ Թեմեռալ) ունեցող կրօնաւոր չկայ Գաղտնի Բանակին մէջ, միայն եպիսկո-պոսները եւ Պապը կրնան քահանայի մը հովուական պաշտօն տալ ։

Մարոքի կառավարութիւնը անակնկալ-օրէն զօրք ղրկեց ալժերական սահմանին վրայ ։ Այս գործողութիւնը արդարացնե-լու համար Ռապաթի իշխանութիւնները կ'ըսեն թէ «կացութիւնը ծանրացած է Ալժերիոյ զօրքին գործունէութեան հե-տեւանքով »։

Բանակներու նախարարութիւնը սա-կայն, փարիզէն կը ճշդէ թէ Ռապաթի հրատարակած զեկոյցը ոչ մէկ ձեւով կը համապատասխանէ իրականութեան ։

× Փետրուար վեցին, պատասխանելով Տանիէլ Մայէրի կոչին «բողոքի համալը-սարանական օր» մը տեղի պիտի ունե-նայ ։

ԱՄԵՐԻԿԱ

ՅՈՒՍԱՀԱՒՈՒԹԻՒՆ

Միացեալ Նահանգներու մէջ, մեծ յու-սախաբութիւն մը ծագեցաւ առջի օր ։ Արդարեւ Ամերիկացիք երկու փորձեր պիտի կատարէին, որոնց մէկը մասամբ միայն յաջողեցաւ, մինչ միւսը չհաջող-ուեցաւ ։

Նախ լուսին ղրկուած արբանեակը ճամ-բան չդնեցաւ, բայց Քափ – Քանավերալի դիտուններն կրցան որոշապրել ծիրը, ինչ որ կը նշանակէ թէ եթէ նոյնիսկ նախա-տեսուածը պիտի չըլլայ, արբանեակը բա-ւական մօտէն անցնելով լուսնին, կարե-ւոր լուսանկարներ ձեռք պիտի ձգուին ։

Ամերիկացիները մարդ մըն ալ պիտի ղրկէին անշուշտ, բայց պայմանները նը-պաստաւոր չըլլալով, ճամբորդութիւնը չհաջողուեցաւ ։

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

Գահիրէի դատավարութիւնը կը չա-րունակուի ։ Ֆրանսացի դիւանագէտնե-րէն մէկը՝ Պելիվիէ պատմեց թէ ինչ պայմաններու տակ կորզուած են խոստո-վանութիւնները ։

ՃԱՓԱՐԹԱՑԻ կառավարութիւնը հրա-հանգ տուաւ իր «վայրաչուներուն» որ ե-թէ ճերմակի հանդիպին, նախ դէնք քա-շեն ապա միայն՝ հարցաքննեն ։

ՆԱՓՈԼիի մէջ կը շարունակուի խոտա-լական տէմօ – Քրիսթիանի կուսակցու-թեան ազգային համագումարը ։ Այս ժո-ղովին վաղորդայնին, Ֆանֆանի պիտի հրաժարի ։ Կաթողիկէ կուսակցութեան ընդհ· քարտուղարը՝ Մորօ կոչ մը ըրաւ որ ձախերու հետ գործակցութիւն մը ըլ-լայ, գլխաւորաբար Սոռակաթի եւ Նէննի կուսակցութենէց հետ ։

ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ Խորհուրդը պիտի հաւաքուի Յունհ· Միութեան առաջարկին վրայ քննելու համար խորհրդային բողո-քը որ կը մեղադրէ Արեւմտեաններ Քա-թանկայի վարձկաններուն իրենց բերած օժանդակութեան համար» ։ Առուլա բո-ղոքեց այս նիստին դէմ մինչ Զոմպէ յայ-տարարեց թէ Սեպտեմբերի եւ Դեկտեմ-բերի կոնիները թիւրիմացութիւններ է-ղած են, հիմա բարեկամաբար կը դոր-ծակցին ։

ԴԱՇՆԱԿՑԱՑԻՆ Գերմանիոյ նախագա-հը Լիւպկէ Արեւմտեան Պերլին պիտի եր-թայ Յունիս չորեքշաբթի ։

ԽՈՐՀ· ՄԻՈՒԹԵԱՆ համայնավար կու-սակցութեան կեդրոնական կոմիտէն նիս-տի կանչուած է Մարտ 5ին ։ Միւս կողմէ ապատալինացման կը յաջորդէ ապամո-ղոքացումը ։ Արդարեւ Գերագոյն Խոր-հուրդի Պրեզիտիումը յատուկ հրովար-տակով մը կը յայտնէ թէ պիտի փոխ-ուին հակակուսակցական խմբակին ան-դամներուն անունները կրող քաղաքները, ճամբաները, գործատուները, դիւղերը , թաղամասերը եւն· եւն· ։ Այս հրովար-տակը կը վերաբերի Մոլոթովի, Մալէն-կովի, Կաքանովիչի, Վորոչիլովի ։

ՅՈՐԴԱՆԱՆի դահլիճը հրաժարեցաւ առջի օր ։ Թագաւորը Պաղտատի դեսպա-նին յանձնեց նոր դահլիճի մը կազմու-թիւնը ։ Այս ձեւով Հիւսէյն կ'ուզէ երի-տասարդացնել երկրին վերակազմութիւնը ։

ԽՈՐՀ· ՄԻՈՒԹԻՒՆԸ եւ Եգիպտոս, համաձայնութիւն մը ստորագրեցին ըստ որուն 182 միլիոն Ն· Ֆ· պիտի յատկաց-ուի Արաբ· Մ· Հանրապետութեան ճար-տարարուեստի ծրագրին ։

ԱՆԳԱՐԱՑԻՆ Սէնեգալի (Պաղտատի Ուխտ) ընդհ· քարտուղարը կը հաղորդէ թէ համաձայնութիւն մը ստորագրուած է Ամերիկայի հետ, մէկ միլիոն չորս հա-զար տոլարի վարկ մը բանալու համար Թուրքիոյ, Պարսկաստանի եւ Փաքիստանի, որպէսզի օդային ուժ մը ստեղծեն ։

ՊՈՒԼԿԱՐԱԿԱՆ Միկ օդանաւին օդա-չուն Պառի փոխադրուեցաւ ։ Սկսած է մտահոգուիլ իր ճակատագրին մասին ։ Իտալացիները համոզուած են որ լրտե-սութեան հարց էր ։

ՀԱՑ ՄԵԾԱՆՈՒՆ ՀՐԱՊԱՐԱԿԱԳԻՐ

ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆԻ

ՄԱՀՈՒԱՆ Ե· ՏԱՐԵԴԱՐՁԸ

ՏՕՖԻՆԷ ԼԻՊԼՒՒԷի մէջ (Յունուար 26) Տիկին Օտէթ Միքայէլեան յուզիչ անա-կընկալը ըրած էր հետեւեալ տողերը նը-ւիրելու «Ցառաջ»ի հիմնադիրը – խմբագ-րապետին յիշատակին, վերի խորագրին կցելով նաեւ Շ· Մխսաքեանի նկարը ։

×

« Ձիշդ հինգ տարի առաջ, մեծազոյն հայ լրագրողին յանկարծական մահը , փարիզի մէջ վիշտով չշմեցուց աշխար-հայրիւ Հայութիւնը, որովհետեւ ան իր ամբողջ կեանքը եղած էր· օրինակը մար-դասիրութեան, իրատեսութեան եւ պա-զատարապաշտութեան ։

Իր գործունէութեան հաւատով հանդա-նակին մէջ, մայր առաքինութեանց կը դասէր մտաւորական ուղղամտութիւնը ։

« Հրապարակագիրը՝ հիմնադիր էր « Ցառաջ » մեծ օրաթերթին ։ Իր հրա-տակ խմբագրականները, հարազատ ջա-հերն էին իր գաղափարներուն ։ Հին եւ բազներու բոցովը կը լուսաւորէր նոր ճամբաները , վերահաս արդարութեան մը, աւելի կայտառ , յանդուգն, պայծառ եւ եղբայրական ։

« Շ· Մխսաքեանի մահը ցնցեց ոչ մի-այն գրասէր հասարակութիւնը· այլեւ բոլոր անոնք որոնք մարդկային արժէք – ներու հիմնականները կը դաւանին ազա-տութիւնը եւ արժանաւորութիւնը ։

« Այդ մեծ մարդուն մէջ այնքան մեծ էր կամքը պահելու եւ պահպանելու այն ամէն ինչ որ մարդը կ'արժեւորէ, որ բո-լոր Հայերը եւ մասնաւորապէս անոնք ո-րոնք ճանչցած են դինքը, երբեք պիտի չմոռնան իր յիշատակը որ միշտ ան – մոռաց պիտի մնայ եւ պիտի ապրի միշտ Հայոց մտքին եւ սրտին մէջ» ։

ՕՏԷԹ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

«Le Dauphiné Libéré»

ԹՈՒՐՔԵՐԸ ԼԻԲԱՆԱՆ ԿԸ ՓԱՓԱՂԻՆ

—o—

Պոլսոյ Թրքական Թերթերը կը գրեն թէ 93 Թուրքեր, որոնք Լիբանանի ապստամ-բութեան միջոցին ձերբակալուած եւ ա – պա Թուրքիա վերադարձուած էին, սկը-սան հարցաքննուիլ ։

Ուշագրաւ է յայտարարութիւնը մաս – նաւորաբար Մարտինցիներուն, որոնք կ'ըսեն թէ 150 ոսկիի փոխարէն Լիբանան անցած էին ցանցի մը օգնութեամբ , որ կը գործէ Թուրքիոյ մէջ, եւ թէ Լիբանա-նի մէջ այս ձեւով փախած աւելի քան չորս հազար Թուրքեր կան ։

Ճշդուեցաւ թէ վերադարձուած Թուր – քերէն մին ոստիկանութեան կողմէ կը փնտռուէր իրրեւ մաքսանենգ, իսկ 21 Մարտինցիներ ալ պինուորական ծառա – յութիւն չէին կատարած ։

Քննութիւնը կը ծաւալի Թուրքիայէն մարդ փախցնող ցանցին շուրջ ։

Վերադարձուածներուն դէմ հետապըն-դում պիտի կատարուի անցագրի օրէն – քին տրամադրութիւններուն ներհակ չար-ժելու ամբաստանութեամբ ։

ԽՈՐՀ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՏԼԱՍԸ

—o—

Լոյս տեսաւ վաղուց սպասուած Հայաստանի դիտական ատլասը մէկ հատորով, 111 էջերէ բաղկացած, բազմաթիւ գունաւոր քարտէզներով: Կոթո – դական աշխատութիւն է եւ պատիւ կը բերէ Հայկական Փիտութեանց Ակադեմիային, որու ղեկավարութեամբ ղլուխ է հատուած այս իրօք ղեղեցիկ գործը:

Տպաքանակ քսան հազար, գինը՝ 3 նոր ռուբլի 50 կոպ: Տպուած է Մինսկ քաղաքի քարտիղագրական յատուկ գործարանի մէջ:

Տպագրութիւնը սքանչելի է, գեղար – ուեստական, գոյները ներդաշնակ, ամէն ինչ պարզ եւ դիւրընթեռնելի:

Ցառաղաբանը եւ քարտէզներու բացատրական ներածութիւնները գրուած են դիւրաւ հասկնալի եւ կուռ հայերէնով: Տիտական նոր հայերէնը իրախուսական է:

Այս պատկառելի գործը արդասիքն է հարիւրաւոր հայ եւ սակաւաթիւ օտար գիտուններու եւ մասնագէտներու հատուկ ուսումնասիրութեանց, գիտական ճշդրիտ չափագրութեանց, պեղումներու, փորձերու եւ դիտողութիւններու:

Լրիւ, համարեա սպառիչ եւ բազմակողմանի տեղեկութիւններուն կը հետեւիք հետ: Հայրենակարօտ Հայոր – դին համար կատարեալ գրօսանք է, մասային ճամբորդութիւն, տաք սենեակիդ մէջ սեղանիդ առաջ նստած, Ատլասը թերթելիս: Անյագուրդ աչքերով կը դիտէք քայլ առ քայլ ձեր ծննդավայրը, հարստանալ սկսած, գեղեցկացած: Ահա մեր լեռնային փոքրիկ երկիրը, ճղմուած հարեւան երկիրներու կողմէ, ամէնքի սահմաններու մէջ մեզմէ խլուած լայն տարածութիւններ հայ աղգաբնակու – թեամբ: Փոքրիկ ածուի մաս չեն կազմեր մեր խրոխտ Ղարաբաղը, Նախիջեւանը, Սեւանի հիւսիսակողմը, Բորչալուն, Ա – խալքալակը, Կարս, Արտահան, Կաղ – զուան, Սուրմալու, Բասէն ու Ալաշկերտ, Վասպուրականն եւ Տուրուբերան ...

Ահա մեր Արարատեան դաշտը, մեր երկրի ղլխաւոր հարստութիւնը: Քար – էղներու գոյները գոյց կուտան հսկայական չերտեր անջրդի, չոր ու ապի հողերով անապատային տարածութիւններ, գորս մեծ Նանսէնն ուղեց ոռոգել տալ եւ նովիրել Հայերուն: Հաճոյքով կը դիտէք, որ դաշտի կարեւոր չերտեր արդէն կ'ոռոգուին եւ նոր կարեւոր մեծ առուներ կը շինուին ներկայիս, մասնաւորապէս Արզնի – Շամիրամի առուն, որ չուտով կ'ոռոգէ Արապածի ընդարձակ ու հարուստ մշակոյթի հողերը: Հաճոյք է տեսնել Սարդարապատի, այժմ Հոկտեմբերեան, դաշտը զարդարուած նորա – տունկ այգիներով եւ պտղաստաններով: Քարտէզները մեզի դիտել կուտան ընդարձակ դաշտերը գորեկի, բամպակի, նորատունկ անտառներու չերտեր:

Ահա մեր սիրեցեալ Արագածը ջրառատ, որու գոլքը մեր երգերը կը հնչեցնեն եւ որու մեր Խահակեանը կը ձայնակից: Ահա Շիրակը հայրենի իր յուշամնեներով, գով դաշտերով, Մանթաշի ձորով: Քարտէզը կը պատմէ թէ այժմ Շիրակեցին միայն «Փուրչուլուկ» (Գազար) ուտելով չի բաւականանար, այժմ «գարդացեր» է, կը մշակէ չաքարի ճակընդեղ, պտղատու այգիներ եւ ինչ դի – տես ինչեր:

Ահա մեր դեղատեսիլ Զանգեղուրը, հէքեաթային Լոռին, Ցովհ. Թումանեանի դուարթ ծննդավայրը: Հապա Սեւա՞նը, որ մեր երկրին կը պարգեւէ չարժիչ ուժ, ոռոգման ջուր, դովարար անձրեւ եւ դեղեցկութիւն:

Քարտէզները մեզի կուտան առատ ու բազմակողմանի տեղեկութիւններ ընդհանուր պայմաններու, եղանակի, մթնոլորտային տեղումներու, անձրեւներու, ձիւնի, խորշակներու, մառախուղներու, չորութեան, արեւափայլքի տեւողութեան, բուսականութեան ածի, պտուղներու, հացահատիկներու եւ բամպակի ծաղկման, հասունացման ժամկէտներու, տարեկան ջերմաստիճաններու քանակի եւայլն:

Ջրաբանական քարտէզները լրիւ տեղեկանքներ են երկրի ջրագրական ցանցի, տարեկան միջին հոսքի, ամառնային եւ ձմեռնային նուազագոյն հոսքերու, գետերու պղտորման աստիճաններու եւ սեղաններու (յորդում):

Սեւանի չորացման յոսի ծրագիրը յօդուտ էլեկտրականութեան եւ դաշտերու ոռոգման՝ կատեգուած է Հնորհիւ Ջրի ամբարումի նոր միջոցառումներու: Այս միջոցներն արդէն գանուած են բարեբախտաբար: Քարտէզի վրայ կը տեսնենք, որ Արփա գետի ջրերը թափելու են երկու փապուղիներու միջով Սեւանայ լիճը, տարեկան մօտ երեք հարիւր միլիոն խորանարդ մեթր ծաւալով: Լճի հիւսիսային կողմէն Գետիկի ջուրերը պիտի թափին եւ արեւմտեան կողմէն Փամբակ եւ Ազստեւ գետերու ջուրերը պիտի դարձուին դէպի լիճը: Այս միջոցառումները կիրարկուելու են մօտակայ տարիներուն: Այսպիսով Սեւանայ ծովի հայելին միշտ կը փայլի, ջուր եւ էլեկտրական ուժ կը հայթայթէ երկրին եւ մանաւանդ անձրեւ եւ խոնաւութիւն կուտայ անջրդի հողերուն: Ցմռռնանք յիշել, որ Սեւանայ Ջրի 89 առ հարիւրը կը գոլորշիանայ, մի մասը անգրեւի կը վերածուի: Ներկայ ծրագրով Ջրի մակարդակը պիտի իջնէ մօտ քսան մեթր:

Բազմաթիւ քարտէզներ կան բուսական – նութեան եւ կենդանական աշխարհի վերաբերեալ, անտառներու բուսասեռերը, տարածութիւնները, արհեստական անտառները, արօտատեղիները, հանդակները, խոտի եւ կերի տարածութիւնները, մշակելի հողերու տեսակները, անոնց ընդերքներու ջերմաստիճանները, որ կարեւոր են ամի համար:

Երկրաբանութեանը տրուած է պատուաւոր տեղ: Բազմաթիւ քարտէզներ գոյց կուտան երկրաբանական կտրուածքներ, ժայռերու եւ հողերու բնորոշում – ներով, կազմաւորման ձեւաբանութեան եւ այլն: Տրուած են լայնօրէն հանքատեղերը, հանածոները, ինչպէս պղինձ, մոլիբդէն, ալիւմին, երկաթ, մինչեւ անգամ ոսկի: Հապա մեր քարերը, բազալտ որձաքարը, գրանիտի եւ մարմարի հարուստ տեսակներ, չէյնջքարը (պեմզա) եւ մեր նշանաւոր Արթիկ տուֆը բազմատոնդ, որ մեր պատմական յուշարձանները եւ ներկայ շինանիւթն է եղած: Ամէն տեղ կայ Արթիկտուֆ: Թեթեւ, փխրուն, հեշտ տաշուող, ծակոտկէն, (ուրեմն վատ հաղորդիչ ջերմութեան), հրակայուն, եղանակի պայմաններուն դիմացող (քամահարութեան, սառուցման, խոնաւութեան դիմացող): Վարդագոյն – մանիչակագոյն տուֆը ամենալեղեցիկն է, որով կառուցուած է գողտրիկ Լմպատավանքը Արթիկի մօտ: Քանի գարերէ ի վեր կանգնած այդ յուշարձակի քարերը նոր սրբատաշ քարի կը նմանին, կարծես հանքէն նոր բերած լինին: Տես նողները՝ վկայ: Մեր հարեւանները միշտ մեզ ծաղրած են մեր տուֆ քարի համար, որովհետեւ մեր երկիրը ժամանակով միայն քար արտածելու ունակ էր, ուրիշ ոչինչ չկար բացի քարէ եւ քիչ մը բամպակէ: Ցմռռնանք որ Արթիկտուֆի մանրուքը տեղն ու տեղը կը գործածուի կրեւ խիճ եւ աւազ: Տուֆի բեթոնը թեթեւ է եւ չատ յարմար: Մեր միւնուճար Արթիկտուֆը ուրիշ մէկ նուէր տուաւ մեր երկրին: Հայ քիմիագէտներ յայտնած են տուֆէ թել, բուրդ, չինել:

Հայաստանի հանքային ջրերու հարուստ ցանցն ալ քարտիղագրուած է ջրի բաղադրութիւններու նշանակումով: Ջերմուկը Արզնիի նման նշանաւոր է:

Հայաստանն հարուստ է ամէն տեսակի նիւթերով, սակայն վառելանիւթեր չկան: Ձկայ քարիւղ, չկայ բնական կազ, ածուխ չկայ, բացի մի երեք տեղ դըտնուած ածխանման ցածրորակ հանածոներու (ջաղուռ): Բարեբախտաբար հարեւան Ադրբէջանէն գազամուղը առատ կազ կը ղրկէ մինչեւ Երեւան, կիրովական արդիւնաբերական կեդրոններուն: Շատ մեծ օդնութիւն է Հայաստանին, որ իրրեւ վառելանիւթ դարերէ ի վեր մեր հայրենի ալթարը (կովի չորացրած պղը) եւ տարեկ (ոչխարի չորացրած պղը) կը գործածէր:

Ատլասի մէջ կան տնտեսական, արդիւնաբերական զանազան ճիւղերու նչումներով քարտէզներ, գունաւոր մետաղագործութեան, քիմիական, մեքենաշինական, շինանիւթերու, թեթեւ արդիւնաբերու – թեան, հիւսուածքներու, սննդամթերքի, հրուշակեղէնի, պահածոներու, անտառամշակման, փայտագործութեան վերաբերեալ լրիւ տեղեկութիւններ, անոնց տեսակարար կշիռներով նչուած թէ ա – զիւսականներով եւ թէ գրաֆիկ գունաւոր պատկերացումներով, որոնց տեսքն իսկ կը շահագրգռէ զննողը:

ԱԼԻ ՖՈՒԱՏ ՓԱՇԱՅԻ ՅՈՒՇԵՐԷՆ

—o—

(Վ. եւ վերջին մաս)

ԵՈՒՍՈՒՖ ՔԵՄԱԼԻ ՀԵՌԱԳԻՐԸ

Եուսուֆ Քեմալ, 18 Յուլիս 1920ին, Տրապիզոնէն Անգարա կը հեռագրէր.

«Վեց օր է Մոսկուայէն վերադարձած եմ: Մեր գնացքով մէկ միլիոն ոսկի ռուբլի, մէկ վագոն ալ մատուցէր հրացանի փամփուշտ ղրկուած է: Բացի այդ, ութ վագոն ռազմամթերքով ալ բեռցուած պատրաստ էր Մոսկուայի կայարանը: Իոս – տովէն ալ երեք հարիւր հազար վամ – փուշտ, վեց հազար անգլիական հրացան, հարիւր գնդացիր եւ ութ անգլիական 7·5նոց թնդանօթ մեզի պիտի ղրկեն նոյն գնացքով: Այս բոլոր առաքումներուն յանձնառու Օսման պէյը ինձի հետ էր մինչեւ Ռոստով: Զորս միլիոն ռուբլի եւս պիտի ղրկուի անմիջապէս, երբ ստացուի առաջին մէկ միլիոնին ստացման լուրը»:

ԹՈՒՐՔԻՈՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Առաջին ընդհանուր պատերազմի վեր – ջաւորութեան, թուրք ազգը, իր գոյութիւնը պահելու համար, պարտաւոր էր երկու հակամարտ, իրենց չահերը հետապնդող ճակատներէն մէկուն յարիլ: Իթթիլաֆականները, Անգլիոյ հովանաւորութեան տակ, Պոլսոյ կառավարութիւնը փրկելու յոյսեր կը տածէին: Այն առենուան քաղաքական ուժը Ամերիկայի Միացեալ Նահանգներու կառավարութիւնն էր, որ կրնար սանձահարել անգլիական աշխարհակալութիւնը: Սակայն ան ալ դիտողի իր հին դերին մէջ էր: Ռուս բոլշեւիկեան պետութիւնը մարդկային իրաւունքներու պաշտպանութեան սկզբունքը հրապարակ նետած էր: Թուրքիա, ստիպուած, իր գարաւոր թշնամիին կողմը յարեցաւ մէկէ աւելի պատճառներով, որոնք սիրով ընդունուեցան:

Այդ օրերուն տեղի ունեցաւ Միլլի չարժումին հակառակորդ՝ Պոլսոյ Տարմատ – Ֆերիտ փաշայի դահլիճին անկումը եւ մեզի համակիր Թեֆիկ փաշայի կառավարութեան կազմութիւնը:

Ռուսերը Արեւմուտքի մէջ մեր ակը – նական յայտութենէն եւ Արեւելքի մեր

Գիւղատնտեսութեան քարտէզներ մշակումներու մանրամասն տեղեկութիւններով, ինչպէս հացահատիկներու, անասուններու կերի, այգեմշակման, բամպակի, վուշի, անասնաբուծական, թռչնաբուծական, մեղուաբուծական տեղեկանք:

Մեր անցեալը չէ մոռցուած: Պատմական քարտէզներով ցոյց կը տրուին Ուրարտուի ժամանակաշրջանէն մինչեւ այժմեան Հայաստանը: Տխրութեամբ կը տեսնէք, որ Տիգրան Մեծի Հայաստանը ամէնէն տարածունն էր, իսկ ներկայ Հայաստանը փոքրիկ մի ածու է, Սթալինի չարութեամբ: Ցուսանք, որ այս արտառոց ու անբնական դրութիւնը կը վերջանայ մօտ ապագային: Կայ նաեւ պատմական եւ նախապատմական յուշարձաններ քարտէզ:

Հայ աղգաբնակութեան տեղաշրջութիւնը տրուած է մանրամասնօրէն: Ապրիլեան կոտորածները յիշուած են բացատրական ներածութեանց մէջ: Տրուած են ներպաղթի եւ արտաղաղթերու տեղեկանքները:

Մշակութային եւ Առողջապահական քարտէզները կուտան կրթ. եւ առողջ. հիմնարկութիւններու խիտ ցանցերը, դպրոցներու աշակերտներու եւ ուսուցիչներու թիւերը: Հիւանդանոցներու, բուժարաններու, բժիշկներու թիւերը եւ այլ տեղեկութիւններ:

Երկաթուղիներու, ճանապարհներու եւ մինչեւ անդամ Սեւանայ լճի «ծովային» երթեւեկութեան գծերը: Նոր երկաթուղիները Սեւան եւ Արթիկ:

Ատլասը լրութեամբ կ'անդրադառնայ աքսոր – ներու եւ գնդակահարութիւններու վրայով, որոնք սոսկալի չափերու հասած էին ժամանակին: Չէ տրուած նաեւ քանակն այն եռանդին, որ կորսնցուցած է, չոյլօրէն վատնած հայ հատաքակա – նութիւնը փոխադարձ մատնութիւններու, ոստիկանական քսութիւններու համարած վախի հետեւանքով:

***

յատաջխաղացումէն կասկածելով, այսինքն՝ մտածելով, որ մենք մտադիր ենք Ատրպէյճանը չէզոքացնել, իրենց կովկասի ուժերը զօրացնելու համար՝ ուղեցին ժամանակ չտալ: Միաժամանակ, եւրոպայի աշխատաւորութիւնը սիրաչահելու համար, Վանի եւ Բաղէշի նահանգներուն կարեւորագոյն մասերը Հայաստանի պիտի չերլու տարց յարուցին: Այս պատճառով՝ գոյացած համաձայնութեան ստորագրութիւնը տեղի չունեցաւ եւ խոստացուած օդնութեան քանակն ալ պակսեցուցին: Օր մըն ալ, յանկարծ, Մոսկուայի Կարս ղրկեցին եւ պաշտօնապէս առաջարկեցին ստորագրել համաձայնութիւնը եւ խոստացուած օդնութեան քանակն ալ աւելցնել:

Ռուսերը, անհրաժեշտ ժամանակը չտեսնելէ ետք, Վրաստանը բոլշեւիկացնելու համար այլեւայլ պատրուակներով կովկաս խուժեցին:

Մոսկուայի բանակցութիւններուն առիթով Ռուսերը նոր բարդութիւն մը ըստեղծեցին, պահանջելով բոլշեւիկ Ատրպէյճանի եւ Հայաստանի ներկայացուցիչներուն մասնակցութիւնը բանակցութեանց: Մինչդեռ այդ մասին նախապէս որոշուած ոչ մէկ որոշում կար: Ռուսերը այդ միջոցին դիմեցին, հետապնդելով երկու նպատակ, նախ՝ Թուրանի իսլամական քաղաքականութեան սահմանափակումը եւ երկրորդ՝ Հայերուն պաշտպան կանգնելու պատրանքին ստեղծումը արեւմտեան երկիրներու աչխատաւորներուն մէջ:

ՄԵՐ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Մեր դիրքը ամրապնդելու համար, ընչեցինք:

Ա.— Միլլի դաշնակ կառավարութեան հետ գծած սահմանները մազաչափ չփոխել:

Բ.— Երկրին մէջ վճռապէս արգելք ըլլալ ռուսական բոլշեւիզմի տարածման:

Գ.— Մեր երկրին համար ապահովել 40–50 միլիոն ոսկի ռուբլիի օդնութիւն:

Դ.— Առնուազն հարիւր հազար զինք, անոր համապատասխան գնդացիր, թնդանօթ եւ անհրաժեշտ չափով վամփուշտ, կազմածքներ մատնել երկիր:

Ե.— Երկու երկիրներուն միջեւ տարակարծութիւնները հարթել:

Զ.— Ռուսերուն կողմէ մահմետական երկիրներու մէջ կատարուած հակակրօն քաղաքականութեան եւ փրոփականդին վերջ տալ եւ անոնց ինքնօրէնութիւնը եւ ապահովութիւնը երաշխաւորել:

×

Մենք կարսի մէջ էինք, երբ հեռագրալուրը հաղորդեց Լոնտոնի խորհրդաժողովի յանձնաժողովին որոշումը այն մասին, թէ Թուրք Միլլի կառավարութեան ներկայացուցիչները եւս պէտք է հրաւիրել նոյն ժողովին: Առաջին անգամ էր, որ Պոլսոյ կառավարութիւնը կ'անտեսուէր եւ բացորոշ կերպով մեր կառավարութիւնը ճանչնալու նշան էր:

Լոնտոնի խորհրդաժողովէն ալ, սակայն, մեծ բաներ ակնկալելը ճիշդ չէր:

ՄՏԻՄԱՆԻ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆԸ

Ռուս կառավարութիւնը, Անգլիան լուսաբանելու համար, մտիւանին կարգադրած էր: Սկիզբէն նչանակուած եւ բոլշեւիկեան առաջնակարգ գործիչ հարուած էլիաւայի Ռուսաստանի մէջ մնալը Թուրքիոյ աւելի նպաստաւոր նկատելով՝ զայն փոխարինած էին Մտիւանիով:

Այն իր առաջին այցելութիւնը տուաւ ճակատի հրամանատար զօրավար Քեազիմ Գարապէքիրին, ապա ինձի եւ ուրիշներու:

Ծօսակցութիւնները տեղի կ'ունենային հետեւեալ հարցերուն չուրջ.

Ա.— Մեր Հայաստան արշաւանքէն ետք, մեր արեւելեան սահմանները անփոփոխ պիտի մնա՞ն:

Բ.— Առարկութիւն չըլլալու պարագային՝ զբաւոր կերպով պիտի հաստատուի՞ն:

Գ.— Մեղի բաւական չափով օդնութիւն պիտի տրուի՞:

Դ.— Արտաքին գործոց կոմիսարութիւնը, անցեալին պէս նոր խնդիրներ չյարուցանելով՝ վերոյիչեալ հարցերու լուծումը առանց ձգձգումի պիտի կատարէ՞ թէ ոչ:

Մտիւանի մեր այս հարցումներուն պա-

առախանեց ։

Ներկայիս քաղաքական կացութիւնը փոխուած է ։ Նոր Թուրքիոյ հետ բարեկամական բանակցութիւններ վարելու պարտակոնութիւնը արտաքին գործոց կոմիսարէն ազգերու կոմիսարին՝ Սթալինի փոխանցուած է, որովհետեւ այժմ Թուրքիոյ ունեցի կարեւորութիւն կը տարուի ։ Բաժնեցաւ պաշտօնական դրութեամբ ալ կը հաստատեմ »։

Մոլեանի խօսքերը մեր վրայ լաւ տպաւորութիւն ձգեցին ։ Մեր խօսակցութիւններուն յաջորդ օրը (14 Յունուար), Մոլեանին ստացայ հետեւեալ նամակը ։

« Վանը եւ Մուշը Հայաստանին դիջելու խնդրին մասին ձեզի եւ բանակցութեան համար Մոսկուա մեկնող ձեր պաշտօնեայ հետ հանդիպած ատեն խօսած ներուն հետ հանդիպած ատեն խօսած ներուն կը հաստատեմ ։ Միաժամանակ, պարտք կը զգամ յայտնելու, թէ ըսած ներս նոյնութեամբ հետագրով տեղեկացուցած եմ վերջերս Մոսկուայէն եկած կովկասի ընդհանուր լիազօր Օրջոնիկիձէի ։ Օրջոնիկիձէ Մոսկուայի մէջ Զիչերինի հետ բոլոր խնդիրներուն մասին խօսակցած է եւ Թուրքիոյ արտաքին գործ ոց նախարարի օգնական Ակմէտ Մուխթար պէյի կողմէ ղրկուած վերջին յուշագրին մէջ չօշափուած ծանօթ հարցե րուն շուրջ իր եւ Զիչերինի միջեւ տեղի ունեցած խօսակցութեանց արդիւնքը ինծի հաղորդած է արդէն ։

« Այդ մասին Զիչերին Օրջոնիկիձէի ըսած է ։ Թուրք պատուիրակութիւնը չուտ թող կայ, բոլոր խնդիրները մէկ անգամէն կը կարգադրուին ։

« Զիչերինի՝ Պէքիր Սամի պէյին հետ անցեալին ունեցած խօսակցութեան առթիւ բուած պահանջները (Վանի եւ Բազէշի նահանգները Հայաստանի վերադարձնելու մասին) անցեալին կը պատկանին եւ պաշտօնական հանդամանք չունին ։ Այդ քայլը միայն Աբեմատեան Եւրոպայի աշխատաւորներուն համակրանքը շահելու միջոց մըն էր ։

« Թրքական յուշագրին մէջ չեշտուած խնդիրները Մոսկուայի եւ Անգարայի բարեկամութեան արդիւնք չեն կրնար ըլլալ ։ Կը յուսանք, թէ Թուրք Ազգ ։ Մեծ Ժողովի կառավարութիւնը այդ մասին վստահ է ։ Օրջոնիկիձէ բսաւ նաեւ, որ իմ ձեզի ըսածներուս Լենինն համամիտ է ։ Բայց այդ, Սթալինն բանակցութիւններու ընթացքին միշտ դիջող ըլլալու տրամադիր է ։

« Իմ կողմէ ալ կը յայտարարեմ, ինչպէս ուելի առաջ Քեազիմ Գարապէքիր վաչայի բսած էի, Թուրքիա պատրաստ ոչ ինծի տրուած հրահանգներուն եւ ոչ ալ Սթալինի հետ իմ ունեցած խօսակցութեանց մէջ ԹՐԻԱԿԱՆ ՀՈՂԵՐԷՆ ՈՐ ԵԻ Է ՄԱՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՅԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԽՕՍՔ ԵՂԱԾ Է ։ Իմ կողմէ պաշտօնապէս կը յայտարարեմ, որ խորհրդային կառավարութեան նպատակն է ձեր ունեցած կասկածները փարատել »։

Թարգմ. ՀԱՄԱԶԱՍՊ ՊՍԱՅԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ ՄԻԼԱՆՕՅԻ ՄԷՋ

Միլանօ, (Յատուկ).— Ազգային Տան վարչութեան հրաւէրով, Յունուար 21ի յետմիջօրէին քարտէսապէտ Պ. Զաքիկ Յանգատեան բանախօսեց, նիւթ ունենալով «Ուղեւորութիւն ի Հայաստան »։ Հայկ ։ Տան վարչական մարմնին կողմէ հիւրը ներկայացուց Բժ. Տիգրան Ալէք սանեան, տալով կեանքին եւ գործին ընդհանուր գծերը։ Բանախօսութիւնը, լուսարձակումներով ճոխացած, տաճելի զուարճախոհութիւններով համեմուած տեւեց ձիշդ երկուքուկէս ժամ եւ արժանացաւ ներկաներուն ջնահատական ծափերուն ։

Խորապէս մասնագիտական բանախօսութեան մը միակատուր պարուսակութիւնը՝ օրաթերթի լրագրական ամփոփոյ թով մը չխաթարելու համար, պիտի պո հանանք անոր հայրենասիրական չեշտը արձանագրելով ։

Բանախօսը՝ իր նիւթին պատմական նկարագրէն օգտուելով, հինգ հազար տարիներու մեծ ոստումով մը նախ մեզ տեղափոխեց դէպի մեր ցեղիս ծագման առաւելապէս վաստացի, մերթ աւանդական եւ մերթ ալ առասպելական աղբիւրները, միաժամանակ լուսարձակելով հնագոյն ժամանակներու բաղմաթիւ «համատարած աշխարհացոյց»ները, որոնց վրայ խանդավարիչ էր կարդալ Արմենիա անունը։ Անուն՝ որ պատմութեան մէջ մէկ առ մէկ միայն անահեսուած է քարտէսներու վրայ, շուրջ հարիւր տարի ներու տեւողութեամբ մը, յաջորդաբար դարձեալ վերադրաւելով սակայն իր տիրը, երբեմն իր հինգ հարիւր հազար քառակուսի քիլոմեթր տարածութենէն յաջողելով պահել ներկայ Հայաստանի երեսուն հազար քառ ։ քիլոմեթր տարածութիւն մը միայն, որովհետեւ քաղաքական եւ անքաղաքակիրթ ազգերուն թալանը, այո, սկիզբ ունեցած է, սակայն ոչ վախճան ։

Մանրանկարի դիպեցկութեամբ քարտէսները կը յաջորդէին իրարու, որոնցմէ մէկը մասնաւորապէս մեր ուշադրութիւնը գրաւեց, միաժամանակ հրահրելով եռեակայութիւնը։ այդ 1915 տարեթիւը կրող քարտէս մըն էր, որուն վրայի խուռնեռամ կարմիր բոլորակները կ'ընդգծէին քաղաքներու եւ ազգորակայքերու անունները։ մեզի համար, այդ կարմիր բոլորակները, որոնք Թուրքիային սկսելով, կը ծաւալէին դէպի Միջին Արեւելք՝ սոսկական տեղանուններ չէին որ կը բնորոշէին, այլ մեր ցեղին վիճակուած աննախընթաց նախիրներին արեան կուտակումներն էին, կակաչներու պէս ծլած ձակատ քաղաքակիրթ ազգերու խղճմտանքին առջեւ ։

Մէջ ընդ մէջ մեզի լսելի ընելէ յետոյ Հոմերոսի, Սարապոնի, Արեւելեան հին ազգերու, Յունաց եւ Հռոմայեցւոց հետաքրքրութեանց եւ կապերուն առնչուԹիւնը մեր ազգային պատմութեան դերուղիներուն հետ՝ բանախօսը հասաւ մեր ներկայ հայրենիքին սահմաններուն առջեւ, անցաւ Արաքսը եւ զնաց կանգ առաւ Երեւանի մեծածաւալ հրապարակին մէջ, դրուատիքը հիւսելով չինարարական եւ վերաշինական աշխատանքներուն, մշակութային եւ արուեստից հաստատութեանց, ծանր ու թեթեւ ճարտարար ութեամբ նուաճումներուն, նորակառոյց գիւղ – գիւղակներուն, չմոռնալով հիացման խօսք արտասանել նաեւ գիտութեան գաղմաղան ճիւղերուն վերելքին սատարող մեր հայրենաբնակ այն ազգակիցներուն հասցէին՝ որոնց անունները ծանօթ են օտար ազգերու դիտակներուն կաճառներուն։ Ամբողջացնելով իր հայաստանեան տպաւորութիւնները ըսաւ թէ գրականութիւն, երաժշտութիւն, նկարչութիւն, թատրոն, պարարուեստ, քանդակագործութիւն, արձանագործութիւն, եւն., ինչպէս այլազան ուղղութեամբ կատարուող հետախուզական աշխատանքներ չարունակական վերելքի մէջ կը գտնուին ։

Բանախօսութեան վերջաւորութեան՝ գոհունակութիւն եւ հպարտութիւն կը կարդացուէր բոլոր ներկաներուն աչքերուն մէջ ։

× Միեւնոյն օրը, իր պատիւ բանախօսը հիւրին եւ իր տիկնոջ՝ հացկերոյթ մը կազմակերպուած էր քաղքիս չքեղ պանդոկներէն «Քաւալիէրիի» մէջ։ Ներկայ էին շուրջ յիսուն հայրենակիցներ։ Սեղանապետ Պ. Մոեփան Սրապեան, ճաշի ամբողջ տեւողութեան խօսք տուաւ բազմաթիւ հայրենակիցներու, որոնք յաւարտ իրենց ճառին՝ բաժակներ պարպեցին օրուան հիւրին եւ իր կնոջ կենաց ։ Ազօսակցութիւնները եւ միջավայրը, հայրենասիրական եւ ազգասիրական ղգացումներով տրոփուն էին։ Ամէնէն վերջ օրուան հիւրին շնորհակալութեան խօսքով վերջ դրաւ երեկոյթը, որուն ընթացքին ամէն ոք պանծացուց արեմնական ոգին, ցեղին յաւիտենականութիւնը եւ հայրենիքի զաւակներին անխախտ լիութիւնը անժամանակ ժամանակին մէջ։

ԱՐԱՄԱՅԻՍ Ս.

ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱՊԱԼԱՏԸ

Պատկան մարմինները վաւերացուցին Հայաստանի գրապալատի նոր շէնքին նախագիծը։ Ուրեմն մեծ երկայնքով քառայարկ այդ շէնքը պիտի հանդիսանայ Երեւանի ճարտարապետական ինքնատիպ կոթողներէն մէկը։ Շէնքին շինութիւնը պիտի աւարտի այս տարի ։

Գրապալատին մէջ պիտի կեդրոնացուին գրքերը ստանալու եւ գրկելու բոլոր աշխատանքները։ Գրապալատը կապ պիտի պահէ աշխարհի բոլոր հրատարակչութիւններուն, գրադարաններուն եւ այսօր մեր Աչիրէթներն ալ ունին ճահ – վար պէկ մը։ Եուսուֆ պէկ մը, Մահ – մուտ աղա մը։ միթ՞ կրնան չարժիլ ա – նոնք, առանց հրամանի եւ կամ թէ ա – ռանց դաղտնի թելադրութեան մը։ Ա. – մենեւին։ Զեմ կրնար հաւատալ թէ այս նահանգիս մէջ ամէնէն ազդեցիկ հայ մեծաւորն ըլլաք դուք ու տեղեկութիւն – ները չունենաք բոլոր դարձուածքներէն ։ կը ծածկէք։ պէյ էֆէնտի, ու անկեղծ– րէ՞ք չէք խօսիր ինծի հետ, որ բարեկա – մարար ոտքս առնիլ սեմերէն ներս գրի, եւ մեր երկու ցեղերու համերաշխութեան համար միջոց մը փնտռելու եկայ։ Գիտցէք որ կրնայի կառավարութեան երթալ ու միջոցներն անկից խնդրել ։ բայց չուզեցի, որովհետեւ կառավարութիւնը դէնք պիտի տայ ինծի ու ուրախութեամբ պի – տի ըսէ ։ «Մի վախնաք, ջարդեցէք, ըս – պաննեցէք ու քանդ, աւեր դարձուցէք, որչափ որ կրնաք, ձենէ ոչ հաշիւ ուղղ կամ, ոչ ալ պատասխանատու պիտի մը – նաք դատաւորին ...»։

Զոլը չուարեցաւ, ի՞նչ պատասխանէր, ի՞նչ կերպով արդարացնէր ինքզինքը։ Շէյխը կը ճնշէր իր հոգեկան երկիւղալի տրամադրութեան վրայ ։ Ինքը կառավարութեան տակ անոր վստահութիւնը չա – հագործող մըն էր։ ի՞նչպէս հակառակ խօսք մը լսելու համարձակէր։ Հետեւաբար, լռեց ու անբացատրելի վախով մը համակուած նայեցաւ Քիւրտ Շէյխին ։ ո–

ՁԱՅՆԵՐ ԳԱԻԱՌԷՆ

Հ ։ Մ ։ Ը ։ Մ ։

ՄԱՐՍԷՅԼ.— Ինչպէս նախորդով ատե – ղեկացուցինք, Հ ։ Մ ։ Ը ։ Մ ։ սկսած է Մարսէյլի մէջ վայելուն գործունէութեան մը ։

Այսպէս, Հ ։ Մ ։ Ը ։ Մ ։ը իր գործի Ա ։ խաղը կատարեց «Ա ։ Ս ։ Էլեքթրիսիթէի » դէմ ։ Այս այն խումբն է, որ առաջին խաղարկութեան ընթացքին՝ օգտուելով մեր մարզիկներուն անփորձութենէն, երեքի դէմ երկու նշանակէտով յաղթած էր ։ Երբ որ սկսաւ խաղարկութիւնը Ֆրանսացիները յանկարծակի յարձակողականով մը չահեցան առաջին նշանակէտը ։ Անթեւակայելի էր Ֆրանսական հանդիսա – կաններուն ուրախութիւնը, գլխարկները, թաշկինակները օդը կը թռչին եւ արդէն խակ Հ ։ Մ ։ Ը ։ Մ ։ի պարտութիւնը կը դուշակէին ։ Մեր մարզիկները եւս քիչ մը ապշած մնացին այս յանկարծակի ար – դիւնքէն, բայց չուտով կազմակերպուե – լով ի դերեւ հանեցին Ֆրանսացիներուն յոյսերը ։ Եւ այսպէս առաջին կիսախաղին չահեցան երկու նշանակէտ, իսկ երկրորդ կիսախաղին մարզաղաչտը դարձած էր կատարեալ հրաբուխ մը ։ Հ ։ Մ ։ Ը ։ Մ ։ի բարեկամները անընդհատ կը խրախուսէին եւ այսպէս մերինները չահեցան երկու նշանակէտ եւս, չարաչար պարտութեան մատնելով հակառակորդ խումբը չորսի դէմ մէկ նշանակէտով ։

× Հ ։ Մ ։ Ը ։ Մ ։ը երկրորդ դարձի մըցումը կատարեց Արծիւ Մարզականին դէմ ։ Մարզաղաչտը լեցուած էր հոծ բազմութեամբ, բոլորը Հայեր ։ Այս տարի Արծիւ մարզականը լաւ դասաւորում չունի, բայց Հ ։ Մ ։ Ը ։ Մ ։ի դիմաց է – րենց եղանակի ամենաբարձր խաղարկութիւնը ունեցաւ ։ Անշուշտ չատ տարբե – րութիւն կար երկու խումբերու խաղարկութեան մէջ եւ պէտք էր յաղթութիւնը Հ ։ Մ ։ Ը ։ Մ ։ի ժպտէր, բայց խաղը ա – ւարտեցաւ հաւասարութեամբ 0ի դէմ 0ով ։

ՎԱՀԱՆ ՇԱՄԼԵԱՆ

պիրքի առեւտրական տուներուն հետ ։ Շէնքին վերի երկու յարկերուն մէջ կա – րելի պիտի ըլլայ տեղաւորել մեծ քանա – կութեամբ գիրքեր, իսկ անոնց դասաւորումը, առաքումի եւ ընդունումի գործ – ողութիւնները պիտի կատարուին մեքե – նաներու միջոցաւ ։

Շէնքին նախագիծը պատրաստողն է Յ ։ Բալըմեան ։

ՀՈՂԱԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏԷՍՆԵՐ

Հողագիտական քարտէսներ պատրաս – տելին Հողագիտութեան եւ գիւղատնտեսութեան գիտահետազօտական հիմ – նարկութեան աշխատակազմութեան բաժ – նին մասնագէտները։ Քարտէսներուն մէջ ցոյց կը տրուին հողերուն որակը, քա – նակը եւ անոնց արգասաւորութեան ա – նհրաժեշտակութիւնները։

ԹԻԱՊԱՐՏԸ

(ՎԷՊ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿԵԱՆՔԷ)

ԳՐԵՑ

ԱՐՄԷՆ ՇԻՏԱՆԵԱՆ

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

— Միայն յուսալով չըլլար ։ Հաւատա – ցէք որ մեր Վերին դիւղերու վիճակը ծանր է ։

Նորանոր դէպքեր կրկնուելով՝ համբերութեան միջոց չէ մնացեր, առարկեց Շէյխը ։

— Նոր դէպքե՞ր կան ։

— Այո ... չէ՞ք իմացեր ։

— Ոչ ։

— Ի՞նչպէս ոչ ... չէ որ կառավարութիւնը վաչա մը զօրք ղրկեց մեր կողմը ։

— Պատճա՞ռը ։

— Պատճառը հայ «քաչախներուն» ա – րարքն է ։ Ամէնքան սարսափ ձգած են մեր ցեղերու մէջ, որ մէկը չի համարձակիր լեռնէ մը անցնիլ ։ Ամէն օր սպանութիւն, ամէն օր ոճիրներ ... ամէն օր արիւն կը թափուին ։ ո՞ւր պիտի հասնիքայս չարա – գոյն գրութիւնը ։ Ինչպէս կ'ըսեն թէ չատ ժամանակ պիտի սպասեն ։

— Ի հարկէ մեր պարտականութիւնն է հսկել որ տեղի չունենան այդ տեսակ ան – հաճոյ դէպքեր, սակայն ինչ ընենք ։ դէշը միշտ դէշ է ։ կարելի է որ երկրի մը մէջ աւազակներ չըլլան ...

— Բայց առանք աւազակներ չեն ։ կա – րելի՞ բան է որ աւազակ մը դէնքեր փո – խադրելու գրաղի ։ Ընդհակառակն, ա – նոնք պատրաստութիւն կը տեսնեն եղեր որ «թաղաւորութիւն» մը ունենաք ։ Այս լուրերէն տեղեկութիւն մը հասած չէ՞ ձեզի ։

— Ոչ ... առանկ լուրերու կարեւորութիւն մը չեմ տար ։

— Ի՞նչպէս ։ եթէ դուք դիտակցութիւն չունենաք ։ եթէ ձեր խորհուրդը չըլլայ, կարող են անոնք քայլ առնելու ։ Տեսէք դուն աչքերէն խորհրդաւոր փայլ մը նըշմարեց ։

— Անծանօթ Շէյխը աննմարելի նայուածքով մը դիտեց Զոլէն հոգեկան բռնվանդակ այլայլութիւնը ։ Ցետոյ ծ ու վստահութիւն ներշնչող ձայնով մը առաջարկեց ։

— Մտիկ ըրէք, պէյ էֆէնտի ։ մինչեւ հիմակ կասկածանքով մը վերաբերուե – ցաք ինծի հետ, որովհետեւ կառավարութեան մարդն էք դուք ու անոր հայը կու – տէք ։ մինչեւ հիմա զգուշաւոր դիրք մը բռնեցիք ինծի դէմ, ինչպէս հարկադըրուած էիք ընել կառավարութեան կողմէն եկած լրտեսի մը նկատմամբ ։ Հոգ չէ ։ ես չեմ ցաւիր այդ մասին ։ Անծանօթ եմ ես, իսկ ժամանակը՝ աղետալի ։

Մարդ մը չի կրնար վստահիլ մինչեւ անգամ իր սրտին մօտիկ եղող մարդիմին ։ Այսու հանդերձ, ներկայ կացութեան մէջ, որ կը սպառնայ մեր երկու ցեղե – րու ողջալի կորուստեանը, հարկ է անձ – նական չահը մէկդի դնել ու պահանջուած ժամանակին զոհողութեան տակ մտնել ։ Աւիկա դուք չընելու ըլլաք, որ մեծա – տորները չընելու ըլլան, ալ ո՞ր օրուան համար կ'ապրիք, ալ ո՞ր օրուան համար մեր գլուխը կը պանուիք ։ Միթէ՞ ժողո – վուրդով մեծաւոր չէ՞ք դուք ... միթէ՞ ձեր խղճին վրայ չի ծանրանար անոր թշուառութիւնը ։

(Շար ։)

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

ԱԼՖՈՐՎԻԼ.— Հ. Ց. Դ. Ս. Մինաս – եան ենթակոմիտէն շնորհակալութեամբ ստացած է Այրի Տիկին Պերճուհի Աւազ Պաղտասարեանէ եւ իր զուստրերէն հա – րիւր Ն. Ֆ.ի գումարը տարաբախտ

ՄԻՇԷԼ ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆԻ

մահուան Բ. տարելիցին առթիւ, (ինկած Ալժերիոյ ճակատը):

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Կրընոպլի Ֆ. Կ. Խաչի մասնաճիւղը շնորհակալութեամբ ստացած է Կրընոպլի Հայ Ազգ. եկեղեց. Միութենէ իր դպ– րոցին համար 70 Ն. Ֆ.: Տէր եւ Տիկին Ս. Ճէլալեան իրենց Անդրանիկ Թոռնիկին տարեդարձի առթիւ նոյն նպատակաւ 20 Ն. Ֆ.:

Իսկ Մանուկներու օրուան առթիւ 14 Յունուար 1962, հանդէսի առթիւ հետե– ւեալներէ .— Տէր եւ Տիկին Սահակեան 40 Ն. Ֆ., Տէր եւ Տիկին Ավաւեան 21, Տէր եւ Տիկին Ս. կարմիրեան քսան, Տէր եւ Տիկին Թիւթիւնճեան քսան, Տէր եւ Տիկին Մ. Անտոնեան 15, Նալպանտեան 15, Պ.Ժ. Միքայէլեան 10·50, Տէր և Տի– կին Կ. Մարանճեան, Տէր եւ Տիկին Վ. Միքայէլեան, Տիկին Սէրէնկիւլեան, Տէր եւ Տիկին Պ. Մանուկեան, Տէր եւ Տիկին Ի. Ժ. Արապեան, Պ. Վ. Խաչա – տուրեան, Տէր եւ Տիկին Ն. Քիւրքճեան, Տէր եւ Տիկին Սիսլեան, Տէր եւ Տիկին Քուտուրճեան, Տէր եւ Տիկին Լիւլէ – ճեան (Տէսին), Մի ոմն, Տէր եւ Տիկին Գ. Ճերմակեան, Տէր եւ Տիկին Սինան – եան, Փոքրիկն Ժօժօ Իւլրիչ տասնական, Տիկին Խոպէնճեան 7, Տէր եւ Տիկին Ա– լանեան հինգ, Տէր եւ Տիկին Պ. Երանոս– եան հինգ, Տիկին Պ. Մուրատեան, Տէր եւ Տիկին Ուղուրլեան, Տէր եւ Տիկին Պ. Մութաֆեան, Տէր եւ Տիկին Ա. Սա – լավանեան, Տէր եւ Տիկին Ս. Սալավան– եան, Տէր եւ Տիկին Մ. Ճէլալեան, Տէր եւ Տիկին Տ. Ալիքեան, Տէր եւ Տիկին Բ. Այվազեան, Տէր եւ Տիկին Հ. Սիմոնեան, Փոքրիկն Քիւրքչուէն, Տէր եւ Տիկին Ս. Ճըրըքեան, Տէր եւ Տիկին Ց. Ճըրըքեան, Տէր եւ Տիկին Ա. Կիւրիւնեան հինգական, Փոքրիկն Պէրնար մէկ:

ՄԱՐՍԷՅԼԻ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

Մայր եկեղեցիի վարչութիւնը կը ծա– նուցանէ թէ՝ տղր. Արամ Հիւսեանի յու – շարկաւորութեան առիթով փոխան ծաղ – կեպսակի շնորհակալութեամբ ստացած է հետեւեալ նուիրատուութիւնները, Ն. Ֆ.ով.— Վասպ.ի Հայր. Միութիւն 20 (60 ալ Փարիզի Մշակոյթի տան), Ա. – ղեքսանդր Պոյաճեան տասը, Յարութիւն Աշճիպաշեան, Մկրտիչեան եղբայրներ, Արշաւիր Հրաչեան տասնական, Մեսրոպ Շահինեան հինգ, (հինգ ալ Մարսէյլի Ֆրանսահայ Մշակ. Միութեան), Պետրոս Նազարեան տասը, Տիգրան Մարզարեան ընտանիք հինգ, Բիւզանդ Շահպազեան քսան: Փարիզի Մշակոյթի Տան՝ Վարդան Պանտիկեան քսան, Ցովհ. Հայցազրծեան քսան: Վասպուրականի Հայր. Մխի – թեան՝ Տիգրան Մարզարեան ընտանիք տասը: Ողբ. Մկրտիչ Ստեփանեանի յու – շարկաւորութեան առիթով՝ Ծատուր Ա. – սատուրեան քսան: Ողբ. Վաղարշակ Թարգմանեանի յուղարկաւորութեան ա – ռիթով՝ Մարսէյլի Աղքատախնամին Տի– կին Թարգմանեան 15, Տիկին Կարապետ– եան հինգ: (Աւանդ գումարները ստանալ եկեղեցիէն):

ԵԹԷ 4000 ՀՈԳԻԷՆ ԱԻԵԼԻ ՎԱՅՐԻ ՄԸ ՄԷՋ: ՊԶՏԻԿ ԴՐԱՄԱԳԼՈՒԽ ՄԸ ՈՒՆԻՔ ԵՒ ԼԱՒ ՏԵՂ ՄԸ՝ ԽԱ– ՆՈՒԹ ՄԸ.

ՏԵՂԱԻՈՐԵՑԷ'Ք

Pressing Automatique

ՄԸ

եւրոպական առաջնակարգ *մաքր – րիչով*: Մեծ եկամուտ: Ոչ մէկ *սթոք*: Հաճելի աշխատանք: Վճա – րում մեծ դիւրութիւններ: Մեր միջոցաւ բացատրութիւններ եւ լու– սաբանութիւններ:

Տեղեկութեանց եւ Տըվիլի համար դրել ·–

Aïvazian

93, Rue Massena
LYON 6e

Կ'ՈՒԶՈՒԻՆ

Recherchons représentants dynamiques pour prospection d'articles d'importation brevetés, en exclusivité.

—— VENTE EN GROS ——

Fixe + Commissions importants — Prime.

Se présenter ou écrire :

COMPTOIR IMPORTEX

36, Rue La Bruyère, PARIS (9e)

ՇՈՒՏՈՎ ԼՈՑՍ ԿԸ ՏԵՍՆԷ

ՀԱՅ · ԲՈՅԺ

ԺՈՂ. ԱՄՍԱԹԵՐԹ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ

Խմբագիր՝ Շ. ՆԱՐԴՈՒՆԻ

—o—

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.— (Թիւ 234 – 236).— Վիքթոր Հիւկօ եւ Բժիշկները (Խմբ.).— Նախաճաշի մասին (Տոքթ. Փօլ Ֆարէզ).— Մազերու թափելուն դէմ (Տոքթ. Գէորգեան).— Ծծկեր երախանե– րու մարսողական խանգարումները (Տոքթ. Բամպուճեան).— Արկածով մեռնողները Ֆրանսայի մէջ (Քաղհան). Ջաման (Յովհ. Պապէեան).— Շա – դանակազեղձը խոչորցած է, չի կրնար մրկել (Տոքթ. Շ. Այվազեան).— Սենե – կայի հիւանդութիւնը, լանջախիթ (Շ. Նարդունի).— Օգտուիր ջրից եւ արեւից (Տոքթ. Փարսադանեան).— Քոլեսթե – րոլը չափացած է (Տոքթ. Ա. Աշճեան).— Ջաւակ բերել առանց ցաւի (Տոքթ. Աս– ֆանազ).— Պայքարը այրերու եւ կիներու մէջեւ (Տոքթ. Արշակ Պօղոսեան).— Շաշտանդամ կինը կամ կնոջ պաղութիւ – նը (Տոքթ. Գալուստեան).— Բերանը կոկորդիլոսի բերան (Տոքթ. Գեղամ Այ – վազեան):

Տարեկան բաժնեգին Ֆրանսա 15 Ն. Ֆ., արտասահման՝ 20 Ն. Ֆ.:

Հասցէն դրել ճիշդ այսպէս.— Շ. Նար– դունի, խմբագրատուն Յառաջի,

Ch. Aïvazian
Au journal HARATCH
32, Rue de Trévise, Paris (9e)

ԾՆՈՒՆԴԻ ԵՒ ՆՈՐ ՏԱՐԻՈՑ

ՈՒՐԱԽ ՕՐԵՐՈՒՆ ԵՒ ԱՄԲՈՂՋ ՏԱՐԻՆ

Եւրոպայի Մեծագոյն
Արեւելեան Վաճառատունը

ՊԱՀԱՍՈՒՐԵԱՆ խանութ մը հայ – ցկլողին սեղանին վրայ ամէնէն հա– մով պատառը կը պակսի՝ մեծին ու պղտիկին համար: ՊԱՀԱՍՈՒՐԵԱՆ վաճառատան մէջ պիտի գտնէք ա – ւանդական ընդեղէններու եւ անու – շեղէններու ամէն տեսակը, անմրցա– լի գիներով:

Ապսպրանքի վրայ, ծրարի առա – քում Ֆրանսայի ամէն կողմ եւ դէ– պի արտասահման՝ Պելժիա, Զուի– ցերիա, Անգլիա:

ՊԱՀԱՍՈՒՐԵԱՆ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ
LYON

246, Rue Vendôme - Tél. MO 11-84
20, Rue Villeroy MO 32-10
65, Rue Robert LA 07-72

ԵՒ ԻՆՁԳԼՍ ՄԻՇՏ

Արմաւ, «պամիա», «եալանճի տոլ– մա», յունական «թուրչի», «պի – պէռ», տերեւ, թահին հելվա, «վա– նիլլ», չոքոլա, «նուաղէթ», «լո – ղում», «սապըղ», պիստակ, Շիրակ օղի (41 – 45o), Իզմիրի չամիչ, «սուճուք», կեսարական «պաստըր – մա»: առաջնակարգ սուրճ, (Բարա– վան եւ մոգա), համեմներ «մահ – լէպ», «սալէպ», ձիթապտուղ, ձէթ, «քաչքավալ» պուլկարական, ճեր– մակ պանիր ոչխարի կաթով: Ամէն կարգի պահածոներ, «քուսքուս», հարիսա, սումագ, թարամա, լա – հէրտա, բաֆլաւա, Ֆատայիֆ, տե– րեւ եւայլն:

ՊԱՀԱՍՈՒՐԵԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆԸ

Ունի նաեւ մսավաճառատուն մը, որուն առաջնակարգ միսերը գոհա – ցում կուտան ամէնէն նրբաճաշակ – ներուն: Ոչխարի, հորթի եւ եղան միս (քաշուած միս, եւայլն):

Imprimerie Spéciale du journal « Haratch »
32, Rue de Trévise, PARIS (9e)

ԶՈՒԻՑԵՐԻԱ

Լէման լճի գեղածիծաղ ափին՝
մեծ բադաէի մը մէջ,
ՔԱՐՏՈՒՂԱՐԻՒՀԻ

մը կ'ուղուի Փաստաբանի մը համար: Լաւ ամսաթոշակ, բնակութիւն, զանա– զան ապահովագրութիւններ:

Նախապատուութիւն պիտի տրուի հա – յերէն խօսիլ եւ գրել գիտցող թեկնածու– ին, որ պէտք է եւ շատ լաւ ֆրանսերէն պիտնայ եւ վարժ ըլլայ ֆրանսերէն պա– րութեան եւ մեքենագրութեան (սթենօ– տաֆթիլօ):

Դիմել «Յառաջ»:

ՇԱՒԻԼԻ ԵԿԵՂԵՑԻ

Շաւիլի եկեղեցին յառաջիկայ պատա– րագը այս կիրակի:

ՀԱՅ ԹԱՏԵՐ· ԵՒ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ
ԲԱՑԱՌԻԿ ԵՐԵԿՈՅԹ
ՆԻՍԻ ՄԷՋ

կիրակի, 4 Փետրուար, կէսօրէ ետք, ժամը 3ին, Սալ Արթիսթիֆ, 27 Պուլվ· Տիւպուշաժ, Նիս:

ԳՐԻԳՈՐ – ՎԱՀԱՆ

կը ներկայացնէ իր հեղինակութիւնները, մասնակցութեամբ հայ բեմերու վաղեմի եւ տաղանդաւոր դերասան Յակոբ Լա– թիֆեանի եւ Նիսի արուեստասէրներու կազմի մը:

կը ներկայացուին՝

ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ԿԱՆԹԵՂԸ

Գեղարուեստական բաժնին մէջ՝ ժողո– վրդական հարնածանօթ երգիչ

ՄԻՇԱ ԱԶՆԱՒՈՒՐ

Երգիծական բաժին՝ հայ ազգային բա– րերարութիւններ, Սաթիրական զաւեշտ երկու դանդան արարներով:

Մուտք երեք Ն. Ֆ. եւ վերապահուած պատուոյ բազկաթոռներ:

Տոմսերը հայթայթել՝ Պար տիւ Մոն– թել, 113 Ավընիւ Քալիֆորնիա, եւ նոյն օ– րը թատրոնի մուտքը:

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

ՍԱՄՈՒԷԼ ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Աշակերտներու պատրաստած թա – տերական ներկայացումը՝

ԿԻՐԱԿԻ՝ ՄԱՐՏ 25

ՅՈՒՇԱՏԵՏՐ

Ֆ. Կ. Խաչի միջմասնաճիւղային ժո – ղովը այս երկուշաբթի, կէսօրէ վերջ ժա– մը ճիշդ 3ին, Մշակոյթի Տան մէջ:

Կարեւոր օրակարգ: Պարտաւորիչ ներ– կայութիւն: Կը խնդրուի ճշդապահ ըլ– լալ:

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Հ. Ց. Դ. Նոր Սերունդին պարահան– դէսը՝
ՄԱՐՏ 3ԻՆ
ԱԼՖՈՐՎԻԼԻ ՄԷՋ

×

ԿԱՊՈՑՏ ԽԱՉԻ ՕՐԸ

Ֆ. Կ. Խաչի օրը կը տօնուի Ապրիլ 1ին, կիրակի, կէսօրէ վերջ, Շիմիի սրահը:

×

ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԸ Կ'ԵՐԳԵՆ
ՄԱՐՏ 18ԻՆ

FOURRURES

Roger YOPIAN

PRIX INTERESSANTS
NEUF et REPARATION

84, Boulevard de Stalingrad, 84
— CHOISY-LE-ROI (Seine) —

Autobus : de la Porte de Choisy, descendre 3 Communes ou Rue du Docteur-Roux.

ՀՐԱՆՏ ԱԱՄՈՒԷԼԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

51, Rue Monsieur-le-Prince, PARIS - 6e — Chèque Postal : 1278-35

PEINTRES et SCULPTEURS ARMENIENS, par *Onnig Avédissian,* Le Caire	100 NF.
MINIATURES ARMENIENNES, par *Lydia Dournova,* Paris.	120 NF.
NAREK, le Livre de Prières, trad. par *Isaac Kéchichian,* Paris, 1961.	25,20 NF.
LE CHANT DU PAIN, *Daniel Varoujan,* Paris.	6,30 NF.
HISTOIRE DE L'ARMENIE, par *H. Thorossian,* Paris.	10 NF.
ԲԱՌԱՐԱՆ ՖՐԱՆՍԵՐԷՆԷ ՀԱՅԵՐԷՆ, Հ. Ե·Տէր Ղազարեան, Պէյրութ	20Ն·Ֆ·
ԲԱՌԱՐԱՆ ՖՐԱՆՍԵՐԷՆ ՀԱՅԵՐԷՆ, Մեսրոպ Նուպարեան, Պէյրութ	40 Ն·Ֆ·
ԲԱՌԱՐԱՆ ՀԱՅԵՐԷՆԷ ԳԱՂՂԻԵՐԷՆ, Հ. Գ. Պայեան, Վէնետիկ,	40 Ն·Ֆ·
ԱՌՁԵՒՆ ԲԱՌԱՐԱՆ ՀԱՅ· ԳԱՂՂ· Հ. Դ. Սահփանեան, Վէնետիկ	9 Ն·Ֆ·
ԲԱՌԱՐԱՆ ՀԱՅԵՐԷՆ ԼԷԶՈՒԻ, Մ. Գարամանճեան, Պէյրութ,	40 Ն·Ֆ·
ԱՆԳԼԵՐԷՆԷ ՀԱՅԵՐԷՆ ԲԱՌԱՐԱՆ, Յ·Յ· Զապմագճեան, Պէյրութ	40 Ն·Ֆ·
ՅՈՒՇԱՄԱՏԵԱՆ Հ. Մ. Ը. Մ.Ի, 1918–1958, Պէյրութ	22 Ն·Ֆ·
ԿԵԱՆՔԻ ՈՒՂԻՆԵՐՈՎ, Բ. Հատոր, Մ. ՎՐԱՅԵԱՆ, Պէյրութ	12 Ն·Ֆ·
ԶՐՈՑՑ, Կ. ՓՕԼԱՏԵԱՆ, Ա. Հատոր	3·50 Ն·Ֆ· Բ. Հատոր 5 Ն·Ֆ·
ԱՆԴՐԵՒԻՄԵԱՆ ԶԱՑՆԵՐ, Պ. Մնացական, Պէյրութ	4 Ն·Ֆ·

Առաքման ծախքը գնողին վրայ

ՃՈԽ ՄԹԵՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ԵՒ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆՑ

ԷՒՐՈՊԱՅԻ

ՄԵԾԱԳՈՅՆ ԱՒՏԱԴՐՈՒՅՔԸ

ՀԷԼՎԱ ԼՈԳՈՒՄ Սուսամ – ՀԷԼՎԱ

ԹԱՀԻՆ ՇԱՐՈՑ (ՌՈՃԻԿ) ՎԱՐԴԷ-ԱՆՈՑՇ

ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ...

CHOC-ALVA • CHOCO-LOC

Sté le BOSPHORE
SIÈGE SOCIAL
2, Rue Louis Astouin / Marseille (2ème)

ՀԱՐԱՁԱԳ

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

Le PREMIER QUOTIDIEN ARMENIEN en EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction et Administration : 32, Rue de Trévise - PARIS-9e

Fondé en 1925
R. C. Seine 57 A 2731

Téléph. : PRO. 86 - 60
C. C. P. Paris 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա՝ Տար· 50 Ն· Ֆ· Վեցամսեայ՝ 27 Ն· Ֆ·
Արտասահման՝ Տար· 60 Ն· Ֆ· Հատը՝ 0·25 Ն· Ֆ·

ՋՈՐԵՔՇԱԲԹԻ
31
ՅՈՒՆՈՒԱՐ
MERCREDI
31 JANVIER
1962

38ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 9318 38e ANNÉE Fondateur : SCHAVARCH MISSAKIAN ՆՈՐ ՇՐՋԱՆ, 18ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 5119

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

ԻՍՐԱՅԷԼ ՕՐԻՆ ԵՐԷԿ ԵՒ ԱՅՍՕՐ

—o—

Հայաստանի գրողներն ու պատմագէտները սկսած են մասնաւոր հետաքրքրու – թիւն ցոյց տալ հայ ազգի ազատագրա – կան չարժումներուն մասին :

Վերջին տարիներուն մէկէ աւելի գրքեր լոյս տեսան այս նիւթին չուրջ :

Հեղինակները՝ հետեւելով համայնա – վարական դաղափարականին՝ յաճախ կը խեղաթիւրեն պատմական դէպքերը, զա – նոնք յարմարցնելով Մարքսի «մա – տերիալիստական դիալեկտիկա»յին :

Մասնաւոր ուշադրութեան առարկայ դարձած է Իսրայէլ Օրին, որուն մասին երէկ բոլորովին տարբեր կարծիք ունէինք : Այսօր կը պաշտեն ինչ որ կ'այրէին երէկ :

Մանրադիւտ Լէօն (1860 – 1932) ան – դամ մէկ օրէն միւսը փոխեց իր տեսա – կէտը այս պատմական դէմքին մասին, որ չատ խօսեցնել տուած է իր վրայ :

Խոջայական կապիտալ անունը կրող իր գրքին մէջ Լէօ Իսրայէլ Օրին կը ներ – կայացնէր իբրեւ պարզ արկածախնդիր մը, խարեբայ մը, որ անձնական չահեր միայն կը հետապնդէր :

Ցետ մահու, 1946ին հրատարակուած Հայոց Պատմութեան Գ. հատորին մէջ Լէօ նոյն անձը կը ներկայացնէ իբրեւ հայրենասէր եւ անձնուէր հանրային գործիչ մը, որուն մտասեւեռումն էր ե – զած Հայաստանի ազատագրութիւնը Պարսից լուծէն :

Շատ ուշադրաւ է այս հիմնական փո – փոխութիւնը Ծերունի պատմագէտին մօտ :

Իր Պատմութեան «խմբագիրները»ը՝ Մ. Ներսիսեան եւ Բ. Ցարուխիւնեան իրենց «Առաջարան»ին մէջ այս յեղաշրջումը կը բացատրեն հետեւեալ կերպով .

« Իր կեանքի վերջին տասնամեակում , ապրելով նոր՝ սովետական իրականու – թեան մէջ, Լէօն փորձեց մօտենալ պատ – մութեան մատերիալիստական ըմբռնմանը եւ վերանայել իր խէալիստական տե – սակէտները : Սակայն... ինկաւ Մ. Ն. Պոկրովսկու վուլգար – մատերիալիստա – կան, տակտիստական դպրոցի ազդեցու – թեան տակ » :

Այդ չրջանին է որ գրած է Խոջայական Կապիտալը , «խիստ բացասական , ժխտո – ղական վերաբերմունք» ցուցաբերելով դէպի պատմական անցեալը , «մասնաւո – րապէս անցեալի կուլտուրական արժէք – ները, հայ ազատագրական չարժումները եւ նրանց ականաւոր գործիչները» :

Ցետագային Լէօ — կամ իր Պատմութ – եան Գ. հատորի «խմբագիրները» — սըկ – սած են իր տեսակէտը ի մէջ այլոց Օրիի մասին, հետեւելով վերջին տրուած կարգախօսին, որուն համաձայն «Ռուսաց մեծ ազգը» եղած է հայ ժողովուրդի մե – ծագոյն բարեկամը, դարերու ընթացքին :

Իսկ Իսրայէլ Օրի կը նկատուի նախա – կարապետը «ռուսական օրիենտացիա» – յին, լուծելու համար հայկական դատը :

Յորդր· Միութեան բոլոր երկիրնե – րուն մէջ Ռուսերու հանդէպ սէրը հասած է պաշտամունքի աստիճանին, մասնաւո – րապէս «հայրենական պատերազմ»էն ի վեր : «Ռուսացման» քաղաքականութեան նախաբանն է այս :

Հայաստանի գրողներն ու պատմաբան – ները ծայրայեղութեան կը տանին «ռու – սական օրիենտացիա»յին բերած բարիք – ները հայ ժողովուրդին :

Պատմութիւնը ճիշդ հակառակը կը փաստէ :

Իսրայէլ Օրիի պատմութիւնը ծանօթ է բոլոր անոնց, որոնք կը հետաքրքրուին Հայկ· Դատով :

Արիթ կ'ունենանք դեռ խօսելու իր մա – սին : Օրի մեռաւ 1711ին Ատրախանի մէջ :

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՖՐԱՆՍԱ

ՖՐԱՆՔԵՒԱԼԾԵՐԱԿԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

—o—

Հաւանական չէ թուիը որ Հանրապե – տութեան նախագահը կարենայ յառաջի – կայ երկուշաբթի, յայտարարել թէ տա – մաձայնութիւն գոյացած է Ալժ· Ազատ· Ճակատի եւ Ֆրանսայի մէջեւ :

Ներկայիս տիրող կարծիքն այն է թէ կան տակաւին քանի մը հարցեր որոնք խնդրոյ առարկայ կը մնան : Նախ պէտք է ճշդել զօրքին ալժերական հողամասին վրայ մնալու թուականը, աւելի ճիշդ ժամանակացոյցը : Պէտք է նաեւ սահմա – նադրական երաչխաւորութիւններ ապա – հովել Ալժերիոյ Եւրոպացիներուն եւ վերջապէս պէտք է բաժնել իշխանութիւ – նը Ֆրանսացիներուն եւ Ալժերացիներուն միջեւ փոխանցման այն չրջանին ընթաց – քին որ կը կանխէ ինքնորոշումը : Կարելի չէ որ այս հարցերը լուծուին 8 – 10 օր – ուան ընթացքին : Պարզ է նաեւ թէ այս հարցերը չեն կրնար յաւիտենապէս չլուծուիլ եւ հաւանաբար օր մը տը Կոլ ւեղը դնէ Ալժ· Ազատ· Ճակատը :

Մինչ այդ «Ա.Հ.Ա.Կ»ի «Նախապարը» եա – զիտ յայտարարութիւններ ըրաւ «ազատ եւ պայքարող Ալժերիոյ ձայնասփիւռէն» : Շեչտեց թէ «Ա.Հ.Ա.Կ»ը պատրաստ է Ֆը – րանսայի հետ բանակցութեան մտնելու , բանակցութիւն մը որ կրնայ յանդիլ երբ նկատի կ'առնուին ալժերացի ժողովուր – դին իրաւունքները անկախութեան եւ ինքնորոշման : Եաղիտ կ'աւելցնէ թէ մէկ հարց կը մնայ այդ պարագային՝ երաչ – խիքներ Ալժերիոյ Եւրոպացիներուն ար – դար չահերուն համար, մէկ կողմէ եւ Ֆրանսայի միւս կողմէ , եւ այն անհրա – ժեշտ երաչխաւորութիւնները զորս ալ – ժերացի ժողովուրդը եւ իր ներկայացու – ցիչները պէտք է ունենան որպէսզի ինք – նորոշումը գործադրուի անկեղծօրէն եւ պարկեշտօրէն :

Երբ Եաղիտ կը խօսի ոչ միայն Ալժե – րիոյ Եւրոպացիներու այլեւ Ֆրանսայի չահերուն վրայ, անշուշտ կ'ակնարկէ պինուորական կայաններու : Կ'ըսուի ար – դէն թէ Մերս Էլ Քըպիրը երեսուն տար – ուան համար վարձու պիտի տրուի Ֆը – րանսայի, թէեւ Մեսմէռ յայտարարած էր Ծերակոյտին առջեւ թէ ալժերական նաւահանգիստը վերջնականապէս ֆրան – սական պիտի մնայ :

Ինչ կը վերաբերի ալժերական չահե – րուն, տարակոյս չկայ թէ Եաղիտ ու – զած երաչխիքներու մէջ է մանաւանդ ալ – ժերական հողամասի ամբողջականութիւ – նը, այլ խօսքով՝ Սահարան ալ :

Նոյն ատեն, Փարիզի մէջ Մառեչալ Ժուէն յօդուած մը կը գրէ Օռռոի մէջ, ուր կ'ըսէ «Երկիրս զիս Ֆրանսայի մառե – չալ ըրաւ, բայց չեմ կրնար մոռնալ որ երկիրս նաեւ Ալժերիան է , ուր ծնած եմ եւ ուր են, սերունդներէ ի վեր իմիններ – րուս գերեզմանները : Այդ պատճառաւ այսօր խորապէս կը տառապիմ տեսնելով Ազգին բաժանումը Ալժերիոյ առընչու – թեամբ : Զինուո՛ր, չեմ կրնար ընդունիլ դաղափարը բանակի մը որ ոչ միացած, ոչ եղբայրական ըլլայ եւ ոչ ալ վստա – հութիւն ունենայ» : Մառեչալը չեշտելէ եաք թէ բոլոր ահաբեկումները կամ բա – նութիւնները պէտք է դադրին կ'եղրակա – ցընէ թէ Ֆրանսա – Ալժերիա ընկերու – թիւնը անքակտելի պէտք է ըլլայ :

Ալժերիոյ մէջ սակայն, գործադուլները կը չարունակուին ինչպէս նաեւ ահաբե – կումները մէկուն կամ միւսին կողմէ :

Օռանի մէջ, երկուշաբթի օր 22 ահա – բեկումներ եղան, էլ Պիարի մէջ վիլլա մը ամբողջովին փճացաւ պայթումէ մը : Կ'ըսուի թէ Գաղտնի Բանակի դէմ գոր – ծող դունդ մը հոն կը մնար :

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՖԻՏԻԼ ՔԱՍԹՐՕ յայտարարած է « Փրատա»յի որ ամէն պարագայի մէջ պէտք է խուսափիլ հիւլէական պատե – րազմէ մը : «Փիտենք թէ առանց Խորհ· Միութեան եւ ընկերվարական պլոքին, առանց անոնց օժանդակութեան մեր երկ – րին պէս փոքր երկրի մը մէջ յեղափո – խութիւնը անկարելի կ'ըլլար , նկատի առնելով մանաւանդ աչխարհակալներու յարձակումը» չեչտած է Քուպայի մէ – նատէրը :

ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ՔԱԹԱՆԿԱՑի բոլոր կէ – րօնաւորները հեռացան եւ ողջ – առողջ են յայտարարեց Մակի Լէոփոլվիլի կեդրոնը :

ՎԻԼՆՅԱՑի մէջ, խորհրդային զօրա – վար՝ Տրակունօքի յայտարարեց թէ Բե – րիայի մահէն ի վեր հրէական հարց չկայ Խորհ· Միութեան մէջ : Իսրայէլ պաղ – թելու հարցը Հրեաներուն յատուկ չէ , չեչտած է զօրավարը որ ինք ալ ծագու – մով հրեայ է, Խորհ· Միութենէն պաղ – թելը ինքնին դժուար հարց մըն է ներ – կայիս : Արդէն, աւելցուցած է Տրակունօ – քի Հրեաները ձուլուած են : Ծանօթ է որ Լենինկրատի մէջ կատարուած վերջին ձերբակալութիւնները եւ կարգ մը սին – կոկներու փակումը բաւական մտահոգած էին Հրեաները :

ՆԻՒ ԵՈՐՔԻ ոստիկանութիւնը յայտա – րարեց թէ 1961ին ոճիրներու մրցանիչը կոտրուած է : 483 սպանութիւններ կա – տարուած են, ինչ որ չէր պատահած 1931 էն ի վեր :

ԺԸՆեՒԻ հիւլէական ժողովը , անդամ մըն ալ յետաձգուեցաւ ցնոր տնօրինու – թիւն :

ՓԱՐԻԶի մէջ Սպիտակ Տան բանբերը՝ Սալինկըը եւ Խորհ· Միութեան Արտաքին նախարարութեան մամուլի սպասարկու – թեան պետը՝ Խարլամով փորձեցին բա – րելաւել Խորհ· Միութեան եւ Ամերիկայի մշակութային կապերը : Սալինկըը Ուա – չինկթըն վերադարձաւ յայտարարելով թէ Փարիզ կատարած իր ճամբորդութիւնը ղուգադիպած է խորհրդային իր պաչ – տօնակցին ճամբորդութեան , այդ պատ – ճառաւ ալ մտքերու փոխանակութիւն ու – նեցած են :

ԴԱՄԱՍԿՈՍԷՆ կը հաղորդեն թէ ըստ Սուրիոյ վարչապետին յայտարարու – թեան, իրաք համամիտ է զինուորական գործադուլութեան մը ձչեռնարկելու Քու – վէյթի հարցը լուծելու համար : Դամաս – կոսի մէջ կը փորձեն նպաստաւոր միջա – վայր մը ստեղծել այս հարցին կարգա – դրութեան համար «արաբ եղբայրական ծրագրի մը հիման վրայ » :

ԳԱՀԻՐէի գատական Ատեանին առջեւ Ֆրանսացի դիւանագէտներէն մէկը՝ Պե – լիվիէ ըսաւ թէ իրականութիւնը երբեք չէ հետաքրքրած զինքը չարչարողները : Լատիներէնի վէճ մըն ալ եղած է որ բա – ւական խնդուք յառաջ բերած է սրահին մէջ : Ֆրանսացի դիւանագէտները տեղե – կագիր մը ղրկած է Փարիզ, որուն մէջ կ'ըսէ .— « Մութաթիս Մութաւնտիս , կրնանք յառաջիկայ ամիսներուն ներկայ ըլլալ ազատ սպաններու գաղտնի խմբակի մը կազմութեան, նման այն խմբակին զոր Նասր ստեղծեց Գաղեստինի պատե – րազմէն եաք » : Տեղեկագիրը զրուած է Սուրիոյ պետական հարուածին վաղոր – դայնին եւ անունն է «առաջամեայ հաչուե – կչիռ Սուրիոյ պետական հարուածէն եաք» : Նախագահը իր տուած թարգմա – նութեան մէջ լատիներէն պարբերութիւ – նը թարգմանած էր .— «Ինչ որ պէտք է փոխուի պէտք է փոխուի», մինչ փոքր նրբութիւն մը կայ զոր ամբաստանեալն ալ չէ ուզած թարգմանել, չեչտելով թէ իր պարտականութիւնը չէ : (Լատիներէն ասածուացքը կը նչանակէ «փոխելով ինչ որ պէտք է փոխուի » :

ՄՈՍԿՈՒԱՑի «Պատմութեան Հարցեր » պարբերականը կը չեշտէ թէ Թրոցքիզմը համաչխարհայնացած կուսակցութեան քչնամի չարժում մըն է եւ որեւէ ձեւով կարելի չէ «դաղափարական ներում» մը նախա – տեսել անոր համար :

ՍՈՒԱՄՆՕ յայտարարեց թէ Նոր Կի – նէայի յարձակումը ինքնապաչտպանու – թեան արարք մըն է :

ԹՐՔԱՊԱՏՈՒՄ

—o—

«ԹՈՒՐՔԵՐ, ՈՐ ՔՍԱՅՑՆԵՐՈՒ ՄԷՋ ԿԱՊՐԻՆ »

Անգարայէն կը հաղորդեն թէ փրոֆ· Սաուն Արեն Քաղաքական Գիտութեանց Ֆաքիւլթէին մէջ խօսելով ըսաւ .

— Եթէ չգտնենք ազգային եկամուտի բաչխումի չատ արդար եղանակ մը, ժո – ղովուրդը կ'ապստամբի :

Արեն աւելցուց թէ ընկերային արդա – րութեան ըմբռնումին մէջ կարելի չէ վե – րականգնումը անհատական ձեռնարկին – րու ճամբով, այլ պետականացումի դը – րութեամբ պէտք է տուրքերը աւելցուին եկամուտի արդար բաչխումի ըմբռնումին համաձայն :

Խօսք առաւ նաեւ Ս· Էօզմէն, որ չեչ – տեց թէ Թուրքիոյ մէջ գոյութիւն ունին մարդիկ որոնք ճարպրներու մէջ կ'ապ – րին, եւ ըսաւ .

— Մարդիկ հողերուն հետ միասին կը վաճառուին :

ԹՈՒՐՔԻՈՑ ՄՂՁԱՒԱՆՋԻՆ ԱՌԹԻՒ

Պոլսոյ գրքական թերթերուն մէջ կը կարդանք .—

ՆԱԹՕի Մէջերկրականի դաչնակից ու – ժերու վերին հրամանատարը Ծով· Սըր Տերիք Հոլենտ Մարթին յայտնեց թէ «ՆԱԹՕի ուղղուած առաջին հարուածը պիտի ստանայ Թուրքիա» :

Ծովակալը ասոր իբր պատճառ ցոյց տուաւ Թուրքիոյ ռազմավարական դիրքը եւ ըսաւ .

— Սակայն կ'ուզեմ անմիջապէս աւել – ցնել թէ այն պահուն իսկ՝ երբ ահազան – գի նչանը ստանանք, մեր բոլոր միջոց – ներով եւ արագ կերպով օգնութեան պի – տի փութանք մեր բարեկամ եւ դաչնակից Թուրքիոյ : Մեր փոխադարձութիւնը պի – տի ըլլայ հիւլէական հարուածներ իջե – ցնել թչնամիին եւ ռուսական ծովուժը բանտարկել Սեւ Ծովի մէջ ու հալեցնել զայն : Ծրագիրներ պատրաստած ենք պա – տերազմի մը պարագային արդելք ըլլա – լու համար որ խորհրդային նաւատորմը Սեւ Ծովէն Միջերկրական իջնէ , եւ ան – դործածելի դարձնելու համար Սեւ Ծով Խորհրդ· խարխխները :

Ծով· Մարթին, որ մամլոյ ասուլիս մը ըրաւ Բրիտանական հիւպատոսարանին մէջ, ըսաւ թէ չատ դոհ է Թուրքիա այ – ցելելէն եւ Թուրք անձնաւորութիւններու հետ կատարած տեսակցութենէն : Աւել – ցուց թէ Ինէօնիւի տուած այցելութեան ընթացքին չէին խօսած Իրանի դէպքե – րուն մասին, առաւելապէս աչխարհի եւ ՆԱԹՕի խնդիրներուն չուրջ միայն խոր – հրդակցած էին :

ՄԻԿՈՅԵԱՆ

ԱՓՐԻԿԷԻ ՄԷՋ

—o—

Արեւելք եւ Արեւմուտք կը մրցին, նոքակաղմ թերաճ երկիրները սիրաշահելու համար եւ կը մրցին տոլարով եւ առուբլիով, կը մրցին յանուն ազատութեան եւ ընկերվարութեան։ Սոքար-նիօ, Բնառնեղրոյ նախագահը, կը սպառնայ Նայ Հոլանտական կալուածքին, ռազմական թիթեղ ստանալով Սոպուայէն։ Եգիպտոս ռազմանաւեր կը ստանայ Խորհ. Միութենէն եւ օժանդակութիւն կը գտնէ Ս. Նահանգներէն։ Անգլիական ռազմանաւեր կը շարժին Հնդկաց Ովկիանոսի մէջ, Թուէյէյին ու Աէնը պաշտպանելու համար, որովհետեւ անգլիական կալուածները սպառնալիքի տակ են։

Մոսկուայի բարեկամ Սեքու Թուրէի երկիրը հատկապէս դաւադրութեան մը կեդրոնն եղաւ Վերջերս։ Մայրաքաղաք Խոնաքրի արեւմտեան Աֆրիկէի համայնավար կազմակերպութեանց կեդրոնն էր, Սեքու համակիր էր Մաօ Ցէ Թունկի։ Համայնավարները փորձեցին ձերբազատուիլ իշխանապետէն եւ Մոսկուայի ջրջանակին մէջ բերել երկիրը։ Փեքին եւ Մոսկուա մրցակից են Ալպանիոյ մէջ, Խոնաքրիի մէջ, Աէնի մէջ եւ Ճավայի մէջ։

Դաւադրութիւնը կազմակերպուած էր « ընկերվարական երկիրներ »ու դեսպանութիւններու գործակցութեամբ, մասնաւորաբար Մոսկուայի դեսպան Տմիթ Սոլոտի։ Սեքու ամբաստանեց դեսպանները, որոնք մեղսակից էին իր անձին եւ ոչ-ժամին դէմ լարուած դաւադրութեան։ Մոսկուա անմիջապէս ետ կանչեց Սոլոտը, Արտաքին նախարարութեան մէջ պաշտօն մը տուաւ եւ Միկոյեանը փութացուց Սեքուի մօտ, բարեկամութիւնը վերահաստատելու համար։

Խորհրդային գործակալութիւնը կը հաղորդէր։ « Փոխ – վարչապետ Միկոյեան Խոնաքրի մեկնեցաւ Կինէի նախագահ Սեքու Թուրէի բարեկամական հրաւէրով»։ Փոխ վարչապետը կը մեկնէր ափրիկեան կեդրոնը, խորհրդային ժողովուրդին եղբայրական ողջոյնը տանելու Կինէի քաջ ժողովուրդին։

Վերջացող տարւոյն վերջերը ուսուցչական միութիւնը կը քննադատէր Սեքու Թուրէի ռամկավար կուսակցութեան քաղաքականութիւնը։ Աշխատաւորական Ազգային Խորհուրդն ալ կ'ամբաստանէր ուսուցիչները որպէս հակա – յեղափոխական, օտարի գործակալներ։

Սեքու Թուրէի դատաւորները դատապարտեցին ուսուցիչները ծանր պատիժներու։ Երկրորդական վարժարանի ուսանողներ հրապարակ իջան, բողոքելին դատապարտութեան դէմ, կուսակցութեան եւ ոստիկանութեան դէմ։ Թուրուցիկներ ցրուեցին եւ փորձեցին մերձենալ իշխանապետին բնակավայրին։ Ոստիկանութիւնը հանդարտեցուց երիտասարդ – ները ձերբակալութիւններով, բայց ուրիշ տեղեր ցոյցեր կատարուեցան, զոհեր տալով ռեժիմին եւ իշխանապետին։

Սեքու Թուրէ քննութիւն բացաւ ուսուցչական միութեան գործունէութեան շուրջ եւ հրապարակով ամբաստանեց ապերեւելեան երկիրներու դիւանագէտները, որոնք սերտ յարաբերութեան մէջ էին համայնավար կազմակերպութեան մը հետ, որուն կեդրոնը Լապերի մէջ էր։ Մոսկուա բարեկամ կը նկատէր Սեքուն, որ Մոսկուա հրաւիրուած էր եւ ինքն ալ բարեկամութիւն ցոյց տալու համար խորհրդային մասնագէտներ հրաւիրած էր եւ կարեւոր դումարներ ստացած էր ընկերվարական երկիրներէն։

Սեքուի ամբաստանութիւնը ռումբի տպաւորութիւնը ձգեց Մոսկուայի վերիչներուն վրայ։ Սոլոտ մեկնեցաւ անմիջապէս։ Խորհրդային դեսպանը մասնագէտ մըն էր արեւելեան գործերու։ 1955ին դեսպան էր Գահիրէի մէջ, Նասրի հետ ստորագրեց խորհրդային եւ չեխ ռազմամթերքի համաձայնութիւնը։ Մոսկուայի ձայնասփիւռը հաղորդեց Սոլոտի կանչուիլը խորհրդակցութեան համար, իսկ Խոնաքրիի ձայնասփիւռն ալ ի լուր աշխարհի տարածեց, թէ խորհրդային դեսպանը « հեռացուած » է։

Սրուչչեւ եւ Սեքու չուզեցին խզել բարեկամական կապերը։ Մէկուն համար երկրորդը կարեւոր է. արեւմտեան Աֆրիկէն «ազդայնական ռամկավարութեան» անունին տակ բարեկամ մնալը, մէնչին համար Մոսկուայի օգնութիւնը կարեւոր է երկրին անտեսական զարգացման համար եւ արդէն հոյլ մը խորհրդային մասնագէտներ կան, որոնք միանդամայն համոզուած աշակերտներն են Լենինի եւ կայ նաեւ բուն համայնավար ուժեղ կազմակերպութիւն մը, որ կրնայ մասնագէտներու ղեկավարութեամբ տապալել ինքնակալը եւ դառնալ «ժողովրդավար ռամկավարութեան» մը հիմնադիրը։

Մոսկուա խոհեմութիւն սեպեց Միկոյեանը զրկելով չթմեղանցնելու դեսպանը եւ պահելու համայնավար խարխոխը, ուրկէ կարելի է թափանցել Միջին Ափրիկէ, պաշտպանել եւ չարժել Խոնկոյի ընկերները եւ միանդամայն ձերբազատել այդ փոքրիկ երկիրը Փեքինի ազդեցութենէն։ Մոսկուա եւ Փեքին կը մրցին Հնդկաց Ովկիանոսի եւ Ափրիկէի մէջ ազդեցութեան մենաշնորհը ունենալու։ Միկոյեան Սեքուի հետ պիտի ուսումնասիրէ « Մոսկուայի եւ Կինէի աշխատակցութեան ուժեղացման վերաբերող բոլոր հարցերը »։

Լրագրողը Մոսկուայի արտակարգ դեսպանը կը կոչէ «հայ ծեր ազուէսը»։ Մասնագէտ տնտեսական հարցերու, Միկոյեան մասնագէտ մըն է նաեւ հարցերը կնճռոտելու, մասնագէտ մը բիւզանդացիական դիւանագիտութեան։ Այցելեց նաեւ

ՀԱՅԸ ԵՒ ԻՐ ՃԱՄԲԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՀԱՅԵՐ

—o—

Այս ամառ բախտն ունեցայ Իտալացիներու խումբի մը հետ՝ ճամբորդելու դէպի Մոսկուա, այդտեղէն անցայ Հայաստան։

Ձեմ ունեցած ոչ մէկ նախապաշարում՝ մեր Հայրենիքի վարչակարգին հանդէպ. դէպքերու բերումով՝ ապրած եմ, միշտ, հայկական զգացում չունեցող քաղաքներու եւ երկիրներու մէջ, հեռու մնացած եմ կուսակցական կազմակերպութիւններէ, ունենալով հանդերձ որոշ համակրանք՝ անոնց հանդէպ որոնք մեր արտասահմանի երիտասարդութեան մէջ հայ ոգիին եւ հայ դատին արդար հունը կը բորբոքեն։

×

Թիֆլիսէն Երեւան ճամբորդութիւնը չոգեկառքով նախընտրեցի. Վրաստանէն Հայաստան մուտքը կլիմայական եւ կենցաղային զգալի տարբերութիւններ կ'անդրադարձնեն։

Վրաստան աւելի անտառոտ է, հողի եւ ջուրի զգալի առատութեամբ, վրացին աւելի բարեկեցիկ կը թուի քան Հայը. աւելի կոկիկ զգեստաւորուած են առհասարակ, մանաւանդ այրերը, Թիֆլիսի մէջ քան Երեւանի, ինչպէս կրցայ ստուգել. բայց Հայաստանը արիւնիդ կը խօսի, կ'ըսենք, կը համբուրես այդ սուրբ հողը, նուիրական է։

Երեւան աքաղէլի դիրք ունի, շրջապատուած դեղածիծաղ բլուրներով եւ տիրապետուած վեհափառ իշխող Արարատէն, անկրկնելի տպաւորութիւն մը կը թողու զայն տեսնողին վրայ. սակայն Երեւան բլուրներէն դիտուած չատ աւելի դեղեցիկ է քան մէջէն. չէնքերու չարաններ, վարդագոյն տուֆով, նոյն ճարտարապետական ոճով, հայկական եւ նուիրական, որ ժամանակին դէմ կնիք մը կը կրէ կարծես ինքնիր մէջ. եթէ մեր պապերը խուսափած են մէկ զարը միւսին նմանցնելէ, մենք ինչո՞ւ այսքան զարեր յետոյ կրկնենք զիրենք. ընդհանուր տրամադրութիւնն այն է որ հայկական ոճին չէ տրուած այն ճկունութիւնը կամ յարմարողականութիւնը՝ որ մեր զարը կը պահանջէ. Երեւանի չէնքերը աւելի կամ նուազ չափով կրկնութիւնն են մեր եկեղեցական ճարտարապետութեան. այս պետութիւնը լսեցի նաեւ Երեւանի մէջ եւ արդէն որոշ չարժում մը կը նշմարուի ճարտարապետներու մէջ՝ դէպի արդիական ոճը. արդիական են օրինակ՝ տնտեսութեան տաղաւարը, եւ կառուցուող ինքնաչարժներու երկարականի կայանը. Երեւանի եւ առ հասարակ Խորհ. Միութեան բոլոր քաղաքները «լուրջ» են, տխուր են, փողոցներու երկայնքին չկան այն լուսաւոր եւ հարուստ ապակեվարկները, որ մենք վարժուած ենք տեսնելու մեր քնական երկիրներուն մէջ. դոներ բնակելի չէնքերու, անճաշակ ապրեր՝ սահմանաթիւ խանութներու մէջ, եւ չատ չատ հայրենակիցներ խեղճ կերպով զգեստաւորուած, թէեւ մաքուր, զուարթ եւ երբեմն չահակրատուղ. մաքուր են փողոցները, մաքուր են մանաւանդ հայ մայրիկին յարդարած սենեակները. չատ զգալի է բնակարանային տագնապը եւ պետութիւնը վիթխարի աշխատանք կը կատարէ այս ուղղութեամբ (ներդաղթի յետաձգումին պատճառներէն կ'ենթադրուի նաեւ է)։

Ռուսահպատութիւնը Երեւանի մէջ վրակիչ է. Վրաստան այս տեսակէտով չատ օրինակելի է. հակառակ չորս հարիւր հազար Ռուսերու ներկայութեան՝ վրացին երբեք չի հրաժարիր իր մայրենի լեզուէն, վրացին մոլեռանդութեան հասնող ազգադիրութիւն մը ունի, ուրիշներու չի հանդուրժեր, անունը չօտարացներ. Հայը աւելի «լայնախոհ» է, այս կէտին մէջ. սրտի զառն կսկիծով տեսայ հայ համալսարանականներու ռուսահպատութիւնը, խօսքը առօրեայ գործածութեան մէջ մտած ռուսերէն բառերու մասին չէ, ասոնք կարծուածէն աւելի ընդհանրացած են եւ բանիմաց մարդիկ յայտնեցին իրենց անկեղծ մտահոգութիւնը այս մասին. միւս կողմէ՝ անժխտելի է եւ չատ խորերէն կուգայ Հայուն հայրենասիրութիւնը. կը հետաքրքրուին հայ սփիւռքով, կ'ուրախանան իրենց հեռաւոր եղբայրներուն եւ քոյրերուն յաջողութիւններով. անոնց տեղ պատրաստելու համար պատրաստ են «մէկ օրէն մինչեւ Իմմիր քալել։ Այս է ճշմարիտ դէմքը մեր Հայրենիքին. կը բաւ ունենալ քիչ մը դիտող աչք բացայայտ տեսնելու համար երկու տարբեր դիմագիծեր, խորհրդայինը եւ հայկականը. առաջինին երեւոյթները փրկելու համար չատ անդամ (թերեւս մէչ) կը կատարուին յարձակումներ ասոր կամ անոր դէմ. «կ'եղբայրանան» վրացիին կամ թաթարին հետ, «հայրենիք» կը հռչակուին անոնց կայսրութիւն մը, որ երբեք երազած իսկ չեն. բայց իրական Հայը, Հայաստանի Հայը, չատ դժուար է (հիմա համոզուած եմ որ անկարելի է) որ կարենանք ճանչնալ զրքերէն կամ թերթերէն։

—o—

1940ին Սթալին անգամ մը եւս փորձեց պետական կոլխոզներ ստեղծել. Ձէչէն – ները եւ Ինգուշները դարձեալ ընդդիմացան եւ հակառակ «դասական» դարձած քոնութեանց ու ճնշումներուն, Սթալինի ուղարկեալները չկրցան լենական չրջանները բոլորովին մաքրել ապստամբներէն։

Սթալին յարմար առիթի կը սպասէր վրէժ լուծելու համար։ Պահը յարմար նկատեց Սթալինկրատի մէջ Գերմանացիներու պարտութենէն ետք։

1944ի սկիզբը, Ձէչէն Ինգուշ հանրապետութեան բոլոր թերթերուն մէջ տեւաբար լուրերը լոյս տեսան.

« Իշխանութիւնները որոշած են մեր չրջանի կամուրջներն ու ճամբաները նորոգել». կամ՝ «Բարեկամաբար ընդունելիք մեր չրջանին մէջ լենային ռազմապորձերու համար հաւաքուող սիբելի կարմիր բանակին զինուորները »։

Արդարեւ, բաւական. մեծ թիւով զինուորներ կը հասնէին. եւ չուտով, իրապէս չանչիւր զիւղ արդէն ապաստան տուած էր զօրախումբի մը։ Բայց, իրականութեան մէջ, եկողները ոչ լենային բանակի զինուորներ էին, ոչ ալ ռազմաչինապարութեան (ժէնի) մարդիկ։ Հապա՝ քաղաքական ոստիկանութեան (Ենիվէտէ) մասնաւոր չոկատներ։

Փետրուար 23ը կարմիր բանակի տօնն է։ Խորհրդային կայսրութեան ամէն կողմը խրախճանութիւններ տեղի կ'ունենան այդ օրը։ Բայց Ձէչէն – Ինգուշ հանրապետութեան մէջ ընդհանրապէս չատ մեծ չուքով չէր տօնուեր։ Բայց 1944ի Փետրուար 23ին, զիւղերուն մէջ տեղաւորուած «զինուորները» ուրախութեան խարոյկներ վառած էին զիւղերուն հրապարակներուն վրայ։

Ռուս ուսանող մը, որ այնտեղ կը գտնուէր եւ որ աւելի ուշ Արեւմուտք ապաստանեցաւ, հետեւեալ ձեւով կը նկարագրէ 1944 Փետրուար 23ի տխրահռչակ չարչարանքի դէպքերուան դէպքերը։

« Երբ մուէզը կտրեց, զինուորները ուրախութեան խարոյկներ վառեցին, որոնց չուրջ սկսան երգել եւ պարել։ Գիւղացիները հետզհետէ հաւաքուիլ սկսան անոնց չուրջ՝ դիտելու համար։ Շուտով, հիւղանոցներուն մէջ մարդ չմնաց. բոլորն ալ զինուորներուն չուրջը հաւաքուած էին։ Ոչ մէկ կասկած ունէին։

« Յանկարծ, որուան նշանի մը վրայ, զինուորները դադրեցան երգելէ եւ պարելէ, խուժեցին հանդիսատեսներուն վրայ եւ ձերբակալեցին բոլոր այդ մարդիկը։ Շատ մը զիւղերու մէջ Ձէչէնները դիմադրութեան փորձ ըրին՝ իրենց անթաժանելի զէնքերուն միջոցաւ։ Բայց դիմադրութիւնը չուտով ճզմուեցաւ։

« Այդ մարդիկն ու երիտասարդ տղաքը բանտարկուեցան յարդանոցներու մէջ։ Կիները չձերբակալուեցան, բայց իրենց ունեցած – չունեցածը հաւաքելու եւ յաջորդ առաւօտ իրենց երթալուն հետ ճամբայ իյնալու պատրաստ գտնուելու հրահանգ ստացան։ Կրոնի գանուող ռուս ուսանողներուն ալ հրահանգուեցաւ երեք օրուան ճերմակեղէն եւ ուտեստեղէն առնելով պատրաստ գտնուիլ։

« Յաջորդ առաւօտ, որոշեալ ժամուն բարձրացուցին բեռնատար կառքերու մէջ, ուր արդէն տեղաւորուած էին զինուորներ։ Մեր տեղ հասնելէն կէս ժամ վերջ, ձերբակալուած այր մարդիկը, ինչպէս նաեւ կիներն ու երախաները կը բարձրացնէին բեռնատար կառքերուն վրայ։ Բոլոր Ձէչէնները ու բոլոր Ինգուշները, առանց բացառութեան, փոխադրուեցան։

« Իմ եղած զիւղիս մէջ միայն եօթը կամ ութ հոգի մնացին, որովհետեւ Տաղստանցի էին։

« Մեզի պարտականութիւն տուին զբաղիլ ապարահներով, մինչեւ որ հեռաւոր Քուրգի եւ Օրէլի կողմերէն եկող զիւղացիները հասնէին... Լեռներու լանջերուն գետեղուած զիւղերուն մէջ այլ կերպ վարուեցան։ Կենդանիները զիւղերուն մէջ թողուած էին, միջազգային կեդրոն մը, ուր կենսական չահեր ունին արեւմտեաններ։ Հոն ալ մասնաճիւղ մը պիտի հաստատուի։ Մոսկուա զործօն դեր մը պիտի ստանձնէ Ատլանտեանի վրայ, ինչպէս կարմիր Ծովու վրայ՝ Եմէնի միջոցով։

Արեւմուտք պաշարած է Խորհրդային Միութիւնը, Մոսկուա կը զործէ պաշարման դիծէն դուրս։ Մէկը պաշարումը կը զօրացնէ, միւսը՝ ծաւալման չրջանակը կը կ'ընդլայնէ։

ԽՈՐԻՆ ԳԱԲՐԻԿԵԱՆ

ԱՄԲԱՍՏԱՆԵԱԼ ՍԹԱԼԻՆ, ՈՏՔԻ՛

—o—

(27 Շար.)

ԹԱԼԷԱԹԻ ԹԵՐ ՈՒ ԴԷՄ

(ԹՐՔԱԿԱՆ ԱԿՆՈՅՈՎ)

Թուրք ծանօթ հրապարակագիր Ուլու – նայ Մխիթթ թերթին մէջ , կը գրէ·—

« Թալէաթ փաշա» պիտի դնեն եղեր վերջերս Եւրոպայէ առնուած չոգենաւե– ըէն մէկուն անունը: Հակառակ բոլոր արժանիքներուն, Թալէաթ փաշա երբեք պետական մարդ մը չէ կրցած ըլլալ : Իթթիհատ վէ Թէրաքքը խմբանուխիւնը ձեռք առած օրը երկիրը արեան ալիքի մը մէջ խեղդուեցաւ, ապստամբութիւն – յեղափոխութիւնները , մահափորձեր իրարու յաջորդեցին եւ վերջապէս՝ Ա. աշխարհամարտով տասը տարիէն հսկայ կայսրութիւնը փուլ եկաւ :

Ամբողջ այս յոռի վարչութեան գլուխը կը կանուէր Թալէաթ փաշա: Հակառակ անոր որ կայսրութիւնը կործող նահանգ– ներուն բաժանումին արգելք ըլլալու հա– մար՝ զանոնք զոհ ձգելու կոչուած վար– չութիւն մը հիմնելու հնարաւորութեան տէր էր, այս երկիրներուն մէջ հարստա– հարութիւնները եւ մահապատիժները քաջալերեց ու վերջապէս երբ ամէն ինչ կորսնցուց երկիրը աւերակոյտի մը ձե – ւին տակ լքելով խոյս տուաւ :

Ի՞նչ պիտի ըլլար կը հարցնեմ , եթէ Մուսթաֆա Քեմալ մը չըլլար: Թուրք ազգը եօթնէն եօթանասունը «կեավուր»– ներուն գերին պիտի ըլլար :

Հանդուցեալ Սարաճօղլու Շիւքրիւ վարչապետութեան շրջանին, «Թալէաթ փաշայի դամբարանը արծաթէ չինել պի– տի տամ» կ'ըսէր: Երբ այս խօսքը լսեցի, ափ ի բերան մնացի: Լսել է երկիրը խոր– խորատ գլտորողին դիակը անդամ կը յարգուի :

Եթէ ամբողջ այս յարգանքը եւ մեծա– րանքը կ'ընծայուի գրամի մասին Թա – լէաթ փաշայի ունեցած նախանձախնդ – րութեան պատճառաւ, երանի թէ գան – ձերը վերցնէր ու երկիրը այս վիճակին չմատնէր :

Թալէաթ փաշա չղողցաւ, բայց ղող –

դա՞ս»: Իբր պատասխան տխուր ժպիտ մը պծուեցաւ դէմքիս վրայ, տխուր ժպիտ մըն ալ իր դէմքին վրայ, եւ լուռ ու մունջ իջանք սանդուխն ի վար, չարունա– կելով մեր ճամբան ...

Սիրելի Գ. այդ մեր վերջին հանդիպու– մը եղաւ, յաջորդ օրը, ես մեկնեցայ, բայց դուն վստահ էիր որ ես իմ սրտիս մէջ կը կրեմ Հայաստանը, կը դնեմ զայն իմ զաւակներուս կուրծքին տակ եւ պիտի բերեմ զայն օր մը, երբ ան կարենայ ձեռնհասներ միայն հայրենի խորանին առ – ջեւ, դուն հասկցար զիս, լռեցիր՝ որով– հետեւ յուզուած էիր :

ՊԱՐՈՅՐ ԳՈՆՏԱՔՃԵԱՆ

ցուց : Ա. Աշխարհամարտին հարուստնե – րը իրենց բողերուն դրամատոմսէ սաւան կը փռէին : Անդարայի մէջ պողոտայի մը Թալէաթ փաշա անունը տրուեր է : Լուր անդամ չունինք : Ի մօտոյ «Թալէաթ փա– շա» հրապարակ մըն ալ պիտի հիմնեն և– պէր ... :

Ճչալ պայար, իրրեւ նախկին Իթթի – հատական մը, Թալէաթ փաշայի ոսկոր – ները Պոլիս բերել տուած առեն Շիւքրիւ Պապան ըսած էր.

— « Ոչ միայն այս մարդուն ոսկորները բերել այլ անոր պատկանած Իթթիհատ վէ Թէրաքքըի անունը յիշել անդամ մեծ ամօթ է »:

Այս վնացքով Պէյազիտի հրապարակին վրայ էնվէր փաշայի, Էմինէօնիւի մէջ ալ Ճէմալ փաշայի արձանը պիտի կանգնենք :

Պատմութիւնը պատմութիւն ըլլալէ ի վեր՝ երեսին այսպիսի ապտակ մը չէ կե– րած :

Նախկին Իթթիհատականներէն Թա – լէաթ եւ Էնվէր փաշաներու մասին վեր – ջերս լոյս տեսած կարդ մը յօդուածներու առթիւ «Թերճիման» թերթը կը յարձա– կի Պուրհան Ճելեկի եւ Ռեֆի Ճեվատ Ու– լունայի վրայ, զանոնք ամբաստանելով իրրեւ կատպի հակաիթթիհատականներ, ու կը նշէ թէ «Թալէաթ եւ Էնվէր փաշա– ները թշնամիի պնդակներով նահատակ – ուած են», եւ Իթթիհատ եւ Թէրաքքը կուսակցութիւնը կը պաշտպանէ եւ ի մէջ այլոց կը գրէ .

— « Այս կուսակցութիւնը հիմնողները վերջին ծայր պատուաւոր, պարկեշտ եւ հայրենասէր անձեր էին: Այդ կուսակ – ցութիւնն է որ առաջին անդամ ըլլալով տարածեց Թրքութեան իտէալը ու հաս – ցուց Աթաթիւրքը եւ Անկախութեան պա– տերազմը: Իթթիհատականները կամայ ակամայ Գերմաններուն հետ պինակցե – ցան, որովհետեւ Դաշնակիցները կանխա– Ռուսիոյ խոստացած էին Պոլիսը, իսկ Անգլիացիները՝ Եգիպտոսը եւ Իրաքը , Ֆրանսացիները՝ Սուրիան եւ Առանձին շրջանը առնել որոշած էին, Անթալիան եւ շրջակայքը Իտալացիներուն, Իզմիրը Հել– լեններուն խոստացած էին: Իրականու – թեան մէջ Իթթիհատ եւ Թէրաքքին ա – ղէտի չէ առաջնորդած երկիրը : Թալէաթ եւ Էնվէր փաշաները չատ մեծ ծառայու– թիւններ մատուցած են այս երկրին : Ճէլալ Պայար տեղին դործ մը կատարած է հանդուցեալ նահատակ Թալէաթ փա – շային աճիւնները երկիր բերելով: Ինչ ողբալի մտայնութիւն է այն՝ որ այս յո– ղերուն վրայ դերեզման մը անդամ չատ կը տեսնուի Թալէաթ փաշային: Մեր մադթանքը այն է որ օր մը մեծ դինուո– րական եւ հայրենասէր Էնվէր փաշային ածիւնները ալ դտնելու եւ երկիր բերելու ձեռնարկուի » :

ՉՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ ՉԵՌԱԳԻՐՆԵՐԸ ՉԵՆ ՎԵՐԱԴԱՐՁՈՒԻՐ:

ՀԱՅԱՍՏԱՆ

ԲՈՒՍԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՐՏԻԶԸ՝

ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒԱԾ

Հայաստանի Գիտութիւններու Ակադե – միայի բուսաբանական պարտէզին յա – տուկ ջերմանոցներուն մէջ, կ'աճին աշ – խարհի բոլոր կողմերէն հասած բոյսեր : Ասոնց աշխարհագրական վայրերը աւելի յայտուն դարձնելու մտադրութեամբ , վերջերս, որոշեցին բոյսերը դասաւորել ըստ իրենց աշխարհագրական դիրքին : Այս առընչութեամբ, հայ բուսաբանները բուսաբանական պարտէզին մէջ ստեղծե – ցին այնպիսի պայմաններ, որոնք մօտ են այս կամ այն բոյսին «ծննդավայրի»ն՝ հողային եւ կլիմայական պայմաններուն : Այսպէս, Ափրիկէի մէ(բուսնող կոզենի (ֆաֆթիւս) բոյսերուն համար չինած են հողաթումբեր, որոնք մասնակի վերար – տադրութիւնը կը հանդիսանան Ափրիկ – եան աշխարհամասի բնութեան :

ԳՈՀԱՐԻԿ ԳԱՍՊԱՐԵԱՆ

ԼԵՀԱՍՏԱՆ Է

Եգիպտոսէն հայրենադարձ եւ երջար– ուեստի մէջ արդէն անուն եւ համբաւ չինած Գոհարիկ Գասպարեան վերջերս Լեհաստան մեկնած է, երեք չարթուան համար : Երդչուհին առաջին անդամ Լե – հաստան գացած էր 1955ին :

1962ԻՆ՝ 2 ՄԻԼԻՈՆ ԲՆԱԿՉՈՒԹԻԻՆ

Հայաստանի համայնավար կուսակցու– թեան կեդր. կոմիտէի ընդհանուր քար – տուղար՝ Ե. Զարոբեանի մէկ յօդուածէն կը տեղեկանանք թէ «1962ին, մօտաւո – րապէս Օգոստոս – Սեպտեմբեր ամիսնե– րուն, լոյս աշխարհ պիտի գայ Հայաս – տանի երկումիլիոներորդ քաղաքացին »: Ամէն տարի, մէջին հաշուով՝ վաթսուն հազարէն 65 հազար հոգի կ'աւելնայ Հա– յաստանի բնակչութիւնը :

ԺԱՄԱՑՈՑՑՆԵՐՈՒ ԱՐՏԱԾՈՒՄԸ

Երեւանի ժամացոյցի երկու գործա – րանները կ'արտադրեն մեծ քանակու – թեամբ եւ դանազան տեսակի զարթու – ցիչներ, ձեռքի եւ գրպանի ոսկիէ ժամա– ցոյցներ :

Անցեալ տարի արտասահման ղրկուած են երեք հարիւր հազար ժամացոյցներ , գլխաւորաբար Ռումանիա, Գուպա, Վի – էթնամ, Իրաք, Իրան, Թուրքիա, Թու – նուզիա, Լիբանան, Սուրիա, Անգլիա եւայլն :

Այս տարի ժամացոյցներ պիտի ղրկը – ուին նաեւ Ջիլի (քսան հազար հատ), Գել– ժիա, Ֆինլանտա եւայլն :

ԹԻԱՊԱՐՏԸ

(ՎԷՊ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿԵԱՆՔԷ)

ԳՐԵՑ

ԱՐՄԷՆ ՇԻՏԱՆԵԱՆ

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

— Ի՞նչ կարող եմ ընել··· ի՞նչ կուզայ ձեռքէս ընդհատեց Ջոջը, քիչ մը սիրտ առած :

— Լաւ իս, չատ բան կարող կը ընել եւ չատ բան կընայ դալ ձեր ձեռքէն , չեչտեց Շէյխը· միայն թէ իրարու վըս – տահիլ եւ օգնել, կատարելագործ գիրար հակընդդէմ ենք այս մեծ դործին մէջ՝ :

— Ի՞նչ կայ վստահելու, առարկեց Ջոջը :

— Մի վիրաւորուիք··· չվստահելու կէտն այն է որ դուք կառավարութեան մարդն էք ու այսօր անոր թիւին տակ կը դտնուիք, ի հարկէ փոքրիկ երբ կատկած մը նկմարուի ձեր վրայ, առանց օղուտ մը առաջ բերելու, կորսուած պիտի ըլ – լաք: Անիկա չեմ ուզեր: Մեր փափաքն է դուք զաղտնի կերպով աջակից պիտի ըլ– լաք ու ջանաք մեր եւ ձեր միջեւ «Մի – ութիւն» մը հաստատել :

— Միութի՞ւն մը :

— Այո :

— Ի՞նչպէս :

— Իմանալ կ'ուզեմ թէ՝ այնպիսի կար – գադրութիւն մը ընել, որ ձեր ֆաչաղ – ները վնաս մը չհասցունեն մեզի եւ փո – խադարձաբար արդելքներու չհանդիպին :

— Բայց ես ի՞նչ յատաբերութիւն ունիմ ձեր «քաչաղ» ըսուած աւազակներուն հետ :

— Կը խնդրեմ, պէյ, առանկ պարապ առարկութիւններով ժամանակ չանցու – նենք: Նախ՝ այդ «քաչախ»ները ծանօթ են ձեզի ու դուք աղէկ դիտէք թէ անոնք աւազակներ չեն, այլ հայ դիւղացիներուն զէնք ու ռազմամթերք բաժնող մարդիկ են, որ ոչ կուիւ կը վախնան, ոչ ալ մահէ :

Անիկա ոչ թէ դուք, ոչ ձեր ամէնէն ազէտ գիւղացին, այլ օթօրոցի մանուկն անդամ լսած է եւ գիտէ: Հետեւաբար ինչ որ ալ ըսէք, ինչ որ ալ առարկէք, ես պարզապէս ձեր անվստահութեանը կու – տամ եւ չեմ վշտանար: Գիտցէք որ Աստ– ուած կը նայի մեր վրայ եւ կը տեսնէ ա– մէն բան: Գիտցէք որ Ժողովուրդի մը առաջնորդը , մեծաւորը միեւնոյն պար – տականութեան ներքեւ կը գտնուին անոր թշուառութեան հանդէպ եւ պատասխա – նատու են: Ըսէք, պէյ ինչո՞ւ համար ա– րիւնը կը թափուի մեր եւ ձեր միջեւ ... ի՞նչ կ'անցնի մեր ձեռքը, երբ արդելք կը հանդիսանանք ձեր քայլերուն, կամ թէ ինչ կը չահիք դուք՝ մէկ երկու Քիւրտեր սպանելով: Միթէ երկուքնիս ալ մեր վրայ սիրող կառավարութեան չահերուն ծառայած չենք ըլլար առանկով : Միթէ, այն լուծը, որ դարերէ ի վեր կը ծանրա– նայ ձեր ժողովուրդին վզին վրայ, մեեւ– նոյն ատեն չճնշէ՞ մեր ուսերուն վրայ : Ինչո՞ւ համար չհասկըց ենեն մեր ժողո – վուրդներուն թէ այն երկիրը ուր Համիտ կը սիրապետէ եւ անոր սուրը չղայ յաղթականօրէն, մեր հայրենական ժա – ռանդութիւնն է, թէ մենք ժամանակաւ ատրն էինք անոր եւ այսօր սորուկները դարձած ենք, եւ թէ վերջապէս, փոխա– նակ մեր աշխատութիւնը տալու կատա – վարութեան մը· պէտք է մենք վայելենք գայն : Որո՞ւ կ'ընդդէմ այս պարտականու– թիւնը ·· որո՞ւ կընայ գայն ըսել, առանց սին նկատումներու եւ առանց վերապա – հումի : Ոչ ապաքէն ձեզի որ ժողովուրդի մը դլուխը կը գտնուիք, յետոյ կրօնա – ւորներուս, որ անոր առաջնորդը կոչուե– լու պարտականութիւնն առանձնած ենք, ըսէք ի՞նչ կը մտածէք ··· Թողո՞ւնք որ մեր ազէտ ժողովուրդնենրն իրարու դէմ ելնեն ու դիրար ջարդեն՝ կառավարու – թեան մը չահերուն համար :

Ջոջը խուսափողական պատասխան մը տալու միջոց մը չդտաւ· հետեւաբար կը– կըտուր բացատրութեամբ մը հետեւեալ պատճառաբանութիւնը մէջտեղ բերաւ եւ ճնշուած ձայնով մը հարցուց .

— Ուրեմն դուք համոզուած էք որ ես այդ «քաչաղ» կոչուած մարդիկը կը ճանչե՞մ :

— Անշուշտ :

— Կը սխալիք, Շէյխ էֆէնտի, կը հա– ւատացնեմ ձեզ թէ այդ կարդի մարդիկ չեմ տեսած եւ բնաւ չեմ ճանչցած: Եթէ երբեք եղած է որ անուններին լսած խակ ըլ– լամ, այդ ալ կառավարութեան տեղեկա– կիրներէն կարդալուս ժամանակ աչքիս զարնուած է: Բայց գալով դիւղացինե – րուն՝ կը խոստանամ համոզել զանոնք որ հանդարտ մնան ու չխարուին «քաչաղ» – ներու ստապատիր խօսքերուն :

— Կը կարծէ՞ք թէ դիւղացին ատանկով սիտի չերթայ այն մարդոց ետեւէն, ո – րոնք իր բարօրութեան համար կ'աչխա – տին եւ իր պատուոյն, իր ստացուածքին համար արիւն կը թափեն : Ըստ իս , երբ դուք համարձակիք բառ մը հանել ձեր բերնէն, ամէնէն վատ ու ամէնէն մոլե – ռանդ կը համարուիք: Կ'ուզէք որ վատ ու մոլեռանդ անո՞ւն տան ձեզի :

— Դիւղացի մը սիտի չհամարձակի այդ աստիճան լրբութեան դիմել :

(Շար.)

ՆՈՒԷՐ

Էքս – ան – Փրովանսէն Պ. Ս. Գան – տոյեան յիսուն Ն. Ֆ. կը նուիրէ վեթէ – րանները Ֆոնտին։ (Ստանալ « Ցա – ռաջ»էն)։

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Մարսէյլի Աղք. – Որբ– Միութիւնը, Նոր Տարւոյ իր կոչին ի պատասխան չը – նորհակալութեամբ ստացած է Ն. Ֆ.ի հաշուով։—

Բ. ՅԱՆԿ.— Օր. Ճէլալեան Մատլէն հարիւր։ Տիկին Արաքսի Մալաքեան եւ Պ. Ցակոբ Փափազեան 50ական։ Պ. Ա. – րութեան Արթիւր երեսուն, Պ. Պ. Սար– պիս Ալթունեան, Արշալոյս Նորհատեան, Զաւէն Նահապետեան (տպարան) եւ Տէր Պօղոսեան քսանական։ Պ. Պ. Մ. Տէր – տէրեան (Տրակինեան), Ա. Խաչատուր – եան, Կարիպչանեան, Ց. Զէրահեան, Քիւրտմանեան, Ց.Մըճիկեան, Ժան Տա– կառեան, եւ Ն. Ցովհաննէսեան տասնա – կան, Պ. Պ. Պօղոպալեան (Տրակինեան), Մ. Տօլապճեան, Ա. Խաչիկեան 5ական։ Ճշդում.— Մեր Ա. ցանկին մէջ երուանդ Տէր Մինասեանը պէտք է կարդալ Տէր Մեսրոպեան երուանդ 10 Ն. Ֆ.։

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ Ս. ԽԱՉ ԵԿԵՂԵՑԻ

10 bis, Rue Thouin, PARIS

Այս կիրակի, հանդիսաւորութիւն Տեառնընդառաջի։ Ջայնաւոր պատարագ, ժամը 10·30ին եւ ապա մոմօրհնէք։

ՇԱԻԻԼԻ ԵԿԵՂԵՑԻ

Շաւիլի եկեղեցիին յառաջիկայ պատա– րագը այս կիրակի։

ՀԱՅ ԹԱՏԵՐ· ԵՒ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԲԱՑԱՌԻԿ ԵՐԵԿՈՅԹ ՆԻՍԻ ՄԷՋ

Կիրակի, 4 Փետրուար, կէսօրէ ետք, ժամը 3ին, Սալ Արթիսթիք, 27 Պուլվ· Տիւպուշաժ, Նիս։

ԳՐԻԳՈՐ – ՎԱՀԱՆ

Կը ներկայացնէ իր հեղինակութիւնները, մասնակցութեամբ հայ բեմերու վաղեմի եւ տաղանդաւոր դերասան Յակոբ Լա– թիֆեանի եւ Նիսի արուեստասէրներու կազմի մը։

Կը ներկայացուին՝

ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ԿԱՆԹԵՂԸ

Գեղարուեստական բաժնին մէջ՝ ժողո– վրդական հարնածանօթ երգիչ

ՄԻՇԱ ԱԶՆԱՒՈՒՐ

Երգիծական բաժին՝ հայ աղգային բա– րերարութիւնները, Սաթիրական զաւեշտ երկու դանադան արարներով։

Մուտք երեք Ն. Ֆ. եւ վերապահուած պատուոյ բազկաթոռներ։

Տոմսերը հայթայթել՝ Պար տիւ Մոն– թել, 113 Ավընիւ Քալիֆորնիի, եւ նոյն օ– րը թատրոնի մուտքը։

JACQUES TORANIAN

Agent Immobilier
Assureur Conseil.

Ձեզի պիտի ընդունի ամէն օր
իր գրասենեակը

RIVE GAUCHE IMMOBILIER

42, *Bld. Arago — Tél. : POR.* 03–94

կամ ձեզի կ'այցելէ ժամադրութեամբ

ՓԱՎԻՑՈՆՆԵՐՈՒ, ՑԱՐԿԱԲԱՃԻՆ – ՆԵՐՈՒ, ՇԷՆՔԵՐՈՒ (fo–փրոփրիէ– թէ) ՀՈՂԵՐՈՒ, ԱՒԵՒՏՐԱԿԱՆ ՑԱՐ– ԿԱԲԱՃԻՆՆԵՐՈՒ, ԽԱՆՈՒԹՆԵՐՈՒ, ԱՌՈՒԾԱԽ ձեր բոլոր խնդիրներուն համար

Expertise Gratuite

Ձեր տրամադրութեան տակ է նաեւ բոլոր ապահովագրութեանց համար

Auto
Incendie
Dégâts des eaux
Vie

— PRIX ETUDIES —

Tous risques assurés

Ամբի Տիկին Մաոի Գրիգորեան եւ զա– ւակները կը ծանուցանեն իրենց սիրեցեալ ամուսնոյն եւ հօր՝

ՊԵՏՐՈՍ ԳՐԻԳՈՐԵԱՆԻ

մահը, որ տեղի ունեցաւ իր բնակարանին մէջ, 7 Բիւ Պաթիլտ, Ժանթիյի, 68 տա– րեկանին յետ կարճատեւ հիւանդութեան։

Յուղարկաւորութիւնը պիտի կատար– ուի այսօր Շորեքշաբթի (31 Յունուար), ժամը 13·45ին (հաւաքուիլ բնակարանը) եւ մարմինը պիտի ամփոփուի Ժանթիյիի դերեզմանատունը։

Մասնաւոր մահագդ չստացողներէն, կը խնդրուի ներկայս իբր այդ նկատել։

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Այս կիրակի հոգեհանգստեան Ս. պա – տարագ եւ պաշտօն պիտի կատարուի Լի– ոնի Հայոց եկեղեցւոյն մէջ (Բիւ Պուալո, 295) ի յիշատակ ողբացեալ՝

ՄԱՐԻՑԱ ՕՊՈՋԵԱՆԻ

մահուան տարելիցին առթիւ։

Կը հրաւիրուին իր յիշատակը յարգող– ները։

ՄԱՅԻՍ 28Ը ԿԸ ՏՕՆՈՒԻ

Կիրակի, Մայիս 27ին, Միութիւնը մեծ սրահին մէջ։

ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԸ Կ'ԵՐԳԵՆ

ՄԱՐՏ 18ԻՆ

ԾՆՈՒՆԴԻ ԵՒ ՆՈՐ ՏԱՐԻՈՑ

ՈՒՐԱԽ ՕՐԵՐՈՒՆ ԵՒ ԱՄԲՈՂՋ ՏԱՐԻՆ

Եւրոպայի Մեծագոյն Արեւելեան Վաճառատունը

ՊԱՀԱՏՈՒՐԵԱՆ խանութ մը չայ – ցելողին սեղանին վրայ ամէնէն հա– մով պատառը կը պակսի՝ մեծին ու պզտիկին համար։ ՊԱՀԱՏՈՒՐԵԱՆ վաճառատան մէջ պիտի գտնէք ա – ւանդական ընդեղէններու եւ անու – շեղէններու ամէն տեսակը, անմրցե– լի գիներով։

Ապսպրանքի վրայ, ծրարի առա – քում Ֆրանսայի ամէն կողմ եւ դէ– պի արտասահման՝ Պելժիա, Զուի– ցերիա, Անգլիա։

ՊԱՀԱՏՈՒՐԵԱՆ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

LYON

246, Rue Vendôme - Tél. MO 11-84
20, Rue Villeroy MO 32-10
65, Rue Robert LA 07-72

ԵՒ ԻՆՁՊԼԻՍ ՄԻՇՏ

Արմաւ, «պամիա», «եալանճի տոլ– մա», յունական «թուրչի», « պի – պէռ», տերեւ, թահին հելվա, «վա– նիլլ», չոքոլա, «նուազկէթ», «լո – կում», «սապըզ», պիստակ, Շիրակ օղի (41 – 45o), Իղմիրի չամիչ, «սուճուք», կեսարական «պաստըր – մա»։ առաջնակարգ սուրճ, (fարա– վան եւ մոգա), համեմներ «մահ – լէպ», «սալէպ», ձիթապտուղ, ձէթ, «քաչքաւալ» պուլկարական, ձեր– մակ պանիր ոչխարի կաթով։ Ամէն կարգի պահածոներ, «քուսքուս», հարիսա, սումագ, թարամա, լա – ֆերտա, բաֆլաւա, fատայիֆ, տե– րեւ եւայլն։

ՊԱՀԱՏՈՒՐԵԱՆ ՀԱՄԱՏԱՒԻԹԻՆԸ

Ունի նաեւ մասնաճառատուն մը, որուն առաջնակարգ միսերը գոհա – ցում կուտան ամէնէն նրբաճաշակ – ներուն։ Ոչխարի, հորթի եւ եղան միս (քաչուած միս, եւայլն)։

FOURRURES

Roger YOPIAN

PRIX INTERESSANTS
NEUF et REPARATION

84, Boulevard de Stalingrad, 84
— CHOISY-LE-ROI (Seine) —

Autobus : de la Porte de Choisy, descendre 3 Communes ou Rue du Docteur-Roux.

Imprimerie Spéciale du journal « Haratch »
32, Rue de Trévise, PARIS (9e)

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

ԱՊՐԻԼ 24Ը

Կ'ողեկոչուի Ապրիլ 24ին։ Նախաճեռ – նութեամբ Ապրիլեան Սերունդի (ՋՈՄ), Քառէի (Փըքի Ժուռնալ) Ա. յարկը։

×

ԿԱՊՈՑ ԽԱՉԻ ՕՐԸ

Ֆ. Կ. Խաչի օրը կը տօնուի Ապրիլ 1ին, կիրակի, կէսօրէ վերջ, Շիմիի սրահը։

VICTOR GARDON

LE CHEVALIER à L'EMERAUDE

« Une très belle épopée qui a pour cadre l'Arménie légendaire »
(*Réalités*).

« Les mots sont brefs, justes, légers, mais portés par un souffle d'épopée ».
René MASSON (*Nouveau Candide*).

« Un livre plein d'entrain, de rebondissements qui émeuvent... il grouille de personnages chaleureux ».
Alain BOSQUET (*Combat*).

« Le héros de cette épopée est un parent de Lancelot et de Perceval ».
(*Feuille d'Avis de Neuchâtel*).

« Une fois de plus Victor Gardon affirme un talent sans défaut ».
(*Libre Belgique*).

STOCK

Հ. Յ. Դ.

ՎԱՂԱՆՍ.— Հ. Ց. Դ. Շրջ. կոմիտէի ընկերական ընդհ. ժողովը, այս Շաբաթ իրիկուն, ժամը 20·30ին, Ա.Տարոնեան ա– կումբը։ Կարեւոր օրակարգ։ Բոլոր ըն – կերներուն ներկայութիւնը պարտաւորիչ է։

ՇԱԻԻԼ.— Հ. Ց.Դ. Արշակ Չօպանեան խում– բի ժողովը Շաբաթ, ժամը 21ին, սովո – րական հաւաքատեղին։

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Հ. Ց. Դ. Նոր Սերունդին պարահան – դէսը՝

ՄԱՐՏ 3ԻՆ
ԱԼՖՈՐՎԻԼԻ ՄԷՋ

×

ՓԵՏՐՈՒԱՐ 18Ը

Վալանսի մէջ կը տօնուի Փետրուար 17– ին, Շաբաթ իրիկուն։ Մանրամասնու – թիւնները յայտնուած։

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

ՍԱՄՈՒԷԼ ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Աշակերտներու պատրաստած թա – տերական ներկայացումը՝

ԿԻՐԱԿԻ՝ ՄԱՐՏ 25

ՅՈՒՇԱՏԵՏՐ

Ֆ. Կ. Խաչի միջմասնաճիւղային ժո – ղովը այս երկուշաբթի, կէսօրէ վերջ ժա– մը ճիշդ 3ին, Մշակոյթի Տան մէջ։

Կարեւոր օրակարգ։ Պարտաւորիչ ներ – կայութիւն։ Կը խնդրուի ճշդապահ ըլ – լալ։

ՄՈՒՐԱՏ ՌԱՓԱՅԷԼԵԱՆ
ՆԱԽԿԻՆ ԱՇԱԿԵՐՏԱՑ ՄԻՈՒԹԻՒՆ

ՏԱՐԵԿԱՆ ՄԵԾ ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

ՋՈՒԱՐԹ

Մայրամուտէն մինչեւ կէս գիշեր
ՋՈՒԱՐԹ ՄԹՆՈԼՈՐՏ

ԿԻՐԱԿԻ՝ ՓԵՏՐՈՒԱՐ 11, ԺԱՄԸ 17ԷՆ՝24

AMBASSADEURS

3, Ave. Gabriel, 3
ԵՐԳ ՈՒ ՊԱՐ
ՄԵԾ ՆՈՒԱԳԱԽՈՒՄԲ

Attractions ԽԱՂԵՐ **Bar-Buffet**

ԱՄԷՆ ՕՐՈՒԱՆ ԼԱՒԱԳՈՅՆ ՆՈՒԻՐԸ

ՍԻՓԱՆ – ԿՈՄԻՏԱՍԻ՝ ներ սալը

"ՀԱՅ ԿՐՕՆԱԿԱՆ ԵՐԳԵՐ"

Chants Religieux Arméniens

Կը ղեկավարէ Կ. ԱՓՐԻԿԵԱՆ

Փնտռել՝ երգչախումբի վարչութեան անդամներուն, բարեկամներուն եւ հե– տեւեալ հասցէներուն մօտ։

Restaurant ARTHUR
5, Rue Augustin Thierry
Place des Fêtes Paris 19e

Librairie H. SAMUEL,
51, Rue Monsieur–le–Prince, PARIS

ՍԱԿԱՎԱԳԻՆ ԸՆԹԱՑԻԿ ԱՋԴԵՐՈՒ

ՄԷԿ ԱՆԴԱՄՈՒԱՆ ՀԱՄԱՐ

ՄԱՀԱՋԴ	30 Ն· Ֆ·	միճչեւ 1/4 սիւնակ
ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ	15 Ն· Ֆ·	միճչեւ 1/8 սիւնակ
ՑԱԻԱԿՑՈՒԹԻՒՆ	10 Ն· Ֆ·	» » »
ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ	20 Ն· Ֆ·	» » »
ՀԱՐՍԱՆԻՔ, ՆՇԱՆՏՈՒՔ	20 Ն· Ֆ·	» » »
ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆ	10 Ն· Ֆ·	» » »
«ՓՈԽԱՆ ԾԱՂԿԵՊՍԱԿԻ»	10 Ն· Ֆ·	» » »
«ԿԸ ՓՆՏՌՈՒԻ»	5 Ն· Ֆ·	» » »
ԾԱՆՈՒ Է	20 Ն· Ֆ·	» » »

Այս գիները մէկ անգամ հրատարակելի եւ նշանակուած ծաւալով ազ – դերու համար են, չորրորդ էջը։

Կանխիկ վճարումը պարտաւորիչ է։

Առեւտրական կամ այլ ազդերու մասնաւոր պայմանագիրներուն համար դիմել վարչութեան։